

g(479.25)
S 50

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՆՈՒՄԻ ԿՐԻՄԻՆԱԼԻ ՎԵՐՈՒՄԻ

ՀԱՅԿԻՄ



ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱՇԱՐ ԳԱԼՈՒՍՏ ԿԻԻԼՊԷՆԿԵԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ
ARMENIAN LIBRARY OF THE CALOUSTE GULBENKIAN FOUNDATION

ԼԵՒՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԽՂՁԱԿԻՐՆԵՐԸ ԵՒ ՆԱՅԵՐԸ

ՀԱՏՈՐ Բ

Պատմա-քաղաքագիտական հետազոտություն



ԵՐԵՒԱՆ 2007

9(479.25)
S-50

ՀՏԴ 941 (479.25) : 32.001
ԳՄԴ 63.3 (23) + 66
S - 506

LEVON TER-PETROSSIAN

THE CRUSADERS AND THE ARMENIANS
Volume II:
Historico-Political Study
Erevan 2007

Տեր-Պետրոսյան Լ.
S - 506 Խաչակիրները եւ հայերը, հատոր Բ. – Եր.: Հայաստանի
Հանրապետության Առաջին Լախագահի արխիվ, 2007. –
672 էջ:

ԵՊՀ Գրադարան




SU0146849

ԳՄԴ 63.3 (23) + 66

ISBN 978-99941-2-075-8

© Լեւոն Տեր-Պետրոսյան, 2007



ԱՌԱՋԱԲԱՆ¹

XI–XIV դդ. մերձավորարեւելյան իրադարձությունները հետահայաց ֆաղաֆազիտության (ретроспективная политология)² տեսակետից դիտարկելիս՝ Կիլիկյան Հայաստանի եւ Արեւելում հիմնված խաչակրաց պետությունների պատմության տիպաբանական ընդհանրությունն աչֆի է զարնում առաջին իսկ հայացֆից: Թե՛ մեկը, թե՛ մյուսները, ստեղծված լինելով օտար ժողովուրդներից նվանված տարածֆներում, հարկադրված էին գոյատեւել հարակա թշնամական միջավայրում, դրանից բխող ֆաղաֆական վարֆագծի նմանօրինակ դրսեւօրումներով՝ աշխարհագրական դիրֆի առավելությունների օգտագօրծում, ապավինում բերդերի պաշտպանական համակարգին, ժամանակավօր ռազմական դաշինֆների հաստատում, Արեւմուտֆի օգնության ակնկալում, ներֆին կալունության ապահովում եւ այլն: Նույնն էր նաեւ միջազգային իրավունֆի սկզբունֆների այն դաշտը, ռօրվ, այդ պետությունների կամֆից անկախ, նախասահմանված էր նրանց կենսագօրծունեության հարկադրական շրջանակը:

Հարկ եմֆ համարում միանգամից նշել, ռ «միջազգային իրավունֆ» եզրույթը մեմֆ գօրծածում եմֆ պայմանականօրենն, ֆանի ռ այդ իրա-

¹ Հարկ եմֆ համարում կրկին խօրին շնօրհակալունիցուն հայտնել սույն գրքի առաջին հատօրի «Երկու խօսք»-ում հիշատակված անձանց, ռոնց ցուցաբերած նույնաբնույթ աշակցունը հույժ կարեւօր է եղել նաեւ ներկա հրատարակունիցյան իրականացման համար, հատկապես ընդգծելով Հրաչ Բարթիկյանի, Ազատ Բոզոյանի, Աշոտ Սարգսյանի եւ Ավետիս Ավագյանի ավանդը:

² Եզրույթի մասին տե՛ս Афанасьев, Опасная Россия, с. 148.

վունքը միջնադարում սահմանվում էր ոչ թե Ազգերի կիզայի, ՄԱԿ-ի կամ ԵԱՀԿ-ի տիպի կազմակերպությունների կողմից, այլ մեծ պետությունների անհատական ջանքերով: Յուրաքանչյուր գերտերություն ինքնուրույնաբար հռչակում էր սեփական ֆաղափական դավանանքը (դոկտրինան) և դրա հիման վրա որոշում իր և մնացյալ աշխարհի հարաբերությունների կանոնները: Այլ կերպ ասած, թեև անցյալում եւս, ինչպես մեր օրերում, միջազգային իրավունքը սահմանվում էր գերտերությունների կողմից, բայց դա տեղի էր ունենում ոչ թե համապատասխան կազմակերպությունների մակարդակով, այլ կայսրությունների որդեգրած եսակենտրոն հայեցակարգերի հռչակման միջոցով, փույթ չէ, թե դրանք ի բնե կհակասեին միմյանց և ազգերի համակեցությունը կարգավորելու փոխարեն, աշխարհը կվերածեին անհաշտ թշնամանքի թատերաբեմի: Գերտերությունների ֆաղափական դավանանքների եսակենտրոնությունն արտահայտվում էր նրանում, որ նրանցից յուրաքանչյուրն իրեն համարում էր աշխարհի միակ օրինական պետությունը՝ դրանով հիմնավորելով համաշխարհային տիրապետության իր հավակնությունը: Մեզ հետաքրքրող ժամանակաշրջանում «միջազգային իրավունք» սկզբունքների սահմանման ու գործադրման մենաշնորհը պատկանում էր չորս հակոտնյա ուժերի՝ Բյուզանդական կայսրությանը, Արեւմտյան Եւրոպային, իսլամական հասարակապետությանը և մոնղոլներին, ինչը դրսևորվում էր նրանց աշխարհաֆաղափական դավանությունների հետեյալ հայեցակարգային դրույթներում:

Բյուզանդիա. Աշխարհի միակ օրինական պետությունը լինելու Բյուզանդիայի ինքնագիտակցությունը բխում էր Հռոմեական կայսրության իրավահաջորդը հանդիսանալու իրողությունից և Կոստանդնուպոլսի պատրիարքարանի ենթադրյալ նախաթոռության հանգամանքից: Դա նրան հիմք էր տալիս եթե ոչ անպայման հավակնելու համաշխարհային տիրապետության, ապա գոնե ձգտելու իր իշխանությունը տարածել Հռոմեական կայսրության նախկին տարածքների ու Բրիտանյա աշխարհի վրա³: Աշխարհակալական այսպիսի նկրտումների ամրապնդմանը նպաս-

³ *Zidjian*, Bréhier, Les Institutions, p. 282; *Garsoian*, The Independent Kingdoms, p. 160-161; *Garsoian*, The Byzantine annexation, p. 188; *Harris*, Byzantium, p. 22-24.

տել էին մի կողմից՝ X–XI դարերում Հարավային Եւրոպայի, Ասորիի, Միջագետքի եւ Մեծ Հայքի ուղղությամբ Բյուզանդիայի կատարած տպավորիչ վերանվաճումները, իսկ մյուս կողմից՝ Բալկանյան երկրներում եւ Կիւսյան Ռուսիայում Հույն Ուղղափառ եկեղեցու հաջողությամբ պսակված առաքելությունները: Իշխող մտայնության ամենացայտուն արտահայտությունը բյուզանդական կայսրերի *βασιλεύς* (վասիլեւս) տիտղոսն էր, որը չէր հատկացվում ոչ մի այլ տիրակալի⁴: Կայսրը, դիտվելով Աստծու ընտրյալը, ըստ էության, պետության մարմնավորումն էր, որի գորությունը տարածվում էր ինչպէս ծովի ու ցամաքի, այնպէս էլ՝ ողջ մարդկային ցեղի վրա⁵:

Ավելորդ չէ նշել, որ Բյուզանդական կայսրերի, նույնն է թե՛ Բյուզանդական կայսրության գորության համաշխարհային տարողության պատկերացումն արտացոլվել է նաեւ հայ իրականության մէջ: Այսպէս, Ներսէս Շնորհալիւն Մանուէլ I Կոմնենոսին կոչում է ոչ այլ կերպ, քան «Երկնաւորին յերկրի անուանակիր եւ աթոռակալ»⁶ կամ «Պարունակող գերապատուութեամբ ընդհանուր թագաւորութեանց, որ ի ներքոյ երկնից»⁷,

⁴ Կառլոս Մեծի համար արված միակ բացառության մասին տե՛ս ստորեւ: «Վասիլեւսը» Բյուզանդական կայսրերի պաշտոնական տիրտղոս է դարձել 629 թվականին. տե՛ս Юзбашян, Армянские государства, с. 83.

⁵ Հմմտ. Bréhier, Les Institutions, p. 5–6, 58–59. Խոսքն, անշուշտ, վերաբերում է կայսրեր ինստիտուտին, եւ ոչ թե անձին, ինչի առթիվ ուշագրավ ենք համարում Ա. Կաթողանի հետեւյալ դիտարկումը. «Կայսրը Բյուզանդիայում, թվում է, ամենագոր էր, բայց դրա հետ մեկտեղ, զարմանալիորեն, դժվար է պատկերացնել մի ավելի անկայուն միապետություն, քան բյուզանդական ինքնակալությունն էր: Բյուզանդական կայսրերի կեսը զահից զրկվել է բռնությամբ. ոմանց թունավորել են, խեղդամահ արել, կուրացրել, իսկ մյուսներին՝ արգելափակել վանքում: Բյուզանդական կայսրության հազարամյա պատմության մեջ հաշվվում է մոտ 90 կայսր՝ համարյա կրկնակի ավելի, քան նույն ժամանակահատվածում գահակալել են գերմանական կայսրությունում». Каздан, Византийская культура, с. 83–84.

⁶ Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթը, էջ 109: Եթե անուանակիր բառի տակ հեղինակը նկատի ունի Քրիստոսի եւ կայսեր եմմանուել անվան նույնությունը, ապա աթոռակալ-ն ակնարկում է Աստծու երկրային փոխանորդը դիտվելու վերջինիս հանգամանքը: Տե՛ս նաեւ՝ Անդ, էջ 110, 145:

⁷ Անդ, էջ 160:

իսկ Գրիգոր Տղան՝ «Արքայ Հռոմոց, որ նստի գլուխ ընդհանուր տիեզերաց, ծայրագոյն պատուով եւ իշխանութեամբ»⁸: Այս առումով շատ ավելի պերճախոս է Հովհաննէս Դրասխանակերտցին, որը Բյուզանդական կայսրերին համարում է՝ «յԱստուածուատ պսակեալ եւ պերճացեալ մեծ եւ բարեյաղթ թագաւոր տիեզերաց, աստուածասէր եւ բարեպաշտ, ի հանդիսի կենացս հասարակաց լուսաւորութեանց վերակացոյն եւ հանուրց եղելոցս նշարիտ խաղաղարար, երկնացեղիկ ինն դասուցն համեմատն եւ շինութեան հոգեւորի առիթք. այսֆանեաց եւ այսպիսեաց ազգաց եւ ազանց ստուգապէս առաջնորդք, աստուածային արդարեւ արմաւենիք ի տան Տեառն տնկեալք»⁹: Իսկ Ասողիկի «Պատմութեան» մեջ պահպանված VII դ. հայկական մի վավերագիր Բյուզանդական կայսրությունը բնութագրում է հետեւյալ խոսքերով. «Թագաւորութիւն մեծ եւ հզօրագոյն քան զամենայն թագաւորութիւնս, որ ոչ մարդկային ձեռամբ, այլ աստուածային աջովն է պսակեալ, գոր ոչ երբէք կարացէ փոխանորդել, բայց միայն Քրիստոսի թագաւորութիւնն»¹⁰:

Մեր բննության առարկան հանդիսացող խնդրի տեսակետից առավել հետաքրքրական է, սակայն, բյուզանդացիների աշխարհակալական իրավագիտակցության մի մասնակի դրսեւորումը, որը վերաբերում է սելջուկների կողմից զավթված կայսերական տարածքների կարգավիճակին: 1097 թվականին Ալեքսիոս կայսեր եւ խաչակիրների միջեւ Կոստանդնուպոլսում կնքված պայմանագրի համաձայն՝ վերջիններս պարտավորվում էին Բյուզանդիային վերադարձնել թուրքերից գրավվելիք այն բոլոր տարածքները, որոնք սելջուկյան ասպատակությունների նախօրյակին պատկանել էին կայսրությանը¹¹: Ի դեպ, այդ պայմանագրի բովանդակությանը քաջապես ծանոթ է նաեւ Մատթեոս Ուոհայեցին, որն այդ առթիվ գրում է. «Եւ թագաւորն Ալէքս արար սէր եւ միաբանութիւն ընդ ամենայն իշխանսն Փռանգաց, եւ տարաւ զնոսա ի սուրբն Սոփի,

⁸ Անդ, էջ 166:

⁹ Յովհաննէս Դրասխանակերտցի, Պատմութիւն, էջ 271–272:

¹⁰ Ասողիկ, Պատմութիւն, էջ 92: Հայ պատմագրութեան մեջ Բյուզանդական կայսրութեան նկարագրի մասին լրացուցիչ տե՛ս Arutjunova-Fildanjan, L'Image, p. 7–17.

¹¹ Տե՛ս Anne Comnène, Alexiade, t. II, p. 226.

եւ ետ նոցա բազում տուրս ոսկոյ եւ արծաթոյ. եւ նոքա երդուան նմա, զի զամենայն գաւառսն, որ յառաջ լեալ էր Հոռոմոց, թափեն ի Պարսից¹² եւ տան զայն թագաւորին Ալէքսին, եւ աշխարհն Պարսից եւ Արապկաց եղիցին ազգին Փռանգաց. եւ այսպիսի դաւանութեամբս, խաշով եւ աւետարանով կապեցին զերդումնն անլուծանելի կապանօք»¹³: Պայմանագիրը, որն առաջին հերթին վերաբերում էր Կիլիկիային, Անտիոքի իշխանապետությանը եւ Եդեսիայի կոմսությանը, հետագայում ծանր անդրադարձ պիտի ունենար այդ երկրների ճակատագրի վրա: Խաչակիրներն սկզբնապես հարգեցին իրենց ստանձնած պարտավորությունը՝ մասնավորապես Բյուզանդիային զիջելով Նիկիա եւ Մարաշ քաղաքները, սակայն Եդեսիայի կոմսությունն ու Անտիոքի իշխանապետությունը հիմնադրելուց հետո հրաժարվեցին ճանաչել կայսեր գերիշխանությունը: Բյուզանդիան երբեւէ չհամակերպվեց իրերի այդ դրության հետ եւ, պայմանագիրն իրավական հիմք ծառայեցնելով, շարունակ փորձեց վերականգնել կայսրության տարածքային ամբողջականությունը¹⁴: Մասնավորապես այդ պայմանագրի գործադրմանն էին միտված Հովհաննես եւ Մանուել Կոմնենոս կայսերի ձեռնարկած 1136–1138, 1142–1143 եւ 1158–1159 թթ. արեւելյան արշավանքները: Խաչակրաց պետությունների վրա իր գերիշխանությունը հաստատելու գլխավոր խոչընդոտը Բյուզանդիայի համար Ռուբինյան իշխանության գոյությունն էր: Դրանով է բացատրվում, թե ինչու ավելի քան հարյուր տարինա համառորեն չճանաչեց Հայոց պետության անկախությունը՝ նրա տարածքը դիտելով որպես կայսրության անբաժանելի մասը: Ի տարբերություն Անտիոքի իշխանապետության եւ Եդեսիայի կոմսության, որտեղ Բյուզանդիան, աշխարհագրական նկատառումներով, հակված էր բավարարվել թեկուզ իր անվանական գերակայության ճանաչմամբ¹⁵,

¹² Պարսիկք անվան տակ Մատթեոսը նկատի ունի մասնեղականներին, մասնավորապես՝ թուրքերին:

¹³ Մատթէոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 255:

¹⁴ Հմմտ. Chalandon, Les Comnène, II, p. 446; Grousset, Histoire, I, p. 15–16; Harris, Byzantium, p. 81–82.

¹⁵ Հմմտ. Harris, Byzantium, p. 81–83.

Կիլիկիայում նրան հետաքրքրում էր միայն ուղղակի կառավարումը: Արեւելի ուղղությամբ Բյուզանդիայի աշխարհակալական հավակնություններին վերջ դրվեց միայն 1176 թվականին Միրիոկեֆալոնի ճակատամարտում սելջուկներից կրած նրա ջախջախիչ պարտությունից հետո¹⁶:

Արեւմտյան Եւրոպա. Որպես ֆաղափական գործոն Արեւմտյան Եւրոպան Մերձավոր Արեւելի թատերաբեմում դերակատարություն ստանձնեց խաչակրաց արշավանքների սկզբնավորման շրջանից, թեւէ Հռոմեական կայսրության ժառանգորդն ու ֆրիստոնյա աշխարհի գերական լինելու Բյուզանդիայի աշխարհակալական մենաշնորհը նա սկսել էր վիճարկել դեռեւս Կառլոս Մեծի ժամանակներում¹⁷: 800 թվականին վերջինս Հռոմի պապ Լեոն III-ի (795–816 թթ.) կողմից հռչակվեց կայսր (imperator) եւ անմիջապէս բանակցությունների մեջ մտավ Բյուզանդիայի հետ՝ օրինականացնելու համար իր այդ տիտղոսը: Բյուզանդական կայսր Նիկեյիորոս I-ը (802–811 թթ.) կտրականապէս հրաժարվեց անել դա, բայց նրա հաջորդը՝ Միխայել I-ը (811–813 թթ.), ֆաղափական նկատառումներով, 812 թվականին ճանաչեց Կառլոս Մեծի imperator տիտղոսը, որի համարժեքը հունարէն βασιλεύς-ն էր: Սա Բյուզանդիայի կողմից արեւմտաեւրոպական կայսրերի համար արված միակ բացառությունն էր¹⁸: Կարոլինգյան կայսրությունը գոյատեւեց մինչեւ 887 թվականը, որից հետո այն բաժանվեց յոթ անկախ թագավորությունների՝ Տրանսիա, Գերմանիա, Իտալիա, Պրովանս, Բուրգունդիա, Լոթարինգիա եւ Նավարա¹⁹: Բյուզանդիայի եւ Արեւմտյան Եւրոպայի իրավա-ֆաղափական այս տարաձայնությունը չհարթվեց նաեւ այն բանից հետո, երբ Գերմանիայի թագավոր Օտոն I-ը 962 թվականին Հռոմի պապ Հովհաննէս XII-ի

¹⁶ Առիթից օգտվելով, ավելորդ չենք համարում նշել, որ Միրիոկեֆալոնի ճակատամարտի կարեւոր նշանակությունը գիտակցվել է նաեւ միջնադարյան հայ հեղինակների, մասնավորապէս՝ Ներսէս Լամբրոնացու եւ Սմբատ Սպարապետի կողմից. տե՛ս Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, էջ 168; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 193:

¹⁷ «Հռոմեական կայսրություն» գաղափարի բյուզանդական եւ արեւմտյան ընկալումների տարբերության մասին մանրամասն տե՛ս Успенский, История, с. 685–690.

¹⁸ Հմմտ. Bréhier, Les Institutions, p. 51; Юзбашьян, Армянские государства, с. 83.

¹⁹ Մանրամասն տե՛ս Удальцов, История, т. I, с. 119.

(955–964 թթ.) կողմից հռչակվեց կայսր եւ հիմնադրեց, այսպես կոչված, Սրբազան Հռոմեական կայսրությունը: Հարկ է նշել, սակայն, որ խնդրո առարկա ներհակության մեջ Բյուզանդիայի անգիջողականությունը միակողմանի չէր. Արեւմուտքն, իր հերթին, միեւնույն համառությամբ բյուզանդական ինքնակալներին համարում էր ոչ թե Հռոմեական, այլ Ուղղափառների, Նոր Հռոմի, Կոստանդնուպոլսի, կամ է՛լ Հույների կայսրեր²⁰: Այս առումով խիստ հատկանշական է Ֆրիդրիխ Շիկամորոաի կողմից Մանուել կայսերն ուղարկված մի նամակ, որում նա բացեիքաց հայտարարում է, որ գերմանական կայսրերը, իրենց իշխանությունն ստացած լինելով Հռոմեական փառապանծ կայսրերից, իրավասու են տիրելու ոչ միայն Հռոմեական կայսրությանը, այլեւ «Հույների թագավորությանը»²¹:

Ուշադրության արժանի է ես մեկ կարեւոր հանգամանք. եթե Հույն Ուղղափառ եկեղեցին, Բյուզանդիայի պետական շահերի տեսակետից, հանդես էր գալիս որպես կայսերական իշխանության հուսալի գործընկեր եւ հենարան²², ապա Հռոմի Աթոռն, ընդհակառակը, քրիստոնյա աշխարհի վրա գերակայություն հաստատելու հարցում անհաշտ մրցակցության մեջ էր արեւմտյան կայսրերի հետ²³: Հակասության գլխավոր աղբյուրն, այսպես կոչված, investitura-ի (տվչության) խնդիրն էր, այ-

²⁰ Հմմտ. Bréhier, Les Institutions, p. 52.

²¹ Հմմտ. Vasiliev, Byzantine Empire, v. II, p. 430. Ֆրիդրիխի տիեզերակալական հավակնությունների մասին տե՛ս Cowe, The Inauguration, p. 50.

²² Հմմտ. Сказкин, История Византии, т. 2, с. 169; Oldenburg, The Crusades, p. 540. Բյուզանդական կայսր եւ Կոստանդնուպոլսի պատրիարքի հարաբերությունների տեսական եւ գործնական ասպեկտների մասին մանրամասն տե՛ս Dagron, Le christianisme byzantin, p. 198–206.

²³ Պետության եւ եկեղեցու հարաբերությունները նկատի ունենալով՝ Ֆ. Ուսպենսկին բյուզանդական եւ արեւմտյան կայսերական համակարգերը բնորոշում է համապատասխանաբար՝ «կայսերա-պապականություն» (цезаро-папизм) եւ «պապա-կայսերականություն» (папский цезаризм) եզրույթներով, ավելացնելով, որ եթե Բյուզանդիայում եկեղեցին ենթարկված էր կայսրությանը, ապա Արեւմուտքում կայսրությունն ընդամենը եկեղեցու քաղաքացիական արտահայտությունն էր. Успенский, История, с. 685. Նույն խնդրի վերաբերյալ տե՛ս նաեւ՝ Dagron, Le christianisme byzantin, p. 202.

սինճն այն, թե ում էր վերապահված հոգեւորականությանը, մասնավորապես, եպիսկոպոսներին իշխանություն շնորհելու իրավունքը՝ աշխարհիկ տերերին, թե՛ եկեղեցուն: Ինվեստիտուրայի խնդրի կարելությունը բացատրվում էր այն հանգամանքով, որ ի տարբերություն Քյուզանդիայի, որտեղ երկրի կառավարումն իրականացնում էին ֆաղաֆափական պաշտոնյաները, Արեւմտյան Եւրոպայի միապետերը դա կատարում էին եպիսկոպոսների միջոցով, որոնք միաժամանակ թե՛ հոգեւոր, եւ թե՛ վարչական պաշտոնյաներ էին²⁴: Սկզբնապես առավելությունը կայսրերի կողմն էր, որոնք ոչ միայն ինճնակամ կերպով նշանակում եւ ազատում էին եպիսկոպոսներին, այլեւ վճռական դեր խաղում անգամ պապերի ընտրության հարցում:

Գրությունը փոխվեց XI դ. կեսերին Կլունիական վանականության գործունեության արդյունքում, որի նպատակը Կաթոլիկ եկեղեցու հեղինակության բարձրացումն ու աշխարհիկ իշխանությունների նկատմամբ գերակայության հաստատումն էր: Կլունիական գաղափարախոսության համաձայն՝ Հոմմի պապը պետք է լիներ ոչ միայն եպիսկոպոսների ու վանահայրերի, այլ նաեւ թագավորների ու կայսրերի առաջնորդը, այսինճն՝ ինչպես հոգին էր իշխում մարմնի վրա, այնպես էլ եկեղեցին պետք է գերակայեր աշխարհիկ իշխանության նկատմամբ²⁵: Կլունիական ծրագիրն իրականացվեց գլխավորապես կարդինալ Հիլդեբրանդի (ապագա Գրիգոր VII պապի) ձեռնարկած եկեղեցա-ֆաղափական բարեփոխումների շնորհիվ, որոնք իրենց արտահայտությունը գտան 1059 թվականին տեղի ունեցած Լատերանի ժողովի որոշումներում եւ 1073 թվականին նրա արձակած «Ընդհանրական կոնդակում»²⁶: Լատերանի ժողովը սահմանեց կարդինալների կողմից պապի ընտրության կարգը եւ հոգեւորականների կուսակրոնության պահանջը, իսկ «Ընդհանրական կոնդակը» հռչակեց աշխարհիկ իշխանությունների գերական լինելու պապի հավակնությունն ու եպիսկոպոսներ նշանակելու նրա բացառիկ իրավասությունը: Այս թվացյալ հանգուցալուծումը, սակայն, ոչ թե

²⁴ Հմմտ. Harris, Byzantium, p. 15.

²⁵ Հմմտ. Удальцов, История, т. I, с. 303.

²⁶ Անդ, էջ 304:

Հոռմի պապերի եւ Գերմանական կայսրերի հակամարտության վերջն էր, այլ սկիզբը, հակամարտություն, որը ոչ միայն չպիտի սահմանափակվեր բանադրանքներով ու գահընկեցություններով, այլեւ պիտի հանգեցներ արյունահեղ պատերազմների: Խաչակրաց արշավանքների հետեւանով այդ հակամարտությունը տեղափոխվեց նաեւ Մերձավոր Արեւելք, իր արտահայտությունը գտնելով մի կողմից՝ արեւելաֆրիստոնեական եկեղեցիների վրա Հոռմի պապի գերակայությունը հաստատելու ձգտման, մյուս կողմից՝ Լեւանտում Սրբազան Հոռմեական կայսրության վասալ-պետությունների՝ Կիպրոսի ու Կիլիկիայի թագավորությունների ստեղծման իրողության մեջ: Ավելին, Կ. Կաենի կարծիքով՝ Ուրբանոս պապի կողմից առաջին խաչակրաց արշավանքի ձեռնարկման փաստն իսկ, միտված լինելով Հոռմի Աթոռի հեղինակության բարձրագմանը, մեծ հաշվով արդյունք էր տվյալ հակամարտության²⁷:

Ինչպես Բյուզանդիայի պարագայում, Արեւմտյան Եւրոպայի տիեզերակալական հավակնությունները նույնպես որոշ արձագանք են գտել հայ իրականության մեջ, մասնավորապես հայ լատինասերների միջավայրում ստեղծված «Դաշանց թղթում»²⁸, որում Հոռմեական կայսրությունը կոչված է՝ «Տիեզերատարած եւ աշխարհածալալ, խրոխտ եւ անխոնարհելի իշխանութիւն»²⁹, իսկ Հոռմի պապը՝ «Աթոռակալ գլխատրաց Առաքելոցս Պետրոսի եւ Պօղոսի, որ երկնաւոր եւ երկրաւոր բանալեօֆս ունի իշխանութիւն յԱրեւմտից մինչեւ յԱրեւելս ի վերայ ամենայն ազգաց եւ ազանց եւ լեզուաց քրիստոսադաւանից, կապօղ եւ արձակօղ ի յերկինս եւ յերկրի եւ հրամանահան հզօր յընդհանուր յեկեղեցիս

²⁷ *Sté Cahen, Turcobyzantina*, p. B 6–29, C 118–125.

²⁸ *Ոչ մասնագիտական լսարանը նկատի ունենալով՝ նշենք, որ «Դաշանց թուղթը» XIII դարում ստեղծված մի անվավեր գրություն էր՝ IV դարում Հայաստանի եւ Հոռմի միջեւ կնքված բարեկամության պայմանագրի մասին: «Թղթի» բնույթի եւ ընդհանրապես միջնադարում նրա խաղացած գաղափարաբանական դերի մասին տե՛ս հետեւյալ նորագույն ուսումնասիրությունները. Halfter, *Das Papsttum*, S. 164–170 (1996); Thomson, *Constantine and Trdat*, 1997; Thomson, *The Crusaders*, 2001; Shirinian, *The Letter of Love*, 2003; Բարթիկյան, «Դաշանց թուղթ», 2004; Pogossian, *Letter of Love*, 2004.*

²⁹ *Շահնագարյանց, Դաշանց թուղթ, էջ 12:*

Քրիստոսի»³⁰: Նույնքան բնութագրական է Հովհաննես Կոզեռնի տեսիլը, որում «գուշակված է» Հոռոմայեցիների (իմա՝ խաչակիրների) համաշխարհային տիրապետությունը. «Եւ յայնժամ ելցեն ազգն արիականք, որք են Փռանգ, եւ բազմութեամբ զօրօք աոցեն զսուրբ քաղաքն Երուսաղէմ, եւ ազատի ի գերութենէն սուրբ գերեզմանն Աստուածընկալ: ...Եւ յայնժամ թագաւորն Հոռոմայեցոց տիրելով տիրէ ամենայն աշխարհի... եւ հաստատի ամենայն իշխանութիւն երկրի ի ներոյ ձեռին թագաւորին Հոռոմայեցոց»³¹:

Իսլամական հասարակապետություն (‘սոմա). Իսլամական տիեզերակալության տեսակետից աշխարհը բաժանվում էր երեք ոլորտների՝ Dār al-‘Islām (Իսլամի տուն), Dār al-‘Harb (Պատերազմի տուն) եւ Dār al-‘Ahd կամ Dār al-Sulh (Հաշտության կամ Զինադադարի տուն)³²: Առաջինը՝ մահմեդականների տիրապետության տակ գտնվող տարածքներն էին, երկրորդը՝ նրանց կողմից դեռեւս չնվաճված տարածքները, իսկ երրորդն՝ այս երկուսի միջև գտնվող այն երկրները, որոնք թեւ չէին նվաճվել մահմեդականների կողմից, սակայն հաշտության պայմանագրերով ճանաչել էին նրանց գերիշխանությունն ու հարկատու դարձել նրանց³³, կամ էլ՝ պարզապէս ժամանակավոր զինադադար կնքել

³⁰ Անգ: Հոռոմի պապերի համաշխարհային տիրապետության հավակնությունն ավելի հստակ ձեւակերպված է Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի 1248 թվականին գրված «Առ Հեթում թագաւոր» թղթում. «Գրեալ է (պապն), թէ Հոռոմայ աթոռն միայն ունի իշխանութիւն ի վերայ երկրի կապելոյ եւ արձակելոյ, եւ ծառայութիւն պարտին նմա ամենայն եկեղեցիք»: «Գիրք Քղթոց», էջ 658: Արժե հիշատակել նաեւ Գրիգոր Զ կաթողիկոսի նամակներից մեկը, որում Հոռոմի պապը համարվում է՝ «Գլուխ յետ Քրիստոսի, նուիրեալ ի նմանէ, եւ զլուխ կաթողիկէ Հոռոմէական եկեղեցոյ՝ ամենայն եկեղեցեաց մօր, այնչափ զգօն եւ սուրբ, որպէս պարտ եւ պատշաճ է լինել այնմ, որ փոխանակ առաքելոց է բարձրագոյն Քահանայապետ»: Պայճյան, Պատմութիւն, էջ 52:

³¹ Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 72–74: Հովհաննես Կոզեռնի տեսիլի մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան, Իրվագներ, հտ. 1, էջ 33–57:

³² Այս եզրույթների մասին մանրամասն տե՛ս Encyclopaedia of Islam, v. 2, p. 116, 126–128, 131.

³³ Dār al-‘Ahd-ի տրիպական օրինակ է համարվում, մասնավորապէս, Քեոզորոս Ռշտունու եւ Մուավիայի միջև 652 թվականին կնքված պայմանագրով սահմանված

վերջիններին հետ: Հանգամանքների բերմամբ, այն է՝ ստանձնած պարտավորությունների կատարումը կամ խախտումը նկատի ունենալով, երրորդ տիպի կարգավիճակում գտնվող երկրները մահմեդական իրավագետների կողմից կարող էին դիտվել մերթ Իսլամի, մերթ Պատերազմի ոլորտում: Իսլամի տան (Dār al-'Islām) գլուխը խալիֆն էր (Մուհամմեդի փոխանորդը), այլ կերպ կոչված 'Amīr al-Mu'minīn (Հավատացյալների հրամանատար)³⁴, որը մարմնավորում էր ինչպես հոգեւոր, այնպես էլ աշխարհիկ իշխանությունը: Մահմեդական բոլոր տիրակալները (սուլթաններ, էմիրներ, մելիքներ եւ այլն) իրենց իշխանությունն ստանում էին նրանից³⁵: Անգամ ապստամբության կամ պետական հեղաշրջման միջոցով մահմեդական աշխարհի զանազան երկրամասերին տիրած գահակալներն, իրենց իշխանությունը «լեզիտիմացնելու» նպատակով, ձգտում էին ստանալ խալիֆի հավանությունը: Առաջինը սելջուկներին էր վիճակված հիմնավորապես խախտել իրերի այդ դրվածքը. 1055 թվականին նրանց առաջնորդ Տողոուլը, խալիֆի ձեռնով վավերացնելով դեռեւս 1038-ից ինքնակոչ կերպով կրած սուլթանի իր տիտղոսը, իր ձեռնում կենտրոնացրեց Իսլամի տան աշխարհիկ իշխանությունը, խալիֆի տնօրինության տակ թողնելով միայն մահմեդական հասարակապետության հոգեւոր գործերը³⁶: Խալիֆի եւ սուլթանի հարաբերություններն, ըստ այդմ, թե՛ տեսական, թե՛ գործնական առումով, հիշեցնում են Հռոմի պապի եւ Գերմանական կայսեր հարաբերու-

Հայաստանի կարգավիճակը. տե՛ս Encyclopaedia of Islam, v. 2, p. 116.

³⁴ Հմմտ. Грязневич, Ислам и государство, с. 196–197. Այդ տիտղոսը «ամիրալմուճնի», «ամիրըլմուճնի», «ամիրմուճնի» կամ «ամիրմոճնի» ձեռով ծանոթ է նաեւ հայ հեղինակներին. տե՛ս Ղեւոնդ, Պատմութիւն, էջ 3; Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն, էջ 291, 295, 296, 304, 305, 329, 330, 332; Ասողիկ, Պատմութիւն, էջ 57, 60, 98, 104, 110, 111, 118, 135, 136, 168; Մատթէոս Ուռայեցի, Ժամանակագրութիւն, էջ 20, 24, 26; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 93; Կիրակոս Փանձակեցի, Պատմութիւն, էջ 60, 83; Սամուէլ Անեցի, Հաւաքումնք, էջ 82:

³⁵ Հմմտ. Бартольд, Теократическая идея, с. 309; Грязневич, Ислам и государство, с. 200.

³⁶ Մանրամասն տե՛ս Бартольд, Халиф и султан, с. 15–78; Гусейнов, Султан и халиф, с. 127–138; Makdlsi, Calife et Sultan, p. 228–236; Пиотровский, Светское и духовное, с. 175–188.

թյունները³⁷, նկատի ունենալով մանավանդ այն հանգամանքը, որ է՛ւ խալիֆը, է՛ւ պապը, հոգեւոր իրավասութիւններից բացի, այնուամենայնիվ օժտված էին նաեւ որոշակի ֆաղափական իշխանությամբ³⁸:

Իսլամի գերագոյն եւ վերջնական նպատակը ողջ աշխարհի նվաճումն էր³⁹, իսկ դրան հասնելու միջոցը՝ սրբազան պատերազմը (jihād)⁴⁰, որը յուրաքանչյուր մահմեդականի գլխավոր պարտականութիւններից մեկն էր, հավատի հինգ հենասյուների՝ խոստովանության (shahādāt), աղոթքի (ṣalāt), ողորմության (zakāt), պահիի (ṣawm) եւ ուխտագնացության (hāj) կողմին⁴¹: Մահմեդական աշխարհում, հետեւաբար, մեծ համբավ եւ հեղինակություն էին վայելում այն տիրակալներն ու զորավարները, որոնք ռազմական նվաճումների կամ ասպատակութիւնների միջոցով ընդլայնում էին Իսլամի ոլորտը: Քրիստոնյա ժողովուրդներից կամ հեթանոսներից հող գրաված մահմեդական առաջնորդներն օժտվում էին fātih (նվաճող) կամ ḡāzī (ասպատակիչ) պատվավոր տիտղոսներով:

Մահմեդականների կողմից նվաճված երկրներում հեթանոսներն ընդհանրապէս տեղ չունեին, իսկ սուրբգրական դավանության պատկանող ժողովուրդները՝ քրիստոնյաները, հուդայականները, ինչպէս նաեւ զրադաշտականները, դատապարտված էին երկրորդ կարգի ֆաղափացիների կամ հանդուրժված փոքրամասնության (ḍimma) ստորադաս վիճակի, դրանից բխող բոլոր սահմանափակումներով ու հարստահարութիւններով⁴²: Dimma-ի կամ Զիմմի կարգավիճակում գտնվող ֆաղա-

³⁷ Հմմտ. Cahen, The Turkish Invasion, p. 146.

³⁸ Հմմտ. Бартольд, Халиф и султан, с. 31–32.

³⁹ Հստ արաբ օրենսգետ Մավարդիի, օրինակ, պետք է լիներ միայն մեկ խալիֆ, որը պիտի տիրեր ողջ աշխարհին, երբ մահմեդականները հնազանդեցնէին բոլոր «անհավատներին». տե՛ս Петрушевский, Ислам, с. 150.

⁴⁰ Տե՛ս Bat Ye'or, Jihād et Dhimmitude, p. 28.

⁴¹ Հմմտ. Hitti, History, p. 130–138; Массэ, Ислам, с. 91–104; Петрушевский, Ислам, с. 73–80; Hourani, A History, p. 147–152; Waines, Islam, p. 89–93.

⁴² Իսլամական իրավունքի այդ ինստիտուտի մասին մանրամասն տե՛ս Cahen, Dhimmata, p. 227–231; Bat Ye'or, Jihād et Dhimmitude, p. 65–191, 262–309. Արաբական խալիֆաթում քրիստոնյաների եւ հուդայականների դրուժյան մասին տե՛ս նաեւ հե-

բացիները, երաշխավորված ազատություն ունենալով հանդերձ դավանելու իրենց կրոնը, միաժամանակ պարտավոր էին՝ գլխահարկ (jizyat) վճարել, ձի չհեծնել, զենք չկրել, հագուստի վրա տարբերանշան փակցնել, շամուսնանալ մահմեդական կնոջ հետ, նոր եկեղեցիներ կամ աղոթատեղիներ չկառուցել, եկեղեցու զանգերը չհնչեցնել, արարողական թափոններ չկազմել եւ այլն⁴³։ Այսօրվա հեռավորությունից դաժան թվացող այդ վերաբերմունքը, սակայն, շատ ավելի մեղմ էր, քան Կաթոլիկ եւրոպայում կամ Ուղղափառ Բյուզանդիայում, որոնց սահմաններում ոչ միայն ուրիշ կրոններ, այլեւ քրիստոնեական այլ դավանանքներ չէին հանդուրժվում։

Մեր խնդրի տեսակետից, սակայն, ամենակարեւորը քննության առարկա տիեզերակալական գաղափարախոսության այն դրույթն էր, որ թեկուզ կարճ ժամանակով երբեւէ մահմեդականների տիրապետության տակ հայտնված ցանկացած տարածք հավիտենապես համարվում էր Իսլամի ոլորտի անբաժանելի մասը⁴⁴։ Ըստ այդմ, այդ «Ռեւանջիստական» դրույթի գործողությունն ուղղակիորեն տարածվում էր Արեւելքում հիմնադրված խաչակրաց պետությունների, ինչպես նաեւ Կիլիկիո Հայոց թագավորության վրա։ Պատմական իրավունքի կամ պա-

տեւյալ հրաշալի աշխատությունը. Мей, Мусульманский Ренессанс, с. 38–58. Հայ պատմագիտության մեջ «Ջիմմիի», ինչպես նաեւ «Ջիհադի» ինստիտուտների լավագույն լուսաբանությունը տես Լեո, Երկերի ժողովածու, հտ. 2, էջ 275–279:

⁴³ *Ջիմմիի կարգավիճակի բարձրակետը հետագայում Օսմանյան կայսրությունում ձեւավորված Միլլեթի ինստիտուտն էր, որը սուլթաններին հնարավորություն էր տալիս տարբեր դավանանքների պատկանող ժողովուրդներին կառավարել Կոստանդնուպոլսում հաստատված նրանց հոգեւոր առաջնորդների միջոցով:*

⁴⁴ *Ինչպես, օրինակ, նշում է Ա. Տեր-Ղեւոնդյանը, արաբ աշխարհագրագետները Բագրատունյաց թագավորության հիմնադրումից հետո էլ «Հայաստանը համարում էին Իսլամի պետության սահմաններում գտնվող երկիր»։ Տեր-Ղեւոնդյան, Հողավաճների ժողովածու, էջ 339: Այս առումով խիստ ուշագրավ է նաեւ Արիստակես Լաստիվերտցու «Պատմութեան» մեջ պահպանված մի տեղեկություն, որի համաձայն՝ Սելջուկ սուլթանը Բյուզանդական կայսրից պահանջում է իրեն հանձնել նախկինում մահմեդականներին պատկանած տարածքները. «Տուրքբաղաքս եւ զգաւառս ինձ, զոր նախնիքն քո տարեալ են ի տաճկաց»։ Արիստակէս Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 96:*

հանջատիրության (irredentism) նման ընկալումն, ինչպես տեսանք, հատուկ էր նաև Բյուզանդական կայսրությանն ու Արեւմտյան Եւրոպային:

Հայ մատենագրության մեջ իսլամական տիեզերակալության գաղափարն արձանագրվել է միայն Մովսես Կաղանկատվացու եւ Ղեւոնդ Վարդապետի պատմություններում: Առաջինն արաբական խալիֆին կոչում է «տիեզերակալ պարծող»⁴⁵ կամ «տիեզերապետ գոռոզ»⁴⁶, իսկ երկրորդը տալիս է հետեւյալ հստակ ձեւակերպումը. «Ձի զպատուէր օրինադրին⁴⁷ իւրեանց ունէին օժանդակ, զոր պատուիրեացն որումանց սերմանողի, թէ «ելէ՛ք ի վերայ աշխարհաց, նուանեցէ՛ք զնոսա ընդ ձեռամբ ձերով, զի մեզ, ասէ, տուեալ է ի վայելս զպարարտութիւն երկրի»⁴⁸: Մի այլ տեղում Ղեւոնդն ավելացնում է, որ Աստված տիեզերական տիրապետություն էր խոստացել դեռեւս արաբների նախնուն՝ Իսմայելին. «Խոստացաւ տալ նմա զտիեզերս ի ծառայութիւն եւ ի հնազանդութիւն»⁴⁹:

Մոնղոլներ. Մինչ այժմ ներկայացված տիեզերակալական գաղափարախոսություններից ոչ մեկը գործնական առումով այնքան հիմնավորված չէր, որքան մոնղոլներինը, որովհետեւ նրանց էր, որ հաջողվեց ստեղծել մարդկության պատմության ամենաընդարձակ ցամաքային կայսրությունը: Բավական է նշել, որ Ջինգիզ-խանի մահվան պահին (1227 թ.) այն ընդգրկում էր ժամանակի հայտնի աշխարհի մոտավորապես կեսը⁵⁰: Մոնղոլների տիեզերակալական պատկերացումների հիմքում ընկած էր երկնում մեկ Աստված (Tengri), եւ երկրում մեկ տիրակալ սկզբունքը. նրանց իշխանությունն, ըստ այդմ, երկնապարզէ էր,

⁴⁵ Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն, էջ 194:

⁴⁶ Անդ, էջ 195:

⁴⁷ «Օրինադիր» ասելով, հեղինակը նկատի ունի Իսլամի հիմնադիր Մուհամմեդին:

⁴⁸ Ղեւոնդ, Պատմութիւն, էջ 4:

⁴⁹ Անդ, էջ 29. տե՛ս նաեւ՝ էջ 106: Թերեւս իսլամական տիեզերակալության ընկալում պետք է համարել նաեւ Մխիթար Այրիվանեցու հետեւյալ հակիրճ գրառումը. «Տաճիկք առին զաշխարհակալ իշխանութիւն», Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն, էջ 50:

⁵⁰ Հմմտ. Hartog, Genghis Khan, p. 144. Տե՛ս նաեւ՝ Бартольд, Чингиз-хан, с. 843; Греков-Якубовский, Золотая Орда, с. 36.

եւ նրանք Աստծու կողմից կոչված էին տիրելու ողջ աշխարհին⁵¹: Մյուս ազգերը պարտավոր էին հնազանդվել նրանց, իսկ դիմադրելու պարագայում ենթակա էին բնաջնջման: Այսպիսի պատկերացման շրջանակում չէր տեղավորվում ոչ միայն թշնամական, այլև նույնիսկ դաշնակից պետությունների գոյությունը, քանի որ դաշինքը կողմերի հավասարություն էր ենթադրում: «Պետք է իմանալ, — գրում է հայտնի ճանապարհորդ Պլանո Կարպինին, — որ նրանք ոչ ոքի հետ պայմանագիր չեն կնքում, եթե նրանք չեն հնազանդվում իրենց, որովհետև, ինչպես վերը հիշեցինք, նրանք ունեն Չինգիզ-խանի հրամանը՝ հնարավորության դեպքում բոլոր ժողովուրդներին իրենց ենթարկել»⁵²: Այս առումով ուշագրավ է հատկապես Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս IX-ի կողմից մոնղոլների հետ դաշինք կնքելու փորձին վերաբերող դրվագը: Երբ նրա դեսպան Ռուբրուկը 1254 թ. օգոստոսի 8-ին Մանգու խանին է ներկայացնում Լյուդովիկոսի առաջարկը, վերջինս պատասխանում է. «Այս է հավիտենական երկնքի հրահանգը. երկնքում կա մեկ հավերժական Աստված, իսկ երկրում մեկ տիրակալ՝ Չինգիզ-խանը, Աստծու որդին⁵³ ... Ուստի եթե համաձայն եմ մեզ ենթարկվել, ապա ուղարկեմ ձեր դեսպաններին, որպեսզի համոզվենք՝ արդյոք մեզ հետ խաղաղություն հաստատելու, թե՞ պատերազմելու մտադրություն ունեն»⁵⁴: Ինչպես այս հատվածից իրավացիորեն եզրակացնում են արդի հետազոտողները, սա ոչ այլ ինչ էր, եթե ոչ Ֆրանսիայի թագավորին ուղղված հնազանդության կոչ⁵⁵:

Մոնղոլների տիրապետության աշխարհակալական բնույթը լիովին գի-

⁵¹ Հմմտ. Roux, L'Empire Mongol, p. 56, 242; Ratchnevsky, Genghis Khan, p. 170; Hartog, Genghis Khan, p. 146; Soucek, Inner Asia, p. 105. Հստ Վ. Բարտոլդի՝ Չինգիզ-խանն ինքը տիեզերակալական նկրտումներ չի ունեցել, եւ համաշխարհային տիրապետության գաղափարը մոնղոլների մոտ առաջացել է նրա հետնորդների օրոք. Бартольд, Чингиз-хан, с. 842–843.

⁵² Плато Карпини, История, с. 55.

⁵³ Հստ Փանձակեցու՝ Չինգիզ-խանի սերունդները նույնպես «Աստուածորդի» էին կոչվում. Կիրակոս Փանձակեցի, Պատմութիւն, էջ 374:

⁵⁴ Рубрук, Путешествие, с. 180–181.

⁵⁵ Stéven Grousset, L'Empire des steppes, p. 348. Հմմտ. Լաուր Մայեր, Kreuzzüge, S. 236; Boyle, The Mongol Empire, p. XIII. 555.

տակցվել է նաև հայ իրականության մեջ: Նախ եւ առաջ հատկանշական է, որ հայկական ձեռագրերի թվագրման բանաձեւում այդ տիրապետությունը սովորաբար բնութագրվում է «տիեզերակալութիւն» կամ «աշխարհակալութիւն» բառերով, ինչպես, օրինակ. «ի տիեզերակալութեան Ապաղա դանին»⁵⁶, «ի տիեզերակալութեանն Ղուպիլա դանին»⁵⁷, «յաշխարհակալութեան մեծի Նետողաց, որոյ Արդուն անուն»⁵⁸, «յաշխարհակալութեան մեծի եւ ինքնակալ արքայի դան Ղազանին, որոյն Արդունին, ի տիրել տիեզերաց ցեղին Նետողաց»⁵⁹: Իսկ պատմագրական աղբյուրները բացահայտում են նաև մոնղոլական տիեզերակալության կամ աշխարհակալության գաղափարախոսական ակունքները: Այսպես, Վարդան Արեւելցին, Միխայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության հիշատակարանում, այդ առթիվ գրում է. «Ուսան եւ ի մոզուց անտի զարուեստ կախարդութեան, եւ առեալ հրամանս ի դիւքաց անտի՝ եթէ տուեալ է նոցա յԱստուծոյ զաշխարհ ամենայն, ելցեն վստահութեամբ եւ ժառանգեսցեն զնա»⁶⁰: Գրիգոր Ակնեցիին նույն գաղափարը վերատադրում է հետեւյալ ձեւով. «Եւ ասաց հրեշտակն տիրել ի վերայ բազում աշխարհաց եւ զաւառաց, եւ բազմանալ նոցա անթիւ եւ անհամար բազմութեամբ, որ եւ եղեն իսկ: ... Իսկ յորժամ իմացան այլադեմ եւ զազանաբարոյ ազգն այն, թէ կամք է Աստուծոյ տիրել մեզ ի վերայ երկրի,

⁵⁶ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 435:

⁵⁷ Անդ, էջ 462: Տե՛ս նաեւ՝ էջ 615:

⁵⁸ Անդ, էջ 668:

⁵⁹ Անդ, էջ 792–793: Տե՛ս նաեւ՝ էջ 301, 438, 462, 508, 557, 598, 637, 784, 792, 796, 800, 817, 829, 831, 835: Խաչիկյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 15, 18, 26, 28, 41, 42, 57, 65, 84, 152, 167, 182, 184, 215, 226, 234, 245, 259, 270, 271: Ավելի սակավ գործածական են «բռնակալութիւն» եւ «կայսրութիւն» բառերը. տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 301, 496, 515, 615, 666, 682, 682, 772, 787, 810: Խաչիկյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 6, 202, 257: Մոնղոլ խաների առնչութեամբ «տիեզերակալ» եւ «աշխարհակալ» տիտղոսները գործածվում են նաեւ հայ պատմագրական երկերում. տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 373, 377: Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն, էջ 67: Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն, էջ 153, 165, 176, 177, 215, 230:

⁶⁰ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 615:

ապա այնուհետև զաւրածողով լեալ, զնացին ի վերայ Պարսից»⁶¹: Քեւ հակիրճ, բայց ավելի դիպուկ է Կիրակոս Գանձակեցու ձեւակերպումը. «Սովորաբար զայս ասէին՝ զարբայն իւրեանց ազգակից Աստուծոյ, գերկինս առեալ Աստուծոյ իւր բաժին եւ գերկիրս տուեալ խաղանին»⁶²: Իսկ մի այլ առիթով Գանձակեցին տեղեկացնում է, որ Չինգիզ-խանն իր գորավարներին հրամայել էր «աւերել քանդել զամենայն աշխարհս եւ զթագաւորութիւնս տիեզերաց, եւ ոչ ես դառնալ առ նա՝ մինչեւ բովանդակեսցեն զամենայն աշխարհս նուանել ընդ տէրութեամբ նոցա»⁶³:

Դժվար չէ նկատել, որ ներկայացված աշխարհակալական դավանանքների բախման գլխավոր թատերաբեմը Մերձավոր Արեւելքն էր, որտեղ առաջացած բազմաթիվ փրիստոնյա թե մահմեդական փոքր պետություններին մնում էր խուսանալով կայսրությունների իրարամերձ ներհակությունների հորձանուտում եւ գոյատեւել մերթ հանդուրժված բուֆերային գոտու, մերթ ըմբոստ հպատակի, մերթ նվաճողի, մերթ էլ վասալի կարգավիճակով: Երկրամասը XI–XIV դարերում մանր ու մեծ թագավորությունների, իշխանությունների, սուլթանությունների ու էմիրությունների մի այնպիսի խառնարան էր, որը ոչ իսկ խճանկար (մոզաիկա), այլ գեղադիտակ (կալեյդոսկոպ) էր հիշեցնում՝ ծնվող եւ վերացող պետությունների անընդհատ հերթագայությամբ: Բավական է թեկուզ նշել, որ իր գոյության շուրջ 300 տարիների ընթացքում Կիլիկիո Հայոց պետությունն ունեցել է միմյանց հաջորդած տասներեք սահմանակից-հարեւան՝ Բյուզանդական կայսրությունը (1080–1176 թթ.), Սելջուկյան սուլթանությունը (1077–1192 թթ.), Փիլարտոսի իշխանությունը (1072–1090 թթ.), Գող Վասիլի իշխանությունը (1082–1117 թթ.), Դանիշմենդյան էմիրությունը (1071–1174 թթ.), Ռումի սուլթանությունը (1077–1277 թթ.), Եգեսիայի կոմսությունը (1098–1150 թթ.), Անտիոքի իշխանապետությունը (1099–1268 թթ.), Հալեպի Զանգիդյան աթաբեկությունը (1150–1181 թթ.), Սիրիայի եւ Եգիպտոսի Այյուբյան սուլթա-

⁶¹ Գրիգոր Ակենբքի, Պատմութիւն, էջ 20:

⁶² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 272: Հմմտ. նաեւ՝ Barhebraeus, Chronicon, p. 410; Bar Hebraeus, Chronography, p. 353.

⁶³ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 233:

նությունը (1181–1268 թթ.), Եգիպտոսի Մամյուֆյան սուլթանությունը (1268–1375 թթ.), Իրանի Հուլավյան իլ-խանությունը (1277–1335 թթ.) եւ Կարամանյան էմիրությունը (1277–1375 թթ.):

Հասկանալի է, որ իրավիճակների այսպիսի փոփոխականությունը փոքր պետությունների համար անհնար էր դարձնում ֆաղափական հաշվարկների վրա կառուցված երկարատեւ ռազմավարության գործադրումը: Ռազմավարության բացակայությունն, ըստ այդմ, Մերձավոր Արեւելքի երկրների, այդ թվում Կիլիկյան Հայաստանի եւ խաչակրաց պետությունների ամենաբնորոշ հատկանիշն էր, եթե, իհարկե, ռազմավարություն չհամարենք ինքնապահպանության նախածին բնագործ եւ ուժերի նպաստավոր դասավորության դեպքում հարեւանների հաշվին սեփական տարածքներն ընդարձակելու ձգտումը: Տվյալ պարագայում, հետեւաբար, առաջնային էին դառնում զուտ մարտավարական նշանակություն ունեցող գործնական (պրագմատիկ) նկատառումները: Հակամարտող կողմերի երկարատեւ շահերը կարճատեսորեն ստորադասվում էին պահի թելադրանքով ակնկալված ձեռքբերումներին: Գոյություն չուներ պետությունների ֆաղափական վարքը կարգավորող որեւէ չափանիշ: Ճարպկությունը, նենգությունը, երդմնազանցությունը, դավադրությունը, հակառակորդին խաբելու եւ ծուղակը զցելու ունակությունը ոչ միայն պախարակելի չէին, այլեւ առափնություն էին համարվում⁶⁴: Հանախակի էին անգամ հյուրընկալության կանոնների եւ դեսպանների անձեռնմխելիության իրավունքի խախտումները: Իսկ մարդկանց առեւանգման եւ փրկագնի դիմաց ազատ արձակելու երեւոյթը հասել էր անուելի չափերի: Մի խոսքով, միջպետական հարաբերություններում տիրապետողը ջունգլիների օրենքն էր. ով ինչ կարողանում գրավում էր, առանց մտածելու դրա հետեւանման մասին, որոնք կարող էին կործանարար լինել հենց գրավողի համար:

Փոքր պետությունների ֆաղափական վարքագծի տարերայնությունը խորանում էր այն հանգամանքով, որ նրանք հանախ նաեւ դառնում էին աշխարհակալ տերությունների կույր գործիք՝ օգտագործվելով իրենց վիճակակիցների դեմ ուղղված ծրագրերում: «Քաժանիր, որ տի-

⁶⁴ Հմմտ. Ապիշան, Միսուան, էջ 455:

րես» սկզբունքը, որի էությունը փոքր պետություններին միմյանց դեմ լարելու եւ այդու նրանց հնարավոր համագործակցությունը վիժեցնելու ձգտումն էր, հատուկ էր բոլոր գերտերություններին: Այս առումով ամենաբնորոշը, թերեւս, Մանուել I Կոմնենոս կայսեր վարած ֆաղափականությունն էր Կիլիկիայի հանդեպ: Զգտելով կանխել Ռուբինյանների հզորացումը, Բյուզանդական կայսրը 1150-ական թվականներին նրանց դեմ դրդեց նախ՝ Ռումի սելջուկյան սուլթանությանը⁶⁵, ապա՝ Անտիոքի իշխանապետությանը⁶⁶: Նույն կերպ, 1180-ական թվականներին, գերտերության հավակնություններ դրսևտրող նորաստեղծ Այուբյան սուլթանությունը փորձեց սեպ խրել Կիլիկիո հայկական իշխանության եւ Անտիոքի իշխանապետության միջեւ⁶⁷: Ռազմավարական մտածողության բացակայությունը եւ անմիջական շահ ձեռքբերելու գայթակղությունն, այսպիսով, փոքր պետություններին թույլ չէր տալիս ընկալել գերտերությունների եսասիրական հաշիվների մեջ ներհաշվելու իրողության կործանարարությունը, եւ նրանք զարմանալի հետետղականությամբ շարունակ ընկնում էին վերջիններիս լարած միտենույն ծուղակը:

Սա նշելով հանդերձ, հարկ է նկատի ունենալ, որ նույնիսկ աշխարհակալ պետությունների պարագայում ռազմավարական մտածողության ունակությունն ինքնին դեռեւս հաջողության գրավական չէր, քանի որ էականը ոչ թե սոսկ ռազմավարության առկայությունն էր, այլ նիշտ ռազմավարության ընտրությունը: Երեւույթի լուսաբանման տեսակետից կրկին ամենաբնութագրականը, թերեւս, կարելի է համարել Բյուզանդիայի օրինակը, նկատի առնելով նրա որդեգրած առնակատման ֆաղափականությունը Կիլիկիայի եւ խաչակրաց պետությունների նկատմամբ: Ըստ տարածված տեսակետի՝ այդ ֆաղափականությունը բխում էր Բյուզանդիայի ազգային շահերից եւ ավանդական ռազմա-

⁶⁵ Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 402-407; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 97-98; Վենետիկ, էջ 171-173; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 207-208; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 585; Մամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 133:

⁶⁶ Տե՛ս Guillaume de Tyr, t. 2, p. 209.

⁶⁷ Տե՛ս Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 525:

վարությունից⁶⁸, որի էությունը կայսրության հեղինակության եւ տարածման ամբողջականության վերականգնումն էր: Թվում է, թե Հովհաննես II եւ Մանուել I Կոմնենոս կայսրերի 1136–1138, 1142–1143 եւ 1158–1159 թթ. արեւելյան արշավանքների շնորհիվ Բյուզանդիան փայլուն հաջողությամբ լուծեց այդ խնդիրները⁶⁹: Սակայն նկատի ունենալով հետագա զարգացումները, հարց է առաջանում, թե արդյո՞ք արդարացվա՞ծ էին Բյուզանդիայի վատնած ահռելի ջանքերն ու հսկայական ծախսերը, եւ արդյո՞ք այդ թվացյալ հաջողությունները չէի՞ն նրա գալիք դժբախտությունների պատճառը: Կարծում ենք՝ կասկածից վեր է, որ կայսրությունը շատ ավելի մեծ հաջողությունների կհասներ, եթե հայերին ու ֆրանկներին հակադրվելու փոխարեն, նրանց հետ միասնական նակատ կազմած, փորձեր պայքարել փոքրասիական սելջուկների դեմ: Բացառված չէ, որ նման ֆաղափականության կիրառման պարագայում Մերձավոր Արեւելքի պատմությունը բոլորովին այլ ընթացք կարող էր ստանալ: Ռազմավարական տեսակետից՝ հայերի եւ ֆրանկների դեմ Բյուզանդիայի մղած պայքարն, ըստ այդմ, շատ ավելի աններելի կարճատեսություն էր⁷⁰, քան նույնիսկ XI դ. առաջին կեսում Մեծ Հայքի թագավորությունների բռնակցումը կայսրությանը, քանի որ այդ ժամանակ դեռեւս ոչ ոք ի վիճակի չէր պատկերացնել սելջուկ-թուրքերի առաջխաղացման վտանգի իրական չափը: Մինչդեռ հետագայում Բյուզանդիայի կողմից այդ վտանգի համառ անտեսումն ու ֆրիստոնեական ուժերի ջլատումն արդեն ոչ այլ ինչ էր, եթե ոչ նրա արեւելյան ֆաղափականության լիակատար սնանկության նշանավորումը: Դառնալով իր աշխարհակալական գաղափարախոսության եւ կայսերական ֆաղափականության

⁶⁸ Հմմտ. Chalandon, Les Comnène, II, p. 446 (հայերեն թարգմանությունը՝ Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 184):

⁶⁹ Ջ. Շալանդոնն, օրինակ, Հովհաննես կայսեր արշավանքը համարում է «կատարյալ հաջողություն», իսկ Մանուելինը՝ «նրա ամենամեծ քաղաքական հաջողություններից մեկը»: Chalandon, Les Comnène, II, p. 117, 418 (հայերեն թարգմանությունը՝ Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 163-164):

⁷⁰ Մասնավորապես ֆրանկների հանդեպ Բյուզանդիայի որդեգրած այս ճախորդ ու վերջին հաշվով իր համար կործանարար ռազմավարության քննությանն է նվիրված հետեւյալ արժեքավոր մենագրությունը. Harris, Byzantium, 2003.

գերին, Բյուզանդիան, փաստորեն, տարածաշրջանի միակ երկիրն էր, որն ինքնակամ կերպով իրեն գրկել էր Realpolitik-ի զինանոցից օգտվելու հնարավորությունից:

Որքան էլ տարօրինակ թվա, հակառակ միջնադարյան դիտորիկային, եւ հակառակ արդի պատմագիտության մեջ տարածված տեսակետին, մերձավորարեւելյան ֆաղափականության դերակատարների մոտ գործնականում բացակայում էր նաեւ կրոնական համերաշխության գիտակցությունը, ինչն արդյունք էր մի կողմից՝ արդեն նշված իրավիճակային գործելակերպի, մյուս կողմից՝ հակամարտ ճամբարների դավանաբանական պառակտվածության (ֆրիստոնյաների պարագայում կաթոլիկություն, ուղղափառություն, միաբնակություն, իսկ մահմեդականների պարագայում սուննիզմ, շիիզմ եւ իսմայելիզմ): Թեւ ֆրիստոնյաները մերթ ընդ մերթ կարողացան հակախլամական ճակատ ստեղծել (եւրոպական տարբեր երկրների կամավոր մասնակցությունը խաչակրաց արշավանքներին), սակայն նույն բանը մահմեդականներին երբեք չհաջողվեց: Խլամական երկրներն ի վիճակի եղան ֆրիստոնեության դեմ պայքարել միայն այն ժամանակ, երբ նրանցից մեկը, նվաճելով մյուսներին, կարողացավ ուժեղ կենտրոնացած պետություն ստեղծել (Ջանգիդներ, Այուբյաններ, Մամլյուֆներ): Շատ ավելի սովորական էր, երբ պատերազմների ժամանակ, զուտ հատվածական նկատառումներով, ձեւավորվում էին խայտաբղետ ռազմա-ֆաղափական դաշինքներ՝ անկախ դրանց մասնակիցների կրոնական պատկանելության հանգամանքից: Քրիստոնյա եւ մահմեդական պետությունների մի խումբ հաճախ մաքառում էր նույնպիսի կազմ ունեցող մի այլ խմբի դեմ: Ո՛չ մահմեդական, ո՛չ էլ ֆրիստոնյա պետությունները չէին խորշում հարկ եղած դեպքում օգնության կանչել իրենց այլադավան հարեւաններին՝ նրանց մասնակից դարձնելով իրենց հավատակիցների դեմ մղվող պայքարում: Նույնքան սովորական էին, սակայն, նաեւ հապնեպ ձեւավորված դաշինքների հանկարծակի փլուզումները, կնքված զինադադարների խախտումները, փոխադարձ դավանանությունները, գերեվարումներն ու ավարառությունները:

Փոքր պետությունները գրկված էին նաեւ կայուն եւ կանխատեսելի ֆաղափական գործոններից օգտվելու հնարավորությունից, քանի որ երեկվա

բարեկամը մյուս օրը կարող էր դառնալ թշնամի, կամ հակառակը: Քաղաքական գործոններն, ըստ այդմ, բազմանշանակ էին՝ միաժամանակ պարունակելով թե՛ դրական, թե՛ բացասական տարրեր: Այսպես, օրինակ, իտալական առետուրային հանրապետությունները մի կողմից՝ մեծապես նպաստեցին խաչակրաց պետությունների ստեղծմանը, տնտեսական զարգացմանն ու Եւրոպայի հետ մշտական հաղորդակցության ապահովմանը, մյուս կողմից, սակայն, իրենց ձեռքբերած հսկայական արտոնություններով, հարատև մրցակցությամբ, վեճերով ու կոիվներով, ընդհուպ մինչևի ֆաղաֆացիական պատերազմների հրահրումով, թուլացրին այդ պետությունները⁷¹: Նույնը վերաբերում է ռազմա-կրոնական միաբանություններին, որոնք լինելով լատին Արևելքի պաշտպանության հիմնական ապավենը, միաժամանակ իրենց ինքնավար վիճակից բխող անկառավարելի գործողություններով, կենտրոնական իշխանություններին չենթարկվելու տրամադրությամբ եւ արկածախնդրական ֆայլերով նույնպես նպաստեցին խաչակրաց պետությունների տկարացմանը⁷²: Այս առումով բնութագրական են նաեւ հայերի եւ խաչակիրների ամենեւին ոչ միանշանակ հարաբերությունները: Սկզբնական շրջանում վերջիններս ակամա մեծ ծառայություն մատուցեցին Ռուբինյան իշխանությանը՝ վերացնելով Դաշտային Կիլիկիայի ֆաղաֆներում տեղակայված թուրքական կայազորները: Բացի այդ, հիմնադրելով Եդեսիայի կոմսությունը եւ Անտիոքի իշխանապետությունը, խաչակիրները Կիլիկիայի արևելյան եւ հարավային սահմաններից հեռացրին մահմեդական երկրներից սպառնացող անմիջական վտանգը⁷³: Սակայն մյուս կողմից՝ ոչնչացնելով Մերձեփրատյան երկրամասի հայկական իշխանությունները, հետագայում նրանք այդ սահմաններն ավելի խոցելի դարձրին: Տվյալ երեւոյթն, ի դեպ, հատուկ էր ոչ միայն Բիստոնյա, այլեւ մահմեդական պետություններին: Այսպես, Հալեպի Զանգիդյան աթաբեկությունը մեծապես օգտվեց Այուբյան ֆրդերի ծառայությունից, բայց վերջիններս ժամանակի ընթացքում այնքան հզորացան, որ կործանեցին իրենց նախ-

⁷¹ Հմմտ. Grousset, Histoire, III, p. 197, 534–535; Grousset, L'Empire, p. 319–323.

⁷² Հմմտ. Grousset, L'Empire, p. 294–295; Mayer, Kreuzzüge, p. 77–78.

⁷³ Ներսեսյան, Կրկնադրոշմուած դրամները, էջ 155:

կին տերերին: Իսկ հետագայում Այուբյաններն, իրենց հերթին, ապավինելով մամլուֆյան բանակներին, վերջիվերջո դարձան նրանց զոհը: Գործոնների բազմանշանակության ամենացայտուն արտահայտությունը, սակայն, Կիպրոսի թագավորության օրինակն է, որի մասին մենք մանրամասն խոսել ենք սույն աշխատության առաջին հատորում⁷⁴:

XI–XIV դդ. Մերձավոր Արեւելքի բառսային թվացող այս վիճակի նկարագրությունը, բնականաբար, հարց կարող է առաջացնել, թե որն էր, այնուամենայնիվ, տարածաշրջանի փոքր պետությունների կենսունակության եւ երկարակեցության պատճառը: Այդ պատճառը, մեր կարծիքով, պետք է որոնել նախ՝ գերտերությունների հակասությունների եւ ապա՝ փոքր պետությունների ուժերի հավասարակշռության ոլորտում: Որքան էլ խայտաբղետ՝ փոքր պետությունների մարդկային, նյութական, զինական եւ պաշտպանական կարողություններն, այնուամենայնիվ, քիչ թե շատ համադրելի էին: Մոտավորապես համադրելի էր նաեւ նրանց բանակների թվաքանակը: Դրանք իրենց բնույթով ֆեոդալական բանակներ էին, կազմված պատերազմների ժամանակ վասալների տրամադրած զորքերից, որոնց թիվը, հակառակ միջնադարյան ժամանակագիրների չափազանցված տվյալներին, երբեք չէր անցնում քսան հազարից, ինչի վկայությունն են կոնկրետ ճակատամարտերի ու արշավանքների մասնակիցների թվաքանակի վերաբերյալ նույն ժամանակագիրների հաղորդած ավելի իրատեսական տեղեկությունները⁷⁵: Ֆեոդալական բանակներն ընդունակ էին հավասարը հավասարի պես պատերազմել միմյանց դեմ, սակայն անգոր էին չափվելու կայսերական (Բյուզանդիա), բոլորական (սելջուկներ եւ մոնղոլներ) ու մամլուֆյան մշտական բանակների հետ: Ուստի փոքր պետություններից ոչ

⁷⁴ *Տե՛ս Տե՛ր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 130–131:*

⁷⁵ *Հմմտ. Runciman, A History, I, p. 339. Խաչակրաց բանակների կազմի, թվաքանակի եւ մարտավարության մասին մանրամասն տե՛ս Small, Crusading Warfare; Marshall, Warfare; Lüders, Die Kreuzzüge, S. 31–49. Կիլիկիոն եւ Խաչակրաց բանակների թվաքանակի համեմատությունը տե՛ս Բակուրան, Մի տեսութիւն, էջ 81: Ըստ է. Բաղդասարյանի՝ Կիլիկիայում, Խաչակրաց Արեւելքի օրինակով, նաեւ ասպետական միաբանություն է ստեղծվել. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացի 1994, էջ 44–55:*

մեկն, ըստ էության, ի վիճակի չէր միայնակ վերջ տալու մի այլ պետության գոյությանը: Իսկ եթե նման մտադրություն ունեցող մի պետության, այնուամենայնիվ, հաջողվում էր դաշնակիցներ ձեռքբերել, ապա նրա ախոյանի շուրջ անմիջապես ձեւավորվում էր մի այլ դաշինք, ինչը վերականգնում էր հակամարտող կողմերի հավասարակշռությունը: Փոփոք երկրներին հատուկ էր նաեւ մյուսների հաշվին հզորացման ձգտող որեւէ պետության դեմ միավորվելու բնագրը:

Փոփոք պետությունների կենսունակության գաղտնիքը հասկանալու համար չպետք է մոռանալ, որ որքան էլ պատերազմներն ու հրոսակային հարձակումները հաճախադեպ լինեին, այնուամենայնիվ, խաղաղության շրջանները շատ ավելի տեսական էին, քան ռազմի տարիները: Այդ կարեւոր հանգամանքը տարածաշրջանի ժողովուրդներին հնարավորություն էր տալիս վերականգնել իրենց ուժերը, զարգացնել սեփական երկրների տնտեսությունը եւ օգտվել միջազգային առևտրի ընձեռած բարիքներից: Խաղաղության առավելությունների գիտակցությունն ու բարգավաճման ձգտումը ժողովուրդների մոտ, համենայն դեպս, շատ ավելի ընդգծված էին, քան պատերազմելու ցանկությունը: Որքան էլ միջնադարյան հեղինակները գովերգեին իրենց թագավորների կամ սուլթանների գինական առափնություններն ու քաջագործությունները, նրանց կողմից, այդուհանդերձ, ավելի բարձր էին գնահատվում այն պետական այրերը, որոնք խաղաղություն եւ բարօրություն էին պարգևում իրենց ժողովուրդներին, թեկուզ դրանք նվաճված լինեին փոխգիշումների ու նույնիսկ ոչ այնքան ձեռնտու պայմանագրերի գնով: Այսպես, օրինակ, Հովհաննես Երզնկացին այդ առթիվ գրում է. «Իշխանին պիտոյ (է)... գժամանակն ճանաչել պատերազմի եւ խաղաղութեան: Զի թէ գիտէ թէ ոչ կարէ մարտնչել, ... ապա... հրեշտակութիւն առափեալ աղաչեսցէ ի խաղաղութիւն, է՛ զի եւ գանձս տացէ, զի վասն այնորիկ են գանձք, եւ ամենայնիւ հնարեսցի զփրկութիւն երկրի»⁷⁶: Իսկ հիշատակագիրներից մեկը, նկատի ունենալով Հայոց Հեթում Ա թագավորի կողմից մոնղոլների գերիշխանությունը ճանաչելու եւ դրա շնորհիվ իր երկրի անվտանգությունն ապահովելու փաստը, գոհունակությամբ ար-

⁷⁶ *Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 96ա:*

ձանագրում է. «Արդ ի սոյն այս բազմավորով ժամանակի, ի ձեռն վերոյ նշանակեալ թագաւորին Հեթմոյ խորագէտ իմաստութեան եւ նախահոգակ հանճարեղութեան, մեք մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդորր»⁷⁷: Այս առումով ավելի միանշանակ է Արիստակես Լաստիվերտցոյ հետեւեալ միտքը. «Քագաւորաց օրէն է աշխարհի խաղաղութիւն եւ շինութիւն հոգալ»⁷⁸:

Սակայն արտաքին գործոններից առավել, փոքր պետությունների կենսունակության հիմնական ակունքը պետք է համարել նրանց ներքին կայունությունը, ժողովրդագրական եւ դավանական միատարրությունը, պետական համակարգի ամրությունը, բարձր մշակույթ ստեղծելու կարողությունը, ինչպէս նաեւ միջնադարին անհարիր թվացող այնպիսի վերացական գաղափարի առկայությունը, որպիսին ազգային գիտակցությունն էր: Ըստ այդմ, առ ի չգոյե այլ միջոցների, հետազոտողների համար միեւնոյն պայմաններում գոյակցած պետությունների կենսունակության չափանիշ է ծառայում նրանց երկարակեցությունը⁷⁹: Այս չափանիշով գնահատելիս, ստացվում է, որ XI–XV դարերում Մերձավոր Արեւելքի քաղաքական համակարգը կազմող քրիստոնյա թե՛ մահմեդական պետությունների շարքում ամենակենսունակներից մեկը Կիլիկյան Հայաստանն էր, որի կյանքը տեւեց շուրջ 300 տարի՝ ավելի, քան նույնիսկ Մամլուխյան Եգիպտոսի, Ռումի սուլթանության կամ Կիպրոսի թագավորության տեւողությունը⁸⁰:

Կիլիկիո Հայոց պետության երկարակեցությունը բացատրող գործոններից ամենավեճառն է, իհարկե, դեմոգրաֆիան էր: Չնայած որոշակի թվով հույն, ասորի եւ ֆրանկ քաղաքացիների գոյությանը, հայերը կազմում էին երկրի բնակչության մեծամասնությունը, եթե չասենք միատարրության հասնող, մեծամասնությունը: Հայոց պետությունը համարյա նույնքան միատարր էր նաեւ կրոնական առումով, եթե նկատի ունենանք, որ առնվազն մինչեւ XIV դ. սկիզբը հայերի մեջ, ինչ-ինչ տարածայնու-

⁷⁷ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 233:

⁷⁸ Արիստակես Լաստիվերտցի, Պատմութիւն, էջ 95:

⁷⁹ Հմմտ. Grousset, Histoire, III, p. XII.

⁸⁰ Հմմտ. Բակուրյան, Մի տեսութիւն, էջ 157, 161:

թյունների առկայությամբ հանդերձ, դավանաբանական պառակտումներ գոյություն չունեին: Նշված հանգամանքները Կիլիկիան շեշտակիորեն առանձնացնում էին Մերձավոր Արեւելքի մնացյալ պետություններից, որոնք բոլորն էլ այս կամ այն չափով բազմազգ եւ բազմադավան էին, իսկ նրանցից շատերում իշխանությունը գտնվում էր փոքրամասնություն կազմող ազգերի ձեռքում: Այս առումով ամենաբնութագրականը խաչակրաց պետությունների օրինակն է, որոնցից յուրաքանչյուրում ֆրանկները, տիրապետող ազգ լինելով հանդերձ, կազմում էին բնակչության չնչին փոքրամասնությունը, ինչը վերջիվերջո պիտի դառնար նրանց կործանման գլխավոր պատճառը⁸¹: Բավական է թեկուզ նշել, որ 1180-ական թվականների սկզբում Երուսաղեմի թագավորության 400–500 հազար բնակիչներից լատին էին միայն 120 հազարը⁸²:

Ժողովրդագրական եւ դավանական միատարրությունն, անշուշտ, պարարտ հող էր ազգային մշակույթի զարգացման եւ, ինչու չէ, նաեւ ազգային գիտակցության ու արժանապատվության ձեւավորման համար: Չձանրանալով կիլիկյան բարձրակարգ մշակույթի վրա, ինչը հանրածանոթ իրողություն է, հարկ ենք համարում, թեկուզ հարցադրման կարգով, համառոտակի անդրադառնալ երկրորդ խնդրին: Թեւեւ միջնադարում ազգ հասկացությունը, սովորաբար, նույնացվում էր դավանական պատկանելությանը, ինչի պատճառով, օրինակ, վրացադավան կամ հունադավան հայերը կոչվում էին վրացի կամ հույն⁸³, սակայն կիլիկյան շրջանում, կարծես թե, արդեն սկսում էր տարբերություն դրվել ազգության եւ դավանանքի միջեւ: Դրա ամենացայտուն վկայությունը Ներսես Շնորհալու՝ Լեւոն Ա-ին վերաբերող «որ էր հայ ըստ ազգի եւ հաւատոյ» արտահայտությունն է⁸⁴: Մրան հավասարազոր են Սյունյաց իշխան Սմբատ Օրբելյանի՝ Մանգու

⁸¹ Հմմտ. Grousset, L'Empire, p. 202, 213, 314; Runciman, A History, II, p. 291, 294; Prawer, Histoire, I, p. 505; Prawer, The Crusaders' Kingdom, p. 356–358; Mayer, The Crusades, p. 186; Riley-Smith, The Crusades, p. 50, 63.

⁸² *Sh'u Nicholson-Nicolle, God's Warriors*, p. 9.

⁸³ *Տե՛ս Հովհաննիսյան, Դրվագներ, հտ. 1, էջ 112–116; Հմմտ. նաեւ Ժ. Լորանի եւ Ժ.-Պ. Մահեի՝ այդ խնդրին նվիրված ուշագրավ աշխատությունները. Laurent, L'Arménie, p. 175–191; Garsoïan-Mahé, L'Identité Arménienne, p. 59–78.*

⁸⁴ *Մաթեոսյան, Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ, էջ 162:*

խանի առջեւ արտասանած հետեւյալ խոսքերը. «Հաւատով քրիստոնէայ եմ եւ ազգաւ հայ»⁸⁵: Նույն մտայնության դրսեւորումն է նաեւ այն, որ հայ հեղինակները, տեղյակ լինելով բյուզանդական որոշ պաշտոնյաների, ինչպէս, օրինակ, Փիլարտոսի եւ Թաթուլի հունադավան լինելու իրողությանը, նրանց, այնուամենայնիվ, «ազգաւ հայ» են կոչում⁸⁶: Այս առումով ամենաբնութագրականը Մատթէոս Ուռնայեցոյ՝ Փիլարտոսին վերաբերող հետեւյալ վկայությունն է. «Վարճն եւ կրօնքն զՀոռոմոցն ունէր, եւ հայրենեօքն եւ մայրենեօքն Հայ էր»⁸⁷: Դավանանքի եւ ազգության տարբերությունն զգացվում է նաեւ Սմբատ Սպարապետի ու Վարդան Արեւելցոյ այն տեղեկություններում, որոնց համաձայն՝ Փիլիպոս Անտիոքացուն թագադրելուց առաջ նրա առջեւ պայման էր դրվել՝ «որ հայենակ կենայր» կամ «հայադաւան եւ հայասէր լինել»⁸⁸: Ինչ վերաբերում է ազգային արժանապատվության դրսեւորումներին, ապա դրանց մասին տեղեկությունները նույնպէս հազվագյուտ չեն հայկական աղբյուրներում: Այդ առումով հատկապէս ուշագրավ է Գագիկ Թ թագավորի հույն դահիճների՝ Մանդալեի որդիների հետ Թորոս Ա իշխանի տեսած հաշվեհարդարի դրվագը: Երբ նրանցից մեկը հանդիմանում է վերջինիս, ասելով՝ «Դու հայ մարդ ես, եւ մեք Հոռոմի իշխանք, զի՞նչ կամիս պատասխանի տալ Հոռոմոց թագաւորին», Թորոսը հակադարձում է. «Ո՞վ էիք դուք, որ զայր հզօր եւ զօծեալ թագաւոր Հայոց սպանանէիք, եւ կամ զի՞նչ պատասխանի ետում ազգին Հայոց»⁸⁹:

⁸⁵ *Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 154:*

⁸⁶ *Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 104; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 114: Տե՛ս նաեւ՝ Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 564:*

⁸⁷ *Մատթէոս Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, էջ 206:*

⁸⁸ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 121; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 176:*

⁸⁹ *Մատթէոս Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, էջ 320: Այս առումով ուշագրավ է նաեւ Մանդալեի որդիների դեմ Փիլարտոսի ընդվզման փաստը, որի մասին տեղեկացնում է նույն ժամանակագիրը. «Եւ յայնժամ յղարկեալ առ նոսա անօրէն Փիլաոտոսն եւ ասէր, եթէ՛ Զիա՞րդ համարձակեցայք զայդ գործել ընդ առն թագաւորի. եթէ թողոյք եւ եթէ ոչ, ձեզ կորուստ գործեցիք զայդ» (Մատթէոս Ուռնայեցի, Ժամանակագրութիւն, էջ 220. նույնը՝ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ էջ 86–87): Սա ցույց է տալիս, որ թեեւ Փիլարտոսը հունադավան էր եւ գոնե*

Նման մի փաստ կապված է նաև Քորոս Բ-ի անվան հետ: Երբ Պաղեստինը տասնյակ հազարավոր հայ ընտանիքներով բնակեցնելու նրա առաջարկի դիմաց լատին կղերականները պայման են դնում նրանցից գլխահարկ գանձել, Հայոց իշխանը վրդովված հայտարարում է. «Ստորոկ դառնալու համար չէ, որ հայերը ուրիշ երկիր պիտի գնան»⁹⁰:

Կիլիկիայում ազգային գիտակցության ձևավորման խթաններից մեկը պետք է համարել Բագրատունյաց թագավորության հիշատակի թարմությունն ու կորույսյալ պետականության վերականգնման երազանքը: Անիի անկումից (1045 թ.) մինչև Կիլիկիո հայկական իշխանության սկզբնավորումն (1080 թ.) ընկած երեսունհինգամյա ժամանակաշրջանում, քանի դեռ ողջ էր ազգային պետության խորհրդանիշը հանդիսացող Գագիկ Բ գահագուրկ թագավորը, հայությունը դեռևս չէր կորցրել սեփական հայրենիք ունենալու հույսերը, որոնք ամրապնդվում էին կապաղովկյան աֆսոսում վերջինիս ծավալած բուռն գործունեությամբ⁹¹: Այս առումով ուշագրավ է մանավանդ Մատթեոս Ուոհայեցու այն տեղեկությունը, որ Հայոց թագավորությունը վերականգնելու նպատակով Գագիկը նույնիսկ մտադրվել էր դիմել Սելջուկյան սուլթան Ալի-Արսլանի օգնությանը⁹²: Նույնքան ուշագրավ պետք է համարել այն, որ Գագիկի ողբերգական վախճանը ոչ թե հուսալիզող, այլ համախմբող նշանակություն ունեցավ Հայոց իշխանների և Բագրատունյաց բանա-

առերես Բյուզանդական կայսեր հպատակը, բայց էությունը լիարժեք հայ էր և հայոց իրավունքների ու արժանապատվության կրողն ու պաշտպանը: Ավելի մանրամասն տես Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հտ. 1, էջ 430, ծանոթ. 39:

⁹⁰ Սուրբ Երկրում հայերի վերաբնակեցման այդ ծրագրի մասին մանրամասն տես Grousset, Histoire, II, p. 602–604; Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հտ. 1, էջ 279–281; Dédéyan, Un projet, p. 101–140.

⁹¹ Այդ մասին մանրամասն տես Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրություն, էջ 95, 161–163, 180–183: Հմմտ. նաև Grousset, L'Arménie, p. 618–622, 630–631; Dédéyan, L'immigration, p. 67–68, 91–92.

⁹² «Նորհեցաւ զնալ առ Աբասլան սուլտանն Պարսից և տիրանալ աթոռոյ թագաւորութեան տանն Հայոց, զի բազում անգամ կոչէր զԳագիկ սուլտանն, և նա յաղաքս քրիստոնէական հաւատոյ արգելեալ լինէր»: Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրություն, էջ 180: Հմմտ. Dédéyan, L'immigration, p. 110–111.

կի մնացորդների համար⁹³, որոնք ապաստանելով Կիլիկիայում եւ Կոմագենեում⁹⁴, նոր եռանդով լծվեցին օտար եզերքներում ազգային պետականության վերականգնման գործին: Ռուբինյաններն ու Հյուսիսային Ասորիքում հաստատված հայ իշխաններն, այսպիսով, ոչ թե ինքնակոչ բախտախնդիրներ էին, ինչպես երբեմն նրանք ներկայացվում են արդի պատմագիտության մեջ⁹⁵, այլ հայրենիքի անկախությունը նաշակած վերջին սերնդի ներկայացուցիչներ՝ օժտված ակնբախ պետական մտածողությամբ, ինչը պիտի արտահայտվեր նրանց հետագա գործունեության ամեն ֆայլափոխում: Քաղաքատույնաց թագավորության եւ Կիլիկիո Հայոց պետության կապն, ըստ այդմ, խորհրդանշականից ավելին էր՝ միանգամայն առարկայական ու շոշափելի:

Եւ վերջապես, միջնադարյան միապետությունների կայունության եւ կենսունակության կարեւորագույն գործոններից մեկն էլ հստակ կանոնակարգված գահաժառանգության իրավունքի առկայությունն ու իշխանության օրինական փոխանցման ապահովումն էր⁹⁶, որը թույլ էր տալիս երկիրը զերծ պահել ներքին գահակալական ցնցումներից եւ մանավանդ արտաքին միջամտություններից: Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ հայտնի չէ որեւէ դեպք, երբ գահակալության խնդիրը դառնար արտաքին ուժերի լուրջ միջամտության առարկան: Ընդհակառակը, առնվազն երկու անգամ Հայոց պետությունն ինքն է խառնվել հարեւան երկրներից մեկի՝ Անտիոքի իշխանապետության գահակալական վեճերին: 1160 թվականին, երբ Անտիոքի դիսուսի Կոնստանսը,

⁹³ Տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 220:

⁹⁴ Անդ, էջ 323:

⁹⁵ Հմմտ. Grousset, Histoire, I, p. XLII, XLIII; 50, 59 (հայերեն թարգմանությունը՝ Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 197, 198, 202, 216):

⁹⁶ Ի դեպ, սովյալ իրողության կարեւորությունը լիովին գիտակցվել է նաեւ միջնադարում, մասնավորապես Վահրամ Բաբունու աշխատություններից մեկում, որում գահաժառանգության օրինականությունը դիտվում է որպես պետության կայունության երեք գլխավոր գործոններից մեկը՝ թագավորի բարեպաշտության եւ իմաստուն ղեկավարության կողքին. տե՛ս Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 53-54: Այդ մասին ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության հաջորդ ենթագլխում:

ոտնահարելով իր տասնվեցամյա որդու՝ Բոհեմունդ III-ի իրավունքը, փորձեց բյուզանդացիների աջակցությամբ զավթել իշխանությունը, վերջինիս կողմնակիցներն, իրենց հերթին, դիմեցին Հայոց Թորոս Բ իշխանի օգնությանը, որը փութալով Անտիոք, լուծեց այդ վեճը՝ օրինական գահաժառանգի օգտին⁹⁷ : Իսկ 1216 թվականին, երկարատև պայքարից ու բազմաթիվ ձախողված փորձերից հետո, Հայոց Լեոն Բ (I) թագավորն Անտիոքի իշխանապետության գահին բազմեցրեց իր զարմիկ Ռայմոնդ-Ռուբենին⁹⁸ :

Սակայն Կիլիկիայի պարագայում իշխանության «լեգիտիմության» խնդիրը չի սահմանափակվել միայն գահաժառանգության կանոնակարգված իրավունքի գործադրմամբ, որն ընդամենը ապահովել է իշխանության փոխանցման օրինական ընթացքը իշխող արհայատոհմի ներսում: Դրանից բացի, Ռուբինյանները բախվել են իրենց «լեգիտիմության» հետ կապված ես երկու լուրջ խնդիրների, առաջին՝ հույներից զավթված երկրին տիրելու իրավունքի նանաչումը, որն ի վերջո իրականություն պիտի դառնար Կիլիկիայի եւ Բյուզանդիայի միջեւ ուժերի հարաբերակցության փոփոխության արդյունքում, եւ երկրորդ՝ Կիլիկիայում հաստատված մյուս հայ իշխանների վրա իրենց գերակայությունը տարածելու օրինականության հիմնավորումը, որին մասնավորապես ծառայել են Գագիկ թագավորի հետ Ռուբինյանների նախնու ունեցած մերձավորության իրողությունը եւ նրա արհայական ծագման մասին հետագայում հորինված լեգենդը⁹⁹ : Խնդրի կարեւորությունն ու անբավարար ուսումնասիրվածությունը նկատի ունենալով, «Խաչակիրները եւ հայերը» աշխատության երկրորդ հատորն, արդ, ամբողջությամբ նվիրել են Կիլիկյան Հայաստանի գահաժառանգության իրավունքի եւ իշխանության «լեգիտիմության» հարցի փնտրությանը:

⁹⁷ «Իսկ պարոն Թորոս յետ գերութեան Ռնադտին եկն յԱնտաք, եւ կացոյց բրինձ Անտաքու զորդի նորա զՊամուդն՝ ո՛չ կամելով յօրն»։ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 450: Տե՛ս նաեւ՝ Barhebraeus, Chronicon, p. 329; Bar Hebraeus, Chronography, p. 288.

⁹⁸ Այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատութեան «Ռայմոնդ-Ռուբեն՝ գահակից թագավոր Հայոց եւ Անտիոքի պրինց» ենթագլխում:

⁹⁹ Հմմտ. Grousset, L'Arménie, p. 633-634.

**ԳԱՀԱԺԱՌԱՆ ԳՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎՈՒՆՔԸ ԵՒ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ
«ԼԵԳԻՏԻՄՈՒԹՅՈՒՆԸ» ԿԻԼԻԿՅԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ**

ՆԱԽԱԳԻՏԵԼԻՔ

Չնայած իր ներկայացրած լուրջ կարեւորությանը, գահաժառանգության խնդիրն առայժմ պատշան ուշադրության չի արժանացել Կիլիկյան Հայաստանի պատմության հետազոտողների կողմից: Դրան քիչ թե շատ հանգամանորեն անդրադարձել է միայն կիլիկյան հարստությունների տոհմաբանության հմտագույն ուսումնասիրող Վ. Ռուդ-Կոլենբերգը, մասնավորապես հանգելով հետեւյալ եզրակացության. «Գահաժառանգության իրավունքը, թվում է, երբեւէ հստակորեն չի սահմանվել Կիլիկիայում. պարզ չի եղել, թե արդյո՞ք թագը ժառանգակա՞ն էր, եւ եթե այո, ապա ինչ սկզբունքով, կամ թե արդյո՞ք թագավորն ընտրվել է բարոնների՞ կողմից, եւ եթե այո, ապա ինչ կանոններով: Այս անորոշության բացատրությունը հունական, լատինական եւ արաբական ազդեցությունն է ֆաղափական մտքի վրա, որն առանց այդ էլ ենթակա էր ֆաղափական վերնախավի ներգործությանն ու անհատական ձգտումներին: Հստակ սահմանված իրավունքների բացակայության պայմաններում թագի հավակնորդները միշտ էլ կարող էին վկայակոչել լատինական օրենքը (իզական գծով գահաժառանգման իրավունք), արաբական սովորույթը (եղբայրների նախապատվություն որդիների նկատմամբ), հունական սովորույթը (անդրանկածնության իրավունքի բացակայություն եւ գահակցություն), կամ էլ հին հայկական ավանդույթը: Իրավական նկատառումները փաստորեն երկրորդական էին XII դարի ընթացքում: Քանի դեռ պետությունը գուրկ էր որեւէ իրավական հիմքից, քանի դեռ նրա անկախությունը «դե յուրե» կայանում էր Բյուզանդական կայսրության դեմ ապստամբած լինելու հանգամանքում, քանի

դեռ նրա սահմանները հստակորեն նշտված չէին, եւ նորածին պետութիւնը հարկադրված էր պաշտպանվել թե՛ հարեւաններից, թե՛ կայսերական տիրապետությունից, գերակայող ուժեղագույնի կամ հմտագույնի իրավունքն էր իրավական նկատառումների համեմատ: Թագավորության ստեղծումը պահանջում էր սահմանադրություն՝ գահաժառանգությունը կանոնակարգելու նպատակով: Լեւոն I-ը, որը միայն դուստրեր ուներ, փորձեց ներդնել Երուսաղեմի «Ասիզները»: Բարոնները հակադրվեցին նրան, վկայակոչելով հին հայկական սովորույթը (Մխիթարի դատաստանագիրքը): Շուրջ 1250 թվականին, Սմբատ Գունդստապլը, թարգմանելով Անտիոքի Ասիզները, ջանքեր գործադրեց հարմարեցնելու դրանք եւ հաշտեցնելու երկու տեսակետները, բայց հաջողության չհասավ: Ո՛չ ժառանգական իրավունքը, ո՛չ էլ բարոնների իրավունքները հստակորեն սահմանված չեն նրա կողմից: Իրականում, մի ողջ հարյուրամյակ, ո՛չ թագավորը, ո՛չ էլ բարոնները վերջին հաշվով չկարողացան թագի հարցում կշեռքի նժարը թե՛ել իրենց կողմը. խնդրի լուծումը կախված էր իշխանների բարի կամքից, ինչի ապացույցն են գահաժառանգության համար Լեւոն II-ի որդիների միջեւ ծագած բախումները: XIV դարում շարունակվեց հակամարտությունը լատինական եւ ազգային իրավունքների կողմնակիցների, այսինքն՝ գահաժառանգության խստորեն սահմանված լատինական իրավունքի եւ ավելի նկուն ավանդական սովորույթի պաշտպանների միջեւ»¹:

Հետեւելով Ռուդ-Կոլենբերգին, Կ. Մուքաֆյանը նույն խնդրի վերաբերյալ գրում է հետեւյալը. «Թագավորական հաջորդականությունն սկզբունքորեն ժառանգական էր, բայց հարկադրական վիճակներում անդրանիկ որդին կարող էր, եկեղեցու համաձայնությամբ, անտեսվել հօգուտ ավելի հարմար նկատվող մեկ ուրիշի: Իրականում գահաժառանգության իրավունքը խստորեն կանոնակարգված չէր. խոշոր բարոնների խորհուրդն (այս հարցում) վեոական ձայնի իրավունք ուներ: Այսպես, Լեւոն I-ը հարկադրված էր հաշվի նստել բարոնների հետ, երբ որպես իր ժառանգորդ ընտրեց նախ՝ Ռայմոնդ-Ռուբենին, ապա՝ Զապելին: Իրավական ապարատի այդ բացը անխուսափելիորեն հակա-

¹ Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 27.

մարտություններ պիտի հարուցեր: Պայքարներով նշանավորվեցին Լեւոն I-ի, իսկ այնուհետեւ Լեւոն II-ի հետնորդի հետ կապված խնդիրները, երբ վերջինիս չորս որդիները հավակնում էին նրա ժառանգությանը: Դրությունը նորից բարդացավ, երբ անժառանգ մահացավ Լեւոն IV-ը՝ արական գծով Հեթում I-ի վերջին ուղիղ շառավիղը: Պայքարի ասպարեզում հայտնվեցին մի կողմից Լուսինյանները, որոնք Հեթումի ուղիղ շառավիղներն էին, սակայն Զապելի՝ «Տյուրոսի տիրուհու» գծով, մյուս կողմից՝ Նդիրցիները, որոնք արական գծով սերում էին Հեթումի մի եղբորից»²:

Իսկ այժմ տեսնենք, թե ինչպես է այդ հարցը ներկայացված կիլիկյան իրավունքի գլխավոր հուշարձանում Սմբատ Սպարապետի «Դատաստանագրում»³: Տվյալ դեպքում մեզ չեն հետաքրքրում Սմբատի եւ Մխիթար Գոշի «Դատաստանագրերի» առնչակցության հարցերը, որոնք հանգամանորեն քննարկված են մասնագետների կողմից: Կարելուրն այն է, որ, օգտվելով զանազան աղբյուրներից, այդ թվում Գոշից, Սմբատն ընտրել է այն դրույթները, որոնք համապատասխանել են Կիլիկյան պետության իրավահարաբերություններին⁴: Գահաժառանգության իրավունքին Սմբատ Սպարապետն անդրադարձել է իր աշխատության առաջին եւ յոթանասունվեցերորդ գլուխներում, որոնցում մասնավորապես արձանագրված են մեր խնդրին առնչվող հետեւյալ 12 դրույթները.

² Mutaflan, Recherches, p. 126.

³ Սմբատի «Դատաստանագիրքն» ունեցել է երեք հրատարակություն: Առաջինը, զուգահեռ գերմաներեն թարգմանությամբ, իրականացրել է մեծանուն հայագետ Յոզեֆ Կարստը 1905 թվականին (Karst, Armenisches Rechtsbuch, Bd. 1): Երկրորդը, Արսեն Դտճյանի աշխատասիրությամբ, լույս է տեսել 1918 թվականին (Սմբատ, Դատաստանագիրք), իսկ երրորդը՝ Ա. Գալստյանի աշխատասիրությամբ եւ հանդիպողի ռուսերեն թարգմանությամբ, 1958 թվականին (Смбат Спарпет, Судебник): Մենք օգտագործել ենք այս վերջին հրատարակությունը:

⁴ Այդ հարցի վերաբերյալ արտահայտված տեսակետների մասին տես՝ Галстян (Смбат Спарпет, Судебник, с. XVIII–XIX). Հմմտ. նաեւ՝ Սամուելյան, Իրավունքի պատմությունը, էջ 93–94; Сукнасян, История, с. 196–197; Սուքիասյան, Կիլիկիա, էջ 240; Գրիգորյան, Իրավագիտությունը, էջ 418; Քորոսյան, Իրավունք, էջ 822; Торосян, Суд и процесс, с. 42; Մեհրաբյան, Կիլիկիա, էջ 80, 84:

ա. «Նովոսով⁵ է՝ զանդրանիկն կացուցանել յաթոռ ինճնակալութեանն»⁶, այսինքն՝ զահը ժառանգելու իրավունքն օրենքով պատկանում է անդրանիկ որդուն: Այն, որ Սմբատը սա արձանագրել է իր աշխատության ամենասկզբում, նշանակում է, որ նա այն համարել է զահաժառանգման առաջին եւ գլխավոր սկզբունքը:

բ. «Քայց վասն աւգտութեան աշխարհաց իրաւունք է, որ աղէկ տեսնու հայրն, իր ամէն գաւառամն եւ գաւառապետացն տեսովն եւ սուրբ եկեղեցովն, որ յոր հանին յորդոց թագաւորին եւ գիտնան, որ բարի բարով լինի, եւ աստուածասէր ու երկիրդի եւ ըռատակն⁷, նա զայն կացուցանեն յաթոռ ինճնակալութեան հաւրն, որ հովվէ զեղբարն եւ զերկիրն»⁸, ինչը նշանակում է, որ շնայած առաջին սկզբունքի իրավագործությանը, թագավորը պարտավոր է նաեւ հաշվի նստել հասարակական կարծիքի հետ եւ, երկրի շահից ելնելով, զահ բարձրացնել իր որդիներից արժանավորագույնին:

գ. «Նւ թէ որդիքն մեռել լինին թագաւորին, նա որդոցն որդիքն ժառանգեն զթագաւորութիւնն եւ ոչ դստերացն. զի քանի որձ դասուն ժառանգն բաւեն, նա իզացն խափանած է յաւրինաց, զի զէդ ատար է համարած իզաց ժառանգն յԱստուծոյ Մովսէսի բերանով»⁹: Եթէ թագավորի որդիները մահացել են, ապա զահ պետք է բարձրանան նրա որդիների որդիները: Դուստրերի որդիներն այդ իրավունքից զրկված են մովսիսական օրենքով:

դ. «Քայց թէ աննարկութեն է լինի, որ բնաւ որդի չկենայ թագաւորին, այլ դուստր, նա կարէ հայրն թագել զինք»¹⁰: Եթէ թագավորն ընդհանրապէս զրկված է արու զավակից, ապա նա կարող է թագադրել իր դստերը:

⁵ Նովոսով — փոխառութիւն հունարենից (νόμος). նշանակում է՝ օրենք. տե՛ս Աճառյան, ՀԼՊ, հտ. 2, էջ 25:

⁶ Смбат Спарпет, Судебник, с. 7.

⁷ Ըռատակ = առատածեռն, մեծահոգի, վեհանձն. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 236–237:

⁸ Смбат Спарпет, Судебник, с. 7.

⁹ Անդ, էջ 8:

¹⁰ Անդ:

ե. «Հետ իր մահուն շինի ժառանգ աթոռոյն այն թագած դստերն որդիքն»¹¹: Թագադրված դստեր մահվան դեպքում, վերջինիս որդիներն իրավունք չունեն ժառանգելու գահը:

զ. «Զեղբար որդիսն դնեն երկրին հաւատարիմքն յիրենց պարոնին աթոռն, որ յիրենց պարոնին սերմէն է եւ ոչ աւտար սերմի ծնունդ»¹²: Կնելով նախորդ հողվածի շարունակությունը, այս դրույթը հաստատում է, որ թագադրված դստեր մահից հետո երկրի երեւելիները զահ պետք է բարձրացնեն թագավորի եղբորորդիներին, քանի որ նրանք իրենց տիրոջ, եւ ոչ թե օտար զարմից են:

է. «Ու կարաւղ է թագաւորն յի առողջութեան եւ ի մահուն կտակ գրել, ու սահմանել եւ տալ զլեռն եւ զդաշտն եւ զիր ամէն երկիրն՝ զինչ ցեղ որ իր կամքն լինի, որ չկարէ իր որդի եւ ոչ այլ մարդ դիմադարձ կանգնել»¹³: Այս հողվածի համաձայն՝ թագավորն իրավունք ունի իր ողջ կարողությունը՝ լեռները, դաշտերը, համայն երկիրը կտակելու ում կամենա, եւ ոչ ոք չի կարող ընդդիմանալ դրան: Եթե նա կարող էր կտակել ողջ երկիրը, ապա պետք է ենթադրել, որ իրավունք ուներ կտակելու նաեւ թագավորական գահը: Թեեւ Սմբատը դա չի մասնավորեցնում, սակայն նրա աղբյուրը հանդիսացող Մխիթար Գոշի «Դատաստանագրում» խոսքը վերաբերում է հենց գահը կտակելուն. «Եւ եթէ կտակ արասցէ արբայ, որբան կենդանի է, իշխան լիցի փոփոխել ըստ արժանոյն, զի կտակ յետ մահու հաստատուն է ըստ առաքելոյ, որպէս արբայ Կոստանդիանոս կտակաւ թագաւորեցուցանէր զորդիս իւր: Եւ զսահմանսն լերամբք եւ զետովք հաստատեսցէ եւ արձանամ, ըստ առաջին թագաւորացն: Եթէ չիցէ բնափն ժառանգ ի ցեղէ հարց, իշխան լիցի տալ զթագ իւր աւտարի՝ ոչ ըստ կրանից»¹⁴:

ը. «Ապա թէ չկենայ որդի եւ ոչ դուստր, եւ եղբար որդիք լինին, նա հայրապետին եւ այլ եկեղեցոյն եւ իշխանաց ու երկրին տեսովն առնուն մէկ մի, յոր հաճին ի լան, եւ կրթեսցեն յարբունիքն, եւ յոր հաճին

¹¹ Անդ:

¹² Անդ:

¹³ Անդ:

¹⁴ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28-29:

յայնոց, նա հետ թագաւորին մահուն զայն դնեն յաթոռն հայրապետով»¹⁵: Եթէ թագավորը ոչ որդի, ոչ էլ դուստր ունի, ապա նրա մահից հետո կաթողիկոսը, եկեղեցականները եւ իշխանները, ողջ երկրի հավանութեամբ, ընտրում են նրա եղբորորդիներից արժանավորագույնին, նրան դաստիարակում արժունիքում եւ գահ բարձրացնում կաթողիկոսի օրհնութեամբ:

Եթէ մինչ այժմ թվարկված դրույթները նվիրված էին գահակալման կարգի առանձնահատկություններին, ապա հաջորդ շորսը վերաբերում են արդեն թագավորին գահագուրկ անելու կանոններին, որոնք, ինքնըստինքյան հասկանալի է, գահաժառանգութեան իրավունքի կարեւոր բաղկացուցիչ տարր են հանդիսանում:

թ. «Թագաւորն յԱստուծոյ են կարգած, որպէս Իսրայէլի Աստուած ցուցնէր ի ձեռն մարգարէից ասուքեան. նա հրամայէ արէնքս, որ այնպիսիքն, որ յԱստուծոյ լինին՝ նա Աստուած մէն կարէ գինք ասորել, թէ լաւ է ու թէ վատ»¹⁶: Եթէ թագավորը հաստատված է Աստծու կողմից, այսինքն իր գահն ստացել ու օծվել է ժառանգական իրավունքով¹⁷, ապա նրան միայն Աստված կարող է զրկել գահից: Անկախ այն բանից, նա լավ, թէ վատ թագավոր է, մարդիկ իրավունք չունեն գահագուրկ անել նրան:

ժ. «Ապա զայն ոք, որ մարդիկք դնեն, նա թէ հայնց պիղծ լինին, որ չկարէ հանդուրժել աշխարհն, նա այլվայ իրենք եկեղեցովն եւ ամէն բնակչաւք երկրին կարեն ասորել»¹⁸: Եթէ թագավորը գահ է բարձրացել ոչ թէ ժառանգական իրավունքով, այլ ընտրվել է մարդկանց, այսինքն պետութեան Վերին աստիճանի կողմից¹⁹, ապա վերջիններս էլ կարող են նրան գահընկեց անել:

¹⁵ Смбат Спарамет, Судебник, с. 8.

¹⁶ Անդ, էջ 81:

¹⁷ Այս կապակցութեամբ տարօրինակ միտք է արտահայտել Ա. Գալստյանը. ըստ նրա՝ «Աստծու կողմից կարգված թագավոր» ասելով, Սմբատը նկատի ունի կաթողիկոսին. Смбат Спарамет, Судебник, с. XXVIII.

¹⁸ Անդ, էջ 81:

¹⁹ Վերին կամ Արքունի աստիճանի մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության հետագա շարադրանքում:

Ժա. «Բայց թէ որդիք կենայ թագաւորին, որ ի յայն թագաւորութիւնն լինին ծնածք, նա այն ոք չեն մեղկան. ի յայնոց ընտրեն յաղէկն եւ դնեն թագաւոր, վասն զի սեփական է թագաւորութիւնն ի հաւտէ յորդիքն»²⁰: Գահընկեց արված թագավորի գահակալության տարիներին ծնված որդիները չեն զրկվում գահը ժառանգելու իրավունքից:

Ժբ. «Եւ թէ վասն փրկութեան աշխարհի կամենան զթագաւորն խրատել կամ մեռցնել, նա չկարեն իշխանն. այլ հրամայէ արէննա, որ առանց այլ թագաւորի եւ հայրապետի չկարեն այնել»²¹, քանի որ այլ թագաւոր ու հայրապետ կենայ ու երկիրն առ հասարակ հաւնին»²²: Իշխանները, նույնիսկ հանուն երկրի փրկության, իրավունք չունեն կտտանմանի կամ մահապատժի ենթարկելու թագավորին. դա կարող են անել միայն այլ թագավորի ու կաթողիկոսի կարգադրությամբ եւ ողջ երկրի հավանությամբ: Այլ թագավոր ասելով, Սմբատը մեր կարծիքով, նկատի ունի պատժի ենթակա թագավորի հաշորդին եւ ոչ թե որեւէ օտար ինքնակալի, թեւեւ նրա բնագրից դա հստակորեն չի հասկացվում²³:

Մեկնելով Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքից» եւ Կիլիկիայում գործող պրակտիկայից, Վ. Ռուդ-Կոլենբերգը փորձում է ձեւակերպել «գահաժառանգության հիմնական հայեցակարգը ըստ հայկական սովորույթի, որի էությունը փոխզիջումն է ժառանգական եւ ընտրովի սկզբունքների միջեւ», եւ որի բովանդակությունն արտացոլված է հետեւյալ ուր կետերում²⁴.

— Թագավորը գահ է բարձրանում բարոնների որոշմամբ եւ օժվում կաթողիկոսի կողմից, որն այդ եղանակով տալիս է իր համաձայնությունը կատարված ընտրությանը.

²⁰ Смбат Спарамет, Судебник, с. 81.

²¹ Այնել = անել. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 43:

²² Смбат Спарамет, Судебник, с. 81-82.

²³ Տվյալ հարցում, դժբախտաբար, պարզություն չի մտցնում նաեւ Մխիթար Գոշի բնագիրը. «Իսկ զթագաւոր խրատել, թէ այնպէս հարկ լիցի պահել զխաղաղութիւն, կամաք լիցի այլ թագաւորի եւ հայրապետի, եւ հաւասարութեամբ ամենեցուն». Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 142:

²⁴ Rüdít-Collenberg, The Rupenides, p. 27-28.

— Ընտրություն կատարելիս, գահաժառանգության իրավունքն, ըստ էության, հանգում էր նախապատվության սկզբունքին, որի շուրջ պետք է համաձայնության գային թագավորը եւ բարոնները.

— Բարոնների իրավունքն էր, փաստորեն, վերջնական հավանություն տալ հանգուցյալ թագավորի կատարած ընտրությանը.

— Թագավորը կարող էր որպես իրեն հաջորդ ընտրել իր որդիներից մեկին, բայց բարոններն ազատ էին թագը շնորհելու նրա մի այլ որդու.

— Եթե թագավորը որդիներ չուներ, կամ նրա որդիները մահացել էին, ապա թագը պետք է ժառանգեին նրա եղբորորդիները.

— Եթե թագավորը միայն դուստր ուներ, իսկ թագավորի եղբայրները որդիներ չունեին, ապա թագաժառանգը դուստրն էր, բայց ոչ վերջինիս որդիները.

— Թագավորը կարող էր գահընկեց արվել, բայց այդ հանգամանքը չէր ազդում նրա որդիների գահաժառանգական իրավունքի վրա.

— Ապօրինաձին զավակները զրկված էին գահը ժառանգելու իրավունքից:

Այսպիսով, մենք, ըստ էության, ներկայացրինք Կիլիկյան Հայաստանի գահաժառանգական իրավունքը բովանդակող բոլոր հայտնի նորմերը եւ նրանց վերաբերյալ արտահայտված ժամանակակից գիտական տեսակետները²⁵, որոնց մասնագիտական ֆննությունը, սակայն, դուրս է սույն աշխատության շրջանակից: Մեզ հետաբերողը տվյալ դեպքում ոչ թե գահաժառանգական իրավունքի տեսությունն է, այլ նրա գործնական կիրառումը Կիլիկյան Հայաստանում, ինչը բնականաբար պահանջում է առանձին-առանձին դիտարկել Կիլիկիո բոլոր իշխանապետերի եւ թագավորների գահակալման հանգամանքները: Մեր համոզմամբ՝ միայն նման մոտեցումն է ընդունակ վերջնական պարզություն մտցնելու գահաժառանգության բավականին խնճված հարցում, որը, ինչպես կտեսնենք, բացի զուտ իրավագիտական արժե-

²⁵ Որոշ տեսակետներ տես նաեւ Սմբատի «Դատաստանագրքի» 3. Կարստի հրատարակության մեկնաբանությունների հատորում (Karst, Armenisches Rechtsbuch, Bd. 2, S. 3-4, 94), ինչպես նաեւ Ա. Սուքիասյանի «Կիլիկիայի հայկական պետության եւ իրավունքի պատմություն» գրքում. Сукьясян, История, с. 207-211; Սուքիասյան, Կիլիկիա, էջ 252-257:

Բից, ունեցել է նաև կարևոր ֆաղափական նշանակություն, հաճախ պայմանավորելով պետական այրերի վարձագիծը, իսկ երբեմն նույնիսկ իրադարձությունների զարգացման ընթացքը:

Ինչ վերաբերում է իշխանության «լեգիտիմության» կամ, ընդհանրապես, թագավորի ինստիտուտի էության խնդրին, ապա այն հանգամանորեն արժարժված է կիրիլյան շրջանի հայ մատենագրության երկու ինֆնատիպ հուշարձաններում: Դրանք են՝ XIII դ. նշանավոր վարդապետներ Վահրամ Բաբունու «Բան ի Յայտնութիւն Տեառն»²⁶ եւ Հովհաննես Երզնկացու «Ի բանն Առաքելոյ»²⁷ ճառերը՝ գրված համապատասխանաբար Լեւոն Գ (II) թագավորի օժման (1271 թ.) եւ Հեթում ու Թորոս արքայազների ասպետակարգության (1283/4 թ.) առթիվ: Այդ մեծարժեք աշխատությունները թեև վաղուց գրավել են հետազոտողների ուշադրությունը²⁸, բայց առայժմ լուրջ մասնագիտական ֆնության չեն ենթարկվել²⁹: Նկատի ունենալով տվյալ իրողությունը, ինչպես նաև նշված երկերից մեկի անտիպ լինելու պարագան, հարկ ենք համարում ստորև հանգամանորեն ներկայացնել նրանց բովանդակությունը: Դժվար չափի լինի նկատել, որ Բաբունու եւ Երզնկացու ճառերը, հիմնված լինելով ընդհանուր աղբյուրի՝ Աստվածաշնչի վրա, ունեն բազմաթիվ նմանություններ ու նույնիսկ բնագրական աղետներ³⁰: Սա նշելով հանդերձ,

²⁶ Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1868/9; Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875:

²⁷ Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ (անտիպ. տե՛ս Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №. 2173, էջ 86ա–101ա):

²⁸ Տե՛ս Սրապյան, Հովհաննէս Երզնկացի, էջ 29, 46, 68–69; Գրիգորյան, Վահրամ Բաբունի, էջ 17, 22–23, 33–39 (նաեւ՝ նույն հեղինակի «Վահրամ Բաբունի» հոդվածը. ՀՄՀ, հտ. 11, էջ 248); Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները, էջ 18–22; Բաղդասարյան, Հովհաննէս Երզնկացի 1977, էջ 26, 80, 85, 95–97, 131; Cowe, The Inauguration, p. 53–56; Mutafian, Recherches, p. 17.

²⁹ Որոշ առումով բացառություն են կազմում Գ. Գրիգորյանի եւ Ս. Բոռնազյանի աշխատությունները (տե՛ս նախորդ ծանոթ.), որոնք համեմատաբար բավարար պատկերացում են տալիս Բաբունու երկի մասին:

³⁰ Ակնհայտորեն, Երզնկացին օգտվել է Վահրամից, ինչի վկայությունն են նրանց աշխատությունների երբեմն բառացի բնագրական ընդհանրությունները:

մենք նպատակահարմար ենք գտնում, թեկուզ երբեմն կրկնվելու գնով, այդ հուշարձաններին անդրադառնալ առանձին-առանձին՝ նրանց մասին ընթերցողին, հնարավորության սահմաններում, ճիշտ եւ լիակատար պատկերացում տալու նկատառումով:

Բաբունու ճառը, որը վերնագրված է «Վահրամայ վարդապետի, ատենադպրի Լեւոնի արքայի՝ Քան ի Յայտնութիւն Տեառն եւ յօծումն Լեւոնի Գ. արքայի», բաղկացած է երկու անհավասար մասից: Առաջինն ամբողջությամբ նվիրված է Քրիստոսի Հայտնության խորհրդի մեկնությանը եւ պատմական առումով որեւէ հետաքրքրություն չի ներկայացնում³¹: Իսկ երկրորդ, կրկնակի ավելի ընդարձակ մասի բնության առարկան թագավորության (պետության) գաղափարն է՝ լուսաբանված գլխավորապես Աստվածաշնչի, բայց նաեւ պատմության փաստերի հիման վրա³²: Ներկայացնելով իր ծրագիրը, հեղինակն այն ձեւակերպում է հետեւյալ բառերով. «Բե՛ր, ուրեմն, փոքր ինչ յաղագս թագաւորութեան խօսեսցո՞ւմ յԱստուածաշունչ Գրոց. նախ առաջին բննելով թէ զի՞նչ է թագաւորութիւն, եւ ապա՝ թէ ո՞վ է առաջին թագաւոր, երրորդ՝ թէ յորմէ՞ հետէ եւ կամ զի՞արդ սկսաւ թագաւորութիւն ի մարդիկ, եւ չորրորդ՝ թէ զի՞նչ են կարգ եւ իրաւունք թագաւորի»³³:

Այնուհետեւ, խստորեն հետեւելով իր նախանշած ծրագրին, Վահրամ Բաբունին տալիս է թագավորության, ավելի ճիշտ՝ թագավորի պարտականությունների սահմանումը, այն է՝ իշխել իրեն վիճակված երկրի ու նրա բնակիչների վրա, չափավոր հարկեր գանձել նրանցից ու ապահովել նրանց բարօրությունը, վանել արտաքին թշնամիներին կամ նրանց հետ խաղաղություն հաստատել, հպատակների նկատմամբ օրենքով եւ իրավունքով վարվել, արժանավորներին պատիվներ շնորհել, իսկ շարագործներին պատժել, չվարակվել մեծամտության ախտով եւ իրեն Աստծու թագավորության սպասավոր դիտել. «Թագաւորութիւնն է, ըստ ուղիղ բանին, ի վերայ աշխարհի որ իւր է վիճակեալ եւ ի նմա բնակելոցն իշխել, արդարացի հարկս եւ իրաւունս ի նոցանէ առ-

³¹ Վահրամ Բաբունի, Քան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 1-20:

³² Անդ, էջ 20-59:

³³ Անդ, էջ 20-21:

նույլ եւ զնոսին ի հաստատութեան պահել, արտաքին թշնամեացն փաշտեամբ պատերազմաւ յաղթել եւ կամ հաշտութեան հնարիւք զխաղաղութիւն ողջունել, եւ զամենայն ինքեան հնազանդեալսն առանց իրիք պատճառի յօշէնս եւ յիրաւունս անլուծանելի ունել, բարեգործացն գովութիւնս եւ պատիւս շնորհել եւ շարեացն եւ ոք արտաքոյ օրինացն արշաւիցին՝ տանջանս եւ պատիժս հասուցանել³⁴, ո՛չ երեւելի փառօք բարձրամտեալ, այլ սպասաւոր Աստուծոյ թագաւորութեանն զինքն նկատել»³⁵: Զբավարարվելով այս նկարագրական ձեւակերպմամբ, Ռաբունին հարկ է համարում տալ նաեւ նույնի փիլիսոփայական սահմանումը. «Եւ զլիաւորելով ասասցուք³⁶. թագաւորութիւն է՝ որ իշխէ զբազումսն, եւ զբաժանեալսն ըստ անձանց եւ ըստ արուեստից, նաեւ ըստ բարուց եւ թէ դէպ լիցի ըստ կրօնից՝ բարեպաշտութեամբ եւ իմաստութեամբ ի խաղաղութիւն եւ ի բարեկարգութիւն նուանել. եւ այս է սահման թագաւորի»³⁷:

Անցնելով իր ծրագրի երկրորդ կետին, որի ֆննության առարկան իշխանության «լեզիտիմության» աղբյուրն է, Վահրամն առաջին եւ միակ իրական թագաւոր է համարում Աստուծուն. «Յետ այսորիկ խնդրելի է թէ ո՞վ է առաջին թագաւոր: Արդ վերագոյն այս սահմանի եւ եւսեւ ֆան գոր կարեմք իմանալ եւ ճառել. ո՞ր այլ ոք առաջին թագաւոր, բայց եթէ երանականն եւ փառաւորեալ Սուրբ Երրորդութիւնն երկրպագեալ ի մի Աստուածութեան եւ Տէրութեան, ըստ մարգարէին թէ՛ թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է³⁸, որ առ ի յինքեան բարեւարութենէ արարչագործելոցն իշխէ առ հասարակ վերնոցն եւ ներքնոցն»³⁹: Ինչ վերաբերում է մարդկային թագավորությանը, ապա, ըստ Ռաբունու, այն սկսվում է արարչագործությունից, երբ Աստված մարդուն թագավոր է

³⁴ Մյուս տպ. «հասուցանել». Վահրամ Ռաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1869, էջ 9:

³⁵ Վահրամ Ռաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 21:

³⁶ «Գլխաւորելով ասասցուք» բառերով հեղինակը հասկացնել է տալիս, որ եզրափակում է վերոշարադրյալը:

³⁷ Վահրամ Ռաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 21:

³⁸ Սաղմ. ԽՁ, 3:

³⁹ Վահրամ Ռաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 21-22:

կարգում մնացյալ արարածների վրա. «Տեսցո՛ւք թէ յորմէ՞ հետէ կամ զի՞արդ ի մարդիկ սկսաւ թագաւորութիւն: Ի սկիզբն մարդկութեան շնորհեցաւ նմա այս պատիւ. Զի արար Աստուած զմարդն ի պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա եւ օրհնեաց զնոսա եւ ասէ՛ Իշխեցէ՛ք ձկանց ծովու եւ թռչնոց եւ անասնոց ամենայնի որ ի վերայ երկրի՞⁴⁰, եւ այսպէս թագաւորեցոյց զնա երեւելի արարածոց ընդ թագաւորութեամբ իւրով հնազանդիլ»⁴¹: Այնուհետեւ խախտելով Աստծու պատվիրանները, մարդիկ զրկվեցին այդ պատվից, եւ նրանցից ոմանք թագավորեցին իրենց համազգիների վրա, ինչը հանդուրժվեց Աստծու կողմից, քանի որ բարեպաշտ նահապետներն, ի տարբերություն բռնակալների, ճանաչելով երկնային թագավորությունը, խուսափեցին իրենց թագավոր հռչակել⁴². «Եւ յառաջանալ ժամանակին թէպէտ ազգ մարդկան իշխէին զգալեացս ամենայնի, սակայն ոչ որպէս ի սկզբանն պարգեւեցաւ նոցին, այլ դաւեալք եւ դաւաճանեալք հնազանդելոցն, եւ վեր եւ ի վայր Տեառն խառնակեալք: Վասն որոյ յորս մնաց կայծակն բարեպաշտութեան, թէպէտ եւ տիրեցին ազգաց, ո՛չ երբէք թագաւորական անուամբ բարգաւաճեալք պանծային, այլ զանձինս ի շափ ունէին որպէս Աբրահամ եւ որ յառաջ քան զնա նահապետքն՝ Նոյ, Ենովք, Սէթ եւ Ենովս: Իսկ այլք ոմանք յաղագս կուրութեանն որ էր ի նոսա՝ իշխեցին ասել զինքեանս թագաւոր յաղագս ամբառնալոյն ի վերայ համազգեացն:... Իսկ ազգն եւ ժողովուրդն Աստուծոյ թէպէտ յամենայն տեսակս մեղաց խտտորէին, այլ յայսմիկ առաւել եւս զգուշանային՝ Աստուծոյ միայնոյ շնորհելով զթագաւորութիւն եւ զիշխանութիւն, ինքեանք հովուելով ժողովրդեանն,... վասն որոյ ախորժելի էր այս եւ հաճեալ էր ընդ սոյն, քան զի համազօր էր մտածութիւնս այս սկզբնաւորական պատուոյ թագաւորութեան, զոր շնորհեաց մարդոյն տիրել արարածոց եւ լինել ի ներքոյ թագաւորութեան Աստուծոյ, եւ զնա միայն ճանաչել թագաւոր»⁴³:

⁴⁰ Մենդ. Ա, 27–28:

⁴¹ Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 25:

⁴² Հմմտ. Գրիգորյան, Վահրամ Բաբունի, էջ 33–35:

⁴³ Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 26, 29:

Աստծու կամեցողությամբ գահակալած առաջին թագավորը Դավիթն է. «Ինքն կամեցաւ տալ նոցա թագաւոր, եւ ետ զԴաւիթ որդի Յեսսեայ՝ ըստ աստուածային կամաց իւրոց թագաւոր»⁴⁴: Ըստ այդմ, թագավորները լինում են երկու տեսակի՝ Աստծու կողմից կարգվածներ եւ մարդկանց ձեռնով դրվածներ. «Զի այլ է թագաւորն՝ որ յԱստուծոյ, եւ այլ՝ որ ի մարդկանէ»⁴⁵: Աստծու կողմից կարգված են համարվում միայն Դավթի ճանապարհով ընթացող թագավորները. «Վասն այսորիկ զԴաւիթ ըստ կամաց իւրոց գտեալ թագաւորեցոյց, զի եղիցի նա հայր եւ օրինակ թագաւորաց բարեպաշտութեամբ եւ ամենայն բարեգործութեամբ: Զի որք ըստ նորայն շաղաց գնասցեն, ոչ են ի մարդկանէ թագաւորք, այլ յԱստուծոյ կարգեալք եւ ի ներոյ ամենակալ թագաւորութեամբ նորա նուանեալք»⁴⁶: Իսկ ամբարիշտների գահակալման փաստի հարուցած դժվարությունը Բաբունին հաղթահարում է հորինելով հետեւյալ հայեցողական (սպեկուլյատիվ) պատասխանը, այն է՝ Աստված դա հանդուրժում է իր կամքը կատարելու, մեղավորներին պատժելու եւ երբեմն նաեւ նրանց ձեռնով բարություն գործելու նպատակով. «Գիտելի է, զի ոչ միայն զբարեպաշտսն, այլ եւ զոմանս ի հեթանոսաց վասն կատարելոյ զկամսն Աստուծոյ, եւ վասն յագեցուցանելոյ բարկութեան զսրտմտութիւն նորա ի մեղուցեալսն, եւ ես վասն բարութիւնս ոմանց առնելոյ՝ ինքեամբ ասէր զթագաւորելն նոցա, որպէս վասն Կիրոսի պարսկի»⁴⁷: Հետեւաբար, թեւեւ միայն բարեպաշտներն են, որ Աստծու կողմից թագավոր են կարգվում, բայց ամբարիշտների գահակալումը նույնպէս հակառակ նրա կամքի տեղի չի ունենում. «Զի թէպէտեւ բարեպաշտքն նովաւ թագաւորեալք, այլ ոչ եթէ ամբարիշտքն ընդդէմ եւ հակառակ նմա իբր թէ ինքեանց զօրութեամբ յայն վիճակեալք եւ բռնակալեալք, այլ ի նորին թոյլ տալոյ, վասն իրիք տնօրէնութեան»⁴⁸:

⁴⁴ Անդ, էջ 32:

⁴⁵ Անդ:

⁴⁶ Անդ, էջ 32–33:

⁴⁷ Անդ, էջ 34:

⁴⁸ Անդ, էջ 35:

Բաբունու ճառի հաջորդ թեման թագավորի կարգավիճակի, վարքի, գործերի եւ իրավունքների բնությունն է. «Եւ մնայ մեզ պատմել այսուհետեւ զկարգ եւ զկենցաղավարութիւնն եւ զգործ եւ զիրատունս թագաւորի»⁴⁹: Ըստ նրա՝ թագավորը պետք է օժտված լինի հետեւյալ առաքինություններով. «Պարտ եւ արժան է պսակլի թագաւորի բարեպաշտութեամբ, խոնարհութեամբ, հեզութեամբ, իմաստութեամբ, զգաստութեամբ, արդարութեամբ, ճշմարտութեամբ»⁵⁰: Թվարկված առաքինությունների շարքում հեղինակը զլխավորն է համարում բարեպաշտությունը. «Նախ իբրեւ զհիմն ինչ պիտանի է թագաւորի բարեպաշտութիւն, որ առաւել թագապաճոյն կազմէ զնա քան զականս պատուականս»⁵¹: Թագավորի զլխավոր առաքինությունը լինելու՝ բարեպաշտության պարագան ենթադրում է, որ նա պետք է հեռու մնա կոապաշտությունից, այն է՝ աստղագիտությունից (աստրոլոգիայից) եւ հմայություններից. «Հարկ է թագաւորի եւ ամենայն առն բարեպաշտի՝ յախտէս յայսմանէ ի բաց կալ. նախ յաստեղագիտութենէ, եւ յայնպիսեացն հմայողաց»⁵²: Կարեւոր ենք համարում առանձնացնել նաեւ թագավորի արդարադատությանը վերաբերող Բաբունու դիտարկումը, որի համաձայն՝ քանի որ մարդկանց դատաստանը սուրբեկտիվ (կարծողադատ) եւ կասկածելի (կասկածավերի) է, ապա այն մանրագնին բնություն եւ համբերություն է պահանջում. «Ձի թագաւոր որ խնդրէ ի հաստատութեան կալ, զհետ երթիցէ արդար դատաստանի եւ ուղիղ իրաւանց: ... Մի՛ հակիրճ եւ համառօտ առնել զիրատունս՝ յաղագս ծանծրութեան եւ կամ յաղագս հատու եւ սուր երեւելոյ, քանզի զայս ոչ վայել է մարդկան առնել, որոց կարծողադատ եւ կասկածավերի է ատեան դատաստանին, այլ մեծապէս բնութեամբ եւ աշխատասիրաբար հասու լինել»⁵³: Ավելորդ չէ

⁴⁹ Անդ. էջ 36:

⁵⁰ Անդ.:

⁵¹ Անդ.:

⁵² Անդ. էջ 41: Այդ մասին ավելի մանրամասն տես՝ Գրիգորյան, Վահրամ Բաբունի, էջ 36-37:

⁵³ Վահրամ Բաբունի, Քան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 44-45. հմմտ. Գրիգորյան, Վահրամ Բաբունի, էջ 38-39: Ի դեպ, «կարծողադատ» եւ «կասկածավերի» հրաշալի բառերը տեղ չեն գտել հայերենի բառարաններում:

նշել, որ հեղինակը մանրամասնորեն անդրադառնում է նաև թագավորի վերը թվարկված մյուս առափնություններին՝ խոնարհությանը, ողորմածությանը, նշմարտաբանությանը եւ այլն⁵⁴։

Եթե մինչ այժմ շարադրվածում թագավորական իշխանությունը եւ թագավորի ինստիտուտը պատկերանում են համաբնութային եւ համաբնական ընկալմամբ, ապա Բաբունու աշխատության շարունակության մեջ ի հայտ են գալիս նաև Կիլիկիո իրականության անմիջական արտացոլումը հանդիսացող պատմական ուշագրավ տարրեր։ Այսպես, նկատի ունենալով իշխանների անհավատարմության ու անմիաբանության դրսեւորումները, հեղինակը հաստատում է, որ երկրի կայունությունը կախված է ոչ միայն թագավորի, այլև նրանց բարի վարից եւ աննախանձոտությունից. «Ի հաստատութիւն աշխարհի՝ ընդ թագաւորի գեղեցկութեան եւ լաւութեան պիտանացու է եւ իշխանացն բարիոք գոլն։... Վասն որոյ ըստ օրինի թագաւորի ամենայն բարիոք նանապարհի եւ գործանութեան նախանձաւորք լինիցին՝ նախ բարեպաշտութեամբ առ Աստուած պայծառանալ, որպէս զի հաւատարմութեամբ երկնաւոր թագաւորին՝ հաստատուն երեւեսցի հաւատարմութիւն երկրաւորս թագաւորի։... Նոյնպէս պարտ է նոցին խոնարհութեամբ եւ ամենայն առափնութեամբ զարդարուն եւ բարեձեւ երեւիլ, մանաւանդ սէր սերտ ունիլ առ թագաւորն եւ առ միմեանս։ Մի՛ նախանձ ընդ շարսն եւ ընդ յառաջադիմութիւն իրերաց, եւ մի՛ մախանօք այրիլ, զիրեարս խածատել, եւ ի միմեանց սատակիլ։ Զի այս ախտ յոլովագոյն գտանի առ նոսին, առաւելապէս⁵⁵ յորժամ զընկեր պատուեալ տեսանիցեն»⁵⁶։

Պետական պաշտոնյայի հանգամանքով ներսից ծանոթ լինելով արժանիքներով տիրող բարեբերին, Բաբունին նաև խորհրդի կարգով թագավորին հորդորում է հավատ չընծայել շարախոսություններին, քանի որ հակառակ պարագայում դա կարող է նպաստել այդ արատավոր երեսույթի տարածմանը։ Ուստի թագավորից պահանջվում է նման դեպքե-

⁵⁴ Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 43–44, 47, 48։

⁵⁵ Տպագրում՝ «առ առաւելապէս». ուղղել ենք ըստ Բաբունու ճառի մյուս հրատարակության. Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1869, էջ 98։

⁵⁶ Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 49–50։

րում եզրակացություններ անել միայն շարախոսություններն ու ամբաստանությունները համակողմանի ֆննելուց եւ վկաներով հաստատելուց հետո. «Ոչ է պարտ թագաւորի ի լսելն միայն հաւատալ շարախօսութեան, այլ յոյժ ֆննել որպէս եւ Աստուած զինքն օրինակ եղ դատարացն՝ ֆննելով զՍողոմայեցիսն: Զի թէ թագաւոր սիրէ զառունկնանառս եւ զարս մատնիչսն, յայն անեն մարդիկ եւ զնոյն միշտ առնեն:... Այլ ի լսելն զհակառակութիւն զմիմեանց, երկայնմտութեամբ եւ հեզութեամբ լուիցէ, եւ բազմօքն ֆննեսցէ եւ վկայիմն ստուգեսցէ, այլ եւ աղօթիմ խնդրեսցէ ի Տեառնէ զյայտնութիւն իրին»⁵⁷:

Վահրամ Բաբունու շեշտված պետական մտածողության արտահայտությունը պետք է համարել նաեւ այն, որ նա, հոգեւորական լինելով հանդերձ, եկեղեցին ինչ-որ առումով ստորադասում է պետությանը: Հոգեւորականներին որոշակի դեր հատկացնելով թագավորին հավատի եւ ուղղության սահմաններում պահելու գործում, Վահրամն, այնուամենայնիվ, ընդգծում է, որ նրանց հիմնական խնդիրը պետության նկատմամբ ժողովրդի պարտավորությունների կատարման ապահովումն է. «Իսկ եկեղեցական դասուց արժան է զաստուածային օրէնս ի ժամու եւ ի տարածամու յունկն թագաւորի լսեցուցանել, անպատկառ⁵⁸ եւ անակնառու⁵⁹ ի սահման թագաւորական զնա յորդորել, եւ զաշխարհ ի նոցին հնազանդութիւն յորդորել, ուսուցանել ծառայել մարմնատու տեսոն որպէս Աստուծոյ, եւ զամենայն հարկս եւ զիրատունս առանց տրտնջման յարժունիս վնարել: Այլ եւ ինքեանք նոքօք հանդերձ արասցեն աղօթս եւ պաղատանս աշխարհի եւ թագաւորի՝ պարագայց ամօք մնալ ի խաղաղութեան»⁶⁰:

Պատմական առումով Բաբունու աշխատության ամենաուշագրավ արժանիքը, սակայն, պետք է համարել այն, որ նա առանձնահատուկ կարեւորություն է ընծայում գահաժառանգության իրավունքին՝ իշխանու-

⁵⁷ Անդ, էջ 46:

⁵⁸ «Անպատկառ» բառն այստեղ նշանակում է «պարզերես, համարձակ, անաչառ». հմմտ. «Նոր բառգիրք», հտ. 1, էջ 227:

⁵⁹ Տպագրում «անակն առնուլ». մյուս հրատ. «անկառ» (Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1869, էջ 99). ուղղել ենք ըստ՝ «Նոր բառգիրք», հտ. 1, էջ 103:

⁶⁰ Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 53:

թյան «լեզհտիմությունը» դիտելով որպես պետության կայունության երեք գլխավոր գործոններից մեկը, թագավորի բարեպաշտության եւ իմաստուն ղեկավարության կողմին. «Բայց գիտել արժան է, զի են երեք իրք, որ հաստատուն պահեն զթագատրոսին: Առաջինն այս, զոր գրեցաքս՝ բարեպաշտութիւն հաւատոյ եւ ուղղութիւն գործոց. եւ երկրորդ՝ սեռական եւ հայրենեօք իրաւացի ի նախնեաց ունել զթագատրոսին⁶¹. եւ երրորդ՝ իմաստութեամբ եւ խոհականութեամբ վարել զնոյն»⁶²: Այս ընդհանուր դրույթից անցում կատարելով օրվա նյութին, այն է՝ Լեւոն Գ (II)-ի թագադրութեանը, հեղինակն իրավաբանի բժախնդրությամբ հիմնավորում է նրա գահակալման օրինականությունը՝ շեշտը դնելով հատկապես Ռուբինյանների արքայական ծագման ու ազգաբանության⁶³, ինչպես նաեւ Լեւոնի՝ Զապել թագունի ուրդին լինելու հանգամանքի վրա. «Պսակաւորս Լեւոն, որպէս զի լինել սմա ըստ իշխանութեան տասներորդ ի Ռուբենայ, եւ ըստ ծննդաբանութեան եօթներորդ՝ թուելով զայս ձեւ օրինակի. իշխան Ռուբէն, իշխան Կոստանդին, իշխան մեծն Թորոս՝ Պաւստոս Սեւաստոսն⁶⁴ կոչեցեալ, իշխան Լեւոն, իշխան Թորոս, իշխան Մլեհ, իշխան Ռուբէն, թագաւոր Լեւոն, Զապէն թագունի. իսկ ըստ ծննդենէ սա որդի Զապելի՝ դստեր Լեւոնի արքայի, որդոյ Ստեփանէի, որդոյ Լեւոնի, որդոյ Կոստանդեայ, որդոյ Ռուբէնի՝ ի շառաւելէ Գագկայ յազգէ Բագրատունոյ, ի ցեղէն մեծին Դաթի թագաւորի եւ մարգարէի»⁶⁵: Այսպիսով, խորենացու հաստատած ավանդույթի համաձայն⁶⁶, Բագրատունիներին վերագրելով հրեական ծագում, Բաբունին Լեւոն Գ (II)-ին համարում է Դավիթ մարգարէի շառավիղը, հետեւաբար՝ Աստծու կողմից կարգված թագավոր⁶⁷:

⁶¹ Հնդգծ. Լ.Տ.Պ.:

⁶² Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 53–54:

⁶³ Բաբունու ճառի այս հատվածը (էջ 54–56) Կիլիկիո պատմության մի համառոտ շարադրանք է, որն առայժմ դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից:

⁶⁴ Մյուս հրատ. «պոստաւաւեսաստիւանն». Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1869, էջ 100:

⁶⁵ Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 56:

⁶⁶ Տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն, էջ 68–69:

⁶⁷ Հմմտ. Cowe, The Inauguration, p. 53.

Այս առանցքային գաղափարի հաստատումն անելուց հետո Վահրամը, հավուր պատշաճի, իր ճանն ավարտում է նորընծա թագավորին նվիրված վերամբարձ ներբողյանով⁶⁸:

Ի տարբերություն Վահրամ Բաբունու, որը, փիլիսոփա լինելով, հակված է հստակ գիտական սահմանումների⁶⁹, Հովհաննես Երզնկացու խնդրո առարկա ճանն աստվածաբանական-բարոյախոսական բարոզ է հիշեցնում հարազատ նրա նախընտրած խրատական բնույթի աշխատություններին⁷⁰: Մաշտոցի անվան Մատենադարանի Ք. 2173 ձեռագրում այն կրում է հետեյալ ընդարձակ խորագիրը. «Նորին Յովհաննու վարդապետի ասացեալ՝ Ի բանն Առաքելոյ, որ ասէ՛ Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութիւն կացցէ⁷¹. յաւուրն յորում արհնեցան ձիատրք արհայորդիքն մեր Հեթում եւ Քորոս, եւ այլ մանգունք իշխանաց, եւ որք յարհունական սպասատրացն»⁷²: Այսպիսով, եթե Վահրամ Բաբունու աշխատության հորինման ժամանակը թվագրվում է օրվա ճշտությամբ (1271 թ. հունվարի 6), ապա Երզնկացու ճանի պարագայում տարվա կտրվածքով (1283 թ. հունվ. 10 – 1284 թ. հունվ. 9)⁷³, քանզի հայտնի է, որ Հեթումն ասպետ է կարգվել այդ թվականին. «Գրեցաւ զիրս... ի թուականիս Հայոց ՁԼԲ (=1283/4),... յորում ամի բարենշան եւ բարեպաշտ անդրանիկ որդին արհայիս մերոյ պարոն Հեթում զձիատրութեան աշտիճան ընկալաւ»⁷⁴:

Հովհաննես Երզնկացու ճանում արժարժված հարցերը կարելի է դասակարգել երեք խմբի. առաջին՝ իշխանության «լեզիտիմության»

⁶⁸ Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 56–59:

⁶⁹ Այս առումով պատահական չէ, որ նրա ճանի առաջին հրատարակության խորագրում տեղ են գտել հետեյալ բառերը. «Հաւաքմունք աստուածաշունչ բանից... արագ ցուցմամբ եւ իմաստասիրական սահմանաւ շարադրեալ». Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1868, էջ 137:

⁷⁰ Հմմտ. է. Բաղդասարյանի «Հովհաննես Երզնկացիին եւ նրա խրատական արձակը» մենագրությունը (Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացի 1977):

⁷¹ Հոռովմ. ԺԳ, 1:

⁷² Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 86ա:

⁷³ Հմմտ. Dulaurier, La Chronologie, p. 386.

⁷⁴ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 538:

աղբյուրը, երկրորդ՝ իշխանություններին հնազանդվելու անհրաժեշտությունը եւ երրորդ՝ իդեալական իշխանի կամ թագավորի նկարագիրը: Առաջին եւ երրորդ բաժինների բովանդակությունը, մանրամասներն ու նրբերանգները հաշվի չառած, ընդհանուր առմամբ համընկնում է Վահրամ Բաբունու աշխատության բովանդակությանը: Բոլորովին այլ է իշխանություններին հնազանդվելու հարցին նվիրված բաժնի պարագան, որը, լինելով Երզնկացու ընտրած սուրբգրական բնաբանի (Հոովմ. ԺԳ, 1) լուսաբանությունը, բնականաբար, դարձել է նրա նառի գլխավոր թեման: Թեեւ թեմաների բաժանումը հեղինակի կողմից հստակորեն համակարգված չէ, մենք նպատակահարմար ենք գտնում, թեկուզ նրա շարադրանքի հաշորդականության խախտման գնով, նշված հարցերը ներկայացնել առանձին-առանձին:

Երզնկացու պատկերացմամբ, ինչպես Բաբունու պարագայում, իշխանության աղբյուրն Աստված է, որը լինելով միակ իրական թագավորը, իր կամեցողությամբ իշխանություն է շնորհել մարդկանց. «Զի նա միայն է ամենայնի թագաւոր եւ իշխան, ըստ այնմ Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի Աստուած է»⁷⁵ եւ «Աստուած... իշխանութեանն է տուող»⁷⁶: Իշխաններն, ըստ այդմ, նրա կողմից են կարգված. «յԱստուծոյ են ընտրեալ եւ եղեալ ի գլուխ ժողովրդոց»⁷⁷: Գոյություն չունի որեւէ այլ իշխանություն, որն Աստծուց շքիսի. «ՅԱստուծոյ են կարգեալ նոքա. զի ոչ ուստեք է, ասէ, իշխանութիւն, եթէ ոչ յԱստուծոյ»⁷⁸: Հետեւաբար, երկրավոր թագավորությունն ստեղծվել է երկնային թագավորության նմանողությամբ. «Թագաւորութիւնս երկրաւոր՝ զերկնաւոր եւ զանմահ թագաւորութեանն ցուցանէ զնմանութիւն: ... Վասն որոյ բարեպաշտ եւ աստուածասէր թագաւորք քրիստոնէից զպատիւ պաղատանն իւրեանց յօրինեալ կազմեցին ի տիպ եւ ի նմանութիւն արքայարանին վերին»⁷⁹:

⁷⁵ Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 90բ. հմմտ. Սաղմ. ԽԶ, 3:

⁷⁶ Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 92ա:

⁷⁷ Անդ, էջ 92բ:

⁷⁸ Անդ, էջ 90ա. հմմտ. Հոովմ. ԺԳ, 1:

⁷⁹ Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 87բ:

Այս հարցում, սակայն, Երզնկացին կանգնած է միեւնույն դժվարության առջեւ, որին, ինչպես տեսանք, բախվել է նաեւ Վահրամ Բարունին, այն է՝ եթե իշխանության միակ աղբյուրն Աստված է, ապա ինչպե՞ս բացատրել չարագործ իշխանների եւ բռնակալների գոյությունը. «Ձի՞նչ խօսիս, ո՛վ աստուածային Առաքեալ,– նարտասանում է մեր հեղինակը,– մի՞թէ ամենայն իշխան յԱստուծոյ ձեռնադրի. զի անա բազումք անիրաւութեամբ, յափշտակութեամբ, զրկանօք եւ յափշտակելով ընթռնեալ ունին զիշխանութիւնս»⁸⁰: Այնուհետեւ պատասխանելով իր իսկ առաջադրած հարցին, նա բացատրում է. Աստուած որպէս բանական բնության հայր հոգածու լինելով բոլորի, այդ թվում, չարագործների նկատմամբ, իշխանություն է տալիս նաեւ վերջիններիս, դրանով նախ՝ իր բարությունը ցուցադրելու, երկրորդ՝ չարագործներին ուղղելու եւ երրորդ՝ անօրէններին պատժելու ու արդարներին փորձելու համար. «Եւ Աստուած, զի բանական բնութեանս հայր է, ամենեցուն խնամ տանի՝ չարաց եւ բարեաց, տա՛ իշխանութիւն չարացն. առաջին՝ զի բարի է բնութեամբ Աստուած,... երկրորդ՝ զի թերեւս այնու յուղղութիւն եկեցեն»⁸¹ եւ «զի թէ անօրէն եւ խիստ է, ի խրատ անօրինաց եւ ի քննումն արդարոց տուեալ լինի»⁸²: Հետեւաբար, եզրակացնում է Երզնկացին, անգամ բռնակալներն իշխանությանը տիրում են Աստծու կամով. «Եւ յորս եւ իցեն, սակայն, Աստուծոյ հրամանաւն են»⁸³, քանզի նրանց գոյությունն ավելի նախընտրելի է, քան անիշխանությունը. «Քանզի անիշխանութիւն ամենայն ուրեք չար է եւ պատճառք ոչ փրկութեան»⁸⁴:

⁸⁰ Անդ, էջ 90ա:

⁸¹ Անդ, էջ 91բ:

⁸² Անդ, էջ 90ա:

⁸³ Անդ, էջ 90բ:

⁸⁴ Անդ: Հնդգծելով հանդերձ այս մտքի հասարակագիտական արժեքը, հարկ է արձանագրել, որ Երզնկացին, այնուամենայնիվ, չի հասել պետության անհրաժեշտության գիտակցության այն մակարդակին, որին հասել են միջնադարի մահմեդական մտածողները, ինչպես, օրինակ, Մունթաշարեղդին Ջուվեյնին. «Պետությունը ժողովուրդների նպատակն ու բաղձանքն է, քանզի բաղձանքների իրականացումն անհնար է առանց պետության ղեկավարության եւ հովանավորության». Джувайни, Ступени, с. 20.

Սա նշելով հանդերձ, Երզնկացին եւս, Բաբունու նման, տարբերություն է դնում Աստծու կողմից կարգված եւ մարդկանց ձեռնով հաստատված իշխանավորների միջեւ: Ըստ նրա՝ միայն մաքուր հոգի եւ ազատ միտք ունեցողներն են, որ կարող են Աստծու կողմից կարգված թագավոր կոչվել, ինչը չի կարելի ասել մարդկանց կամֆով դրվածների մասին. «Այլ որ զհոգի մաքուր ունի եւ միտս ազատս եւ անծառայելի, նա՛ է իշխան եւ թագաւոր ստուգապէս:... Զի ի մարդկանէ ձեռնադրեալն անհաստատ են եւ անցաւորք, եւ ի վեր եւ ի վայր յեղյեղուն, ըստ բարոց եւ պատահարաց: Իսկ Աստուծամբն՝ հաստատունք են եւ մնացական, վասն որոյ այսպիսի իշխանութիւնք ստուգապէս են յԱստուծոյ»⁸⁵:

Ինչպէս արդեն նշվեց, Հովհաննէս Երզնկացու աշխատության գլխավոր թեման իշխանություններին հնազանդվելու առաքելական պատվիրանի հիմնավորումն է, ինչը նա փորձում է անել առավելապէս աստվածաշնչական զուգահեռների, բայց նաեւ բանական (ուսցիոնալ) դատողությունների օգտագործմամբ: Ըստ նրա՝ իշխանություններին հնազանդվելու անհրաժեշտությունը նախ եւ առաջ թելադրված է այն առարկայական (օբյեկտիվ) իրականությամբ, որ ումանք կոչված են իշխելու, իսկ ումանք՝ հպատակվելու. «Զի ոմն իշխան լինել պարտ է, եւ ոմն ընդ իշխանութեամբ»⁸⁶: Ուստի համակերպվելով այդ իրականությանը, հպատակները պարտավոր են անտրտունջ ենթարկվել իշխանություններին. «Ուրք ընդ ձեռամբ են իշխանութեանն, ախորժելով ընդունին եւ հնազանդին առանց ամենայն հակառակութեան»⁸⁷: Մարդիկ այդ պարտավորությունը որպէս նվաստացում չպետք է ընկալեն, այլ պետք է հասկանան, որ հնազանդվելով իշխանավորներին, նրանք հնազանդվում են Աստծուն, եւ ընդհակառակը, իշխանավորներին ընդդիմացողներն ընդդիմանում են Աստծուն. «Մի՛ ասիցեն հաւատացեալք, թէ անարգեցեր զմեզ եւ արհամարհելիս արարեր. որք զերկնից թագաւորութիւնն ընդունելոց եմք՝ հրամայես երկրաւոր իշխանաց հնազանդ լինել: Եցոյց թէ ոչ իշխանաց, այլ Աստուծոյ հրամանին հնազանդիք: Եւ հակառակօքն եր-

⁸⁵ *Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 93ա–93բ:*

⁸⁶ *Անդ, էջ 90ա:*

⁸⁷ *Անդ, էջ 92ա: Ձեռագրում՝ «հակակութեան» փխ «հակառակութեան»:*

կեցոյց, թէ որ ոչն հնազանդի նոցա՝ ընդ Աստուծոյ պատերազմի, որ զայս օրինադրեաց»⁸⁸: Բացի այդ, հպատակները պետք է գիտակցեն նաեւ, որ իշխաններին հնազանդվելը բխում է իրենց իսկ շահերից. «Ընդ հնազանդութեամբ լինելով նոցա՝ ի շահ եւ յօգուտ իւրեանց է»⁸⁹: Այդ շահն, ըստ Երզնկացոյ, կայանում է նրանում, որ բոլորն էլ կարօտ են իշխանի բարի եւ պիտանի գործերին. «Ձի ամենեւեան կարօտ են իշխանին բարեացն եւ պիտանացոյին»⁹⁰, քանի որ նրանք, ստանձնելով աշխարհի հոգսը, իրենց ողջ եռանդը ծախսում են մարդկանց կյանքն ապահովելու ուղղությամբ. «Ջամենայն աշխարհ հոգան, եւ զամենայն պարապմունս յայն ծախեն, զի մեր կեանք ամբողջ պահեսցին»⁹¹: Այդ իսկ պատճառով, ավելացնում է Երզնկացին, հնազանդությունը ոչ թէ իշխաններին արված շնորհ պիտի դիտել, այլ պարտականություն. «Ոչ շնորհս ինչ առնեմք նոցա զհնազանդութիւնն, այլ պարտական իսկ եմք»⁹²: Դրա հետ մեկտեղ բարոյախոս հեղինակը, բնականաբար, իշխաններին հորդորում է խստորեն չգործադրել իրենց իրավունքները եւ անչափ չհարստահարել իրենց հպատակներին. «Իսկ ընդ ձեռամբ անկեայն»⁹³ բարեմտութիւն՝ ոչ խիստս եւ անողորմ բարոյք լինել, եւ անողորմաբար եւ առանց ցաւակցութեան յայլոց քրտանց եւ յաշխատութեանց զլիութիւն սեղանոյ եւ զպնումն հանդերձի առաւելոյ քան զչափն, զի մի՛ աղաղակ զրկելոց հասցէ յականջս Տեառն Զօրութեանց»⁹⁴: Ավելորդ չէ նշել, որ ներկայացված բոլոր դրոյթներն ամրապնդված են Աստվածաշնչից փաղված բազմաթիվ օրինակներով:

Իդեալական թագավորի կերպարը, որին նվիրված է խնդրո առարկա աշխատության երրորդ մասը, հեղինակին պատկերանում է հետեւյալ կերպ: Նախեւառաջ թագավորը պետք է գիտակցի երեք նշմարտու-

⁸⁸ Անդ, էջ 93բ:

⁸⁹ Անդ, էջ 89ա:

⁹⁰ Անդ, էջ 92բ:

⁹¹ Անդ, էջ 97բ:

⁹² Անդ, էջ 93բ:

⁹³ Ձեռագրում՝ «անգեայն»:

⁹⁴ Անդ, էջ 96ա:

թյուն՝ որ ինքն Աստծու իշխանության տակ է, որ նա մարդկանց իշխան է, եւ որ նրա իշխանությունը հավերժ չէ. «Առաջին՝ գիտելն թէ ընդ իշխանութեամբ Աստուծոյ է, երկրորդ՝ թէ իշխան մարդկան է, երրորդ՝ թէ ոչ միշտ իշխան է»⁹⁵: Հանդիսանալով Աստծու պատկերը, թագավորն օժտված պետք է լինի հետեւյալ առաքինություններով՝ մեղմաբարոյութեամբ, համեստութեամբ, նշարտաբանութեամբ, նշարտագործութեամբ եւ առատաձեռնութեամբ. «Եւ արդ զի ընդ իշխանութեամբ Աստուծոյ է, չորիմս այսոքիմ պարտ է զիշխանութեանն Աստուծոյ զպատկեր եւ զմանութիւն յանձին բերել. առաջին՝ զհաղցրութիւն բարուց, երկրորդ՝ խոնարհութիւն հոգոյ, երրորդ՝ նշարտութիւն բանից եւ գործոց, չորրորդ՝ առատութիւն ձեռին»⁹⁶: Սրանք, անշուշտ, ինքնատիպութեամբ առանձնապէս աչքի չընկնող զուտ փրկատնեական բարեշնորհություններ են՝ արտացոլված նաեւ բազմաթիվ այլ հեղինակների երկերում:

Սակայն Երզնկացու մոտ առկա են նաեւ միջնադարի կենսափորձից բխող պատմական բնույթի ուշագրավ դիտարկումներ, որոնք զգալիորեն մեծացնում են նրա աշխատության արժեքը: Երկրի կառավարումն, ըստ նրա, նույնպիսի արվեստ, այսինքն՝ մասնագիտություն է, ինչպիսիք են մնացյալ բոլոր մասնագիտությունները. «Գիտել՝ եթէ արուեստ է իշխանութիւնն. զի եթէ փողֆ եւ ֆնարֆ եւ կաֆաւիչֆ եւ այլ ամենայն արուեստֆ ժամանակաւ եւ աշխատութեամբ ուսեալ լինին, ո՛րքան մարդկան իշխանութիւն եւ վերակացութիւն»⁹⁷: Հետեւաբար, թագավորը նույնքան հմուտ եւ արհեստավարժ պետք է լինի, որքան, օրինակ, նավավարը, բժիշկը կամ երաժիշտը. «Զոր օրինակ ոչ ասին նաւաստի կամ բժիշկ կամ երաժիշտ, որ ոչ են հմուտ այնոցիկ գիտութեան արուեստից. իսկ որ զղեակ նաւին հմտաբար ուղղէ, եւ զխառնուածս դեղոց եւ սպեղանեաց կազմէ, եւ զփողս եւ զֆնար յարմարէ՝ նոքա՛ ասին նաւաստի եւ բժիշկ եւ երաժիշտ: Այսպէս արուեստ իմն է բնական եւ իշխանութիւնն. որ անգէտն եւ անտեղեակ պիտոյից մարդկան, տգէտ համարելի է եւ գեղջուկ: Բայց թագաւոր՝ միայն զհմուտն եւ

⁹⁵ Անդ, էջ 97բ:

⁹⁶ Անդ, էջ 97բ-98ա:

⁹⁷ Անդ, էջ 99բ:

գտեղեակ մարդկային օգտութեանց»⁹⁸:

Երզնկացու կողմից հստակորեն ձեւակերպված է նաեւ օրենքի գերակայության եւ իրավական պետության գաղափարը: Քաղաքի, այսինքն՝ պետության կարգուկանոնի եւ շենության հիմքը կամ հոգին, նրա համոզմամբ, օրենքն է, ուստի եթէ իշխանավորներն օրենսգետ եւ օրինապահ չեն, ապա վնասում են արդարներին ու անիրավների կողմից հարստահարված անմեղ մարդկանց. «Ի հարցանել ումեմն՝ «Զի՛արդ ազնիւ լինին ֆաղաֆ եւ մնան ի շինութիւն», պատասխանէ ոմն իմաստուն՝ «Յորժամ իշխանքն հնազանդ լինին աստուածային օրինացն, եւ ֆաղաֆացիքն իշխանացն»: Եւ զի հոգի ֆաղաֆաց օրէնքն են, զոր օրինակ մարմին մեռեալ է առանց հոգոյ, նոյնպէս բնակիչ ֆաղաֆի՛ տկարք եւ աղքատք, մեռեալ են առանց իրաւանց օրինացն: Քանզի բժիշկք օգնեն հիւանդաց, իսկ իշխանք օրինօքն՝ զրկելոց: Եւ որպէս բժիշկք անիմաստք վնասեն հիւանդաց, նոյնպէս իշխանք, որք ոչ գիտեն զիրաւունս օրինացն եւ կամ ոչ պահեն, վնասեն զարդարս եւ զանմեղս՝ զզրկեալս յանիրաւաց»⁹⁹: Ուստի դատաստան տեսնելիս, իշխանավորներից ու դատավորներից լիակատար անաշատություն եւ անկախություն է պահանջվում. նրանք չպիտի թույլ տան, որ ուրիշները միջամտեն արդարների օգտին կամ բարեխոսեն հանցագործների համար, այլ պետք է գործեն ինքնուրույնաբար, այլապես, օրինազանցներին չպատժելով, կնպաստեն հանցագործությունների տարածմանը. «Իշխանաց եւ դատաւորաց պարտ է այնպէս լինել, զի ոչ վասն արդարոցն աղաչիցին եւ ոչ վասն անիրաւաց բարեխօսեսցին: Այսինքն ո՛չ է արժան կալ մնալ իշխանացն մինչ զի աղաչեսցեն եւ ապա բարի արանց եւ արդարոց արասցեն բարի, այլ յինքնէ պարտին շարժել, եւ ոչ վասն անիրաւացն բարեխօսիլ եւ ոչ խրատել ըստ յանցանացն, զի մի՛ այնու յուսով բազում յանցաւորք լինիցին»¹⁰⁰: Իշխանավորը պարտավոր է հավասարապես արդարամիտ լինել արժանավորների եւ հանցագործների հանդէպ, առա-

⁹⁸ Անդ, էջ 93ա: Հմմտ. Սրապյան, Հովհաննես Երզնկացի, էջ 68–69; Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացի 1977, էջ 131:

⁹⁹ Հովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 95ա-95բ:

¹⁰⁰ Անդ, էջ 94բ: Հմմտ. Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացի 1977, էջ 95:

ջիններին արժանացնելով պատիվների, իսկ մյուսներին ենթարկելով պատժի. «Պատուել արժան է իշխանացն զարժանաւորսն:... Պատժել է պատուհասել արժան է իշխանացն զյանցաւորս, եւ ոչ սիրել էւ մերձաւորս առնել, եւ կամ թոյլ տալ զնալ ըստ ախորժակաց»¹⁰¹:

Թագավորի պարտականությունն է վնասկանորեն պայքարել արտաքին թշնամիների եւ իշխանության հակառակորդների դեմ. «Իշխանին պիտոյ (է)... յարտաքին թշնամիսն, այս է՝ զօտարսն եւ ի հակառակսն իշխանութեան համարձակապէս եւ հզօրաբար զօրս կազմել եւ պատերազմել»¹⁰²: Դրա հետ մեկտեղ նա պետք է նկուն ֆաղափականություն վարի եւ կարողանա նիշտ ընտրել պատերազմի եւ խաղաղության ժամանակը՝ երկրի փրկության համար շխորչելով անզամ որոշ զիջումներից. «Իշխանին պիտոյ (է)... զժամանակն նանաչել պատերազմի եւ խաղաղութեան: Զի թէ զիտէ, թէ ոչ կարէ մարտնչել, ըստ Տեառն խրատու նստեալ խորհիցի, թէ կարո՞ղ է ժու (10000)-աւ զղէմ ունել այնմ, որ գայցէ ի վերայ նորա Իմ (20000)-աւ: Ապա թէ ոչ՝ հրեշտակութիւն առաքեալ աղաչեսցէ ի խաղաղութիւն, է՛ զի եւ զանձս տացէ, զի վասն այնորիկ են զանձք, եւ ամենայնիւ հնարեսցի զփրկութիւն երկրի. եւ այսպէս յամենայն իրս ընդ փոփոխման ժամանակին հնարել եւ զհետ զնալ ժամանակին»¹⁰³: Իշխանը, նույնն է թե թագավորը, պարտավոր է գիտակցել նաեւ, որ Աստծու կողմից սահմանված մարդկային անինքնաբավության պատճառով ի վիճակի չէ միայնակ կառավարել երկիրը, ուստի նա պետք է իրեն շրջապատի իմաստուն խորհրդականներով եւ շկարծի, թե ուղղություն տվողի կարիք չունի. «Պիտոյ է իշխանին խորհրդակից,... զի մարդ է մահկանացու եւ տկար, եւ Աստուած զմարդն ոչ ինքնաբաւ արար, այլ խրատտուի եւ խորհրդակցի կարօտ: Պարտ է իմաստուն խորհրդակցաւ վարել զիշխանութիւնն: Յայս խոնարհամիտքն հանապազ ստիպին, իսկ վէտքն եւ անպարտաւանքն ո՛չ խոնարհին, այլ առ

¹⁰¹ *Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 100ա-100բ: Նման մտքերի կարելի է հանդիպել նաեւ Երզնկացու խրատական բնույթի աշխատություններում. հմմտ. Բաղդասարյան, Հովհաննէս Երզնկացի 1977:*

¹⁰² *Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 96ա:*

¹⁰³ *Անդ, էջ 96ա: Հմմտ. Բաղդասարյան, Հովհաննէս Երզնկացի 1977, էջ 96-97:*

ինձեանս թագուցանեն, անկարօտ գիտելով զանձինս ուղղի»¹⁰⁴ :

Այսպիսով, Վահրամ Բաբունու եւ Հովհաննես Երզնկացու ֆննության ենթարկված աշխատություններում մենք գործ ունենք իշխանության «լեզիտիմության» եւ արժայական գաղափարախոսության բավականին մշակված մի հայեցակարգի հետ, որն արտացոլում է ինչպես այդ հարցերի ընդհանուր փրստոնեական ըմբռնումը, այնպես էլ հեղինակների իրավագիտակցության եւ կենսափորձի վրա հիմնված պատկերացումները: Չնայած այդ նշանակալի հանգամանքին, նրանց երկերը մինչ այժմ նշված տեսանկյունից չեն գնահատվել: Միակ բացառությունը բրիտանացի հայագետ Պ. Քաուլիի՝ 1992 թվականին լույս տեսած «Թագադրման արարողության եւ արժայական գաղափարախոսության սկզբնավորումը Կիլիկիայում» հոդվածն է, որն առանձնանում է խնդրին վերաբերող մի շարժ արժեքավոր դիտարկումներով¹⁰⁵: Թեեւ ոչ ժամանակային, բայց մեթոդաբանական եւ տիպաբանական առումներով հիշատակության արժանի է նաեւ Գ. Սարգսյանի «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը եւ Մովսես Խորենացին» մենագրությունը, որի գլուխներից մեկը, վերնագրված՝ «Թագավորների եւ նրանց նախնիների պաշտամունքը հին Հայաստանում», նվիրված է արժայական գաղափարախոսության ֆննությանը¹⁰⁶:

Իսկ այժմ, նախանշված ծրագրի համաձայն, անցնելով Կիլիկիո իշխաններից ու թագավորներից յուրաքանչյուրի գահակալման հանգամանքների եւ նրանց «լեզիտիմության» հետ կապված խնդիրների ֆննությանը, ավելորդ չենք համարում սկզբից եւեթ ընթերցողին զգուշացնել, որ ձգտելով խստորեն հետեւել սկզբնաղբյուրների ընձեռած տվյալների սահմաններից դուրս չգալու սկզբունքին, այնուամենայնիվ երբեմն, բավարար փաստերի պակասության պատճառով, մենք ստիպված ենք եղել առաջ ֆաշել հնարավոր թվացող որոշ վարկածներ՝ դրանց հիմնավորվածության գնահատականը թողնելով մասնագետների դատին:

¹⁰⁴ *Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 99բ: Բացառված չէ, որ Երզնկացու ակնարկը վերաբերում է Թագավորին կից գործող Արքունական ատյանի հեղինակության բարձրացմանը:*

¹⁰⁵ *She's Cowe, The Inauguration, p. 49-59.*

¹⁰⁶ *Սարգսյան, Հելլենիստական Հայաստանը, էջ 23-78:*

ՌՌԻՔԵՆ Ա (°)¹

Ռուբինյան հարստության հիմնադիրը թերեւս Կիլիկիայի պատմության ամենաառեղծվածային դեմքն է, առեղծվածային՝ գլխավորապես այն պատճառով, որ միջնադարյան աղբյուրները չափազանց անորոշ ու կցկտուր տեղեկություններ են հաղորդում նրա մասին: Այս առումով հատկանշական է մանավանդ ամենաստուգապատում հայ ժամանակագիրը համարվող Մատթեոս Ուռհայեցու սակավախոսությունը: Փաստորեն լինելով իրադարձությունների միակ ժամանակակից հայ հեղինակը, նա բավարարվում է ընդամենը Ռուբենի կյանքի երկու դրվագի արձանագրումով. առաջին, որ նա Կոստանդին իշխանի հայրն

¹ Թե՛ միջնադարյան աղբյուրները, թե՛ արդի հետազոտողները տարբեր կերպ են թվագրում Ռուբեն Ա-ի իշխանության տարիները, հաշվարկների հիմք ընդունելով Գագիկ Բ թագավորի սպանության տարեթիվը (1071, 1073, 1076, 1079), Կոստանդին Ա-ի իշխանության 5-8 տարիները, վերջինիս մահվան թվականը (1099, 1100, 1102) եւ Ռուբենի ու Կոստանդինի իշխանավարության տարիների ընդհանուր գումարը (24-26 տարի): Ամենատարածված տեսակետի համաձայն՝ Ռուբեն Ա-ն իշխել է 1080-1095 թվականներին (Ավիշան, Միսուան, էջ 44; Պալասանյան, Պատմութիւն, էջ 329; Բակուրյան, Մի տեսութիւն, էջ 10; Օրմանյան, Ազգապատում, հտ. 3, Յաւելուածք, էջ 2; Morgan, Histoire, p. 363; Grousset, L'Empire, p. 416: Մելիք-Յանջանյան, «Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն», էջ 402; Ազըլյան, Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 273; Bedoukian, Coinage, p. 5; Զուլպայան, Կիլիկիա, էջ 677; Պողոսյան-Կատպայան, Կիլիկիա, էջ 412; Mutafian, La Cilicie, II, tabl. 13 եւ այլն): Գ. Միքայելյանը Ռուբեն Ա-ի իշխանությունը թվագրում է 1080-1092 (Микаелян, История, с. 88), իսկ Փ. Տետեյանը՝ 1073-1093 թվականներով (Dédéyan, Les Arméniens, p. 389):

էր², եւ երկրորդ, որ նա եղել էր Գագիկ Ք թագավորի գորականներից մեկը³: Ուրիշ որեւէ տեղեկություն, որը հնարավորություն կտար պարզելու Ռուբենի գործունեության ժամանակն ու աշխարհագրական միջավայրը, Ուտհայեցին չի հաղորդում: Ինչպես նշում է Նիկողայոս Ադոնցը, «Մատթեոսը Ռուբենին գիտե միայն անունով»⁴, եւ նրա համար այդ իշխանը, կարծես, ոչ թե կոնկրետ պատմական անձ է, այլ ընդամենը հեռավոր մի հուշ: Ուստի բոլորովին զարմանալի չէ, որ որոշ հետազոտողներ կասկածի տակ են առնում Ռուբենի՝ Կիլիկիայում հաստատված լինելու իրողությունն անգամ: Այսպես, օրինակ, Ղ. Ալիշանն այդ առթիվ գրում է. «Ռուբէն արտաքին բնիկն Կիլիկիոյ տիրացեալ էր» եւ Կիլիկիայի «առաջին երկրակալն» իրականում նրա որդի Կոստանդինն էր⁵:

Միանգամայն հիմնավոր համարելով Ստենլի Լեյն-Պուլի որդեգրած այն սկզբունքն, ըստ որի՝ չի կարելի հավատ ընծայել իրադարձություններից ավելի քան մեկ սերնդով հեռացած ժամանակագիրներին⁶, այնուամենայնիվ, մենք հարկադրված ենք ներկայացնել նաեւ Սամուել Անեցու վարկածը, քանի որ հետազոտողների մեծ մասն ամենայն լրջությամբ է վերաբերվում դրան: Անեցին, որի «Ժամանակագրությունն», ինչպես հայտնի է, ավարտվել է 1163 թվականին⁷, ի տարբերություն Ուտհայեցու, շատ ավելի ընդարձակ ու կոնկրետ տեղեկություններ է հաղորդում Ռուբենի մասին: 1076 թվականի տակ նկարագրելով Գագիկ Ք թագավորի մահը, Սամուելն ավելացնում է. «Իսկ իշխանին Հայոց եւ ամենայն զօրք նոցա լճան եւ յամենայն տեղիս ցրուեցան: Յորոց իշխան մի արեանառու Գագկայ՝ Ռուբէն անուն, որ կալեալ ունէր ԳԿօսիտառայ բերդն, յորժամ լուաւ զմահն Գագկայ, յարուցեալ ամե-

² Մատթէոս Ուտհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 257, 259, 269, 271, 298, 316, 318, 321, 337, 342:

³ «Ռուբէն ի զօրացն (որոշ ձեռագրեր՝ ի գաւակացն) Գագկայ էր». Մատթէոս Ուտհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 321:

⁴ Adontz, Études, p. 181.

⁵ Ալիշան, Սիսուան, էջ 47: Հմմտ. նաեւ՝ Քասունի, Ռուբէն Ա, էջ 75, 83:

⁶ Lane-Poole, Saladin, p. 25.

⁷ Մաթեւոսյան, Սամուել Անեցի, էջ 162:

նայն զարմօք իւրովք, եւ եկն ի կողմանս Փռիւզիոյ, դիմելով ի գիտ մի Կօլիմօզօյ անուն, եւ անդ բնակեալ, յորում լերինն էին բնակեալ բազումք յազգէն Հայոց: Ջորս զամենեսեան զնոսա առ ինքն կալեալ մեծն Ռուբէն, եւ նոքօք զօրացեալ, էառ զլեռնային կողմանսն, զՀոռոմսն անտի ի բաց մերժեալ եւ զնոցա տեղիսն առեալ: Եւ եօթանասուն ամաց լեալ բարեպաշտ կենօք, վերափոխեցաւ առ Քրիստոս, եւ թաղեցաւ ի սուրբ ուխտն Կաստաղոն, թողեալ զիշխանութիւն յիւր հարազատ որդին ի Կոստանդին»⁸: Մի այլ հատվածում, համակարգելով Ռուբինյան իշխանների ժամանակագրությունը, Անեցիւն եւս մեկ անգամ անդրադառնում է Ռուբենին, նշելով. «Որոց առաջինն է Ռուբէն, որ ի ՇԻԵ թվին (= 1076), ի սպանանելն Գագկայ, եկեալ ի գիւղն Կօմօզօյ, եւ առեալ զլեռնային կողմանսն, եւ զկնի սակաւ ամաց մեռանի, եւ որքանն չէ յայտ: Եւ զկնի Կոստանդին որդի նորա տիրէ Վահկային եւ այլոց բազմաց, մեռանի ի ՇԽԹ թվին (= 1100), ընդ ինքն եւ ընդ հայրն կացեալք ամս ԻԳ (= 24)»⁹, եւ ապա. «Զի ըստ այլոցն Կոստանդին որդին Ռուբէնի մեռանի ի ՇՄԱ թվին (= 1102), ընդ ինքն եւ ընդ հայրն կացեալք ամս ԻԶ (= 26)»¹⁰:

Եթե փորձելու լինենք դասդասել Սամուել Անեցու հաղորդած տեղեկությունները Ռուբենի մասին, ապա Մատթեոսի նշած երկու փաստի փոխարեն կստանանք միանգամից տասներեքը, այն է՝

- Ռուբենը եղել է Գագիկ Բ թագավորի իշխաններից մեկը.
- Նա նաեւ ազգակցական կապ է ունեցել Գագիկի հետ, այսինքն սերել է Բագրատունյաց տոհմից.
- Սկզբնապես Ռուբենը տիրել է Կօսիտառայ անունը կրող բերդին.
- Հայոց թագավորի սպանությունից հետո իր զավակներով տեղափոխվել է Փոյուզիայի կողմերը եւ բնակություն հաստատել Կօլիմօզօյ/Կօմօզօյ կոչվող գյուղում.
- Այդ գյուղի մոտակա լեռներում բնակվելիս են եղել բազմաթիվ հայեր.
- Ռուբենը նրանց բոլորին հավաքել է իր շուրջը, եւ նրանցով զորա-

⁸ Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 116:

⁹ Անդ, էջ 135:

¹⁰ Անդ, էջ 136:

- ցած, գրավել է լեռնային շրջանները, այնտեղից դուրս բշելով հույներին եւ զբաղեցնելով նրանց բնակավայրերը.
- Ապրել է բարեպաշտ կյանքով.
 - Մահացել է յոթանասուն տարեկան հասակում.
 - Նրա մահը վրա է հասել Գագիկի սպանությունից, Կոմսոգոյօ գյուղում հաստատվելուց եւ լեռնակողմերը գրավելուց քիչ ժամանակ անց.
 - Քաղվել է Կաստաղոնի վանքում.
 - Իշխանությունը թողել է իր հարազատ որդի Կոստանդինին.
 - Հայտնի չէ, թե քանի տարի է իշխել.
 - Ռուբենի եւ Կոստանդնի իշխանավարության տարիների ընդհանուր գումարը կազմել է 24 կամ 26 տարի:

Ավելի ուշ շրջանի հայ ժամանակագիրները հետետել են կա՛մ Մատթեոս Ուռհայեցու, կա՛մ, պայմանականորեն ասած¹¹, Սամուել Անեցու ավանդույթին: Ուռհայեցուն համարյա բառացի կրկնում է Սմբատ Սպարապետը, միայն այն տարբերությամբ, որ նա Ռուբենին համարում է ոչ թե Գագիկ թագավորի զորականներից, այլ իշխաններից մեկը. «Ռուբէն յիշխանացն Գագկայ թագաւորի էր»¹², կամ «Ռուբէն յիշխանաց Գագկայ էր»¹³: Իր տվյալներն Ուռհայեցուց է փոխել նաեւ Վարդան Արեւելցին. «մեռաւ Կոստանդին մեծ իշխանն Հայոց՝ որդին Ռուբինայ, որ էր յազատաց¹⁴ Գագկայ արքայի»¹⁵, թեւէ այստեղ «որ էր յազատաց Գագկայ արքայի» նախադասությունը փերկանորեն կարող է վերաբերել թե՛ Ռուբենին, թե՛ Կոստանդինին: Այնուամենայնիվ, երկու դեպքում էլ Վարդանի աղբյուրը Մատթեոսն է, քանի որ վերջինս Կոստանդինին եւս համարում է «ի զօրացն Գագկայ»¹⁶: Այն, որ Սմբատն ու Վարդանը նախընտրել են Մատթեոսի տարբերակը, ուշագրավ է հատկապես հետեւյալ առումով. առաջինն՝ արժանապատիւ, իսկ երկրորդը՝ Հեթում Ա թա-

¹¹ Քե ինչու պայմանականորեն՝ այդ մասին ստորեւ:

¹² Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 137:

¹³ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 91:

¹⁴ Մեկ ձեռագիր՝ հարազատ:

¹⁵ Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 111:

¹⁶ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 257, 269:

գավորի մերձավորի հանգամանքով, ֆաշաձանոթ պետք է լինեին Կիլիկյան արևունիքի ավանդույթներին: Ուստի եթե նրանք տեղյակ լինեին Ռուբենի կենսագրությանը վերաբերող այլ մանրամասների, ապա դժվար թե անտեսեին դրանք¹⁷:

Ետսմբատյան եւ ետվարդանյան շրջանի, այսինքն XIII դ. վերջին ֆառորդի աղբյուրները՝ Վահրամ Բաբունու «Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց»-ը¹⁸, Հեթում արֆայորդու Ճաշոցի հիշատակարանը¹⁹, Հեթում Կոռիկոսցու «Պատմութիւն ազգին Ռովքինանց»-ը²⁰ եւ Հեթում թագավորի «Պատմութիւնը»²¹, Ռուբենի կենսագրական տվյալների ծավալով ու բովանդակությամբ, նույնանում են Սամուել Անեցու «Ժամանակագրության» բնագրին: Ինչպես արդեն առիթն ունեցել ենք նշելու²², մեր համոզմամբ, այս ավանդույթի հիմնադիրը հոշակավոր փիլիսոփա Վահրամ Բաբունին է՝ Հայոց Լեւոն Գ (II) թագավորի (1269–1289 թթ.) ֆարտուղարը, որի «Ոտանաւոր պատմութիւնը», մասնագետների կարծիքով, գրվել է 1276–1277 թվականներին²³: Թագավորից պատվեր ստանալով լրացնել Ներսես Շնորհալու «Վիպասանութիւնը», Բաբունին, ամենայն հավանականությամբ, նախ շարադրել է Հեթում Կոռիկոսցուն վերագրված «Պատմութիւն ազգին Ռովքինանց» աշխատությունը, ապա դրա հիման վրա կազմել իր չափածո բերթվածը: Պարտավորված լինելով վերարտադրելու Ռուբինյան իշխանների ու թագավորների լիակատար պատմությունը, Վահրամն ստիպված է եղել՝ մասամբ ենթադրությունների, մասամբ էլ բանավոր գրույցների հիման վրա, լրացնել պատմության բացերը²⁴: Այս-

¹⁷ *Սմբատի առնչութեամբ հմտ. Adontz, Études, p. 180. Իսկ Վարդանի եւ Ուռհայեցու ժամանակագրութիւնների բնագրական աղբրսի մասին մանրամասն տես Անթապյան, Աղբյուրները, էջ 97–99:*

¹⁸ *Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 184–242:*

¹⁹ *Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 582–589:*

²⁰ *Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 100–105:*

²¹ *Անդ, հտ. 1, էջ 74–87:*

²² *Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 463–464:*

²³ *Տես Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 98:*

²⁴ *Թեեւ Ղ. Ալիշանի կարծիքով՝ «Վահրամ Բաբուն, որ յարքունիս նորին թագաւորի կայր, ... ոչ կարէր ... խոտորել ի ստուգութենէ կամ յաւանդութենէ»:* Այլ-

տեղից էլ, ահա, Ռուբեն Ա-ի կենսագրությանը վերաբերող մանրամասները, որոնք, ինչպես տեսանք, չեն հաստատվում հնագույն աղբյուրների տվյալներով:

Ռուբեն Ա-ի ինքնության խնդրին նվիրված առաջին լուրջ ուսումնասիրությունը Նիկողայոս Ադոնցի 1935 թվականին հրատարակված «Ռուբինյանների նախնին» հոդվածն է²⁵, որում, պետք է խոստովանել, առաջ է քաշված բավականին անսպասելի եւ առաջին հայացքից միանգամայն անհավանական թվացող մի վարկած: Հիմնվելով Սկրիպցեսի մի եզակի տեղեկության վրա, Ադոնցը Ռուբենին նույնացնում է ՝ Րոսթոմի անունով բյուզանդական մի պաշտոնյայի հետ, որը հիշատակվում է Բալկաններում 1018/1019 թվականին տեղի ունեցած իրադարձությունների առիթով: Բուլղարներին ջախջախելուց հետո Հունաստանի ճանապարհով Կոստանդնուպոլիս վերադառնալիս,– գրում է Սկրիպցեսը,– Վասիլ կայսրը²⁶ «հիացավ նաեւ բուլղարների առաջն անելու համար Թերմոպիլեում Ռուբենի կողմից կառուցված պարսպով, որն այժմ Սկելոս է կոչվում»²⁷ (‘Υπερηγάσθη δὲ καὶ τὸ ἐν Θερμοπούλαις γενόμενον τεῖχος, ὃ Σκέλος ἄρτι κατονομάζεται, εἰς ἀποτροπὴν τῶν Βουλγάρων παρὰ τοῦ Ῥοστένη)²⁸: Ադոնցի ենթադրությամբ՝ այս ՝ Րոսթոմի-ը Լարիսայի եւ Հունաստանի ստրատեգոսը պետք է եղած լիներ, պաշտոն, որը նրանից առաջ զբաղեցրել են երկու ուրիշ հայազգի իշխաններ՝ Կեկավմենոսը (980–984 թթ.) եւ Գրիգոր Պատրիկը (մինչեւ 1006/1007 թ.)²⁹: Իր պաշտոնն ինչ-որ պատճառով կորցնելուց հետո,– շարունակում է Ադոնցը,– Կոստանդին Մոնոմախոս, Կոստանդին Դուկաս եւ Ռոմանոս Դիոգենես կայսրերի օրոք սանձազերծված հակահայկական հալածանքների պատճառով, Ռուբենն, ըստ երեւույթին, ուրիշ

շան, Սիսուան, էջ 43:

²⁵ Adontz, Études, p. 177–195.

²⁶ Խոսրը վերաբերում է Վասիլ II Բուլղարասպան կայսրին (976–1025 թթ.):

²⁷ Բարթիկյան, Սկրիպցես, էջ 92:

²⁸ Հստ՝ Adontz, Études, p. 185.

²⁹ Անդ, էջ 186–187: Գրիգոր Պատրիկի մասին մանրամասն տե՛ս Բարթիկյան, Հետազոտություններ, հտ. 2, էջ 768–773:

հայ իշխանների նման, ծառայության է անցել Կապադովկիայում հաստատված Գագիկ Բ թագավորի մոտ, ստանձնելով Տավրոսյան լեռների ուրոշ գավառների կառավարումը³⁰։ Նա ազգակցական կապ չի ունեցել Բագրատունիների հետ, եւ նրա «լեզիտիմության» հիմքը եղել է միայն բյուզանդական բարձրաստիճան պաշտոնյա հանդիսանալու հանգամանք³¹։ Նկատի ունենալով Ռուբինյան գերդաստանում Թորոս անվան տարածվածությունը, Ադոնցը ենթադրում է նաեւ, որ Ռուբենը հավանաբար եղել է Չորրորդ Հայքի Հաշտեանք գավառի իշխան Թորոսի որդին³²։ Այդ իշխանի մասին տեղեկացնող միակ աղբյուրի՝ Ասողիկի «Պատմութեան» համաձայն՝ նա 994 թվականին, բյուզանդական բանակի կազմում մասնակցելով եգիպտացիների դեմ Անտիոքի մերձակայքում տեղի ունեցած ճակատամարտին, սպանվել կամ գերի էր ընկել մահմեդականների ձեռքը³³։ Ծնված լինելով 990-ական թթ. սկզբին³⁴, Ռուբենն, ըստ Ադոնցի, ապրել է մոտավորապես ութսուն տարի, եւ մահացել 1070-ական թվականներին³⁵, որից հետո նրան հաջորդել է նրա որդի Կոստանդինը։

Գլխավորապես ժամանակագրական անհամատեղելիության պատճառով հետազոտողներից շատերը մերժել են Ադոնցի առաջ քաշած վարկածը³⁶։ Արդի հետազոտողներից միայն Փ. Տետեյանն է, որը մի

³⁰ Adontz, Études, p. 186–187, 191.

³¹ Անդ, էջ 188:

³² Անդ:

³³ «Որոց հետամուտ եղեալ զօրն Տաճկաց՝ զբազումս սրախողխող առնէին եւ զյուրովս ձերբակալ, որպէս զժանակ պատրիկ, որդի Խոռասայ եւ զԹորոս բարեպաշտ եւ աստուածասէր ի գաւառէն Հաշտենից եւ զայս յաշխարհէն Հայոց յագատաց»։ Ասողիկ, Պատմութիւն, էջ 262:

³⁴ Adontz, Études, p. 187. Ադոնցն ուղղակի չի նշում Ռուբենի ծննդյան թվականը, բայց ենթադրում է, որ 1018/1019 թվականին նա 23–25 տարեկան պետք է եղած լիներ:

³⁵ Adontz, Études, p. 191. Ըստ Ադոնցի՝ Ռուբենը ողջ է եղել մինչեւ Գագիկ Բ թագավորի սպանութիւնը, որը նա թվագրում է շուրջ 1071 թվականով (Անդ, էջ 191, 193):

³⁶ Հմմտ. Микаелян, История, с. 87–88; Քասունի, Ռուբէն Ա, էջ 42–43; Բարթիկյան, Ակիւիցես, էջ 328:

էական վերապահությամբ, ընդունել եւ փորձել է լրացուցիչ տվյալներով ամրապնդել այն³⁷: Հաղթահարելու համար աղբյուրներում առկա ժամանակագրական անհամապատասխանությունը, Տետեյանը Սկիլիցեսի հիշատակած 'Ρουπένης-ին դարձրել է Ռուբեն Ա-ի պապը³⁸, դա հիմնավորելով բացառապես Սամուել Անեցու վկայությունների հավաստիությամբ: «Նշված իրադարձությունների համար Սամուել Անեցին ավելի ճշգրիտ է, քան Մատթեոսը»,– գրում է նա, շնոհանալով ավելացնել, որ Ռուբինյանների մասին իր տեղեկությունները Անեցին ֆաղել է իրադարձություններին ժամանակակից մի աղբյուրից, այն է՝ Հովհաննես Սարկավազ Իմաստասերի (մահ. 1129 թ.) կորած «Պատմությունից»³⁹:

Քեւե Սամուել Անեցու «ժամանակագրության» խնդրին մենք մանրամասնորեն անդրադարձել ենք սույն գրքի առաջին հատորում⁴⁰, այնուամենայնիվ հարկ ենք համարում կրկնել այնտեղ արված մեր հիմնական եզրակացությունները: Անեցու «ժամանակագրության» սկզբնական բնագրում (Մատենադարան, ձեռ. №. 5619, 1176 թ.) իսպառ բացակայում են Ռուբինյաններին եւ ընդհանրապես կիլիկյան անցուդարձերին վերաբերող տվյալները: Դրանք Սամուելի երկի բնագիր են մուծվել XIII դ. վերջին ֆառորդում եւ ֆաղված են այդ ժամանակի մի յուրահատուկ շրջանակի աղբյուրներից (Վահրամ Բաբունու «Ռոտանատր պատմութիւն Ռուբինեանց», Հէթում արքայորդու ճաշոցի հիշատակարան, Հէթում Կոռիկոսցու «Պատմութիւն ազգին Ռովբինանց» եւ Հէթում թագավորի «Պատմութիւն»): Ուստի, որքան էլ ցավալի լինի, Անեցու ժամանակագրությունը պետք է հանել Կիլիկիայի պատմության ստուգապատում աղբյուրների ցանկից: Հետագա թյուրիմացություններից խուսափելու համար Մատենադարանի ընդօրինակությունն այսուհետեւ կոչում ենք Սամուել Անեցու «Բուն ժամանակագրություն», իսկ Ա. Տեր-Միխեյանի 1893 թ. հրատարակությունը՝ «Խմբագրյալ ժամանակագրություն»:

³⁷ Dédéyan, Les Arméniens, p. 365–374.

³⁸ Անդ, էջ 367:

³⁹ Անդ, էջ 375–376:

⁴⁰ Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 471–481:

Այժմ վերադառնանք Ռուբինյանների նախնու վերաբերյալ Նիկողայոս Ադոնցի առաջ ֆաշած վարկածին եւ փորձենք պարզել, թե ժամանակագրական անհամատեղելիություն կամ անհամապատասխանություն ասելով, ինչ են հասկանում նրան առարկող գիտնականները: Քննությունը ցույց է տալիս, որ վերջիններիս առարկություններն ակնբերաբար հիմնված են այն փաստի վրա, որ Ադոնցի տեսակետն իրոք հակասում է Ռուբեն Ա-ի եւ նրա որդի Կոստանդնի իշխանավարության տարիների տեւողության վերաբերյալ միջնադարյան աղբյուրներում պահպանված թվական տվյալներին: Սակայն, երբ ուշադիր զննում ենք այդ աղբյուրները, ապա պարզվում է, որ խոսքը վերաբերում է բացառապես ուշ շրջանի մի ֆանի ժամանակագրական հուշարձանների՝ Սամուել Անեցու «Խմբագրյալ ժամանակագրություն» (XIII դ. վերջին ֆառորդ), Սմբատ Սպարապետի Շարունակող (1331 թ.), Ներսես Պալիանենցի «Իշխանութիւնք եւ թագաւորք Հայոց» (1351) եւ Հովհաննես Գարդելի «Ժամանակագրութիւն» (1380-ական թթ.): Ըստ Անեցու խմբագրի՝ Ռուբենի եւ Կոստանդնի իշխանավարության շրջանի ընդհանուր տեւողությունը կազմել է ֆանչորս կամ ֆանվեց տարի⁴¹, հաշվարկ, որի հիմքում ակնհայտորեն ընկած է Գագիկ թագավորի սպանության (1076 թ.)⁴² եւ Կոստանդնի մահվան (1100 կամ 1102 թթ.)⁴³ տարեթվերի տարբերությունը: Ներսես Պալիանենցը եւ Հովհաննես Գարդելը Ռուբենին հատկացնում են ֆան տարվա⁴⁴, իսկ Կոստանդնին՝ համապատասխանաբար հինգ⁴⁵ եւ «ոչ բա-

⁴¹ Սամուել Անեցի, *Հաւաքմունք*, էջ 135, 136:

⁴² Անդ, էջ 116. *Տպագրի ՇՀԵ (1126) թվականը ուղղելի է ՇԻԵ (1076). ճիշտ ընթերցվածք տե՛ս էջ 135:*

⁴³ Անդ, էջ 121, 135, 136:

⁴⁴ *Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 205; Յովհաննէս Գարդելի, Ժամանակագրութիւն, էջ 9: Ռուբենին 20 տարվա իշխանավարութիւն են հատկացնում նաեւ XVII դ. Անանուն ժամանակագիրը (Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 1, էջ 256) եւ Մարտիրոս Ղրիմեցին. տե՛ս Մարտիրոս Ղրիմեցի, Կարգ եւ թիւ, էջ 203:*

⁴⁵ *Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 205: Նույնը՝ XVII դ. Անանուն ժամանակագիր (Անդ, հտ. 1, էջ 256):*

զում»⁴⁶ տարիների իշխանություն: Եւ վերջապես, Սմբատ Սպարապետի շարունակողի վկայությամբ՝ Կոստանդինն իշխել է տասնչորս տարի⁴⁷: Ահա ժամանակագրական տվյալների այն ամբողջությունը, որը մեզ հայտնի է առաջին Ռուբինյանների իշխանավարության տարիների տետղության մասին:

Իրադարձություններից 200–300 տարի հետո գրված այս աղբյուրներին թերես կարելի էր որոշ կարեւորություն տալ, եթե նրանց հաղորդած մյուս ժամանակագրական տեղեկությունները, որոնք բարեբախտաբար այլուստ ստուգելի են, համապատասխանեին իրականությանը: Սակայն այս առումով իրերի դրությունը պարզապես ողբալի պետք է համարել: Ներսես Պալիանենցը Ռուբինյանների մուտքը Կիլիկիա թվագրում է նախ Հայոց ԵՃԶ (1097) եւ Քրիստոսի ՌՃԷ (1107) թվականով⁴⁸, ապա՝ Հայոց ԵՃԽԷ (1098) եւ Քրիստոսի ՌՂԸ (1098)⁴⁹: Թորոս Ա-ին նա հատկացնում է 23, Թորոս Բ-ին՝ 13, իսկ Ռուբեն Գ-ին՝ 22 տարիների իշխանավարություն⁵⁰, մինչդեռ հայտնի է, որ նրանք իշխել են համապատասխանաբար՝ 29, 23 եւ 12 տարի: Ըստ Հովհաննես Դարդելի՝ Ռուբինյանները Կիլիկիա են թափանցել 1098 թվականին⁵¹, Թորոս Ա-ն իշխել է 19 տարի (29-ի փոխարեն), Լեւոն Ա-ն՝ 5 (13-ի փոխարեն), իսկ Լեւոն Բ-ն՝ 36 (32-ի փոխարեն)⁵²: Բազմաթիվ ժամանակագրական աննշտություններ է պարունակում նաեւ Սամուել Անեցու «Սմբազրյալ ժամանակագրությունը»: Այսպես, օրինակ, Լեւոն Ա-ի գերեվարումը Հովհաննես Կոմնենոսի կողմից նախ թվագրված է ՇՁԱ (1132)⁵³, ապա ՇՁԶ

⁴⁶ Յովհաննէս Դարդել, *Ժամանակագրութիւն*, էջ 11:

⁴⁷ Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 137:

⁴⁸ Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ*, հտ. 2, էջ 179: Այս սխալի հիմքը հավանաբար Սմբատ Սպարապետի մի տեղեկության թյուրըմբռնումն է. տես Սմբատ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 102:

⁴⁹ Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ*, հտ. 2, էջ 205:

⁵⁰ Անդ:

⁵¹ Յովհաննէս Դարդել, *Ժամանակագրութիւն*, էջ 10:

⁵² Անդ, էջ 12, 15:

⁵³ Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 130:

(1137)⁵⁴ թվականով, Թորոս Ա-ին մեկ անգամ հատկացված է 29 տարվա իշխանավարություն⁵⁵, մի այլ անգամ 13, Թորոս Բ-ին՝ մի դեպքում 13, մյուսում 24, Ռուբեն Գ-ին՝ 22 (12-ի փոխարեն)⁵⁶ եւ այլն: Եւ վերջապես, հարցականի տակ է նաեւ Կոստանդնի մասին Սմբատ Սպարապետի շարունակողի հաղորդած տեղեկության վավերականությունը, քանի որ այն հակասում է նույն հեղինակի հետեւյալ վկայությանը. «Զկնի մահուան Գագկայ արեայի Հայոց եկին յարեւելից որդիք մեծագարմ իշխանին պարոն Ռուբէն եւ պարոն Կոստանդին, ու Աստուծոյ օգնութեամբն ի Մսլմանաց ու շատ մը ի Հոռմէն մեծ մասն աշխարհիս Կիլիկիոյ (առին), որ էր առաջին բերդ Վահկայն, ի թուին Հայոց 527 (1078)»⁵⁷: Հակասությունը կայանում է նրանում, որ նախ՝ Գագիկ Բ-ն, ըստ Սմբատի, մահացել է 1079 թվականին⁵⁸, հետեւաբար Վահկան չէր կարող գրավվել 1078-ին, եւ ապա՝ Կոստանդնին համարելով Կիլիկիայի առաջին տիրակալ, իշխած 14 տարի⁵⁹, Սմբատի շարունակողը մոռանում է նշել Ռուբենի իշխանության տարիները, թեւ, ինչպես տեսանք, հայր ու որդի իբր միասին էին եկել Կիլիկիա եւ միասին էլ գրավել Վահկան:

Վերոշարադրյալից արվելիք միակ եզրակացությունը, կարծում ենք, կարող է լինել հետեւյալը. հետնագույն շրջանի այս աղբյուրները, որոնք ա. իրադարձություններից հեռու են շուրջ երկու-երեք դարով, ք. որոնց տվյալները չեն հաստատվում ավելի վաղ ու արժանանահավատ աղբյուրների վկայությամբ, եւ գ. որոնք լի են ներքին ժամանակագրական հակասություններով ու աննշտություններով, չեն կարող վստահելի համարվել եւ այդու հաշվի առնվել Կիլիկիայի առաջին հայ տիրակալ-

⁵⁴ Անդ, էջ 135:

⁵⁵ Անդ:

⁵⁶ Անդ, էջ 136: Սամուելի նորահայտ շարունակողի տվյալներով՝ Ռուբենը իշխանության ղեկն ստանձնել է 1078 թ. եւ իշխել է 15 տարի, իսկ Կոստանդինը նրան հաջորդել է 1098 թ. եւ իշխել 5 տարի (Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 483):

⁵⁷ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 135-136:

⁵⁸ Անդ, էջ 86:

⁵⁹ Անդ, էջ 136:

ների գործունեության լուսաբանման խնդրում: Կարծում ենք նաև, որ ոչ մի պատմաբան լրջորեն չէր վերաբերվի այդ տվյալներին, եթե գոյություն չունենար Սամուել Անեցու «Ժամանակագրության» հետ կապված թյուրիմացությունը: Թեև հետազոտողներից ոմանք փորձել են այդ տվյալներն ամրապնդել լրացուցիչ հաշվարկներով, մասնավորապես Վահկայի գրավման՝ որպես Կոստանդնի առաջին գործի եւ վերջինիս մահվան թվականների տարբերությամբ⁶⁰, սակայն դրանից պատկերն, ըստ էության չի փոխվում, քանի որ հնագույն աղբյուրներին անհայտ է Վահկայի գրավման ժամանակը, իսկ ուշ շրջանի ժամանակագրություններն էլ այդ դեպքն այլևայլ կերպ են թվագրում 1078 թ. (Սմբատի շարունակող)⁶¹, 1091 (Հեթում թագավոր)⁶², 1097 թ. (Ներսես Պալիանենց)⁶³:

Այսպիսով, մեր կարծիքով՝ առկա տվյալների ֆննդությունից միանգամայն ակնհայտ է դառնում, որ հայկական աղբյուրները ժամանակագրական առումով որեւէ անպատեհություն չեն ստեղծում հավանական համարելու համար Ն. Ադոնցի թեկուզ համարձակ, բայց բավականին հիմնավորված թեզը: Այնուամենայնիվ, որքան էլ հավանական ու հիմնավորված, այն շարունակում է մնալ ընդամենը որպես գիտական վարկած, քանի որ առայժմ չի հաստատվում որեւէ դրական փաստով: Միակ անառարկելի իրողությունն այն է, որ հնագույն աղբյուրները ոչ մի տեղեկություն չեն հաղորդում Կիլիկիայում Ռուբենի ծավալած գործունեության մասին, ինչն անբացատրելի է նրա 15 կամ 20 տարվա

⁶⁰ Հմմտ. Dédéyan, Les Arméniens, p. 390. Տեսեյանը ուշադրություն է հրավիրում նաև այն փաստի վրա, որ ըստ Սմբատի՝ Կոստանդինը Կիլիկիա է եկել 1092 թվականին: Սակայն, ակնհայտաբար, այստեղ մենք գործ ունենք շփոթության հետ: Ճիշտ է, Կոստանդինի Կիլիկիա մուտք գործելուն նախորդած դեպքը Սմբատի մոտ իսկապես թվագրված է այդ թվականով, սակայն հստակ նշված է նաև, որ Կոստանդինը Կիլիկիա է եկել Գագիկ թագավորի սպանությունից հետո (Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 87), որը Սմբատը նախորդ էջում թվագրել է 1079 թվականով (Անդ, էջ 86): Նույն շփոթը տես նաև՝ Քասաբեի, Ռուբեն Ա, էջ 81:

⁶¹ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 136:

⁶² Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 74:

⁶³ Անդ, հտ. 2, էջ 179: Թեև Պալիանենցը ուղղակի չի նշում Վահկայի գրավման թվականը, սակայն գրում է, որ Ռուբինյանները Կիլիկիա են մտել 1097-ին:

գահակալության իսկության պարագայում⁶⁴: Ուստի հուսով ենք, սրբապղծություն չի դիտվի, եթե պնդենք, որ ա. Ռուբենը երբեք չի իշխել Կիլիկիայում⁶⁵ եւ բ. Կիլիկիայի առաջին հայ տիրակալը եղել է Կոստանդինը⁶⁶, ինչը մենք կփորձենք հիմնավորել հաջորդ ենթագլխում: Հետեւաբար այսու հասկանալի պիտի դառնա, թե ինչու Կիլիկիո գահակալների շարքն սկզբնավորող այս ենթագլխի վերնագրում Ռուբենի անվան դիմաց դրված է հարցական նշան:

Այս ամենով հանդերձ, պետք է շեշտել, որ Ռուբեն Ա-ի կերպարը հետաքրքրություն է ներկայացնում ոչ այնքան իր կենսագրությամբ ու կատարած իրական գործերով, որքան Կիլիկիայում իր անվան խաղացած նշանակալից գաղափարաբանական դերով, որը կոչված էր ապահովելու հույներից նվաճված այդ տարածքում անկախ պետականություն հիմնադրելու Ռուբինյանների ծրագրի «լեգիտիմությունը»: Խոսքը վերաբերում է Ռուբենի եւ Գագիկ Բ թագավորի ազգակցական կապի մասին շրջանառության մեջ դրված առասպելին, որի շնորհիվ Ռուբինյանները դառնում են Բագրատունյաց հարստության անմիջական ժառանգորդը: Բայց քանի որ այդ առասպելը, մեր կարծիքով, ստեղծվել է Կիլիկիայում Հայոց թագավորության վերականգնումից հետո, ուստի այդ մասին մանրամասն կխոսվի համապատասխան տեղում:

⁶⁴ Թեեւ Ե. Քասունին աղբյուրների լուծոթյունը բացատրում է Ռուբենի՝ Փիլարտոսի աննշան ենթականերից մեկը եղած լինելու հանգամանքով, բայց դա ընդամենը մեկնաբանություն է, եւ ոչ փաստ. տե՛ս Քասունի, Ռուբէն Ա, էջ 75: Հմմտ. նաեւ՝ Lüders, Die Kreuzzüge, S. 18.

⁶⁵ Հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 47:

⁶⁶ Հմմտ. Քասունի, Ռուբէն Ա, էջ 75, 83:

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ա (1080^o–1100 թթ.)¹

Քեւ աղբյուրների առումով, Կոստանդինից սկսած, մենք ուրք ենք կոխում ավելի հաստատուն գետին, սակայն միեւնոյն է, նրա իշխանության սկզբնավորման շրջանի իրադարձությունները մեզ համար մութ են մնում: Մասնավորապես պարզ չէ, թե զահաժառանգական իրավունքի ինչ հիմունքներով է իշխանությունը փոխանցվել Ռուբենից Կոստանդին: Պարզ չէ նաեւ, թե Կոստանդինն իր հոր անդրանիկ որդին է եղել, թե՞ կրտսերներից մեկը: Որքան էլ տարօրինակ թվա, հարցական է անգամ, թե Կոստանդինն իրո՞ք Ռուբենի, թե մի այլ անձնավորության

¹ Ինչպես Ռուբեն Ա-ի պարագայում, Կոստանդինի իշխանության տարիները եւս հետազոտողները տարբեր կերպ են թվագրում, այս անգամ արդեն հաշվարկների հիմք ընդունելով Ռուբենի մահվան (1092, 1093, 1095), Վահկայի գրավման (1091, 1092, 1097) եւ Կոստանդինի մահվան (1100, 1102) թվականները, ինչպես նաեւ Ռուբենի եւ Կոստանդինի իշխանավարության տարիների ընդհանուր գումարը (24 կամ 26): Նորից, ամենատարածված տեսակետի համաձայն՝ Կոստանդինն իշխել է 1095–1100 թվականներին (Ալիշան, Սիսուան, էջ 44; Պալասանյան, Պատմութիւն, էջ 329–330; Բակուրան, Մի տեսութիւն, էջ 11; Մելիք-Յանջանյան, «Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն», էջ 402, Bedoukian, Coinage, p. 5; Զուլպյան, Կիլիկիա, էջ 677; Պողոսյան-Կատվայան, Կիլիկիա, էջ 412): Մյուս պատմաբանները նշում են հետեւյալ թվականները. 1095–1099 (Օրմանյան, Ազգապատմութիւն, հտ. 3, Զաւելուածք, էջ 2; Morgan, Histoire, p. 363; Grousset, L'Empire, p. 416), 1092–1100 (Tourneblize, Histoire, p. 169; Микаелян, История, с. 88), 1092–1099 (Ազրլյան, «Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ», էջ 273), 1095–1102 (Rüdt-Collenberg, The Rupenides, I (Rup.); Mutaflan, La Cilicie, II, tabl. 13), 1093–1100 (Dédéyan, Les Arméniens, p. 389):

որդին էր, տարօրինակ մանավանդ այն պատճառով, որ բոլոր հայկական աղբյուրներն անխտիր նրան համարում են «որդի Ռուբենայ» կամ «որդի Ռուբենի»: Այսպիսի գայթակղեցուցիչ հարցադրումներից հետո, կարծում ենք, արժե սկսել հենց դրանց պարզաբանումից:

Ասվեց արդեն, որ չկա Կոստանդնի անձին անդրադարձած որեւէ հայկական աղբյուր, որը նրան չճանաչի որպես Ռուբենի որդի: Սակայն բանից պարզվում է, որ դա դեռևս ոչինչ չի նշանակում, քանի որ նույն այդ աղբյուրներում բազմիցս Ռուբենի որդի են կոչվում նաև Կոստանդնի ժառանգները: Այսպես, Մատթեոս Ուռհայեցու մոտ Քորոս Ա-ը երեք անգամ հիշատակված է որպես Կոստանդնի², իսկ երկու անգամ որպես Ռուբենի որդի³: Լեոն Ա-ը երկու անգամ Մատթեոսի եւ երկու անգամ էլ Գրիգոր Երեցի բնագրում կոչված է «որդի Կոստանդեայ»⁴, իսկ մեկ անգամ, Մատթեոսի մոտ, «որդի Ռուբենայ»⁵: Նույն Լեոն Ա-ին Սմբատ Սպարապետը վեց անգամ հիշատակում է Կոստանդնի⁶, իսկ երեք անգամ Ռուբենի որդի⁷ անունով: Քորոսին եւ Լեոնին որպես «որդիք Ռոբինի» է ճանաչում նաև անանուն մի հեղինակ⁸: Իսկ Գրիգոր Երեցի մոտ մեկ անգամ Ռուբենի որդի է կոչված նույնիսկ Լեոնի որդի Քորոս Բ-ը⁹: Եւ վերջապես, առկա են նաև նույնը հաստատող որոշ իրեղեն ապացույցներ. Քորոս Ա-ի արճնե կնիքի վրա դրոշմված են «Θεόδωρον τὸν Ῥουπένιον»¹⁰, իսկ դրամի վրա՝ «Θ·Ո·Ր·ՈՍ·Ի է Ռ·Բ»¹¹ բառերը. Լեոն Ա-ի կնիքի հակառակ երեսին ընթերցվում է «Λέων Ῥουπένης» արձանագրությունը¹²:

² Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 298, 316, 318:

³ Անդ, էջ 306, 338:

⁴ Անդ, էջ 337, 342, 369, 400:

⁵ Անդ, էջ 325:

⁶ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 139, 145, 147, 159, 164, 189:

⁷ Անդ, էջ 159, 160, 161:

⁸ Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 514–515:

⁹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 428:

¹⁰ Шандровская, К истории, с. 37.

¹¹ Bedoukian, Coinage, p. 129.

¹² Dédeyan, Les Arméniens, p. 528.

Ինքնըստինքյան հասկանալի է, որ «Ռուբենի որդի» արտահայտությունը տվյալ անձնավորությունների պարագայում ոչ թե հայրանուն, այլ տոհմանուն՝ այսինքն **Ռուբինեանք** է նշանակում¹³, ինչն անուղղակիորեն հաստատվում է ասորական աղբյուրներով, որոնք նույնպես Կիլիկիայի առաջին հայ իշխաններին՝ Կոստանդինին, Քորոս Ա-ին եւ Լետոն Ա-ին կոչում են Ռուբենի որդիներ: Միհայել Ասորին, օրինակ, XI դ. վերջի իրադարձություններին անդրադառնալիս, գրում է. «Կային նաեւ հայեր, որոնք տարածքներ էին զբաղեցնում Կիլիկիո երկրում, եւ որոնք Ռուբենի որդիներ (bnay Ruphen)» էին կոչվում¹⁴: Նույն ժամանակները նկատի ունենալով, Անանուն եղեսացին տեղեկացնում է. «Անարգաբայում եւ Կիլիկիայում իշխում էին հայերը՝ Ռուբենի որդիները (bnay Ruphen)¹⁵: Իսկ մի ուրիշ անգամ, 1120-ական թվականների իրադարձությունների առթիվ, նա նշում է. «Այդ ժամանակ Ռուբենի սերնդի (bnay Ruphen) հայերը, որոնք իշխում էին Կիլիկիայի գավառներում ու երկրի բերդերում, գլուխ բարձրացրին Դանիշմենդի որդի Ղազիի՝ Կապադովկիայի եւ Մելիտենեի մեծ տիրակալի դեմ»¹⁶: Բոլոր այս դեպքերում միանգամայն ակնհայտ է, որ ասորերեն bnay Ruphen բառակապակցությունը միայնումիայն տոհմանուն է նշանակում, հանդիսանալով հայերեն **Ռուբինեանք** բառի համարժեք: Եւ ամենեւին պատահական չէ, որ Միհայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության մեջ այն վերարտադրված է հենց **Ռուբինեանք** կամ **Ռոբինեանք** ձեւով¹⁷:

Արդ, եթե Քորոս Ա-ը եւ Լետոն Ա-ը կարող էին կոչվել «Ռուբենի որդիներ», ապա բացառված չէ, որ Կոստանդինի պարագայում եւս «Ռուբենի որդի» արտահայտությունը մատնանշում է ոչ թե նրա հայրանունը, այլ տոհմանունը, հետեւաբար ամենեւին պարտադիր չէ, որ նրա հոր անունը Ռուբեն եղած լիներ: Ի դեպ, աղբյուրները որոշ հիմքեր տալիս են նման պնդում կատարելու համար. ուշ շրջանի յոթ ժամանակագրու-

¹³ Հմմտ. *Քարթիկյան, Մատթեոս Ուռհայեցի, էջ 510*:

¹⁴ Michel le Syrien, Chronique, III, p. 184; IV, p. 589.

¹⁵ *Անանուն եղեսացի, Ժամանակագրություն, էջ 60*:

¹⁶ *Անդ, էջ 74: Մի անգամ էլ Լետոն Ա-ին կոչում է «Ռուբենի որդի» (Անդ, էջ 79):*

¹⁷ *Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 417; 1871, էջ 411:*

թյուններ Քորոս Ա-ին համարում են Կոստանդնի անդրանիկ որդին¹⁸: Եթե դա իրողություն է, ապա Կոստանդնի հոր անունը նույնպես Քորոս պետք է եղած լիներ: Մեծ հոր եւ անդրանիկ թոռան անունների նույնությունը ֆարացած ավանդույթ էր հայ միջնադարյան ազնվական գերդաստաններում: Համենայն դեպս Ռուբինյան եւ Հեթումյան ընտանիքների ազգաբանությունն այս առումով համարյա բացառություն չի նանաչում¹⁹. Բոլոր այն դեպքերում, երբ հաստատված է, որ թոռն անդրանիկն է, նա անպայման կրում է պապի անունը, իսկ հակադարձ հաշվով՝ եթե թոռը կոչված չէ մեծ հոր անունով, ուրեմն նա անդրանիկը չէ: Քորոսի՝ Կոստանդին իշխանի անդրանիկ որդին լինելու հանգամանքն անսպասելի կերպով մեծացնում է Ն. Աղոնցի առաջարկած վարկածի հավանականությունը: Եթե վերհիշենք, որ նրա ենթադրությամբ՝ Ռուբեն Ա-ի հայրը կարող էր լինել Հաշտեանք գավառի իշխան Քորոսը, ապա ուրվագծվում է հետեւյալ տոհմածառը. «Քորոս Հաշտենից – Ռուբեն ստրատեգոս – Քորոս – Կոստանդին – Քորոս»²⁰: Դժվար չէ տեսնել, որ նման պարագայում լիովին վերանում է ժամանակագրական անհամատեղելիության խնդիրը, եւ Ռուբենը դառնում է կիլիկյան իշխանների հեռավոր նախնին:

Սակայն նկատի ունենալով, որ Մատթեոս Ուռհայեցին, Սմբատ Սպարապետը եւ Վարդան Արեւելցին, այսինքն՝ կիլիկյան իրադարձությունների ամենաարժանահավատ վկաները, ծանոթ չեն Քորոսի անդրանիկության փաստին, չենք բացառում, որ հետնագույն շրջանի ժամանա-

¹⁸ Վահրամ Բարսեւի, *Ուտանաւոր պատմութիւն*, էջ 195; *Հեթում թագաւոր, Պատմութիւն*, էջ 75; *Սամուէլ Անեցի, Հաւաքմունք*, էջ 121; *Սամուէլ Անեցի, Շարունակող*, էջ 483; *Անանուն, Կարգ թագաւորաց*, էջ 257; Conybeare, *Catalogue*, p. 290. նույնը՝ *Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ*, հտ. 1, էջ 390; *Յակոբ Սեւցի, Պատմութիւն*, էջ 71: Իսկ *Լեւոն Գ (II) թագավորի 1285 թ. հիշատակարանը Քորոսին կոչում է «մեծ որդին Կոստանդեայ» (Մաթեւոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 569):*

¹⁹ Միակ բացառությունը *Լեւոն Գ (II) թագավորն է, որը քաղաքական նկատառումներով կոչված է ոչ թե հորական, այլ մորական պապի անունով. այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության հետագա շարադրանքում:*

²⁰ *Ծագումնաբանական այսպիսի շղթայում, ինքնըստինքյան հասկանալի է, Կոստանդինն իր հոր անդրանիկ որդին չէր կարող լինել:*

կազմություններում այն հայտնվել է ոչ թե որպես հավաստի աղբյուրներից ֆաղված տեղեկություն, այլ որպես դրանց հեղինակներից մեկի, հավանաբար Վահրամ Բաբունու, իրավագիտակցության արտահայտություն, ըստ որի՝ իշխանությունը բնականաբար պետք է փոխանցվեր անդրանիկ որդուն²¹: Առեղծվածի լուծմանը թերևս կարող էր նպաստել Թորոս Ա-ի՝ Անավարզայում հայտնաբերված հետևյալ արձանագրությունը. «Ի կամս ամենասուրբ Երրորդութեան ես Թէորոս... Սեբաստոս, որդի Կոստ... որդոյ Ռուբենի, շինեցի գեկեղեցիս... Յիշեսցի՛ր զԹէորոս, որդի իմ զԿոստանդին...»²², թեև այս դեպքում էլ բացառված չէ, որ «որդոյ Ռուբենի» խոսքերը ոչ թե Կոստանդինի հայրանունը, այլ տոհմանունն են մատնանշում:

Կոստանդինի հետ կապված հաջորդ կնճռոտ խնդիրը վերաբերում է նրա իշխանավարության տարիների տեսողությանը: Ասվեց արդեն, որ հնագույն հայկական աղբյուրները՝ Մատթեոս Ուոհայեցին, Սմբատ Սպարապետը, Վարդան Արեւելցին, ինչպես նաև ասորական ժամանակագրությունները, բացարձակապես անտեղյակ են Կիլիկիայում Ռուբեն Ա-ի ծավալած գործունեության կամ նույնիսկ ներկայության փաստին, եւ որ նրանց մոտ որպես այդ երկրի առաջին հայ տիրակալ հանդես է գալիս Կոստանդինը: Ինչ վերաբերում է ավելի ուշ շրջանի աղբյուրներին, ապա նրանցից մի ֆանիսն ուղղակի արձանագրում են, որ Կիլիկիա մուտք գործած առաջին Ռուբինյան իշխանը եղել է Կոստանդինը: Այսպես, օրինակ, Հեթում Կոռիկոսցին այդ առթիվ գրում է. «Յետ մահուան Ռովբինի, Կոստանդին որդի նորա եմուտ ի նահանկս Կիլիկեցոց»²³, իսկ ըստ Հեթում Բագավորի՝ «Կոստանդին էառ զՎահկայն, եւ նախ սա տիրեաց ի Կիլիկեայ, ի վերայ ազգին Հայոց»²⁴: Այս աղբյուրներին թերևս կարե-

²¹ Այս առումով պատահական չէ, որ աղբյուրներից մեկում անդրանիկ է հորջորջված նաև Թորոս Բ-ը, թեև տվյալ դեպքում հաստատապես հայտնի է, որ նա եղել է լեւոն Ա-ի կրտսեր որդիներից մեկը. տե՛ս Անանուն, Կարգ թագաւորաց, էջ 257:

²² Այիշան, Սիսուան, էջ 239:

²³ Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 100:

²⁴ Անդ, հտ. 1, էջ 74: Տե՛ս նաև՝ Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 583; Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 179, 205; Յովհաննէս Դարգել, Ժամանակագրութիւն, էջ 10: Հմմտ. նաև՝ Քասունի, Ռուբէն Ա, էջ 80:

լի էր ուշադրություն չդարձնել, եթե չունենայինք նաեւ Սմբատ Սպարապետի հետեւյալ թանկարժեք վկայությունը. «Եւ յորժամ սպանաւ Գագիկ, նա եւ զօրքն եւ իշխանքն ցիր եւ ցան եղեն: Եւ մէկ մի յիշխանացն, զոր պարոն Կոստանդին ասէին, որդի պարոն Ռուբենի, սա երեկ ի լեառն Տօռու, եւ ֆաջութեամբ իսլեց զմեծ մասն լերինն, որ է առաջին բերդ Վահկայն»²⁵, կամ. «Իշխան ոմն մեծագգի, յիշխանացն Գագկայ, Կոստանդին անուն, որդի Ռուբինի, որ զկնի մահուանն Գագկայ թագաւորին եկեալ էր ի լեառն Տաւրոս, եւ արիաբար ֆաջութեամբ տիրեալ էր բազում բերդից եւ գաւառաց»²⁶: Ինչպես տեսնում ենք, Սմբատի «Տարեգրքի» երկու խմբագրություններում էլ հստակ նշված է, որ Կոստանդինը Կիլիկիա է եկել ու տիրել այդ երկրին Գագիկ թագավորի սպանությունից հետո: Եւ ֆանի որ Սմբատի մոտ, Մատթէոս Ուռհայեցու հետետողոյթյամբ, Գագիկի սպանությունը թվագրված է 1079 թվականով²⁷, ապա Կոստանդինի իշխանավարության սկիզբը պետք է համարել 1079/80 թվականը: Ինչ վերաբերում է նրա մահվան ժամանակին, ապա Մատթէոս Ուռհայեցին, եւ նրա հետետողոյթյամբ, Վարդան Արեւելցին, այն թվագրում են Հայոց Շե՛՛՛՛՛ թվականով (1099 փետր. 25 – 1100 փետր. 24)²⁸, Սմբատ Սպարապետը եւ Սամուել Անեցու խմբագիրը՝ Շե՛՛՛՛՛-ով (1100 փետր. 25–1101 փետր. 24)²⁹, Հեթում թագավորը եւ Սամուելի շարունակողներից մեկը՝ ՇՄԱ-ով (1101 փետր. 24 – 1102 փետր. 23)³⁰, իսկ Սամուելի նորահայտ շարունակողը՝ ՇՄԲ-ով (1102 փետր. 24 – 1103 փետր. 23)³¹: Հետազոտողների մեծ

²⁵ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 87: Այս հատվածի հետ կապված մի թյուրըմբռնման մասին տե՛ս նախորդ ենթագլխի ծանոթ. 60:*

²⁶ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 102: Նույնը տե՛ս նաեւ՝ էջ 112:*

²⁷ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 86; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 86/7. հմմտ. Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 217/8:*

²⁸ *Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 266, 269; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 111: Հմմտ. Dulaurier, La Chronologie, p. 386.*

²⁹ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 88; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 112; Սամուել Անեցի, Հաւաքումնք, էջ 121, 135:*

³⁰ *Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 1, էջ 75; Սամուել Անեցի, Հաւաքումնք, էջ 136:*

³¹ *Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 483:*

մասը, հիմնվելով հնագույն աղբյուրների տվյալների վրա, նախապատվությունը տալիս է 1100 թվականին:

Մնում է անդրադառնալ միայն Կոստանդնի «լեգիտիմության» հարցին, նկատի ունենալով մասնավորապես այն հանգամանքը, որ նա, ակներեւաբար, հորից ոչ թե երկիր, այլ սոսկ իշխանական տիտղոս էր ժառանգել, իսկ իր իշխանությունը Կիլիկիայում կոել էր սեփական ձեռքերով, այն է՝ նվաճողի իրավունքով: Այս իրողության լավագույն ձեւակերպումը, մեր կարծիքով, տվել է Սմբատ Սպարապետը. «Սա այս Կոստանդին էր յիշխանացն Հայոց Գագկայ արքայի Բագրատունոյ, որդոյ Աշոտոյ, որպէս վերագոյն գրեցաք, եւ զկնի մահուանն Գագկայ արքայի եկեալ ի լեառն Տաւրոս՝ քաջութեամբ եւ արիութեամբ բռնակալեալ ունէր»³² զմեծ մասն լերինն Տաւրոսի, եւ տիրեալ բազում բերդից եւ գաւառաց»³³: Աղբյուրները, սակայն, հակասական տեղեկություններ են հաղորդում այն մասին, թե ումից էր Կոստանդինը խլել այդ երկիրը: Մատթեոս Ուտհայեցու եւ Սմբատ Սպարապետի վկայությամբ՝ հայերը Կիլիկիան գրավել էին «ի գօրացն Պարսից»³⁴ կամ «յագգէն Մսլմանաց»³⁵, իսկ հետնագույն շրջանի ժամանակագրությունների տվյալներով՝ հույներից³⁶: Ինչպես ստորեւ կտեսնենք, իրականում երկու պնդումն էլ ճշմարտության հատիկ են պարունակում, իսկ այդ ճշմարտությունը, որքան էլ զարմանալի է, ամենանշգրիտ կերպով արձանագրված է XIV դ. առաջին կեսի երկու աղբյուրներում՝ Սմբատ Սպարապետի շարունակողի մոտ եւ 1329 թվականի մի հիշատակարանում: Ըստ առաջինի՝ «Աստուծոյ օգնութեամբն ի Մսլմանաց ու շատ մը ի Հոռմէն մեծ մասն աշխարհիս (առին)»³⁷, իսկ ըստ երկրորդի՝ «էառ պարուն Կոս-

³² Ընդգծումը՝ Լ.Տ.Պ.:

³³ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 112:

³⁴ Մատթէոս Ուտհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 269:

³⁵ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 112:

³⁶ Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 192-193; Մաիթար Այրիվանեցի, Պատմութիւն, էջ 59; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 117; Յովհաննէս Գարդեղ, Ժամանակագրութիւն, էջ 10-11:

³⁷ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 136:

տրնդին զաշխարհս Կիլիկոյ ի Հոռմէն ու շաք մի³⁸ Մալմնացն»³⁹:

Ռուբինյանների Կիլիկիա մուտք գործելու պահին, այդ երկրի մի զգալի մասին՝ de jure Բյուզանդական կայսեր անունից, բայց de facto լիովին անկախ, տիրում էր Փիլարտոս անունով հայ զորավարը: Օգտվելով Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) հետո ստեղծված խառնակ վիճակից, նա Հյուսիսային Ասորիֆում ստեղծել էր մի ընդարձակ հայկական պետություն, որի կազմում, բացի Դաշտային Կիլիկիայի ֆաղաֆներից, ընդգրկված էին նաև Մելիտենեն, Մարաշը, Անտիոքը եւ եղեսիան: Բյուզանդիան հանդուրժում էր իրերի այդ դրությունը, քանի որ մի կողմից՝ կարողություն չունեւ միջամտելու հեռավոր այդ երկրամասի գործերին, մյուս կողմից՝ թերեւս սպասելով բարեպատեն ժամանակների, միառժամանակ իրեն բավարարված էր ձեւացնում Փիլարտոսի թեկուզ ձեւական հպատակության ցուցադրությամբ: Բացառված չէ, որ առկա էր նաև ֆաղաֆական հաշվարկը. Փիլարտոսի պետությունն այնուամենայնիվ ինչ-որ չափով թուլացնում էր թուրքերի ճնշումը կայսրության փոքրասիական տիրույթների վրա⁴⁰: Բայց թուրքական առաջխաղացումն այնքան սրընթաց էր, որ 1070-ական թթ. վերջերին նրանք արդեն հայտնվեցին Կիլիկիայի սահմանների մերձակայքում⁴¹: 1078-

³⁸ Չարք մի = մի փոքր շափով կամ մասով. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 250:

³⁹ Tisserant, Codices Armeni, p. 351. *Նույնը հավաստում է նաև ուշ շրջանի մի աղբյուր, ըստ որի՝ Կոստանդինը Կիլիկիայի մի մասը գրավել է «ի Պարսից», մյուս մասն՝ «ի Յունաց» «Յաջորդէ զփառս նորա որդին Կոստանդին, այր քաջ եւ արդարագործ: Որ իբրեւ սիրեցեալ եղեւ բնակչաց աշխարհին Կիլիկեցոց, որոյ ձեռնտուութեամբն ելեալ ի ծովակողմն Տորոսի տիրեաց նահանգին այնորիկ, զոր էառ ի Պարսից: Նախ առեալ զղղեակն Վազայ, եւ ապա անտի յառաջ յոլովից տիրեալ տեղեաց՝ դաշտաց եւ ամրոցաց, զոքունս ի Յունաց հարեալ եւ ի սուր մաշեալ»:* Յակոբ Ասեցի, Պատմութիւն, էջ 62:

⁴⁰ Փիլարտոսի մասին մանրամասն տե՛ս Dédéyan, Les Arméniens, p. 1-360, *ինչպես նաև* Laurent, Études, p. 148-159; Laurent, Byzance, p. 81-89; Adontz, Études, p. 147-152; Կոմմազենացի, Փիլարտոս; Քալուստյան, Մարաշ, էջ 202-205; Քասուկի, Ռուբէն Ա, էջ 70-76; Yarnley, Philaretos, p. 331-353; Segal, Edessa, p. 221-223.

⁴¹ Թուրքերի՝ Կիլիկիա ներթափանցման ընթացքի մասին տե՛ս Laurent, Études, p. 87; Cahen, Turcobyzantina, I, p. 45; Dédéyan, Les Arméniens, p. 338-343.

1080 թթ. ընթացքում փոքրասիական սելջուկները, Իկոնիայի սուլթանության հիմնադիր Սուլեյման իբն-Կութուպիշի գլխավորությամբ, նվաճեցին արեւմտյան Տավրոսը եւ Կիլիկիայի տարածքի մի մասը⁴²: 1084-ին Սուլեյմանը մեկը մյուսի ետեւից գրավեց Տարսունը, Մսիսը, Անավարզան եւ երկրի մյուս ֆաղաֆները⁴³, իսկ ըստ մի այլ աղբյուրի՝ «ողջ Կիլիկիո երկիրը»⁴⁴: Նույն թվականին տիրելով նաեւ Անտիոքին, սելջուկները փաստորեն վերջ դրին Փիլարտոսի ստեղծած ընդարձակ պետությանը⁴⁵: «Եւ Սուլիման տիրեաց Անտիոքայ եւ ամենայն աշխարհին Կիլիկեցոց»,– ամփոփում է Մատթեոս Ուոհայեցին⁴⁶:

Այսպիսով, անհրաժեշտ է արձանագրել հետեւյալը: Քյուզանդիայի ռեալ տիրապետությունը Դաշտային Կիլիկիայում պահպանվել է մինչեւ 1078 թվականը, այսինքն մինչեւ երկրի կայսերական կուսակալ Ապղարիպ Արծրունու մահը⁴⁷: Դրանից հետո այն անցել է Փիլարտոսի, 1084-ից՝ սելջուկների, իսկ 1097-ից՝ խաչակիրների ձեռքը: Ըստ երեւույթին, բավարար մարդկային ու զինական ռեսուրսների բացակայության պատճառով թե՛ Փիլարտոսը, թե՛ թուրքերը երկրամասը վերահսկում էին նրա ֆաղաֆներում տեղակայված փոքրիկ կայագրոների միջոցով: Սրանով է բացատրվում, թե ինչու Սուլեյմանն այդ ֆաղաֆներն այդքան հեշտությամբ գրավեց Փիլարտոսից, իսկ խաչակիրներն, իրենց հերթին, այդքան հեշտությամբ խլեցին թուրքերից⁴⁸: Ինչ վերաբերում է Լեոնային Կի-

⁴² *Sté Laurent, Études*, p. 87.

⁴³ *Sté Michel le Syrien, Chronique*, t. III, p. 179; t. IV, p. 584.

⁴⁴ *Անանուն Եղեւսացի, Ժամանակագրություն*, էջ 31:

⁴⁵ Ըստ Կ. Կաննի՝ Բյուզանդական կայսր Ալեքսիոս I Կոմնենոսն էր, որ Սուլեյմանին թույլ էր տվել կամ գրգել Փիլարտոսից խլել Կիլիկիան, Անտիոքը եւ Մելիտինեն. տե՛ս Cahen, *The Turkish Invasion*, p. 150.

⁴⁶ *Մատթեոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն*, էջ 225:

⁴⁷ Ապղարիպի մահը Սամուել Անեցու նորահայտ Շարունակողը թվագրել է ՇԻՁ (1077/8) թվականով (*Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 483*), իսկ XVII դ. Անանուն Ժամանակագիրը՝ ՇԻԷ (1078/9) թվականով (*Հակոբյան, Մանր Ժամանակագրություններ, հտ. 1, էջ 256*): Հմմտ. նաեւ Dédéyan, *Les Arméniens*, p. 318.

⁴⁸ Հարկ է ավելացնել, որ խաչակիրները նույնպես, մարդկային ռեսուրսների սղու-

լիկիային կամ ծովահայաց Տավրոսին⁴⁹, ապա այն, ակներեաբար, դուրս էր մնացել Փիլարտոսի ու թուրքերի անմիջական վերահսկողության ոլորտից, եւ մեզ հետաքրքրող ժամանակամիջոցում (XI դ. 80–90-ական թթ.) նրան, բյուզանդական կայսրության փշրանքները հանդիսացող որոշ հույն բերդակալների կողմին, տիրում էին նորաբնակ հայ իշխանները՝ Կոստանդինը, Բագունին եւ Օշինը: Հենց այսպիսի հերթականությամբ են Մատթեոս Ուտիայեցին եւ Սմբատ Սպարապետը հիշատակում այս անձանց՝ որպէս 1097 թվականին խաչակիրներին օգնություն ցուցաբերած իշխանների⁵⁰: Ժ. Տետեյանն այս հերթականության մեջ, աշխարհագրական իմաստից ավելի, գահերեցության տարբ. է ենթադրում⁵¹:

Հայտնի է, որ Օշինն իր իշխանությունն ստացել էր բյուզանդացիներից⁵² եւ այդ պատճառով, ու թերեւս նաեւ քաղաքական նպատակահարմարության նկատառումներով, հավատարմորեն ծառայում էր կայսրությանը: Բագունու իշխանության ձեւավորման պարագան մեզ անձանոթ է⁵³: Ինչ վերաբերում է Կոստանդինին, ապա նա, ինչպէս արդէն նշվեց, աղբյուրների միահամուռ վկայությամբ, իր իշխանությունը ձեռք էր բերել զենքի ուժով, հարկադրված լինելով մարտնչել նախ հույների, իսկ այնուհետեւ՝ թուրքերի դեմ: Այդ պատճառով է, ահա, որ աղբյուրների

թյան պատճառով, ստիպված էին Դաշտային Կիլիկիայի քաղաքները վերահսկել փոքրաթիվ կայազորների միջոցով, ինչը մի քանի տարի անց բյուզանդացիներին հնարավորություն տվեց վերագրավել դրանք:

⁴⁹ «Մովակողոմ Տարոսի», ինչպէս գրում է Հեթում արքայորդու Ճաշոցի հիշատակարանի հեղինակը (Մատթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 583):

⁵⁰ Մատթեոս Ուտիայեցի, Ժամանակագրութիւն, էջ 259; Սմբատ, Տարեգիրք, Վեներտիկ, էջ 103:

⁵¹ Dédéyan, Les Arméniens, p. 679.

⁵² Ավելի ճիշտ՝ Կիլիկիայում նրանց ներկայացուցիչ-կուսակալը հանդիսացող Ապլզարիպ Արծրունուց:

⁵³ Հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 46: Որոշ հետազոտողների կարծիքով՝ Բագունին Օշինի եղբայրն էր (Պալասանյան, Պատմութիւն, էջ 329; Chalandon, Les Comnène, p. 95, 106; Rüdiger-Collenberg, The Rupenides, II (H1), ինչը թյուրիմացության արդյունք պետք է դիտել. այդ մասին մանրամասն տես Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 417–418, ծանոթ. 6:

մի մասի տվյալներով՝ նա Կիլիկիան նվաճել է հույներից, իսկ ըստ մյուսների՝ մահմեդականներից: Տվյալ խնդրին հանգամանորեն անդրադարձել է ժ. Տետեյանը, հանգելով այն եզրակացության, որ Ռուբինյան տիրույթների մեծ մասն, այնուամենայնիվ, ձեռք էր բերվել թուրքերի՝ 1084-ից փոքրասիական սելջուկների, իսկ 1087-ից՝ նաև Դանիշմենդյանների դեմ վարած մարտերի արդյունքում⁵⁴:

Սակայն Կոստանդնի «լեգիտիմության» տեսակետից նույնիսկ սա չէր էականը, քանի որ եթե անգամ նրա նվաճումներն ամբողջությամբ կատարված լինեին թուրքերի հաշվին, միեւնույն է, բյուզանդացիների իրավագիտակցության մեջ Կիլիկիան դիտվում էր որպես հայերի կողմից բռնագավթված տարածք⁵⁵, որի կորստյան մտքի հետ, ինչպես ցույց պիտի տային հաջորդ հարյուր տարիների իրադարձությունները, կայսրությունը ոչ մի կերպ չկարողացավ հաշտվել: Ըստ այդմ, Կոստանդինն սկզբից եւեթ հայտնվել էր գավթիչի կամ լավագույն դեպքում կայսրության ապստամբ հպատակի իրավական կարգավիճակում, ինչի հետևանքով նրա սերունդները դեռ մի ողջ դար ստիպված պետք է լինեին համառ պայքարի գնով նվաճել Կիլիկիայում ապրելու եւ սեփական պետություն ձևավորելու իրենց իրավունքը:

Կոստանդնի «լեգիտիմության» հարցին, վավերական լինելու պարագայում, թերևս կարող էր առնչվել նաև հայկական աղբյուրներում պահպանված այն տեղեկությունը, թե իբր խաչակիրները նրան մարքիզի եւ կոմսի տիտղոսներ էին շնորհել⁵⁶: Սակայն մենք դա զանց ենք առնում,

⁵⁴ Dédéyan, *Les Arméniens*, p. 399–401.

⁵⁵ Նույնն էր, ի դեպ, նաև հայերի իրավագիտակցության տեսակետից, ինչի պերճախոս արտահայտությունն է մասնավորապես Մխիթար Այրիվանեցու հետեւյալ դատողությունը. «Աստ տիրեցին Կիլիկիոյ Ռուբինեանքն: Դատ արար Աստուած զրկելոցս, զի Հոռոմն եբարձ զմեր թագաւորութիւնն, իսկ Աստուած զերկիր նոցա ետ Հայոց»: Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն*, էջ 59:

⁵⁶ Տե՛ս Վահրամ Բարունի, *Ոսանաւոր պատմութիւն*, էջ 193; Հեթում արքայորդի, *Ճաշոց*, էջ 583; Dulaurier, *Documents Arméniens*, p. 448; Մինաս Ամդեցի, *Ազգաբանութիւն*, էջ 37; Աւետիք Տիգրանակերտցի, *Գաւազանագիրք*, էջ 564: Այս փաստը վավերական են համարում մասնավորապես Գ. Տեր-Գրիգորյան-Իսկենդերյանը, Ե. Քասունին եւ ժ. Տետեյանը. տե՛ս Ter-Grigorian-Iskenderian, *Die Kreuzfahrer*, S. 33,

Բանի որ այդ տեղեկությունն առաջին անգամ հանդիպում է Վահրամ Բաբունու մոտ⁵⁷ և, ամենայն հավանականությամբ, հնարված է վերջինիս կողմից. «Սա ի Ֆռանկաց ազգէն պատուեալ./ Որ ի ծովու յայսկոյս տիրեալ./ Որոց եղև նիզակակցեալ./ Ընդդէմ Թուրքին պատերազմեալ./ Ում կոմսութեան պատի շնորհեալ./ Գունտ և մարգիզ վերածայնեալ»⁵⁸: Գ. Հովսեփյանը, և նրան հետևելով, Ժ. Տետեյանը թյուրիմացաբար մատնանշում են իբրև թե XI դ. վերջում կամ XII դ. սկզբում գրված մի հիշատակարան, որն առաջին հայացքից, կարծես թե, իսկապես հաստատում է Կոստանդինի շնորհված լատինական տիտղոսների իրողությունը⁵⁹: Սակայն Գ. Հովսեփյանի հրատարակած բնագիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ Հեթում արհայորդու Ճաշոցի 1286 թ. հիշատակարանի մի հատվածը⁶⁰: Հետաքրքրության համար, թերևս, արժե նշել, որ ի տարբերություն «պարոն»-ի (baron), արեւմտաեւրոպական «մարշիզ» (մարգիզ = marchis) տիտղոսը երբեւէ չի գործածվել Կիլիկիայում, իսկ «կոմս» (գունտ/գունդ/գունթ = comte) տիտղոսն առաջին անգամ կրել է Կոռիկոսի իշխան Օշին պայլը⁶¹:

78; Քասունի, Կիլիկիա, էջ 90; Dédéyan, Les Arméniens, p. 410–411.

⁵⁷ Հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 47:

⁵⁸ Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 193: Հետաքրքիր է, որ ավելի վաղ (1271 թ.) գրված իր մի այլ աշխատության մեջ Բաբունին, անդրադառնալով Կոստանդինին, չի հիշատակում նրա կրած այդ տիտղոսները. տե՛ս Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն, էջ 54:

⁵⁹ Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 265–266; Dédéyan, Les Arméniens, p. 410.

⁶⁰ Հմմտ. Մաթևոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 583: Գ. Հովսեփյանն այդ հատվածը քաղել է Ղ. Ալիշանի «Սիսուանից», որտեղ այն հրատարակված է որպես քաղվածք մի «Հին յիշատակագրից» (Ալիշան, Սիսուան, էջ 48):

⁶¹ Տե՛ս Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 208; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 131: Օշինի սպանությունից հետո (1329 թ.) թե՛ քաղաքը, թե՛ կոմսի տիտղոսը լեւոն Ե (IV) թագավորի կարգադրությամբ անցան Բոհեմունդ Լուսինյանին. տե՛ս Յովհաննէս Գարգեւ, Ժամանակագրութիւն, էջ 31:

ԹՈՐՈՍ Ա (1100–1129 թթ.)¹

Համարյա բոլոր աղբյուրների վկայությամբ՝ Կոստանդինն ուներ երկու որդի, որոնցից մեկի անունը Թորոս, իսկ մյուսինը՝ Լեոն էր: Ասվեց արդեն, որ ոչ շրջանի ժամանակագրությունները Թորոսին համարում են Կոստանդինի անդրանիկ որդին, ինչն անհնար է, եթե նրա մեծ հոր անունն իսկապես Ռուբեն էր: Տվյալ պարագայում մնում է միայն ենթադրել, որ Կոստանդինի Ռուբեն անունով առաջնեկը մահացել է մանուկ հասակում եւ այդ պատճառով որեւէ հիշատակ չի թողել: Հակառակ դեպքում պետք է ընդունել, որ Կոստանդինի հոր անունը Թորոս էր: Քայց քանի որ աղբյուրները երկու եղբայրներին սովորաբար հիշատակում են Թորոս-Լեոն հաջորդականությամբ, եւ քանի որ նրանց մեծ մասի տվյալներով՝ իշխանությունը սահուն կերպով փոխանցվել է Թորոսին, ուստի սրանից կարելի է եզրակացնել, որ վերջինս եթե ոչ անգամ Կոստանդինի անդրանիկ, ապա գոնե Լեոնից ավագ որդին պետք է եղած լիներ:

Միակ հայկական աղբյուրը, որը հստակորեն չի նշում, թե Ռուբինյան իշխանությունը Կոստանդինի մահից հետո անցել է Թորոսին, Մատթեոս Ռոհայեցին է: Նա պարզապես գրում է. «Յայսմ ամի մեռաւ մեծ իշխանն Հայոց Կոստանդին՝ որդին Ռուբենայ, եւ մնաց իւր երկու որդի՝

¹ Հետազոտողներից ոմանք Թորոսի իշխանության տարիները թվագրում են այլ կերպ. 1102–1123 (Rüdt-Collenberg, *The Rupenides*, I (Rup.); Mutaflan, *La Cilicie*, II, tabl. 13); 1100–1123 (Բակուրյան, *Մի տեսութիւն*, էջ 13; Ter-Grigorian-Iskenderian, *Die Kreuzfahrer*, S. 78; Մելիք-Օհանջանյան, «Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն», էջ 402; Bedoukian, *Coinage*, p. 5); 1099–1129 (Օրմանյան, *Ազգապատում*, հտ. 3, *Յաւելուածք*, էջ 2; Morgan, *Histoire*, p. 363):

Թորոս եւ Լեւոն»²: Ավելին, Մատթեոսի ժամանակագրության հետագա շարադրանքից այն տպավորությունն է ստեղծվում, որ երկու եղբայրները հավասարապես բաժանել են իրենց հոր ժառանգությունը եւ իշխել են միմյանցից բոլորովին անկախ: Երկուսն էլ օժտված են «իշխան Հայոց»³ կամ «մեծ իշխան Հայոց»⁴ տիտղոսներով, երկուսն էլ ունեն իրենց սեփական տիրույթները, որոնք համապատասխանաբար կոչվում են «երկիր Թորոսի»⁵ եւ «երկիր Լեւոնի»⁶, եւ վերջապես, երկուսն էլ առանձին-առանձին մարտնչում են իրենց օտարազգի հարեւանների դեմ⁷: Հատկանշական է նաեւ, որ Մատթեոսն անգամ չի հիշատակում Թորոսի մահը եւ իշխանության անցումը Լեւոնին. կարծես ոչինչ չպատահած, վերջինս շարունակում է վարել երկրի գործերը: Ուռհայեցու ներկայացրած այս իրականությունը տարօրինակ կարող էր թվալ, եթե ինչ-որ չափով չհաստատվեր նաեւ այլ աղբյուրների տվյալներով:

Թեեւ մնացյալ համարյա բոլոր հայկական ժամանակագրություններն, ի տարբերություն Մատթեոս Ուռհայեցու, հստակորեն նշում են, որ Կոստանդինոս հաջորդել է Թորոսը, իսկ վերջինիս՝ Լեւոնը, սակայն նրանցից մի քանիսը, կարծես թե, հատուկ կերպով շեշտում են, որ Կոստանդինը թողել էր երկու որդի՝ «զԹորոս եւ զԼեւոն»⁸, սրանով թերեւս ինչ-որ կարեւորություն տալով վերջինիս: Այս առումով ավելի որոշակի է Սամուել Անեցու խմբագրի հետեւյալ տեղեկությունը. «Եւ զիշխանութիւն նորա (Կոստանդեայ) էառ անդրանիկ որդի նորա Թորոս, ամս ԻԹ կացեալ. եւ Լեւոն եղբայր նորա կայր առ նմա»⁹: Մտտավորապես նույնը

² Մատթեոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, էջ 269:

³ Անդ, էջ 318, 338, 342, 343:

⁴ Անդ, էջ 298, 316, 318, 334, 337:

⁵ Անդ, էջ 306:

⁶ Անդ, էջ 325:

⁷ Անդ, էջ 318-319, 342:

⁸ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 112; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 111; Վահրամ Բաբունի, Ոստանաւոր պատմութիւն, էջ 194; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 100; Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 71:

⁹ Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 121:

կարելի է ասել Վահրամ Բաբունու վկայության մասին. «Էսո զիշխանութին նորա (Կոստանդնի) երէց որդի նորա Քորոս, ունելով ընդ ինճեան զեղբայր իւր կրտսեր զԼեւոն»¹⁰: Սակայն հայկական աղբյուրներից առավել, բյուզանդական եւ ասորական ժամանակագրություններն են, որ նշանակալիորեն ամրապնդում են Մատթեոս Ուոհայեցու տեսակետը: Ըստ Աննա Կոմնենայի՝ Ալեքսիոս I կայսեր եւ Անտիոքի պրինց Բոհեմունդ I-ի միջեւ 1108 թ. Դեաբոլում կնքված պայմանագիրը, որոշակիացնելով վերջինիս պատկանելիք տարածքները, հատուկ ընդգծում է, որ դրանց մեջ ակնհայտաբար չեն մտնում «կայսրության մարդիկ» հանդիսացող Լեւոն եւ Քորոս Ռուբինյան հայերի տիրույթները (ἀνευ δηλονότι τῆς τῶν Ῥουπενίων διακρατήσεως Λέοντος τε καὶ Θεοδώρου τῶν Ἀρμενίων γεγονότων ἀνθρώπων τοῦ κράτους ὑμῶν)¹¹: Իսկ Միխայել Ասորին, խոսելով XII դ. սկզբում Կիլիկիայում եւ Հյուսիսային Ասորիքում տիրող հայ իշխանների մասին, գրում է. «Կիլիկիո լեռներում էին երկու եղբայրներ՝ Ռուբենի որդի Կոստանդնի որդիները»¹², ի դեպ, այս տեղեկությունը պարունակող ենթազլխի վերնագրում նշելով նաեւ նրանց անունները՝ «Քեղորոս եւ Լեւոն»¹³: Վաղուց շրջանառության մեջ գտնվող այս վկայություններին ժ. Տետեյանն ավելացնում է եւս երկուսը, որոնցից մեկի հեղինակը XII դ. արաբ մատենագիր Ուսամա իբն-Մունկիդն է, մյուսինը՝ նույն ժամանակի խաչակրաց պատմիչ Ալբերտ Ախենցին: Ուսաման մասնավորապես տեղեկացնում է, որ իր հայրը՝ Շայզարի էմիրը, բարեկամական հարաբերություններ էր հաստատել Քորոս եւ Լեւոն Ռուբինյանների հետ¹⁴: Իսկ Ալբերտ Ախենցին, ճանապարհորդների

¹⁰ Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութին Տեառն 1875, էջ 54:

¹¹ Anne Comnène, Alexiade, p. 134.

¹² Michel le Syrien, Chronique, III, p. 198; IV, p. 595.

¹³ Անդ., III, p. 198; IV, p. 594.

¹⁴ Dédéyan, Les Arméniens, p. 434. Ուսաման մասնավորապես գրում է. «Իմ հոր եւ Ռուբենի որդիներ (= Ռուբինյաններ՝ Լ.Տ.Պ.) Քորոս եւ Լեւոն հայերի՝ Մսիսի, Տարսոնի, Ազանայի ու կիրճերի տերերի միջեւ, մեծ բարեկամություն եւ նամակագրություն էր հաստատվել: Դրա գլխավոր պատճառը նրա հրապուրվածությունն էր բազեներով: Ամեն տարի հայերը նրան ճոտ մեկ տասնյակ բազեներ էին ուղարկում, որոնք բերում էին հետիոտն հայ բազեպանները: Բացի այդ,

գրույցների հիման վրա, հիշատակում է «Ատտենալուսին (= Քորոս) եւ նրա եղբայր Լեւոնին»¹⁵:

Ինչպես տեսնում ենք, նշված աղբյուրներից ոչ մեկը որեւէ կերպ չի առանձնացնում Քորոսին՝ որպես Կիլիկիայի մենիշխան տիրակալի¹⁶: Ավելին, Աննա Կոմնենան Լեւոնի անունը հիշատակում է նույնիսկ Քորոսից առաջ¹⁷: Մասն ծանրակշիռ փաստեր են, որոնք, անշուշտ, չէին կարող վրիպած լինել հետազոտողների ուշադրությունից: Քորոսի եւ Լեւոնի «երկիշխանության» հարցին թուուցիկ կերպով անդրադարձել են Ղ. Ալիշանը, Ֆ. Շալանդոնը, Գ. Տեր-Գրիգորյան-Իսկենդերյանը, Գ. Միխայելյանը եւ Ա. Բոզոյանը¹⁸, ավելի հանգամանորեն՝ Ե. Քասունին¹⁹, իսկ ամենայն մանրամասնությամբ՝ Ժ. Տետեյանը²⁰: Ֆ. Շալանդոնը բավա-

նրանք ուղարկում էին նաեւ բյուզանդական շներ: Իսկ հայրս նրանց էր ուղարկում ձիեր, օժանելիք եւ եգիպտական կերպասներ: Հայերի շնորհիվ մեր ձեռքն էին ընկնում գեղեցիկ, հազվագյուտ բազեններ»։ Усама, Книга назидания, с. 297–298. Նկատի ունենալով մեջբերված քաղվածքում առկա ակնհայտ անաբրոնիզմը (Քորոսին Մսիսի, Տարսոնի եւ Ադանայի տեր կոչելու անստույգ պարագան), Ուսամայի վկայությունը միանշանակորեն Ռուբինյան եղբայրների երկիշխանության ապացույց չի կարելի համարել, քանի որ նրա հայրը՝ Շալգարի էմիր Իզգեդզին Աբուլ Ասակիր Սուլտանը (1098–1154 թթ.), կարող էր նրանց հետ համագործակցել ոչ թե միաժամանակ, այլ հաջորդաբար:

¹⁵ Dédéyan, Les Arméniens, p. 434.

¹⁶ Միքայելի հետագա շարադրանքից, սակայն, պարզվում է, որ նա տեղյակ էր, որ Քորոսի մահից հետո Լեւոնը հաջորդել է նրան. «Այդ տարի (1441 = 1130 թ.) մեռավ Քորոս հայր՝ Կիլիկիո իշխանը: Նրա եղբայր Լեւոնը հաջորդեց նրան»։ Michel le Syrien, Chronique, III, p. 227; IV, p. 610.

¹⁷ Ի դեպ, Լեւոնի անունը Քորոսից առաջ է հիշատակված նաեւ Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության խմբագրություններից մեկում (Միխայել Ասորի, Ժամանակագրություն 1871, էջ 411) եւ մի անանուն գրվածքում (Անանուն, Պատմություն սրբոց, էջ 514–515):

¹⁸ Ալիշան, Միսուան, էջ 50; Chalandon, Les Comnène, II, p. 106; Ter-Grigorian-Iskenderian, Die Kreuzfahrer, S. 79; Микаелян, История, с. 95; Բոզոյան, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 78–80: Հմմտ. նաեւ՝ Mutafian, La genèse, p. 140.

¹⁹ Քասունի, Կիլիկիա, էջ 98–100:

²⁰ Dédéyan, Les Arméniens, p. 431–439.

րարվում է միայն արձանագրելով, որ Լեոնին «որոշ տարածքներ են հատկացված եղել»²¹, սակայն չնշտելով՝ թե ում կողմից: Ըստ Ղ. Ալիշանի՝ Լեոնը դեռևս իր եղբոր կենդանության օրոք տիրել է երկրի արեւելյան կողմերին՝ «ընդ մէջ կալուածոց տերանց Մարաշոյ եւ Անտիոքայ»²²: Գ. Միֆայելյանի կարծիքով Լեոնը հավանաբար եղել է Քորոսի իշխանակիցը (соправитель)²³: Իսկ Ե. Քասունու վերլուծության արդյունքներն ամփոփված են հետեւյալ ձեակերպման մէջ. «Քորոս օրինականօրէն, որպէս անդրանիկ գաւակը Կոստանդինի, կը տիրանար իշխանապետութեան աթոռին. Լեոն, իր հերթին, ժամանակի աւատապետական կարգերուն հաւատարիմ, ունէր իր հողերը, ուր, ընդունելով մէկտեղ իր եղբօրը՝ Քորոսի իրաւական հեղինակութիւնը, միշտ չէ որ հլու գործակատարն էր անոր, եւ ստեպ կը փորձէր ինքնակամ կերպով վարել իր գործերը»²⁴:

Քանի որ, ինչպէս արդեն նշվեց, հարցի ամենամանրակրկիտ քննությունը կատարել է Ժ. Տետեյանը, հարկ ենք համարում հանգամանորեն անդրադառնալ նրա հիմնական թեզերին: Եւ այսպէս, ըստ Ժ. Տետեյանի՝

ա. Քորոսի եւ Լեոնի միջեւ իսկապէս տեղի է ունեցել որոշակի «տարածքային բաժանում»²⁵, եւ վերջինս իրոք տիրել է Լեոնային Կիլիկիայի արեւելյան կողմերին, ամենայն հավանականությամբ, Մարաշի եւ Ամանոսյան դռների միջեւ ընկած շրջանին²⁶:

բ. Դժվար է ասել՝ արդյո՞ք այդ տարածքները Լեոնի ժառանգական կալվածքն էին (alleu), թե՞ նրան շնորհված ավատ (fief)²⁷: Զժխտելով առաջին տարբերակի հնարավորությունը²⁸, Տետեյանն այնուամենայնիվ ենթադրում է, որ՝

գ. Այդ տարածքները Լեոնին զիջել է Քորոսը՝ եղբոր պատվասիրու-

²¹ Chalandon, Les Comnène, II, p. 106.

²² Ալիշան, Միսոսան, էջ 50:

²³ Микаелян, История, с. 95.

²⁴ Քասունի, Կիլիկիա, էջ 99-100:

²⁵ Dédéyan, Les Arméniens, p. 435.

²⁶ Անդ, էջ 436, 437:

²⁷ Անդ, էջ 435:

²⁸ Անդ:

թյունը բավարարելու եւ երկրի արեւելյան սահմանների պաշտպանության ռազմավարական խնդիրը լուծելու նպատակով²⁹ :

դ. Լեւոնը, օժտված լինելով որոշակի ֆաղափական իմնավարությամբ³⁰ , ըստ էության, հաջողությամբ իրագործել է այդ առաքելությունը:

ե. Եղբայրների նմանատիպ «համատիրությունը» սովորական երեսույթ էր այդ ժամանակներում եւ տարածված էր ինչպես սելջուկների մոտ, այնպես էլ Հյուսիսային Ասորիի հայկական իշխանություններում՝ Գող Վասիլ/Բագրատ, Ապրլարիպ/Կիկոս, Կոստանդին Կարկառացի/Դավթուկ³¹: Ավելին, այն նույնիսկ տեղ է գտել Բագրատունյաց Հայաստանում Հովհաննես-Սմբատի եւ նրա եղբայր Աշոտ Դ-ի գահակալության տեսքով³² :

Մենք գիտակցաբար այսֆան մանրամասնորեն ներկայացրինք ժ. Տետեյանի տեսակետը, ֆանի որ, մեր կարծիքով, նա միակ հետազոտողն է, որն, ըստ էության, գտել է խնդրի լուծման բանալին, բայց չգիտես ինչու, կանգ է առել կես ճանապարհին, այդպես էլ չանելով վերջին ֆայլը: Մեր համոզմամբ, ֆանի որ մեզ հասած աղբյուրներում չկա որեւէ փաստ, որ Թորոսն իր երկրի մի մասը շնորհել է Լեւոնին, չկա նաեւ փաստ, որ Լեւոնն իր զբաղեցրած տարածքներին տիրել է գեմի ուժով, կամ թեկուզ որեւէ գժտություն է ծագել Թորոսի ու Լեւոնի միջեւ, նշանակում է, Լեւոնային Կիլիկիայի բաժանումը տեղի է ունեցել ոչ թե եղբայրների բարի կամքի, այլ շատ ավելի ամուր իրավական հիմքի վրա: Ամենայն հավանականությամբ, այդ բաժանումը կատարել է ոչ այլ ոք, ֆան Կոստանդինը՝ նորաբողբոջ հայկական իշխանությունը հավասարության սկզբունքով կտակելով իր երկու որդիներին, եւ այստեղ է ահա, որ հիրավի դրսեւորվել է սելջուկյան սովորույթի ազդեցությունը: Հոր սահմանած կարգն էր, ըստ այդմ, այն կայուն իրավական երաշխիք, որն ապահովել էր երկու եղբայրների շուրջ երեսնամյա համատեղ կառավարումը:

²⁹ Անդ, էջ 437: Հմմտ. Ter-Grigorian-Iskenderian, Die Kreuzfahrer, S. 79.

³⁰ Dédéyan, Les Arméniens, p. 438-439.

³¹ Անդ, էջ 438:

³² Անդ: Իրականում Հովհաննես-Սմբատի եւ Աշոտ Դ-ի «համատիրության» երեւույթը շատ ավելի նուրբ եւ բազմաշերտ էր, քան այն, ինչ նկատի ունի ժ. Տետեյանը. այդ մասին մանրամասն տե՛ս Մաթեոսյան, Բագրատունյաց Հայաստան, էջ 169-177:

Կոստանդնի կատարած բաժանումը չի բացառում, անշուշտ, որ, ինչպես Ե. Քասունին է պնդում³³, Թորոսն ավագության կարգով ժառանգել էր նաև իշխանապետության աթոռը եւ դրա շնորհիվ իրավական գերակայություն ուներ իր եղբոր նկատմամբ: Այս եզրակացության օգտին է խոսում եւե՛ք հանգամանք՝ ա. Թորոսին բաժին է հասել իշխանության բուն տարածքը, որտեղ գտնվում էր նրա մայրաքաղաք Վահկան, – բ. Թորոսը դրամ է հատել³⁴, մինչ Լեոնի մասին նման բան հայտնի չէ³⁵, – գ. Թորոսը մեկ անգամ վնասակար կերպով միջամտել է «Լեոնի երկրի» ներքին գործերին: Խոսքը վերաբերում է 1116 թվականին պատահած այն հայտնի դեպքին, երբ Թորոսը ձեռքակալում է Եդեսիայի կոմս Բալդուին II-ին է հանձնում Քեսունի եւ Ռապանի իշխան Տղա Վասիլին, որը Լեոնի փեսան էր³⁶: Այն փաստը, որ աղբյուրները չեն նշում Լեոնի կողմից այդ դեպքի կապակցությամբ արտահայտված որե՛է դժգոհություն, կարող է ունենալ մեկ բացատրություն, այն է՝ նա հարկադրված է եղել ենթարկվել իր գերակայի կամքին³⁷: Այլ հարց է, թե ինչ նպատակ էր Թորոսը հետապնդել այդ տմարդի արարքը կատարելիս: Ղ. Ալիշանն այս առթիվ գրում է «արժան էր գիտել զպատճառս՝ առ ի դատել արդարապէս»³⁸: Ե. Քասունին Թորոսի ֆայլը գնահատում է որպես «դաւանանորթին իր արեւակիցին ու ազգականին դէմ»³⁹: Իսկ Ժ. Տետեյանի կարծիքով՝ պատճառն այն էր, որ Լեոնի դստեր եւ Տղա Վասիլի ամուսնությամբ կնքված դաշինքով վտանգվում էին Թորոսի եւ Բալդուին II-ի լավ հարաբերությունները⁴⁰,

³³ Քասունի, *Կիլիկիա*, էջ 98–99:

³⁴ Bedoukian, *Coinage*, p. 67a, 129.

³⁵ Անդ, էջ 67a:

³⁶ Մատթէոս Ուոհայեցի, *Ժամանակագրութիւն*, էջ 337:

³⁷ Պատմագրական հիմքից բուլղոսովին գուրկ է Մ. Չամչյանի տեսակետն այն մասին, թե իբր այդ ժամանակ լուրջ բախում էր տեղի ունեցել Ռուբինյան եղբայրների միջեւ եւ Վասիլ Տղան զոր էր գնացել Թորոսի ու Բալդուին II-ի կազմակերպած դավադրությանը. Չամչյան, *Պատմութիւն*, հտ. 3, էջ 38–39. նույնը, նրա *հետեւողությամբ, տես նաեւ՝ Ter-Grigorian-Iskenderian, Die Kreuzfahrer*, S. 95.

³⁸ Ալիշան, *Սիսուան*, էջ 49:

³⁹ Քասունի, *Կիլիկիա*, էջ 146:

⁴⁰ Dédéyan, *Les Arméniens*, p. 438.

ինչը չէր մտնում Հայոց իշխանի հաշիվների մեջ: Մեր կարծիքով, սակայն, կար մի ավելի լուրջ պատճառ. Լեւոնի եւ Տղա Վասիլի դաշինքը խորհում հնարավորություն էր պարունակում ինչ-որ պահի միավորելու նրանց իշխանությունները: Իսկ դա, ակնհայտորեն, անչափ կհզորացներ Լեւոնին եւ, ի վնաս Թորոսի, կխախտեր Կոստանդնի կողմից իր որդիների միջեւ հաստատված հավասարակշռությունը՝ մի բան, որ Թորոսն, անշուշտ, չէր կարող հանդուրժել:

Իսկ հիմա ժամանակն է անդադադանալու Ռուբինյան եղբայրների եւ Բյուզանդիայի փոխհարաբերությունների իրավական կողմին, այլ կերպ ասած՝ կայսրության տեսակետից Թորոսի եւ Լեւոնի վայելած «լեգիտիմության» խնդրին: Նյութին առնչված համարյա բոլոր հետազոտողներն այդ խնդրի բանալին տեսնում են Աննա Կոմնենայի արդեն վկայակոչված ֆաղվածքում: Հիշեցնենք, որ ըստ բյուզանդական պատմիչի՝ Անտիոքի պրինց Բոհեմունդ I-ը 1108 թ. Դեաբոլի պայմանագրով պարտավորվել էր հավակնություն չդրսետրել «Լեւոն եւ Թորոս Ռուբինյան հայերի» զբաղեցրած տարածքի նկատմամբ, քանի որ նրանք «կայսրության մարդիկ էին» (ἀνθρώπων τοῦ κράτους ὑμῶν)⁴¹: Ըստ Ղ. Ալիշանի սրանից պետք է գուշակել՝ «հաշտ եւ հաւան լինել կայսերն ընդ թոռունս Ռուբինի, որպէս ընդ Հեթմեանսն եւ ընդ Ասկուռեանս»⁴²: Ա. Կաթղանի, Ե. Քասունու եւ Ժ. Տետեյանի կարծիքով՝ Աննա Կոմնենայի տեղեկությունը վկայում է, որ այդ ժամանակ Լեւոնը եւ Թորոսը եղել են Բյուզանդիայի վասալները⁴³: Գ. Միֆայեյանը, նույն կերպ հասկանալով Աննա Կոմնենայի վկայությունը, այնուամենայնիվ, պատմական հանգամանքները նկատի ունենալով, պնդում է, որ այն «չի համապատաս-

⁴¹ Anne Comnène, Alexiade, p. 134. Քանի որ պայմանագիրը շարադրված է Ալեքսիոս I-ի առջեւ Բոհեմունդի ստանձնած պարտավորությունների տեսքով, այդ պատճառով այստեղ գործածված է կայսերն ուղղված 2-րդ դեմքի դերանվանաձեւը (ὑμῶν):

⁴² Ալիշան, Սիսուան, էջ 49:

⁴³ Каждый, Заметки, с. 94; Քասունի, Կիլիկիա, էջ 99; Déchéyan, Les Arméniens, p. 478-479. Քասունին նաեւ ավելացնում է, որ դրանով Բյուզանդիան, փաստորեն «կը ճանչնար անոնց երկուքին իրաւասութիւնները այդ հողերուն վրա». Քասունի, Կիլիկիա, էջ 99:

խանում իրականությամբ»⁴⁴: Որպես Թորոսի եւ Լեւոնի վասալության իրողությունը հաստատող փաստարկ, ժ. Տետեյանը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքի վրա, որ Ռուբինյան եղբայրներին հատկացված *ἀνθρωποι* (մարդիկ) որակումը նույն պայմանագրում հանդիպում է նաեւ հին ֆրանսերենից փոխառված *λίξιος* (= *lige*, ճորտ, վասալ) բառի զուգակցությամբ⁴⁵: Սակայն քանի որ Լեւոնի եւ Թորոսի դեպքում *λίξιος* բառը բացակայում է, մենք ավելի հակված ենք նրանց վերաբերող *ἀνθρώπων τοῦ κράτους* բառերը հասկանալ «կայսրության հպատակներ» իմաստով, այնպես, ինչպես հասկացել են մասնավորաբար Ֆ. Շալանդոնը (*sujets de l'empire*) եւ Վ. Շանդրովսկայան (*подданные императорской власти*)⁴⁶: Շալանդոնը, մեր կարծիքով, ճիշտ է նաեւ Աննա Կոմնենայի այդ հատվածի մեկնաբանության հարցում. ըստ նրա Դեաբոլի պայմանագրով ընդամենն արձանագրվում էր, որ Լեւոնի եւ Թորոսի զբաղեցրած հողերը կայսրության տարածքի մաս են կազմում⁴⁷: Իսկ դա նշանակում է, թե միեւնույն է, Ռուբինյան իշխաններն իրենց անկախ կհամարեին, թե վասալ կհանաչեին, բյուզանդական իրավագիտության տեսակետից՝ Կիլիկիան պատկանում էր կայսրությանը⁴⁸, ինչը մենք արդեն առիթն ունեցանք հաստատելու նախորդ ենթադրյալով:

Ստորեւ մենք կփորձենք ապացուցել, որ, որքան էլ տարօրինակ թվա, վասալության հետ կապ չունի նաեւ այն հանգամանքը, որ Թորոսն, ինչ-որ պահից սկսած, կրել է բյուզանդական *սեբաստոս* (*σεβαστός*) տիտղոսը⁴⁹, ինչը վկայված է երկու հնագույն վավերագրերով: Առաջինը Սանկտ-Պետերբուրգի պետական էրմիտաժում պահվող Թորոսի հայտ-

⁴⁴ Микаелян, История, с. 95–96. Ավելի նուրբ է Ա. Բոզոյանի տեսակետը, որին մենք կանդրադառնանք ստորեւ:

⁴⁵ Dédeyan, Les Arméniens, p. 478. Այդ բառը, լիճ ձեւով, գործածական է նաեւ միջին հայերենում. տես Դազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 306: Իսկ նրա հունարեն համարժեքը *δοῦλος* (ստրուկ, ծառա) բառն է:

⁴⁶ Chalandon, Les Comnène, II, p. 107; Шандровская, К истории, с. 39.

⁴⁷ Chalandon, Les Comnène, II, p. 107.

⁴⁸ Հմմտ. Բոզոյան, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 192:

⁴⁹ Համենայն դեպս դա պետք է տեղի ունեցած լինի 1108 թվականից հետո, քանի որ Աննա Կոմնենան այդ տիտղոսի մասին տեղեկություն չունի:

նի արճճե կնիքն է, որի հունարեն մակագրությունն ընթերցվում է. «Երկու հաղթող նահատակներ, պահպանեցե՛ք ինձ՝ սերաստոս Թեոդորոս Ռուբինյանին» (Δυάς με φρούρει καλλινίκων μαρτύρων σεβαστόν Θεόδωρον τὸν Ῥουπένιον)⁵⁰: Իսկ մյուսը՝ Անավարզայի եկեղեցիներից մեկում հայտնաբերված հետևյալ արձանագրությունն է. «Ի կամս ամենասուրբ Երրորդութեան ես Թեոթոս... սերաստոս, որդի Կոստ... որդւոյ Ռուբենի, շինեցի զեկեղեցիս ... Յիշեսցի՛ք զԹեոդոս, որդի իմ զԿոստանդին...»⁵¹: Ուշ շրջանի երկու աղբյուրներ էլ, այն է՝ Վահրամ Բարունու, «Բան ի Յայտնութիւն Տեառն» ճառը եւ Հեթում արխայորդու 1286 թ. ճաշոցի հիշատակարանը, Թորոսին օժտում են մի այլ պոռտաւետաւաւաւիսս (πρωτοσεβαστός) տիտղոսով⁵²: Այս երկրորդ տիտղոսի շնորհումը Ժ. Տետեյանը դիտում է որպէս բյուզանդական նվիրապետական աստիճանակարգում Թորոսի առաջխաղացման արտահայտություն⁵³: Եթէ անգամ ինչ-որ չափով կասկածելի համարենք ժամանակային առումով իրադարձություններից զգալի հեռավորության վրա գտնվող վերջին աղբյուրների արժանահավատությունը, ապա Թորոսի կնիքի եւ Անավարզայի արձանագրության պէս զորեղ իրեղեն ապացույցների պարագայում կասկածն անտեղի է: Ինչպէս կասեք ակադեմիկոս Հովսեփ Օրբելին՝ «Իրերը չեն ստում»⁵⁴:

Ինչ վերաբերում է այդ տիտղոսակրության բովանդակային իմաստին, ապա հետազոտողները հակված են դա վասալության ճանաչման իրողություն համարելու⁵⁵: Շատ ավելի նրբահայաց է Ա. Բոզոյանի տեսակետը, որը մենք հարկ ենք համարում մեջբերել ամբողջությամբ. «Մինչեւ ԺԲ դարի 30-ական թթ. Ռուբինյան հարստության ներկայացու-

⁵⁰ Шандровская, К истории, с. 37.

⁵¹ Ալիշան, Միսուան, էջ 239:

⁵² Վահրամ Բարունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1869, էջ 100; 1875, էջ 56; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 583: Տե՛ս նաեւ՝ Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 71, 142:

⁵³ Dédéyan, Les Arméniens, p. 477.

⁵⁴ Шандровская. К истории, с. 36.

⁵⁵ Տե՛ս Каядан, Заметки, с. 94; Քասունի, Կրիկիրա, էջ 100; Dédéyan, Les Arméniens, p. 477.

ցիչները Բյուզանդիայի կողմից դիտվում էին որպես Կիլիկիայի իշխողներ եւ կայսրության ստորականներ, թեեւ կայսրության գերակայությունը հունական սկզբնաղբյուրներում արտացոլված է միայն Դեաբոյան հաշտության պայմանագրի մեջ, իսկ հայկական սկզբնաղբյուրներում Թորոս Ա-ը եւ Լեւոն Ա-ը երբեմն կրում են բյուզանդական սեւաստոս պատվանունը: Հիշատակված տիտղոսով պատվվում էին նաեւ Լամբրոնի տերերը մինչեւ ԺԲ դարի 80-ական թթ.: Պրոտոսեւաստոս եւ սեւաստոս տիտղոսները պատահում են հայկական սկզբնաղբյուրներում, երբ խոսքը վերաբերում է Թորոս Ա-ին: Այնուամենայնիվ, չի կարելի պնդել, որ նշված տիտղոսը կրող Ռուբինյան պայազատը այդ պահին ճանաչում է կայսրության գերակայությունը եւ ենթարկվում Բյուզանդիայի ներքին վարչատնտեսական համակարգին: Մինչեւ ԺԲ դարի 30-ական թթ. Կիլիկիան փաստորեն չէր մտնում կայսրության տարածքի մեջ: Ենդիրն այլ է Բյուզանդական կայսրության արտաքին ֆաղափականության տեսանկյունից: Բյուզանդիայի համար իրավաբանական ապացույց էր, որ հնում Կիլիկիան մտել է նրա սահմանների մեջ. այդ իսկ պատճառով, չնայած Կիլիկիայի եւ այդ ժամանակվա բյուզանդական տարածքների կտրվածությանը, Ռուբինյան իշխողները դիտվում էին իբրեւ կայսեր ստորականներ եւ կայսրությունը չէր համաձայնում ընդունել այդ երկրամասի անկախությունը»⁵⁶:

Այնուամենայնիվ, խնդիրն, ակնհայտորեն, հստակեցման կարիք ունի: Մեր կարծիքով՝ վասալությունը եւ կայսերական տիտղոսակրությունը միմյանցից միանգամայն տարբեր իրավա-ֆաղափական ինստիտուտներ են, որոնց էության բացատրությունը պետք է փնտրել հողատիրական հարաբերությունների ոլորտում: Վասալը թեեւ հավատարմության երդմամբ եւ որոշակի պարտավորություններով կախված էր իր գերակայից, բայց սեփական հողին տիրում էր անօտարելի ժառանգական իրավունքով: Մինչդեռ բյուզանդական տիտղոսն ընդամենը պետական պաշտոն էր, որը տիտղոսակրին տեսականորեն լիազորում էր ժամանակավորապես կառավարելու կայսրությանը պատկանող տարածքը: Մենք պատահաբար չէ, որ օգտագործում ենք «տեսականորեն»

⁵⁶ Բողոյան, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 192:

բառը, քանի որ գործնականում այդ լիազորությունը կարող էր ձեռական բնույթ կրել, տիտղոսակրին թույլ տալով անկախորեն տնօրինելու երկրի գործերը, ինչը տեղի է ունեցել, օրինակ, Հյուսիսային Ասորիի հայկական իշխանություններում⁵⁷, կամ, հավանաբար, դրսեւորվել է նաև Ռուբինյանների պարագայում: Փամանակակից ֆաղափական լեզվով արտահայտված՝ դա կողմերի դեմքը փրկելու մի հրաշալի միջոց էր, որի շնորհիվ կայսրը բավարարում էր իր ինֆնասիրությունը, իսկ տիտղոսակիրը՝ «լեզվիտիմացնում» իր փաստացի իշխանությունը⁵⁸:

Այսպիսով, Քորոս Ա-ը, առայժմ չճշտված մի թվականի, հարկադրաբար կամ կամավոր կերպով հրաժարվել է ապստամբ հպատակի կարգավիճակից եւ, առերես հնազանդվելով Քյուզանդիային, դրա դիմաց արժանացել է սեբաստոսի տիտղոսի, ինչը նրան՝ որպես պետական պաշտոնյայի, իրավունք է տվել կառավարելու իրավական առումով կայսրությանը պատկանող, բայց իր փաստացի սեփականությունը հանդիսացող երկիրը: Այս նոր կարգավիճակով Քորոսն, ըստ էության, հավասարվել է Լամբրոնի Հեթումյաններին, որոնք XI դ. 70-ական թվականներից մինչև XII դ. 80-ական թվականները բյուզանդական կառավարիչների իրավասությամբ տնօրինել են կայսրության կողմից իրենց հատկացված տարածքները: Թեև, ինչպես հայտնի է, Հեթումյան բոլոր իշխաններն էլ կրել են սեբաստոս տիտղոսը⁵⁹, դա չի նշանակում, սակայն, որ հաջորդներին այն փոխանցվել է ժառանգաբար: Յուրաֆանյուր նոր իշխան այդ տիտղոսը վերստացել է օրվա կայսրից: Դրա փայլուն վկայությունը մենք գտնում ենք Սամուել Սկելուացու հեղինակած «Ներսես Լամբրոնացու վարձ-հիշատակարանում»։ «Իսկ Աւշինն (Ա)... մտերմացեալ Յունաց արքային, առնոյր ի նմանէ անուն պատտոյ... Յետ սորա վաղճանին տիրեաց որդի իւր Հեթում (Բ) հայրենի աթոռոյս եւ պատուեցաւ ի Յունաց արքայէն Ալէքսէ սեբաստոս անուամբ... Իսկ յետ վաղճանին Հեթմոյ պայազատեաց զհայրենի աթոռն հարազատ

⁵⁷ Հմմտ. Chalandon, Les Comnène, II, p. 97; Grousset, Histoire, I, p. XLIII, 53.

⁵⁸ Հմմտ. Garsoïan, The Byzantine annexation, p. 195.

⁵⁹ Տե՛ս մասնավորապես. Մաթեոսյան, Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ, էջ 210, 213, 216, 221, 256, 261, 274, 277, 288, 289, 325:

որդի նորա Աշին (Բ), եւ պատուեցաւ յարհայէն Մանուելի սեբաստաաւանուամբ... Իսկ բարեպաշտ իշխանն Աշինն... փոխեցաւ առ Քրիստոս, եւ եցոյց անդրանիկ որդոյն Հեթմոյ (Գ) զտէրութին հայրենի աթոռոյն, իսկ նուիրելոյ որդոյն... գնաց առ արհայն Յունաց Մանուել, եւ փարթամ տրամ ա՛ն զհայրենի պատիւ սեբաստաաւանքեան»⁶⁰:

Կիլիկիո իշխանության ամրապնդման տեսակետից՝ Թորոս Ա-ի ամենամեծ գործը պետք է համարել Անավարզայի գրավումը, ինչը կողմնակիորեն հաստատում են Մատթեոս Ուռհայեցին եւ Սմբատ Սպարապետը⁶¹, իսկ առանց վերապահության՝ XIII դ. վերջին ֆառորդի հայկական աղբյուրները⁶²: Այդ իրադարձության բախտորոշ նշանակությունը լիովին պիտի բացահայտվեր միայն հետագայում, երբ Անավարզան դարձավ Ռուբինյանների առաջապահ մարտկոցը Դաշտային Կիլիկիայի աստիճանական նվաճման գործընթացում: Սակայն հակառակ տվյալ պարագայի կարելությունը, ժամանակագիրներն ավելի մեծ ուշադրություն են դարձրել Թորոսի մի այլ սխրանքի, այն է՝ հույներից Գագիկ Բ թագավորի սպանության վրեժը լուծելու փաստի վրա⁶³: Զգացմունքային առումով միանգամայն հասկանալի դիտելով միջնադարյան հեղինակների նման վերաբերմունքը, ավելորդ չէ նշել, որ պատմական այդ դրվագն ապագայում որոշ դեր պիտի խաղար Ռուբինյանների եւ Բագրատունիների ազգակցությանը վերաբերող հայտնի լեգենդի հորինման գործում, ինչին մենք անդրադառնալու ենք համապատասխան տեղում:

⁶⁰ Անդ, էջ 255–256:

⁶¹ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 338; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 145:

⁶² Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնություն Տեառն, էջ 54; Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմություն, էջ 195; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 583; Հեթում Կոռիկոսցի, Պատմություն, էջ 100; Մամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 121:

⁶³ Մատթեոս Ուռհայեցի, Ժամանակագրություն, էջ 318–321; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 88–91; Վենետիկ, էջ 135–137; Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմություն, էջ 194–195; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 583; Հեթում Կոռիկոսցի, Պատմություն, էջ 100; Մամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 121:

ԼԵՒՈՆ Ա (1129–1137 թթ.)¹

Իշխանության անցումը Քորոսից Լեւոնին Վ. Ռուդ-Կոլենբերգը համարում է գահաժառանգության մահմեդական սովորույթի ազդեցության արտահայտություններից մեկը հայ իրականության մեջ²: Այդ սովորույթի էությունը կայանում էր նրանում, որ գահաժառանգության հարցում եղբայրները նախապատվություն ունեին որդիների նկատմամբ³: Ստորեւ կտեսնենք, սակայն, որ Լեւոնի գահակալումն իրականում կապ չունեւ մահմեդական ազդեցության հետ եւ իրավական առումով չէ

¹ Սա Լեւոնի գահակալության տարիների համընդհանուր ճանաչում գտած թվագրումն է (Ղ. Ալիշան, Մ. Օրմանյան, Ժ. Մորգան, Գ. Միքայելյան, Մ. Զուլայան, Ա. Պողոսյան – Մ. Կատվայան, Կ. Մուլթաֆյան, Ժ. Տետեյան): Որոշ հետազոտողներ առաջարկում են այլ թվականներ՝ 1123–1138 (Մելիք-Օհանջանյան, «Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն», էջ 402; Bedoukian, Coinage, p. 6), 1129–1139 (Tournebizze, Histoire, p. 173; Grousset, L'Empire, p. 416; Rüdtt-Collenberg, The Rupenides, I (Rup.), 1129–1141 (Ազրլեան, «Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ», էջ 273): Վերջիններս, ակնհայտորեն Լեւոնի գահակալության տեւողության մեջ ընդգրկում են նաեւ նրա գերությունից (1137 թ.) մինչեւ մահն (1139–1141 թթ.) ընկած տարիները:

² Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 28. Հստ նրա՝ այդ ազդեցության մյուս դեպքերն են՝ իշխանության փոխանցումը Քորոս Բ-ից Մլեհին, Ռուբեն Գ-ից՝ Լեւոն Բ-ին, Հեթում Բ-ից՝ Քորոսին, Սմբատին, Կոստանդինին եւ Օշինին. տե՛ս Անդ. էջ 29:

³ Այդ իրավունքն, ի դեպ, հստակորեն սահմանված է Մխիթար Գոշի դատաստանագրքում. «Ճւ որքան եղբարք իցեն նորա, որդւոց նորա ոչ է իրաւացի առնուլ թագաւորութիւն, եւ ի հատանել եղբարցն ապա նստին որդիքն». Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28:

հակասում գահաժառանգության հայկական ավանդույթին:

Ինչպես արդեն նշվեց, իրադարձություններին վերաբերող հնագույն հայկական աղբյուրը՝ Մատթեոս Ուոհայեցու «Ժամանակագրությունը», չի հիշատակում Թորոսի մահը եւ իշխանության անցումը Լեւոնին: Հետեւելով Ուոհայեցուն, այդ մասին լուր են նաեւ Գրիգոր Երեցը եւ Վարդան Արեւելցին: Ժամանակով առաջին հեղինակը, որն արձանագրում է իշխանության փոփոխությունը Կիլիկիայում, Միհայել Ասորին է. «Այդ տարի (1441 = 1130 թ.),- հաղորդում է նա,- մեռավ Թորոս Հայր՝ Կիլիկիո իշխանը: Նրա եղբայր Լեւոնը հաջորդեց նրան»⁴: Հաջորդ ժամանակագրի՝ Սմբատ Սպարապետի տեղեկությունները լիովին համընկնում են Միհայել Ասորու վկայությանը⁵: Լեւոնի գահակալման հանգամանքներին նոր մանրամասներ են ավելացնում ավելի ուշ շրջանի, այն է՝ XIII դ. վերջին ֆառորդի հայկական աղբյուրները, որոնցից ամենակարեւորը Թորոսի որդուն վերաբերող տեղեկությունն է: Ըստ Վահրամ Բաբունու, Սամուել Անեցու, Հեթում Կոռիկոսցու եւ Հեթում արֆայորդու ճաշոցի հիշատակագրի՝ Թորոսը թողել էր Կոստանդին անունով մի որդի, որին, հոր մահից հետո, ինչ որ ստահակներ, թունավորելով սպանել էին⁶:

Դժվար է պնդել՝ հավաստի՞ են, արդյոք, հետնագույն շրջանի այս աղբյուրների վկայությունները, թե ոչ, սակայն գահաժառանգության իրավունքի ուսումնասիրման տեսակետից դա այնքան էլ կարեւոր չէ: Եթե

⁴ Michel le Syrien, Chronique, III, p. 227; IV, p. 610.

⁵ «Ի թուին 578 (= 1129) մեռաւ պարոն Թորոս՝ որդին Կոստանդնի եւ թոռն Ռուբենայ, եւ էառ զիշխանութիւնն եղբայրն իւր պարոն Լեւոն» (Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 92) կամ՝ «Ի թուին 522 (= 1129) մեռաւ Թորոս որդին Կոստանդեայ, եւ ետ զիշխանութիւնն եղբոր իւրոյ Լեւոնի» (Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 159):

⁶ Վահրամ Բաբունի, Ոստանաւոր պատմութիւն, էջ 196; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 128; Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 100; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 583-584: Ինչպես արդեն տեսանք, Անավարզայի եկեղեցու արձանագրութեան մեջ Թորոսն ինքն էլ հիշատակում է Կոստանդին անունով իր որդուն (Ալիշան, Սիսուան, էջ 239): Ըստ Վ. Ռուդ-Կոլենբերգի՝ Թորոսն ունեցել է նաեւ մի այլ որդի՝ Օշին անունով, որը մահացել է 1129 թ. առաջ. տե՛ս Rüd̄t-Collenberg, The Rupenides, I (Rup.). Մեզ հայտնի չէ այս տեղեկութեան սկզբնաղբյուրը:

Քորոսն անգավակ էր, ապա իշխանության աթոռն օրինական կարգով պետք է անցներ նրա մերձավորագույն արյունակցին, որը տվյալ դեպքում նրա եղբայր Լեոնն էր: Այս կարգը համընդհանուր էր, եւ մասնավորապես կիրառվել է ժամանակի խաչակրաց պետություններում: Երուսաղեմի առաջին թագավոր (թեւեւ ոչ տիտղոսակիր) Գողթրուա Բուլոյնացուն (1099–1100 թթ.) հաջորդել է նրա եղբայր Բալդուին I-ը (1100–1118 թթ.), սրան փոխարինել է իր զարմիկ Բալդուին II-ը (1118–1131 թթ.), իսկ Բալդուին III-ին (1143–1162 թթ.)՝ նրա եղբայր Ամուրի I-ը (1162–1174 թթ.): Իսկ եթե, այնուամենայնիվ, Քորոսը որդի, այսինքն՝ օրինական ժառանգորդ ուներ, բայց որն սպանվել էր, ապա միեւնույն է, թափուր մնացած աթոռը պետք է փոխանցվեր ամենամերձավոր ազգականին՝ նույն ինքը Լեոնին: Ուշագրավ է, որ հայկական աղբյուրները հենց այդ իմաստով էլ ընկալել են վերջինիս գահակալության իրավական հանգամանքը, ինչն առավելագույն հստակությամբ արտահայտված է Սամուել Անեցու ժամանակագրության եւ Հեթում արքայորդու Ճաշոցի հիշատակարանի հետեւյալ հատվածներում. «Ի սոյն ամի մեռաւ եւ պարոն Քորոս եւ թաղեցաւ ի Դրազարկն: Եւ էառ զիշխանութիւն նորա Լեոն եղբայրն իւր, վասն զի զԿոստանդին որդին նորա կալան ոմանք անբարիչտք եւ մահացու դեղոք հանին ի կենաց»⁷ եւ «(Քորոս) բարտք վարտք կենցաղավարեալ, հանգեաւ ի Քրիստոս եւ թաղեցաւ ի սուրբ ուխտն Դրազարկն, թողեալ իւր որդի մի, որ նենգեալ սպանմամբ յամպարըշտաց ոմանց: Վասն որոյ ընկալաւ զիշխանութիւն մեծին Քորոսի եղբայր նորին Լեոն»⁸: Մենք հատուկ ուշադրություն ենք հրավիրում «վասն զի» եւ «վասն որոյ» բառերի վրա, քանի որ դրանք պարզորոշ կերպով ցույց են տալիս, որ հայ ժամանակագիրների իրավագիտակցության տեսանկյունից՝ եթե Կոստանդինը չսպանվեր, ապա հենց նա պետք է ժառանգեր Քորոսի աթոռը, իսկ Լեոնին այդ աթոռը բաժին է ընկել միայն այն պատճառով, որ նրա եղբոր գծով Ռուբինյանների ուղիղ սերունդն սպառվել է: Սա լիովին տեղավորվում է գահաժառանգության հայկա-

⁷ Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 128:

⁸ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 583–584: Տե՛ս նաեւ՝ Յակոբ Սանցի, Պատմութիւն, էջ 93:

կան ավանդույթի շրջանակի մեջ, ուստի ավելորդ է այստեղ մահմեդական սովորույթի ազդեցություն փնտրել:

Ազբյուրներից ոչ մեկը Կոստանդնի սպանությունը չի կապում Լեւոնի անվան հետ, իսկ մարդասպանները նրանցում որակվում են «ամպարիշտ ուման» անորոշ արտահայտությամբ: Մինչդեռ, եթե այդ դեպքն իսկապես տեղի է ունեցել, դրանում ոչ ոք ավելի շահագրգռված չպիտի լիներ, քան Լեւոնը: Եղբոր գերակայության ներքո շուրջ երեսնամյա համատեղ իշխանավարությունից հետո նա չէր կարող համակերպվել նույն կարգավիճակով իր զարմիկի հետ համագործակցելու մտքին, առավել էս, որ քաղաքական առումով, Լեւոնի գահակալումը լուծում էր փաստացիորեն երկու մասի բաժանված Ռուբինյան իշխանության միավորման խնդիրը: Այնուամենայնիվ, կարծում ենք, Լեւոնի մեղսակցությունն այս խնդրում պետք է բացառել, նկատի ունենալով ոչ միայն այն հանգամանքը, որ ժամանակագիրները որեւէ ակնարկ անգամ չեն անում դրա մասին, այլեւ, ընդհակառակը, անսպառ գովեստներ են շռայլում նրա հասցեին՝ «*քաջ զօրականն Քրիստոսի*» (Մատթեոս Ուռհայեցի)⁹, «*մեծ եւ հանճարեղ որդի Կոստանդեայ*» (Գրիգոր Երեց)¹⁰, «*հայ ըստ ազգի եւ հաւատոյ*» (Ներսես Շնորհալի)¹¹, «*Նոր Աժդահակ*» (Վահրամ Բաբունի)¹², «*կացեալ յիշխանութեան կարողագոյն կենալ եւ առաքինի վարով*» (Հեթում արհայորդու Ճաշոցի հիշատակարան)¹³ եւ այլն: Այս ամենն, իհարկեւ, նշանակություն ունի միայն պատմական նշմարտությունը վերհանելու առումով, իսկ գահաժառանգության իրավունքի տեսակետից՝ եթե անգամ Լեւոնն սպանած լիներ օրինական ժառանգորդին ու բռնազավթած իշխանությունը, ապա այս փաստն ինքնին կժխտեր մահմեդական սովորույթի ազդեցությունը, քանի որ դրան հետեւելու պարագայում իշխանությունը բռնազավթելու կարիք չպետք է զգացվեր. այն օրինական կարգով պետք է փոխանցվեր հան-

⁹ *Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 342:*

¹⁰ *Անդ, էջ 400:*

¹¹ *Մաթեոսյան, Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ, էջ 162:*

¹² *Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 197:*

¹³ *Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 584:*

գուցյալ իշխանի եղբորը, այլ ոչ թե որդուն:

Իշխանավարության ընթացքում Լեւոն Ա-ը բախվել է գահաժառանգության իրավունքին վերաբերող եւս մի խնդրի՝ այս անգամ կապված իր որդիների միջեւ 1136/7 թվականին ծագած գծտության դեպքի հետ: Պահպանված աղբյուրների տվյալներով՝ նա ուներ հինգ որդի եւ չորս դուստր: Ըստ Վ. Ռուդ-Կոլենբերգի՝ ավագության կարգով նրա որդիները դասավորվել են հետեւյալ հերթականությամբ՝ Կոստանդին, Ստեփանե, Մլեհ, Թորոս եւ Ռուբեն¹⁴: Միջնադարյան որոշ հեղինակների կողմից Կոստանդինը եւ Ռուբենը համարվել են ապօրինի զավակներ կամ հարճորդներ: Ռուբենի վերաբերյալ դա հաստատում է Հեթում արքայորդու Ճաշոցի հիշատակագիրը. «Ընկալաւ զիշխանութիւն մեծին Թորոսի եղբայր նորին Լեւոն, որ եւ ծնեալ երիս որդիս՝ զԹորոս, զՍտեֆանէ եւ ի հարճէ զոմն Ռուբէն անուն»¹⁵: Իսկ Կոստանդինի պարագայում այդ մասին տեղեկացնում է Սամուել Անեցու խմբագիրը. «Որդիքն Լեւոնի յարեան հակառակ միմեանց, եւ կալեալ զհարճեղբայրն իւրեանց զԿոստանդին՝ խաւարեցուցին զաչսն»¹⁶: Այս դեպքում, սակայն, մեզ թվում է, մենք գործ ունենք պարզ թյուրիմացության հետ: Անեցու խմբագրի տեղեկությունն ակնհայտորեն ֆաղված է Սմբատ Սպարապետի Տարեգրքի հետեւյալ հատվածից. «Եւ յարեան որդիքն Լեւոնի ի մեմեանց հակառակ, եւ կալեալ զհանճարեղ եղբայրն Կոստանդին՝ խաւարեցոյց զաչսն»¹⁷, ինչից պարզորոշ կերպով երեւում է, որ Սամուելի «զհարճեղբայրն» բառը Սմբատի «զհանճարեղ եղբայրն» բառակապակցության աղավաղումն է: Եթե մեր խնդրի համար Ռուբենի ապօրինածնության հանգամանքը որեւէ նշանակություն չունի, ապա Կոստանդինի վերաբերյալ արված այս վերջին նշումը, ինչպես ստորեւ

¹⁴ Rüdtt-Collenberg, The Rupenides, I (Rup.).

¹⁵ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 584: Տե՛ս նաեւ՝ Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 93:

¹⁶ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 128-129:

¹⁷ Սմբատ, Տարեգրք, Վենետիկ, էջ 160: «Հանճարեղ եղբայրն» արտահայտութիւնը Սմբատն, ըստ երեւույթին, կազմել է Գրիգոր Երեցի «հանճարեղ որդի» արտահայտության նմանակությամբ. տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 400:

կտեսնենք, չափազանց կարևոր է: Սակայն մինչ այժմ ներկայացվածից զգալիորեն տարբերվում են Ա. Բոզոյանի և Ժ. Տետեյանի տեսակետները: Առաջինի կարծիքով՝ Կոստանդինն իսկապես ապօրինածին է եղել, և Սմբատ Սպարապետն է, որ իր «զհանճարեղ եղբայրն» արտահայտությամբ աղավաղել է Սամուել Անեցու «զհարճեղբայրն» բառը¹⁸: Իսկ ըստ Ժ. Տետեյանի՝ Լեւոնը թեև իրոք ունեցել է հինգ որդի, բայց ոչ թե չորս, այլ հինգ-վեց դուստր¹⁹: Որդիներից երեքը՝ Թորոսը, Ստեփանն և Մլեհը, ծնվել են Լեւոնի առաջին կնոջից²⁰, որը Եղեսիայի կոմս (1100–1118 թթ.), իսկ հետագայում Երուսաղեմի թագավոր (1118–1131 թթ.) Բաղդուին II Բուրզացու փայրն էր²¹: Կոստանդինը հավանաբար ծնվել է Լեւոնի երկրորդ՝ հայ կնոջից, որի հետ վերջինս ամուսնացել էր 1118 թ. հետո²²: Իսկ Ռուբենը, բացառված չէ, որ իրոք, հարճուողի էր²³: Անկախ, սակայն, այս պնդումների ճշմարտացիության աստիճանից, հարգարժան պատմաբաններն աչքաթող են անում մի կարևոր հանգամանք, այն է՝ Կոստանդինի անունը: Անհնար է պատկերացնել, որ Լեւոնն իր հոր անունով կոչեր ապօրինի զավակին կամ չորրորդ թե հինգերորդ որդուն: Հայ ազնվականական սովորույթի համաձայն՝ այդ անունն իրավունք ուներ կրելու միայն անդրանիկ որդին: Ուստի, մեր կարծիքով, այս հարցում միանգամայն ճիշտ է Վ. Ռուդ-Կոլենբերգը:

Շարադրված մանրամասներն առաջին հայացքից կարող են ավելորդ թվալ, սակայն հավաստիացնում ենք, որ դրանք հույժ անհրաժեշտ են Լեւոնի որդիների հետ կապված վերոհիշյալ միջադեպը պարզաբանելու գործում: 1136 թ. վերջերին Անտիոքի նորընծա պրինց Ռայմոնդ

¹⁸ Բոզոյան, *Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 95: Մեզ սա չի համոզում, քանի որ նախ՝ մեր կարծիքով, Սամուել Անեցու խմբագիրն ավելի ուշ շրջանի հեղինակ է, քան Սմբատ Սպարապետը, և երկրորդ՝ հայերենի օրենքներով «հարճեղբայրը» անիմաստ կազմություն է, եթե խոսքն, իհարկե, չի վերաբերում հարճի եղբորը, ինչը Սամուելի պարագայում բացառված է:*

¹⁹ Dédéyan, *Les Arméniens*, p. 527.

²⁰ Անդ, էջ 526–527:

²¹ Անդ, էջ 429:

²² Անդ, էջ 527:

²³ Անդ:

Պուատիեցին (1136–1149 թթ.) խարդախությամբ ձերբակալեց Լեոն Ա-ին և շուրջ երկու ամիս պահեց գերության մեջ: Սակայն շուտով, ֆաղափական հանգամանքների թելադրանքով, նա ազատ արձակեց հայ իշխանին, քանի որ այդ ժամանակ Անտիոքի ու Կիլիկիայի գլխին արդեն կախվել էր Հովհաննես Կոմնենոս կայսեր լայնածավալ արշավանքի վտանգը, և այդ պարագայում, բնականաբար, Ռայմունդին շափազանց անհրաժեշտ էր Լեոնի բարեկամությունը՝ ընդհանուր թշնամու դեմ միասնական ճակատ կազմելու համար: Այս տեսակետը, որն, ի դեպ, հաստատվում է բյուզանդական պատմիչ Հովհաննես Կիննամոսի հստակ վկայությամբ²⁴, պաշտպանվում է արդի հետազոտողներից շատերի կողմից²⁵: Այնուամենայնիվ, ազատության դիմաց Լեոնը հարկադրված էր պատանդ թողնել իր որդիներին, հսկայական փրկագին վճարել և Անտիոքի իշխանապետությանը զիջել Սարվանդիփար բերդն ու Ադանա և Մսիս ֆաղափները²⁶: Լեոնի երկամսյա գերության ընթացքում էր, ահա, որ նրա որդիները գժտվել էին իրենց ավագ եղբոր հետ ու կուրացրել նրան: Այդ մասին, բացի վերը նշված աղբյուրներից, համարյա նույն խոսքերով տեղեկացնում է նաև Սմբատ Սպարապետի տարեգրքի մյուս խմբագրությունը: Կարծում ենք, ավելորդ չի լինի, եթե ներկայացնենք նաև այս աղբյուրի տվյալները, ինչպես նաև հիշեցնենք նախորդ երկուսի արդեն իսկ վկայակոչված հատվածները. «Որդի Պեմնդին Պայմունդն՝ տէրն Անտաֆոյ, կալաւ զպարոն Լեոն: Եւ որդիքն Լեոնի յարեան միմեանց հակառակ, և կալեալ զեղբայրն Կոստանդին՝ հանին զաչին: Եւ յետ երկու ամսոց էառ զորդիսն պարոն Լեոնի պատանդ, և զին վաթսուն հազար դեկան, և զՄսիս և զԱտանա և զՍարուանդիփարն, և արձակեաց զԼեոն»²⁷. «Տէրն Անտիոքայ Պեմունդն կալաւ զԼեոն: Եւ յարեան որդիքն Լեոնի ի միմեանց հակառակ, և կա-

²⁴ Kinnamos, Deeds, p. 22.

²⁵ Հմմտ. Chalandon, Les Comnène, II, p. 112; Grousset, Histoire, II, p. 53; Микаелин, История, с. 102.

²⁶ Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 93; Վենետիկ, էջ 160; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 129:

²⁷ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 93: «Պայմունդն» ընթերցվածը գրչագրական սխալ է. պետք է ուղղել՝ «Ռայմունդն»:

լեալ զհանճարեղ եղբայրն Կոստանդին՝ խաւարեցոյց զաչսն: Եւ Պեմունդն յետ Ք ամսոյ առ զորդիսն Լեւոնի պանդանտ եւ ԿՌ դահեկան գին, զՄսիս, զԱտանա, զՍարվանդի քարն, եւ արծակեաց զԼեւոն ի տուն իւր»²⁸. «Տէրն Անտիոքայ Պետեփնն կալաւ զԼեւոնն: Իսկ որդիքն Լեւոնի յարեան հակառակ միմեանց, եւ կալեալ զհարեղբայրն իւրեանց զԿոստանդին՝ խաւարեցուցին զաչսն: Իսկ Պետեփնն յետ երկուց ամսոց էառ զորդիսն Լեւոնի պատանդ՝ մինչեւ ետուն զՄըսիս եւ զԱտանայ եւ զՍարուանդիքարն եւ ԿՌ դեկան գին, եւ ապա արծակեաց զԼեւոն»²⁹:

Ինչպէս տեսնում ենք, աղբյուրներից ոչ մեկն էլ չի նշում եղբայրների գժտության պատճառը, ուստի արդի հետազոտողներին այդ առթիվ մնում է միայն գուշակություններ անել: «Այս ներհաղափական պայքարը ամենայն հավանականությամբ տեղի էր ունենում իշխանությունը օրինական զավակների ձեռնում պահելու համար», – գրում է Ա. Բոզոյանը³⁰: Իսկ Ժ. Տետեյանի կարծիքով՝ «Խոսքն, անկասկած, վերաբերում է առաջին ամուսնությունից ծնված զավակների մի կոալիցիայի (որոնք Բայդուին II-ի զարմիկներն էին եւ թերեւս դժգոհ իրենց հոր հակաֆրանկ քաղաքականությունից) ընդդէմ երկրորդ ամուսնությունից ծնված մի որդու՝ Կոստանդինի (որը հայ իշխանուհու զավակ էր եւ, ծնված լինելով 1118-ից հետո, տասնհինգ-սասն տարեկան պետք է լիներ)»³¹: Անկախ Լեւոնի որդիների գործողությունների դրդապատճառների մասին արված տարբեր ենթադրություններից, մեր կարծիքով, երկու պատմաբաններն էլ ճիշտ են ըմբռնել միջադեպի էությունը, այն է՝ իշխանությունը բռնազավթելու Կոստանդինի փորձը եւ դրա կանխումը նրա եղբայրների կողմից: Սակայն դժվար է համաձայնել, որ նման հավակնություն կարող էր դրսեւորել ապօրինի զավակը կամ տասնութ տարեկան պատանին: Ուստի ավելի հավանական է ենթադրել, որ օգտվելով հոր գերության առիթից, Կոստանդինը՝ անդրանիկ որդու իրավունքով, փոր-

²⁸ Մմբատ, *Տարեգիրք, Վենետիկ*, էջ 160: «Պեմունդն» ընթերցվածն ուղղելի է՝ «Պեմունդն»:

²⁹ Մամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 129:

³⁰ Բոզոյան, *Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը*, էջ 95:

³¹ Dédéyan, *Les Arméniens*, p. 532.

ձել է զավթել իշխանության աթոռը, իսկ նրա եղբայրները՝ թե՛ ֆաղափական նկատառումներով, եւ թե՛ մանավանդ զահաժառանգության իրավագիտակցությունից մղված, վիժեցրել են այդ փորձը: Քանի դեռ ողջ էր երկրի օրինական տերը, թեկուզ գերված, ոչ ոք, ըստ այդ գիտակցության, իրավունք չունեւր ոտնձգություն կատարելու նրա աթոռի նկատմամբ: Ստորեւ կտեսնենք, որ նման իրավիճակ ստեղծվել էր նաեւ Լեւոնի երկրորդ գերության ժամանակ:

Սակայն նախքան այդ հարցին անդրադառնալը, հարկ է կանգ առնել Լեւոնի եւ բյուզանդական արժունիքի հարաբերությունների, կամ, որ նույնն է՝ Հայոց իշխանի իրավական կարգավիճակի վրա: Իր գահակալության սկզբնական տարիներին (1129–1130 թթ.) Լեւոնն, ըստ երեսույթին, լավ հարաբերությունների մեջ է եղել Բյուզանդիայի հետ եւ, եղբոր նման, կայսեր կողմից արժանացել է սեբաստաս տիտղոսի: Այդ մասին վկայում է ոչ այլ ոք, քան նրա ժամանակակիցը՝ Գրիգոր Երեցը. «Որդի էր սա (Թորոս Բ) Լեւոնի Սեաստիոսի՝ մեծի եւ հաննարեղ որդւոյ Կոստանդեայ՝ որդւոյ Ռուբենի»³²: Ըստ Ժ. Տետեյանի՝ Լեւոնը կրել է նաեւ բյուզանդական մի այլ տիտղոս, այն է՝ պրոնոբելիսիմոս (protonobelissimus), որը դրոշմված է նրա արճնե կնիքի հակառակ երեսին³³: Լ. Բրեյեի դասակարգմամբ՝ բյուզանդական աստիճանակարգում այդ տիտղոսը սեբաստասից ցածր տեղ էր զբաղեցնում³⁴: Այս հանգամանքը մեզ կանգնեցնում է Լեւոնի հետ կապված մի նոր հանելուկի առջեւ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ զահակալումից հետո վերջինս չէր կարող հանդուրժել իր նախորդից ավելի ցածր տիտղոսի արժանանալու անպատվությունը: Նա պիտի ստանար առնվազն այն տիտղոսը, որը կրում էր իր եղբայր Թորոսը, այնպես, ինչպես Հեթումյան բոլոր պայագատները մեկը մյուսի ետեւից ստանում էին միեւնույն

³² Մատթէոս Ուսայեցի, Ժամանակագրութիւն, էջ 400:

³³ Dédéyan, Les Arméniens, p. 528. 1169 թ. մի հիշատակարանի տեղեկության համաձայն՝ այդ տիտղոսին (պոռոսոնուելեսիմոս) հայ իրականության մեջ արժանացել է նաեւ Սասունի իշխան Վիգեն Թոռնիկյանը. տես Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 397; Մաթեոսյան, Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ, էջ 194:

³⁴ Bréhier, Les Institutions, p. 142.

սեբաստոս տիտղոսը: Այստեղից պետք է եզրակացնել, որ գահակալու-
մից անմիջապես հետո Լեոնին նույնպես շնորհվել է սեբաստոս տիտ-
ղոսը, իսկ **պրօպոզիտոս** տիտղոսին նա արժանացել է դեռևս
գահակալումից առաջ, այսինքն՝ մինչև 1129 թվականը: Մեզ հավանա-
կան է թվում, որ դա տեղի է ունեցել միեւնոյն այն պահին, երբ նրա
գերական՝ Թորոս իշխանը, արժանացել է ավելի բարձր՝ սեբաստոս
տիտղոսի: Սա մի լրացուցիչ փաստարկ է հօգուտ այն տեսակետի, որ
Լեոնը, թեկուզ ստորակայի կարգավիճակով, կիսել է իշխանությունը
իր եղբոր հետ:

Շուտով, սակայն, հայ-բյուզանդական հարաբերությունների վար-
դագույն շրջանն ավարտվում է, եւ 1130 թվականին Լեոնը միանում է
հակաբյուզանդական մի կոալիցիայի, որի մեջ մտնում էին Դանիշմենդ-
յան էմիր Ղազի Գյումուշտեգինը (1084–1134 թթ.), Իկոնիայի սուլթան
Ռումենեղդին Մասուղը (1116–1156 թթ.), Տրապիզոնի դուքս Կոստանդին
Գաբրասը³⁵ եւ Հովհաննես Կոմնենոս կայսեր եղբայր Իսահակը³⁶: Այդ
դաշինքն ամրապնդելու նպատակով Լեոնն իր դստերն ամուսնացնում
է վերջինիս որդու՝ Հովհաննեսի հետ, որպես օժիտ նրան հանձնելով
նաեւ Մսիս եւ Ադանա ֆաղաֆները: Այդ մասին, որոշ անշտություննե-
րով, մանրամասն տեղեկացնում է Միֆայել Ասորին. «Այնուհետեւ Իսա-
հակը գնաց Լեոնի մոտ, եւ Լեոնն իր դստերն ու երկու ֆաղաֆ՝ Մսիսը
եւ Ադանան, տվեց կայսեր զարմիկին: Քիչ անց նրանց միջեւ գծու-
թյուն ծագեց, եւ Լեոնը հույներից խլեց (նրանց ունեցվածքը), իսկ Իսա-
հակն իր որդու հետ (փախալ) Մասուղ սուլթանի մոտ»³⁷: 1132 թվա-
կանին, վերագրավելով Դաշտային Կիլիկիայի ֆաղաֆները³⁸, Լեոնն

³⁵ Գաբրասների (Ղալոսասներ) հայկական ծագում ունեցող բյուզանդական ազնվա-
կանական ընտանիքի մասին մանրամասն տե՛ս Հ. Բարթիկյանի *Տողվածաշարը. Բարթիկյան, Հետազոտություններ, հտ. 2, էջ 389–428*:

³⁶ Այդ մասին մանրամասն տե՛ս Милкелян, История, с. 100–101; Բողոյան, Բյուզան-
դիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 60–61, 64–66:

³⁷ Michel le Syrien, Chronique, III, p. 230–231; IV, 613; Միքայելից օգտված Բարհեբ-
րեոսի պատումն այս դրվագում բոլորովին ազավաղված է. տե՛ս Bar Hebraeus,
Chronography, p. 255; Barhebraeus, Chronicon, p. 290.

³⁸ Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 92–93; Վենետիկ, էջ 159; Վահրամ Բա-

ավելի խորացրեց իր հակասությունները Բյուզանդիայի հետ, ինչը վերջիվերջո պիտի հանգեցնե՛ր կայսրության ձեռնարկած մի լայնածավալ պատժիչ գործողության³⁹ :

1137 թվականին Հովհաննես Կոմնենոս կայսրը, մի ահռելի բանակի գլուխ անցած, շարժվեց դեպի արեւելք՝ մեկանգամընդմիջտ լուծելու համար կայսրության ապստամբ նահանգների՝ Կիլիկիայի եւ Հյուսիսային Ասորիքի խաչակրաց պետությունների հնազանդեցման խնդիրը: Դա ցույց է տալիս, որ բյուզանդական արհունիքը դադարել էր այլեւս վստահել հայ եւ լատին իշխանների հավատարմության կեղծ երդումներին, որոնք երբեւիցե առիթը բաց չէին թողնում գլուխ բարձրացնելու Բյուզանդիայի դեմ եւ հույների հաշվին լուծելու իրենց սեփական խնդիրները: Ժամանակակից ֆաղաֆագիտական եզրութաբանությամբ արտահայտված՝ Հովհաննես Կոմնենոս կայսրն, այսպիսով, նպատակ էր դրել վերականգնել կայսրության տարածքային ամբողջականությունը, ինչը նրան հաջողվեց իրականացնել կարճ ժամանակի ընթացքում⁴⁰: Վեոական գործողությունների շնորհիվ գրավելով ողջ Կիլիկիան, գերելով Լեւոնին ու նրա որդիներին, ինչպես նաեւ իր գերիշխանությունը հաստա-

բունի, Ռտանաւոր պատմութիւն, էջ 196; Մամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 129; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 100; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 584:

³⁹ Ի տարբերություն օտար ժամանակագիրների (Կիննամոս, Նիկեոսա խոնիատես, Միքայել Ասորի, Անանուս Եղեսացի), որոնք միահամուռ կերպով Հովհաննես Կոմնենոս կայսեր արեւելյան արշավանքի պատճառ են համարում Լեւոն Ա-ի նվաճումները Դաշտային Կիլիկիայի ուղղությամբ, հայ հեղինակները, արձանագրելով հանդերձ արշավանքի փաստը, բոլորովին չեն անդրադառնում նրա պատճառներին, բացառությամբ Վահրամ Բաբունու, որն այդ առթիվ գրում է. *«Իսկ Թորոսի եղբորն ելեալ, /Այն որ Լէոն էր անուանեալ, /Զիշխանութիւն եղբորն առեալ, /Նւ նմանող նորին եղեալ: /ԶՄամեստիոյ եղեւ տիրեալ, /Նւ ի Տարսոն մեծըն հասեալ. /... Արդ Հոռոմոց կայսր կացեալ, /Պերփեռուժէնն մակադրեալ, /Ըզլէոնի գործն լուեալ, /Նւ բարկութեամբ մեծաւ լցեալ, /Մսկոյն բազում զօրօք շարժեալ, /Ի Կիլիկիա եկեալ մտեալ»*. Վահրամ Բաբունի, *Ռտանաւոր պատմութիւն, էջ 196–197:*

⁴⁰ Հովհաննես Կոմնենոսի արշավանքի նպատակների, ընթացքի եւ արդյունքների մասին մանրամասն տե՛ս Chalandon, Les Comnène, II, p. 110–151; *Բողոյան, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 99–125:*

տելով Անտիոքի իշխանապետության եւ Եդեսիայի կոմսության վրա, հաջորդ տարի կայսրը տուն դարձավ: Լեւոնն իր կնոջ եւ երկու որդիների՝ Թորոսի ու Ռուբենի հետ շղթայակապ փոխադրվեց Կոստանդնուպոլիս եւ բանտ նետվեց⁴¹: Նրա մյուս երկու որդիները՝ Ստեփանեն եւ Մլեհը, խուսափեցին գերությունից, ապաստան գտնելով իրենց հորաբնորդու՝ Եդեսիայի կոմս Ժուլին II-ի (1131–1150 թթ.) արժունիքում⁴²: Լեւոնը եւ Ռուբենը մեռան գերության մեջ⁴³: 1143 թվականին, իր երկրորդ արեւելյան արշավանքի ընթացքում, Կիլիկիայում ուսի ժամանակ ստացած վերքից մահացավ նաեւ Հովհաննես կայսրը, եւ բյուզանդական գահին բազմեց նրա որդի Մանուել I Կոմնենոսը (1143–1180 թթ.):

Հովհաննես կայսեր արեւելյան արշավանքներն աղետալի հետեւանքներ ունեցան Կիլիկիո հայկական իշխանության համար, ինչը մոայլ գոյներով արձանագրված է միջնադարյան ժամանակագրություններում: «Իսկ կայսրն զբոլոր Կիլիկիա էառ, եւ զՀայոց զօսն ի սպառսպուռ ջնջեաց»,– գրում է Սամուել Անեցու խմբագիրը⁴⁴: «Յորժամ գնաց թագաւորն՝ մնացին անօգնական, եւ եղեն փախստական ցան եւ ցիր, եւ մնաց երկիրն Լեւոնի աւերակ»,– ավելացնում է Սմբատ Սպարապետը⁴⁵: Իսկ

⁴¹ Տե՛ս Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 198–199; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 130; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 100; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 584; Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 515: Լեւոնի, նրա կնոջ ու որդիների գերեզարուամն արձանագրում են նաեւ Գրիգոր Երեցը, Սմբատ Սպարապետը, Վարդան Արեւելցիին, Միքայել Ասորիին եւ Անանուն Եդեսացիին, սակայն առանց նշելու որդիների անունները. տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 369; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 94; Վենետիկ, էջ 160; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 125; Michel le Syrien, Chronique, III, p. 245; IV, p. 621; Անանուն Եդեսացի, Ժամանակագրութիւն, էջ 80:

⁴² Վահրամ Բարունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 55; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 198; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 130; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 100; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 584; Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 515:

⁴³ Լեւոնի մահը տարբեր տարիներով է թվագրված միջնադարյան աղբյուրներում: Արդի հետազոտողներն ընդունում են 1139, 1141 կամ 1142 թվականները:

⁴⁴ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 130:

⁴⁵ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 161. նույնը՝ Փարիզ, էջ 94:

Հեթումի Ճաշոցի հիշատակագիրն ամփոփում է. «Եւ իշխանութիւն Հայոց բարձաւ ի Կիլիկիոյ, տիրելով վերստին Յունաց»⁴⁶: Հովհաննէս Կոմնենոս կայսրն, ակներեւաբար, խնդիր էր դրել ոչ միայն վերականգնել Բյուզանդիայի ինքնիշխանությունը Կիլիկիայում, այլեւ ջնջել երկրամասի հայկական նկարագիրը՝ այդ նպատակով ավերելով ու կողոպտելով նրա վանքերն ու եկեղեցիները, ոչնչացնելով հայագիր մատյաններն ու տերունական սրբապատկերները: Այդ մասին քանկարժեք տեղեկություն է հաղորդում ոչ այլ ոք, քան դեպքերի ականատես Ներսէս Շնորհալին, իր ստացած ձեռագրերից մեկի 1143 թ. հիշատակարանում. «Յետ յո՞ւնց ստացաւ զայս զիս յիշեջիք ի Քրիստոս, զՆերսէս անարժան, գոլով եպիսկոպոս, եւ եղբայր կաթողիկոսին Հայոց տեառն Գրիգորի, որ ստացա զսա զնիւք յաւարէն Յունաց ի վանորէից Հայոց, յորժամ ել թագաւորն Հռոմոց յաշխարհն Կիլիկեցոց, եւ առ զնա յիշխանէն Լեւոնայ, որ էր հայ ըստ ազգի եւ հաւատոյ: Եւ աւերեաց զբազում վանորայս եւ զեկեղեցիս, եւ զնշանս տերունականս խորտակէին, եւ անհնարին հարուածս ազգի մերում հասուցանէին քինաբար: Եւ այս եղև ի թուականիս ՇՁՁ (1137): Եւ երկրորդ գալ նորին արայի եղև ՇՂԲ (1143), յորում եւ վաղջանի առաջի Անարզաբոյ, եւ թագաւորի կրտսեր որդի նորին Մանուիլ անուն»⁴⁷:

Ռուբինյան գերդաստանի հաջորդ պայազատին վիճակված էր, արդ, այս ավերակների վրա հայոց պետականությունը վերականգնելու անհնարին թվացող գործը:

⁴⁶ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 584: Նույնը՝ Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 94:

⁴⁷ Մաթեոսյան, Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ, էջ 162: Տե՛ս նաեւ՝ Ալիշան, Շնորհալի, էջ 150:

ԹՈՐՈՍ Բ (1145–1168 ԹԹ.)

Աետնի որդի Թորոսն էր, որ վերջիվերջո խոյս տալով գերությունից, պիտի վերադառնար Կիլիկիա եւ ձեռնարկեր այդ գործի իրականացմանը: Միջնադարյան աղբյուրները տարբեր տարիներով են թվագրում Թորոսի վերադարձի եւ Հայոց իշխանության վերականգնման ժամանակը, մասնավորապես նշելով 1125, 1134, 1141, 1143, 1144, 1145, 1148 եւ 1151 թվականները¹: Մենք հարկ չենք համարում կանգ առնել այս տվյալների վրա, քանի որ նախ՝ դա դուրս է մեր խնդրի շրջանակներից, եւ երկրորդ՝ դրանց մանրակրկիտ բնությունը կատարել է Ա. Բոզոյանը²: Այնուամենայնիվ պետք է նշել, որ հետազոտողների մեծամասնության կարծիքով Թորոսը հայրենիք է վերադարձել Հովհաննես Կոմնենոս կայսեր մահից հետո, այն է 1143–1145 թվականներին: Միայն Ա. Բոզոյանն է, որ

¹ 1125 թ. (Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն 1870*, էջ 427. սակայն ՇՀԳ-ն, ըստ երեւույթին, գրչագրական սխալ է եւ պետք է ուղղել ՇՂԳ = 1145); 1134 թ. (Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 130. ՇՁԳ-ն, թերեւս նույնպէս գրչագրական սխալ է եւ պետք է դարձնել ՇՂԳ = 1144); 1141 թ. (Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 94); 1143 թ. (Վահրամ Բաբունի, *Ոտանաւոր պատմութիւն*, էջ 201; *Հեթում Կոռիկոսցի*, *Պատմութիւն*, էջ 101. թեեւ թվական չեն նշում, բայց տեղեկացնում են, որ Թորոսը Կիլիկիա է մտել Հովհաննէս Կոմնենոսի մահվան տարում), 1144 թ. (*Հեթում Թագաւոր*, *Պատմութիւն*, էջ 75; Սամուէլ Անեցու *Խմբագիրք*. *Հաւաքմունք*, էջ 135; Սամուէլ Անեցի, *Շարունակող*, էջ 484; *Հեթում Նդիրցի*, *Պատմութիւն*, էջ 537); 1145 թ. (Սմբատ, *Տարեգիրք*, *Վենետիկ*, էջ 164); 1148 թ. (Michel le Syrien, *Chronique*, III, p. 282; IV, p. 641; Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն 1871*, էջ 422); 1151 թ. (Վարդան Վարդապետ, *Հաւաքումն*, էջ 125):

² *Տես Բոզոյան*, *Բյուզանդիայի արեւելյան քաղաքականութիւնը*, էջ 173–182:

հիմնվելով Միհայել Ասորու վկայության եւ պատմական հանգամանքների վերլուծության վրա, այդ դեպքը, կամ ավելի ճիշտ՝ Ռուբինյան իշխանության վերականգնումը Քորոսի կողմից, թվագրում է 1148 թվականով³: Սույն մոտեցումը, սակայն, թվում է, լրացուցիչ պարզաբանման կարիք ունի: Քորոսի վերադարձի եւ Ռուբինյան իշխանության վերականգնման մասին Միհայել Ասորին պատմում է մի ենթազլխում, որը կրում է «Քորոս հայի կողմից Կիլիկիային տիրելու եւ այդ ժամանակներում աշխարհում ու Աստծու եկեղեցում տեղի ունեցած իրադարձությունների մասին» վերնագիրը եւ սկսվում է հետեւյալ խոսքերով. «Երբ Լեոն հայը ձեռքակալվեց Հունաց կայսր Հովհաննեսի կողմից եւ փոխադրվեց Կոստանդնուպոլիս, ինչպես այդ մասին արդեն խոսվեց, Կիլիկիո երկիրը մնաց մասամբ հույների, մասամբ թուրքերի ձեռքում: Այնուհետեւ, երբ մեռավ Հովհաննես կայսրը եւ մեռավ նաեւ ինքը Լեոնը Կոստանդնուպոլսում, Լեոնի որդիներից մեկը՝ Քորոս անունով, խույս տվեց ու ճողոպրեց»⁴: Ինչպես տեսնում ենք, այստեղ ասորի ժամանակագիրը հստակ նշում է, որ Քորոսը Կոստանդնուպոլսից փախել է Հովհաննես Կոմնենոս կայսեր մահից հետո⁵, ինչը լիովին համընկնում է հայ հեղինակների հայտնած տեղեկություններին: Այնուհետեւ Միհայելը մանրամասն նկարագրում է Քորոսի գործերը Կիլիկիայում, այն է նրա ապաստանումը տեղի մետրապոլիտ Աթանասիոսի մոտ, վերջինիս կողմից նրան մի ճծույզի գնի տրամադրումը, տասներկու զինակիցներով Ամուղա բերդի գրավումը, բազում այլ վայրերի նվաճումը, մեծ թվով հայերի ու ֆրանկների զինակցումը նրան, ամուսնությունը Ռապանի ֆրանկ տիրոջ՝ Սիմոնի դստեր հետ, Ռապան գնալու ճանապարհին երեք հազար թուրքերի կոտորումը, հույների ու թուրքերի փախուստը Կիլիկիայից, Անավարզայի ու կիլիկյան մյուս ֆաղաֆների նվաճումը: Եւ միայն այս ամենից հետո է, որ Միհայել Ասորին ավելացնում է⁶. «Այն տարում, երբ Քորոսը տիրեց (Կիլիկիային), այն է՝ 1459 (= 1148) թվականին,

³ Անդ, էջ 175, 180–181:

⁴ Michel le Syrien, Chronique, III, p. 281; IV, p. 640–641.

⁵ Հմմտ. Chalandon, Les Comnène, II, p. 418.

⁶ Michel le Syrien, Chronique, III, p. 282; IV, p. 641.

Անտիոքի երկիրն ավարի մատնվեց Զանգիի որդի Նուրեդդինի կողմից»:

Այսպիսով, միակ եզրակացությունը, որ կարելի է անել Միֆայել պատրիարքի մեզ հասած բնագրի այս դրվագից, հետևյալն է. ըստ ասորի ժամանակագրի՝ Թորոսը Կոստանդնուպոլսից հայրենիք է վերադարձել Հովհաննես կայսեր մահից հետո, այն է՝ 1143–1144 թվականներին, եւ չորս-հինգ տարվա ազատագրական պայքարի արդյունքում տիրել է համարյա ողջ Կիլիկիային, այսինքն՝ 1148-ը ոչ թե Ռուբինյան իշխանության վերականգնման սկզբնավորման, այլ ավարտի թվականն է: Այսպիսի մեկնաբանության պարագայում, սակայն, տարակուսելի կարող է թվալ այն հանգամանքը, որ խնդրո առարկա ենթազլխին նախորդող իրադարձությունը, այն է՝ Եղեսիայի վերջնական անկումը, թվագրված է Սելեւկյան 1458 (= 1146/7) թվականով: Սակայն սա ամենեւին չպետք է մտահոգության տեղիք տա, քանի որ այստեղ Միֆայելը, ինչպես սովորաբար վարվում են բոլոր ժամանակագիրները, մտքի թելը շկորցնելու համար ավարտին է հասցրել նախորդ էջերում լուսաբանվող իրադարձությունների շարադրամբը, եւ վերադարձել էիչ ավելի վաղ ժամանակի դեպքերին⁷: Նման հանգամանքներում ժամանակագիրները, շփոթ շառաջացնելու եւ սկսվող նոր դրվագը նախորդ՝ անհամատեղելի թվականի հետ չկապելու համար, հաճախ դիմում են հուշող խոսքերի. Միֆայելի դեպքում այդպիսին են Թորոսի փախուստը Հովհաննես Կոմնենոս կայսեր մահվան ժամանակի հետ կապող խոսքերը: Ուստի Թորոսին վերաբերող ենթազույսը, որն, ի դեպ, նախորդ ենթազլխից բաժանված է հատուկ վերնագրով, ժամանակագրական առումով ոչ մի կապ չունի հիշյալ թվականի հետ: Մանավանդ, որ Թորոսի՝ Միֆայել Ասորու կողմից թվարկված բազմաթիվ գործերն անհնար է տեղավորել մեկ տարվա մեջ:

Այս ամենը գահաժառանգության իրավունքի եւ իշխանության «լեգիտիմության» խնդրի հետ կապ ունի, սակայն, միայն ընդհանուր կերպով, այն է՝ այնքանով, որքանով ցույց է տալիս, որ վերականգնված Ռու-

⁷ Նման փաստերի կարելի է հանդիպել ինչպես Միքայել Ասորու բնագրի այլ մասերում, այնպես էլ Բարճեբրեոսի, Անանուն Եղեսացու ու նաեւ հայ հեղինակների Մատթեոս Ուոհայեցու, Սմբատ Սպարապետի եւ այլոց ժամանակագրություններում: Այդպիսի մի օրինակ տես սույն գրքի «Ռուբեն Ա» ենթազլխի ծանոթ. 60:

քինյան իշխանությունը Քորոսի ձեռակերտն էր, կամ, ինչպես գրում է Տ. Շալանդոնը, Քորոսը «Հայաստանի անկախության հիմնադիրն էր»⁸: Սակայն կա մի հարց, որն ուղղակիորեն առնչվում է Քորոսի կողմից Հայոց իշխանության գահին տիրելու փաստի իրավական կողմին: Խոսքը վերաբերում է գահաժառանգության իրավունքում որդիների ավագությանը տրվող նախապատվության սկզբունքին: Աղբյուրներից միայն երեքն են, որոնք Լեոնի որդիներին թվարկում են ավագության կարգով: Հնագույնը Հեթում Կոռիկոսցուն վերագրվող պատմությունն է «Սորա եղեն որդիք Դ՝ Քորոս, Ստեֆանէ, Մլեհ եւ Ռովբէն»⁹: Երկրորդը Վահրամ Բաբունու չափածո բերվածն է. «Նախ զՔորոս՝ մեծըն կոչեալ, /Եւ զՍտեֆանէն՝ պսակադրեալ, /Ապա զՄլեհն՝ յառաջացեալ, /Եւ զՌովբէնն՝ զհետ եղեալ»¹⁰: Իսկ վերջինը Հեթում արեայորդու Ճաշոցի 1286 թ. հիշատակարանն է. «Որ եւ ծնեալ երիս որդիս՝ զՔորոս, զՍտեֆանէ եւ ի հարնէ՛ գոմն Ռովբէն անուն»¹¹: Ինչպես արդեն նշել ենք սույն գրքի նախորդ էջերում, այս երեք աղբյուրներն էլ կապված են Վահրամ Բաբունու անվան հետ¹², ուստի նրանց հաղորդած տեղեկություններն իրականում պետք է համարել մեկ վկայություն: Ինչեւիցե, հարկ է արձանագրել, որ ըստ այս աղբյուրների՝ Լեոնի անդրանիկ որդին Քորոսն է, իսկ այնուհետեւ ավագության կարգով գալիս են Ստեփանեն, Մլեհը եւ Ռովբենը: Նախորդ ենթազվիտում, թվում է, մենք բավարար փաստարկներով հիմնավորեցինք, որ Լեոնի անդրանիկ որդին եղել է Կոստանդինը: Եթե դա իրոք այդպես է, ուրեմն Քորոսի առաջնեկությունը հաստատող վկայությունը պետք է ընդունել ոչ թե որպես պատմական իրողություն, այլ իրավագիտակցության արդյունք, այսինքն՝ նկատի ունենալով այն, որ Քորոսը հաջորդել է

⁸ Chalandon, Les Comnène, II, p. 418.

⁹ Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 100:

¹⁰ Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 197: Իր մի այլ աշխատության մեջ Բաբունին հիշատակում է Լեոնի որդիներից երեքին. «զՔորոս, զՍտեփանէ եւ զՄլեհ»: Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 55:

¹¹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 584: Տե՛ս նաեւ՝ Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 93: Հետագայում, կարգից դուրս, Հեթումի Ճաշոցի հիշատակագիրը նշում է նաեւ Մլեհի անունը:

¹² Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 462-464; հտ. 2, էջ 67, 70:

իր հորը, Վահրամը եզրակացրել է, որ նա պետք է նրա անդրանիկ որդին եղած լինե՛ր, քանի որ դա էր գահաժառանգության հիմնական սկզբունքը:

Դեռ ավելին, մեր կարծիքով, լուրջ հիմքեր կան պնդելու համար, որ Թորոսը ոչ միայն Լեւոնի անդրանիկ որդին չի եղել, այլև ավագության առումով զիջել է իր մնացյալ եղբայրներից առնվազն երկուսին՝ Ստեփաննին և Մլեհին: Այսպես, Սմբատ Սպարապետի Տարեգրքի երկու խմբագրություններն էլ նշում են, որ Կոստանդնուպոլսի գերությունից Կիլիկիա վերադառնալու ժամանակ, այն է՝ 1143–1144 թվականներին, Թորոսը շափազանց երիտասարդ է եղել. «մանուկ մի Թորոս յորդոցն Լեւոնի»¹³, կամ «մանուկ մի Թորոս անուն, յորդոցն Լեւոնի»¹⁴: Սմբատ Սպարապետի վկայությունը թերեւս կարելի էր անտեսել, նկատի ունենալով այն, որ նա իր աշխատությունը գրել է նշված իրադարձությունից շուրջ հարյուր երեսուն տարի հետո: Սակայն հատկանշական է, որ մոտավորապես նույնը կրկնում է նաև Թորոսի անմիջական ժամանակակիցն ու կենսագիրը՝ Գրիգոր Երեցը. «Եւ եղև յատուս փոքր ճօսլին¹⁵ երեւեցաւ ոմն պատանի Թեղորոս անուն, օգնական էւ ոչ ուստեք ունելով, բայց զգօրութիւն բարեխնամ Արարչին: ...Որպէս էւ առ երանելին Պօղոս արար յերկնուստ ձգելով ի կամս էւ ի գործս սպասատրութեան իւրոյ, նոյնպէս էւ առ այրս այս արար,... քանզի առ փոքր մի էւ ոչ յերկար ժամանակս տիրեաց հայրենեաց իւրոց»¹⁶: Ինչպէս նշեցինք նախորդ ենթազխում, ըստ ժ. Տետեյանի՝ Թորոսը, Ստեփաննին և Մլեհը ծնվել են 1118 թվականից առաջ, Լեւոնի առաջին ամուսնությունից¹⁷: Հետեւաբար, եթե Թորոսն իրոք եղբայրներից ավագն էր, ապա 1143–1144 թվականներին նա երեսունհինգ-հազար տարեկան պետք է եղած լինե՛ր. չմոռանանք, որ, թերեւս մեկընդ-

¹³ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 94:*

¹⁴ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 164:*

¹⁵ *Ժոսլին II, Եղեսիայի կոմս (1131–1150 թթ.):*

¹⁶ *Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 399–400: «Պատանի» բառն, ի դեպ, միանշանակորեն վերաբերելով Թորոսի տարիքին, բացառում է Սմբատի օգտագործած «մանուկ» բառը Հայկազյան բառարանի նշած «զինուոր, զօրական քաջ» երկրորդային իմաստով հասկանալու հնարավորությունը. տե՛ս «Նոր բառգիրք», հտ. 2, էջ 206:*

¹⁷ *Dédéyan, Les Arméniens, p. 526–527.*

մեջ, ծնվել էին նաև մի ֆանի փոյրեր: Այդ տարիքի հասուն տղամարդուն դժվար թե կարելի էր մանուկ կամ պատանի կոչել: Ուստի նա գոնե հիշյալ եղբայրներից կրոսեր պետք է լիներ, որպեսզի գերությունից ազատվելու ժամանակ լինելով ֆանհինգ-ֆանվեց տարեկան, արժանանար այդպիսի որակման, թեև դա էլ չափազանցություն պետք է համարել:

Սակայն առկա է նաև նշվածը հաստատող մի ավելի կարետր փաստարկ: Աղբյուրների տվյալներով՝ շնայած Քորոսի աննախադեպ սխարագործություններին, հայրենիքին ու ազգին մատուցած հսկայական ծառայություններին ու դրա շնորհիվ վայելած անսահման հեղինակությունն ու փառքին¹⁸, թե՛ Ստեփանեն, թե՛ Մլեհը փորձեր են կատարել տապալելու նրան եւ բռնազավթելու Ռուբինյան իշխանության աթոռը, ինչի իրավական հիմքը կարող էր լինել միայն նրանց ավագության հանգամանքը: Ստեփանեի ապստամբության մասին վկայում է Միխայել Ասորին. «Հունաց 1469 (= 1158) թվականին, — գրում է նա, — Ստեփանեն դավեց իր եղբոր՝ Քորոսի դեմ եւ ուզեց սպանել նրան: Զգալով դա, Քորոսը բռնեց նրան եւ տաս ամիս պահեց բանտում: Այնուհետեւ ֆրանկների միջնորդությամբ ազատեց նրան, եւ վերջինս ծառայության մտավ ֆրանկների մոտ»¹⁹: Միխայելի ժամանակագրության հայերեն թարգմանության մեջ այս հատվածը վերարտադրված է մի փոքր մեղմացված ձևով. «Ձարախօսութիւն մատուցին առաջի Քորոսի, թէ Ստեփանէ խորհի սպանանել զԲեգ. եւ հաւատաց նոցա, եւ կալեալ զեղբայրն, եղ ի բանտի զտասն ամիս. իսկ միջնորդութեամբ բազմաց, երդմնեցուցեալ, եհան զնա. եւ սիրէին զմիմեանա»²⁰: Իսկ Մլեհի ապստամբության մասին, որը

¹⁸ Դրա ապացույցը սփռված է XII–XIII դդ. համարյա բոլոր հայկական ժամանակագրություններում:

¹⁹ Michel le Syrien, Chronique, III, p. 315. Միքայելի ժամանակագրության ասորական բնագրում այս հատվածը բացակայում է: Ճ.-Բ. Շաբոն այն ընդգրկել է իր ֆրանսերեն թարգմանության մեջ՝ քաղելով Բարհեբրեոսից. տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 325; Bar Hebraeus, Chronography, p. 284.

²⁰ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 441: Համարյա նույնը կրկնում է նաև Միքայելի հայերեն թարգմանության մյուս խմբագրությունը. «Եւ եղև քսութիւն յոմանց առ պարոն Քորոս՝ թէ եղբայրն քո կամի սպանանել զքեզ. եւ հաւատաց նոցա, եւ կալաւ զեղբայրն եւ զնդանեաց տասն ամիս. եւ ապա միջ-

տեղի է ունեցել Ստեփանեի մահից հետո (1162 թ.), հանգամանորեն տեղեկացնում է Սմբատ Սպարապետը. «Եւ յայնմ ժամանակի յաղթողն պարոն Թորոս կայր քաջութեամբ, եւ պահէր զգաւառս լեռնակողմանց Տորոսի, որոց տիրէր զօրութեամբն Աստուծոյ, եւ անուանեցաւ սեբաստոս Մսիսայ եւ Անուարզոյ եւ Վահկային: Իսկ եղբայրն նորա պարոն Մլեհն էր այր շարաքարոյ, կուզէր որ սպանէր զպարոն Թորոս, եւ յարեցոյց յինքն այլս ոմանս օգնականս իւրոյ շարութեան: Եւ օր մի ելան երկուքն ի յորս, ի մէջ Մսիսայ, եւ կամէր Մլեհն զշար խորհուրդն իւր անդ կատարել եւ սպանել զեղբայրն: Եւ պարոն Թորոս գիտաց եւ կալաւ զպարոն Մլեհ, եւ առաջի իշխանացն քշփեց²¹ խիստ զնա: Եւ ետ նմա շատ ոսկի եւ արծաթ, ձի եւ ջորի, եւ եհան զնա յերկրէն, եւ այլ շար շարար փոխարէն նմա: Իսկ նա զնաց առ սուլտանն Հալպայ նուրատինն, եւ եմուտ ի ծառայութիւն նորա»²²: Ուշագրաւ է, որ շնայած քաջամարտիկ պատերազմող ու վճռական պետական այր լինելու իրողությանը, Թորոսը շատ մեղմ պատիժների է արժանացրել իւր դեմ ապստամբած եղբայրներին, ինչը թերեւս նույնպես որոշակի տուրֆ է նրանց ավագության հանգամանքին: Նույնքան ուշագրաւ է նաեւ այն, որ Մլեհը Թորոսի դեմ գլուխ է բարձրացրել միայն Ստեփանեի մահից հետո, ինչը, մեր կարծիքով, իր հերթին նշանակում է, որ վերջինս իրենից տարիքով մեծ է եղել: Այդ պարագայում, իր ավագ եղբոր կենդանության օրոք Մլեհի բարձրացած ապստամբությունը նրան ոչինչ չէր տա: Եթէ նրան անգամ հաջողվեր տապալել Թորոսին, միեւնույն է, ավագության կարգով իշխանության արժուր պետք է անցներ Ստեփանեին: Դրա լրացուցիչ ապացույցն է Հեթում Կոռիկոսցու այն դիտարկումը, որ Թորոսի մահից հետո «Ստեֆանն եղբայր իւր ոչ ժամանեաց տիրել աշխարհին Կիլիկիոյ ..., քանզի յառաջագոյն կալան զնա իշխանն Յոյնն ի սահմանս Համուսին, եւ յեռա-

նորդութեամբ բազմաց դարձեալ եհան ի բանտէն, եւ կային սիրով ընդ միմեանս»: Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1871, էջ 439:

²¹ *Քշփել = նախատել, հանդիմանել, սաստել. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 446:*

²² *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 99: Մոտավորապես նույնն է նաեւ Սմբատի մյուս խմբագրութեան պատումը. Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 186–187: Հմմտ. նաեւ՝ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 455:*

ցեալ պղինձ եղեալ խաշեցին զնա»²³: Այսինքն, ըստ այդ ժամանակագրի՝ եթե Ստեփանեն մահացած շլիներ, ապա Թորոսից հետո իշխանությունն օրինական կարգով (իմա՝ ավագության իրավունքով) պետք է փոխանցվեր նրան, եւ ոչ թե Մլեհին²⁴:

Այսպիսով, վերոշարադրյալից հետո մեզ ավելի եւս համոզիչ է թվում միջնադարյան ազգաբանության հմտագույն մասնագետ Վ. Ռուդ-Կոլենբերգի այն տեսակետը, ըստ որի՝ Լետնի որդիները ծնվել են հետեյալ հաջորդականությամբ՝ Կոստանդին, Ստեփանե, Մլեհ, Թորոս եւ Ռուբեն²⁵: Հետեւաբար, նման պարագայում, զահաժառանգության իրավունքի տեսակետից՝ Թորոսի իշխանակալումը Կիլիկիայում անօրինական էր, քանի որ այդ իրավունքի համաձայն՝ իշխանությունը պետք է ժառանգեր Լետնի ողջ մնացած որդիներից ամենաավագը՝ Ստեփանեն: Թորոսն, արդ, իշխում էր միայնումիայն նվաճողի իրավունքով, որի հիմքը Խորենացու «սահմանք քաջաց՝ զէնն իւրեանց, որքան հատանէ՝ այնքան ունի» սկզբունքն էր²⁶: Ըստ այդմ, Թորոսը հանգամանքների բերումով հայտնվել

²³ Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 102:

²⁴ Թեեւ այստեղ Հեթումը սխալվում է, մոռանալով, որ Թորոսը որդի ուներ, որը եւ պիտի լիներ իշխանության օրինական ժառանգորդը, սակայն կարեւորն այն է, որ դրանով հանդերձ, նա նշում է ոչ թե Մլեհի անունը, ինչը բնական կլիներ, քանի որ վերջինս դեռ ողջ էր, այլ Ստեփանեինը, ինչը կարող է ունենալ միայնումիայն մեկ բացատրություն. նա ավագն էր:

²⁵ Rüdiger-Collenberg, The Rupenides, I (Rup.). Ռուդ-Կոլենբերգը նույնիսկ փորձել է ճշտել նրանց ծննդյան եւ մահվան թվականները՝ Կոստանդին (ծն. անհայտ – մահ. 1138 թ.), Ստեփանե (ծն. նախքան 1110 թ. – մահ. 1165 թ.), Մլեհ (ծն. նախքան 1120 թ. – մահ. 1175 թ.), Թորոս (ծն. շուրջ 1120 թ. – մահ. 1169 թ.), Ռուբեն (ծն. 1120 թ. հետո – մահ. 1141 թ.): Թերեւս ավելորդ չէ նշել նաեւ, որ Ղ. Ալիշանը Լետնի որդիներից «երիցագոյն» է համարում Ռուբենին, իսկ վերջինիս մահից հետո «երէց որդի» է անվանում Թորոսին. տե՛ս Ալիշան, Միսուան, էջ 51–52:

²⁶ Մովսէս Խորենացի, Պատմութիւն, էջ 29: Նվաճողի իրավունքն ավելի հստակ սահմանված է Ստեփանոս Օրբելյանի «Պատմութեան» մեջ. «Աշխարհս այս առմամբ սրոյ եւ ձեռին՝ սեպհական կոչի ժառանգութիւն» (Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն, հտ. 2, էջ 101), կամ՝ «Թրով առածն եւ ոսկւով զնածն միապէս հայրենիք են մարդոյ» (Անդ, էջ 150): Նվաճողի իրավունքի վերաբերյալ մի այլ վկայություն էլ գտնում ենք Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմա-

(601 ձն ղրվթխարտտոց փնզհտգղտոց ոսկոմվկ) «նտրեմոմ նսլոտ րզ նարնոմսոլ
րզ նարնգիվկի ղվկնոմոլոտ նոթոնոթ րզ նոտարոտն րոնեմոմ իսնզմվտ ժրոզթխարնոթ
նղոզմարվ ողորոնոտն ղվնզհտգղտոմնոլոմ ոթնոլ ...վկարզ ղվղոմոլոմ ղվն ժվկնմո հղոտիգսոլ
մով մոմննզ րզ ղոմոլոմ ոսմսթ ոլղ» (521 ձն ղրարոթարոշ արգոտոնմոթ րոնմոթ)
«նսվկիվկի նղոզմարվ նոզղզմոլոլ ղվնզմվտ ժրոզթխարնոթ րզ ժրոզթխարտոմ րոզ
-գր րզ հղոտիգսոլ րզ ոսմսթ վղարզ ղծվկնմո ղվկիզ» իսնզթղոմ նգտորոլ վզղոտի
-գսոլ րզ վոսմսթ ք ղգիղնղոտիոմզի մղոնթխարոմոլոմ ղոմոլոմնսլ մս րոտ րոսմնողոզ
-մո ղզ տոտի ոմիզմզղո ոգոնմո ղվնզհտգղտոց ոսկոմվկ րզ ղվնզրզմլ ղոնմոթի
հոլ (525 ձն ղնաղջ փնմնոթմոտ րոսթզղ ոգտ ոմզի ոտ կթ 202 ձն ղրվթխար
-տոտն մարողտսլ փղրաթոլ րոմսոթ) մոմն ղոմոլոմնղոտիոմզի ղոմոլոմնոլոմ ղոմ
-ղվմնսլ ղզ րոսոիո իտոսիմզ ժղոմղ րզտզհրոլոմ րզ րոմղ ք րոսղոմլո ղզղոտիգսոլ
նգտմո Ժսվտղղ ք ոլլոտն սոզլ նարնզոլոտի նվոնտոսղնղոտոսկ մոսմսթ ղոմզ
-որոլ վիզր նվզղոզոտիմոթի ղվզղոտիգսոլ ոգոտոտիոլ րոսղնոտիոլ ղզ մզն զգր
մնզղմարմնն րոսոմն ոլղ ղոմղ ղգնիոմո իսնզթոս ղոտիղվն նղզմլ ղոթ րս
-զղոտ րոսղր մն ղղիւ նղոմղ րզ մն ղգնղոտ ղրոթ ղվոննզտոտ վնզղմոմննզ մնսն
վմոթմոտն ղոտիմնտոտնեմ մն ղզմնոմզմոմ ղզնմո մթսզ մ վիսնզմզի մղոնթխար
-սզղոմող մոսմսթ մնզ հոլ իսիտոտոտնղ րոնղզղոս ղզղմվկնղոլ սզլ ղոմոլոմ
-ոմոի մղվոսթ ք ղգոտն նղոմղ ղ րոտի մնտոն մորմոլ զոիճնզտո մորոլ րոզփ
-ոթնթ մղոն ղոտիոնղոտնրմ սոզլ նվոտր մզոմոի ոսղզղոսի ոզղոլոմիս ղգնոտն
ղզ ղիսոնղզղոմ ղոնթխարստոս րոտիոթոնոթ ղոտի կիղնղոլ րզ ղզղոտիգսոլ մս րոտ
նղզլ ք նսմոի մղոնթխարմոտոց ղոմղ ղվն րոննղոտնմզի հոլղնղոլ իսն ղոտի
-ոմնղոլոմզոտիոմ հոլ ղվոսմսթ րոննջն ղվն ժղոմղ ժրոթխարնոտնղոլ րզ ժրոթ
-րոտիղրոսոմոթ րոթոթխարնոթ րոսոտիոտ մն ղղիւ ղթ ոզմոտի նզմղ մորոլ
ոմզ մղոնթխարոմոլոմ վնզմոլոլ նղզմլ րոննղոտիոմզի ղվնղոս մզղնղոնթխարմսիոմ
-ոլ սոն վիգիո, ղվոմվկիվկի իսնղիղոտն սոթ ղիվննղոլ ոմն րզ րոսթիղնթոմ վ-11
ղվոսթ որոսի վոմոնզնջ րոնմնսնզթոմսլ նղզմլ ղգտն ղոտոտիոտ րզ նղոնթխարմզ
ղվն ղզփոտոսլ ժղոմղ մս ք ղն ղնղոլ րզ ղզղոտիգսոլ մնզղմոմննզ ետիոտ ոմղ ղզ
-նողոտիոմ վնզնզմսիւ ղզղոտիոմ, ղվոսմսթ նզիղննջոլ ղղիւ րոտ րոնղ վթ ղրոտն ք նոմ
27
: 427 1870 ղրվթխարնոտիոմնղոտնրմ փիսոլղ ղնղոմոլոլ «...»
րոզնոտո մն նարնզիվկի ղնմիմղ նսմով ղնոզղզմոլոլ վ ողն ղզղոտ ոմվեմոտ
նղոզմարվ ժրոզթխարմոլ ժղնջ ղվն ղոզմոտ մն փղարզ ղսմով ղոսլ ղոտոսթր վզի
ղնղզթխարմզի վ ղոտոսղն ղոտոտոսի կ ղոսմսթ ղսմոտն ղիւ» ղզր ղոմոլոմ

: մնզրոսարզոտն ղոտիոտոլոլոլ վնզրոսնղոտիոլոլ ղոտիոտոլոլ վնզ
-նոմննջ ետիոտ ոտղ տոտի ար վնզնոլ իրոստո նոտ քղվնջնղ ղղոնղվ րոտն
-ոտոտն վոսմսթ ոտոտ րոսնոսոլ ար ղզղովնղոլ րոտոզր վոտոտոննզ
նղոնղվմնսլ մրոսիոմով ղոմոլոմնոտիոլոլ ոտղ րոսնղոլ ոմղվնջի ղթզ
սս Ժրոթխարնոտն ոլոտ ոլոմլ րոտիոտղի վոնղոտոտն ղսլ զր ղվ ար

Սակայն եթե Թորոսի «լեզիտիմությունը» ներհաղափական տեսակետից միայն խոցելի էր, ապա նրա միջազգային իրավական կարգավիճակն ընդհանրապես կախված էր օդից: Բյուզանդացիների աչքում նա ընդամենը հերթական հայ ապստամբն էր, որը նորից փորձում էր սասանել Կիլիկիայում հազիվ վերահաստատված կայսերական գերիշխանությունը: Կոստանդնուպոլսի արհունիքը ոչ մի բանի առջեւ կանգ չառավ եւ միջոցների միջեւ խտրություն չդրեց՝ ամեն գնով զսպելու համար Թորոսի ապստամբությունը: Մանուել կայսրն այդ նպատակով Կիլիկիա ուղարկեց բազմաթիվ փորձված զորավարների, որոնք, սակայն, մեկը մյուսի ետեւից, խայտառակ պարտություն կրեցին հայկական զորքերից: Այնժամ կայսրը հաջորդաբար Թորոսի դեմ լարեց Իկոնիայի սուլթան Ռուֆնեդդին Մասուդին (1116–1156 թթ.) եւ Անտիոքի պրինց Ռեյնալդ Շատիյոնցուն (1153–1160 թթ.): Թորոսը կարողացավ հաջողությամբ դիմագրավել նաեւ այդ վտանգները, եւ դեռ ավելին, դաշինք կնքելով Ռեյնալդի հետ, վերջինիս դրդեց համատեղ ուժերով արշավել Կիպրոս եւ ավարի մատնել բյուզանդական այդ հարուստ նահանգը²⁸, ինչը տեղի ունեցավ 1157 թվականին²⁹: Ըստ երեւոյթին, այս աննախադեպ հանդգնությունն էր, որ վերջնականապես լցրեց Մանուելի համբերության բաժակը, եւ 1158 թվականին, իր հոր օրինակով, հսկայական բանակի զլուխ անցած, նա արշավեց դեպի Կիլիկիա եւ Անտիոք³⁰:

Մխիթար Այրիվանեցին էլ, իր հերթին, Ստեփանեին ընդգրկում է Կիլիկիո իշխանների գավազանացանկում. տե՛ս Մխիթար Այրիվանեցի, Պատմութիւն, էջ 16:

²⁸ Այն մասին, որ կիպրական արշավանքը տեղի է ունեցել Թորոսի նախաձեռնությամբ, վկայում են Գրիգոր Երեցը եւ Սմբատ Սպարապետը. տե՛ս Մատթէոս Ուռայեցի, Ժամանակագրութիւն, էջ 418; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 98; Վենետիկ, էջ 176. *հմմտ. նաեւ՝ Chalandon, Les Comnène, II, p. 436–438; Dédéyan, Les Arméniens à Chypre, p. 125. Իսկ Վիլհելմ Տյուրացին պարզապես գրում է, որ Ռեյնալդ Շատիյոնցին այդ արշավանքը ձեռնարկել էր «անպարկեշտ մարդկանց խորհրդով».* տե՛ս Guillaume de Tyr, t. 2, p. 208, *ինչպես նաեւ՝ Régnier-Bohler, Croisades, p. 646.*

²⁹ Michel le Syrien, Chronique, III, p. 315; Barhebraeus, Chronicon, p. 325.

³⁰ Մանուել կայսեր 1158/9 թ. արեւելյան արշավանքի մասին մանրամասն տե՛ս Chalandon, Les Comnène, II, p. 441–455. *Տե՛ս նաեւ՝ Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 180–191:*

Իրադարձությունների ամենահեղինակավոր ժամանակակիցը՝ խաչակրաց պատմիչ Վիլհելմ Տյուրացին, Մանուելի արշավանքի գլխավոր պատճառ է համարում այն, որ Քորոսն այնքան էր հզորացել, որ լեռնային շրջաններից բացի, զենքի ուժով գրավել էր նաև համարյա ողջ Դաշտային Կիլիկիան՝ Տարսոն, Անավարզա, Մսիս, Ադանա եւ Սիս ֆաղաֆներով, որտեղից վճռորոշ բյուզանդական կառավարիչներին, դարձել էր նրանց տերը. եւ միայն այս իրողությունն արձանագրելուց հետո է, որ որպես արշավանքի երկրորդական պատճառ, Տյուրացին նշում է կիպրական արկածախնդրությունը³¹:

Առանց լուրջ դժվարությունների վերանվաճելով Դաշտային Կիլիկիան, կայսրը ճամբար խփեց Մսիսի մոտակայքում: Անտիոքի պրինցըր, հաղթահարելով իր գոռոգությունը, գլխիկոր եկավ նրա մոտ եւ, բազմաթիվ նվաստացումների ենթարկվելուց հետո, ճանաչեց Բյուզանդիայի գերիշխանությունը, միաժամանակ պարտավորվելով գորհեր տրամադրել կայսեր բանակին ու վերականգնել Անտիոքի հունական պատրիարքությունը: Կիլիկիա ժամանած Երուսաղեմի թագավոր Բալդուին III-ի (1143–1162 թթ.) միջնորդությամբ՝ Մանուելը ներեց նաև իր լեռներին ապաստանած Քորոսին, որը գալով Մսիս, նույնպես ցուցադրական նվաստացումների ենթարկվելուց հետո, հնազանդություն հայտնեց Բյուզանդիային: Սույն գրքի առաջին հատորում մենք հանգամանորեն պարզաբանեցինք, թե ինչու Մանուել կայսրը նախընտրեց հաշտվել Քորոսի հետ եւ ոչ թե գերել նրան, ինչպես 1138 թվականին իր հայրը՝ Հովհաննես Կոմնենոսը, վարվել էր վերջինիս հոր՝ Լեոն Ա իշխանի հետ³²: Այստեղ հարկ ենք համարում շեշտել միայն հետևյալը. 1158 թվականի Կիլիկյան Հայաստանն այլևս 1138-ի թույլ իշխանությունը չէր, որին կարելի էր հեշտությամբ ծնկի բերել: Քորոսին հաջողվել էր ստեղծել հոծ հայկական բնակչություն ունեցող մի կայացած պետություն, որի լեռնային շրջանների նվաճումն արդեն կապված էր մեծ դժվարությունների հետ³³, մանավանդ որ Մանուել կայսրը, ինչպես պիտի ցույց

³¹ Guillaume de Tyr, t. 2, p. 231. նաև՝ Régner-Bohler, Croisades, p. 651.

³² Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 443–444:

³³ Ինչպես Վիլհելմ Տյուրացին է գրում, «չափազանց դժվար էր գրավել լեռներում

տային հետագա իրադարձությունները, դրա համար ժամանակ չունեք: 1159 թ. ապրիլի 12-ին կայսրը հանդիսավոր շէրթով մտավ Անտիոք, եւ ութ օր մնալով այդ քաղաքում, ամեն ֆայլափոխի ձգտեց ցուցադրել վեհապետի իր իրավունքներն ու մեծահոգությունը: Այնուհետեւ նա ձեռագրեց, թե մտադիր է գրավել Հալեպը, բայց անմիջապես բանակցությունների մեջ մտավ Նուրեդդինի հետ, եւ բավարարվելով միայն այդ քաղաքում պահվող ֆրիստոնյա գերիների ազատ արձակմամբ, շուտափույթ կերպով վերադարձավ իր երկիրը, պատրվակ բռնելով, թե իբր այնտեղ իր դեմ խոտվություն էր ծագել: Մանուելի անփառունակ նահանջը խոր հիասթափություն պատճառեց նրա հակամահմեդական արշավանքի հետ մեծ հույսեր կապող արեւելյան ֆրիստոնյաներին³⁴: Սակայն, ինչպես նկատում է Ֆ. Շալանդոնը, Մանուելը բոլորովին մտադիր էլ չէր ծնկի բերել Զանգիդյան հզոր սուլթանին, քանի որ դա կխախտեր մահմեդական Սիրիայի եւ խաչակրաց պետությունների ուժերի հարաբերակցությունը եւ վերջիններիս ավելի անկախ կդարձներ բյուզանդական կայսրությունից³⁵:

Իր հնազանդության դիմաց Թորոսը Մանուել կայսեր կողմից արժանացավ սեբաստոս տիտղոսի³⁶, ինչի մասին վկայում են մի քանի հայկական աղբյուրներ, առաջին հերթին՝ Գրիգոր Երեցը³⁷: Այդ տիտղոսի բովանդակությանը մենք անդրադարձանք սույն գրքի «Թորոս Ա» ենթագլխում, մասնավորապես շեշտելով, որ դա հայ իշխանին ընդամենը միայն իրավունք էր տալիս որպես բյուզանդական պաշտոնյա կառավա-

գտնվող նրա բերդերը». Guillaume de Tyr, t. 2, p. 234.

³⁴ Ինչի պերճախոս վկայությունն է Գրիգոր Երեցի աշխատությունը. տե՛ս Մատթէոս Ուռայեցի, Ժամանակագրութիւն, էջ 419–423:

³⁵ Sté' Chalandon, Les Comnène, II, p. 455.

³⁶ Այդ տիտղոսի մասին մանրամասն տե՛ս Bréhier, Les Institutions. p. 138–143.

³⁷ Մատթէոս Ուռայեցի, Ժամանակագրութիւն, էջ 409, 411, 428; Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, էջ 86; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 99; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 179, 186; Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 105, 106; Ի դեպ, Ա. Կաժդանը եւ Վ. Շանդրովսկայան շեն բացառում, որ Թորոս Ա-ի անունով հայտնի կնիքը, որի վրա նույնպես դրոշմված է այդ տիտղոսը, կարող է պատկանած լինել Թորոս Բ-ին. տե՛ս Каждан, Заметки, с. 95; Шандровская, К истории, с. 40.

րել կայսրությանը պատկանող տարածքը³⁸: Գրիգոր Երեցը մեկ անգամ էլ Քորոսին օտտում է «Պանսեաստիոս» տիտղոսով³⁹, ինչը Ա. Բոզոյանի ենթադրությամբ՝ «կիլիկյան պայմաններում պետք է նշանակեր Կիլիկիայի բոլոր սեբաստոսներից առաջին, իսկ այդ պատվանվան կրողը՝ կառավարեր երկրամասը»⁴⁰: Սա, կարծես թե, հաստատվում է Բարհեբրեոսի (իմա՝ Միֆայել Ասորու) եւ Սմբատ Սպարապետի տվյալներով: Ըստ առաջինի՝ Մանուելը Քորոսին «ծովափնյա բոլոր հունական ֆաղաֆների գորահրամանատար (rab hayla) էր նշանակել»⁴¹, իսկ ըստ երկրորդի՝ «Քորոս... անուանեցաւ Սեբաստոս Մսիսայ եւ Անաւարզոյ եւ Վահկային»⁴²: Այնուամենայնիվ, մեզ թվում է, որ Մսիսի հաշտության պայմանագրով կայսրը Քորոսին շնորհել էր միայն Լեոնային Կիլիկիայի կառավարման իրավունքը: Թեև ուշ շրջանի հայկական աղբյուրներից մեկը նույնպես տեղեկացնում է, որ Մանուելը ոսկեկնիք կայսերական հրովարտակով («ձեռնագրով եւ ոսկի վուլով») հայ իշխանին էր հանձնել Կիլիկիան⁴³, բայց երկու այլ աղբյուրներ ճշտում են, որ կայսրը Քորոսից պահանջել էր Բյուզանդիային վերադարձնել անգամ Անավարզան, նրա ձեռքում թողնելով միայն «զայլ երկիրն»⁴⁴, ինչի տակ կարելի է հասկանալ միայնումիայն Լեոնային Կիլիկիան: Սմբատի երկու

³⁸ Վիլհելմ Տյուրացին, ըստ երեւոյթին, տեղյակ չլինելով հայ-բյուզանդական փոխհարաբերությունների այս նրբությանը եւ հավատարիմ արեւմտյան ավատատիրական պատկերացումներին, պարզապես նշում է, որ Քորոսն իրեն կայսեր վասալ (lige) էր ճանաչել. Guillaume de Tyr, t. 2, p. 234.

³⁹ Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 423:

⁴⁰ Բոզոյան, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 203:

⁴¹ Michel le Syrien, Chronique, III, p. 316; Barhebraeus, Chronicon, p. 326.

⁴² Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 99: Այս տեղեկությունը բացակայում է Սմբատի ժամանակագրության մյուս՝ ավելի ընդարձակ խմբագրության մեջ. տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 186:

⁴³ «Ընդ որոյ քաջութիւնն եւ առատամտութիւնն զարմացեալ կոչեաց զնա իւր յորդեգրութիւնն, եւ ետ զԿիլիկիեա ձեռնագրով եւ ոսկի վուլով Քորոսի»։ Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 585:

⁴⁴ Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 205; Հեթում Կոռնիկոսցի, Պատմութիւն, էջ 102:

խմբագրություններն էլ միանշանակ ընդգծում են, որ 1160-ական թթ. կեսերին «Յաղթողն Թորոս որդին Լեւոնի, կայր փառութամբ ու պահէր զլեւոնակողմն Տաւրոսի, որոց տիրեալ էր»⁴⁵ :

Թեեւ բյուզանդական պաշտոնյայի բարձր կոչումը, միգուցե, ինչ-որ չափով բավարարում էր Թորոսի պատվասիրությունը եւ որոշ «լեզիտիմություն» հաղորդում նրա իշխանությանը, սակայն, անշուշտ, ամենեւին դա չէր նրա փառաբանական երազանքը, եւ հոգու խորհում նա փայփայում էր շատ ավելի վեհ մի նպատակ, որ էր՝ հայկական պետականության լիակատար անկախությունը: Այդ նպատակի իրականացումը փորձությունների չենթարկելու խոր գիտակցությունն էր նաեւ, որ Թորոսին ստիպեց դեռեւս իր կենդանության օրոք կարգադրել իր հաջորդի գահաժառանգության հետ կապված խնդիրները եւ հանգիստ հրաժեշտ տալ այս անցավոր աշխարհին⁴⁶ :

⁴⁵ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 186: Համարյա նույնը տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 99:

⁴⁶ Թերեւս ավելորդ չէ նշել, որ ըստ որոշ աղբյուրների՝ Թորոսը մահից առաջ վանական կամ կրոնավոր էր կարգվել (Barhebraeus, Chronicon, p. 334; Bar Hebraeus, Chronography, p. 292. Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 455; 1871, էջ 454; Հեթում Թագաւոր, Պատմութիւն, էջ 75; Հեթում Նղիրցի, Պատմութիւն, էջ 538): Եթե սա համապատասխանում է իրականությանը, ինչը հավանական է, քանի որ այդ մասին վկայում է իրադարձությունների ժամանակակիցը՝ Միքայել Ասորին, ապա Թորոսը սկզբնավորողն է մի ավանդույթի, որին հետագայում պիտի հետեւեին նաեւ Հայոց այլ գահակալներ: Վահրամ Բաբունու եւ Հեթում արքայորդու ճաշոցի հիշատակագրի տվյալներով՝ Թորոսն, ուսյալ լինելով եւ «տեղեակ գոլով ամենայն իմաստասիրական արհեստից», նաեւ լուծմունքներ է գրել, որոնք, այդ հեղինակների հավաստմամբ՝ պահպանվել են մինչեւ իրենց ժամանակները, այսինքն՝ մինչեւ XIII դ. վերջին քառորդը. տե՛ս Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 209; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 585:

ՌՈՒԲԵՆ Բ (1169–1170 ԹԹ.) ԵՒ ՄԼԵՀ (1170–1175 ԹԹ.)

Զգալի թվով աղբյուրների վկայությամբ՝ Թորոսը Հայոց իշխանության ժառանգորդ էր կարգել իր որդուն, որը, դատելով նրան հատկացված «փոքր տղա»¹, «տղայ»², «մատաղ որդի»³, «տղայ մի փոքրիկ»⁴ եւ «յոյժ տղայ»⁵ մակդիրներից, պետք է չափազանց փոքրահասակ, եթե չասենք մանուկ եղած լինեւ: Սակայն այդ աղբյուրներից միայն հինգն են, որ հիշատակում են նաեւ նրա անունը: Սմբատ Սպարապետի Տարեգրի երկու խմբագրությունները, Ներսէս Պալիանենցի «Իշխանութիւնք եւ թագաւորք Հայոց» գավազանացանկը եւ «Պատմութիւն սրբոց հարցն մերոց» աշխատությունը Թորոսի որդուն կոչում են Ռուբեն⁶, իսկ Հեթում Կոռիկոսցուն վերագրվող «Պատմութիւնը»՝ Լեւոն⁷: Նկատի ունենալով Սմբատի ժամանակագրության համեմատական հնությունն ու արժանահավատությունը, արդի հետազոտողներն անվերապահորեն նախապատվությունը տալիս են նրա առաջարկած տարբերակին: Այդ

¹ Barhebraeus, Chronicon, p. 334; Bar Hebraeus, Chronography, p. 292.

² Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 100; Վենետիկ, էջ 189:

³ Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 210; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 535:

⁴ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 455:

⁵ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1871, էջ 454:

⁶ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 100; Վենետիկ, էջ 189; Ներսէս Պալիանենց, Իշխանութիւնք, էջ 205; Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 519:

⁷ Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 102: Հետազոտողներից միայն Վ. Հակոբյանը եւ Կ. Մուխաֆյանն են, որ ավելի հավանական են համարում Հեթում Կոռիկոսցու տվյալը. տե՛ս Անդ, էջ 112 (ծ. 19); Mutafian, La genèse, p. 158.

դեպքում Հեթում Կոռիկոսցու տեղեկությունը մեկնաբանելի է դառնում որպես հեղինակի իրավագիտակցության արտահայտություն, հիմնված այն տրամաբանության վրա, որ Թորոսին հաջորդող որդին պետք է լիներ նրա անդրանիկ զավակը, եւ, հետեւաբար, կրէր պապի անունը:

Մանուկ պայազատին հիշատակող միեւնոյն աղբյուրների տվյալներով՝ Թորոսը նրա խնամակալ էր նշանակել Թումաս անունով մի իշխանի, որին եւ հանձնարարել էր երկրի կառավարումը: Բնագրերում Թումասն օժտված է պայլ⁸, պարոն եւ պայլ⁹, դաստիարակ¹⁰, մանկակալ¹¹ եւ կառավարիչ (mdabrānā)¹² տիտղոսներով: Իրադարձություններին բավականաչափ հանգամանորեն անդրադարձած Վիլհելմ Տյուրացուն հայտնի չեն Թորոսի՝ որդի ունենալու եւ Թումասի՝ խնամակալ լինելու հանգամանքները. նա պարզապես գրում է, որ Թորոսի մահից քիչ անց Թումասը երկրի մարդկանց կամֆով ու հրավերով եկել եւ խաղաղությամբ տիրել է Կիլիկիային¹³: Իսկ Միֆայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության խմբագիրներից մեկն, ընդհակառակը, գիտե Թորոսի որդուն, բայց անտեղյակ է Թումասի գոյությանը. ըստ նրա՝ իշխանությունը փոխանցելով իր որդուն, Թորոսը վերջինիս հանձնել է իշխանների խնամֆին՝ «յանձնելով զնա յիշխանսն»¹⁴: Այսպիսով, Կիլիկյան իրականության մեջ առաջին անգամ մենք հանդիպում ենք գահաժառանգության պրակտիկայում դրսեւորված մի կարեւոր նորամուծության, այն է՝ խնամակալության ինստիտուտին:

Սակայն նախքան այդ խնդրի բնությանն անցնելը հարկ ենք համարում անդրադառնալ որոշ աղբյուրագիտական հարցերի, ինչը, մեր կարծի-

⁸ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 100; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 585; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 102: Թումասի մասին մանրամասն տե՛ս Mutafian, La genèse, p. 157–158.*

⁹ *Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 210:*

¹⁰ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 189:*

¹¹ *Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1871, էջ 454:*

¹² *Bar Hebraeus, Chronography, p. 292; Barhebraeus, Chronicon, p. 334.*

¹³ *Guillaume de Tyr, t. 2, p. 352.*

¹⁴ *Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 455:*

հով, անհրաժեշտ է ինչպես այդ ինստիտուտի, այնպես էլ նրա հետ կապված պատմական իրադարձությունների իմաստավորման տեսակետից: Հետազոտողի համար մեծ բարեբախտություն է, որ խնդրո առարկա իրադարձությունների մասին վկայում են դրանց ժամանակակիցն ու ականատեսը հանդիսացող այնպիսի նշանավոր պատմիչներ, ինչպիսիք են՝ Վիլհելմ Տյուրացին (մահ. 1185 թ.), Միխայել Ասորի պատրիարքը (1166–1199 թթ.) եւ Իբն ալ-Ասիրը (1160–1233 թթ.): Թորոս Բ-ին հաջորդած երկու հայ իշխանների վերաբերյալ նրանք հաղորդում են բազմաթիվ եւ կարեւորագույն տեղեկություններ, որոնք ընդհանրապես հայտնի չեն հայ ժամանակագիրներին: Գահաժառանգության իրավունքին վերաբերող տվյալների եզակիության առումով, սակայն, հիշյալ աղբյուրների շարքում առանձնանում է Միխայել Ասորու ժամանակագրությունը: Մենք նկատի ունենք հատկապես վերջինիս հատվածներից մեկը, որը թեև բացակայում է Միխայելի երկի հրատարակված ասոբերեն բնագրում¹⁵, սակայն պահպանվել է Բարհեբրեոսի ժամանակագրության մեջ: Այս հանգամանքը չպետք է տարակուսանք առաջացնի, քանզի հայտնի է, որ մինչև 1195 թվականն ընդգրկող իրադարձությունների շարադրանքը Բարհեբրեոսը համարյա բառացի փոխել է Միխայել Ասորուց¹⁶: Հնարավոր կասկածները փարատելու համար միանգամից ավելացնենք, որ այդ հատվածը պահպանվել է նաև Միխայելի ժամանակագրության հայերեն թարգմանության երկու խմբագրություններում¹⁷: Հաշվի առնելով խնդրո առարկա հատվածի կարեւորությունը, ստորեւ մենք այն ներկայացնում ենք ուղղակի ասոբերենից կատարված մեր թարգմանությամբ.

«1479 թվականի¹⁸ Քանուն¹⁹ ամսին մեռավ Կիլիկիայի տիրակալ Թորոսը, որն իր մահվան ժամանակ արդեն վանական էր:

¹⁵ Michel le Syrien, Chronique, t. IV.

¹⁶ Պատահական չէ, որ Ժ.-Բ. Շարոն Բարհեբրեոսի այդ հատվածն ընդգրկել է Միխայել Ասորու ժամանակագրության իր ֆրանսերեն թարգմանության մեջ. տես՝ Michel le Syrien, Chronique, III, p. 331.

¹⁷ Միխայել Ասորի, ժամանակագրութիւն 1870, էջ 455; 1871, էջ 454–455:

¹⁸ Թվագրված է Սելեւկյան կամ Հունաց թվականով (= 1168 թ.):

¹⁹ Դեկտեմբեր:

Նա կարգադրեց, որ իր որդին՝ մի փոքր տղա, զբաղեցնի իր տեղը, եւ իր մորաբոնոջ որդի Քումասն էլ լինի նրա կառավարիչը: Իսկ իր եղբայր Մլենին լիովին զրկեց ժառանգությունից: Այնժամ վերջինս, գայրացած, գնաց Նուրեդդինի մոտ եւ, նրանից թուրքական մի զորախումբ ստանալով, մտավ Կիլիկիա: Նա գերեց տասնվեց հազար տղաների ու աղջիկների, տղամարդկանց, կանանց, քահանաների, վանականների ու եպիսկոպոսների եւ, տանելով Հալեպ, ծախեց վանառականներին ու դրանց հասույթով վարձատրեց իրեն միացած թուրքերին: Այնուհետեւ հայերը նրան կանչել տվեցին իրենց մոտ եւ նրան հանձնեցին երկրի կեսը: Նա երդվեց նրանց առջեւ, որ մյուս կեսը մնալու է մանկանը: Բայց հետո խախտեց երդումը եւ տիրեց ողջ երկրին, նրա բերդերի ու քաղաքների հետ մեկտեղ: Եւ բազմաթիվ եպիսկոպոսների ու երեւելիների աչքեր փորեց, կտրեց նրանց ձեռքերն ու ոտները, ոմանց էլ ողջ-ողջ մորթագերծ անելով, նետեց զազանների առջեւ»²⁰:

Այս հատվածին մենք դեռ բազմիցս առիթ կունենանք անդրադառնալու, իսկ այժմ ավելի մանրամասն՝ խնամակալության ինստիտուտի մասին: Եթե այն, ինչպես նշվեց, կիլիկյան իրականության դեպքում նորամուծություն էր, ապա լատին Արեւելքում կիրառության մեջ էր արդեն շուրջ յոթանասուն տարի՝ սովորութային իրավունքի հիման վրա ձեւավորված հստակ կանոնակարգով: Խնամակալ կարգվում էր երեք պարագայում ա. երբ գահի ժառանգորդն անչափահաս էր, բ. երբ նախորդ գահակալի մահվան պատճառով գահը թափուր էր մնացել, եւ գ. երբ պետության օրինական տիրակալը գերության մեջ էր: Խնամակալի նշանակումը կատարվում էր կամ նախորդ գահակալի կամով, կամ էլ, ավելի հաճախ, պետության Գերագույն ատյանի՝ բարոնների ժողովի որոշմամբ: Որպես կանոն՝ խնամակալի պաշտոնն զբաղեցնում էր մահացած կամ գերության մեջ գտնվող գահակալի, կամ էլ անչափահաս գահաժառանգի մերձավորագույն ազ-

²⁰ Barhebraeus, Chronicon, p. 334; Bar Hebraeus, Chronography, p. 292. *Sb'u Isah'i*, Michel le Syrien, Chronique, III, p. 331.

գականը:²¹ Խնամակալը ոչ միայն պարտավոր էր ապահովել իր խնամֆին հանձնված գահաժառանգի դաստիարակությունն ու անվտանգությունը, այլև իրավասու էր լիարժեք կերպով տնօրինելու պետության գործերը: Կարծում ենք, ավելորդ չէ հիշատակել սույն կանոնակարգի կիրառության մի շարք կոնկրետ դեպքեր.

— 1101–1103 թվականներին, Անտիոքի պրինց Բոհեմունդ I-ի գերության ժամանակ, բարոնների ժողովի որոշմամբ իշխանապետության խնամակալ նշանակվեց վերջինիս ֆեոդոլի Տանկրեդը.

— 1119–1126 թվականներին, երբ պրինց Ռոջեր Սալերնացու մահից հետո Անտիոքի գահը թափուր էր մնացել, բարոնների կողմից իշխանապետության խնամակալ կարգվեց Երուսաղեմի թագավոր Բալդուին II-ը.

— 1130–1131 թվականներին Բալդուին II-ը նորից ստանձնեց իշխանապետության խնամակալությունը, այս անգամ արդեն իր թոռան՝ Կոնստանսի անունից, որն Անտիոքի գահի անչափահաս ժառանգորդն էր.

— 1143 թվականին Երուսաղեմի Գերագույն ատյանը տասներեֆամյա թագավոր Բալդուին III-ի խնամակալ նանաչեց նրա մորը՝ Մելիսենդին.

— 1152-ին, նույն կերպ, Տրիպոլիի կոմսության Գերագույն ատյանի որոշմամբ, տասներեֆամյա Ռայմոնդ III-ի խնամակալ կարգվեց նրա մայր Հոդիերնան.

— 1164–1172 թվականներին, Ռայմոնդ III-ի գերության ժամանակ, Տրիպոլիի կոմսության խնամակալությունը, բարոնների ժողովի որոշմամբ եւ մերձավոր ազգականի իրավունքով, ստանձնեց Երուսաղեմի թագավոր Ամորի I-ը.

— 1174-ին դերերը փոխվեցին, եւ այս անգամ արդեն Տրիպոլիի կոմս Ռայմոնդ III-ն էր, որ ստանձնեց Երուսաղեմի տասներեֆամյա թագավոր Բալդուին IV-ի խնամակալությունը, վերջինիս մերձավորագույն ազգականը լինելու իրավունքով.

— 1183 թվականին, զգալով իր մոտալուտ վախճանը, Երուսաղեմի թագավոր Բալդուին IV-ը թագադրեց իր մանկահասակ ֆեոդոն՝ Բալդուին V-ին, նրա խնամակալ կարգելով նույն Ռայմոնդ III-ին:

Վ. Լանգլուայի եւ Է. Դյուլորիեի ժամանակներից ի վեր համընդհա-

²¹ Հմմտ. Grousset, Histoire, II, p. 612–614.

նուր տարածում գտած տեսակետի համաձայն՝ արեւմտյան իրավա-ֆա-
 դաբական կառույցներն ու վարչա-կառավարական գործակալություն-
 ները Աստրիխի խաչակրաց պետությունների խողովակով Կիլիկիայի
 պետական համակարգ են թափանցել Լեոն Բ (1) թագավորի օրոք
 (1198–1219 թթ.): Այդ մոտեցման լավագույն ձեւակերպումը տվել է
 Հովհաննես Դարդելը դեռեւս XIV դարում. «Հրեշտակս արձակեաց պա-
 րոն Լեոն առ իշխանն Անտիոքայ, խնդրելով ի նմանէ զի առաքեսցէ առ
 նա զսահմանադրութիւնս, հաստատութիւնս եւ զկարգս կանոնաց, որով
 վարէին յերկիրն Անտիոքայ, զի կամ էր նմա վարել նոքումք եւ աշխար-
 հին Հայաստանեայց. եւ արար նա զայն յօժար կամօք»²²: Սակայն, ինչ-
 պես տարածված տեսակետին իրավացիորեն առարկում է Ս. Բոռնագ-
 յանը²³, Կիլիկիայի պետական կարգի բարեփոխումը շպետք է որպէս
 միանգամայն ակտ դիտել. այն ըստ երեւոյթին, եղել է երկարատեւ գործ-
 ընթաց, եւ նրա առանձին տարրեր ի հայտ են եկել դեռեւս կիլիկյան պե-
 տականության իշխանական շրջանում: Դրանցից մեկն է, ահա, խնամա-
 կալության գործակալությունը, որն, ինչպէս տեսանք, XII դարում կարե-
 տօր դեր է խաղացել լատինական Արեւելքում: Նախադեպերի վերը կա-
 տարված թերեւս տաղտկալի թվարկման նպատակն էր ցույց տալ, որ
 դրանք չէին կարող անհայտ լինել Ռուբինյան իշխաններին, որոնք բազ-
 մաթիվ ամուսնություններով կապված լինելով խաչակրաց պետություն-
 ների ազնվականական դասի ներկայացուցիչների հետ, անշուշտ, ծա-
 նոթ պետք է լինեին մանավանդ գահաժառանգությանն առնչվող իրա-
 վահարաբերությունների նրբություններին: Ըստ այդմ, խնամակալի գոր-
 ծակալության եւ նրա իրավասությունների կիրարկման կարգի փոխա-
 ումը Թորոս Բ-ի կողմից միանգամայն բնական պետք է համարել²⁴:

Սա այն դեպքերից է, երբ անչափահաս ժառանգորդի խնամակալը
 նշանակվում է ոչ թե բարոնների ժողովի որոշմամբ, այլ նախորդ գա-
 հակալի կամով: Մեր կարծիքով՝ հատուկ ուշադրության է արժանի

²² Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 13:

²³ Բոռնագյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները, էջ 49:

²⁴ Կիլիկյան Հայաստանում կիրարկված խնամակալության գործակալության մա-
 սին մանրամասն տե՛ս Բոռնագյան, Անդ, էջ 67–70:

խնամակալի նշանակման կապակցությամբ պատմական սկզբնաղբյուրների օգտագործած տիպային բանաձեւը: Դրանում մենք կհամոզվենք սույն աշխատության հետագա շարադրանքում, իսկ առայժմ ներկայացնենք աղբյուրների համապատասխան ձեւակերպումները.

— «(Թորոսը) կարգադրեց, որ իր որդին՝ մի փոքր տղա, զբաղեցնի իր տեղը, եւ իր մորաքրոջ որդի Թումասն էլ լինի նրա կառավարիչը» (Միխայել Ասորի)²⁵.

— «Իսկ ի մեռանիլն եղ պարոն Թորոս պայլ տղային իւրոյ, որ կոչէրն Ռուբէն, զիշխանն պարոն Թումաս, որ կալաւ զաշխարհն պարոն Թորոսին տարի մի» (Սմբատ Սպարապետ)²⁶.

— «Իսկ ի ժամ վախճանին դնէր դաստիարակ տղային իւրոյ Ռուբինի՝ զիշխանն Թումաս, որ կալաւ զաշխարհն Թորոսի զամ մի» (Սմբատ, մյուս իմբագրություն)²⁷.

— «Սակայն Թորոսն որ վախճանեալ, / Մատաղ որդի մի իւր թողեալ, / Ջնա եւ զերկիրս ապաստանեալ, / Յայն որ պարոն եւ պայլ եղեալ, / Որ եւ աներ նմին եղեալ, / Անուն Թումաս վերածայնեալ» (Վահրամ Բաբունի)²⁸.

— «Եւ Թորոսի մնացեալ որդի մի Լետն, զոր վստահացեալ էր Թորոս յաներն իւր Թումաս, որ էր յԱնտիոքա, նոյնպէս եւ յանձին արարեալ էր նմա զպայլութիւն աշխարհին» (Հեթում Կոռիկոսցի)²⁹.

— «Եւ երկիր իշխանութեան իւրոյ եւ զմատաղ որդին իւր վստահացաւ յաներն իւր՝ Թումաս անուն, իշխան մեծ, զոր եւ պայլ իսկ եղ Հայոց՝ յետ իւր» (Հեթում արեւայորդու Ճաշոց)³⁰.

— «(Թորոս) եթող տղայ մի փոքրիկ՝ յանձնելով զնա յիշխանսն» (Միխայել Ասորու հայերեն թարգմանություն)³¹.

²⁵ Barhebraeus, Chronicon, p. 334; Bar Hebraeus, Chronography, p. 292. *Տե՛ս նաեւ՝ Michel le Syrien, Chronique, III, p. 331.*

²⁶ Սմբատ, *Տարեգիրք, Փարիզ, էջ 100:*

²⁷ Սմբատ, *Տարեգիրք, Վենետիկ, էջ 189:*

²⁸ Վահրամ Բաբունի, *Ոտանաւոր պատմութիւն, էջ 210:*

²⁹ Հակոբյան, *Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 102:*

³⁰ Մաթեոսյան, *ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 585:*

³¹ Միխայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1870, էջ 455:*

— «Թորոս ետ զիշխանութիւնն որդոյ իւրոյ յոյժ տղայոյ, եւ յանձնեաց զնա յիշխանսն» (Միխայելի հայերէն թարգմանութեան մյուս խմբագրութիւն) ³²:

Եթէ փորձենք պատմողական բնույթի այս ձեակերպումները վերածել ընդհանուր բանաձեւի, ապա կստանանք մոտավորապէս հետեւյալը. գաճաճառանգի եւ երկրի հանձնումը (վստահումը, ապաստանումը) խնամակալին, այն է՝ վերջինիս կողմից խնամարկյալի դաստիարակութեան եւ երկրի կառավարման իրավասութեան ստանձնումը:

Ինչպէս նշեցինք, Ասորիքի խաչակրաց պետութիւններում, որպէս կանոն, խնամակալ էր նշանակվում անշափահաս գաճաճառանգի մերձավորագոյն ազգականը, ուստի Թորոս Բ-ի խնդրո առարկա կարգադրութիւնը քննելի է նաեւ այս առումով: Ուշ շրջանի հայկական աղբյուրների տվյալներով՝ Թումասը Թորոս Բ-ի աներն էր ³³, ինչը չի կարող ճիշտ լինել, քանի որ հայտնի է, որ վերջինիս աները կա՛մ Ռապանի ֆրանկ իշխան Սիմոնն էր ³⁴, կա՛մ է՛ եղեսիայի կոմս Ժոսլին II-ը ³⁵: Բարհեբրեոսը, որի աղբյուրն, ինչպէս նշվեց, Միխայել Ասորին է, Թումասին համարում է Թորոսի «մորաբոջ որդին» (bar halteh) ³⁶, թեւս այստեղ ասորերէն նախադասութեան կառուցվածքն այնպիսին է, որ կարելի է հասկանալ նաեւ «Թորոսի որդու մորաբոջ որդին»: Իսկ Վիլհելմ Տյուրացին Թումասին կոչում է Մլեհի (նույնն է՝ Թորոսի) «զարմիկներից մէկը, նրա բոջ որդին» (uns suens niés, filz de sa sereur), ավելացնելով նաեւ, որ վերջինս «լատին էր» (cil estoit latins) ³⁷: Նկատի ունենալով, որ Թորոսի եւ Մլեհի

³² Միխայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1871*, էջ 454:

³³ Վահրամ Բաբունի, *Ոտանաւոր պատմութիւն*, էջ 210; *Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն*, էջ 102; *Հեթում արքայորդի, Ճաշոց*, էջ 585; *Հակոբ Սեւցի, Պատմութիւն*, էջ 121: Մի այլ տեղում, սակայն, *Հակոբ Սեւցին Թումասին համարում է Թորոսի աներձագը, գրելով. «Պարոն Թորոսն... էառ ի յԱնտիոքայ զքոյրն Թումասի» (Անդ):*

³⁴ Michel le Syrien, *Chronique*, III, p. 281–282; IV, p. 641.

³⁵ Միխայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1871*, էջ 423. *Գմմտ. Rüdtt-Collenberg, The Rupenides*, I (Rup.).

³⁶ Barhebraeus, *Chronicon*, p. 334; *Bar Hebraeus, Chronography*, p. 292. *Տե՛ս նաեւ՝ Michel le Syrien, Chronique*, III, p. 331.

³⁷ Guillaume de Tyr, t. 2, p. 352.

ավագ Բուրբուրից մեկն ամուսնացել էր անտիոքացի մի ֆրանկ ասպետի հետ³⁸, Ժ. Տետեյանը կարծում է, որ Թումասը պետք է ծնված լիներ այդ ամուսնությունից³⁹: Սա մեզ հավանական է թվում, քանի որ նախ՝ անանուն մի պատմության տվյալներով՝ Թումասը Մլեհի Բրոջ որդին էր⁴⁰, եւ երկրորդ՝ որոշ աղբյուրների տեղեկությունների համաձայն՝ Թումասը Ռուբեն Բ-ի խնամակալությունն ստանձնելու համար հրավիրվել էր Անտիոքից⁴¹, իսկ Մլեհի կողմից հավաժվելուց հետո ապաստան էր գտել այդ նույն ֆաղափում⁴²: Սակայն խնդիրն այն է, որ Ռուբեն Բ-ի հետ ունեցած ցանկացած ազգակցական կապի պարագայում մորական պապ, մեծմոր Բեռորդի, մորաբուռ կամ հորաբուռ որդի, միեւնույն է, Թումասը նրա ամենամերձավոր արյունակիցը չէր, քանի որ...

Քանի որ դեռ ողջ էր Մլեհը՝ Հայոց գահաժառանգի հիրավի մերձավորագույն ազգականը, նրա հարազատ հորեղբայրը: Սա նշանակում է, արդյոք, թե Թորոսն իր որոշմամբ խախտել էր խնամակալության իրավունքի նորմերը. օրենքի տառի տեսակետից՝ այո՛, իսկ ռզու տեսակետից՝ ո՛չ: Ո՛չ, քանզի 1160-ական թթ. կեսերին իր եղբոր դեմ ապստամբելու պատճառով Մլեհն օրենքից դուրս էր հայտարարված եւ արտաքսված Կիլիկիայից: Պատահական չէ Միֆայել Ասուրու այն տեղեկությունը, թե «(Թորոսն) իր եղբայր Մլեհին լիովին զրկեց ժառանգությունից»⁴³: Ինչպես արդեն նշվեց, Կիլիկիայից արտաքսվելուց հետո Մլեհն ապաստան էր գտել Հալեպի հզոր տիրակալ Նուրեդդին իբն-Ջանգիի արհունիքում եւ ծառայության մտել նրա մոտ, ինչի մասին վկայում են Սմբատ

³⁸ *St' u Rūdt-Collenberg, The Rupenides, I (Rup.)*.

³⁹ *St' u Dédéyan, Les Arméniens, p. 534 (n.)*.

⁴⁰ «Իսկ իշխանք ոչ ետուն ի տեղի Մելեհին, այլ նստուցին զորդի քեռն իւրոյ Թումաս». *Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 519*:

⁴¹ *Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 211; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 102; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 585*:

⁴² *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 101; Վենետիկ, էջ 190; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 211; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 102; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 585; Ժակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 121*:

⁴³ *Barhebraeus, Chronicon, p. 334; Bar Hebraeus, Chronography, p. 292. St' u նաեւ՝ Michel le Syrien, Chronique, III, p. 331.*

Սպարապետի Տարեգիրքը և Միխայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությունը: «Եւ թորոս...,- գրում է Սմբատը,- կալաւ զՄլէհն ... եւ արտաֆսեալ եհան զնա ի գաւառէ իւրմէ եւ այլ ոչինչ արար փոխարեն չարեաց նորա: Իսկ նա ելեալ զնաց առ տէրն Հալպայ նուրդտինն, եւ եմուտ ընդ ծառայութեամբն նորա»⁴⁴: Իսկ ըստ Միխայելի հայերեն թարգմանության՝ «Պարոն թորոսի եղբայր մի էր Մլէհ անուն, չարաբարոյ եւ վայրենամիտ, որ ոչ հաւատայր նմա թորոս եւ ոչինչ վասն որոյ զչարեալ նորա՝ չոգաւ առ նորատինն»⁴⁵: Միեւնույն աղբյուրները տեղեկացնում են նաեւ, որ այդ ծառայության դիմաց նուրեղդիւնը Մլէհին շնորհել էր Կուրուս ֆաղաֆն՝ իր շրջակա գավառով. «եւ նա ետ նմա զԿիւրոս եւ զգաւառն իւր» (Սմբատ)⁴⁶, կամ պարզապէս՝ «եւ ետ նմա զԿուրիս» (Միխայել)⁴⁷: Արաբ պատմիչներ Իբն ալ-Ասիրը եւ Քեմալեղդիւնը նույնպէս նշում են, որ Մլէհը նուրեղդիւնից կալվածք (իկթա) էր ստացել, սակայն առանց հիշատակելու նրա աշխարհագրական անվանումը⁴⁸: «Իկթա»-ն, որ հաճախ սխալմամբ թարգմանվում է *fief* (ավատ), իսլամական հողատիրության բարդ եւ ժամանակի ընթացքում փոփոխությունների ենթարկված ինստիտուտ էր. սելջուկյան շրջանում այն սովորաբար շնորհվում էր զինվորական ծառայության դիմաց, սակայն ոչ որպէս սեփականություն, այլ ժամանակավորապէս հարկ գանձելու եւ հասույթ ստանալու իրավունք⁴⁹: Մլէհը թերեւս միակ ֆրիստոնյա իշխանավորն էր, որ երբեւիցէ արժանացել էր նման շնորհի⁵⁰: Այս հանգամանքն, ըստ երեւոյթին, որոշ տրտունջներ էր առաջացրել մահմեդական աշխարհում, եւ զանգիդյան հարստության շատագույ իբն ալ-Ասիրը, անհարմար

⁴⁴ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 187; նույնը՝ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 99:

⁴⁵ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 455; նույնը այլ խմբագրութեամբ՝ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1871, էջ 454:

⁴⁶ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 187; Փարիզ, էջ 99:

⁴⁷ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 455; 1871, էջ 454: Հմմտ. Յակոբ Սեեցի, Պատմութիւն, էջ 120:

⁴⁸ Իբն ալ-Ասիր, Կիակատար պատմութիւն, էջ 263; Камал ад-дин, Сливки, с. 215.

⁴⁹ Եզրույթի մասին մանրամասն տե՛ս Cahen, Iktā', p. 1088–1091; Cahen, Les peuples musulmans, p. 231–269; Али-Заде, Азербайджан XIII–XIV вв., с. 169–185.

⁵⁰ Եթե նկատի չունենանք մահմեդականացած քրիստոնյաներին:

վիճակից դուրս գալու համար, ստիպված է եղել հորինել հետեյալ գեղեցիկ արդարացումը. «Երբ Նուր ալ-Դինին ասացին, թե ի՞նչ իմաստ ունի նրան ծառայության ընդունելը եւ Ասորիում տիրույթներ շնորհելը, նա պատասխանեց՝ նրան օգտագործում եմ իր կրոնի մարդկանց դեմ պայքարելու համար եւ այդ միջոցով իմ զինվորների մի մասը ազատում եմ դրացի երկրների վրա հարձակվելու (պարտականությունից)»⁵¹: Սակայն արաբ պատմիչն ավելացնում է, որ Մլեհն ամենեւին Նուրեդդինի կույր գործիք չի եղել, այլ ինքն էլ օգտագործել է վերջինիս՝ սեփական նպատակներին հասնելու համար. «Սակայն Մլեհն էլ իր հերթին հենվում էր Նուր ալ-Դինի վրա դրացի հայերի եւ հոռոմների դեմ (պայքարելու համար)»⁵²:

Կարծում ենք, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաեւ այն իրողությունը, որ Նուրեդդինը Մլեհին շնորհել էր հենց Կուրուսի գավառը: Դրդապատճառներից մեկն, ըստ երեւույթին, գավառի բնակչության մեծամասնության հայ լինելու հանգամանքն էր: Այսպիսի ենթադրություն կատարելու հիմք է տալիս այն փաստը, որ 1097–1117 թթ. ընթացքում Կուրուսը պատկանել էր Գող Վասիլ հայ իշխանի եղբայր Բագրատին: Երկրորդ դրդապատճառը Մլեհին Անտիոքի իշխանապետության եւ Կիլիկյան Հայաստանի դեմ օգտագործելու Նուրեդդինի մտադրությունն էր, ինչի մասին ակնարկում է նույն Իբն ալ-Ասիրը. «(Մլեհը) ... Նուր ալ-Դինի ծառայության մեջ էր, ֆրանկների դեմ նրա պատերազմների կազմակերպիչն ու ընկերակիցը»⁵³: Կուրուսի գավառն, արդ, սահմանակից էր թե՛ Կիլիկիային, թե՛ Անտիոքի իշխանապետությանը: Նրա սահմաններն էին՝ հյուսիսից Ռավանդանի գավառը, արեւելից եւ հարավից՝ Աֆրին գետը, իսկ արեւմուտքից՝ Ամանոսյան լեռները⁵⁴: Կուրուսի սահմանակցությունը Կիլիկիային ակնբերաբար ձեռննտու էր ոչ միայն Նուրեդդինին, այլեւ Մլեհին, որն, ինչպես ցույց պիտի տային հետագա զարգացումները, Թորոսին տապալելու ձախող-

⁵¹ *Իբն ալ-Ասիր, Կիսկատար պատմություն, էջ 263:*

⁵² *Անդ:*

⁵³ *Անդ: Տե՛ս նաեւ՝ Ալ-Պահարի (ըստ՝ Mutafian, La Cilicie, t. 1, p. 402; Մուսաֆյան, Կիլիկիան, էջ 396):*

⁵⁴ *Կուրուսի տեղագրության մասին մանրամասն տե՛ս Elisséeff, Nûr ad-Dîn, p. 183–186.*

ված փորձից հետո ամենեւին չէր հրաժարվել Ռուբինյան իշխանության գահին բազմելու մտադրությունից:

Եւ այսպես, Մլեհը Կուրուսում էր, երբ լսեց Քորոս Բ-ի մահվան եւ նրա մանկահասակ որդու՝ Ռուբեն Բ-ի գահակալման լուրը: Քվում էր, թե իշխանության փոխանցումը տեղի էր ունեցել միանգամայն օրինական նանապարհով, ուստիեւ Մլեհն իր բաղձալի նպատակին հասնելու որեւէ հնարավորություն չունէր: Սակայն կար մի անսպասելի հանգամանք, որը նրան որոշ իրավական հիմք էր տալիս վերջիվերջո բավարարելու սեփական իշխանական հավակնությունները. դա անշափահաս գահաժառանգի խնամակալության խնդիրն էր: Եթե առաջին անգամ, 1160-ական թթ. կեսերին, Մլեհը փորձել էր եղբոր գահին տիրել ավագության իրավունքով, ապա այժմ կարող էր հավակնել Ռուբենի խնամակալի դերին՝ նրա մերձավորագույն ազգականը լինելու հիմունքով: Անտեղյակ իրավաբանական այս նրբություններին՝ սկզբնաղբյուրները նկարագրում են միայն իրադարձությունների արտաքին կողմը: Նրանց բոլորի տվյալներն ի մի բերելուց՝ ստացվում է մոտավորապես հետեւյալ պատկերը: Մլեհը, Նուրեդդինից ստացած թուրքական մի զորախմբի օգնությամբ, մտնում է Կիլիկիա եւ բռնությամբ ու դաժանություններով տիրում իշխանությանը⁵⁵: Քուլմաս խնամակալը փախչում է Անտիոխ⁵⁶, իսկ Ռուբեն Բ մանուկ իշխանը, հավատարիմ մարդկանց աջակցությամբ, ապաստան է գտնում Հռոմկլայում մեկ տարի անց, սակայն, սպանվելով ամբարիշտների ձեռքով⁵⁷: Աղբյուրներից երեւր՝ Միխայել Աստ-

⁵⁵ Guillaume de Tyr, t. 2, p. 352; *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 189; Փարիզ, էջ 100; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 585:*

⁵⁶ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 190; Փարիզ, էջ 101; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 211; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 103; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 585:*

⁵⁷ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 190; Փարիզ, էջ 101 (Հատ Սմբատի՝ Ռուբենը ոչ թե սպանվել, այլ մեռել է. «եւ անդ մեռաւ»); Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 455, 475 (Այս աղբյուրի համաձայն նույնպես՝ Ռուբենը ոչ թե սպանվել, այլ մեռել էր. «Որդին Քորոսի տղայն մեռեալ էր ի Հռոմկլայն»); Զակոր Սեցի, Պատմութիւն, էջ 121–122, 136; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 211; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 103; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 585–586 (Վերջին*

րին, Վահրամ Բաբունին եւ Հեթում Կոռիկոսցին փոքր-ինչ այլ կերպ են ներկայացնում իրադարձությունների ընթացքը: Նրանց տվյալներով՝ Հայոց իշխանությունը զավթելու Մլեհի առաջին փորձն անհաջող է անցնում, եւ նա վերադառնում է Նուրեդդինի մոտ: Բայց երբ հայ իշխանները լսում են, որ նա, Հալեպի էմիրից թուրքական մի նոր զորախումբ ստանալով, պատրաստվում է նորից ասպատակել Կիլիկիան, նրան խնդրում են հաշտությամբ գալ եւ տիրել երկրին, ինչը եւ տեղի է ունենում⁵⁸:

Այս ամենն, ինչպես նշվեց, իրադարձությունների միայն արտաքին կողմն է. նրանք, սակայն, ունեն նաեւ ներքին ծալքեր, որոնց բացահայտման բանալին գտնվում է Միխայել Ասորու ժամանակագրության արդեն բազմիցս վկայակոչված հատվածում: Մեզ հետաքրքրող խնդրի տեսակետից Միխայելի վկայությունն այնքան կարեւոր է, որ հարկ ենք համարում, բացի նրա ասորերեն բնագրի վերարտադրությունից, ներկայացնել նաեւ նույնի հայերեն թարգմանությունն՝ ըստ միջնադարյան երկու խմբագրությունների, մանավանդ որ վերջիններս մեկ-երկու էական լրացումներ են պարունակում.

— «Այնուհետեւ հայերը նրան (Մլեհին) կանչել տվեցին իրենց մոտ եւ նրան հանձնեցին երկրի կեսը: Նա երզվեց նրանց առջեւ, որ մյուս կեսը մնալու է մանկանը: Բայց հետո խախտեց երդումը եւ տիրեց ողջ երկրին, նրա բերդերի ու քաղաքների հետ մեկտեղ»⁵⁹.

— «Յետ այսորիկ իշխանին Հայոց եւ Թոմաս մանկակալ տղայոյն, առին ի նմանէ (ի Մլեհէ) երդումն՝ զի մի՛ զրկեսցէ զեղբօրորդին իւր, եւ նոքա տացեն նմա զկէս երկրին եւ դարձցի անդրէն. եւ նա երդուաւ եւ դարձաւ յերկիրն, եւ ոչ եկաց յերդումն, այլ մեծամեծ շարեօք զօրացաւ եւ տիրեաց ամենայն երկրին»⁶⁰.

— Իսկ զի Մլեհն ասպականութիւն յուրվ առնէր, երդումն առին ի

երեք աղբյուրները չեն հիշատակում Ռուբենի՝ Հոռմկլայում ասպատանելու փաստը):
⁵⁸ Barhebraeus, Chronicon, p. 334; Bar Hebraeus, Chronography, p. 292; Michel le Syrien, Chronique, III, p. 331; Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 210–211; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 102–103:

⁵⁹ Barhebraeus, Chronicon, p. 334; Bar Hebraeus, Chronography, p. 292; Michel le Syrien, Chronique, III, p. 331.

⁶⁰ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1871, էջ 454–455:

նման է իշխանին, զի մի՛ զրկեսցէ զտղայն, եւ մուծին յերկիրն: Իսկ նա ստեաց երդմանն եւ էառ զբոլոր երկիրն»⁶¹:

Միհայել Ասորու այս եզակի եւ թանկարժեք վկայությունը, մեր կարծիքով, պետք է մեկնաբանել հետեւյալ կերպ: Առաջին անգամ Կիլիկիա մտնելով, Մլեհը մերձավորագույն ազգականի իրավունքով Հայոց իշխաններից պահանջել է իրեն նանաչել մանկահասակ Ռուբենի խնամակալ: Մերժում ստանալուց հետո նա վերադարձել է Հալեպ եւ, նոր ուժեր հավաքելով, պատրաստվել է նորից արշավել Կիլիկիա: Այդ լուրի վրա՝ իշխանները նարահատյալ համաձայնել են բավարարել Մլեհի պահանջը: Երկիրը երկու կեսի բաժանելու մասին տեղեկությունն, ըստ այդմ, պետք է հասկանալ ոչ թե Կիլիկիայի տարածքի ֆիզիկական մասնատման, այլ իշխանությունը կիսելու, այն է՝ Ռուբենի եւ Մլեհի համատիրության իմաստով: Իսկ դրա իրավական ձեւակերպումը կարող էր լինել միայն անչափահաս գահակալի անունից երկիրը կառավարելու՝ Մլեհին շնորհված խնամակալական լիազորությունը⁶²: Այսպիսով, անկախ իր նպատակին հասնելու նանապարհին գործադրած բռնի միջոցներից, զուտ ձեւի առումով Մլեհը Հայոց իշխանների կողմից խնամակալ է կարգվել միանգամայն օրինական հիմունքներով: Ի դեպ, այստեղ մենք ականատեսն ենք գահաժառանգության իրավունքի կիլիկյան պրակտիկայում կիրառված երկրորդ նորամուծության, որի տակ նկատի ունենք իշխանների ժողովի ինստիտուտը: Սակայն քանի որ այդ ինստիտուտի գործողությունն ավելի ցայտուն կերպով դրսևորվել է Ռուբեն Գ իշխանի գահակալման պարագայում, ապա մենք դրան հանգամանորեն կանդրադառնանք հաջորդ ենթագլխում:

Հետազոտողներից շատերի կարծիքով՝ Մլեհը Կիլիկիային տիրել է բացառապես Նուրեդդինի ռազմական օգնության շնորհիվ⁶³: Ավելին,

⁶¹ Միհայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1870*, էջ 455: Հմմտ. *Յակոբ Սսեցի, Պատմութիւն*, էջ 121:

⁶² Պետական ազգի ներկայացուցիչ շինելու պատճառով Միքայել Ասորու համար բարդ պետք է լիներ հասկանալ իրավաբանական այս նրբությունը, ուստի իշխանությունը կիսելու կամ համատիրության պարագան նա պատկերացրել է երկիրը ֆիզիկապես երկու մասի բաժանելու տեսքով:

⁶³ Հմմտ. Morgan, *Histoire*, p. 180; Grousset, *Histoire*, II, p. 567; Runciman, *A History*, II, p. 389–390.

ըստ Ռ. Գրուսեի՝ «Հայաստանի իշխան դառնալով Նուրեդդինի եւ թուրքերի աջակցությամբ՝ Մլեհը նրանց շնորհիվ էլ պահպանում էր իր իշխանությունը»⁶⁴: Սակայն մեզ թվում է, այս տեսակետը չի համապատասխանում իրականությանը: Ուսումնասիրողներն անուշադրության են մատնել հայկական որոշ աղբյուրներում պահպանված այն տեղեկությունը, որ Մլեհը, Հայոց իշխանների համաձայնությամբ Կիլիկիային տիրելուց հետո, ետ է ուղարկել թուրքական զորքերը եւ հանգիստ կառավարել երկիրը. «Ապա զՏանհիկսըն դարձուցեալ, / Եւ հանութեամբ երկրին տիրեալ», – գրում է Վահրամ Բարունին⁶⁵: Իսկ Հեթում Կոռիկոսցին այդ մասին հայտնում է. «Այլ իշխանն Հայոց յորժամ լուան զգալն նորա՝ առաքեցին առ նա, զի սիրով եկեալ տիրեսցէ աշխարհին, եւ մի՛ ինչ վնասեսցէ ֆրիստոնէից զաւրֆն անաւրինաց: Եւ նա լուեալ զայն՝ դարձոյց ըզաւսն սուլտանին մեծաւ շնորհակալութեամբ»⁶⁶: Այստեղից ինքնըստինքյան բխում է, որ եթե Մլեհն ի վիճակի էր իշխել առանց թուրքական զորքերի աջակցության, ուրեմն Կիլիկիայում եթե ոչ լայն հենարան, ապա առնվազն լուրջ կողմնակիցներ պետք է ունենար: Տեսանք արդեն, որ զուտ օրինապաշտների (լեգալիստների) տեսակետից՝ նրա խնամակալությունը միանգամայն օրինական էր: Քայց կար նաեւ մի կարեւոր ֆաղափական հանգամանք: Հայ իշխանների գոնե մի մասը չէր կարող չհասկանալ, թե Կիլիկիայի շուրջ ստեղծված միջազգային բարդ իրավիճակում, երբ հատկապես ակտիվացել էին Բյուզանդական կայսրության, Իկոնիայի սուլթանության, Դանիշմենդյան էմիրության, Հալեպի աթաբեկության եւ Անտիոքի իշխանապետության գործողությունները, ինչպիսի վտանգներ էր պարունակում երկրի կառավարումը մանուկ գահակալի եւ անտիոքացի օտարական խնամակալի ձեռքում թողնելը, մանավանդ որ հայտնի էին Անտիոքի շրջաօրով նկրտումները Կիլիկիայի նկատմամբ: Ուստի Թորոսի պես շեշտված անհատականության մահից հետո ստեղծված այդ վտանգավոր իրավիճակում ուժեղ ձեռքի անհրաժեշտությունը չէր կարող հասկացողություն չգտնել

⁶⁴ Grousset, Histoire, II, p. 567.

⁶⁵ Վահրամ Բարունի, Ուտանաւոր պատմութիւն, էջ 211:

⁶⁶ Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 103:

կիլիկյան հասարակության որոշ շերտերում:

Մլեհի իրավական կարգավիճակը, սակայն, շուտով պիտի փոխվեր Ռուբեն Բ-ին վրա հասած վաղաժամ մահվան պատճառով: Աղբյուրների մեծ մասն, ինչպես տեսանք, վկայում է, որ մանուկ գահակալն սպանվել էր ամբարիշտ մարդկանց ձեռքով: Քեել նրանցից ոչ մեկն ակնարկ անգամ չունի Մլեհի մեղսակցության մասին, սակայն դատելով վերջինիս նկատմամբ հայ միջնադարյան ժամանակագիրների տաժաժ կույր ատելությունից, մենք ամենեւին չենք բացառում դրա հավանականությունը⁶⁷: Եթե նա մեկ անգամ արդեն փորձել էր ոտնձգություն կատարել հարազատ եղբոր կյանքի նկատմամբ, ինչու պիտի խորշեր նույն կերպ վարվել եղբորորդու պարագայում, մանավանդ որ դրանով, թվում է թե, նրա համար վերանում էր Հայոց իշխանությանն ամբողջապես տիրելու վերջին խոչընդոտը: Սակայն, ի դժբախտություն Մլեհի, դա ընդամենը նրա առջև կանգնած խոչընդոտներից միայն մեկն էր, քանի որ գահաժառանգության գործող օրենքի համաձայն՝ Թորոս Բ-ի որդու մահից հետո, միեւնույն է, Հայոց գահը պետք է փոխանցվեր ոչ թե իրեն, այլ իր ավագ եղբոր՝ Ստեփանեի շառավիղներին: Ռուբեն Բ-ի սպանությունից հետո Մլեհն, արդ, հայտնվել էր ոչ թե օրինական գահակալի, այլ բռնազավթի (ուզուրպատորի) կարգավիճակում: Ու թեև, շնայած այդ հանգամանքին, նա դրսևորեց պետական այրին վայել բարձր հատկություններ, Կիլիկիան վերջնականապես մաքրեց բյուզանդացիներից, ֆրանկներից ու թուրքերից, Ռ. Գրուսեի խոսքերով՝ դառնալով «իր երկրի ազատարարը»⁶⁸, միեւնույն է, իշխանության բռնազավթումը չներվեց նրան, եւ 1175 թվականին նա սպանվեց իր ազգակիցների կողմից⁶⁹: Ռ. Գրուսեի գնահատականը, սակայն, արժե մեջբերել

⁶⁷ Ղ. Ալիշանն այդ առթիվ գրում է. «Մանուկն Ռուբեն ... գաղտնապէս ի մահ վարեցաւ յամպարշտաց ոմանց, ոչ գիտեմ յանգէ՞տս Մլեհի, թէ կամաւ»: Ալիշան, Միսուան, էջ 56: Իսկ Կ. Մութաֆյանը կասկած չունի, որ մանուկ գահակալին սպանել է Մլեհը. Mutafian, La genèse, p. 158.

⁶⁸ Grousset, L'Empire, p. 391.

⁶⁹ Հետազոտողներից շատերը պատահական չեն համարում, որ Մլեհն սպանվել է իր հովանավորի՝ Նուրեդդինի մահից (1174 թ.) անմիջապես հետո. տե՛ս Grousset, Histoire, II, p. 582 (հայ. թարգմ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը,

ամբողջությամբ. «Մլեհը բացառություն է հայ ժողովրդի պատմության մեջ, գայթակղության առարկա ժամանակագիրների համար՝ ավելի քան իշխանությունը բռնազավթելու, քան թուրքերի հետ կնքած նրա բացահայտ դաշինքի պատճառով: Իրականում պետք է խոստովանել, որ միայն այդ դաշինքի շնորհիվ էր, որ նա բյուզանդական լծից ազատագրեց ցածրադիր Կիլիկիան, գրավելով դաշտի երեք մեծ ֆաղաֆները՝ Ադանան, Մսիսը եւ Տարսոնը: Միայն այդ ժամանակ էր, որ Կիլիկիան ամբողջությամբ դարձավ հայկական (1173 թ.): Անշուշտ, նրա որդեգրած հակաֆրանկ եւ իսլամամետ ֆաղաֆականությունը որոշ առումով ցնցող բացառություն էր նրա տոհմի պատմության մեջ: Բայց պակաս նշմարիտ չէ, որ նշված ֆաղաֆականությունը հաջողությամբ պսակվեց, եւ որ այդ կես-ուրացյալը արդյունքում եղավ իր երկրի ազատարարը: Ճշմարիտ է նաեւ, որ այդ հսկայական ծառայությունը մատուցելուց հետո, այլեւս պատճառ չկար նրան հանդուրժելու»⁷⁰:

Մլեհի ողբերգությունը, սակայն, այն էր, որ նա ոչ միայն դաժան վախճանի արժանացավ, այլեւ կանգնեց պատմության դատաստանի առջեւ: Որ «թուրքերի հետ կնքած նրա դաշինքը գայթակղության առարկա» պիտի լինեւ մանավանդ լատին ժամանակագիրների համար, միանգամայն ակնհայտ է, քանի որ այդ դաշինքն առաջին հերթին ուղղված էր ֆրանկների, մասնավորապես Անտիոքի իշխանապետության դեմ⁷¹: Ուստի ամենեւին զարմանալի չէ, որ Վիլհելմ Տյուրացին Մլեհին բնութագրում է «դաժան», «նենգ թշնամի», «անօրեն հայ», «նենգ հայ», «չարալից եւ խիստ անօրեն մարդ», որի մեջ «խաբեությունից, ստից ու

հտ. 1, էջ 279); Runciman, A History, II, p. 418–419; Der Nersessian, Cilician Armenia, p. 643 (հայ. թարգմ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 394); Atamian-Bournoutian, Cilician Armenia, p. 280; Mutafian, La genèse, p. 158.

⁷⁰ Անդ:

⁷¹ Մլեհի եւ Նուրեդդինի դաշինքի հակաֆրանկ ուղղվածության մասին, ինչպես տեսանք, վկայում է Իբն ալ-Ասիրը. տե՛ս Իբն ալ-Ասիր, Լիակատար պատմություն, էջ 263: Իր մի այլ աշխատության «Մուսուլի աթաբեկների պետության պատմության» մեջ, կրկին անդրադառնալով տվյալ խնդրին, արար պատմիչն արտահայտվում է ավելի հստակորեն. Անդ, էջ 362:

նենգությունից բացի այլ բան չէր կարելի գտնել» խոսվերով⁷²: Սակայն տարօրինակն այն է, որ Մլեհը համարյա նույնպիսի անողոք գնահատականների է արժանացել նաև հայ ժամանակագիրների կողմից. «այր շարաբարու եւ անագորոյն»⁷³, «այր գագանամիտ եւ շար եւ անողորմ»⁷⁴, «շարասիրտ»⁷⁵ եւ «աղտեղի գործով ցեալ»⁷⁶, «այր շարասիրտ յոյժ եւ բագում աղտեղի գործով ցեալ»⁷⁷, «շարաբարոյ եւ վայրենամիտ ... (որոյ) ոչ գոյր շափ պղծութեան նորա»⁷⁸: Հայկական աղբյուրներից միայն երկուսն են, որ բարի խոսով են հիշում Մլեհին: 1214 թվականին գրված մի հիշատակարան նրան անվանում է «իշխանաց իշխան մեծն Մլեհ» կամ «բարեպաշտն մեծն Մլեհ», բայց սա ունի իր առանձնահատուկ բացատրությունը. ձեռագիրն ընդօրինակվել է Կիլիկիայի Մանուտ գավառի Մեծաբար վանքում, որը կառուցել էր ինքը Մլեհը, եւ որն այդ ժամանակ պատկանում էր վերջինիս որդի Գեորգ իշխանին⁷⁹: Իսկ «Պատմութիւն սրբոց հարցն մերոց» աշխատությունը, նույնպես Մլեհին օծտելով «մեծ» տիտղոսով, ավելացնում է նաև հետեւյալ հետաքրքիր բնութագրականը. «Բայց սահման վանօրայսն հաստատուն

⁷² Guillaume de Tyr, t. 2, p. 352-353.

⁷³ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 186:*

⁷⁴ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 101:*

⁷⁵ *Վահրամ Բաբունի, Ոստանաւոր պատմութիւն, էջ 211; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 138; Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 566:*

⁷⁶ *Վահրամ Բաբունի, Ոստանաւոր պատմութիւն, էջ 211:*

⁷⁷ *Հեթում Կոռիկացի, Պատմութիւն, էջ 103:*

⁷⁸ *Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 455: Տե՛ս նաեւ՝ Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 121: Միքայելի ասորերեն բնագրում այս բնութագրումը բացակայում է, եւ ընդհանրապես ասորի ժամանակագիրներն իրենց գնահատականներում համեմատաբար ավելի զուսպ են: Միայն Անանուն եղեսացին է, որ խստորեն դատապարտում է Մլեհին, շեշտելով, որ «նա իր ամբարշտությամբ գերազանցեց ոչ միայն քրիստոնյա անօրեն իշխաններին, այլեւ նույնիսկ մահմեդական եւ հեթանոս բռնակալներին».* *Անանուն եղեսացի, Ժամանակագրութիւն, էջ 135:*

⁷⁹ *Տե՛ս Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 769-772; նույնը՝ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 87-89:*

պահեաց, եւ խղնի դատէր վասն գերելոցն»⁸⁰: Որպէս Մլեհի առաքինության արտահայտություն՝ նույն աղբյուրն արձանագրում է նաեւ նրա ջանքերով Հալեպում գտնվող գերիներին փրկագնելու փաստը⁸¹. «Եւ առաքէ գանձս բազումս եւ գնէ զգերեալսն ի Բերիայ»⁸²:

Մլեհի նկատմամբ աղբյուրների համարյա միահամուռ ժխտական վերաբերմունքը եւ նրա սպանության պատճառների որոնումը զբաղեցրել են շատ հետազոտողների միտքը: Ըստ Ռ. Գրուսէի՝ Մլեհն սպանվել էր «հայ ժողովրդի զգացումները վիրավորած լինելու»⁸³ կամ «գայթակեցուցիչ իսլամասիրության եւ քրիստոնեության դեմ գործած դավանանության համար»⁸⁴: Մ. Զուլայանի կարծիքով՝ Մլեհի սպանության պատճառը «հայ իշխանների եւ բարձր հոգեւորականության» դժգոհությունն էր «Հալեպի սուլթանի հետ նրա համագործակցության փաղափարկանությունից»⁸⁵: Կ. Մուքաֆյանն այդ ոճրագործությունը բացատրում է նրանով, որ Մլեհի «երկաթյա բռունցքը եւ անհանդուրժողականությունը նրանից վանել էին ազգաբնակչության զգալի մասին»⁸⁶: Եւ վերջապէս, Բակուրանի տեսակետով՝ նրա «սպանումը, որ կատարուած է հայ իշխաններու ձեռով, հաւանօրէն կուսակցական վրէժխնդրութեանց հետեւանքն էր»⁸⁷: Հարկ ենք համարում հատուկ կանգ առնել Ռ. Գրուսէի տեսակետի վրա, քանի որ այն հանդիսանում է առավել տարածված մտայնության արտահայտություն: Մեր կարծիքով, Մլեհի «իսլամասիրության»⁸⁸ եւ քրիստոնեության դեմ գործած դավանանության» կամ

⁸⁰ Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 519—520, 521, 522:

⁸¹ Պետք է ենթադրել, որ խոսքը վերաբերում է այն հայ գերիներին, որոնց ինքը՝ Մլեհը, ժամանակին վաճառել էր մահմեդականներին. տե՛ս Michel le Syrien, Chronique, III, p. 331; Barhebraeus, Chronicon, p. 334; Bar Hebraeus, Chronography, p. 292.

⁸² Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 520:

⁸³ Grousset, L'Empire, p. 391.

⁸⁴ Grousset, Histoire, II, p. 683.

⁸⁵ Զուլայան, Կիլիկիա, էջ 684:

⁸⁶ Mutafian, La Cilicie, t. 1, p. 401; Մուքաֆյան, Կիլիկիան, էջ 396: Հմմտ. նաեւ՝ Սաատեթյան, Ներսէս Համբրոնացի, էջ 48:

⁸⁷ Բակուրան, Մի տեսութիւն, էջ 15:

⁸⁸ Որոշ հետազոտողներ Մլեհի իսլամասիրության հարցում այնքան հեռուն են

«հայ ժողովրդի զգացումները վիրավորած լինելու» մասին խոսք անգամ չի կարող լինել, քանի որ հայ իշխանի վարձագիծը թելադրված էր զուտ ֆաղափական պրագմատիզմով, եւ այդ ֆաղափականությունն, ինչպես ինքը Գրուսեն էլ խոստովանում է, «հաջողությամբ էր պսակվել»⁸⁸։ Մլեհի «խլամասիրությունը» հաստատող որեւէ փաստ գոյություն չունի, իսկ նրա կողմից վերը հիշված Մեծաբարի վանքի հիմնադրումը նիշտ հակառակն է ապացուցում։ Ինչ վերաբերում է «երիստոնեության դեմ գործած դավաճանությանը», որի տակ Ռ. Գրուսեն նկատի ունի Մլեհի եւ Նուրեդդինի միջեւ կնքված դաշինքը, ապա դա էլ մտնում էր ժամանակի ֆաղափական խաղի կանոնների մեջ եւ որեւէ արտառոց պահ չէր պարունակում⁹⁰։ Մլեհից թե՛ առաջ, թե՛ հետո բազմաթիվ քրիստոնյա տիրակալներ՝ բյուզանդական կայսրեր, Երուսաղեմի եւ Կիպրոսի թագավորներ, Անտիոքի պրինցներ, Եդեսիայի եւ Տրիպոլիի կոմսեր, Հյուսիսային Ասորիի հայ իշխաններ, ժամանակ առ ժամանակ դաշնակցել են մահմեդականների հետ, եւ դա դիտվել է որպես իրենց երկրների գործնական շահերից բխող սովորական ֆաղափական վարձագիծ։ Սույն գրքի նախորդ հատորում մենք տեսանք, թե ինչպես Փիլարտոս Վարաժնունին, Մելիտենեի տեր Գաբրիելը եւ Եդեսիայի կուրուպալատ Թորոսը, ընդունելով սելջուկյան սուլթանների գերիշխանությունը, միառժամանակ կարողացան պահպանել իրենց հայկական իշխանությունները, թե

գնում, որ պնդում են, թե նա անգամ, ուրանալով իր կրոնը, մահմեդականություն էր ընդունել (տե՛ս Morgan, Histoire, p. 180; Pasdermajian, Histoire, p. 229; Runciman, A History, II, p. 389; Elisséeff, Nūr ad-Dīn, p. 656; Atamian-Bournoutian, Cilician Armenia, p. 280 եւ այլն)։ Սակայն միջնադարյան աղբյուրները ոչ միայն չեն հաստատում գրքից-գիրք թափառող այս թյուրիմացությունը, այլև նրանցից երկուսն ուղղակի բացառում են դա։ Վիլհելմ Տյուրացին, Մլեհին բնութագրելիս, հատուկ շեշտում է, որ նա «քրիստոնյա լինելով հանդերձ, այնպիսի մեծ ատելություն էր տածում մեր հավատակիցների նկատմամբ, որ իր կարողացածին չափ նրանց վատություն էր անում» (Guillaume de Tyr, t. 2, p. 353)։ Իսկ ըստ Իբն ալ-Ասիրի՝ Նուրեդդինը հպարտանում էր, որ Մլեհին օգտագործում է «իր կրոնի մարդկանց դեմ պայքարելու համար» (Իբն ալ-Ասիր, Կիսկատար պատմություն, էջ 263)։

⁸⁸ Grousset, L'Empire, p. 391.

⁹⁰ Հմմտ. Mutafian, La Cilicie, t. 1, p. 400; Մութաֆյան, Կիլիկիան, էջ 395:

ինչպես Անտիոքի պրինց Տանկրեդը եւ Եդեսիայի կոմս Բալդուին II-ը, դաշնակցած տարբեր մահմեդական էմիրների հետ, պատերազմում էին միմյանց դեմ, թե ինչպես բյուզանդական կայսր Մանուել Կոմնենոսը դրդում էր փոքրասիական սելջուկներին ասպատակելու Հայոց իշխան Թորոս Բ-ի տիրույթները, թե ինչպես Անտիոքի պրինց Բոհեմունդ IV-ը Հալեպի Այուբյանների օգնությամբ փորձում էր դիմակայել Կիլիկիո թագավոր Լեոն Բ (I)-ի ճնշումներին, թե ինչպես Կիպրոսի թագավոր Հակոբ II-ը մամլյուխյան զորքերի աջակցությամբ չեզոքացրեց իր մրցակցին եւ հաստատվեց թագավորության գահին եւ այլն: Ուստի Մլեհի վարձագիծը, որը բացառություն չէր եւ լիովին տեղավորվում էր ժամանակի ֆաղափական մշակույթի շրջանակներում, չէր կարող լուրջ պատճառ հանդիսանալ հայերի կողմից նրա նկատմամբ դրսեւորված կատաղի հակազդեցության, առավել եւս նրա սպանության համար: Նման վերաբերմունքի եւ սպանության բռն պատճառը, մեր կարծիքով, ոչ թե Մլեհի ֆաղափական կողմնորոշումն էր կամ նրա դաժանությունն ու անհանդուրժողականությունը, այլ այն էական հանգամանքը, որ նա «ուզուրպատոր» էր: Ռուբինյան գահաժառանգական իրավունքը կամ հայկական ավատատիրական «լեգիտիմիզմը» չէր կարող հանդուրժել իշխանության բռնազավթումը⁹¹, մանավանդ ուղեկցված գահի օրինական ժառանգորդ, մանկահասակ Ռուբեն Բ-ի դժնի սպանությամբ: Պատահական չէ, որ հետագայում Մլեհի բախտին պիտի արժանանային նաեւ Հայոց գահի երեք այլ բռնազավթիչներ՝ Ռայմոնդ-Ռուբենը՝ 1222 թվականին, եւ Սմբատ ու Կոստանդին Բ (I) թագավորները՝ 1299-ին⁹²: Այսպիսով, պետք է արձանագրել, որ Կիլիկյան Հայաստանի պատմության մեջ իշխանության բռնազավթման ոչ մի փորձ հաջողությամբ չի պսակվել, եւ «ոչ լեգիտիմ» գահակալներն, անկախ իրենց վաստակից ու ազգին մատուցած ծառայություններից, վերջիվերջո գահընկեց են արվել ու ենթարկվել շարաշար պատիժների:

⁹¹ Հմմտ. *Ներսէս Լամբրոնացի, Ձինուորական օրէնք, էջ 325:*

⁹² Ճիշտ է, Սմբատն ու Կոստանդինը ոչ թե մյուս երկու «ուզուրպատորներին» նման մահապատժի ենթարկվեցին, այլ միայն աքսորվեցին իրենց մեղմաբարո եղբոր՝ Հեթում Բ թագավորի կողմից:

ՌՈՒՔԵՆ Գ (1175–1187 թթ.)

Մլեհը թողել էր մի որդի՝ Գեորգ անունով, որին հիշատակում են Սմբատ Սպարապետը եւ 1214 թվականին ընդօրինակված հայերեն մի ձեռագրի հիշատակարան¹: Նրա անձին մենք դեռ հանգամանորեն անդրադառնալու ենք սույն աշխատության հետագա շարադրամբում, իսկ առայժմ հարկ ենք համարում նշել միայն հետեւյալը: Գեորգը որեւէ իրավական հիմք չունեւ հավակնելու Հայոց իշխանության գահին, քանի որ նրա հայրն այդ գահին տիրել էր ոչ թե օրինական ճանապարհով, այլ, ինչպես տեսանք, բռնագավթման միջոցով՝ ոտնահարելով իր եղբորորդիների իրավունքները: Ինչպես իրավացիորեն նկատում է Մ. Օրմանյանը, «Մլեհի մը որդին շէին ուզէր Հայ իշխաններ իրենց վրայ իշխանապետ ունենալ»²: Ուստի գահաժառանգության օրինականությունն ապահովելու նպատակով՝ հայ իշխանները, բնականաբար, գահակալելու են հրավիրում Ռուբինյան գերդաստանի արական գծով վերջին երկու ուղիղ շառավիղներից մեկին՝ Ստեփաննի որդի Ռուբենին³: Հոր մա-

¹ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 216; Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 769–772; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 87–89; Սմբատն, ի դեպ, չի գլանում ավելացնել, որ Մլեհի որդին ծնվել էր «ոչ յօրինաւոր ամուսնութենէ»: Ըստ Ղ. Ալիշանի՝ Մլեհը նաեւ Ռուբեն անունով մի որդի է ունեցել (Ալիշան, Սիսուան, էջ 45), իսկ ըստ Ռուդ-Կոլենբերգի՝ մի քանի այլ որդիներ, որոնցից մեկի անունը եղել է Քորոս (Rüdt-Collenberg, The Rupenides, I (Rup.):*

² *Օրմանյան, Ազգապատում, § 998:*

³ *Կամ, ինչպես Ս. Սաատեթյանն է գրում, «Մլեհի սպանմանէն յետոյ իշխանութիւնն կը մնար երիցագոյն պայազատին». Սաատեթյան, Ներսէս Լամբրոնացի, էջ 48:*

հից հետո (1162 թ.)⁴ վերջինս, կրտսեր եղբոր՝ Լետնի եւ մոր՝ Ռիտայի հետ, ապաստան էր գտել իր քեռու՝ Պապեռոնի⁵ իշխան Բակուրանի մոտ⁶, որը սերում էր Ռուբինյանների հակառակորդ Հեթումյան տոհմից:

Քահաժառանգության իրավունքի տեսակետից կարելու է պարզել՝ արդյո՞ք Ռուբենը Մլէհի սպանության գործում մասնակցություն ունե՞ր, թե ոչ: Ս. Ռանսիմենի կարծիքով՝ ոչ միայն ուներ, այլեւ հենց ինքն էր գահընկեց արել իր «ուրացյալ» հորեղբորը⁷: Ե. Քասունին սա համարում է «պատմական ու պատմագրական հիմք գուրկ տեսակէտ»⁸: Սակայն Սմբատ Սպարապետի հետեւյալ վկայությունը, կարծես թե, չի բացառում Ռանսիմենի պնդման հավանականությունը. «Եւ օր մի արար (Ռուբէն) պատիւ իշխանացն, եւ շնորհակալեցաւ ամենեցուն վասն երախտեացն զոր արարին նմա, եւ սպանին զհօրեղբայրն իւր եւ դրին զնա ի տեղ նորա»⁹, իսկ ըստ մյուս խմբագրության՝ «Ի սկիզբն իշխանութեան իւրոյ արար (Ռուբէն) մեծագոյն պատիւս իշխանաց իւրոց, եւ շնորհակալեցաւ ամենեցուն սակս երախտեացն զոր արարին նմա եւ սպանին զհօրեղբայրն իւր եւ հաստատեցին զնա ի տեղի նախնեացն

⁴ Թվականն՝ ըստ Գրիգոր Երեցի եւ ասորական աղբյուրների. տե՛ս Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 428; Michel le Syrien, Chronique, III, p. 319; Barhebraeus, Chronicon, p. 328–329; Bar Hebraeus, Chronography, p. 287. Սմբատի տվյալներով՝ Ստեփանենն սպանվել է 1164 կամ 1165 թ. տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 98; Վենետիկ, էջ 186: Համադրելով այս տվյալները՝ Ա. Բոզոյանն, արդարացիորեն, նախապատվությունը տալիս է Գրիգոր Երեցի եւ ասորական աղբյուրների նշած թվականին. տե՛ս Բոզոյան, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 229–230:

⁵ Ըստ որոշ աղբյուրների՝ Ռուբենը զահակալելու է հրավիրվել ոչ թե Պապեռոնից, այլ Տարսոնից. տե՛ս Michel le Syrien, Chronique, III, p. 361; IV, p. 710; Barhebraeus, Chronicon, p. 350; Bar Hebraeus, Chronography, p. 305; Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 475; 1871, էջ 476; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586; Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 136:

⁶ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 99; Վենետիկ, էջ 187: Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 211; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 138; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 103:

⁷ Runciman, A History, II, p. 418–419.

⁸ Քասունի, Ռուբէն Գ, էջ 17:

⁹ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 102:

խոց»¹⁰: Նկատի ունենալով Սմբատ Սպարապետի՝ Ռուբինյան գերդաստանի պատմության խոհանոցին փառաձանթ լինելու հանգամանքը, դժվար է, իհարկե, նրա այս խոսքերին գոնե որոշ հավատ չընծայել: Սակայն այստեղ, բնականաբար, հարց կարող է առաջանալ, թե ինչո՞ւ այդ դեպքում Ռուբենը մահապատժի ենթարկեց Մլեհի սպանության բուն կատարողներին՝ Ջահանին եւ Ապղարիպ ներհինուն¹¹: Ասորի հեղինակները միամտաբար կարծում են, թե Ռուբենի արյունակցական զգացումները վիրավորված էին այն հանգամանքից, որ ոճրագործները Մլեհի փառատված մարմինը անարգաբար նետել էին շների առջեւ¹²: Քվում է, սակայն, թե Ռուբենի վրեժխնդրությունն ուներ երկու ավելի լուրջ պատճառ: Առաջին՝ եթե նա իսկապես մեղսակից էր իր հորեղբոր սպանությանը, ապա շահագրգռված պետք է լինե՞ր վերացնելու դրա վկաներին: Եւ երկրորդ՝ չպետք է թույլ տար տիրասպանությունը կամ հեղաշրջումը հանդուրժելու նախադեպ ստեղծել, ֆանգի դա հղի էր կրկնվելու եւ իր դեմ եւս գործադրվելու վտանգով¹³: Այս ամենով հան-

¹⁰ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 192:*

¹¹ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 103; Վենետիկ, էջ 192; Michel le Syrien, Chronique, III, p. 361; IV, p. 711; Barhebraeus, Chronicon, p. 350; Bar Hebraeus, Chronography, p. 305; Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 475–476; 1871, էջ 476: Բարհեբրեոսը եւ Միքայել Ասորու ժամանակագրութեան ասորերեն եւ հայերեն բնագրերը շեն հիշատակում սպանութիւնն իրականացնողների անունները: Մատենադարանի Ք. 7620 ձեռագրում պահպանված «Պատմութիւն սրբոց հարցն մերոց» աշխատութեան տվյալներով՝ «Ի մեռանել նորըտնին, որ բարեկամ էր Մլեհին, իշխանքն նորայ խոր(հ)եցան ըսպանանել զնայ՝ ըստ տիրայըսպան բարուց ազգիս: Եւ ըմբռնեալ կապեցին զնայ... Իսկ ոմն ներգնի ի գօրաց Հոսոնց փողոտեաց (զ)նա»։ Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 524. հմտ. նաեւ՝ Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 112 (ծ. 21): Սրա հիման վրա Ե. Քասունին Մլեհի սպանութեան ետեւում «բիւզանդական դաւ» է տեսնում. տե՛ս Քասունի, Ռուբէն Պ, էջ 16–17:*

¹² *Michel le Syrien, Chronique, III, p. 361; IV, p. 711; Barhebraeus, Chronicon, p. 350; Bar Hebraeus, Chronography, p. 305; Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 475–476; 1871, էջ 476: Օգտվելով Միքայելի հայերեն թարգմանութիւնից, նույնը կրկնում է նաեւ Հակոբ Սսեցին. տե՛ս Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 136:*

¹³ *Ի դեպ, ժամանակներն ու բարքերն, ըստ երեւույթին, շատ շեն փոխվել. նույնը*

դերձ, ինչ էլ թափնված լինե՞ր ակնհայտ ոճրագործության ետեւում, Ռուբենն օրենքի տառի տեսակետից իշխանության էր եկել միանգամայն օրինական նանապարհով, քանի որ Մլէհը բռնազավթիչ էր եւ, հետեաբար, նրա սպանությունը չէր խախտում գահաժառանգության իրավունքի սկզբունքները, այլ նույնիսկ ընդհակառակը՝ հնարավորություն էր ստեղծում վերականգնելու «սահմանադրական կարգը»: Չնայած դրան, Ռուբենը, կարծես թէ, այնուամենայնիվ սեփական մեղքը քաշելու եւ իր մասին նպաստավոր հասարակական կարծիք ձեւավորելու խնդիր ուներ: Այդ է ապացուցում մասնավորապէս Սմբատ Սպարապետի Տարեգրքի հետեւյալ հատվածը, որտեղ խոսվում է նրա բաժանած առատ նվերների եւ կազմակերպած նոխս խնջույքների մասին. «Եւ սկսաւ տալ պարգէս ամենեցուն առատապէս. եւ էառ զգանձն պարոն Մլէհին, սկսաւ սփռել ի պէտս եւ յանպէտս. եւ առատ սեղանով անուշացնէր զսիրտ իշխանացն եւ զհնոտրացն»¹⁴, իսկ ըստ մյուս խմբագրության՝ «Եւ սկսաւ տալ պարգէս ամենեցուն առատապէս, եւ զժողովեալ գանձս Մլէհին սկսաւ սփռել ի պէտս եւ յանպէտս, եւ առատապարգէս սեղանով զամենեցուն սիրտ եւ զոգի յինքն յանգոյց»¹⁵: Թերեւս հասարակական կարծիքին հաճոյանալու նույն կտրվածով պետք է գնահատել նաեւ Ռուբենի ցուցաբերած մեծահոգությունը Մլէհի կնոջ նկատմամբ: Ըստ Անանուն Եղեսացու՝ Ռուբենն այրիացած իշխանուհուն էր նվիրել Կիլիկիայի երեք հոշակավոր բերդեր՝ Սարվանդիքարը, Սիմանակլան եւ Վանավերը¹⁶: Այս քայլով նա, միգուցէ, նաեւ Հայոց եկեղեցուն սիրաշահելու նպատակ էր հետապնդում, քանի որ Մլէհի կինը Գրիգոր Տղա կաթողիկոսի քույրն էր¹⁷:

տեղի է ունենում նաեւ մեր օրերում:

¹⁴ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 102:

¹⁵ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 192:

¹⁶ Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, էջ 135 եւ 230 (ծ. 420):

¹⁷ Ուշագրավ է, որ հայկական աղբյուրները, կարծես թէ, գրաբնության ենթարկված, թաքցնում են ոչ միայն այս, այլեւ այն փաստը, որ Գրիգոր Տղան Հայոց կաթողիկոս էր ընտրվել Նուրեգզինի առջեւ Մլէհի կատարած բարեխոսության շնորհիվ: Դրանց մասին վկայողը միայն ասորական աղբյուրներն են եւ նրանցից օգտված հայ հեղինակները. տե՛ս Michel le Syrien, Chronique, III, p. 353; IV, p.

Ռուբենի «լեզվախմբությունն» անխոցելի էր նաեւ մեկ այլ ուշագրավ առումով. նա ընտրվել էր Հայոց իշխանների¹⁸, իսկ ըստ այլ աղբյուրների՝ Հայոց զորքի¹⁹ միահամուտ հավանությամբ: Երկրորդ տվյալն, ի դեպ, չի հակասում առաջինին, քանի որ զորք ասելով, աղբյուրներն, ակներեաբար, նկատի ունեն գորականներին, որոնք նույնպես իշխաններ էին: Իսկ որ Ռուբենի գահակալման հարցում տարածայնություններ չեն եղել եւ նա իսկապես ընտրվել է իշխանների միահամուտ որոշմամբ, փաստվում է Սմբատ Սպարապետի հետեւյալ տեղեկությամբ. «Եւ եկեալ Ռուբէն տիրեաց հայրենեաց իւրոց, եւ հնազանդեցան նմա իշխաննն Հայոց յօժարութեամբ»²⁰: Այս միաձայնությունն, ըստ երեսույթին, պետք է բացատրել նրանով, որ Ռուբենի ընտրությունը լիովին համապատասխանում էր գահաժառանգության կլիկկյան ավանդույթին, որը հետագայում պիտի արտացոլվեր նույն Սմբատ Սպարապետի «Ռատաստանագրքի» հետեւյալ հոդվածում. «Զեղբար որդիսն դնեն երկրին հաւատարիմն յիրենց պարունին արթուն, որ յիրենց պարունին սերմէն է եւ ոչ ատար սերմի ծնունդ»²¹:

Ի՞նչ էր, արդ, իրենից ներկայացնում իշխանների, գորականների եւ

705; Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն 1870*, էջ 471–472; 1871, էջ 472; Անանուն *Եղեւսացի, Ժամանակագրութիւն*, էջ 135; Վարդան Վարդապետ, *Հաւաքումն*, էջ 129; Ստեփանոս, *Տարեգրութիւն*, էջ 35; Անանուն, *Պատմութիւն սրբոց*, էջ 521–522; Հմմտ. *Նաեւ՝ Օրմանյան, Ազգապատում*, § 994; *Բողոյան, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականութիւնը*, էջ 219–220; *Տեր-Ղեւոնդյան, Կլիկկյան Հայաստանը*, էջ 68; Mutafian, *La genèse*, p. 159; Maksoudian, *Chosen of God*, p. 45–46 (*հայերեն թարգմանությունը՝ Մագսուտյան, Հնորեայդ յԱստուծոյ*, էջ 79–80);

¹⁸ Barhebraeus, *Chronicon*, p. 350; Bar Hebraeus, *Chronography*, p. 305; Սմբատ, *Տարեգիրք, Փարիզ*, էջ 102; Վենետիկ, էջ 191–192; Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն 1870*, էջ 475; 1871, էջ 476; Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 138; *Հեթում Թագաւոր, Պատմութիւն*, էջ 76:

¹⁹ Michel le Syrien, *Chronique*, III, p. 361; IV, p. 710–711; Անանուն *Եղեւսացի, Ժամանակագրութիւն*, էջ 135; *Հեթում արքայորդի, Ճաշոց*, էջ 586: Վահրամ Բարունին եւ Հեթում Կոռիկոսցին հիշում են թե՛ մեկը, թե՛ մյուսը՝ «իշխանքն եւ զօրքն». Վահրամ Բարունի, *Ոսանաւոր պատմութիւն*, էջ 211; *Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն*, էջ 103:

²⁰ Սմբատ, *Տարեգիրք, Վենետիկ*, էջ 192:

²¹ Смбат Спарает, *Судебник*, с. 8.

այժմ էլ, ահա, հավատարիմների համախումբը, որն իրավասու էր լուծել այնպիսի կարեւոր մի հարց, ինչպիսին պետության գլխի ընտրությունն էր: Կասկած չկա, որ խոսքը վերաբերում է երկրի Գերագույն ատյանին կամ բարոնների ժողովին, որը ժամանակագրական կարգով լատին Արեւելից կիլիկյան իրականություն ներմուծված երկրորդ պետաիրավական հաստատությունն էր, խնամակալի գործակալությունից հետո: Հիշեցնենք, որ այդ հաստատության գործունեությանն առաջին անգամ մենք հանդիպեցինք Մլեհին Հայոց խնամակալ կարգելու կապակցությամբ: XII դ. երկրորդ կեսին կիլիկյան պետականության այդ նոր կառույցն, ըստ երեւոյթին, գտնվում էր ձեւավորման նախնական փուլում, եւ այդ պատճառով դեռեւս օժտված չէր հատուկ անվանմամբ: Թագավորական շրջանում էր, որ այն պիտի ստանար իր անվանումը եւ դառնար Կիլիկյան Հայաստանի ամենակարեւոր պետական մարմիններից մեկը: Լեւոն Բ-ին հղած իր հուշակավոր «Թղթում» ներսեւ Լամբրոնացին այն արդեն կոչում է «արժունական ատեան»²², ինչը համապատասխանում է Հայոց թագավորների լատիներեն եւ ֆրանսերեն հրովարտակների curia regis/regalis curia եւ roial aute cort անվանումներին²³: Արժունական ատյանը, որը նախագահում էր ինքը թագավորը, միաժամանակ թե՛ օրենսդիր-խորհրդակցական մարմին էր, եւ թե՛ գերագույն դատարան, որում քննվում էին պետական կյանքին վերաբերող կարեւորագույն հարցերը, սկսած իշխանների միջեւ ծագած վեճերից մինչեւ գահաժառանգության հետ կապված դժվարալույծ խնդիրները²⁴:

Այսպիսի Գերագույն ատյաններ գործում էին լատինական Արեւելի բոլոր պետություններում՝ Երուսաղեմի թագավորությունում, Անտիոքի իշխանապետությունում, Եդեսիայի եւ Տրիպոլիի կոմսություններում,

²² *Ներսէս Լամբրոնացի, Ատենաբանութիւն, էջ 214: Մի քանի տեղ էլ այդ ատյանը նա հիշատակում է առանց արքունական բառի. Անդ, էջ 221, 226, 233: Հմմտ. նաեւ՝ Торосян, Суд и процесс, с. 92-93.*

²³ *Հմմտ. Langlois, Cartulaire, p. 34; Dulaurier, Documents Arméniens, p. 583n; Lüders, Die Kreuzzüge, S. 86.*

²⁴ *Կիլիկիո Հայոց թագավորության Արքունական ատյանի գործառույթների մասին մանրամասն տե՛ս Langlois, Cartulaire, p. 34; Բակուրյան, Մի տեսութիւն, էջ 69-70; Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները, էջ 122-125:*

խսկ հետագայում նաեւ Կիպրոսի թագավորությունում²⁵: Տվյալ դեպքում մեզ հետաքրքրողը այդ ատյանների՝ գահաժառանգությանը վերաբերող խնդիրների լուծման գործառույթն է: Խաչակրաց պետությունների պատմության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ բնագավառում Գերագույն կամ Արքունական ատյանի միջամտության անհրաժեշտությունը սովորաբար ծագում էր երկու պարագայում՝ առաջին, երբ հանգուցյալ գահակալի անզավակության պատճառով հարկ էր լինում պետության ղեկը փոխանցել նրա եղբորը կամ մերձավորագույն ազգականին, եւ երկրորդ, երբ ատյանի որոշմամբ ամուսին էր ընտրվում գահի իգական գծով ժառանգորդի համար: Այսպես, դեռեւս 1100 թվականին, երբ մահացավ Երուսաղեմի թագավորության հիմնադիր Գոդֆրուա Բուլոյնացին, որն անզավակ էր, երկրի բարոնների ժողովի, կամ որ նույնն է՝ Վերին ատյանի, որոշմամբ թագավոր ընտրվեց նրա եղբայրը՝ Եղեսիայի նախկին կոմս Բալդուին I-ը: 1118-ին նույն պատճառով եւ նույնպիսի կարգադրությամբ վերջինիս հաջորդեց նրա զարմիկ Բալդուին II Բուրգացին: 1135-ին Անտիոքի բարոնների ժողովի խնդրանքով Երուսաղեմի թագավոր Ֆուկր ամուսին գտավ իշխանապետության գահաժառանգ Կոնստանսի համար: 1162 թվականին Գերագույն ատյանը Երուսաղեմի թագավոր հռչակեց Ամորի I-ին, քանի որ նրա եղբայրը՝ Բալդուին III-ը, նույնպես անզավակ էր: 1210 թվականին նույն ատյանը Երուսաղեմի գահի ժառանգորդ Մարիա Մոնֆերատցու համար ամուսին փնտրելու խնդրանքով դիմեց Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ-Օգյուստին, եւ վերջինիս ընտրությունը կանգ առավ վաթսուամյա Հովհաննես Բրիենացու վրա:

Թվարկված նախադեպերն, անշուշտ, չէին կարող անհայտ լինել Կիլիկիո Հայոց պետության իշխող դասի համար, որը բազմաթիվ թելերով կապված էր Ասորիի լատին ազնվականության հետ: Ավելին, հիմներ կան ենթադրելու համար, որ հայերը տեղյակ էին անգամ դրանց իրավաբանական ներություններին: Այս առումով չափազանց ուշագրավ է

²⁵ *Խաչակրաց պետությունների Գերագույն կամ Արքունի ատյանների մասին մանրամասն տե՛ս Prawer, The Crusaders' Kingdom, p. 113–122; Cahen, La Syrie du Nord, p. 441–452; Richard, Tripoli, p. 71–73; Amouroux-Mourad, Édesse, p. 113–114.*

Մատթեոս Ուռհայեցու «Ժամանակագրության» հետեւյալ հատվածը, որը վերաբերում է Բաղդուին Բուրգացի թագավորի գահակալման հանգամանքներին: Հստ Մատթեոսի՝ զգալով իր մոտալուտ վախճանը, Բաղդուին I-ը կարգադրել էր թագավորության խնամակալ (տեղապահ) կարգել Բաղդուին Բուրգացուն, մինչև որ Տրանսիայից կժամաներ իր եղբայրը եւ կբազմեր Երուսաղեմի գահին: Սակայն Բուրգացին մերժում է բարոնների (իմա՝ Գերագույն ատյանի) կողմից արված այդ առաջարկը եւ պահանջում է իրեն թագավոր ճանաչել: Փոխզիջման արդյունքում, սակայն, նա ի վերջո համաձայնում է թագը կրել Բաղդուին I-ի եղբորը մեկ տարի սպասելուց հետո: Ուռհայեցու այս հատվածն այնքան խոսուն է եւ այնքան ճշգրիտ է վերարտադրում նաեւ լատինական աղբյուրներով հաստատվող պատմական փաստերը, որ արժե այն մեջբերել ամբողջությամբ. «Իսկ ի թուականութեանն Հայոց ՇԿէ յարուցեալ Պաղտունն²⁶ Ուռհայոյ կոմսն զնաց աղօթական ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ մինչ լինէր ատուրք սուրբ աղոսիացիցն, զօրածողով արար թագաւորն Երուսաղէմայ Պաղտինն²⁷, եղբայրն Կոնդօփրէի²⁸, զնացեալ ի կողմանս աշխարհին եգիպտացոց, կամեցաւ ածել իւր ի հնազանդութիւն զազգն բարբարոսաց. եւ գտանէր զամենայն աշխարհն փախուցեալ ի մարդոյ, դարձաւ դիմօք ի սուրբ քաղաքն Երուսաղէմ: Եւ ի գալն՝ ցաւ հասանէր նմա, որ եւ ի ճանապարհին մեռանէր: Եւ մինչդեռ կենդանի էր՝ պատուէր տայր ասելով. «Առաքեցիք յՈւռհա եւ բերէք զկոմսն զՊաղտինն եւ կացուցիք զինն ի քաղաքն Երուսաղէմ տեղապահ, մինչև ի Փռանգաց գայցէ իմ եղբայրն, եւ զնա դիմ ձեզ թագաւոր»: Եւ յայնժամ բերին դագաղօք զթագաւորն յԵրուսաղէմ եւ թաղեցին զնա առաջի սրբոյն Գողգոթայի, զայր բարի եւ զսրբասէր եւ խոնարհ սրտիմ: Իսկ իբրեւ գտան զՊաղտինն յԵրուսաղէմ, հիացան յոյժ եւ դարձեալ ուրախ լինէին եւ համարեցան եթէ յԱստուծոյ եղեւ կոչն այն. եւ որպէս անդարձ

²⁶ *Բաղդուին II Բուրգացի, Եղեսիայի կոմս (1100–1118 թթ.), Երուսաղեմի թագավոր (1118–1131 թթ.):*

²⁷ *Բաղդուին I Բուլոյնացի, Եղեսիայի կոմս (1098–1100 թթ.), Երուսաղեմի թագավոր (1100–1118 թթ.):*

²⁸ *Գողգոթայի Բուլոյնացի, Երուսաղեմի խաչակրաց պետութեան հիմնադիր, «Սուրբ Գերեզմանի պաշտպան» (1099–1100 թթ.):*

արարեալ էր թագաւորն, տան զտեղապահութիւնն Երուսաղէմայ ի Պաղտինն: Եւ նա ոչ առնոյր յանձն, այլ զաթոռ թագաւորութեանն խնդրէր. եւ պայման արարեալ զամ մի ոչ դնել թագ ի գլուխն, եւ եթէ ոչ զայցէ եղբայր թագաւորին՝ դիցէ զթագն: Եւ հանեցան ամենայն տունն Փռանգաց զբան նորա. եւ յաւուր Ծառզարդարին տարան զկոմսն Ուռհայոյ ի տաճարն Սողոմոնի եւ դնէին զնա յաթոռ թագաւորութեանն Երուսաղէմի, եւ ի կատարման տարւոյն դնեն զթագն ի գլուխն Պաղտունին»²⁹:

Միջազգային իրավունքի տեսակետից Ռուբեն Գ-ը դեռեւս գտնվում էր Բյուզանդական կայսրության ապստամբ հպատակի կարգավիճակում: Նա եւ Մլեհը XII դ. Հայոց իշխանների շարքում միակն էին, որ չէին արժանացել սեբաստառ տիտղոսին, ինչը նշանակում է, որ նրանք, ի տարբերություն իրենց նախորդների, անգամ ժամանակավորապես եւ թեկուզ ձեւականորեն չէին ստանձնել բյուզանդական պաշտոնյայի պարտականությունը: Ռուբենի համար մեծագույն բարեբախտություն էր, որ 1176 թվականին Բյուզանդիան սուկայի պարտություն կրեց Իկոնիայի սելջուկյան սուլթանությունից եւ կորցրեց Կիլիկիայի հետ ունեցած իր ընդհանուր սահմանը³⁰: Խոսքը վերաբերում է Անատոլիայի Միրիոկեֆալոն բնակավայրի մոտ տեղի ունեցած հայտնի ճակատամարտին: Վերջինս այնպիսի կործանարար հետեւանմներ ունեցավ Բյուզանդիայի համար, որ արդի հետազոտողներից շատերն այն համեմատում են 1071 թվականի Մանազկերտի ճակատամարտի հետ: Միրիոկեֆալոնի ճակատամարտի նշանակությունը լիովին ըմբռնելու համար արժե ներկայացնել հայտնի բյուզանդագետ Ա. Վասիլեի տեսակետը. «Մանազկերտի 1071 թ. ճակատամարտն արդեն իսկ մահացու հարված էր Փոքր Ասիայում Բյուզանդական տիրապետության համար: Բայց ժամանակակիցները դա չէին հասկանում եւ դեռեւս հույս էին փայփայում, որ կարող են ուշի գալ ու ազատվել սելջուկյան վտանգից: Առաջին երկու խաչակրությունները չնվազեցրին այդ վտանգը: 1176 թ. ճակատամարտը հիմնիվեր կործանեց թուրքերին Փոքր Ասիայից վտարելու Բյուզանդիայի վերջին հույսը: Դրանից հետո կայսրությունն այլեւս ի վիճա-

²⁹ Մատթէոս Ուռհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 339-340:

³⁰ Հմմտ. Grousset, L'Empire, p. 391.

կի շէր որեւէ արդյունավետ հարձակողական ֆաղափականություն վարելու Արեւելքում»³¹: Վասիլեր մեջբերում է նաեւ գերմանացի միջնադարագետ Բ. Կուզլերի գնահատականը, որը թեւեւ հակիրճ, բայց ավելի դիպուկ է. «Միրիոկեֆալոնի ճակատամարտը հավիտյանս վնեց ողջ Արեւելքի բախտը»³²: Նշված երկու ճակատամարտերը կարելու անդրահարձ ունեցան նաեւ հայերի ճակատագրի վրա. պատկերավոր արտահայտված՝ Մանագլերտի ճակատամարտի հետեւանձնով ստեղծվեց Կիլիկիո Հայոց իշխանությունը, իսկ Միրիոկեֆալոնի ճակատամարտի հետեւանձնով՝ Կիլիկիո Հայոց թագավորությունը:

Միրիոկեֆալոնի ճակատամարտի շնորհիվ վերջնականապէս ազատվելով բյուզանդական լծից՝ Կիլիկիո Հայոց իշխանությունը հնարավորություն ստացավ անցնելու խաղաղ շինարարական աշխատանքի, եւ Ռուբենը լիովին նվիրվեց Մլեհի նվաճումների ամրապնդման ու երկրի բարգավաճման գործին: Սակայն, նկատի ունենալով Միրիոկեֆալոնի աղետից հետո բյուզանդական հովանավորությունից զրկված՝ Լամբրոնի Հեթումյանների խոցելի վիճակը, Ռուբենն, ըստ երեւոյթին, շղիմացավ գայթակղությանը եւ վնեց միանգամից լուծել նաեւ նրանց ծնկի բերելու ու Ռուբինյան տիրապետությունը Կիլիկիայի ողջ տարածքում հաստատելու հարցը: Այդ նպատակով նա հարձակվեց Հեթումյանների անառիկ բերդի վրա, բայց լուրջ դիմադրության հանդիպելով, ստիպված եղավ երեւ տարի պաշարված պահել այն³³: Փոխանակ սովորականի պէս Բյուզանդիային ապավինելու, ինչն արդեն անիմաստ էր, Հեթումյան իշխաններն այս անգամ օգնության խնդրանքով դիմեցին Անտիոքի պրինց Բոհեմունդ III-ին³⁴: Ըստ որոշ աղբյուրների՝ դավադրության հետեւանձնով³⁵, իսկ ըստ

³¹ Vasiliev, Byzantine Empire, p. 429.

³² Անդ: *Տե՛ս նաեւ*՝ Куглер, История, с. 222.

³³ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 103; Վենետիկ, էջ 193; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 212; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586:*

³⁴ *Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 212; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586; Յակոբ Սեպի, Պատմութիւն, էջ 141:*

³⁵ *Michel le Syrien, Chronique, III, p. 396; IV, p. 730; Barhebraeus, Chronicon, p. 369; Bar Hebraeus, Chronography, p. 321; Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1871, էջ 491; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 212; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586:*

այլոց՝ իր վավաշուտ ցանկությունները բավարարելու համար Անտիոֆ այցելելու պատճառով³⁶, Ռուբենը 1185 թվականին³⁷ ընկավ Բոհեմունդի ձեռքը եւ բանտ նետվեց: Այնուհետեւ Անտիոֆի պրինցն ասպատակեց իր իշխանապետից զրկված Կիլիկիո երկիրը, հուսալով հեշտությամբ նվաճել այն, սակայն Ռուբենի եղբայրը՝ Լեոնը, ուժեղ դիմադրություն ցույց տալով, ետ մղեց անտիոֆացիների հարձակումը եւ նրանց վոնդեց Հայոց իշխանության սահմաններից³⁸: Լեոնն, ըստ երեսույթին, այդ ժամանակ իր եղբոր կամքով երկրի խնամակալ էր կարգվել, ինչի մասին վկայում են մի քանի աղբյուրներ: Միֆայել Ասորու ժամանակագրության ասորերեն բնագիրն այդ առթիվ տեղեկացնում է, որ Բոհեմունդը Կիլիկիայում որեւէ հաջողության չհասավ եւ չկարողացավ անգամ մեկ վայր գրավել, «քանի որ Ռուբենի տեղում Լեոնն էր, որը խելամտորեն խնամֆ էր տանում իրենց երկրին»³⁹: Ուշագրավ է, որ Միֆայելը ոչ թե նշում է, թե Լեոնը տիրում էր երկրին, այլ ընդամենը՝ «խնամֆ էր տանում»: Այս առումով ավելի հստակ է նրա ժամանակագրության հայերեն թարգմանությունը. «Լեոն եղբայրն Ռոբենայ իմաստնապէս ... խնամարկէր աշխարհին»⁴⁰: Իսկ որ Լեոնի խնամակալությունը կարգադրվել էր Ռուբենի կամքով՝ այդ մասին էլ վկայում է Հեթում արքայորդու ճաշոցի հիշատակագիրը. «Այլ Ռուբէն յղեաց առ եղբայր իւր Լեոնի՝ նստել յաթոռ պարոնութեանն եւ պահել զերկիրն»⁴¹: Գերության

³⁶ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 104; Վենետիկ, էջ 194:*

³⁷ *Թվականն ըստ՝ Michel le Syrien, Chronique, III, p. 393, 396; Միֆայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 490, 492; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 133; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 104; Վենետիկ, էջ 194; Barhebraeus, Chronicon, p. 369; Bar Hebraeus, Chronography, p. 320 (1186 թ.).*

³⁸ *Michel le Syrien, Chronique, III, p. 397; IV, p. 730; Barhebraeus, Chronicon, p. 369; Bar Hebraeus, Chronography, p. 321; Միֆայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 493; 1871, էջ 492; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 212; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586:*

³⁹ *Michel le Syrien, Chronique, III, p. 397; IV, p. 730.*

⁴⁰ *Միֆայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 493: Տե՛ս նաեւ՝ Յակոբ Սոսցի, Պատմութիւն, էջ 141:*

⁴¹ *Մաթեւոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 586:*

մեջ գտնվող գահակալի փոխարեն երկրի խնամակալ նշանակելու ավանդույթն, ինչպես տեսանք նախորդ ենթագլխում, չափազանց տարածված էր լատինական Արեւելի պետություններում:

Ռուբենի թեթեամտությունը շատ թանկ նստեց Կիլիկիո Հայոց իշխանության վրա: Այն, ինչին Բոհեմունդը չկարողացավ հասնել գեներալ ուժով, հասավ անպարկեշտ սակարկությամբ: Ռուբենի ազատագրության դիմաց հայկական կողմն ստիպված էր պատանդ թողնել նրա մորն ու մի քանի այլ ազգականների, որպես փրկագին Բոհեմունդին վճարել հազար դահեկան ոսկի, եւ, վերջապես, Անտիոքի իշխանապետությանը զիջել Կիլիկիայի Սարվանդիֆար, Թիլ եւ Ճկեր բերդերը⁴²: Ասորական աղբյուրները խոսում են երեք կամ երեսուն հազար դահեկանի փրկագին վճարելու եւ Ադանա ու Մսիս ֆաղաֆները զիջելու մասին⁴³: Ճիշտ է, այդ աղբյուրներն ավելացնում են նաեւ, որ փրկագինը վճարելուց ու պատանդներին ազատելուց հետո Ռուբենը կարճ ժամանակի ընթացքում ետ խլեց Անտիոքին զիջած ֆաղաֆներն ու բերդերը⁴⁴, սակայն դա ամենեւին չէր մեղմացնում Կիլիկիո Հայոց իշխանությանը պատճառված բարոյական եւ ֆաղաֆական վնասը, քանի որ, մեր կարծիքով, Հայոց իշխանը կատարել էր մի շատ ավելի մեծ զիջում, որի մասին նույն աղբյուրները քաջ լուրջուն են պահպանում: Ամենայն հավանականությամբ, բացի թվարկված նվաստացուցիչ պայմաններից, Բոհեմունդ III-ը գերյալ Ռուբենին պարտադրել էր նաեւ հավատարմություն հայտնել Անտիոքի իշխանապետությանը եւ երդմամբ ճանաչել նրա գերիշխանությունը: Սա, մեզ թվում է, ապացուցվում է կողմնակի մի փաստի շնորհիվ, որի մասին տեղեկացնում են լատին աղբյուրները՝

⁴² *Մմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 105; Վենետիկ, էջ 194:*

⁴³ Michel le Syrien, Chronique, III, p. 397; IV, p. 730; Barhebraeus, Chronicon, p. 370; Bar Hebraeus, Chronography, p. 321. *Իսկ անանուն մի աղբյուրի տվյալներով՝ Ռուբենը Բոհեմունդին զիջել էր Մսիսը, Թիլ-Համդունը, Սարվանդիքարը, եւ վճարել քառասուն հազար դահեկան. Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 526: Ըստ Սամուելի՝ փրկագինը եղել էր 100.000 դահեկան. Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 141:*

⁴⁴ Michel le Syrien, Chronique, III, p. 397; IV, p. 730; Barhebraeus, Chronicon, p. 370; Bar Hebraeus, Chronography, p. 321; *Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 493; 1871, էջ 492:*

էոնուր, Ամադին եւ «Գործի Կիպրացոց»-ը: 1193/4 թվականին տեղի ունեցած մի կարեւոր իրադարձության կապակցությամբ, որին մենք դեռ մանրամասնորեն անդրադառնալու ենք, նշված աղբյուրները միաբերան հայտարարում են, որ Լեւոն Բ Հայոց իշխանն այդ ժամանակ Անտիոքի պրինց Բոհեմունդ III-ի վասալն էր⁴⁵: Ի դեպ, որ ինչ-որ ժամանակ Կիլիկիո Հայոց իշխանությունը ճանաչել էր Անտիոքի գերիշխանությունը, կողմնակիորեն հաստատվում է նաեւ հայկական աղբյուրների տվյալներով: Այսպես, Սմբատ Սպարապետը տեղեկացնում է. «Ի թուին Ոսթ (= 1193) յորժամ դարձաւ բրինձն ի Սալահատնէն, խորհեցաւ ընդ տիկինն իւր բռնել զԼեւոն. եւ նա ասէր՝ մի՛ գործեր զայդ գործ անիրատւութեան, քանզի փեսայ է իմ⁴⁶, եւ յամենայն ժամ յօժարութեամբ զայ ի ծառայութիւն քո եւ ձեռնտու է քեզ ի գործ պատերազմի»⁴⁷: Իսկ նկարագրելով 1216 թ. Անտիոքի գրավումը հայերի կողմից, Սմբատն ավելացնում է. «Իսկ թագաւորն Լեւոն հասեալ յայսպիսի գործոյ կատարումն՝ ցնծայր եւ յոյժ ուրախ էր ընդ աստուածային յաջողումնն, քանզի որում յառաջագոյն ինքեանք ծառայէին, արար զնա ի ներոյ իշխանութեան իւրոյ»⁴⁸:

Վասալության ճանաչումը սովորաբար տեղի էր ունենում նարահատյալ վիճակներում այն է, երբ գահակալը գերի էր ընկնում, կամ երբ նրա երկիրը ենթարկվում էր կապիտուլյացիայի: Լեւոնը նման հանգամանքներում չէր հայտնվել, ուստի մնում է միայն ենթադրել, որ վասալությունը նա ծառանգել էր իր եղբորից: Այս եզրակացությանը բավականին մոտեցել է Ղ. Ալիշանը, սակայն բոլորովին այլ հիմունքով: Ըստ նրա՝ քանի որ հայերը Ռուբենի օրոք գրավել էին Կիլիկիայում Անտիոքի պրինցին պատկանող քաղաքները, ուստի նրանք կամ զավթիչ պիտի համարվեին, կամ էլ՝ Անտիոքի պրինցի վասալները, եւ Բոհեմունդը Ռուբենին հենց այդպիսին էլ համարում էր. «ի տիրանալն Հայոց ի վերայ սոցին՝

⁴⁵ Ernoul, Chronique, p. 319; Amadi, Chronique, p. 88–89; Gestes des Chiprois, p. 661.

⁴⁶ Լեւոնը 1189 թվականին ամուսնացել էր Անտիոքի դքսուհի Սիբիլի եղբոր դստեր՝ Իզաբելի հետ. տե՛ս Rüdts-Collenberg, The Rupenides, I (Rup.).

⁴⁷ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 203–204:

⁴⁸ Անգ, էջ 219:

կամ բռնատրֆ համարեալ լինէին, կամ լինֆ Բրնձին Անտիոքայ. այսպէս վարկանէր ինքեան Պեմունդ գոուբէն»⁴⁹: Սակայն, ըստ մեզ, Բոհեմունդն ինչպես էլ միակողմանիորեն համարեր, միեւնույն է, առանց հավատարմության երդում տալու՝ Ռուբենը նրա վասալը չէր կարող լինել: Մեզ համար, սակայն, կարելորն այն է, որ Կիլիկիայի վասալությունն Անտիոքին Ղ. Ալիշանը նույնպես կապում է Ռուբենի անվան հետ⁵⁰:

Բոլորովին այլ է Ս. Ռանսիմենի տեսակետը. ըստ նրա՝ 1186 թվականին Հայոց իշխանության ղեկն ստանձնելուց հետո, փնտրելով Բոհեմունդ III-ի դաշինքը, Լետնն ինքն է ճանաչել վերջինիս գերիշխանությունը⁵¹: Բրիտանացի պատմաբանը, սակայն, այս պնդումը հաստատող որեւէ աղբյուր չի հղում, թեւէ կասկածից վեր է, որ նրա հիմքը Ամադիի այն տեղեկությունն է, որի համաձայն՝ Լետնը դեռեւս Ռուբենի մահից առաջ գնացել էր Անտիոք, ծառայության մտել Բոհեմունդի մոտ եւ վերջինիս կողմից ասպետ կարգվել. «El signor de Armenia, in questo tempo, si chiamava Rubin; et un suo fratello, chiamato Livon, ando in Antiochia et servi al principe Beimonte, come cortegiano gran tempo, et pervene a tanto che Beimonte el fece cavaglier. Et poco da poi fattosi cavaglier, morite suo fratello Rubin...»⁵²: Դժվար չէ նկատել, որ Ս. Ռանսիմենը շեղվել է իր աղբյուրից եւ Ռուբենի մահվանը նախորդած իրադարձությունը թվագրել Լետնի իշխանության ժամանակով: Մեր կարծիքով՝ Ամադիի տեղեկությունը, եթէ, իհարկէ, այն համապատասխանում է իրականությանը, կարող է ունենալ հետեւյալ բացատրությունը: Ըստ երեւոյթին, չբավարարվելով Ռուբենի հավատարմության երդմամբ՝ Բոհեմունդը նույնպիսի երդում է պահանջել նաեւ Կիլիկիո պոտենցիալ իշխան Լետնից, որն իր եղբորը գերությունից փրկելու համար հարկադրաբար կատարել է այդ պահանջը:

Այսպիսով, Բյուզանդիայից հագիվ ազատված՝ Կիլիկիո Հայոց իշխանությունը Ռուբենի անխոհեմության կամ թեթեամտության պատճառով⁵³,

⁴⁹ Ալիշան, Սիսուան, էջ 439:

⁵⁰ Այդ մասին ավելի հստակ տե՛ն Ալիշան, Սիսուան, էջ 454:

⁵¹ Runciman, A History, III, p. 87.

⁵² Amadi, Chronique, p. 88.

⁵³ Պետական այրի համար անխոհեմություն էր, եթե միամտաբար ընկել էր հակա-

միջազգային իրավունքի տեսակետից, հայտնվել էր Անտիոքի իշխանապետությունից կախված վասալ-պետության երկրորդական կարգավիճակում: Երկրի համար այս ծանր անպատվությունը չէր կարելի ներել, ուստի շուտով Ռուբենը, հասարակական կարծիքի ճնշման տակ⁵⁴, ստիպված էր հրաժարական տալ եւ, իշխանության կառավարման ղեկը փոխանցելով եղբորը, վանք ֆաշվել, որտեղ էլ նա պիտի կնքեր իր մահկանացուն 1187 թվականին: Քորոս Բ-ից հետո սա Կիլիկիայի պատմության մեջ տեղ գտած արդեն երկրորդ դեպքն էր, երբ գահից հրաժարված իշխանը վանական էր դառնում⁵⁵: Մեզ թվում է, չպետք է անգամ բացառել, որ Ռուբենի հրաժարումը հարկադրական էր եղել, քանի որ գահաժառանգության հայկական ավանդույթը պարունակում էր այդպիսի լուծման հնարավորություն: Դա հստակորեն արձանագրված է Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» հետեւյալ հոդվածում. «Ջայն ոք, որ մարդիկ դնեն, նա թէ յայնց պիղծ լինին, որ չկարէ հանդուժել աշխարհն, նա այլվայ իրենք Եկեղեցովն եւ ամէն բնակչաք երկրին կարեն ախորել»⁵⁶: Ինչպես արդեն նշվեց սույն աշխատության «Նախագիտելիք» ենթագլխում, սա նշանակում է, որ մարդկանց կողմից ընտրված գահակալը կարող էր նրանց կողմից էլ գահընկեց արվել: Մենք տեսանք, որ Ռուբենն ընտրվել էր Հայոց իշխանների ժողովի կողմից, ուստի նույն այդ ժողովը կարող էր նրան հրաժարական պարտադրել:

Ոսկորդի լարած թակարդը, եւ թեթեւամտութիւնն էր, եթե իսկապես գերվել էր պոռնիկների հետ զվարճանալու համար Անտիոք գնալու պատճառով, ինչպես գրում է Սմբատ Սպարապետը. «Իսկ պարոն Ռուբէն կայր պարապեալ վավաշոտ ցանկութեանց եւ պոռնկական խորհրդոց. եւ վասն այնր գնաց յԱնտաք ուտել եւ ըմպել ընդ պոռնիկ կանայս». Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 104. մոտավորապես նույնը՝ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 194:

⁵⁴ Դա հաստատվում է մասնավորապես «Պատմութիւն սրբոց հարցն մերոց» աշխատության վկայութեամբ. «Եւ թողեալ զՌուբէն, եւ եկն ի տուն իւր: Եւ կացեալ ամ մի, կորացեալ անձամբ եւ բեկեալ սրտիւ, ոչ կարէր հանդուրժել նախատանաց, որ այնպէս անկաւ ի ձեռս նոցա, թափուր եղեւ ամենայնէ, հիվանդացաւ».

⁵⁵ Կյանքի վերջում գահակալների վանական դառնալու սովորույթն, ըստ երեսույթին, փոխառված է բյուզանդական իրականությունից:

⁵⁶ Смбат Спарамет, Судебник, с. 81.

ԼԵՒՈՆ Բ ԽՆԱՄԱԿԱԼ-ԻՇԽԱՆ (1187–1198 թթ.)

Ռուբենի հրաժարականը, որքան էլ հարկադրական, այնուամենայնիվ, ըստ երեւոյթին, եղել էր որոշ փոխզիջման արդյունք, եւ Հայոց իշխանների ժողովը կամ Գերագոյն ատյանը հաշվի էր առել նաեւ իր երկրի ու ժողովրդի առջեւ համենայն դեպս հսկայական վաստակ ունեցող իշխանի պայմաններն ու իրավական փաստարկները: Գատելով առկա աղբյուրներից՝ փոխզիջման էութիւնը կայանում էր նրանում, որ Հայոց գահի օրինական ժառանգորդ էին նանաչվել Ռուբենի դուստրերը, իսկ Լեւոնն ընդամենը կարգվել էր անշափահաս պայագատների ու երկրի խնամակալ, ինչը հաստատվում է մատենագրական բազմաթիվ տվյալներով: Մի քանի հայկական աղբյուրներում Լեւոնի վերաբերյալ օգտագործված է խնամակալի նշանակման ճիշտ նույն բանաձեւը, որը կիրառված է Թումաս իշխանին Թորոս Բ-ի որդու խնամակալ կարգելու պարագայում: Այսպէս, Հեթում արքայորդու ճաշոցի հիշատակագիրը գրում է. «Եւ (Ռուբէն) վախճան մահու հասեալ, խրատեաց զեղբայրն իւր բազում իմաստութեամբ եւ բարութեան խրատով, թողեալ ի նա գիշխանութիւնն եւ զզստերս իւր, ինքն հանգաւ ի Քրիստոս»¹: Հեթում Կոռիկոսցին նույնը ձեւակերպում է հետեւյալ բառերով. «Իսկ ի հասանել վախճանին Ռովբինայ, կացոյց յաթօն զեղբայր իւր զԼեւոն, յանձն արարեալ նմա զերկօսին դստերսն իւր»²: Վահրամ Բաբունին ավելացնում է եւս մէկ մանրամասն. «Եւ ի վախճան կենացն հասեալ, / Կրօնատը

¹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 586:

² Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 103:

ինքն եղեալ,/ Ձկնն բազում բանի խրատեալ,/ Եւ ի յաթօն նախնեացն եղեալ,/ Ձիւր գոստերսն ի նա տուեալ,/ Եւ պատուիրան գայս ասանդեալ,/ Ոչ արտափուստ փեսայ ածեալ,/ Ձի մի՛ Հայոց լիցին տիրեալ»³: Ինչպէս տեսնում ենք, բերված բնագրերում օգտագործված է հանգուցյալ գահակալի ժառանգների խնամքն ու իշխանության կառավարումը մեկին հանձնարարելու/թողնելու բանաձեւը: Ինչ վերաբերում է Ռուբենի վերջին խրատին, որ իր դուստրերին շամուսնացնեն օտարների հետ, որպէսզի նրանք չտիրեն Հայաստանին, ապա եթէ մի կողմ դնենք նրա զգացական շեշտադրումը, կտեսնենք, որ այն լուրջ տեղեկատվություն է պարունակում, այն է՝ Հայաստանին պիտի տիրեին Ռուբենի փեսաները, ինչը նշանակում է նրա դուստրերն էին Հայոց գահի օրինական ժառանգորդները, եւ հետեւաբար, Լեւոնը միայն նրանց խնամակալն էր:

Այս առումով չափազանց ուշագրավ են նաեւ իրադարձությունների ժամանակակից Վարդան Մաշկետրցի գրչի հետեւյալ երկու հիշատակարանները. «Եւ արդ գրեցաւ գիրքս սուրբ Աւետարանս, ձեռամբ Վարդանա կրանաւորի մեղապարտ եւ փցուն գրչի, ի վանքս Մաշկետրիս, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս եւ Սուրբ Կարապետիս, ի սահմանս Սիսովն քաղաքիս, ի դիտապետութեան տեառն Գրիգորի որ Տղայն կոչիր եւ ի վերայկացութեանն իշխանութեան պատրոն Լեւոնի, ի թուականիս Հայոց ՈԶ (1187)»⁴ եւ «Եւ այս եղեւ ի դիտապետութեան Հայոց տեառն Գրիգորի որ Տղայն կոչիր, եւ ի վերայկացութեանն իշխանութեամբ քաղցր եւ բարեպաշտ պատրոն Լեւոնի եւ յաղթող ամենայնի, զոր պահեսցէ Աստուած խաղաղութեամբ: ... Եւ ի ՌեԱ (1192) գրեցաւ գիրքս այս»⁵: Հայկական հիշատակարաններում «ի վերայկացութեանն իշխանութեան» արտահայտությունը որեւէ այլ իշխանի դեպքում (Ռուբինյան թե Հեթումյան) կիրառված չէ, այլ միշտ օգտագործվում է «յիշխանութեան այսինչի կամ այնինչի» բանաձեւը, ինչպէս, օրի-

³ Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 212–213: Ի դեպ, իր դուստրերին օտարների հետ շամուսնացնելու Ռուբենի թախանձանքը կրկնում է նաեւ Սամուել Անեցին. տես Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 142:

⁴ Մաթեոսյան, Ե–ԺԲ դդ. հիշատակարաններ, էջ 252:

⁵ Անդ, էջ 266–267:

նակ՝ «ի կաթողիկոսութեան տեառն Գրիգորի եւ իշխանութեան Հեթմոսեաստոսի» (1177 թ.)⁶, «եւ յիշխանութեան այսմ գաւառի Ռոբենի բարեպաշտ իշխանի» (1181 թ.)⁷, «եւ ընդ իշխանութեամբ մեծագաւր եւ բարեպաշտ պատրոնին Ռաբինայ» (1183 թ.)⁸, «յիշխանութեան մեծահաննար եւ աստուածասէր սեւաստաւսին Հեթմոյ» (1190 թ.)⁹, «յիշխանութեան բարեպաշտ իշխանին Լեւոնի (1193 թ.)¹⁰, «յիշխանութեան մեծանուն սերաստաւսի Հեթմոյ» (1195 թ.)¹¹: Ուստի ականհայտ է, որ Վարդան Մաշկետուրցու օգտագործած բանաձեւն «իշխանությունից» տարբեր իմաստ է ականարկում այն է, որ Լեւոնը ոչ թե Կիլիկիո իշխանն էր, այլ իշխանության վերակացուն (= խնամակալ):

Եւ վերջապէս, գոյություն ունի մի թանկարժեք աղբյուր, որն արդեն ուղղակի վկայում է, որ Լեւոնը Ռուբենի դստեր ու երկրի խնամակալ էր կարգվել: Դա Ամադիի՝ իտալերենով գրված ժամանակագրությունն է. «Մեռավ նրա (Լեւոնի) եղբայր Ռուբենը եւ ժառանգորդ չթողեց, բացի մի դուստրից, որի խնամակալ եւ երկրի պահապան պիտի լինէր Լեւոնը» (Morite suo fratello Rubin et non lasso heredi, eccetto una figlia, de la quale Livon dovea esser bailio et esser [custode] de la terra)¹²: Ի դեպ, ժամանակագրության շարունակության մեջ Ամադին ավելացնում է նաեւ, որ հետագայում Լեւոնն իր զարմուհուն զրկեց գահաժառանգությունից եւ իշխանությունը վերցրեց իր ձեռքը (la dishereditò et retenne la signoria)¹³: Այսպիսով, այլեւս որեւէ տարակոյս չի մնում, որ 1187–1198 թթ. ժամանակամիջոցում Լեւոնը Կիլիկիան կառավարել է խնամակալի կար-

⁶ Անդ, էջ 221:

⁷ Անդ, էջ 231:

⁸ Անդ, էջ 235:

⁹ Անդ, էջ 261:

¹⁰ Անդ, էջ 272:

¹¹ Անդ, էջ 288:

¹² Amadi, Chronique, p. 88. Ի դեպ, Ամադի-ն հեղինակի պայմանական անունն է: Նրա անանուն իտալերեն աշխատությունը «Ամադիի ժամանակագրություն» է կոչվել այդ երկի միակ պահպանված ձեռագրի տիրոջ անունով:

¹³ Amadi, Chronique, p. 89.

գավիճակով, իսկ Հայոց իշխանության *de jure* գահակալը եղել է Ռուբենի ավագ դուստր Ալիսը (հայկական աղբյուրներում Ալիծ)¹⁴: Ուրբան մեզ հայտնի է, արդի հետազոտողներից միայն Վ. Ռուդ-Կոլենբերգն ու Մ. Հարդվիկն են, որ Լեւոնին Ալիսի խնամակալ են ճանաչում, սակայն, չգիտես ինչու, Ռուդ-Կոլենբերգն այդ խնամակալությունը սահմանափակում է 1186–1190 թվականներով¹⁵:

Մինչ այժմ ընդունված տեսակետի համաձայն՝ իգական գծով գահաժառանգության առաջին եւ միակ դեպքը Կիլիկյան իրականության մեջ եղել է Զապել թագուհու գահակալումը (1219 թ.)¹⁶, եւ այդ նորամուծությունը, ինչպես դեռես XIV դարում նկատել է Հովհաննես Դարդելը, կատարվել է խաչակրաց պետություններում գործող օրենքի ազդեցությամբ. «Աւրայն Լեւոն Առաջին վարեալ զիշխանութիւն իւր քաջութեամբ եւ խաղաղութեամբ ընդ ամս երեսուն եւ վեց, փոխեցաւ յաշխարհէ եւ եթող դուստր Զապէլ անուն, որում անկանէր թագաւորութիւնն ըստ օրինացն Անտիոքայ, որովք վարէր պետութիւնն ստորին Հայոց»¹⁷: Ալիսի հանգամանքը պարզելուց հետո, կարծում ենք, այս տեսակետը վերանայման կարիք ունի: Սակայն այն, որ իգական գծով գահաժառանգության իրավունքը Կիլիկյան Հայաստանում ձեւավորվել է լատինական Արեւելի ազդեցությամբ, իհարկե, կասկածից վեր է: Մինչեւ Ալիսի գահակալումը, այն է՝ մինչեւ 1180-ական թվականները, այդ կարգը երեք անգամ կիրառվել է Ասորիքի խաչակրաց պետություններում: Այսպես, 1130 թվականին Անտիոքի իշխանապետության գահն անցավ Բոհեմունդ II-ի դուստր Կոնստանսին: 1131-ին Երուսաղեմի թագավորության գահի օրինական ժառանգորդ հռչակվեց Մելիսենդե թագուհին: Իսկ 1186 թվականին նույն իրավունքով Երուսաղեմի գահին տիրեցին Բալդուին IV թագավորի քույր Սիբիլն ու նրա ամուսին Գի Լու-

¹⁴ Հմմտ. Halfter, Das Papsttum, S. 232.

¹⁵ Rüd̄t-Collenberg, The Rupenides, p. 23; Hardwicke, The Crusader States, p. 527, 540. Ըստ երեւույթի, 1190-ը Ռուդ-Կոլենբերգը համարել է Ալիսի շափահաս դառնալու ժամանակը:

¹⁶ Հմմտ. Сукнасян, История, с. 211.

¹⁷ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 15:

սինյանը: Կարծում ենք, այս նախադեպերը կարետո դեր պետք է խաղացած լինեին՝ Կիլիկիայում տվյալ իրավունքը կիրառելու խնդրում: Լատինական Արեւելքում իգական գծով գահաժառանգության կարգն ամենայն նրբերանգներով եւ մինչեւ վերջին մանրամասնը մշակված իրավական ինստիտուտ էր: Ամուսնանալուց հետո թագուհին շարունակում էր մնալ գահի օրինական ժառանգորդը, իսկ նրա ամուսինը թագավոր էր օծվում ոչ թե ժառանգական իրավունքով, այլ միայն գործակցի հանգամանքով: Այդ ամուսնությունից զավակ ծնվելու դեպքում թագավորը կորցնում էր միապետի իր կարգավիճակը եւ վերածվում նորածնի խնամակալի: Իսկ երբ թագուհին անզավակ էր մեռնում, ամուսինը միանգամից զրկվում էր գահից: Այդ կերպ, օրինակ, Երուսաղեմի թագավոր Գի Լուսինյանը, իր կնոջ Սիբիլի մահից (1190 թ.) հետո, կորցրեց գահը:

Երկրի կառավարման դեկը Լեւոնն ստանձնել էր Կիլիկիայի համար ստեղծված միջազգային բարենպաստ պայմաններում¹⁸: Ինչպես արդեն նշվեց, Միրիոկեֆալոնի ճակատամարտից հետո Բյուզանդական կայսրությունը դադարել էր Արեւելքում ռազմաֆաղափական գործոն լինելուց: Եղբայրասպան պատերազմներից ու ներքին երկպառակություններից վերջնականապես արյունաքամ եղած՝ վերացել էին Սեբաստիայի եւ Մելիտենեի Դանիշմենդյան էմիրությունները: Իկոնիայի սելջուկյան սուլթանությունը, Իզզեդդին Քիլիջ-Արսլան II սուլթանի (1156–1192 թթ.) գահակալության վերջին տարիներին, բաժանված էր նրա որդիների միջեւ: Բացի այդ, սելջուկների ուշադրությունն այդ ժամանակ գամված էր երրորդ խաչակրաց արշավանքի սպանոսալիքի վրա. 1190 թվականին խաչակիրները նույնիսկ ժամանակավորապես գրավեցին սուլթանության մայրաքաղաք Իկոնիան: Իսկ Ասորիքի կողմերում շուտով Սալահեդդինի հարվածների տակ կործանման եզրին պիտի հասնեին, առանց այդ էլ զգալիորեն թուլացած, խաչակրաց պետությունները: Ինչպես տեսանք սույն աշխատության առաջին հատորում, Երուսաղեմը գրավելուց եւ Պաղեստինի նվաճումն ավարտելուց հետո, 1188 թվականին Այուբյան հաղթական սուլթանը վճռականորեն շարժվեց դեպի հյուսիս եւ, առանց դիմադրության հանդիպելու, մեկը մյուսի ետեւից

¹⁸ Հմմտ. Atamian-Bournoutian, Cilician Armenia, p. 280.

գրավեց Տրիպոլիի կոմսությանն ու Անտիոքի իշխանապետությանը պատկանող գրեթե բոլոր ֆաղաֆներն ու բերդերը: Անտիոքը մասնավորապես կորցրեց Ջաբալա, Լաթաֆիա, Սահյուն, Բալատոնոս, Ֆիհա, Բակաս, Շուդր, Բուրգեյ, Պաղրաս եւ Դարպասակ բերդաֆաղաֆներն ու ամրոցները: Ինքնըստինքյան հասկանալի է, որ այսպիսի ծանր տարածֆային կորուստներից հետո, որոնք հիմնովին ֆայֆայել էին երկրի պաշտպանական համակարգը, Անտիոքի իշխանապետությունն այլեսս չէր կարող չափվել Կիլիկիո հայկական իշխանության հետ, որն այդ ժամանակ ապրում էր իր վերելքի շրջանը:

Լեւոնն առավելագույնս օգտվեց Կիլիկիայի համար ստեղծված միջազգային այս հույժ բարենպաստ իրավիճակից: 1187 թվականին, իշխանության ղեկն ստանձնելուց ընդամենը մի ֆանի ամիս անց, նա ջախջախեց հսկայական բանակով Կիլիկիա ներխուժած թուրքներն զորավար Ռոստոմին¹⁹: Մեկ տարի հետո փոքրասիական սելջուկներից գրավեց Իսավրիայում գտնվող Պոականա ամրոցը²⁰: Նույն թվականին հաջողությամբ վանեց Սալահեդդինի՝ Կիլիկիա թափանցելու փորձը²¹: Իսկ 1191-ին զբաղեցրեց վերջինիս կողմից լվված Պաղրաս ամրոցը²², որը մինչ այդ պատկանել էր Անտիոքի իշխանապետությանը եւ գտնվել Տաճարական ասպետների տնօրինության տակ: Տեղադրված լինելով ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող դիրքում, Կիլիկիան Ասորիքին կապող ամանոսյան ամենակարճ լեռնանցքի հարավ-արեւել-

¹⁹ Մմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 105; Վենետիկ, էջ 200: Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 143; Վահրամ Բաբունի, Ռտանաւոր պատմութիւն, էջ 213; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586: Ռոստոմի մասին լրացուցիչ տե՛ս Cahen, Pre-Ottoman Turkey, p. 110–111; Cahen, The Turks, p. 680.

²⁰ Մմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 105; Վենետիկ, էջ 200–201: Պոականայի տեղազրուիթյունը տե՛ս Hild-Hellenkemper, Kilikien, S. 385.

²¹ Տե՛ս Микаелян, История, с. 142–143. Սալահեդդինը մեկ անգամ էլ փորձեց Կիլիկիան նվաճել 1193 թվականին. տե՛ս Մաթեոսյան, Ե–ԺԲ դդ. հիշատակարաններ, էջ 272; Մմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 204: Երկու աղբյուրներն էլ, սակայն, ավելացնում են, որ այդ փորձը նույնպես ապարդյուն անցավ:

²² Տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 389; Bar Hebraeus, Chronography, p. 336–337; Իրնալ-Ասիր, Հիակատար պատմութիւն, էջ 373; Հմմտ. Cahen, La Syrie du Nord, p. 582.

յան մուտքի մոտ, այդ բերդն այնուհետև կովախնձոր պիտի դառնար Հայոց իշխանության եւ Անտիոքի իշխանապետության միջե՝²³: Հայերի ձեռնում գտնվելով՝ Պաղրասը լուրջ անհանգստություն պիտի պատճառեր նաև Սիրիայի Այուբյաններին, ինչի մասին մասնավորապես վկայում է Իբն ալ-Ասիրը. «սրանից շատ տուժեց Հալեբի շրջակայքի ժողովուրդը»²⁴: Նշված ձեռքբերումները, սակայն, Հայոց իշխանի հաջողությունների միայն նախերգանքն էին. նրա բուն մեծագործությունները դեռ առջեւում էին: Իսկ մինչ այդ Լեւոնը կանգնած էր իր «լեգիտիմությանն» առնչվող երկու կարեւոր իրավական խնդիրների հրատապ լուծման անհրաժեշտության առջեւ: Առաջինն Անտիոքի գերիշխանությունից ազատվելու, իսկ երկրորդը՝ խնամակալի կարգավիճակը թոթափելու եւ երկրի օրինական տերը դառնալու խնդիրն էր:

Առաջին խնդիրը Լեւոնը շատ արագ լուծեց՝ օգտվելով 1193 թվականին²⁵ Բոհեմոնդ III-ին խորամանկաբար գերելու հարմարագույն առիթից: Հայերի եւ խաչակիրների հարաբերությունների այս հետաքրքիր դրվագը հանգամանորեն նկարագրված է հայկական, լատինական, ասորական եւ արաբական աղբյուրներում²⁶, իսկ նրա մանրակրկիտ գիտական ֆննդությունը կատարել են Ղ. Ալիշանը, Ռ. Գրուսեն, Կ. Կաներ եւ Ս. Ռանսիմենը²⁷: Այդ հրաշալի ուսումնասիրությունների առկայու-

²³ Պաղրասի մասին մանրամասն տե՛ս Lawrence, Baghras, p. 34–84; Edwards, Baghras, p. 415–455; Հովհաննեսյան, Կիլիկիոյ բերդերը, էջ 295–302:

²⁴ Իբն ալ-Ասիր, Կիսակատար պատմություն, էջ 273: Հմմտ. Riley-Smith, The Templars, p. 99.

²⁵ Թեեւ աղբյուրներում նշվում են նաև այլ թվականներ (1194, 1195), մենք հետևում ենք Կ. Կանեի առաջարկած թվագրմանը. հմմտ. Cahen, La Syrie du Nord, p. 583.

²⁶ Մմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 108; Վենետիկ, էջ 203–204, 206–207 (Այս խմբագրությունն անհամեմատ ավելի ընդարձակ է եւ, ըստ երեւույթի, ազգված լատինական աղբյուրներից); Michel le Syrien, Chronique, III, p. 411; IV, p. 738–739; Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 506; 1871, էջ 501; Barhebraeus, Chronicon, p. 397–398; Bar Hebraeus, Chronography, p. 343–344 (Քարհերեոսն այս դրվագում լրիվ անկախ է Միքայել Ասորուց); Guillaume de Tyr, Continuation, p. 164–171, 176–177; Ernoul, Chronique, p. 319–323; Gestes des Chiprois, p. 661–662; Amadi, Chronique, p. 88–89; Boustan al-Djami, p. 587 (Ըստ Cahen, La Syrie du Nord, p. 54, 583).

²⁷ Ալիշան, Սիսուան, էջ 454–456; Grousset, Histoire, III, p. 127–133; Cahen, La Syrie

թյունը, մեր կարծիքով, ավելորդ է դարձնում Բոհեմունդի գերեվարման հանգամանքների վերաբարձումը, ուստի մենք այստեղ կսահմանափակվենք միայն մեր խնդրին առնչվող հարցերի շրջանակով, գլխավորապես կանգ առնելով միջադեպի պատճառների եւ արդյունքների պարզաբանման վրա: Միջնադարյան այլալեզու աղբյուրները համարյա միահամուռ կերպով Լեւոնի արարքի պատճառ են համարում նրա վրեժխնդրությունը Բոհեմունդից՝ Ռուբեն Գ-ի նկատմամբ վերջինիս կատարած նույնպիսի ոտնձգության փոխարեն²⁸: Զժխտելով ավատատիրական հասարակություններում «վենդետայի»²⁹ ունեցած կարեւոր նշանակությունը՝ արդի հետազոտողները, սակայն, հակված են մատնանշելու Հայոց իշխանի քայլը բացատրող ավելի լուրջ պատճառներ: Ըստ Ռ. Գրուսեթի՝ «վեճի առարկան, թվում է, սահմանային գավառների պատկանելության խնդիրն էր, որոնք տարածվում էին Ալեքսանդրեթի ծոցի շուրջ՝ Ալեքսանդրեթի եւ Սակալթութանի միջեւ գտնվող Գաստոն (Կալաթ-Պաղրաս) ամրոցից ու Պորտելայի լեռնանցքից մինչեւ Այասի ծովախորշը, Զիհունի գետաբերանից արեւելք»³⁰: Ս. Ռանսիմենի կարծիքով՝ պատճառը Լեւոնի զայրույթն էր Բոհեմունդի դեմ, որը հանդգնել էր օգնության խնդրանքով դիմել Սալահեդդինին՝ Պաղրասը հայերի ձեռքից ետ խլելու նպատակով³¹: Սակայն մեզ թվում է, պատմականորեն ամենահիմնավորվածը Կ. Կանեի տեսակետն է, որի համաձայն՝ «Հյուսիսային Ասորիքում Սալահեդդինի նվաճումները շրջել էին ուժերի հա-

du Nord, p. 582–586; Runciman, A History, III, p. 87–90; տե՛ս նաեւ՝ Օրմանյան, Ազգապատում, § 1032; Микаелян, История, с. 149–150; Prawer, Histoire, II, p. 110–111.

²⁸ Մանրամասն տե՛ս սույն ենթագլխի ծանոթ. 26:

²⁹ «Վենդետան» հաճախ կրում էր նենգությունը նենգությունը կամ խարդախությունը խարդախությունը պատասխանելու բնույթ: Ինչպես գրում է Ղ. Ալիշանը. «Նենգութիւն իշխանաց եւ իշխանասիրաց համարէր հնարագիտութիւն՝ ոչ անմասն ի գովութենէ, եւ երբեմն կարելոր իսկ: Ոչ ինչ խղճեաց եւ Լեւոն նենգաւ զնենգն լուծանել, եւ յորոգայթն պատրաստեալ՝ զնոյն ինքն զորոգայթադիրն խարդաւանել»: Ալիշան, Միսուն, էջ 455:

³⁰ Grousset, Histoire, III, p. 123–129. Համարյա նույնն է նաեւ Գ. Միքայելյանի տեսակետը. տե՛ս Микаелян, История, с. 150.

³¹ Runciman, A History, III, p. 87. Հմմտ. նաեւ՝ Der Nersessian, Cilician Armenia, p. 646.

վասարակչությունը Անտիոֆի եւ Կիլիկիայի միջեւ... Այժմ արդեն Կիլիկիան էր, որ ավելի հզոր էր... Ուստի Լեւոնը վճռել էր օգտվել այդ իրավիճակից... ու լիովին ազատվել ֆրանկների գերիշխանության վերջին նշույլներից, եւ ինչու չէ, հաստատել իր գերակայությունը (Անտիոֆի) իշխանապետության վրա»³²: Մեր կարծիքով, սա էր Լեւոնին այդ հուսահատ ֆայլին մղող գլխավոր, եթե ոչ միակ պատճառը, քան թե նա, Բոհեմունդին գերելուց բացի, Անտիոֆի գերիշխանությունից ազատվելու այլ հնար չունէր: Վասալը, որը հրապարակայնորեն տրված ու գրով հաստատված երդմամբ հավատարմություն էր հայտնել իր գերակային, չէր կարող միակողմանիորեն չեղյալ հայտարարել այդ երդումը: Քանի դեռ գերական ինքը ուժը կորցրած չէր ճանաչել իր վասալի երդումը, «միջազգային իրավունքի» տեսակետից վերջինս շարունակում էր պահպանել ստորակայի իր կարգավիճակը: Ինչպես գրում է Ղ. Ալիշանը, «Յայսմ հարկի կայր եւ Լեւոն ի յաջորդելն զՌուբէն»³³. եւ թէպէտ ինքնիշխանաբար եւ տիրաբար գործէր եւ ընդարձակէր զսահմանս տէրութեանն, մինչեւ միջամուխ լինել ի կալուածս իսկ վեհագունին իւրոյ Բրնձին, սակայն ըստ ֆաղափական օրինաց եւ յաչս այլոց ֆրիստոնեայ տերանց երկրին Ասորոց՝ տակաւին Բրինձն Անտիոֆայ համարիւր վեհագոյն Պարոնին Հայոց»³⁴: Գերակային միայն երկու բան կարող էր ստիպել ազատություն շնորհել իր վասալին. մեկը երկրի Գերագոյն ատյանի որոշումն էր, մյուսն՝ իր իսկ ազատագրկումը: Իսկ քանի որ Լեւոնը չէր կարող դիմել Անտիոֆի իշխանապետության Գերագոյն ատյանին, նրան այլ ընտրանք չէր մնում, քան Բոհեմունդի գերեվարումը:

Եւ այսպես, 1193 թ. հոկտեմբերին³⁵, խնջույքի պատրվակով Բոհեմունդին հրավիրելով Պաղրաս, Լեւոնը դարանակալների օգնությամբ գե-

³² Cahen, La Syrie du Nord, p. 582. Նույն տեղում Կ. Կանենն ավելացնում է նաեւ մի երկրորդական պատճառ, այն է՝ 1188-ին Լեւոնի կողմից Բոհեմունդին փոխ տրված պարտքի հատուցման պահանջը: Հմմտ. նաեւ՝ Der Nersessian, Cilician Armenia, p. 646.

³³ «Յայսմ հարկի կայր եւ Լեւոն ի յաջորդելն զՌուբէն» բառերը ցույց են տալիս, որ Ղ. Ալիշանի կարծիքով եւս՝ Լեւոնը ոչ թե ինքն է իրեն Անտիոֆի պրինցի վասալ ճանաչել, այլ այդ վասալութիւնը ժառանգել է իր եղբայր Ռուբենից:

³⁴ Ալիշան, Սիսուան, էջ 454:

³⁵ Հմմտ. Cahen, La Syrie du Nord, p. 583.

րեց նրան³⁶ եւ պահանջեց անմիջապէս իրեն հանձնել Անտիոք ֆաղափը: Պրիմցը, ճարահատյալ, հրահանգեց ներկա գտնվող իր ենթականերին կատարել այդ պահանջը: Այդ նպատակով Պաղրասից Անտիոք մեկնեցին իշխանապետության կողմից՝ մարաջախտ Բարթուղիմէոս Տիրեղացին ու նշանավոր բարոն Ռիչեր Էրմինեցին, իսկ հայկական կողմից՝ Մսիսի իշխան Հեթում Սասունցին, մի փոքրիկ զորախմբի ուղեկցությամբ³⁷: Այս անձնավորությանը մենք դեռ հանգամանորեն պիտի անդրադառնանք, իսկ առայժմ շարունակենք հետեւել դեպքերի ընթացքին: Ի պատասխան ֆաղափը հայերին հանձնելու պահանջի՝ Անտիոքի բնակիչները, պատրիարք Էմերի Լիմոժացու (1141–1196 թթ.) գլխավորությամբ, ֆաղափային ինքնավարություն կամ կոմունա ձեւավորեցին եւ, զենքի դիմելով, վանեցին հայկական ուժերին: Հեթումին այլեւս ոչինչ չէր մնում անելու, քան փութալ Պաղրաս եւ եղելությունը ներկայացնել իր տիրոջը: Լեւոնը, տեսնելով Անտիոքը գրավելու առաջին փորձի ձախողումը, իր տարաբախտ գերային վերցրած, վերադարձավ Սիս, հավանաբար արդեն որոշած լինելով իր նպատակին հասնել դիվանագիտական ճանապարհով: Շուտով Անտիոքի բարոնների թախանձանքով խնդրին միջամտեց Երուսաղեմի (Աֆֆայի) թագավոր Հենրի Շամպայնացին (1192–1197 թթ.), որը 1194 թ. գարնանն³⁸ այցելելով Կիլիկիա, կարողացավ հաշտություն կայացնել Լեւոնի եւ Բոհեմունդի միջեւ: Բանակցությունների արդյունքում ծնված հաշտության պայմանագիրը Սմբատ Սպարապետը կոչում է «Ուխտ սիրոյ»³⁹ եւ ավելացնում, որ այն հաստատված էր «գրով»⁴⁰ կամ «գրով եւ երդմամբ»⁴¹: Իսկ մի այլ տեղում Սմբատն արդեն այդ փաստաթուղթը ուղղակի հիշատակում է «Գիր պայմանի» անունով⁴²:

³⁶ Ըստ որոշ աղբյուրների՝ ընդհակառակը, Բոհեմունդն էր դավադիր մտքով կազմակերպել այդ հանդիպումը, սակայն Լեւոնը, նախազգուշացված լինելով, կանխել էր դավադրությունը եւ Անտիոքի պրիմցին գցել ծուղակը:

³⁷ *Sté u Guillaume de Tyr*, Continuation, p. 166–167.

³⁸ Հմմտ. Cahen, *La Syrie du Nord*, p. 585.

³⁹ Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 108; Վենետիկ, էջ 206:

⁴⁰ Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 108:

⁴¹ Սմբատ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 207:

⁴² Անդ, էջ 214:

Քեւեւ պայմանագրի բնագիրը մեզ չի հասել, սակայն զանազան աղբյուրներում պահպանված առանձին հոդվածների համադրումը թույլ է տալիս միջ թե շատ ամբողջական պատկերացում կազմել նրա բովանդակության մասին: Պայմանագրի վերականգնման առաջին փորձը կատարել է Ղ. Ալիշանը դեռեւս 1885 թվականին, որը, սակայն, մեր կարծիքով բավականին թերի է⁴³: Ուստի ստորեւ ներկայացնում ենք պատմական այդ կարեւորագույն վավերագրի մեր կողմից վերականգնված բնագիրը, ձգտելով նրանում առավելագույնս ընդգրկել բոլոր առկա աղբյուրների տվյալները.

«Ստի 1194 թ. հաշտության պայմանագիրը Հայոց իշխանության եւ Անտիոքի իշխանապետության միջեւ.

ա – Ընդառաջելով Երուսաղեմի թագավորի խնդրանքին՝ Լեւոնն առանց փրկագնի ազատ է արձակում Բոհեմունդ III-ին⁴⁴.

բ – Բոհեմունդը չեղյալ է հայտարարում Հայոց իշխանության վասալական կախվածությունը Անտիոքի իշխանապետությունից⁴⁵.

գ – Բոհեմունդ III-ը հավատարմության երդմամբ իրեն նանաչում է Լեւոն Բ Հայոց իշխանի վասալ⁴⁶.

դ – Անտիոքի իշխանապետությունը Կիլիկիո Հա-

⁴³ Ալիշան, Սիսուան, էջ 456:

⁴⁴ Հետազոտողներն այդպես են կարծում, քանի որ աղբյուրներում փրկագնի մասին խոսք չկա. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 456; Cahen, La Syrie du Nord, p. 586; Runciman, A History, III, p. 89.

⁴⁵ Տե՛ս Ernoul, Chronique, p. 321.

⁴⁶ Տե՛ս Gestes des Chiprois, p. 662; Ernoul, Chronique, p. 321. Կ. Կահենը, սա համարելով հեղինակների հայասիրության արդյունք, կասկածի տակ է առնում նրանց հավաստիությունը, նշելով, որ պրիսցը, զժվար թե կարողանար սովորական բարոնի վասալ դառնալ. տե՛ս Cahen, La Syrie du Nord, p. 586 (n. 15). Իսկ Ս. Ռանսիմենը, առանց որեւէ աղբյուրագիտական հիմքի, պնդում է, որ իբր համաձայնություն էր կայացվել առ այն, որ իշխաններից ոչ մեկը մյուսի գերական չէր լինելու. տե՛ս Runciman, A History, III, p. 89.

յոց իշխանությանն է զիջում Պորտելայից մինչև Այաս ընկած տարածքը⁴⁷ .

ե – Լեւոնի զարմուհին՝ Ռուբեն Գ-ի ավագ դուստր Ալիսը, ամուսնանում է Անտիոքի իշխանապետության գահաժառանգ Ռայմոնդի՝ Բոհեմունդ III-ի ավագ որդու հետ⁴⁸ .

զ – Այդ ամուսնությունից ծնված արու զավակը դառնում է Լեւոն իշխանի ժառանգորդը⁴⁹ .

է – Ռայմոնդի մահից հետո նրա այդ նույն որդին դառնում է նաեւ Անտիոքի տերը⁵⁰ .

ը – Ռայմոնդը պատանդ է պահվում Լեւոն իշխանի արհունիքում⁵¹ .

թ – Կիլիկիայի եւ Անտիոքի ընդհանուր գահաժառանգի անշափահասության շրջանում նրա խնամակալ է կարգվում Լեւոնը⁵² :

⁴⁷ *Stéu Amadi, Chronique, p. 89; Ernoul, Chronique, p. 321 (ավելի անորոշ ձեւակերպմամբ):*

⁴⁸ *Stéu Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 108; Վենետիկ, էջ 206–207; Guillaume de Tyr, Continuation, p. 170, 176, 177; Ernoul, Chronique, p. 321.*

⁴⁹ *Stéu Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 108; Վենետիկ, էջ 207:*

⁵⁰ *Stéu Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 108; Վենետիկ, էջ 207; Guillaume de Tyr, Continuation, p. 176; Ernoul, Chronique, p. 321.*

⁵¹ Ձնայած աղբյուրներում դա հաստատող ուղղակի տեղեկություն չկա, սակայն Սմբատ Սպարապետը նշում է, որ Ռայմոնդը մինչեւ իր մահը գտնվել է Լեւոնի մոտ. «Եւ էր որդի բրնձին առ պարոն Լեւոն. եւ կացեալ ժամանակ ինչ՝ մեռաւ» (Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 108), կամ՝ «Եւ էր որդի բրնձին առ Լեւոն, եւ մտանէր եւ ելանէր ընդ նմա, եւ կացեալ ժամանակս ինչ՝ մեռաւ» (Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 207): Ղ. Ալիշանը, հիմնվելով այս փաստի վրա՝ արդարացիորեն եզրակացնում է, որ «Ռեմունդ ... կայր առ Լեւոնի, իբրեւ ի պատանդի» . Ալիշան, Սիսուան, էջ 456: Հմմտ. նաեւ՝ Պողոսյան-Կատվալյան, Կիլիկիա, էջ 409:

⁵² Թեեւ սա նույնպես չի հաստատվում աղբյուրների ուղղակի վկայությամբ, սակայն նույն Սմբատ Սպարապետը տեղեկացնում է, որ նորածնի դաստիարակության հոգան ընկած էր Լեւոնի վրա. «Եւ ուրախացաւ Լեւոն ... եւ ետ սնուցանել զնա զգուշութեամբ, եւ մկրտեաց զնա յանուն եղբօրն Ռուբէն» . Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 108. հմմտ. Վենետիկ, էջ 207: Լատին աղբյուրները նույնպես

Նախքան սույն պայմանագրի ընդհանուր պատմական նշանակության ամփոփումը, հարկ ենք համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել պարզաբանում պահանջող հետեյալ երկու խնդրահարույց կետերի վրա: Ինչպես տեսանք, պայմանագրի ե-զ հոդվածներում արձանագրված է, որ Ռուբեն Գ-ի դուստր Ալիսն ամուսնանում է Բոհեմունդի որդի Ռայմոնդի հետ, եւ այդ ամուսնությունից ծնված արու զավակը դառնում է Լետն իշխանի ժառանգորդը. «Եւ ետ Լետն գրուստր եղբօրն իւրոյ Ռովբինի զԱլիծն... աւագ որդոյն բրնծին Ընեմնդին, այս պայմանաւ, որ թէ լինէր ի նմանէ որդի արու՝ լինէր ժառանգ Լետնի»⁵³: Այստեղ անմիջապէս հարց է առաջանում իսկ ինչո՞ւ Լետնի կամ, ավելի ճիշտ, Հայոց գահի ժառանգորդը պիտի դառնար Ռուբեն Գ-ի թոռը: Սմբատ Սպարապետը, կարծես թէ, զգալով վիճակի անհարմարությունը, սա բացատրում է նրանով, որ Լետնն անզավակ էր՝ «*քանզի տղայ չունէր որ լինէր ժառանգ հայրենեաց իւրոց*»⁵⁴ կամ «*քանզի ոչ գոյր որդի Լետնի՝ լինել ժառանգ հայրենեաց իւրեանց*»⁵⁵: Ճիշտ է, Լետնն այդ ժամանակ իսկապէս անզավակ էր⁵⁶, բայց դա չէր նշանակում, թէ հետագայում չէր կարող երեխա ունենալ⁵⁷: Ուստի անհասկանալի է, թէ ինչու նա պիտի այդպիսի թեթեամտությամբ իր ապագա սերունդներին զրկեր գահաժառանգության իրավունքից: Այս հանելուկի պատասխանը մեկը կարող է լինել. Կիլիկիո իշխանության Գերագոյն ատյանի 1186/7 թ. որոշմամբ՝ Հայոց գահը պետք է փոխանցվեր Ռուբեն Գ-ի ուղիղ շառավիղների գծով: Եթէ դա հաստատող ուրիշ տվյալներ չունենայինք անգամ, ապա նրա թոռանը Հայոց գահի ժառանգորդ նանաչելու փաստն ինքնին բավական էր այդ իրողությունը ապացուցված համարելու համար:

նշում են, որ հանգուցյալ Ռայմոնդի կնոջն ու որդուն պահում էր (les garda) Լետնը. տե՛ս Guillaume de Tyr, Continuation, p. 176; Ernoul, Chronique, p. 321.

⁵³ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 206-207. հմմտ. նաեւ՝ Փարիզ, էջ 108:*

⁵⁴ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 108:*

⁵⁵ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 207:*

⁵⁶ *Լետնի առաջին դուստրը՝ Ստեֆանին, ըստ Ռուդ-Կոլենբերգի, ծնվել է 1195 թ. հետո. Rüdt-Collenberg, The Rupenides, I (Rup.).*

⁵⁷ *Ռուդ-Կոլենբերգի հաշվարկների համաձայն՝ Լետնն այդ ժամանակ ընդամենը 44 տարեկան էր. տե՛ս Rüdt-Collenberg, The Rupenides, I (Rup.).*

Պարզաբանում պահանջող մյուս կետը կրկին վերաբերում է Ալիսին. խնդիրն այն է, որ մինչև Ռայմոնդին կնության տրվելը՝ վերջինս ամուսնացած էր եղել Հեթում Սասունցի իշխանի հետ, որին մենք հիշատակեցինք Անտիոքի գրավման առաջին փորձի կապակցությամբ: Հեթումը Սասունի իշխան Չորտուանել Մամիկոնյանի (մահ. 1165 թ.) որդին էր, որը 1188/9 թվականին իր եղբոր՝ Շահնշահի հետ եկել էր Կիլիկիա եւ, ամուսնանալով Ալիսի հետ, Լեւոնից ստացել էր Մսիս ֆաղաֆը⁵⁸: Իսկ Շահնշահին Լեւոնը շնորհել էր կիլիկյան մի ուրիշ ֆաղաֆ՝ Սելեկիան⁵⁹: Մայրական կողմից սասունցի եղբայրները սերում էին Պահլավունյաց տոհմից. նրանց մայրը՝ Վանինեն⁶⁰, Գրիգոր Գ Տղա կաթողիկոսի փայրն էր: Նշված եզակի տեղեկությունների հեղինակն, ինչպես միշտ, Սմբատ Սպարապետն է. «Զայս ժամանակաւ եկին որդիքն ճորտուանելի ի Սասնոյ՝ փայրորդիք Տէր Գրիգոր կաթողիկոսի Հայոց, առ պարոն Լեւոն, արք բարեւտեաք: Որ աւագին երեստ (Լեւոն) զրուստր եղբորն իւրոյ Ռուբենի զանուանեալն Ալիծ, եւ ետ նմա զՄսիս, որոյ անունն էր Հեթում. եւ Շահնշահին երեստ զՍելեկիա»⁶¹: Այսպիսով, Հայոց իշ-

⁵⁸ Սասնո Մամիկոնյանների ազգաբանությունը տես՝ Ակինյան, *Ներսէս Կամբրոնացի*, էջ 402–407; Rüd̄t-Collenberg, *The Rupenides*, IV (SP).

⁵⁹ Ըստ Ռուդ-Կոլենբերգի՝ Շահնշահն էլ ամուսնացել էր Ռուբենի մյուս դստեր՝ Ֆիլիպայի հետ, ինչը սակայն, ըստ երեւույթին, թյուրիմացություն է. տես՝ Rüd̄t-Collenberg, *The Rupenides*, IV (SP). Շահնշահի մասին տես նաեւ՝ Վարդան Վարդապետ, *Հաւաքումն*, էջ 133:

⁶⁰ Նրա մասին տես՝ Հովսեփյան, *Յիշատակարանք*, էջ 400; Մաթեոսյան, *Ե–ԺԲ դդ. հիշատակարաններ*, էջ 195, ինչպես նաեւ՝ Աճառյան, *ՀԱԲ*, հտ. 5, էջ 36:

⁶¹ Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 105. համարյա նույնը տես նաեւ՝ Սմբատ, *Տարեգիրք*, Վենետիկ, էջ 201: Թերեւս ավելորդ չէ ներկայացնել նաեւ Շահնշահի Հեթում կոչված անձնավորությանը վերաբերող հետեւյալ ուշագրավ, բայց մանվածապատ տեղեկությունը, որը պահպանված է «Պատմութիւն սրբոց հարցն մերոց» գրվածքում. «Շահնշահի Հեթում, զոր ունէր բազում մեծարանք, եւ զի կաթողիկոսըն տէր Գրիգորիոս տիրացաւ Հոսովլային, որպէս Ադամ փառայսիրեալ կամեցաւ աստուածանալ, զորս Տէր ետս ընկեց: Մինչի ինքն աստուածայցոց ի դէպ ժամու այսպէս: Քվեր որդի տեառն Գրիգորիոսի տեսեալ զկաթողիկոսարանն փարթամ, կամեցաւ թագայորել, զոր եւ մեծ կաթողիկոսըն ետս ընկեց զկամս նորա: Այլ ի դէպ ժամու թագայորեցոց ի Սասունս: Եւ զՎասակ որդին Վենկայ, որ

խանության գահաժառանգ Ալիսն ամուսնացել էր Մեծ Հայքի ամենահին եւ փառավոր նախարարական տների շառավղի հետ, եւ թվում էր, թե Հեթումն այն արժանավորագույն անձն էր, որին իրավամբ բաժին էր ընկել Կիլիկիայի բախտի տնօրինումը: Օրինական գահաժառանգի ամուսնու հանգամանքով՝ նա էր, որ պիտի զբաղեցներ Հայոց իշխանության աթոռը, սակայն շուտով իրերը դասավորվեցին բոլորովին այլ կերպ: 1193 թ. վերջում, Բոհեմունդի գերեվարումից ֆիչ ժամանակ անց, Հեթումն ու իր եղբայրն անսպասելի կերպով մահացան բավականին մութ հանգամանքներում: Արձանագրելով այդ փաստը, Սմբատն ավելացնում է. «Եւ զոր լուաք վասն մահուանն՝ չկարեմ աստ գրել, զի ասեն թէ պարոն Լեւոն եղեւ պատնառ. այլ զճմարիտն Աստուած գիտէ»⁶²: Նշվածից կանխատորեն երեւում է, որ Սմբատն ավելին գիտե, քան գրում է, սակայն կաշկանդված է Ռուբինյան տոհմի կուռքը հանդիսացող Լեւոն Մեծագործի հեղինակությունը չվնասելու մտահոգությամբ: Լեւոնին ամենեւին պատիվ չբերող այդ դժնի արարքը պիտի ունենար լուրջ պատճառ: Այդպիսին կարող էր լինել, օրինակ, այն, որ Հեթումը ձախողել էր Անտիոքը գրավելու Լեւոնի առաջին փորձը, մանավանդ որ, լատին աղբյուրների վկայությամբ, նա անգամ չէր համարձակվել ֆաղաք մտնել⁶³: Բացաված չէ նաեւ, որ նա փորձել էր բանեցնել Հայոց գահաժառանգի ամուսնու իր իրավունքները, ինչը, բնականաբար, Լեւոնը չէր կարող հանդուրժել: Սակայն ավելի հավանական է ենթադրել, որ Լեւոնն այդ ֆայլին դիմել էր, արդեն մտնում ունենալով Ալիսի եւ Ռայմոնդի ամուսնությամբ իր առջեւ բացվող հեռանկարը, որը մի կողմից

վասն իշխանութեան տկարացաւ ի հավատս, ետս կացուց զնա հօրեղբայր սորայ: Որ եւ զամենայն տունս նորայ լցուց զանձիւ, եւ քաղաքն ամրայցուց պարսպօք: Եւ այսպէս թագայորեացն, մեռաւ իսաղաղութեամբ Շահրնշահի Հեթումն». Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 506: Շահրնշահի կողմից Հռոմկլան գրավելու փորձի մասին տե՛ս նաեւ՝ Michel le Syrien, Chronique, III, p. 395–396; IV, p. 728, 730; Barhebraeus, Chronicon Ecclesiasticum, t. I, p. 595. Շահրնշահի վերաբերյալ տե՛ս նաեւ սույն աշխատության «Հավելվածի» առաջին ենթագլխում:

⁶² Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 106. համարյա նույնը տե՛ս նաեւ՝ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 205:

⁶³ Տե՛ս Guillaume de Tyr, Continuation, p. 169, 170.

նրա համար ապահովում էր նորածին գահաժառանգի խնամակալի կարգավիճակով երկիրը եւս շուրջ երկու տասնամյակ կառավարելու հնարավորություն, իսկ մյուս կողմից՝ հիմք էր հանդիսանում մի ավելի նշանակալից քաղաքական ծրագրի իրագործման, որի էությունը Կիլիկիայի եւ Անտիոքի իշխանապետության միավորումն էր:

Այսպիսով, Բոհեմունդի գերեվարմամբ ու դրա հետեւանձնով կնքված հաշտության պայմանագրով Լեւոնը լուծեց իր «լեզբիտիմությանն» առնչվող երկու իրավական խնդիրներից մեկը, այն է՝ հիմնովին թոթափեց իր վասալական կախվածությունն Անտիոքի իշխանապետից⁶⁴: Դրա հետ մեկտեղ, նա հնարամտորեն երկարածգեց խնամակալի կարգավիճակով երկիրը կառավարելու իրեն վերապահված ժամկետը. Ալիսի ամուսնությամբ կորցնելով նրա խնամակալը լինելու իրավունքը, Լեւոնն անմիջապես խնամակալ կարգվեց վերջինիս դեռեւս չծնված որդու համար: Այնուամենայնիվ, շնայած Լեւոնի համար բարեհաջող դասավորված այս հանգամանքներին, 1194 թ. Սսի պայմանագիրը նաեւ դանդաղ գործողության ականի տարրեր էր պարունակում: Հաշտության կոչված այդ «Սիրո ուխտը» ճակատագրի հեզնանձով շուրջ երեսնամյա թշնամանքի աղբյուր պիտի հանդիսանար Կիլիկիո իշխանության եւ Անտիոքի իշխանապետության համար⁶⁵: Իսկ բացի այդ, նրա բացասական հետեւանձները պիտի զգացվեին նաեւ Լեւոնի մահից հետո Հայոց գահի ժառանգության հարցի շուրջ ծավալված պայքարի հորձանուտում:

Ինչ վերաբերում է Լեւոնի առջեւ ծառայած մյուս եւ, թերեւս ավելի դժվարին, իրավական կննդին, այն է՝ խնամակալի կարգավիճակից ազատվելու եւ երկրի օրինական տերը դառնալու խնդրին, ապա գործնականում դրա լուծման միայն մեկ հնարավորություն գոյություն ուներ, որին կանդորադառնանք պատմական մի կարեւոր փաստի վերաբերյալ որոշ պարզաբանումներ կատարելուց հետո: Մենք նկատի ունենք Լեւոնի թագակալման եւ Կիլիկիո Հայոց թագավորության հիմ-

⁶⁴ *Ըստ Ժ. Ռիշարի՝ դա էր, որ Լեւոնին, ի վերջո, հնարավորություն տվեց արժանանալու թագավորի տիտղոսի. տե՛ս Richard, Les Arméniens, p. 169.*

⁶⁵ *Պատահական չէ, որ Կ. Մութաֆյանն այդ պայմանագիրը կոչում է «կեղծ հաշտություն».* Mutafian, La Cilicie, I, p. 409; *Մութաֆյան, Կիլիկիան, էջ 403:*

նադրման փաստը, որը լայնորեն լուսաբանված է ինչպես միջնադարյան աղբյուրներում⁶⁶, այնպես էլ արդի պատմագիտության մեջ⁶⁷: Նպատակ չունենալով հանգամանորեն ներկայացնել Կիլիկիայի պատմության համար շրջադարձային նշանակություն ունեցող այդ դրվագը, մենք կկամենայինք ընթերցողի ուշադրությունը հրավիրել միայն մեկ իրողության վրա, որն, ինչպես կփորձենք ապացուցել, սերտորեն կապված է մեր ֆննության առարկան հանդիսացող իրավական խնդրի հետ: Խոսքը վերաբերում է հետազոտողների կողմից վաղուց ի վեր նկատված այն իրողությանը, որ Լետոնը սեւեռուն փութաջանությամբ է հետապնդել արֆայական թագ ձեռքբերելու իր նպատակադրությունը՝ օգտագործելով դրան հասնելու բոլոր հնարավոր միջոցները:

Այդ գաղափարն առաջին անգամ նրա մտքում ծնվել է, ըստ երևույթին, 1189 թվականին, երբ Կղեմես III պապը հատուկ նամակներով Լետոնից ու Գրիգոր Տղա կաթողիկոսից խնդրել էր օգնություն ցուցաբերել դեպի Արեւելք շարժվող երրորդ խաչակրաց արշավանքի մասնակիցներին. «Զի տեսեալ զԲեզ յայս փոյթ ամենայն ժողովք Հայաստանեայց

⁶⁶ *Մաթեոսյան, Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ, էջ 292, 302; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 108-109; Վենետիկ, էջ 207-208; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 136; Միրսայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 506, 512-513; 1871, էջ 503-504; Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 155-158; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 144-145; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 214-215; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 103-104; Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 180; Յովհաննէս Գարդել, Ժամանակագրութիւն, էջ 13-15; Անանուն Սեբաստացի, Տարեգրութիւն, էջ 136; Guillaume de Tyr, Continuation, p. 176, 195; Ernoul, Chronique, p. 322-323; Amadi, Chronique, p. 90.*

⁶⁷ *Ալիշան, Սիսուան, էջ 463-476 (Առայժմ ամենաընդարձակ եւ ամբողջական քննությունն է); Օրմանյան, Ազգապատում, § 1023, 1050-1052, 1054-1055, 1063-1065; Բակուրյան, Մի տեսութիւն, էջ 16-17; Tournebiz, Histoire, p. 184-186; Morgan, Histoire, p. 187-196; Iorga, L'Arménie, p. 102-104; Grousset, Histoire, III, p. 144; Grousset, L'Empire, p. 394; Cahen, La Syrie du Nord, p. 586-590; Pasdermajian, Histoire, p. 233-235; Микаелян, История, с. 152-158; Runciman, A History, III, p. 90-91; Der Nersessian, Cilician Armenia, p. 645-649; Bedoukian, Coinage, p. 8-9; Mutafian, La Cilicie, I, p. 409-410; Մութաֆյան, Կիլիկիան, էջ 403-404; Mutafian, Recherches, p. 69-71.*

որք ընդ քեզ են, փութացեալ պատրաստեսցին զալ յօգնականութիւն սուրբ տեղեացն. ո՛րք զինոմ, ո՛րք ընչիմ, ո՛րք անձամբ ի սուրբ երկրին դիմեսցին յազատութիւն»⁶⁸: Մեզ թվում է, բնական կլինէր, եթե այդ օգնության դիմաց Լեւոնն Արեւմուտից թագ պահանջէր⁶⁹, նկատի ունենալով մանավանդ այն հանգամանքը, որ Երուսաղեմի թագավորութիւնն այդ ժամանակ փաստորեն վերացած էր, եւ միայն Կիլիկյան Հայաստանն էր, որ կարող էր ինչ-որ կերպ փոխարինել նրան⁷⁰: Այն մասին, որ Լեւոնի եւ արեւմտյան տիրակալների միջեւ այդպիսի սակարկություն համենայն դեպս տեղի ունեցել է, վկայում է Վարդան Արեւելցին: Ըստ նրա՝ 1190 թվականին Իկոնիայում ստանալով Գրիգոր Տղա կաթողիկոսի նամակը, Ֆրիդրիխ Շիկամորուսը պատասխան նամակում գրում է. «ահա ունիմ թագ եւ զգեստ, զի օծցես թագաւոր Հայոց՝ զով ընտրես»⁷¹: Նույնը հաստատում է նաեւ Ներսէս Լամբրոնացին. «խոստումն էր ինքնակալին ոսկի կնքեալ գրով Հայոց թագաւոր դնել»⁷²: Պատահական չէ, որ այդ թվականին Լամբրոնացին նաեւ լատիներենից հայերեն է թարգմանում «Թագավորի օրհնության կարգը»⁷³:

⁶⁸ Անանյան, Ներսէս Շնորհալի, «Թագմավէպ», 1996, էջ 220: Կղեմես III-ի հիշյալ նամակների մասին մանրամասն տես՝ Halfter, Das Papsttum, S. 172–177.

⁶⁹ Կղեմես պապի խնդրանքի եւ Լեւոնի թագադրման փաստերի առնչակցութեան մասին տես՝ Բակուրյան, Մի տեսութիւն, էջ 16:

⁷⁰ Հմմտ. Ալիշան, Միսուան, էջ 446:

⁷¹ Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 136:

⁷² Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 538: Այս առումով, առաջին հայացքից թվում է, ավելի հստակ է Կիրակոս Փանձակեցու հետեւյալ վկայութիւնը. «Եւ առաքեաց (Լեւոն) ի տիեզերահռչակ քաղաքն Հռոմայեցոց առ ինքնակալ կայսրն եւ առ պապն, զի տացեն նմա հրաման եւ թագ թագաւորական» (Կիրակոս Փանձակեցի, Պատմութիւն, էջ 156): Կ. Մուիսաֆյանի կարծիքով՝ «ինքնակալ կայսրն» բառերի տակ Փանձակեցին նկատի ունի Ֆրիդրիխ I Շիկամորուսին (Mutafian, Recherches, p. 67): Սակայն Կիրակոսի բնագիրն այդպիսի կտրուկ պնդման հիմք չի տալիս, ուստի չի բացառվում, որ Լեւոնի նամակը կարող էր հասցեագրված լինել Գերմանական կայսր Հենրի VI-ին (1190–1197 թթ.): Այդպես են կարծում, մասնավորապես Դ. Ալիշանը եւ Գ. Միքայելյանը. տես՝ Ալիշան, Միսուան, էջ 463–464; Миквелян, История, с. 154–155.

⁷³ Տես՝ Ալիշան, Ներսէս Լամբրոնացի, էջ 303, 307; Cowe, The Inauguration, p. 55.

Ու թեև Գերմանական կայսեր հանկարծահաս մահվան պատճառով Լեոնի թագրնկալման առաջին փորձը խափանվեց, դա ամենեփն չհուսալեց Հայոց իշխանին, որն այնուհետև ավելի մեծ եռանդով շարունակեց հետապնդել իր գերագույն նպատակը: 1190-ից մինչև 1198 թվականը այդ խնդրի առնչությամբ նամակների, դեսպանների ու ամբողջ պատվիրակությունների բազմաթիվ փոխանակումներ տեղի ունեցան մի կողմից Լեոն իշխանի ու Հայոց կաթողիկոսների, մյուս կողմից՝ Հռոմի պապերի եւ Գերմանական ու Բյուզանդական կայսրերի միջև⁷⁴: Այդ ամենի արդյունքը եղավ այն, որ Լեոնը, մեկի փոխարեն, միանգամից արժանացավ երկու թագի, որոնցից մեկն ուղարկել էր Սրբազան Հռոմեական կայսր Հենրի VI-ը (1190–1197 թթ.), իսկ մյուսը՝ Բյուզանդական կայսր Ալեքսիոս III Անգելոսը (1195–1203 թթ.): Լամբրոնացու պատկերավոր արտահայտությամբ՝ «վերապատուեցաւ թագաւոր Հայոց Լեոն, որ յմոռքինեանց, բարէպաշտ եւ յաղթաւղ Աստուծով, որոյ հոչակ արութեան շարժեաց զմեծ ինքնակալն հին Հռոմա զՀեոի եւ զնոր Հռոմա զԱլէքս, որ պսակեցին զսա քաւամբ պատուական յեկեղեցի Տարսունի, որ իմ անարժանութեամբ հովովի»⁷⁵: Լեոնի թագադրության պաշտոնական արարողությունը տեղի ունեցավ 1198 թ. հունվարի 6-ին Տարսունի Մայր եկեղեցում⁷⁶:

Կիրիկիո Հայոց իշխանության վերածումը թագավորության, անշուշտ, առաջին հերթին նրա անող հզորության եւ միջազգային վարկի

⁷⁴ Այդ խնդիրը Լեոնն, ըստ երեւույթին, քննարկել է նաեւ Երուսաղեմի թագավոր Հենրի Շամպայնացու հետ, Սսի 1194 թ. հայ-անտիոքյան պայմանագրի կնքման ժամանակ (հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 463; Cahen, La Syrie du Nord, p. 587): Լատին աղբյուրներից մեկը նույնիսկ տեղեկացնում է, թե իբր Լեոնը Հենրիին նաեւ խնդրել էր թագադրել իրեն, ինչը եւ վերջինս սիրով կատարել էր. Guillaume de Tyr, Continuation, p. 176. Ըստ Ղ. Ալիշանի՝ հեղինակը թերեւս անունների նույնության պատճառով Հենրի Շամպայնացուն շփոթել է Գերմանական կայսր Հենրի VI-ի հետ. Ալիշան, Սիսուան, էջ 463: Հմմտ. նաեւ՝ Ավգերյան, Հայկական նշխարք, էջ 295:

⁷⁵ Մաթեոսյան, Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ, էջ 302:

⁷⁶ Թագադրության թվականի վերաբերյալ գոյություն ունեցող այլ տեսակետների մասին տես Der Nersessian, Cilician Armenia, p. 648; Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 399:

բարձրացման արտահայտությունն է: Օգտվելով Քիլիշ-Արսլանի (1192 թ.) եւ Սալահեդդինի (1193 թ.) մահից հետո Սելջուկյան եւ Այուբյան սուլթանություններում ծագած երկպառակություններից ու ֆաղաֆացիական պատերազմներից, Լեւոնն զգալիորեն ընդարձակել է Հայոց իշխանության սահմանները՝ տպավորիչ հաղթանակներ տանելով թե՛ փոքրասիական, թե՛ սիրիական նակատներում, ինչի մասին մասնավորապես տեղեկացնում են ասորական աղբյուրները: «Սուլթանի»⁷⁷ մահից հետո, — գրում է Միֆայել Ասորին, — Լեւոնը Հոռոմոց երկրում տիրեց յոթանասուներկու բերդի՝ մի մասը գրավելով թուրքերից, մյուս մասը՝ հույներից: Թուրքերի դեմ նա միշտ հաղթող դուրս եկավ, ինչի հետեւանով սուլթանի որդիներն սկսեցին փնտրել նրա հովանավորությունը»⁷⁸: Ավելի ընդարձակ ու բովանդակալից է Միֆայել Ասորու «Ժամանակագրության» հայերեն թարգմանության շարունակողի վկայությունը. «Իսկ պարոնն Լեւոն որդին Ստեփանէ օր ըստ օրէ երթայր եւ զօրանայր Աստուծով յաջողեալ եւ յամենեցունց փառատրեալ: Եւ յայնժամ յորժամ տկարացոյց Աստուած շուրջանակի գթշնամիս նորա եւ ի կոր կործանեաց զամենայն հակառակորդս նորա, տիրեաց նա լիով երկուց Կիլիկից, լեւրամբ եւ դաշտօք, ֆաղաֆօք եւ ամրական դղեկօք: Եւ ա՛ն ֆաջութեամբ իւրով եւ զհասարակն Սուրացոց եւ մասունս ոչ սակաւս յերկրորդ Կապադոկացոց, յերրորդ Հայոց, զոր ոմանք Առաջին անուանեն Հայք: Գրաւեաց ընդ իւրով իշխանութեամբ եւ յԱսորեստանեաց գաւառաց: Եւ ցուցաւ ինքնագլուխ եւ նոյս իշխանութեամբ, զի ոչ ոք տիրէր ի վերայ նորա, եւ համբաւ արիութեան նորա թուլացուցանէր զզիս անօրինաց եւ պարզէր զերեսս ֆրիստոնէից եւ լնոյր խնդութեամբ եւ ուրախութեամբ, վասն որոյ փութային պատուել զնա թագիւ թագաւորն Յունաց՝ վասն պատնառին զի թերեսս հնար լիցի նովաւ յաղթել Թուրքացն որ բռնացեալ կալան զիշխանութիւն նորա, իսկ թագաւորն Փռանգաց՝ վասն

⁷⁷ *Նկատի ունի Իկոնիայի Սելջուկյան սուլթան Իզզեդդին Քիլիշ-Արսլան II-ին (1156–1192 թթ.):*

⁷⁸ Michel le Syrien, *Chronique*, III, p. 411; IV, p. 739. *Հմմտ. նաեւ՝ Barhebraeus, Chronicon*, p. 398; Bar Hebraeus, *Chronography*, p. 344. *Քիլիշ-Արսլան II-ի որդիներից մեկի՝ Ալբիստանի էմիր Մուգիսեդդին Տուզրիլշահի կողմից Լեւոնի վասալ ճանաչվելու մասին տե՛ս Cahen, Pre-Ottoman Turkey*, p. 115.

դաշանց սիրոյն գոր ունէին ընդ Հայք ուխտիւք ի հին ժամանակաց. եւ վասն այսորիկ երկոքին առաւելցին նմա թագ ոսկիակազմ, եւ պսակեցին զնա յաղթութեան պսական ըստ վայելման եւ պատշանի արժանատրութեան իւրում: Եւ այսպէս վերստին նորոգեցաւ թագակալութիւն Արամեան զաւակին, եւ թագն Հայկազանց եւ Սենեֆերիմանց եղաւ ի գլուխ արժանաժառանգ զարմին Լեւոնի»⁷⁹:

Սակայն բացի Կիլիկիո իշխանութեան ռազմա-ֆաղափական կշռի արտացոլումը հանդիսանալուց, Հայոց թագավորութեան հիմնադրումը հետազոտողների կողմից արդարացիորեն դիտվում է նաեւ որպէս Լեւոնի թափած ահռելի անձնական ջանքերի արգասիք: Լեւոնի այդ անօրինակ փութաշանությունը նրանք բացատրում են կա՛մ նրա իշխանատենչությամբ⁸⁰, կա՛մ Կիպրոսի թագավորութեան ստեղծման նախադեպը կրկնելու ձգտումով⁸¹, կա՛մ է՛ իր կարգավիճակով Արեւելի լատին ինքնակալներին հավասարվելու ցանկությամբ⁸²: Սակայն մեզ թվում է, որ եթէ Լեւոնն իսկապէս ուներ որեւէ անձնական շահագրգռություն, ապա դա առաջին հերթին իր իշխանությունը «լեգիտիմացնելու», այսինքն՝ խնամակալի կարգավիճակը թոթափելու եւ երկրի լիիրավ տերը դառնալու նպատակադրումն էր: Այդ խնդիրը նա կարող էր հաղթահարել միայն օծյալ թագավոր դառնալու միջոցով, քանի որ օծյալին, կամ, ինչպէս Սմբատ Սպարապետի «Դատաստանագիրքն» է նշում, «Աստծու կողմից կարգված թագավորին», մարդիկ շէին կարող զահագուրկ անել. «Թագատրքն յԱստուծոյ են կարգած, որպէս Իսրայելի Աստուած

⁷⁹ Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն 1871*, էջ 503–504:

⁸⁰ Հմմտ. Morgan, *Histoire*, p. 187–188; Օրմանյան, *Հայոց եկեղեցին*, էջ 85; Մյուրմեյան, *Հայ-Լատին հարաբերությունները, մասն Ա*, էջ 23; Runciman, *A History*, III, p. 90.

⁸¹ Հմմտ. Runciman, *A History*, III, p. 90. *Կարծում ենք, այս պնդումը հիմնադրուկ է, քանի որ, ինչպէս վերը տեսանք, Լեւոնը թագընկալման հայտ էր ներկայացրել դեռեւս 1190 թվականին, երբ Կիպրոսի խաչակրաց պետությունը գոյություն իսկ չուներ:*

⁸² Հմմտ. Der Nersessian, *Cilician Armenia*, p. 649; Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները եւ հայերը, հտ. 1*, էջ 400: Տե՛ս նաեւ Bundy, *The Trajectory*, p. 75; Cowe, *The Inauguration*, p. 51, ըստ որի՝ Լեւոնն իր թագադրությամբ նաեւ նպատակ էր հետապնդում ամրապնդել Կիլիկիայի ձեռքբերումներն Անտիոքի իշխանապետության հետ ունեցած մրցավեճում:

ցուցնէր ի ձեռն մարգարէից անուօքեան. նա հրամայէ արէնֆս, որ այնպիսիքն, որ յԱստուծոյ լինին՝ նա Աստուած մէն կարէ զինքն աստուծոյ, թէ լաւ է ու թէ վատ»⁸³: Օծյալ լինելու հանգամանքը կարեւորագոյն փաստարկ էր գահաժառանգութեան շուրջ ծագած վեճերի պարագայում⁸⁴: Նման մի վիճակ ստեղծվել էր 1190 թվականին, երբ մահացել էին Երուսաղեմի թագուհի Սիբիլն ու իր երկու դուստրերը: Գի Լուսինյանը, որը Երուսաղեմի թագը կրում էր միայն Սիբիլի ամուսինը լինելու հանգամանքով, հայտնվել էր գահագուրկ լինելու վտանգի առջեւ, քանի որ ըստ ֆեոդալական իրավունքի՝ գահի օրինական ժառանգորդ էր դարձել Սիբիլի կրտսեր փոքր եղբայրը: Մարիզ Կոնրադ Մոնֆերատցին՝ Տյուրոսի ֆաջարի պաշտպանութեան կազմակերպիչը, անմիջապէս ամուսնացել էր վերջինիս հետ եւ ներկայացրել Երուսաղեմի գահին տիրելու իր հայցը: Այս վիճակից դուրս գալու համար, 1191 թ. հուլիսին Աֆֆայում գումարված բարոնների եւ երրորդ խաչակրաց արշավանքի առաջնորդների ժողովը կայացնում է հետեւյալ փոխգիշումային որոշումը. Գի Լուսինյանը, որպէս օծյալ թագավոր, պահպանում է Երուսաղեմի գահը մինչեւ իր մահը, որից հետո այն անցնում է Կոնրադին: Ու թէւ 1192 թ. ապրիլին Ասկալոնում տեղի ունեցած նույնատիպ ժողովը ֆաղափական նկատառումներով չեղյալ է հայտարարում այդ որոշումը, կարեւորն այն է, որ օծյալ լինելու հանգամանքն, այնուամենայնիվ, ծանրակշիռ փաստարկ է դիտվել տվյալ վիճահարույց խնդրում: Այսպիսով, օծութեան շնորհիվ Լեւոն թագավորը Հայոց գահին ցմահ տիրելու իրավունք էր ձեռք բերել՝ իրավունք, որը սակայն, ինչպէս կտեսնենք ստորեւ, չէր տարածվում նրա ուղիղ ժառանգների վրա:

⁸³ Смбат Спарпет, Судебник, с. 81.

⁸⁴ Թագավորի օծութեան նշանակութեան մասին տե՛ս Praver, The Crusaders' Kingdom, p. 95, ինչպիս նաեւ՝ Cowe, The Inauguration, p. 49–50.

ԼԵՒՈՆ Բ (I)՝ ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ (1198–1219 թթ.)

Լեւոնի թագադրությամբ վերջապես լուծվել էր ոչ միայն նրա անձնական «լեզիտիմության» հարցը, այլև էականորեն փոխվել էր Կիլիկյան Հայոց պետության միջազգային իրավական կարգավիճակը: Ինչպես տեսանք, նրան թագ էին ուղարկել թե՛ Սրբազան Հռոմեական կայսրության ինֆնակալ Հենրի VI-ը, եւ թե՛ Քյուզանդական կայսր Ալեքսիոս III Անգելյուսը: Այս հարցում վերջիններիս միջեւ, կարծես թե, նույնիսկ որոշակի մրցակցություն էր առաջացել, եւ նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր շահել Լեւոնի առանձնահատուկ բարեկամությունը: Դրա պերհախոս արձագանքն է մասնավորապես Կիրակոս Գանձակեցու «Պատմութեան» հետեւյալ հատվածը. «Եւ լուեալ կայսերն յունաց, եթէ ֆրանկք ետուն թագ Լեւոնի, առաքեաց եւ նա ընծայս եւ թագ գեղեցիկ՝ ոսկով եւ ակամբք պատուականօք ընդելուզեալ, եւ ասէ. «Զթագն հռոմայեցոց մի՛ դիցես ի գլուխս քո, այլ գմերդ, զի առ մեզ հուպ ես քան թէ ի Հռոմ»¹: Այդ մրցակցությունը բացատրվում էր երկու կայսրերի հետապնդած որոշակի նպատակներով: Արհայական թագեր շնորհելով Կիպրոսի եւ Կիլիկիայի իշխաններին՝ Հենրի VI-ը ձգտում էր, իր ծրագրած խաչակրաց արշավանքի նախօրյակին, հավատարիմ վասալներ ձեռք բերել Արեւելքում², կամ էլ դրանով հակակշռել Տրանսիայի ազդեցությունը Լեւոնտի երկրներում³: Ինչ վերաբերում է Ալեքսիոս III-ին, ապա

¹ Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն*, էջ 158:

² Հմմտ. Runciman, *A History*, III, p. 85; Dédéyan, *Histoire*, p. 310.

³ Հմմտ. Mutafian, *Recherches*, p. 67.

նրա շահագրգռությունը կայանում էր Կիլիկիայում թեկուզ չնչին ազդեցություն ունենալու⁴, եւ թերեւս նաեւ հանձին Լեւոնի՝ փոքրասիական սելջուկների դեմ ուժեղ դաշնակից ձեռքբերելու մեջ, քանի որ վերջինիս տարած փայլուն հաղթանակները Ռումի սուլթանության նկատմամբ չէին կարող Բյուզանդիայում տպավորություն գործած չլինել: Ալեքսիոսի քայլը մասնավորապէս այդ դրդապատճառով է բացատրում Միխայել Ասորու «Ժամանակագրության» հայ թարգմանիչը՝ Վարդան Արեւելցին. «Վասն որոյ փութային պատուել զնա թագի՝ թագաւորն Յունաց, վասն պատճառին, զի թերեւս ճնար լիցի նովաւ յաղթել Թուրացն, որ բռնացեալ կալան զիշխանութիւն նորա, իսկ թագաւորն Փռանգաց՝ վասն դաշանց սիրոյն, գոր ունէին ընդ Հայք ուխտիմ ի հին ժամանակաց»⁵: Ի դեպ, այս հատվածում, հայ միջնադարյան գաղափարաբանության ուսումնասիրման տեսակետից, որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաեւ Վարդանի դատողությունը Գերմանական կայսերն առաջնորդած դրդապատճառի, այն է՝ «Դաշանց թղթի» նկատմամբ ցուցաբերած հավատարմության մասին⁶:

Աղբյուրների վկայությամբ՝ Լեւոնը սիրով ընդունեց թէ՛ Գերմանիայից, թէ՛ Բյուզանդիայից ստացված թագերը եւ, ըստ այդմ, պսակվեց (= թագադրվեց) միանգամից երկու կայսերի կողմից: Այդ մասին առաջին տեղեկությունը տալիս է Լեւոնի ժամանակակից Ներսէս Լամբրոնացին, որն, ինչպէս արդէն վերը տեսանք, իր «Յայտնութիւն Յովհաննոս մեկնութեան» հեղինակային հիշատակարանում գրում է. «Վերապատուեցաւ թագաւոր Հայոց Լեւոն, որ յՌոբինեանց, բարեպաշտ եւ յաղթաւղ Աստուծով, որոյ հռչակ արութեան շարժեաց զմեծ ինքնակալն հին Հռոմա զՀենոի եւ զնոր Հռոմա զԱլէքս, որ պսակեցին զսա քաւամբ պատուական յեկեղեցի Տարսոնի որ իմ անարժանութեամբ հովուի»⁷: Նույնը հաստատում է 1204 թվականին Հռոմկալայում գրված հետեւյալ հի-

⁴ Հմմտ. Runciman, A History, III, p. 90.

⁵ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 513:

⁶ «Դաշանց թղթի» մասին տես սույն աշխատության «Առաջաբանի» տողատակ, ծանոթ. 28:

⁷ Մաթեոսյան, Ե-Ժ դդ. հիշատակարաններ, էջ 302:

շատակարանը. «Որ ըստ բարեխնամ կամացն Աստուծոյ պսակեալ եղէ յերկուց թագաւորացն Յունաց եւ Հռոմայեցոց»⁸: Ավելի հստակ ու միանշանակ է Կիրակոս Գանձակեցու վկայությունը. «Իսկ թագաւորն Լեւոն այր իմաստուն էր, ոչ խոտեաց եւ ո՛չ զմի ոմ յերկոցունց թագաւորացն զՀռոմայն եւ զԿոստանդնուպօլսեայն, այլ ըստ կամաց նոցա⁹ արար պատասխանի եւ սիրով ընկալաւ զեկեալսն, ետ տուրս մեծամեծս բերողաց թագին եւ եղէ պսակեալ յերկոցունցն»¹⁰: Նշենք, որ բերված ֆաղվածքներին ֆիշ թե շատ համահունչ են նաեւ հայ միջնադարյան մի քանի այլ աղբյուրների տվյալները¹¹: Մինչդեռ ստորեւ կտեսնենք, որ բոլորովին այլ է Սմբատ Սպարապետի վարկածը, ըստ որի՝ թեւ Լեւոնն, իսկապես, ուրախությամբ ընդունել էր Ալեքսիոսի ուղարկած թագը, բայց թագադրվել էր միայն արեւմտյան կայսեր շնորհածով¹²:

Իսկ մինչ այդ, վերադառնալով Լամբրոնացու եւ Գանձակեցու հաղորդած տեղեկություններին, ավելորդ չենք համարում նշել, որ Կիլիկիայի պատմության հմուտ ուսումնասիրող Գ. Միխայելյանը դրանց հիման վրա հանգել է հետեւյալ եզրակացության. «Երկու կայսրերից Լեւոն Բ-ի թագ ընդունելու փաստն, ակնհայտորեն, բացատրվում է իր իշխանությանն ավելի մեծ հեղինակություն հաղորդելու եւ Կիլիկիայի ինքնիշխանության նկատմամբ գերմանական ու բյուզանդական կայսրերի հնարավոր ոտնձգությունները չեզոքացնելու ձգտումով»¹³: Սկզբունքորեն տարբեր է Ս. Տեր-Ներսեսյանի տեսակետը, ըստ որի՝ թեւ «հայ պատմիչներն ու դեպքերին ժամանակակից ձեռագրերի գրիչները նաեւ բյուզանդական կայսր Ալեքսիոս III Անգելյոսի կողմից ուղարկված մի

⁸ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 39:

⁹ Ի տարբերություն Գանձակեցու «Պատմութեան» հրատարակիչ Կ. Մելիք-Օհանջանյանի՝ մենք նախընտրել ենք բազմաթիվ ձեռագրերում առկա «նոցա» ընթերցվածը փխ «նորա»:

¹⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 158:

¹¹ Հմմտ. Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 138–139; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 144; Վահրամ Բարունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 55; Ստեփանոս, Տարեգրութիւն, էջ 36; Մարտիրոս Ղրիմեցի, Կարգ եւ թիւ, էջ 204:

¹² Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 108–109; Վենետիկ, էջ 207–208:

¹³ Микаелян, История, с. 158.

թագ են հիշատակում, բայց հավանական չի թվում, որ թագադրման մի առանձին արարողություն էր տեղի ունեցել, քանզի Բյուզանդիայից ուղարկված թագերը, ինչպես, օրինակ, Հունգարիայի թագավորների կամ մանր իշխանավորների դեպքում, խորհրդանշական ու պատվավոր բնույթ էին կրում, նպատակ չհետապնդելով ցույց տալու, որ ինչ-որ իշխան արժանանում էր թագավորի աստիճանի»¹⁴:

Մեր կարծիքով, սակայն, Հենրի VI-ի և Ալեքսիոս III-ի շնորհած թագերի տարբերությունն ավելի էական ու խորհային էր, քան այն, ինչ մատնանշում է Ս. Տեր-Ներսեսյանը: Վաղուց ի վեր նկատված է, որ Լեոնն ավելի շահագրգռված էր թագադրվելու Գերմանական, քան Բյուզանդական կայսեր կողմից, ինչը հաստատվում է նաև միջնադարյան աղբյուրների տվյալներով: «Ոչ կամեցաւ նա, թէ այլում ումե՛ք երեւեսցի նա հնազանդ վասն թագի, բայց թէ ազգին ֆռանկաց», – այդ առթիվ գրում է Կիրակոս Գանձակեցին¹⁵: Իսկ Սմբատ Սպարապետը, որին թեև նույնպես հայտնի է, որ Լեոնին թագ էր ուղարկել նաև Բյուզանդական կայսրը¹⁶, հստակորեն արձանագրում է, որ նա Հայոց թագավոր էր օծվել «ի հնազանդութիւն եկեղեցոյն Հոռմայ եւ ըմբռուին Ալամնաց»¹⁷: Գերմանական և Բյուզանդական կայսրերի ուղարկած թագերի բովանդակային տարբերությունը պետք է փնտրել, ահա, Գանձակեցու և Սմբատի գործածած **հնազանդ/հնազանդութիւն** բառի մեջ, ինչից միանգամայն ակնհայտ է դառնում, որ Լեոնն իրեն ճանաչել էր Սրբազան Հոռմեսական կայսրության, և ոչ Բյուզանդիայի վասալ: Դա, ի դեպ, հաստատվում է նաև Կիլիկիո արհունական դիվանի մի ֆանի թանկարժեք վավերագրերով, որոնցում Լեոնն իրեն հորչորչում է «Թագավոր Հայոց՝ շնորհիվ (կաթողիկե եկեղեցու) և

¹⁴ Der Nersessian, Cilician Armenia, p. 648; *Տեր-Պետրոսյան, Խաչակիրները և հայերը, հտ. 1, էջ 400*: Հրաչ Բարթիկյանի կարծիքով՝ Ալեքսիոսի ուղարկածը ոչ իսկ թագ, այլ ընդամենը գիաղեմա պետք է եղած լիներ՝ նախատեսված Հայոց թագուհու համար: Այդ մասին մանրամասն տե՛ս նրա 2001 թվականին լույս տեսած «Առաջին երեք Բագրատունի թագավորների այսպես կոչված «բյուզանդական» թագի մասին» հոդվածը. *Բարթիկյան, Հետազոտություններ, հտ. 1, էջ 781–810*:

¹⁵ *Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 156*:

¹⁶ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 207; Փարիզ, էջ 108*:

¹⁷ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 208; Փարիզ, էջ 109*:

Հռոմեական կայսրության» կամ «Թագավոր Հայոց՝ շնորհիվ Աստծո եւ Հռոմեական կայսրության» տիտղոսներով («per eandem et Romani Imperii gratiam Rex Armenorum» եւ «Dei et Romani Imperii gratia Rex Armenie») ¹⁸:

Այստեղից բխում է, որ Լեւոնը, դիվանագիտական նկատառումներով չներժելով Բյուզանդական կայսեր մատուցած շնորհը, հնարամտորեն խուսափել է պսակվել նրա ուղարկած թագով եւ, ըստ այդմ, չի ճանաչել նրա գերիշխանությունը, քանի որ ո՛չ ինքը, ո՛չ էլ Հայոց թագավորությունը քաղաքական ատումով դրանից ոչինչ չէին շահի: Միտիոկեֆալոնի ճակատամարտի (1176 թ.) եւ Մանուել կայսեր մահվանը (1180 թ.) հաջորդած գահակալական կռիվների արդյունքում Բյուզանդիան կորցրել էր իր երբեմնի հզորությունը եւ հայտնվել փլուզման եզրին: Հետեւաբար Լեւոնը չէր կարող իր երկրի բախտը կապել ռազմա-քաղաքական տեսակետից այդպիսի թույլ ու անարժէք դաշնակցի հետ ¹⁹: Որ Հայոց թագավորի հաշվարկները ճիշտ դուրս եկան, պիտի ապացուցվէր ընդամենը մի քանի տարի անց, 1204 թվականին, երբ խաչակիրներն, առանց լուրջ դիմադրության հանդիպելու, մեկ հարվածով նվաճեցին Բյուզանդիայի եւրոպական տիրույթներն ու հիմնադրեցին Կոստանդնուպոլսի լատինական կայսրությունը:

Նշվածից բացի, Բյուզանդական կայսրության գերիշխանության ճանաչումն, ակնհայտորեն, կհակասեր նաեւ Լեւոնի որդեգրած քաղաքական ռազմավարությանը, որի էությունն էր.

¹⁸ Հմմտ. Mutafian, Recherches, p. 130. *Մուչպես նշում է նույն հեղինակը, 1214 թվականից հետո արձակած իր հրովարտականերում Լեւոնը դադարում է հիշատակել պապի եւ Գերմանական կայսեր անունները եւ բավարարվում «Թագավոր Հայոց՝ շնորհիվ Աստծո» (Dei gratia Rex Armenie) տիտղոսով. տե՛ս Langlois, Cartulaire, p. 122, 124, 126.*

¹⁹ Փ. Մորգանի կարծիքով, ընդհակառակը, սկզբում Լեւոնը փնտրել է Բյուզանդիայի դաշնակցությունը եւ ձգտել թագադրվել Հունաց կայսեր ձեռքով, եւ միայն այն բանից հետո, երբ Հույն ուղղափառ եկեղեցին նրա առջեւ դրել է լուրջ դավանաբանական խնդիրներ, նա հրաժարվել է այդ մտքից ու թեքվել Արեւմուտքի կողմը. տե՛ս Morgan, Histoire, p. 187–188. *Մուչպես իրավագիտորեն գրում է Արտավազդ արքեպիսկոպոս Սյուրմեյանը, «Լեւոն Ա. Թագավոր խաչակրաց Կ. Պոլիսը գրավելեն 1204 տասնեակ մը տարիներ առաջ իսկ համոզված էր, որ արեւմտյան եւրոպա շատ ավելի զորավոր էր, քան Բյուզանդական կամ Արեւելյան կայսրությունը».* Սյուրմեյան, Հայ-Լատին հարաբերությունները, մասն Բ, էջ 23:

ա. Հայոց թագավորության ինտեգրումը արեւմտյան տերությունների ֆաղափարական համակարգում.

բ. Արեւելիում հիմնադրված խաչակրաց պետությունների հետ հավասար պայմաններում հայտնվելու ձգտումը.

գ. Անտիոքի իշխանապետության նկատմամբ 1194 թ. Սսի պայմանագրով ձեռքբերված գերիշխանության ամրապնդումը:

Ինֆնըստինյան հասկանալի է, որ Բյուզանդական կայսեր գերիշխանության ճանաչումը ոչ միայն որեւէ նպաստ չէր կարող բերել նշված նպատակների իրականացման գործին, այլեւ, ընդհակառակը, լուրջ զրգոություն կառաջացներ լատինների միջավայրում, որոնք առանց այդ էլ խիստ լարված էին Բյուզանդիայի հանդեպ: Այս ամենով հանդերձ, Ալեքսիոս III-ի ուղարկած թագը բոլորովին անարժեք եւ խոտելի չպետք է դիտվեր Լեւոնի աչիւմ, քանի որ դրանով Բյուզանդիան, իր ավելի քան հարյուրամյա մերժողական կեցվածքից հետո, վերջապես ճանաչում էր Կիլիկիո Հայոց պետության անկախությունը²⁰: Հիշեցնենք, որ մինչեւ 1196 թվականը Բյուզանդական կայսրությունը Կիլիկիան համարում էր իր անբաժանելի տարածքը, իսկ Ռուբինյան իշխաններին դիտում որպէս բռնազավթիչներ: Ինչպէս այդ մասին գրում է Ղեւոնդ Ալիշանը, «երկիրն կալուած գրուէր կայսերաց, եւ ասոնց առջեւ՝ Ռուբէնի որդիքն՝ բռնաւորք եւ յափշտակողք»²¹:

Կիլիկյան Հայաստանի միջազգային իրավական նոր կարգավիճակի լիարժեքությունն ապահովելու տեսակետից չափազանց կարեւոր էր չասենք՝ վնասող էր նաեւ Հռոմի պապի դիրքորոշումը²²: Մենք տեսանք արդեն, որ Լեւոնը ճանաչել էր ոչ միայն Գերմանական կայսեր, այլեւ Կաթողիկէ եկեղեցու գերիշխանությունը, ինչի մասին վկայում են մասնավորապէս Սմբատ Սպարապետի ժամանակագրությունը²³ եւ Հռոմի պապերին հասցեագրված Լեւոնի նամակները²⁴: Դրա բացատ-

²⁰ Հմմտ. Պալասանյան, Պատմութիւն, էջ 349; Mutaflan, Recherches, p. 70.

²¹ Ալիշան, Շնորհալի, էջ 101:

²² Հմմտ. Օրմանյան, Հայոց եկեղեցին, էջ 84-85; Օրմանյան, Ազգապատում, § 1055:

²³ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 208; Փարիզ, էջ 109:

²⁴ Mutaflan, Recherches, p. 130. Հմմտ. նաեւ՝ Halfter, Das Papsttum, S. 265-269. Այս առու-

րություներ պետք է փնտրել այն իրողության մեջ, որ արեւմտյան թագը Լեւոնը ձեռք էր բերել Կեղեւստինոս III պապի հավանությամբ՝ ծառայություն, որի դիմաց վերջինս պայման էր դրել հանաչել իր գերիշխանությունն ու որոշ փոփոխություններ կատարել Հայոց եկեղեցու ծիսակարգում, նրբանկատորեն շրջանցելով Հռոմեական եւ Հայոց եկեղեցիները բաժանող հիմնական դավանաբանական խնդիրները: Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Հռոմի կողմից հայերի առջեւ դրված պայմանները հետեւյալ երեւն էին. «[ա]. Տօնել զտօն Տեառն եւ ամենայն սրբոց, յորում ատուր եւ հանդիպի, [բ]. եւ միշտ յեկեղեցւոջն կատարել զաղօթսն տուրնջեան եւ գիշերոյ..., [գ]. եւ ո՛չ լուծանել զճրագայոյցսն ծննդեան եւ յարութեանն, բայց միայն ձկամբ եւ ձիթով»²⁵:

Լեւոնի համար Հայոց թագավորության վերականգնումն այնքան կարեւոր էր, որ նա, կոտորելով հայ բարձրաստիճան հոգեւորականության դիմադրությունը, հատուկ գումարված եկեղեցական ժողովի համաձայնությամբ, առերես բավարարեց պապի պահանջները: Նույն Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ Լեւոնը ժողովականներից չէր իսկ թափցրել, որ այդ ֆայլին դիմում է զուտ ձեւականորեն. «Դում մի՛ հոգայք վասն այդորիկ, եւ հանեցից զմիտս նոցա առ անգամ մի կեղծատուրութեամբ»²⁶: Սակայն անկախ անգամ Կիրակոսի այս տեղեկության հավաստիությունից, ինչը, բնականաբար, կարող է Լեւոնի կատարած գիշումը հետին թվով արդարացնելու միտում նկատվել, ակնհայտ է, որ

մով ուշագրամ է նաեւ ժամանակի կաթողիկոս Գրիգոր Զ Ապիրատի նամակն՝ ուղղված Խննդկենտիոս III պապին, որում մասնավորապես ասված է. «Մաներուք, Տէր մեր, եթէ եկն եհաս առ մեզ Մագոնտիացւոց արքեպիսկոպոսն՝ այր ազնուական, իմաստուն եւ հոյակապ, եւ երբր առ մեզ յանուն Աստուծոյ եւ Հռոմէական բարձր եկեղեցւոյդ եւ յանուն մեծի Հռոմայեցւոց Խնքնակալի զթագ արքունական եւ պսակեաց զթագաւորն մեր զԼեւոն, եւ ետ մեզ զթագն, զոր ի վաղ ժամանակաց կորուսեալն էաք, եւ հեռացեալ գտանէաք ի ձէնք, ընկալաք զայն յօժարամիտ եւ մեծաւ խնդութեամբ. վասն այնորիկ խորին մեծարանօք շնորհս մատուցանեմք Աստուծոյ, սրբոյ Հռոմէական եկեղեցւոյդ եւ Հռոմայեցւոց Խնքնակալի». Պալճյան, Պատմութիւն, էջ 53:

²⁵ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 156-157:

²⁶ Անգ, էջ 157: Ըստ Ս. Կողյանի՝ տվյալ դեպքում կեղծողը ոչ թե Լեւոն թագավորն է, այլ Կիրակոսն ինքը. տե՛ս Կողյան, Հայոց եկեղեցին, էջ 440:

հայ-հոռմեական եկեղեցական միության դրդապատճառը ոչ թե կրոնական, այլ գուտ ֆաղափական էր: Ինչպես արդարացիորեն գրում է Ռ. Գրուսեն, «Ամենեւին չպետք է խաբվել այդ, այսպես կոչված, կրոնական միությունից: Կիլիկիո հայ հոգեւորականությունը կամ իշխող հարստությունը ոչ մի պահ չկամեցան ուրանալ իրենց յուրահատուկ հանգանակը եւ ընդունել «երկու բնությունները»: Այդ հարցում, ինչպես նաեւ պապի գերակայությունը ճանաչելու առումով, նրանք ընդամենը բանավոր զիջումներ կամ, ավելի ճիշտ, հմտորեն կազմված երկիմաստ ձեւակերպումներ կատարեցին, որոնք թույլ տվին պահպանել լատինների հետ կնված ֆաղափական դաշինքը, առանց սակայն առանձնապես բախվելու կրոնական խոչընդոտների»²⁷: Նշված զիջումների հետ մեկտեղ, Լեւոնը հարկադրված էր նաեւ հաշվի առնել Հայոց եկեղեցու սպասավորների տրամադրությունները եւ ինչ-որ կերպ մեղմել նրանց հակազդեցությունը²⁸: Այս առումով հատկանշական է, որ իր երդման արարողության ժամանակ նա խոստանում է հավատարիմ մնալ ազգային դավանանքի ավանդներին եւ պաշտպանել Հայոց եկեղեցու շահերը. «Ես Լեւոն՝ թագաւոր Հայոց, որ կամաւն Աստուծոյ լինելոց եմ թագաւոր Հայոց, խոստանամ, ուխտեմ եւ երդնում առաջի Աստուծոյ եւ երանելոյն սրբոյն Գրիգորի Լուսաւորչին, որ լինիմ ես յայսմհետէ պահապան եւ զերծանող՝ ֆահանայապետին եւ սուրբ եկեղեցոյն Հայոց եւ ամենայն կղերիկոսաց նորայ, ի յամենայն կարիս եւ ի յաւգուտս իւր, պահելով եւ խնամելով զհայրենիս, զպատիս, որչափ կարողացայց աւզնութեամբն Աստուծոյ, ըստ գիտութեան եւ կարողութեան իմոյ ուղել յստակ հաւատով, այնպէս Աստուած աւզնէ ինձ եւ այս սուրբ Աւետա-

²⁷ Grousset, L'Empire, p. 394; Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 338*: Հմմտ. նաեւ՝ Morgan, Histoire, p. 193–195; Bundy, The Trajectory, p. 85. Տվյալ խնդրի առնչությամբ շփոթազանց խորաթափանց է Բակուրյանի հետեւյալ ձեւակերպումը, որի համաձայն՝ Լեւոնը Հռոմի պապին ճանաչել էր ոչ թե որպես հոգեւոր առաջնորդի, այլ աշխարհիկ գերակայի. «Ճշմարիտ է, որ Լեւոն որդիական հնազանդութիւն կ'ընծայէր Պապին: ...Սակայն նոյնչափ եւս ճշմարիտ է, որ այդ հնազանդութիւնը կ'ուղղուէր Պապին ո՛չ քահանայապետական, այլ վեհապետական հեղինակութեանը»։ Բակուրյան, *Մի տեսություն, էջ 19*:

²⁸ Հմմտ. Օրմանյան, *Հայոց եկեղեցին, էջ 85*:

րանս Աստուծոյ»²⁹: Ի դեպ, Լեւոնի երդումը լիովին համապատասխանում է Երուսաղեմի թագավորների երդման բնագրին, որում նույնպես նորընծա գահակալը հավաստում է իր հավատարմությունը Հոռմեական Եկեղեցուն եւ խոստանում իր պաշտպանության տակ վերցնել Սուրբ Երկրի պատրիարքաւանը³⁰:

Կեղեստինոս III-ն, իհարկե, այնքան միամիտ չէր, որ հավատար հայերի անկեղծությանը, սակայն նա գերադասեց աչք փակել Լեւոնի երկակի խաղի վրա, քանի որ նրա համար գլխավորը ոչ թե ակնկալված դավանաբանական զիջումներն էին, այլ նորաստեղծ թագավորության կողմից իր գերիշխանության ճանաչումը: Սա այն բնութագրական դեպքն է, երբ Հոռմի պապը եւ Հայոց թագավորը, կարծես թե, լուր համաձայնությամբ որդեգրել էին միեւնույն խաղի կանոնները եւ, եկեղեցական միություն ձեւացնելով, առաջնորդվել ոչ թե կրոնական, այլ բացառապես քաղաքական նկատառումներով: Կեղեստինոսը շահագրգռված էր Հոռմի Աթոռի միջազգային հեղինակության բարձրացմամբ, իսկ Լեւոնը՝ պապի կողմից իր թագավորական իշխանության եւ Հայոց պետության անկախության պաշտոնական ճանաչմամբ³¹:

Այսպիսով, ճանաչվելով միաժամանակ Գերմանական ու Բյուզանդական կայսրերի, ինչպես նաեւ Հոռմի պապի կողմից, Կիլիկիո Հայոց թագավորությունը, ժամանակակից քաղաքագիտական լեզվով արտահայտված, դարձել էր միջազգային իրավունքի լիարժեք սուբյեկտ, որի

²⁹ *Դանիելյան, Յուզակ, էջ 97*; նույնը՝ *Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 154-155*: Դ. Ալիշանը, ծանոթ լինելով միայն երկրորդ աղբյուրին, Լեւոնի երդման մասին գրում է հետեւյալը. «Եթէ ոչ ըստ ամենայն բառից այսմ շարաբանութեան՝ արտասանեալ իցէ Լեւոնի, այլ հարկ է թէ եւ ոչ հեռի յայսմանէ»: *Ալիշան, Սիսուան, էջ 548*:

³⁰ *Richard, Jérusalem, p. 63*.

³¹ Այս առումով ուշագրավ է Մ. Օրմանյանի հետեւյալ դիտողությունը. «Լեւոն, որ թագը շտապած այնչափ նախանձալուզութեամբ պաշտպանած էր Լատիններուն կողմը, թագաւորութենէն ետքը սկսաւ բնաւ կարեւորութիւն չտալ այն պայմաններուն, որոնք հաստատուած էին իբրեւ միութեան հիմնակէտեր»: *Օրմանյան, Հայոց եկեղեցին, էջ 85*: Հակաճառելով Օրմանյանին, Ս. Կոզյանը Լեւոնի միաբանումը Հոռմեական եկեղեցուն միանգամայն անկեղծ է համարում. *Կոզյան, Հայոց եկեղեցին, էջ 440-441, 446-449*:

հետ հարկադրաբար հաշվի պիտի նստեին նաեւ մահմեդական երկրները, իսկ հետագայում անգամ մոնղոլները: Ներսէս Ակիմյանի կարծիքով՝ լսելով, որ Ֆրիդրիխ Շիկամորուսը Հայոց իշխանին թագ էր խոստացել, մի թագ էլ ուղարկել էր Սալահեդդինը³²: Սակայն, թվում է, վաստակաշատ բանասերը թյուրիմացության մեջ է. նրա աղբյուրն, ամենայն հավանականությամբ, Դեւոնդ Ալիշանի այն տեղեկությունն է, ըստ որի՝ Բաղդադի խալիֆը, եւ ոչ թէ Սալահեդդինը, Լեւոնին թանկարժեք ընծաներ էր ուղարկել³³, ինչն ինքնին, անշուշտ, նույնպէս նշանակալից փաստ է:

Կիլիկիո Հայոց պետության իրավական կարգավիճակի շեշտակի փոփոխության հետեւանձով միջազգային ասպարեզում անշափ մեծացել էր նաեւ Լեւոնի անձնական հեղինակությունը, որն առանց այդ էլ բարձր էր մահմեդականների դեմ տարած նրա տպավորիչ հաղթանակների շնորհիվ: Թագադրությունից հետո նա մշտական նամակագրական կապ էր հաստատել Հռոմի Աթոռի հետ, իրավարարի դեր ստանձնել Անտիոքի իշխանապետության գահաժառանգական խնդիրներում եւ սկսել էր իր անունով ոսկե ու արծաթե դրամ հատել, ինչը Կիլիկիայի առջեւ ճանապարհ էր հարթում ներգրավվելու տարածաշրջանային եւ համաշխարհային առեւտրում³⁴: Միջազգային ասպարեզում Լեւոնի

³² *Տե՛ս Ակիմյան, Ներսէս Լամբրոնացի, էջ 53:*

³³ *Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 465. հմմտ. նաեւ՝ Օրմանյան, Ազգապատում, § 1063:*

³⁴ Կիլիկյան իշխանների մինչ այդ հատված բոլոր դրամները պղնձյա էին՝ նախատեսված հիմնականում ներքին շրջանառության համար. տե՛ս Bedoukian, Coinage, p. 67a–67b. Լեւոնի հատած արծաթադրամների եւ նրա հիմնադրած դրամահատարանի (տարապխանա) մասին ուշագրավ տեղեկություն է պահպանվել Հակոբ Սսեցու պատմության մեջ. «Սա ետ տալ զ(տ)արպս արծաթոյ ի կլայն Սսու, որ տունն այժմ նովին անուամբն տարապխանայ կոչի, եւ է աւերակ: Եւ դրամն ուրեք ուրեք ի մօտն տեսանի, եւ գիր դրամին՝ մին երեսն «Լեւոն թագաւոր», եւ միւսն՝ «կարողութեամբն Աստուծոյ»». Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 157: Այս փաստը, եւ հատկապէս Լեւոնի դրամներից մեկի ճշգրիտ նկարագրությունը, հեղինակին են վերապահում Կիլիկիո դրամագիտության առաջին հետազոտողը լինելու պատիվը, մանավանդ որ իր աշխատության հետագա շարադրանքում նա նույնպիսի ճշգրտութեամբ նկարագրում է նաեւ Հեթում Ա թագավորի դրամները:

վայելած բարձր հեղինակության պերճախոս վկայություններից է, ի դեպ, նաև այն մասնավոր փաստը, որ Կոստանդնուպոլսի առաջին լատինական կայսր Բալդուին Ֆլանդրիացին հարկ էր համարել անմիջապես նամակով նրան տեղեկացնել խաչակիրների կողմից Բյուզանդիայի մայրաքաղաքի գրավման հանգամանքների մասին: Այդ թանկարժեք տեղեկությունը պահպանվել է 1204 թվականին Հռոմկալյում գրված մի ձեռագրի հետևյալ հիշատակարանում. «Յայսմ ամպրոպամած եւ ի վրդովուտ ժամանակի ... ի կամաց ողորմութեան բարերարին Աստուծոյ, շարժեալ եղեն զաւրբ արիական ազգին Հռոմայեցոց եւ եկեալ հասին ի Բիզանդիոն, որ կոչի Կոստանդինուպոլիս... Եւ եղեալ թագաւոր ֆաղափին զկոմս ոմն յազգէն իւրեանց, որոյ Պաղտոյն անուն, եւ բարձաւ թագաւորութիւն յազգէն Յունաց: Իսկ նորընծա թագաւորն հրովարտակ ատետաբեր առաքէր առ մերս ազգի թագաւոր Լետն, տեղեակ առնելով զնա եղելոցն»³⁵:

Ակներեաբար, Լետնի անձնական հեղինակության բարձրացմանն ու նրա «լեգիտիմության» լրացմանն էր միտված նաև իր իսկ կողմից շրջանառության մեջ դրված «թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսը³⁶, որի բովանդակած պատգամն ուղղված էր միաժամանակ թե՛ արտափին աշխարհին, թե՛ ներհայկական միջավայրին: Դրանով նա օտարների առջեւ հավակնում էր հանդես գալ որպես ողջ հայության ներկայացուցիչ, իսկ հայերի աչքում ձգտում էր ընդգծել նրանց միակ թագավորը լինելու իր հանգամանքը³⁷: Ամենայն հավանականությամբ, այդ տիտղոսն ստեղծվել է Հայոց կաթողիկոսների նույնաբնույթ տիտղոսի նմանողությամբ, հետետելով այն տրամաբանությանը, որ եթե գոյություն ուներ «ամենայն Հայոց կաթողիկոս», ապա ինչու չպետք է նաև «ամենայն Հայոց թագաւոր» լիներ³⁸: Ընդունված տեսակետի համաձայն՝

³⁵ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 40:

³⁶ «Թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսի մասին մանրամասն տես՝ Ալիշան, Սիւտուան, էջ 482; Mutafian, Recherches, p. 131–132.

³⁷ Հմմտ. Kouymjian, Armenia, p. 33.

³⁸ Թեև Կ. Մութաֆյանը փորձում է «թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսի գործածության այլ նախադեպեր մատնանշել, մասնավորապես Քովմա Արծրունու եւ Մատթեոս Ուհայեցու բնագրերում (Mutafian, Recherches, p. 131), բայց դրանք

«ամենայն Հայոց կաթողիկոս» տիտղոսը պաշտոնապես սկսել է կիրառվել XV դարում³⁹: Սակայն, ինչպես նկատել է Ա. Բոզոյանը, այն ստեղծվել է ավելի վաղ, այն է՝ XI–XII դարերում⁴⁰, երբ մի շարք հակաթոռ կաթողիկոսությունների առաջացման պատճառով հարկ էր զգացվել շեշտելու Հայոց գլխավոր հայրապետի առանձնահատուկ իրավագորությունը: Դրա ապացույցը մենք գտնում ենք, մասնավորապես, Ներսես Շնորհալու «Նամականիում», որում այդ տիտղոսն օգտագործված է երկու անգամ. «տեառն Գրիգորի սուրբ սիրեցելոյ պատուական կաթողիկոսի ամենայն Հայոց»⁴¹ եւ «Ներսիսի ծառայի Քրիստոսի, ողոր-

ավելի շուտ տեղեկատվական բնույթի արտահայտություններ, քան տիտղոսներ պետք է համարել: Համոզվելու համար արժե մեջբերել այդ հեղինակների համապատասխան ձեւակերպումները. «Թագաւորեցուցանէ զնա ի վերայ ամենայն Հայոց» (Քովմա Արծրունի, Պատմութիւն, էջ 314), «Նստուցին զԱշոտ դրուց աշխարհին՝ թագաւոր ամենայն տանն Հայոց» (Մատթեոս Ուռուցեցի, Ժամանակագրութիւն, էջ 10), «Եւ եթէ մեռցի Յովհաննէս, Աշոտ լիցի թագաւոր ամենայն տանն Հայոց» (Անդ), «Օծին զԳագիկ թագաւոր ի վերայ ամենայն տանն Հայոց» (Անդ, էջ 86): Որ նշված արտահայտությունները կապ չունեն տիտղոսի հետ, պարզորոշ կերպով երեւում է այն բանից, որ Մատթեոս Ուռուցեցին երբեմն նույն ձեւակերպումները գործածում է Հայոց կաթողիկոսների եւ նույնիսկ օտար միապետերի գահակալության պարագայում: Այսպես, «Ձեռնադրեցին զՏէր Բարսեղ կաթողիկոս ... ի վերայ ամենայն աշխարհին Հայոց» (Անդ, էջ 221), «Ձեռնադրեցին զՏէր Գրիգորիս եպիսկոպոս ի վերայ ամենայն տանն Հայոց» (Անդ, էջ 330), «Եւ նստուցին յաթոռ նորա զԲագարատ, թագաւորեալ ի վերայ ամենայն աշխարհին Վրաց» (Անդ, էջ 56), «Թագաւորեաց Կոստանդին եղբայր Վասիլին ի վերայ ամենայն աշխարհին Հռոմոց» (Անդ), «Կացուցանեն զնա (զՊարկիարուիս) սուլտան ամենայն Պարսից» (Անդ, էջ 243): «Ամենայն տունն Հայոց» արտահայտության մի ինքնատիպ մեկնաբանություն տե՛ս Մաթեոսյան, Բագրատունյաց Հայաստան, էջ 195–201:

³⁹ Հմմտ. Անթապյան, Կաթողիկոս, էջ 164: Maksoudian, Chosen of God, p. 73 (հայերեն թարգմանությունը՝ Մագսուտյան, Հնտրեալդ յԱստուծոյ, էջ 122): Ինչ վերաբերում է, ընդհանրապես, Կաթողիկոսի ինտիտուտին, ապա դրա մասին մանրամասն տե՛ս Փ.-Պ. Մահեի եւ Ա. Բոզոյանի՝ վերջերս լույս ընծայված արժեքավոր աշխատությունները. Mahé, L'Église arménienne, p. 497–505; Բոզոյան, «Կաթողիկոս Հայոց», էջ 80–85:

⁴⁰ Բոզոյան, «Կաթողիկոս Հայոց», էջ 84; Բոզոյան, Կիլիկիա, էջ 160–161:

⁴¹ Ներսէս Շնորհալի, Հնդհանրական թուղթք, էջ 175–176:

մութեամբ նորին կաթողիկոսի ամենայն Հայոց»⁴²: Մեկ անգամ էլ այդ հուշարձանում նույն տիտղոսը վերաբաղված է «կաթողիկոս ամենայն Հայաստանեայց» ձեռով⁴³: Իսկ եթե հավատալու լինենք Ստեփանոս Օրբելյանին, ապա տիտղոսի գործածության առաջիմ մեզ հայտնի հնագույն վկայությունը պետք է համարել Հայոց Սարգիս Ա կաթողիկոսի 1006 թվականի շրջաբերականը, որում մասնավորապես ասված է. «Այս գիր հրամանի եւ օրհնութեան է իմ նուաստ ծառայի Աստուծոյ Տէր Սարգսի, եւ ողորմութեամբ նորին կաթողիկոսի ամենայն Հայոց»⁴⁴:

Ուշադրության արժանի է այն իրողությունը, որ «թագաւոր ամենայն Հայոց» (Rex omnium Armeniorum) տիտղոսը Լեւոնն օգտագործել է Իննոկենտիոս պապին ուղղված իր առաջին իսկ նամակում, որը թվագրված է 1199 թ. մայիսի 23-ով⁴⁵: Դա նշանակում է, որ նա իր թագակալության սկզբնական տարիներին արդեն գիտակցել է այդ տիտղոսի կարեւորությունը, ինչը նրան դրդել է այն դրոշմել նաեւ իր հատած դրամների վրա: Պ. Պտուկյանի «Կիլիկյան Հայաստանի դրամները» գրքում նկարագրված է Լեւոնի «թագաւոր ամենայն Հայոց» մակագրությունը կրող 59 դրամ⁴⁶: Հատկանշական է, որ Լեւոնի կատարած նորամուծությունը ոչ միայն ընդունվեց ժամանակակիցների կողմից, այլև, ավանդույթի վերածվելով, շարունակվեց ընդհուպ մինչև Կիլիկիո Հայոց թագավորության անկման տարին (1375 թ.): Նույն հմտագույն դրամագետի տվյալներով՝ մեզ են հասել «թագաւոր ամենայն Հայոց» մակագրությամբ դրոշմված՝ Լեւոն Գ (II) թագավորի (1269–1289 թթ.) 58, Հեթում Բ-ի (1289–1306 թթ.)՝ 16 եւ Լեւոն Զ (V)-ի (1374–1375 թթ.)՝

⁴² Անդ, էջ 218:

⁴³ Անդ, էջ 157:

⁴⁴ Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն, հտ. 2, էջ 52: Նույն հեղինակը բացահայտում է նաեւ «կաթողիկոս ամենայն Հայոց» տիտղոսի տարողությունը՝ Գրիգոր Անավարդեցուն կոչելով. «Հայր հանուրց սեռից Հայկայ, եւ կաթողիկոս տիեզերական ի դրանէ Հոնաց եւ Լփնաց, ի ծովէ Կասպից եւ ի լեռնէ Կովկասեաց մինչ ի սահմանս Եգիպտական եւ ի ծովն Արեւմտային»: Անդ, էջ 198:

⁴⁵ Stévan Mutafian, Recherches, p. 131. Նամակի հայերեն թարգմանությունը տես Ալիշան, Սիսուան, էջ 477–478:

⁴⁶ Bedoukian, Coinage, p. 131–134, 144–147.

3 դրամ⁴⁷: Դա չի նշանակում, անշուշտ, որ Հայոց մյուս թագավորները նման դրամներ չեն թողարկել. առավել քան հավանական է, որ այդպիսիք պարզապես չեն պահպանվել կամ դեռևս չեն հայտնաբերվել:

Բացի դրամներից՝ «թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսն ու նրա հին ֆրանսերեն եւ լատիներեն համարժեքները (roy de tote Hermenie/Ermenie, roy de tous les Armens, rex omnium Armenorum/Heremenorum) գործածված են նաեւ Հայոց Լեւոն Գ (II), Լեւոն Դ (III) եւ Լեւոն Ե (IV) թագավորների արքայական հրովարտակներում ու պաշտոնական նամակներում⁴⁸, ինչպես նաեւ վերջինիս ինֆնագիր հիշատակարաններից մեկում⁴⁹: Ի դեպ, ձեռագրական հիշատակարաններում երեք անգամ «թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսով օժտված է նաեւ Հեթում Ա թագավորը⁵⁰, ինչը հատկանշական է, քանի որ, ինչպես տեսանք, նրանից տվյալ մակագրությամբ դրամներ կամ այլ պաշտոնական վավերագրեր մեզ չեն հասել: Քերես ավելորդ չէ նշել, որ հիշատակագիրները երբեմն Կիլիկիո գահակալներին, այդ թվում Հեթում Ա-ին, մեծարում են նաեւ «թագաւոր (կամ արքայ) Հայոց Մեծաց» տիտղոսով⁵¹, ինչը թեւ

⁴⁷ Անդ, էջ 290-298, 314-315, 409:

⁴⁸ Տե՛ս Langlois, Cartulaire, p. 151, 154, 166, 167, 182, 186, 193, 194, 196.

⁴⁹ Տե՛ս Պողարյան, Յուզակ, հտ. 6, էջ 194:

⁵⁰ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 317, 321, 329: Հեթում Ա-ը «թագաւոր ամենայն Հայոց» է կոչված նաեւ Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի 1248 թ. «Թղթում», գրված Վարդան Արեւելցի վարդապետի ձեռքով. տե՛ս «Գիրք Թղթոց», էջ 657 (Ի դեպ, Լ. Խաչիկյանն այդ «Թուղթը» համարում է «հայ դաւանաբանական գրականութեան գլուխգործոցը». Խաչիկյան, Աշխատութիւններ, հտ. 1, էջ 158): Հիշատակարաններում երկու անգամ էլ այդ տիտղոսը հատկացված է Լեւոն Գ (II) թագավորին (Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 445, 718) եւ մեկական անգամ՝ Հեթում Բ-ին (Անդ, էջ 657) ու Կոստանդին Գ (III)-ին (Օրմանյան, Ազգապատում, § 1290): Հետաքրքրական է, որ թագավորներից բացի, երբեմն «ամենայն Հայոց» են կոչված նաեւ Կեռան թագուհին (Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 420), Օշին սենեշալը (Անդ, էջ 630) եւ Կոստանդին Պայլը (Անդ, էջ 641), սակայն սույն դեպքերում, մեր կարծիքով, այդ կոչումները ոչ թէ տիտղոս, այլ սովորական պատվանուն են նշանակում:

⁵¹ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 85, 99, 103, 115, 608, 645; Խաչիկյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 24, 166:

պատմականորեն անհեթեթ, բայց որոշ առումով հավասարազոր է «թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսին:

«Թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսի միջոցով ողջ հայությանն ուղղված Լեւոնի պատգամն անարձագանք չմնաց իր հայրենակիցների հոգիներում: Ժամանակակիցների կողմից նրա թագադրման փաստը գնահատվեց որպես Հայոց հինավուրց թագավորության վերականգնում ու նորոգում⁵², ինչը հասարակական կարծիքի իմաստով, լրացուցիչ «լեգիտիմություն» էր հաղորդում նրա առանց այդ էլ օրինական իշխանությանը: Այսպես, Լեւոնի թագադրման առթիվ Սմբատ Սպարապետը գրում է. «Եւ եղեւ ուրախութիւն Հայոց, զի յաւուրս յետինս զանկեալ տէրութիւն իւրեանց տեսին կանգնեալ եւ նորոգեալ յերեսս Լեւոնի՝ արհայի Հայոց»⁵³: Սմբատից օգտվելով՝ մոտավորապես նույնը կրկնում է Վահրամ Բաբունին. «Եւ օրինօք զնա օծեալ /Տան Թորգոմայ թագաւորեալ... /Չանկեալ Հայոց ազգս կանգնեալ /Եւ զտէրութիւնն նորոգեալ»⁵⁴: Սրան, ինչպես միշտ, համահունչ է Հեթում արհայորդու 1286 թ. ճաշոցի հիշատակարանը. «Եւ նա... պսակեցաւ թագաւոր Հայոց, եւ նորոգեաց զաթոռ եւ զգաւազան թագաւորութեան Թորգոմայ»⁵⁵: Մի այլ հիշատակարան, գրված 1274 թվականին, Լեւոնին կոչում է «զմերս սպառեալ իշխանութիւն եւ թագ նորոգող»⁵⁶: Իսկ Լեւոն Գ (II) թագավորն իր պապին մեծարում է հետեւյալ խոսքերով. «Բարեշնորհն եւ բարենշանն Լեւոն ... յերկուց կայսերացն ընկալեալ թագ, նորոգեաց զխափանեալ աթոռ եւ արհունիս թագաւորութեան մերոյ»⁵⁷: Ավելի վերամբարձ է Միխայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությունը. «Եւ այսպէս վերստին նորոգեցաւ թագակալութիւն Արամեան զաւակին, եւ թագն Հայկազանց

⁵² Հմմտ. Runciman, A History, III, p. 91; Der Nersessian, Cilician Armenia, p. 648; Տիր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 400; Halfter, Das Papsttum, S. 237-238.

⁵³ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 109:

⁵⁴ Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 215: Հմմտ. նաեւ՝ Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 55:

⁵⁵ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 586:

⁵⁶ Անդ, էջ 440:

⁵⁷ Անդ, էջ 569-570:

եւ Սենեֆերիմանց եղաւ ի գլուխ արժանաժառանգ զարմին Լետնի ի Ոհե»⁵⁸: Ամենադիպուկը, սակայն, Մխիթար Այրիվանեցու գնահատականն է, որը Հայոց պետականության վերականգնումը Կիլիկիայում դիտում է որպէս Բյուզանդական կայսրության նկատմամբ իրականացված արդար դատաստան. «Աստ տիրեցին Կիլիկիոյ Ռուբինեանքն: Դատ արար Աստուած զրկելոցս, զի Հոռոմն եբարձ զմեր թագաւորութիւնն, իսկ Աստուած զերկիր նոցա ետ Հայոց, որք եւ այժմ թագաւորեն ի նմա»⁵⁹:

Ընդ որում, Հայոց թագավորության վերականգնումը ոչ միայն ոգեւորության եւ ազգային հպարտության աղբյուր էր հանդիսացել ժամանակակիցների, այդ թվում Մեծ Հայքի հեղինակների համար, այլեւ, կարծես թե, վերջիններիս մոտ հույսեր էր արթնացրել, որ մի օր Կիլիկիո թագաւորների իշխանությունը կարող է տարածվել նաեւ բուն Հայաստանի վրա: Այսպէս, Վարդան Արեւելցին, Միխայել Ասորու «Ժամանակագրության» իր կատարած թարգմանության մեջ, օրհնաբանելով Հեթում Ա-ին եւ Զապել թագուհուն, գրում է. «Եւ լիցի հայցուած ի մէնջ եւ աղաչանք ի սրբոց Տեառն բարերարի եւ ամենակալի եւ մարդասիրի՝ յերկարել եւ յաւելուլ ի ժամանակս նոցա, եւ ի պատիւ փառաց իշխանութեան նոցա ընդարձակեալ եւ տարածեալ ընդ բնաւ Հայաստանեայս»⁶⁰: Մոտավորապէս նույն միտքը նա կրկնում է նաեւ իր թարգմանությանը կցված ընդարձակ հիշատակարանում. «Արդ ... ի ՈՂԷ (= 1248) թուականութեանս Հայոց թարգմանեցաւ գիրքս այս յասորոց ի հայս, ի հայրապետութեան Հայոց տեառն Կոստանդեայ, եւ ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ քրիստոսապսակի եւ զգուշակենցաղ թագուհոյն իւրոյ Զապելի դատեր Լետնի արեայի, ըստ Աստուծոյ քաղաքավարելոց հնգից եղելոյ նոցա զաւակաց ծիրանածնեաց՝ երկուց ուստերաց եւ երից դատերաց, որոց անուանքն Լետն եւ Թորոս, անուամբ հաւուն իւրեանց, որոց հովանի լիցի ամենակալ Բագուկն հայրենի, ածելով ի գահ հայրենի արքայութեանն եզերօք Հայաստանեայցս»⁶¹:

⁵⁸ Միխայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1871*, էջ 504:

⁵⁹ Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն*, էջ 59:

⁶⁰ Միխայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1870*, էջ 511:

⁶¹ Անդ, էջ 611–612: Ի դեպ, Մ. Օրմանյանը կասկած չունի, որ առնվազն Լետն Բ (I)

Հայոց հինավուրց թագավորությունը վերականգնողի ու նորոգողի դերի համընդհանուր ճանաչումից հետո ընդամենը մի քայլ էր մնում մինչև Ռուբինյանների արքայական ծագման մասին լեգենդի հորինումը: Ինչպես հայտնի է, հայկական միջնադարյան բազմաթիվ աղբյուրների տվյալներով՝ Ռուբինյան իշխանները սերում էին Մեծ Հայքի վերջին թագավորական հարստության, այն է՝ Բագրատունյաց տոհմից: Տվյալ ավանդույթի առաջացմանն, անկասկած, նպաստել է այն հանգամանքը, որ Ռուբեն Ա-ը եղել է վերջին Բագրատունի թագավորի՝ Գագիկ Բ-ի գորականներից կամ իշխաններից մեկը⁶², իսկ նրա թոռը՝ Կիլիկիո Քորոս Ա իշխանը, հույներից լուծել է Գագիկի սպանության վրեժը⁶³: Սակայն վաղուց նկատված է, որ Ռուբինյանների ու Բագրատունիների ազգակցական կապի մասին վկայում են ոչ թե իրադարձությունների բուն ժամանակակիցները (ինչպես, օրինակ, Մատթեոս Ուհայեցին), այլ շատ ավելի ուշ շրջանի, այն է՝ XIII դարի երկրորդ կեսի կամ հետագա դարերի հայ ժամանակագիրներն ու գրիչները⁶⁴: Մինչև

եւ Աեոն Գ (II) թագավորներն, իսկապես, ձգտել են իրենց տիրապետութունը տարածել Հայաստանի վրա. Օրմանյան, Հայոց եկեղեցին, էջ 84; Օրմանյան, Ազգապատում, § 1088, 1162:

⁶² *Տե՛ս Մատթէոս Ուհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 321; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 91; Վենետիկ, էջ 137; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 111:*

⁶³ *Այդ դրվագի ընդարձակ նկարագրութունը տե՛ս Մատթէոս Ուհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 318–321: Իսկ Ռուբինյանների՝ Բագրատունյաց տոհմից սերված լինելու լեգենդի առաջացման գործում Քորոսի սխրագործության խաղացած դերի մասին տե՛ս Adontz, Études, p. 193. Հմմտ. նաեւ՝ Cowe, The Inauguration, p. 53; Atamian-Bournoutian, Cilician Armenia, p. 280.*

⁶⁴ *Ռուբինյանների եւ Բագրատունիների ազգակցական կապը հավաստում են հետեւյալ աղբյուրները. Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 54, 56; Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 192; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 116; Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 417; 1871, էջ 411; Աեոն Գ (II)-ի «Ներսիսի Լամբրոնացւոյ Սաղմոսաց մեկնութեան» 1285 թ. հիշատակարան (Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 569); Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 583; Հեթում Բ-ի 1295 թ. չափածո հիշատակարան (Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 745); Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 100; Հովհաննէս Երզնկացու «Յայտնութիւն նշխարաց Ս. Ներսիսի Պարթեի» (Ալիշան, Հայապատում, էջ 478); Անանուն Սերաստացի, Տարեգրու-*

վերջին ժամանակներս բացառություն էր դիտվում Սամուել Անեցու «ժամանակագրությունը», որի գրությունն ավարտվել է 1163 թվականին⁶⁵։ Սակայն, մեր կարծիքով, արդեն վերջնականապես ապացուցված պետք է համարել, որ Սամուելի տեղեկությունները Ռուբինյանների ծագման եւ ընդհանրապես Կիլիկիո անցուղարձերի մասին, հետագայի ընդմիջարկություններ են⁶⁶։ Հետեւաբար, առկա տվյալներով, Ռուբինյանների եւ Բագրատունիների ազգակցական կապի մասին տեղեկացնող հնագույն աղբյուրը Միխայել Ասուրու «ժամանակագրության» հայերեն թարգմանությունն է, որն, ինչպես հայտնի է, ասորի ֆահանա Իշոխի օգնությամբ, 1248 թվականին իրականացրել է նշանավոր վարդապետ Վարդան Արեւելցին⁶⁷։

Քննության առարկա խնդրի վերաբերյալ XII դարի աղբյուրների պահպանած հատկանշական լուծությունից պետք է ենթադրել, որ հիշյալ լեզենդն, ամենայն հավանականությամբ, հորինվել է Լեւոնի թագադրությունից հետո, ինչը միանգամայն բնական է, որովհետեւ ֆանի դեռ

թիւն, էջ 136; Յովհաննէս Գարդել, *Ժամանակագրութիւն*, էջ 9; Ներսէս Պալիանենց, *Ժամանակագրական հատվածներ*, էջ 179, 205; XIV դ. *անանուն ժամանակագրութիւն* (Հակոբյան, *Մանր ժամանակագրութիւններ*, հտ. 1, էջ 385); Անանուն, *Յիշատակք հանգուցելոց*, էջ 543, 544; XVII դ. *անանուն ժամանակագրութիւն* (Հակոբյան, *Մանր ժամանակագրութիւններ*, հտ. 1, էջ 256); Մարտիրոս Կրիմեցի, *Կարգ եւ թիւ*, էջ 203; Tisserant, *Codices Armeni*, p. 184; Անանուն, *Կարգ թագաւորաց*, էջ 256; Յակոբ Սսեցի, *Պատմութիւն*, էջ 60, 61, 142; Մինաս Ամդեցի, *Ազգաբանութիւն*, էջ 36; Աւետիք Տիգրանակերտցի, *Գաւազանագիրք*, էջ 564: Որոշ աղբյուրներ էլ Ռուբինյաններին վերագրում են միաժամանակ Բագրատունյաց եւ Արծրունյաց ծագում. տե՛ս Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն*, էջ 102, 109; Լեւոն Գ (II)-ի Սաղմոսարանի 1283 թ. հիշատակարան (Մաթեւոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 549); Հովհաննէս Երզնկացու «Քերականի մեկնութեան» հիշատակարան (Մաթեւոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 709); Դաւիթ Բաղիշեցի, *Մաղկաքաղ*, էջ 342, 343:

⁶⁵ Տե՛ս Մաթեւոսյան, *Սամուել Անեցի*, էջ 159, 162:

⁶⁶ Հմմտ. Микаелян, *История*, с. 81–82; Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները եւ հայերը*, հտ. 1, էջ 471–474:

⁶⁷ Տե՛ս Անթապլյան, *Վարդան Արեւելցի*, հտ. 1, էջ 325–348; Տեր-Պետրոսյան, *Ասորիների դերը*, էջ 35–36:

Ռուբինյանները սուկ իշխաններ էին՝ նրանց արհայական ծագում վերագրելու հասարակական պահանջ չպիտի զգացվեր: Լեւոնի թագադրման իրողությունն էր այն ազդակը, որը ժամանակակիցների հոգիներում պիտի արթնացներ Հայոց կորուսյալ թագավորության հիշատակները եւ նրանց մղեր կամուրջներ ուրոնելու՝ Բագրատունյաց եւ Ռուբինյանց տոհմերն իրար կապելու համար: Լեզենդը, վերջին հաշվով, կոչված էր սպասարկելու այն գաղափարախոսությանը, որ Կիլիկիայում հաստատված նոր թագավորական հարստությունը Հայաստանի նախորդ թագավորական հարստության իրավաժառանգն էր: Լեզենդի զարգացման գագաթնակետը պետք է համարել Վահրամ Բաբունու «Բան ի Յայտնութիւն Տեառն» նառը, որում Ռուբինյանները, Բագրատունիների հրեական ծագման խորենացիական ավանդույթի հիման վրա, համարվում են Դավիթ թագավորի շառավիղները⁶⁸: Իշխանության «լեգիտիմացման» այս հնարքն, ի դեպ, հատուկ էր համարյա բոլոր նորընծա թագավորական հարստություններին, ինչը հաստատվում է համաշխարհային եւ Հայոց պատմության բազմաթիվ փաստերով⁶⁹: Հեռուն չզնայու համար, նշենք, որ 1226 թվականին Կիլիկիո գահին տիրած Հեթումյան հարստությունը ոչ միայն համարվում էր Ռուբինյան հարստության իրավահաջորդը, այլեւ նույնացվում էր նրա հետ⁷⁰:

Ռուբինյան թագավորական հարստության «լեգիտիմությունն» ամրապնդելու այս գործառական նշանակությունից բացի, լեզենդն, ակնհայտորեն, նպաստել է նաեւ որոշակի հասարակական կարծիքի ձեւավորմանը: Այն ուղղված էր մի կողմից՝ ժամանակակիցների աչքում ազնվացնելու Ռուբինյանների տոհմը, մյուս կողմից՝ նրանց դիտելու որպես ոչ

⁶⁸ Վահրամ Բաբունի, *Բան ի Յայտնութիւն Տեառն 1875*, էջ 56. հմմտ. Cowe, *The Inauguration*, p. 53.

⁶⁹ Այս առումով հիշատակման արժանի է, մասնավորապես, Բյուզանդական կայսրության Հայկական կամ Մակեդոնական հարստության հիմնադիր Վասիլ I-ի (867–886 թթ.) Հայոց Արշակունիներից սերված լինելուն վերաբերող հայտնի առասպելը. այդ մասին մանրամասն տե՛ս Հովհաննիսյան, *Դրվագներ*, հտ. 1, էջ 37–38, 40, 50:

⁷⁰ Այդ մասին տե՛ս Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները եւ հայերը*, հտ. 1, էջ 456–457, իսկ ավելի մանրամասն՝ հտ. 2, էջ 257–261:

միայն Կիլիկիայի, այլև ամենայն Հայոց թագավորներ: Պետք է ասել, որ լեգենդն այս առումով լիովին հասավ իր նպատակին, ինչի մասնավոր, բայց խոստուն վկայությունն է Լեւոնի թագադրությունից հետո հայկական ձեռագրերի թվագրման բանաձևի կառուցվածքում տեղի ունեցած էական փոփոխությունը: Եթե մինչև 1198 թվականն ընդօրինակված ձեռագրերը թվագրվում էին հայկական թվականությամբ եւ Հայոց կաթողիկոսների ու օտար տիրակալների ժամանակով, ապա դրանից հետո, որպես կանոն, այդ բանաձևում օտար տիրակալների անունը փոխարինվում է Կիլիկիո թագավորների անունով: XII–XIV դարերում ընդօրինակված հայկական ձեռագրերում բանաձևն ստանում է մոտավորապես հետևյալ տեսքը. «Աւարտեցաւ աստուածախաւս մատեան ... ի թուականութեանս Հայոց ՈՂԳ, ի յառաջնորդութեանս երչանիկ հովվուպետին տեանն Կոստանդեա, եւ ի թագաւորութեանն Հայոց Հեթմոյ Բրիստոսապսակ թագաւորի»⁷¹, կամ «Գրեցաւ ի թվին Հայոց ՁԻԵ, ի թագաւորութեան Հայոց Լեւոնի, ի հայրապետութեանն Հայոց Յակովբայ»⁷²: Ընդ որում, ինչպես երեւում է բերված օրինակներից իսկ, թագավորի եւ կաթողիկոսի անունների հիշատակման կարգը փարցած չէ ձեռագրերի մի մասում նախ նշվում է թագավորի, իսկ մյուսներում կաթողիկոսի անունը: Հետաքրքիր է, որ բուն Կիլիկիայում ընդօրինակված ձեռագրերում նախապատվությունն ավելի հաճախ տրվում է թագավորին, ինչը կիլիկեցիների շեշտված պետական մտածողության արտահայտությունը պետք է համարել:

Ձեռագրերի թվագրման այս ավանդույթը, որն, ի դեպ, տարածված էր ոչ միայն Կիլիկիայում, այլև Մեծ Հայքի եւ հայկական գաղթօջախների գրչության կենտրոններում, շարունակվեց ընդհուպ մինչև Հայոց թագավորության անկումը, (1375 թ.)⁷³: Բավական է նշել, որ XIII–XIV դարերից մեզ հասած ձեռագրերի մեծագույն մասը թվագրված է վերոհիշյալ բանաձևով. Ա. Մաթեոսյանի եւ Լ. Խաչիկյանի կազմած հիշատակարանների ժողովածուներում հաշվվում է շուրջ 500 այդպիսի հի-

⁷¹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 234:

⁷² Անդ, էջ 465:

⁷³ Հմմտ. Kouymjian, Armenia, p. 2.

շատակաբան: Դրանցում Կիլիկիո գահակալները սովորաբար հուշորջվում են «թագաւոր Հայոց» տիտղոսով, իսկ ավելի հազվադեպ, ինչպես արդեն տեսանք, «թագաւոր ամենայն Հայոց» եւ «թագաւոր Հայոց Մեծաց» տիտղոսներով: Մի ֆանի տասնյակ հիշատակարաններում է միայն, որ հատուկ շեշտվում է նրանց՝ Կիլիկիայում գահակալած լինելու հանգամանքը⁷⁴: Դա նշանակում է, որ ժամանակակիցների մեծամասնության աչքում Լեւոնը եւ իր հաջորդներն իսկապես դիտվում էին ոչ թե սուկ Կիլիկիայի, այլ համայն հայության թագավորներ⁷⁵:

Նշված տիտղոսներից բացի, հիշատակագիրները Կիլիկիո թագավորներին օժտում են նաեւ բազմապիսի պատվանուններով, որոնցից ամենատարածվածը «բարեպաշտ»-ն է, ինչը միանգամայն բնական է, ֆանի որ միջնադարի հասկացողությամբ բարեպաշտությունը թագավորի գլխավոր առաքինությունն էր⁷⁶: Այնուհետեւ, ըստ հանախականության,

⁷⁴ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 71, 80, 220, 233, 287, 331, 396, 410, 551, 557, 682, 696, 704, 726, 801, 851; Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 41, 81, 98, 105, 182, 199, 202, 234, 241, 296, 321; Մաթեոսյան-Ղազարոսյան, ԺԴ դ. հիշատակարաններ (անտիպ), 1306 թ., 1316 թ., 1324 թ., 1331 թ., 1338 թ.:

⁷⁵ Լեւոնի վայելած համահայկական հեղինակության ամենացայտուն արտահայտությունը, թերեւս, նրա եւ Զաքարե ամիրսպասալարի թղթակցության դրվագն է, որը հանգամանորեն ներկայացված է Կիրակոս Փանձակեցու «Պատմության» մեջ (Կիրակոս Փանձակեցի, Պատմութիւն, էջ 166–178): 1204–1206 թթ. ժամանակահատվածում Զաքարեն, բանակին ուղեկցող շարժական եկեղեցիների հարցի շուրջ տարածայնություններ ունենալով Արեւելյան Հայաստանի հոգեւորականների հետ, նամակով դիմում է Լեւոնին ու Հայոց կաթողիկոսին, խնդրելով նրանց հեղինակավոր կարծիքը: Ստանալով իրեն բավարարող պատասխանը, ամիրսպասալարը փորձում է պարտադրել իր կամքը, ինչից դժգոհ եկեղեցականներին Մխիթար Փոշը հորդորում է հետեւյալ խոսքերով. «Հրաման ունի ի կաթողիկոսէն եւ ի թագաւորէն Լեւոնէ առնել զայս. եւ մեք թէ կամիմք եւ թէ ոչ, սա ոչ դադարէ զայս առնելոյ» (Անդ, էջ 177): Այս ուշադրով փաստից, ըստ այդմ, պետք է եզրակացնել, որ Լեւոնի հրամանն օրենքի ուժ է ունեցել ոչ միայն Կիլիկիայում, այլեւ բուն Հայաստանում: Հմմտ. Բողոքյան, Կիլիկիա, էջ 164, 167:

⁷⁶ «Նախ իբրեւ զհիմն ինչ պիտանի է թագաւորի բարեպաշտութիւն, որ առաւել թագապաճոյճ կազմէ զնա քան զականս պատուականս, շքեղագոյն քան զտէրութիւն բազում աշխարհաց...»: Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն, էջ 36:

գալիս են՝ «*բրիստոսասէր*», «*բրիստոսապսակ*», «*աստուածասէր*», «*աստուածապսակ*», «*մեծն*», «*յաղթող*», «*սուրբ*» եւ «*աւծեայ*» պատվանունները: Իսկ հատուկեմտ օգտագործվող պատվանուններից են՝ «*ամենաբարի*», «*առաքինի*», «*աստուածագարդ*», «*աստուածակարգ*», «*աստուածահանոյ*», «*աստուածունակ*», «*աստուածապաշտ*», «*արժանապսակ*», «*արի*», «*բարեհամբաւ*», «*բարեմիտ*», «*բարեյաղթ*», «*բարենշան*», «*բարեշնորհ*», «*բարերար*», «*բարի*», «*իմաստախոհ*», «*իմաստասէր*», «*իմաստուն*», «*խաղաղարար*», «*կորովամիտ*», «*հաննաբաշատ*», «*հեզ*», «*հեզահոգի*», «*հեզանազ*», «*հզար*», «*նշարտասէր*», «*մեծապսակ*», «*մտախոհ*», «*ուղղափառ*», «*պայծառահաւատ*», «*պսակատր*», «*վսեմախոհ*», «*փաջ*» եւ «*բրիստոսագար*»: Պետք է նկատի ունենալ, որ թվարկված պատվանուններից ոչ մեկն էլ անհատականացված չէ, հետեւաբար կարող է շնորհվել, եւ իրոք շնորհվում է, ցանկացած թագավորի⁷⁷: Քերես անհատականացման որոշ երանգ կարելի է նկատել միայն՝ Լեւոն Բ (I)-ին հանախակի հատկացվող «*մեծն*» եւ «*յաղթող*» պատվանունների մեջ⁷⁸, թեւէ դրանցով հիշատակագիրները երբեմն օժտում են նաեւ այլ թագավորների: Հայոց թագավորներին զանազան տիտղոսներով եւ պատվանուններով մեծարելու հարցում հիշատակագիրները ժամանակ առ ժամանակ ընկնում են նաեւ չափազանցությունների գիրկը: Այսպես, օրինակ, 1270 թվականին ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարան Հեթում Ա-ին կոչում է «*մեծ թագատուն Հեթում ամենայն բրիստոնէից*»⁷⁹: Մի այլ հիշատակարանում, գրված 1287 թվականին, նրա որդին՝ Լեւոն Գ (II) թագավորը, հորջորջվում է «*արքայից արքայ Հայոց Մեծաց*» տիտղոսով⁸⁰: Իսկ 1296 թվականով թվագրված ձեռագրերից մեկի հիշատակագիրը Հեթում Բ-ի մասին պարզապես գրում է. «*Հայոց սուրբն Հեթում,*

⁷⁷ Ավելին, դրանց մի մասն ակնհայտորեն պատճենված է Բյուզանդական կայսրերի հունարեն պատվանուններից:

⁷⁸ «*Յաղթող*» պատվանունը Լեւոն Բ (I)-ի առնչությամբ երբեմն գործածվում է նաեւ պատմագրական աղբյուրներում, ինչպես, «*Յաղթողն ամենայնի Լեւոն*» (*Գիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 188*), կամ «*Յաղթագեաց արքայն Հայոց Լեւոն*» (*Անդ, էջ 187*):

⁷⁹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 384:

⁸⁰ Անդ, էջ 608:

որում ոչ ոք համեմատ ի թագաւորս, բայց Քրիստոս միայն»⁸¹:

Այսպիսով, կարող ենք վստահաբար արձանագրել, որ Կիլիկյան թագավորության հիմնադիր Լեոն Բ(1)-ի արեայական հրովարտակների, պաշտոնական նամակների ու դրամների միջոցով շրջանառության մեջ դրված «թագաւոր Հայոց» եւ «թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսները, որոնք սկզբում սոսկ ինքնանվանումներ էին, պարարտ հող գտան Մեծ Հայքում ու հայկական սփյուռքում բնակվող իր հայրենակիցների միջավայրում համահունչ լինելով սեփական պետականություն ունենալու նրանց վաղեմի բաղձանքին: Երախտապարտ ժամանակակիցները նրան ճանաչեցին ոչ միայն որպես Հայոց կործանված թագավորության վերականգնողի ու նորոգողի, այլեւ մեծարեցին «Յաղթող», «Մեծ», «Քարեյաղթ» եւ բազմաթիվ այլ պատվանուններով: Նրանց երախտագիտության պսակը հանդիսացավ Ռուբինյանների արեայական ծագման վերաբերյալ հորինված եւ համընդհանուր ճանաչման արժանացած լեզենդը, ինչը ժամանակագիրներից մեկին կարող էր, օրինակ, հիմք տալ հանգիստ կերպով արձանագրելու՝ «Ի ԶՃԽԶ թվին թագաւորեաց Լեոն Բագրատունեաց ի Կիլիկիա»⁸²:

Հարկ է նշել, որ Լեոնը լիովին փոխհատուցեց իր հայրենակիցների անհուն երախտագիտությունը, ընդ որում ոչ միայն իր երկարատե գահակալության ընթացքում կատարած մեծագործություններով, այլեւ պետականության իր հաստատած մնայուն ավանդույթներով, որոնք պիտի դառնային Կիլիկիո Հայոց թագավորության կենսունակության հիմնական գործոններից մեկը: Հայոց պետության միջազգային իրավական կարգավիճակի սահմանումը, երկրի շահերից բխող անկախ եւ ճկուն դիվանագիտության որդեգրումը, Կիլիկիայի տարածքների ընդարձակումն ու պաշտպանունակության ամրապնդումը, ինչպես նաեւ պետական համակարգի արդիականացմանը միտված բարեփոխումների իրականացումը՝ Լեոնի այն նվաճումներն էին, որոնց ազդեցությունը շարունակաբար զգացվեց թագավորության ողջ հետագա գոյության ընթացքում: Սակայն

⁸¹ Անդ, էջ 772:

⁸² XIV դ. անանուն ժամանակագրութիւն (Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 1, էջ 385):

պետական շինարարության այս կարեւորագույն խնդիրների կողմին կար նաեւ մի ուրիշ, թերեւս ոչ պակաս կարեւոր հարց, որը, հանգամանքների բերմամբ, պիտի դառնար նրա մշտական հոգացողության առարկան: Խոսքը վերաբերում է Հայոց թագավորության գահաժառանգության խնդրին, որն զբաղեցրեց Լեւոնի միտքը նրա կյանքի վերջին ֆանհինգ տարիների ընթացքում:

Դժբախտաբար, հայտնվելով 1194 թվականի Սսի պայմանագրին հավատարիմ մնալու եւ երկրի ապագան լավագույնս տնօրինելու երկընտրանքի առջեւ՝ նա այդպէս էլ չկարողացավ պատշաճ լուծում տալ այդ խնդրին եւ վերջիվերջո թագավորության ղեկը հանձնեց իր մանկահասակ դստերը, ինչի պատճառով Լեւոնի մահից հետո Կիլիկիան տաս տարի շարունակ ենթարկվեց լուրջ ներքին ցնցումների: Այդ ժամանակ Կիլիկիայում տիրած մթնոլորտի մասին կարող է պատկերացում տալ թեկուզ միայն 1221 թվականին Տարսոնում գրված հետեւյալ հիշատակարանը. «Յետ մահուան աստուածասէր թագաւորին մերոյ Լեւոնի՝ վշտատէս ազգս Հայոց վշտանայր, եւ շարն տեղի տայր: Որոշեցան ոմանք ի սուրբ ուխտէս եւ ի միմեանց միաբանութենէ, եւ որպէս է ազգիս սովորութիւն՝ ամենայն ոք գինքն յառաջ կոչէր, եւ շհաւանեալ միմեանց՝ լինէր արեան ճապախիս ի բագում տեղիս, եւ գաւառք եւ գեաւղք քանդէին, եւ եկեղեցիք աւերէին»⁸³: Սակայն, ի պատիվ իրեն, Լեւոնն այնպիսի ամուր հիմքերի վրա էր դրել իր ստեղծած թագավորությունը, որ երկիրը ոչ միայն կարողացավ դիմանալ այդ ծանր փորձությանը, այլեւ ի վերջո վերագտավ իր նախկին կայունությունն ու հզորությունը: Այս փոթորկալից շրջանի իրադարձություններին են նվիրված, ահա, սույն գրքի հաջորդ մի քանի ենթագլուխները:

⁸³ Մաթեւոսյան, ժԳ դ. հիշատակարաններ, էջ 125:

**ՌԱՅՄՈՆԴ-ՌՈՒԲԵՆ՝ ԳԱՀԱԿԻՑ-ԹԱԳԱՎՈՐ ՀԱՅՈՑ
(1211–1216 թթ.) եւ ԱՆՏԻՈՔԻ ՊՐԻՆՑ (1216–1219 թթ.)**

Կիլիկիո չայոց պետության գահաժառանգության իրավունքի ուսումնասիրման տեսակետից, թերեւս, ոչ մի այլ իրողություն այնքան նյութ չի մատակարարում, որքան Լեոն Բ (I)-ի անմիջական հաջորդների (Զապել, Փիլիպոս, Հեթում Ա) եւ չայոց գահի մյուս հավակնորդների (Ռայմոնդ-Ռուբեն, Հովհաննես Բրիենացի, Անդրաշ) հետ կապված անցուղարձեւը:

Ինչպես տեսանք, Կիլիկիո չայոց իշխանության եւ Անտիոքի իշխանապետության միջեւ 1194 թվականին Սսում կնքված պայմանագրի համաձայն՝ Լեոնի զարմուհին՝ Ռուբեն Գ իշխանի դուստր Ալիսը, պետք է ամուսնանար Անտիոքի պրինց Բոհեմունդ III-ի ավագ որդու՝ Ռայմոնդի հետ, եւ այդ ամուսնությունից ծնված արու զավակը պետք է հռչակվեր միաժամանակ Կիլիկիայի եւ Անտիոքի գահաժառանգ: Ռայմոնդի եւ Ալիսի ամուսնությունը տեղի ունեցավ 1195 թվականին եւ տեւեց ընդամենը երկու տարի: 1197 թվականին Ռայմոնդը հանկարծամահ եղավ, իսկ որոշ ժամանակ անց ծնվեց նրա որդին, որին, ի պատիվ իր մորական պապի, կոչեցին Ռուբեն անունով¹: Այս ամենի մասին ման-

¹ Քանի որ աղբյուրները ճշգրիտ թվականներ չեն նշում, հետազոտողները Ռայմոնդի ամուսնությունն ու մահը թվագրում են զանազան տարիներով: Ըստ Ղ. Ալիշանի՝ նրա ամուսնությունը տեղի է ունեցել 1194 թվականին (Ալիշան, Սիսուան, էջ 456), իսկ հետազոտողների մեծամասնության կարծիքով՝ 1195-ին (Grousset, Histoire, III, p. 132, 246; Cahen, La Syrie du Nord, p. 586; Rüdtt-Collenberg, The Rupenides, I (Rup); Hardwicke, The Crusader States, p. 527; Riley-Smith, The Templars,

րամասնորեն, թեև առանց թվականները նշտելու, տեղեկացնում է Սմբատ Սպարապետը. «Եւ հաստատեցին ուխտ սիրոյ խնամութեան ընդ միմեանս, եւ ետ Լեւոն գրուատը եղբօրն իւրոյ Ռովբինի գԱլիծն... աւագ որդոյն բրնծին Ընեմնդին՝ այս պայմանաւ, որ թէ լինէր ի նմանէ որդի արու՝ լինէր ժառանգ Լեւոնի, եւ զկնի մահուան հօրն իւրոյ Ընեմնդին լինէր տէր Անտիոֆու, եւ հաստատեցին զայս գրով եւ երգմամբ: Եւ էր որդի բրնծին առ Լեւոն, եւ մտանէր եւ ելանէր ընդ նմա, եւ կացեալ ժամանակս ինչ մեռաւ, եւ կինն նորա մնաց յղի ի նմանէ, եւ ծնաւ որդի արու վայելուչ եւ գեղեցիկ տեսեամբ, քանզի ոչ զոյր որդի Լեւոնի՝ լինել ժառանգ հայրենեաց իւրեանց, եւ տայր սնուցանել զնա մեծաւ զգուշութեամբ. եւ մկրտեաց զնա եւ կոչեաց զանուն նորա Ռովբէն»²:

Պետք է ընդգծել, որ Ալիսի եւ Ռայմոնդի որդուն Կիլիկիայի եւ Անտիոֆի գահաժառանգ հռչակելու որոշումը ոչ թե կախված էր Լեւոն Բ (I)-ի եւ Բոհեմունդ III-ի կամֆից, այլ թելադրված էր գահաժառանգության ֆեոդալական իրավունքի պահանջներով: Ալիսն, ինչպես տեսանք, Ռուբեն Գ-ի ավագ դստեր իրավունքով՝ Հայոց գահի ժառանգորդն էր, իսկ Ռայմոնդը Բոհեմունդ III-ի անդրանիկ որդու հանգամանքով՝ Անտիոֆի գահի իրավահաջորդը: Հետեաբար, նրանց որդին ֆեոդալական օրենքներով, եւ ոչ թե ինչ-որ մեկի ցանկությամբ էր, որ պետք է ժառանգեր այդ զույգ գահերը: Հիշեցնենք նաեւ, որ Հայոց իշխանության Գերագույն ատյանի որոշմամբ Լեւոնը կարգվել էր Ալիսի խնամակալ՝ պաշտոն, որը նա զբաղեցրեց մինչեւ վերջինիս որդու՝ Ռուբենի ծնունդը (1197 թ.): Դրանից հետո նա Ալիսի խնամակալից ինքնաբերաբար վերածվեց նորածնի խնամակալի, ինչը, պատմագրական աղբյուրներից բացի, հաստատվում է նաեւ պաշտոնական վավերագրերի տվյալներով: Այսպես, Ռուբենը, Անտիոֆի պրինցի անունից հրապարակած իր հրո-

թ. 99): *Ռայմոնդի մահվան տարվա համար արդի պատմագիտության մեջ նշվում են չորս տարբեր թվականներ՝ 1196/1197 (Ալիշան, Սիսուան, էջ 456), 1197 թ. (Runciman, A History, III, p. 99; Riley-Smith, The Templars, p. 99; Mutafian, La Cilicie, I, p. 413), 1198 թ. (Ալիշան, Սիսուան, էջ 490; Morgan, Histoire, p. 191; Rüdtt-Collenberg, The Rupenides, I (Rup) եւ 1200 թ. (Tournebize, Histoire, p. 187):*

² *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 206–207: Մոտավորապես նույնը տես նաեւ՝ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 108:*

վարտակներից մեկում (17 մարտի 1207 թ.), Լեոնին կոչում է «իմ մորեղբայր եւ խնամակալ» (avunculus et balius meus)³, իսկ Լեոնը, 1214 թ. ապրիլի 23-ին արձակած իր երկու արհայական հրովարտակներում, Ռուբենին անվանում է «իմ զարմիկ եւ ժառանգորդ» (nepos et heres meus)⁴:

Նախան Ալիսի եւ Ռայմոնդի որդու գահաժառանգության հետ կապված բուն խնդիրների ֆննությանն անցնելը, հարկ ենք համարում կանգ առնել նաեւ նրա անվան վրա, որը մեր կարծիքով, որոշ իմաստով առնչվում է մեր հետազոտության առարկային: Ինչպես տեսանք, Սմբատ Սպարապետի վկայությամբ, մկրտելով իր զարմիկին, Լեոնը նրան կոչում է Ռուբեն անունով: Հակառակ դրան՝ Վ. Լանգլուան եւ Ղ. Ալիշանը կարծում են, որ մկրտության ժամանակ նորածինը միանգամից ստացել է երկու անուն՝ Ռայմոնդ եւ Ռուբեն⁵: Սակայն, ըստ երեւույթին, այս կարծիքը զուրկ է պատմագրական հիմքից, քանի որ հայկական, լատինական եւ ասորական աղբյուրները նրան ճանաչում են բացառապես Ռուբեն անունով (Ռուբէն, Ռովբէն, Ռոբին, Ըռաւբէն, Rubin, Rupin, Ruppinus)⁶: Այդ անունով է նա կոչված նաեւ Լեոն Բ (I)-ի պաշտոնական հրովարտակներում (Rupinus)⁷: Ավելին, Ռուբենն ինքն էլ,

³ Langlois, Cartulaire, p. 130. Պետք է նկատի ունենալ, որ լատիներեն avunculus (մորեղբայր) բառը միջնադարում ունեցել է նաեւ ավելի ընդհանուր՝ «ազգականի» իմաստ:

⁴ Անդ, էջ 122, 125: Որոշ հետազոտողների կարծիքով՝ Լեոնը նույնիսկ որդեգրել էր Ռայմոնդ-Ռուբենին. Պալասանյան, Պատմութիւն, էջ 356; Օրմանյան, Ազգապատում, § 1088; Cowe, The Inauguration, p. 52.

⁵ Տե՛ս Langlois, Cartulaire, p. 129; Ալիշան, Սիսուան, էջ 456:

⁶ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 76; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 207, 216, 217, 219, 220: Փարիզ, էջ 108; Վահրամ Բաբունի, Ոսանաւոր պատմութիւն, էջ 218; Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 523; 1871, էջ 515; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 102; Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 63, 64; Հեթում Թազաւոր, Պատմութիւն, էջ 79; Willbrandt, Peregrinatio (Ըստ՝ Ալիշան, Սիսուան, էջ 476); Guillaume de Tyr, Continuation, p. 169; Gestes des Chiprois, p. 665; Lignages d'Outremer, p. 66, 90, 91; Amadi, Chronique, p. 89; Barhebraeus, Chronicon, p. 430, 431, 442, 449 (է. Բաջը ասորերեն բնագրի Rupin անունը տառադարձել է Rufin ձեւով, որ սխալ է. տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 370, 371, 380).

⁷ Langlois, Cartulaire, p. 125, 131.

հետագայում հրապարակած իր հրովարտակներում ներկայանում է Rupinus կամ Ropinus անունով⁸: Միայն 1210 թ. սեպտեմբեր ամսով թվագրված հրովարտակում է, որ նա օգտագործում է Ռայմոնդ-Ռուբեն (Raymundus Rupinus) կրկնանունը⁹: Նշված փաստերը, մեր կարծիքով, հիմք են տալիս եզրակացնելու, որ Ռուբենը եղել է մանկան մկրտության անունը, որը նրան տրվել է նշանավորելու համար իր պապի ուղիղ շտապվիղն ու այդու՝ Հայոց գահի ժառանգորդը լինելու նրա հանգամանքը: Իսկ Ռայմոնդ-Ռուբեն անունը նա ստանձնել է ավելի ուշ՝ հավանաբար Անտիոքի իշխանապետության իր ապագա հպատակներին հանդյանալու եւ Անտիոքի գահի օրինական ժառանգորդ Ռայմոնդի որդին հանդիսանալու իրողությունն ընդգծելու նպատակով¹⁰: Նույն այդ նկատառումով նա իր հետագա հրովարտակներում ներկայանում է ավելի պաշտոնական հետեւյալ տիտղոսով. «Ես՝ Ռուբենս, շնորհիվ Աստծու պրինցն Անտիոքի, որդին Ռայմոնդ պրինցի» (ego, Rupinus, Dei gratia princeps Antiochie, Raimundi principis filius)¹¹: Ինչեւէ, հակառակ հետսամուտ լինելուն, Ռայմոնդ-Ռուբեն անունը, հարմարության նկատառումով, համատարած ընդունելություն է գտել արդի պատմագիտության մեջ, ուստի մենք էլ, շփոթությունների տեղիք չտալու համար, մեր հետագա շարադրանքում հետեւում ենք այդ ավանդույթին:

Իսկ այժմ, վերադառնալով մեր բուն նյութին, այն է՝ Ռայմոնդ-Ռուբենի գահաժառանգությանը վերաբերող խնդիրների ֆննությանը, հետեւենք նրա հոր մահվանը հաջորդած իրադարձությունների ընթացքին¹²: 1198 թ. սկզբում, Լեոնին թագադրելուց հետո, Մայնցի արքեպիս-

⁸ Անդ, էջ 130, 134, 135, 136, 138:

⁹ Անդ, էջ 132:

¹⁰ Այդ գաղափարն, ըստ երեւույթին, նրան հուշել է Լեոնը, որը նույն տարում գրված իր մի նամակում (1210 թ. ապրիլ) եւ արքայական հրովարտակում (1210 թ. օգոստոս) երկու անգամ գործածել է Ռայմոնդ-Ռուբեն (Raimondus Rupinus, Reymundus Rupinus) կրկնանունը. տե՛ս Langlois, Cartulaire, p. 113, 115.

¹¹ Անդ, էջ 135, 136, 138:

¹² Ձեռքի տակ անհրաժեշտ աղբյուրներ շունենալու պատճառով այս պարբերությունը շարադրել ենք Կլոդ Կանեի «Հյուսիսային Ասորիքը...» գրքի տվյալների հիման վրա. տե՛ս Cahen, La Syrie du Nord, p. 591-594, 599. Հմմտ. նաեւ՝ Ալիշան,

կոպոս Կոնրադը հորդորեց Բոհեմունդ III-ին՝ Անտիոքի իշխանապետության բարոնների լիազուար ժողով հրավիրել եւ վերահաստատել Ռայմոնդ-Ռուբենի գահաժառանգության իրավունքը¹³։ Մերունի պրինցը, հավատարիմ մնալով 1194 թ. Սսի պայմանագրով ստանձնած իր պարտավորությանը, ենթարկվեց արհեստական կամփին եւ ժողովականներին երդվեցրեց ճանաչել իր թոռան այդ իրավունքը։ Այնժամ Բոհեմունդ III-ի մյուս որդին՝ Բոհեմունդ կրտսերը, որը 1189 թվականից ի վեր տիրում էր Տրիպոլիի կոմսությանը, ապահովելով Տանարական եւ Հիվանդախնամ ասպետների, ինչպես նաեւ Հալեպի սուլթան Մելիֆ ալ-Ջահիրի աջակցությունը, փութաց Անտիոք, գահընկեց արեց իր հորը եւ ֆադաֆի ինֆնավար մարմնի՝ կոմունայի կողմից հռչակվեց Անտիոքի պրինց։ Կ. Կաննի կարծիքով՝ իր այդ ֆայլով Բոհեմունդ կրտսերը ֆեոդալական ժառանգական իրավունքին հակադրեց ընտրության իրավունքը¹⁴, մանավանդ որ Ռայմոնդ-Ռուբենի՝ Անտիոքի իշխանապետության գահին տիրելու իրավունքը նույնպես բացարձակ չէր, քանի որ նրա հայրն իր կենդանության օրոք պրինց չէր կարգվել¹⁵։ Ինչեւիցե, ավագ Բոհեմունդը, ստեղծված վիճակից այլ ելք չգտնելով, օգնության խնդրանքով դիմեց Լեոն թագավորին՝ իր գերակային ու երբեմնի ախոյանին, որը, սակայն, տվյալ պահին զբաղված լինելով Կիլիկիայի դեմ Մելիֆ ալ-Ջահիրի ձեռնարկած հարձակումը վանելու գործով, չկարողացավ անմիջապես արձագանքել այդ խնդրանքին։ Բայց շուտով, չեզոքացնելով այդ վտանգը եւ սիրաշահելով Հիվանդախնամներին, Լեոնը, ֆրանկո-հայկական մի գորախմբի գլուխ անցած, արշավեց դեպի Անտիոք, վճռեց բռնազավթյին, եւ Բոհեմունդ III-ին վերաբազմեցրեց իր սասանված գահին։ Բացի ուժի ցուցադրումից, Հայոց թագավորը նաեւ

Սիսուան, էջ 456, 490-492; Riley-Smith, The Templars, p. 99; Mutaflan, Recherches, p. 72-73; Hardwicke, The Crusader States, p. 527-528. Ի դեպ, վերջինս նույնպես այս դրվագում հիմնականում կրկնում է Կ. Կաննին:

¹³ *Ըստ Ղ. Ալիշանի՝ Լեոնը հեռատեսորեն նույն արքեպիսկոպոսի ձեռքով, այսինքն՝ լատինական ծեսով էր կատարել տվել նաեւ Ռայմոնդ-Ռուբենի մկրտությունը. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 456: Հմմտ. նաեւ՝ Cowe, The Inauguration, p. 52.*

¹⁴ *Տե՛ս Cahen, La Syrie du Nord, p. 593. Հմմտ. նաեւ՝ Hardwicke, The Crusader States, p. 528.*

¹⁵ *Տե՛ս Cahen, La Syrie du Nord, p. 591.*

եռանդուն դիվանագիտական ֆայլեր ձեռնարկեց՝ Հոռմի ատյանի առջև իր զարմիկի դատը պաշտպանելու ուղղությամբ, ինչի մասին վկայում են նրա եւ Իննոկենտիոս III պապի միջեւ այդ ժամանակ փոխանակված նամակները¹⁶։ Պապը բավարարվեց Լեոնին ուղղված խաղաղասիրական խրատներով ու երկու նվիրակ նշանակեց՝ հարցը տեղում ֆննելու եւ համապատասխան վճիռ կայացնելու լիազորությամբ։

Անտիոֆի գահաժառանգության խնդիրն ամենայն սրությամբ վերաբարձրվեց 1201 թվականին, երբ, շուրջ ֆառասնամյա գահակալումից հետո, մահացավ Բոհեմունդ III պրինցը։ Արդի պատմագիտության մեջ այդ թվականը համարվում է Անտիոֆի իշխանապետության եւ Կիլիկիո Հայոց թագավորության միջեւ ծագած ռազմական հակամարտության սկիզբը, որը հայտնի է «Անտիոֆի գահաժառանգության պատերազմ» (Guerre de succession d'Antioche) անունով։ Շուրջ տասնհինգ տարի տեւած այդ պատերազմի ընթացքն ու գլխավոր հանգրվանները հանգամանորեն ուսումնասիրված են Ղ. Ալիշանի, Ռ. Գրուսեի, Կ. Կաենի, Մ. Հարդվիկի եւ Զ. Ռայլի-Սմիթի կողմից¹⁷, ուստի ավելորդ համարելով նրանց ձեռքբերած արդյունքների կրկնությունը, մենք ստորեւ կսահմանափակվենք բացառապես Ռայմոնդ-Ռուբենի ժառանգական իրավունքի իրացմանը վերաբերող հարցերի շրջանակով։ Նշենք միայն, որ պատերազմի բոլոր հանգրվաններում նախահարձակը համարյա միշտ Հայոց թագավորն էր։

Եւ այսպես, 1201 թվականին, ստանալով Բոհեմունդ III-ի մահվան լուրը, Լեոնը, Ռայմոնդ-Ռուբենին վերցրած, փութաց Անտիոֆ նրան բազմեցնելու իշխանապետության թափուր մնացած գահին։ Սակայն մինչեւ նա տեղ կհասներ, անտիոֆացիները Տրիպոլիից հրավիրեցին կրտսեր Բոհեմունդին եւ իշխանապետության ղեկը հանձնեցին նրա ձեռքը։ «Երբ (անտիոֆացիները) տեսան, - գրում է Վիլհելմ Տյուրացու

¹⁶ *Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 491-492; Cahen, La Syrie du Nord, p. 599; Mutafian, Recherches, p. 72-73; Halfter, Das Papsttum, S. 233-234.*

¹⁷ *Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 490-503; Grousset, Histoire, III, p. 246-270 (հայերեն թարգմանությունը՝ Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 291-311); Cahen, La Syrie du Nord, p. 596-623; Hardwicke, The Crusader States, p. 532-540; Riley-Smith, The Templars, p. 99-107.*

պատմության ֆրանսերեն թարգմանության շարունակողը, — որ Բոհեմունդ պրինցը մեռնում է, նրանք անմիջապես կանչեցին նրա որդի Բոհեմունդին՝ Տրիպոլիի կոմսին, որը Անտիոք հասավ այն օրը, երբ նրա հայրը հողին հանձնվեց: Նա հնչեցրեց կոմունայի զանգերը, հավաքեց բոլոր ասպետներին ու պատվական մարդկանց եւ խնդրեց ու պահանջեց, որ իրեն տեղ ճանաչեն»¹⁸: Լեոնն, այսպիսով, հայտնվելով կատարված փաստի առջև, թեև փորձեց զենքի ուժով տիրել Բաղաֆին, բայց արդյունքի չհասնելով, ձեռնունայն վերադարձավ իր երկիրը: Ինչպես գրում է Ռ. Գրուսեն, «Անտիոքի ֆրանկների դիրքորոշումն ակնհայտաբար հակասում էր ժառանգական իրավունքի նորմերին, բայց այն թելադրված էր ազգային եւ մշակութային նկատառումներով: Նրանք, ըստ երեւոյթին, վախենում էին, որ կիսահայ մանուկի գահակալությունը, մանավանդ Լեոն Բ-ի հովանավորության ներքո, կարող էր հանգեցնել երկրի ապալատիանականացմանը եւ Հայոց թագավորության կողմից Անտիոքի բռնագավթմանը»¹⁹: Երկրորդելով նույն միտքը, Կ. Կաները նշում է, որ ֆրանկների համար «այդ մանկան գահակալումն այլ բան, քան հայկական պրոտեկտորատ, չէր կարող կանխատեսել»²⁰:

Սա չի նշանակում, սակայն, որ բոլոր անտիոքացիները կողմ էին Բոհեմունդ IV-ի գահակալությանը: Աղբյուրների վկայությամբ՝ Անտիոքի ազնվականության բարձր դասի ներկայացուցիչների մի զգալի մասն, ընդհակառակը, պաշտպանում էր Ռայմունդ-Ռուբենի թեկնածությունը: Դրանց թվում էին՝ իշխանապետության սենեկապետ Օլիվիեն, գունդատապալ Ռոջեր Մոնտացին, ինչպես նաեւ երեւելի բարոններ Բոհեմունդ Լեոն (կամ Բայէն Պուդլերը), Թոմաս Մալբերոնը եւ Գիյոմ Իլացին, որոնք, մեծ թվով զինվորականների հետ, խույս տալով Բոհեմունդ IV-ի հալածանքներից, 1201 թվականից հետո ապաստան էին գտել Կիլիկիայում եւ ծառայության մտել Լեոն թագավորի մոտ. «Եւ յետ Պեմունտ բռնձին մահուանն՝ բազում զինուորք եկին ի ծառայութիւն թագաւորին Լեոնի, եւ իշխանն ընդ նոսա՝ որոց անուաննն են այսոքիկ.

¹⁸ *St' u Step-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 291–292:*

¹⁹ Grousset, Histoire, III, p. 246–247.

²⁰ Cahen, La Syrie du Nord, p. 591. Հմմտ. *Isaie`Halfter, Das Papsttum, S. 232.*

Ուլիվեր ջամբոլայն, Ռօնել Տմունթն, Ջուարտն, Թումաս Մալլըպրունն, Բայլն Պուլլերն, Կիլամ Տիլն. եւ այսպիսի խոհեմ իշխանօք եւ փաշամարտիկ զինուորօք փաշապէս սղէր զհոյս թշնամեացն»²¹: Թվարկված անձնավորություններին աստիճանաբար միացել էին նաեւ բազմաթիվ այլ անտիոքացի բարոններ, ինչի հետեւանով Կիլիկիայում, փաստորեն, ձեւավորվել էր Անտիոքի իշխանապետության մի յուրատեսակ վտարանդի կառավարություն, որի ամբողջական կազմը ներկայացված է Ռայմոնդ-Ռուբենի 1215 թ. մարտի 31-ի հրովարտակում. «Factum est autem et confirmatum hoc privilegium, in presentia... fidelium baronum meorum: domini Othonis de Tiberiade; domini Aharie, senescalci Antiochie; domini Willelmi de Insula; domini Gauteri de Laitor; domini Eschivardi; domini Guillelmi de Hasart; domini Thome, marescalci; domini Simonis, camerarii; domini Poncii Lombardi; domini Bauduini de Maimendon; domini Thome Malebrun; domini Bartolomei de Iaune»²²: Հարկ է ավելացնել, որ որոշ տատանումներից հետո Ռայմոնդ-Ռուբենի դատի պաշտպանությանը միացել էր նաեւ Անտիոքի պատրիարհ Պետրոս Անգուլեմացին, ինչն, անշուշտ, ստեղծված իրավիճակում անչափ ուժեղացնում էր Հայոց թագավորի դիրքը:

Ինչպես ցույց պիտի տային հետագա իրադարձությունները, Լեւոնը թեւաբափ չէր եղել առաջին անհաջողությունից եւ ամենեւին չէր հրաժարվել ցանկացած գնով իր նպատակին հասնելու մտադրությունից: 1203 թվականի աշնանը նա ձեռնարկեց Անտիոքը գրավելու հաջորդ փորձը, բայց փաղափ պարիսպների մոտ հանդիպելով Տաճարականների կատաղի դիմադրությանը եւ լսելով, որ Հալեպի սուլթանը Բոհեմունդ IV-ի խնդրանքով մի ուժեղ զորաբանակ էր ուղարկել իր դեմ, կրկին նահանջեց իր երկրի սահմանները²³: Ավելի հաջող էր Անտիոքի դեմ

²¹ Մմբաստ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 211:

²² Langlois, Cartulaire, p. 134.

²³ Որոշ աղբյուրների տվյալներով՝ Լեւոնին հաջողվել էր գրավել Անտիոքը եւ երեք օր մնալ քաղաքում. տե՛ս Gestes des Chiprois, p. 663; Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 61; Հեթում Թագաւոր, Պատմութիւն, էջ 78; Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. Թ. 2037 (Մարտինոս Լեհացու Գավազանագրքի՝ Ներսես Պալիանենցի կատարած թարգմանությունը), էջ 122բ: Սակայն մեզ թվում է, նշված աղբյուրներն այս դեպքը շփոթում են հինգ տարի անց տեղի ունեցած իրադարձության հետ:

ձեռնարկված նրա երրորդ հարձակումը, որը տեղի ունեցավ 1208 թվականին: Այս անգամ նա կարողացավ գրավել Բաղաբը, սակայն նրա միջնաբերդը մնաց Բոհեմունդի և Տանարական ասպետների ձեռքում: Պետրոս Անգուլեմացի պատրիարքը, Սուրբ Պետրոսի տաճարում տեղի ունեցած հանդիսավոր արարողությամբ, Ռայմոնդ-Ռուբենին հռչակեց Անտիոքի պրինց: Թվում էր, թե Լեոնը վերջապես հասել էր իր բաղձալի նպատակին: Սակայն մի ֆանի օր անց Բոհեմունդն ու Տանարականները, իջնելով միջնաբերդից, անակնկալի բերին հայկական զորքերին և նրանց դուրս մղեցին Բաղաբից: Ի դեպ, այս անգամ էս Անտիոքի պրինցն օգնության խնդրանքով դիմել էր Հալեպի սուլթան Մելիխալ-Ջահիրին, և վերջինս կրկին զորաշարժի էր ենթարկել իր բանակը: Երկու բանակների արանքում չհայտնվելու համար, Լեոնը ետ ֆաշվեց, իր անհաջողության վրեժը լուծելով իշխանապետության գավառական բնակչությունից, ինչի մասին վկայում են Սմբատ Սպարապետի ժամանակագրության հետևյալ տողերը. «Եւ աւարեալ այրէր զամենայն գեղորայսն, և կոտորէր ոչ զմարդ, այլ զայգիս և զծառս նոցա, և զայս առնէր ի բազում ամս և ի ժամանակս»²⁴: Այնուամենայնիվ, ընկրկելով Բոհեմունդ IV-ի ջանքերով գոյացած Անտիոք-Հալեպ-Իկոնիա հակահայկական կռաւիցիայի առջեւ, նա միառժամանակ դադարեցրեց Անտիոքի դեմ ուղղված ռազմական գործողությունները և վեճեց Ռայմոնդ-Ռուբենի դիրքերն ամրապնդել բոլորովին այլ նանապարհով:

Ըստ Սմբատ Սպարապետի՝ 1209 թվականին Լեոնը Ռայմոնդ-Ռուբենին պաշտոնապես հռչակեց Հայոց թագավորության գահաժառանգ. «Իսկ ի ժամանակի յայնմիկ թագաւորն Լեոն թելադրութեամբ մօր իւրոյ Ըոթրային, եցոյց ամենայն հնազանդեցելոց իւրոց, մեծամեծաց և փոքունց, յայտնի ժառանգ թագաւորութեան իւրոյ զԹովբէն զորդի դստեր եղբօրն իւրոյ Ըոովբինի, վասն զի ի ծերութիւն եհաս, և էր անձամբ տկար վասն ցաւոյն զոր ունէր ի ձեռսն և յոտսն, որ կոչէր թագաւորացաւ, և ոչ գոյր նորա զաւակ յերանաց իւրոց արու. վասն որոյ միանգամ և երկիցս և երիցս, յայլ ժամանակս երդմնեցոյց տղային Ըոովբինի զամենեսեան զի նմա ծառայեսցեն յետ մահուանն

²⁴ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 217:

խրոյ»²⁵: Այս հատվածի առնչությամբ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել գահաժառանգության իրավունքի ուսումնասիրման տեսակետից հետաքրքրություն ներկայացնող երկու կետի վրա: Դրանցից մեկը Լեոնի մոր՝ Ռիտայի թելադրանքի պարագան է, ինչը, մեր կարծիքով, ոչ թե սոսկ թոռան հանդեպ տաժած ազգակցական հոգածության արտահայտություն, այլ Ռուբինյան գերդաստանի օրինական հաջորդականության երաշխավորի դերակատարություն պետք է համարել, հիշելով, որ դեռևս 1187 թվականին, Կիլիկիո Գերագույն ատյանի որոշմամբ, Հայոց գահի ժառանգորդ էին ճանաչված ոչ թե Լեոնի, այլ նրա ավագ եղբոր՝ Ռուբենի շառավիղները: Ուշադրության արժանի մյուս կետը վերաբերում է Սմբատի այն տողերին, որտեղ խոսվում է Կիլիկիո իշխանների կողմից Ռայմոնդ-Ռուբենին տրված հավատարմության երդման մասին, ինչն այլ բան, քան Կիլիկիո թագավորության Արփունի ատյանի որոշում, չի կարող նշանակել:

Դեպի Հայոց գահ Ռայմոնդ-Ռուբենի ճանապարհը հարթելու համար Լեոնը շխորչեց նաև մի դժնի արարից: Նույն կամ նախորդ թվականին նա, բյուզանդական ավանդույթով, կուրացրեց Մլեհի որդի Գեորգ իշխանին, որը լինելով արական գծով Ռուբինյանների վերջին ուղիղ շառավիղը, Լեոնի մահից հետո կարող էր դառնալ Կիլիկիո թագավորի ամենահավանական թեկնածուն: Այդ մասին մեզ տեղեկացնում է իրադարձությունների բուն ժամանակակիցն ու ականատեսը՝ 1214 թվականին Կիլիկիայի Մեծաբար վանքում ընդօրինակված ձեռագրի Գրիգոր գրիչը. «Գրեցաւ սա յանապատիս որ կոչի Մեծաբար... յառաջնորդութեան ուխտիս տէր Աստուածատրոյ՝ սուրբ եւ ընտրեալ եպիսկոպոսի, ի գաւառիս որ Մանուս կոչի, եւ բարեպաշտ իշխանիս մերոյ Գեորգեա՝ իշխեցողի անապատիս: Բայց սակաւ բանիմ պատմեցից վասն իշխանիս այսմիկ: Սա որդի էր իշխանաց իշխանին մեծին Մլեհի, հաւրեղբարորդի թագաւորին Լեոնի: Եւ էր սա քաջ եւ յաղթող ի պատերազմի, առատաձեռն, առատասէղան, բաշխաւղ աղբատաց, պարգեատու զինուորեալ մարդոց: Ապա աստանար ամաչեմ ասել զագգիս մերոյ զնենգութիւն եւ զչար կարծիս առ իրեարս, որ ի սկզբանէ նախանձոտք եւ ընկե-

²⁵ Անդ. էջ 216:

րատեացք լեալ են: Եւ մարդիկ ոմանք շարք եւ քամոս մտեալ առ թագաւորն ասեն՝ եթէ ազգային քո Գեորգ հակառակ է թագաւորութեան քո: Մինչ զի աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորն ի ցասումն շարժեալ կալաւ զազգայինն իւր զմեծն Գեորգ, յափշտակեաց զամենայն ինչս նորա եւ եղ զնա ի բանդի ի դղեակ եւ յանառիկ բերդին Սիսոյ թագաւորաբնակ քաղաքին, եւ ի նմին ատուր խաւարեցոյց զաչս նորա, ի թուականին Հայոց ի ՌՄԷ: Իսկ նա եկեալ խաւարեալ աչաւ ի հայրենաշէն վանս իւր, զոր հայրն իւր բարեպաշտն մեծն Մլեհ շինեալ էր՝ զհոշակաւոր անապատս Մեծաբար եւ զմեծ եկեղեցին յանուն Տիրամարն, որում ողորմեսցի նմա Տէր բարեխաւութեամբ Մերոյ Աստուածածնին եւ սրբոց վկայիցս»²⁶: Լեւոնի արարքի դրդապատճառը շատ ավելի հստակ է ներկայացված Սմբատ Սպարապետի ժամանակագրության համապատասխան հատվածում. «Եւ կալաւ զիշխանն Գորգ, զորդի Մլեհին ոչ յօրինաւոր ամուսնութենէ, եւ ետ խաւարեցուցանել զաչս նորա, քանզի էր այր գոռոզամիտ եւ ի զինուորութիւնս արիագոյն, եւ սեղանով առատ, եւ բազումք յարեալ էին ի նա եւ սիրէին զնա, յորս եւ կասկածէր թագաւորն յաղաքս հակառակ յառնելոյ ժառանգութեան, սպասելով դիպող ժամու. եւ զայս այսպէս արարեալ ի քու ոմանց»²⁷: Դժվար է ասել, թե որքան հիմնավոր էր Լեւոնի կասկածը, բայց որ հարմար առիթի դեպքում (դիպող ժամու) Գեորգը կարող էր բացահայտել Հայոց գահին տիրելու իր հավակնությունը, չի բացառվում, մանավանդ, որ նա, ինչպէս Սմբատն է նշում, բազում համակիրներ ուներ²⁸: Իսկ Լեւոնն այն մարդը չէր, որ թեթեւամտորեն անտեսէր սեփական գահին կամ իր ժառանգորդի իրավունքին սպառնացող ամենաչնչին վտանգն անգամ: Հիշենք, թե կուզ, թե 1193 թվականին նա ինչպիսի դաժանությամբ վարվեց Հայոց գահի մի այլ հավակնորդի՝ Հեթում Սասունցու եւ նրա եղբոր հետ:

Ըստ երեւութին, Ռայմոնդ-Ռուբենին Հայոց գահի ժառանգորդ հռչա-

²⁶ *Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 88:*

²⁷ *Սմբատ, Տարեգիրք, Վեներտիկ, էջ 216–217:*

²⁸ «Եւ բազումք յարեալ էին ի նա եւ սիրէին զնա»։ Անդ, էջ 216: Լեւոնի արարքի դրդապատճառի մասին տե՛ս նաեւ՝ *Օրմանյան, Ազգապատում, § 1088; Mutafian, La genèse, p. 163.*

կելը բավարար չհամարելով, Լեոնը որոշեց նաեւ իր կենդանության օրոք թագադրել նրան: Ավելին, այդ նախաձեռնությանը պատշաճ միջազգային վարկ հաղորդելու եւ Ռայմոնդ-Ռուբենի «լեգիտիմությունն» առավելագույնս ամրապնդելու նկատառումով, նա վերջինիս համար թագ խնդրեց Գերմանական կայսր Օտոն IV-ից (1198–1218 թթ.) եւ Հռոմի պապ Իննոկենտիոս III-ից (1198–1216 թթ.): Այդ նպատակով 1210 թվականին նա Եւրոպա գործուղեց Ներսես Լամբրոնացու եղբորը՝ Հեթում-Հեղիին, որը հաջողությամբ իրականացնելով իր առաքելությունը, մեկ տարի անց վերադարձավ Կիլիկիա²⁹: Թեեւ այս մասին եւս թուղցիկ կերպով տեղեկացնում է ամենիրագեկ Սմբատ Սպարապետը³⁰, սակայն, բարեբախտաբար, պահպանվել է նաեւ բուն հանձնակատարի՝ Հեթում-Հեղիի թանկարժեք վկայությունը, որը շատ ավելի ծավալուն ու բովանդակալից է: Խոսքը վերաբերում է վերջինիս ձեռքով լատիներենից հայերեն թարգմանված երկու հուշարձանների հիշատակարաններին, որոնցից առաջինում Հեթումը նկարագրում է Հռոմի պապի, իսկ երկրորդում Գերմանական կայսեր մոտ կատարած իր ճանապարհորդությունը: Մեր խնդրի համար ավելի կարեւոր նկատելով երկրորդ հիշատակարանը, հարկ ենք համարում այն մեջբերել ամբողջությամբ. «Ի սոյն ամի սպանաւ Ֆիլիպն յիշխանէ ումեմնէ եւ մնաց ինքնակալութիւն Աւդին, առ որ ճանապարհորդեմ ես՝ նուաստ Հեղի հրեշտակութեամբ ի թագաւորէն մերմէ Լեոննէ, առ վերոյգրեալ կայսրս Աւդ: Եւ ի վերայ ծովո՛ւ՝ ի նաւարկութեանս մերոյ թարգմանեցի զսա ի հոռովմէականէն ի մերս՝ ի թուին Հայոց ՈՄԹ՝ (1210): Իսկ արարեալ մեր առ ոտս նորա ամ մի եւ ամիս երեք, դարձոյց զմեզ հարկօք առ թագաւոր մեր, արձակելով ընդ մեզ եւ թագ արհայական բազմաձախ եւ բազմագին՝ յականց պատուականաց եւ մեծագին մարգարտից ընդելուզեալ: Զոր բերեալ մեր մեծաւ ուրախութեամբ՝ ընկալաւ թագաւորն մեր եւ պսակեաց ընդիր պսական գեղեցիկ զմոքին, որդի դստերն եղբօր իւրոյ եւ որդի բրինձին Անտիոքայ Ռեմնդին՝ ի թուին Հայոց ՈԿ (1211), ի տօն Սուրբ Աստուածածնին, յաւգոստոսի ժե: Եւ թագաւորէ ընդ իւր՝ Հայոց, ի կամս Աստու-

²⁹ Հեթում-Հեղիի մասին մանրամասն տես *Ակինյան, Ներսէս Լամբրոնացի, էջ 116–130:*

³⁰ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 217:*

ծոյ»³¹: Ինչպես ցույց են տալիս սույն հիշատակարանի վերջին նախադասության «եւ թագաւորէ ընդ իւր» բառերը, այդ ժամանակից սկսած՝ Ռայմոնդ-Ռուբենը, փաստորեն, դարձել էր Հայոց գահակից-թագավոր, ինչը հավաստում է նաեւ իրադարձությունների մի այլ ժամանակակից՝ գերմանացի ճանապարհորդ Վիլբրանդ Օլդենբուրգցին³²: 1211–1212 թվականներին Կիլիկիա կատարած այցելության ժամանակ, ներկա գտնվելով Հայտնության տոնի առթիվ Սսում կազմակերպված հանդիսավոր շքերթին եւ մանրամասն նկարագրելով այն, նա նշում է, որ թափորը գլխավորում էին՝ Հայոց արքան, Տետոնական օրդենի մագիստրոսը, Սելեկիայի Հիվանդախնամ ասպետների բերդապահը եւ կրտսեր-թագավոր (junior rex) Ռուբենը, «որին Հռոմեական կայսր Օտոնը, ավագ-թագավորի (senior rex) խնդրանքով, թագադրել էր որոշ ժամանակ առաջ» (Dominus Rex hoc ordine descendebat: alto equo insidebat; et Magistrum domus Alemannorum, et Castellatum de Seleph Hospitalarium, cum eorum sociis, viris religiosis millibus, suo lateri adjugebat: quem Dominus Ruppinus junior rex, quem, ante dixi, Otto Romanorum Imperator, ad petitionem senioris Regis nuper coronaverat)³³: Հատկանշական է, որ Մմբատ Սպարապետը, տեղյակ լինելով հանդերձ Գերմանական կայսեր եւ Հռոմի պապի կողմից ուղարկված թագի մասին, լուրջան է մատնում Ռայմոնդ-Ռուբենի բուն թագադրության եւ այդու Հայոց գահակից-թագավոր դառնալու իրողությունը, ամենայն հավանականությամբ, հաշվի առնելով վերջինիս հետագա չարագործությունները³⁴:

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ Ռայմոնդ-Ռուբենի գահակցությունը զուտ խորհրդանշական էր եւ ամենեւին Լեւոնի հետ իշխանությունը կիսելու բնույթ չէր կրում ուղղված լինելով բացառապես նրա գահաժառանգական իրավունքի ապահովագրման եւ միջազգային

³¹ *Մաթեոսյան, ժ Գ դ. հիշատակարաններ, էջ 76–77. տե՛ս նաեւ՝ Tisserant, Codices Armeni, p. 209.*

³² *Երա մասին մանրամասն տե՛ս Halfter, Wilbrand von Oldenburg, S. 402–421.*

³³ *Willbrandt, Peregrinatio (ըստ՝ Ալիշան, Սիսուան, էջ 476). Տե՛ս նաեւ՝ Halfter, Wilbrand von Oldenburg, S. 420, n. 110.*

³⁴ *Տե՛ս Մմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 217:*

վարկի ամրապնդման նպատակին: Համենայն դեպս, մեզ հայտնի չէ Հայոց գահակից-թագավորի հանգամանքով նրա իրականացրած որեւէ գործառույթ: Մինչդեռ Անտիոքի պրինցի թեկուզ անվանական պարագայում Ռայմոնդ-Ռուբենը հանդես էր գալիս որպես հիրավի այլընտրանքային իշխանություն: Նա գլխավորում էր իշխանապետության՝ Կիլիկիայում ապաստանած վտարանդի կառավարությունը, Անտիոքին վերաբերող պաշտոնական հրովարտակներ արձակում էր դրանցով կանխապես զանազան արտոնություններ շնորհում իր ապագա հպատակներին: Բավական է նշել, որ մեզ են հասել 1207–1215 թվականների ընթացքում Ռայմոնդ-Ռուբենի անունից հրապարակված այդպիսի չորս հրովարտակներ՝ բոլորն էլ, ի դեպ, վավերացված Լեոն թագավորի կողմից՝ նրանց ավելի մեծ կշիռ տալու նպատակով³⁵:

Բացի նշված եղանակներով Ռայմոնդ-Ռուբենի դիրքերն ամրապնդելուց, Լեոնը նաև շարունակում էր եռանդուն դիվանագիտական ջանքեր գործադրել՝ Անտիոքի գահաժառանգության խնդրում Հռոմի պապի ու նրա նվիրակների աջակցությունն ստանալու ուղղությամբ³⁶: Ըստ երեսույթին, որոշ առումով նույն նպատակին էին միտված նաև այդ ընթացքում Լեոնի կնիքած միջազգային ամուսնական դաշինքները: 1210 թվականին նա Ռայմոնդ-Ռուբենին ամուսնացրեց Կիպրոսի թագավոր Ամորի I-ի դստեր՝ Հելվիսի հետ, ինքն էլ, իր հերթին, կնության առնելով վերջինիս քրոջը՝ Սիբիլին: 1214-ին Լեոնն իր զարմուհուն՝ Ռուբեն Գ-ի դուստր Ֆիլիպային կնության տվեց Բյուզանդական կայսր Թեոդորոս Լասկարիսին³⁷, իսկ սեփական դստերը՝ Ստեֆանի-Ռիտային ամուսնացրեց Երուսաղեմի թագավոր Հովհաննես Բրիենացու հետ³⁸: Իմիջիայլոց,

³⁵ *Séu Langlois, Cartulaire*, p. 130–136.

³⁶ *Խնդրի այս կողմն ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրված է Ղ. Ալիշանի կողմից. տե՛ս Ալիշան, Միսուան, էջ 497–501:*

³⁷ *Այդ ամուսնության քաղաքական դրդապատճառների, ինչպես նաև այդ առթիվ Թեոդորոսի կողմից Լեոն Բ-ին հղված, ամուսնական պայմանագրի բնույթ կրող, «Ժողովական թղթի» մասին մանրամասն տե՛ս Բարթիկյան, Հետազոտություններ, հտ. 1, էջ 51–55:*

³⁸ *Ամուսնական այս կապերի մասին տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 217–218; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 103–104; Lignages d'Outremer, p. 90–*

այն, որ Լեւոնն, իր դստեր փոխարեն Հայոց գահի ժառանգորդ էր նանաչել Ռայմոնդ-Ռուբենին, կրկին ապացուցում է, որ նա կաշկանդված էր Հայոց իշխանության Գերագույն ատյանի 1187 թվականի որոշմամբ, որի համաձայն՝ Հայաստանի գահը պատկանում էր նրա եղբոր՝ Ռուբենի շառավիղներին: Սակայն, ինչպես ստորեւ կտեսնենք, Կիլիկիո գահի ժառանգության հարցում Ստեֆանի-Ռիտայի հանգամանքն, այդուհանդերձ, հետագայում որոշ բարդություններ պիտի ստեղծեր:

Այսպիսով, թե՛ իր երկրի ներսում, թե՛ միջազգային ասպարեզում, հիմնավորապես նախապատրաստելով հողը, 1216 թվականի գարնանը Լեւոնն անցավ վճռական գործողությունների եւ, գործի դնելով բոլոր հնարավոր միջոցները՝ ուժի ցուցադրում, դիվանագիտություն, կաշառք եւ այլն, մեկ գիշերվա ընթացքում գրավեց Անտիոքն ու Ռայմոնդ-Ռուբենին բազմեցրեց իշխանապետության գահին: Այս դրվագի լավագույն նկարագրությունը, թեեւս, պատկանում է մեր մշտական ուղեկից Սմբատ Սպարապետի գրչին, ուստի եւ նպատակահարմար ենք գտնում ամբողջությամբ ներկայացնել եղելության նրա վարկածը. «Ի թուին ՈԿԵ (1216) յամսեանն փետրուարի ԺԴ Տեառնընդառաջին էառ թագաւորն Լեւոն զԱնտիոք արուեստի եւ իմաստութեամբ, քանզի զոր յառաջագոյն մեծաւ պատերազմաւ ոչ կարաց ածել ի հաւանութիւն, յետոյ առատատոր պարգեւոք եւ խոստմամբ հաւանեցոյց զմանս յիշխանացն, եւ նոքա բացին նմա զդրոնս ի գիշերի, յոր եմուտ բազում զօրութեամբ, եւ էառ զդրոնսն եւ զամենայն աշտարակս պարսպին շուրջանակի, եւ ելից զփողոցամէջս քաղաքին զօրօք բազմութեամբ, եւ բնակիչք քաղաքին ոչ գիտէին: Եւ յորժամ եղեւ առաւօտ՝ տեսին զքաղաքն լցեալ զօրօք եւ ապշեալ յիմարեցան եւ ոչինչ վնաս եղեւ ումեք, եւ ոչ ինչս յափշտակեալ. այլ պատրիարզն եւ ամենայն մեծամեծքն առին զթագաւորն Լեւոն եւ զՌուվբէն եւ զնացին ի տանար սրբոյն Պետրոսի, եւ պատրիարզն ձեռնադրեաց զԸնդվբէն բրինձ Անտիոքայ, եւ ամենեքեան երդուան նմա որպէս իւրեանց հայրենի տեառն: Եւ որք ի կլայն էին՝ կացին աւտս ինչ եւ տուեալ զայն եւս, եւ եկին յերկրպագութիւն բրնձին Ընդվբինի»³⁹: Այ-

92; Ernoul, Chronique, p. 410. Հմմտ. *Isabel*՝ Rüdtt-Collenberg, *The Rupenides, I* (Rup).

³⁹ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 219:*

նուհետեւ ժամանակագիրն անսահման ոգետրությամբ վերարտադրում է իր կյանքի մեծագույն գործերից մեկի հաջողության առթիվ Լեւոնի ապրած զգացումները, որոնց ֆաղափական խորհրդ մեզ համար հասկանալի կդառնա սույն ենթագլխի հետագա շարադրանքում. «Իսկ թագաւորն Լեւոն հասեալ յայսպիսի գործոյ կատարումն՝ ցնծայր եւ յոյժ ուրախ էր ընդ աստուածային յաջողումնն, քանզի որում յառաջագոյն ինքեանք ծառայէին՝ արար զնա ի ներքոյ իշխանութեան իւրոյ, եւ զուարճանայր ի վերայ Ըռովքինի, քանզի էր պատանի գեղեցկատեսիլ, հասակաւ երկայն, հերով խարտեաշ, որպէս թել ոսկոյ, ձիավարժ գովելի, իշխանական ձեօք պատկառելի եւ անձամբ սուրբ»⁴⁰:

Վերջին տողերն ընթերցելուց հետո դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի դառը հիասքափություն պիտի ապրեր Լեւոնը, երբ մի ֆանի ամիս անց Ռայմոնդ-Ռուբենը նրան վտարեց Անտիոքից: Նորընծա պրինցիպալ անակնկալ ֆայն, անշուշտ, միայն նրա երախտամոռության արտահայտությունը չպետք է համարել: Դրանով Ռայմոնդ-Ռուբենն, ամենայն հավանականությամբ, ձգտում էր ընդգծել իր անկախությունը եւ անտիոքացիներին ապացուցել, որ ինքը Հայոց թագավորի խամահիկն ու հլու կամակատարը չէ⁴¹: Ի դեպ, երեսույթը շատ տարածված էր միջնադարում, եւ նման վարմունքը հատուկ էր համարյա բոլոր խնամարկյալ գահաժառանգներին, որոնք, չափահաս դառնալուց հետո, տիրելով իշխանությանը, առաջին հերթին ձգտում էին ազատվել իրենց խնամակալի ենչող հովանավորությունից: Օրինակ, համապատասխանաբար 1152 եւ 1252 թվականներին իրենց խնամակալ-մայրերի նկատմամբ այդ կերպ վարվեցին Երուսաղեմի թագավոր Բալդուին III-ը եւ Անտիոքի պրինց Բոհեմունդ VI-ը: Իսկ հետագայում, ինչպես դեռ կտեսնենք, իր խնամակալներին շատ ավելի դաժան դատաստանի պիտի ենթարկեր Հայոց Լեւոն Ե (IV) թագավորը: Ասորի ժամանակագիր Բարհեբրեոսը նշում է Ռայմոնդ-Ռուբենի արարքի մի այլ, ի դեպ՝ ոչ բացառելի դրդապատճառ. ըստ նրա՝ փորձելով ձերբակալել Լեւոնին, նա ձգտում

⁴⁰ Անդ, էջ 219–220:

⁴¹ Հմմտ. Grousset, Histoire, III, p. 263; Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 305:

էր միանգամից տիրել նաեւ Կիլիկիո գահին. «Այնժամ այդ անմիտը, տեսնելով, որ հասել է իշխանության, մեծամտացավ եւ ուզեց ձեռքակալել Լեւոնին՝ իրեն գահ բարձրացնողին, որպէսզի տիրի նաեւ Կիլիկիային: Բայց Ֆրեր-եղբայրները⁴², տեղեկանալով դավադրությանը, իմաց տվին Լեւոնին, որն անվնաս խույս տվեց»⁴³: Այնուամենայնիվ, ինչ էլ եղած լինէր Ռայմոնդ-Ռուբենի արարքի իրական պատճառը, հետագա իրադարձությունները ցույց պիտի տային, որ նրա հաշվարկը սխալ դուրս եկավ, քանի որ Լեւոնի օտարումը ոչ թէ ամրացրեց, այլ, ընդհակառակը, թուլացրեց նրա դիրքերն Անտիոքում:

Բնականաբար, Լեւոնը չէր կարող ներել այս անպատվությունը, մանավանդ որ դրա հետեւանքով մի ակնթարթում ջուրն էր թափվում նրա տասնյակ տարիների տփնաջան աշխատանքը: Ուստի վերադառնալով Կիլիկիա, նա անմիջապէս Արփունի ատյանի նիստ գումարեց, չեղյալ հայտարարեց Ռայմոնդ-Ռուբենի գահաժառանգության վերաբերյալ նախկինում կայացված որոշումը եւ Հայոց գահի ժառանգորդ հռչակեց իր մանկահասակ դստերը՝ Զապելին, այդ ամենն, իհարկե, ներկայացնելով որպէս Հայոց իշխանների կամքի արտահայտություն. «Զայսու ժամանակաւ եղեւ թագաւորին Լեւոնի դուստր, եւ անուանեաց զանուն նորա Զապել. եւ յայնմհետէ խորհէր զդուստրն իւր առնել ժառանգ թագաւորութեան իւրոյ, զոր եւ իշխանին իւր նոյնպէս տային նմա խորհուրդ, թէ յորժամ ետ տէր Աստուած զաւակ յերանաց քոց՝ արա զնա տէր ժառանգութեան քո եւ լոյծ զերդումն մեր զոր արարեալ եմք Ընդվբինի, եւ կապեա ընդ դստեր քո, եւ մեք ծառայեմք նմա որպէս արու զաւակի, եւ բաւական է Ընդվբինի զոր արարեւ եւ հաստատեցեր զնա յաթոռ հայրենեաց իւրոց: Եւ թագաւորն հաւանեցաւ ի բանս իշխանաց իւրոց»⁴⁴: Այսպիսով, Ռայմոնդ-Ռուբենի դավանանքությունը, եթէ ոչ իրավական, ապա գոնէ բարոյական կամ քաղաքական առումով, օրակարգից հանում էր Հայոց իշխանության Գերագույն ատյանի 1187 թվականի որոշմանը ենթարկվելու Լեւոնի պարտավորությունը, դրանով

⁴² Այսինքն՝ Հիվանդախնամ ասպետները:

⁴³ Barhebraeus, Chronicon, p. 430. Տե՛ս նաեւ՝ Bar Hebraeus, Chronography, p. 370.

⁴⁴ Մմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 220:

իսկ հիմք ստեղծելով Զապելի ապագա գահակալությունը «լեգիտիմ» ճանաչելու համար:

Իր թեթեամտության պատճառով զրկվելով Հայոց թագավորության աջակցությունից եւ դրա հետ մեկտեղ չկարողանալով շահել ֆրանկների համակրանքը, Ռայմոնդ-Ռուբենը երկար շղիմացավ Անտիոքի գահին: 1219 թվականի գարնանն անտիոքացիները, Վիլյամ Ֆարաբելցու գլխավորությամբ, ապստամբեցին նրա դեմ եւ իշխանապետության ղեկը կրկին հանձնեցին Անտիոքի նախկին պրինց Բոհեմունդ IV-ի ձեռքը⁴⁵: Ռայմոնդ-Ռուբենը, Հիվանդախնամ ասպետների օգնությամբ, հազիվ կարողացավ ազատել իր գլուխը եւ ճողոպրել Կիլիկիա, թերեւս հույս փայփայելով՝ արժանանալու Լեւոնի ներողամտությանն ու վերականգնելու Հայոց գահաժառանգի իր կարգավիճակը: Սակայն այստեղ սառն ընդունելություն գտնելով, նա մեկնեց Եգիպտոս՝ օգնություն խնդրելու պապի նվիրակ կարդինալ Պելագիոսից, որն այդ ժամանակ, հինգերորդ իսաչակրաց արշավանքի առաջնորդի հանգամանքով, գլխավորում էր Դամիատ ֆաղաֆի պաշարումը: Պետք է ասել, որ Ռայմոնդ-Ռուբենը ճիշտ հասցեով էր դիմել, քանի որ Հռոմեական եկեղեցին որքան էլ բարձր գնահատեր հայերի դաշնակցությունը, միեւնույն է, մինչեւ վերջ չէր հավատում նրանց եւ այդու շահագրգռված պետք է լիներ Հայոց գահին տեսնելու թեկուզ կիսաֆրանկ մի անձի: Ինչ էլ լիներ, սակայն, Պելագիոսը, տվյալ պահին զբաղված լինելով Եգիպտոսը նվաճելու դժվարին գործով⁴⁶, չկարողացավ անմիջական օգնություն ցուցաբերել Ռայմոնդ-Ռուբենին:

Տարաբախտ պրինցի ողիսականի վերջին տարիների մասին մեզ մանրամասն տեղեկացնում են Սմբատ Սպարապետը, Միխայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության շարունակողը, Հեթում Կոռիկոսցին, եւ մանավանդ Բարհեբրեոսը⁴⁷: Որոշ ժամանակ Երուսա-

⁴⁵ *St' u Gestes des Chiprois*, p. 665.

⁴⁶ Հինգերորդ իսաչակրաց արշավանքի ընթացքը հրաշալի կերպով նկարագրված է 1222 թվականին Ստում ընդօրինակված մի ավետարանի հիշատակարանում. տե՛ս Պալյան, Յուդակ, էջ 63–64:

⁴⁷ *St' u Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ*, էջ 223–224; *Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870*, էջ 523, *Barhebraeus, Chronicon*, p. 442; *Bar Hebraeus, Chronogra-*

ղեմի թագավոր Հովհաննես Բրիենացու արժունիում ապրելուց հետո, Ռայմոնդ-Ռուբենը վերադարձավ Կիլիկիա եւ ապաստանեց Կոռիկոսի իշխան Վահրամ մարաշխտի մոտ: Ըստ Բարհեբրեոսի եւ Հեթում Կոռիկոսցու՝ այդ դեպքը տեղի է ունեցել Լեւոնի մահից (1219 թ.) եւ Կիլիկիո խնամակալ Սիր Ատանի սպանությունից (1221 թ.) հետո, երբ արդեն Հայոց թագավորության խնամակալ էր կարգվել Կոստանդինը⁴⁸: Ռայմոնդ-Ռուբենը Վահրամին խնդրեց օգնել իրեն՝ նվաճելու Հայոց թագավորության գահը: Վերջինս համաձայնեց, սակայն միայն նրա մոր՝ Ալիսի հետ ամուսնանալու պայմանով⁴⁹, թերեւս, հոգու խորում հույսեր փայփայելով, որ այդ ամուսնության շնորհիվ ինքն էլ երբեւիցե կարող է տիրել Հայոց գահին: Մեր կարծիքով, նման հավակնությունը չպետք է բոլորովին հիմնազուրկ համարել, քանի որ Վահրամը Կիլիկիո թագավորության ամենաազդեցիկ իշխաններից մեկն էր, ինչի մասին մասնավորապես վկայում է այն փաստը, որ նրա անունը, վկայի հանգամանքով, բազմիցս հիշատակվում է Լեւոն թագավորի եւ Ռայմոնդ-Ռուբենի հրովարտակներում⁵⁰: Երբ Ալիսի բուռն դիմադրությունից հետո ամուսնության խնդիրն, այնուամենայնիվ, կարգավորվեց, Վահրամն ու Ռայմոնդ-Ռուբենը բարձրացրին ապստամբության դրոշը: Նրանց միացան նաեւ այլ իշխաններ՝ ազգությամբ հայ եւ հույն⁵¹, որոնցից երեքի՝ Ժուլին մարաշխտի, Լեւոն Կապանցու եւ Կեոսակի⁵² անունները հիշատակում է Միխայել Ասուրու ժամանակագրության հայերեն թարգմա-

phy, p. 380; *Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 104*: *Հմմտ. նաեւ՝ Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 79*; *Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 64*; *Վահրամ Բարբուռի, Ռտանաւոր պատմութիւն, էջ 217-218*:

⁴⁸ *Տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 442; Bar Hebraeus, Chronography, p. 380; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 104*:

⁴⁹ *Տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 442; Bar Hebraeus, Chronography, p. 380. Հմմտ. նաեւ՝ Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 104*:

⁵⁰ *Տե՛ս Langlois, Cartulaire, p. 116, 123, 125, 134, 136*.

⁵¹ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 223*:

⁵² *Ի դեպ, Կեոսակը, որին Սմբատ Սպարապետը մի այլ առիթով կոչում է «իշխան Մաղվալոյ եւ Սիկոյ եւ Պալապոլին» (Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 210), նույնպէս Կիլիկիայի ազդեցիկ բարոններից մեկն էր*:

նության շարունակողը⁵³: Ապստամբները, որոնց հաջողվեց շուրջ հինգ-հազարանոց բանակ կազմել⁵⁴, կարճ ժամանակի ընթացքում գրավեցին Տարսուն եւ Ադանա ֆաղաֆները, ապա շարժվելով դեպի Մսիս, ճամբար խփեցին նրա մոտակայքում⁵⁵: Այդ օրհասական պահին, երբ Դաշտային Կիլիկիայի մոտ կեսը գտնվում էր ապստամբների ձեռքում, իր վճռական խոսքն ասաց նորընտիր պայլ Կոստանդին Պապեռոնցին, որը, թեեւ սակավաթիվ գործով, կարողացավ վանել նրանց ու չջափակել Տարսուն ֆաղաֆում: Ապա հնարամտությամբ, եւ ոչ թե գրոհով, գրավելով ֆաղաֆը, նա ձեռքակալեց ապստամբության պարագլուխներին ու բանտ նետեց: Նրանցից ոմանք, Սմբատի վկայությամբ, հետագայում ազատ արձակվեցին, ոմանք էլ բանտում գտան իրենց վախճանը⁵⁶: Ըստ Բարհեբրեոսի՝ այս վերջինների թվում էին Վահրամ մարաշախտը, Ռայմոնդ-Ռուբենը եւ նրա մայրը⁵⁷: Մրանով փակվեց Հայոց չկայացած գահաժառանգի եւ խաչակրաց ժամանակաշրջանի ամենադրամատիկ ճակատագրի տեր անձնավորություններից մեկի կյանքի պատմությունը, որն այդպես էլ ի վիճակի չեղավ, մինչեւ վերջին շունչը, պետական այրին վայել որեւէ գործ կատարել:

⁵³ *Տե՛ս Միխայել Ասորի, Ժամանակագրություն 1870, էջ 523: Հեթում Կոռիկոսցին դավադիրներին միացած իշխաններին հիշատակում է «զՄալեւոնցիք եւ զԱլլահասանք եւ զայլն», ընդհանուր անվանումով. տե՛ս Հեթում Կոռիկոսցի, Պատմություն, էջ 104:*

⁵⁴ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 223:*

⁵⁵ *Տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 443; Bar Hebraeus, Chronography, p. 380; Հեթում Կոռիկոսցի, Պատմություն, էջ 104:*

⁵⁶ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 224:*

⁵⁷ *Տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 443; Bar Hebraeus, Chronography, p. 380. Տե՛ս նաեւ՝ Lignages d'Outremer, p. 66, ըստ որի՝ Ռայմոնդ-Ռուբենին սպանել էր սովել Կոստանդին Պայլը: Ինչ վերաբերում է Ռայմոնդ-Ռուբենի մորը՝ Ալիսին, ապա նա, ըստ Կ. Կաննի, իրականում որոշ ժամանակ անց Հոնորիոս III պապի միջնորդությամբ ազատ էր արձակվել եւ մահացել 1231 թվականից հետո Տորոնի տիրուհու կարգավիճակում. տե՛ս Caben, La Syrie du Nord, p. 632n. Ռուդ-Կոլենբերգը Ալիսի մահը դնում է 1234 թվականից հետո. տե՛ս Rüdtt-Collenberg, The Rupenides, I (Rup.).*



Ռայմոնդ-Ռուբենին նվիրված այս ենթագլուխն ավարտելուց առաջ, հարկ ենք համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել լրացուցիչ մեկնաբանություն պահանջող մի կարեւորագույն խնդրի վրա, որը որոշ հետազոտողների կարծիքով, եղել է Լեւոն թագավորի կյանքի գլխավոր մտահոգության առարկան⁵⁸: Ինչպես նշեցինք, Կիլիկիո թագավորության եւ Անտիոքի իշխանապետության տասնյակ տարիներ տեւած հակամարտությունը մասնագիտական գրականության մեջ հայտնի է «Անտիոքի գահաժառանգության պատերազմ» անունով⁵⁹: Մեզ թվում է, սակայն, որ այս ձեւակերպումը, ֆորմալ առումով նիշտ լինելով հանդերձ, չի արտահայտում հակամարտության բուն էությունը: Նկատի ունենալով Լեւոնի կողմից այդ ուղղությամբ թափված ահռելի ջանքերը, հետետղական դիվանագիտական նախաձեռնությունները, ռազմական գործողությունների դիմելու մշտական պատրաստակամությունը, դժվար է պատկերացնել, որ նրա նպատակը սոսկ գահաժառանգության ֆեոդալական իրավունքի հետապնդումն ու իր զարմիկին Անտիոքի գահին բազմած տեսնելն էր: Հայոց թագավորը չէր կարող չհասկանալ, որ Անտիոքի դեմ ուղղված երկարատե պատերազմը քամում էր իր երկրի կենսական հյութերը, որից չպետք է հապաղելին օգտվելու հարեւան մահմեդական պետությունները⁶⁰: Սակայն, եթե Լեւոնն, այս ամենը գիտակցելով հանդերձ, մտասեւեռության հասնող համառությամբ շարունակում էր այդ պայքարը, պետք է ենթադրել, որ նա իր առջեւ շատ

⁵⁸ Հմմտ. Iorga, L'Arménie, p. 56; Der Nersessian, Cilician Armenia, p. 649; Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 400; Mutafian, Recherches, p. 72; Atamian-Bournoutian, Cilician Armenia, p. 281.

⁵⁹ Հմմտ. Grousset, Histoire, III, p. 265; Cahen, La Syrie du Nord, p. 596; Runciman, A History, III, p. 100; Der Nersessian, Cilician Armenia, p. 649; Hardwicke, The Crusader States, p. 532; Mutafian, La Cilicie, I, p. 413; Mutafian, Recherches, p. 72. Ս. Պալասանյանն այդ հակամարտությունը կոչում է՝ «Անտիոքի ժառանգութեան վէճ». Պալասանյան, Պատմութիւն, էջ 351:

⁶⁰ Այդ հակամարտությունն ավելի ծանր հետեւանքներ պիտի ունենար Անտիոքի իշխանապետության համար, դառնալով նրա կործանման պատճառներից մեկը. հմմտ. Cowe, The Inauguration, p. 52.

ավելի լուրջ եւ ուզումավարական նշանակություն ունեցող խնդիր եւ դրել: Դա, մեր կարծիքով, Կիլիկիո Հայոց թագավորության եւ Անտիոքի իշխանապետության միավորման, կամ ավելի ճիշտ, վերջինիս նվաճման գաղափարն էր⁶¹, որը հիմնված էր ոչ թե Լեւոն թագավորի սին հավակնության, այլ նշգրիտ աշխարհաֆաղաֆական հաշվարկի վրա:

XII դարի վերջին եւ XIII դարի առաջին երկու տասնամյակները Կիլիկիո Հայոց պետության հզորության գագաթնակետն էին: Դա այն հագվադեպ ժամանակաշրջանն էր, երբ նրա բոլոր հարեւաններն անխտիր հայտնվել էին համարյա կաթվածահար վիճակում: Միբիոկեֆալոնի նակատամարտում կրած ծանր պարտության հետեւաննով Բյուզանդիան զրկվել էր Արեւելում որեւէ դերակատարություն ունենալու հնարավորությունից, իսկ 1204 թվականին կայսրության մայրաֆաղաֆն ու եւրոպական տիրույթները կորցնելուց հետո ամֆոֆվել էր ֆոքրասիական Նիկիա ֆաղաֆի շրջակայում: Պատմության թատերաբեմից վերջնականապես հեռացել էին Կիլիկիայի երբեմնի ամենավտանգավոր ախոյանները՝ Մեբաստիայի եւ Մելիտենեի Դանիշմենդյան էմիրությունները: Սալահեդդինի հարվածների տակ գրեթե կործանման եզրին էին հասել Ասորիֆի իսաչակրաց պետությունները: Ներֆին գահակալական կռիվներից սաստիկ թուկացել էին Իկոնիայի եւ Հալեպի սուլթանությունները: Հմտորեն օգտվելով Կիլիկիայի համար ստեղծված միջազգային այս բարենպաստ իրավիճակից, Լեւոնն առավելագույնս ընդարձակեց իր երկրի սահմանները եւ ծավալապաշտությունը դարձրեց Հայաստանի արտաֆին ֆաղաֆականության հիմնաֆարը: Որ Լեւոնը հիրավի վարում էր ծրագրված նվանդական ֆաղաֆականություն, ապացուցվում է, մասնավորապես, հետեյալ բնութագրական ֆաստերով: 1201 թ. մարտին հրապարակած արֆայական հրովարտակով առեւտրային արտոնություններ շնորհելով ձենովական հանրապետությանը, նա հարկ է համարում ավելացնել, որ այդ արտոնություններն ուժի մեջ են լինելու ոչ միայն իրեն պատկանող, այլեւ հետագայում իր կողմից նվանվելիֆ տարածֆներում⁶²: Իսկ 1210 թ. օգոստոսի հրովարտակով Լեւոնը խոստանում է՝

⁶¹ Հմտ. Richard, Les Arméniens, p. 169.

⁶² Sh' u Langlois, Cartulaire, p. 106.

Հիվանդախնամ ասպետներին նվիրել Իկոնիայի սուլթանության Լարանդա ֆաղաֆը, երբ, ինչպես ինքն է գրում, Աստծու կամֆով իրեն կամ իր հաջորդներին հաջողվի այն ազատագրել անհավատների ձեռքից⁶³: Ուստի նման ֆաղաֆականություն որդեգրելու պարագայում միանգամայն բնական էր, որ Լետոնը նվանողական նկրտումներ դրսևտրեր նաեւ Անտիոքի իշխանապետության նկատմամբ: Հիշեցնենք, որ դեռեւս 1193 թվականին, երբ զահաժառանգական խնդիր իսկ գոյություն չուներ, Լետոնը, գերելով Բոհեմունդ III պրինցին, նրանից պահանջել էր իրեն հանձնել Անտիոք ֆաղաֆը, ինչը նշանակում էր պարզապես վերջ դնել նորմանական իշխանապետության գոյությանը: Ու թէեւ այդ գործը գլուխ չէր եկել, նա համենայն դեպս կարողացել էր Անտիոքից կորզել Պաղրաս ամրոցը եւ Պորտելայից մինչեւ Այաս ընկած ծովափնյա տարածքը:

Որքան մեզ հայտնի է, արդի հետազոտողներից միակը, որ ճիշտ է ըմբռնել Կիլիկիո թագավորության եւ Անտիոքի իշխանապետության զինված հակամարտության էությունը, ռումինացի մեծ պատմաբան եւ պետական գործիչ Նիկոլայե Յորգան է⁶⁴: Ըստ նրա՝ Կիլիկիան եւ Անտիոքը, թէեւ ֆաղաֆականորեն բաժանված, իրականում, որպես աշխարհագրական եւ տնտեսական ամբողջություն, շարունակ ձգտել են միասնության՝ մերթ ֆրանկների, մերթ հայերի նախաձեռնությամբ⁶⁵: Ուստի իր հզորության գագաթնակետին գտնվող Լետոն թագավորը կա՛մ պետք է շարունակեր այդ ավանդույթը, կա՛մ լ՛ներ պատմական իր դերը⁶⁶: Ավելի հեռուն գնալով, Յորգան ավելացնում է, որ Հայոց թագավորի վերջնական նպատակը Կիլիկիայից, Անտիոքից եւ Կիպրոսից կազմված բյուզանդական մի հին վարչական միավորի վերականգնումն էր⁶⁷: Տվյալ դեպքում հեղինակն, ըստ երեւոյթին, նկատի ունի բյուզանդացի ժա-

⁶³ Անդ, էջ 115: Հետաքրքիրն այն է, որ որոշ ժամանակ անց Լետոնն իսկապես գրավեց այդ, ինչպես նաեւ Իկոնիայի սուլթանության Կեսարիա եւ Հերակլեա քաղաքները. տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 117:

⁶⁴ Iorga, L'Arménie, p. 26-28, 56-57.

⁶⁵ Անդ, էջ 26:

⁶⁶ Անդ:

⁶⁷ Անդ, էջ 26-27:

մանակագիր Կիննամոսի այն տեղեկությունը, որի համաձայն՝ Հովհաննես Կոմնենոս կայսրը ժամանակին միտք էր հղացել՝ Կիլիկիայից, Ատալիայից, Անտիոքից եւ Կիպրոսից կազմված մի առանձին փոխարհայություն ստեղծել եւ այն հանձնել իր որդի Մանուելին⁶⁸։ Անտիոքի նվաճումն, այսպիսով, ըստ Յորգայի՝ այդ ծրագրի իրականացմանն ուղղված առաջին փայլն էր, որից հետո Լեւոնը հեշտությամբ կարող էր տիրել նաեւ Կիպրոսին⁶⁹։ Այս կապակցությամբ ռումինացի պատմաբանը կատարում է եւս մի ուշագրավ դիտարկում, որի համաձայն՝ Անտիոքի նվաճման նպատակադրումով էր պայմանավորված նաեւ Լեւոնի որդեգրած արեւմտականացման, այսինքն՝ Կիլիկիո օրենքների, բարբերի, սովորույթների լատինականացման փաղափականությունը. Անտիոքը նվաճելու համար, գրում է նա, Կիլիկիան ինքը որոշ առումով պետք է «անտիոքանա»⁷⁰։ Եւ վերջապէս, ավելացնում է Յորգան, Լեւոնի հավակնոտ ծրագրի իրականացումը կարող էր փոխել պատմության ընթացքը եւ նույնիսկ փրկել Երուսաղէմը⁷¹։ Մենք դիտավորյալ այսպէս հանգամանորեն կանգ առանք Յորգայի տեսակետների վրա, քանի որ Կիլիկիո եւ խաչակրաց պատմությանը նվիրված ծովածավալ գրականության մեջ ընթերցողը ոչ մի այլ տեղ նման մտքերի չի հանդիպի։ Արդար լինելու համար պետք է նշենք, սակայն, որ Գ. Միխայելյանը եւս, թեւ առանց հիմնավորումների, Անտիոքի դեմ մղած Լեւոնի պայքարը համարում է ոչ թե գահաժառանգական, այլ նվաճողական պատերազմ⁷²։ Խնդրին թեթեւակի անդրադարձել է նաեւ Ս. Տեր-Ներսեսյանը, որի կար-

⁶⁸ *Stéu Kinnamos*, Deeds, p. 26. Հմմտ. Chalandon, Les Comnène, II, p. 184–185; *Թողոյան*, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 124: Զ. Հարրիսը կասկածում է Կիննամոսի տեղեկության արժանահավատությանը՝ նկատի ունենալով բյուզանդացիների գիտակցության մեջ արմատացած կայսերական իշխանության անբաժանելիության ըմբռնումը. տե՛ս Harris, Byzantium, p. 85.

⁶⁹ *Stéu Iorga*, L'Arménie, p. 56. Հստ Ժ. Տետյանի՝ Լեւոնի ամուսնությունը Կիպրոսի արքայազատեր՝ Սիրիլի հետ (1210 թ.), արդեն իսկ միտված էր կղզու վրա իր ազդեցությունը տարածելուն. Dédéyan, Histoire, p. 310.

⁷⁰ *Iorga*, L'Arménie, p. 56–57.

⁷¹ Անդ, էջ 57: Հմմտ. Նաեւ՝ Der Nersessian, The Armenians, p. 48.

⁷² *Stéu Микаелян*, История, с. 166. Հմմտ. Նաեւ՝ Bozoyan, Les documents, p. 57.

ծիփով՝ «Լեւոնը հավակնում էր, Անտիոքի վրա վերահսկողություն հաստատելու միջոցով, ֆրանկո-հայկական մի պետություն հիմնադրել»⁷³:

Մեր կարծիքով՝ Լեւոնն այդ ժամանակ, իրոք, այնքան հզոր էր, որ ցանկության դեպքում ի վիճակի էր Կիլիկիայի եւ Անտիոքի միավորման խնդիրը լուծել զուտ ռազմական ճանապարհով: Ճիշտ է, Անտիոքի իշխանապետությունն ուներ լուրջ դաշնակիցներ՝ հանձինս Տաճարական ասպետների եւ Իկոնիայի ու Հալեպի սուլթանների, սակայն Կիլիկիան նույնպես զուրկ չէր նրանց հավասարակշռող ուժերի աջակցությունից, որոնց թվում էին՝ Հիվանդախնամ ասպետները, Անտիոքի ազնվականության մի զգալի մասը, ինչպես նաեւ Եգիպտոսի սուլթան ալ-Ադիլը եւ Կարնո էմիր Տուղրիլշահը⁷⁴: Այնուամենայնիվ, եթե Լեւոնը, Անտիոքի իշխանապետությունը զենքի ուժով նվաճելու կարողություն ունենալով հանդերձ, իր նպատակին հասնելու համար ընտրել էր Ռայմոնդ-Ռուբենի գահաժառանգական իրավունքն օգտագործելու, այսպես կոչված, «սահմանադրական ճանապարհը», բացատրվում է նրանով, որ նա չէր ուզում իր դեմ հանել ողջ Արեւմուտքը, եւ Հայոց թագավորությունը դատապարտել հավերժ մեկուսացման, իր մահմեդական հարեւանների վտանգավոր միջավայրում: Դարաշրջանի մտայնությամբ՝ ցանկացած պատերազմ պետք է իրավական պատճառ ունենար⁷⁵, իսկ ավելի հիմնավոր պատճառ, քան գահաժառանգության իրավունքն էր, դժվար էր

⁷³ Der Nersessian, *The Armenians*, p. 47. *Իսկ ըստ Մ. Օրմանյանի՝ Կիլիկիայի եւ Անտիոքի միավորման վերջնական նպատակն էր Լեւոնի տիրապետության տարածումը բուն Հայաստանի վրա. Օրմանյան, Ազգապատում, § 1088:*

⁷⁴ Հմմտ. Mutfian, *Recherches*, p. 73. *Տուղրիլշահի եւ Լեւոնի բարեկամության մասին տես Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 212: Մուգիսեղդին Տուղրիլշահը մինչ այդ Ալբիստանի էմիրն էր (1192–1201 թթ.) եւ Լեւոնի վասալը:*

⁷⁵ Ըստ Հեթում պատմիչի՝ պատերազմի ձեռնարկման մյուս պայմաններն էին՝ սեփական կարողությունների հաշվառումը, հակառակորդի վիճակի գնահատականը եւ ճիշտ պահի ընտրությունը. «Բանն պահանջէ, զի որ կամիցի սկսանել զպատերազմ, ունիցի զշորս պայմանս զայսոսիկ. նախ՝ զիրաւացի պատճառս, երկրորդ՝ զկարեւորս ի պէտս սկսանելոյ եւ յանգ հանելոյ զպատերազմ, երրորդ՝ պարտի հետազօտել զվիճակ եւ զկարողութիւն թշնամոյն, չորրորդ՝ պարտի սկիզբն առնել մարտի ի գէպ ժամու»: Հեթում, Պատմութիւն Թաթարաց, էջ 71: *Տես նաեւ՝ Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 859–860).*

հորինել: Սակայն որպիսի նուրբ «լեզվիտիմիստական» բողածածկույթով էլ Լեւոնը պատած լինե՞ր ի՞ր ծրագիրը, նույնիսկ ժամանակակիցների աչից չէր վրիպել, որ նրա բուն նպատակը ոչ թե Ռայմոնդ-Ռուբենի իրավունքի պաշտպանությունն էր, այլ Անտիոքի իշխանապետության բռնակցումը Կիլիկիային⁷⁶: Այսպես, 1216 թվականին Հայոց թագավորի կողմից Անտիոքի գրավումը նկարագրելուց հետո Սմբատ Սպարապետն ավելացնում է. «Իսկ թագաւորն Լեւոն հասեալ յայսպիսի գործոյ կատարումն՝ ցնծայր եւ յոյժ ուրախ էր ընդ աստուածային յաջողումնն, քանզի որում յառաջագոյն ինքեանք ծառայէին, արար զնա ի ներոյ իշխանութեան իւրոյ»⁷⁷: Ավելի դիպուկ է 1217 թվականին գրված մի հիշատակարանի գնահատականը, որի համաձայն՝ Անտիոքում Ռայմոնդ-Ռուբենի հաստատումից հետո Լեւոնը փաստորեն համարվում էր Կիլիկիայի եւ Անտիոքի միավորված պետության թագավորը. «Կատարեցաւ սա ի թուականութեանս Հայկազնեան տոմարի ՌԿԶ, ի հայրապետութեան տեառն Յովհաննիսի Հայոց հեղինակի եւ իմաստուն դիտապետի, եւ ի թագաւորութեան քրիստոսապսակ արքայիս մերոյ Ղևտվնի որ է որդի Ստեփանէի, եղբայր մեծին Ռուբէնայ, որ միապետեալ ունի թագաւորական իշխանութեամբ զամենայն նահանգս Կիլիկեցոց եւ զմեծն Անտաք»⁷⁸:

⁷⁶ Ավելորդ է, թերեւս, նշել, որ գահաժառանգական իրավունքի օգտագործմամբ նվաճողական նպատակներ հետապնդելու երեւույթը շափազանց տարածված էր ողջ միջնադարում, ինչի ամենացայտուն արտահայտությունը Անգլիայի եւ Ֆրանսիայի միջեւ ընթացած հարյուրամյա պատերազմն էր:

⁷⁷ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 219:

⁷⁸ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 107: Պատահական չէ, որ ուշ շրջանի հայկական ժամանակագրությունները, թվարկելով Լեւոնի տիրույթները, զբանց շարքում ընդգրկում են նաեւ Անտիոքը, բացառված չլինելով, սակայն, որ խոսքը վերաբերում է իսավրական Անտիոքին. «Սա տիրեաց ազգին Իսմայէլի Բուսթէմի, եւ Սավրիոյ, էրէկիւոյ, Անտիօքու, Փայասու մինչեւ ցԱտանիլ» (Մինաս Ամդեցի, Ազգաբանութիւն, էջ 41-42); «Սա տիրեաց ՀԲ (72) բերդից, եւ Ռուստամ ազգին Իսմայէլի, եւ Սավրիոյ, Ղայսերու, էրէկու, Անտիօքու՝ մինչ յԱտայիա» (Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 566-567):

**ԶԱՊԵԼ ԹԱԳՈՒՀԻ (1219–1222, 1225–1226 ԹԹ.) ԵՒ ՓԻԼԻՊՈՍ
ԹԱԳԱՎՈՐ (1222–1225 ԹԹ.)**

Ինչպես տեսանք, 1216 թվականին, Ռայմոնդ-Ռուբենի հետ գտավելուց հետո, Լեոնը Հայոց գահի ժառանգորդ հռչակեց իր դստերը՝ Զապելին¹, որն այդ ժամանակ ընդամենը չորս տարեկան էր²: Կիլիկիո թագավորության Արփունի ատյանը վավերացրեց Լեոնի կայացրած որոշումը եւ հավատարմության երդում տվեց Հայոց նոր գահաժառանգին³: Այսպիսով, Կիլիկիո պատմության մեջ երկրորդ անգամ կիրառվեց իգական գծով գահաժառանգության՝ Արեւմուտքից փոխառված իրավունքը: Երկու տարի անց, երբ Հունգարիայի թագավոր Անդրաշ II-ը (1205–1235 թթ.), հինգերորդ խաչակրաց արշավանքից տուն դառնալու ճանապարհին ջերմորեն հյուրընկալվեց Կիլիկիայում, նրա եւ Լեոն թագավորի միջեւ համաձայնություն կայացավ՝ Զապելին ամուսնացնել իր որդիներից մեկի՝ Անդրաշ կրտսերի հետ⁴, վերջինիս Հայոց գահի ժառանգորդ ճանաչելու պայմանով, եւ այդ համաձայնությունը հաստատվեց

¹ *Տե՛ս Մաքատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 220:*

² *Ըստ Ռուդ-Կոլենբերգի՝ Զապելը ծնված պետք է լիներ 1212 կամ 1213 թվականին. տե՛ս Rüdtt-Collenberg, The Rupenides, I (Rup.).*

³ *Տե՛ս Մաքատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 220:*

⁴ *Ըստ էռնուլի՝ V խաչակրաց արշավանքին մասնակցել է նաեւ Լեոնը (Ernoul, Chronique, p. 410–411. հմմտ. նաեւ՝ Ավգերյան, Հայկական նշխարք, էջ 294–295): Եթե սա համապատասխանում է իրականությանը, ապա Հայոց թագավորը պետք է Անդրաշի հետ ծանոթացած լիներ դեռեւս Սուրբ Երկրում:*

համապատասխան փաստաթղթով⁵. «Իսկ յորժամ զօրհն Բրիստոննից ելին յԱֆֆայոյ եւ կամէին գնալ յեզիպտոս,– գրում է Սմբատ Սպարապետը,– թագաւորն Ունգոաց դարձաւ գնալ ի տուն իւր, եւ եկն յաշխարհն Կիլիկեցոց: Եւ թագաւորն Լեւոն ընկալաւ գնա մեծաւ պատուով եւ տարեալ գնա ի Տարսոն բազում սէր եցոյց նմա, եւ ապա արարին կապակցութիւն սիրոյ ընդ միմեանս խնամութեամբ, զի տացէ զորդին իւր փեսայ թագաւորին Լեւոնի՝ լինել ժառանգ աթոռոյն նորա. եւ հաստատեցին գրով եւ երդմամբ»⁶: Խնդիրը տեղում կարգավորելու համար Լեւոնն Անդրաշի հետ Հունգարիա ուղարկեց իր սենեկապետ Ժոսիմին. «Եւ առաքեաց Լեւոն թագաւորն զջամբուլայն իւր զՃօսլինն, զտէրն Համտոյ Քլին, հետ Ունգոաց թագաւորին՝ ի խնդիր ուղւոյ նորա»⁷:

Բացի դրանից, Հայոց եւ Հունգարաց թագավորներն առանձին նամակներով դիմեցին Հռոմի Հռոմիոս III պապին (1216–1227 թթ.), խնդրելով վավերացնել Զապելի եւ Անդրաշ կրտսերի նշանադրության պայմանագիրը: Դժբախտաբար, մեզ է հասել միայն Անդրաշ II-ի գրած նամակը, որում վերջինս, ծանուցելով եղելությունը, ֆահանայապետից խնդրում է հոգ տանել իր մանկահասակ որդուն եւ նրան դնել Հիվանդախնամ եւ Տանարական ասպետների պաշտպանության տակ: Պատասխան նամակում, որը նույնպես պահպանվել է, պապն Անդրաշին տեղեկացնում է, որ հավանություն է տալիս կնքված նշանադրությանն

⁵ Հայկական իրականությանը վերաբերող այդ տիպի վավերագրերից միակը, որ մեզ է հասել, Հեթում Ա-ի դուստր Եւֆիմիայի եւ Սիդոնի կոմս Յուլիանի ամուսնական պայմանագիրն է՝ կնքված 1252 թվականին եւ ստորագրված Հայոց թագավորի ձեռքով. տե՛ս Langlois, Cartulaire, p. 146–147.

⁶ Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 221: Այս իրադարձության ժամանակը ճշտվում է 1218 թվականին գրված հետեւյալ հիշատակարանի շնորհիվ. «Եւ գրեցաւ սա ... ի հայրապետութեան աստուածապատի տեառն Յովհաննիսի, եւ ի թագաւորութեան աստուածապսակ արքային Լեւոնի, յորում էր թուական Հայոց ՌԿէ, ի դառն եւ ի նեղ ժամանակի, յորում ... թագաւորն Ունկոաց եկեալ եհաս ի քաղաքս կիլիկեցոց ի Տարսոն առ թագաւորս մեր եւ երդամք սիրոյ եւ խնամութեան ուխտ հաստատեալ ի միջի իւրեանց՝ նա զառաջի եղեալ ճանապարհն ուղեւորեալ յաշխարհ իւր»։ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 111:

⁷ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 221:

ու հատուկ կոնդակով վավերացնում այն⁸: Գահաժառանգության իրավունքի ուսումնասիրման տեսակետից մեզ չափազանց կարևոր են թվում Անդրաշի եւ պապի նամակների այն տողերը, որոնցում նշվում է, որ Հայոց եւ Հունգարաց թագավորների միջեւ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն՝ Անդրաշ կրտսերը Կիլիկիայի գահին ցմահ տիրելու իրավունքը չպիտի կորցնեւ անգամ այն պարագայում, եթե Ջապելը հանկարծ մահանար ամուսնությունից առաջ (Cum sicut tam ex tuis, quam Charissimi in Christo filii nostri Leonis Armeniae Regis Illustris literis intelleximus, quod inter te et Regem praedictum convenerit, ut natus tuus ipsius filiam accipiat in uxorem, ita ut eidem Regi ratione filiae suae prout haeres succedat in regnum, habiturus illud toto tempore vitae suae, si etiam contingat eam decedere ante quam reductur ab illo)⁹: Այս աննախադեպ պայմանն, ակներեւաբար, հակասում էր գահաժառանգության կիլիկյան եւ արեւմտյան իրավունքի հայեցակարգին, որի գլխավոր սկզբունքը դինաստիայի արյունակցական հաջորդականության ապահովումն էր: Ուստի դժվար է պատկերացնել, որ Լեոնը կարող էր համաձայնել դրան եւ նույնիսկ, ինչպես Անդրաշ թագավորն է գրում, Կիլիկիո Աբուների ատյանի միջոցով վավերացնել այն (juxta plenum suorum Baronum consensum atque juramentum)¹⁰: Որքան էլ, նույն Անդրաշի վկայությամբ, Լեոնն ու իր ատյանը շահագրգռված լինեին այդ ամուսնության միջոցով գորացնելու Կիլիկիո դիրքն այլազգիների դեմ¹¹, միեւնույն է, մեր համոզմամբ, նրանք չէին կարող այդպիսի անխոհեմ զիջում կատարել, որը հղի էր Հայոց թագավորության ապագային սպառնացող լուրջ վտանգներով: Հետեւաբար, բոլորովին չի բացառվում, որ Անդրաշ թագավորը կարող էր խորամանկաբար թյուրիմացության մեջ գցել Հռոմի պապին եւ նրանից կորզել մի փաստաթուղթ, որն իրեն հիմք կտար, փահանայապետի հեղինակությունն օգտագործելով, հետագայում իրա-

⁸ Ձեռքի տակ չունենալով այդ նամակների բնագրերը, օգտվում ենք Ղ. Ալիշանի «Սիսուան» գրքում (էջ 513) նրանցից կատարված ընդարձակ քաղվածքներից:

⁹ Ալիշան, Սիսուան, էջ 513: Մեջբերումը կատարված է Հոնորիոս III-ի նամակից:

¹⁰ Ալիշան, Սիսուան, էջ 513:

¹¹ Անդ:

վունճներ բանեցնել Հայոց թագավորության նկատմամբ:

Սմբատ Սպարապետի վկայությամբ՝ 1219 թվականին, մահվան անկողնում գտնվող Լեւոն թագավորը հավաճում է երկրի իշխաններին եւ անում իր վերջին կարգադրությունները. «Կոչէր զամենեսեան եւ խրատէր զնոսա անհակտելի մնալ ի սէր միմեանց եւ արիագոյն ի պահ աշխարհին, եւ անարատ հաւատ պահել տղայ դստերն իւրոյ Զապիլի, զոր թողոյր ժառանգ տէրութեան իւրոյ. դնէր եւ դաստիարակս տղային իւրոյ զմեծ իշխանն Սիր Ատան»¹²: Իսկ մի քանի տող հետո Սմբատն ավելացնում է. «Եւ որպէս յառաջագոյն պատմեցաւ զորդոյն Ունգոաց թագաւորին, որ հանդերձեալ էր գալ եւ փեսայանալ նմա, զոր պատուէր տայր իշխանաց իւրոց կատարել զեղեալ պայմանս իւր եւ պսակել զդուստրն իւր Զապլի ընդ որդի թագաւորին յորժամ գայցէ, եւ անյապաղ թագաւորեցուցանել զնա ի վերայ ինքեանց»¹³: Ըստ Միխայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության շարունակողի՝ նույնը նա երդմամբ պարտադրում է նաեւ իր դստեր խնամակալ Սիր Ատանին. «Թողլով ժառանգ թագաւորութեանն դուստր մի Զապլի անուն, յանձնելով զնա մեծ իշխանին Սիր Ատնայ սուկալի երդմամբ՝ տալ զնա որդոյ թագաւորին Ունկոաց, մկրտելով զնա Հայ դաւանութեամբ, զի դեռ երեխայ էր»¹⁴: Բայց այդ գործն այդպես էլ գլուխ չեկավ, քանի որ Անդրաշ թագավորն ինչ-ինչ պատնառներով փոխել էր իր միտքը եւ չեղյալ հայտարարել նշանադրության պայմանագիրը. «Ունգոաց թագաւորին որդին ոչ եկն յորժամ լուաւ զմահ թագաւորին Լեւոնի», – լակոնիկ կերպով դրվագն ամփոփում է Սմբատը, հարկ չհամարելով կամ մոռանալով նշել անգամ, թե ինչով ավարտվեց ժուլին սենեկապետի Հունգարիա կատարած դեսպանագնացությունը¹⁵:

Այսպիսով, երկրի տնօրինման լուծը բաժին ընկավ յոթնամյա թագունուն եւ նրա խնամակալ Սիր Ատանին՝ Լեւոն թագավորի ամենահավատարիմ իշխաններից մեկին, «որ էր տէր բազում բերդից եւ գաւա-

¹² Սմբատ, *Տարեգիրք, Վենետիկ, էջ 222*:

¹³ Անդ, էջ 223:

¹⁴ Միխայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1870, էջ 513–514*:

¹⁵ Սմբատ, *Տարեգիրք, Վենետիկ, էջ 225*:

ուց, ի Սելեկիոյ մինչեւ մերձ ի Կայսնօսօս, որ անուամբ նորա կոչի մինչեւ ցայսօր՝ աշխարհ Սիրատնայ: Եւ էր սա աշտինանաւ սենեսկալ Հայոց»¹⁶: Նկատի ունենալով Սիր Ատանին պատկանած տարածքների ընդարձակությունը, Ղ. Ալիշանը նրան համարում է «գլուխ եւ առաջին ամենայն աւագորերոյ պետութեանն կամ պարոնայց նորին»¹⁷: Ատանի անձի նշանակալիության մասին է խոսում նաեւ այն փաստը, որ Լեւոնը 1191 թվականին նրան էր հանձնել Սալահեդդինի կողմից լված եւ հայերի ձեռքն անցած ամանոսյան կարեւոր Պաղրաս բերդը¹⁸: Որոշ աղբյուրների տվյալներով Սիր Ատանը հույն էր՝ ազգությամբ («Հոռոմ էր ազգա») ¹⁹, կամ դավանանքով («էր Հոռոմ դաւանութեամբ») ²⁰: Մրանից Ղ. Ալիշանն իրավացիորեն եզրակացնում է, որ նա հունադավան հայ պետ է եղած լինելը²¹: Ավելին, բազմահմուտ պատմաբանն Ատանի անունը բխեցնում է հայկական Ատոմ անունից, եւ նրան համարում Սենեֆերիմ Արծրունի թագավորի ժառանգների շառավիղը²²:

Հետազոտողներից ոմանք կարծում են, որ Լեւոնը Սիր Ատանից բացի միաժամանակ իր դստեր խնամակալ էր կարգել նաեւ Պապեռոնի եւ Բարձրբերդի իշխան Կոստանդին Գունդստապլին²³, տեսակետ, որը հիմնված է Կիրակոս Գանձակեցու հետեւյալ տեղեկության վրա. «Եւ ետ զնա ի ձեռս կաթողիկոսին եւ երկու մեծամեծ իշխանացն՝ Կոս-

¹⁶ Անդ, էջ 222: Բարհեբրեոսը հաստատում է Սիր Ատանի՝ ընդարձակ երկրի իշխան լինելու պարագան, նրան «ծովափնյա բերդերի տեր» կոչելով. տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 437; Bar Hebraeus, Chronography, p. 375.

¹⁷ Ալիշան, Սիսուան, էջ 313: Տե՛ս նաեւ՝ Dédéyan, La chronique, p. 75n.

¹⁸ Հմմտ. Մմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 209, որտեղ նա հիշատակվում է «իշխանն Պաղրոսայ Ատանն» անունով:

¹⁹ Միխայել Ասորի, Ժամանակագրություն 1870, էջ 514; 1871, էջ 515:

²⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն, էջ 187; Մամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 148:

²¹ Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 314:

²² Անդ, էջ 314–315: Ի դեպ, Ատոմ-Ատան անունների նույնության վարկածը, կարծես թե, հաստատվում է հայկական մի աղբյուրի տվյալներով. «Եւ Ատոմայ, որ է Ատանն, որ պայլ եզ յետ իւր զնա». Յակոբ Սեցի, Պատմություն, էջ 168:

²³ Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 313; Պալասանյան, Պատմություն, էջ 356; Grousset, L'Empire, p. 405; Dédéyan, La chronique, p. 93n.

տանդնի ազգականին իւրոյ, եւ սիր Ատանա, որ էր հոռոմ դաւանութեամբ»²⁴: Կիրակոսի աղբյուրն, ակնհայտորեն, Սմբատ Սպարապետն է, որը թեեւ հստակ կերպով նշում է, որ Լեւոնն իր դստեր խնամակալ էր կարգել Ատանին («դնէր եւ դաստիարակս տղային իւրոյ զվեծ իշխանն Սիր Ատան»), սակայն մի քանի տող հետո ավելացնում է հետեւյալ անորոշ նախադասութիւնը. «Եւ էր սա աշտիճանաւ սենեսկալ Հայոց, յորում յանձն առնէր թագաւորն զդուստրն իւր, հանդերձ պայլին (= Կոստանդին – Լ.Տ.Պ.), հայրապետին եւ իշխանացն ամենեցուն»²⁵: Սմբատի վկայութիւնը, մեր կարծիքով, պետք է հասկանալ հետեւյալ կերպ. խնամակալ կարգելով Սիր Ատանին՝ Լեւոնը միաժամանակ խնդրել էր Հայոց կաթողիկոսին, Կոստանդին Գունդստապլին եւ իր մյուս իշխաններին՝ հոգատարություն եւ հավատարմություն ցուցաբերել Զապելի նկատմամբ, այլապես ստացվում է, որ վերջինիս խնամակալ էին նշանակվել Հայոց բոլոր իշխանները, ինչն անհեթեթություն է: Երկու կամ նոյնիսկ ավելի թվով խնամակալների նշանակումը արտառոց երեւոյթ չէր միջնադարում, ինչն արձանագրված է նաեւ Երուսաղեմի ասիզներում²⁶: 1229 թվականին Սրբազան Հռոմեական կայսր Ֆրիդրիխ II-ը հինգ բարոններից կազմված խնամակալական խորհուրդ ստեղծեց՝ նրանց հանձնելով Կիպրոսի Հենրի I անշափահաս թագավորի նակատագիրը: Իսկ 1320 թվականին, ինչպես դեռ առիթ կունենանք անդադառնալու, Հայոց Օշին թագավորն իր տասնամյա որդու՝ Լեւոն Ե (IV)-ի խնամակալ կարգեց միանգամից չորս իշխանների: Այնուամենայնիվ, Զապելի պարագան այլ է, քանի որ մյուս բոլոր աղբյուրները միանշանակ կերպով վկայում են, որ Կոստանդինը նրա խնամակալ էր կարգվել միայն Սիր Ատանի մահից հետո, այն է՝ 1221 թվականին: Ավելորդ համարելով մեջբերել բոլոր այդ վկայությունները, բավարարվենք ներկայացնելով միայն նրանցից երկուսը. «Այդ ժամանակ իսմայելացիները նետվեցին Հայոց թագավորության խնամակալ Սիր Ատանի վրա... ու սպանեցին նրան, եւ նրա փոխարեն պայլ կարգվեց պարոն Կոստան-

²⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 187:

²⁵ Սմբատ, Տարեգիրք, Վեներտիկ, էջ 222:

²⁶ Հմմտ. Dédéyan, La chronique, p. 93n.

դինը»²⁷ եւ «Իսկ յետ մահուան թագաւորին Լեւոնի եկաց պայլ աշխարհին Ատան, տէրն Մանիանին, որ յետ ատուրց ինչ սպանաւ ի Հաշիշեցն ի քաղաքն Սիս. եւ եղեւ պայլ Կոստանդին Գունդստապլն»²⁸:

Սիր Ատանի խնամակալության ընթացքում հայտնվեց Հայոց գահի եւս մի հավակնորդ՝ հանձին Երուսաղեմի յոթանասուներեքամյա թագավոր Հովհաննէս Բրիենացու, որը Լեւոն Բ (I)-ի մյուս դստեր՝ Ստեֆանի-Ռիտայի ամուսինն էր: Այդ հավակնությունն, ի դեպ, զուրկ չէ իրավական հիմքից, քանի որ նախ՝ նրա կինը Լեւոնի ավագ դուստրն էր, եւ երկրորդ՝ նրանց ամուսնությունից արու զավակ էր ծնվել, որն այդ ժամանակ չորս տարեկան էր, եւ որի անունից էլ Բրիենացին պահանջում էր Հայոց գահը: Ըստ արեւմտյան աղբյուրների²⁹, Լեւոնի մահից հետո Հովհաննէս Բրիենացին, վերցնելով կնոջն ու որդուն, մեկնեց Կիլիկիա՝ տեղանգնելու իր իրավունքին³⁰, ընդ որում, նախապէս ստանալով Հոնորիոս III պապի հավանությունը (1220 թ. փետրվար)³¹: Սակայն այստեղ հասկացողությունը չգտնելով՝ նա վերադարձավ տուն, նախապատրաստվելով զենքի ուժով հասնել իր նպատակին: Այս անգամ արդեն, իր երկրորդ նամակով, Հոմի քահանայապետը խստորեն սաստեց նրան (1220 թ. օգոստոս), եւ վերջինս, զայրացած, ձեծի տակ սպանեց իր կնոջը³²: Մի քանի օր անց մահացավ նաեւ նրա որդին, եւ Հովհաննէս Բրիենացու Կիլիկիայում գահակալելու խնդիրն, ինքնըստինքյան, դուրս եկավ օրակարգից: Իսկ 1225 թվականին կորցնելով նաեւ Երուսաղեմի թագավորության գահը, Բրիենացին վերադարձավ Երուսաղեմ, եւ մի քանի տարի անց արժանացավ Կոստանդնուպոլսի լատինական կայսեր թագին (1231–1237 թթ.):

²⁷ Barhebraeus, Chronicon, p. 442. Անգլերեն թարգմանությունը մի փոքր աղավաղված է. տե՛ս Bar Hebraeus, Chronography, p. 379–380.

²⁸ Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 104: Տե՛ս նաեւ՝ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 522–523; 1871, էջ 515; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 148; Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 217; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 587; Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 168–169:

²⁹ Դրանց ցանկը տե՛ս Mutaflan, Recherches, p. 81n.

³⁰ Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 511:

³¹ Անդ, էջ 525:

³² Անդ, էջ 511:

Շուտով, սակայն, Սիր Ատանն ինքն էլ Հայոց գահին տիրելու հավակնություններ դրսևորեց, ինչի մասին վկայող միակ աղբյուրը Միխայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությունն է՝ «Եւ այսպէս դրուատիմ թագատրեալ ամս քսան երեք,– գրում է Միխայելի հայ շարունակողը,– հանգեալ (Լետն) ի Քրիստոս բարի անուամբ եւ ուղղափառ հաւատով կենցաղավարեալ, թողով ժառանգ թագատրութեանն դուստր մի Զապէլ անուն, յանձնելով զնա մեծ իշխանին Սիր Ատնայ տոսկալի եղմամբ՝ տալ զնա որդոյ թագատրին Ունկոաց, մկրտելով զնա Հայ դաւանութեամբ, զի դեռ երեխայ էր: Որոյ նենգեալ ուխտին ըստ բնական ատելութեանն Յունաց ընդ ազգիս Հայոց, քանզի Հոռոմ էր ազգաւ, խորհեւ ի միտս՝ յինքն առնուլ զիշխանութիւնն, վասն որոյ փութապէս ի խնամոցն Աստուծոյ առեալ զարժանն պատուհասս, սպանաւ ի Հաշիշեանցն, սակաւ ժամանակս ինչ կալեալ զպայլութիւնն»³³: Հայոց խնամակալի՝ Հաշիշյանների կամ Իսմայելիտների կողմից սպանված լինելու փաստը հաստատում են խնդրին անդրադարձած մնացյալ բոլոր աղբյուրները³⁴, բացի Սամուել Անեցու ժամանակագրությունից, որի համաձայն՝ «Սիր Ատանն սպանեալ եղև խորհրդով իշխանացն»³⁵: Սակայն, կարծում ենք, այստեղ որեւէ հակասություն չկա, քանի որ հայ իշխաններն, իրենց մեղսակցությունը հողարկելու համար, կարող էին ոճրագործությունը պատվիրել այդպիսի սպանությունների հարուստ փորձ ունեցող Իսմայելիտներին³⁶: Ուշադրություն պետք է դարձնել այն հան-

³³ Միխայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1870*, էջ 513–514:

³⁴ *Sté Barhebraeus, Chronicon*, p. 437, 442; *Bar Hebraeus, Chronography*, p. 376, 379; *Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1871*, էջ 515; *Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն*, էջ 104; *Հեթում արքայորդի, Ճաշոց*, էջ 587; *Յակոբ Սեցի, Պատմութիւն*, էջ 168:

³⁵ *Սամուել Անեցի, Հաւաքմունք*, էջ 148: Իսկ ըստ Ս. Ռանսիմենի՝ *Հաշիշյաններն Ատանին սպանել են Հիվանդախնամ ասպետների գրգամամբ. տե՛ս Runciman, A History*, III, p. 171.

³⁶ *Իսմայելիզմը մահմեդական շիա ճյուղի ծայրահեղ ազանդներից մեկն էր, որն, սկսած XI դ. երկրորդ կեսից, մեծ տարածում էր գտել Իրանում եւ Ասորիքում: Պարսից Իսմայելիտների կենտրոնն էր Ղազվինից հյուսիս-արեւմուտք գտնվող Ալամուտ ամրոցը, որը հռչակվեց նրանց նշանավոր առաջնորդ Հասան իբն-Սաբրահի օրոք (1090–1124 թթ.), եւ որը 1256 թվականին կործանվեց մոնղոլական*

գամանքի վրա, որ Սամուելը ոչ թե գրում է «սպանեալ եղև յիշխանացն» կամ «ձեռոք իշխանացն», այլ՝ «խորհրդով իշխանացն»:

Ինչպես տեսանք, Սիր Ատանի սպանությունից հետո Զապելի խնամակալ կարգվեց Կոստանդին Գունդստապլը: Թեև աղբյուրները չեն նշում, բայց մեզ թվում է, որ նրա նշանակումն այդ պաշտոնում պետք է տեղի ունեցած լինե՝ Հայոց իշխանների ժողովի, այն է՝ Արփունի ատյանի որոշմամբ: Այս հարցում մեզ նորից օգնության է գալիս Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը, որը նշում է. «Ապա յետ ատուրց ինչ Սիր Ատանն սպանեալ եղև խորհրդով իշխանացն, եւ եղին զԿոստանդին պայլ Հայոց»³⁷: Իսկ մի քանի տող հետո նա ավելի որոշակիորեն արձանագրում է հետեւյալը. «Եւ իշխանն Երզնամբ հնազանդեցան Կոստանդեայ, որ պայլ եղին եւ աւագ պարոն կարգեցին»³⁸:

խան Հուլավուի կողմից: Սիրիական Իսմայելիտները մի փոքրիկ իմամություն էին ստեղծել սիրիա-լիբանանյան լեռների հյուսիսում, որի կենտրոնը Մասիաֆ բերդաքաղաքն էր, Համայից մի փոքր հարավ-արեւմուտք: Նրանց առաջնորդներից ամենահայտնին Սինանն էր՝ ժամանակի լատինական աղբյուրներում հիշատակված «Լեռների ծերունի» անունով (1164–1193 թթ.): Իսմայելիտների գործունեության հիմնական եղանակներից մեկն անհատական ահաբեկչությունն էր, որն իրականացնում էին համայնքի հասարակ անդամները՝ ֆիդայիները (անձնազոհները): Բազմաթիվ մահմեդական սուլթաններ, էմիրներ, ինչպես նաեւ մի քանի ֆրանկ բարոններ զոհ են զնացել Իսմայելիտների դավերին, այդ թվում՝ Սելջուկյան սուլթանության մեծ վեզիր Նիզամ ալ-Մուլքը (1092 թ.), Մոսուլի աթաբեկ Մավդուդը (1113 թ.), Բաղդադի խալիֆ Մուստարշիդը (1135 թ.) եւ Երուսաղեմի թագավոր Կոնրադ Մոնֆերատցին (1192 թ.): Իսմայելիտները միջնադարյան եւրոպացիներին հայտնի էին assassins (մարդասպան) անունով, որը ծագում է արաբերեն hašīšiyun (հաշիշամուլ) բառից: Իսկ Իրանում նրանք ճանաչված էին mulhid (հերետիկոս, հերձվածող) անունով (տե՛ս Петрушевский, Ислам, с. 298; Encyclopaedia of Islam, v. 7, p. 546), որը մուլհեդ/մլհեդ/մլհեդ ձևով արձանագրված է նաեւ որոշ հայկական աղբյուրներում (Կիրակոս Փանձակեցի, Պատմութիւն, էջ 227, 264, 275, 369, 376; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 97, 149): Աղանդի մասին տե՛ս հետեւյալ նորագույն ուսումնասիրությունները. Lewis, The Assassins, 1967 (repr. 2003); Madelung, Isma'iliyya, 1990; Ahmad-Mirza, Syrian Ismailism, 1997; Bartlett, The Assassins, 2002. Հմմտ. նաեւ՝ Петрушевский, Ислам, 1966, с. 276–309.

³⁷ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 148:

³⁸ Անդ:

«եղին» եւ «կարգեցին» բառերը միանշանակ կերպով ցոյց են տալիս, որ Կոստանդինը ոչ թէ Հայոց ինքնակոչ պայլն էր, որպիսի տպավորութիւն կարելի է ստանալ հայկական մյուս աղբյուրներից, այլ Կիլիկիո իշխանների (իմա՝ Արփունի առյուծի) կողմից ընտրված օրինական խնամակալը: Ակնհայտ է նաեւ, որ Կոստանդինն այդ պատվին արժանացել էր Լեւոն թագավորի մորեղբոր որդին լինելու եւ այդու՝ Զապելի մերձավորագոյն ազգականը հանդիսանալու հանգամանքով: Պատահական չէ, որ Կոստանդին՝ պայլ կարգվելու փաստն արձանագրելիս բոլոր աղբյուրներն անխտիր շեշտում են, որ նա Լեւոն թագավորի «ֆետորդին»³⁹ կամ «ազգականն»⁴⁰ էր:

Իր նոր պաշտոնում Կոստանդին Պայլի առաջին նշանակալից գործն, ինչպէս արդեն տեսանք, եղավ Ռայմոնդ-Ռուբենի եւ Վահրամ մարաշախտի ապստամբության ճնշումը: Բայց դա որոշ առումով պյունոսյան հաղթանակ էր, քանի որ Կիլիկիան այդ ժամանակ տակնուվրա էր եղել գահակալական անդադար հակամարտությունների պատճառով ավերներից, եւ Լեւոնի հոյակապ ձեռակերտը գտնվում էր փլուզման եզրին: Երկրի այդ օրհասական վիճակի լավագոյն նկարագրությունն, ինչպէս արդեն առիթն ունեցել ենք նշելու, տալիս է 1221 թվականին Տարսոնում գրված մի ձեռագրի հետեւյալ հիշատակարանը. «Արդ, գրեցաւ լուսատւր եւ կենսունակ սուրբ Աւետարանս ի թուականութեանս Հայոց ի ՈՂ, ի մայրաքաղաքս Տարսոն, յորում ամենայն ոք տատանէր, եւ մեղքն բազմանայր, եւ բարին ի յետկոյս ուղղէր: Յետ մահուան աստուածասէր թագատրին մերոյ Լեւոնի՝ վշտատէս ազգս Հայոց վշտանայր եւ չարն տեղի տայր. որոշեցան ոմանք ի սուրբ ուխտէս եւ ի միմեանց միաբանութենէ, եւ որպէս է ազգիս սովորութիւն՝ ամենայն ոք զինքն յառաջ կոչէր, եւ շնաւանեալ միմեանց՝ լինէր արեան ճապախիս ի

³⁹ Տե՛ս Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն 1870*, էջ 523; 1871, էջ 515; Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 148; *Հեթում Կողիկոսցի, Պատմութիւն*, էջ 104; *Յակոբ Սսեցի, Պատմութիւն*, էջ 169; Barhebraeus, *Chronicon*, p. 442; Bar Hebraeus, *Chronography*, p. 380.

⁴⁰ Տե՛ս Վահրամ Բաբունի, *Ոտանաւոր պատմութիւն*, էջ 217; Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն 1870*, էջ 510; *Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն*, էջ 187; *Հեթում արքայորդի, Ճաշոց*, էջ 587:

բազում տեղիս, եւ գաւառք եւ գեաղք քանդէին եւ եկեղեցիք անդէն: Ի յայսմ դառն եւ ի շփոթման ժամանակի աւարտեցի զգիրս սուրք»⁴¹: Բայց սա դեռ ակեկոծությունների վերջը չէր, եւ զահակայական հակամարտությունները Կիլիկիայում պիտի շարունակվեին եւս մի քանի տարի:

* * *

Ռայմոնդ-Ռուբենի եւ Վահրամ մարաշախտի ապստամբության ջախջախումից հետո երկրի ճակատագրով մտահոգված իշխանները, խորհրդակցելով իրար հետ, որոշեցին վերջ տալ առկա անորոշությանն ու Զապելի համար հարմար ամուսին գտնել՝ դրանով մեկանգամընդամիշտ փակելու համար Հայոց զահաժառանգության ցավոտ խնդիրը⁴²: Միհայել Ասորու հայ շարունակողի վկայությամբ՝ այդ հարցում Հայոց իշխանների միջեւ լուրջ տարածայնություններ էին առաջացել եւ նրանց խորհրդակցությունն, ըստ երեւույթին, հարթ ու հանգիստ չէր անցել. «Իսկ իշխանացն Հայոց բազում անմիաբանութիւն լինէր վասն դնելոյ թագաւոր, զի ոչ հաւանէին միմեանց»⁴³: Այս առիթով մի ուրիշ կարեւոր մանրամասն է հաղորդում Սմբատ Սպարապետը: Ըստ նրա՝ Կոստանդինն ինքն էր նախաձեռնել Հայոց Արժունի ատյանի ժողովի գումարումը եւ, պարծենալով Ռայմոնդ-Ռուբենի ու Վահրամ մարաշախտի դեմ տարած իր հաղթանակով, իշխաններից պահանջել էր շտապ կերպով լուծել Զապելի ամուսնության խնդիրը. «Զի պարոն Կոստանդին պայս ժողովեաց զամէն եկեղեցականն եւ զօրին Հայոց եւ ասաց թէ՛ «պարոնայք, դո՛ւք գիտէք, թէ՛ յի՛նչ նեղութեան գտի զաշխարհս ու զմեր պարոնին յետամնացքն, ու Աստուծով ինչվի յայս բերի: Ու մեր պարոնի դուստրս կարգման եղաւ. ամէնդ թապտիրվեցէք»⁴⁴ որ մեզ պարոն բե-

⁴¹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 125:

⁴² Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 188; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 104; Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 15:

⁴³ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 524; 1871, էջ 517:

⁴⁴ Թապտիրվել բայը, որը նշանակում է խորհրդակցել, կազմված է արաբերենից փոխառված tadbir (խորհուրդ, միջոց, ճար) բառից. տե՛ս Աճառյան, ՀՀԳ, հտ. 2, էջ 192; Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 268:

րեմք, զի ես ուզեմ որ իմ տան եւ իմ որդւոցն անդորրութիւն առնեմ»⁴⁵: Կոստանդին նախաձեռնության բուն իմաստը, սակայն, պարզվում է Բարեբրեոսի ժամանակագրության շնորհիվ, որի համաձայն՝ Ռայմոնդ-Ռուբենի եւ Վահրամ մարաշախտի ապստամբության ջախջախումից հետո Պայլը կարծում էր, որ Հայոց իշխանները, գնահատելով իր վաստակը, կառաջարկեն՝ Զապելին ամուսնացնել իր որդիներից մեկի հետ. «Այդ ժամանակից ի վեր»⁴⁶, – գրում է ասորի ժամանակագիրը, – Պայլն սպասում էր, որ Հայոց մեծամեծներն իրեն կառաջարկեն Լեւոն թագավորի դստերը կնության տալ իր որդիներից մեկին ու թագավորեցնել նրան, քանզի նա հինգ որդի ուներ: Բայց քանի որ դա նրան չասվեց, նա, հոգու խորքում սրտնեղելով, նրանց հետ մի (ուրիշ) լուծում գտավ»⁴⁷:

Ինչեւէ, շատ օրեր խորհրդակցելուց⁴⁸ եւ բուռն վիճաբանություններից⁴⁹ հետո, Հայոց իշխանները որոշեցին Զապելին ամուսնացնել Անտիոքի պրինց Բոհեմունդ IV Միակնանու⁵⁰ որդի Փիլիպոսի (Ֆիլիպ) հետ՝ առաջին հայացքից տարօրինակ թվացող մի ընտրություն, եթե նկատի ունենանք Բոհեմունդի եւ Լեւոն թագավորի տասնյակ տարիներ տեւած թշնամությունը⁵¹: Աղբյուրներից միակը, որ փորձում է բացատ-

⁴⁵ Սմբատ, *Տարեգիրք, Փարիզ, էջ 120–121*:

⁴⁶ Հեղինակը նկատի ունի Ռայմոնդ-Ռուբենի եւ Վահրամ մարաշախտի ապստամբության ավարտը:

⁴⁷ Barhebraeus, *Chronicon*, p. 443; Bar Hebraeus, *Chronography*, p. 380.

⁴⁸ Սմբատ, *Տարեգիրք, Փարիզ, էջ 121*:

⁴⁹ Մխիթայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն 1870, էջ 524; 1871, էջ 517*:

⁵⁰ Հայկական աղբյուրներում հաճախ կոչված՝ «Կոյր բրինձ». տե՛ս Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք, էջ 148; Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 80; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 104; Անանուն, Կարգ թագաւորաց, էջ 257*:

⁵¹ Ինչպէս գրում է Ղ. Ալիշանը, «ընտրեցին խօսել Զապելի փեսայ զայն՝ որ ըստ նախ եղելոց անցիցն յաւուրս Լեւոնի, անհաւատալի իմն թուէր». Ալիշան, *Սիսուան, էջ 527*: Վերջերս լույս տեսած մի հոդվածում Ֆիլիպի մայրը թյուրիմացաբար հայ է համարվում (Bundy, *The Trajectory*, p. 75): Այնինչ հայտնի է, որ նրա մայրը Զիբեյլի տեր Հուգո III-ի (1184–1187 թթ.) դուստր Պլեզանս էր (Rüdt-Collenberg, *The Rupenides*, VI (A), X (G)): Շփոթութիւնն առաջացել է նրանից, որ Հայոց Լեւոն Բ (I) թագավորի քույրը՝ Տալիթան, ամուսնացած էր Զիբեյլի մի այլ տիրոջ՝ Բերտրան I-ի (1193–1217 թթ.) հետ (Անդ, X (G)):

րել տվյալ որոշման դրդապատճառը, Սմբատ Սպարապետն է, ըստ որի՝ Հայոց իշխանները Ֆիլիպ Անտիոքացուն ընտրելիս առաջնորդվել են այն նկատառումով, «զի ի մօտս է, եւ լաւ կարէ օգնել մեզ ի մեր ամէն կարիքի»⁵², այսինքն՝ այդ ամուսնությամբ նրանք ձգտել են փաղափարկաբար դաշինք կնքել Կիլիկիո թագավորության եւ Անտիոքի իշխանապետության միջեւ: Ինչ վերաբերում է նորագույն շրջանի հետազոտողներին, ապա նրանք այդ առթիվ արտահայտել են տարբեր տեսակետներ: Այսպես, ըստ Ղ. Ալիշանի եւ Կ. Մուրաֆյանի՝ Ֆիլիպի ընտրության նպատակն էր վերջակետ դնել հայ-անտիոքյան թշնամանքին⁵³: Իսկ Ռ. Գրուսեն Հայոց իշխանների կայացրած որոշումը բացատրում է «Ռայմոնդ-Ռուբենի մահվան հետեւանքով ֆրանկների մոտ առաջացած վրեժխնդրության զգացումը» գսպելու ցանկությամբ⁵⁴: Մեզ, սակայն, ավելի հավանական եւ հիմնավոր է թվում Կ. Կանեի տեսակետը, որը պաշտպանում են նաեւ Ս. Ռանսիմենը եւ Մ. Հարովիկը⁵⁵: Կանեի կարծիքով՝ Ֆիլիպի ընտրության անհրաժեշտությունը թելադրված էր Կիլիկիայի աշխարհափառական վիճակի վատթարացմամբ, ինչը հետեւանք էր Լեոնի մահից հետո Հայոց թագավորության եւ Ռումի սուլթանության միջեւ ուժերի հարաբերակցության կտրուկ փոփոխության: 1221 թվականին, օգտվելով Կիլիկիայում տիրող խառնակ դրությունից, Ռումի սուլթան Ալաեդդին Քեյ-Կոբազը հայերի ձեռքից խլել էր Իսավրական ծովազերի՝ Կալոնորոսից մինչեւ Կոռիկոսի մոտակայքն ընկած ողջ տարածքը, որն, ինչպես տեսանք, հայտնի էր «Սիր Ատանի աշխարհ» անունով: Ուստի այս վտանգավոր իրավիճակում Հայոց իշխանները, բնակա-

⁵² Սմբատ, *Տարեգիրք, Փարիզ, էջ 121*: *Թերեւս ավելորդ չէ մեջբերել նաեւ արաբ ժամանակագիր Իբն ալ-Ասիրի մեկնաբանությունը, որի համաձայն՝ հայերը Զապել թագունուն Անտիոքի պրինցի որդու հետ ամուսնացրել էին միայն այն բանից հետո, երբ համոզվել էին, որ «թագավորությունը չի կարող կնոջ ձեռքով կառավարվել»:* Իբն ալ-Ասիր, *Կիսկատար պատմություն, էջ 332*:

⁵³ *Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 527*; Mutaflan, *Recherches*, p. 81. *Հմմտ. նաեւ՝ Adalian, Historical Dictionary*, p. 336.

⁵⁴ Grousset, *Histoire*, III, p. 268. *տե՛ս նաեւ՝ Nassibian, Zabel*; p. 212.

⁵⁵ *Տե՛ս Cahen, La Syrie du Nord*, p. 632; Runciman, *A History*, III, p. 172; Hardwicke, *The Crusader States*, p. 541. *Հմմտ. նաեւ՝ Atamian-Bournoutian, Cilician Armenia*, p. 285.

նաբար, պետք է ձգտելին բարեկամանալ Անտիոքի իշխանապետության հետ՝ եթե ոչ անգամ նրանից օգնություն ստանալու ակնկալիքով, ապա գոնե Կիլիկիայի թիկունքն ապահովելու նպատակով: Այս խնդիրը փակելուց առաջ նշենք նաև, որ Արֆունի ատյանի կողմից գահաժառանգ արքայադստեր համար ամուսին գտնելու պրակտիկան տարածված էր նաև խաչակրաց Արեւելքում: Այսպես, 1135 թվականին Անտիոքի բարոնները խնդրեցին Երուսաղեմի թագավոր Ֆուլկին՝ հարմար ամուսին փնտրել իշխանապետության գահաժառանգ Կոնստանսի համար: Իսկ 1210 թվականին Երուսաղեմի իշխանների Գերագույն ատյանը նույնպիսի խնդրանքով դիմեց Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ-Օգյոտսին՝ գահաժառանգ արքայադուստր Մարիա Մոնֆերատցուն ամուսնացնելու նպատակով:

Փիլիպոս Անտիոքացին Կիլիկիա ժամանեց 1222 թվականին եւ, ամուսնանալով Զապելի հետ, թագադրվեց նույն տարվա հունիս ամսին⁵⁶: Հիշեցնենք, որ արեւմտյան իրավունքի համաձայն՝ իգական գծով գահաժառանգության դեպքում, արքայադստեր ամուսինը երկիրը կառավարում էր ոչ թե լիարժեք թագավորի, այլ թագակիր-գործակցի (prince consort) կարգավիճակով, այն է՝ համատիրության իրավասությամբ⁵⁷: Այս առումով մեզ ուշագրավ են թվում Հովհաննես Դարդելի «եւ թագատրեցին Ֆիլիպ եւ տիկինն Զապել ի միասին» խոսքերը⁵⁸: Սմբատ Սպարապետի տվյալներով՝ նախքան ամուսնությունը, հայ իշխանների կողմից Փիլիպոս Անտիոքացու առջև դրվել էր երեք պայման, այն է՝ կենցաղավարել հայկական բարեբով («որ հայենակ կենայր»), ընդունել հայկական դավանանքը («զեկեղեցին եւ զսեղանն հայենակ տաներ») եւ հարգել բոլոր մարդկանց (իմա՝ Հայոց իշխանների) իրավունքները («զամէն մարդ յիւր իրաւունքն պահեր») ⁵⁹: Վարդան Արեւելցին հիշատակում է այս պայմաններից միայն առաջին երկուսը՝ «հայադասան եւ հայասէր լինել» ⁶⁰:

⁵⁶ *Stéu Cahen, La Syrie du Nord, p 632.*

⁵⁷ *Հմմտ. Բասմաջյան, Լեւոն Ե, էջ 19:*

⁵⁸ *Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 16:*

⁵⁹ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 121:*

⁶⁰ *Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 141: Տե՛ս նաեւ՝ Յակոբ Սեւցի, Պատմութիւն, էջ 171:*

Բնականաբար, չափազանց թանկ գնահատելով երկնփյց իրենց բաժինը կա՛մ Հայոց թագավորության գահը, Փիլիպոսն ու իր հայրը «ուխտով եւ երդմամբ» ընդունեցին այդ պայմանները⁶¹:

Գահակալձևից շատ ժամանակ շանցած, Փիլիպոս թագավորը, Բոհեմունդ IV-ի օգնությամբ, վանեց սելջուկների ձեռնարկած մի հարձակում դրանով, կարծես թե, մասամբ արդարացնելով հայ-անտիոքյան դաշինքից Հայոց իշխանների փայփայած ակնկալիքը⁶²: Բայց շուտով, ինչպես Վարդան Արեւելցին է գրում, «երդմնագանց եղեալ ի յեղեալ ուխտէն»⁶³, Փիլիպոսն սկսեց կոպտորեն ոտնահարել Հայոց իշխանների եւ եկեղեցու իրավունքները: Միջնադարյան ժամանակագիրներն այդ առթիվ Փիլիպոսին ներկայացնում են հետեւյալ ծանր մեղադրանքները.

ա. նա արհամարհում, նվաստացնում եւ ծաղրի էր ենթարկում հայ իշխաններին⁶⁴.

բ. ուզում էր վերացնել Կիլիկիո բոլոր երեւելիներին եւ նրանց փոխարինել ֆրանկ բարոններով⁶⁵.

գ. կողոպտում էր Հայոց թագավորության արժույթի գանձերը եւ դրանք ուղարկում Անտիոք⁶⁶.

դ. ցանկանում էր «խսպառ ջնջել» Հայոց եկեղեցիները⁶⁷.

ե. հայերին մտավախություն էր ներշնչում, «որ ֆրանկները կարող են գրավել իրենց երկիրը»⁶⁸:

Այս ամենն արդեն իսկ բավական էր Կիլիկիայում Փիլիպոսի դեմ

⁶¹ Վարդան Վարդապետ, *Հաւաքումն, էջ 141: Հմմտ. Cahen, La Syrie du Nord, p 632.*

⁶² *Հմմտ. Cahen, La Syrie du Nord, p 632.*

⁶³ Վարդան Վարդապետ, *Հաւաքումն, էջ 141:*

⁶⁴ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 225; Սամուէլ Անեցի, Հաւաքումնք, էջ 148; Barhebraeus, Chronicon, p. 443; Bar Hebraeus, Chronography, p. 380.*

⁶⁵ *Տե՛ս Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 104; Barhebraeus, Chronicon, p. 443; Bar Hebraeus, Chronography, p. 380; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 121:*

⁶⁶ *Տե՛ս Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 141; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 225; Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 189:*

⁶⁷ *Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 104:*

⁶⁸ *Իրն ալ-Ասիր, Կիսկատար պատմութիւն, էջ 332:*

համատարած դժգոհություն էլ զայրույթ առաջացնելու համար: Սակայն Հայոց իշխանների համբերության բաժակն, ըստ երեւոյթին, լցվեց միայն այն բանից հետո, երբ անտիոքացի թագավորն, իր հոր խորհրդով, փորձեց ձեռքակալել Կոստանդին Պայլին եւ Կոստանդին Լամբրոնացուն՝ Հայոց ապագա թագադիր իշխանին. «Փիլիպ թագաւորն թպտոլվ հօր իւրոյ կամեցաւ ըմբռնել զերկուս մեծամեծ իշխանսն՝ զպարոն Կոստանդինն, որ էր թագատրահայրն, եւ զպարոն Կոստանդին Լամբրունին տէրն»⁶⁹: Սակայն Հայոց իշխանները, Կոստանդին Պայլի գլխավորությամբ, կանխեցին Փիլիպոսին ու, բռնելով նրան Անտիոք փախչելու ճանապարհին, Թիլ-Համդուն բերդում, տարան Բարձրբերդ եւ արգելափակեցին այդ բերդաֆաղափ բանտում: Անտիոքի պրինց Բոհեմունդ IV-ն սկզբում փորձեց ֆաղցրությամբ խոսել հայերի հետ եւ, գալով Թիլ-Համդուն, խնդրեց ազատ արձակել իր որդուն, դրա դիմաց խոստանալով ձեռք փաշել Հայոց գահից, սակայն, երբ իմացավ, որ Փիլիպոսը մահացել է թունավորումից, անեծքներ ու սպառնալիքներ կարդալով, ետ դարձավ⁷⁰: 1225 թվականին նա փորձեց իրականացնել այդ սպառնալիքները եւ, դաշինք կնքելով Ռումի սուլթան Ալանդդին Քեյ-Կոբադի հետ, պատրաստվեց հարձակվելու Կիլիկիայի վրա: Այդ նպատակով Բոհեմունդը դիմեց նաեւ Հոռմի պապին՝ ստանալու համար նրա համաձայնությունը: Ու թեեւ ֆահանայապետը սաստեց նրան, վերջինս այդուհանդերձ չհրաժարվեց իր մտքից⁷¹: Այդ ընթացքում սելջուկները, Անտիոքի հետ ձեռքբերված պայմանավորվածության համաձայն, հյուսիսից ներխուժելով Կիլիկիա, գրավեցին Ճաննի, Կանչի եւ Մազոտ-խաչ բերդերը⁷²: Դրանից հետո Բոհեմունդն ինքը շարժվեց դեպի Հայոց երկիր, գրավեց ձկեր գավառը, հասավ մինչեւ Թիլ-Համդուն, բայց հաջողության չհասնելով, ետ դարձավ⁷³: Առաք ժա-

⁶⁹ Միխայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1871*, էջ 517-518; 1870, էջ 525:

⁷⁰ *Sté u Barhebraeus, Chronicon*, p. 443; *Bar Hebraeus, Chronography*, p. 381. *Sté u նաեւ` Lignages d'Outremer*, p. 67, ըստ որի՝ Ֆիլիպին անձամբ սպանել էր Կոստանդին Պայլը:

⁷¹ *Sté u Իբն ալ-Ասիր, Կիսկատար պատմություն*, էջ 332:

⁷² *Sté u Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870*, էջ 525; 1871, էջ 518: *Սելջուկյան այդ արշավանքի մասին տե՛ս նաեւ` Cahen, Pre-Ottoman Turkey*, p. 124-125.

⁷³ *Sté u Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870*, էջ 525; 1871, էջ 518:

մանակագիր Իբն ալ-Ասիրը Բոհեմունդի ձախողումը բացատրում է նրա-
 չով, որ նախ՝ Հիվանդախնամ եւ Տանարական ասպետները չէին միացել
 նրան, եւ երկրորդ՝ Կոստանդին Պայլն, իր հերթին, դաշինք էր կնքել Հալե-
 պի աթաբեկ Շիհաբեդդինի հետ⁷⁴:

Նկատի ունենալով հայ-անտիոքյան այս նոր պատերազմի պատ-
 նառած աղետները, հարց է ծագում, թե ինչու Կոստանդինն, այնուամե-
 նայնիվ, նախընտրեց սպանել տալ Փիլիպոսին եւ ոչ թե ազատ արձա-
 կել նրան՝ այդպիսով խուսափելով Կիլիկիայի համար առաջացած
 վտանգավոր զարգացումներից: Մեզ թվում է, Հայոց պայլի դժնի
 արարքը ոչ թե սոսկ ատելության կամ թշնամանքի դրսևորում էր, այլ
 գահաժառանգության իրավունքի տրամաբանությամբ թելադրված հար-
 կադրական ֆայլ: Օձյալ թագավոր լինելու հանգամանքով՝ ազատության
 կամ թեկուզ վտարանդիության վիճակում հայտնված Փիլիպոսը հետա-
 գայում կարող էր լուրջ խնդիրներ հարուցել Կիլիկիայի առջեւ, իրավա-
 կան հիմնավորմամբ վիճարկելով Հայոց գահը: Այդպիսի մի նախա-
 դեպ արձանագրվել է Երուսաղեմի թագավորության պատմության մեջ:
 1190 թվականին, երբ մահացել էին Սիբիլ թագուհին ու նրա երկու
 դուստրերը, Գի Լուսինյանը, որը Երուսաղեմի թագը կրում էր միայն
 թագակիր-գործակից (prince consort) լինելու հանգամանքով, հայտնվել
 էր գահագուրկ լինելու վտանգի առջեւ, որովհետեւ ըստ ֆեոդալական
 իրավունքի՝ գահի օրինական ժառանգորդ էր դարձել Սիբիլի փոյր Իզա-
 բելը: Կոնրադ Մոնֆերատցին անմիջապես ամուսնացել էր վերջինիս
 հետ եւ միանգամից ներկայացրել Երուսաղեմի գահին տիրելու իր հայ-
 ցը: Երուսաղեմի թագավորության Գերագույն ատյանը, հաշվի առնե-
 լով Գի Լուսինյանի օձյալ լինելու պարագան, 1191 թվականին հար-
 կադրված կայացրել էր հետեյալ փոխզիջումային որոշումը. Գին մինչեւ
 իր մահը պահպանում է Երուսաղեմի գահը, որից հետո միայն այն
 անցնում է Կոնրադ Մոնֆերատցուն:

Մեր կարծիքով՝ ուշադրության արժանի է եւս մեկ հանգամանք: Ինչ-
 պես տեսանք, միջնադարյան ժամանակագրությունները Փիլիպոս թա-
 գավորի տապալումը ներկայացնում են որպես նրա շահատակություն-

⁷⁴ Տե՛ս Իբն ալ-Ասիր, *Կիլիկիայի պատմություն*, էջ 332-333:

ներից դժգոհ հայ իշխանների միահամուտ ըմբոստության արդյունք, թափցնելով այդ գործում Կոստանդին Պալլի ունեցած գլխավոր դերակատարությունը, ինչի մասին ակնարկում են միայն հատուկենտ աղբյուրներ⁷⁵։ Տեսամք նաև, որ բոլոր հայ եւ ասորի ժամանակագիրներն էլ, որոնք իրենց աշխատությունները գրել են դեպքերից առնվազն երեսուրդ-հարասուն տարի հետո, միաձայնորեն ծանրագույն ամբաստանություններ են ուղղում Փիլիպոսի հասցեին։ Սակայն, նկատի ունենալով, որ միաձայնությունն ամենեւին էլ նշմարտացիության չափանիշ չէ, մենք չենք բացառում, որ այդ ամբաստանությունները կարող էին հորինված կամ չափազանցված լինել Կոստանդին Պալլի անձի պաշտամունքի⁷⁶ ձեւավորման շրջանում վերջինիս իրականացրած պետական հեղաշրջումն արդարացնելու նպատակով։ Դժվար չէր, օրինակ, Փիլիպոսի կողմից մեկ-երկու իշխանի իրավունքների ոտնահարումը ներկայացնել որպես բոլոր հայ իշխանների դեմ ուղղված փառապաշտություն, մի քանի ֆրանկ պաշտոնյաների նշանակումը դիտել որպես երկրի ֆրանսականացմանն ուղղված միտում կամ արհունի պալատից իր հորն ուղարկված մի փոքրիկ նվերը համարել Հայոց գանձարանի կողոպուտ եւ այլն։ Այսպիսի ենթադրության հիմք է տալիս այն փաստը, որ ի տարբերություն հետագա հեղինակների, իրադարձությունների բուն ժամանակակիցները նույնիսկ դրվատական խոսքեր են ուղղում Փիլիպոս թագավորի հասցեին։ 1222 թ. մի հիշատակարանում նրա գահակալման մասին ասվում է. «Աստուած կամեցաւ եւ թագաւոր ետ, եւ սակաւ մի խաղաղացաւ յայս դառն ամբս»⁷⁷, իսկ 1223 թվականին գրված հիշատակարանում Փիլիպոսը հորջորջվում է անգամ «մեծն» տիտղոսով. «ի ժամանակս մեծի արհային Փիլիպոսի»⁷⁸։

⁷⁵ *Տե՛ս Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 525; 1871, էջ 518; Barhebraeus, Chronicon, p. 443; Bar Hebraeus, Chronography, p. 380–381; Gestes des Chiprois, p. 665–666, 671; Lignages d'Outremer, p. 67.*

⁷⁶ *Այդ մասին մանրամասն տե՛ս հաջորդ ենթագլխում:*

⁷⁷ *Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 129:*

⁷⁸ *Անդ, էջ 139:*

ՀԵԹՈՒՄ Ա ԹԱԳԱՎՈՐ (1226–1269 թթ.), ԶԱՊԵԼ ԹԱԳՈՒՀԻ ԵՒ ԿՈՍՏԱՆԴԻՆ ՊԱՅԼ

Փիլիպոսի մահից հետո Հայոց Արփունի ատյանը նորից կանգնած էր Զապել թագուհուն ամուսնացնելու բարդ խնդրի առջեւ: Բնականաբար, Կոստանդին Պայլը կրկին պիտի փորձեր իրականացնել մեկ անգամ արդեն ձախողված իր ծրագիրը եւ Հայոց գահին բազմեցնել իր որդիներից մեկին՝ դրա համար ունենալով երկու նոր ծանրակշիռ փաստարկ: Առաջին՝ Հայոց իշխանների նախորդ որոշումն ակնհայտորեն սխալ էր դուրս եկել, եւ երկրորդ՝ Փիլիպոսի տապալման գործում ներդրած մեծ ավանդի շնորհիվ Կոստանդինի դիրքերն անհամեմատ ամրապնդվել էին: Բայց հակառակ այդ պարագային, եւ հակառակ ժամանակագիրների այն հավաստիացումներին, որ Հայոց իշխանները միաբանությամբ որոշել են Զապելին ամուսնացնել Կոստանդինի որդի Հեթումի հետ¹, հիմքեր կան պնդելու, որ այդ որոշումն, այնուամենայնիվ, կայացվել է Արփունի ատյանի անդամների լուրջ դիմադրությունը հաղթահարելուց հետո: Դրա միակ վկան Միխայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության շարունակողն է, ըստ որի՝ «յետ բազում ժխորմանց եւ ամբոխից եւ վիճմանց ընտրեցաւ որդին պարոն Կոստանդեայ ի թագատրոսին»²: Հայոց իշխանների դիմադրությունը բացատրվում

¹ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 225; Փարիզ, էջ 121; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 141; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 148; Հեթում Կողբկոսցի, Պատմութիւն, էջ 105; Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 220:*

² *Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 514–515; 1871, էջ 506:*

է նրանով, որ նրանք շատ լավ էին հասկանում, թե իրենց համար ինչ հետեւանքներ կունենար տասնմեկամյա մանկան գահակալումը: Դա նշանակում էր, որ առնվազն ինը տարի, այսինքն՝ մինչեւ Հեթումի չափահաս դառնալը³, երկրի կառավարման ղեկը մնալու էր Կոստանդին Պայլի երկաթե բռունցքում, ինչը, բնականաբար, բոլորովին չէր մտնում հայ ավատատերերի հաշիվների մեջ: Ուստի կարելի է պատկերացնել, թե Կոստանդինից ինչպիսի ջանքեր պիտի պահանջվեին, չբացառելով անգամ սպառնալիքները, Հայոց իշխանների դիմադրությունը կոտորելու եւ իր նպատակին հասնելու համար, որի մասնակի վկայությունն է, թերեւս, Կիրակոս Գանձակեցու հետեւյալ տեղեկությունը. «Եւ իշխանն մեծ Կոստանդինն հաւանեցոյց զկաթողիկոսն եւ զայլս ոմանս ի մեծամեծացն թագաւորեցուցանել զորդի իւր Հեթում»⁴: Ուշադրություն պետք է դարձնել այն բանին, որ ըստ Կիրակոսի՝ կաթողիկոսն ու Հայոց մեծամեծները ոչ թե իրենք «հաւանեցան» այդ գաղափարին, այլ Կոստանդինը «հաւանեցոյց» նրանց, այն էլ ոչ բոլորին (ոմանս): Իսկ թե նա ինչպէս կհավանեցնէր, մենք արդէն գիտենք: Այս առիթով ավելի ուղղախոս է Հեթում արքայորդու ճաշոցի հիշատակագիրը, որն անտեսելով նույնիսկ Արփունի ատյանի գոյությունը, գրում է, որ Սիր Ատանի սպանությունից հետո «ամբարձեալ ազգական թագաւորին Լեւոնի պարոն Կոստանդին՝ էառ յինքն զիշխանութիւնն Հայոց, եւ զդուստր թագաւորին Լեւոնի զՋապել ամուսնացոյց որդի իւր ի Հեթում»⁵:

Ձեռք բերելով հանդերձ Արփունի ատյանի հավանությունը, Կոստանդինի առջեւ ծագեց մի նոր բարդություն: Փիլիպոսի սպանությունից հետո Ջապել թագունին փախել էր Սելեւկիա եւ ապաստան գտել իր հոր բարեկամների՝ Հիվանդախնամ ասպետների մոտ⁶: Պայլն, ստիպ-

³ Ի տարբերություն Լատին Արեւելքի, որտեղ թագավորը կամ գահաժառանգը չափահաս էր համարվում 15 տարեկանում, Կիլիկիայում չափահասություն սահմանը 20 տարին էր: Այդ մասին մանրամասն տե՛ս սույն հատորի «Լեւոն Ե (IV)» ենթագլխում:

⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 189:

⁵ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 587:

⁶ Տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 444; Bar Hebraeus, Chronography, p. 381; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 121-122; Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 189:

ված, դիմեց Հայոց կաթողիկոս Կոստանդին Քարձրբերդցուն եւ Հակոբիկ ասորիների պատրիարք Իգնատիոս II-ին՝ նրանց խնդրելով գնալ Սելեւկիա ու, համոզելով Զապելին, բերել Տարսոն, բայց պատվարժան հայրապետները, հաջողության չհասնելով, ձեռնունայն ետ դարձան⁷: Մանկամարդ թագուհին նույնիսկ համարձակություն էր ունեցել կշտամբել Հայոց կաթողիկոսին եւ Ասորոց պատրիարքին՝ նրանց կոչելով մարդասպանների եւ անմեղ արյուն հեղողների բարեկամ⁸: Այնժամ Կոստանդին Պայլն անձամբ գնաց Հիվանդախնամների մոտ եւ խնդրեց իրեն հանձնել Զապելին: Անպարկեշտ սակարկություններից հետո Հիվանդախնամներն, իրենց խիղըր հանգստացնելու համար, փարիսեցիաբար Սելեւկիա ֆաղաբը վաճառեցին Կոստանդինին, եւ այդպիսով Զապելն ընկավ վերջինիս ձեռքը⁹: Այնուհետեւ Կոստանդինը տասնչորսամյա թագուհուն բռնությամբ ամուսնացրեց իր տասնմեկամյա որդու հետ եւ փութով կազմակերպեց Հեթումի եւ Զապելի թագադրման հանդիսավոր արարողությունը, որը տեղի ունեցավ Տարսոն ֆաղաբում, 1226 թվականի գարնանը¹⁰: Կարող է հարց ծագել, թե ինչու պայլը նախընտրեց Զապելին ամուսնացնել Հեթումի եւ ոչ թե իր ավագագույն որդու՝ Հայոց ապագա սպարապետ Սմբատի հետ: Մեր կարծիքով՝ դա կարող է ունենալ երեք բացատրություն. կա՛մ այն է, որ վերջինս արդեն ամուսնացած էր, կա՛մ, որ նա իր բարեմասնություններով զիջում էր Հեթումին, կա՛մ էլ, որ ավելի հավանական է, դա Կոստանդինին ձեռնտու չէր, քանի որ տասնութամյա թագավորին՝ միջնադարի չափանիշներով հասուն տղամարդուն, շատ ավելի դժվար կլինեւր կառավարել, քան մանկանը:

Ինչեւիցե, Զապել թագուհին, նույնիսկ թագադրվելուց հետո չհաշտվեց իր դրության հետ, քանի որ խորապես սիրահարված լինելով Փիլիպոսին՝ ֆանամյա փառահեղ տղամարդուն¹¹, նա չէր կարող պատկե-

⁷ *St' u Barhebraeus, Chronicon, p. 454; Bar Hebraeus, Chronography, p. 389.*

⁸ *Անդ.:*

⁹ *St' u Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 122; Barhebraeus, Chronicon, p. 454; Bar Hebraeus, Chronography, p. 389.*

¹⁰ *St' u Barhebraeus, Chronicon, p. 455; Bar Hebraeus, Chronography, p. 390.*

¹¹ *St' u Barhebraeus, Chronicon, p. 444; Bar Hebraeus, Chronography, p. 381.*

րացնել, թե ինչպես պիտի կենակցի երեխայի հետ: Ուստի 1230 թվականին նա նորից փախավ Սելեկիա եւ Կիպրոսից ժամանած իր մոր հետ ապստամբեց Կոստանդինի դեմ, նրան անպատվությամբ դուրս էջելով Բաղաբից, ինչի մասին վկայում է իրադարձությունների ժամանակակից հիշատակագիրը. «Ի թուին Հայոց ՈՀԹ՝ (1230), յամիս աւգոստոս ԻԵ (25) աւրն, յաւուր կիրակէի եկն առ մեզ Սարգիս հայրն եւ երբ մեզ վատ զրոյց, որ եկեալ Լեւոն թագաւորին թագունի ի Կիպրուսա ի Սելեկիա, որ տենայր զիր դուստրն, որ էր Հեթում թագաւորին թագունի: Եւ տարան զթագունին ի Սելեկիա, եւ անդ ետես զմայրն իւր, եւ խաբեց զթագաւորին հայրն զպարոն Կոստանդին եւ մտաւ ի Սելեկիա, եւ մուտեց¹² հետ իր մարն, եւ զպարոնն հանին Բաղնաւ¹³ բերդէն: Այս այսպէս գործեցաւ, եւ եմֆ յահի եւ յերկեղի, այլ յառաջկայն Աստուծոյ է գիտելի»¹⁴: Աստծու գիտեցածը մենք էլ չգիտենալով, մնում է ենթադրել, որ խնդիրն ինչ-որ կերպ լուծելուց հետո Կոստանդին Պայլը Զապելին կրկին բռնությամբ բերել էր իր ամուսնու մոտ: Սակայն, ըստ երեւոյթին, դրանից հետո էլ թագունին դեռ երկար ժամանակ չէր համակերպվել իր վիճակին, քանի որ ըստ Բարհեբրեոսի՝ նա տաս տարի խուսափել էր կատարել իր ամուսնական պարտքը¹⁵: Ի դեպ, այս տեղեկությունն անհավանական չպետք է համարել, հաշվի առնելով, որ Հեթումի եւ Զապելի առաջնեկը ծնվել է 1236 թվականին, զարմանալի զուգահեռությամբ՝ նրանց ամուսնությունից ուղիղ տաս տարի հետո:

Այսպիսով, Կոստանդին Պայլի իրականացրած պետական հեղաշրջման հետեւանմանով¹⁶ Կիլիկիո թագավորության զահն անցավ Ռուբին-

¹² Մուտել = ապստամբել, ըմբոստանալ. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 155: Մեր կարծիքով՝ փոխառված է ասորերեն *mtad* բառից, որն ունի նույն նշանակությունը:

¹³ Քաշանք = անպատվություն, նախատինք. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 432:

¹⁴ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 166: Մեզ թվում է, Սմբատ Սպարապետը շփոթմամբ իրար է խառնել 1225 եւ 1230 թվականներին տեղի ունեցած տարբեր դեպքերը. տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 121–122:

¹⁵ Տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 444–445; Bar Hebraeus, Chronography, p. 390.

¹⁶ Բնորոշումը Գ. Միքայելյանինն է. տե՛ս Микаелян, История, с. 293. Հմմտ. նաեւ՝

յանների երբեմնի ախոյանների՝ Հեթումյան զերդաստանի ներկայացուցիչների ձեռքը: Այս փաստն, ինչպես արդեն առիթ ունեցել ենք նշելու¹⁷, հետազոտողներից շատերին, բնականաբար, հիմք է տվել պնդելու, որ Կիլիկյան Հայաստանն ունեցել է երկու թագավորական հարստություն՝ Ռուբինյան եւ Հեթումյան¹⁸: Սակայն զուտ իրավական տեսակետից սա արհեստական բաժանում է, քանի որ Հեթումի հաջորդները զահր ժառանգել են ոչ թե որպես նրա, այլ Զապել թագուհու, այսինքն՝ Ռուբինյան զարմի սերունդներ: Ոչ այլ ոք, քան հենց իրենք՝ «Հեթումյան» թագավորներն, իրենց գիտակցել են որպես Ռուբինյան հարստության ներկայացուցիչներ՝ փաստ, որն արձանագրված է նրանց պաշտոնական հրովարտակներում¹⁹.

Անոն Գ-ի (II) 1271 թ. հունվարի հրովարտակը. «Lion, en Christ Deu feel, roy de tote Hermenie, fiz dou Deu amant e bien aorant sant roy d'Armenie Hayton, en Christ reposé, de puisanz et haus Ropinanz»²⁰.

Անոն Գ-ի (III) 1307 թ. մայիսի 20-ի հրովարտակը. «Lyon, en Christ feable, roy de tote Ermenie, fis dou Christ amant et bien creable seignor d'Ermenie Thoros, et en nom du segont roy amant et bien aorant roy de toute Hermenie, Lyon en Christ repose, des puisans et haus Ropinans»²¹.

Անոն Ե-ի (IV) 1321 թ. մարտի 1-ի հրովարտակը. «Nous Lion, feel de Jesu Crist, par la grâce et la misericordie de Dieu, roy de tous les Armens, fis

Քոռնազյան, Կիլիկիա, էջ 697:

¹⁷ Տե՛ս Տեր-Պետրոսյան, *Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 456-457:*

¹⁸ Տե՛ս Grousset, *Histoire*, III, p. 269; Grousset, *L'Empire*, p. 396; Քոռնազյան, *Կիլիկիա, էջ 698*; Dédéyan, *Histoire*, p. 310; Mutaflan, *La Cilicie*, I, p. 417; Mutaflan, *Recherches*, p. 82; Adalian, *Historical Dictionary*, p. 226-231. Քերեւս ավելորդ չէ նշել, որ պատմաբաններից ոմանք ընդունում են նաեւ երրորդ՝ Լուսինյան հարստության գոյությունը:

¹⁹ Քե՛սե այդ հրովարտակների համապատասխան հատվածները բերված են սույն աշխատության առաջին հատորում (*Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 456-457*), սակայն նյութի ամբողջականությունն ապահովելու նկատառումով, հարկ ենք համարում այստեղ կրկնել դրանք:

²⁰ Langlois, *Cartulaire*, p. 151-152.

²¹ Անգ, էջ 166-167:

dou devout et feel en Christ roy Ossim, fils de bone memoire roy Lion, **haut et puissant des Ropignans**»²².

Լեւոն Ե-ի (IV) 1331 թ. նոյեմբերի 24-ի հրովարտակը. «Լեւոն ի Քրիստոս Աստուած հաւատացեալ, շնորհամն եւ ողորմութեամբ նորին, թագաւոր ամենայն Հայոց, որդի ի Քրիստոս հանգուցեալ արքային Հայոց Աւշնի առաջնոյ, կարող եւ բարձր ի պա(յ)ծառ եւ բարի արմատոյն Ըռաւթինաց»²³.

Լեւոն Ե-ի (IV) 1333 թ. նոյեմբերի 10-ի հրովարտակը. «Leo, Dei gratia adiutorioque ejus, rex omnium Armenorum, filius in Christo quiescentis regis Armenorum Ossini, **potens et sublimis de Rubinis**»²⁴.

Ռուբինյան է կոչված նույնիսկ զտարյուն «Հէթումյան» առաջին թագավորը, այն էլ ոչ պատահական մարդու, այլ իր եղբոր՝ Սմբատ Սպարապետի կողմից. «Յորս թագ(ւոր) ի Հայաստան/ Հէթում եղբայրս իմ պանծական.../ Ի մեծ թվականս Ձ եւ Ե/ ի Ռուբինեան զարմէն տենչական»²⁵: Թագմաթիվ են նաեւ նույն ընկալումը հավաստող միջնադարյան հեղինակների եւ հիշատակագիրների վկայությունները²⁶: Այս առումով ուշագրավ է մանավանդ այն փաստը, որ Վահրամ Բաբունու հայտնի չափածո գրվածքը եւ Հէթում Կոռիկոսցուն վերագրվող ազգաբանությունը, որոնց շարադրանքը մասամբ ծածկում է նաեւ «Հէթումյան» հարստության ժամանակաշրջանը, համապատասխանաբար վերնագրված են «Պատմութիւն Ռուբինեանց» եւ «Պատմութիւն ազգին Ռովթինանց»: Եթե նկատի առնենք, որ Վահրամ Բաբունին եղել է Լեւոն Գ (II) թագավորի ֆարտուղարը եւ իր երկն էլ գրել է վերջինիս պատվերով, ապա նշված փաստն

²² Անդ, էջ 182:

²³ Անդ, էջ 186:

²⁴ Անդ, էջ 193:

²⁵ Կիլիկիայի Չանտըր-բերդի եկեղեցու 1256 թ. արձանագրությունը. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 73:

²⁶ Տե՛ս Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 88ա; Վահրամ Բաբունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 56, 58; Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 181; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 100; Գրիգոր Ակներցի, Պատմութիւն, էջ 65; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 631, 706, 718, 726:

առավել ուշագրավ է դառնում²⁷: Ավելի հանգամանորեն, այն է՝ ազգաբանության տվյալներով, Վահրամը Ռուբինյանների եւ Հեթումյանների նույնությունը հիմնավորում է Լեոն Գ (II) թագավորի օժման արարողության ժամանակ արտասանած «Բան ի Յայտնութիւն Տեառն» ճառում²⁸:

Ակնհայտ է, այսպիսով, որ Հեթումյաններին Ռուբինյան տոհմի շահավիղներ համարելու ավանդույթը լայնորեն տարածված էր միջնադարում: Սակայն նույնքան ակնհայտ է, որ այդ գիտակցությունը սերմանվում էր հենց Հեթումյան զարմի թագավորների կողմից՝ իրենց «լեզվատիմությունն» ամրապնդելու նպատակով: Դրա մի կողմնակի վկայությունը կարելի է համարել նաեւ այն, որ Հեթում Ա թագավորն իր որդիներին կնքել էր Ռուբինյան տոհմի ավանդական Լեոն, Քորոս եւ Ռուբեն անուններով²⁹, որոնք մինչ այդ չեն հանդիպում Հեթումյան տոհմի ազգաբանության մեջ³⁰: Չկարողանալով խուսափել եւս մի հետաքրքիր փաստ արձանագրելու գայթակղությունից, ավելացնենք, որ հիշատակարաններից մեկում Ռուբինյան է հորջորջված նույնիսկ Կոստանդին Պայլը, որը որեւէ ուղղակի արյունակցական կապ չունեւ այդ գերդաստանի հետ՝ հետաքրքիր նաեւ այն առումով, որ տվյալ հիշատակարանը գրված է նրա որդի Հովհաննես արքեպիսկոպոսի ձեռքով. «Դատապարտ այցելու եւ անիմաստ բարուն արքեպիսկոպոսի Հայոց Յովհաննէս, որ երբեմն Պաղտոյն, որդի Բրիստոսարեալ եւ ամենաընտիր, երջանիկ եւ բարեպաշտ իշխանաց իշխանին եւ թագապահին՝ պարունին ամենայն Հայոց Կոստանդեա, մականուն Մոզոն կոչեցեալ, յՌուբինեանց տոհմէ՝ որոց յիշատակն արհնեալ յԱստուծոյ եւ յաստուածայնոցդ լիցի, ամէն»³¹: Հեթումյանների օրոք Ռուբինյան կոչումն, ըստ այդմ, դուրս էր եկել զուտ ազգաբանական հարաբերություն նշանակելու սահմաններից, վերածվելով մի տեսակ պատվանվան, որը կարող էր շնորհվել իշխող ընտանիքի հետ կապ ունեցող որեւէ անձի:

²⁷ Հմմտ. Cowe, The Inauguration, p. 53.

²⁸ Վահրամ Բարունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 55-56:

²⁹ Հմմտ. Պողոսյան-Կատվալյան, Կիլիկիա, էջ 410:

³⁰ Հմմտ. Rüdtt-Collenberg, The Rupenides, II (H1), III (H2).

³¹ Մաթիւոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 641:

Այս ամենը, սակայն, Հեթումյան գահակալների կողմից Ռուբինյանների տոհմանվան յուրացման սոսկ արտաքին, փառազական կողմն էր: Ինչպես ցույց պիտի տալին հետագա զարգացումները, այդ հորշորջումն իմաստավորվեց նաև բովանդակային, այն է՝ Ռուբինյանների հիմնադրած ֆաղափական ավանդույթների պահպանման առումով: «Վարելի էր երկյուղ կրել,– այդ առթիվ գրում է Ռ. Գրուսեն,– որ նրա (Հեթումի) գահակալումը կարող էր խախտել հայկական ֆաղափական ավանդույթները: Բայց նման բան տեղի չունեցավ: Վաղուցվա մրցակից այդ երկու տների շարունակականությունը շխախտվեց, քանզի Հեթումի եւ Զապելի ամուսնությամբ, նրանց զավակները միաժամանակ դառնում էին թե՛ Ռուբինյանների, թե՛ նոր հարստության օրինական ժառանգները»³²: Ուստի եթե անպայման անհրաժեշտ է 1226 թվականին Հայոց գահին բազմած Հեթում Ա թագավորի շառավիղներին կոչել դինաստիական հատուկ անվանմամբ, ապա ավելի ճիշտ է օգտագործել «Ռուբինյան-Հեթումյան հարստություն» արտահայտությունը, ինչպես առաջարկում է Գ. Միխայելյանը³³:

Որքան էլ տարօրինակ հնչի, Հեթումի գահակալումը շխախտեց նաև Ռուբինյանների հաստատած ամենահիմնական ֆաղափական ավանդույթը, այն է՝ Լամբրոնի Հեթումյանների դեմ պայքարի շարունակականությունը, թեև կան նաև հակառակը պնդող որոշ պատմաբաններ: Ս. Տեր-Ներսեսյանն, օրինակ, այդ առթիվ գրում է. «Վեոական դիմադրությունից հետո Զապելն ամուսնացավ խնամակալի որդու՝ Հեթումի հետ, եւ Ռուբինյանների ու Լամբրոնի Հեթումյանների երկու հզոր ֆեոդալական տների երկարատեւ հակառակությունն այսպիսով վերջ գտավ»³⁴: Համարյա նույնը կրկնում է Ս. Բոռնազյանը. «Սրանով վերջացավ Հեթումյանների եւ Ռուբինյանների պայքարը իշխանության համար, քանի որ Հեթումի եւ Զապելի ամուսնությամբ այդ իշխանական

³² Grousset, L'Empire, p. 396. *Քարգմանությունը տե՛ս Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 340–341:*

³³ Микаелян, История, с. 293–294. *Հմմտ. նաև՝ Комутцян, Armenia, p. 33.*

³⁴ Der Nersessian, Cilician Armenia, p. 651–652. *Հայերեն Քարգմանությունը տե՛ս Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 403:*

տները միավորվեցին»³⁵: Իսկ Պ. Պատուկյանի կարծիքով՝ «Այդ ամուսնությունը միացրեց երկու ընտանիքները եւ կայունացնող ազդեցություն ունեցավ թագավորության վրա»³⁶: Սակայն Ռուբինյան-Հեթումյան հակամարտությունը զուտ ներազգային կննդի կամ միջգերդաստանային տարածայնություն չէր, որպեսզի մեկ խնամությամբ վերջ գտներ: Այն խոր արմատներ ուներ եւ արտացոլում էր երկու հզոր իշխանական տների փաղափական կողմնորոշումների սկզբունքային տարբերությունը: Հակամարտության բոլոր հանգրվաններում Հեթումյանները հանդես էին գալիս Բյուզանդիայի հավատարիմ, իսկ Ռուբինյաններն՝ ապստամբ հպատակների դերում, ինչի մասին արդեն ֆանիցս առիթ ունեցել ենք նշելու:

Ողջ XII դարն ընդգրկող այդ անհաշտելի դիմակայության էությունը լավագույնս բացահայտված է Ներսես Լամբրոնացու կազմած «Պատնառ խնդրոյ միաբանութեան» ժողովածուի հեղինակային առաջաբանում գերխտացված տեղեկատվությամբ եւ խոր վերլուծությամբ աչֆի ընկնող մի հակիրճ գրվածքում, որին, թերեւս, կնախանձեր միջնադարյան ցանկացած պատմագիր: Նկատի ունենալով Ռուբինյան Թորոս Բ (1145-1168 թթ.) եւ Հեթումյան Օշին Բ (1143-1170 թթ.) իշխանների ժամանակաշրջանի իրադարձությունները, Լամբրոնացին գրում է. «Յատուրսն յայնոսիկ յառնէր խոռվութիւն ի մէջ երկուց իշխանաց հայաստանից այսպիսի օրինակաւ: Քանզի էին պատուով ի Յունաց արքայէն սեւաստոսութեամբ, եւ էին ընդ ծառայութեամբ եւ հնազանդութեամբ նորա: Իշխանն՝ որոյ անունն Թէդորոս, տէր գոլով լեռնային կողմանց Փոփուգացոց եւ բազում գաւառաց, եւ թեկն ածէր ընդդէմ թագաւորին Հոռոմոց պէսպէս պատնառաւ, մոռացեալ զերդմնակուռ դաշինսն՝ որ ի միջի, եւ զհնազանդութիւն նորա: Իսկ բարեպաշտ իշխանն Օշին, որ եւ սա տէր գոլով լեռնային կողմանց Փոփուգացոց եւ բազում գաւառաց՝ որ ի գահ Կիլիկիոյ, ունելով զանառիկ դղեակն ի թիկունս Տօրոս լեռինն վերադիտակ մայրաքաղաքին Տարսոնի, հաւատարմապէս մնացեալ ի հնազանդութիւն արքային Հոռոմոց: Իսկ ամբարտաւան իշխանն Թէդորոս ի խոռվութիւն շարժէր ընդ բարեպաշտ իշխանին Օշինն վասն

³⁵ *Բոռնազյան, Կիլիկիա, էջ 698:*

³⁶ *Bedoukian, Coinage, p. 11.*

անբիծ հաւատոցն հաւատարմութեան՝ զոր ունէր առ թագաւորն Հոռոմոց, եւ վասն այսր պատճառի ոչ սակաւ խոռվութիւնք լինէր եւ հեղմունք արեան ի մէջ երկուց իշխանացն»³⁷: Թեւեւ գրված Հեթումյան ընտանիքի շատագուրկի կողմից, ինչի վկայությունն են, թեկուզ, Օշինին շնորհված «բարեպաշտ» եւ Թորոսին հատկացված «ամբարտաւան» մականունները³⁸, այս մեջբերումն, այնուամենայնիվ, նիշտ է արտահայտում Ռուբինյան-Հեթումյան հակամարտության էությունը³⁹:

Հատկանշական է, որ Ռուբինյան եւ Հեթումյան գերդաստանների հակամարտությունը խնամությամբ լուծելու մի փորձ կատարվել էր հենց Լամբրոնացու նկարագրած իրադարձությունների նախօրյակին: 1152 թվականին Թորոսը, Մսիսի մոտ տեղի ունեցած հակատամարտում ջախջախիչ պարտության մատնելով Հեթումյաններին, սպանել էր Պապեռոնի տեւ Սմբատին, իսկ Լամբրոնի իշխան Օշին Բ-ին, Բարձրբերդի տեւ Վասիլին եւ Պռականայի բերդակալ Տիգրանին՝ գերի վերցրել: Շուտով, սակայն, Օշինը ֆառասուն հազար դահեկանի փրկագնով ազատ էր արձակվել՝ վճարելով դրա կեսը, իսկ մյուս կեսի դիմաց պատանդ թողնելով իւր որդի Հեթումին: Այնուհետեւ, վերջինիս առափնու-

³⁷ Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, էջ 86: Ռուբինյան-Հեթումյան հակամարտության պատճառը ճիշտ է գիտակցել նաեւ ուշ շրջանի մի ժամանակագիր. «Ընդ այն ժամանակն Թորոս եւ Օշին մախային ընդ միմեանս: Եւ այս էր պատճառն. զի Թորոսն թեկն ածէր ընդդէմ թագաւորացն Հոռոմոց, եւ Օշինն... հաւտարմապէս մնացեալ ի հնազանդութիւն արքային Յունաց: Եւ կամէր Թորոս զի ընդ յինքեան լինիցի, այլ նա Յունացն օգնէր»: Զակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 114:

³⁸ Հատկանշական է, որ Լամբրոնացու այս գրվածքից օգտված Գրիգորիս գրիչը՝ Ներսէս Շնորհալու վարքի հեղինակը, Թորոսի «ամբարտաւան» մականունը փոխարինել է «քաջագոր»-ով, իսկ Օշինին զրկել «բարեպաշտ» պատվանունից. «Ընդ այն ժամանակս ունէր զտէրութիւն լեառնային կողմանց Փոխիզեցուց քաջագոր իշխանն Թէոդորոս: Տիրէր եւ իշխանն Աւշին անառիկ դղեկին Լամբրունի...»: Գրիգորիս, Վարք Ներսեսի, էջ 48-49: Շնորհալու վարքի հեղինակի հարցի պարզաբանումը տես՝ Հովսեփյան, Յիշատակարանք, էջ 944-946; Тер-Давтян, Памятники, с. 72-73.

³⁹ Հատվածի հանգամանալից մեկնաբանությունը տես՝ Բողոյան, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 225-227; Բողոյան, Եկեղեցական բանակցություններ, էջ 137-138: Հմմտ. նաեւ՝ Bozoyan, Les documents, p. 55.

թյուններով հիացած Քորոս իշխանը, նրան ամուսնացրել էր իր դստեր հետ, թերեւս, միամտաբար հավատալով, որ դրանով կարող է վերջ տալ Կիլիկյան երկու հզոր ընտանիքների վտանգավոր դիմակայությանը⁴⁰: Բայց այդ ամուսնության հետ կապված հույսերն այդպես էլ չարդարացան, քանի որ 1168/9 թվականին, Քորոսի մահից հետո, Հեթումը տնից վտարեց իր կնոջը, ինչը պատճառ դարձավ եւս մեկ անգամ սրելու Հեթումյանների եւ Ռուբինյանների հարաբերությունները. «Եւ որդի պարոն Օշնի պարոն Հեթում, որ ունէր զգուստը պարոն Քորոսի ի կնութիւն, նա ատէր զնա, եւ յահէն պարոն Քորոսի ի կենդանութեանն իրք շիշխէր առնել, իսկ զկնի մահուան հօրն եհան ի տանէն իւրմէ: Յաղագս որոյ զայրացեալ պարոն Մլեհն՝ զնաց պաշարեաց զօրօք զկամբոն, եւ շատ նեղութիւն հասոյց ի բնակիչս նորա: Քանզի վաղուց հետէ Ռուբենեանմ եւ Հեթումեանմ մախային ընդ միմեանս. եւ եղեւ այս կրկին խռովութեան պատճառք»⁴¹:

Հեթումյանների գործությունը կտրուկ կերպով նվազեց, երբ Միրիոկեֆալոնի ճակատամարտում (1176 թ.) Բյուզանդիայի կրած ծանր պարտությունից հետո նրանք զրկվեցին կայսրության հովանավորչությունից ու պաշտպանությունից⁴²: Օգտվելով այդ հանգամանքից, Կիլիկիո Ռուբեն Գ իշխանը 1180-ական թվականներին փորձեց գրավել Լամբրոնը, բայց Հեթումյաններն, այս անգամ արդեն դաշնակցելով Անտիոքի իշխանապետության հետ, կարողացան, այնուամենայնիվ, չեզոքացնել այդ վտանգը⁴³: Դրանից հետո Լամբրոնի իշխան Հեթում III-ը ջանաց այլևս չգրգռել Ռուբինյաններին եւ հաշտ կեցվածք որդեգրեց Կիլիկիո նոր գահակալ Լեոն Բ-ի նկատմամբ, 1194/5 թվականին նույնիսկ այցելեց վերջինիս արժունիք⁴⁴, իսկ 1198-ին ներկա գտնվեց նրա

⁴⁰ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 170–171:*

⁴¹ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 101–102:*

⁴² *Հմմտ. Adalian, Historical Dictionary, p. 227. Պատահական չէ, որ Ներսես Լամբրոնացին խոր ցավ է արտահայտում Բյուզանդիային վրա հասած այդ աղետի առթիվ. տե՛ս Ներսէս Շնորհալի, Ընդհանրական թուղթք, էջ 168:*

⁴³ *Տե՛ս Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 212; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586:*

⁴⁴ *Տե՛ս Ներսէս Լամբրոնացի, Ատենարանութիւն, էջ 209:*

թագադրման արարողությանը⁴⁵, դրանով, ըստ էության, վերջիվերջո նանաշելով Ռուբինյանների գերիշխանությունը: Իմիջիայլոց, այն, որ մինչև Լեոն Բ-ի թագադրությունը Հեթումյանները չեն նանաշել Ռուբինյանների գերիշխանությունը, հաստատվում է Հեթումյան ոլորտի վան-ֆերում ընդօրինակված ձեռագրերի թվագրման բանաձևի ֆննության տվյալներով: Եթե նախկինում այդ բանաձևում Հայոց կաթողիկոսի կողմին պարտադիր կերպով հիշվում էր Լամբրոնի իշխանի, իսկ մեկ անգամ նույնիսկ Բյուզանդական կայսեր անունը⁴⁶, ապա 1198-ից հետո ընդօրինակված ձեռագրերն արդեն թվագրվում են Լեոն թագավորի եւ Հայոց կաթողիկոսի ժամանակով⁴⁷: Ռուբինյանների գերիշխանության նանաշումը, սակայն, չփրկեց Հեթումյաններին: Թագադրությունից ֆիշ ժամանակ անց Լեոնը Հեթումյանների հետ մի նոր խնամություն հաստատելու, այն է՝ իր զարմուհուն՝ Ռուբեն Գ-ի դուստր Ֆիլիպային Հեթում III-ի որդի Օշինի հետ ամուսնացնելու պատրվակով, նրանց հրավիրեց Տարսոն եւ, բոլորին ձերբակալելով, առանց կովի գրավեց Լամբրոն բերդը⁴⁸: Կարճատե բանտարկությունից հետո Հեթումը Լեոնի ողորմածությամբ ազատ արձակվեց եւ կարգվեց Դրագարկի վանահայր, ընդունելով կրոնավորական Հեղի անունը⁴⁹:

Թեեւ Սմբատ Սպարապետը Հեթումյանների հանդեպ Լեոնի տեսած հաշվեհարդարը բացատրում է երկու ընտանիքների միջեւ գոյություն ունեցած նախկին թշնամանքով⁵⁰, մեզ թվում է, Հայոց թագավորն այդ

⁴⁵ Տե՛ս Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 112:

⁴⁶ Տե՛ս Մաթեոսյան, *Ե-ԺԲ դդ.* հիշատակարաններ, էջ 221, 260-261, 267, 273, 288:

⁴⁷ Անդ, էջ 300, 302, ինչպես նաեւ՝ Մաթեոսյան, *ԺԳ դ.* հիշատակարաններ, էջ 60, 99, 101, 111 եւ այլն: Միշանկյալ տեղ է զբաղեցնում 1198 թվականին Լամբրոնի մոտակայքի Գեմրոձգեր վանքում ընդօրինակված մի ձեռագիր, որի թվագրման բանաձևում թեեւ արդեն հիշվում է Լեոն թագավորը, սակայն իներցիայով ավելացված է նաեւ Լամբրոնի իշխան Հեթում սեւաստոսի անունը. տե՛ս Մաթեոսյան, *Ե-ԺԲ դդ.* հիշատակարաններ, էջ 305:

⁴⁸ Տե՛ս Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 113-114; Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն*, էջ 286:

⁴⁹ Հեթում-Հեղիի մասին մանրամասն տե՛ս Ալիխյան, *Ներսէս Լամբրոնացի*, էջ 116-130:

⁵⁰ Տե՛ս Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 113:

Բայլին դիմելու ավելի լուրջ պատճառ պիտի ունենար: Ըստ երեւոյթին, կասկածելով Հեթումյանների արտահայտած հավատարմութեան հավաստիքներին, նա մտավախություն ուներ, որ հարմար պահին նրանք նորից կարող են բացահայտել իրենց կենտրոնախույս ձգտումները: Ի պատիվ Լեւոնի, պետք է նշել, որ այդ կասկածները լիովին արդարացան՝ թեկուզ տասնյակ տարիներ հետո, երբ արդեն Հայոց գահին բազմել էր հենց Հեթումյան տոհմի շառավիղը: Կոստանդին Պայլը, ձգտելով սիրաշահել իր ազգականներին, Հեթում III-ի որդուն՝ Կոստանդին իշխանին վերադարձրեց Լեւոնի կողմից հարձունիս գրավված Լամբրոն ամրոցը, միաժամանակ նրան շնորհելով Հայոց թագադրի պաշտոնը⁵¹ եւ, ըստ այդմ, վերականգնելով Արշակունյաց Հայաստանում Բագրատունիներին վերապահված պետական գործակալությունը⁵²: Հաստատվելով իր հայրենի անառիկ բերդում, Կոստանդին Լամբրոնացին անմիջապես դաշինք կնքեց Ռումի սելջուկյան սուլթան Ալանդոյի քեյ-Կոբադի հետ եւ 1220-ական թթ. վերջում ապստամբեց Հեթում թագավորի դեմ⁵³: Իսկ 1245 եւ 1246 թվականներին նա երկու անգամ սելջուկյան բանակներն առաջնորդեց Կիլիկիո խորհերը եւ նրանց օգնությամբ պաշարեց Տարսոնն ու ավարի մատնեց շրջակա գավառները⁵⁴: Հեթում թա-

⁵¹ *Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 286–287:*

⁵² *Թագադիր տիտղոսի մասին մանրամասն տե՛ս Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները, էջ 61–63:*

⁵³ *Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 287: Ղ. Ալիշանն այդ դեպքը թվագրում է 1228 թվականով. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 553: Իսկ մի հիշատակարանի տվյալներով՝ Կոստանդին Լամբրոնացու ապստամբության զրկագներից մեկը տեղի է ունեցել 1235 թվականին. տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 190: Ուշագրավ է նաեւ, որ Կոստանդինը, որպէս սելջուկների դաշնակից, ներկա է եղել Քյոսե-Գաղի ճակատամարտից հետո (1243 թ.) մոնղոլների եւ Ռումի սուլթանության միջեւ Սեբաստիայում կնքված պայմանագրի ստորագրման արարողությանը. տե՛ս Mutafian, Le siècle Mongol, p. 177.*

⁵⁴ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 122–123: Հմմտ. նաեւ՝ Barhebraeus, Chronicon, p. 479; Bar Hebraeus, Chronography, p. 410. Կ. Կաննի ենթադրությամբ՝ այդ արշավանքը ձեռնարկելիս սելջուկներն, ըստ երեւոյթին, ստացել էին մոնղոլների լուռ համաձայնությունը, որոնք այդ ժամանակ դեռեւս անտարբեր էին տվյալ հակամարտության նկատմամբ, եւ միայն դրանից հետո ամրապնդված*

գավորին, Կոստանդին Պայլին եւ Սմբատ Գունդստապլին մեծ դժվարությունների գնով միայն հաջողվեց վանել թուրքերին⁵⁵, իսկ ապստամբ իշխանին շրջափակել իր ամրոցում⁵⁶, որտեղ էլ նա մեռավ կամ սպանվեց 1250 թվականին⁵⁷: Այսպիսով, ճակատագրի հեգնանքով, վերջին հարվածը Հեթումյաններին հասցրին հենց իրենց ազգակիցները, ինչը ցույց է տալիս, որ Ռուբինյան–Հեթումյան դարավոր հակամարտությունը ոչ թե արյունակցական թշնամանքի կամ միջտոհմային մրցակցության դրսեւորում էր, այլ կենտրոնամետ եւ կենտրոնախույս ուժերի միջեւ ընթացող անհաշտ փառապանական պայքար, որում Ռուբինյանները կամ «ռուբինյանականացած» Հեթումյանները հանդես էին գալիս որպես Հայոց անկախ պետականության գաղափարակիրներ, իսկ նրանց հակառակորդները՝ որպես օտար երկրների աջակցության վրա հենվող անջատողականներ: Ըստ այդմ, Կոստանդին Լամբրոնացու ապստամբության դրվագը ջնջում է Ս. Տեր-Ներսեսյանի, Ս. Բոռնազյանի եւ Պ. Պտուկյանի այն տեսակետը, որ Զապելի եւ Հեթումի ամուսնությունը վերջ դրեց Ռուբինյան–Հեթումյան հակամարտությանը կամ կայունացնող ազդեցություն ունեցավ Հայոց թագավորության վրա:

* * *

Իսկ այժմ, վերադառնալով գահաժառանգության իրավունքի լուսաբանման մեր հետապնդած խնդրին, հարկ ենք համարում սկզբից եւեթ

հայ-մոնղոլական դաշինքն էր, որ թույլ էր տվել կանխել նմանօրինակ ձեռնարկների վերսկսումն ու հայերին հնարավորություն ընձեռել ետ նվաճելու իրենց կորցրած տարածքները. տե՛ս Cahen, Pre-Ottoman Turkey, p. 271.

⁵⁵ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 123: Հմմտ. նաեւ՝ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 288:*

⁵⁶ *Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 288:*

⁵⁷ *Տե՛ս Հեթում Թագաւոր, Պատմութիւն, էջ 81, որի «կատարեցաւ ի սորայ» բառերն, ըստ երեւույթին, պետք է ուղղել «կատարեցաւ ի սրոյ».* *Հմմտ. Ալիշան, Միսուան, էջ 85: Նույն Հեթում Բ Թագավորն իր հիշատակարաններից մեկում արդեն ավելի հստակ գրում է. «Ի թվին Հայոց ՉճՂԹ (1250), ի յունիս ԻԹ (29) սպանին զպարոն Հեթումն տէր Լամբրոնին՝ պապն իմ».* *տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 705:*

նշել, որ այն ինչ ասվեց Փիլիպոսի մասին, հավասարապես վերաբերում է նաև Հեթում Ա-ին, այսինքն՝ վերջինս նույնպես երկրի կառավարման ղեկն ստանձնել էր ոչ թե լիիրավ թագավորի, այլ թագակիր-գործակցի (prince consort) կարգավիճակով: Ընդ որում, եթե Փիլիպոսի պարագայում դա հաստատող պատմական փաստերը պակասում էին, ապա Հեթումի գահակալության շրջանն աչքի է ընկնում նմանատիպ փաստերի նշանակալի առատությամբ: Այն, որ Հեթումը եւ Զապելը երկիրը de jure կառավարել են գահակից-թագավորների հավասար իրավունքով, ապացուցվում է նախ եւ առաջ նրանց համատեղ հրապարակած հրովարտականների առկայությամբ: Հեթումի գահակալության շրջանից մեզ է հասել երկու այդպիսի արքայական հրովարտակ, երկուսն էլ արձակված իր եւ Զապել թագուհու անունից.

22 հունվար, 1236 թ. «Ես՝ Հեթում, ի Քրիստոս Աստուած հաւատացեալ թագաւոր Հայոց, որդի Կոստանդնի թագաւորազնի, եւ Եղիսաբեթ⁵⁸, թագուհի նորին, դուստր ի Քրիստոս հանգուցեալ Լեւոնի թագաւորի...» (ego Eython, Christi Dei fidelis rex Armenie, filius Constantini stirpis regie, et Ehelisabeth regina ejusdem, filia quiescentis in Christo Leonis regis)⁵⁹:

Մարտ, 1245 թ. «Ես՝ Հեթում, շնորհաւ Աստուծոյ թագաւոր Հայոց, որդի Կոստանդնի առն ազնուազարմի, եւ ես՝ Եղիսաբեթ, դուստր Լեւոնի նախկի Հայոց թագաւորի, ի կարող ազգէ Ռուբինեանց, եւ թագուհի-ամուսին վերոյասացեալ Հեթում թագաւորի...» (ego Hetom, Dei gracia rex Armenie, filius Constantini nobilis viri, et ego Helisabeth, filia Leonis, quondam regis Armenie, de potenti genere Rupinorum, et regina uxor predicti regis Hetonis)⁶⁰:

⁵⁸ Զապել թագուհուն Եղիսաբեթ անունով հիշատակում են նաև հետևյալ հայկական աղբյուրները. Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 141; Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 511; Կիրակոս Քանձակեցի, Պատմութիւն, էջ 365; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 705; Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 565:

⁵⁹ Langlois, Cartulaire, p. 141. Մեր թարգմանության մեջ որոշ շափով օգտագործել ենք Կիլիկիո թագավորների 1288 եւ 1331 թվականների հայերեն հրովարտականների բանաձևերը. տես Անդ, էջ 154, 186:

⁶⁰ Անդ, էջ 143:

Ավելորդ է, թերեւս, նշել, որ Կիլիկիո պատմության մեջ ոչ մի այլ թագուհի նման պատվի չի արժանացել, ինչն ընդգծում է Զապելի առանձնահատուկ իրավական կարգավիճակը: Զապել թագուհու առանձնահատուկ իրավական կարգավիճակը հաստատվում է նաեւ «խրեղեն ապացույցներով», այն է՝ դրամագիտության տվյալներով: Ի տարբերություն Կիլիկիո մնացյալ բոլոր գահակալների դրամների, որոնց երեսի կողմում դրոշմված են թագավորի պատկերն ու անունը, Հեթում Ա-ի հատած արծաթե դրամների վրա պատկերված է ոչ միայն Հեթումն ինքը, այլեւ Զապել թագուհին: Ինչպես իրավագիտուն նկատում է Կիլիկիո դրամագիտության հետազոյն մասնագետ Պ. Պտուկյանը, դա արտացոլումն է պատմական այն իրողության, որ Զապելը գահաժառանգ թագուհի էր, իսկ Հեթումը՝ նրա թագակիր-գործակիցը (prince consort)⁶¹: Հետաքրքիր է, որ նույն դրամագետի տվյալներով, Հեթումը նման դրամների հատումը շարունակել է անգամ Զապելի մահից հետո (1252 թ.), ընդհուպ մինչեւ իր գահակալության ավարտը (1270 թ.)⁶²: Անհարկի չենք համարում նաեւ ավելացնել, որ Պ. Պտուկյանի «Կիլիկյան Հայաստանի դրամները» գրքում նկարագրված է Հեթումի եւ Զապելի պատկերը կրող 451 արծաթե դրամ⁶³: Այսպիսով, Հայոց պետականության երկու կարեւորագույն «ատրիբուտների»՝ արհայական հրովարտակների եւ դրամահատության ընձեռած տվյալներն անառարկելի են դարձնում Հեթում թագավորի եւ Զապել թագուհու համատեղ գահակալության իրավական բովանդակության ուրույնությունը:

Այդ ուրույնությունն, իմիջիայլոց, ցայտուն կերպով արտահայտվում է եւս մի ուշագրավ հանգամանքով: Որոշ ձեռագրերի թվագրման բանաձեւում կաթողիկոսի եւ Հեթում թագավորի անունների կողքին հիշատակվում է նաեւ Զապել թագուհու անունը, ինչը նույնպես վերջինիս առանձնացնում է մնացյալ բոլոր Հայոց թագուհիներից: Այսպես.

1244 թ. հիշատակարան. «Ի ժամանակս աստուածասէր եւ բարե-

⁶¹ *Stéu Bedoukian, Coinage, p. 60, 82. Պ. Քաուին այդպիսի դրամների հատումը բացատրում է գահակալության սկզբնական շրջանում իր «խեղճիմության» պակասի պատճառով Հեթումի դրսեւորած զգուշավորությամբ. Cowe, The Inauguration, p. 53.*

⁶² *Bedoukian, Coinage, p. 82.*

⁶³ *Անդ, էջ 235-276:*

պաշտ տերանց մերոց ֆրիստոսապսակեալ արժայիս Կիպիկեցոց նահանգիս Հեթմոյ եւ ֆրիստոսասէր թագուհւոյն իւրոյ Զապէլի ... ես՝ նուաստ եւ յետին ծառայ ծառայից Քրիստոսի Գրիգորիս մեղսասէր գրիչ... աշխատասիրեալ գրեցի զմատեանս»⁶⁴:

1247 թ. ճիշատակարան. «Ի թուականիս ՈՂԶ, ի հայրապետութեան Հայոց տեանն Կոստանդեայ, եւ թագաւորութեան Հեթմայ բարեպաշտի, որ յերկրորդ է ի Լէոն թագաւոր(է), որ ի Ըռուպենիանց, եւ աստուածասէր թագուհւոյն իւրոյ Զապիլի, որ դուստր էր թագաւորին Լեոնի ... գրեցի աշխատասիրաբար սուրբ Աւետարանս»⁶⁵:

1248 թ. ճիշատակարան. «Ի ՈՂԷ թուականութեանս Հայոց թարգմանեցաւ զիրֆս այս յասորոց ի հայս, ի հայրապետութեան Հայոց տեանն Կոստանդեայ, եւ ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ ֆրիստոսապսակի եւ զգուշակենցաղ թագուհւոյն իւրոյ Զապէլի դստեր Լեւոնի արժայի»⁶⁶:

1249 թ. ճիշատակարան. «Բայց գրեցաւ յանմատչելի դղեակս Հոռմկլայ ... ի թուականութեանս Հայոց ՈՂԸ, ի յառաջնորդութեան տեանն Կոստանդեայ ստացողի զսա, եւ ի թագաւորութեան ֆրիստոսապսակ թագաւորին Հեթմոյ եւ աստուածասէր թագուհւոյն իւրոյ Զապիլի, եւ որդոց նոցին Լեւոնի եւ Թորոսի»⁶⁷:

1249 թ. ճիշատակարան. «Եւ ամարտեցի զսա ի սուրբ եւ յաշխարհամուտ յարոոս Հոռմկլա... ի թուականութեանս Հայոց ՈՂԸ, ի թագաւորութեանս Հայոց Հեթմոյ բարեպաշտի, եւ որդոց նորա բարի շառաւեղաց Լեւոնի եւ Թորոսի, եւ սրբահոգի թագուհոյ իւրոյ Զապիլի»⁶⁸:

1250 թ. ճիշատակարան. «Գրեցաւ ի հայրա(պետու)թեան տեանն Կոստանդեա, եւ ի թագաւորութեանս Հայոց ֆրիստոսապսակ թագաւորին Հեթմոյ եւ աստուածասէր թագուհւոյն Զապէլի, որ է դուստր Լեւոնի թագաւորին»⁶⁹:

⁶⁴ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 233:

⁶⁵ Անդ, էջ 238:

⁶⁶ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 611–612:

⁶⁷ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 250:

⁶⁸ Անդ, էջ 251:

⁶⁹ Անդ, էջ 256:

Բացի ձեռագրերի թվագրման բանաձեւում Հայոց թագուհու անունը նշելու ինքնին արդեն խոսուն փաստից, ուշադրության արժանի է նաև առաջին հիշատակարանում Հեթումի եւ Զապելի վերաբերյալ օգտագործված «տերանց մերոց» արտահայտությունը, ինչը ցույց է տալիս, որ հասարակական գիտակցության մակարդակում եւս նիշտ է ընկալվել նրանց իրավահավասար գահակիցներ լինելու հանգամանքը: Ավելին, Վահրամ Բաբունու համոզմամբ, Լեւոնից հետո իրականում թագավորել է Զապելը, իսկ Հեթումն ընդամենը նրա լծակիցն է եղել. «Եւ յետ նորա դուստր նորա Զապել թագուհի, լծակցեալ ընդ բարեպաշտի Հեթմոյ, թագաւորեալ, եւ բազում բարութիւնս եւ ուղղութիւնս Հայոց ցուցեալ»⁷⁰:

Հասարակական գիտակցության մակարդակում Զապել թագուհու ուրույն տեղի գնահատման մի ուրիշ արտահայտությունն էլ պետք է համարել հիշատակագիրների կողմից նրա հասցեին շռայլված հետեւյալ պատվանունները. «ամենագով», «ամենապարկեշտ», «առափինաջան», «առափինի», «աստուածասէր», «բարեպաշտ», «մարդասէր», «ողջախոհ», «սուրբ», «սրբահոգի», «փրիստոսասէր»⁷¹: Միջնադարյան գրիչներն ու ժամանակագիրները չեն զլանում նաև նրան ավելի ընդարձակ ու գեղապանույն գովեստներ ձոնել, ինչպես՝ «գարդարեալ ամենայն առափնութեամբ եւ բարեգործութեամբ» (Սմբատ Սպարապետ)⁷², «իմաստուն եւ բարեպաշտօն եւ պարկեշտ» (Սամուէլ Անեցու շարունակող)⁷³, «ի բարի գործս յառաջեալ, զպարկեշտութիւն նախապատուեալ» (Վահրամ Բաբունի)⁷⁴, «պարկեշտ կենօք, եւ երկիւղած ի Տեառնէ, հանոյ Աստուծոյ, եւ գովելի ի մարդկանէ, բարեսէր կամօք, եւ զգոյշ ֆաղափավարութեամբ» (Միֆայել Ասորու շարու-

⁷⁰ Վահրամ Բաբունի, *Բան ի Յայտնութիւն Տեառն 1875*, էջ 55–56:

⁷¹ *Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ*, էջ 204, 233, 235, 238, 250, 251, 256, 315, 318, 320, 335, 440, 570, 571, 705, 709: Այս իմաստով Զապելի հետ կարելի է համեմատել, թերեւս, միայն Կեռան թագուհուն (1269–1285 թթ.), ինչի մասին մենք դեռ առիթ կունենաք խոսելու համապատասխան տեղում: Հմմտ. Mutafian, *Recherches*, p. 136.

⁷² *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ*, էջ 229:

⁷³ *Սամուէլ Անեցի, Հաւաքմունք*, էջ 150:

⁷⁴ Վահրամ Բաբունի, *Ոտանաւոր պատմութիւն*, էջ 219:

նակող)⁷⁵: Իսկ նույն հեղինակի աշխատության մի այլ հատված արդեն Ջապելին նվիրված ներբող է հիշեցնում. «Շառաւեղն օրհնութեան ազատուհին Ջապել, անթերին ի գովելութենէ աստուածապաշտ եւ երկիւղած կնոջ, ողջախոհ եւ ցածուն, եւ անզարդասէր եւ լոին, լիահատ եւ մեծայոյս, քրիստոսասէր եւ սրբասէր, աղօթասէր եւ ծերունի հաննարով ի տղայութեան հասակի»⁷⁶: Սակայն ամենապերահասուր Կեռան թագուհու նշանավոր ավետարանի հիշատակարանի՝ Ջապելին նվիրված հատվածն է. «Զողորմածն, զհեզանազն, բարէբարոյ, զաղբատասէրն, զբազմաբաշխն, զլցեալն ամենայն բարութեամբ, զնշմարիտ ժառանգն Հայաստան աշխարհիս Ջապիլ թագուհի՝ զհանգուցեալն ի Քրիստոս, յիշեցէք յաղաթս մափուս, զի եւ նա բազում հոգէբարձութեամբ նախախ(նա)մեաց զաշխարհս, նաեւ զեկեղեցիս եւ զվանատրեայս, եւ ի վերա ամենայն բարեացն զոր գործեաց, յաւել եւ զայս, զի ետ Հայաստան աշխարհիս ժառանգ, զի ոչ շրջեցաք անտերունչս եւ կամ վարատեալս, այլ զբնակութիւնս մեր կալաք: Տացէ սմա Աստուած սեփհական հայրենիք գորախտն եղեմական, զուարճանալ եւ բարգավանիլ ընդ Հեղինեանսն, եւ ընդ այլ սրբոց թագուհեացն»⁷⁷: Այսպիսով, Ջապելն, իր գահաժառանգության հանգամանքների կարեւորության, իրավական կարգավիճակի յուրահատկության եւ հասարակական ընկալման տարողության առումով, տարբերվելով Հայոց բոլոր մնացյալ թագուհիներից, եզակի բացառություն է հանդիսանում ոչ միայն Կիլիկիո, այլև ընդհանրապես հայ ժողովրդի ողջ պատմության մեջ⁷⁸:

⁷⁵ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 511:

⁷⁶ Անդ, էջ 515: Նույնը նաեւ՝ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1871, էջ 506:

⁷⁷ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 417: Ջապել թագուհու գովքն անում է նաեւ ասորի ժամանակագիր Բարհեբրեոսը. տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 490; Bar Hebraeus, Chronography, p. 418.

⁷⁸ Տե՛ս Nassibian, Zabel, p. 211–217. Այս առումով Ջապելի կերպարը համեմատելի է երուսաղեմի թագուհի Մելիսենդեի կերպարի հետ. վերջինիս մասին մանրամասն տե՛ս Mayer, Queen Melisende, p. 93–182; Hindley, The Crusades, p. 117–118. Մելիսենդեի գործունեության մասին մանրամասն տե՛ս նաեւ Hindlian, History, p. 25–28; Mutafian, Recherches, p. 54–55.

* * *

Հեթում Ա թագավորի գահակալության շրջանի մասին խոսելիս, անհնար է չանդրադառնալ նաեւ նրա հոր՝ Կոստանդին Պայլի տիրապետող կերպարին, որի նշանակալիությունը պիտի զգացվեր Կիլիկիո պատմության այդ շրջադարձային ժամանակահատվածի համարյա բոլոր հանգրվաններում: Կոստանդինը, ծնված շուրջ 1180 թվականին⁷⁹, Լեոն թագավորի մորեղբոր՝ Վասակի որդին էր⁸⁰, զտարյուն Հեթումյան, որն աղբյուրներում հիշվում է որպես Կիլիկիայի երկու նշանավոր բերդերի՝ Պապեռոնի եւ Բարձրբերդի տեր⁸¹: Առաջինին նա, անկասկած, տիրում էր ժառանգական իրավունքով, իսկ երկրորդը, լինելով «բնիկ» Ռուբինյան տիրույթներից մեկը, մեր կարծիքով, նրան էր շնորհվել Լեոն թագավորի կողմից: Հայոց բերդակալ իշխանների՝ Սմբատ Սպարապետի կազմած հայտնի ցանկում, որն արտացոլում է 1198/9 թվականի վիճակը, որպես Բարձրբերդի տեր հիշատակվում է ոմն Գեորգ իշխան. «իշխան Բարձրբերդոյ Գեորգ»⁸² կամ «պարոն Գեորգ՝ տէր Բարձրբերդոյ»⁸³: Մենք չենք բացառում, որ այս Գեորգը կարող էր Մլեհ իշխանի նույնանուն որդին եղած լինել, որին, ինչպես արդեն տեսանք, 1208/9 թվականին Լեոնը ձեռքակալել էր կուրացնել էր տվել⁸⁴: Այդպիսի ենթադրություն անելու հիմք է տալիս Մլեհի որդու կենսագրի՝ Գրիգոր գրչի այն տեղեկությունը, որ Լեոնը վերջինիս կուրացնելուց բացի, նրան զրկել էր նաեւ իր սեփականություններից՝ «յափշտակեաց զամե-

⁷⁹ Հմմտ. Rüdtt-Collenberg, The Rupenides, III (H2).

⁸⁰ Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 116; Վենետիկ, էջ 214; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 486: Բարհեբրեոսը եւ Աբուլֆիզան Կոստանդինի հորը ճանաչում են Basil (= Վասիլ) անունով. տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 442; Bar Hebraeus, Chronography, p. 380; Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 236:

⁸¹ Տե՛ս Հեթում Կոռկիոսցի, Պատմութիւն, էջ 104; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 148; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 511:

⁸² Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 210:

⁸³ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 112:

⁸⁴ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 88; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 216-217:

նայն ինչս նորա»⁸⁵: Այդ հափշտակված կամ հաբբունիս գրավված սեփականություններից մեկն էլ, թերևս, Բարձրբերդն էր, որն այնուհետև Լեւոնը որպես ավատ շնորհել էր Կոստանդինին՝ դրանով վարձահատույց լինելով իրեն մատուցած նրա ծառայությունների դիմաց⁸⁶: Ամենայն հավանականությամբ, Կոստանդինը, Բարձրբերդից ու Պապեռոնից բացի, տիրել է նաև Ճաննի բերդին, ինչի վկայությունն են հետևյալ երկու փաստերը. առաջին՝ այդ բերդը հետագայում պատկանել է նրա որդի Վասակին⁸⁷, եւ երկրորդ՝ Հայոց բերդակալների վերոհիշյալ ցանկում հիշատակվում է ոմն «պարոն Կոստանդին՝ տէր Ճաննոյն»⁸⁸ կամ «իշխան Ճաննոյն Կոստանդին»⁸⁹:

Ըստ երեսույթին, պատահական չէ, որ Մլեհի որդի Գեորգ իշխանին բաժին ընկած դժբախտության ժամանակին է համընկնում նաև Կոստանդինի՝ Հայոց թագավորության գունդստապլի կամ սպարապետի պաշտոնին արժանանալու փաստը: Ռայմոնդ-Ռուբենի 1207 թ. մարտի 17-ի հրովարտակը հաստատող վկաների շարքում որպես Հայոց գունդստապլի հիշատակվում է Ապլղարիպ իշխանը (Eburgarib, regni Armenie comestabulis)⁹⁰: Իսկ Լեւոն թագավորի 1210 թ. օգոստոս ամսով թվագրված հրովարտակում արդեն նրա փոխարեն ի հայտ է գալիս Կոստանդին Գունդստապլի անունը (Constantius comestabulus)⁹¹, ինչը նշանակում է, որ վերջինս

⁸⁵ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 88:

⁸⁶ Կոստանդինի կողմից Բարձրբերդին տիրելու փաստը հիշատակելիս, Ղ. Ալիշանը բավարարվում է գրելով հետևյալը. «Թագաւորահայրն այն առեալ էր, ոչ գիտեմ յորմէ հետէ, իբրեւ յիւր սեփական կալուած եւ նստոց»։ Ալիշան, Սիսուան, էջ 148:

⁸⁷ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 250; Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. Թ. 4188, էջ 112:

⁸⁸ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 111:

⁸⁹ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 210:

⁹⁰ Langlois, Cartulaire, p. 131. Ապլղարիպի մասին եւս մի հիշատակութիւն, որը վերաբերում է 1198/9 թվականին, պահպանվել է Սմբատ Սպարապետի՝ Հայոց բերդակալ իշխանների ցանկում. «Պարոն Ապլղարիպ գունդստապլն՝ տէր Կոստայ»։ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 111; «Իշխան Կոստաֆոյն Ապլղարիպ գունդուստապլն»։ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 209:

⁹¹ Langlois, Cartulaire, p. 116.

Հայոց թագավորության նվիրապետական աստիճանակարգի բարձրագույն պաշտոնն ստանձնել է 1207–1210 թթ. միջև⁹²: Ի դեպ, Սմբատ Սպարապետի ժամանակագրությանը կցված Հայոց սպարապետների ցանկ-հավելվածում եւս նշված է, որ Կոստանդինն այդ պաշտոնում հաջորդել է Ապլղարիպին⁹³: Կոստանդինի կողմից Հայոց պետության կարեւորագույն գործակալությունը գլխավորելու հանգամանքը ցույց է տալիս, որ նա վայելում էր Լեւոն թագավորի լիակատար վստահությունը եւ մտնում վերջինիս մտերիմների նեղ շրջանակի մեջ՝ իր ազդեցությամբ, թերեւս, զիջելով միայն Սիր Ատանին: Դրա վկայություններից մեկն էլ այն է, որ Կոստանդին Գունդստապլի անունը մշտապես հիշատակվում է Լեւոնի եւ Ռայմոնդ-Ռուբենի 1207–1215 թթ. միջև հրապարակված հրովարտականները հաստատող վկաների շարքում⁹⁴, ինչպիսի պատվի հայ իշխաններից էլերն են միայն արժանացել: Կոստանդինի նկատմամբ Լեւոնի տաժած առանձնահատուկ գուրգուրանքի ամենացայտուն արտահայտությունը պետք է համարել, սակայն, այն փաստը, որ երբ Հայոց գունդստապլը մի ֆանի այլ իշխանների հետ գերի էր ընկել Ռումի սուլթան Իզգեդդին Քեյ-Քավուսի ձեռքը (1216 թ.) եւ տասնչորս ամիս պահվել բանտում, Լեւոնը չէր զլացել թեկուզ ծանր պայմանների, այն է տարածօրին զիջումների ու սուլթանի գերակայությունը ճանաչելու գնով ազատել նրան, մյուս գերիների հետ միասին⁹⁵: Նկատի ունենալով այս կապակցությամբ Կոս-

⁹² *Ինչպես գրում է Ղ. Ալիշանը, թե՛ Կիլիկիո, թե՛ Տրանկ արքունիքներում գունդստապլը համարվում էր պետական պաշտոնյաներից առաջինը. «Յ՛իրական եւ ի մշտակալ պաշտօնեայս՝ նախադասի յարքունիս Սիսուանայ, որպէս եւ ի Փռանկացն, Գունդստապլն, որ է ընդհանուր Սպարապետ».* Ալիշան, Սիսուան, էջ 484: Հմմտ. Cahen, *La Syrie du Nord*, p. 452–453; Mayer, *Kreuzzüge*, S. 149; Amouroux-Mourad, *Édesse*, p. 114. *Մինչդեռ ժ. Ռիշարի կարծիքով՝ խաչակրաց պետությունների աստիճանակարգում ամենաբարձրը սենեշալի պաշտոնն էր. տե՛ս Richard, Jérusalem*, p. 75; *Richard, Tripoli*, p. 48.

⁹³ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 137:*

⁹⁴ *Տե՛ս Langlois, Cartulaire*, p. 116, 123, 125, 131, 134, 136.

⁹⁵ *Այդ դրվագի մասին մանրամասն տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 101; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 117–118; Վենետիկ, էջ 221–222; Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 519–520; 1871, էջ 511–513; Հեթում Թագաւոր, Պատմութիւն, էջ 79; Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 63: Որոշ աղբյուրներ*

տանդնի մոտ առաջացած երախտապարտության զգացումը՝ Սմբատ Սպարապետը գրում է. «Յետ մահուան թագաւորին Լեւոնի արար իւր փոխարէն Կոստանդին Գունդստապլն հարիւրապատիկ եւ իւր դստերն. զի լա՛ւ է թագաւորի աղէկ նորտ պահել, քան զայլ հարստութիւն»⁹⁶:

Մենք արդէն տեսանք, թէ Լեւոնի մահից հետո Կոստանդին Գունդստապլն ինչպիսի դաժանությամբ մեկը մյուսի ետեւից վերացրեց Հայոց գահի բոլոր հավակնորդներին՝ Սիր Ատանին, Ռայմոնդ-Ռուբենին, Վահրամ մարաջախտին եւ Փիլիպոս թագավորին, իսկ ապա, Չապել թագուհուն բռնությամբ ամուսնացնելով իր մանկահասակ որդու հետ, փաստորեն դարձավ Կիլիկիո թագավորության առաջին դեմքն ու լիիրավ տերը, ինչը, բնականաբար, չի վրիպել անգամ ժամանակակիցների աչքից: Ինչպէս, օրինակ, գրում է Միխայել Ասուրու ժամանակագրության հայերէն թարգմանության շարունակողը, Հէթումի գահակալումից հետո «հայրն նորա կարգաւորէր զթագաւորութիւնն»⁹⁷: Այդ առթիվ ավելի ընդարձակ ու բովանդակայից է Կիրակոս Գանձակեցու վկայությունը. «Իսկ մեծ իշխանն Կոստանդին իբրեւ առ զիշխանութիւնն թագաւորութեանն որդոյ իւրում Հէթմոյ, զամենայն հոգս արհայութեան յանձն առեալ՝ իմաստաբար կարգաւորէր. զկէսն հնազանդէր սիրով, եւ զոչ հնազանդսն բառնայր ի միջոյ՝ զմանս փախստական առնելով եւ զայլս մահուամբ»⁹⁸: Իր պատմության մի այլ հատվածում Կիրակոսը Կոստանդինին հորջորջում է նույնիսկ «արքա» անունով. «Կոստանդին՝ հայրն արքայի, եւ ինքն իսկ արքայ»⁹⁹:

Հետեւելով մոնղոլական ավանդույթին, որի համաձայն՝ «կայսրությունը համարվում էր ողջ խանական տոհմի սեփականությունը»¹⁰⁰, Կոս-

համաձայն՝ Լեւոնը գերյալ հայ իշխաններին ազատել է ոչ թէ զիջումների գնով, այլ ուժի ցուցադրությամբ. տե՛ս Վահրամ Բաբունի, Ոսանաւոր պատմութիւն, էջ 216; Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 586–587: Միջանկյալ տեղ է զբաղեցնում Սամուել Անեցու ժամանակագրությունը. տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 146–147:

⁹⁶ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 118:

⁹⁷ Միխայէլ Ասուրի, Ժամանակագրութիւն 1870, էջ 526; 1871, էջ 518:

⁹⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 190:

⁹⁹ Անդ, էջ 287:

¹⁰⁰ Бартольд, Чингиз-хан, с. 843. տե՛ս նաեւ՝ Владимирцов, Общественный строй, с. 98–99.

տանդինն ստեղծել էր կառավարման մի յուրահատուկ կլանային համակարգ¹⁰¹, պետության կարելուրագույն գործակալությունների գլխավորումը հանձնարարելով իր որդիներին ու ազգականներին¹⁰²: Որդիներից Սմբատին նա շնորհել էր գունդստապլի, Օշինին՝ Հայոց պայլի, Բասիլին՝ Սսի արհեսպիսկոպոսի (այդու՝ ջանցլերի կամ ատենադպրի), Լետնին՝ մարաջախտի¹⁰³, Կիկոսին՝ սենեշալի (սեղանապետի)¹⁰⁴, իսկ աներծագին՝ Կոստանդին Լամբրոնացուն՝ թագադրի պաշտոնը¹⁰⁵: Եթե սրան ավելացնենք նաև, որ Կոստանդին Գունդստապլը 1221 թվականին Հայոց կաթողիկոսի գահին բազմեցրել էր իր մարդուն՝ Կոստանդին Բարձրբերդցուն, ինչպես այդ մասին միանշանակորեն տեղեկացնում է Կիրակոս Գանձակեցին¹⁰⁶, ապա կարելի է ասել, որ նա, ըստ էության, իր ձեռնում էր կենտրոնացրել պետության կառավարման բոլոր լծակները: Կլանային այդ համակարգի հասարակական գիտակցության արտահայտությունը պետք է համարել Կոստանդինն ու նրա որդիներին հանախակի հատկացված թագատրանայր/արհայանայր¹⁰⁷ եւ թագատ-

¹⁰¹ Հմմտ. Rüd̄t-Collenberg, The Rupenides, p. 28. Մոնղոլական միապետությունում խանական տոհմի համատեղ կառավարման մասին տե՛ս Бартольд, Туркестан, с. 529, 533-534; Владимирцов, Общественный строй, с. 99-101; Массэ, Ислам, с. 145; Soucek, Inner Asia, p. 107-108.

¹⁰² Հմմտ. Adalian, Historical Dictionary, p. 224.

¹⁰³ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 343, 593:

¹⁰⁴ Տե՛ս Rüd̄t-Collenberg, The Rupenides, III (H2), p. 62. Կիկոսը, սակայն, հավանաբար ոչ թե Կոստանդինի որդին, այլ փեսան էր, նրա դստեր՝ Ակացի ամուսինը. այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության էջ 430, ծանոթ. 21:

¹⁰⁵ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 287:

¹⁰⁶ «Եւ նստուցանէ մեծ իշխանն հանդերձ թագաւորան զտէր Կոստանդին յաթոռ սրբոյն Գրիգորի». Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 190: Ըստ Սմբատ Սպարապետի նույնպես՝ Բարձրբերդցու ընտրության հարցում Կոստանդին Գունդստապլը վճռական դեր է խաղացել. տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 224-225: Հմմտ. նաև՝ Օրմանյան, Ազգապատում, § 1101:

¹⁰⁷ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 198, 201, 315, 318, 328, 397, 487, 571, 590; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 230, 233, 237, 238, 250; Փարիզ, էջ 123; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 151; Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 525; 1871, էջ 517; Գրիգոր Ակնեբցի, Պատմութիւն, էջ 34;

րեղբայր/արժանեղբայր¹⁰⁸ պատվանունները, որոնք սկզբում լինելով, թե-
րեւս, գուտ ազգակցական հարաբերություն նշանակող հասկացություն-
ներ, աստիճանաբար վերածվել են յուրատեսակ տիտղոսների¹⁰⁹: Դա
ակնհայտ է դառնում մանավանդ այն դեպքերում, երբ նշված պատվա-
նունները գործածվում են «թագաւորահայր/արժայահայր Հայոց»¹¹⁰ կամ
«թագաւորեղբայր/արժանեղբայր Հայոց»¹¹¹ բառակապակցություններում¹¹²:
Ի դեպ, խիստ ընդգծված տոհմականային բովանդակություն ունեն
նաեւ Կոստանդին Գունդստապլի որդիների՝ Սմբատ Սպարապետի եւ

Mistrih, *Trois biographies*, p. 107; Գրիխէ պողազը եկեղեցու արձանագրություն. Ալի-
շան, Սիսուան, էջ 75: Թագաւորահայր կոչումը Յ. Կարստը համարում է խնամակա-
լի համարժեքը. տե՛ս Karst, *Armenisches Rechtsbuch*, Bd. 2, S. 3. Ըստ ժ. Տետեյանի՝
կիլիկյան այդ տիտղոսը փոխառված է Բյուզանդիայից. Dédéyan, *Histoire*, p. 314.

¹⁰⁸ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 592, 593, 594, 639, 641, 647;
Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 234, 238; Mistrih, *Trois biographies*, p. 32, 107;
Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 542:

¹⁰⁹ Կիլիկիո իրականութեան մեջ «թագաւորահայր» տիտղոսը, բացի Կոստանդին
Գունդստապլից, շնորհվել է նաեւ Թորոս Գ Հայոց պարոնին եւ Հեթում Բ թագա-
վորին: Սակայն այդ փաստին մենք անդրադառնալու ենք սույն աշխատության
«Հեթում Բ թագավոր եւ եղբայրք նորին» ենթագլխում:

¹¹⁰ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 281, 322, 328, 511, 644; Հե-
թում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 71; Գրիգոր Ակնեցի, Պատմութիւն, էջ 51; Մի-
խայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 612; Հեթում թագաւոր, Պատմու-
թիւն, էջ 82; Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 541:

¹¹¹ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 486, 512, 590, 591, 592 (արքա-
եղբայր ամենայն Հայոց), 641, 644, 645 (արքաեղբայր Կիլիկոյ), 648; Հեթում
Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 70, 73; Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 82, 83;
Սամուէլ Անեցի, Շարունակող, էջ 484; Պողարյան, Յուցակ, հտ. 11, էջ 399;
Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №. 4188, էջ 112:

¹¹² Բոլորովին այլ նշանակությամբ «արքայահայր» տիտղոսը մեկ անգամ հատ-
կացված է նաեւ XIV դարում ապրած ոմն Վասլի, որը հիշատակվում է Լեւոն Ե
(IV) թագավորի 1331 թ. նոյեմբերի 24-ի հրովարտակում. «Գրեցաւ ...ի ջանե-
րութեան Յանէս Իրիցանց եւ արքայհայրութեան Վասլի ծառայի Աստուծոյ».
Langlois, *Cartulaire*, p. 190. Վ. Լանգլուան «արքայհայրութեան» բառը թարգմա-
նել է *ministre dirigeant*, սակայն մեզ թվում է, որ ավելի ճիշտ է այն հասկանալ
«արքայի խոստովանահայր» իմաստով:

Հովհաննես արքեպիսկոպոսի կողմից իրեն շնորհված «նահապետ երկրին Կիլիկոյ», «նոր նահապետ», «մեծ նահապետ Հայոց» եւ «աբրահամեան ծերունի» պատվանունները¹¹³:

Ինչ վերաբերում է Կոստանդնի բուն տիտղոսներին, ապա դրանք արտացոլում են պետական կառավարման ասպարեզում նրա իրականացրած երկու գլխավոր գործառույթները, այն է՝ սպարապետությունը եւ խնամակալությունը: Առաջին խմբին պատկանում են հետեւյալ տիտղոսները.

Գունդստապլ (Comestabulus)¹¹⁴. Ինչպես արդեն նշեցինք, Կոստանդինը Հայոց բանակի գլխավոր հրամանատար էր կարգվել 1207–1210 թթ. միջև: Հետազոտողների կարծիքով՝ Կիլիկիո թագավորության այդ կարեւորագույն գործակալությունը նա ղեկավարել է մինչեւ 1226 թվականը, դրանից հետո գունդստապլի պաշտոնը փոխանցելով իր որդի Սմբատին¹¹⁵:

Սպարապետ¹¹⁶. Նախորդ տիտղոսի հին հայկական համարժեքն է, որը Կոստանդնի պարագայում շատ քիչ է գործածված: Անհրաժեշտ է նշել, որ եթե «գունդստապլը» Հայոց բանակի գլխավոր հրամանատարի պաշտոնական տիտղոսն էր՝ արձանագրված արժույթական վավերագրերում, ապա «սպարապետ» կոչումն ուներ ոչ պաշտոնական բնույթ՝ հանդիպելով միայն պատմագրական երկերում եւ ձեռագրերի հիշատակարաններում:

¹¹³ Տե՛ս Սմբատ, *Տարեգիրք*, *Վենետիկ*, էջ 238, 239; *Մաթեոսյան*, ԺԳ դ. *հիշատակարաններ*, էջ 322, 323, 410, 590:

¹¹⁴ Տե՛ս *Մաթեոսյան*, ԺԳ դ. *հիշատակարաններ*, էջ 101; Սմբատ, *Տարեգիրք*, *Փարիզ*, էջ 118; *Վենետիկ*, էջ 221; Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 147, 148; Միխայէլ Ասորի, *Ժամանակագրութիւն 1871*, էջ 512; Հեթում Կոռիկոսցի, *Պատմութիւն*, էջ 104; Հեթում Կոռիկոսցի, *Խրոնիկոն*, էջ 63; Հեթում Թագաւոր, *Պատմութիւն*, էջ 79; Langlois, *Cartulaire*, p. 116, 123, 125, 131, 134, 136; *Lignages d'Outremer*, p. 66, 92.

¹¹⁵ Տե՛ս Ալիշան, *Միսուան*, էջ 484; Բոռնազյան, *Սոցիալ-տնտեսական հարաբերութիւնները*, էջ 65; *Կատվալյան*, *Կոստանդին*, էջ 612:

¹¹⁶ Տե՛ս *Մաթեոսյան*, ԺԳ դ. *հիշատակարաններ*, էջ 144; Սմբատ, *Տարեգիրք*, *Փարիզ*, էջ 117:

Կոստանդնի խնամակալական գործառույթին վերաբերող հետեյալ կոչումները կազմում են նրա տիտղոսների երկրորդ խումբը.

Պայլ (bail/baill)¹¹⁷. Այս տիտղոսի տակ նկատի է առնված 1221 թվականից Ջապել թագուհու, իսկ 1226-ից նաեւ Հեթում թագավորի խնամակալ կարգվելու Կոստանդնի հանգամանքը: Ինչպես իրավացիորեն նշում է Ռուդ-Կոլենբերգը, Կոստանդինը Ջապելի եւ Հեթումի խնամակալությունը շարունակել է իրականացնել նույնիսկ նրանց չափահաս դառնալուց հետո¹¹⁸:

Պայլ Հայոց (baill d'Ermenie)¹¹⁹. Նախորդից տարբերվում է նրանով, որ բովանդակում է նաեւ Կոստանդնիին վերապահված երկրի խնամակալության կամ կառավարման լիազորությունը: Միֆայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանության շարունակողն այդ լիազորությունը կոչում է «հոգաբարձութիւն աշխարհին», իսկ Կիրակոս Գանձակեցին՝ «հոգս աշխարհին» եզրույթով¹²⁰: Ղ. Ալիշանը Հայոց պայլի պաշտոնը նույնացնում է Արշակունյաց Հայաստանի հազարապետի գործակալության հետ¹²¹:

Ասագ պարոն¹²². «Պայլ» եւ «Պայլ Հայոց» տիտղոսների համար-

¹¹⁷ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 119, 120, 121; Վենետիկ, էջ 222, 224 (3 անգամ); Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 118; Վահրամ Բաբունի, Ոսանաւոր պատմութիւն, էջ 217; Gestes des Chiprois, p. 671; Lignages d'Outremer, p. 67; Barhebraeus, Chronicon, p. 442, 443, 444, 454, 476; Bar Hebraeus, Chronography, p. 379, 380, 381, 389, 408. Հետաքրքիր է, որ Բարհեբրեոսը «պայլ» բառը տառադարձում է հայերենից փոխառված Pali ձեւով:*

¹¹⁸ *Տե՛ս Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 23.*

¹¹⁹ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 223, 224 (3 անգամ), 225; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 148; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 104, 105; Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 64 (2 անգամ); Հեթում Թագաւոր, Պատմութիւն, էջ 79; Gestes des Chiprois, p. 655; Lignages d'Outremer, p. 66 (baill de la terre), 92.*

¹²⁰ *Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 523; 1871, էջ 515; Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 190:*

¹²¹ *Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 484:*

¹²² *Տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 147, 148, 150, 151; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 137; Վենետիկ, էջ 187; Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 63, 71; Հեթում Թագաւոր, Պատմութիւն, էջ 79, 80 (ասագ պարոն Հայոց); Սարգիս Պիժակ, Ժամա-*

ժե՛ն է՝ գործածության մեջ դրված XIII դ. երկրորդ կեսում: Լեւոն Դ (III) քազավորի խնամակալ Հեթումի 1307 թ. հին ֆրանսերեն լեզվով գրված հրովարտական «աւագ պարոն» տիտղոսը վերաբողոքով է «grant seignor» ձեւով¹²³: Անկարեւոր չէ նշել, որ որոշ հայկական աղբյուրներում նույնաբնույթ «մեծ պարոն» տիտղոսով օժտված են նաեւ Եգիպտոսի վեզիրները¹²⁴, ինչը նշանակում է, որ Կիլիկիո «աւագ պարոնի» կամ երկրի կառավարչի պաշտոնը նույնական էր մահմեդական պետությունների այդ գործակալությանը:

Տիտղոսների մի երրորդ խումբ էլ կազմում են անորոշ բովանդակություն ունեցող կամ պատվանուն հիշեցնող հետեյալ կոչումները.

Իշխանաց իշխան¹²⁵. Բագրատունյաց ժամանակներից եկող եւ Հայաստանի՝ արաբական տիրապետության շրջանում գործառության ճանաչություն ունեցող այս տիտղոսը¹²⁶, մեր կարծիքով, տվյալ պարագայում, ընդամենն արտացոլում է այն իրողությունը, որ Կոստանդինը Հայոց իշխաններից առաջինն էր կամ գլխավորը:

Պարոն Հայոց¹²⁷. Այս կոչումը կա՛մ «աւագ պարոն» կա՛մ էլ «իշխանաց իշխան» տիտղոսների տարբերակն է, որի բովանդակության հավելյալ հստակեցումը, դժբախտաբար դժվարանում է նրա գործածության կոնտեքստների հակիրճության պատճառով:

նակագրութիւն, էջ 105; Անանուն, Յիշատակք հանգուցելոց, էջ 543; Tisserant, Codices Armeni, p. 99; Սամուէլ Անեցի, Շարունակող, էջ 484 (աւագ պարոն Հայոց):

¹²³ Langlois, Cartulaire, p. 169. *Կանգլուան, սակայն, այդ տիտղոսը սխալմամբ նույնացնում է «գունդստապլի» պաշտոնի հետ: Իսկ ըստ ժ. Տետեյանի՝ դա թագածառանգի տիտղոսն էր. Dédeyan, Histoire, p. 314.*

¹²⁴ *Անանուն, Ժամանակագրական գրառումներ, էջ 558; Բրիտանական Գրադարանի ձեռագիր Or.5458-Arm.116, էջ 131ա:*

¹²⁵ *Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 144, 175, 190, 229, 236, 410, 487, 590, 591, 593, 639 (իշխանաց իշխան Հայոց), 641, 645; Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 278, 286, 365; Պողարյան, Ժամանակագրութիւն, էջ 261: Մի քանի անգամ էլ այդ տիտղոսը վերաբողոքով է «իշխանաց իշխող» ձեւով. տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 281, 511, 644:*

¹²⁶ *Մանրամասն տե՛ս Юзбашян, Армянские государства, с. 66-69, 84-86.*

¹²⁷ *Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 590, 593, 641 (պարոն ամենայն Հայոց):*

Քազապան¹²⁸. Կարող է ունեցած լինել երկու նշանակություն՝ մեկն արտացոլելով երկրի խորհրդանշական ապավենը կամ երաշխավորը լինելու Կոստանդնի պարագան, մյուսը՝ թագավորի բացակայության ժամանակ Հայոց գահը պահպանելու նրա ստանձնած պարտավորությունը: Նկատի ունենալով, որ նշված տիտղոսն առաջին անգամ նրան շնորհվել է 1255 թվականին գրված մի հիշատակարանում, երբ Հեթում Ա թագավորը գտնվում էր Մոնղոլիայում, այս մեկնաբանությունն անհավանական չպետք է համարել¹²⁹:

Մոզոն. Այս կոչումը որպես Կոստանդնին վերագրված մականուն երեք անգամ գործածված է նրա որդու՝ Հովհաննես արքեպիսկոպոսի հիշատակարաններում. «որդի ... Կոստանդեայ՝ Մոզոն կոչեցելոյ», «որդի ... Կոստանդեա՝ մականուն Մոզոն» եւ «որդի ... Կոստանդեա՝ մականուն Մոզոն կոչեցեալ»¹³⁰: Բառարաններից ոչ մեկում չգտնելով տվյալ անվան բացատրությունը, մեզ մնում է ենթադրել, որ այն փոխառված է հունարեն *μείζων* (= մեծ, հզոր) բառից¹³¹, ուստի ոչ թե տիտղոս, այլ պատվանուն է նշանակում¹³²:

Նշված տիտղոսներից բացի, հայկական ձեռագրերի հիշատակարանները Կոստանդնին օժտում են նաեւ բազմաթիվ պատվանուններով, որոնք սովորաբար հատկացվում են թագավորներին ու թագունի-

¹²⁸ Անդ. էջ 281, 322, 511, 641, 645:

¹²⁹ Ավելի վաղ գրված մի հիշատակարանում (1244 թ.) Կոստանդինն օժտված է նույնաբնույթ «աթոռապահ» տիտղոսով, ինչը, մեր կարծիքով, համապատասխանում է «թագապահ» տիտղոսի առաջին խորհրդանշական իմաստին. տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 229:

¹³⁰ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 590, 639, 641:

¹³¹ Քերականորեն *μείζων*-ը հունարեն *μέγας* ածականի համեմատական աստիճանն է՝ «ավելի մեծ» նշանակությամբ: Կողմնակիորեն «Մոզոն»-ի մեր առաջարկած ստուգաբանության օգտին է խոսում այն իրողությունը, որ Հայկազյան բառարանում առկա է հունարեն նույն արմատից կազմված «մոզանամ» բայը՝ «մեծանալ, առաելուլ, զօրանալ» իմաստով. տե՛ս «Նոր բառգիրք», հտ. 2, էջ 292:

¹³² Մենք դիտավորյալ կանգ չառանք հիշատակարաններում եւ պատմագրական աղբյուրներում Կոստանդնին բազմիցս շնորհված «պարոն» տիտղոսի վրա, քանի որ այն զուրկ է կոնկրետ գործառույթային նշանակությունից եւ հատկացվում է կիրիկյան հասարակության ազնվական ծագում ունեցող բոլոր անձանց:

ներին, ինչպես, օրինակ՝ «ամենաընտիր/ամենընտիր», «ամեներջանիկ», «աշխարհաշէն», «առափինի», «աստուածասէր», «աստուածարեալ», «բարեպաշտ», «երջանիկ», «իմաստուն», «հաննարեղ», «մեծն», «վեհ», «ֆրիստոսամեծար», «ֆրիստոսասէր», «ֆրիստոսասիրեալ»¹³³: Իսկ եթե սրան ավելացնենք, որ որոշ ձեռագրերի թվագրման բանաձևում, թագավորների օրինակով, հիշատակվում է նաև Կոստանդին Պալլի անունը¹³⁴, ապա պարզ կդառնա, որ մենք, ըստ էության, գործ ունենք նրա անձի պաշտամունքի մի յուրահատուկ դրսևորման հետ, որը բացառիկ երեւոյթ է միջնադարյան Հայաստանի պատմության մեջ: Չբավարարվելով միայն բազմազան տիտղոսներով ու արհայավայել պատվանուններով՝ ժամանակագիրներն ու գրիչները հաճախ Կոստանդինն ձոնում են նաև ընդարձակ ու շոյալ գովեստներ՝ դրանցում ճոխությամբ ներկայացնելով նրա կարծեցյալ եւ իրական բարեմասնություններն ու առափնությունները: Կոստանդինի անձի պաշտամունքի ձեւավորման գործում մեծ ավանդ են ներդրել հատկապես նրա ընդարձակ գերդաստանի գիտուն անդամները՝ որդիներից Հովհաննեսը եւ Սմբատը, իսկ ծոռներից՝ Քորոսը¹³⁵, ինչն, ակնբերաբար, արհայահոր ստեղծած վերոհիշյալ կլանային համակարգի արտահայտություններից մեկն է: Դա չի նշանակում, անշուշտ, որ մյուս հայ ժամանակագիրներն ու հիշատակագիրները մասնակցություն չեն ունեցել այդ գործին¹³⁶: Այդ պաշտամունքի բնույթի եւ տարողության մասին իրական պատկերացում տալու նպատակով՝ հարկադրված ենք ընդարձակ փոխվածքներ կատարել միջնադարյան աղբյուրներից. «Իսկ մեծ իշխանն Կոստանդին իբրև ա՛ն զիշխանութիւնն թագատրութեանն որդոյ իւրում

¹³³ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 144, 201, 229, 236, 280, 322, 389, 410, 487, 511, 590, 591, 593, 639, 641, 644, 645, 647; Tisserant, Codices Armeni, p. 99.

¹³⁴ Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 143–144, 175, 190, 201, 229, 239:

¹³⁵ Հմմտ. Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 281, 322, 343, 410, 487, 511, 590, 593, 639, 641, 644, 645, 717; Սմբատ, Տարեգիրք, Վեներիկ, էջ 237–238:

¹³⁶ Հմմտ. Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 612; Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 190; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 218; Գրիգոր Ակնեբցի, Պատմութիւն, էջ 35, 51:

Հեթմոյ, զամենայն հոգս արհայութեան յանձն առեալ՝ իմաստաբար կարգաւորէր. զկէսն հնազանդէր սիրով, եւ զոչ հնազանդան բառնայր ի միջոյ՝ զոմանս փախստական առնելով եւ զայս մահուամբ: Արար սէր եւ միաբանութիւն ընդ սուլտանին Հոռոմոց, որում անուն էր Ալադին, որ ունէր զբազում աշխարհս ընդ ձեռամբ իւրով: Այսպէս առնէր ընդ ամենայն շրջակայ ազգսն, եւ յամենայն կողմանց խաղաղացոյց զաշխարհս» (Կիրակոս Քանձակեցի)¹³⁷. «Դատապարտ այցելու եւ անիմաստ բարուն արհաւիրայր Հայոց Յովհաննէս, որ երբեմն Պաղտոյն, որդի Բրիստոսասիրեալ եւ ամենաընտիր, երջանիկ եւ բարեպաշտ իշխանաց իշխանին եւ թագապահին՝ պարոնին ամենայն Հայոց Կոստանդեա, մականուն Մոզոն կոչեցեալ, յՌուբինեանց տոհմէ, որոց յիշատակն արհնեալ յԱստուծոյ եւ յաստուածայնոցդ լիցի, ամէն» (Հովհաննէս արհաւիրայր)¹³⁸. «Ի թուին ԶԺԲ (1263) սուգ անբերելի ժամանեաց աշխարհին Կիլիկոյ, զի ամենայն ոք մարգարէական հոգով խօսէր թէ շինութիւն այսմ աշխարհի ի կենդանութեան արհայահօրն Կոստանդեայ է, որ եւ ի սոյն ամի յամսեանն փետրուարի ԻԴ, յատուր կիրակէի թագաւորահայրն Կոստանդին փոխեցաւ ի կենցաղոյս բարիոք խոստովանութեամբ առ Քրիստոս: Եւ եր նա իբրեւ գնահապեա երկրին Կիլիկոյ եւ նորին խրատով անդրդուելի մնային եւ հաստատուն» (Սմբատ Սպարապետ)¹³⁹. «Թորոս, ի շնորհացն Աստուծոյ որդի արհային Հայոց բարեպաշտին Լեւոնի երկրորդի՝ ի Քրիստոս Աստուած հանգուցելոյ, որ է որդի գնացելոյն առ Աստուած Բրիստոսասիրին Հեթմոյ արհայի առաջնոյ, որ եւ նա որդի տեառն Կոստանդեայ՝ շինողի երկրիս Կիլիկեցոց եւ սեպհականողի զերկիրս զայս Հայկազեան սեռիս, որոց ողորմեսցի Քրիստոս եւ հանգուցէ գնոսա ընդ սուրբս իւր» (Թորոս արհայորդի)¹⁴⁰. «Յատուս յայսոսիկ փոխեցաւ մահուամբ ի Քրիստոս թագաւորահայրն Հայոց պարոն Կոստընդինն ալետրեալ եւ լի աւուրբ, եւ եթող սուգ մեծ բարեպաշտ թագաւորին Հեթմոյ եւ այլ ամենայն որդ-

¹³⁷ Կիրակոս Քանձակեցի, Պատմութիւն, էջ 190:

¹³⁸ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 641:

¹³⁹ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 237–238:

¹⁴⁰ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 717:

տոնն եւ աշխարհիս Հայոց: Վասն զի պարոն Կոստընդինն էր պատճառ շինութեան աշխարհիս Հայոց¹⁴¹ եւ հաստատութիւն թագաւորութեան որդայ իւր Հեթմոյ» (Գրիգոր Ակներցի)¹⁴²:

Ուշադրություն դարձնելով այս մեջբերումների ընդգծված հատվածներին՝ կարելի է վերականգնել Կոստանդնի անձի պաշտամունքի բովանդակությունը կազմող հիմնական տարրերը, որոնք են.

ա. Հեթումի գահակալության տարիներին Կոստանդինն էր Հայոց թագավորության իրական կառավարիչը («զամենայն հոգս արհայութեան յանձն առեալ՝ իմաստաբար կարգատուրէ») ¹⁴³: Մի հիշատակագիր էլ Կոստանդինն պարզապես կոչում է «իշխեցողն ամենայն Հայոցս զարմից»¹⁴⁴:

բ. Նա էր հարեւան ազգերի հետ հաշտություն կնքողը եւ Կիլիկիայի համար խաղաղություն ապահովողը («այսպէս առնէր ընդ ամենայն շրջակայ ազգսն, եւ յամենայն կողմանց խաղաղացոյց զաշխարհս»):

գ. Նա էր Հայոց երկրի շինության ու բարօրության խորհրդանիշը («շինութիւն այսմ աշխարհի ի կենդանութեան արհայահօրն Կոստանդեայ է») կամ «Կոստընդինն էր պատճառ շինութեան աշխարհիս Հայոց»):

դ. Նա էր երկիրը կառուցողն ու այն հայ ժողովրդի սեփականությունը դարձնողը («շինող երկրիս Կիլիկեցոց եւ սեպհականող զերկիրս զայս Հայկազեան սեռիս»):

ե. Նա էր իր որդուն՝ Հեթում թագավորի իշխանության հաստատուն հենարանը («հաստատութիւն թագաւորութեան որդայ իւր Հեթմոյ»):

զ. Նա էր Կիլիկիո ժողովրդի նահապետը, որի խորհուրդները մարդկանց վստահություն եւ հաստատակամություն էին ներշնչում («էր նա իբրեւ զնահապետ երկրին Կիլիկոյ եւ նորին խրատով անդրդուելի մնային եւ հաստատուն») ¹⁴⁵:

¹⁴¹ Այս բնութագրման տարբերակն է հիշատակարաններից մեկում Կոստանդինն շնորհված «աշխարհաշէն» պատվանունը. Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 410:

¹⁴² Գրիգոր Ակներցի, Պատմութիւն, էջ 51:

¹⁴³ Հմմտ. նաեւ՝ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 526; 1871, էջ 518:

¹⁴⁴ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 198:

¹⁴⁵ «Նահապետ» հորջորջման մասին տե՛ս նաեւ՝ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ

է. Ի լրումն այս ամենի՝ Կոստանդինն իբր ծագում էր Ռուբինյան փառապանծ տոհմից («յՌուբինեանց տոհմէ») ¹⁴⁶, մի վերագրում, որն, ինչպես արդեն նշեցինք, նշմարտության հետ որեւէ կապ չունի:

Հարկ է նշել, որ որքան էլ չափազանցված թվացող՝ այս բնութագրումների մեծագույն մասը լիովին համապատասխանում է իրականությանը: Սկսած 1221 թվականից, երբ Կոստանդինն ստանձնեց Ջապել թագուհու խնամակալությունը, մինչև 1236 թվականը, այն է՝ Հեթում թագավորի չափահաս դառնալու ժամանակը, նա, ըստ էության, Հայոց թագավորության միահեծան տերն էր, բացառությամբ, թերևս, Փիլիպոս թագավորի գահակալության կարճատեւ շրջանի: Այդ տասնհինգ տարիների ընթացքում Կոստանդինը, թեւ հաճախ բռնի մեթոդների կիրառմամբ, իրականացրեց հիրավի «աշխարհաշեն» ¹⁴⁷ գործեր՝ հաղթահարելով Լեւոն թագավորի մահից հետո Կիլիկիո թագավորությունում ստեղծված անիշխանական վիճակը, չեզոքացնելով Հայոց պետության գոյությանն սպառնացող ներքին եւ արտաքին վտանգները եւ վերջնականապես լուծելով Ջապելի գահաժառանգության հետ կապված բարդագույն խնդիրը: Միայն այսօրին արդեն իսկ բավական է՝ նրան ազգի փրկիչ, պետականություն կերտող եւ երկիր շենացնող կոչելու համար: Սակայն Կոստանդինն իր եռանդուն գործունեությունը շարունակեց նաեւ Հեթումի չափահաս դառնալուց հետո՝ նրա հետ կիսելով երկրի կառավարման պատասխանատվությունը, թիկունք կանգնելով իր որդու ֆաղափական նախաձեռնություններին, վտանգի պահին անձամբ գլխավորելով Հայոց բանակը՝ ըստ այդմ վերածվելով պետության կայունության եւ անվտանգության երաշխավորի: Հետեւաբար, մեկնելով այս ամենից, պարտավոր ենք արձանագրել, որ հակառակ ֆրիստոնեական առաքինություններով օժտված շլինելու իրողությանն ու դաժանաբարո խառնվածքին, հանձին Կոստանդինի՝ մենք գործ ունենք Կիլիկիայի պատմության մեծագույն պետական այրերից մեկի հետ,

239: Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 322, 323:

¹⁴⁶ Տե՛ս նաեւ՝ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 486:

¹⁴⁷ Բնորոշումը Հովհաննէս արքանդբորն է. տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 410:

որի վաստակը, թերեւս, զիջում է միայն Թորոս Բ իշխանի եւ Լեւոն Բ (I) թագավորի մեծագործություններին: Հայոց թագավորության համար երկնաշնորհ բարեբախտություն էր, որ նրա պատմության ամենանակատագրական ժամանակամիջոցներից մեկում երկրի կառավարման ղեկը գտնվում էր այդպիսի մի հզոր անհատականության երկաթե ձեռքում: Կոստանդնի խնամակալության պարագան, իր բախտորոշ եւ տպավորիչ արդյունքներով, թերեւս, գահաժառանգության իրավունքի հետ կապված այդ ինստիտուտի ամենալուրջ ֆննթյունն էր ոչ միայն Կիլիկիո, այլեւ համաշխարհային պատմության մեջ:

* * *

Բարոյական կերտվածով, մարդկային նկարագրով, աշխարհաբանական մտածողությամբ եւ ավելի շատ դիվանագիտությամբ, քան առնականամանն ապավինելու հակվածությամբ իր հոր հակապատկերն էր Հեթում Ա թագավորը: Նրա անվան հետ են կապված Կիլիկիո թագավորության արտաբնիկ ֆաղափականության երեք նշանակալից հաջողություններ՝ ձեռական ենթակայության ճանաչման գնով իր վերելքի շրջանն ապրող Ռուսի սուլթանության չեզոքության ապահովումը¹⁴⁸, մոնղոլների հետ կնքված ռազմավարական դաշինքը եւ Անտիոքի իշխանապետության նկատմամբ փաստացի հայկական պրոտեկտորատի հաստատումը: Սակայն մենք հարկ չենք համարում կանգ առնել այս հարցերի վրա, քանի որ դրանք, որքան էլ կարեւոր, ուղղակի առնչություն չունեն գահաժառանգության իրավունքի եւ իշխանության «լեգիտիմության» ուսումնասիրման մեր հետապնդած խնդրի հետ: Նկատելի է, որ երկրի կառավարման գործում Կոստանդինն ու Հեթումը, որքան էլ խառնվածով ու գործելակերպով տարբեր, շահեկանորեն լրացնում էին միմյանց՝ առաջինը լինելով պետության ուժի եւ կարգավորիչ դերի մարմնավորումը, իսկ երկրորդը՝ նրա բարոյական արժեքների կրողը: Ընդ որում, բարոյական այդ արժեքները Հեթումի մտապատկերում դուրս էին գալիս կիլիկյան իրականության նեղ շրջանակից եւ ընդգրկում ողջ ֆրիստոնեական ընկերակցությունը:

¹⁴⁸ Թեւեւ այդ գործընթացն սկսվել էր դեռեւս Հեթումի գահակալումից առաջ, 1219-1221 թվականներին. հմմտ. Mutaflan, Recherches, p. 82-83.

Այս առումով չափազանց բնութագրական է Հեթում Կոռիկոսցի պատմիչի ֆրանսերենով գրված «Արեւելի պատմության ծաղկափայլ» գրքի այն տեղեկությունը, որ մոնղոլական կայսրության մայրաքաղաք Կարակորումում Հայոց թագավորն, ըստ էության, հանդես էր գալիս ոչ միայն սեփական երկրի շահերի պաշտպանի, այլև՝ քրիստոնեության դեսպանի դերում¹⁴⁹: Քվարկելով Հեթում թագավորի կողմից Մանգու խանին ներկայացված խնդրանքները, պատմիչը դրանց շարժում նշում է նաև հետևյալ երեքը. «որ հավիտենական խաղաղություն հաստատվի թաթարների եւ քրիստոնյաների միջեւ, ապա՝ որ թաթարների կողմից նվանված եւ նվանվելիք բոլոր երկրներում քրիստոնյաների եկեղեցիները, քահանաները, սպասավորներն ու կրոնավորները լինեն ազատ ու ոչ ենթակա որեւէ տեսակի ստրկության, իսկ այնուհետեւ՝ որ Մանգու խանը բարեհաճի օգնություն եւ խորհուրդ տալ Սուրբ եկկիրը մահմեդականների ձեռքից ազատելու եւ այն քրիստոնյաներին վերադարձնելու համար»¹⁵⁰: Իհարկե, Կոռիկոսցու այս տեղեկությունը բացարձակ ճշմարտություն չի կարելի համարել, քանի որ իր գիրքը գրելով ֆարոզական նպատակով, այն է՝ Հռոմի պապին եւ արեւմտյան հասարակությանը նոր խաչակրաց արշավանքի դրդելու մտադրությամբ, նա շահագրգռված պետք է լիներ Հայոց թագավորին ներկայացնել որպես համաքրիստոնեական մտածողության տեր մի անձնավորություն: Սակայն Հեթում Կոռիկոսցու տեղեկության հավաստիությունը որոշ չափով ամրապնդում է նաև Գրիգոր Ակնեցիին, գրելով. «Քրիստոսապսակ եւ բարեպաշտ թագաւորն Հեթում, իբրեւ լսեաց զայս ամենայն բարկութիւնս, որ գործեցաւ ի վերին աշխարհն արեւելից, ապա վասն սիրոյ քրիստոնէից, եւս առաւել վասն իւր սեփական երկրիս, զնաց բազում զանձիւր առ Մանկու Ղանն, եւ հոգաց շքողով յերկիրս իւր զայսպիսի բարկութիւնս»¹⁵¹: Իսկ մի քանի

¹⁴⁹ Հմմտ. Grousset, Histoire, III, p. 529.

¹⁵⁰ Régnier-Bobler, Croisades, p. 835. Հմմտ. Հեթում, Պատմութիւն Թաթարաց, էջ 43: 3. Պրավերի կարծիքով՝ Հեթում թագավորի եւ նրա փեսա, Անտիոքի պրինց Բոհեմունդ VI-ի կողմից այսպիսի վարկածի տարածումը նպատակ էր հետապնդում հավատակիցների առջեւ արդարացնել «հեթանոս» մոնղոլների հետ կնքած իրենց դաշինքը. տե՛ս Prawer, Histoire, II, p. 423.

¹⁵¹ Գրիգոր Ակնեցի, Պատմութիւն, էջ 37:

այլ աղբյուրներ, ուղղակիորեն չհաստատելով Հեթում Կոռիկոսցու վարկածը, լիովին համապատասխանում են նրա ոգուն: Այսպես, հիշատակարաններից մեկը Հեթում Ա-ին կոչում է «մեծ թագաւորն Հեթում ամենայն քրիստոնէից»¹⁵²: Մի ուրիշը նշում է, որ նա «գերագանց գտաւ բարեպաշտութեամբ ամենայն թագաւորացն առաջնոցն, միջնոցն եւ վերջնոցս»¹⁵³: Իսկ ըստ Վարդան Արեւելցու՝ 1259 թվականին Հեթումը, մասնակցելով Հոլավու խանի սիրիական արշավանքին, ամենուրեք իր պաշտպանության տակ է վերցրել քրիստոնյա հոգեւորականներին եւ աշխարհականներին. «Յեթքն հարիւր եւ ութ թուին շոգաւ Հոլաւուն յաշխարհն Միջագետաց, եւ ա՛ն զհաղախն եւ զգաւառսն զայնոսիկ:... Ընդ նմա էր ի յառնույն զամենայն աշխարհն Շամայ՝ եւ մեր պսակաւորն Հեթում, ազատելով ի մահուանէ զքրիստոնեայնսն զեկեղեցականս եւ զաշխարհականս, յամենայն տեղիս լինելով»¹⁵⁴: Հեթումի քրիստոնեական առաքինությունները շեշտում է նաեւ նշանավոր մանրանկարիչ Քորոս Ռուլինը. «Աւարտեցաւ մատեանս այս աստուածախաւս... հրամանաւ եւ ծախիւք աստուածասէր եւ բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ, որ եւ ըստ մեծ յուսոյն իւրոյ զոր ունէր առ Աստուած, յաւել եւ զայն՝ զբասէր ես լինել, եւ սիրող կարգաց եւ կրանից եկեղեցոյ եւ նորին խորհրդոց, տանից տերունականաց եւ սրբոց վկայից»¹⁵⁵: Մի այլ հիշատակարանում, նկատի ունենալով Հեթումի կերպարի համամարդկային կշիռը, նույն Ռուլինը նրան կոչում է «մեծ երախտաւոր»¹⁵⁶ ամենայն սէռից Հայոց եւ ազգաց բազմաց»¹⁵⁷: Ավելորդ չէ, թերեւս, նշել նաեւ, որ ըստ Հովհաննէս Դարդելի՝ Հեթում թագավորը նույնիսկ դասվել է սրբերի շարքը. «Սոյն այս արքայ Հեթում հրաժարեալ ապա յաթոռոյ, եղել կրօնաւոր, եւ դասեցաւ ընդ սուրբս, եւ կոչեցաւ Սուրբ Մակար»¹⁵⁸: Քեւ սա

¹⁵² Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 384:

¹⁵³ Անդ, էջ 320:

¹⁵⁴ Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 151:

¹⁵⁵ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 334:

¹⁵⁶ Ձեռագրում՝ երեխտեւոր:

¹⁵⁷ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 335:

¹⁵⁸ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 16:

ակնհայտ թյուրիմացություն է, բայց որպես այդպիսին իսկ վկայում է Հեթումի սրբակենցաղության համընդհանուր ընկալման մասին:

Մենք հարկ չենք համարում հատուկ կանգ առնել միջնադարյան հիշատակարաններում եւ ժամանակագրություններում Հեթումին շնորհված բազմապիսի պատվանունների վրա՝ «աստուածասէր», «բարեպաշտ», «բարի», «մեծն», «բրիստոսասէր», «բրիստոսապսակ» եւ այլն, քանի որ դրանք, ընդհանուր բնույթ կրելով, հատկացվում են համարյա բոլոր հայ գահակալներին: Սակայն չենք կարող շրջանցել այն հանգամանքը, որ Հեթումի պատվանունների շարքում ամենատարածվածը «բարեպաշտն» է¹⁵⁹, ինչով նա առանձնանում է մնացյալ բոլոր հայ թագավորներից, եւ ինչը ես մեկ անգամ հաստատում է նրա սրբակենցաղության մասին ձեւավորված պատկերացումը: Հետեւաբար, եթե Կիլիկիո առաջին թագավորը հայտնի է «Լետն Մեծ» կամ «Լետն Մեծագործ» անունով, ապա ճիշտ կլիներ երրորդ թագավորին էլ կոչել «Հեթում Բարեպաշտ» անունով: Համենայն դեպս, Հեթումի առնչությամբ մեզ հայտնի է միջնադարյան աղբյուրներում «բարեպաշտ» բառի ետադաս գործածության տասս դեպք¹⁶⁰, ինչն ակնհայտ է դարձնում նրա մականվանային իմաստը: «Բարեպաշտն Հեթում» եւ «Հեթում Բարեպաշտ» բառակապակցությունների տարբերությունը, կարծում ենք, բացատրության կարիք չունի: Ի դեպ, այդ պատվանվան սառական համարժեքով է Հեթումին մեծարում նաեւ Բարհեբրետսը՝ նրան կոչելով *malkā mhaymōnā* (բարեպաշտ կամ հավատացյալ թագավոր)¹⁶¹:

¹⁵⁹ *Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 186, 201, 203, 214, 220, 233, 236, 238, 239, 251, 287, 288, 289, 296, 301, 315, 318, 320, 322, 324, 327, 328, 329, 334, 335, 343, 350, 364, 380, 389, 393, 396, 409, 411, 440, 548, 551, 645; Գրիգոր Ակեբրցի, Պատմութիւն, էջ 31, 32, 35, 37, 45, 51, 55, 56, 59, 62; Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 278, 364, 370; Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 88; Գրիգորիս, Վարք Ներսեսի, էջ 83; Բաղդասարյան, Գեորգ Սկեւոացու վարքը, էջ 412:*

¹⁶⁰ *Տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 238, 239, 251, 287, 324, 350, 364, 396, 551; Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 278: Ըստ երեւույթին, այս դեպքերի ազդեցութեամբ «բարեպաշտ» բառը երբեմն ետադաս է գործածված նաեւ Լեւոն Գ (II) թագավորի պարագայում. տե՛ս Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 438, 439, 508, 608, 706, 709, 717, 719, 793:*

¹⁶¹ *Barhebraeus, Chronicon, p. 526; Bar Hebraeus, Chronography, p. 449.*

Այս ամենից, թերևս, կարող է ստեղծվել այն միակողմանի տպավորությունը, որ Հեթումը սուկ փրիստոնեական առափնություններով օժտված բարոյական կերպար էր, այնինչ անժխտելի է, որ դրանով հանդերձ, նա նաև դրսեւորել է պետական մեծ գործչին վայել բազմաթիվ ունակություններ, ընդ որում, թե՛ տնտեսական, թե՛ ռազմական, եւ թե՛ դիվանագիտական ասպարեզներում: Նրա օրոք էր, որ Այասը դարձավ միջազգային առևտրի կարևոր կենտրոններից մեկը, նրա շնորհիվ էր, որ գենֆի ուժով չեզոքացվեց Կիլիկիայի արևմտյան սահմանների մերձակայքում հայտնված թուրմենական Կարամանների ցեղից սպառնացող վտանգը, նրա վարած ռազմական արշավանքների արդյունքում էր, որ Կիլիկիո Հայոց պետությունը հասավ իր տարածքային ընդարձակման բարձրակետին՝ ընդգրկելով ժամանակին Գող Վասիլի իշխանության մաս կազմած համարյա բոլոր գավառները, եւ վերջապես, նրա փայլուն դիվանագիտության պսակն էր հայ-մոնղոլական դաշինքի կոտմը, ինչի շնորհիվ Կիլիկիո թագավորության կյանքը երկարաձգվեց տասնյակ տարիներով¹⁶²: Հետագոտողների կողմից հատկապես բարձր է գնահատված Հեթում թագավորի ռազմավարական նշանակություն ունեցող այս վերջին ձեռքբերումը: Ինչպես գրում է Ռ. Գրուսեն, Հեթումը «կարողացավ իր հաշիվների մեջ ընդգրկել ողջ Ասիան՝ Պեկինից մինչև Սեն-ժան դ'Աբր, եւ մոնղոլական հսկայական հորձանուտի մեջ տեսնել Արեւմուտֆի փրկությունը»¹⁶³, ապա՝ «այդ հարցում նա ավելի մեծ ֆաղափական պայծառատեսություն ցուցաբերեց, եւ հեռանկարի ավելի խոր ընկալում, քան, ասենք Ֆրիդրիխ II-ը կամ Կուլոփիկոս IX-ը»¹⁶⁴, իսկ մի այլ տեղ՝ «պատմությունը պարտավոր է նրան մեծարել որպես միջնադարի ամենապայծառ եւ ամենազորեղ ֆաղափական հանճարներից մեկին»¹⁶⁵:

Կարծում ենք, հատուկ ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ մոնղոլների հետ դաշինքը Հեթում թագավորը կնքել էր Խաչենի իշ-

¹⁶² Հմմտ. Grousset, Histoire, III, p. 529.

¹⁶³ Անդ, էջ 636:

¹⁶⁴ Grousset, L'Empire, p. 397.

¹⁶⁵ Grousset, Histoire, III, p. 636. Իսկ Կ. Մութաֆյանը Հեթում Ա-ին համարում է «Հայոց պատմության ամենամեծ միապետը»։ Mutafian, Léon V Lusignan, p. 208.

խան Հասան Զալալ-Գուլայի միջնորդությամբ¹⁶⁶, ինչը Կիլիկիո Հայոց թագավորության եւ Մեծ Հայքի հայ իշխանների համագործակցության ամենանշանակալի դրվագներից մեկը պետք է համարել: Առիթից օգտվելով, տեղին է նշել, որ այդ համագործակցության մյուս հիշարժան իրողություններն են՝ Զաֆարե ամիրսպասալարի գրած նամակը Լեւոն Բ (I) թագավորին, Հեթում Ա-ի Մեծ Հայք կատարած երկու այցելությունները, Հայաստանի նշանավոր վարդապետներ Մխիթար Գոշի, Հովհաննես Վանականի, Վարդան Արեւելցու, Կիրակոս Գանձակեցու, Հովհաննես Երզնկացու, Մովսես Երզնկացու, ինչպես նաեւ Սյունյաց եպիսկոպոսներ Տեր Սարգսի, Տեր Հայրապետի եւ Ստեփանոս Օրբելյանի փոխադարձ այցելությունները Կիլիկիա, Լեւոն Գ (II) թագավորի ուխտագնացությունը Սուրբ Թադեի վանք, վերջինիս անդամագրումը Տաթևի վանական միաբանությանը, Կիլիկիո գահակալների կողմից Մեծ Հայքի վանճերին նվիրված ձեռագրերը, Հյուսիսային Հայաստանի վանճերում կիլիկեցի վարդապետների ուսումնառությունն ու ծավալած մանկավարժական գործունեությունը, բնիկ հայաստանցի հեղինակների կողմից Կիլիկիո թագավորների պատվերով գրված երկասիրությունները, Հռոմկլայի կաթողիկոսարանի եւ Հայաստանի հոգեւոր կենտրոնների մշտական թղթակցությունը եւ այլն: Այս ամենը, վկայելով Կիլիկիո թագավորության եւ Մեծ Հայքի սերտ փառակալական, հոգեւոր եւ մշակութային համագործակցության մասին¹⁶⁷, միեւնույն ժամանակ ակնհայտ է դարձնում խնդրի լուրջ մասնագիտական ֆննդության անհրաժեշտությունը, ինչն սպասում է իր հետազոտողին:

Զնայած հայ-մոնղոլական դաշինքի շնորհիվ ձեռքբերված նշանակալից հաջողություններին՝ Հեթում թագավորին, իր կյանքի վերջում, լուրջ հիասթափություն էր սպասում: 1266 թվականին, Մառիի մոտ տեղի ունեցած նակատամարտում հայկական բանակը, որը գլխավորում էին Հեթումի որդիներ Լեւոնն ու Թորոսը, ծանր պարտություն կրեց մամլուկներից¹⁶⁸:

¹⁶⁶ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 285:

¹⁶⁷ Հմմտ. Микаелян, История, с. 289–290; Թովմասյան, Քրեական իրավունք, էջ 160; Mutafian, Recherches, p. 132–133.

¹⁶⁸ Մառիի ճակատամարտի եւ նրա հետեւանքների մասին մանրամասն տե՛ս Ամբաստ,

Դրանից հետո վերջիններս ասպատակեցին Դաշտային Կիլիկիան, ավարի մատնեցին Այաս, Ադանա, Մսիս եւ Սիս ֆաղաֆները¹⁶⁹, իսկ այնուհետեւ, կոտորելով ու գերեվարելով տասնյակ հազարավոր մարդկանց, թերեւս, մոնղոլների ահից վերադարձան իրենց երկիրը: Սա, միգուցե, կիլիկիահայերի կրած ամենածանր պարտությունն էր Բյուզանդական կայսր Հովհաննես Կոմնենոսի 1137/8 թվականի հայտնի արեւելյան արշավանքից հետո¹⁷⁰: Ի լրումն երկրին պատճառված մեծ վնասների ու ավերումների՝ Հեթում թագավորին նաեւ անձնական ողբերգություն էր բաժին ընկել. նրա որդիներից Թորոսն սպանվել էր մարտի դաշտում, իսկ Լեւոնը՝ շղթայակապ գերի տարվել Եգիպտոս: Հասկանալի է, որ դրանից հետո Հեթումի ուշֆնումիտոբը գամված պետք է լիներ իր որդուն գերությունից ազատելու վրա: Եգիպտոսի սուլթանը Լեւոնին ազատ արձակելու դիմաց պահանջել էր մամլյուֆներին զիջել Կիլիկիայի Ամանոսյան երկրամասի որոշ բերդեր¹⁷¹ եւ մոնղոլական գերությունից վերադարձնել իր մտերիմ մարդկանցից մեկին՝ Սոնկուր ալ-Աշկարին¹⁷²: Հեթումի համար ավելի դժվար եղավ կատարել այս

Տարեգիրք, Վենետիկ, էջ 246–251; Գրիգոր Ակներցի, Պատմութիւն, էջ 52–61; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 162–163; Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 223–224; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 342–343, 351, 355, 362; Barhebraeus, Chronicon, p. 522–523; Bar Hebraeus, Chronography, p. 445–446; Աբու-Ֆիդա (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 236–237); Հարցի լավագույն ուսումնասիրությունը տե՛ս Canard, Arménie-Cilicie, p. 228–237.

¹⁶⁹ Barhebraeus, Chronicon, p. 523; Bar Hebraeus, Chronography, p. 446.

¹⁷⁰ Ս. Ռանսիմենի կարծիքով՝ այդ պարտությունից հետո Հայոց թագավորությունն այդպես էլ այլեւս ուշքի չեկավ. տե՛ս Runciman, A History, III, p. 323. Իսկ ըստ Յ. Պրավերի՝ դրա անմիջական հետեւանքը եղավ նաեւ Անտիոքի իշխանապետության անկումը (1268 թ.). տե՛ս Prawer, Histoire, II, p. 482. Հմմտ. նաեւ Richard, Histoire des Croisades, p. 431.

¹⁷¹ Տե՛ս Աբու-Ֆիդա (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 237): Ըստ Գրիգոր Ակներցու՝ Բայբարսը պահանջել էր զիջել միայն Շիհ բերդաքաղաքը. տե՛ս Գրիգոր Ակներցի, Պատմութիւն, էջ 59:

¹⁷² Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 248–249; Barhebraeus, Chronicon, p. 523; Bar Hebraeus, Chronography, p. 446; Աբու-Ֆիդա (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 237); Գրիգոր Ակներցի, Պատմութիւն, էջ 60–61; Յովհաննէս Դարդեկ, Ժա-

վերջին պահանջը. նա ճանապարհվեց Թավրիզ, Աբաղա խանի մոտ¹⁷³, բայց ֆանի որ մոնղոլները շկարողացան անմիջապես գտնել Սոնկուրին, ձեռնունայն ետ դարձավ: Որոշ ժամանակ անց նա Աբաղայի մոտ ուղարկեց Սմբատ Սպարապետի որդի Լեւոնին¹⁷⁴: Այս անգամ Սոնկուր ալ-Աշկարը հայտնաբերվեց Խորասանի խորհերում¹⁷⁵ եւ, բերվելով Կիլիկիա, հանձնվեց Հեթում թագավորին: Գերինների փոխանակումը տեղի ունեցավ Մառիի ճակատամարտից շուրջ մեկուկես տարի հետո, եւ Լեւոնը վերջապես վերադարձավ իր երկիրը:

Որդուն ազատագրելու նպատակով Հեթումի թափած ահռելի ջանքերն ու զոհողությունները բացատրվում էին ոչ միայն նրա հայրական զգացումներով, այլեւ, մեր կարծիքով, ունեին մի այլ, թերեւս, ոչ պակաս կարեւոր դրդապատճառ: Դա Լեւոնի գահաժառանգ լինելու հանգամանքն էր՝ նախ անդրանիկության իրավունքով, եւ ապա՝ այն պարզ պատճառով, որ նա Հեթումի միակ ողջ մնացած արու զավակն էր: Թորոսն, ինչպես տեսանք, սպանվել էր Մառիի ճակատամարտում, իսկ Հեթումի երրորդ որդին՝ Ռուբենը, մահացել էր դեռեւս մանուկ հասակում¹⁷⁶: Լեւոնի գերեվարմամբ, ըստ այդմ, վտանգվել էր Հայոց թագավորության բնականոն հաջորդականության ապահովումը, եւ նրան շփրկելու պարագայում Հեթումն ստիպված պետք է լինէր Հայոց գահը հանձնել իր հինգ դուստրերից մեկին՝ բոլորն էլ, բացի Ռիտայից, ամուսնացած օտարների հետ¹⁷⁷: Ամենայն հավանականությամբ, նրա ընտրությունը պիտի կանգ առներ Անտիոքի պրինց եւ Տրիպոլիի կոմս Բոհեմունը VI-ի վրա, որը Հեթումի փեսաներից ամենատիտղոսավորն

ձանակագրութիւն, էջ 21; Hayton, La Fleur (Régner-Bohler, Croisades, p. 842).

¹⁷³ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 249; Barhebraeus, Chronicon, p. 524; Bar Hebraeus, Chronography, p. 447; Աբուլ-Ֆիդա (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 237); Գրիգոր Ակներցի, Պատմութիւն, էջ 61:*

¹⁷⁴ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 249; Գրիգոր Ակներցի, Պատմութիւն, էջ 61:*

¹⁷⁵ *Կամ՝ Սամարղանդի երկրում, ինչպես գրում է Բարհեբրեոսը. տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 524; Bar Hebraeus, Chronography, p. 447.*

¹⁷⁶ *Տե՛ս Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 220; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 105:*

¹⁷⁷ *Հմտ. Rüdiger-Collenberg, The Rupenides, III (H2).*

էր: Նման հանգուցալուծման դեպքում Հայոց թագավորությունը նորից կարող էր հայտնվել այնպիսի վիճակում, ինչպիսին էր Փիլիպոս թագավորի տխրահոյակ գահակալության շրջանը: Կար, իհարկե, նաեւ մի այլ հնարավորություն: Հէթումը կարող էր, գուցեւ ըստ օրենքի պարտավոր էր, գահը փոխանցել Լեւոնի, այն է՝ Հայոց միակ օրինական թագաժառանգի մանկահասակ որդուն՝ Հէթում Բ-ին (ծնվ. 1266 թ.): Համենայն դեպս այդպիսի կարգ է սահմանում Սմբատ Սպարապետի Դատաստանագիրը. «Եւ թե որդիքն մեռել լինին թագաւորին, նա որդոցն որդիքն ժառանգեն զթագաւորութիւնն եւ ոչ դստերացն, զի քանի որձ դասուն ժառանգքն բաւեն, նա իզացն խափանած է յաւրինաց»¹⁷⁸: Այս դեպքում էլ, Հէթում կրտսերի անչափահասության պատճառով, Հայոց թագավորությունն անխուսափելիորեն կհայտնվէր տեսականապես խնամակալի կողմից կառավարվելու փաստի առջեւ, ինչպես դա տեղի էր ունեցել իր իսկ՝ Հէթում Ա-ի գահակալության շրջանում: Սակայն հարցական է, թե այս անգամ բախտը նորից կժպտա՞ր հայությանը եւ կգտնվե՞ր, արդյոք, Կոստանդին Պալլի պես մի հզոր անհատականություն, որն ի վիճակի լինէր երկիրը գերծ պահել ներքին ցնցումներից ու չեզոքացնել թագավորությանն սպառնացող արտաքին վտանգները:

Լինելով Հայոց պատմության մեծագույն պետական այրերից մեկը՝ Հէթումը չէր կարող շտեսնել Կիլիկիո թագավորությանն սպասող այս տխուր հեռանկարը, ինչն, ի դեպ, գիտակցվել է նաեւ նրա ժամանակակիցների կողմից: Այսպես, 1266 թվականին ընդօրինակված մի ձեռագրի գրիչ այդ առթիվ նկատում է. «Յիշեցէք զարքայորդին զԼեւոն՝ զմատնեալն ի ձեռս անաւրինաց, զի շնորհեսցէ զնա մեզ վերստին, զի որք եւ անտեսուչ ոչ մնասցում»¹⁷⁹: Իսկ Հովհաննէս արքեպիսկոպոստը նույն թվականին գրված հիշատակարաններից մեկում կարդում ենք. «Եւ բարի արքայն մեր Հէթում երկրորդն Յոր, մեծաւ ջանիւ եւ անասելի ժուժկալութեամբ հոգա եւ փութա վասն ամենեցունց փրկութեան, զոր Տէր Աստուած պահեսցէ փրկութեան զաւակ»¹⁸⁰ Հայոց, զի մի՛ Սողոմա եւ Գո-

¹⁷⁸ Смбат Спарамет, Судебник, с. 8.

¹⁷⁹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 339:

¹⁸⁰ Զեռագրում՝ զօակ:

մտա նմանիցիմք»¹⁸¹: Այս միտքն ավելի հստակ է արտահայտված մի այլ հիշատակարանում գրված 1285 թվականին. «Վասն որոյ աղաչեմք զամենեսեան ... յիշել զսոյն բազմաբիրտն զաշխատեալ ի վերայ ազգիս մերոյ զթագաւորս Լեւոն, որ մնաց զաւակ արձանագրութեան Հայկազանց տոհմիս: Զոր թէ ոչ Տեառն զաւրօքեանց թողեալ էր մեզ զաւակն¹⁸², իբրեւ զՍողոմ լինէաք եւ Գոմորայ նմանէաք»¹⁸³: Հետեաբար, որպէսզի երկիրն անտերության չմատնվեր եւ Սողոմ-Գոմորի շվերածվեր, Հայոց թագավորը ջանք չախտի ինայեւ իր որդուն շուտափոյթ կերպով ազատելու համար¹⁸⁴: Ինչեւէ, 1268 թվականին, Լեւոնի գերությունից վերադառնալուց հետո, Հեթումն անմիջապէս նրան հանձնեց Հայոց գահը եւ, ընդունելով կրօնավորական Մակար անունը¹⁸⁵, քաշվեց վանք, որտեղ էլ մահացավ 1270 թվականին: Մնում է ավելացնել միայն, որ Լեւոնը լիովին փոխհատուցեց իր հոր երախտիքը՝ դառնալով Կիլիկիայի վերջին մեծ թագավորը:

¹⁸¹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 343:

¹⁸² Զեռագրում զաւակը:

¹⁸³ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 571: Հմմտ. Վահրամ Բարունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 56:

¹⁸⁴ Ի դեպ, Լեւոնի զահաժառանգ լինելու հանգամանքի կարեւորությունը գիտակցվել է նաեւ մամլուքների կողմից, ինչը, Ալ-Մաքրիզիի վկայութեամբ, վերջիններիս հիմք է տվել ավելի ծանրացնել նրա փրկագնման պայմանները. տե՛ս Բակուրան, Մի տեսութիւն, էջ 56:

¹⁸⁵ Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 252; Գրիգոր Ակնեցցի, Պատմութիւն, էջ 62; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 151; Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 227; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 105; Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 75; Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 842). Տե՛ս նաեւ Հեթում, Պատմութիւն Թաթարաց, էջ 52:

ԼԵՒՈՆ Գ (II) ԹԱԳԱՎՈՐ (1269–1289 թթ.)¹

Լեւոնի գահակալության հանգամանքները ճիշտ ըմբռնելու համար անհրաժեշտ ենք համարում նախեւառաջ, թեկուզ համառոտակի, ներկայացնել Կիլիկիո Հայոց թագավորության միջազգային իրավական կարգավիճակում նրա նախորդի՝ Հեթում Ա-ի օրոք տեղի ունեցած էական փոփոխությունը՝ վասալական կախվածությունը Մոնղոլական խանությունից, որին նախորդել էր նույնպիսի կախվածությունը Ռումի Սելջուկյան սուլթանությունից: Սելջուկների գերակայության ճանաչումն, ինչպէս արդեն նշեցինք, սկզբնավորվել էր դեռեւս Լեւոն Բ (I) թագավորի ժամանակներում: 1218/9 թվականին, գերյալ հայ իշխաններին Իզգեղդին Քեյ-Քավուս սուլթանի ձեռքից ազատելու համար, նա, տարածֆային զիջումներից բացի, պարտավորվել էր նաեւ հնազանդվել նրան ու տարեկան երեք հարյուր զինվոր տրամադրել սելջուկյան բանակին, ինչի մասին մանրամասն տեղեկացնում է Միխայել Ասորու ժամանակագրության հայերէն թարգմանության շարունակողը. «Եւ յետ սակաւ աւուրց արարեալ սէր ընդ միմեանս, ետ թագաւորն Հայոց Լեւոն զբերդն Կուայ², եւ թափեաց զիշխանսն որ ըմբռնեալ էին, եւ խոստացաւ տալ Հոռոմոց սուլտանին յամենայն ամի երեք հարիւր այր ի ծառայութիւն, եւ հնազանդեցաւ նմա»³: Մինչ այդ սել-

¹ 1269-ը Լեւոնի իրական իշխանակալութեան սկզբնավորման տարին է. նրա թագադրութունը տեղի է ունեցել 1271 թվականին:

² Հստ այլ ազբյուրների՝ Լեւոնը, Լուլուա բերդից բացի, սելջուկներին էր զիջել նաեւ Լոզատինը. տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 222; Փարիզ, էջ 118; Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 79; Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 63:

³ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1871, էջ 512–513; 1870, էջ 520:

չուկների նկատմամբ տպավորիչ հաղթանակներ տարած փառահեղ թագավորի այդ ֆայլը նույն ժամանակագիրը պատճառաբանում է նրա ծերությանը ու վատառողջությանը, ինչպես նաև Հայոց իշխանների անողղամտությամբ. «Եւ այս լինէր ի ծերութենէ եւ յանկարութենէ մարմնոյն, եւ իշխանն ոչ էին ընդ նմա ուղիղ»⁴:

Սակայն, ինչպես ցույց պիտի տային հետագա իրադարձությունները, հայ-սելջուկյան այդ հաշտությունը հաստատված էր խախտտ հիմքերի վրա, եւ կողմերը չէին խորշում հարմար առիթին դավել միմյանց դեմ: Այսպես, 1219 թվականին Լեւոնը խորամանկաբար վիժեցրեց սելջուկների՝ Հալեպի սուլթանության ուղղությամբ ծավալվելու փորձը⁵: Իսկ 1221-ին, օգտվելով Լեւոնի մահից հետո Հայոց թագավորությունում ստեղծված անիշխանական վիճակից⁶, Իզզեդդինին հաջորդած Ալաեդդին Քեյ-Կոբադ սուլթանը հսկայական զորով ներխուժեց Կիլիկիա եւ գրավեց Կալոնորոսից (Ալայա) մինչեւ Սելեկիա ընկած նրա գավառները. «Իսկ յետ մահուան թագաւորին եւ սպանման պարոն Ատանի մեռաւ սուլտան Ազրտին, եւ նստաւ իւր եղբայրն Ալատին՝ այր իմաստուն եւ աստղաբաշխ: Երբ զօրացաւ սա բազում զօրօք յամենայն ազգաց Քրիստոնէից եւ Տանկաց՝ էառ յԱտոմայ թոռնէն ի Կիո Վարդէն զբերդն Կալոնոռոս:... էառ զԻսաւրիոյ երկիրն մինչ ի Սելեկիոյ դուռն. բայց զՍելեկիա Ուսպիթլուն Ֆրեբն⁷ պահեն օգնականութեամբ Հայոց»⁸: Կոստանդին Պայլին այլ բան չէր մնում, քան վերահաստատել Կիլիկիո թագավորության վասալությունը Ռումի սուլթանությանը եւ պարտավորվել տարեկան արդեն չորս հարյուր զինվոր տրամադրել սելջուկյան բանակին⁹.

⁴ Միխայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1871, էջ 513; 1870, էջ 520*:

⁵ Տե՛ս Միխայել Ասորի, *Ժամանակագրութիւն 1870, էջ 520–522; 1871, էջ 513–515*:

⁶ Հմմտ. Barhebraeus, *Chronicon*, p. 454; Bar Hebraeus, *Chronography*, p. 389.

⁷ «Ուսպիթլուն Ֆրեբն» = Հիվանդախնամ եղբայրները:

⁸ Սմբատ, *Տարեգիրք, Փարիզ, էջ 118–119*: Ըստ Կ. Կանեի՝ Ալաեդդին Քեյ-Կոբադի այս նվաճումները կատարվել էին կիլիկիահայ կամ հունահայ իշխանների հաշվին, որոնք նախկինում կախված էին Բյուզանդիայից, իսկ այժմ, անկասկած, այս կամ այն չափով գտնվում էին Կիլիկիո հայ թագավորների տիրապետության ներքո. տե՛ս Cahen, *Pre-Ottoman Turkey*, p. 124.

⁹ Միքայել Ասորու հայ շարունակողը նորից, *ինչպես Լեւոն Ք (I)-ի պարագայում*,

«Իսկ պարոն Կոստանդին պայն զի խելօք էր՝ իմաստութեամբ անցոյց զաւուրքն, եւ իւր թապտրովն¹⁰ էառ ի վերայն հարկ՝ որ տայ ամէն տարի հեծեալ ի ծառայութիւն շորս հարիւր մարդ»¹¹: 1226 թվականին, Հեթում Ա-ի թագադրութիւնից անմիջապէս հետո, Կոստանդին Պայըը, երկրի վիճակը կայունացնելու նպատակով, վերստանձնեց Կիլիկիո Հայոց թագավորության միջազգային պարտավորութիւնները՝ հավատարմութիւն հայտնելով Հռոմի պապին, Գերմանական կայսերն ու Ռումի սուլթանին. «Եւ եղին մեծ սէր ընդ Հռոմայ պապն, եւ ընդ Ալամանաց օմբրունն, եւ ընդ Ալատին սուլտանն Հոռոմոց»¹²: Միջայել Ասորու շարունակողն այդ առթիվ հիշատակում է միայն Կոստանդին Պայլի կողմից Ռումի սուլթանութեանը հայտնած հավատարմութեան փաստը. «Որ եւ արար սէր ընդ Ալադին սուլտան, եւ հնազանդեցաւ նմա, տալով նմա յամենայն ամի երեք հարիւր այր ի ծառայութիւն»¹³:

Եթէ այդ վասալութիւնը սահմանափակվէր միայն երեք-չորս հարյուր զինվոր տրամադրելով¹⁴, ապա դա առանձնապէս ծանր լուծ չպետք է լինէր Հայոց թագավորության համար¹⁵: Մինչդեռ սելջուկյան պատմիչ Իբն-Բիբիի տվյալներով՝ Կիլիկիան պարտավորվել էր նաեւ տարեկան հարկ վճարել Իկոնիային¹⁶: Ճիշտ է, Իբն-Բիբին Ռումի սուլթանութեան ջատագովն էր¹⁷,

խոստում է երեք հարյուր զինվորի մասին. տե՛ս Միջայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 526; 1871, էջ 519:

¹⁰ *Թապտիր/Թատպիր = խորհուրդ, ճար, հնար. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 268:*

¹¹ *Մմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 119: Կիլիկիո թագավորութեան վասալութիւնը Սելջուկյան սուլթանութեանը հաստատում են նաեւ Իբն-Բիբին, Ժուանվիլը եւ Միմոն Սենկուենտինցին. տե՛ս Mutafian, Recherches, p. 82n.*

¹² *Մմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 121:*

¹³ *Միջայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 526; 1871, էջ 518–519:*

¹⁴ *Վ. Գորդլեւսկին, առանց աղբյուր նշելու, գրում է, որ Լեւոնը պարտավորվել էր սելջուկներին տրամադրել տարեկան հազար հեծալ եւ հինգ հարյուր քարածիգ. տե՛ս Гордлевский, Государство, с. 150.*

¹⁵ *Հմմտ. Микаелян, История, с. 173.*

¹⁶ *Բակուրյան, Մի տեսութիւն, էջ 55; Микаелян, История, с. 170.*

¹⁷ *Հմմտ. Гордлевский, Государство, с. 7; Микаелян, История, с. 173.*

ուստի կարող էր ընկնել չափազանցությունների գիրկը, սակայն Հեթում Ա թագավորի եւ սելջուկյան սուլթանների անունից հատված երկլեզվյան դրամների գոյության փաստը վկայում է, որ Կիլիկիայի կախվածությունը Ռումի սուլթանությունից, այնուամենայնիվ, ավելի էական էր: Վ. Գորդլևսկին այդ առթիվ գրում է. «Գերակայից կախվածության ամենավերին արտահայտությունն այն էր, երբ որեւէ տիրակալ, նվազեցնելով իր իրավունքները, դրամ էր հատում սուլթանի անունից, ինչպես վարվում էին, օրինակ, Մարդինի Արտուֆյանները եւ Սսի Ռուֆինյանները»¹⁸: Մինչդեռ Պ. Պտուկյանի կարծիքով՝ երկլեզվյան դրամների հատումն ընդամենը Հեթումի կողմից սելջուկյան սուլթանների գերակայության անվանական ճանաչման նշան էր¹⁹: Կիլիկիո դրամագիտությանը նվիրված վերջինիս գրքում նկարագրված է Հեթում Ա-ի եւ Ռումի սուլթաններ Ալաեդդին Քեյ-Կոբադի (1219–1237 թթ.) ու Գիյասեդդին Քեյ-Խոսրովի (1237–1246 թթ.) անունները կրող 66 այդպիսի դրամ²⁰, հատված Սսում, 1228–1245 թթ. միջև²¹: Պ. Պտուկյանը նաեւ, ուշադրություն դարձնելով այդ դրամների փոփոխ ֆանակի²² ու հատուկ խնամքով պատրաստված լինելու հանգամանքի վրա, ենթադրում է, որ դրանք որոշակի պայմանավորվածությունների հիման վրա հատված հուշադրամներ պետք է եղած լինեին²³, այսինքն՝ նախատեսված չէին լայն շրջանառության համար: Պտուկյանի պնդումը հիմնավորելու առումով, կարծում ենք, ուշադրության արժանի է Ռումի Սելջուկյան սուլթանության պատմության ամենահեղինակավոր հետազոտողի՝ Կ. Կաենի այն տեսակետը, որի համաձայն՝ Քեյ-Կոբադին ընդամենը հաջողվել էր «հարեւան փոփոխ ֆրիստոնյա պետություններին՝ Կիլիկիային, Վրաստանին ու

¹⁸ Гордлевский, Государство, с. 82. Հմմտ. նաեւ՝ Հովհաննիսյան, Դրվագներ, հտ. 1, էջ 172:

¹⁹ Sê'u Bedoukian, Coinage, p. 84.

²⁰ Անդ, էջ 227–235:

²¹ Անդ, էջ 11:

²² Համեմատության համար նշենք, որ նույն դրքում նկարագրված է Լեւոն Բ (I) թագավորի 776 եւ Հեթում Ա-ի՝ 581 դրամ, շահաված երկլեզվյանները (Անդ, էջ 129–226, 235–289):

²³ Անդ, էջ 84:

Տրապիզոնին վասալական որոշ կարգավիճակ պարտադրել կամ առնվազն նրանց իր դաշնակիցը դարձնել»²⁴: Կիլիկիայի եւ Իկոնիայի հարաբերությունները նիշտ գնահատելու համար կարելու է ընդգծել նաեւ հետեւյալը: Առերես հավատարմություն հայտնելով Ռումի սուլթանությանը՝ Կիլիկիան միեւնոյն ժամանակ, վերջինիս դեմ միասնական ճակատ ստեղծելու նպատակով, ակտիվ դիվանագիտական ֆայլեր է ձեռնարկել Քյուզանդական կայսրության հետ մերձենալու ուղղությամբ, ինչի վկայությունն են Կոստանդնուպոլսի պատրիարքներ Գերմանոս II-ի (1222–1240 թթ.) եւ Մանուել II-ի (1244–1255 թթ.) նամակներն՝ ուղղված Հէթում Ա թագավորին եւ Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսին²⁵:

Թե՛ Կիլիկիո թագավորության, թե՛ Ռումի սուլթանության համար, տարբեր առումներով, շրջադարձային եղավ 1243 թվականը, երբ սելջուկները Երզնկայի եւ Սեբաստիայի միջակայքում գտնվող Քյոսե-Դաղի ճակատամարտում ջախջախիչ պարտություն կրեցին մոնղոլներից: Դրանից հետո Ռումի սուլթանությունը բաժանվեց մի քանի մասի ու թեւեւ մոտ վաթսուն տարի շարունակեց իր գոյությունը, բայց իրականում վերածվեց մոնղոլ պաշտոնյաների կողմից կառավարվող գավառի: Քյոսե-Դաղի ճակատամարտից հետո Հայոց թագավորությունը, բնականաբար, ազատվեց Ռումի սուլթանության վասալությունից, բայց, այլընտրանք չունենալով, նույնժամայն կամովին ճանաչեց մոնղոլների գերակայությունը: Իր այդ ֆայլով, ինչպէս իրավացիորեն եզրակացնում են իրադարձությունների ժամանակակիցները, Հէթում Ա թագավորը Կիլիկիան գերժ պահեց վերջիններիս անխուսափելի ասպատակությունից, ինչը կարող էր ուղղակի կործանարար լինել Հայոց թագավորության համար. «Իսկ բարեպաշտ եւ քրիստոսապսակ թագաւորն Հայոց Հէթում,— գրում է Գրիգոր Ակներցի վարդապետը,— հանդերձ ամենայն իմաստութեամբ լցեալ, հարբն իւրով եւ աստուածապահ եղբարբքն եւ իշխանաւն, ի խորհուրդ մտեալ՝ հաստատեցին ի միտս իւրեանց հնազանդել Տաթարին եւ տալ հարկս եւ խա-

²⁴ Cahen, Pre-Ottoman Turkey, p. 133.

²⁵ Այդ նամակների հայերեն թարգմանությունն ու գիտական վերլուծությունը տես՝ Բարթիկյան, Հետազոտություններ, հտ. 3, էջ 27–63:

լան²⁶, եւ ոչ թողոյ զնոսայ յաստուածաշէն եւ ի ֆրիստոնայժողով յերկիրն իւրեանց, զոր եւ արարին իսկ»²⁷: Նույնը նկատի ունի Գրիգորիս անունով սսեցի մի գրիչ՝ 1244 թվականին գրելով հետեւյալը. «Ի ժամանակս աստուածասէր եւ բարեպաշտ տերանց մերոց ֆրիստոսապսակեալ արֆայիս Կիլիկեցոց նահանգիս Հէթմոյ եւ ֆրիստոսասէր թագուհոյն իւրոյ Զապէլի, ի դառն եւ յանբարի ժամանակի, յորում անձանաթ ազգն խուժադուժ, որ կոչին Թաթարք, յելիցն արեւու մինչեւ ի Դամասկոս եւ ի մեծն Անտիոք եւ մինչեւ յԻկոնիա առին զտիեզերս յաւար եւ ի գերութիւն ասպատակաւ... արդ, ի սոյն այս բազմավրդով ժամանակի, ի ձեռն վերոյ նշանակեալ թագաւորին Հէթմոյ խորագէտ իմաստութեան եւ նախահոգակ հաննարեղութեան, մեք մնամք ի խաղաղութեան՝ որպէս կղզի ինչ ի յալեաց մնացեալ յանդորր»²⁸:

Այդ մասին բոլորովին այլ վարկած է առաջ ֆաշում XIII-XIV դդ. ֆրանսիացի ժամանակագիր ժուանվիլը: Ըստ նրա՝ Հէթումն իրեն մոնղոլների վասալ էր ճանաչել այն նպատակով, որպէսզի այդու կարողանա ազատվել Ռումի Սելջուկյան սուլթանութեան վասալութունից: Այսինքն՝ նա նախընտրել էր մոնղոլների վասալի վասալը լինելու փոխարեն անմիջականորեն ենթարկվել վերջիններիս: «Իկոնիայի սուլթանի ենթակայութունից ազատվելու համար, — գրում է ժուանվիլը, — Հայոց թագավորը գնաց Թաթարների թագավորի մոտ, եւ նրանից օգնութուն ստանալու ակնկալիքով, դարձավ նրա վասալը: Հայաստան վերադառնալիս թագավորն իր հետ այնքան մեծաքանակ զորք բերեց, որ ի զորու եղավ պատերազմելու Իկոնիայի սուլթանի դէմ: Նրանց պայքարը շատ երկար տեւեց, բայց ի վերջո Թաթարներն այնքան շատ մարդ կոտորեցին սուլթանի զորքերից, որ նրանց տիրակալն այլեւ կորցրեց իր ազդեցութունը: Միեւնույն ժամանակ, սպասվող մարտերի մասին Կիպրոսում այնպիսի ոգետրիչ լուրեր էին պտտվում, որ մեր զինվորներից ոմանք,

²⁶ *Խալան* = պատերազմի հարկ. *փոխառութուն թուրքերենից կամ մոնղոլերենից* (qalan). տե՛ս Blake-Frye, History, p. 387, n. 32; Աճառչան, ՀԼՊ, հտ. 2, էջ 276; Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 317: Հմմտ. Morgan, The Mongols, p. 101.

²⁷ Գրիգոր Ակնեբցի, Պատմութիւն, էջ 31:

²⁸ Մաթեւոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 233: Տե՛ս նաեւ՝ Անդ, էջ 238:

հրապուրված կովելու հնարավորությամբ եւ ավար ձեռքբերելու հույսով, գնացին Հայաստան, բայց նրանցից ոչ ոք այդպես էլ ետ չեկավ»²⁹:

Մոնղոլների հետ լեզու գտնելու բարեհաջող ավարտի հասած գործը, սակայն, մթագնվել էր Հեթումին պատիվ շքերող մի ցավալի դիպվածով: Վերջինս, խախտելով հյուրընկալության կանոնները, ստիպված էր եղել մոնղոլների պահանջով նրանց հանձնել Գիյասեդդին Քեյ-խոսրով սուլթանի մորը եւ ֆրոջը, որոնք Քյոսե-Դաղի ճակատամարտից հետո ապաստան էին գտել Սսի արձունիքում³⁰: Նկարագրելով այդ առթիվ Հեթում թագավորի ապրած տվայտանքները՝ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Եւ իբրեւ լուսւ արեայ Հեթում, յոյժ տրտմեցաւ եւ ասէ. «Լա՛ւ էր ինձ, եթէ զորդի իմ զԼեւոն, խնդրեալ էին յինէն, քան թէ զնոսա»: Այլ քանզի երկնչէր ի նոցանէ, զի մի՛ մեծ շարեաց պատճառ լիցի այն, յակամայ կամաց ետ ի ձեռս նոցա»³¹: Բարոյական մի այնպիսի նկարագրի տեւ մարդու համար, ինչպիսին Հեթումն էր, իհարկեւ, չափազանց դժվար պիտի լինէր նման ֆայլի դիմել, որն ասորի ժամանակագիր Բարհեբրեոսը կոչում է «ամոթաբեր, պախարակելի ու անվայել արարք»³²: Սակայն նույն ժամանակագիրը ցրում է դրա հետ կապված բոլոր տարակուսանքները՝ ողջ մեղքը բարդելով Հեթումի հոր՝ Կոստանդին Պայլի վրա: Ըստ նրա՝ 1243 թվականին, երբ արդեն հայտնի էր, որ մոնղոլների եւ սելջուկների վճռական բախումն անխուսափելի է, Կոստանդինը գնացել էր Կեսարիա եւ զինական աջակցություն առաջարկել վերջիններիս, սակայն վերադառնալով Կիլիկիա, միառժամանակ հապաղել էր, սպասելով հակամարտության ելփին: Իսկ երբ նույն թվականին, Քյոսե-Դաղի ճակատամարտում սելջուկների կրած պարտությունից հետո, Գիյասեդդին Քեյ-խոսրով սուլթանի մայրը եւ ֆույրը ապաստան էին գտել Սսի արձունիքում, Կոստանդին Պայլն ինքն էր մոնղոլներին տեղե-

²⁹ Joinville, The Life of Saint Louis, p. 200.

³⁰ *Տէ՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 122*; Barhebraeus, Chronicon, p. 476; Bar Hebraeus, Chronography, p. 407–408. *Ըստ Կիրակոս Գանձակեցու՝ Կիլիկիայում ապաստան էին գտել Քեյ-խոսրովի մայրը, կինը եւ դուստրը. տէ՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 285*:

³¹ *Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 285*:

³² *Տէ՛ս Barhebraeus, Chronicon, p. 476; Bar Hebraeus, Chronography, p. 408*.

կացրել այդ մասին ու նրանց հանձնել դժբախտ տարագիրներին³³:

Ինչպես արդեն նշեցինք, հայ-մոնղոլական դաշինքը Հեթում թագավորը կնքել էր Խաչենի իշխան Հասան Զալալ-Դոլայի միջնորդությամբ³⁴, որը Մեծ Հայքի մի քանի այլ հայ իշխանների՝ Ավագի, Շահնշահի, Վահրամի, Աղբուղայի եւ Գրիգոր Դոփյանի հետ, մասնակցել էր մոնղոլների 1242–1243 թթ. իկոնիական արշավանքին³⁵ եւ, ըստ երեսույթին, այդ ընթացքում էլ, գտնվելով Կիլիկիայի սահմանների մոտակայքում, կապի մեջ էր մտել Հեթումի հետ³⁶: Կարծում ենք, տեղին է հիշեցնել, որ դաշինք բառը մենք, մյուս հետազոտողների պես, գործածում ենք պայմանականորեն, քանի որ մոնղոլների մոտ, ինչպես տեսանք սույն աշխատության «Առաջաբանում», նման հասկացություն գոյություն չունեւ, եւ նրանք լավագույն դեպքում ճանաչում էին միայն գերակա-ստորակա հարաբերությունը: Ինչեւէ, ազատվելով սելջուկյան լծից, Կիլիկիո Հայոց թագավորությունն իր բախտն ակամա կապեց մոնղոլական տիեզերակալ կայսրության հետ՝ դրա շնորհիվ խուսափելով հարեան երկրներին բաժին ընկած ծանր փորձություններից: Հայ-մոնղոլական դաշինքն ամրապնդվեց դիվանագիտական երկու նշանակալից ֆայլով՝ Սմբատ Սպարապետի եւ Հեթում թագավորի՝ համապատասխանաբար 1247–1250 եւ 1254–1256 թվականներին Մոնղոլիա կատարած այցելություններով, որոնց արդյունքում պաշտոնական փաստաթղթերով հաստատագրվեց Կիլիկիո Հայոց թագավորության միջազգային նոր իրավական կարգավիճակը: Այդ փաստաթղթերը Գույուկ եւ Մանգու խաների՝ Սմբատին ու Հեթումին շնորհած հայտնի «յառլիկներն» էին, որոնք հայկական աղբյուրներում հայտնի են «խառլախ»³⁷, «հրովարտակ նշանատր»³⁸

³³ *Տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 475–476; Bar Hebraeus, Chronography, p. 407–408.*

³⁴ *Տե՛ս Կիրակոս Փանձակեցի, Պատմութիւն, էջ 285:*

³⁵ *Անդ, էջ 284: Տե՛ս նաեւ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 228–229:*

³⁶ *Մեծ Հայքի հայ իշխաններն Իլ-խանների արքունիքում Կիլիկիո թագավորությանը ծառայություններ պիտի մատուցեին նաեւ հետագայում. հմտ. Գրիգոր Ալեքսեցի, Պատմութիւն, էջ 59–60:*

³⁷ *Անդ, էջ 32:*

³⁸ *Կիրակոս Փանձակեցի, Պատմութիւն, էջ 367:*

եւ «մուրհակ կնիով»³⁹ անուններով:

Կիլիկիո Հայոց թագավորության միջազգային նոր իրավական կարգավիճակն, իհարկե, ոչ այլ ինչ էր, քան վասալական կախվածություն Մոնղոլական կայսրությունից, որը միջնադարյան աղբյուրներում վերարտադրված է «հնագանդութին»⁴⁰ եւ «tešmešta» (ծառայութիւն)⁴¹ բառերով⁴²: Թեւ 1258 թվականին Հայոց թագավորության կախվածությունը Մոնղոլական կայսրությունից փոխարինվեց Հուլավու խանի հիմնադրած Իլ-խանության գերակայության ճանաչմամբ, բայց դրանից նրա միջազգային իրավական կարգավիճակի էությունը չփոխվեց: Ինչպես գրում է Գրիգոր Ակնեցցին, «Իսկ լուեալ զայս բարեպաշտ թագաւորն Հայոց Հեթում, թէ Հուլատունն դան նստաւ, եւ այնպէս բարէսէր է եւ քրիստոնասէր, ապա եւ ինքն Հայոց թագաւորն գնաց յարեւելք բազում ընծայիւք, եւ ետես զՀուլատու Ղանն: Եւ տեսեալ Ղանն զՀայոց թագաւորն՝ յոյժ սիրեաց եւ պատուեաց զնա, եւ կրկին ազատութիւն գրեաց թագաւորութեանն նորայ, եւս առաւել եկեղեցեաց եւ եկեղեցականաց եւ ամենայն քրիստոնէից երկրիս»⁴³: Ինչ վերաբերում է այդ կարգավիճակի բուն բովանդակությանը, ապա, դատելով առկա աղբյուրներից, դա հայկական կողմի համար սահմանում էր հետեւյալ պարտավորությունները.

ա. Տարեկան ճարձկի վճարում⁴⁴. Ըստ երեւոյթին, դա հաստատագրված եւ ոչ այնքան ծանր հարկ էր, այլապես հայկական աղբյուրները չէին զլանա գանգատվել նրա անտանելիությունից: Պարսիկ պատմիչ Համդալլահ Ղազվինիի տվյալներով՝ Կիլիկիո Հայոց թագավորությունը

³⁹ Դաւիթ Բաղիշեցի, Մաղկաքաղ, էջ 346:

⁴⁰ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 285; Գրիգոր Ակնեցցի, Պատմութիւն, էջ 31; Դաւիթ Բաղիշեցի, Մաղկաքաղ, էջ 346:

⁴¹ Barhebraeus, Chronicon, p. 490; Bar Hebraeus, Chronography, p. 418.

⁴² Վասալական կախվածությանը վերաբերող եզրաբանությունն ավելի բազմազան է Բագրատունյաց շրջանում՝ «ծառայութիւն», «հարկ ծառայութեան», «ծառայական սպասարորութիւն», «վարձ ծառայութեան», «մտերմական ծառայութիւն», «միամիտ հնազանդութիւն». տե՛ս Մաթեոսյան, Բագրատունյաց Հայաստան, էջ 52:

⁴³ Գրիգոր Ակնեցցի, Պատմութիւն, էջ 45-46:

⁴⁴ «Հաստատեցին ի միտս իւրեանց հնազանդել Տաթարին եւ տալ հարկս եւ խալան». Գրիգոր Ակնեցցի, Պատմութիւն, էջ 31: Հմմտ. Der Nersessian, The Armenians, p. 48.

տարեկան ընդամենը երեսուն հազար դինարի հարկ էր մուծում Իրանի Իլ-խանության գանձարան⁴⁵: Կիլիկիայի վրա, ակներեաբար, չէր տարածվել 1251–1254 թվականներին Մանգու խանի կողմից Իրանում եւ Այսրկովկասում իրականացված հարկային բարեփոխումը, որի նպատակն էր աշխարհագրի, այսինքն՝ ընդհանուր մարդահամարի վրա հիմնված գլխահարկի կիրառումը: Վերջինիս էությունը հստակորեն ձեակերպված է Գրիգոր Ակնեացու պատմության հետեւյալ տողերում. «Եւ համարեաց զերկիրն Արեւելից վասն հարկի. եւ առնուին այնուհետեւ զհարկն ի գլխաթուոյ մարդկանն»⁴⁶: Արդի հետազոտողների կարծիքով՝ Իրանի մոնղոլ կառավարիչ Արղուն-աղայի (1243–1255 թթ.) ձեռնով գործադրված այդ բարեփոխումը կոչված էր հարկատուներին ազատելու պետական մանր պաշտոնյաների շարաշահումներից⁴⁷, սակայն հայ ժամանակագիրներն, ընդհակառակը, ընդգծում են, որ դա ավելի էր ծանրացրել նրանց վիճակը⁴⁸: Ի դեպ, նույն Գրիգոր Ակնեացու տվյալներով՝ հենց այդ հարկից Կիլիկիան փրկելու նպատակով էր, որ Հեթում թագավորը ձեռնարկել էր Մոնղոլիա կատարած իր ճանապարհորդությունը. «Իսկ քրիստոսապսակ եւ բարէպաշտ թագաւորն Հեթում, իբրեւ լսեաց զայս ամենայն բարկութիւնս, որ գործեցաւ ի վերին աշխարհն արեւելից, ապա վասն սիրոյ քրիստոնէից, եւս առաւել վասն իւր սեփական երկրիս, զնաց բազում զանձիւք առ Մանկու Ղանն, եւ ճոզաց շքոզույ յերկիրս իւր զայսպիսի բարկութիւնս»⁴⁹: Ինչպէս տեղեկացնում է Ռուբրուկը, Մանգուն, ընդառաջելով Հեթումի խնդրանքին, նույնիսկ

⁴⁵ *Տե՛ս* Микаелян, История, с. 316.

⁴⁶ *Գրիգոր Ակնեացի, Պատմութիւն, էջ 37: Տե՛ս նաեւ՝ Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 148: Հմմտ. Մանանդյան, Քննական տեսութիւն, հտ. 3, էջ 259–261: Алп-Заде, Азербайджан XIII–XIV вв., с.117–119; Morgan, The Mongols, p. 100; Blake-Frye, History, p. 388, n. 40. Ընդ որում, Մանգու խանի հռչակած աշխարհագիրը տարածվում էր ոչ միայն Իրանի եւ Այսրկովկասի, այլեւ մոնղոլական խանութիւն մյուս մասերի, այդ թվում՝ Ոսկե Հորդայի վրա. տե՛ս Греков-Якубовский, Золотая Орда, с. 221.*

⁴⁷ *Տե՛ս* Grousset, L'Empire des steppes, p. 425; Roux, L'Empire Mongol, p. 306.

⁴⁸ *Տե՛ս Գրիգոր Ակնեացի, Պատմութիւն, էջ 37: Կիրակոս Քանձակեցի, Պատմութիւն, էջ 361–363: Անանուն Սեբաստացի, Տարեգրութիւն, էջ 141:*

⁴⁹ *Գրիգոր Ակնեացի, Պատմութիւն, էջ 37:*

զգալիորեն թեթևացրել էր Կիլիկիայի հարկային պարտավորությունը, եւ դեռ ավելին՝ խանը Հայոց թագավորին շնորհել էր այն առավելությունը, որ ոչ մի մոնղոլ պաշտոնյա (բառացի՝ դեսպան) ոտք չպետք է դներ նրա երկիր⁵⁰: Հարկ է ավելացնել, որ Արղուն-աղայի աշխարհագիրը, բացի հարկահանության կարգավորումից, նպատակ էր հետապնդում նաեւ ապահովել նվաճված ժողովուրդների պարտադիր զինվորագրման կազմակերպումը⁵¹, պարտավորություն, որից, սակայն, Կիլիկյան Հայաստանն ազատված էր:

բ. Թանկարժեք ընծաների մատուցում. Գերակային զանազան առիթներով նվերներ մատուցելու սովորույթը միջնադարյան Արեւելքում ստորակայի պարտադիր եւ որոշ առումով կանոնակարգված պարտականություններից մեկն էր⁵², ինչը, բնականաբար, տարածվում էր նաեւ Կիլիկիո գահակալների վրա: Հայկական աղբյուրները լի են Սմբատ Գունդստապլի եւ Հեթում թագավորի կողմից մոնղոլ խաներին մատուցված թանկարժեք նվերների վերաբերյալ առատ տեղեկություններով, ինչպես, օրինակ. «Նա յառաջագոյն առա՛մեաց զեղբայր իւր զՍմբատ, որ զօրավարն էր նորին, առ դանն Գիուզ ընծայիմ եւ պատարագօք»⁵³, «Իսկ

⁵⁰ Рыбрук, Путешествие, с. 192–193. Սմբատ Սպարապետը տեղեկացնում է միայն երկու մոնղոլ պաշտոնյաների մասին, որոնք Հեթում Ա-ի հետ Կարակորումից ժամանել էին Կիլիկիա, սակայն հայտնի չէ՝ այնտեղ հաստատվելու, թե պարզապես Հայոց թագավորին ապահով կերպով հայրենիք ուղեկցելու նպատակով. «Շի խանն ուրախութեամբ ընկալաւ զթագաւորն Հեթում, եւ զինչ եւ խնդրեաց ի նմանէ՝ շնորհեաց նմա, եւ եղ ի սպասաւորաց իւրոց ընդ թագաւորին գալ յաշխարհ իւր Կիլիկիա՝ զՄարկատեա, որ էր միականի, եւ զՊաշոյ»։ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 230: Բարհեբրեոսն, իր հերթին, 1269 թ. տակ հիշատակում է Կիլիկիայում լիազորված Կուրդեկա անունով մի մոնղոլ պաշտոնյայի (Barthebraeus, Chronicon Ecclesiasticum, t. I, p. 765. հայերեն թարգմանությունը՝ Տեր-Պետրոսյան, Ասորիների դերը, էջ 75–76): Սա ցույց է տալիս, որ համենայն դեպս, մոնղոլները Կիլիկիո արքունիքում ինչ-որ ներկայացուցիչ ունեցել են:

⁵¹ Հմմտ. Մանանդյան, Քննական տեսություն, հտ. 3, էջ 262; Բարսեայան, Հայաստանը XIII–XIV դդ. էջ 249–250:

⁵² Հմմտ. Гордлевский, Государство, с. 89–90. Տե՛ս նաեւ՝ Բարսեայան, Հայաստանը XIII–XIV դդ., էջ 313:

⁵³ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 364:

աստուածասէր թագաւորն Հէթում յառաջագոյն առաքեաց եւ ետ նոցայ դաշինս հաշտութեան եւ ընծայիմ»⁵⁴, «Ապա գունդստապլը գնաց թաթարների տիրակալի՝ Մանգու խանի մոտ, նրան մատուցելով հարուստ նվերներ»⁵⁵, «Եւ յայնժամ թագաւորն առեալ զամենայն ցանկալի տեսողաց ընծայսն, գնաց առ խանն Մանգոյ եւ մատոյց նմա»⁵⁶, «Թագաւորն Հէթում ... գնաց բազում գանձիմ առ Մանկու Ղանն»⁵⁷, «Տեսին զՄանգու ղանն՝ երեւելի փառօք նստեալ, եւ մատուցեալ զընծայսն, մեծաբեցաւ ի նմանէ ըստ արժանւոյն»⁵⁸: Ընծաների արժեքի մասին կարող է պատկերացում տալ թեկուզ այն փաստը, որ Հէթում թագաւորը, Մոնղոլիա գնալու ճանապարհին, որոշ ժամանակ դադար էր առել Արագածոտնում, Քուրդ իշխանի մոտ, մինչեւ որ իր հայրը՝ Կոստանդին Պայը, կողարկեր Մանգու խանի համար նախատեսված ծանրաբեռն նվերները⁵⁹: Այլ աղբյուրներից հայտնի է, որ, օրինակ, Ռումի սուլթանների կողմից մոնղոլ խաներին մատուցված նվերների արժեքը հավասար էր նրանց վճարած տարեկան հարկին⁶⁰: Ավելորդ չէ, թերեւս, նշել, որ ընծաների մատուցման պարտավորությունը Կիլիկիո գահակալները պիտի շարունակէին կատարել նաեւ Իլ-խանների հանդէպ⁶¹:

գ. Մասնակցություն մոնղոլների ռազմական արշավանքներին. Հակառակ պատմագրական ուղղակի վկայությունների բացակայությանը, կասկածից վեր է, որ սա եղել է մոնղոլների առջև Կիլիկիո գահակալների ստանձնած հիմնական պարտականություններից մեկը⁶², եթե չա-

⁵⁴ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 238:

⁵⁵ Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 835). Հեթում Կոստանդին սխալմամբ Գույուկի փոխարեն նշել է Մանգուի անունը:

⁵⁶ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 230:

⁵⁷ Գրիգոր Ակներցի, Պատմութիւն, էջ 37:

⁵⁸ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 367:

⁵⁹ Տե՛ս Անդ, էջ 365; Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 230:

⁶⁰ Հմմտ. Grousset, L'Empire des steppes, p. 423.

⁶¹ Տե՛ս Գրիգոր Ակներցի, Պատմութիւն, էջ 46, 61; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 156; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 573:

⁶² Հմմտ. Микаелян, История, с. 316; Der Nersessian, The Armenians, p. 48.

սեն՝ ամենագլխավորը: Դրա անժխտելի ապացույցն է մոնղոլների պահանջով Հեթում Ա, Լեւոն Գ (II) եւ Հեթում Բ թագավորների մասնակցությունը նրանց ձեռնարկած ռազմական արշավանքներին: Ընդ որում, այդ պահանջը կարող էր բխել ոչ միայն խաներից, այլեւ մոնղոլական բանակի դաշտային հրամանատարներից: Դրանում համոզվելու համար բավական է նշել, թեկուզ, միայն Հեթում Ա-ին վերաբերող համապատասխան փաստերը. «Ի թուին ՉԹ (1260) խանն Հուլայուն բազմութեամբ զօրօֆ իւրով՝ ... եկեալ եհաս ի վերայ Հալպայ եւ պատեաց զնա շուրջանակի, յղեաց եւ առ թագաւորն Հեթում զնալ առ իննն, եւ նա վաղվաղակի եհաս առ խանն զօրօֆ իւրով»⁶³, «Քիւրապետն Քիթպուղա... ժողովեաց զօրս, եւ յերկրէն կիլիկեցոց արս ԵՃ (500) յղեալ էառ ի թագաւորէն, եւ դէմ եղեալ զնայր մտանել յԵգիպտոս»⁶⁴, «Ի սոյն ամի (= 1260) արեայն Հայոց Հեթում ժողովեաց զօրս եւ զնացեալ որպէս թէ արշամամբ էանց ընդ մէջ Գամրաց եւ յիկոնիոյ, եւ երթայր առ ազգն նետողաց, յերկիրն Գաղատիոյ, ի Գանգր, սահմանակից Զմիւռնիոյ եւ Լասարէ, զի յառաջագոյն յղեալ էին առ թագաւորն զնալ առ նոսա»⁶⁵, «Ի թուին ՉԺԳ (1264) Հուլայուն խանն առաքեաց ի բիւրապետաց իւրոց եւ բազում զօրս ընդ նմա, որք եկեալ հասին յանառիկ բերդն Պիր, որ էր ընդ ձեռամբ անօրինացն ... Եւ առաքեալ բիւրապետն այն Տուրպա եւ կոչեաց զթագաւորն Հեթում գալ առ նմա ... Եւ զկնի ատուրց ինչ թագաւորն Հեթում առեալ զզօրս իւր զնայր առ Տուրպայն»⁶⁶:

դ. Երթելեկի ծախսեր. Խոսքը վերաբերում է նվաճված երկրների կամ վասալ-պետությունների տարածքով երթելեկող մոնղոլ պաշտոնյաների, հարկահանների, փոստային սուրհանդակների եւ նրանց ուղեկցող հեծ-

⁶³ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 235: Տե՛ս նաեւ՝ Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 151; Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 838).*

⁶⁴ *Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 236:*

⁶⁵ *Անդ, էջ 237:*

⁶⁶ *Անդ, էջ 243: Ինչ վերաբերում է մոնղոլների ձեռնարկած արշավանքներին՝ Լեւոն Գ (II)-ի եւ Հեթում Բ-ի բերած մասնակցութեանը, ապա դրանց մասին մասնավորապես տե՛ս Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 844-845, 848, 850-851, 852-854); Ներսէս Պալիաննից, Ժամանակագրական հատվածներ, էջ 180, 183-188; Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 19-21:*

յալ պահակախմբերի պարենավորմանը⁶⁷: Այդ պարտավորության մասին, բազմաթիվ օտար աղբյուրների կողմից, վկայում են նաև որոշ հայկական գրավոր հուշարձաններ, ինչպես, օրինակ. «Եւ ապա սկսան հարկապահանջութեամբ եւ երթելկութեամբ եւ զինուորութեամբ նեղել զնոսա»⁶⁸, կամ «Իսկ նա (Հասան-Ջալալ) խոհեմաբար կարգաւորեաց զաշխարհ իւր, որ ինչ մարթ էր առնուլ ի պէտս երթելկացն, որ գային առ նոսա, թէ կերակուր եւ թէ այլ ինչ, ինքն առնոյր եւ պահէր եւ յիւրմէն յաւելուածով տայր նոցա, յորժամ գային առ նա»⁶⁹: Իսկ ըստ մի հիշատակագրի՝ երթելկի ծախսերը հոգայու պարտավորությունն այնքան ծանր էր ժողովրդի համար եւ այնպիսի շարաշահումների տեղիք էր տալիս, որ Ղազան խանը հարկադրված է լինում կարգուկանոն մտցնել այդ հարցում. «Առնէր սա իրաւունս այրեաց, եբարձ զտոկոսիս պարտուց եւ դարձոյց զգրկանս զրկելոց: Եբարձ սայ զերթելկութիւն դեսպակաց, ելչեաց⁷⁰ եւ արդուչեաց⁷¹ եւ կարգեաց յամենայն տեղիս սուրհանդակս, որ են շիրիկ⁷², եւ սակս արդար իրաւանցն, զոր առնէր, փակեաց տէր աստուած զամենայն թշնամիս սորայ ի ձեռս սորայ»⁷³: Երթելկի ծախսերից բացի, ըստ երեւոյթին, նվաճված երկրների եւ վասալ-պետությունների վրա էր դրված նաև իրենց տարածքներով անցնող մոնղոլական զորաբանակների մատակարարման ու պարենավորման պարտականությունը: Դա ծանրագույն բեռ էր հատկապես այն երկրների ժողովուրդների համար, որոնց տարածքով անցնում էին Ատրպատականից դեպի Ոսկե Հորդա, Անատոլիա եւ Սիրիա արշավող մոնղոլական զորքերի հիմնական երթուղիները: Կիլիկիան, աշխարհագրականորեն

⁶⁷ *Տե՛ս Греков-Якубовский, Золотая Орда, с. 55, 224–225; Մանանդյան, Քննական տեսություն, հտ. 3, էջ 259, 291–292; Բարայան, Հայաստանը XIII–XIV դդ., էջ 488–493:*

⁶⁸ *Կիրակոս Փանձակեցի, Պատմութիւն, էջ 263:*

⁶⁹ *Անդ, էջ 269:*

⁷⁰ *Ելչի = սուրհանդակ. փոխառություն մոնղոլերենից. տե՛ս Blake-Frye, History, p. 389, n. 48.*

⁷¹ *Արդուչի = դատավոր. փոխառություն մոնղոլերենից. տե՛ս Blake-Frye, History, p. 389, n. 48; Алп-Заде, Азербайджан XIII–XIV вв., с. 269.*

⁷² *Շքրիկ = սուրհանդակ. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ.2, էջ 226–227:*

⁷³ *Խաչիկյան, Ժ՛Դ դ. հիշատակարաններ, էջ 24:*

դուրս լինելով նշված երթուղիներից, ըստ էության, զերծ էր թե՛ երթեւեկի ծախսերը եւ թե՛ մոնղոլական զորքերի մատակարարումը հոգալու պարտավորությունից: Հայ-մոնղոլական հարաբերությունների շուրջ հարյուրամյա պատմության մեջ հայտնի է միայն երկու դեպք, երբ Կիլիկիո թագավորությունը հարկադրված է եղել պարենավորել իր տարածով անցնող մոնղոլական զորքերին: 1256 թվականին Հեթում թագավորը Կիլիկիայում հյուրընկալում եւ մատակարարում է դեպի Իկոնիայի կողմերն արշաված Բայջու նոյինի զորքերին⁷⁴, իսկ 1260-ին՝ Այն-Ջալուղում պարտված Կիտբուղայի զորքերի մնացորդներին⁷⁵:

Այնուամենայնիվ, շնայած առաջին հայացքից բավականին ծանր թվացող այս պարտավորություններին⁷⁶, հարկ է նշել, որ Կիլիկիո Հայոց թագավորության վասալական կախվածությունը Մոնղոլական խանությունից առանձնապես չէր սահմանափակում նրա անկախությունը, մանավանդ ներքին ֆաղափականության բնագավառում⁷⁷: Դա ակնհայտ է

⁷⁴ «Քնաց ընդ նոսա եւ թագաւորն Հայոց Հեթում... եւ էր առ Բաչու-նուիւնին, զոր բազում զօրօք առաքեաց նա յերկիր իւր ի Կիլիկիա, ի քաղաքն Սիս, որ եւ բազում ընծայիւք եւ զօրօք սպասաւորութիւն կատարէր Բաչու-նուիւնին եւ զօրացն՝ որ ընդ նմա»։ Կիրակոս Փանծակեցի, Պատմութիւն, էջ 375–376:

⁷⁵ «Եւ էին որք ցրուեցան թաքեան եւ ապրեալ եկին առ թագաւորն Հայոց. եւ ի նմանէ յոյով գտեալ մարդասիրութիւն, հանդերձ եւ երիվարս եւ ոռճիկս, եկին գոհութեամբ առ տէրն իւրեանց»։ Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 152:

⁷⁶ Ի դեպ, ուշ շրջանի հայկական մի ազբյուրի վկայությամբ, իր վասալական կախվածությունը շեշտելու նպատակով, Հեթում Ա թագավորն իբր նաեւ հայ-մոնղոլական երկլեզվյան դրամներ էր հատել. «Եւ ի վերայ դրամին իւր ունէր գիր զայս օրինակ՝ Հեթում թագաւոր Հայոց, ի միւս թիհն՝ Շինեալ ի քաղաքն Սիս: Եւ յետ գալուն ի Մանգու խանէն, վասն զի զհնազանդութիւն ցուցանելոյ, ի միւս թիհն գիսանին անունն ետ գրել այլազգի գրով»։ Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 200: Սակայն, ամենայն հավանականությամբ, հեղինակն այդպիսիք է համարել Հեթումի հայ-սելջուկյան դրամները:

⁷⁷ Հմմտ. Микаелян, История, с. 316; Der Nersessian, The Armenians, p. 48. Լ. Բարայանը, նկատի ունենալով Հուլավուիդների ժամանակաշրջանը, այդ առթիվ գրում է հետեւյալը. «Հուլավուի նորաստեղծ պետության կազմի մեջ մտնում էին ամբողջ Իրանը, Ադրբեջանը, Արեւելյան Վրաստանը, Հայաստանը, Ռումը, Քուրդստանը: ... Բացի նշված երկրներից, Հուլավյանների վասալ պետություններն էին Արեւմտյան Վրաստանը, Տրապիզոնը, Ռումը եւ Կիլիկյան Հայկական պետությունը:

դառնում, երբ Հայոց թագավորության վիճակը համեմատում ենք մոնղոլների նկատմամբ միեւնույն իրավական հարթության վրա գտնվող Ռուսի սելջուկյան սուլթանության վիճակի հետ: Քյոսե-Դաղի նակատամարտում կրած պարտությունից հետո վերջինս նույնպես հարկադրաբար ճանաչել էր Մոնղոլական խանության գերակայությունը, սակայն շատ ավելի ծանր պայմաններով, քան Կիլիկիան: Մոնղոլներին վճարվող տարեկան հարկը կազմում էր սուլթանության պետական եկամուտների մեկ երրորդը⁷⁸, ավելի կոնկրետ՝ «1.200 000 ոսկեդրամ, 500 մետաքսյա ոսկեթել կերպաս, 500 ձի, 500 ուղտ, 5000 գլուխ մանր եղջերավոր անասուն, բացի դրանից՝ ընծաներ, որոնք կրկնապատկում էին հարկի չափը»⁷⁹: Ընդ որում, հարկերն ուղղակի գանձելու նպատակով, մոնղոլները Ռուսի սուլթանությունում ընդհանուր մարդահամար էին անցկացրել⁸⁰: Բացի այդ, երկրի ողջ տարածքում տեղակայված էին մոնղոլական կայազորներ⁸¹, իսկ ֆաղաֆներում նշանակված էին մոնղոլ ֆաղաֆազուխներ՝ կոչված «շահնա» (= šahna)⁸²: Պետությունն իրականում կառավարում էին ոչ թե սուլթանները, այլ մոնղոլների դրածո մեծ վեզիրները⁸³, որոնցից ամենանշանավորը Մուխնեդդին Փարվանան էր (1244–1277 թթ.)⁸⁴: 1277

նշված երկրներից ամենից արտոնյալ վիճակում էր Կիլիկյան Հայկական թագավորությունը, որը ... դարձավ մամլուքների դեմ պայքարում Հուլավյանների վստահելի հենարանը». Բաբայան, Հայաստանը XIII-XIV դդ., էջ 307:

⁷⁸ Տե՛ս *Гордлевский, Государство*, с. 39.

⁷⁹ Grousset, *L'Empire des steppes*, p. 423.

⁸⁰ «Եւ զմարդիկն համարեալ՝ եղին հարկս ի վերայ նոցայ, ըստ սովորութեանն իւրեանց՝ մալ եւ թաղար»։ *Գրիգոր Ավներցի, Պատմութիւն, էջ 31*:

⁸¹ Տե՛ս *Roux, L'Empire Mongol*, p. 308.

⁸² Տե՛ս *Գրիգոր Ավներցի, Պատմութիւն, էջ 30, 31. Եզրույթի մասին տե՛ս Гордлевский, Государство*, с. 39, 142; *Բաբայան, Հայաստանը XIII-XIV դդ., էջ 239–240: Կիրակոս Փանձակեցին «շահնայի» փոխարեն գրում է «վերակացուս կացուցեալ».* *Կիրակոս Փանձակեցի, Պատմութիւն, էջ 283: Ըստ Կ. Կաննի՝ շահնա տիտղոսը պարզապես նշանակում էր կայազորի հրամանատար. տե՛ս Cahen, Pre-Ottoman Turkey*, p. 238.

⁸³ Հմմտ. *Гордлевский, Государство*, с. 39; *Bosworth, Saldjūkids*, p. 949.

⁸⁴ *Նրա մասին մանրամասն տե՛ս Cahen, Pre-Ottoman Turkey*, p. 280–292; *Cahen, The Mongols*, p. 727–728; *Hillenbrand, Mu'in al Dīn*, p. 479–480. *Քերեւս ավելորդ չէ*

թվականին մոնղոլները, պետական դավաճանության մեղադրանքով վերջինիս մահապատժի ենթարկելուց հետո, ցրեցին սելջուկյան զինված ուժերը եւ, վերացնելով Ռումի սուլթանության կիսանկախ դրոթյունը, անցան ուղղակի կառավարման⁸⁵։ Իսկ 1299-ին նրանք դադարեցրին Ռումի սուլթանների անունով թողարկվող դրամների հատումը, դրանք փոխարինելով Ղազան խանի անունով դրոշմված դրամներով⁸⁶։

Կար եւս մի կարեւոր հանգամանք, որը Կիլիկիո թագավորության եւ Մոնղոլական խանության հարաբերությունները տարբերում էր մոնղոլ-սելջուկյան հարաբերություններից։ Դա մոնղոլների կողմից հայերին ցուցաբերված ռազմական աջակցությունն էր, ինչի շնորհիվ Հայոց պետությունն զգալիորեն ընդարձակեց իր տարածքները, մանավանդ մերձեփրատյան երկրամասի ուղղությամբ⁸⁷։ Կարող է հարց ծագել, թե ի՞նչն էր մոնղոլների կողմից այդ «երկակի ստանդարտի» կիրառման պատճառը։ Գլխավորն, իհարկե, այն էր, որ Սելջուկյան սուլթանությունը եւ Կիլիկիո թագավորությունը մոնղոլների գերակայությունը ճանաչել էին տարբեր եղանակներով՝ առաջինը կատաղի դիմադրությունից հետո, իսկ երկրորդը՝ կամովին։ Մոնղոլական օրենքն ի սկզբանե տարբեր մոտեցում էր նախատեսում այս երկու դեպքի համար, ինչն արտացոլված է նաեւ հայկական աղբյուրներում⁸⁸։ Սակայն, ակներեւաբար,

նշել, որ 1267 թվականին Փարվանան նշանվել էր Հեթում Ա թագավորի դստեր՝ Իզաբելի հետ, բայց վերջինիս մահը (1268/9 թ.) խափանել էր նրանց ամուսնությունը. տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 524; Bar Hebraeus, Chronography, p. 447. Հմմտ. նաեւ՝ Rüd̄t-Collenberg, The Rupenides, III (H2).

⁸⁵ *Տե՛ս Cahen, The Mongols, p. 728; Bosworth, Saljuks, p. 949. Մոնղոլների կողմից Ռումի սուլթանության ուղղակի կառավարման շրջանի մասին մանրամասն տե՛ս Cahen, Pre-Ottoman Turkey, p. 292–303.*

⁸⁶ *«Ի սոյն ամի (Ձեւ՝ 1299) հանին նոր դրամ յաշխարհին Հոռոմոց յանուն Խազանին, եւ զսուլտանի դրամն խափանեցին»։ Անանուն Սեբաստացի, Տարեգրութիւն, էջ 151:*

⁸⁷ *Տե՛ս Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 587; Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 162; Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 839).*

⁸⁸ *Ըստ Վարդան Արեւելցու՝ մոնղոլական օրենքը (Յասախը) պահանջում էր «զկամաւ հնազանդեալսն ապրեցուցանել՝ զերկիր եւ զքաղաք»։ Վարդան Վարդապետ, Հաւաքումն, էջ 160, ինչպես նաեւ՝ էջ 145, 147: Տե՛ս նաեւ՝ Գրիգոր Ակնեցի, Պատմութիւն, էջ 43: Հմմտ. Cahen, The Mongols, p. 716; Mutafian, Le siècle Mongol, p. 174.*

առկա էին նաեւ այլ, մասնավորապէս, ֆաղափական պատճառներ: Կիլիկիո Հայոց թագավորության բարեկամությունը մոնղոլներին անհրաժեշտ էր մի կողմից՝ մահմեդական Ասորիքի դէմ նրանց ծագրած նվաճողական ֆաղափականության տեսակետից, իսկ մյուս կողմից՝ Մոնղոլական խանության եւ Արեւմտոքի հարաբերություններում Կիլիկիային վերապահված միջնորդական առաքելության նկատառումով⁸⁹: Բավական է, թեկուզ, նշել, որ Հեթում Ա թագավորի շնորհիվ էր, որ Անտիոքի իշխանապետությունն, ի տարբերություն Ասորիքի մյուս խաչակրաց պետությունների, հայտնվեց մոնղոլների շուրջ ձեւավորված հակամարտության կոալիցիայի կազմում⁹⁰: «Երկակի ստանդարտի» կիրառման հարցում, ըստ երեւոյթին, որոշ դեր է խաղացել նաեւ այն հանգամանքը, որ մոնղոլներն ընդհանուր առմամբ ավելի վատ էին տրամադրված մահմեդականների, քան քրիստոնյաների նկատմամբ:

Այս ամենը նկատի ունենալով՝ դժվար է, ըստ էության, շիամաձայնել այն հետազոտողների հետ, ովքեր Կիլիկիո Հայոց թագավորության եւ Մոնղոլական խանության հարաբերությունները նախընտրում են բնութագրել «դաշինք» բառով: Իմիջիայլոց, հայկական միջնադարյան աղբյուրները եւս դրանք բնութագրելու համար երբեմն գործածում են «դաշն»⁹¹, «դաշն միաբանութեան»⁹², «ուխտ»⁹³ եւ «ուխտ խաղաղութեան»⁹⁴ բառե-

⁸⁹ Հմմտ. Մանանդյան, Քննական տեսութիւն, հտ. 3, էջ 306: Մոնղոլների, մասնավորապէս, Իլ-խանական Իրանի եւ Արեւմուտքի դիվանագիտական հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Boyle, The Mongol Empire, p. XIII. 554–563.

⁹⁰ Հմմտ. Runciman, The Crusader States, p. 572; Cahen, The Mongols, p. 717; Der Nersessian, The Armenians, p. 49; Déchéyan, Histoire, p. 310; Nassibian, Zabel, p. 214. Այս առումով հատկանշական է «Գործք Կիպրացւոց»-ի հետեւյալ դիտարկումը. «Բոհեմունդն արժանացավ հզոր տիրակալ Հուլավուի բարեհաճութեանը, քանի որ այդ պրինցը Հայոց թագավորի փեսան էր»։ Gestes des Chiprois, p. 751. Ի դեպ, անհավատների հետ կնքած այդ դաշինքի պատճառով Բոհեմունդը նույնիսկ բանադրանքի ենթարկվեց Հռոմի պապի կողմից. տե՛ս Boyle, The Mongol Empire, p. XIII. 556; Bundy, The Trajectory, p. 76.

⁹¹ Յովհաննէս Գարդել, Ժամանակագրութիւն, էջ 17:

⁹² Անդ, էջ 18:

⁹³ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 587:

⁹⁴ Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն, էջ 285:

րը: Ամենանշգրիտ գնահատականն, այնուամենայնիվ, տվել է Գրիգոր Ակներցին, որը հայ-մոնղոլական հարաբերությունները կոչում է «դաշինք սիրոյ եւ հնազանդութեան», այսինքն՝ ընդգծելով թե՛ բարեկամության, եւ թե՛ վասալական կախվածության հանգամանքը⁹⁵: Մենք դիտավորյալ շանդրադարձանք Հեթում Կոռիկոսցու «Արեւելքի պատմության ծաղկաբաղ» գրքում ընդգրկված, այսպես կոչված, «Հայ-մոնղոլական պայմանագրին»⁹⁶, քանի որ այն, որոշ պատմական նշմարտություններ պարունակելով հանդերձ, ընդհանուր առմամբ արդյունք է հեղինակի անսահման երեւակայության եւ հետապնդում է զուտ ֆարոգչական նպատակներ⁹⁷:

Իսկ այժմ ժամանակն է վերադառնալու մեր բուն նյութին՝ Լեւոն Գ (II) թագավորի գահաժառանգության հետ կապված հարցերի ֆննությանը, նախքան այդ, սակայն, ուշադրություն հրավիրելով մի վերջին կարեւոր իրողության, այն է՝ նրա գահակալության նախօրյակին Կիլիկիո թագավորության միջազգային դրության մեջ տեղի ունեցած նոր փոփոխության վրա: 1268 թվականին, վերացնելով Անտիոքի իշխանապետությունը, Եգիպտոսի մամլուխյան սուլթանությունը դարձել էր Հայոց պետության անմիջական հարեւանը, ինչը հղի էր նրա գոյությանն սպառնացող լրջագույն վտանգներով:

* * *

Քեւ Հեթումը Հայոց գահը Լեւոնին փոխանցել էր 1268 թվականին, բայց վերջինս, որդիական երախտագիտության զգացումից ելնելով, չէր

⁹⁵ Գրիգոր Ակներցի, *Պատմութիւն*, էջ 31: Հմմտ. նաեւ՝ Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն*, էջ 285:

⁹⁶ *Séu Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 835-836); Հեթում, Պատմութիւն Քաթարաց*, էջ 43-44:

⁹⁷ Այդ պայմանագրի աշխարհաբար թարգմանությունն ու վերլուծությունը տե՛ս Գալստյան, *Մոնղոլական շրջան*, էջ 49-60: Հմմտ. նաեւ՝ Галстян, *Армянские источники*, с. 67-70, 124-126; Grousset, *Histoire*, III, p. 527-529; *Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը*, հտ. 1, էջ 316-317: Հեթում Կոռիկոսցու աշխատության զաղափարախոսական ուղղվածության մասին տե՛ս Հովհաննիսյան, *Իրվագներ*, հտ. 1, էջ 174-175; Bundy, *Hetum's La Flor*, p. 233-235.

համաձայնել թագադրվել իր հոր կենդանության օրոք. «Եւ իսկոյն հայր նորա եւ ամենայն աշխարհն եղին զնա յաթոռ պարոնութեան, քանզի ոչ առ յանձն լինել թագաւոր յաւուրս հաւր իւրոյ»⁹⁸: «Յաթոռ պարոնութեան» բառերը ցոյց են տալիս, որ Լեւոնն ընդամենն ստանձնել էր Հեթում թագավորի անունից երկիրը կառավարելու պարտավորությունը: Սա, ի դեպ, երեսում է նաեւ 1269–1270 թվականներին գրված ձեռագրերի թվագրման բանաձեւից, որում Հեթումի կողմին հիշատակվում է նաեւ Լեւոնը, ընդ որում, առաջինը թագավորության, իսկ երկրորդը՝ պարոնության կամ իշխանության հանգամանքով: Այսպես, «ի թագաւորութեանն Հեթմոյ, եւ յառաջին ամի իշխանութեանն որդոյ նորա Լեւոնի»⁹⁹, «ի թագաւորութեան բարեպաշտ արքային Հեթմոյ, եւ յիշխանութեանն որդոյ իւրոյ Լեւոնի, այն ինչ նորընծա ի պարոնութիւն»¹⁰⁰, «ի թագաւորութեանն Հեթմոյ, եւ յիշխանութեանն անդրանիկ որդոյ նորա Լեւոնի աստուածասիրի»¹⁰¹, «ի թագաւորութեանն Կիլիկեցոյ նահանգիս Հեթմոյ բարեպաշտի, եւ ի պարոնութեանն Հայոց Լեւոնի որդոյ Հեթմոյ արքայի»¹⁰²: Այսպիսով, 1269–1270 թվականներին Լեւոնը եղել է Հայոց թագավորության կառավարիչը՝ կրելով «Պարոն Հայոց» տիտղոսը, ինչը հստակ կերպով երեսում է վերջին հիշատակարանի «ի պարոնութեանն Հայոց Լեւոնի» բառերից, ինչպես նաեւ որոշ այլ աղբյուրներից, որոնցում Լեւոնն ուղղակի հիշվում է «Պարոն Հայոց» տիտղոսով¹⁰³:

Վահրամ Բարունու տվյալներով՝ Լեւոնը հրաժարվել էր Հայոց գահին բազմել անգամ Հեթումի մահից հետո: Ըստ պատմիչի՝ նա երեք ամիս սուգ էր պահել եւ տեղի տվել միայն Աբաղա խանի, սուլթան Բայբարսի ու դրացի մյուս երկրների տիրակալների թախանձանքներին

⁹⁸ Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 588: Տե՛ս նաեւ՝ Վահրամ Բարունի, Ոստանաւոր պատմութիւն, էջ 227:

⁹⁹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 374:

¹⁰⁰ Անդ, էջ 380:

¹⁰¹ Անդ, էջ 381:

¹⁰² Անդ, էջ 396:

¹⁰³ Անդ, էջ 393; Մմբառ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 252; Հեթում Նզիրցի, Պատմութիւն, էջ 542:

անսալով. «Բայց պարոնն այնքան սուգ առեալ, / Մինչ մահու շափ հիւանդացեալ, / Որ յամենից աղաչեցեալ, / Փութով լինել թագաւորեալ, / Սա առ ժամայն ոչ հաւանեալ, / Եւ յումեմէ ոչ սփոփեալ, / Զերիս ամիսս սուգ տարեալ, / Տկար անձամբ եւ վշտացեալ, / Ապա նոքա որ բռնացեալ, / Եւ աշխարհի էին տիրեալ, / Որ յեզիպտոս սուլտան կացեալ, / Եւ այն որ Խանն էր անուանեալ, / Եւ այլ դրացիք որ մերձ եղեալ, / Եւ ի յազգաց գլուխ նստեալ, / Սիրոյ պատգամ առ նա յղեալ, / Զի եղիցի թագաւորեալ, / Յորոց հարկեալ եւ հաւանեալ»¹⁰⁴: Համարյա նույնը կրկնում է նաեւ Հեթում արքայորդու Ճաշոցի հիշատակագիրը. «Եւ մեծն Լեւոն սուգ պահեալ զերիս ամիսս ցաւագին անձամբ, եւ ապա մեծարեալ ի Ղանէն եւ յամենայն թագաւորաց մերձակայից եւ հեռաւորաց, միաբանութեամբ ամենայն աշխարհի աւծաւ թագաւոր ի վերայ ամենայն Հայոց»¹⁰⁵: Լեւոնի թագադրութեան արարողությունը տեղի ունեցավ 1271 թվականի հունվարի 6-ին, Տարսոնի Մայր տաճարում, բազմաթիվ հայ եւ օտար երեւելիների մասնակցությամբ ու նոխ հանդիսություններով. «Ի թուին Զի, յամսեանն յունուարի Զ-ն, օծին թագաւոր Հայոց զԼեւոն որդի թագաւորին Հեթոյ, ի մայրաքաղաքն Տարսոն ի սուրբն Սոփի, եւ յամենայն ազգաց քրիստոնէից անդ հաւաքեալ կային առ ի տեսանել զարժանի տեսանելոյ ուրախութիւնն», – գրում է Սմբատ Սպարապետը¹⁰⁶: Ավելի հետաքրքիր մանրամասներ է հաղորդում նույն թվականին ընդօրինակված մի ձեռագրի հիշատակագիրը. «Եւ ար հանդիսի արհնութեան նորա եղեւ ի սուրբ Յայտնումն Քրիստոսի»¹⁰⁷, ի մայրաքաղաքն Տարսոնի Կիլիկիոյ, ի մեծ եկեղեցին Սուրբ Սոփի: Եւ եղեւ ժողով մեծ յամենայն ազգաց՝ վերադիտողան Հայոց տեառն Յակոբայ, եւ բազում եպիսկոպոսաւ եւ վարդապետաւ, եւ բազումք ի Յունաց պատրիարքաց եւ յԱսորոց եւ Ֆրանկաց, եւ յիշխանաց մեծամեծաց ի Հայոց, ի

¹⁰⁴ Վահրամ Բաբունի, Ոսանաւոր պատմութիւն, էջ 228:

¹⁰⁵ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 588: Տե՛ս նաեւ՝ Յակոբ Սեպի, Պատմութիւն, էջ 200:

¹⁰⁶ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 252:

¹⁰⁷ Հատ Բարհեբրեոսի նույնպէս՝ Լեւոնի թագադրությունը տեղի է ունեցել «Քրիստոսի Հայտնության տոնի օրը». տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 526; Bar Hebraeus, Chronography, p. 449.

Ֆոանկաց եւ ի Հոռոմոց, յորս եղեւ մեծ հանդէս եւ ուրախութիւն ազգիս Հայոց»¹⁰⁸: Իսկ Գրիգոր Ակնեացիին շեշտում է Լեւոնի թագադրության հետ կապված որոշ այլ հանգամանքներ. «Աւրհնեցին եւ ամօին եղովն սրբութեան զթագաւորորդին Լեւոն՝ թագատօր ի վերայ ամենայն Հայոց, եւ եղեւ ցնծութիւն եւ ուրախութիւն մեծ ամենայն աշխարհիս Հայոց, եւ եղեւ նօր նօրոգումն եւ նօր ուրախութիւն ազգին Ռօբինեանց»¹⁰⁹: Այս համազգային ցնծությունն ու ուրախությունն¹¹⁰, իհարկե, պետք է բացատրել 1266 թվականի աղետից հետո հայերի հոգում Լեւոնի թագադրման առիթով արթնացած նոր հույսերով:

Առաջին հայացքից թվում է, թէ Լեւոնի զահակալումը հակասում է Սմբատ Սպարապետի Դատաստանագրքի այն դրույթին, ըստ որի՝ իգական գծով գահի փոխանցման դեպքում ժառանգության իրավունքը չէ տարածվում թագուհու եւ թագակիր-գործակցի զավակների վրա. «Քայց թէ աննարկութենէ լինի՝ որ բնաւ որդի չկենայ թագաւորին, այլ դուստր, նա կարէ հայրն թագել զինք ի պուման»¹¹¹, որ հետ իր մահուն շլինի ժառանգ աթոռոյն այն թագած դստերն որդիքն»¹¹²: Խորհրդահայ իրավագետ Ա. Սուրիասյանն այդպես էլ հասկացել է Սմբատի ձեւակերպումը՝ իր կողմից ավելացնելով հետեւյալը. «Կիլիկիո պետության պրակտիկան շրջանցել է այդ սահմանափակումը, եւ (զահը) ժառանգել են ոչ միայն դուստրը, այլեւ նրա որդիները. Լեւոն Բ-ը զահաժառանգ էր կարգել իր դուստր Զապելին, որի մահից հետո զահը ժառանգեց Հէթում Ա-ից ծնված նրա որդին»¹¹³: Եթէ, իրոք, Սմբատ Սպարապետը նկատի է ունեցել այն, ինչ նրան վերագրում է Ա. Սուրիասյանը, ապա դրանով, ըստ էության, ջնջվում է իգական գծով զահաժառանգության ինստի-

¹⁰⁸ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 393:

¹⁰⁹ Գրիգոր Ակնեացի, Պատմութիւն, էջ 65:

¹¹⁰ Վահրամ Բաբունու տեղեկությանը՝ Լեւոնի թագադրության արարողությանը հետեւած պաշտոնական խնջույքները տեսել են ամբողջ մեկ ամիս. տես՝ Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 229:

¹¹¹ Պոման = պայման. տես՝ Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 283:

¹¹² Смбат Спарпет, Судебник, с. 8.

¹¹³ Суквасян, История, с. 211.

տուտի ողջ իմաստը, այն է՝ իշխող հարստության արյունակցական հաջորդականության ապահովումը: Այլ կերպ ասած, եթե գահաժառանգ դուստրերի որդիներն իրավունք չունենային ժառանգելու գահը, ապա թագուհու մահով այդ հարստությունը պիտի սպառվեր: Մինչդեռ ոչ միայն Կիլիկիո թագավորության, այլև խաչակրաց բոլոր պետությունների պրակտիկայում տեղի է ունեցել ճիշտ հակառակը. ամենուրեք գահաժառանգ դուստրերին հաջորդել են նրանց որդիները: Մայրական գծով են գահին բազմել, օրինակ, Անտիոքի պրինց Բոհեմունդ III-ը (1163–1201 թթ.), Երուսաղեմի թագավորներ Բալդուին III-ը (1143–1162 թթ.), Ամորի I-ը (1162–1174 թթ.), Բալդուին V-ը (1185–1186 թթ.), Կոնրադ Հոհենշտաուֆենը (1228–1254 թթ.) եւ Կիպրոսի թագավոր Հուգո Անտիոքացին (1267–1284 թթ.)¹¹⁴:

Սակայն Սմբատի աշխատության ուշադիր ընթերցումից պարզվում է, որ իրականում ոչ մի հակասություն էլ գոյություն չունի: Ա. Սուֆասյանը պարզապես անտեսել է Կիլիկյան դատաստանագրքի վերոհիշյալ հոդվածի շարունակությունը, որը տալիս է ակամա առաջացած հանելուկի սպառիչ պատասխանը: Խնդիրն ընթերցողի համար ընկալելի դարձնելու նպատակով հարկադրված կրկնում ենք նաև Դատաստանագրքի համապատասխան հատվածի մեկ անգամ արդեն մեջբերված սկզբնամասը. «Բայց թէ աննարկութենէ լինի՝ որ բնաւ որդի չկենայ թագաւորին, այլ դուստր, նա կարէ հայրն թագել զինք ի պոման, որ յետ իր մահուն շլինի ժառանգ աթոռոյն այն թագած դստերն որդիքն. քան¹¹⁵ զեղբաւր որդիսն դնեն երկրին հաւատարիմքն յիրենց պարունին աթոռն, որ յիրենց պարունին սերմէն է եւ ոչ աւտար սերմի ծնունդ»¹¹⁶: Տվյալ հոդվածն, ըստ էության, պարունակում է իրավական երեք դրույթ՝ ա. Թագավորն, արու զավակ չունենալու պարագայում, կարող է գահը հանձնել իր դստերը, բ. Գահաժառանգ թագուհու մահից հետո վերջինիս որդիները զրկվում են նրան հաջորդելու իրավունքից, գ. երկրի իշխանների որոշմամբ՝ գահը փոխանցվում է նրա հորեղբորորդիներից

¹¹⁴ Մանրամասն տե՛ս *Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 64–118*:

¹¹⁵ *Հատ Կարստի՝ ապա փխ քան. տե՛ս Karst, Armenisches Rechtsbuch, Bd. 1, S. 16.*

¹¹⁶ *Смбат Спарпет, Судебник, с. 8.*

մեկին: Այստեղից ինքնըստինքյան բխում է, որ Լեոն Գ (II)-ի գահակալումը միանգամայն օրինական էր, քանի որ նրա մայրը՝ Զապել թագուհին, հորեղբորորդիներ չունեւ:

Ի դեպ, այն, որ Լեոնը Հայոց գահը ժառանգել էր մայրական գծով, գիտակցվել է նաեւ միջնադարում: Այսպես, օրինակ, Վահրամ Բարունին Լեոնի ծննդաբանության մեջ, հայրական գիծն ամենեւին անտեսելով, շեշտում է միայն նրա՝ Զապելի որդին լինելու պարագան. «Ըստ ծննդեն է սա որդի Զապելի, դստեր Լեոնի արհայի, որդոյ Ստեփանէի, որդոյ Լեոնի, որդոյ Կոստանդեայ, որդոյ Ռուբէնի»¹¹⁷: Ձեռագրերից մեկի թվագրման բանաձեւում եւս Լեոնը կոչված է ոչ թէ Հեթումի, այլ Զապելի որդի. «Ի թագաւորութեանն Հայոց Լեոնի որդի Զապել թագուհոյ՝ դստեր Լեոն թագաւորի»¹¹⁸: Մի քանի այլ հիշատակարաններում շեշտված է նրա՝ թէ՛ Հեթումի եւ թէ՛ Զապելի որդի լինելու հանգամանքը. «Յարհայութեան հզաւր եւ աստուածասէր ժառանգաւորին իշխանութեանս Հայոց՝ ծիրանածին արժանապսակ թագաւորին Երկրորդին Լեոնի, թողին Առաջնոյն Մեծին Ռուբենեանց՝ զմերս սպառեալ իշխանութիւն եւ թագ նորոգողի, եւ որդոյ արժանեացն յիշատակի բարեաց բարեպաշտի Հեթմոյ եւ քրիստոսասիրին Զապիլի»¹¹⁹, «Հրամանաւ եւ ծախիւմ քրիստոսապսակ բարեպաշտին եւ աստուածունակ արհային Հայոց Լեոնի՝ որդոյ Հեթմոյ՝ որդոյ Կոստանդեայ, եւ մայրենի ազգաւ որդի Զապել թագուհոյ, որդոյ Լեոնի թագաւորին Հայոց առաջնոյ յիտրիանց»¹²⁰: Ոչ մի այլ թագավորի առնչությամբ ձեռագրերի թվագրման բանաձեւում նման փաստ արձանագրված չէ, ինչը կրկին հաստատում է Լեոնի գահաժառանգության առանձնահատուկ հանգամանքը: Կարծում ենք, պատահական չէ նաեւ, որ միջնադարյան աղբյուրներում ամենաշատը Լեոն Գ (II)-ի պարագայում է շեշտված Հեթումյան գահակալների՝ Ռուբինյան զարմից սերված լինելու գաղափարը¹²¹, որը

¹¹⁷ Վահրամ Բարունի, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875, էջ 56: Տե՛ս նաեւ՝ էջ 58:

¹¹⁸ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 462:

¹¹⁹ Անդ, էջ 440:

¹²⁰ Անդ, էջ 442. Նույնը նաեւ՝ Անդ, էջ 573:

¹²¹ Տե՛ս Langlois, Cartulaire, p. 152; Գրիգոր Ակնեցի, Պատմութիւն, էջ 65; Մաթեոս-

կոչված էր ամրապնդելու նրանց իշխանության «լեզիտիմությունը»: Դա լուսաբանելու համար արժե նշել, թեկուզ, միայն հետեւյալ երկու օրինակները. «Աւրհնեցին եւ ամին եղովն սրբութեան զթագաւորորդին Լեւոն՝ թագաւոր ի վերայ ամենայն Հայոց, եւ եղև ցնծութիւն եւ ուրախութիւն մեծ ամենայն աշխարհիս Հայոց, եւ եղև նոր նորոգումն եւ նոր ուրախութիւն ազգին Ռոբինեանց»¹²² եւ «Այս ամենունակ բարեաց գանձարանի սիրեցող եղեալ բարեպաշտ եւ աստուածասէր արքայն Հայոց, թագաւորն Լեւոն, պայազատ եւ ժառանգաւոր թագի թագաւորութեանս Հայկազեան զարմի, սերեալ ծննդեամբ յՌոբինա իշխանէ, որ յազգականութենէ Բագրատունի, ի տանէ եւ ի տոհմէ Արծրունի»¹²³:

Լեւոնի գահակալման հանգամանքներին վերաբերող մյուս կարեւոր խնդիրը կապված էր Կիլիկիո Հայոց թագավորության գահաժառանգության պրակտիկայում ի հայտ եկած մի նոր երեւոյթի հետ, որը բխում էր մոնղոլական խանության նկատմամբ վասսալական կախվածության մեջ գտնվելու նրա իրավական կարգավիճակից: Խոսքը վերաբերում է մոնղոլ խաների կողմից «ինվեստիտուրայի» (իշխանության տվչության) ինստիտուտի կիրառմանը, ինչն այնուհետ պարտադիր պիտի դառնար Հայոց թագավորության յուրաքանչյուր նոր գահակալի «լեզիտիմությունն» ապահովելու համար¹²⁴: Բարհեբրեոսի վկայությամբ՝ դեռևս 1268 թվականին Հեթումը գնացել էր Աբաղա խանի մոտ եւ նրանից թույլտվություն ստացել՝ երկրի կառավարման դեկը Լեւոնին փոխանցելու համար. «Հեթում թագավորը գնաց Բաղդադ՝ հարգանքի տուրք մատուցելու արքայից արքային ու շնորհակալություն հայտնելու իր որդու փրկության համար: Եւ նա հրաման (սուզան) ստացավ, որ իր որդին կառավարի թագավորությունը, իսկ ինքը հանգստյան կոչվի, քանզի ծեր էր ու տկար: Եւ արքայից արքան խոստացավ, որ երբ նա

յան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 440, 442, 549, 569, 571, 573, 577, 706:

¹²² Գրիգոր Ակնեբցի, Պատմութիւն, էջ 65:

¹²³ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 549:

¹²⁴ Հմմտ. Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 27. Թերեւս ավելորդ չէ նշել, որ Բագրատունյաց շրջանում Հայոց թագավորները միեւնույն պատճառով տվչութիւն էին ստանում Արաբական խալիֆից. տե՛ս Юзбашян, Армянские государства, с. 69-71.

ներկայանա իրեն, ինքը նրան կշնորհի թագավորությունը»¹²⁵: Ուշադրություն պետք է դարձնել մանավանդ վերջին նախադասության վրա. Աբաղան, չբավարարվելով Հեթումի խնդրանքով, փաստորեն պահանջում է, որ Լեւոնն անձամբ ներկայանա իրեն ու ստանա այդ իրավունքը: Նույն ժամանակագրի տվյալներով՝ հաջորդ տարի Լեւոնն իսկապես գնում է Աբաղայի մոտ եւ ձեռք բերում վերջինիս հավանությունը. «Հուլիս ամսին պարոն¹²⁶ Լեւոն արքայորդին գնաց հարգանքի տուրք մատուցելու արքայից արքային եւ, սիրալիւր ընդունելության արժանանալով, թույլտվություն ստացավ տնօրինելու իր հոր թագավորությունը»¹²⁷: Այդ այցի մասին տեղեկացնում է նաեւ Սմբատ Սպարապետը, սակայն առանց հիշատակելու Լեւոնի կողմից Աբաղայի թույլտվությունն ստանալու հանգամանքը. «Ի սոյն ամի (= 1269 թ.) պարոնն Հայոց Լեւոն գնաց յարեւելս առ խանն Ապաղա, եւ նա ընկալաւ զնա մեծարանօք, եւ բազում պարգեւօք դարձոյց յաշխարհն իւր Կիլիկիա»¹²⁸: Ուստի կարող է տպավորություն ստեղծվել, որ ասորի ժամանակագիրն, ինչ-ինչ պատճառներով, չափազանցում է մոնղոլների խաղացած դերը տվյալ հարցում: Սակայն Գրիգոր Ակնեցիի հայ պատմիչը միանշանակ կերպով հաստատում է Բարհեբրեոսի վկայությունը, թեպետ Լեւոնի այցը տեղադրելով 1271 թվականին. «Իսկ պարոն Լեւոն, որդի Հայոց թագաւորին, գնաց առաջի Աբաղայ Ղանին, եւ պատմեաց զմահ թագաւորին: Եւ յոյժ սիրեալ եւ պատուեալ ի ղանէն, եւ առեալ հրաման վասն թագաւորելոյ իւր՝ ի տեղի հաւր իւրոյ, ապա դարձաւ եւ եկն յերկիրս իւր»¹²⁹:

¹²⁵ Barhebraeus, Chronicon, p. 525–526; Bar Hebraeus, Chronography, p. 448.

¹²⁶ Ասորական բնագրում՝ māre agrā, որը բառացի նշանակում է դանձապահ, տանուտեր: Փ.-Ք. Շաբոն այդ տիտղոսը թարգմանել է «dominus mercedis». Michel le Syrien, Chronique, III, p. 304n. հմմտ. Բողոյան, Բյուզանդիայի արեւելյան քաղաքականությունը, էջ 203 ծ.: Մեր կարծիքով դա հայկական աղբյուրներում գործածվող «Իշխան Հայոց» կամ «Պարոն Հայոց» տիտղոսի համարժեքն է:

¹²⁷ Barhebraeus, Chronicon, p. 526; Bar Hebraeus, Chronography, p. 448. Տե՛ս նաեւ՝ Barhebraeus, Chronicon Ecclesiasticum, t. I, p. 765 (հայերեն թարգմանությունը՝ Տեր-Պետրոսյան, Ասորիների դերը, էջ 75):

¹²⁸ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 251–252:

¹²⁹ Գրիգոր Ակնեցի, Պատմութիւն, էջ 65:

Սակայն, նկատի ունենալով նաև հաջորդ հայ թագավորների գահակալման հանգամանքները, պետք է նշել, որ մոնղոլների կողմից կիրառության մեջ դրված «ինվեստիտուրայի» կարգն ուներ ոչ թե վճռորոշ, այլ ընդամենը վավերացնող լիազորության բնույթ, այսինքն՝ ոչ թե մոնղոլներն իրենք էին որոշում, թե ով պիտի թագավորի Կիլիկիայում, այլ վավերացնում էին Հայոց օրինական թագաժառանգի գահակալման իրավունքը: Չի եղել դեպք, երբ նրանք օրինական թագաժառանգի փոխարեն Հայոց գահին բազմեցնեն մի ուրիշ հավակնորդի: Անգամ որոշ առումով բռնազավթման ճանապարհով իշխանության հասած Սմբատ թագավորի պարագան, որի մասին մանրամասն կխոսվի համապատասխան տեղում, չի հակասում այս պնդմանը¹³⁰: Հետեաբար, բոլոր հիմքերը կան եզրակացնելու համար, որ Հայոց թագավորների գահակալման վավերացումը պարզապես հանդիսացել է խորհրդանշական մի արարողություն՝ կոչված ընդգծելու մոնղոլ խաների գերակա լինելու հանգամանքը:

Մոնղոլական շրջանում Կիլիկիո Հայոց թագավորության միջազգային իրավական կարգավիճակի էությունն ըմբռնելու եւ մոնղոլների համար նրա ունեցած նշանակությունը ճիշտ գնահատելու առումով, մեր կարծիքով, կարելու է Լեւոն Գ (II) թագավորի եւ Աբաղա խանի հարաբերությունների հետեւյալ դրվագը¹³¹: Հէթում Կոռիկոսցի պատմիչի տվյալներով՝ 1277 թվականին, Ռումի սուլթանությունում եզրիպտական մամլուֆների կողմից հրահրված ապստամբությունը դաժանորեն ճնշելուց հետո, Աբաղան Լեւոնին առաջարկում է ստանձնել սելջուկյան պետության կառավարումը, ինչն, ըստ էության, նշանակում էր այն կցել Կիլիկիո թագավորությանը. «Երբ Աբաղան վերագրավեց բոլոր ապստամբ վայրերն ու Թուրքիայում ամեն ինչ կարգավորեց իր ուզածի պես, նա իր մոտ հրավիրեց Հայոց թագավորին եւ նրան առաջարկեց տնօրինել ու պահպանել Թուրքիայի թագավորությունը, քանի որ Հա-

¹³⁰ «Որոշ առումով» վերապահությունն արված է, նկատի ունենալով այն, որ Հեթում Բ թագավորը համենայն դեպս Սմբատին Հայոց թագավորության տեղապահ էր նշանակել օրինական կարգով:

¹³¹ Այդ դրվագի մասին մանրամասն տե՛ս Grousset, Histoire, III, p. 695-696; Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 324-325:

յաստանի թագավորն ու նրա նախնիները միշտ էլ հավատարիմ էին եղել Քաթարների հանդեպ»¹³²: Մենք նշեցինք արդեն, որ Հեթում պատմիչը, Արեւմուտփի վրա տպավորություն գործելու նպատակով, հակված է շափագանցելու հայ-մոնղոլական հարաբերությունների իրական դրությունը: Սակայն այս դեպքում, մեզ թվում է, հիմքեր չկան կասկածելու նրա արժանահավատությանը, քանի որ Իլ-խանական Իրանը, հարատեւ պատերազմի մեջ գտնվելով Ոսկե Հորդայի եւ Միջինասիական Ջաղաթայների դեմ, իրոք, շահագրգռված կարող էր լինել ազատվելու Ռումի սուլթանությունը կառավարելու ծանր հոգսից՝ այն փոխանցելով մի այնպիսի հավատարիմ դաշնակցի, ինչպիսին Հայոց թագավորն էր:

Սակայն եթե սելջուկյան սուլթանության կառավարումը ծանր բեռ էր Մոնղոլական խանության համար, ապա առավել ծանր բեռ պիտի լիներ Հայոց թագավորության համար, որն առանց այդ էլ շարունակ ենթարկվում էր եգիպտական մամլյուֆների ավերիչ ասպատակություններին, որոնցից վերջինը տեղի էր ունեցել նկարագրված իրադարձություններից երկու տարի առաջ¹³³: Ուստի Լեւոնը, նիշտ գնահատելով իր երկրի հնարավորությունները, հրաժարվեց ընդունել Աբաղայի առաջարկը, միայն թե, իր կողմից նրան խորհուրդ տալով՝ Ռումի սուլթանությունում այլեւս մահմեդական կառավարիչ չնշանակել. «Հայոց թագավորը, խելամտություն ցուցաբերելով, շնորհակալություն հայտնեց Աբաղային այդպիսի մեծ նվիրատվության համար, բայց նաեւ հայտարարեց, որ ինքն ի վիճակի չէ երկու թագավորություն կառավարելու, քանի որ եգիպտոսի սուլթանը ջանում է նեղը գցել Հայաստանի թագավորությանը: Հայոց թագավորն Աբաղային խորհուրդ տվեց Քուրփայի թագավորության տնօրինումը չհանձնարարել որեւէ մահմեդականի: Խորհուրդը դուր եկավ Աբաղային, եւ նա որեւէ մահմեդականի Քուրփայում իշխանություն չտվեց»¹³⁴: Լեւոնի խորհրդով, թե ոչ, հայտնի է, որ 1277

¹³² Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 843). *Տե՛ս նաեւ՝ Հեթում, Պատմութիւն Քաթարաց, էջ 54:*

¹³³ *Եգիպտոսի սուլթան Բայբարսի 1175 թ. կիլիկյան արշավանքի մասին մանրամասն տե՛ս Canard, Arménie-Cilicie, p. 238-241.*

¹³⁴ Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 843-844). *Տե՛ս նաեւ՝ Հեթում, Պատմութիւն Քաթարաց, էջ 54:*

թվականին Աբաղա խանը Ռուսի սուլթանությունում իսկապես ուղղակի մոնղոլական կառավարում հաստատեց¹³⁵: Ինչեւէ, անկախ արդյունքից, Աբաղայի կողմից Լեւոնին արված առաջարկի փաստն ինքնին վկայությունն էր Հայոց թագավորի ունեցած միջազգային կշռի, որի մեծացմանը պիտի նպաստեր նաեւ նրա բերած նշանակալի մասնակցությունը 1280/1 թվականին մոնղոլների ձեռնարկած սիրիական արշավանքին¹³⁶:

Դատելով աղբյուրներից, մոնղոլների աչքում Լեւոնի անձի նշանակալիությունը բարձրացրել էր նրա հեղինակությունը նաեւ համահայկական միջավայրում: Մոնղոլական տիրապետության շրջանում Հայաստանը եւ Կիլիկիան, թեպետ տարբեր կարգավիճակներով, առաջին անգամ հայտնվել էին մեկ տերության կազմում: Այս հանգամանքը հեշտացնում էր հայության երկու հատվածների հաղորդակցությունը եւ ամրապնդում նրանց ընդհանրության գիտակցությունը: Լեւոնն իր կողմից անում էր ամեն ինչ՝ ավելի եւս ամրապնդելու այդ գիտակցությունը եւ արդարացնելու ամենայն Հայոց թագավորի իր կոչումը¹³⁷: Որ դա ոչ թե տարերայնորեն դրսեւորված, այլ Լեւոնի կողմից ծրագրված հստակ ֆաղափականությունն էր, ապացուցվում է հետեւյալ փաստերով: Հիշատակարաններից մեկը հատուկ ընդգծում է այն մեծ սերը, որ Լեւոնը տածում էր իր նախնիների հայրենիքի նկատմամբ. «Արդ, սոյն ամենաբարի եւ պայազատ թագաւորս մեր Լեւոն... առաւել տենչմամբ սրտի սիրելով զհայրենի եւ պարծելի բնիկ Հայկազանց աշխարհն՝ զՏունն Արեւելից, որ առաջին է մասն եւ գլուխ արիմակ իմն բոլոր աշխարհին»¹³⁸:

¹³⁵ *St' u Bosworth*, *Saldjūkids*, p. 949; *Cahen*, *Pre-Ottoman Turkey*, p. 293; *Cahen*, *The Mongols*, p. 728.

¹³⁶ Այդ արշավանքի մասին մանրամասն տե՛ս *Grousset*, *Histoire*, III, p. 699-701; *Տեր-Պետրոսյան*, *Խաչակիրները եւ հայերը*, հտ. 1, էջ 325-327; *Canard*, *Arménie-Cilicie*, p. 244-245.

¹³⁷ Պ. Պտուկյանի՝ Կիլիկիո դրամագիտությանը նվիրված գրքում նկարագրված Լեւոն Գ (II)-ի 198 դրամներից 58-ը կրում է «Թագաւոր ամենայն Հայոց» մակագրությունը (*Bedoukian*, *Coinage*, p. 290-298): Այդ տիտղոսը Լեւոնի առնչությամբ հանդիպում է նաեւ գրավոր հուշարձաններում. տե՛ս *Մաթեոսյան*, *ԺԳ դ. հիշատակարաններ*, էջ 445, 718; *Գրիգոր Ակնեբցի*, *Պատմութիւն*, էջ 65:

¹³⁸ *Մաթեոսյան*, *ԺԳ դ. հիշատակարաններ*, էջ 570:

Ընդ որում, այդ սերն արտահայտվում էր ոչ միայն զգացմունքների, այլև Լեւոնի ձեռնարկած կոնկրետ ֆայլերի միջոցով:

1282 թվականին, օգտվելով Սյունյաց եպիսկոպոս Տեր Հայրապետի Կիլիկիայում հյուրընկալվելու առիթից, Լեւոնը դառնում է Տաթևի վանքի միաբան. «Յեպիսկոպոսութեան Սիւնեաց Տեր Հայրապետայ եւ Տեր Յովհաննիսի, հօր եւ բարեպաշտ արքայն Հայոց Լեւոն, տիրապետեալ արեւմտական նահանգին Կիլիկիոյ, մեծագոյն յուսով եւ առատ պարգեւօք միաբանեցաւ ի սուրբ ուխտս միեղէն եղբայրութեանս»¹³⁹: 1284-ին, Իլ-խանների արժունիք կատարած իր հերթական այցելության ժամանակ, Լեւոնն ուխտի է գնում Արտազի Սուրբ Քաղեի վանք, ինչի մասին տեղեկացնում է դրանից ութ տարի անց գրված հետեւյալ հիշատակարանը. «Եւ ութ ամաւ յառաջ եկեալ սուրբ արքայն Հայոց Լեւոն՝ բարի եւ սնուցող եւ երախտաւոր տէրն իմ, յայս սուրբ ուխտս, եւ բազում սէր գտեալ արքային Հայոց ի սիրոյ եպիսկոպոսէս տէր Տիրացուէ»¹⁴⁰: Հաջորդ տարի Լեւոնը Հաղպատի վանքին է նվիրում Ներսես Լամբրոնացու «Սաղմոսաց մեկնության» մի շքեղ ընդօրինակություն, որի հիշատակարանն, ի դեպ, ընդգծում է, որ դա ընդամենը մեկն էր Մեծ Հայքի վանքերին կատարած նրա բազմաթիվ նվիրատվություններից. «Ճշմարտապէս քան զբազումս առաւել սիրելով եւ անմոռաց բաղձանամ միշտ ի մտի ունելով արքայս Լեւոն զվանորայս եւ զեկեղեցիս եւ զբարեձեւ կրանատրս, եւ զկարգս արեւելեան կողմանցն որ ի Մեծ Հայք, որով հանապազ պարծէր առ ամենայն ազգս եւ լեզուս քրիստոնէից, եւ միշտ գովէր եւ տենչէր իբրու հարազատ ժառանգ, եւ մանաւանդ քան զբազում տեղիս գմեծ եւ զհոշակաւոր երկնահաւասար սուրբ ուխտն զմայրականն զՀաղբատ, յորում կամէր անմոռաց արձանացուցանել զինքեանն յիշատակ բարի ի Քրիստոս նուիրամ եւ պատարագամ, վասն որոյ եւ ընդ այլոց թագաւորական ընծայից, զոր միշտ առաքէր, եւ զգիրքս զայս Մեկնութեան Սաղմոսաց Դաւթի... պարգեւեաց սուրբ ուխտին Հաղբատայ»¹⁴¹: Ուստի զար-

¹³⁹ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 183: Պատմիչը նաեւ մեջքերում է այդ առթիվ Լեւոնի գրած շափածո դիմում-խնդրագիրը (Անգ, էջ 182):

¹⁴⁰ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 692:

¹⁴¹ Անգ, էջ 570-571: Բուն Հայաստանի հոգեւոր կենտրոնների վրա իր հովանա-

մանալի չպետք է թվա, որ ժամանակակիցները Լեւոնին մեծարում են հետեւյալ բնույթի բազմաթիվ պատվանուններով ու տիտղոսներով՝ «բարեպաշտ եւ բարձր ի վերայ թշնամեաց իւրոց»¹⁴², «սուրբ թագաւոր ամենայն Հայոց»¹⁴³, «փրիստոսազաւր եւ իմաստախոհ, հեզանագ եւ բարեմիտ, քաջ եւ արի, աստուածասէր արքայ»¹⁴⁴, «արքայից արքայ Հայոց Մեծաց»¹⁴⁵ եւ այլն:

Մեծ Հայքի եւ Կիլիկիո Հայոց թագավորության հարաբերությունների լուսաբանման տեսակետից առանձնակի ուշադրության է արժանի Լեւոն Գ (II) թագավորի եւ Սյունյաց թեմի առաջնորդ, նշանավոր պատմիչ Ստեփանոս Օրբելյանի սերտ համագործակցությունը: 1285 թվականին դեռեւս քահանայ Ստեփանոս Օրբելյանը գալիս է Կիլիկիա՝ եպիսկոպոսական ձեռնադրություն ստանալու Հակոբ Ա Կլայեցի կաթողիկոսից: Սակայն Սիս հասնելով, նա լսում է վերջինիս մահվան լուրը եւ հարկադրված լինում սպասել հաջորդ կաթողիկոսի ընտրությանը: Այնժամ Լեւոն թագավորը, մեծ պատիվներ մատուցելով ազնվազարմ սյունեցուն, նրան առաջարկում է զբաղեցնել Հայոց կաթողիկոսի թափուր մնացած աթոռը: Հատկանշական է, որ այս ամենի մասին տեղեկացնողը ոչ այլ ոք է, եթե ոչ ինքը՝ Ստեփանոս Օրբելյանը. «Որ եւ ի հասանելն անդ, վախճանեալ էր կաթողիկոսն, եւ բազում պատիւ եւ մեծամեծ փառս ընդունէր ի թագաւորէն Հայոց Լեւոնէ, որ եւ յոյով թախանձանս առնէր նմա մնալ անդէն եւ նստել յաթոռ կաթողիկոսութեան Հայոց»¹⁴⁶: Երբ Ստեփանոսը մերժում է թագավորի առաջարկը, Հայոց եկեղեցական ժողովը 1286 թվականին կաթողիկոս է ընտրում Կոստանդին Բ Կատուկեցուն,

վորութիւնը տարածելու Լեւոնի վարած քաղաքականութեան մասին տե՛ս Բաղդասարյան, Հովհաննես Երզնկացի, էջ 55:

¹⁴² Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 438:

¹⁴³ Անդ, էջ 445:

¹⁴⁴ Անդ, էջ 486:

¹⁴⁵ Անդ, էջ 608: Բացի նմանատիպ պատվանուններից ու տիտղոսներից, ձեռագրական հիշատակարաններում Լեւոնին երբեմն նվիրված են նաեւ ամբողջական ներբողներ. Անդ, էջ 570–571, 573–574: Հմմտ. նաեւ՝ Մինաս Ամդեցի, Ազգաբանութիւն, էջ 44–45:

¹⁴⁶ Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն, հտ. 2, էջ 174:

որն էլ կատարում է նրա ձեռնադրությունը: Սակայն չբավարարվելով այդքանով, կաթողիկոսն, անկասկած կետնի հավանությամբ, վերականգնում է Սյունյաց մետրապոլիտությունը¹⁴⁷ և Ստեփանոսին լայն իրավասություններ շնորհում տնօրինելու Վայոց ձորի և Տաթևի եպիսկոպոսական աթոռները. «Եւ ի մեծի ատուր Զատկին ձեռնադրեն զՍտեփաննոս մետրապօլիտ մեծ աթոռոյն Սիւնեաց ի վերայ այլոց եպիսկոպոսացն որ կային աստ եւ անդ, ոմանք ի Վայոց ձոր եւ ոմանք ի Տաթև, որք եւ միաբան թղթովք եւ ընծայիւք յուղարկեալ էին զնա առ կաթողիկոսն վասն նորոգման սուրբ աթոռոյն հին պատուոյ եւ աստիճանին, որ բարձեալ էր ի վաղնջոց վասն աներման եւ կործանման աշխարհիս»¹⁴⁸: Ի դեպ, Ստեփանոսի օծման արարողության ժամանակ մի թագ նրա գլխին դնում է Հայոց կաթողիկոսը, իսկ մի ուրիշը՝ կետն թագավորը. «Եւ դնեն թագ պատուական ի գլուխ նորա՝ զայս կաթողիկոսն, իսկ թագատրն... դնէ կրկին անգամ թագ պատուական ի համակ ոսկոյ ի գլուխն»¹⁴⁹:

Սյունյաց մետրապոլիտության վերականգնումն, անշուշտ, առաջին հերթին Օրբելյանների իշխանության հզորության եւ դրա շնորհիվ վայելած հեղինակության արտահայտությունն էր: Սակայն դա, ըստ երեւույթին, ուներ նաեւ այլ դրդապատճառներ: Ստեփանոս Օրբելյանի «Պատմության» մի այլ հատված բացահայտում է եկեղեցավարչական այդ միավորի էությունը, այն է՝ Սյունյաց թեմի նախաթոռության հաստատումը Մեծ Հայքի մյուս եպիսկոպոսությունների նկատմամբ. «Եւ ի վաղուեան ատուրն զմեզ իսկ ձեռնադրեցին եւ պսակեցին ընդ սուրբ եւ առաքելական եկեղեցւոյն Սիւնեաց, եւ պատուեցին մեծամեծ պարգևօք եւ կրկին թագի կարգեալ յաստիճան մետրապօլտութեան, եւ կոչիլ պաւտաւֆրանդէս¹⁵⁰ պատրիարհին Հայոց, այսինքն նախաթոռ լինել եւ գլուխ ամենայն եպիսկոպոսաց

¹⁴⁷ Սյունյաց մետրապոլիտության վերականգնման հանգամանքների մասին մանրամասն տե՛ս Օրմանյան, Ազգապատում, § 1164–1165, 1171–1174:

¹⁴⁸ Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն, հտ. 2, էջ 174:

¹⁴⁹ Անդ, էջ 175:

¹⁵⁰ «Պաւտաւֆրանդէս» = πρωτοφροντιστής (գլխավոր հանձնակատար, հոգաբարձու, խնամատար):

Հայոց»¹⁵¹: Ինչպես սրանից իրավացիորեն եզրակացրել է Մ. Օրմանյանը, «աւելի բացայայտ խօսքով, Հայաստանի վրայ կաթողիկոսական ներկայացուցիչ մը կը հաստատուէր, քանի որ Կիլիկիոյ աթոռին դժուար էր հեռատուր վիճակներու վրայ անմիջական հսկողութիւն ընել»¹⁵²: Մենք չենք բացառում, որ վարչական այդ ստորաբաժանման ստեղծման վրա որոշ ազդեցություն կարող էր ունեցած լինել Հակոբիկյան եկեղեցում գործող մափրիանության ինստիտուտը, որն սկիզբ է առնում VII դարից: Մափրիանի պաշտոնը հիմնադրվել էր 629 թվականին՝ Անտիոքի պատրիարքի անունից կառավարելու համար Ասորական Մայր եկեղեցուց բյուզանդա-պարսկական սահմանով անջատված նրա Միջագետյան թեմերը¹⁵³: Հայերը քաջ ծանոթ պետք է լինեին այդ կառույցին, քանի որ օրվա մափրիանը, նշանավոր ասորի մատենագիր Գրիգորիոս Բարհեբրեոսը 1264 թվականին օժվել էր Սսի Մայր եկեղեցում, իսկ դրանից հետո, 1268 եւ 1273 թվականներին, եւս երկու անգամ այցելել Կիլիկիա¹⁵⁴: Բացի այդ, բազմիցս լինելով Իլ-խանների մայրաքաղաքում, նա չէր կարող շփումներ չունենալ նաեւ այդտեղ հաճախող Սյունյաց առաջնորդների հետ:

Եթե Սյունյաց մետրապոլիտության հաստատման խնդրում Հայոց կաթողիկոսի նպատակը պարզ էր, այն է՝ Մեծ Հայքի եկեղեցական թեմերի կառավարման դյուրացումը, ապա Լեւոն թագավորն Ստեփանոսին այդպիսի պատվի արժանացնելիս¹⁵⁵ նույնպես, հավանաբար, ել-

¹⁵¹ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 228:

¹⁵² Օրմանյան, Ազգապատում, § 1172: Հմմտ. նաեւ՝ Մկրտչյան, Սյունյաց Աթոռ, էջ 53-54:

¹⁵³ Մափրիանության մասին մանրամասն տե՛ս Kawerau, Die Jakobitische Kirche, S. 23-24; Fiey, "Maphrianat", 1974, p. 133-164; 1977/8, p. 347-378; Ավելի համառոտ՝ Assfalg-Krüger, Petit Dictionnaire, p. 336; Séllis, Les Syriens, p. 215.

¹⁵⁴ Տե՛ս Barhebraeus, Chronicon Ecclesiasticum, t. I, p. 751-752, 769-770; t. II, p. 441-443. Հմմտ. Տեք-Պետրոսյան, Ասորիների դերը, էջ 11:

¹⁵⁵ Այն մասին, որ իր ձեռնադրման հարցում կաթողիկոսի կողքին հավասար դերակատարություն է ունեցել Լեւոն թագավորը, վկայում է ինքը՝ Ստեփանոս Օրբելեյանը. «Եւ ժողովեալ մերոց եպիսկոպոսաց առ հայրն իմ՝ հրաւիրեցին զիս ընթանալ ի թագաւորական աշխարհն Կիլիկիա, առ երջանիկ կաթողիկոսն եւ աստուածապսակ թագաւորն Հայոց՝ առնուլ ձեռնադրութիւն մետրապօլիտութեան ի վերայ աթոռոյս Սիւնեաց». Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 227:

նում էր որոշ գործնական նկատառումներից: Ըստ երեւոյթին, հաշվի առնելով Օրբեյանների իշխանության աշխարհագրական ու քաղաքական մերձավորությունն Իլ-խանների արժունիքին, նա շահագրգռված էր վայելել նրանց համակրանքը եւ հանձինս նրանց մշտական ու հուսալի բարեխոսներ ունենալ մոնղոլների առջեւ¹⁵⁶: Նշված իրադարձություններից ընդամենը մի քանի տարի առաջ որոշ մարդիկ՝ հայ թե օտար, Լեւոնի մասին ծանր շարախոսություններ էին կատարել Աբաղայի առջեւ, եւ Հայոց թագավորից մեծ ջանքեր ու հսկայական կաշառքներ էին պահանջվել մոնղոլ խանի բարեհաճությունը վերանվանելու համար. «Իսկ ի վերայ այս ամենայնի յարեան ոմանք յամենայն կողմանց յիրայոցն եւ յաւտարաց եւ յայլագգաց անարիմաց ազգի ազգիք ի յարկածից Արուսակին անկելոյ, խորհուրդ չար ի մտի եղին, եւ ընթացան առ թագաւոր ազգիմն նետողաց, ի բարէպաշտ խանն Ապաղա, որդի մեծի խանին Հովայունի, եւ բազում նենգաբանութեամբ մատնեալ զարեայն ամենայն Հայոց՝ չարաչար սուտ եւ բասիր բանիւք: Վասն որոյ եւ ամենասուրբ արեայն Հայոց թէպէտ եւ բազում անգամ ընթացեալ եւս էր առ մեծ խանն վասն քրիստոնէից, եւս առաւել սակս այս պատճառի, զանազան եւ անբաւ բազմութեամբ ընծայից ամենայն արեւելայնոցն իշխանաց արեայագանց, նա եւս առաւել խանին եւ ամենայն բազմութեան զաւրաց իւրոց մատուցեալ, մինչեւ զվաղընչոց բանսարկուեալ նենգաբանութիւնսն ի թշնամեաց իւրոց կարողութեամբ անեղին Աստուծոյ սուտ արարեալ, եւ զիրն ամենայնջմարիտ հաւատս եւ զգործս անարատ ընդդէմ Աստուծոյ եւ խանին յայտնի կացուցեալ, որ եւ բազում գովութիւնս ընկալեալ ի նմանէն, եւ պարզեաւթ թագաւորականաւ դարձուցեալ յաշխարհ իւր...»¹⁵⁷: Բացառված չէր, որ հայ-մոնղոլական հարաբերություններում նման լարվածություններ կարող էին ծագել

¹⁵⁶ *Ինչպես նշում է Աբրահամ եպս. Մկրտչյանը, Լեւոնի նպատակն էր «թե՛ սիրաշահել արեւելյան վարդապետներին, թե՛ սերտ կապեր ունենալ մոնղոլների մոտ մեծ դիրքի հասած եւ օրավուր հզորացող Սյունյաց Օրբեյանների հետ».* *Մկրտչյան, Սյունյաց Աթոռ, էջ 52: Ակնհայտորեն նույն նկատառումներով Սյունյաց Օրբեյանների բարեկամությունը ձգտում էին շահել նաեւ Վրաց թագավորները. հմմտ. Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 168-173:*

¹⁵⁷ *Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 573:*

նաև հետագայում: Ճիշտ Ստեփանոս Օրբելյանի Կիլիկիա այցելելու տարում, 1285 թվականին, կնքվել էր հայ-եգիպտական հայտնի պայմանագիրը¹⁵⁸, որը, բնականաբար, չէր կարող չգրգռել մոնղոլներին: Դրանով է բացատրվում այն, որ պայմանագրի կնքումից հետո Լեւոնը հարկադրված է լինում շուտափոյթ կերպով մեկնել նորընծա խան Արղունի արժունիք¹⁵⁹, ամենայն հավանականությամբ, բացատրություններ տալու համար այդ առթիվ¹⁶⁰:

Հետեւաբար, Հայոց թագավորի անձի շուրջ ստեղծված այսպիսի անվստահության մթնոլորտում Իլ-խանների արժունիքի մերձակայքում Ստեփանոս Օրբելյանի պես հեղինակավոր բարեկամի ներկայությունն, անշուշտ, հույժ օգտակար կարող էր լինել նրա համար: Այս առումով, կարծում ենք, կարելու է նշել, որ մետրապոլիտական ձեռնադրությունից հետո Ստեփանոսն անմիջապես այցելում է Արղուն խանին եւ նրան ներկայացնում իր պաշտոնակալման առթիվ արձակած շրջաբերականը. «Դարձեալ ի գալն մեր ի Կիլիկիոյ՝ յետ աուրց ինչ գնացաք առաջի աշխարհակալ արային Արղունին, եւ հանդիպեալ նմա՝ ընկալաւ զմեզ եւ յոյժ յարգեաց եւ սիրեաց. եւ մեք ծանուցաք զվիշտս մեր եւ ցուցաք զշրջաբերականն մեր, զոր ետ թարգմանել եւ ընթեռնուլ առաջի իւր»¹⁶¹: Օրբելյանը հետագայում նույնպիսի ջերմ հարաբերություններ է հաստատում նաև Քեյխաթու եւ Ղազան խանների հետ¹⁶²: Ինչպես տեսնում ենք, Սյունյաց մետրապոլիտն, իսկապես, ելումուտ ուներ Իլ-խանների արժունիք եւ այդու ի վիճակի էր, որպես անպաշտոն դեսպան, կատարել Լեւոնի հուսացած առաքելությունը: Ստեփանոս Օրբելյանն, անկասկած, չպիտի

¹⁵⁸ Պայմանագրի արաբերեն բնագիրը՝ հանդիպողիք ֆրանսերեն թարգմանությամբ տե՛ս Langlois, Cartulaire, p. 217–231. Ֆրանսերեն մի այլ թարգմանություն տե՛ս Carnard, Arménie-Cilicie, p. 249–258. Պայմանագրի կնքման հանգամանքների եւ բովանդակության մասին տե՛ս Անդ, էջ 247–249, 258–259; Stewart, Armenian Kingdom, p. 55–61. Հմմտ. նաև՝ Микаелян, История, с. 414–415; Mutafian, Recherches, p. 96.

¹⁵⁹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 572; Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 847); Անանուն Սեբաստացի, Տարեգրութիւն, էջ 148:

¹⁶⁰ Հմմտ. Mutafian, Recherches, p. 96.

¹⁶¹ Ստեփաննոս Օրբելյան, Պատմութիւն, հտ. 2, էջ 230:

¹⁶² Անդ, էջ 231:

զլանար մատուցել այդ ծառայությունը, քանի որ նա երբեք չմոռացավ Լեոնի երախտիքը, ինչի ապացույցն է այն, որ թագավորի մահից հետո Սյունյաց մետրապոլիտը եկեղեցական տոնացույցում հատուկ օր սահմանեց նրա հիշատակը հավերժացնելու համար. «Յաղագս այսր յուսոյ եւ սիրոյ աստուածագօր թագաւորին եղբայրութեամբս»¹⁶³ կարգեցաք գօր սրբոյ Զատկի Յարութեան միաշաբաթուն յիշատակ նմա, որ կատարեն զպատարագն յամենայն եկեղեցիս անխափան մինչ ի վախնան»¹⁶⁴: Նկատի ունենալով, որ Կիլիկիո ոչ մի ուրիշ հայ գահակալ նման պատվի չի արժանացել, հարկ է ընդունել, որ հանգամանքների բերմամբ, Լեոն Գ (II) թագավորը հիրավի համահայկական «լեզիտիմություն» է վայելել, այս առումով գերազանցելով անգամ իր փառավոր նախորդներին՝ Լեոն Բ (I)-ին եւ Հեթում Ա-ին: Ավելի հեռուն գնալով, Մ. Օրմանյանը նույնիսկ պնդում է, որ Տաթևի աթոռի նկատմամբ վարած իր քաղաքականությամբ Լեոնը նպատակ է հետապնդել Կիլիկիո թագավորությունը տարածել բուն Հայաստանի վրա¹⁶⁵:

Լեոնի վայելած փառքն ու համբավը տարածվել էին նաեւ նրա կնոջ՝ Կեոան¹⁶⁶ թագուհու վրա, որին շոյված մեծարանքները շեն զիջում Զապել թագուհուն շնորհված զովաբանություններին¹⁶⁷: Այսպես, ձեռագրական հիշատակարաններում եւ ժամանակագրություններում Կեոանը կոչվում է՝ «մեծագրի եւ սրբաւք կենակից», «բարեպաշտ տիկին», «բարեպաշտուհի թագուհի Հայոց», «թագուհի ամենայն Հայոց», «մեծափառ թագուհի Հայոց», «ամենաւհնեալ թագուհի», «աւհնեալն ի կանայս թագուհի», «ամենագովելին հոգով եւ գեղեցիկն մարմնով»¹⁶⁸, «հաւատով

¹⁶³ «եղբայրութեամբս» բառի տակ Օրբելյանը նկատի ունի Տաթևի վանքի միաբանության անդամներին:

¹⁶⁴ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 183:

¹⁶⁵ Օրմանյան, Ազգապատում, § 1162:

¹⁶⁶ Կեոան անունը փոխառված է հունարեն κυρά Ἄννα-ից, որը նշանակում է «տիրուհի Աննա»:

¹⁶⁷ Կեոան թագուհու մասին մանրամասն տե՛ս Կլոդ Մուլաֆյանի «Կեոան Լամբրոնացի՝ Հայոց վերջին մեծ թագուհին» հոդվածը. Mutafian, Guérane de Lampron, p. 39–42.

¹⁶⁸ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 335, 339, 360, 420, 538, 571, 574, 705: Վերջին քաղվածքը տե՛ս նաեւ՝ Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 85:

պայծառացեալ եւ մահրութեան գործով լցեալ»¹⁶⁹ եւ այլն: Իսկ Կեռան թագունու հայտնի ավետարանի հիշատակարանը նրան նվիրված ներքող է հիշեցնում, որի մասին պատկերացում կարող է տալ թեկուզ հետեւյալ համառոտ հատվածը. «գոր է տեսանել յերանուհիս այս բամբիշ, ի մահու արհորդ փեսային սուրբ, ի թագուհին Կեռան, որ գյոլով մասունս առափնութեան կրելով յինճեան, փութա այս ի վերայ այոց բարդել, զի համայնիւմն պսակ բիրակնեա յարինեսցէ ինճեան, եւ զանկապուտն թագ ի վերայ այսր կալցի, զի ամենագեղ վայելչութեամբ հաճոյասցի Ռոդոյն Աստուծոյ»¹⁷⁰: Այսպիսով, կարելի է ասել, որ հասարակական գիտակցության մեջ, Զապելի ժամանակից սկսած, ձեւավորվել էր «թագունու ինստիտուտի» կարեւորության ըմբռնումը, որն արժայական ընտանիքի «լեգիտիմության» տարրերից մեկն էր դառնում: Կեռան թագունու «պաշտամունքի» ձեւավորումն, անտարակույս, տեղի էր ունեցել Զապել թագունու մեծարման ավանդույթի հետետղությանբ, թեւ վերջինիս պարագան, ինչպես արդեն նշեցինք, բոլորովին այլ էր՝ պայմանավորված նրա առանձնահատուկ իրավական կարգավիճակով ու քաղաքական կշռով:

«Լեգիտիմության» խնդրից կրկին անցում կատարելով մեր բուն նյութին՝ գահաժառանգության իրավունքի ֆննությանը, կարեւոր ենք համարում ուշադրություն հրավիրել Լետն թագավորի անվան հետ կապված մի վերջին հարցի վրա: Խոսքը վերաբերում է վերջինիս թողած անթիվ գավակներին, որոնք նրա մահից հետո, միմյանց հաջորդելով, տասնյակ տարիներ պիտի տնօրինեին Հայոց գահի ճակատագիրը: Հույժ կարեւորություն է ներկայացնում հատկապես նրանց ծննդյան թվականների հերթագայության ճշտումը, քանի որ դա որոշիչ նշանակություն ուներ գահաժառանգության հարցում: Կիլիկյան արժայատոհմերի ազգաբանության հմուտ հետազոտող Ռոդ-Կոլենբերգը Լետնի գավակներին ըստ ավագության դասակարգում է հետեւյալ հաջորդականությամբ.

1. Զապել – ծնված 1263 թ., մահացած մանուկ հասակում.
2. Կոստանդին – ծնված 1264 թ., մահացած մանուկ հասակում.

¹⁶⁹ Վահրամ Բարունի, Ոտանաւոր պատմութիւն, էջ 236:

¹⁷⁰ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 415:

3. Հերոմ – ծնված 1266 թ., սպանված 1307 թ.
4. Միսիլ – ծնված 1269 թ., մահացած մանուկ հասակում.
5. Քորոս – ծնված 1271 թ., սպանված 1298 թ.
6. Սմբատ – ծնված 1277 թ., մահացած 1310/1 թ.
7. Զապել – ծնված 1277 թ., սպանված 1323 թ.
8. Ստեֆանի – ծնված 1278 թ., մահացած 1296 թ.
9. Կոստանդին – ծնված 1278 թ., մահացած 1308 թ.
10. Ռիսա – ծնված 1278 թ., մահացած 1333 թ.
11. Ներսէս – ծնված 1279 թ., մահացած 1301 թ.
12. Ստեփաննե – ծնված 1281 թ., մահացած մանուկ հասակում.
13. Օշին – ծնված 1282 թ., մահացած 1328 թ.¹⁷¹
14. Ալինախ – ծնված 1282 թ., մահացած 1310 թ.¹⁷²:

Այս կարգից դուրս Ռուդ-Կոլենբերգը հիշատակում է նաև Լեոն Թագավորի երկու անանուն ապօրինածին դուստրերի, որոնցից մեկը (ծնվ. 1268/9 թ., մահ. շուրջ 1296 թ.) ամուսնացած էր Ռումի սուլթանության վեզիր Փարվանայի որդու¹⁷³, իսկ մյուսը (ծննդ. եւ մահ. թթ. անհայտ)՝ մոնղոլ զորավար Խուբիլադանի հետ¹⁷⁴: Աղբյուրները հնարավորություն են տալիս Ռուդ-Կոլենբերգի ցանկը լրացնել եւս երեք անուններով՝ Ֆիմի, ծնված 1266 թ.¹⁷⁵, Ռուբէն, ծնված

¹⁷¹ Սա վրիպակ է. Օշինը մահացել է 1320 թ.:

¹⁷² Rüd̄t-Collenberg, The Rupenides, III (H2). Ինքնըստինքյան հասկանալի է, որ ա. միենույն թվականին ծնված երեխաները երկվորյակ են եւ թ. նույն անունը կրող զավակներից երկրորդն այդպես է կոչվել ի հիշատակ մահացած առաջին համանուն երեխայի:

¹⁷³ Լեոնի այս դստեր մասին տե՛ս Barhebraeus, Chronicon, p. 527, 539; Bar Hebraeus, Chronography, p. 450, 459.

¹⁷⁴ Տե՛ս Ստեփաննոս Օրբէլեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 223: Հմմտ. Rüd̄t-Collenberg, The Rupenides, III (H2). Նկատի ունենալով Սյունյաց պատմագրի տեղեկության որոշ երկիմաստութիւնը, մեր կարծիքով, դժվար է անվերապահորեն համաձայնել Խուբիլադանի եւ Լեոնի դուստրերից մեկի ամուսնությանը վերաբերող տվյալ պնդմանը:

¹⁷⁵ Հեթում Թագաւոր, Պատմութիւն, էջ 83:

1272 թ.¹⁷⁶, մահացած 1274 թ.¹⁷⁷ եւ Սիպիլ, ծնված 1276 թ.¹⁷⁸: Ժամանակագրությունների եւ ձեռագրական հիշատակարանների ընձեռած տվյալների հիման վրա Ռուդ-Կոլենբերգի ցանկում կարելի է կատարել նաեւ այլ տիպի ճշտումներ, ինչպես, օրինակ, Սմբատի ծնունդը դնել 1274 թվականին¹⁷⁹ կամ Ստեֆանիի անունը դարձնել Թեֆանո¹⁸⁰:

Սակայն մեզ հետաքրքրող խնդիրը տվյալ պարագայում ոչ թե այդ ցանկի ճշգրտումն է, այլ Լեւոնի մահվան պահին նրա ողջ մնացած զավակների տարիֆային հերթագայությունը: Աղբյուրներից երկուսն, ակնհայտորեն նկատի ունենալով Լեւոնի մահվան պահին նրա ողջ մնացած զավակներին, նշում են, որ Հայոց թագավորն ունեցել է յոթ որդի եւ երեք դուստր՝ նրանց անունները թվարկելով հետեւյալ հաջորդականությամբ՝ Հեթում, Թորոս, Սմբատ, Կոստանդին, Ներսէս, Աշին, Ռուբեն (= Ալինախ), Զապել, Ռիտա եւ Թեֆանո¹⁸¹: Եւս երեք աղբյուր, զանց առնելով դուստրերին, հիշատակում է միայն որդիներին, ընդ որում, համարյա նույն հաջորդականությամբ¹⁸²: Եթե սրանց գումարենք նաեւ Ռուդ-Կոլենբերգի նշած ապօրինածին դուստրերին, ապա կստանանք 1289 թվականի դրությամբ Լեւոնի ողջ մնացած որդիների եւ դուստրերի հետեւյալ ցանկերը.

¹⁷⁶ Անդ, էջ 84: Տե՛ս նաեւ՝ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 411: Աղբյուրներում հիշատակվում է նաեւ մի այլ Ռուբէն, որը սակայն, ամենայն հավանականությամբ, Ալինախի մկրտության անունն է. այդ մասին մանրամասն տե՛ս «Օշին թագավոր» ենթագլխում:

¹⁷⁷ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 418:

¹⁷⁸ Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 84:

¹⁷⁹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 418:

¹⁸⁰ Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 84; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 105; Lignages d'Outremer, p. 92 (Thefanon).

¹⁸¹ Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 105; Lignages d'Outremer, p. 92 (Ռուբենի եւ Օշինի անունների փոխատեղությանը, ինչը դեր չի խաղում, քանի որ նրանք երկվորյակ էին):

¹⁸² Hayton, Flor, p. 206–207, 326; Մամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 153 (Ներսեսին հիշելով ցանկի վերջում); Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 657 (Ներսեսի փոխարեն դնելով Ստեֆանեի անունը):

Որդիներ

- Հեթում – ծնվ. 1266 թ.¹⁸³
 Թորոս – ծնվ. 1271 թ.¹⁸⁵
 Սմբատ – ծնվ. 1274 թ.¹⁸⁶
 Կոստանդին – ծնվ. 1277 թ.¹⁸⁷
 Ներսէս – ծնվ. 1279 թ.
 Օշին – ծնվ. 1282 թ.¹⁸⁸
 Ալինախ/Ռուբէն – ծնվ. 1282 թ.

Դուստրեր

- Զապել – ծնվ. 1273 թ.¹⁸⁴
 Թեֆանո – ծնվ. 1278 թ.
 Ռիտա – ծնվ. 1278 թ.
 Այօրինածին – ծնվ. 1268/9 թ.
 Այօրինածին – ծննդ. թ. անհայտ.

Որդիների եւ դուստրերի բաժանումը ոչ թէ ֆահահանության արդյունք է, այլ բացատրվում է այն պարզ պատճառով, որ գահաժառանգության իրավունքը նախ տարածվում էր որդիների եւ ապա միայն, նրանց բացակայության դեպքում, դուստրերի վրա: Լեւոնի որդիներից վեցը (բացի Ներսէսից, որը հոգեւորական էր) եւ դուստրերից մեկը՝ Զապելը, հաջորդ տասնամյակներին ուղղակի կամ անուղղակի դերակատարություն պիտի ունենային Հայոց գահի ճակատագրի տնօրինման գործում:

¹⁸³ Աղբյուրներից մեկը Հեթումի ծնունդը դնում է 1265 թ.: Տե՛ս Հեթում Թագաւոր, Պատմութիւն, էջ 83:

¹⁸⁴ Թվականը վերցրել ենք Հեթում Թագավորի պատմությունից (Անդ, էջ 84): Ռուդ-Կոլենբերգի մոտ նշված է 1277 թ., բայց քանի որ այդ թվականին ծնվել է Կոստանդինը, մենք հավանական ենք համարում Հեթումի տվյալը:

¹⁸⁵ Նույն աղբյուրի տվյալներով՝ Թորոսը ծնվել է 1270 թ. (Անդ, էջ 84): Սմբատ Սպարապետի շարունակողը, ակնհայտորեն սխալվելով, Թորոսի ծնունդը դնում է 1288 թ. (Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 125):

¹⁸⁶ Խնչպես տեսանք, Սմբատի ծնունդը Ռուդ-Կոլենբերգը թվագրում է 1277 թվականով, իսկ Հեթում Թագավորը նշում է 1276 թ. (Անդ, 84):

¹⁸⁷ Ռուդ-Կոլենբերգի մոտ՝ 1278 թ.: Սակայն, նկատի ունենալով, որ այդ թվականին ծնվել են Թեֆանո եւ Ռիտա երկվորյակ քույրերը, մենք ավելի հավանական ենք համարում Կոստանդինի ծննդյան 1277 թվականը, որը տալիս է Հեթում Թագավորը (Անդ, էջ 84):

¹⁸⁸ Ըստ Հեթում Թագավորի պատմության՝ Օշին եւ Ալինախ երկվորյակները ծնվել են 1283 թվականին (Անդ, էջ 85):

**ՀԵԹՈՒՄ Բ ԹԱԳԱՎՈՐ (1289–1306 ԹԹ. ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐՈՎ)
ԵՒ ԵՂԲԱՅՐՔ ՆՈՐԻՆ**

Լեւոն Գ (II)-ի մահից հետո, 1289 թվականին, Հայոց գահը, ավատատիրական օրենքի համաձայն, ժառանգեց նրա ավագագույն որդին՝ Հեթում Բ-ը: Հարցի իրավական կողմին մասնավորապես անդրադարձել է Հեթում Կոռիկոսցին, գրելով հետեւյալը. «(Լեւոնի առաջին որդին), որ կոչվում էր Հեթում, ինչպես իրավունքն ու բանականությունն են պահանջում, հաջորդեց իր հորն ու տիրեց թագավորությանը»¹: Այնուհետեւ պատմիչն ավելացնում է մի ուրիշ կարեւոր մանրամասնություն. «Եւ իր բոլոր մարդիկ երդվեցին ու հնազանդություն հայտնեցին նրան՝ որպես իրենց տիրոջ»²: Կոռիկոսցու աշխատության լատիներեն թարգմանությունն «իր բոլոր մարդիկ» բառերի փոխարեն դնում է՝ «թագավորության բոլոր զորավարներն ու պարոնները»³, ինչն այլ բան չի կարող նշանակել, քան այն, որ Հեթումի գահակալումը վավերացվել է Հայոց Արփունի ատյանի կողմից: Մենք հատուկ կարեւորություն ենք տալիս Կոռիկոսցու հաղորդած այս տեղեկություններին, քանի որ նրա աշխատությունը, Հեթում թագավորի ժամանակաշրջանի իրողությունների ընդգրկմամբ եւ մանավանդ գահաժառանգության իրավունքի նրբությունների իմացությամբ, առանձնանում է հայկական եւ օտար աղբյուրների շարքում, ինչում դեռ բազմիցս հնարավորություն կունենանք համոզվելու հետագա շարադրանքում:

¹ Hayton, Flor, p. 207.

² Անդ:

³ Անդ, էջ 326:

Միջնադարյան աղբյուրներում Հեթումը հաճախ կոչվում է անդրանիկ որդի⁴, որ սխալ է, քանի որ հայտնի է, որ անդրանիկը վաղամեռիկ Կոստանդինն էր: Այդ թյուրիմացությունն, իհարկե, առաջացել է նրանից, որ Հեթումը կրում էր իր պապի անունը, ինչը սովորական էր անդրանիկ որդու պարագայում: Այնուամենայնիվ, սխալն ինքնին հետաքրքիր է այն առումով, որ վկայում է ժամանակի իրավագիտակցության մասին, ըստ որի՝ գահի օրինական ժառանգորդը անդրանիկ որդին պետք է լիներ: Սակայն չենք բացառում, որ տվյալ դեպքում «անդրանիկ» հորջորջումը կարող էր օգտագործված լինել ոչ թե առաջնեկի իմաստով, այլ նշանակել ողջ մնացած եղբայրներից ավագագույնը, ինչի մասնավոր ապացույցն է, թերևս, 1292 թվականին գրված մի հիշատակարանի հետևյալ հատվածը. «Հեթում որդի Լեւոնի արքայի, անդրանիկ ամենայն եղբարցն եւ ժառանգաւոր թագին»⁵: Ըստ երեսույթին, Հեթումն ինքն էլ իր լատինագիր կնիքի վրա այդ իմաստով է իրեն անդրանիկ կոչել՝ «Կնիք եղբայր Յովհաննու⁶ անդրանիկ որդոյ Լեւոն Հայոց թագաւորի»⁷: Գահաժառանգության իրավունքի տեսակետից, սակայն, անդրանիկի եւ ավագագույնի միջեւ որեւէ տարբերություն գոյություն չուներ, ուստի Հեթումի գահակալումը լիովին բխում էր Կիրիկիայում գործող օրենքի տառից:

Հեթումն առանձնահատուկ տեղ է զբաղեցնում հայ թագավորների շարքում, լինելով միակը, որ ո՛չ ամուսնացած էր, ո՛չ էլ թագադրված. «Թագաւորն նոցա Հեթում,— գրում է Ներսես Պալիանենցը,— որ ոչ երբեք լծեալ ընդ կին, այլ թագաւորէր զկնի մահու հօրն իւրոյ Լեւոնի

⁴ Տե՛ս Վահրամ Բաբունի, Ոստանաւոր պատմութիւն, էջ 236; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 153; Սամուէլ Անեցի, Շարունակող, էջ 484; Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 85; Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 105; Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 78; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 538, 572, 617, 701, 718; Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 544; Hayton, Flor, p. 326 (primogenitus). Հովհաննէս Երզնկացին Հեթումին կոչում է «նախածին եւ անդրանիկ գօրաւոր զաւակ». Յովհաննէս Երզնկացի, Ի բանն Առաքելոյ, էջ 88ա:

⁵ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 701:

⁶ Յովհաննէսը Հեթումի կրոնավորական անունն էր:

⁷ Կնիքը պահվում է Սուրբ Դազարի Մխիթարյան թանգարանում:

Բ-ին... ոչ երբեք էսո թագ արժայական»⁸: Հեթում Կոռիկոսցին նորընծա գահակալի այս արտառոց պահվածքը բացատրում է այն հանգաման-
 ֆով, որ նա մտադրվել էր իրեն նվիրել կրոնական կյանքի (son
 entendement estoit d'entrer en religion)⁹: Իսկ հիշատակարաններից մեկը
 Հեթումի շրագադրվելու փաստը պատճառաբանում է նրա ստացած հո-
 գեւոր դաստիարակությամբ. «Արդ այս Հեթում զկնի մահուան հօր
 իւրոյ՝ թագաւորին Լեւոնի յաջորդեաց զաթոռ հայրենի եւ նախնի, այլ ոչ
 պսակեցաւ թագիւ: Սակս որոյ ոչ է պատշան զանց առնել զպատճա-
 ռան, զի ի մանկական տիոց հետէ վարժեալ կրթութեամբ յաստուա-
 ծային օրինացն ընթերցումն... փափագմամբ եւ ըղձաւետ տենչանօֆ
 խոկայր միշտ գտանել զերկնաւորն թագաւորութիւն»¹⁰: Ժամանակա-
 կիցների իրավագիտակցության մասին պատկերացում կազմելու առու-
 մով հետաքրքիր է նաեւ Կոռիկոսցու այն տեղեկությունը, որ Հեթումի
 եղբայրներն ու երկրի իշխանները նրան բազմիցս թախանձել են
 ամուսնանալ՝ ժառանգ թողնելու եւ այդու Հայոց գահի բնականոն հա-
 ջորդությունն ապահովելու նպատակով¹¹: Հեթումի ամուսնացած եւ թա-
 գադրված շլինելու հանգամանքը հաստատում են նաեւ մի քանի այլ
 հայկական եւ օտար աղբյուրներ¹²: Ըստ երեւույթին, Հեթումի թագա-
 դրված շլինելու հանգամանքով է բացատրվում նաեւ այն, որ որոշ հի-
 շատակարաններում նա կոչված է ոչ թե «թագաւոր», այլ «թագա-
 պահ»¹³, «թագակալ»¹⁴ կամ «աթոռապահ»¹⁵, տիտղոսներ, որոնք գոր-
 ծածված չեն ոչ մի այլ թագավորի պարագայում:

⁸ *Ներսէս Պալիանեց, Ժամանակագրական հատվածներ, էջ 182: Անստույգ է Գ. Միքայելյանի այն պնդումը, թե Հեթումն իբր ամուսնացած էր Կիպրոսի թագա-
 վոր Հուզո III-ի դստեր՝ Մարգարիտի հետ. տե՛ս Микаелян, История, с. 416.*

⁹ Hayton, Flor, p. 207.

¹⁰ *Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 788–789:*

¹¹ Hayton, Flor, p. 207.

¹² *Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 153: Դաւիթ Բաղիշեցի, Մաղկաբաղ, էջ 347 (Թեւե
 օծված, բայց չամուսնացած): Gestes des Chiprois, p. 833; Lignages d'Outremer, p. 92.*

¹³ *Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 660:*

¹⁴ *Անդ, էջ 714, 722, 762: Պողարյան, Յուցակ, հտ. 2, էջ 322:*

¹⁵ *Մաթեոսյան, Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ, էջ 336: Իսկ ըստ մի այլ աղբյուրի՝*

Հայտնի չէ, թե Հեթումն իր հոր՝ Լեւոնի օրինակով, մոնղոլներից իշխանության տվչություն (ինվեստիտուրա) ստացել էր, թե ոչ: Առկա աղբյուրների տվյալներով՝ նա առաջին անգամ Իլ-խանների արժունիք է այցելել իր գահակալումից միայն վեց տարի հետո, 1295 թվականին, հարգանքի տուրք մատուցելու եւ հնազանդություն հայտնելու Քայդու խանին, ինչի մասին թուրքիկ կերպով տեղեկացնում է Հեթումն ինքը, իսկ ավելի ընդարձակ՝ Բարհեբրեոսի ժամանակագրության շարունակողը¹⁶: Այդ հապաղումն, ըստ երեւոյթին, ուներ երեք պատճառ. ա. Հեթումը դեռ վերջնականապես չէր որոշել՝ ստանձնելո՞ւ է արդյոք, Հայոց գահը, թե ոչ, բ. Արղուն խանի մահից հետո Իլ-խանական Իրանում տեւական խառնակություններ էին ծագել եւ գ. Արղունին հաջորդած Քեյ-խաթու խանը լավ չէր տրամադրված ֆրիստոնյաների նկատմամբ: Մինչդեռ Քայդուն, ընդհակառակը, հայտնի էր իր ընդգծված ֆրիստոնեասիրությամբ, այն աստիճան, որ որոշ աղբյուրներում նա նույնիսկ ֆրիստոնյա է կոչվում¹⁷: Հեթումի՝ երկու ամիս տեւած այդ ճանապարհորդության մասին Բարհեբրեոսի շարունակողը գրում է. «Երբ Կիլիկիայի բարեպաշտ, արդար ու առաքինի թագավոր Հեթումը լսեց, որ հաղթել է Քայդուն ու հաստատվել մոնղոլների թագավորության գահին, եւ որ նա ֆրիստոնյաների բարեկամն է ու հակված ավելի նրանց, քան այլ դավանությունների կողմը, ցանկացավ անձամբ ծառայություն մատուցել ու դեմ առ դեմ հանդիպել նրան՝ միմյանց միջեւ շատ հարցեր կարգավորելու համար»¹⁸: Բայց մինչ Հեթումը տեղ կհասներ, Քայդուն սպանվում է, եւ նրա փոխարեն գահակալում մահմեդականություն ընդունած Ղազան խանը: Հեթում թագավորն ինքը, իր «Պատմության»

Հեթումն իր հոր մահից հետո ոչ թե թագավոր, այլ «Պարոն Հայոց» էր կարգվել. տե՛ս Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 544:

¹⁶ *Տե՛ս Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 87; Barhebraeus, Chronicon, p. 594–595; Bar Hebraeus, Chronography, p. 505–506. Հմտ. նաեւ՝ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 222; Gestes des Chiprois, p. 833.*

¹⁷ *«Վասն զի քրիստոնէայ էր Պայիտուն», – այդ մասին գրում է հիշատակագիրներից մեկը. Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 773: Տե՛ս նաեւ՝ Marco Polo, The Travels, p. 328; Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 848).*

¹⁸ *Barhebraeus, Chronicon, p. 594; Bar Hebraeus, Chronography, p. 505.*

մեջ, հումորով թե դառնությամբ այդ մասին գրում է. «Գնաց թագաւորն Հեղոմ առ Պայտունն, եւ գտաւ զհազանն, եւ զՊայտունն սպանեալ»¹⁹: Այնժամ Հեթումը, հարկադրված, ընծաներով ներկայանում է Ղազան խանին եւ հնազանդություն հայտնում նրան: Նորընծա խանն սկզբում սառն ընդունելություն է ցույց տալիս Հայոց թագավորին, ասելով՝ «Բայց դու եկել էիր Բայդուի, եւ ոչ թե մեզ մոտ», ինչին Հեթումը դիվանագիտորեն պատասխանում է. «Ես պարտավոր եմ հնազանդություն հայտնել Ձինգիզ խանի բոլոր զարմերին եւ ծառայություն մատուցել զահին բազմած ցանկացած մեկի»: Այս խոսքի վրա, ըստ Բարհեբրեոսի շարունակողի, Ղազանը փափկում է եւ մեծ պատիվների արժանացնում Հեթումին. «Այնժամ արքայից արքան ջերմորեն ողջունեց նրան եւ պանունեց արքայական զգեստներով, ապա կարգադրեց նրա համար հրովարտակ գրել ու կատարել նրա բոլոր խնդրանքները»²⁰: Ինչպես տեսնում ենք, այստեղ նույնպես ուղղակի խոսք չկա ինվեստիտուրայի մասին: Սակայն, թվում է, «արքայական զգեստներով պանունելն» ու հրովարտակ արձակելն այլ բան չեն կարող խորհրդանշել, քան դա:

Գահաժառանգության իրավունքի ուսումնասիրման տեսակետից որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաեւ Հեթում թագավորի բազմակի հրաժարականների խնկված հարցը, որը բացառիկ երեւոյթ է հայ իրականության մեջ: Ինչպես այդ առթիվ գրում է Ա. Գ. Ստյուարտը, «Հեթումի զանազան հրաժարականների եւ գահակալումների նշգրիտ թվագրումը դժվար ու, թերեւս, անհնարին գործ է, որը բարդանում է աղբյուրների հակասականությամբ եւ թվականների շփոթով, ինչպես, օրինակ, հայկականից սովորական թվականության վերածելու դեպքում»²¹: Այդ հարցն, իր հողվածներից մեկում, փորձել է լուծել Կ. Մութաֆյանը²²: Նրա կարծիքով՝ առաջին անգամ Հեթումը գահից հրաժար-

¹⁹ Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 87:

²⁰ Barhebraeus, Chronicon, p. 594–595; Bar Hebraeus, Chronography, p. 506.

²¹ Stewart, Armenian Kingdom, p. 96. «Այս անկայուն ազնվագարմի ժամանակագրութիւնը դեռեւս մշուշապատ է ու հակասական», – նույն առիթով նկատում է Ռուդ-Կոլենբերգը. Rüdft-Collenberg, The Rupenides, p. 71, n. 153.

²² Mutafian, Hét'oum II, p. 263–282. Հեթումի համառոտ մի կենսագրութիւն տես՝ նաեւ՝ Օղլուգյան, Մովսէս Երզնկացի, էջ 202–205:

վել է 1293 թվականին՝ հօգուտ իր եղբայր Թորոսի եւ, վանական դառնալով, ընդունել է Հովհաննես անունը²³: Մեկ տարի անց, սակայն, նա կրկին զբաղեցրել է Հայոց թագավորության գահը: Հեթումի երկրորդ հրաժարականը, այս անգամ արդեն հօգուտ իր մյուս եղբոր՝ Սմբատի, տեղի է ունեցել 1296 թվականին, իսկ վերստին գահակալումը՝ 1299-ին: Ըստ Կ. Մուրաֆյանի՝ Հեթումը վերջին անգամ գահից հրաժարվել է 1306 թվականին, թագադրելով իր սպանված եղբայր Թորոսի որդուն՝ Լեւոնին²⁴: Ստորեւ կտեսնենք, որ Հեթումը Թորոսի օգտին հրաժարվել ու իշխանության է վերադարձել ոչ թե մեկ, այլ երկու, եւ բացառված չէ, նույնիսկ երեք անգամ:

«Թագի եւ վանի»²⁵ միջեւ Հեթումի այս անընդմեջ տատանումները հետազոտողները բացատրում են տարբեր պատճառներով: Ըստ Կ. Մուրաֆյանի՝ Հեթում թագավորն առաջին անգամ գահից հրաժարվել է, հավանաբար, 1293 թվականին մամլյումներին կատարած ծանր տարածֆային զիջումների հետեւանմով ու, թերեւս, իր շրջապատի ճնշման տակ²⁶: Իսկ 1296-ի հրաժարականի պարագայում, նրա կարծիքով, դեր է խաղացել որոշ հայ իշխանների կողմից Հեթումի դեմ կազմակերպված դավադրությունը²⁷, որի պարագլուխը Օշին սենեշալն էր՝ նշանավոր Սմբատ Սպարապետի որդին²⁸: Հեթումի բազմակի հրաժարական-

²³ *Մուրաֆյանի կարծիքով՝ Հեթումն այդպես է կոչվել, հավանաբար, ի պատիվ իր ուսուցչի՝ ֆրանցիսկյան միաբան Հովհաննես դե Մոնտե Կորվինոյի. Mutafian, Le royaume, p. 71; Mutafian, Franciscains, p. 249. Նույն տեղում (էջ 238–240) մանրամասն տե՛ս նաեւ Հովհաննես դե Մոնտե Կորվինոյի գործունեության մասին:*

²⁴ *Տե՛ս Mutafian, Hét'oum II, p. 279. Հմմտ. Stewart, Armenian Kingdom, p. 104, 106.*

²⁵ *Հմմտ. Mutafian, Le royaume, p. 70.*

²⁶ *Տե՛ս Mutafian, Hét'oum II, p. 267. Հմմտ. նաեւ՝ Stewart, Armenian Kingdom, p. 98. Հրաժարականի պատճառներից մեկն էլ, թերեւս, այդ թվականին Հեթումի դեմ ծագած ապստամբությունն էր. «Ձեռք (1293). Դաւ եղեւ Հեղոմյոյ թագաւորն իւր իշխանացն, որք էին գլխաւորք պարոնայք Հեղոմ Կոռիկոսոյ տէրն եւ եղբայր իւր Օշին Կանչոյն տէրն եւ բազումք յիշխանացն Հայոց». Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 86:*

²⁷ *Այդ դավադրության մասին տե՛ս Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 87:*

²⁸ *Տե՛ս Mutafian, Hét'oum II, p. 269. Ըստ Երեւույթին, Օշինը գոռոզամիտ մեկն է եղել. 1289 թվականի ինքնագիր հիշատակարանում նա իրեն կոչում է ոչ այլ կերպ,*

ներն ու վերստին գահակալումները Ա. Դ. Ստյուարտը հակված է բացատրելու ավելի անձնական դրդապատճառներով. «Հնարավոր է, – գրում է նա, – որ թագավորությանը բաժին ընկած աղետներն ու հիասթափություններն են, որ ազդել են վանքի ֆաշվելու նրա մտադրության վրա, բայց հավանական է թվում նաև, որ նա առաջնորդվել է կրոնական դառնալու անկեղծ հավատով՝ խառնված, թերևս, իր գահաժառանգական պարտքը կատարելու մեղքի զգացման հետ, ինչը նշանակում է, որ նա ի վիճակի չէր լիովին ձեռնից բաց թողնելու պետության ղեկը»²⁹: Սակայն, մեր համոզմամբ, Հեթումի տատանումների հիմնական պատճառն, այնուամենայնիվ, պետք է փնտրել նրա անկայուն խառնվածքի եւ թագավորի իր պատասխանատու դերի գիտակցության իսպառ բացակայության մեջ, ինչին մենք դեռ հանգամանորեն կանդրադառնանք սույն ենթագլխի ամփոփիչ մասում: Իսկ այժմ, կարծում ենք, ժամանակն է առանձին-առանձին ներկայացնելու Հեթումի օրոք նրա երեք եղբայրների՝ Թորոսի, Սմբատի, Կոստանդինի եւ եղբորորդիներից մեկի՝ Լեոնի խաղացած դերը Հայոց թագավորության կառավարման գործում:

Թորոս Գ՝ Պարոն Հայոց (1293–1294, 1296 թթ.)

Ինչպես արդեն ակնարկեցինք, հիմքեր կան պնդելու համար, որ Հեթումը Թորոսին իշխանությունը հանձնել ու ետ է վերցրել մի քանի անգամ: Դրա վկաներից մեկը Ներսես Պալիանենցն է, որը մասնավորապես տեղեկացնում է. «Առդ զկնի մոլորութեան նոցա ի Զատկէն, յամին հետագայ»³⁰ թագաւորն նոցա Հեթում ... զտէութիւնն տայր ի յեղբայրն իւր Թորոս, որ էր ծննդեամբ երկրորդ զկնի իւր... եւ ինքն լինէր կարգատուր ի կարգէ սրբոյն Ծրանցիսկոսի, եւ կոչէր եղբայր Զոհաննէս: ...նոյն Զոհաննէս Մնուրն»³¹

քան «սէնէհջալ ամենայն Հայոց». Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 630:

²⁹ Stewart, Armenian Kingdom, p. 94.

³⁰ Քանի որ ծոպատիկը պատահել է 1292 թվականին, ուստի «յամին հետագայ» ասելով, Ներսեսը նկատի ունի 1293 թվականը: 1292 թ. ծոպատիկի մասին մանրամասն տե՛ս Օրմանյան, Ազգապատում, § 1191; Օղլուգյան, Մովսէս Երզնկացի, էջ 202–211:

³¹ Մնուրը լատիներեն minor (կրտսեր) բառի աղավաղված վերարտադրությունն է:

թողոյր զկրօնատրութիւնն, եւ դարձեալ առնոյր զիր թագաւորութիւնն ի նոյն ամին:... Իսկ զկնի այսմ, իբր անցանէր ամ մի, դարձեալ Հեթումն այն տայր զթագաւորութիւնն յիր եղբայրն ի Թօրոսն ասացեալ, եւ ինքն դարձեալ կրօնաւորէր»³²: Ներսէսի հաղորդած տեղեկությունն անուղղակիորեն հաստատվում է 1295 թվականին գրված մի հիշատակարանի վկայությամբ, որի համաձայն՝ մինչեւ այդ թվականը Հեթումը գահից հրաժարվել է «յուով», այսինքն՝ առնվազն մեկից ավելի անգամ³³: 1293 թվականի հրաժարականի մասով Պալիանենցի տեղեկությանը համընկնում է նաեւ իր իսկ՝ Հեթում թագավորի վկայությունը. «Ձեթ (թուականին),- գրում է նա,- Հեղոմ թագաւորն Հայոց ետ զթագաւորութիւնն յեղբայրն իւր Թորոս եւ ինքն կրօնաւորեաց ի Քրիստոս», իսկ մի քանի տող հետո, նույն թվականի տակ, ավելացնում է. «Դարձեալ էառ Հեթում, զիր թագն եւ թագաւորութիւնն Հայոց»³⁴: Ինչ վերաբերում է Թորոսի օգտին տված իր երկրորդ հրաժարականին, հեղինակն, ի տարբերություն Պալիանենցի, այն թվագրում է 1296-ով. «Ձեթ. Հեղոմ թագաւորն ետ զթագաւորութիւնն իւր ցեղբօրն իւրոյ պարոն Թորոսին»³⁵: Հարցի վերաբերյալ միջնադարյան ժամանակագրությունների ու

Ֆրանցիսկյան միաբանության անդամները կոչվում էին Frati minori, այսինքն՝ «կրտսեր (կամ՝ նվաստ) եղբայրներ», անվանում, որը ծագում է միաբանության հիմնադիր սուրբ Ֆրանցիսկոսի «Թող եղբայրները միշտ նվաստ լինեն բոլոր մյուսներից» հրահանգից. հմմտ. Bishop, The Middle Ages, p. 166.

³² *Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 182-183:*

³³ *«Ի թուականութեանս Հայկազեան տաւմարիս Ձեթ (1295), ի հայրապետութեան տեառն Գրիգորի, եւ ի թագաւորութեանս Հայոց Հեթոյ բարեպաշտի, որ ճշմարտիւ թագաւորեաց ի վերայ մարմաջեցուցանալ եւ գունակ-գունակ հեշտակարծ ախտից առաթուր կոխելով, եւ գրեթէ զամենայն աշխարհական փառս նանիր եւ ունայն վարկանելով, որպէս եւ է: Նա եւ զանուն թագաւորութեանն ծանր կրէր, եւ նուիրէր զանձն Աստուծոյ, եւ յուով անգամ հրաժարէր ի հայրենական աթոռոյն՝ գնայր յաղքատանալ, զոր հազիւ հազ մեծաջան տենչի ոչ կարէին յեղաշրջել զկամն նորա».* Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 751:

³⁴ *Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 86-87:*

³⁵ *Անդ, էջ 87: Մի այլ հանելուկ է առաջադրում Հեթում թագավորի 1293 թվականին գրված հետեւյալ հիշատակարանը. «Ի Ձիէ (1288/9), ի փետրվար Զ, փոխեցաւ առ ի Քրիստոս բարեպաշտ թագաւորն Հայոց Աեոն եւ ինձ աւանդեցին ժառան-*

հիշատակարանների ընձեռած տվյալներն ամբողջացնելու նպատակով նշենք նաեւ, որ մյուս հայկական աղբյուրները տեղյակ են Թորոսի օգտին Հեթումի տված միայն մեկ հրաժարականի, որը նրանք միահամուտ կերպով թվագրում են 1294 թվականով³⁶, իսկ ըստ «Գործք Կիպրացոց»-ի՝ դա տեղի է ունեցել Հայոց թագավորի՝ Իլ-խանների արժունի կատարած այցելության նախօրյակին, այսինքն՝ 1295-ին³⁷:

Եթե մեխանիկորեն համադրելու լինենք նշված աղբյուրների, մանավանդ Հեթում թագավորի եւ Ներսես Պալիանենցի ժամանակագրությունների հաղորդած տեղեկությունները, ապա կստացվի, որ Թորոսը Հայոց թագավորությունը կառավարել է մի քանի ամիս 1293 թվականին, մեկ տարի 1293–1294-ին ու եւս մի քանի ամիս 1296-ին: Սակայն քանի որ մեխանիկական համադրումը կարող է հանգեցնել սխալ եզրակացությունների, ուստի չենք կարող խուսափել Ա. Գ. Ստյուարտի հետ համաձայնելու գայթակղությունից, խոստովանելով, որ ժամանակի իրադարձությունների ճշգրիտ թվագրումն, իսկապես, անհնարին, գուցե անհիմաստ պարապմունք է: Դա, իմիջիայլոց, կարելու է չէ գահաժառանգության իրավունքի ուսումնասիրման մեզ հետաքրքրող խնդրի տեսակետից: Էականը Հեթումի կողմից իշխանության փոխանցման եւ վերստանձնման ինքնին փաստն է, որն անժխտելի է: Այս առումով մեզ կարելու է թվում Ներսես Պալիանենցի վերը նշված այն նկատառումը, որ Թորոսը «ծննդեամբ երկրորդ»-ն էր Հեթումից հետո³⁸: Ի դեպ, նույնը

գութին թագաւորութեանս Հայոց: Եւ իմ Հեթմոյս տեսեալ զիմ անարժանութիւն, յառաջ քան զկոչելն զիս, հրաժարեցի եւ զձեւ թագաւորական փոխեցի ընդ ձեւ կրանաւորական, որ եւ զՀեթում անուն Յովանէս վերայփոխեցի» (Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 705): «Յառաջ քան զկոչելն զիս» բառերը ցույց են տալիս, որ Հեթումը կրոնավոր է դարձել դեռեւս իր գահակալութունից առաջ:

³⁶ Տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 163; Սարգիս Պիժակ, Ժամանակագրութիւն, էջ 106; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 742:

³⁷ Տե՛ս Gestes des Chiprois, p. 833. Ա. Գ. Ստյուարտը եւ Կ. Մութաֆյանը նույնպէս հավանական են համարում, որ Հեթումը Թորոսին իր տեղապահ կարգած լիներ մոնղոլների մոտ ուղեւորվելու առիթով. տե՛ս Stewart, Armenian Kingdom, p. 98; Mutafian, Hét'oum II, p. 268.

³⁸ Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 182:

շեշտում են նաև Հեթում Կոռիկոսցին եւ «Գործք Կիպրացոց»-ի հեղինակը³⁹: Դա ցույց է տալիս, որ Հեթումը հարգել է գահաժառանգության իրավունքի գլխավոր սկզբունքը՝ իշխանությունը հանձնելով իր եղբայրներից ավագագույնին⁴⁰: Ընդ որում, Հեթումն իր կայացրած որոշումը նաև վավերացրել է Արփունի ատյանի միջոցով. «Նա հավաքեց իր բոլոր իշխաններին ու կաթողիկոսին եւ նրանց ներկայությամբ հրաժարվեց պարոնությունից, ապա պահանջեց, որ նրանք հավատարմություն հայտնեն ու երդում տան իր եղբայր Թորոսին»,— այդ առթիվ գրում է Հեթում Կոռիկոսցին⁴¹: Ստորեւ կտեսնենք, սակայն, որ իշխանության հանձնումն ամենեւին չէր նշանակում, թե Հեթումը Թորոսին էր փոխանցել նաև Հայոց թագավորության գահը:

Դա ըմբռնելու համար էական է պարզել Թորոսի իշխանակալության բնույթը, այսինքն այն, թե ինչ կարգավիճակով էր նա կառավարում Հայոց թագավորությունը: Թեև ավանդական պատմագիտությունը Թորոսին դասում է Կիլիկիո թագավորների շարքը, սակայն հիմնական պնդելու համար, որ նա երկրի ղեկը վարել է ոչ թե թագավորի, այլ տեղապահի կարգավիճակով: Այս առումով ուշագրավ է Մ. Օրմանյանի հետևյալ դիտարկումը. «Թորոս Հեթում է ետքը երիցագոյն եղբայրն էր, եւ կարգով անոր կ'իյնար յաշորդութիւնը, այսու հանդերձ Թորոս իբրեւ թագաւոր չի ճանչցուեցաւ, այլ իբրեւ տեղակալ կամ խնամակալ ստանձնեց պարոնութիւնը, այսինքն իշխանութիւնը»⁴²: Այս տեսակետը հաստատելու համար Կ. Մուրաֆյանը, Հեթում Բ-ին նվիրված իր հոդվածում, բերում է հետևյալ հիմնավոր փաստարկները՝ ա. Որոշ աղբյուրների տեղեկություններն այն մասին, որ Հեթումը Թորոսին է հանձնել թագավորությունը⁴³, պետք է հասկանալ որպէս իշխանության ժամա-

³⁹ Hayton, Flor, p. 207, 326; Gestes des Chiprois, p. 833.

⁴⁰ Հմմտ. Օրմանյան, Ազգապատում, § 1201:

⁴¹ Hayton, Flor, p. 207. «Բոլոր իշխաններին ու կաթողիկոսին» բառերի փոխարեն Կոռիկոսցու աշխատության լատիներեն թարգմանությունը դրել է «թագավորության բոլոր երեւելիներին ու վասալներին» (omnes proceres et vassallos regni). Անդ, էջ 326:

⁴² Օրմանյան, Ազգապատում, § 1201: Հմմտ. Bedoukian, Coinage, p. 89.

⁴³ Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 86, 87; Ներսէս Պալիանէնց, Ժամանակա-

նակավոր փոխանցում, բ. Այլ աղբյուրներում կամ նույն աղբյուրների ուրիշ ընդօրինակություններում խոսվում է «պարոնության», «տերության» կամ «սենյորության» փոխանցման մասին⁴⁴, Գ. Գոյություն չունի որեւէ փաստ, որը վկայեր Թորոսի թագադրված լինելու մասին, դ. Թորոսի անունով հատված դրամներ հայտնի չեն⁴⁵ եւ վերջապես ե. Թորոսի անունը բացակայում է ներսես Պալիանենցի կազմած Հայոց թագավորների գավազանացանկում⁴⁶: Ավելացնենք, որ Թորոսի անունը բացակայում է եւս երկու նմանատիպ ցանկերում⁴⁷ եւ, որ ավելի ուշագրավ է, XIV դ. մի անանուն գրվածքում նա կոչված է ոչ թե «թագաւոր», այլ «թագաւորահայր». «մեծ եւ ամենագովելի պարոն եւ թագաւորահայրն Հայոց պարոն Թորոս»⁴⁸: Իսկ գահաժառանգության իրավունքի տեսակետից ավելի ծանրակշիռ փաստարկ է այն, որ Թորոսի օժված լինելու պարագայում Հեթումը չէր կարող, առանց բռնություն գործադրելու, նրանից ետ ստանալ թագավորությունը: Այս ամենը նկատի ունենալով՝ պետք է ենթադրել, որ Թորոսն իսկապես Կիլիկիան կառավարել է թագավորից տարբեր իրավական կարգավիճակով եւ, հավանաբար, կրել է «Պարոն Հայոց» տիտղոսը, ինչի մասին հստակորեն վկայում է 1294 թվականին գրված մի հիշատակարանի «ի պարոնութեանն Հայոց Թորոսի» արտա-

գրական հատվածներ, էջ 183; Մամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 163: Մարգիս Պիծակին վերագրվող ժամանակագրությունը պարզապես գրում է. «Հեթումն զպարոն Թորոս նստոյց թագաւոր» (Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 1, էջ 106): Իսկ 1292 թ. մի հիշատակարան թվագրված է հետեւյալ կերպ. «Ի մեծ թվիս Ձեռն, եւ ի թագաւորութեան Լեւոնի որդի Թորոսի (ուղղելի՛ Թորոսի որդի Լեւոնի – Լ.Տ.Պ.), եւ ի կրանաւորութեան Յովհաննիսի». Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 698:

⁴⁴ Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 86. տողատակ; ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 182; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 742; Lignages d'Outremer, p. 92. Իսկ «Գործք Կիպրացւոց»-ը տեղեկացնում է, որ Հեթումը Թորոսին տեղապահ էր կարգել. «laissa... en son leuc». Gestes des Chiprois, p. 833.

⁴⁵ Հմմտ. Bedoukian, Coinage, p. 13, 90.

⁴⁶ Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 205:

⁴⁷ Տե՛ս Մճբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 136; Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 257:

⁴⁸ Անանուն, Յիշատակք հանգուցելոց, էջ 544:

հայտությունը⁴⁹: Ինչպես տեսանք սույն աշխատության Կոստանդին Պայլին նվիրված բաժնում, այդ տիտղոսն, ըստ երեւոյթին, եղել է «աւագ պարոնի» համարժեքը եւ նշանակել «պայլ» կամ «խնամակալ»⁵⁰:

Սմբատ թագավոր (1296–1298 թթ.)

1296 թվականին, վերադառնալով Ղազան խանի արժունիք կատարած այցելությունից, Հեթումը հայտնվեց Կիլիկիայում իր դեմ նյութված դավադրության անակնկալի առջեւ: Թորոսը, որին Հեթումն իր ուղեւորությունից առաջ կրկին տեղապահ էր նշանակել, ըստ երեւոյթին, օգտվելով իր եղբոր բացակայությունից, որոշ իշխանների գործակցությամբ փորձ էր արել զավթել թագավորությունը: Դրա վկան «Գործք Կիպրացոց» ժամանակագրության անանուն հեղինակն է. «Հեթումը ... կշտամբեց իր եղբորը, որ նա ուզեցել էր իրենից խլել թագավորությունը, այդ հարցում մեղադրելով նաեւ իր երկրի որոշ պարոնների»⁵¹: Ըստ երեւոյթին, նույն միջադեպը նկատի ունի նաեւ Հեթում թագավորն ինքը, գրելով հետեւյալը. «Ի նոյն ամի (= 1296 թ.) դաւ եղել իշխանացն Հայոց, որք էին գլխատորք Օշինն սինջալն, որդի պարոն Սմպաթայ Գունտոստապլին եւ պարոն Օշինն Բակուրեանց, որ էր ասպասալար դարպասին եւ այլ բա-

⁴⁹ Մաթեւոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 742: Մի այլ հիշատակարանում Թորոսը թյուրիմացաբար կոչված է սեբաստոս. «Արդ... գրեցաւ եւ եհաս զրաւ Ս. Աւետարանս սրբատառ ի թուարբերութեանս ԶԾԶ (1307), յամսեանն Հոկտեմբերի, ի հայրապետութեան տեառն Կոստանդինեայ, ի թագաւորութեան Կիլիկիայ Լեւոնի, որ էր սեբաստոս իշխանին Թորոսի որդի՝ որդւոյ թագաւորին Լեոյի, որ նահատակեալ է». Ռսկյան, Կիլիկիայի վանքերը, էջ 252: Ակնհայտ է, որ հիշատակագիրն, անունների նույնության պատճառով, նրան է վերագրել Թորոս Ա-ի կամ Թորոս Բ-ի տիտղոսը:

⁵⁰ Ի դեպ, թերեւս, նկատի ունենալով Հեթում Բ-ի թագադրված չլինելու հանգամանքը, միջնադարյան հեղինակները նրան նույնպես երբեմն կոչում են «Պարոն Հայոց» տիտղոսով. տե՛ս Մաթեւոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 755; Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 78, 80: Իսկ երկու հիշատակարանում Հեթումն օժտված է նույնիսկ «պարոն ամենայն Հայոց» տիտղոսով. տե՛ս Մաթեւոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 719, 723:

⁵¹ Gestes des Chiprois, p. 833.

զում իշխանն է և ձիաւոր»⁵²: Իրադարձություններին անդրադարձած աղբյուրների մեծամասնության վկայությամբ՝ դրանից հետո Հեթումը երկրի կառավարման ղեկը հանձնում է ավագության կարգով իր հաջորդ եղբորը՝ Սմբատին, իսկ ինքը, վերցնելով Թորոսին, մեկնում Կոստանդնուպոլիս⁵³: Սակայն Հեթում Կոռիկոսցու «Մաղկաֆաղը»⁵⁴, Հեթում թագավորի պատմությունը և Ներսես Պալիանենցի ժամանակագրությունը տեղեկացնում են, որ Հեթումը և Թորոսը իշխանությունը Սմբատին հանձնել են միասնաբար. «Հեղում թագաւորն Հայոց եւ իւր եղբայրն պարոն Թորոսն ետուն զպարոնութիւն ի պարոն Սմպաթն եւ ինքեանք գնացին ի Կոստանդնուպոլիս»⁵⁵ և «Հեթում կրօնաւորն եւ Թորոսն տային զթագաւորութիւնն յեղբայրն իւրեանց Սմպատն եւ ինքեանք գնացին ի Կոստանդնուպոլիս»⁵⁶: Դա նշանակում է, որ նախ՝ 1296 թվականին «Հայոց պարոնն» իսկապես Թորոսն էր, և երկրորդ, որ իշխանության փոխանցման ակտում Հեթումը հանդես է եկել օրինական գահակալի, իսկ Թորոսը՝ երկրի գործող կառավարչի հանգամանքով: Մյուս աղբյուրները, ծանոթ չլինելով իրավական այս նրբություններին, ինչպես տեսանք, իշխանության փոխանցման գործողությունը վերագրում են միայն Հեթում թագավորին: Հարկ է ավելացնել, որ Հեթում Կոռիկոսցու վկայությամբ՝ Հեթումը և Թորոսը իշխանությունը Սմբատին էին հանձնել որոշ պայմաններով, բայց թե ինչ էին իրենցից ներկայացնում այդ պայմանները, պատմիչը չի նշտում⁵⁷:

Ինչ վերաբերում է Հեթումի և Թորոսի Կոստանդնուպոլիս ուղևորվելու պարագային, ապա աղբյուրներից մեկը դա բացատրում է իրենց

⁵² Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 87:

⁵³ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154, 163; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 126; Սարգիս Պիծակ, Ժամանակագրութիւն, էջ 106; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 789; Gestes des Chiprois, p. 833. «Անդրծովյան արքայատոհմերի» ցանկում բացակայում է Հեթումի և Թորոսի Կոստանդնուպոլիս մեկնելու մասին տեղեկությունը. տե՛ս Lignages d'Outremer, p. 92.

⁵⁴ Hayton, Flor, p. 208, 328.

⁵⁵ Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 87:

⁵⁶ Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 183:

⁵⁷ Hayton, Flor, p. 208–209, 328.

փրոջը՝ Բյուզանդական կայսրուհի Ռիտա-Մարիային⁵⁸ տեսակցելու⁵⁹, իսկ մի ուրիշն՝ այդ ֆաղափի նշխարներին ու սրբապատկերներին երկրպագելու⁶⁰ ցանկությամբ: Արդի հետազոտողներից Գ. Միֆայեյանը, Կ. Մուքաֆյանը եւ Ա.Դ. Ստյուարտը համապատասխանաբար ենթադրում են, որ նրանց Կոստանդնուպոլիս այցելելու նպատակն էր՝ աջակցություն ստանալ մամյուլների հնարավոր հարձակումները դիմակայելու գործում⁶¹, ֆննարկել հայ-հունական եկեղեցական միության խնդիրը⁶² կամ մասնակցել Ռիտայի եւ Միֆայել կայսեր ամուսնության արարողությանը⁶³: Մեզ ավելի հավանական է թվում, սակայն, որ Հեթումի եւ Թորոսի այդ ֆայլն ուղղակի ժամանակավոր փախուստ էր երկրում իրենց դեմ առաջացած համընդհանուր դժգոհությունից, ինչը հաստատում են իրադարձությունների հետագա զարգացումները:

Օգտվելով եղբայրների բացակայության հանգամանքից, Սմբատը, որն ընդամենը «թագապահ» էր կարգված⁶⁴, գործակից ունենալով Գրիգոր է Անավարզեցի կաթողիկոսին ու բազմաթիվ իշխանների, իրեն թագավոր է հռչակում եւ օծվում Կիլիկիայի մայրաքաղաք Սսում. «Իսկ Սմբատն ինքնաձեռն էլեալ, եւ խորհրդով կաթողիկոսին եւ իշխանացն, օծանի թագաւոր Հայոց ի Սիս»⁶⁵: Թագադրության արարողությունը ոգևորությամբ նկարագրում է 1296 թվականին ընդօրինակված մի ձեռագրի Վասիլ անունով գրիչը. «Իսկ զկնի ոչ սակաւ ատուրց ժողովեցան թագաւորորդիքն եւ թագաւորազունքն եւ իշխանքն եւ միանգամայն աշ-

⁵⁸ Ռիտան այդ տարվա սկզբին ամուսնացել էր Բյուզանդական կայսր Անդրոնիկոս II Պալեոլոգոսի (1282–1328 թթ.) որդու եւ զահակցի՝ Միքայել IX-ի (1295–1320 թթ.) հետ, վերակոչվելով Մարիա կամ Քսենիա անունով. տե՛ս Rüdtt-Collenberg, The Rupenides, III (H2).

⁵⁹ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 126:

⁶⁰ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 789:

⁶¹ Микаелян, История, с. 428.

⁶² Mutafian, Le royaume, p. 71. Հմմտ. Օրմանյան, Ազգապատում, § 1208:

⁶³ Stewart, Armenian Kingdom, p. 99–100. Հմմտ. նաեւ՝ Bedoukian, Coinage, p. 13.

⁶⁴ Մանավորապես այդպես է նրան կոչում ուշ շրջանի մի ժամանակագիր. «Սմայաթ թագապահն Հեթմոյ». Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 221:

⁶⁵ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154:

խարհաժողով բազմութիւն ռամկաց եւ խառնինադանն մարդկան ի հոյակապ մայրաքաղաքն Սիս, ի տօնի մեծի սրբոյ Աստուածայայտնութեանն: Իսկ սրբագործ կաթողիկոսն Հայոց տէր Գրիգոր՝ ամենայն եպիսկոպոսօք եւ համագումար ժողովով եւ բոլոր ուխտիւ եկեղեցոյն, եւ աջով սրբոյ Լուսաւորչին մերոյ Գրիգորի, եւ աստուածային անտարանան, ձեռս ի վերայ եղեալ ասանդեաց նմա զաշտինան եւ զօծումն թագաւորութեան. եւ համաշխարհական ժողովն պատշաճաւոր խրախութեամբ բարգաւանեալք ըստ իւրաքանչիւր աշտինանի»⁶⁶: Այնուհետեւ, իր գահակալումը «լեզբիտիմացնելու» նպատակով, Սմբատը բազում գանձերով գնում է Ղազան խանի մոտ եւ տվչություն ստանում նրանից, ինչի խորհրդանիշն այս անգամ Հայոց թագավորին մոնղոլ կին տալու իրողությունն էր. «Իսկ Սմբատն յառաջագոյն էր գնացեալ ի Քաթարն բազում գանձիւք, եւ առեալ էր ի Ղանէն իւր կին, որ էր ի Ղանի ազգէն»⁶⁷:

Այս ամենով հանդերձ, ակնհայտ է, որ Սմբատի գահակալումն իրականում իշխանության բռնազավթում էր՝ ի խախտումն Կիլիկիո Հայոց պետության գահաժառանգության իրավունքի բոլոր սկզբունքներէ: Դա, ի դէպ, չի վրիպել միջնադարյան ժամանակագիրներէ աշխից, որոնցից մեկն ուղղակի գրում է՝ «Սմբատն բռնութեամբ տիրեաց»⁶⁸, իսկ մի ուրիշը՝ «Սմբատ... գողացաւ զթագաւորութիւն եղբօրն»⁶⁹: Կա նաեւ բոլորովին հակառակը պնդող մի աղբյուր, որի համաձայն՝ Հեթումն ինքն է Հայոց իշխաններին (իմա՝ Աբուունի ատյանին) խնդրել, որ թագավոր կարգեն Սմբատին. «Բայց ի դէպ է ոչ անտես առնել, զի վերն քան զբնութիւն գործն նորին թագաւորին Հեթմոյ, զի նա ինքն... կոչեաց զեղբարսն իւր հարազատ, եւ զայլ ամենայն իշխանսն, վարդապետելով նոցա եւ

⁶⁶ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 789:

⁶⁷ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154: *Տե՛ս նաեւ՝ Gestes des Chiprois*, p. 833; Hayton, Flor, p. 209, 328. Հմմտ. Պալասանյան, Պատմութիւն, էջ 370:

⁶⁸ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 163:

⁶⁹ Անանուն, Կարգ թագաւորաց, էջ 257: *Տե՛ս նաեւ՝ Յակոբ Սեցի, Պատմութիւն, էջ 221 (բռնութեամբ տիրել կամեցաւ); Մինաս Ամդեցի, Ազգաբանութիւն, էջ 48 (խեռի ընկալաւ զթագն); Պողարյան, Ժամանակագրութիւն, էջ 262 (Սմպատ ամս Բ. թագաւորէ Սսայ՝ ոչ հաւանութեամբ Կիլիկեցոցն, այլ բռնութեամբ); Hayton, Flor, p. 328 (regnum occupaverat = գրավեց թագավորութիւնը):*

հաւանեցուցանելով զամենեսեան ի թագաւորեցուցանել զմի յերբարցն իւրոց զվայելչագեղն եւ զիմաստունն Սմբատ, որ ունէր զերրորդ դաս ըստ կարգի եղբարցն, եւ ինքն առեալ զոյգ ուղեկից զմիւս եղբայրն իւր զպարոն Թորոս, եւ մտեալ ի նաւ, շուեաց դէպ ուղիղ ի թագաւորական ֆաղաֆն»⁷⁰: Սակայն, նկատի ունենալով, որ այս տողերը գրված են Սմբատ թագավորի մի բացահայտ կողմնակցի ու ջատագովի՝ վերոհիշյալ Վասիլ գրչի ձեռնով, դրանք պետք է զանց առնել, մանավանդ որ Հեթումի հետագա գործողությունները լիովին հակասում են տվյալ վկայության բովանդակությանը:

«Գործք Կիպրացոց»-ի տվյալներով՝ երբ Հեթումը Կոստանդնուպոլսում լսում է Սմբատի թագադրության լուրը, երկու նավ է զինում եւ Թորոսի հետ նավարկում դեպի Կիլիկիայի ափերը⁷¹: Սակայն նրանց արգելում են ցամաքահանում կատարել, եւ նավերը շրջվում են Կիպրոսի կողմը, իսկ այնտեղից վերադառնում Կոստանդնուպոլիս⁷²: Անդրոնիկոս Պալեոլոգոս կայսրից մեծ գումար ստանալով⁷³, եղբայրներն այնուհետեւ ցամաքային նանապարհով ուղեւորվում են Պարսկաստան՝ օգնություն խնդրելու Ղազան խանից⁷⁴: Սակայն Կեսարիայի մոտեւում⁷⁵ Սմբատը դարանակալում է նրանց եւ, ձերբակալելով երկուսին էլ, Հեթումին բանտարկում է Մոլեւոնի, իսկ Թորոսին՝ Բարձրբերդի զնդանում⁷⁶: Մի ֆանի օր անց Սմբատը զահիճների ձեռնով խեղդամահ է անել տալիս Թորոսին, իսկ Հեթումին՝ կուտացնում⁷⁷, թեւ, ինչպես հե-

⁷⁰ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 789:

⁷¹ Gestes des Chiprois, p. 833.

⁷² Անդ: Հմմտ. նաեւ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154:

⁷³ Տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154: Այդ գումարն, ամենայն հավանականութեամբ, նախատեսված էր Ղազան խանին կաշառելու համար:

⁷⁴ «Կամէին Թաթարով ձգել զՍումպատն», - այդ առթիվ գրում է Ներսէս Պալիանեցը. տե՛ս Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 183:

⁷⁵ Տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154:

⁷⁶ Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 126-127; Սարգիս Պիճակ, Ժամանակագրութիւն, էջ 106; Պողարյան, Յուցակ, հտ. 4, էջ 536:

⁷⁷ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 126-127; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154, 164; Պողարյան, Յուցակ, հտ. 4, էջ 536; Ներսէս Պալիանեց, Ժամանակագրա-

տագայում պիտի պարզվեր, ոչ լիովին: Աղբյուրներից երեքի տվյալներով՝ նա այդ ֆայլին դիմել էր «խորհրդով նենգատու իշխանացն» կամ «որդութեամբ շար իշխանաց»⁷⁸: Սակայն անկախ իշխանների դրդումից, Սմբատն այլընտրանք չուներ, որովհետեւ գահաժառանգության իրավունքի տեսակետից՝ ֆանի դեռ ողջ էին նրա ավագ եղբայրները, նա չէր կարող օրինական թագավոր համարվել, եւ նրա գլխին մշտապես կախված պիտի լիներ գահագուրկ արվելու վտանգը: Ինչ վերաբերում է Թորոսի սպանության թվագրմանը, ապա այդ դեպքն, ամենայն հավանականությամբ, տեղի է ունեցել 1297 թվականին⁷⁹:

Բռնագավթի լինելով հանդերձ, Սմբատը թագավորի լիարժեք իրավագործությամբ գահակալեց երկու տարի, ինչը նշանակում է, որ նա, այնուամենայնիվ, որոշ հենարան ուներ Կիլիկիո հասարակության բարձր խավի եւ զինվորականության միջավայրում: Նա իր անունով արժաթե եւ պղնձե դրամ հատեց⁸⁰, ինչպես նաեւ արժանացավ հայկական ձեռագրերի թվագրման բանաձեւում հիշատակվելու պատվին⁸¹: Սակայն կարելու է նշել, որ հիշատակագիրները, արձանագրելով հանդերձ Սմբատի գահակալության ժամանակը, միահամուտ կերպով զրանում են նրան հատկացնել Հայոց մյուս թագավորների հասցեին շոայլվող «բարեպաշտ», «ֆրիստոսապսակ», «ֆրիստոսասէր», «աստուածապսակ» կամ նմանատիպ այլ պատվանուններից թեկուզ մեկը: Եւ ընդհանրապես, Սմբատին անդրադարձած միջնադարյան հեղինակների

կան հատվածներ, էջ 183; Գաւթ Բաղիշեցի, Մաղկաքաղ, էջ 348; Աբու-Ֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 241); Hayton, Flor, p. 209; Gestes des Chiprois, p. 833. Երկու աղբյուր, արձանագրելով Թորոսի սպանությունը, լուրջան են մատնում Հեթումի կուրացման փաստը. Սարգիս Պիծակ, Ժամանակագրություն, էջ 106; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 808:

⁷⁸ Մամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154; Ներսէս Պալիանեցի, Ժամանակագրական հատվածներ, էջ 183; Hayton, Flor, p. 209 (par mavois conseil).

⁷⁹ Սարգիս Պիծակ, Ժամանակագրություն, էջ 106; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 808; Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 170, ծանոթ. 193:

⁸⁰ Պ. Պտուկյանի գրքում նկարագրված է Սմբատի անունով հատված 70 դրամ. Bedoukian, Coinage, p. 325-334.

⁸¹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 801, 803, 804, 805, 811, 814, 817, 832:

թվում միայն Վասիլ գրիչն ու Ֆարան անունով ասորի բժիշկն են, որ դրվատանում են խոսում նրա մասին՝ առաջինն օգտագործելով «վայելչագեղն եւ իմաստունն Սմբատ» բառերը⁸², իսկ երկրորդը՝ «Բրիստոսայտ, իմաստուն, մտախոհ, հանճարաշատ, բարեպաշտ» եւ նույնիսկ «սուրբ արքայ» պատվանունները⁸³: Վասիլն, ինչպես արդեն նշեցինք, Սմբատի ջերմ շատագովն էր, ուստի նրա վերաբերմունքը չի կարելի անկողմնակալ համարել: Ինչ վերաբերում է Ֆարանին, ապա տվյալ պարագայում նա նույնպես շահագրգռված անձ էր, քանի որ «Բժշկարան ձիոյ» աշխատությունը⁸⁴, որից եւ ֆաղված են վերոհիշյալ պատվանունները, նա արաբերենից հայերեն էր թարգմանել Սմբատ թագավորի պատվերով: Ժամանակակիցների ընդգծված սառը վերաբերմունքը Սմբատի նկատմամբ, մեր կարծիքով, պետք է բացատրել մի կողմից՝ նրա «լեզվիտիմության» պակասով, մյուս կողմից՝ ավագ եղբայրների հանդեպ գործած վայրագությամբ: Սրանք մեղքեր էին, որոնք չէին կարող ներվել թե՛ Կիլիկիո հասարակության իրավագիտակցության, եւ թե՛ նրա բարոյականության տեսակետից, ինչպես չներվեցին Հայոց գահի նախորդ երկու բռնագավթիչների՝ Մլեհի եւ Ռայմոնդ-Ռուբենի պարագայում: Սմբատի այդ մեղքերին շուտով պիտի գումարվեր եւս մեկը. 1298 թվականին նա չկարողացավ երկիրը պաշտպանել մամլյուխների մի նոր ասպատակությունից, որի հետեւանում վայոց թագավորությունը վերստին կրեց մարդկային, նյութական ու տարածֆային ծանր կորուստներ, ինչը վերջնականապես լցրեց Կիլիկիո ավագանու համբերության բաժակը:

Կոստանդին Բ (I) թագավոր (1298–1299 թթ.)

Այս իրադրության մեջ ասպարեզ իջավ Հեթումի հաջորդ եղբայրը՝ Կոստանդինը, որը գլխավորելով Սմբատի դեմ ծագած ապստամբությունը, արյունահեղ ճակատամարտից հետո գահընկեց արեց նրան.

⁸² Անդ. էջ 789:

⁸³ Անդ. էջ 806–807: Նույնը՝ Ֆարան Ասորի, Բժշկարան ձիոյ, էջ 163:

⁸⁴ Տե՛ս Ֆարան Ասորի, Բժշկարան ձիոյ, Երևան, 1980:

«Իբր այս լինէր, շորորդ եղբայրն Կոստանդինն յարեալ ի վերայ եւ եկեալ ի Սիսոյ ֆաղաֆն գօրօֆ, մերձ ֆաղաֆին կոուեցան հայերն ընդ իրարս ի մարգն Սիսոյ, ուր բազումք եղբարք զեղբարք սպանին եւ ազգականք զմիմեանս, վասն աննանաչողութեանն, զի առաւօտ էր»⁸⁵: Աբուլֆիղան, որը թերեւս իրադարձությունների ամենաարժանահավատ ժամանակակիցն է, այդ գործի նախաձեռնությունն ամբողջությամբ վերագրում է Հայոց իշխաններին. «Հայերը համաձայնություն կայացրին իրենց մեջ՝ (Սմբատի) փոխարեն գահի վրա դնելու նրա Լեւոն եղբոր որդի Դանդինին⁸⁶ եւ ձերբակալել Սմբատին: Հայերը խմբվեցին Դանդինի շուրջը, իսկ Սմբատը տեսնելով այդ բանը, փախուստ տվեց Կոստանդնուպոլսի կողմերը»⁸⁷: Արաբ ժամանակագիրը նշում է նաեւ ապստամբության պատճառը. «Այնպես պատահեց,– գրում է նա,– որ մահմեդական զորքը մտավ Սսի երկիրը եւ պաշարեց Համուսը Սմբատի իշխանության ժամանակ: Հայերը նեղվեցին այս բանից, մանավանդ որ մուսուլմանները գրավումներ էին կատարել եւ շատ հայերի սպանել, ինչ որ վերագրվեց Սմբատի հոռի ընթացքին ու մուսուլմանների հանդեպ հայտնաբերած անկարողությանը»⁸⁸: Այլ աղբյուրներ Կոստանդնի ընդվզման պատճառ են համարում Հեթումի եւ Թորոսի հանդեպ Սմբատի գործած վայրագությունը⁸⁹: Իսկ Անանուն Սեբաստացին այդ առթիվ անորոշ ձեւով գրում է. «Տնդինն, կրսեր եղբայրն Հեթումոյ, ոչ համբերեաց շարեացն, զոր գործէր Սմպատ»⁹⁰, որի տակ կարելի է հասկանալ թե՛ այդ եղեռնագործությունը, թե՛ այլ շարիֆներ:

⁸⁵ *Ներսէս Պալիանէնց, Ժամանակագրական հատվածներ, էջ 183:*

⁸⁶ *Կոստանդնին կրճատված ձեւով Տնդին է կոչում նաեւ հայկական աղբյուրներից մեկը. տե՛ս Անանուն Սեբաստացի, Ժամանակագրութիւն, էջ 150–151: Իսկ Հակոբ Սսեցին Կոստանդնին ճանաչում է Թուրքն անունով. Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 222:*

⁸⁷ *Աբուլ-Ֆիղա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 242):*

⁸⁸ *Անդ, էջ 241–242:*

⁸⁹ *Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154; Gestes des Chiprois, p. 833; Hayton, Flor, p. 209, 328.*

⁹⁰ *Անանուն Սեբաստացի, Ժամանակագրութիւն, էջ 150:*

Սմբատը փախավ Ռումի սուլթանության կողմերը⁹¹ և ապաստան գտավ մոնղոլ զորահրամանատար Քայանջարի մոտ⁹²: Վերջինս, սակայն, շրթայեց նրան ու հանձնեց Հեթումին, որը «ոչ հատույց նմա շար փոխանակ չարի»⁹³: Մի այլ վարկածով՝ Սմբատն ընկավ Կոստանդնի ձեռքը և բանտարկվեց⁹⁴ վերջինիս սեփականությունը հանդիսացող Կապան բերդում⁹⁵: Կոստանդինը նաև բանտից ազատեց Հեթումին⁹⁶ ու բուժել տվեց նրա աչքերից մեկը⁹⁷: Դրանից հետո Հեթումը նրան հանձնեց երկրի կառավարման դեկը, ինչի մասին հստակորեն տեղեկացնում է «Անդրծովյան արքայատոհմերի» ազգաբանությունը. «Ապա Հեթումը... սենյորությունը տվեց իր եղբայր Կոստանդնին» (Puis Heiton ... dona la seigneurie a Constans son frere)⁹⁸: Մյուս աղբյուրներն այլևայլ կերպ են ներկայացնում իշխանության փոխանցումը Կոստանդնին: «Պարոն Կոստանդին... եհան զաւագ եղբայրն իւր Հեթում, և հրամանաւ նորա ինքն թագաւորեաց», - գրում է Սմբատ Սպարապետի «Տարեգրքի» շարունակողը⁹⁹: Մոտավորապես նույնն է հաստատում Անանուն Սեբաստացին. «Եւ թագաւորեցոյց Հեթում զՏնդին եղբայր իւր»¹⁰⁰: Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողի և Ներսես Պալիանենցի տեղեկություններով՝ Կոստանդինը իշխանությունն ստանձնել է ինքնագլուխ կերպով. «ինքն էառ զիշխա-

⁹¹ Անդ: Տե՛ս նաև ՝ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154: Ըստ Արուլֆիդայի՝ «Կոստանդնուպոլսի կողմերը»: տե՛ս Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 242, ինչպես նաև ՝ Hayton, Flor, p. 209.

⁹² Անանուն Սեբաստացի, Ժամանակագրութիւն, էջ 150:

⁹³ Անդ:

⁹⁴ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154, 165; Gestes des Chiprois, p. 833.

⁹⁵ Պողարյան, Յուցակ, հտ. 4, էջ 536:

⁹⁶ Սմբատ, Տարեգրք, Փարիզ, էջ 127; Պողարյան, Յուցակ, հտ. 4, էջ 536; Gestes des Chiprois, p. 833; Hayton, Flor, p. 209.

⁹⁷ Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 183; Hayton, Flor, p. 209, 329.

⁹⁸ Lignages d'Outremer, p. 93.

⁹⁹ Սմբատ, Տարեգրք, Փարիզ, էջ 127:

¹⁰⁰ Անանուն Սեբաստացի, Ժամանակագրութիւն, էջ 150:

նութին»¹⁰¹ կամ «անեալ զպարոնութին Հայոց... ինքն թագաւորեաց ամիսս Թ»¹⁰²: Աբուլֆիդան, նախ պարզապէս արձանագրելով, որ Սմբատի փախուստից հետո «գահը մնաց Դանդինին, որը կոչվում էր նաեւ Կոստանդին», այնուհետեւ ավելացնում է. «Երբ Հայոց երկրում Դանդինը գահակալեց, նա ազատ արձակեց իր եղբայր Հեթումին եւ գահը վերադարձրեց նրան»¹⁰³: Բոլոր նշվածներից տարբերվում է 1307 թվականին գրված մի հիշատակարանի վկայությունը, որի համաձայն՝ Կոստանդինը, բանտից ազատելով Հեթումին, խնդրում է, որ նա վերադառնա իշխանության, բայց մերժում ստանալով, հարկադրված, ինքն է ստանձնում երկրի կառավարումը. «Եւ հանեալ զաւագ եղբայրն ի բանտէն կապանացն, եւ աղաչեաց առնուլ զպարոնութին իւր, եւ նա ոչ առ յանձն. եւ կացեալ Կոստանդին ի պարոնութեան ամիսս Ժ»¹⁰⁴: Մոտավորապէս նույնը կրկնում է նաեւ Հեթում Կոռիկոսցին, բայց ավելացնելով շափազանց կարեւոր մի մանրամասնություն¹⁰⁵, որը, սակայն, ավելի շատ վերաբերելով Լեւոն Դ (III)-ին, բնության առաւելա է դառնալու հաջորդ ենթազլխում:

Այս խայտաբղետ տեղեկություններից արվելիք միակ եզրակացությունը կարող է լինել այն, որ Հեթումն, իր սովորության համաձայն, այս անգամ էլ չի հրաժարվել թագից եւ Կոստանդինին է փոխանցել միայն երկրի ժամանակավոր կառավարման լիազորությունը: Մրա մասին միանշանակ կերպով վկայում են Սամուել Անեցու շարունակողի կողմից Կոստանդինին հատկացված «պարոն Կիլիկիոյ» եւ «Պարոն Հայոց» տիտղոսները¹⁰⁶, ինչպէս նաեւ Ներսես Պալիանենցի, 1307 թ. հիշատակագրի եւ «Անդրծովյան արեայատոհմերի» ազգաբանության՝ Կոստանդինի իշխանակալության բովանդակությունը բնորոշող «պարոնու-

¹⁰¹ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 165:

¹⁰² Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 183:

¹⁰³ Աբուլ-Ֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արարական աղբյուրները, էջ 242, 244):

¹⁰⁴ Պողարյան, Ցուցակ, հտ. 4, էջ 536:

¹⁰⁵ Hayton, Flor, p. 209–210, 329.

¹⁰⁶ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154, 155:

թին», «պարոնութիւն Հայոց» եւ «seignorie» բառերը¹⁰⁷: Սակայն Կոստանդինը, հավակնոտությամբ ամենեւին չզիջելով իր եղբայր Սմբատին, չբավարարվեց իրեն շնորհված այդ բարձր պատվով եւ նրա օրինակով բռնազավթեց իշխանությունն ու իրեն թագավոր հռչակեց, ինչն ընդգծելու համար նույնիսկ սկսեց իր անունով դրամ հատել¹⁰⁸: Դրանով հանդերձ՝ նա, ըստ երեսույթին, ժամանակ չունեցավ ո՛չ թագադրվելու, ո՛չ էլ տվչություն ստանալու մոնղոլներից, որի վկայությունն է աղբյուրների լիակատար լուծությունն այդ մասին: Հէթում Կոռիկոսցի պատմիչը վկայում է, որ Կոստանդինը լավ էր կառավարում թագավորությունը, ամրացնելով նրա տարածքներն ու բերդերը, բացի այդ՝ հատուկ խնամք տանելով իր եղբոր՝ Հէթում թագավորի նկատմամբ¹⁰⁹: Նրան էր վիճակված նաեւ Սմբատի օրոք ծագած հայ-մամլյուխյան պատերազմից հետո հաշտության բանակցություններ վարելու դժվարին գործը՝ հաշտություն, որի պայմաններով Կիլիկիան կորցրեց «բոլոր այն ֆաղաֆները, որոնք գտնվում էին Ջայհան գետից դեպի հարավ՝ Համուսը, Թիլ Համդունը, Կվայրանը, Նողայրը, Հաջատ Շաղլանը, Սարվանդիֆարը, Մարաշը»¹¹⁰: Տարածֆային այդ կորուստներն այնքան զգալի էին, որ Սամուել Անեցու շարունակողը, մի փոքր չափազանցելով, այդ առթիվ գրում է. «Մտքին էառ... զկէս երկրին Կիլիկիոյ»¹¹¹:

Ձիանդուրծելով իշխանության բռնազավթումը, Հէթումը, ապաֆիւվելուց եւ տեսողությունը վերականգնելուց հետո, որոշ ուժերի աջակցությամբ գահընկեց արեց Կոստանդինին: Վերջինիս կողմնակիցները

¹⁰⁷ Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 183; Պողարյան, Ցուցակ, հտ. 4, էջ 536; Lignages d'Outremer, p. 93. Սամուել Անեցու շարունակողը «պարոնութեան» փոխարեն օգտագործում է «իշխանութիւն» բառը. Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 165: Հմմտ. Mutafian, Hét'oum II, p. 271.

¹⁰⁸ Պտուկյանի գրքում նկարագրված է Կոստանդինի անունով հատված 13 դրամ. տե՛ս Bedoukian, Coinage, p. 63, 334–336. Ուշագրավ է, որ Կոստանդինը հատել է ոչ միայն արծաթե ու պղնձե, այլև ոսկե դրամներ. Անդ, էջ 63, 71:

¹⁰⁹ Hayton, Flor, p. 210, 329.

¹¹⁰ Աբուլ-Ֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 242):

¹¹¹ Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 164:

փորձեցին դիմադրություն ցույց տալ, բայց ապարդյուն. Հեթումը ջախ-ջախեց նրանց, կոտորելով բազմաթիվ իշխանների¹¹²: Այնուհետև նա ձերբակալեց Սմբատին ու Կոստանդինին, սակայն, իրապես օժտված լինելով ֆրիստոնեական առափնություններով, հիշաշար չգտնվեց եւ հաշվեհարդար չտեսավ իր եղբայրների հետ, բավարարվելով նրանց Կոստանդնուպոլիս աֆսոսելով¹¹³: Կոռիկոսցի պատմիչը նաև ավելացնում է, որ Հայոց թագավորը խնդրել էր Բյուզանդական կայսրից, որ նրանք պահվեն հսկողության տակ, որպեսզի չկարողանան այլևս վերադառնալ Հայաստան¹¹⁴: Հեթումի ընդվզումը Կոստանդնի դեմ աղբյուրները բացատրում են նրա երախտամոռությամբ¹¹⁵: Այնինչ ակնհայտ է, որ խնդիրը վերաբերում էր օրինականության վերականգնմանն ու գահաժառանգության իրավունքի անսասանության ապահովմանը, ինչը չէր կարող հասկացողություն չգտնել Կիլիկիո հասարակության «լեգիտիմիստական» շրջանակներում: «Երկիրը Հեթումի հետ էր՝ որպես օրինական թագավորի»,– այդ առթիվ նկատում է հայտնի դրամագետ Պ. Պտուկյանը¹¹⁶: Ըստ այդմ, Կոստանդնի օրինակով, այս էլ ֆանիերոզ անգամ ապացուցվում էր, որ Հայոց իրավագիտակցությունը իշխանության բռնագավթում չէր հանդուրժում:

Սմբատին գահընկեց անելու կապակցությամբ, սակայն, հարց է առաջանում, թե Հեթումն ինչպես կարող էր իշխանությունից զրկել մի թագավորի, որը տվչություն (ինվեստիտուրա) էր ստացել մոնղոլներից¹¹⁷: Մենք

¹¹² Hayton, Flor, p. 210, 329.

¹¹³ Պողարյան, Յուցակ, հտ. 4, էջ 536; Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 154; Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 183; Lignages d'Outremer, p. 93; Gestes des Chiprois, p. 833.

¹¹⁴ Hayton, Flor, p. 210, 329.

¹¹⁵ Աբուլ-Ֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 244); Gestes des Chiprois, p. 833. Ըստ Ներսես Պալիանենցի՝ դրանում դեր են խաղացել նաև որոշ նենգամիտ մարդկանց խորհուրդները. տե՛ս Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 183: Հմմտ. նաև՝ Պողարյան, Ժամանակագրութիւն, էջ 262:

¹¹⁶ Bedoukian, Coinage, p. 14.

¹¹⁷ Կոստանդնի պարագան այլ էր. նա չէր հասցրել տվչություն ստանալ մոնղոլներից:

տեսանք, որ այդ խնդիրը հարթելու եւ իր իրավունքները վերականգնելու նպատակով Հեթումը դեռեւս 1296 թվականին փորձել էր ուղեւորվել Պարսկաստան՝ Ղազան խանի արժունիք, բայց այդ ուղեւորությունը խափանվել էր Սմբատի ձեռնարկած եռանդուն ջանքերի շնորհիվ: Ոստի ֆանի դեռ խնդիրը բաց էր մնացել, Հեթումի «լեզիտիմությունը» կասկածելի էր: Բարեբախտաբար, Սամուել Անեցու շարունակողի մի թանկարժեք տեղեկության շնորհիվ պարզվում է, թե Հեթումն ինչպես է վերջիվերջո հաղթահարել իր վերագահակալման առջեւ ծառայած այդ խոչընդոտը: Սմբատին եւ Կոստանդինն արտասելուց հետո, ըստ այդ աղբյուրի, Հեթումի առաջին գործն է լինում ավարտին հասցնել իր շկայացած ուղեւորությունը եւ այցելել Իլ-խանների արժունիք. «Ի Չեխէ (1298) Հեթումն զՍմբատ եւ զԿոստանդինն անտրեաց, եւ գնաց ի Տաթարն»¹¹⁸: Մենք հիմքեր չունենք կասկածելու այս վկայության վավերականությանը, քանի որ անժխտելի է, որ առանց Սմբատի ինվեստիտուրան չեղյալ հայտարարելու եւ մոնղոլներից վերստին գահակալելու իրավունք ձեռքբերելու, Հեթումը չէր կարող նորից բազմել Հայոց գահին: Այսպիսով, հանգամանքների բերմամբ, Հեթումը Ղազան խանից իշխանության տվչություն է ստացել երկու անգամ առաջինը 1295, իսկ երկրորդը՝ 1299 թվականին:

Վերահաստատվելով հայրենի գահին՝ Հեթումն անմիջապես միաբնակց միջազգային ասպարեզում այդ ժամանակ ծավալված փոթորկալից իրադարձությունների հորձանուտը: Նախ եւ առաջ նա որոշ ծառայություններ մատուցեց մոնղոլներին՝ Ռումի սուլթանության գործերը կարգավորելու հարցում¹¹⁹, ապա Հայոց բանակի գլուխ անցած՝ մասնակցեց Ղազան խանի 1299, 1301 եւ 1303 թթ. սիրիական արշավանքներին¹²⁰, ժամանակավորապես վերանվաճեց հայ-մամլյուքյան պատերազմի հետեւանով Կիլիկիայի կորցրած տարածքների մի մասը¹²¹, բարբարոսություններ գոր-

¹¹⁸ Սամուել Անեցի, *Ժամանակագրություն*, էջ 165. տե՛ս նաեւ՝ *Յակոբ Սեեցի, Պատմություն*, էջ 222; *Պողարյան, Ժամանակագրություն*, էջ 262:

¹¹⁹ Հմմտ. Mutafian, Hét'oum II, p. 272.

¹²⁰ Այդ արշավանքների եւ դրանցում Հեթումի խաղաղած դերի մասին մանրամասն տե՛ս Stewart, Armenian Kingdom, p. 136–153.

¹²¹ Հմմտ. Mutafian, Hét'oum II, p. 273.

ձեց մահմեդականների հողում եւ փառավորվեց Սուրբ Երկրի ազատա-
րարի կեղծ համբավով ու դրա շուրջ հյուսված անհավատալի առասպել-
ներով¹²²: Այսպիսի բռուն գործունեությունից, տպավորիչ հաղթանակնե-
րից ու դառը պարտություններից հետո, սակայն, նա նորից հրաժար-
վեց գահից՝ այն զիջելով իր նահատակված եղբայր Թորոսի դեռեւս ան-
չափահաս որդուն՝ Լեւոնին:

Լեւոն Գ (III) թագավոր (1301–1307 թթ.)

Լեւոնը ծնված պետք է լիներ 1289/90 թվականին, ինչի մասին ուղ-
ղակիորեն վկայում է Հեթում թագավորին վերագրվող պատմության
հետեւյալ հակիրճ տեղեկությունը. «ԶԼԸ. ի սոյն ամի ծնաւ պարոն Թո-
րոսի որդին Լեւոնն»¹²³: Նույնը հաստատում է Լեւոնի հոր՝ Թորոսի ձեռ-
նով 1293 թվականին գրված մի հիշատակարան, որի համաձայն՝ նա
այդ ժամանակ երեք տարեկան էր. «Ստացա գաստուածախօս Աւետա-
րանս... ի վայելումն ինձ անառժան ծառայիս Քրիստոսի եւ ծառայից նո-
րա, եւ շեղազարդ եռամեա պատանեկի իմոյ Լէվոնի, որ մնացեալ որք
ի մարէն իւրէ, զի զկնի ծնանելոյն զնա, փոքր ինչ աւուրք կացեալ,
գնաց առ Քրիստոս: ...Գրեցաւ ի թուաբերութեանս Հայկազեան տումա-
րի Չեֆ, ի թագաւորութեանն հարազատ եւ անդրանիկ եղբար մերոյ
Հեթմոյ քրիստոսասիրի»¹²⁴:

Ըստ այդմ, հարց է ծագում, թե Հեթումն ինչպե՞ս կարող էր թագա-
վորության բախտը վստահել մի մանկան ու նորից ֆաշվել վանք, եւ
եթե դա իրականություն է, ապա ե՞րբ է տեղի ունեցել իշխանության
փոխանցումը: Աղբյուրներից մի ֆանիսը, այն է՝ «Անդրծովյան արհայա-

¹²² Այդ առասպելների մասին մանրամասն տե՛ս Mutafian, Le royaume, p. 73; Mutafian, Hét'oum II, p. 274–275.

¹²³ Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 86: Հայոց ՉԼԸ թ. = 1289 հունվ. 8–1290 հունվ. 7: Հմմտ. Dulaurier, La Chronologie, p. 386.

¹²⁴ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 717–718: Լեւոնի ծննդյան նույն թվականը կողմնակիորեն հաստատվում է նաեւ 1306-ին գրված մի հիշատակարանի վկայութեամբ, ըստ որի՝ այդ թվականին նա տասնվեց տարեկան էր. «որ էր ամաց վեշտասան». Մուրադյան-Մարտիրոսյան, Ցուցակ, էջ 14:

տոհմերի ազգաբանությունը», «Գործի Կիպրացուց»-ը եւ Տյուրացի Տանարականը, բավարարվում են սոսկ իշխանության փոխանցման՝ Հեթումի կենդանության օրոք կատարված իրողությունն արձանագրելով, առանց նշելու կոնկրետ թվական¹²⁵: Մինչդեռ Սմբատ Սպարապետի ժամանակագրության շարունակողի եւ Աբուլֆիդայի տվյալներով՝ դատելի է ունեցել Կոստանդին եւ Սմբատ թագավորների Բյուզանդիա ատրվելուց (1299 թ.) անմիջապես հետո. «Եւ յետ սակաւ ատուրց բոնեց զպարոն Կոստանդին պարոն Հեթում, եւ զՍմբատն եհան յերկրէ իւրմէ: Եւ յետ ատուրց եղ թագաւոր զորդին պարոն Քորոսին զտղայն Լեւոն», – գրում է առաջինը¹²⁶: Իսկ Աբուլֆիդան այդ մասին տեղեկացնում է հետեւյալը. «Դանդինը փախուստ տվեց դեպի Կոստանդնուպոլիս, եւ Հեթումը մնաց զահի վրա: Քիչ անց նա զահ բարձրացրեց իր Քորոս եղբոր անչափահաս որդուն... իսկ այդ անչափահաս տղայի խնամակալությունը վերցրեց ինքը»¹²⁷: Ինչպես վկայում է Ա. Գ. Ստյուարտը, մյուս արաբ ժամանակագիրներն ընդհանրապես տեղյակ չեն Կիլիկիայում տեղի ունեցած իշխանափոխությանը եւ մինչեւ 1307 թվականը Հայոց թագավոր են նանաչում Հեթում Բ-ին¹²⁸:

Լեւոնի գահակալության սկզբնավորման մասին առաջին կոնկրետ թվականը տալիս է 1302-ին գրված հետեւյալ հիշատակարանը. «Արդ, գրեցաւ սա ի հոչակաւոր անապատիս, որ կոչի Խորին, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին եւ Սրբոյն Գրիգորի եւ Սրբոյ Նշանիս եւ այլ սրբոցս, որ է մերձ ի սահմանս Բարձրբերդոյ եւ Լեւոնկլային անառիկ դղեկացն, ի թուականիս Հայոց եօթն հարիւր յիսուն եւ մէկ, ի թագաւորութեան Հայոց Հեթմոյ, զոր եղիւր զեղբաւորողին իւր զպարոն Քորոսի, որ կոչի Լեւոն, մանուկ տիւսմ, յաթոնն իւր, եւ ինքն ի կարգ կրաւնաւորութեան մտեալ, եւ խորագէտ իմաստութեամբ եւ նախահոգակ մեծահանճարութեամբ՝ յանձն առեալ հոգայ զաշխարհս մինչեւ յարբունս հաս-

¹²⁵ Lignages d'Outremer, p. 93; Gestes des Chiprois, p. 834; Templier de Tyr (рус.) Mutafian, Hét'oum II, p. 279).

¹²⁶ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 127:

¹²⁷ Աբուլ-Ֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 244):

¹²⁸ Stewart, Armenian Kingdom, p. 105.

ցէ»¹²⁹: Սրանից իմքնըստինքյան բխում է, որ իշխանության փոխանցումը Լեւոնին պետք է տեղի ունեցած լիներ այդ թվականից առաջ: Ուշագրավ է, որ նույն թվականին ընդօրինակված մի այլ ձեռագրի թվագրման բանաձեւում Լեւոնն արդեն հիշատակվում է որպես թագավոր, թեև ընդամենը Հեթումի գահակցի հանգամանքով. «Գրեցաւ Այսմատուքս այս... ի թագաւորութեանն Հեթմոյ եւ Լեւոնի որդոյ Քորոսի... ի թուականութեանն Հայոց ՉՄԱ»¹³⁰: Հեթումի եւ Լեւոնի ժամանակով է թվագրված նաեւ հաջորդ տարում ընդօրինակված մի ձեռագիր. «Կատարեցաւ մեկնութիւն Սաղմոսացրս... ի թուականիս Հայոց ՉՄԲ, ի հայրապետութեանն Գրիգորի եւ ի թագաւորութեանն Հեթմոյ եւ Լեւոնի»¹³¹: Իսկ 1305–1307 թվականներին ընդօրինակված հինգ ձեռագրերի թվագրման բանաձեւում Լեւոնի անունն արդեն հանդես է գալիս միայնակ, ինչպես, օրինակ. «Գրեցաւ եղանակատր տառս ի թվականիս Հայոց ՉՄԴ (= 1305 թ.), ի հայրապետութեան տեառն Գրիգորի եւ ի թագաւորութեանն Հայոց Լեւոնի որդոյ Քորոսի որդոյ Լեւոնի թագաւորի»¹³²: 1305 թվականին Լեւոնը որպես միանձնյա թագավոր է հիշված նաեւ մի եզակի աղբյու-

¹²⁹ Մաթեոսյան-Ղազարոսյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 11: Տե՛ս նաեւ՝ Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 193–194, ծանոթ. 69: ԺԴ դ. հիշատակարանների անտիպ ժողովածուի (էջ 4) հեղինակները, քաղելով Փիրղալեմյանից, բերում են նաեւ հետեւյալ հիշատակարանը. «ՉՄ (= 1301 թ.) գրեցաւ սա ի յանապատի Դրազարկ կոչեցեալ, ձեռամբ... գրչի Քորոսի, ի հայրապետութեան տեառն Յակոբայ կաթողիկոսի Հայոց, եւ ի թագաւորութեան Լեւոնի, յիշատակ ... սուրբ առաջնորդի սուրբ անապատիս տեառն Բարսղի արհիեպիսկոպոսի, որ յայսմ ամի ի Քրիստոս փոխեցաւ»: Սակայն ակնհայտ է, որ այստեղ թվականի շփոթ կա, քանի որ խոսքը վերաբերում է Հակոբ Ա Կլայեցի կաթողիկոսի (1267–1286 թթ.) եւ Լեւոն Գ (II) թագավորի (1269–1289 թթ.) ժամանակաշրջանին: Բարսեղ արքեպիսկոպոսի, նույն ինքը՝ Բարսեղ արքեպիսկոպոսի մահվան արձանագրումը թույլ է տալիս հիշատակարանը թվագրել 1275 թվականով:

¹³⁰ Ոսկյան, Յուզակ, էջ 712:

¹³¹ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 19:

¹³² Պողարյան, Յուզակ, հտ. 5, էջ 354: Տե՛ս նաեւ՝ Անդ, հտ. 4, էջ 42 (1306 թ.); Մաթեոսյան-Ղազարոսյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 42 (1306 թ.); Պողարյան, Յուզակ, հտ. 11, էջ 388 (1307 թ.); Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 52 (1307 թ.):

րում. «Ի թվին Հայոց ՉՄԻ Լեւոն թագաւոր՝ որդի պարոն Թորոսի, ի Քրիստոսի սուրբ Մնընդանն արն, արար ձիաւոր զիս Հեթում Ախտուցն տէր ջամբոլա Հայոց»¹³³: Թյուրիմացոյթյան տեղիք շտալու նպատակով, հարկ է ավելացնել, սակայն, որ այդ շրջանի ձեռագրերի մեծ մասն, այնուամենայնիվ, շարունակել է թվագրվել Հեթում թագավորի ժամանակով¹³⁴:

Եւ վերջապես, աղբյուրների մի այլ խումբ համերաշխորեն արձանագրում է Լեւոնի թագադրոյթյան նշգրիտ ժամանակը, այն է՝ 1306 թվականը, ընդ որում, նրանցից երկուսը նշում են նաեւ այդ իրադարձոյթյան ամսաթիվը՝ հունիսի կամ հուլիսի 30-ը: «Ի թուիս ՉՄԵ,– գրում է հիշատակագիրներից մեկը,– եղ յաթոնն զեղբորորդին իւր Թորոսի զԼեւոն, մանուկ տիամ, եւ ամօին զնա թագաւոր Հայոց ի վերայ Կիլիկիոյ ի տանի սուրբ Առաքելոյն ի յուլիս և, յորում ժամանակի գրեցի»¹³⁵: Թեեւ հաջորդ հիշատակարանն, ըստ էւթյան, կրկնում է սրան, սակայն հարկ ենմ համարում ամբողջոյթյամբ մեջբերել նաեւ այն, քանի որ հետազոտողների ձեռքի տակ եղած նրա հրատարակոյթյունն¹³⁶, աղետոված լինելով, կարող է թյուրիմացոյթյունների տեղիք տալ. «Եւ յեւթն հարիւր յիսուն եւ հինգ ամին (= 1306 թ.) դարձեալ եկն տէր Աբրահամ ի մայրաքաղաքն Սիս, ուր եղեւ աշխարհածողով ամենայն ազգաց յազգաց յախտուն: Թագաւորն Հայոց Հեթում զպարոն Թորոսի՝ զիւր եղբար որդին, զամբիծ պատանին զԼեւոն թագի պսակեաց եւ թագաւորեցոյց արքայապատիւ նոխութեամբ, որ էր ամաց վեշտասան, յամսեանն յու-

¹³³ Հեթում Նղիրցի, Պատմութիւն, էջ 552: «Ախտուցն տէր ջամբոլա» բառերը Ֆ. Կոնիքերը կարդացել է «Եւ տուցն տէր ջամբոլա», ինչից կարելի է ստանալ այն սխալ տպավորությունը, որ Լեւոնը Հեթումին նաեւ ջամբոլա է նշանակել. տե՛ս Conybeare, Catalogue, p. 291. Նույնը՝ Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 390:

¹³⁴ Տե՛ս Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 6 (1302 թ.), 11 (1302 թ.), 15 (1303 թ.), 18 (1303 թ.), 23 (1304 թ.), 24 (1304 թ.), 27 (1304 թ.), 28 (1304 թ.), 29 (1304 թ.), 31–32 (1304 թ.), 33 (1305 թ.), 34 (1305 թ.), 36 (1305 թ.), 40–41 (1306 թ.), 42 (1306 թ.):

¹³⁵ Պողարյան, Յուցակ, հտ. 4, էջ 536: Տե՛ս նաեւ՝ Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 170, ծանոթ. 193:

¹³⁶ Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 194, ծանոթ. 69:

նիս յերեսուն, յաւուր հինգշաբթոջն»¹³⁷: Այս աղբյուրների տեղեկություններին մի կարելու մանրամասն է ավելացնում Սամուել Անեցու ժամանակագրության շարունակողը, արձանագրելով, որ եղբորորդուն թագադրելուց հետո Հեթումն ստանձնում է նրա խնամակալությունը. «Եւ ինքն (Հեթումն) առնու զԼեւոն՝ զորդին Քորոսի եղբօրն իւրոյ՝ որ սպանեալ եղել ի Սմբատայ, եւ էօծ թագաւոր Հայոց ի ՉԾԵ (= 1306) թվին, եւ ինքն ունէր զաւագ պարոնութիւնն»¹³⁸: Անեցու շարունակողի վկայությունը հաստատվում է 1306 թվականին գրված հետեւյալ հիշատակարանի տվյալներով. «Գրեցաւ եղանակաւոր տառս ի թու(ին) ՉԾԵ (1306), ի թագաւորութեանս Հայոց Լեւոնի որդոյ Քորոսի, որդոյ արքային Լեւոնի, եւ ի պարոնութեան Հեթմոյ»¹³⁹: Լեւոնի թագադրության մասին առկա աղբյուրների ընձեռած տվյալներն ամբողջացնելու համար նշենք, որ այդ իրադարձությունը նույն տարով է թվագրված նաեւ Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Ք. 1033 ձեռագրի հիշատակարանում¹⁴⁰:

Առաջին հայացքից իրարամերձ թվացող այս տվյալների ամբողջությունն իրականում իրենից ներկայացնում է իրադարձությունների մի անհակասական եւ կուռ շղթա, որի մեկնակետը Լեւոնի թագավոր հռչակվելու, իսկ ավարտը՝ նրա թագադրվելու իրողությունն է: Հեթումն,

¹³⁷ Մուրատյան-Մարտիրոսյան, Յուցակ, էջ 14: Վ. Հակոբյանը կամ նրա աղբյուրը, բաց թողնելով բնագրի «յեւթն հարիւր յիսուն եւ հինգ» եւ «որ էր վեշտասան ամաց» բառերը, բոլորովին աղավաղել են նրա բովանդակությունը, ինչի հետեւանքով տպավորություն է ստեղծվել, թե այն գրված է 1301 թվականին: Ճիշտ է, տվյալ հիշատակարանն ընդգրկված է այդ թվականին ընդօրինակված մի ձեռագրում, բայց նրանց կողմից չի նկատվել, որ այն գրված է ավելի ուշ, թեեւ միեւնույն գրչի ձեռքով:

¹³⁸ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154–155: Հիշեցնենք, որ «Աւագ պարոն» տիտղոսը պայլի կամ խնամակալի համարժեքն էր:

¹³⁹ Ակիւնյան-Ոսկյան, Յուցակ, էջ 160: 1307 թվականին Հեթումն «աւագ պարոն» տիտղոսով է հիշատակված նաեւ երեք այլ աղբյուրներում. Հեթում Նղիրցի, Պատմութիւն, էջ 546: Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 570, Պողարյան, Ժամանակագրութիւն, էջ 263:

¹⁴⁰ Պողարյան, Յուցակ, հտ. 4, էջ 47: Նույն հավաքածուի Ք. 2566 ձեռագրի հիշատակարանը Լեւոնի թագադրությունը դնում է 1307 թվականին (Անդ, հտ. 11, էջ 388), ինչը, սակայն, թյուրիմացություն պետք է համարել:

ամենայն հավանականությամբ, Լեոնին գահակից-թագավոր է հռչակել 1301 թվականին, միաժամանակ ստանձնելով այդ տասներկուամյա պատանու¹⁴¹ խնամակալությունը: Կիլիկիո պատմության մեջ, ինչպես հիշում ենք, նման մի նախադեպ գրանցվել էր դեռևս 1211 թվականին, երբ Լեոն Բ (I) թագավորը գահակից էր հռչակել Ռայմոնդ-Ռուբենին¹⁴²: Լեոն Գ (III)-ի՝ Հեթումի գահակիցը լինելու պարագան հաստատվում է Ներսես Պալիանենցի հաղորդած այն տեղեկությամբ, որ վերջինս իր եղբորորդուն «թագաւորեցուցեալ էր ընդ իւր»¹⁴³: Դրա ապացույցն է նաև վերը նշված երկու ձեռագրերի թվագրման բանաձևում Հեթումի եւ Լեոնի անունների կողք-կողքի հիշատակումը¹⁴⁴: Ինչ վերաբերում է Հեթումի ստանձնած խնամակալությանը, ապա դրա մասին, ինչպես տեսանք, հստակ կերպով վկայում են 1302 թ. հիշատակագիրը եւ Աբուլֆիդան, առաջինը նշելով՝ «յանձն առեալ հոգայ գաշխարհս մինչե յարբունս հասցե»¹⁴⁵, իսկ երկրորդը՝ «անշափահաս տղայի խնամակալությունը վերցրեց ինքը»¹⁴⁶: Հեթումի եւ Լեոնի համատեղ գահակալության շրջանը տեսել է հինգ տարի եւ ավարտվել վերջինիս՝ 1306 թվականին տեղի ունեցած թագադրության արարողու-

¹⁴¹ Վ. Հակոբյանը, հիմնվելով Ներսես Պալիանենցի սխալ հասկացված մի տեղեկության վրա, ենթադրում է, որ Լեոնը թագավոր հռչակվելու պահին երեք տարեկան էր (Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 193, ծանոթ. 69): Պալիանենցը գրում է. «Ընդ այսմ ժամանակիս ՌՅԷ եւ Հայոց թվին 202 (= 1307 թ.)... դեռաբոյս թագաւորն Հայոց Լեոն, եղբորորդի Քորոսին, զոր սայ թագաւորեցուցեալ էր ընդ իւր, դեռ եւս Գ ամ էր» (Հակոբյան, Անդ, էջ 188): Մեր կարծիքով՝ «դեռ եւս Գ ամ էր» բառերը վերաբերում են ոչ թե Լեոնի տարիքին, այլ մատնանշում են նրա գահակալության տեւողութունը: Դա հաստատվում է նրանով, որ նույն Պալիանենցն իր մի այլ աշխատության մեջ Լեոնին հատկացնում է երեք տարվա գահակալում (Հակոբյան, Անդ, էջ 205):

¹⁴² Տե՛ս սույն աշխատության էջ 218–223:

¹⁴³ Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 188:

¹⁴⁴ Ոսկյան, Յուցակ, էջ 712; Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 19:

¹⁴⁵ Մաթեոսյան-Ղազարոսյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 11: Հմմտ. նաև՝ *Gestes des Chiprois*, p. 833–834.

¹⁴⁶ Աբուլ-Ֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արարական աղբյուրները, էջ 244):

թյամբ, որից հետո նա երկիրը կառավարել է միանձնյա թագավորի կարգավիճակով, իսկ Հեթումը պահպանել է նրա խնամակալի պաշտոնը¹⁴⁷: Ի տարբերություն Սմբատի եւ Կոստանդնի պարագայի՝ Լեւոնի գահակալումը թե՛ բովանդակության, թե՛ արարողակարգի առումով լիովին համապատասխանում էր գահաժառանգության կիրիկյան իրավունքի սկզբունքներին, որոնց սահմանմամբ՝ Հեթումի անգավակության պատճառով Հայոց գահը պետք է փոխանցվեր նրա եղբայրներից ավագագույնին, իսկ վերջինիս մահվան դեպքում ոչ թե հաջորդ եղբորը, այլ հանգուցյալի որդուն: Քորոսի եւ Լեւոնի պարագան ճիշտ այն դեպքն էր, որ ամբողջությամբ տեղավորվում էր այս սահմանման շրջանակում:

Այս կապակցությամբ կրկին մի թանկարժեք տեղեկություն է հաղորդում Կիրիկիո արժունիքի անցուդարձերին եւ գահաժառանգության իրավունքի նրբություններին ֆաշաժանոթ հեղինակը՝ Հեթում Կողիկոսցին: Ըստ նրա՝ Լեւոնը Հայոց թագավոր էր հռչակվել դեռեւս 1298 թվականին, այն էլ Արժունի ատյանի որոշմամբ, երբ Հեթումը, պատճառ բռնելով իր տեսողության կորուստն ու կրոնավորական հանգամանքը, հրաժարվել էր վերադառնալ իշխանության. «Երկրի առաջնորդների, պարոնների եւ մարդկանց՝ եկեղեցական թե աշխարհական, միասնական կամով թագավոր եւ տեր ընտրեցին վերոհիշյալ Քորոսի որդուն, որի անունն էր Լեւոն: Եւ բոլորը երդում տվին ու հնազանդություն հայտնեցին նրան՝ որպես իրենց օրինական տիրոջ, դատելով, որ նա օրինական ժառանգորդ էր, քանի որ նրա հայրը՝ պարոն Քորոսը, նախկինում թագավորության կառավարիչն էր եղել, եւ բոլորը նրան ժամանակին հավատարմություն էին հայտնել ու երդում տվել: Բայց քանի որ այս Լեւոնը դեռեւս անշափահաս էր, որոշվեց, որ պարոն Կոստանդինը՝ նրա հորեղբայրը, ստանձնի նրա խնամակալությունը (le baillage), մինչեւ որ Լեւոն թագավորը հասնի կատարյալ տարիքի»¹⁴⁸:

¹⁴⁷ Այդ մասին, ինչպես վերը տեսանք, վկայում են Սամուել Անեցու շարունակողի «եւ ինքն առնէր զաւագ պարոնութիւնն» բառերը. Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 155: Տե՛ս նաեւ՝ Ակիւնյան-Ոսկյան, Յուցակ, էջ 160; Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 546; Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 570:

¹⁴⁸ Hayton, Flor, p. 209–210.

Լեոն Դ (III)-ի միանձնյա գահակալությունը, սակայն, չափազանց կարճ տևեց, և նա չհասցրեց, դրամ հատելուց¹⁴⁹ ու մի քանի հրովարտակ արձակելուց¹⁵⁰ բացի, արհայավայել այլ գործեր կատարել, թեև ժամանակակիցները նրա հետ մեծ հույսեր էին կապել: Դրա վկայությունն է, թեկուզ, նրա անձի հետևյալ ուշագրավ գնահատականը. «Փառք Աստուծոյ, զի թագաւորութիւն Հայոց իցէ ի բարի վիճակի, և ըստ զօրացուցանելոյ Աստուծոյ ի ձեռն Լեոնի որդոյ տեառն Թորոսի ի նախկին վերածցի վիճակ. վասն զի փայլէ ամենայն առաքինութեամբք, և է հայելի ամենայն իշխանաց»¹⁵¹: Այդ հույսերը, սակայն, շատ արագ ի դերեւ ելան, քանի որ 1307 թ. նոյեմբերի 17-ին նորընծա թագավորն, իր հորեղբայր Հեթումի և բազմաթիվ հայ իշխանների հետ, դավադրաբար սպանվեց մոնղոլ զորահրամանատար Բիլարղուի ձեռով. «Ի թուականիս Հայոց ՉՄՁ, ի նոյեմբերի ի ժէ արն, սպանաւ աւագ պարոն Հայոց Հեթում և գեղաղէ և ամենաբարի պատանին, եղբար որդին իւր՝ Լեոն, որդի պարոն Թորոսի, ի ստորոտս Անարգաբու, յանաւրէն Պելարղոյէ»,– գրում է այդ թվականին ընդօրինակված մի ձեռագրի հիշատակագիր¹⁵²: Մանրամասներով ավելի հարուստ է Սամուել Անեցու շարունակողի տեղեկությունը. «Ի ՉՄՁ թվին եկեալ նենգութեամբ յաշխարհն Կիլիկեցոց՝ որոյ աղագաւ անօրէն նոյինն¹⁵³ Պուլարղու, և կոչեցեալ առ իմն խորամանկութեամբ իբրեւ ի խորհուրդ զաւագ պարոնն Հեթում, և նա ոչ գիտացեալ զնենգութիւն նորա, գնաց առ նա, ունելով ընդ իւր գնոր օճեալ տղայ թագաւորն Լեոն՝ գեղբօրորդին իւր,

¹⁴⁹ Պ. Պտուկյանի կիլիկյան դրամագիտությանը նվիրված գրքում նկարագրված է Լեոնի անունով դրոշմված ավելի քան հարյուր դրամ. Bedoukian, Coinage, p. 336–353. Ի դեպ, Պտուկյանը պնդում է, որ Լեոնի անունով դրամահատումը սկսվել է 1301 թվականին, այսինքն՝ նրա գահակից-թագավոր (co-ruler) հռչակվելու պահից. Անդ, էջ 14:

¹⁵⁰ Sté Langlois, Cartulaire, p. 166–175.

¹⁵¹ Հեթում, Պատմութիւն Թաթարաց, էջ 68: Հմմտ. Hayton, La Fleur (Régnier-Bohler, Croisades, p. 855–856).

¹⁵² Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 55:

¹⁵³ Նույն = իշխան. փոխառություն մոնղոլերենից (noyan). տե՛ս Blake-Frye, History, p. 387, n. 27; Cleaves, The Mongolian Names, p. 405–406.

գՕշին Սինէգալն, որ յայնժամ Գունդստապլն էր, եւ զայլ բազում իշխանս, որք իբրեւ եկին առ նա, յարեաւ ի վերայ եւ եսպան զամենեսին առ ոտս Անարգաբու, եւ կամէր զԿիլիկիայ յինքն յափշտակել»¹⁵⁴: Եւ, վերջապես, մի երրորդ հայկական աղբյուր՝ Սսի 1307 թ. ժողովի արձանագրությանը կցված պատմական գրությունը, որը մինչ այժմ շրջանառության մեջ չի դրվել հետազոտողների կողմից, այդ մասին հաղորդում է հետեւյալը. «Յորժամ կատարեցաւ գործս այս (Սսի ժողովը – Լ.Տ.Պ.) աստուածային առաջարկութեամբ, եւ ուրախ եղաք ի Տէր, ինքն որ սկզբնաշարն է եւ ամենայն բարեաց հակառակ, զըրզըռեալ շարժեաց զոմն անօրէն ի ժանդ ազգէն որ կոչի Թաթար՝ Պուլարդու անուն նորա, որ սակա պահպանութեան երկրի մերոյ բերեալ եղեւ: Սա յարուցեալ ի գիշերի միում, եւ յանկարծակի եկեալ ի վերայ թագաւորին Լեւոնի, եսպան զնա՝ ընդ նմին եւ զթագաւորահայրն Հեթում եւ զայլ եւս իշխանս»¹⁵⁵: Պատմական այս նշանակալից դրվագն առայժմ պատշաճ ուշադրության չի արժանացել հետազոտողների կողմից: Միակ բացառությունը Ա. Գ. Ստյուարտի վերջերս լույս ընծայված աշխատությունն է, որում շրջանառության մեջ են դրված հարցի վերաբերյալ արաբական աղբյուրներից փաղված բազմաթիվ նոր տվյալներ¹⁵⁶:

Աբուլֆիղայի վկայությամբ՝ Բիլարդուն «Ռումի երկրում բանակած մոնղոլների զորավարն էր»¹⁵⁷, իսկ ըստ Ալ-Այնիի՝ Սսի մոնղոլական կայազորի պետը¹⁵⁸: Մեզ ավելի հավաստի է թվում առաջին տեղեկությունը, քանի որ նախ՝ որոշ աղբյուրների տվյալներով, նա ժամանել էր դրսից¹⁵⁹, եւ երկրորդ՝ ի տարբերություն Անատոլիայի, Կիլիկիայում

¹⁵⁴ Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 155–156:

¹⁵⁵ Կղեմէս Գալանոս, *Միաբանութիւն*, էջ 472–473. նույնը՝ *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. Թ. 2037, էջ 141բ:

¹⁵⁶ Stewart, Armenian Kingdom, p. 171–180.

¹⁵⁷ Աբուլ-Ֆիղա, *Ժամանակագրութիւն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 245)*:

¹⁵⁸ ըստ՝ Stewart, Armenian Kingdom, p. 173. Հմմտ. *Չամչյան, Պատմութիւն*, հտ. 3, էջ 311:

¹⁵⁹ *Բաղդասարյան, Գեորգ Սկեռացու վարքը*, էջ 431; Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 155; *Յովհաննէս Գարդեի, Ժամանակագրութիւն*, էջ 24; Ալ-Մաքրիզի (*ըստ՝ Stewart, Armenian Kingdom, p. 173*): *Ռաշիդեդդինի շարունակողի վկայութեամբ՝ Բիլարդուն ժամանել էր Ռումի երկրից եւ ճամբար հաստատել Կիլիկիայում*

մոնղոլական կայազորներ տեղակայված չէին: Ինչ վերաբերում է Բիլաբոլուի՝ Կիլիկիայում հայտնվելու պարագային, ապա աղբյուրները դա բացատրում են այլեայլ շարժառիթներով, այն է՝ Հայոց թագավորությունը նվաճելու¹⁶⁰, խանի անունից տարեկան հարկ գանձելու¹⁶¹, երկիրը մամլույմներից պաշտպանելու¹⁶², Սսում կամ Աղանայում մզկիթ կամ մադրասա կառուցելու¹⁶³, եւ վերջապես՝ Լեւոն թագավորից դրամ շորթելու¹⁶⁴ նպատակով: Իսկ Հեթումի ու Լեւոնի հանդեպ գործված ճեթի բուն պատճառն է համարվում Բիլաբոլուի շարաշահումների վերաբերյալ Իլ-խանի առջեւ նրանց կատարած գանգատը¹⁶⁵, կամ էլ՝ նրանց լատի-նասիրական ֆաղափականությունից դժգոհ հայ տարրերի սադրանքը¹⁶⁶:

յում (ըստ՝ *Dulaurier*, Documents Arméniens, p. 549n):

¹⁶⁰ Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 156; *Gestes des Chiprois*, p. 867.

¹⁶¹ Ալ-Մաքրիզի (ըստ՝ *Stewart*, Armenian Kingdom, p. 173): Սա անհավանական է, քանի որ հայտնի է, որ մոնղոլները Կիլիկիայում ուղղակի հարկահանություն պրակտիկա չեն կիրառել:

¹⁶² Յովհաննէս Դարդեւ, *Ժամանակագրութիւն*, էջ 124; Կղեմէս Պալանոս, *Միաբանութիւն*, էջ 472–473. Նույնը՝ *Մաշտոցի անվ. Մատենադարան*, ձեռ. Թ. 2037, էջ 141բ:

¹⁶³ Ալ-Այնի եւ Ալ-Մաքրիզի (ըստ՝ *Stewart*, Armenian Kingdom, p. 173–174):

¹⁶⁴ *Ռաշդեղեղիի շարունակող* (ըստ՝ *Dulaurier*, Documents Arméniens, p. 549n):

¹⁶⁵ Ալ-Այնի եւ Ալ-Մաքրիզի (ըստ՝ *Stewart*, Armenian Kingdom, p. 174); *Ռաշդեղեղիի շարունակող* (ըստ՝ *Dulaurier*, Documents Arméniens, p. 549n):

¹⁶⁶ *Չամչյան*, *Պատմութիւն*, հտ. 3, էջ 311: Ինչպես նկատել են արդի հետազոտողները, հեղինակն իր այս տեսակետը հիմնավորող աղբյուրներ չի նշում: Այնուամենայնիվ, հակալատինական ճամբարում եթե ոչ սադրիչներ, ապա Հեթումին եւ Լեւոնին բաժին հասած ողբերգության առթիվ զոհունակություն արտահայտողներ ու շարախնդացողներ հաստատապես կային, ինչի մասնավոր վկայությունն է Գեորգ Սկեւոացու վարքի հետեւյալ հատվածը. «Եւ արդ, վասնզի ոչ խրատեցան առաջնովս, զոր տեսին, եկն եհաս երկրորդն, զոր կրել ունին: Զի տէր աշխարհին Հեթում թագաւորեցոյց զեղբար որդին իւր, որ էր տղայ տիաւք եւ անմեղ իրին, բայց վարժեաց եւ արար շար արբանեակ նմին: Եւ եկն ի Պարսից նոյին մի՝ ոսկր խանին, զոր պատուով մեծարէին եւ յաշխարհն որսով շրջեցուցանէին: Եւ նա առանց ամենայն պատճառի, գիշերի կոչէ առ ինքն զնոսա, եւ սպան զթագաւորն տղայ եւ զՀեթում, որ թագաւորեցոյց զնա եւ զայլս յիշխանացն՝ որք ընդ նոսա: Եւ իմացան, թէ խնդրի յաստուծոյ վրէժ, թէպէտ եւ յապաղէ առ յապայ: Եւ նա, որ զառաջին խրատն յայլսն ոչ ամ զմտաւ, ինքն երկ-

Ինչպես նկատել է Ա. Գ. Ստյուարտը¹⁶⁷, Բիլարդուի ոնրագործության դրդապատճառների բացահայտման վրա, թերևս, կարող էր լույս սփռել «Գործք Կիպրացոց»-ի այն տեղեկությունը, որ Հեթումն իր սպանության նախօրյակին խանական ինչ-որ հրովարտակ էր ստացել, որը չափազանց մեծ ուրախություն էր պատճառել նրան. «Եւ երբ Հեթում թագավորը տեսավ հրովարտակը, համբուրեց այն, դրեց գլխին ու աչքերին, ապա վստահացած իջավ՝ իր հետ տանելով փոքրահասակ թագավորին, իր զարմիկին»¹⁶⁸: Քիչ անց կիպրացի ժամանակագիրն ավելացնում է նաև, որ Հեթումը Բիլարդուին այցելել էր հենց այդ հրովարտակը ցույց տալու համար. «Հայոց թագավոր Օշինը իր եղբորն՝ Ալինախին ուղարկեց Քաթարների մեծ խանի մոտ՝ գանգատվելու իրենց եղբոր եւ մանուկ զարմիկի մահվան կապակցությամբ, որոնց իր մարդը (Բիլարդուն՝ Լ.Տ.Պ.) սպանել էր, մինչ նրանք գտնվում էին նրա (խանի՝ Լ.Տ.Պ.) ապահովության տակ, ներկայացնելով նրա կողմից շնորհված հրովարտակը»¹⁶⁹: Դժբախտաբար, «Գործք Կիպրացոց»-ի բնագրի այս հատվածից թերթ ընկած լինելու պատճառով հայտնի չէ, թե կոնկրետ ինչ բովանդակություն է ունեցել այդ հրովարտակը:

Այնուամենայնիվ, կիպրացի ժամանակագրի այս, թեկուզ կիսատ, բայց թանկարժեք տեղեկությունները մեզ հիմք են տալիս առաջ քաշելու Հեթումի եւ Լեւոնի սպանության հետեւյալ վարկածը: Այլ աղբյուրներից հայտնի է, որ 1306 կամ 1307 թվականին Օլջեյբու խուղաբանդա խանը դաժան շրջաբերական էր արձակել՝ իր տիրապետության տակ բնակվող ֆրիստոնյանների վրա գլխավոր կարգավիճակով դրված պարտավորությունները խստացնելու նպատակով: «Ի ժամանակի յորում էր թուա-

որդդին պատահեաց եւ շարաւ ի միջոյ բարձաւ». Բաղդասարյան, Գեորգ Ալեւոացու վարքը, էջ 430–431:

¹⁶⁷ Stewart, Armenian Kingdom, p. 173n.

¹⁶⁸ “Et quand le roy Hayton vy le ferman, si le baiza et le mist sur sa teste et sur ses ziaus, et desendy fiablement, et si mena o luy le petit roy, son nevou”. *Gestes des Chiprois*, p. 867.

¹⁶⁹ “Hoissin, roy d’Ermenie, manda Alinah, son frere, au grant caan des Tatars, soy conplaignant de la mort de lor frere et de l’enfant lor nevou, que sa gent aveent mors sous sa fiance, venant a son comandement, par la prezentasion de son ferman”. *Gestes des Chiprois*, p. 867.

կանս մեր ԶԾԶ. (1307),— գրում է մի հիշատակագիր,— ի պակասել արդարութեանց եւ ի բազմանալ անօրէնութեանց մերոց, առաւել բազմացաւ բարկութիւն եւ սաստկացաւ շարութիւն ազգին նետողաց ի վերա մեր՝ ազգիս ֆրիստոնէից, քանզի ել տղայ հասակաւ այր մին ի Խորասանայ միականի, համանման Նեոինն, որ գալոցն է, անուն նորա Խարբանդա, որ թարգմանի իշու ծառայ, որդի Արղունին որդո Նուլայունին: Սա բառնալ կամեցաւ զֆրիստոնէութիւն աշխարհէս Հայոց եւ Վրաց, զոր խափանեաց տէր եւ ոչ կատարեցաւ շար խորհուրդ նորայ: Յետոյ այլ բանս մտաւ ածեաց արբանեկն սատանայի, առաքեաց ընդ ամենայն երկիր իշխանութեան իւրոյ դնել նշան խայտառակութեան ֆրիստոնէից եւ հարկ առնուլ ըստ մարդաթոփ Խ. (40) արծաթո մինչ ի ժ. (10)՝ ըստ կարի»¹⁷⁰: Իսկ XVII–XVIII դդ. ժամանակագիր Ավետիֆ Տիգրանակերտցին, օգտվելով մի հնագույն աղբյուրից, նույն իրադարձության վերաբերյալ հաղորդում է շատ ավելի հանգամանալից հետեւյալ տեղեկությունները. «Ի թվին Հայոց ԶԾԵ (1306) էր բռնակալ յազգէն նետողաց Ղարպանտա խանն, որ էր եղբայր Խազանին: Որ ի մեռանել Խազանին Ղարպանտա էառ զաթոռ եղբօրն, այր շար եւ ատեցող ֆրիստոնէից: Եւ պատրեալ ի դիւթականաց եւ յաղանդատաց շէխացն, եւ խորհուրդ շար ի մէջ բերելով, զործակցան իւրեանց սատանայի, սկսան մարտնչիլ ընդ անյաղթելի վիմին Քրիստոսի: Եւ հանեալ զհրովարտակ ընդ ամենայն տիեզերս, որ ընդ իւրով իշխանութեամբ էին, ի վերայ ֆրիստոնէից՝ այնու կամ դառնալ ի մուլար դաւանութիւն Մահմետի, կամ տալ զխարան, ամէն մարդ իւր զլխոյն Ը (8) ոսկի, եւ թուֆ եւ ապտակ ի յերեսն, եւ զմորուսն ճողել, եւ սեւ կարկատան մի ի վերա աջո ուսին կարել՝ նախատինֆ վասն Քրիստոսի: Եւ շար դեսպանքն իբրեւ զարեանարբու գազան արձակեցան ի վերայ ամենայն ֆրիստոնէից, ընդ ամենայն ֆաղաֆս եւ ի գաւառս, ի վանորայս եւ ամենեսեան տեղիս ֆննայոյզ լինէին, ահացուցանելով զամենեսեան: Քանզի այսպէս

¹⁷⁰ *Սաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 46: Քաղելով նույն ձեռագրից՝ Վ. Հակոբյանը «որդի Արղունին որդո Նուլայունին» բառերի փոխարեն դրել է «որդի Արղունին որդո Աբաղային որդո Նուլայունին».* *Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 1, էջ 111: նույն իրադարձութեան այլ արձագանքներ տես նաեւ՝ Սաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 41, 51, 92, 101, 113, 138:*

գրեալ էր ի մահաբեր հրովարտակն՝ ո՛չ զժամ օրհնել, եւ ո՛չ յեկեղեցի մտանել, եւ ո՛չ զմանկունս մկրտել, կամելով միահաղոյն բառնալ զամենեսեան կրօնս ֆրիստոնէից: Իսկ բանատօր հօտքն Քրիստոսի անխախտելի մնացին ի հաւատս ֆրիստոնէութեան... Իսկ անօրէն եւ ամբարիշտ խանն Ղարբանտա իբրեւ ետես թէ այնու ոչ կարաց յաղթել բանատօրի հօտին Քրիստոսի, յաւել այլ եւս հարուածս ի վերա ֆրիստոնէից՝ կա՛մ զամենեսեան ներհինիս առնել, կա՛մ զմի ակն հանել, կա՛մ դառնալ ի պիղծ դաւանութիւն Մահմետի»¹⁷¹:

Ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է Իլ-խանութեան ֆրիստոնյա հպատակների վիճակն անտանելի դարձնող մի լայնածավալ միջոցառման, որը հատկապես ծանր է նստել «Հայոց եւ Վրաց աշխարհների» բնակչության վրա: Նկատի ունենալով Ռաշիդեդդինի շարունակողի այն տեղեկությունը, որ Բիլարդուն Ռումի երկրում հայտնվել էր 1306 թվականին¹⁷², ակնհայտ է դառնում նաեւ, որ նա վկայակոչված աղբյուրներում հիշված այն դեսպաններից մեկն էր, որը գործադրելու էր եկել Խուդաբանդայի այդ շարագուշակ հրովարտակը: Լինելով մոլեռանդ մահմեդական, ինչը հավաստում են նույն Ռաշիդեդդինի շարունակողը եւ Ալ-Մաֆրիդին¹⁷³, Բիլարդուն, ըստ երեւոյթին, Ռումի երկրում իր գործն ավարտելուց հետո մտադրվել է այն շարունակել Կիլիկիայում: Դրա մասին են վկայում, մասնավորապես, արաբ ժամանակագիրներ Ալ-Այնիի եւ Ալ-Մաֆրիդիի հաղորդած այն տեղեկությունները, որոնց համաձայն՝ Բիլարդուն փորձել է Սսում կամ Ադանայում մզկիթ կամ մադրասա կառուցել¹⁷⁴:

Այդ ընթացքում, սակայն, Հեթումին, ամենայն հավանականությամբ, հաջողվել էր Օլջեյթու խանից մի այլ հրովարտակ կամ ապահովագիր ձեռք բերել, որով Հայոց թագավորությունը, դուրս լինելով մոնղոլների անմիջական իրավասության սահմաններից, ազատվել էր ֆրիստոնյաներին վերաբերող ընդհանրական շրջաբերականի պար-

¹⁷¹ Աւետիք Տիգրանակերտցի, *Գաւազանագիրք*, էջ 571–572:

¹⁷² Տե՛ս Dulaurier, Documents Arméniens, p. 549n.

¹⁷³ Տե՛ս Stewart, Armenian Kingdom, p. 174; Dulaurier, Documents Arméniens, p. 549n.

¹⁷⁴ Տե՛ս Stewart, Armenian Kingdom, p. 173-174.

տադրած պարտավորություններից: Հրեվելով այդ առթիվ եւ վստահած խանական ապահովագրին, Հեթումն իր եղբորորդու հետ միամտաբար ներկայացել էր Բիլարղուին, որն անտեսելով Օլջեյթուի հրամանը, այնուամենայնիվ խողխողել էր նրանց¹⁷⁵:

Տվյալ խնդրի վերաբերյալ սահմանափակվելով այսֆանով, հարկ ենք համարում ավելացնել միայն հետեւյալը: Քեւե Ա. Գ. Ստյուարտի կարծիքով՝ Կիլիկիո գահակալների սպանության դրվագը վկայում է հայ-մոնղոլական հարաբերությունների բնույթի էական փոփոխության մասին¹⁷⁶, սակայն մեզ թվում է, որ այն ընդամենը ծայրագավառային մոնղոլ պաշտոնյայի ձեռնարկած ինքնագլուխ ֆայլ էր, ինչի ապացույցն է այն, որ մեկ տարի անց Բիլարղուն, հայերի բողոքների հիման վրա, մահապատժի ենթարկվեց Օլջեյթու խանի կողմից¹⁷⁷: Ինչպես իրավացիորեն գրում է Գ. Միֆայեյանը, «Բիլարղուի արարքը դեռեւս Կիլիկյան Հայաստանի նկատմամբ Հուլավուիդների ֆաղափական կուրսի վատթարացմանը միտված արմատական փոփոխություն չէր նշանակում»¹⁷⁸:

* * *

Հեթում Բ թագավորի գահակալության տասնութ տարիները պետք է գնահատել որպես Կիլիկիայի պատմության ամենամոայլ ժամանակաշրջաններից մեկը, երբ առանց այդ էլ մամլյոֆյան ասպատակությունների մշտական սպառնալիքի տակ գտնվող երկիրը բզկտվում էր նաեւ ներքին երկպառակությունների պատճառով: Հայերի համար մեծագույն դժբախտություն էր, որ մի այնպիսի բախտորոշ պահի, երբ

¹⁷⁵ Պատահական չէ, որ Ալինախը հետագայում Օլջեյթուին հիշեցնում է, որ Բիլարղուի կողմից սպանված Հեթումն ու Լեւոնը գտնվում էին խանի ապահովության տակ՝ շնորհիված հատուկ հրովարտակով. տե՛ս Gestes des Chiprois, p. 867.

¹⁷⁶ Stewart, Armenian Kingdom, p. 172. Հմմտ. նաեւ՝ Boase, Cilician Kingdom, p. 29; Coureas, Papacy, p. 100; Richard, La papauté, p. 184.

¹⁷⁷ Մի նոր, բայց ոչ այնքան հիմնավորված վարկածի համաձայն, ընդհակառակը, Բիլարղուի ոճրագործության ետեւում կանգնած էր ինքն Օլջեյթուն՝ 1307 թ. Սսի ժողովում վավերացված Հայ-Լատին միությունը դիտելով որպես իր մահմեդական հավատակիցների դեմ ուղղված դավաճանություն. տե՛ս Bundy, The Trajectory, p. 82.

¹⁷⁸ Микаелян, История, с. 440.

հատկապես զգացվում էր ուժեղ ձեռքի կարիքը, պետության ղեկը բաժին էր ընկել անվճռական ու կամազուրկ այդ անձնավորությանը¹⁷⁹: Հեթումի բազմակի հրաժարականներն ու վերագահակալումները, հազվադեպ երեւոյթ լինելով ոչ միայն Հայոց, այլև համաշխարհային պատմության մեջ, վկայում են նրա մոտ պետական մտածողության եւ միապետի դերի գիտակցության իսպառ բացակայության մասին: Չկարողանալով վերջնական ընտրություն կատարել աշխարհական եւ կրօնավորական կոչումների միջեւ, նա այդպես էլ ի վիճակի չեղավ լիարժեք կերպով ծառայելու ո՛չ պետությանը, ո՛չ էլ եկեղեցուն: Այս կապակցությամբ ուշագրավ է Մ. Օրմանյանի հետեւյալ տարողունակ դիտարկումը. «Բոլորովին տարօրինակ, եւ գրեթէ անմեկնելի նկարագիր մը կը ներկայանայ Հեթում Բ, որ ոչ վանական փափաֆէն կը հեռանայ, ոչ կրօնաւորական կոչումէն կը հրաժարի, ոչ ալ Փրանկիսկեան սէմը կը թողու, եւ միշտ ալ զինուորական եւ պետական հոգերով կը զբաղի, ոչ զէնքը կը թողու եւ ոչ ալ արհունի մականը, ոչ թագաւորութենէն ձեռք կը քաշէ, եւ ոչ կատարելապէս եւ տիրապէս կը վարէ զայն»¹⁸⁰:

Երկրի շահի գիտակցություն ունենալու պարագայում Հեթումը պարտավոր էր կա՛մ վճռականորեն տեր կանգնել գահին, կա՛մ էլ օրինական կարգով այն զիջել իր եղբայրներից մեկին: Չանելով ո՛չ մեկը, ո՛չ էլ մյուսը, նա անդարմանելի հարված հասցրեց պետական հաստատությունների հեղինակությանը, ինչից շհապաղեցին օգտվել նրա իշխանատենչ հարազատները: Ներքին երկպառակություններից թուլացած պետությունն ի վիճակի չեղավ դիմագրավելու մամլյուֆների օր-օրի ահագնացող հարձակումները՝ կրելով մարդկային, նյութական ու տարածային կորուստներով ուղեկցված ծանր պարտություններ: Տվյալ իրողությունն, ի դեպ, նկատվել է անգամ միջնադարյան հեղինակների կողմից. Կոռիկոսցի պատմիչն, օրինակ, մամլյուֆների 1298 թ. կիլիկյան արշավանքը պատճառաբանում է Հայաստանում ընթացող եղբայրասպան կռիվներով¹⁸¹: Պետական հաստատությունների հեղինա-

¹⁷⁹ Հմմտ. Boase, Cilician Kingdom, p. 29.

¹⁸⁰ Օրմանյան, Ազգապատում, § 1213:

¹⁸¹ Տե՛ս Hayton, Flor, p. 210, 329.

կազրկումից բացի Հեթումը փայայեց նաեւ Հայոց եկեղեցու միասնութիւնը՝ Գրիգոր Անավարզեցի կաթողիկոսի գործակցությամբ անհարկի դավանաբանական եւ ծիսական գիշումներ կատարելով Հռոմեական եկեղեցուն, որոնք հաստատվեցին նրա նախաձեռնությամբ 1307 թ. մարտին գումարված Սսի ժողովում¹⁸²: Նա փաստորեն հիմնադիրը հանդիսացավ դավանաբանական գիշումների գնով Արեւմուտքի աջակցությունն ակնկալող սնանկ ֆաղափականության, որը հայությունը բաժանելով լատինասերների ու ազգայնականների հակամարտ ճամբարների եւ այդու ջլատելով ազգի կենսական ուժերը, աղետալի հետեւանքներ ունեցավ Կիլիկիո Հայոց թագավորության գոյության համար¹⁸³: Կրօնական հողի վրա հայ հասարակության այս ներքին պառակտումը մասնավորապես հրաշալի է ըմբռնել իրադարձություններին ժամանակակից հիշատակագիրներից մեկը, որն այդ առթիվ գրում է. «Եւ քան զայս եւս անմխիթար սուգ, զի մերս ընդ մեզ պատերազմին, ոչ միայն այլասեռ ֆրիստոնեայք վիճին ընդ մեզ վասն հաւատոյ, այլ եւ մեր իսկ թագաւոր եւ կաթողիկոս հանել ջանան զմեզ յաւանդութենէ Սրբոյն Գրիգորի եւ այլոց Սրբոց Հարցն»¹⁸⁴: Մի այլ հեղինակ՝ Գեորգ Սկետացու վարձագիրն, իր հերթին, հուսահատաբար արձանագրում է. «Եւ որ վաղնջուց սկսեալ էր հերձման պատճառն տնարինական բանին մարմնոյ, սկսաւ անել: ...Եւ սուգ ոչ սակաւ զանբիծ հաւատոյս պահաւսն ըմբռնէր, եւ խազմ եւ կազ եւ աւցտումն մի մարմնոյ եկեղեցոյ երեւէր, զի որք ոչն ունէին գիտութիւն եւ պատասխանի բանիւ, իբր թշնամիք միմեանց ներհակ լինէին, եւ իմաստունքն բանիւն ի պայքար մտեալ, ֆարինս անիծից միմեանց մղէին: Վասն որոյ տազնապ մեծ եւ մարտ սաստիկ երեւէր ամենայն անձին»¹⁸⁵:

¹⁸² Սսի 1307 թ. եկեղեցական ժողովի գումարման հանգամանքների եւ կայացրած որոշումների մասին մանրամասն տե՛ս Պալճյան, Պատմութիւն, էջ 63–65, 273–281; Օրմանյան, Ազգապատում, § 1230–1235; Bundy, The Council of Sis, p. 47–56; Bundy, The Trajectory, p. 79–81; Սղյուզյան, Մովսէս Երզնկացի, էջ 34–41:

¹⁸³ Հեթումի կրօնական քաղաքականության մասին տե՛ս Մանանդյան, Քննական տեսություն, հտ. 3, էջ 321; Bundy, Geörg Skewtaci, p. 499–501; Mutafian, Hét'oum II, p. 279–280.

¹⁸⁴ Պողարյան, Յուցակ, հտ. 4, էջ 537:

¹⁸⁵ Բազդասարյան, Գեորգ Սկետացու վարքը, էջ 422:

Իր աշխատության շարունակության մեջ, կրկին անդրադառնալով այդ խնդրին, նույն հեղինակն ավելացնում է. «Բայց եկեղեցի մնաց դեղեպ էլ յերկուս հատեալ: Եւ ոչ ոք էր, որ սպեղանի դնել կարէր, զի ամենեփին մարմնոյ ծառայք էին եւ ոչ աստուծոյ»¹⁸⁶: Իսկ խնդրի հարուցած բուռն կրֆերի մասին սպառիչ պատկերացում կարելի է կազմել Ստեփանոս Օրբելյանի հետեյալ պերնախոս հայտարարությունից. «Հաւան եմք մեք ընդ մեր հարսն ի դժոխս իջանել, եւ ո՛չ ընդ Հոռոմոց յերկինս ելանել»¹⁸⁷: Ցավալին այն է, որ Հեթումի որդեգրած այս արատավոր ֆաղափականությունը շահամանափակվեց իր ժամանակով, այլ ավանդույթի վերածվելով, շարունակվեց նաեւ նրա հաջորդների օրոք:

Հարկ է նշել, սակայն, որ Հեթումի այս խիստ բնութագիրն ակնբախտեն հակասում է միջնադարյան աղբյուրներում ներկայացված նրա անհամեմատ ավելի դրական կերպարին: Հակասությունը բացատրվում է նրանով, որ ժամանակակիցների մոտ Հայոց թագավորի բարի համբավի ձեւավորմանը նպաստել են՝ նրա կրոնավոր լինելու հանգամանքը, մոնղոլներից հայ եւ օտար եկեղեցիների համար ազատություններ ձեռք բերելու երախտիքը¹⁸⁸, եւ Ասորիքում ու Սուրբ Երկրում նրա գործած սխրանքներին վերաբերող առասպելները¹⁸⁹: Գրված լինելով հա-

¹⁸⁶ Անդ, էջ 430:

¹⁸⁷ Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 207: Ուշագրավ է, որ հարյուր հիսուն տարի անց հուլն-լատին եկեղեցական միութեան առիթով մտաւորապես նույնը պիտի կրկնէր Բյուզանդիայի առաջին նախարար եւ մեզագործս Լուկաս Նոտարասը, ասելով. «Ավելի լավ է սուլթանի շալման, քան կարդինայի խույրը»։ Runciman, Constantinople, p. 21. Հմմտ. նաեւ՝ Բարթիկյան, Հետազոտություններ, հտ. 1, էջ 691:

¹⁸⁸ Խոսքը վերաբերում է 1295 թվականին Ղազան խանի կողմից քրիստոնեական եկեղեցիներին վերաշնորհված ազատություններին, որոնք հայ թե օտար աղբյուրներում միահամուռ կերպով վերագրվում են Հեթումի միջնորդությունը. տես Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 773; Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն, հտ. 2, էջ 222; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 164; Անանուն Սեբաստացի, Տարեգրութիւն, էջ 150; Սարգիս Պիժակ, Ժամանակագրութիւն, էջ 106; Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 220; Պողարյան, Ժամանակագրութիւն, էջ 262; Barhebraeus, Chronicon, p. 595; Bar Hebraeus, Chronography, p. 506.

¹⁸⁹ Տե՛ս Ներսէս Պալիանէնց, Ժամանակագրական հատվածներ, էջ 183, 185–186; Յովհաննէս Դարդեկ, Ժամանակագրութիւն, էջ 20–21:

մարյա բացառապես հոգեւորական հեղինակների կողմից՝ այդ աղբյուրները զանց են առնում Հեթումի ֆաղափական գործունեությունը, շեշտը դնելով հատկապես նրա Բրիտանական առաքինությունների վրա: Ընդ որում, հիշատակագիրները նրան մեծարում են ոչ միայն բոլոր թագավորներին հատկացվող ընդհանուր բնույթի պատվանուններով, ինչպես, օրինակ, «աստուածապաշտ», «աստուածասէր», «բարեպաշտ», «Բրիտոսասպակ», «Բրիտոսասէր» եւ այլն, այլեւ որոշակիորեն անձնավորված որակումներով, նրան կոչելով՝ «խաղաղարար եւ բարեհամբաւ արքայորդի»¹⁹⁰, «յոյժ հոետորական եւ գիտնական Հին եւ Նոր կտակարանաց»¹⁹¹, «կրօնատու սփանչելի»¹⁹², «արի եւ արթուն թագաւոր»¹⁹³, «աստուածազարդ եւ հանճարաշատ թագաւոր»¹⁹⁴, «բարեբարոյ եւ հեզհոգի»¹⁹⁵: Աղբյուրների մի յուրահատուկ խմբում, որի կազմի մեջ մտնում են Գրիգոր Անավարզեցու «Առ Հեթում» նամակը, Սսի 1307 թ. եւ Ադանայի 1316 թ. ժողովների արձանագրություններն ու նրանց կցված պատմական գրությունները, Հեթումը բազմիցս օժտված է նաեւ «թագաւորահայր» տիտղոսով¹⁹⁶, ինչն առաջին հայացքից անհերքեթ է թվում, քանի որ նա ամուսնի էր եւ անզավակ: Սակայն, անկասկած, այստեղ նկատի է առնված Լեւոն Դ (III) թագավորի հոգեւոր հայրը եւ խնամակալը լինելու նրա պարագան¹⁹⁷: Նույն աղբյուրներում Հեթումին հատկացված են նաեւ «աւագ պարոն ամենայն Հայոց» եւ «պարոնաց պարոն» տիտղոսներ¹⁹⁸:

Միջնադարյան հուշարձաններում հանդիպում են նաեւ Հեթումին վե-

¹⁹⁰ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 660:

¹⁹¹ Անդ, էջ 730:

¹⁹² Անդ, էջ 742:

¹⁹³ Անդ, էջ 773:

¹⁹⁴ Անդ, էջ 788:

¹⁹⁵ Անդ, էջ 822:

¹⁹⁶ Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն, էջ 435, 451, 452, 458, 467, 473. նույնը՝ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №. 2037, էջ 136ա, 138բ, 139ա, 141ա, 141բ:

¹⁹⁷ Ինչպես գրում է Մ. Օրմանյանը, Հեթումի պարագայում այդ տիտղոսը «պետք է իբր պատուակալ թագաւորահայր իմանալ»: Օրմանյան, Ազգապատում, § 1222:

¹⁹⁸ Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն, էջ 435, 467, 469. նույնը՝ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №. 2037, էջ 136ա, 141ա:

րաբերող ավելի ճոռում եւ շափազանցված բնութագրականներ: Այսպէս, Աղանայի 1316 թ. ժողովի արձանագրության հեղինակը նրան կոչում է «Քրիստոսազգեաց կրօնատուր... որ էր ըստ իշխեցողութեան պատուոյ տէր Հայոց եւ թագատրահայր»¹⁹⁹: Հիշատակագիրներից մեկը նրան բնութագրում է «թագատուր Հայոց Մեծաց երիցս երանեալ եւ խարազանազգեաց նզնատուր կրանատուր մեծն Հեթում» բառերով²⁰⁰, իսկ մի ուրիշը նրան համեմատում է նույնիսկ Քրիստոսի հետ. «Եւ էր... յաթոռ թագատուրութեան Հայոց սուրբն Հեթում, որում ոչ ոք համեմատ ի թագատուրս, բայց Քրիստոս միայն»²⁰¹: Միայն Գեորգ Սկեւոացու վարբի հեղինակն է, որը, լինելով հակամիարարական շարժման երդվյալ զինվորագիրներից մեկը եւ այդու խտորեն դատապարտելով Հեթումի լատինասիրական ֆաղափականությունը, նրան որակում է «հերետիկոս», «ստախսա», «անմիտ», «լիբ», «անամար», «կոյր» եւ «ողորմելի» մականուններով²⁰²: Վարագիրն անգամ զլանում է Հեթումին հատկացնել «թագատուր» տիտղոսը՝ նրան արհամարհանձնով կոչելով «իշխան», «տէր աշխարհին» կամ «նա որ տիրէն աշխարհին»²⁰³, ինչն աչֆի է զարնում մանավանդ այն պատճառով, որ վարում հիշված Կիլիկիո մնացյալ բոլոր զահակալները՝ Հեթում Ա-ը, Լեւոն Գ (II)-ը, Լեւոն Դ (III)-ը եւ Օշինը, առանց բացառության, օժտված են այդ տիտղոսով²⁰⁴: Ինչեւիցե, այս ամենն արձանագրելով հանդերձ, հարկ ենք համարում նշել, որ, թեեւ փոխաբերական իմաստով, իր մասին ամենաճշգրիտ բնորոշումը տվել է հենց իմքը Հեթումը.

Հեթում անուամբ լոկ թագատուր,
 Ներհո աղատ եւ պարտաուր,
 Քանզի կոչիմ իշխան Հայոց,
 Բայց ես իշխիմ յախտից իմոց²⁰⁵:

¹⁹⁹ Կղեմէս Գաղանոս, Միաբանութիւն, էջ 475:

²⁰⁰ Խաչիկյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 24:

²⁰¹ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 772:

²⁰² Բաղդասարյան, Գեորգ Սկեւոացու վարբը, էջ 426, 428, 430:

²⁰³ Անդ, էջ 425, 426, 428, 430, 431:

²⁰⁴ Անդ, էջ 412, 415, 421, 431:

²⁰⁵ Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 744:

ՕՇԻՆ ԹԱԳԱՎՈՐ (1308–1320 թթ.)

Լեոն Դ (III)-ի եւ Հեթում Բ-ի ողբերգական մահից հետո Հայոց գահն անցավ վերջինիս հաջորդ եղբորը՝ Օշինին: Նրա առաջին գործը եղավ Բիլարղուին Կիլիկիայից վտարելը, ինչի մասին վկայում է Սամուել Անեցու շարունակողը: Նախախնամության շնորհ համարելով այն, որ Հեթումը Բիլարղուի հետ հանդիպմանը մասնակից չէր դարձրել նաեւ իր եղբորը, ժամանակագիրը գրում է. «Քայց ի խնամոցն Աստուծոյ ոչ տարաւ ընդ իւր զեղբայրն իւր զՕշինն, որ իբրեւ լուաւ զեղեալսն, իսկոյն եկն ի բերդն Սըսայ, եւ ժողովեաց զմնացեալ իշխանսն եւ զօրս բազումս, եւ մարտուցեալ ընդ պղծոյն, եհան յերկրէն»¹: Սրանից որոշ

¹ *Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 156: Օշինի գերծումը Բիլարղուի սպանդից շատ ավելի պատկերավոր է նկարագրված Սսի 1307 թ. ժողովի արձանագրությանը կցված պատմական տեղեկանքում. «Անհնարին աղէտիւքս այս վանեալ էաք ի խոր խաւարի, եւ ի գիշեր տըրտմութեան պաշարեալ՝ ոչ մնայաք խաղաղութեան լուսոյ: Եւ մինչ ի յայս էաք, անյոյս լեալ ի մարդկանէ, եւ առ Աստուած միայն ապաւինեալք եւ յօգնականութիւն սըրբուհոյ Աստուածածնին, որ ոչ ի սպառ բարկացաւ, այլ ետ մեզ ճիռ օրհնութեան՝ զգաւակն բարի, զեղբայրն թագաւորահօրն Հեթմոյ, զարքայն Օշին, զի մի՛ իբրեւ զՍողոմ լիցուք եւ Գոմոռոյ նմանեսցուք: Վասն որոյ եւ կըրսեր գոլով նա ի յեղբայրս իւր, խորհրդեամբ էառ զօրհնութիւն հայրենի... եւ ծագեաց իբր արեւ արեգական ի տըրտմութեան գիշերի, եւ գարուն զարթարար կապանաց ձմեռան: Եւ որչափ առաւել տրտմեցաք ընդ վշտին, նա եւս կրկնապատիկ ուրախացաք ընդ լուծումն նորին».* *Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն, էջ 473. նույնը՝ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. Թ. 2037, էջ 141բ: Թերեւս ավելորդ չէ նշել, որ Սողոմ-Գոմորի նմանվելու պատկերը հեղինակն, ակնհայտորեն, քաղել է Հովհաննէս արքեպեղբոր հիշատակարաններից. հմմտ. Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 343, 571:*

չափով տարբերվում է «Գործք Կիպրացոց»-ի տեղեկությունը, որի համաձայն՝ Բիլարդուն, Օշինին ու նրա եղբորը՝ Ալինախին ձեռք գցելու անհաջող փորձից հետո, ինքն է թողնում հեռանում Կիլիկիայից. «Երբ (սպանությունը) տեղի ունեցավ, Հեթում թագավորի եղբայրները՝ Օշինը եւ Ալինախը, ամրացան իրենց տեղում եւ բերդում, որից հետո Քաթարները, տեսնելով, որ անկարող են իրականացնել իրենց մտադրությունը, հիասթափված ետ դարձան, մեծ երկյուղ կրելով, որ Ղազանը² կարող է պատժել իրենց»³: Ըստ Ռաշիդեդդինի շարունակողի՝ Բիլարդուն, Լեւոն թագավորի համաձայնությամբ, նախապես 20 մահմեդական զինվոր էր տեղավորել Անավարգայի բերդում, որոնք նրա գործած սպանդի վաղորդայնին, խողխողվել էին հայերի ձեռքով: Դրանից հետո մոնղոլ զորահրամանատարը փորձել էր գրավել ֆաղաբը, բայց ուժեղ դիմադրության հանդիպելով եւ տեսնելով, որ հայերը համալրումներ են ստանում, հեռացել էր Կիլիկիայից⁴: Կարեւոր ենք համարում մեջբերել նաեւ Հովհաննես Դարդեղի վկայությունը, որում, առանց Օշինի եւ Ալինախի անունը տալու, նշված է հետեւյալը. «Եւ եղեւ աղաղակ եւ շփոթ մեծ ի դղեկին⁵. եւ արք թագաւորին փակեցին գոտն դղեկին, փութացան ի գէն եւ յարձակեցան ի վերայ գորականացն հարիւրոց եւ կալեալ զնոսա արկին ընդ պարիսպն գահավէժ. եւ գրոհ տուեալ ի բերդէն՝ յարձակեցան ի վերայ Բիլարդուի եւ արանց նորա. եւ այնպէս խորտակեցին զնոսա մինչեւ դառնալ նմա ի փախուստ հանդերձ սակատմ. իսկ այլքն կորեան սատակաման կամ վարեցան ի գերութիւն»⁶: Ի դեպ, Բիլարդուին Կիլիկիայից վտարելու փաստը եւս մեկ անգամ ապացուցում է, որ նա Ստում տեղակայված մոնղոլական կայագործի հրամանատարը չէր կարող լինել⁷:

² Հեղինակը սխալմամբ Օլջեյթու խանի (1304–1317 թթ.) փոխարեն դրել է Ղազան խանի (1295–1304 թթ.) անունը:

³ Gestes des Chiprois, p. 867.

⁴ Sté u Dulaurier, Documents Arméniens, p. 549n.

⁵ Հայտնի չէ, թե «դղեակ» ասելով, հեղինակն ի նկատի ունի Սսի, թե՞ Անավարգայի բերդը, որի մոտակայքում էր գործվել Հեթումի եւ Լեւոնի սպանությունը:

⁶ Յովհաննէս Դարդեղ, Ժամանակագրութիւն, էջ 25:

⁷ Նշվեց արդեն, որ, ի տարբերություն Մոնղոլական խանության այլ վասալ պետությունների, Կիլիկիայում երբեք էլ մոնղոլ կառավարիչներ չեն նշանակվել,

Այնուհետև Օշինն իր եղբորն՝ Ալինախին ուղարկեց Օլջեյթու Խուդաբանդա խանի մոտ՝ բողոքելու նրա պաշտոնյայի կատարած ռեազործության առթիվ: Քննելով գործը եւ հիմնավոր գտնելով հայերի գանգատը՝ խանը մահապատժի ենթարկեց Բիլարդուին. «Իսկ յետոյ եղբայր թագաւորիս Հեթմոյ Ալինախ անուն գնաց ի խանն ի գանգատ եւ ետ սպանանել զնոյն Բիլարդուն դատաստանաւ»,— այդ առթիվ գրում է Ներսես Պալիանենցը⁸: «Ի սոյն ամի (1307 թ.) կրսեր եղբայրն պարոն Հեթմոյ՝ տէրն Տարսոնի պարոն Ալինախն, գնաց առ Խարպանտա Խանն, եւ ետ սպանանել զՊիլարդուն, եւ էառ զվճար անմեղացն, եւ դարձաւ առ իւր եղբայրն Օշին»,— երկրորդում է Սմբատ Սպարապետի ժամանակագրության շարունակողը⁹: Այս դրվագն արտացոլված է նաեւ մի քանի օտար աղբյուրներում, մասնավորապէս՝ «Գործի Կիպրացոց»-ում¹⁰ եւ Աբուլֆիդայի¹¹ ու Հովհաննես Դարդելի ժամանակագրություններում: Ամենաընդարձակն ու բովանդակալիցը վերջինիս տեղեկությունն է, որն, ի դեպ, աչի է ընկնում այլուստ անհայտ որոշ մանրամասներով. «Յորժամ Լեւոն Գ սպանաւ նենգութեամբ ի Բիլարդուէ, Ալինախ հօրեղբայրն արհային գնաց առ խանն մեծ պարգեւօք պատուականօք եւ պատարագօք, եւ բողոք կալաւ զԲիլարդուէ, զոր կարծէին եկեալ վասն բարոյ իրիք եւ նորա դաւանանեալ էր զարհայն՝ զորդի եղբօր իւրոյ եւ զաշխարհն համօրէն: Յորժամ լուաւ խանն մեծ զբողոք նորա, ետ կոչել առաջի երեսաց իւրոց զԲիլարդու եւ հաստատեցաւ նենգութիւնն, զոր արարեալ էր նորա. ասէ խանն մեծ ցկլինախ. «Տեսանես, տէր, զթշնամին՝ որ նենգութեամբ դաւանանեաց արհայիդ եւ աշխարհին, ա՛յնպէս որպէս ասացեր, եւ որ չէր եղեալ հանութեամբ մերով: Կամիմք զի մահու մեոցի նա, զի այդպէս կամին արդարութիւն եւ իրաւունք, եւ կամիմք զի աոցես դո՛ւ ինքնին զվրէժ ի նմանէ առաջի մեր եւ բոյով իսկ ձեռամբ սպանցես զնա»: Յայնժամ իշխանն Ալինախ խնդրեաց պաղա-

առավել եւս՝ մոնղոլական կայսրորդներ շէն տեղակայվել:

⁸ Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 188:

⁹ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 127:

¹⁰ Gestes des Chiprois, p. 867–868.

¹¹ Աբուլ-Ֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 246):

տանօք ի մեծէ խանէն զի զԲիլարդուն զայն տացէ սպանանել ի ձեռն այոյ ուրոք: Եւ զայրացաւ ընդ այն խանն մեծ զի ոչ կամէր դառնալ ի բանիցն եւ պնդագոյնս հրամայեաց նմա սատակել զայրն վաղվաղակի: Եւ արար նա այնպէս, եւ լուծեալ վրէժ, դարձ արար ի Հայաստան»¹²:

Հետաքրքիր է նաեւ Հովհաննէս Դարդելի վերը բերված ֆաղվածքի շարունակությունը, որը կարելուորություն է ներկայացնում գահաժառանգության իրավունքի տեսակետից: Վերադառնալով Կիլիկիա, – գրում է ֆրանսիացի ժամանակագիրը, – Ալինախը «եկաց աուրս սակաւս եւ չեւ կապեալ զթագն արֆայական՝ մեռաւ անգաւակ. եւ յետ մահու նորա պսակեցաւ ի թագաւոր Հայոց Օշին»¹³: Ըստ Դարդելի, այսպիսով, Լետն Դ (III) թագավորի սպանությունից հետո Հայոց գահը ժառանգել էր Ալինախը, եւ միայն վերջինիս հանկարծահաս մահվան ու անգավակ լինելու պատճառով էր, որ այն ի վերջո բաժին էր ընկել Օշինին: Ի դեպ, միջնադարյան հեղինակների շարքում միայն Դարդելը չէ, որ այդպես է կարծում: 1308 թվականին ընդօրինակված մի ձեռագրի թվագրման բանաձեւում Օշինը եւ Ալինախը, թեւ դեռեւս ոչ թագավորի կարգավիճակով, ներկայացված են որպէս գահակիցներ. «Գրեցաւ եղանակաւոր տառս ի թուականութեանս Հայոց ՉՄէ, ի պարոնութեանս Հայոց Աւշնի եւ եղբաւր իւրոյ Ալինախի»¹⁴: Իսկ 1310 թվականին գրված մի հիշատակարանում վերջինս արդեն օժտված է «թագաւոր Հայոց» տիտղոսով. «Ի թուականիս Հայոց ՉՄԹ, յաշխարհակալութեան ազգին նետողաց Ղարպանտա ղանին, եւ Հայոց թագաւորութեան Ալինախին»¹⁵: Չենք կարծում, թէ բերված փաստերից պետք է հեռուն գնացող եզրակացություններ անել եւ Ալինախին դասել Կիլիկիո գահակալների շար-

¹² *Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 25–26: Դարդելի վարկածում ուշադրութեան արժանի է երկու հանգամանք՝ առաջին, որ Օլջեյթուի խոստովանութեամբ՝ Հայոց արքայազների դեմ ոճիրը գործվել է հակառակ իր կամքի (որ չէր եղեալ հաճութեամբ մերով), եւ երկրորդ, որ խանը մոնղոլական սովորույթի համաձայն՝ Ալինախին հարկադրել էր իր արյունակիցների վրեժը լուծել սեփական ձեռքերով:*

¹³ *Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 26:*

¹⁴ *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 56:*

¹⁵ *Անդ, էջ 65:*

բը, քանի որ այստեղ մենք գործ ունենք թվականների ակնհայտ շփոթի հետ: Ինչպես տեսանք, ըստ Հովհաննես Դարդելի՝ Օշինը Հայոց զահն ստանձնել է Ալինախի մահից հետո, մինչդեռ հայտնի է, որ վերջինս մահացել է 1309 թվականին¹⁶, իսկ Օշինը՝ թագադրվել է 1308-ին¹⁷: Շփոթքն, ըստ երեւոյթին, առաջացել է Բիլարդուլին մահապատժի ենթարկելու գործում Ալինախի վճռական դերակատարության հանգամանքից, ինչի հիման վրա Դարդելն ու 1310 թ. հիշատակագիրը ենթադրել են, որ այդ ժամանակ նա՝ պետք է եղած լինե՝ Հայոց թագավորը: Չմոռանանք նաեւ, որ Օշինը եւ Ալինախը երկվորյակներ էին, հետեւաբար նրանց պարագայում զահաժառանգության հարցն, ինքնըստիմեյան, որոշակի շփոթ պիտի առաջացներ: «Գործք Կիպրացոց»-ում պահպանված մի ավանդության համաձայն՝ Օշինն իսկապես Ալինախին առաջարկել էր

¹⁶ *Տե՛ս Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 128; Հեթում Նղիրցի, Պատմութիւն, էջ 546: Ալինախի անվան առկայությունն Ադանայի 1316 թ. ժողովի մասնակիցների ցանկում (Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն, էջ 504; Պալէյան, Պատմութիւն, էջ 297), մեր կարծիքով, բացատրվում է նրանով, որ ձեռագրի գրիչը կամ սխալմամբ վերարտադրել է Սսի 1307 թ. ժողովականների ցանկը, կամ էլ դիտավորյալ ավելացրել Ալինախի անունը՝ Ադանայի ժողովի հեղինակությունը բարձրացնելու նպատակով: Թերեւս օգտվելով Ադանայի ժողովի արձանագրությունից, Սամուել Անեցու շարունակողն Ալինախի մահը թվագրել է 1317-ով (Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 156 (տարրնթերցված՝ 1313 թ.): Այդուհանդերձ, կարծում ենք, նախապատվությունը պետք է տալ 1309 թվականին, նկատի ունենալով մանավանդ այն, որ իրադարձությունների ժամանակակիցը՝ Հեթում Նղիրցին, նշում է նաեւ Ալինախի մահվան ամսաթիվը՝ օգոստոս 27 (ըստ մի այլ աղբյուրի՝ օգոստոս 26. Անանուն, Յիշատակք հանգուցելոց, էջ 545): Ալինախի մահվան թվականի մասին հմտ. նաեւ՝ Օրմանյան, Ազգապատում, § 1259; Rüdiger-Collenberg, The Rupenides, III (H2); Stewart, Armenian Kingdom, p. 180, n. 522.*

¹⁷ «Ի թուին 757 (= 1308 թ.) օծեցին թագաւոր Հայոց զՕշին ի Տարսուս քաղաք». *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 127: «ԶՄէ (= 1308 թ.) թագաւոր Օշինն՝ որդի թագաւորին Լեւոնի Մեծի, եղբայրն Հեթմոյ, օծեալ ի մայրաքաղաքն Տարսուս».* *Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 156: «Օծմամբ Սուրբ Հոգոյն օծաք զնա թագաւոր ի թվին Հայոց ԶՄէ (= 1308 թ.). Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն, էջ 473. նաեւ՝ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. Թ. 2037, էջ 141բ: Օշինի գահակալումը նույն տարով է թվագրում նաեւ Արուիֆիդան. տես Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 246:*

ստանձնել թագավորությունը, սակայն վերջինս մերժել էր, ասելով, որ այդ պատիվը պատկանում է, նրան, քանի որ նա առաջինն է լույս աշխարհ եկել իրենց մոր արգամնից¹⁸: Ուշագրավ է, որ այդ անանուն ժամանակագրության հեղինակն Ալինախի արարքը գնահատել է որպես վերջինիս կողմից դրսևորված հարգանքի նշան գահաժառանգության իրավունքի սկզբունքների հանդեպ, այդ կապակցությամբ գրելով հետևյալը. «Ալինախը հարգանք դրսևորեց հավատարմության եւ ողջամտության հանդեպ» (Alinah ...regarda a liauté et a raison)¹⁹: Այս խոսքերի տակ, անշուշտ, պետք է հասկանալ գահաժառանգության գլխավոր սկզբունքի՝ ավագության իրավունքի ճանաչումը:

«Գործք Կիպրացուց»-ում պահպանվել է նաև Օշինի գահակալման օրինականությանն առնչվող մի այլ թանկարժեք վկայություն²⁰: Նրա հեղինակը, նախ հիշեցնելով, որ Օշինն ուներ եւս երկու եղբայր, որոնք գտնվում էին Կոստանդնուպոլսում, ավելացնում է, որ նրանցից մեկը՝ Կոստանդինն, արդեն վախճանվել էր²¹, իսկ մյուսը՝ Սմբատը, լսելով Հեթումի մահվան լուրը, փութով ժամանել էր Կիլիկիա ու, բանեցնելով ավագության իր իրավունքը, Օշինից պահանջել՝ իրեն հանձնել Հայոց գահը: Վերջինս դրան պատասխանել էր հետևյալ կերպ. քանի որ Սմբատը կուրացրել էր թագավորին, որն իր եղբայրն ու տերն էր, եւ խեղդամահ էր արել իր մյուս եղբորը, ուստի այդ արարքով նա դավաճան էր դուրս եկել, եւ որպես այդպիսին, ըստ օրենքի, չէր կարող տիրել երկրին: Ստանալով այդ պատասխանը՝ Սմբատը, ճարահատյալ, ճանապարհվում է դեպի Կիպրոս, այնտեղից Կոստանդնուպոլիս վերադառնալու նպատակով: Սակայն Օշինը, ճենովացի նավավարների օգնությամբ, բռնել է տալիս նրան եւ, Կիլիկիա բերելով, բանտ նետում: Այս փաստը հաստատում է նաև Սամուել Անեցու շարունակողը՝ 1311

¹⁸ Gestes des Chiprois, p. 867.

¹⁹ Անդ: Raison բառը կարելի է թարգմանել նաև՝ իրավունք, արդարություն:

²⁰ Անդ, էջ 868–869: Հմմտ. Stewart, Armenian Kingdom, p. 179–180.

²¹ Հստ Ռուդ-Կոլենբերգի՝ Կոստանդինը մահացել է 1308 թվականից հետո. տե՛ս Rüdtt-Collenberg, The Rupenides, III (H2). Սակայն «Անդրծովյան արքայատոհմերի» գավազանացանկի համաձայն՝ դա տեղի է ունեցել ավելի վաղ, ևեւոն Գ (III)-ի գահակալումից առաջ. տե՛ս Lignages d'Outremer, p. 93.

թվականի տակ կատարելով հետեւյալ հակիրճ նշումը. «ՌՅԺԱ. Եկն Սմբատ ի Կիլիկիէ, եւ եղին ի Դղեկին»²²: Ալինախի մահից հետո, սակայն, — շարունակում է «Գործք Կիպրացոց»-ը, Օշինը Սմբատին հանում է բանտից եւ վենետիկցի նավավարների միջոցով ուղարկում Կիպրոս, բայց տեղ չհասած, վերջինս մահանում է հանկարծահաս հիվանդություներից: Սամուելի շարունակողը Սմբատի մահը, կամ ավելի ճիշտ՝ սպանությունը, թվագրում է 1312 թվականով. «ՌՅԺԲ. Ի սադրելոյ իշխանացն կորուսին զՍմբատ»²³: «Գործք Կիպրացոց»-ի վերը շարադրված ընդարձակ վկայության մեջ մեզ ուշագրավ է թվում մանավանդ Օշինի խոսքի այն հատվածը, որ գահաժառանգության իրավունքը չէր տարածվում դավաճանի (իմա՝ բռնազավթչի) վրա, անգամ նրա ավագ լինելու պարագայում:

Օշինի գահակալման հանգամանքների բնությունն ամբողջացնելու առումով անհրաժեշտ է պարզել նաեւ, թե արդյո՞ք նա մոնղոլներից իշխանության տվչություն ստացել էր, թե ոչ: Ռաշիդեղդինի շարունակողի տվյալներով²⁴, Հէթում Բ-ի եւ Լեւոն Դ (III)-ի սպանությունից հետո ոչ թե Ալինախը, այլ Օշինն ինքն էր ուղեւորվել Պարսկաստան՝ բողոքելու Օլջեյթու խանին: Ու թեեւ ճանապարհին, Սեբաստիա փաղափում, նա ընկել էր Բիլարդուի ձեռքը, բայց անմիջապես ազատ էր արձակվել Ռումի երկրի մոնղոլ կուսակալ Իրանջինի կարգադրությամբ²⁵, որից հետո վերջինս այդ առթիվ պաշտոնական զեկուցագիր էր ուղարկել Իլ-խանների արժունիք: Երկու կողմերի մասնակցությամբ տեղի ունեցած դատավարության արդյունքում Բիլարդուն սկզբում արդարացվել էր, սակայն որոշ ժամանակ անց նրա թշնամիների կամ իր հակառակորդի (Օշինի) կողմից գնված մարդկանց ջանքերով զրկվել էր խանի բարե-

²² Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 166: «Դղեկ» բառի տակ հեղինակն, ըստ երեւույթի, նկատի ունի Սաի բերդը: Տե՛ս նաեւ՝ Պողարյան, Ժամանակագրութիւն, էջ 264:

²³ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 166:

²⁴ Dulaurier, Documents Arméniens, p. 549n.

²⁵ Իրանջինը հայտնի էր իր քրիստոնեասիրութեամբ. մասնավորապես նա էր, որ խափանել էր Թավրիզի Կաթողիկե եկեղեցին մզկիթի վերածելու փորձերը. նրա մասին տե՛ս Roux, L'Empire Mongol, p. 436, 583. հմմտ. նաեւ՝ Cahen, Pre-Ottoman Turkey, p. 301–302.

հանությունից ու մահվան դատապարտվել: Եթե պարսիկ պատմիչի այս տեղեկությունն իսկապես համապատասխանում է իրականությանը, ապա բացառված չէ, որ Օշինն այդ ժամանակ էլ մոնղոլ խանից ստացած լինե՞ր Կիլիկիայում գահակալելու իրավունքը: Արաբ ժամանակագիրներ Ալ-Մաֆրիզին եւ Ալ-Այնին, շիրթելով անունները, տեղեկացնում են, որ Բիլարդուի ոճրագործությունից բողո՞ւելու համար Օլջեյթուի արժունի՞ք այցելողը Հեթումի եղբայր Լեունն էր, որին էլ խանը Սսի տեր էր կարգել եւ ուղարկել իր երկիրը²⁶: Ա. Դ. Ստյուարտի կարծիքով՝ Լեուն անվան տակ արաբ հեղինակները նկատի ունեն Ալինախի անձը²⁷: Սակայն քանի որ հայտնի է, որ վերջինս Կիլիկիայում չէր գահակալել, ուստի Ռաշիդեդդինի շարունակողի վարկածն անհավանական չպետք է համարել: Թեպետ բացառված չէ նաեւ, որ Օլջեյթուն իշխանության տվչությունն Օշինին փոխանցած լինե՞ր Ալինախի միջոցով, այն պայմանով, որ հետագայում նորընծա թագավորն անձամբ ներկայանար իրեն եւ ստանար Հայոց գահին տիրելու իրավունքը:

Օշին թագավորի արեւելք կատարած մի այլ ճանապարհորդության մասին տեղեկացնում է Սամուել Անեցու շարունակողը. «ՌՅԺԳ (= 1313 թ.). գնաց Օշինն յարեւելք, եւ վասն ջրոյ²⁸ ասաց ժողով լինել, եւ ոչ եկին»²⁹: Ըստ Մ. Չամչյանի՝ Մեծ Հայք կատարած այդ այցելությանը, որը նա թվագրում է 1309 թվականով, Օշինը նպատակ էր հետապնդում համոզել բուն Հայաստանի եկեղեցականներին՝ ընդունել եւ վերահաստատել 1307 թ. Սսի ժողովի որոշումները. «Եւ ինքն գնացեալ

²⁶ *Stewart, Armenian Kingdom*, p. 177–179.

²⁷ Անդ, էջ 178: Սակայն անկախ անունների շփոթությունից, կարելւորն այն է, որ արաբական աղբյուրները շեշտում են մոնղոլական խանից Հայոց թագավորի տվչություն ստանալու փաստը. «Լեւոնին Սսի տեր (mutamallik) կարգեց եւ ուղարկեց այնտեղ» (Ալ-Մաֆրիզի); «Սսի տիրոջը հաստատեց իր թագավորությունում եւ ուղարկեց իր երկիրը» (Ալ-Այնի):

²⁸ Հեղինակը նկատի ունի պատարագի գինու գավաթի մեջ ջուր խառնելու խնդիրը, որի մասին որոշում էր կայացվել 1307 թվականի Սսի ժողովում. հմմտ. Սրմայան, *Ազգապատում*, § 1233, 1255:

²⁹ Սամուել Անեցի, *Հաւաքմունք*, էջ 166: Տե՛ս նաեւ՝ *Պողոթյան, Ժամանակագրութիւն*, էջ 264:

ի կողմանս Բաղիշոյ՝ հրաման եհան ժողովի անդր եպիսկոպոսաց եւ վարդապետաց, զի վերստին լիցի քննութիւն ի վերայ կանոնաց ժողովոյն Ստոյ, եւ որոշեսցի թէ զինչ պարտ իցէ առնել»³⁰: Դժվար է պատկերացնել, որ Հայոց թագավորն, առանց մոնղոլական խանին ներկայանալու, կարող էր ազատ-համարձակ շրջել նրա տիրույթներում եւ նույնիսկ բանակցություններ վարել տեղի հոգեւորականների հետ: Հետեւաբար, պետք է ենթադրել, որ Բաղեշի կողմերով Օշինն, ամենայն հավանականությամբ, անցել է Իլ-խանների արհունիք³¹ կատարած ուղեւորության կամ ետդարձի ճանապարհին: Որքան էլ կրօնական հարցը թագավորի համար կարեւոր լինէր, հազիվ թէ այդ նպատակով նա դեպի Մեծ Հայք հատուկ այցելություն ձեռնարկէր³²: Մինչդեռ մոնղոլ խանի արհունիք կատարած այցելության եւ ճանապարհին հայ եկեղեցականների հետ կայացած հանդիպման համատեղումը միանգամայն բացատրելի է դարձնում եղելությունը:

Օշինի գահակալության տասներեք տարիները համեմատաբար խաղաղ եղան Կիլիկիո թագավորության համար: Մամյուրյան ավերիչ ասպատակությունների ժամանակավոր դադարի շնորհիվ երկիրը, կարծես, շունչ փառելու եւ նախկին բարօրությունը վերականգնելու հնարավորություն էր ստացել: Այս նավահանգիստը շարունակում էր կարեւոր դեր խաղալ միջազգային առեստրի բնագավառում, ինչի մասնավոր վկայությունն է Օշին թագավորի 1314 թ. հունվարի 7-ի հրովարտակը՝ Մոնպելյեցի վաճառականներին շնորհված արտոնությունների մասին³³: Արտաքին հարաբերություններում միակ լարվածությունն առաջացել էր Կիպրոսի թագավորության հետ: Ինչպես տեսանք սույն աշխատության

³⁰ *Չամչյան, Պատմութիւն, հտ. 3, էջ 312:*

³¹ *Իլ-խան բառը, որը նշանակում է «մեծ խանի հնազանդյալ կամ ենթակա» (Босворт, Династии, с. 201), մենք այստեղ օգտագործում ենք պայմանականորեն, քանի որ Ղազան խանի գահակալումից (1295 թ.) ի վեր Հուլավյանները, մահմեդականություն ընդունելով, անկախացել էին Մոնղոլական մեծ խանությունից ու հրաժարվել այդ տիրոջուհից: Այդ մասին մանրամասն տե՛ս Allsen, Mongol Eurasia, p. 31–32.*

³² *Հմմտ. Օրմանյան, Ազգապատում, § 1253:*

³³ *Տե՛ս Langlois, Cartulaire, p. 178–179.*

առաջին հատորում³⁴, 1306 թվականին, գահընկեց անելով իր եղբոր՝ Կիպրոսի թագավոր Հենրի II-ին, Տյուրոսի տիտղոսակիր իշխան Ամորի Լուսինյանն իրեն հուշակել էր այդ երկրի կառավարիչ եւ որոշ ժամանակ անց իր բոլոր ախոյաններին, այդ թվում Հենրիին, ախորել Կիլիկիա՝ նրանց հանձնելով Օշինի հսկողությանը: Դա բացատրվում է այն հանգամանքով, որ Ամորին, ամուսնացած լինելով վերջինիս քոջ՝ Զապելի կամ Իզաբելի հետ, ի տարբերություն իր եղբոր, բարեկամաբար էր տրամադրված Կիլիկիո թագավորության նկատմամբ³⁵: Որոշ հետազոտողներ նրա իրականացրած հեղաշրջման ետետում նույնիսկ հայկական հետք են ենթադրում, նկատի ունենալով թե՛ նրա կնոջ հնարավոր ազդեցությունը, թե՛ Կոռիկոսի իշխան Հեթումի եւ Ամորիի մտերմությունը³⁶: Սակայն 1310 թվականին Ամորին սպանվեց դավադիրների ձեռով, եւ Հենրին, Օշինի հարուցած որոշ խոչընդոտներից հետո վերադարձավ Կիպրոս, դրա դիմաց ազատ արձակելով Զապելին, որն իր վեց երեխաների հետ շուտով տեղափոխվեց Կիլիկիա: Հենրին չներեց Օշինի թշնամանքը, եւ նրա գահակալության երկրորդ շրջանը նշանավորվեց հայ-կիպրական երբեմնի ջերմ հարաբերությունների փչացմամբ: 1318 թվականին նույնիսկ փոքր բախումներ տեղի ունեցան երկու թագավորությունների միջեւ, որոնք դադարեցին միայն Հովհաննես XXII պապի միջամտության

³⁴ *Տե՛ս Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 120–122:*

³⁵ Ավելորդ չէ հիշեցնել, որ Ամորիի դուստրերից մեկն էլ ամուսնացել էր Լեոն Դ (III) թագավորի հետ:

³⁶ Հմմտ. *Mutafian, Le royaume*, p. 77; *Mutafian, Recherches*, p. 106. Կինելով Ամորիի ամենավստահելի անձը, Հեթում Կոռիկոսցին, հեղաշրջումից անմիջապես հետո նրա կողմից գործուղվեց Արեւմուտք՝ Հոռմի պապի օրհնությանը օրինականացնելու իշխանության բռնազավթումը: Հաջողությամբ իրականացնելով իր առաքելությունը, երկու տարի անց նա վերադարձավ Կիպրոս: Բացի այդ առաքելությունից, Հեթումի դեսպանագնացությունն ունեցավ նաեւ մի ուրիշ նշանակալից արդյունք. 1307 թվականին Ավինյոնում նա թելադրեց եւ Կղեմես V պապին հանձնեց իր «Արեւելքի պատմության ծաղկաքաղ» վերնագիրը կրող հայտնի աշխատությունը: Ըստ մի այլ վարկածի՝ Հեթումին Արեւմուտք էր գործուղել Օլջեյթու խանը. տե՛ս Boyle, *The Mongol Empire*, p. XIII. 563. Հեթում Կոռիկոսցի պատմիչի մասին մանրամասն տե՛ս Bundy, *Hetum's La Flor*, p. 223–235; *Mutafian, Hethoum de Korykos*, p. 157–176; *Զուլայան, Պատմության հարցերը, էջ 77–82:*

շնորհիվ: Հայ-կիպրական կնճիոր վերջնականապես հարթվեց միայն նրա գլխավոր դերակատարների՝ Օշինի եւ Հենրի II-ի մահից հետո³⁷:

Միջազգային փչ թե շատ տանելի իրադրության համեմատ ավելի բարդ էր Կիլիկիո Հայոց թագավորության ներքին կացությունը: Շարունակելով Հեթում Բ-ի որդեգրած արեւմտամետ ֆաղափականությունը՝ Օշինը ձգտեց ամեն գնով կյանքի կոչել 1307 թ. Սսի ժողովի որոշումները³⁸, որոնցով, ինչպես ասվեց, Հայոց եկեղեցին լուրջ դավանաբանական եւ ծիսական զիջումներ էր անում Հռոմեական եկեղեցուն, նանաչելով նրա գերակայությունը: «Եւ զի խմորեալ էր եւ արբեալ եղկելիս այս եւ նոր թագաւորս Աւշին, յայտնեաց զդժնեայ թոյնս դառն ամին», - այդ առթիվ գրում է Գեորգ Սկեւոացու վարքի հեղինակը³⁹: Ըստ այդմ, Օշինն ավելի եւս խորացրեց հայ հասարակության ներքին պառակտումը՝ չխորշելով անգամ եկեղեցական միության հակառակորդների դեմ բռնություններ գործադրելուց: 1309 թվականին, օրինակ, նա դաժանորեն ճնշեց հայ ավանդապաշտների կողմից Սսում հրահրված մի խռովություն, ինչի մասին մանրամասնորեն տեղեկացնում է Սամուել Անեցու շարունակողը. «Ի ԶՄԸ թվին ժողովեցան ի մայրաֆաղաֆն Սիս բազմութիւն արեղայից եւ կրօնաւորաց եւ սարկաւագաց, որք բնակեալ էին ի վանք եւ յանապատս՝ ծերք եւ տղայք, այլեւ վարդապետք եւ եպիսկոպոսք, եւ բազմութիւնք ժողովրդոց՝ արանց եւ կանանց, վասն ոչ առնլոյ յանձն արկանել չուր ի սուրբ խորհուրդն, եւ վասն այլ եւս նորածե օրինացն. զոր թագաւորն Օշին, խորհրդակցութեամբ կաթուղիկոսին եւ իշխանացն, կալեալ զնոսս, եւ զվարդապետսն էարկ ի բանդ ի բերդն, եւ եսպան յարանցն եւ ի կանանց զբազումս, եւ ի կրօնաւորացն սակաւ ինչ: Իսկ զարեղայսն էարկ ի նաւ եւ առաֆեաց յաֆսորս ի Կիպրոս կղզին⁴⁰, եւ բազումք անդ մեռան. եւ ժողովեալքն յայն այնպէս

³⁷ Ամորիի հեղաշրջման եւ ժամանակի հայ-կիպրական հարաբերությունների մասին մանրամասն տես՝ Edbury, Cyprus, p. 113-135.

³⁸ Հմմտ. Բակուրան, Մի տեսութիւն, էջ 31-32:

³⁹ Բաղդասարյան, Գեորգ Սկեւոացու վարքը, էջ 431:

⁴⁰ Սրանից պարզվում է, որ Ամորի Լուսինյանի եւ Օշինի միջեւ պայմանավորվածություն էր ձեռք բերվել՝ իրենց քաղաքական հակառակորդներին փոխադարձաբար աքսորելու Կիպրոս եւ Կիլիկիա:

վճարեցան»⁴¹: Ըստ երեսույթին, Արեւմուտքի հետ Կիլիկիայի կապերը սերտացնելուն էր միտված նաեւ Օշինի ամուսնությունը Սիցիլիայի թագավոր Ռոբերտի զարմուհու՝ Յովհաննայի հետ (1316 թ.)⁴². նրա առաջին կինը՝ Զապելը, որը Հեթում Կոռիկոսցի պատմիչի դուստրն էր եւ ապագա Լետոն Ե (IV) թագավորի մայրը, մահացել էր 1310 թվականին⁴³: Եկեղեցական միության հակառակորդների դիմադրությունը վերջնականապես կոտրելու նպատակով Օշինը 1316 թվականին, Հոռմի նորընտիր պապ Հովհաննէս XXII-ի հորդորով, Ադանա ֆաղաֆում մի նոր ժողով գումարեց, որը, սակայն, Սսի ժողովի որոշումներն ձեւականորեն վերահաստատելուց բացի, որեւէ գործնական արդյունք չունեցավ⁴⁴:

Հակառակ իր ծայրահեղ լատինասիրական ֆաղափականությանը՝ Օշինը բարի համբավ է վայելել ժամանակակիցների միջավայրում, ինչի մասին վկայում են ձեռագրական հիշատակարաններում նրան ընծայված բազմաթիվ պատվանուններն ու դրվատական բնութագրումները: Այս առումով ուշագրավ է հատկապես հետեյալ հիշատակարանը, որում, նշվածից բացի, առկա է նաեւ նրա օրոք Կիլիկիայի վայելած խաղաղության փաստի արձանագրումը. «Ի թուականութեանս Հայոց մեծաց ԶԿ (= 1311 թ.), ի հայրապետութեան տեառն Կոստանդեայ Կեսարացոյն, եւ ի թագաւորութեան Աւշնի աստուածասիրի եւ բարեպաշտի, որդոյ Լե-

⁴¹ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 156: Տե՛ս նաեւ՝ Անգ, էջ 165–166: Այս դրվագը, որոշ այլ մանրամասներով, առկա է նաեւ Գեորգ Սկեւոացու վարքում. տե՛ս Բաղդասարյան, Գեորգ Սկեւոացու վարքը, էջ 431–432: Հմմտ. Bundy, *Georg Skewrac'i*, p. 501: Օղլուգյան, Մովսէս Երզնկացի, էջ 44–45: Գոյություն ունեցող մի տեսակետի համաձայն՝ այդ խոսովությունն իրականում Սսի ժողովի ընդդիմադիրներին կողմից կազմակերպված «հակա-ժողով» էր, թեեւ ո՛չ կանոնական ուժ ունեցող. հմմտ. Օրմանյան, Ազգապատում, § 1250; Bundy, *The Trajectory*, p. 82; Օղլուգյան, Մովսէս Երզնկացի, էջ 51:

⁴² Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 128; Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 27:

⁴³ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 128:

⁴⁴ Ադանայի ժողովի մասին մանրամասն տե՛ս Պալեյան, Պատմութիւն, էջ 66–68, 282–298; Օրմանյան, Ազգապատում, § 1253–1257; Զամչյան, Պատմութիւն, հտ. 3, էջ 313–314; Tournebize, *Histoire*, p. 311–317; Bundy, *The Trajectory*, p. 84–85. Օրմանյանի կարծիքով (Ազգապատում, § 1253), ժողովը տեղի է ունեցել 1317 թ. հուլիսի 10-ին:

տնի, որոյ Հեթմոյ, գորարինակ որպէս ի հնումն գԴաւիթ ընդրեաց Աստուած յորդիսն յեսսէ, սայպէս եւ զԱւշինս ի նորումս ընդրեաց ի մէջ եաւրն եղբարց իւր, եւ էաժ թագաւոր տանս Թորգոմայ եւ ազգիս Հայկայ: ... Յոր թէն ոչ արածէր սայ զխաշինս հաւրն, որպէս գԴաւիթ, բայց զաւծումն եւ զթագն ընկալաւ յԱստուծոյ, եւ խաղաղութեամբ արածէ զբանաւոր հաւտս Հայոց ազգիս, զոր յայլ եւ յայլ ժամանակս նեղէին յանաւրինաց»⁴⁵: Ավելի հետաքրքիր է 1313 թվականին գրված մի այլ հիշատակարան, որի հեղինակը, Կոստանդին Գ կաթողիկոսին կոչելով հերձվածող, Օշինին, ընդհակառակը, երկար տարիների կյանք է մաղթում. «Գրեցաւ ի թվականիս Հայոց ԶԿԲ (= 1313 թ.), ի հայրապետութեանն Հայոց հերձուածողին Կոստանդեայ, եւ յառաջնորդութեան մերոյ նահանգիս տէր Սարգսի, եւ ի թագաւորութեան Աւշինն, զոր Տէր Աստուած ընդ երկայն ատուրս արասցէ»⁴⁶: Մի ուրիշ հիշատակագիր շեշտում է նույնիսկ Օշինի ուղղափառությունը. «Գրեցաւ գիրքս այս ի թուականութիւնս Հայոց ԶԿԴ, ի հայրապետութեանն տեառն Կոստանդեա, եւ ի թագաւորութեանն Հայոց Աւշնի, որոյ տացէ Տէր Աստուած յաղթութիւն ի վերա թշնամեաց իւրոց, եւ յերկարութիւն ժամանակաց ուղղափառ դաւանութեամբ»⁴⁷: Սակայն «ուղղափառ» բառի մեկնաբանությունը որոշ զգուշավորություն է պահանջում, քանի որ այն, ըստ գրչի նախասիրությունների, կարող է վերաբերել թե՛ Հայոց, թե՛ Հռոմեական եկեղեցու դավանանքին: Մասնավորապէս հիշատակարաններից մեկում Օշինն «ուղղափառ» է կոչված՝ ակնհայտորեն նկատի ունենալով նրա հակվածությունը կաթողիկէ դավանությանը⁴⁸: Հիշատակարաններում Օշինը կոչված է նաեւ՝ «բարեպաշտ եւ յոյժ հեզ թագաւոր»⁴⁹, «ի Քրիստոս Աստուած հաւատարիմ արքայ»⁵⁰, «մեծ եւ արքայակերպ թագաւոր»⁵¹, «տի-

⁴⁵ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 77:

⁴⁶ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. Ք. 9484, էջ 304ա:

⁴⁷ Պողարյան, Յուցակ, հտ. 7, էջ 415:

⁴⁸ Tisserant, Codices Armeni, p. 99.

⁴⁹ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 134:

⁵⁰ Անդ, էջ 162:

⁵¹ Մաթեւոսյան-Ղազարոսյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 94:

րապսակ արՖայ»⁵², «նշմարիտ աստուածապաշտ արՖայից համանման՝ զկայսերաց եւ թագաւորաց զԿոստանդիանոսի, զՏրդատայ եւ զԹեոդոսի»⁵³ եւ այլն: Այդուհանդերձ, հիշատակագիրների վերաբերմունքի մեջ Օշինի նկատմամբ որոշ սառնություն զգացվում է, քանի որ բազմաթիվ ձեռագրերի թվագրման բանաձեւում նրա անունը հիշատակվում է «ի թագաւորութեան Աւշնի» կամ «ի թագաւորութեան Հայոց Աւշնի» հակիրճ գրառումների ձեւով, այսինքն՝ առանց թագավորներին բնորոշ հատուկ պատվանունների⁵⁴: Իսկ իր քաղաքական հակառակորդների միջավայրում ստեղծված գրական մի հուշարձանում Գեորգ Սկեւոացու վարժում, նա որակվում է «եղկելի», «չար գագան», «ապականեալ յոգի», «բռնատը» մականուններով եւ ներկայացվում որպէս շարի մարմնավորում, որը «քննէր որպէս զշուն եւ դարձեալ նենգէր իբրեւ զաղուէս, սաստկանայր նման առեւծու եւ խորամանկէր ամի պէս» կամ «նմանեաց հաւրն իւրում սատանայի»⁵⁵:

Անելով իր տասնամյա որդու՝ Լեւոնի գահակալմանը վերաբերող վերջին կարգադրությունները, որոնք միտված էին ապահովելու երկրի կայունությունը, Օշին թագավորը մահացավ 1320 թվականին եւ թաղվեց Դրագարկի արՖայական դամբարանում⁵⁶: Ըստ Հովհաննես Դարդելի՝ նրան թունավորել էր իր աներձագը՝ Օշին Կոռիկոսցին⁵⁷: Մինչդեռ Աբուլֆիղայի վարկածով՝ նրա մահվան պատճառը հիվանդությունն էր⁵⁸:

⁵² Պողարյան, Ցուցակ, հտ. 2, էջ 340:

⁵³ Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն, էջ 474. նույնը՝ Մաշտոցի անվ. Մատենագարան, ձեռ. թ. 2037, էջ 141բ:

⁵⁴ Խաչիկյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 63, 66, 73, 87, 88, 90, 92, 101, 108, 110, 111, 123, 126, 136, 152, 156, 157, 158, 160:

⁵⁵ Բաղդասարյան, Գեորգ Սկեւոացու վարքը, էջ 431-432:

⁵⁶ Տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 157; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 128:

⁵⁷ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 30:

⁵⁸ Աբուլ-Ֆիղա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Ազարական աղբյուրները, էջ 247):

ԼԵՒՈՆ Ե (IV) ԹԱԳԱՎՈՐ (1320–1342 թթ.)

Լեւոնի ծննդյան թվականը մեզ հայտնի է Սմբատ Սպարապետի ժամանակագրության շարունակողի հետեւյալ տեղեկությունից. «Ի թուին 759 (= 1310 թ.) ծնաւ թագուհին Զապել զորդի Օշին թագաւորին զԼեւոն, եւ ինքն հանգեաւ ի Քրիստոս»¹: Ըստ այդմ, նա Հայոց գահը ժառանգել է տաս տարեկան հասակում², իսկ նրա օժման արարողությունը տեղի է ունեցել 1321 թվականին. «Ի թուին 770 (= 1321) օժեցին թագաւոր Հայոց զդեռաբոյսն զորդի Օշին թագաւորին զԼեւոն»³: Սակայն հիմքեր կան ենթադրելու համար, որ նա գահակից-թագավոր էր հռչակվել ավելի վաղ: Դեռեւս 1316 թվականին ընդօրինակված մի ձեռագրի թվագրման բանաձեւում Լեւոնն արդեն հիշատակված է «թա-

¹ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 128:*

² *Սամուել Անեցու շարունակողներից մեկի տվյալներով՝ Լեւոնը 1321 թվականին եղել էր տաս, իսկ ըստ մյուսի՝ տասներկու տարեկան. տե՛ս Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 157, 167: Իսկ Հովհաննես Դարդեւլի տեղեկությամբ՝ «Իբրեւ մեռաւ արքայն Օշին, որդի նորա Լեւոն ... էր որդի ամաց ութից». Յովհաննէս Դարդեւլ, Ժամանակագրութիւն, էջ 27:*

³ *Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 128: Սամուել Անեցու շարունակողը Լեւոնի թագադրությունը թվագրում է Մննդյան 1323 թվականով. «ՌՅԻԳ. Թագաւոր Լեւոնն՝ որդի թագաւորին Օշնի տասնամեայ օժեալ եղեւ ի Սիս». Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 157: Սակայն քանի որ Սամուելի շարունակողի մոտ Մննդյան եւ Հայոց թվականությունների զուգադրության դեպքում համարյա միշտ առկա է երկու տարվա շեղում, պետք է ենթադրել, որ Քրիստոսի ՌՅԻԳ թվականին պիտի համապատասխաներ Հայոց 92 (= 1321) թվականը, այսինքն նույնն, ինչ առկա է Սմբատի ժամանակագրության մեջ: Հմմտ. Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 517:*

գաւոր Հայոց» տիտղոսով. «Յեւթնհարիւրորդի Կ եւ Ե-երորդի ամի Հայկազեանս տումարի գրեցաւ աստուածագարդ եւ հոգելից տետրս... ի թագաւորութեան բարեպաշտ արքայի, որ է տղայ հասակաւ, Լեւոնի՝ որդի Աշին թագաւորի, եւ ի հայրապետութեանն տեանն Կոստանդեա»⁴: Իսկ 1318 թվականին գրված մի հիշատակարանում նրա անունը դրված է իր հոր՝ Օշին թագավորի անվան կողքին. «Եւ եղև կատարումն այսմ տառիցս ի թուականութեանս Հայոց ՉԿԷ (= 1318)... ի հայրապետութեան տեանն Կոստանդեայ Կեսարացոյ, եւ ի թագաւորութեան Հայոց Օշնի եւ նորընծայ թագաւորի՝ հարազատ որդոյ իւրոյ Լեւնի»⁵: Գահակից-թագավորի նշանակումը սովորաբար նպատակ էր հետապնդում ամրապնդել մանկահասակ թագաժառանգի դիրքերը եւ պատահականություններից զերծ պահել իշխանության բնականոն փոխանցումը: Հիշեցնենք, որ մինչև Օշինը Կիլիկիո պատմության մեջ արդեն գրանցվել էր այդպիսի երկու նախադեպ. Լեւոն Բ (I) եւ Հեթում Բ թագավորներն իրենց կենդանության օրոք գահակից էին հռչակել՝ համապատասխանաբար Ռայմոնդ-Ռուբենին եւ Լեւոն Դ (III)-ին:

Մանուկ թագաժառանգի գահակալումն, անշուշտ, նշանակում էր, որ մինչև իր չափահասությունը, նա չէր կարող առանց խնամակալի կառավարել թագավորությունը: Եթե դա, ինքնըստինքյան, հասկանալի էր, ապա չափազանց տարօրինակ էր այն, որ մահվանից առաջ գրած կտակով Օշինն իր որդու խնամակալ էր կարգել միանգամից երեք հոգու. «Ի ՇԿԹ թվին (= 1320 թ.) փոխի մահուամբ առ Քրիստոս թագաւորն Օշին: Եւ մինչ կենդանի էր, արար կտակ եւ եղիր պայլ զՕշին տէրն Կօռիկօսու, եւ զեղբայր իւր զԿոստանդին, եւ զպարոն Հեթում տէրն Նդրին: Եւ վստահանայ ի նոսա զորդին իւր զԼեւոն եւ զթագունին իւր, զոր յետոյ էառ ի ֆրանգաց, եւ զերկիրս Կիլիկիոյ՝ կառավարել նոցա եւ սնուցանել զորդին իւր, եւ ծառայել միամտութեամբ մինչև ի Ժ (= 10) ամս, եւ ապա յանձնել զաթոռ թագաւորութեան եւ զաշխարհս յորդին իւր Լեւոն»⁶: Մտավորապես նույնը կրկնված է 1325 թվականին գրված

⁴ Գողարյան, Յուզակ, հտ. 6, էջ 193:

⁵ Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. Բ. 418, էջ 128ա:

⁶ Մամուէլ Անեցի, Հաւարմունք, էջ 157:

հետեւյալ հիշատակարանում. «Արդ եղև վճար այս մեկնութեան ի թագաւորութեանն Լեւոնի՝ որդոյ Աւշնի, նորընծայ եւ դեռաբոյս մանկանն, յոյժ երկեղածի եւ աստուածասիրի, զորոյ զթագաւորութիւնն յաղագս տղայութեան իւրոյ խնամեն եւ հոգան երեւ մեծագոյն եւ փառատր իշխանքն, երկու եղբարքն հարագատ՝ պարոն Աւշին եւ պարոն Կոստանդին, որք աստիճանաւ աւագ պարոն եւ զունդստապլ կոչին, եւ երրորդն՝ պարոն Հեթում Նդրցի, որ խառնեալ եւ միացեալ է ընդ նոսա, որպէս միտք ընդ հոգի եւ ընդ մարմին, ուղղելով զբոլոր տունն արհունի ի բարին»⁷: Իսկ Հովհաննէս Դարդեւն ավելացնում է նաեւ չորրորդ խնամակալի անունը. «Եւ եղև իբրև մեռաւ արհայն Օշին, որդի նորա Լեւոն, որ էր որդի ամաց ութից, եկաց ընդ խնամակալութեամբ աւագ իշխանաց չորեցունց, որ վարեցին զաշխարհն, զի ինքն Լեւոն չև էր հասեալ յարբունս: Պարոնն առաջին կոչէր Օշին, տէր Կոռիկոսի, ... երկրորդն կոչէր պարոն Կոստանդին, երրորդն՝ պարոն Յօդին, եղբայր սորին Կոստանդինի, եւ էր նա մարաջախտ Հայաստանի, չորրորդն՝ անուանեալ պարոն Հեթում, սենեկապան արհունի: Եւ վարեցին տոհմ զիշխանութիւնն մինչև ի հասանել մանկանն ի տիս արութեան»⁸: Ժամանակագիրը սխալվում է՝ նշելով, որ Յօդին (= Պաղտին) մարաջախտն ու Կոստանդինը եղբայրներ էին, քանի որ հաստատապէս հայտնի է, որ վերջինիս եղբայրն Օշին պայլն էր⁹: Ի դեպ, իր աշխատության հետագա շարադրանքում Դարդեւն ուղղում է այդ սխալը¹⁰: Վերահիշյալ աղբյուրներից տարբերվում է Հեթում Նդիրցու նորահայտ «Պատմութիւնը», համաձայն որի՝ Լեւոնն ունեցել է միայն երկու խնամակալ. «Ի թվին ՉԿԹ (1320) հանկաւ ի Քրիստոս աստուածասէր թագաւորն Օշին, յունիս ԺԹ (19), հինգշափթի: Ու եղիւ յիւ տեղն զիւ որդին զԼեւոնն, ու սահմանեց պայլ՝ զպարոն Օշին Կոռիկոստ տէրն, ու

⁷ *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ*, էջ 193:

⁸ *Յովհաննէս Դարդեւ, Ժամանակագրութիւն*, էջ 27–28:

⁹ *Տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք*, էջ 157; *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ*, էջ 193, 198; Tisserant, *Codices Armeni*, p. 353. *Հմտ. նաեւ՝* Rüdtt-Collenberg, *The Rupenides*, III (H2).

¹⁰ *Տե՛ս Յովհաննէս Դարդեւ, Ժամանակագրութիւն*, էջ 31 (*ես հրաման ձեռքակալ առնել զՕշին եւ զեղբայր նորա զպարոն Կոստանդին*):

զպարոն Հեթում Ախտուցն տերն, որ հոգային գերկիրն Ժ (10) տարի»¹¹ :

Միանգամից մի ֆանի խնամակալների նշանակումը հազվադեպ երեւոյթ էր ոչ միայն Կիլիկիայի, այլեւ խաչակրաց պետությունների պատմության մեջ, թեւեւ, ինչպես նշում է Ժ. Տետեյանը, Երուսաղեմի ասիզները դրա հնարավորությունը չէին բացառում¹² : Նման մի դեպք արձանագրվել էր Կիպրոսի թագավորության պատմության մեջ. 1229 թվականին Գերմանական կայսր Ֆրիդրիխ II-ը, Իբելիյան գերդաստանի ազդեցությունը չեզոքացնելու նպատակով, հինգ բարոններից կազմված խնամակալական խորհուրդ էր ստեղծել՝ նրա վրա դնելով մանկահասակ Հենրի I թագավորի անունից երկրի կառավարման պարտականությունը¹³ : Իսկ թե այդ ֆայլով ինչպիսի նպատակ էր հետապնդում Օշին թագավորը, հայտնի չէ : Կարելի է ենթադրել, որ դրանով նա ուզում էր խնամակալների միջեւ փոխադարձ վերահսկողության մեխանիզմ ստեղծել՝ բացառելու համար նրանցից մեկի կողմից իշխանության բռնագավթման հնարավորությունը : Այս մտահոգությունը միանգամայն տեղին պետք է համարել՝ նկատի ունենալով պատմության դասերը. ինչպես տեսանք, Զապել թագուհու իրար հաջորդած երկու խնամակալներն էլ՝ Սիր Ատանը, թե Կոստանդին Գունդստապլը, գերծ չէին այդպիսի նկրտումներից¹⁴ : Իսկ եթե անդրադառնալու լինենք մահմեդական աշխարհի, մասնավորապես, սելջուկյան երկրների փորձին, ապա կտեսնենք, որ խնամակալների՝ աթաբեկների նշանակումը համարյա միշտ ավարտվում էր վերջիններիս կողմից մանուկ գահակալների իշխանության լիակատար յուրացմամբ¹⁵ : Այդ եղանակով էր, որ Մերձավոր Արեւելում հիմնադրվեցին մի ամբողջ շարք ժառանգական աթաբեկություններ, որոնցից ամենանշանավորներն էին Զանգիդների, Ելդեզիդիդների

¹¹ Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 547:

¹² Հմմտ. Dédéyan, La chronique, p. 93n.

¹³ Այդ մասին մանրամասն տե՛ս Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 117:

¹⁴ Ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում, այդպիսի նկրտումներից գերծ չէր նաեւ Օշին թագավորի նշանակած խնամակալներից մեկը՝ Օշին պայլը:

¹⁵ Աթաբեկության ինստիտուտի բովանդակության մասին մանրամասն տե՛ս Cahen, Atabak, p. 731-732.

եւ Սալգուրիդների ստեղծած էմիրությունները՝ համապատասխանաբար Մոսուլում, Ատրպատականում եւ Ֆարսում¹⁶:

Սակայն, ի տարբերություն Սամուել Անեցու շարունակողի, 1325 թվականի հիշատակագրի, Հովհաննես Դարդեղի եւ Հեթում Նղիրցու՝ Աբուֆիդան տեղյակ է միայն Լեւոն թագավորի մեկ խնամակալի գոյությանը. «Նույն այդ տարին, ջումադալ ավալ ամսին (1320 հունիս 8 – հուլիս 8) մահացավ Սսի թագավորը՝ Լեւոնի որդի Օշինը: ... Նրան հաջորդեց փոքր որդին, որը դեռ անչափահաս էր, եւ հայ մեծամեծների կողմից գործերի մի վարիչ նշանակվեց»¹⁷: Հաջորդ տողերում արաբ ժամանակագիրը գործերի այդ վարիչին ուղղակի խնամակալ է կոչում նրան տալով Քարֆի (= Կոռիկոսի) իշխան անունը, ակնհայտորեն նկատի ունենալով Օշին պայլին¹⁸: Այդումանդերձ, Աբուֆիդայի տեղեկությունն, ըստ էության, չի հակասում մյուս աղբյուրների տվյալներին, քանի որ Օշին պայլն իր դիրքով եւ ազդեցությամբ, իրոք, առանձնանում էր Լեւոնի խնամակալների շարքում: Դրա վկայությունն է, մասնավորապես, այն, որ թե՛ Սամուելի շարունակողը, թե՛ 1325 թ. հիշատակագիրը, թե՛ Դարդեղն ու Հեթում Նղիրցին, նրանց թվարկելիս, առաջին տեղում նշում են Օշինի անունը: Պատահական չէ նաեւ, որ նա խնամակալներից միակն է, որն օժտված է «Պայլ Հայոց»¹⁹, «Աւագ Պարոն»²⁰, «Պարոն Հայոց»²¹, «Պարոն Կիլիկիոյ»²² եւ նույնիսկ «Պարոն Պայլ եւ Մարգպան ամենայն Հայոց»²³ տիտղոսներով, որոնք այլ բան չեն նշանակում, քան երկրի

¹⁶ Հմմտ. Лэн-Пуль, Династии, с. 131–153; Босворт, Династии, с. 169–174.

¹⁷ Աբուֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 247):

¹⁸ Անդ, էջ 248:

¹⁹ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 209; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 128:

²⁰ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 193:

²¹ Մուրատյան-Մարտիրոսյան, Յուցակ, էջ 23; Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 208:

²² Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 157:

²³ Տե՛ս «Երջանիկ Բարունույն Նսայեայ [Նչեցույ] ասացեալ՝ Վասն դաւանութեան հաւատոյ, ընդդէմ պարոն Հեթմոյ Կիւրիկոսցոյն». Մարգիսյան, Յուցակ, հտ. 2, էջ 732: Հմմտ. Հովսեփյան, Խաղբակեանք, էջ 283–284; Օղյուզյան, Մովսէս Երզնկացի, էջ 25–26:

կառավարիչ, այսինքն՝ ճիշտ այն գործառույթը, ինչն Օշինին վերագրում է Աբուլֆիդան: Բացի այդ, հիշատակագիրներից մեկը նրան հատկացնում է անգամ «Քազադիր» տիտղոսը²⁴, ինչը ցույց է տալիս, որ նա վարում էր նաև պետական այդ գործակալությունը: Եւ վերջապես, հատկանշական է, որ չորս ձեռագրերի թվագրման բանաձեւում Լեւոն թագավորի կողմին հիշատակվում է նաև Օշինի անունը, ինչպես, օրինակ՝ «Էրթին Յարեթական տումարի եւ Հայկազեանս սեռի ՉՀէ (= 1328 թ.), ի թագաւորութեանն Հայոց Չորրորդ Լեւոնի որդոյ բարեպաշտ թագաւորին Աւշնի, եւ ի պայլութեանն Հայոց Աւշնի տիրոջն Կաւրիկաւոյ»²⁵ կամ «Սկսեալ կատարեցի զգիրս ւստանուն ի թուականիս Հայոց ՉՀԴ (= 1325 թ.), ի թագաւորութեան Հայոց բարեպաշտի Չորրորդ Լեւոնի որդոյ Հայոց [թագաւորին] Աւշնի, եւ ի պարոնութեան Հայոց Աւշնի բարեպաշտի եւ աստուածասիրի»²⁶: Օշինին շնորհված այս առանձնահատուկ պատիվը պետք է բացատրել նախ եւ առաջ այն հանգամանքով, որ նա Լեւոն թագավորի հարազատ մորեղբայրն էր, այսինքն՝ վերջինիս մեծավորագույն ազգականը, ինչը նրան առաջնահերթ իրավունք էր տալիս ստանձնելու իր զարմիկի խնամակալությունը: Բացի այդ, նա, ըստ երեւոյթին, եղել էր Օշին թագավորի ամենամտերիմ մարդը, ինչի մասին վկայում է թեկուզ այն փաստը, որ թագավորը նրան էր վստահել իր հարսնացուին Նեապոլից Կիլիկիա բերելու զուտ անձնական գործը²⁷: Օշին պայլի ազդեցությունն ավելի եւս մեծացավ, երբ նա ամուսնացավ այրիացած Յովհաննա թագուհու հետ (1320 թ.), իսկ իր դստերը՝ Ալիսին կնության տվեց Լեւոն Ե (IV) թագավորին (1321 թ.)²⁸:

Դրանից հետո Օշինը, փաստորեն, դարձավ Կիլիկիո Հայոց թագավորության միանձնյա տերը՝ իր հայեցողությամբ տնօրինելով նրա

²⁴ *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 209:*

²⁵ *Անդ:*

²⁶ *Մուրատյան-Մարտիրոսյան, Յուցակ, էջ 23: Տե՛ս նաև՝ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 208; Պողարյան, Յուցակ, հտ. 5, էջ 341:*

²⁷ *Յովհաննէս Դարդեկ, Ժամանակագրութիւն, էջ 28:*

²⁸ *Տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 157; Յովհաննէս Դարդեկ, Ժամանակագրութիւն, էջ 28; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 128: Հմմտ. նաև՝ Rüdiger-Collenberg, The Rupenides, III (H2).*

գործերը: Նախ եւ առաջ, վերահսկելու համար երկրի բանակը, նա իր եղբորը՝ Կոստանդինն նշանակեց Հայոց Սպարապետ. «եղիր եւ զեղբայրն իւր Գունդստապլ»²⁹: Այնուհետեւ զգալիորեն ընդարձակեց սեփական կալվածքները՝ Կոռիկոսից բացի տիրելով նաեւ Տարսուսին, Պապեռոնին ու Իսավրիայի գավառին. «Եւ եղև Պարոն Կիլիկիոյ եւ տէր Տարսուսի եւ բերդին Պապառոնին, եւ տիրեաց բովանդակ գաւառին Սօրիոյ»³⁰: Հիշատակագիրներից մեկը նրան կոչում է «մեծ գունթն Սավրիոյ», ինչն, իմիջիպէտ, նշանակում է, որ նա կրել էր նաեւ «կոմս» տիտղոսը³¹: Օշինի կամայականություններն ու շարաշահումներն, ըստ երեսույթին, առաջացրին երկրի որոշ տարրերի դժգոհությունը, սակայն նա դաժան հաշվեհարդար տեսավ ըմբոստների նկատմամբ. «Եւ զորս եղեալ էին ընդդէմ նորա՝ ետ սրախոդխոդ առնել եւ զայս հալածել յաշխարհէն»³²: 1323 թվականին տեղի ունեցած այդ սոսկալի նախնիրին զոհ գնացին նաեւ Լետն Ե (IV) թագավորի հորաբույր Զապելն ու նրա որդիները, որոնք, ինչպէս արդեն նշեցինք, ընտանիքի հոր՝ Կիպրոսի գահի բռնագավթիչ Ամորի Լուսինյանի սպանությունից հետո (1310 թ.) ապաստան էին գտել Կիլիկիայում. «Եւ ի մէջ այլոց՝ ետ նա խեղդամահ կորուսանել զտիկիմն Զապել, զոյր Օշին թագաւորի, եւ զորդիս նորա զչորեսին ետ արկանել ի բանտ, յորոց մեռան անդ երկուին, այսինմն իշխանն Հիւզ, որում ետ արբուցանել դեղ մահու, եւ իշխանն Հանրի, որ խնդրէ՝ պաստեալ ի ծարատյ, զի տացեն նմա՝ ի սէր Աստուծոյ, սակաւ մի ջուր յարբումն, եւ ետ տալ նմա մէջ: Իսկ զայլսն զերկոսին, այսինմն զսեպուսն Ջեհան եւ զսեպուսն Բոնմոնդ, հանեալ ի բանտէ՝ ըստ պաղատանաց ոմանց յիշխանաց անտի, ետ արկանել ի նաւ, զի գնասցեն, յո՛ղէմ եւ կոյս բաղղն վարեսցէ գնոսա»³³: Զապելի որդիների դեմ գործված ոնիրը, թերեւս, պետք է բացատրել Օշինի այն

²⁹ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 157:

³⁰ Անդ:

³¹ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 208: Տե՛ս նաեւ՝ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 131:

³² Յովհաննէս Դարդեւ, Փամանակագրութիւն, էջ 28–29:

³³ Անդ, էջ 29: Ավելի համառոտ տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 157: Հմմտ. Микаелин, История, с. 446.

մտավախությամբ, որ նրանք հետագայում ժառանգական իրավունքով կարող էին հավակնել Հայոց գահին, որին տիրելու նկրտումներ ուներ նաև ինքը՝ Հայոց պայլը³⁴, ինչպես կտեսնենք հետագա շարադրանքում:

Գահաժառանգության իրավունքի ուսումնասիրման տեսակետից կարևոր է նաև Սամուել Անեցու շարունակողի այն տեղեկությունը, որ Օշին թագավորն իր տասնամյա որդու խնամակալների լիազորությունը սահմանափակել էր տաս տարվա ժամկետով. «Եւ վատահանայ ի նոսա գորդին իւր զԼետն... եւ գերկիւս Կիլիկիոյ՝ կառավարել նոցա եւ սնուցանել գորդին իւր, եւ ծառայել միամտութեամբ մինչեւ ի Ժ (= 10) ամս, եւ ապա յանձնել զաթոռ թագաւորութեան եւ զաշխարհս յորդին իւր Լետն»³⁵: Դա նշանակում է, որ ի տարբերություն խաչակրաց պետությունների, որտեղ թագավորը կամ գահաժառանգը չափահաս էր համարվում տասնհինգ տարեկանում³⁶, Կիլիկիայում չափահասության սահմանը ֆսան տարին էր: Ճիշտ այդ տարիքում էր, ահա, որ Լետն Ե (IV) թագավորը վերջապես ձերբազատվեց իր խնամակալներից եւ, որ հատկանշական է, անմիջապես կորստյան մատնեց նրանցից երկուսին՝ Օշին պայլին ու Կոստանդին գունդստապլին. «Ի թուին 778 (= 1329 թ.) Յունվարի ֆսան եւ վեցն յանկարծ առաքեաց պատանին Լետն՝ թագաւորն Հայոց, իշխանք սակաւ հեծելով վասն բռնելոյ Գունդին Կոռկոսոյ եւ իւր եղբօրն: Եւ դիպեցան յԱտանոյ սահմանն Գունդին, որ առ թագաւորն երթայր հինգ մարդով: Եւ բռնեցին զինքն եւ դարձուցին յետ, եւ դրին յարգելի ի յեկեղեցին սուրբ Մօրօթու ի մօտ Ատանոյ: Եւ գնաց հեծեալն ու բռնեց զեղբայրն Գունդին ի գեղն տղայ Լետնին զգունդստապլն, եւ բերին յԱտանայ, եւ ի մէկ օրն սպանին զերկուսն»³⁷: Մոտավորապես նույնը, թեև ավելի համառոտակի,

³⁴ Հմմտ. Ghazarian, *The Armenian Kingdom*, p. 158.

³⁵ Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 157: *Ինչպես վերը տեսանք, դա հաստատում է նաև Հեթում Նդիրցին. «որ հոգային գերկիրն Ժ (10) տարի». Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 547:*

³⁶ Հմմտ. Hardwicke, *The Crusader States*, p. 527; Runciman, *The Crusader States*, p. 559; Riley-Smith, *The Crusades*, p. 74, 76. *Երուսաղեմի օրենքներում, մասնավորապես «Թագավորների գրքում», որպես գահաժառանգի թագադրության վաղագույն ժամկետ սահմանված է նույնիսկ տասներկու տարին. տե՛ս Richard, Jérusalem*, p. 65.

³⁷ Սմբատ, *Տարեգիրք*, Փարիզ, էջ 131:

կրկնում են նաեւ Սամուել Անեցու շարունակողը³⁸, Հովհաննես Դարդելը³⁹ եւ Աբուֆիղան⁴⁰: Ջբավարարվելով այրբանով, Լետոնն սպանեց նաեւ իր կնոջը՝ Ալիսին, որն, ինչպես նշեցինք, Օշին պայլի դուստրն էր. «Ի հասանել արբային Լետոնի յարբունս տիոց՝ ետ սպանանել զկին իւր Ալիսիա, զդուստր Օշին պարոնի, վասն խառնակ վարուց նորա»⁴¹ կամ «եսպան եւ զթագունին իւր յաղագս աղտեղի գործոց նորա»⁴²: Իւր արյունոտ իւրախճանքը, սակայն, Լետոնն ավարտեց մի ավելի ֆստմնելի արարով՝ Օշին պայլի գլուխն ուղարկելով Եգիպտոսի Նասրեդդին Մոնամմեղ սուլթանին, իսկ Կոստանդնի գլուխը՝ մոնղոլների Աբուսայիդ խանին. «Եւ առաքեաց զՕշին գլուխն ի Մըսը՝ առ Մելիֆ Նասր սուլթանն, եւ զեղբօր նորին՝ յարեւելս, առ Բուսայիտ Ղանն»⁴³:

Միջնադարյան ժամանակագիրները Լետոնի հաշվեհարդարը բացատրում են նենգամիտ իշխանների կամ ֆսու մարդկանց սադրանքով. «Եւ եսպան ի սադրելոյ իշխանացն եւ ի ֆսու արանց»,– գրում է Սամուել Անեցու շարունակողը⁴⁴: «Ոմանք յիշխանաց անտի նորա եւ ի բարեկամաց պատմեցին զչարութիւն եւ զնենգութիւն եւ զորս արարեալ էր պարոնին Օշնի»,– երկրորդում է Հովհաննես Դարդելը⁴⁵: Իսկ Սմբատ Սպարապետի շարունակողը, ողջ մեղքը բարդելով բանասարկուների վրա, նույնիսկ փորձ է անում արդարացնել Լետոնին. «Շատ բան ասացին փոքր մարդիկն վասն նոցա, ինչվի սպանել տուին, որ զճմարիտն Աստուած գիտէ: Եւ Լետոն թագաւորն անմեղ է ի նոցա արենէն»⁴⁶: Բանասարկուների սադրանքն, ան-

³⁸ Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 158:

³⁹ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 30–31:

⁴⁰ Աբու-Ֆիղա, Ժամանակագրութիւն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 247–248):

⁴¹ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 29:

⁴² Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 158:

⁴³ Անդ: Տե՛ս նաեւ՝ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 248; Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 1, էջ 88:

⁴⁴ Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 158:

⁴⁵ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 30:

⁴⁶ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 131:

շուշտ, կարող էր որոշ դեր խաղացած լինել, սակայն այդպիսի դաժան վրեժխնդրության համար պետք է լինեին ավելի հիմնավոր պատճառներ: Դրանց բացահայտումը մեծ դժվարություն չի ներկայացնում, քանի որ առկա աղբյուրները մեկ առ մեկ թվարկում են Օշին պայլի դեմ ուղղված բոլոր իրական կամ մտացածին ամբաստանությունները, որոնք են.

ա. Պայլը դավաճանել էր Օշին թագավորին, սիրահետելով նրա կնոջն ու հետագայում ամուսնանալով նրա հետ. «Առեալ էր ի կնութիւն զղշխոյն Յովհաննա զժօրու արբայի, հարեալ ի սէր անդստին ի ժամանակէ անտի յորում ած զնա ի նէապոլսոյ ի Հայաստան»⁴⁷:

բ. Այդ հողի վրա էլ նա թունավորելով սպանել էր Հայոց թագավորին. «Այսու իսկ աղագաւ սպանեալ էր զհայրն արբայի, արբուցեալ նմա դէղ մահու»⁴⁸:

գ. Օգտվելով Լեւոնի անշափահասությունից, նրան «բռնությամբ» ամուսնացրել էր իր դստեր՝ Ալիսի հետ. «Տուեալ էր նմին իսկ արբայի զդուստր իւր Ալիսիա ի կնութիւն»⁴⁹:

դ. Պայլն ու իր եղբայրն ապօրինաբար զավթել էին բազմաթիվ բերդեր, որոնք իրենց չէին պատկանում. «Յետ մահուան Օշին թագաւորին շատ բերդեր ապրանք առին, որ չէր իւրեանց սահմանով ապրանք»⁵⁰:

Սակայն ամենածանր մեղադրանքը ներկայացնում է Սամուել Անեցու շարունակողը, այն է՝ Օշինն ու իր եղբայրը մտադրվել կամ փորձ էին արել զահրնկեց անել Լեւոնին եւ զավթել իշխանությունը. «Քագաւորն Լեւոն ... եսպան (զնոսա) ի սադրելոյ իշխանացն եւ ի քու արանց՝ եթէ խորհեալ են բառնալ զքեզ եւ ինքեանք թագաւորել»⁵¹: Այս մեղադրանքը, մեր կարծիքով, հիմնազուրկ չպետք է համարել, նկատի ունենալով հետեւյալ հանգամանքը: 1330 թվականին լրանում էր Լեւոնի խնամակալների լիազորությունների՝ Օշին թագավորի կտակով սահմանված տասնամյա ժամկետը, ինչը նշանակում էր, որ դրանից հետո

⁴⁷ Յովհաննէս Դարդեի, Ժամանակագրութիւն, էջ 30:

⁴⁸ Անդ:

⁴⁹ Անդ:

⁵⁰ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 131:

⁵¹ Սամուէլ Անեցի, Հաւարմունք, էջ 158:

երկրի կառավարման ղեկը պետք է անցնէր երիտասարդ թագավորի ձեռքը: Օշին պայլը, որը XIV դ. 20-ական թվականներին Հայոց թագավորության փաստացի տերն ու տիրականն էր⁵², չէր կարող հաշտվել իր բացառիկ դիրքն ու ապօրինաբար ձեռքբերված կալվածքները կորցնելու մտքի հետ: Հետեւաբար, բնական է ենթադրել, որ նա միջոցներ պիտի ձեռնարկէր դրանք պահպանելու համար՝ շխորշելով անգամ Լեւոնին գահընկեց անելու եւ Հայոց թագավորությանը տիրելու բռնի փորձից, մանավանդ որ օծյալ թագուհու հետ ամուսնացած լինելու հանգամանքը նրան այդպիսի նկրտում ունենալու թեկուզ թվացյալ իրավական հիմք էր տալիս⁵³: Ինչ վերաբերում է Օշին պայլի եւ Կոստանդին գունդատապլի գլուխները Աբուսայիդ խանին ու Նասրեդդին սուլթանին ուղարկելու սահմուկեցուցիչ ֆայլին, ապա Լեւոնը դրան դիմել էր, ըստ երեւույթին, նրանց հանոյանալու նպատակով, քանի որ կոռիկոսցի եղբայրները հայտնի էին որպէս մոնղոլների ու մամլուֆների ռիւտերիմ հակառակորդներ: 1321 թվականին նրանք հաջողությամբ վանել էին Ռումի երկրի մոնղոլ կուսակալ Տիմուրտաշի հարձակումը⁵⁴, իսկ 1322-ին՝ կազմակերպել Կիլիկիա ներխուժած մամլուֆյան զորքերից երկիրը պաշտպանելու դժվարին գործը⁵⁵:

⁵² Հմմտ. Микаелян, История, с. 446; Morgan, Histoire, p. 217.

⁵³ Օշին պայլի եւ նրա եղբոր սպանության պատճառների մասին տե՛ս նաեւ՝ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 287, ծանոթ. 113: Ըստ Պալասանյանի՝ Օշինն սպանվել է «ազգային կուսակցութեան պաշտպան կանգնելուն համար»։ Պալասանյան, Պատմութիւն, էջ 378: Հմմտ. նաեւ՝ Dédéyan, Histoire, p. 311.

⁵⁴ Տիմուրտաշի այդ ասպատակության վերաբերյալ տե՛ս Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 188; Աբու-Ֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 247); Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 129; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 158, 167:

⁵⁵ Այդ ներխուժման մասին, որի ընթացքում հիմնահատակ կործանվեց Այաս նավահանգստային քաղաքը, տե՛ս Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 178; Պողարյան, Յուցակ, հտ. 5, էջ 464; Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 188–189; Աբու-Ֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 247); Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 129–130; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 158, 167: Ըստ Ներսես Պալիանենցի՝ մամլուֆների հեռանալուց հետո հայերը, Հովհաննես պապի նյութական օժանդակության շնոր-

Մյուս երկու խնամակալները՝ Պաղտին մարաջախտը եւ Հեթում Նդիրցին, որոնք նույնպես հարազատ եղբայրներ էին, ըստ երեւոյթին, մասնակցած շինելով Օշին պալլի կազմակերպած դավադրոյթանը եւ այդ պատճառով արժանանալով Լեւոնի վստահոյթանը, պահպանեցին իրենց դիրքերն ու հավատարմորեն ծառայեցին Հայոց թագավորին: Լեւոնը նաեւ Կիլիկիա հրավիրեց ու մեծ պատիվների արժանացրեց Օշինի կողմից հալածված իր հորաբնորոյրներին՝ Հովհաննես (Ջեհան) եւ Բոհեմունդ (Պեմունդ) Լուսինյաններին, առաջինին կարգելով Հայոց գունդստապլ, իսկ երկրորդին շնորհելով Կոռիկոսի կոմսոյթունը⁵⁶: Կիլիկիո պատմոյթան մեջ նշանակալից դեր խաղացած այս շորս անձնավորոյթուններին մենք դեռ առիթ կունենանք հանգամանորեն անդրադառնալու սույն աշխատոյթան հետագա շարադրանքում:

Լեւոն թագավորի գահակալոյթան երկրորդ՝ միանձնյա շրջանը նշանավորվեց Հայոց թագավորոյթան միջազգային իրավական կարգավիճակի արմատական փոփոխոյթամբ: Աբուսայիդի մահից հետո (1335 թ.) քայքայվեց Հոյակոյի հիմնադրած մոնղոլական խանոյթունը⁵⁷, եւ Կիլիկիան, ինքնաբերաբար, ազատվեց նրա գերակալոյթունից: Սակայն դժվար է ասել՝ դա բարեբախտոյթուն, թե դժբախտոյթուն էր Հայոց պետոյթան համար, քանի որ Խլ-խանոյթան կործանման հետեւանքով հիմնովին խախտվեց մերձավորարեւելյան ուժերի հավասարակշորոյթունը, եւ հայերը, գրկվելով մոնղոլների հովանավորոյթունից, մեն-մենակ մնացին մամլոյթների դեմ: Տվյալ իրավիճակում Լեւոնին այլ բան չէր մնում, քան խորացնել իր նախորդների վարած լատինամետ քաղաքականոյթունը եւ աջակցոյթուն փնտրել Արեւմուտքում⁵⁸, մանավանդ

հիվ, լիովին վերականգնեցին Այասը. «Եւ բազում յոյժ յաւելին ի վերայ եւ շինեցին զբերդսն զայնոսիկ առաւել յոյժ ամրայգոյն եւ բարձրագոյն» (Անդ, էջ 189): Հմմտ. Coureas, Papacy, p. 103; Richard, La papauté, p. 184.

⁵⁶ *Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 31:*

⁵⁷ *Հմմտ. Մանանդյան, Քննական տեսութիւն, հտ. 3, էջ 333; Али-Заде, Азербайджан XIII-XIV вв., с. 288; Grousset, L'Empire des steppes, p. 465; Roux, L'Empire Mongol, p. 441; Morgan, The Mongols, p. 173; Allsen, Mongol Eurasia, p. 40.*

⁵⁸ *Քերեւա ավելորդ չէ նշել, որ Լեւոնը, Արեւմուտքի հետ կապերն ամրապնդելու նպատակով, 1331 թվականին ամուսնացել էր Կիպրոսի թագավոր Հենրի II-ի*

որ այդ ժամանակ խոսակցություններ էին պատվում Ֆրանսիայի թագավոր Ֆիլիպ VI-ի ձեռնարկած մի նոր խաչակրաց արշավանքի մասին⁵⁹։ Սակայն այդ խոսակցություններն, իրականություն չդառնալով, ունեցան այն արդյունքը, որ ավելի եւս զրգռեցին մամլյոմներին⁶⁰, որոնք, ապահովված լինելով մոնղոլների հակազդեցությունից, նոր թափով վերսկսեցին իրենց հարձակումները Կիլիկիայի դեմ։ Լեւոնը, հարկադրված, փորձեց կտրուկ կերպով փոխել Հայոց պետության փառաբանական կողմնորոշումը եւ 1336 թվականին Պաղտին մարաշխատին ու արժունի ֆարտուղար Վասիլին դեսպանագնացությամբ ուղարկեց մամլյոմների մոտ՝ նախապատրաստելու համար իր պաշտոնական այցը Եգիպտոս. «Նա արժայն Լեւոն առաքեաց զպարոն Պաղտին մարաշխատն ու զիս՝ զանարժանս Վասիլս առ սուլտանն Եգիպտոսի Նասրն, ուզելով ամանաթ⁶¹, որ ինքն՝ արժայն երթայր առ ինքն վասն փրկութեան երկրիս»⁶²։ Սակայն սուրբանն, ըստ երեւոյթին, հաշտությունից առաջ հայերին ավելի ծանր պայմանների մեջ դնելու եւ կատարված փաստի առջեւ կանգնեցնելու նպատակով, Հայոց դեսպաններին արգելափակել տվեց Հալեպի զնդանում⁶³։

այրու՝ Կոնստանս Արագոնացու հետ, որը Սիցիլիայի Ֆրեդերիկ թագավորի դուստրն էր. տե՛ս Մմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 132; Յովհաննէս Դարդեղ, Ժամանակագրութիւն, էջ 29–30; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 158; Հեթում Նղիրցի, Պատմութիւն, էջ 548–549:

⁵⁹ Լեւոնի լատինամետ քաղաքականութեան մասին մանրամասն տե՛ս Tournelbeze, Histoire, p. 233–235; Օրմանյան, Ազգապատում, §1276–1277; Микаелян, История, с. 454–457; Mutafian, Le royaume, p. 82–85.

⁶⁰ Հմմտ. Ջամյան, Պատմութիւն, հտ. 3, էջ 334; Tournelbeze, Histoire, p. 234; Matiossian, Armenian-Spanish Relations, p. 320.

⁶¹ Ամանաթ = ապահովագիր, երաշխիք. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 37:

⁶² Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 295:

⁶³ Նույն թվականին Պաղտին մարաշխատը մահացավ Հալեպի բանտում, իսկ Վասիլը մեկ տարի անց ազատ արձակվեց եւ վերադարձավ Կիլիկիա. տե՛ս Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 295: Ավելորդ չէ նշել, որ Պաղտինի դեսպանագնացության ձախողումից հետո, նույն թվականին, Եգիպտոս ուղեւորվեց նրա եղբայր Հեթումը, որի առաքելությունը, սակայն, նույնպես հաջողությամբ չպսակվեց, եւ նա կես ճանապարհից տուն դարձավ. տե՛ս Հեթում Նղիրցի, Պատ-

եւ քաղաքի եւիւր Ալթուն-Քուղային կարգադրեց ասպատակել Կիլիկիո երկիրը: Նախ եւ առաջ գրավելով ու հիմնահատակ ավերելով Նդիրի անառիկ բերդը՝ մամլումները 1336–1337 թթ. ընթացքում վերջնականապես նվաճեցին Պիրամոս (Ջահան) գետի արեւելակողմյան գավառները⁶⁴: Հայերի համար ծանր էր հատկապես Այասի կորուստը, քանի որ այդ վանառաշահ քաղաքն էր, որն ապահովում էր Հայոց թագավորության պետական եկամուտների հիմնական մասը⁶⁵: Ուտի հասկանալի է Վասիլ Բարտողարի տվյալտանքը, որն այդ առթիվ արտասանելով գրում է. «Նա աննար կեցաւ թագաւորն ու կատարեաց զսուլտանին կամքն, ու եւետ, զոր կորէր Ջահան՝ բերդերովն ու զերկիրն, ու զպանծալին այս Այաս, զոր բազում ծախիւմ շինեալ էր»⁶⁶: Կիլիկիո թագավորության եւ մամլումյան սուլթանության միջեւ տարածքային այդ փոփոխություններն ամրագրվեցին 1337 թվականին կնքված հայ-եգիպտական պայմանագրով, որով Լեւոնը պարտավորվում էր նաեւ խզել իր հարաբերություններն Արեւմուտքի հետ⁶⁷:

Չնայած այս աղետին, ինչպես նաեւ իր դաժան արարքներին ու լատինամոլ պահվածքին, Լեւոն թագավորը նույնպես վայելել է ժամանակակիցների հարգանքը, նրանց կողմից արժանանալով զանազան վերամբարձ հորջորջումների, ինչպես, օրինակ՝ «մանուկ հասակաւ եւ կատարեալ իմաստութեամբ»⁶⁸, «նորընծայ եւ դեռաբոյս մանուկ, յոյժ երկեղած եւ աստուածասէր»⁶⁹, «աստուածասէր եւ բարեպաշտ, կորովամիտ առաքինի ... սիրեալ ի քաջ նախնեաց կայծակն, ուղղափառ յոյժ»⁷⁰,

մութիւն, էջ 553: Հեթումի այդ ուղեւորության մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Հավելվածի» 2-րդ ենթագլխում:

⁶⁴ 1336–1337 թթ. մամլուքյան արշավանքների մասին տե՛ս *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ*, էջ 283–284, 295; *Ներսէս Պալիանէնց, Ժամանակագրական հատվածներ*, էջ 189; *Սամուէլ Անեցի, Հաւաքմունք*, էջ 159–160, 168:

⁶⁵ *Հմմտ. Adalian, Historical Dictionary*, p. 230.

⁶⁶ *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ*, էջ 295:

⁶⁷ *Հմմտ. Օրմանյան, Ազգապատում, § 1280; Микшаев, История, с. 457; Mutafian, Le royaume*, p. 85.

⁶⁸ *Պողարյան, Յուզակ, հտ. 6, էջ 438:*

⁶⁹ *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ*, էջ 193:

⁷⁰ *Անդ, էջ 218:*

«բարեպաշտ, ճշմարտասէր եւ վսեմախոհ պատանի, մեծ արհայ Հայոց»⁷¹, «թագաւոր ազգիս Հայոց յոյժ գիտնական»⁷², «նմանեալ նախնեացն սրբոց Կոստանդնի եւ Թէոդոսի»⁷³ եւ այլն: Սակայն մեզ թվում է, որ այս տիպի մեծարանմաններն ավելի շատ վերաբերում են ոչ թէ կոնկրետ նրա անձին, այլ ընդհանրապես թագավորի ինստիտուտին: Լեւոն Ե (IV) թագավորի կյանքն ընդհատվեց 1341 թ. վերջում կամ 1342-ի սկզբին⁷⁴: Անգավակ լինելով՝ նա մահվանից առաջ, սակայն, հասցրեց անել Հայոց գահի ժառանգության հետ կապված վերջին անհրաժեշտ կարգադրությունները:

Կարծում ենք, ավելորդ չէ նշել, որ հետնագույն շրջանի մի աղբյուրի վկայությամբ՝ Լեւոնն ունեցել է Հերթում անունով մի որդի. «Լեւոն մեռանի ամաց Լ (30)-ից, ի ԶՂ (1341) թվին, օգոստոսի ԻԸ (28), եւ ունէր որդի մի Հերթում անուն՝ խիստ փոքր»⁷⁵: Եթէ այս տեղեկությունը համապատասխանում է իրականությանը, ապա պետք է ենթադրել, որ կամ վերջինս արդեն մահացած էր, կամ էլ, որ նա ապօրինածին էր, հետեւաբար, զբված գահաժառանգության իրավունքից: Ըստ մի այլ աղբյուրի՝ Լեւոնն ունեցել է նաեւ Ալինախ անունով մի եղբայր, որը, սակայն, մահացել է մանուկ հասակում. «Օգոստոս Բ (2). Յայսմ ատուր (մեռաւ) մանուկն Ալինախն, որդի Օշին թագաւորին, եւ եղեւ պարակից վերին զարթնոցն»⁷⁶: Ինքնըստինքյան հասկանալի է, որ եթէ Ալինախը ողջ մնացած լինէր, ապա Լեւոն Ե (IV)-ի մահից հետո կամ պետք է ժառանգէր Հայոց գահը⁷⁷:

⁷¹ Անդ, էջ 241:

⁷² Անդ, էջ 268:

⁷³ Անդ, էջ 271:

⁷⁴ Ըստ մի վարկածի՝ նրան թունավորել էին Կիլիկիո հակալատինական հոսանքի ներկայացուցիչները կամ, այսպես կոչված, ազգայնականները. հմմտ. Tournebize, Histoire, p. 659; Микаелян, История, с. 457-458; Կոզյան, Հայոց եկեղեցին, էջ 473; Mutafian, Le royaume, p. 86; Coureas, Papacy, p. 104.

⁷⁵ Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 234:

⁷⁶ Անանուն, Յիշատակք հանգուցելոց, էջ 544:

⁷⁷ Հիմքեր կան պնդելու, որ Ալինախը մահացել է դեռեւս Լեւոնի թագադրությունից առաջ, քանի որ 1319-1320 թթ. ընդօրինակված երկու ձեռագրերում հիշատակվում է Օշինի միայն մեկ որդի. Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 156, 163:

ԳԻ ԼՈՒՍԻՆՅԱՆ–ԿՈՍՏԱՆԴԻՆ Գ (II) ԹԱԳԱՎՈՐ (1342–1344 թթ.)

«Այսուհետև բարձաւ թագաւորութիւնն Սըսոյ յազգէ Ռուբինեանց»,— Լեւոնի մահից հետո ափսոսանով արձանագրում է անանուն ժամանակագիրներից մեկը¹: Հեղինակը ճիշտ է այնքանով, որքանով Լեւոն Ե (IV)-ն, իսկապես, Կիլիկիո թագավորական հարստության վերջին արուշապիղն էր: Սակայն նրա կողմից անտեսվել է, որ արեւայատոհմը կարող էր շարունակվել նաև իգական գծով, ինչն իրողություն պիտի դառնար Լեւոնի հորաֆեոորդու՝ Գի Լուսինյանի գահակալմամբ: Վերջինս Կիպրոսի գահի բռնազավթիչ Ամորի Տյուրացու (1306–1310 թթ.) եւ Լեւոն Գ (II) թագավորի դստեր՝ Զապելի որդին էր, ավագության կարգով երրորդն իր եղբայրների շարքում: Հովհաննես Դարդելի ժամանակագրությունը, որը Կիլիկիո վերջին չորս թագավորներին վերաբերող մեր գլխավոր աղբյուրն է, այդ մասին տալիս է հետեւյալ սպառիչ տեղեկությունը. «Տիկին Իգապել ամուսնացաւ ի Կիպրոս ընդ իշխանին Ամորի Լուսինեան, որ էր տէր Տիրոսի եւ եղբայր Հենրիկոսի արեւային Կիպրոսի: Եւ եղեն տիկնոջն Իգապելի ի տեառնէ իւրմէ եւ յամուսնոյն որդիք արու՝ հինգ: Առաջինն կոչեցաւ Հիւզ, երկրորդն՝ Հանրի, երրորդն՝ Գուի, որ եղև ապա թագաւոր Հայոց, չորրորդն Զեհան, որ եղև իշխան եւ գունդատապլ թագաւորութեան ... եւ որդին հինգերորդ՝ Բոէմոնդ»²:

¹ Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 1, էջ 257:

² Յովհաննէս Դարդէլի, Ժամանակագրութիւն, էջ 27: Հստ Ռուզ-Կոլենբերգի՝ Ամորին ու Զապելը, բացի հինգ որդիներից, ունեին նաև մի դուստր՝ Ազնես անունով,

Ինչպես տեսանք նախորդ ենթագլխում, Ամորիի սպանությունից (1310 թ.) մեկ տարի անց Ջապելն իր հինգ որդիների հետ տեղափոխվել էր Կիլիկիա եւ ապաստան գտել իր եղբոր՝ Օշին թագավորի արհունիւմ³: 1318 թվականին Գի Լուսինյանն իր մորաբուռն՝ Բյուզանդական կայսրուհի Ռիտա-Մարիա-Քսենիայի հրավերով մեկնել էր Կոստանդնուպոլիս ու հաստատվել այնտեղ⁴, այդպիսով գերծ մնալով իր ընտանիքին բաժին ընկած ողբերգությունից, որին զոհ էին գնացել իր մայրն ու երկու ավագ եղբայրները՝ Հուգոն եւ Հենրի, իսկ մյուս երկուսը՝ Հովհաննեսը (Ջեհան) եւ Բոհեմունդը, արտաքսվելով Կիլիկիայից, ապաստան էին գտել Հոռոտսի Հիվանդախնամ ասպետների մոտ (1323 թ.)⁵: Իրենց հալածչի՝ Օշին պայլի սպանությունից հետո (1329 թ.) Հովհաննեսն ու Բոհեմունդը վերադարձել էին Կիլիկիա եւ մեծ պատիվների արժանացել Լեոն Ե (IV) թագավորի կողմից, առաջինը՝ դառնալով Հայոց գունդստապլ, իսկ երկրորդը՝ Կոռիկոսի կոմս. «Եւ յետ այնորիկ վերադարձոյց (Լեոն) ի Հայաստան զհօրաբեռորդիսն իւր զիշխանն Ջեհան Լուսինեան, զոր արար գունդստապլ Հայոց, եւ ետ նմա ի կնութիւն զՍուլթան տիկին, զղուստր արհային Վրաց⁶. եւ զսեպունն Բոէմոնդ զեղբայր նորա, զոր արար կոմս Կոռիկոսի եւ ետ նմա ի կնութիւն զղուստր Բօրուենի, մեծի մարաջախտի թագաւորութեանն»⁷:

Ինչ վերաբերում է Գի Լուսինյանին, որը հայկական աղբյուրներում հայտնի է Կի, Կիտ կամ Կիտօն (Գվիդոն) անունով⁸, ապա նա, մնալով Կոստանդնուպոլսում, ծառայության էր մտել Բյուզանդական կայսրերի

որը ժամանակին ամուսնացել էր Հայոց Լեոն Գ (III) թագավորի հետ եւ մահացել 1309 թ. հետո. Rüdtt-Collenberg, The Rupenides, III (H2), p. 74, n. 177.

³ Յովհաննէս Դարդեւ, Ժամանակագրութիւն, էջ 31:

⁴ Տէ՛ս Բարթիկյան, Հետազոտութիւններ, հտ. 1, էջ 687:

⁵ Յովհաննէս Դարդեւ, Ժամանակագրութիւն, էջ 29:

⁶ Կ. Մուսաֆյանը կասկածում է Սուլթան (Soldane) տիկնոջ՝ Վրաց արքայադուստր լինելու իրողության արժանահավատությանը. Mutafian, Léon V Lusignan, p. 201-202.

⁷ Յովհաննէս Դարդեւ, Ժամանակագրութիւն, էջ 31:

⁸ Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 1, էջ 89, 390; հտ. 2, էջ 178, 205; Անանուն, Յիշատակք հանգուցելոց, էջ 545; Աւետիք Տիգրանակերտցի, Գավազանագիրք, էջ 570; Մինաս Ամզոցի, Ազգաբանութիւն, էջ 51 (Կիս փխ Կիտ):

մոտ եւ հասել բարձր հասարակական դիրքի. «զի էր ինքն Գուի հաստատեալ ի Կոստանդնուպոլիս աւագաբար եւ պայծառապէս», ինչպէս գրում է Հովհաննէս Դարդելը⁹: Գի արեայազնի այդ շրջանի գործունեությունը, բյուզանդական աղբյուրների հիման վրա, հանգամանորեն լուսաբանված է Հ. Բարթիկյանի վերջերս հրատարակված «Գլիդոն Լուսինյանը Բյուզանդիայում եւ Կիլիկյան Հայաստանում» հոդվածում (1998 թ.)¹⁰, որից եւ հիմնականում ֆաղում ենք ստորեւ ներկայացվող փաստերը: 1328 թվականին, երեսունչորս տարեկան հասակում, Գին իր մորաբոջ որդու՝ Բյուզանդական կայսր Անդրոնիկոս III-ի կողմից նշանակվել էր «Արեամուտի գորավար» (τῆς ἐσπέρας στρατηγός), այսինքն՝ «Թրակիա եւ Մակեդոնիա բանակաթեմերի ռազմական ու ֆաղաֆական ղեկավար»¹¹: Նիկեփոր Գրեգորասը, նշտելով նրա իշխանության ներքո գտնվող տարածքը, գրում է, որ «Գիմ Հայր» Սերրե (ուղղելի՛ Ֆերրե) ֆաղաֆի եւ մինչեւ Խրիստուպոլիս ընկած ավանների կառավարիչն էր¹²: Անդրոնիկոս III-ի մահից հետո (1341 թ.) Գի Լուսինյանը գործոն մասնակցություն է ունենում Բյուզանդիայում ծագած գահակալական կռիվներին՝ հակադրվելով մանկահասակ Հովհաննէս V կայսեր խնամակալ Հովհաննէս Կանտակուզենոսին¹³: Սակայն վերջինիս հաղթանակից հետո նա 1342 թվականին ստիպված է լինում հեռանալ Բյուզանդիայից եւ ընդունել Հայոց գահին տիրելու հրավերը. «Եկավ Բյուզանդիոն, այնտեղից էլ հեռացավ Կիլիկիա, ֆանգի հայերն էին հրավիրել թագավորելու», - այդ մասին գրում է նույն ինքը Հովհաննէս Կանտակուզենոսը՝ ապագա կայսրը (1347-1354 թթ.)¹⁴:

Թե ինչ հրավերի մասին է խոսքը, պարզվում է Հովհաննէս Դարդելի ժամանակագրությունից: Ըստ նրա՝ Լեոն Ե (IV) թագավորը, լինելով անզավակ, «հրաման ետ ի կենդանութեան անդ իւրում, զի թագաւորու-

⁹ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 32:

¹⁰ Բարթիկյան, Հետազոտություններ, հտ. 1, էջ 683-692:

¹¹ Անդ, էջ 687:

¹² Անդ, էջ 688:

¹³ Անդ, 688-689: Հմմտ. Նահե՝ Չամչյան, Պատմութիւն, հտ. 3, էջ 347:

¹⁴ Բարթիկյան, Հետազոտություններ, հտ. 1, էջ 689:

թիւնն Հայոց զկնի մահուան իւրոյ անցցէ յերէցն յորդիս Զապէլ տիկնոջ քն հօր իւրոյ Օշին արֆայի»¹⁵: Ինչպես արդեն նշեցինք, Զապէլի ողջ մնացած որդիներից ավագը Գին էր, ուստի Լեւոնը, «երէց» ասելով, նկատի ուներ հենց նրան: Սակայն Կիլիկիո իշխաններն, անտեսելով թագավորի կտակը, Հայոց գահն առաջարկում են նրա եղբորը՝ Հովհաննեսին. «Յետ վճարելոյ ի կենաց Լեւոնի Դ-ի աւագք եւ անաւագք աշխարհին հաւանեցան միաձայն զի սեպուհն Ջեհան Լուսինեան, իշխան եւ գունդստապլ թագաւորութեանն Հայոց եւ հայր Լեւոնի Ե-ի, որ կեայ ցայսօր ժամանակի, վարեցէ զթագաւորութիւնն Հայոց»¹⁶: Այս դրվագը կարող է հնարված լինել ֆրանսիացի ժամանակագրի կողմից՝ մեծարելու համար իր նախապատիվ թագավորի՝ Լեւոն Զ (V)-ի հորը: Սակայն բացառված չէ նաեւ, որ Հայոց իշխաններն, իսկապես, նախընտրեին երկար տարիներ Կիլիկիայում ապրած, երկրի բանակը զլիավորած եւ ըստ այդմ, լիովին հայացած Հովհաննեսին, քան օտարացած Գիին:

Ինչեւէ, Հովհաննես-Ջեհանը մերժում է իշխանների առաջարկը եւ, հավատարիմ մնալով հանգուցյալ թագավորի կտակին, պատգամավորներ է ուղարկում Կոստանդնուպոլիս, հրավիրելով իր եղբորը բազմելու Հայոց գահին ու համաձայնելով՝ մինչեւ նրա ժամանումը վարել թագավորության գործերը. «Յայնժամ առաքեաց նա հրեշտակութիւն առ եղբայր իւր երէց, իշխանն Գուի Լուսինեան ի Կոստանդնուպոլիս, թէ ո՛րպէս արֆայն Լեւոն Դ իւրեանցն մօրեղբօրորդի, մեռեալ անզաակ, արարեալ էր զնա ժառանգ իւր, իբրեւ մերձաւորագոյն ազգական արու, եւ թէ ինքն՝ իշխանն Ջեհան, վարէր զարֆայութիւնն ի սէր եղբօրն, մինչեւ եկեալ հասցէ նա ի Հայաստան»¹⁷: Սակայն Գին, ըստ երեւոյթին, Բյուզանդիայում վայելած իր բարձր պատիվը գերադասելով Հայոց գահին, հրաժարվում է դրանից հօգուտ Հովհաննեսի. «Այլ սակայն իշխանն Գուի մերժեաց զառաջինն զամենայն իրաւունս թագաւորութեանն, յանձն արարեալ զայնս ի ձեռս Ջեհանի Լուսինեան, եղբօր իւրոյ, փոխանակ զի էր ինքն Գուի հաստատեալ ի Կոստանդնուպոլիս

¹⁵ Յովհաննէս Դարդեղ, Ժամանակագրութիւն, էջ 31:

¹⁶ Անդ, էջ 31-32:

¹⁷ Անդ, էջ 32:

ասագաբար եւ պայծառապէս, միանգամայն՝ զի եւ զբարին կամէր եղ-
թօր իւրում»¹⁸: Այնժամ Հովհաննէսը, կրկնելով իր թախանձանքները,
նույնիսկ սպառնում է բարձիթողի մատնել թագավորության գործերը եւ
մեկնել Կոստանդնուպոլիս. «Այլ գունդստապլն Ջեհան շլամեցաւ բնա
առնուլ յանձն գթագաւորութիւնն եւ առաքեաց բազում անգամ առ եղ-
բայր իւր Գուի Լուսինեան զի հաճեսցի գալ եւ առնուլ զժառանգութիւն
իւր, յօգուտ ֆրիստոնէութեան. ապա թէ ոչ, ասէր, թողից զվարչութիւն
թագաւորութեանն եւ եկից առ քեզ»¹⁹:

Ի վերջո, ըստ Դարդելի, անսալով եղբոր ցանկությանը, բայց իրակա-
նում, ինչպէս տեսանք, ձախողության մատնվելով Բյուզանդիայում, Գին
համաձայնում է ստանձնել Հայոց գահը եւ ժամանում Կիլիկիա. «Իբրեւ
լուսա Գուի Լուսինեան զկամս եղբօր իւրոյ Ջեհան իշխանին Լուսինեան,
անսաց նմա եւ եկն ի Հայաստան բազմութեամբ զօրականաց յօգնութիւն
եւ ի կազդուրումն աշխարհին»²⁰: Փառահեղ ընդունելության արժանանա-
լով Կիլիկիայում նա մեծ հանդիսությամբ թագադրվում է 1342 թ. հոկ-
տեմբեր ամսին. «Եւ եղեւ նա ընկալեալ մեծապատիւ փառօք յաշխարհի
թագաւորութեան իւրոյ եւ պսակեցաւ ի Սիս ֆաղափ շեղաշում հանդիսիս,
յամի շնորհաց 1342, յամսեանն Հոկտեմբերի»²¹: Ըստ այդմ, Հովհան-
նէս-Ջեհանի կառավարչության կամ պայլության շրջանը տեւել է շուրջ մեկ
տարի, ինչն, ի դեպ, արձանագրված է որոշ հայկական աղբյուրներում,
ինչպէս՝ «Պարոն Ջուան, հօրքեր որդի Լետնիս, պայլ կացեալ ամ մի»²²,
կամ «Պարոն Ջոհանէս, հօրքեր որդի Լետնիս, պայլ կացեալ ամ մի»²³,

¹⁸ Անդ:

¹⁹ Անդ:

²⁰ Անդ, էջ 32–33: Դարդելի ժամանակագրության հետագա շարադրանքից պարզ-
վում է, որ «բազմութիւն զօրականաց» կոչվածն ընդամենը երեք հարյուր
Ֆրանկ ասպետներից կազմված մի թիկնազոր էր (Անդ, էջ 73): Ը. Բարթիկյանի
կարծիքով՝ այդ թիկնազորը կարող էր բաղկացած լինել բյուզանդացիներից,
քանի որ Գին Բյուզանդիայի «Արեւմուտքի դոմեստիկոսն» էր. Բարթիկյան, Հե-
տադրոտութիւններ, հտ. 1, էջ 690:

²¹ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 38:

²² Ներսէս Պալիաննեց, Իշխանութիւնք, էջ 205:

²³ Հեթում Թագաւոր, Պատմութիւն (շարունակող), էջ 89:

կամ է՝ «Ճիւան՝ հօրվեր որդի Լեոնի. սա Պայլ կոչեցաւ, իշխեաց ամ մի»²⁴: Թեև աղավաղված՝ Հովհաննեսի անունը, «Հայոց պարոնի», այն է՝ կառավարչի հանգամանքով, հիշատակված է նաև 1341/2 թվականին ընդօրինակված մի ձեռագրի թվագրման բանաձեւում. «Ի թվականին Հայոց ՁՂ, ի հայրապետութեան տեառն Մխիթարայ, եւ պարոնութեան Հայոց Ճաւսլինի, ստացաւ սուրբ Աւետարանս կին ոմն Սպիլ անուն»²⁵:

Մ. Չամչանը, տեղյակ չլինելով Դարդելի ժամանակագրության գոյությունը²⁶, պնդում է, որ Լեոն Ե (IV)-ի մահից հետո, 1342 թվականին, Հայոց իշխանները թագավոր էին ընտրել Չապելի «երիցագոյն» որդուն՝ Հովհաննեսին, նրան տալով Կոստանդին անունը. «Ապա խորհուրդ արարեալ ընտրեցին հայք գՅովհաննէս պայլ, որ եւ Ճիւան ասի, եւ թագաւորեցուցին զնա ի Կիլիկիա, անուն եղեալ նմա Կոստանդին»²⁷: Սակայն մեկ տարի անց, շարունակում է հեղինակը, նույն իշխանները, վրդովված Հովհաննեսի արեւմտամետ փաղափականությունից ու հոռի բարբերից, սպանում են նրան եւ թագավորելու հրավիրում նրա եղբորը. «Ընդ այս գործ սորա ոչ եւս հանդուրժեալ զօրացն Հայոց՝ յարեան ի վերայ նորա, եւ սպանին զնա, յետ կալոյ նորա ի թագաւորութեան իբր ամ մի: Յայնժամ խորհուրդ արարեալ իշխանացն Հայոց՝ կոչեցին զեղբայր նորա զնախայիշատակեալդ Գուիտոն, որ եւ Կիտօն կամ Կիտ կոչի, եւ թագաւորեցուցին զնա ի Կիլիկիա»²⁸: Որքան է զարմանալի է, անգամ Դարդելի ժամանակագրության հայտնաբերումից հետո Մ. Օրմանյանը կրկնում է Մ. Չամչանի սխալը եւ Հովհաննես-Ջեհանին դասում Հայոց թագավորների շարքը. «Ջիւան Լուսինեան, որ պայլութեան պաշտօն կը վարէր, պետութեան գլուխը անցաւ եւ թագաւորութեան տիրացաւ, եւ ոչ թէ խնամակալութեան ձեռով կամ թագապահի ախողոսով, ինչպէս ոմանք կը մեկնեն, այլ իսկական տիրապե-

²⁴ Մինաս Ամդեցի, Ազգաբանութիւն, էջ 50:

²⁵ Կյուլեսերյան, Յուցակ, էջ 1113:

²⁶ Հովհաննես Դարդելի ժամանակագրությունը հայտնաբերել է Ուլիս Ռոբերը (Ulysse Robert) 1882 թվականին. տե՛ս Kühn, Leon V, S. 78.

²⁷ Չամչան, Պատմութիւն, հտ. 3, էջ 341:

²⁸ Անդ, էջ 348: Հմմտ. Ghazarian, The Armenian Kingdom, p. 158.

տուրքեան կերպով, եւ Զիւան անսովոր անունն ալ Կոստանդինի փոխելով, հռչակուեցաւ եւ ընդունուեցաւ, իբր փառատուեալ տէր Կոստանդին, շնորհիւ եւ ընտրութեամբ Աստուծոյ թագաւոր ամենայն Հայոց»²⁹: Օրմանյանի սխալն, ակնհայտորեն, գալիս է նրանից, որ նա Սսի ժողովը, որի արձանագրութիւնից էլ ֆաղված են «փառատուեալ տէր Կոստանդին, շնորհիւ եւ ընտրութեամբ Աստուծոյ թագաւոր ամենայն Հայոց» բառերը, թվագրում է 1343 թվականով: Այնինչ հայտնի է, որ այդ ժողովն իրականում տեղի է ունեցել 1345 թվականին³⁰, Կոստանդին Դ (III) թագավորի օրոք, որին էլ, հետեւաբար, վերաբերում են վերոհիշյալ բառերը: Մտացածին է նաեւ Հովհաննես-Ջեհանի սպանութեան վարկածը, նախ՝ այն պատճառով, որ առկա աղբյուրները դրա մասին ոչինչ չեն հաղորդում, եւ երկրորդ՝ Հովհաննես Դարդելը հստակորեն տեղեկացնում է, որ նա մահացել է բնական մահով 1344 թ. օգոստոսի 17-ին. «Ի նմին ամի, այսինքն ի 1344 թուականին, յետքն եւ տասներորդում ատուր ամսեանն Օգոստոսի, զրաւեցաւ ի կենաց ի Սիս ֆաղափի ազնուատոհմ պարոն Ջեհան Լուսինեան, իշխան եւ գունդստապլ Հայոց»³¹:

Գահաժառանգության իրավունքի պահանջների տեսակետից Գիի գահակալումը միանգամայն օրինական էր, քանի որ ըստ ֆեոդալական օրենքի՝ արժայատոհմի արու շառավիղների սպառման դեպքում գահը փոխանցվում էր իգական գծով: Գիին, արդ, այդ իրավունքը ձեռք էր բերել շնորհիվ այն հանգամանքի, որ մորական կողմից Հայոց Լեւոն Գ (II) թագավորի թոռն էր: Ըստ այդմ, մենք գործ ունենք Կիլիկիո պատմության մեջ իգական գծով գահաժառանգության չորրորդ դեպքի հետ՝ Ռուբեն Գ-ի դուստր Ալիսից, վերջինիս որդի Ռայմոնդ-Ռուբենից եւ Լեւոն Բ (I)-ի դուստր Զապելից հետո: Իրավական առումով Գիի գահակալումն ամենեւին թագավորական հարստության փոփոխություն չէր նշանակում, ինչպես ներկայացնում են հետազոտողներից շատերը, Լուսինյաններին համարելով Կիլիկիո երրորդ արժայատոհմը՝ Ռուբինյան-

²⁹ Օրմանյան, Ազգապատում, § 1290. տե՛ս նաեւ՝ § 1309: Հմմտ. Պալատանյան, Պատմութիւն, էջ 381-382:

³⁰ Tournebize, Histoire, p. 670, 675; Mutaflan, Trente-six erreurs, § 26.

³¹ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 50:

ներից եւ Հեթոմյաններից հետո³²: Նման դատողությունն արդյունք է փառացած այն պատկերացման, որ թագավորական հարստությունը կարող էր շարունակվել միայն արական գծով: Անգամ եթե Լուսինյաններն այլ ընտանիք չինեին, միեւնույն է, ինչպես իրավացիորեն նշում է Կ. Մուրաֆյանը, այն առանձին հարստություն կոչելն անտեղի է, քանի որ նրանցից մեկը թագավորել է ընդամենը երկու, իսկ մյուսը՝ տասնամյակներ անց՝ կես տարի³³:

Որոշ աղբյուրների համաձայն՝ ոչ թե Հովհաննես-Ջեհանը, այլ Գին է, որ զահակալեյիս ընդունել է պաշտոնական Կոստանդին անունը. «Յետ մահուան Ղեւոնի, վասն ոչ գոլոյ նմա որդի, առնու զթագաւորութիւն Կոստանդին, որ յազգէ նորին, որ եւ ... վասն անպարկեշտ վարուց սպանեալ եղեւ ի զաւրաց իւրոց: ... Եւ թագաւորէ միւս Կոստանդին յայլմէ ազգէ, որ այժմ ունի զթագաւորութիւն մինչեւ ցայս վայր: Եւ է թիւս Հայոց ՊՂ (1359)»³⁴: Նկատի ունենալով, որ Գիի դրամների վրա դրոշմված է «Կի թագաւոր Հայոց» մակագրությունը³⁵, որոշ հետազոտողներ կասկածի տակ են առնում Կոստանդին անվան հավաստիությունը³⁶: Այս կապակցությամբ, սակայն, մեզ ուշագրավ է թվում այն փաստը, որ Ղեւոնի Սուրխաթ ֆաղաֆում ընդօրինակված երեք ձեռագրեր թվագրված են Հայոց ՋՂԳ թվականով եւ Մխիթար կաթողիկոսի ու Կոստանդին թագավորի ժամանակով. «Կատարեցի սուրբ եւ ցանկալի անտարանս... ի հայ թուականին ՋՂԳ... ի հայրապետութեան Հայոց տեառն

³² Հմմտ. Morgan, Histoire, p. 218; Grousset, L'Empire, p. 402; Микеляян, История, с. 458 եւ այլն:

³³ Mutafian, Trente-six erreurs, § 27.

³⁴ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 441. նույնը՝ Մաշտոցի անվ. Մատենագարան, ձեռ. Թ. 502, էջ 167բ; Թ. 5787, էջ 342: Տե՛ս նաեւ՝ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 168; Տաշյան, Յուզակ, էջ 111; Յակոբ Սեւցի, Պատմութիւն, էջ 235: Իսկ աղբյուրներից մեկում Գի Լուսինյանն ուղղակի կոչված է «Կոստանդին Կիտ» անունով. Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 570:

³⁵ Տե՛ս Bedoukian, Coinage, p. 380–382.

³⁶ Հմմտ. Mutafian, Trente-six erreurs, § 24. Սակայն Պ. Պտուկյանն այդ փաստը բացատրում է նրանով, որ Գին պարզապէս արհամարհել է հայերի զգացումները. Bedoukian, Coinage, p. 18.

Մխիթարայ, եւ ի թագաւորութեան Կոստանդեայ»³⁷, «Կատարեցի սուրբ եւ ցանկալի անտարանս ... ի հայ թուականին ՁՂԳ... ի կաթողիկոսութեան Հա[յոց Մխի]թարայ եւ թագաւորութեան Կոստանդեայ»³⁸, «Գրեցաւ եղանակաւոր տառս ի թվականութեանս ՁՂԳ, ի հայրապետութեան տեառն Մխիթարայ եւ ի թագաւորութեան Կոստանդեա բարեպաշտի»³⁹: Հայոց ՁՂԳ (793) թվականն ընդգրկում է Փրկչական 1343 թ. դեկտեմբերի 26-ից մինչև 1344 թ. դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակը⁴⁰: Քանի որ հստակորեն հայտնի է, որ Գին մահացել է 1344 թ. նոյեմբերի 17-ին⁴¹, դա նշանակում է, որ ՊՂԳ թվականի շուրջ տասնմեկ ամիսները համընկնում են նրա գահակալության շրջանին: Ուստի առավել քան հավանական է, որ Գին, իսկապես, զուգահեռաբար կրել է նաև հայերին հոգեհարազատ Կոստանդին անունը: Այլ կերպ, դժվար է պատկերացնել, որ նախ՝ վերոհիշյալ բոլոր երեք ձեռագրերն էլ ընդօրինակված լինեին 1344 թ. նոյեմբերի 17-ից մինչև դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակամիջոցում եւ երկրորդ, որ մեկ ամսում, կամ ավելի ճիշտ՝ 38 օրվա ընթացքում, Գիի սպանման եւ հաջորդ Կոստանդինի գահակալման լուրը հասած լիներ Ղրիմ: Ինչ վերաբերում է Գիի գահակալության տեւողությանը, ապա Հովհաննէս Դարդելի տվյալներով՝ նա թագավորել է շուրջ երկու տարի՝ 1342 թ. հոկտեմբերից մինչև 1344 թ. նոյեմբեր⁴²: Դա հաստատում են նաև հայկական աղբյուրները՝ նրան հատկացնելով ուղիղ երկու տարվա գահակալություն⁴³:

Հայոց թագավորների միջազգային իրավական կարգավիճակի բո-

³⁷ *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 340:*

³⁸ *Անդ, էջ 341:*

³⁹ *Մաշտոցի անվ. Մատենագարան, ձեռ. №. 9749, էջ 348բ:*

⁴⁰ *Հմմտ. Dutaurier, La Chronologie, p. 387.*

⁴¹ *Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 49:*

⁴² *Անդ, էջ 33, 49:*

⁴³ *Ներսէս Պալիաննեց, Իշխանութիւնք, էջ 205; Հեթում Թագաւոր, Պատմութիւն (շարունակող), էջ 89; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 168; Մինաս Ամդեցի, Ազգաբանութիւն, էջ 51: Միայն մեկ աղբյուր է, որ նրան հատկացնում է երեք տարվա գահակալություն, թերեւս, ներառելով Հովհաննէս-Ջեհանի խնամակալության շրջանը. Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 235:*

վանդակությունն ըմբռնելու առումով ուշագրավ է Հովհաննես Դարդելի այն տեղեկությունը, որ Եգիպտոսի սուլթանն, ըստ գոյություն ունեցող սովորության, Գիից պահանջել էր գահակալության առթիվ ընծաներ մատուցել իրեն. «Եւ Բանգի սուլթանին Բաբելոնի»⁴⁴ եւ Թուրքաց, մերձաբնակաց թագաւորութեանն Հայոց, լեալ էր սովորութիւն զի ի լինել նորոյ թագաւորի ի Հայաստան՝ առաքեալ լինէին նոցա պարգեւ եւ ընծայք, իբրեւ տուրս հարկաց, պատգամաւորս արձակեցին առ արքայն Գուի, պահանջելով զի ըստ օրինակի նախորդացն իւրոց առաքեսցէ առ նոսա զտուրս ընծայիցն»⁴⁵: Այնուհետեւ Դարդելն ավելացնում է, որ Գին համարձակորեն մերժել էր սուլթանի պահանջը՝ ոչ միայն հրաժարվելով մատուցել ակնկալված ընծաները, այլեւ դադարեցնելով Կիլիկիային պարտադրված տարեկան հարկի վճարումը. «Այսպիսեալ բուն զօրութեամբ վարեաց արքայ Գուի զիւրն թագաւորութիւն, առանց հատուցանելոյ ումեք սակս հարկաց՝ ո՛չ ծովու եւ ո՛չ ցամաքի եւ առանց կորուսանելոյ թիզ մի հողոյ»⁴⁶: Չնայած ֆրանսիացի ժամանակագրի խիստ ընդգծված դրական կողմնակալությանը Գիի նկատմամբ, մենք հիմք չունենք կասկածելու այս տեղեկության արժանահավատությանը: Ընդհակառակը, կարծում ենք, որ իր գահակալության սկզբում, դեռես ծանոթ չլինելով Մերձավոր Արեւելքի ֆաղափական դրությանը, նորընծա թագավորը, թերես, հույսը դրած Արեւմուտքի աջակցության վրա, իսկապես, կարող էր այդպիսի կտրուկ շրջադարձ կատարել հայ-մամլուխյան հարաբերություններում:

Ի դեպ, Գիի կողմից մամլուխների տարեկան հարկը չվճարելու մասին տեղեկությունը, կարծես թե, հաստատվում է դրամագիտության տվյալներով: Իր հողվածներից մեկում⁴⁷, Պ. Պտուկյանը բացահայտել է, որ մամլուխները Կիլիկիայից գանձված արծաթե դրամները վերադրոջմել են արաբական գրերով՝ դրանք մահմեդական երկրներում շրջանառության մեջ դնելու նպատակով: Սակայն, Բանի որ այդ գործողությունը

⁴⁴ Միջնադարում հաճախ Բաբելոն էր կոչվում Կահիրե քաղաքը:

⁴⁵ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 33:

⁴⁶ Անդ:

⁴⁷ Bedoukian, Some armenian coins, p. 138-147.

կատարվել է առանց անհրաժեշտ ջերմամշակման, դրամների վրա երբեմն պահպանվել են նախկին հայերեն մակագրությունները, որոնցում ընթեռնելի են Հայոց թագավորներ Լեոն Դ (III)-ի (1301–1307 թթ.), Օշինի (1308–1320 թթ.), Լեոն Ե (IV)-ի (1320–1342 թթ.), Կոստանդին Դ (III)-ի (1344–1362 թթ.) եւ, այսպես կոչված, Լեոն բոնազավթչի (1363–1365 թթ.) անունները: Դրանց շարժում հատկապես շատ են Լեոն Ե (IV) եւ Կոստանդին Դ (III) թագավորների անունով հատված դրամները, իսկ Լեոն Դ (III)-ի եւ Օշինի հազվագյուտ դրամներն, ըստ հեղինակի, մամլուֆների ձեռքն են անցել Լեոն Ե (IV)-ի մուծած հարկի կազմում: Ինչ վերաբերում է արաբերեն գրություններին, ապա դրանք պարունակում են Եգիպտոսի մամլուֆ սուլթաններ Նասրեդդին Մուհամմեդի (1294–1295, 1299–1340 թթ.) եւ Շաբան II-ի (1363–1376 թթ.) անունները, ինչը նշանակում է, որ հայկական դրամների վերադրոշմումը տեղի է ունեցել նրանց օրոք: Արդ, ինչպես տեսնում ենք, մամլուֆների կողմից վերադրոշված հայկական արծաթադրամների թվում չկան Գի Լուսինյանին պատկանող նմուշներ: Այս փաստը, Պտուկյանի կարծիքով, կարող է նշանակել, որ նա իսկապես մամլուֆներին հարկ չի վճարել, թեև բացառված չլինելով, որ հաջորդ թագավորների մուծած դրամների շարժում նաեւ նրա անունով հատված հատուկենտ միավորներ հայտնաբերվեն⁴⁸:

Նկատի ունենալով Բյուզանդիայում Գիի կուտակած բազմամյա ռազմական փորձը, ըստ երեւոյթին, արժանահավատ պետք է համարել նաեւ Դարդելի այն պնդումը, որ նա հմուտ զորավար եւ քաջ պատերազմիկ էր. «Եւ հօր բազկաւ եւ խիզախ քաջութեամբ մարտնչէր ընդ թշնամիս իւր եւ յաղթող հանդիսանայր հանապազ ի վերայ նոցա»⁴⁹: Այս առումով ավելի պերճախոս է Դարդելի ժամանակագրության մի այլ հատված, որտեղ տրված է Գի թագավորի գործունեության ընդհանուր գնահատականը. «Ի ժամանակին, յորում արքայն Հայոց Գուի Լու-

⁴⁸ Անդ, էջ 144: Ի հաստատումն Պտուկյանի ենթադրության՝ արդեն հայտնաբերվել է Գի թագավորի վերադրոշված մի արծաթադրամ. տե՛ս Ներսեսյան, Կրկնադրոշմուած դրամները, էջ 166, 170, 176:

⁴⁹ Յովհաննէս Դարդելի, Ժամանակագրութիւն, էջ 33:

սինեան թագաւորեաց ի Հայաստան, վարեաց զիշխանութիւն իւր հօր զօրութեամբ եւ բարձր բազկաւ. սիրէր եւ պաշտէր զԱստուած ի բոլոր սրտէ, եւ պաշտպան կայր օգտին հասարակաց՝ յամենայն կարողութենէ իւրմէ, եւ զագատութիւն երկրին պահէր մեծաշան հսկողութեամբ, ոչ հատուցանելով անհաւատից տուրս հարկաց. եւ անձին իւրում ոչ տուեալ հանգիստ՝ զղէմ ունէր թշնամեաց իւրոց, եւ վանէր զնոսա յաճախ զինու զօրութեամբ»⁵⁰: Ի դեպ, Գի թագավորի բարեպաշտության ու զինական առաքինությունների զնահատման հարցում Դարդելը միայնակ չէ. նույնը հավաստում է նաեւ հայկական աղբյուրներից մեկը՝ լակոնիկ կերպով գրելով հետեւյալը. «Կիտ կիզինեան թագաւորն Հայոց, որ էր այր աստուածասէր եւ բարեպաշտ եւ փաշամարտիկ»⁵¹:

Սակայն հակառակ այդ առաքինություններին ու հայրենիքին մատուցած մեծ ծառայություններին, հայերն, ըստ Դարդելի, երախտամոռություն են ցուցաբերում իրենց թագավորի նկատմամբ եւ երկու տարի անց սպանում նրան իր եղբոր՝ Բոհեմունդի հետ միասին. «Ժողովեցան բազմութեամբ մեծաւ եւ վառեալ ի զէն՝ գրոհ ետուն ի տեղին, որ էր զգօնաբարոյ արքայն Գուի, բնիկ տէրն իւրեանց, եւ եղբայր նորա իշխանն Բոհեմունդ Լուսինեան, կոմսն Կոռիկոսի. եւ մինչ կային նոքա առանց իրիք զգոշութեան՝ սուր ի վերայ եղեալ խողխողեցին զնոսա դաւաճան մատնութեամբ՝ զոր տարապարտուց, եւ հարին ընդ նոսա ի սուր սուսերի բազմութիւն մեծ արանց պատերազմի, զորս բերեալ էր արքային ի կողմանցն Արեւմտից ի պահպանութիւն աշխարհին Հայոց: ... Եւ այս անցք անցին ի միում ատուր, ի փաղափին Ադանայ, յամի տեառն 1344, յեօթնետասներորդում ատուր ամսեանն Նոյեմբերի»⁵²: Հայկական աղբյուրներն, ավելի սակավախոս լինելով, այդ իրադարձությանն ընդամենը մի փանի տող են հատկացնում. «Ընդ սորին տեառն Կլէմէնթոսիս»⁵³ փահանայա-

⁵⁰ Անդ, էջ 48–49:

⁵¹ Անանուն, Յիշատակք հանգուցելոց, էջ 545:

⁵² Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 49: Գիի եւ Բոհեմունդի մահը նոյեմբերի 17-ով է թվագրված նաեւ «Յիշատակք հանգուցելոց» պայմանական վերնագիրը կրող գրվածքում (էջ 545):

⁵³ Կղեմես VI Հռոմի պապ (1342–1352 թթ.):

պետութեամբն Գ ամին եղեւ սպանեալ սրով յիւրայնոցն թագաւորն Հայոց Կիտօն եւ եղբայրն նորա Պէմունդ գունդն Կօռիկոսոս»⁵⁴, կամ «Կիտ եղբայր Զոհաննիսի՝ ամս Բ. Զսայ ընդ եղբօրն իւր հայերն սպանին»⁵⁵: Իսկ Աբուլֆիղայի շարունակողը պարզապէս արձանագրում է. «Հիջրի 746 թվականին հայերը սպանեցին իրենց թագավոր Տրանկ Քունդսբարլին»⁵⁶:

Արդի հետազոտողների մեծամասնության կարծիքով՝ Գին սպանվել էր իւր ծայրահեղ լատինասիրության, Հայոց ավանդույթներն ու բարեբերը մերժելու, բնիկ իշխանների իրավունքները ոտնահարելու, իրեն ֆրանկ պաշտոնյաներով շրջապատելու եւ, վերջապէս, հայերին կաթողիկէ դավանանքը պարտադրելու պատճառով: Կարծում ենք, ավելորդ չէ մեջբերել այդ առթիվ տրված ամենաբնորոշ գնահատականներից մի ֆանիսը, որոնցից խստագույնը պատկանում է Հայոց եկեղեցու չգերազանցված պատմաբան Մաղաֆիա Օրմանյանի գրչին. «Գուիտոնն եւս ֆան գեւս կը սաստկացնէր իւր մոլեռանդութիւնը, ոչ միայն արժունիքը կատարեալ լատինականութեան վերածելով, այլեւ Հայերը ստիպելով կատարելապէս լատինական դաւանութիւն եւ սովորութիւն, ձէս եւ ձեւ ընդունելու, յետադասելով եւ հեռացնելով այն Հայերը, որ լատինակերպ չէին գործէր, եւ բուն լատինները յառաջացնելով պաշտօններու եւ գործերու մէջ»⁵⁷: Թեւեւ ավելի զուսպ, սակայն, ըստ էության, նույնն է նաեւ խաչակրաց պատմության հմտագույն ուսումնասիրող Ռ. Գրուսեի տեսակետը. «Գին ... միանգամից խառնվեց եկեղեցական վեճերին եւ, չբավարարվելով հրապարակի վրա եղած զգուշավոր ձեւակերպումներով, փորձեց հայ հոգեւորականությանը պարտադրել բացահայտորեն միանալ Հռոմեական եկեղեցուն: Իսկ միանգամայն ձախող մի նախաձեռնություն էր, որովհետեւ միայն դավանաբանական խնդիրների պատճառով էր, որ ֆրանկների եւ հայերի համամտությունն անմիջա-

⁵⁴ Ներսէս Պալիաննեց, Ժամանակագրական հատվածներ, էջ 178:

⁵⁵ Հեթում թագաւոր, Պատմութիւն (շարունակող), էջ 89: Տե՛ս նաեւ՝ Մինաս Ամզեցի, Ազգաբանութիւն, էջ 51; Tisserant, Codices Armeni, p. 353.

⁵⁶ Աբուլ-Ֆիղա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արարական աղբյուրները, էջ 249):

⁵⁷ Օրմանյան, Ազգապատում, § 1310:

պես դադարեց: Դրանով նա վիրավորեց իր նոր հպատակների ամենաթանկ զգացումները, ուստի եւ իր հերթին սպանվեց 1344 թ. նոյեմբերի 17-ին: Ժամանակին նույնպիսի վախճան էր ունեցել նաեւ Փիլիպոս Անտիոքացին, որը եւս փորձել էր ուժով ֆրանսականացնել երկիրը»⁵⁸: Իսկ Գ. Միխայելյանը, որը Կիլիկիո թագավորության պատմությանը նվիրված ամենամբողջական մենագրության հեղինակն է, այդ կապակցությամբ գրում է հետեւյալը. «Կաթոլիկ-թագավոր Գվիդոն Լուսինյանը հայերին ստիպում էր ընդունել կաթողիկե հավատը, յուրացնել լատինական ծեսն ու սովորությունները՝ իշխանությունից հեռացնելով եկեղեցական միության հակառակորդներին, իսկ նրա կողմնակիցներին առաջ ֆաշելով բարձր պաշտոնների: Նա նաեւ փորձում էր արժուհիում արգելել հայոց լեզվի գործածությունը»⁵⁹: Մ. Օրմանյանն, ավելի հեռուն գնալով, տարաբախտ թագավորին մեղադրում է Հայոց թագավորությունը թուլացնելու եւ նույնիսկ կործանման հասցնելու մեջ. «Թագատուրթեան տկարանալուն պատճառն էր եղած, եւ որ զայն կործանման ալ հասուց»⁶⁰:

Որքան էլ տարօրինակ է, համընդհանուր տարածում գտած այս տեսակետը զուրկ է պատմագրական հիմքից, քանի որ առկա աղբյուրները Գիի սպանությունը բացատրում են բոլորովին այլ պատճառներով: Ըստ Հովհաննես Դարդելի՝ հայերի դժգոհությունը գալիս էր նրանից, որ Գին, ռազմասեր լինելով, իրենց ստիպում էր անընդհատ պատերազմ վարել. «գի աշխատ առնէր զնոսա եւ ստէպ ստէպ վարէր ի պատերազմ»⁶¹: Աբուլֆիդայի շարունակողն, ընդհակառակը, Գիի սպանությունը պատճառաբանում է այն իրողությամբ, որ

⁵⁸ Grousset, L'Empire, p. 402. Հայերեն թարգմանությունը տես՝ Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 347:

⁵⁹ Микаелян, История, с. 461.

⁶⁰ Օրմանյան, Ազգապատում, § 1289: Ի տարբերություն վերոհիշյալ հետազոտողների, ժ. Մորգանը Գիի լատինամետությունից բացի նշում է նաեւ նրա սպանության մի այլ, ավելի բանական (ռացիոնալ) պատճառ, այն է՝ Հայոց իշխանների դժգոհությունը մահմեդականների նկատմամբ վերջինիս վարած առճակատման քաղաքականությունից. տես՝ Morgan, Histoire, p. 220.

⁶¹ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 49:

նա «անկարող էր վարելու գործերը եւ չէր պաշտպանում երկիրը, որի հետեւանով մուսուլմանները ավերներ էին գործում»⁶²: Սամուել Անեցու շարունակողի վկայությամբ՝ Գին սպանվել էր «ի նախանձու իշխանացն»⁶³, իսկ ուշ շրջանի հայկական աղբյուրներից մեկի համաձայն՝ «վասն անպարկեշտ վարուցն իւրոցն»⁶⁴: Սակայն սա սոսկ ընդհանուր տեղի է, որ հանդիպում է բոլոր նմանատիպ սպանությունների պարագայում: Այսպես, օրինակ, Մլեհը հայ իշխանների կողմից սպանվել էր «վասն վատ բարուց նորա»⁶⁵, իսկ Ալիս թագուհին Լեւոն Ե (IV)-ի կողմից՝ «վասն խառնակ վարուց նորա»⁶⁶ կամ «յաղագս աղտեղի գործոց նորա»⁶⁷:

Այսպիսով, Գիի լատինամոլության եւ այդ պատճառով սպանված լինելու վերաբերյալ գրից-գիրք թափառող վարկածը պետք է համարել զուտ ենթադրությունների արդյունք՝ չհիմնավորված իրադարձություններին ժամանակակից որեւէ աղբյուրի տվյալներով⁶⁸: Ճիշտ է, Գին որոշ ֆայլեր ձեռնարկել էր հայ-հռոմեական եկեղեցական միության հաստատման ուղղությամբ, մասնավորապես, դեսպաններ ուղարկելով Ավինյոն՝ ֆննելու համար այդ հարցը պապի

⁶² Աբու-Ֆրգա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արարական աղբյուրները, էջ 249):

⁶³ Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 168:

⁶⁴ Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 235:

⁶⁵ Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 102:

⁶⁶ Յովհաննէս Գարդել, Ժամանակագրութիւն, էջ 29:

⁶⁷ Սամուել Անեցի, Հաւաքմունք, էջ 158:

⁶⁸ Ավելորդ չէ նշել, որ բյուզանդական պատմիչ Նիկեփոր Գրեգորասը Գի Լուսինյանին անգամ հայադավան է համարում, գրելով, որ նա «մշտապես դավանում էր հորենական հայոց դավանանքը» (Բարթիկյան, Հետազոտություններ, հտ. 1, էջ 689): Սակայն սա մեզ թյուրիմացության արդյունք է թվում. Գրեգորասն ակնհայտորեն տեղյակ չէ այն փաստին, որ Գիի հայրը հայ չէր: Ի դեպ, դրան տեղյակ չէ նաեւ ժամանակի մի այլ բյուզանդացի հեղինակ՝ Հովհաննէս Կանտակուզենոսը, որը Գիի մասին գրում է հետեւյալը. «Եկավ Բյուզանդիոն, այնտեղից էլ հեռացավ Կիլիկիա, քանզի հայերն էին հրավիրել թագաւորելու. հոր գահի ժառանգորդը ինքն էր» (Բարթիկյան, Անդ):

հետ⁶⁹: Սակայն դրա մեջ որեւէ արտառոց բան չպետք է տեսնել, որովհետեւ նա ընդամենը շարունակել էր իր նախորդի՝ Վեոն Ե (IV)-ի կողմից սկսված բանակցությունները: Հետեաբար, եթե անգամ Գին, իրոք, լատինամոլ էր եւ ձգտում էր Հայոց եկեղեցին ենթարկել Հռոմին, ապա նա ոչնչով չէր տարբերվում թե՛ իրեն նախորդած, թե՛ հաջորդած «զտարյուն» կամ «ազգայնական» հայ թագավորներից⁷⁰: Չմոռանանք, որ հայ-հռոմեական եկեղեցիների միությունը հաստատող 1307, 1316 եւ 1345 թթ. ժողովները⁷¹ տեղի էին ունեցել այդպիսի «զտարյուն» հայ թագավորների՝ Հեթում Բ-ի, Օշինի եւ Կոստանդին Դ-ի նախաձեռնությամբ⁷²: Ուստի Գիի լատինամոլությունը ոչ թե նրա սպանության պատճառ, այլ լավագույն դեպքում միայն պատրվակ կարող էր հանդիսանալ, նկատի ունենալով, որ «ազգայնականությունն» անցյալում եւս ամբոխավարության հիմնական զենքերից մեկն էր: Չենք բացառում, որ Գիի նկատմամբ գործված ոճրի շարժառիթը շատ ավելի փծուն ու նդնիմ լիներ. պարզապես հայտնվել էին ուժեր՝ հանձինս Կոստանդին Նղիրցու եւ իր կողմնակիցների, որոնք պետական հեղաշրջման միջոցով տիրել էին Հայոց թագավորությանը: Դրա համար հատուկ պատճառ պետք չէր, իսկ պատրվակներ միշտ էլ կգտնվեին:

⁶⁹ Հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 559:

⁷⁰ Հմմտ. Morgan, Histoire, p. 219–220.

⁷¹ Տիրան Ներսոյանի դիպուկ արտահայտությամբ՝ դրանք իրականում ոչ թե եկեղեցական, այլ «թագավորական ժողովներ» էին, գումարված մամլուքների դեմ Արեւմուտքից գինական օգնություն ստանալու քաղաքական նկատառումներով. Nersoyan, Armenian Church, p. 188–189.

⁷² Հակառակ այդ հանգամանքին եւ հակառակ, ինչպես արդեն ասվեց, պատմագրական հիմքերի բացակայությանը, նույնիսկ մեր օրերում Գիի գահակալության շրջանը համարվում է Կիլիկիո լատինամետ եւ ազգայնական հոսանքների պայթարի կիզակետը. տե՛ս Coureas, Papacy, p. 105.

ԿՈՍՏԱՆԴԻՆ Դ (III) ԹԱԳԱՎՈՐ (1344–1362 թթ.)

Հովհաննես Դարդելի վկայությամբ՝ Գիի մահից հետո Հայոց իշխանները թագավոր ընտրեցին նշանավոր Պաղտին մարաջախտի որդուն՝ Կոստանդինն. «Եւ յետ այսորիկ իշխանքն Հայոց ժողովեցան վերստին ի խորհուրդ եւ ընտրեցին եւ եղին ի թագաւոր գորդի պարոն Բօղունի մեծի մարաջախտին Հայոց, որ կոչեցաւ արքայ Կոստանդին»¹: Աբուֆիղայի շարունակողը նույնպէս տեղեկացնում է, որ Գիի հաջորդին «թագավորեցել», այսինքն՝ ընտրել էին²: Հայկական աղբյուրներից միայն XVII դարում շարադրված «Կիլիկիոյ պատմութիւնն» է, որ հաստատում է Կոստանդինի ընտրված լինելու հանգամանքը, գրելով. «Եւ թագաւորուցեցին զմիւս Կոստանդին, յայլմէ ցեղէ, ի ՉՂԳ Հայոց»³: Մյուսները բավարարվում են միայն նշելով, որ Գիին հաջորդել էր Կոստանդինը⁴:

Այսպիսով, Կոստանդինը Կիլիկիո պատմության մեջ Արփունի ատյանի կողմից ընտրված առաջին թագավորն էր, ինչն առանձնակի հետաբնութային է ներկայացնում գահաժառանգության իրավունքի ուսումնասիրման տեսակետից: Նախորդ գահակալի անժառանգության պարագայում նոր թագավորի ընտրության՝ իշխաններին վերապահված

¹ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 52:

² Աբու-Ֆիղա, Ժամանակագրութիւն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 249):

³ Յակոբ Սեցի, Պատմութիւն, էջ 235:

⁴ Ներսէս Պալիանենց, Իշխանութիւնք, էջ 206: Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 168: Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 441:

իրավասությունը սահմանված է Սմբատ Սպարապետի «Դատաստանագրքի» երկու հոդվածներում. «Ձեղբար որդիսն դնեն երկրին հատարիմքն յիրենց պարոնին արթոն, որ յիրենց պարոնին սերմէն է եւ ոչ ատար սերմի ծնունդ»⁵ եւ «Ապա թէ չկենայ որդի եւ ոչ դուստր, եւ եղբար որդիի լինին, նա Հայրապետին եւ այլ եկեղեցոյն եւ իշխանաց ու երկրին տեսովն առնուն մէկ մի, յոր հանին ի լան, եւ կրթեսցեն յարունիքն, եւ յոր հանին յայնոց, նա հետ թագաւորին մահուն զայն դնեն յարթոն Հայրապետով»⁶: Թէեւ, ինչպես տեսնում ենք, Կիլիկիո «Դատաստանագրքի» այս դրույթները վերաբերում են թագավորի եղբորորդիներին, սակայն ընտրությունն առավել եւս կիրառելի պետք է լիներ նրանց չգոյության պարագայում: Ավելացնենք, որ Սմբատի մի այլ սահմանմամբ՝ Արփունի ատյանին իրավունք էր վերապահվում նաեւ անհրաժեշտության դեպքում գահընկեց անել ընտրված թագավորին. «Ապա զայն ոք, որ մարդիկ դնեն, նա թէ հայնց պիղծ լինին, որ չկարէ հանդուրժել աշխարհն, նա այլվայ իրենք եկեղեցովն եւ ամէն բնակչաւ երկրին կարեն ասորել»⁷:

Կոստանդին Դ (III)-ի՝ Պաղտին մարաշխտի որդին լինելու պարագան, բացի Հովհաննես Դարդելից, հաստատում են նաեւ հայկական աղբյուրները⁸: Արդեն նշեցինք, որ Պաղտինը Լեւոն Ե (IV) թագավորի չորս խնամակալներից մեկն էր⁹, որը Օշին պայլի ապստամբության ժամանակ (1329 թ.), հավատարիմ մնալով թագավորին, արժանացել էր նրա վստահությանը եւ պահպանել իր դիրքը: 1336 թվականին Լեւոնը մարաշխտին դեսպանագնացությամբ ուղարկել էր Եգիպտոս, սակայն տեղ չհասած, վերջինս մահացել էր Հալեպի բանտում¹⁰:

⁵ Смбат Спарпет, Судебник, с. 8.

⁶ Անդ:

⁷ Անդ, էջ 81:

⁸ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 343, 357; Պողարյան, Յուցակ, հտ. 6, էջ 556; Ճեմճեմյան, Յուցակ, հտ. 5, էջ 659; Անանուն, Յիշատակք հանգուցելոց, էջ 545; Մինաս Ամզեցի, Ազգաբանութիւն, էջ 50:

⁹ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 28:

¹⁰ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 295:

Որ Պաղտինը Կիլիկիո թագավորության աչքի ընկնող դեմքերից մեկն էր, վկայում է դեռես 1319 թվականին գրված մի ընդարձակ հիշատակարան, որը նրան գովաբանում է հետեւյալ խոսքերով. «Համարձակիմ ես այժմ եւ գովեմ զարժանաւորն գովելոյ զաստուածասէր հոգին՝ զփառաւոր եւ զերեւելի իշխանն, զմարաշախտն Հայոց Պաղտին¹¹: Եւ զգովութիւն ո՛չ ըստ մարմնոյ ազգութեան տամ, թէպէտ եւ մեծ է եւ ի բարձրագոյն տոհմէ, ... այլ զառաքինութիւն հոգւոյ սորա գովեմ, եւ զարինակ բարեգործութեան սորա յիշատակեմ, զի թէպէտ էր ի մեծ փառք իշխանութեան եւ ի պատիւ մարաշախտութեան Հայոց, այլ զամենայն փառս իշխանութեան եւ զփարթամութիւն մեծութեան աշխարհիս սուտ եւ ընդունայն վարկանէր: Եւ ո՛չ ի յերկրաւորս ուրախութեամբ բերկրէր, եւ ո՛չ իւր սեփհական եւ մնացական բարի համարէր, այլ անցաւոր եւ ապականացու: Իսկ յաւժարութիւն հոգւոյ սորա հանապազ յաստուածայիննս դիմէր, եւ զմշտնջենաւոր եւ զմնացական բարին սիրէր: Յայն փութայր, զոր Աստուծոյ կամացն էր հաճոյ եւ ախորժելի: Յայն յորդորէր, ի յոր հոգւով ուրախանայր: Զայն գործէր, զոր իւր յիշատակ բարի մնայր յետ կենաց ելից ի յաշխարհէ»¹²: Իսկ դրանից էլ առաջ, 1307 թվականին, Պաղտինը Հայոց թագավոր Լեւոն Դ (III)-ի ու նրա խնամակալ Հեթում Բ-ի դեսպանի հանգամանքով այցելել էր Անգլիայի թագավոր էդուարդ II-ին, ինչի մասին տեղեկացնում է այդ առթիվ վերջինիս գրած նամակը¹³: Այնուամենայնիվ, միայն երկրի նշանավոր իշխաններից ու թագավորի հավատարիմներից մեկի որդին լինելը, կարծում ենք, բավարար չէր, որպէսզի Հայոց Արփունի ատյանի ընտրութիւնը կանգ առնէր Կոստանդնի վրա: Ամենայն հավանականութեամբ, պետք է գոյություն ունեցած լինէին շատ ավելի ծանրակշիռ հիմքեր՝ այդ ընտրութիւնն ընդունելի դարձնելու համար: Այդպիսիք կարող էին

¹¹ *Ըստ երեսույթին, Պաղտինը Կիլիկիո մարաշախտ էր նշանակվել 1316–1319 թթ. միջեւ, քանի որ Սսի 1307 թ. եւ Ադանայի 1316 թ. ժողովների արձանագրութիւններում որպէս մարաշախտ է հիշված Ասկուռասի տեր Սմբատը. տե՛ս Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն, էջ 406, 504; Պալճյան, Պատմութիւն, էջ 276, 297:*

¹² Tisserant, *Codices Armeni*, p. 99. *Այնուհետեւ հիշատակագիրը մանրամասնորեն նկարագրում է Պաղտինի կողմից Տարսոն քաղաքում կառուցված շքեղ եկեղեցին:*

¹³ *Տե՛ս Ավիշան, Սիսուան, էջ 234–235:*

լինել թեկուզ հեռավոր ազգակցական կապերը արժայական ընտանիքի անդամների հետ:

Ըստ Հովհաննես Դարդելի՝ Կոստանդինը որեւէ ազգակցական կամ նույնիսկ խնամիական կապ չուներ Կիլիկիո արժայական ընտանիքի հետ. «Եւ ոչ էր նա ի գարմէ թագաւորացն Հայոց եւ շէր իսկ նորա իւր խնամութիւն ընդ տանն արժունի»¹⁴: Այնինչ որոշ հայկական աղբյուրների տեղեկությամբ՝ նա Լեւոն Ե (IV) թագավորի ազգականն էր, ինչպես, օրինակ՝ «Կոստանդին ազգական Լեւոնի՝ կեայ այժմ եւ թագաւոր է»¹⁵, կամ «Կոստանդին՝ ազգական Լեւոն թագաւորի՝ որդի Պաղտին մարաշախտի՝ իշխեաց»¹⁶: Իսկ թե ինչպիսի ազգակցական կապի մասին է խոսքը, պարզվում է Վատիկանի Գրադարանում հայտնաբերված ձեռագրերից մեկի անգնահատելի հիշատակարանի շնորհիվ, ըստ որի, Կոստանդինի հայրը՝ Պաղտին մարաշախտը, Նդիրի տեր Կոստանդին իշխանի որդին եւ հռչակավոր Կոստանդին Գունդստապլի թոռն էր. «Զի է ի թագաւորական ազգէ, մերձաւոր բարեպաշտին մերոյ քրիստոսասէր արժային Հայոց Աւշնի, որդի գոլով Կոստանդեա փառաւոր իշխանին՝ տիրոջն Նդրին, եւ թոռն իմաստնոյն եւ հաննարեղին Կոստանդեա աւագ պարոնին»¹⁷: Հիմնվելով այս, ինչպես նաեւ Վատիկանի Գրադարանի մի այլ ձեռագրի հիշատակարանի տվյալների վրա¹⁸, Ռուդ-Կոլենբերգը կազմել է Կոստանդին Գունդստապլի շառավիղների հետեւյալ տոհմաձառը¹⁹.

¹⁴ *Յովհաննէս Դարդելի, Ժամանակագրութիւն, էջ 52:*


¹⁵ *Ներսէս Պալիանէնց, Իշխանութիւնք, էջ 206:*

¹⁶ *Մինաս Ամդեցի, Ազգարանութիւն, էջ 50: Տես նաեւ՝ Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 235: Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 89: Մարտիրոս Արամեցի, Կարգ եւ թիւ, էջ 206:*

¹⁷ Tisserant, Codices Armeni, p. 99. Այս հիշատակարանի վրա առաջին անգամ ուշադրություն է դարձրել Ղ. Ալիշանը (*Սիսուան, էջ 411–412*):

¹⁸ Tisserant, Codices Armeni, p. 182–184.

¹⁹ Rüdts-Collenberg, The Rupenides, III (H2). *Ներկայացվածը տոհմաձառի մեր կողմից պարզեցված տարբերակն է: Օշին թագավորի մահվան 1328 թվականը վրիպակ է. պետք է լինի՝ 1320:*



Սակայն այս կապակցությամբ տարակուսանք է առաջացնում երկու հանգամանք. առաջին՝ հայերի մոտ որդուն հոր անունով կոչելու սովորություն գոյություն չունեւ, եւ երկրորդ՝ Կոստանդին Գունդստապլի որդիների միջնադարյան ցանկերում Կոստանդին Նղիրցու անունը բացակայում է: Մեզ է հասել այդպիսի երկու լիակատար ցանկ, երկուսն էլ, ի դեպ, կազմված Գունդստապլի որդիներից մեկի՝ Հովհաննես արեւալիսկոպոսի կողմից, հանգամանք, որն անժխտելի է դարձնում նրանց արժանահավատությունը: Առաջինում, որը թվագրված է 1266-ով, Հովհաննեսը գրում է. «Աղաչեմ յիշել զհայր արալյին եւ մեր՝ զպարոն Կոստանդին, եւ զամենայն եղբարսն իմ՝ զՍմբատ սպարապետ, եւ զԶեթում թագաւոր, եւ զՕշին պայլ, եւ զԲասիլ արեւալիսկոպոս, եւ զԼեոն մարաջախտ, եւ զՎասակ իշխան, այլեւ զբոյրսն մեր՝ զՀովսիսիմի կրօնօոր, զԹեֆանօ դշխո Կիպոսա, եւ զԿալամառի գունդէս ճաֆուն, եւ զԱկացն, եւ զՄարեմն, եւ զՖիլիպան»²⁰: Իսկ երկրորդ ցանկը, կազմված 1286 թվականին, համարյա նախորդի բառացի կրկնությունն է. «Աղաչեմ դարձեալ զձեզ՝ զիշխանացն իշխան քրիստոսաստէր զպարոն Հայոց Կոստանդին եւ զորդիսն իւր՝ զՍմբատ սպարապետ, զԶեթում թագաւոր,

²⁰ Մաթեւոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 343:

եւ զԱւշին պայլ, եւ զարեալիսկոպոս Սիսոյ Բասիլ, եւ զԼեւոն մարա-
ջախտ, եւ զՎասակ մենամարտ կորովի, եւ զգոյրսն մեր՝ զՀովփսիմի
կրանաւոր, զՔեֆանաւ թագունի Կիպրոսի, եւ զԿալամառի գունդէս
ճաֆուն եւ Ռամլոյ, եւ զՖիլիպ, եւ զՄարեմթագ, եւ զԱկաց՝ ծննդաւ նո-
ցին եւ զարմիւք յիշեցէք»²¹:

Հետեալբար, ամենայն հավանականութեամբ, այստեղ մենք գործ
ունենք ինչ-որ թյուրիմացոյթեան հետ, որը, մեր կարծիքով, առաջացել է
Վատիկանի վերը նշված հիշատակարանի՝ Պաղտին մարաջախտին վե-
րաբերող «որդի գոյով Կոստանդեա փառաւոր իշխանին՝ տիրոջն Նդրին,
եւ թոնն իմաստնոյն եւ հանճարեղին Կոստանդեա աագ պարունին»
բառերի միակողմանի մեկնաբանութեան պատճառով: Խնդիրն այն է,
որ Պաղտին մարաջախտի՝ Կոստանդին Նդիրցու որդին եւ Կոստանդին
Քունդստապլի թողը լինելու հանգամանքը դեռեւս անպայմանօրէն չի
նշանակում, որ նրա հայրը վերջինիս որդին էր: Զէ՛ որ, Պաղտինը կա-
րող էր Քունդստապլի թողը լինել նաեւ մորական գծով: Այս դեպքում,
արդ, Կոստանդին Նդիրցին ոչ թէ Կոստանդին Քունդստապլի որդին,
այլ փեսան պետք է լինէր, այսինքն՝ նրա դուստրերից մեկի ամուսինը:
Սակայն արդի հետազոտողների կողմից ենթադրվում է, որ Կոստան-
դին Նդիրցու կինը Կիպրոսի թագավոր Հուգո III-ի դուստրերից մեկն է
եղել: Տվյալ ենթադրությունը հիմնված է այն փաստի վրա, որ Անգլիայի
թագավոր Էդուարդ II-ի կողմից 1307 թվականին Հայոց Լեւոն Գ (III)
թագավորին գրված նամակում Պաղտինը կոչվում է վերջինիս մորաբոնջ

²¹ Անդ, էջ 593: Կոստանդին Քունդստապլի զավակների ավելի համառոտ ցանկեր՝
տե՛ս Անդ, էջ 201 (1237 թ.), ինչպես նաեւ Գիլիսէ պողազը եկեղեցու արձանա-
գրութիւնը. Ալիշան, Սիսուան, էջ 75 (1220-ական թթ. վերջ): 1256 թվականին
գրված մի հիշատակարանի վկայութեամբ՝ Կոստանդին Քունդստապլն ունեցել է
նաեւ Լիկոս անունով որդի. «Աւարտեցաւ լուսայեղձ եւ փրկագործ սուրբ Աւե-
տարանս ի թուականին Զե... ի խնդրոյ աստուածասէր եւ բարի պատանոցն սիր
Լեւոնի, որ է որդի պարոն Լիկոսի՝ եղբար թագաւորին Հայոց Հեթմոյ: Արդ,
աղաչեմ զամենեսեան... յիշել... գտղա պարոնն՝ զսիր Լեւոն ... եւ զծնողս նորա՝
զհայրն իւր զսիր Լիկոս, եւ զմայրն իւր զբարեպաշտ տիկինն Ականցն»: Մաթեոս-
յան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 289: Սակայն, քանի որ Լիկոսի անունը բացա-
կայում է Հովհաննես արքեպիսկոպոսի ցանկերում, մեզ հավանական է թվում,
որ նա ոչ թէ Հեթումի եղբայրն էր, այլ նրա քրոջ՝ Ակացի ամուսինը:

որդի (consobrinus)²²: Իսկ ֆանի որ հաստատապես հայտնի է, որ Լետն Դ (III)-ի մայրն, իրոք, Կիպրոսի թագավոր Հուգո III-ի Մարգարիտ անունով դուստրն էր²³, այստեղից ինֆնրստինյան բխում է, որ Պաղտինի մայրը, այն է Կոստանդին Նղիրցու կինը, պետք է լիներ վերջինիս փուրը: Սակայն եթե նկատի ունենանք, որ լատիներեն consobrinus բառը, բացի մոռաֆոջ որդի նշանակելուց, արտահայտում է նաև ընդհանրապես «ազգական» կամ «զարմիկ» իմաստը, ապա տվյալ պնդումը չի կարելի բացարձակ համարել: Ըստ այդմ, ֆանի որ վերջնականապես ապացուցված չէ, որ Կոստանդին Նղիրցու կինը Հուգո III-ի դուստրն էր, ապա կարելի է ենթադրել, որ նա ամուսնացած էր Կոստանդին Գունդստապլի դուստրերից մեկի հետ, ինչը հաստատում է Պաղտին մարաջախտի՝ վերջինիս թոռը լինելու իրողությունը:

Այնուամենայնիվ, մենք չենք բացառում նաև բոլորովին մի այլ վարկածի հավանականությունը, հնարավոր համարելով, որ վատիկանյան ձեռագրի հիշատակարանում «թոռն» բառը գործածված է ոչ թե կոնկրետ, այլ ավելի ընդհանուր՝ «զարմ» կամ «սերունդ» իմաստով: Մենք նկատի ունենք այն, որ ոչ թե Պաղտինն ինքը, այլ նրա հայր Կոստանդին Նղիրցին կարող էր լինել Կոստանդին Գունդստապլի թոռը, այն է՝ վերջինիս բազմաթիվ զավակներից մեկի, ամենայն հավանականությամբ, Վասակի որդին²⁴: Այդպիսի ենթադրություն անելու հիմք են տալիս հետևյալ երեք ուշագրավ հանգամանքները՝ ա. Վասակն ունեցել է Կոստանդին անունով մի որդի²⁵;


²² Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 412; Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 65, n. 113 bis.

²³ Տե՛ս Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 105, 108; Lignages d'Outremer, p. 91, 92.

²⁴ Վասակի մահվան թվականը (1284) հայտնի է նրա եղբոր՝ Հովհաննես արքեպիսկոպոսի պատվիրած ձեռագրերից մեկի հիշատակարանի շնորհիվ (Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 563. տե՛ս նաև Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. Ք. 4188, էջ 112): Սակայն ավելի ուշ (1307 թ.) գրված մի հիշատակարանի տեղեկությամբ՝ նա իբր զոհ է գնացել Բիլարղուի կազմակերպած սպանդին (Խաչիկյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 55): Կարծում ենք, երկրորդ հիշատակագիրը սխալվում է. բացառված չլինելով, որ հիշյալ ոճրագործության զոհերի թվում եղել է նաև Վասակ անունով մի իշխան, նա ենթադրել է, որ վերջինս Հեթումի հորեղբայր պետք է լիներ:

²⁵ Պողարյան, Յուցակ, հտ. 11, էջ 399:

բ. Կոստանդին Նղիրցու որդիներից մեկը, հավանաբար անդրանիկը, նույնպես կոչվել է Վասակ²⁶; գ. Երկու Վասակներն էլ եղել են Ճաննի բերդի տերը²⁷: Այս պարագայում արդեն Կոստանդին Գ (III) թագավորի տոհմաձառն ունենում է հետևյալ տեսքը.



Թերևս ավելորդ չէ նշել, որ Կոստանդին Գ (III) թագավորը Կոստանդին Գունդստապլի գերդաստանից էր սերում նաև մուսուլման գծով, քանի որ նրա մայրը՝ Մարիոնը, նշանավոր Սմբատ Սպարապետի թոռն էր²⁸: Հետևաբար, Կոստանդին թագավորը թե՛ հուր, թե՛ մուր կողմից Կոստանդին Գունդստապլի թոռան թոռն էր:

Այդուհանդերձ, այս ամենն ընդամենն ապացուցում է նրա ազգակցական, բայց ոչ ուղղակի արյունակցական կապը Կոստանդին Գունդստապլի շառավիղների արժայական նյութի հետ²⁹, քանի որ Գունդստապլի գերդաստանում արժայական արյունը փոխանցվում էր միայն

²⁶ Tisserant, Codices Armeni, p. 183; Ալիշան, Սիսուան, էջ 412:

²⁷ Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 250; Մաշտոցի անվ. Մատենագարան, ձեռ. Բ. 4188, էջ 112; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 563; Tisserant, Codices Armeni, p. 183.

²⁸ Պողոսյան, Յուցակ, հտ. 6, էջ 556; Tisserant, Codices Armeni, p. 100.

²⁹ Հմմտ. Bedoukian, Coinage, p. 18.

Հերթում Ա-ի սերունդների գծով: Այս առումով, իհարկե, միանգամայն նիշտ է Հովհաննես Դարդելը, պնդելով, որ Կոստանդին Դ (III)-ը «ոչ էր ի զարմէ թագաւորացն Հայոց»³⁰, թէեւ այնուհետեւ չափազանցելով, թէ նա անգամ խնամիական կապ չունէր թագավորական ընտանիքի հետ³¹: Ըստ այդմ, հակառակ օրինական կարգով ընտրված լինելու հանգամանքին, գահաժառանգության իրավունքի տեսակետից, Կոստանդին Դ (III)-ի «լեգիտիմությունն» այնուամենայնիվ, խոցելի էր, մանավանդ այն պատճառով, որ ողջ էին Հայոց արքայատոհմի թեկուզ իգական գծով ուղիղ շառավիղները՝ Հովհաննես-Ջեհան Լուսինյանի որդիներ Բոհեմունդը եւ Լեւոնը: Քանի որ վերջիններս Զապել արքայադստեր թոռներն էին, ֆեոդալական անսասան օրենքի համաձայն՝ նրանց էր պատկանում Հայոց գահին տիրելու իրավունքը: Կոստանդինն, անշուշտ, չէր կարող չգիտակցել այդ դառը նշմարտությունը եւ միջոցներ ձեռն շառնել՝ Լուսինյան եղբայրներից իր իշխանությանն սպառնացող հնարավոր վտանգները չեզոքացնելու ուղղությամբ: Ուստի պատահական չէ, որ թագադրությունից անմիջապես հետո նա ձեռքակալում եւ Կոռիկոսի բանտն է նետում Հովհաննես-Ջեհանի կնոջն ու որդիներին, նախապես հափշտակելով նաեւ նրանց ունեցվածքը. «եւ եղև յորժամ պսակեցաւ Կոստանդին ի թագաւոր Հայոց, յափշտակեաց զստացուածս եւ զժառանգութիւն Սուլթան տիկնոջ, կողակցի Ջեհան իշխանի Լուսինեան եւ ետ արկանել զնա ի բանտ եւ զերկոսին որդիս նորա ընդ նմա ի կղզտջն Կոռիկոսի, ուրանօր կացեալ մնացին նոքա ամիսս ինն յայնքանում մեծի եւ անհնարին չհատուրթեան՝ մինչեւ կեալ նոցա տրօժ բարեգութ անձանց»³²: Դարդելը հրաշալի է ըմբռնել Կոստանդինի այդ քայլի դրդապատճառը, որը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ Հայոց գահի օրինական ժառանգներից ազատվելու մտասուեռում: «Եւ զի ոչ էր արքայն Կոստանդին ի թագաւորական զարմէ անտի Հայոց շառաւիղ եւ ոչ մերձաւոր արեանակից, տաղտուկ էր նմա տեսանել զտիկինն եւ զորդիս նորա ի կենդանութեան. խորհեցաւ կորուսանել զնոսա ի ծածուկ,

³⁰ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 52. նաեւ՝ էջ 53, 58:

³¹ Անդ, էջ 52:

³² Անդ, էջ 53:

զանխուլ ի ժողովրդենէն. եւ ցանկայր մանաւանդ զմահ մանկանցն երկոցունց, որպէս զի աննետ լիցի զարմն թագաւորական, եւ սպառեացի քաջաբուլիս արիւնն Հայաստանեայց, եւ որդիք իւր ժառանգեսցեն զաթոռն արժունի յետ նորա»³³: Այս քաջաբուլի կապակցությամբ հարկ ենք համարում ընթերցողի ուշադրությունը հրավիրել երկու պերնախոս հանգամանքի վրա. առաջին, որ Կոստանդինը խորապես գիտակցել է իր «լեզիտիմության» թուլությունը, եւ երկրորդ, որ նա ձգտել է օրինական զահաժառանգներին վերացնել ժողովրդից ծածուկ, ակներեւաբար, խուսափելու համար դժգոհության ալիք առաջացնելուց, քանի որ նման ոճրագործությունը երբեւէ չէր ներվի հասարակության կողմից: Սակայն Հովհաննէս-Ջեհանի ընտանիքի դեմ Կոստանդինի կողմից գաղտնաբար կազմակերպված երկու մահափորձերն էլ պատահական հանգամանքների բերմամբ ձախողվում են, եւ ի վերջո, Սուլթան տիկնոջը, Բոհեմունդին ու Լեւոնին հաջողվում է ձկնորսական նավակով փախչել Կիարոս ու հաստատվել Կարպասի ծովախորշի բերդերից մեկում³⁴: Դրանից հետո, տեղեկանալով, որ Հայոց թագավորն, առեւանգելու նպատակով, այստեղ եւս լրտեսում է իրենց, նրանք տեղափոխվում են կղզու խորքերը եւ ապաստանում Սուրբ Սիմեոնի բերդում. «Եւ այսպէս ի դերել եւ ձեռնարկ Կոստանդին արեայի»,– հրնվանքով դրվագն ամփոփում է ֆրանսիացի ժամանակագիրը³⁵:

Կինելով Լուսինյանների շատագովը եւ այդու թշնամաբար տրամադրված Կոստանդինի նկատմամբ, Հովհաննէս Դարդելը վերջինիս կոչում է ոչ այլ կերպ, քան բռնակալ, այսինքն՝ բռնագավթիչ. «Ի դէպ եւս երկոչել զնա բռնակալ քաջատուր»³⁶: Նախապաշարունով լցված Դարդելը, բնականաբար, նրան է վերագրում նաեւ Հայոց թագավորությանը բաժին ընկած բոլոր հետագա դժբախտությունները: Ըստ նրա՝ Կոստանդինի առաջին գործն է լինում վերականգնել Գի Լուսինյանի կողմից դադարեց-

³³ Անդ:

³⁴ Անդ, էջ 53–55:

³⁵ Անդ, էջ 56:

³⁶ Անդ, էջ 52. Նաեւ՝ էջ 59: Ժամանակագրության հին ֆրանսերեն բնագրում «բռնակալ» բառի դիմաց դրված է. "tirant". տե՛ս Jean Dardel, Chronique, p. 31, 53.

ված հարկատվությունը Մամյոմյան եգիպտոսին, որից հետո նա հոծարակամ ընդունում է մահմեդականների լուծը եւ մեկը մյուսի ետեւից նրանց հանձնում Կիլիկիո ֆաղաֆները. «Ձի կոնայ դաշինս ընդ սուլթանին Բաբելոնի»³⁷, հատոյց նմա տուրս հարկաց ամ ըստ ամէ, եւ էարկ զանձն իւր եւ զպետութիւնն ընդ լծով անհաւատից, եւ ելիք եթող յօծարակամ ի ձեռս սուլթանին Բաբելոնի զֆաղաֆսն Տարսոնի եւ զԱդանայ եւ զամուրն Կոռկոսի»³⁸: Իսկ այնուհետեւ ժամանակագիրը շարախնդորեն ավելացնում է. «Եւ այսպէս ահա առ թուլութեան անձին կորոյս նա բազում եւ այլ ֆաղաֆս եւ բերդորայս եւ ետ ի ձեռս անհաւատից, որք ոչ զօրեցին զամագիտ լինել այնոցիկ ցորչափ եկաց արֆայն ֆաջ Գուի Լուսինեան»³⁹:

Անժխտելի է, իհարկե, որ Կոստանդնի օրոք Հայոց պետությունն, իսկապես, ունեցավ ծանր տարածֆային կորուստներ, սակայն բոլորովին այլ հարց է, թե դրանում որքան էր թագավորի անձնական մեղքը: Առարկայորեն, մոնղոլների պաշտպանությունից զրկվելուց (1335 թ.) եւ Այաս նավահանգիստը կորցնելուց (1337 թ.) հետո, Կիլիկիո թագավորությունն արդեն դատապարտված էր կործանման: Հէթում Բ թագավորի ժամանակներից ի վեր հուսացված արեւմտյան օգնությունն այդպես էլ տեղ չհասավ, բացի պապի կողմից ուղարկված չնչին զումարների, որոնք հայերին տրվում էին որպես փոխհատուցում Հռոմեական եկեղեցու գերիշխանությունը ճանաչելու դիմաց: Արեւմուտքից օգնություն ստանալու սին ակնկալիքով հայ-հռոմեական եկեղեցիների միությունը հաստատող մի ժողով զումարեց նաեւ ինքը Կոստանդինը (1345 թ.)⁴⁰, որը սակայն մամյոմներին հերթական անգամ զրգոելուց բացի, այլ արդյունք չունեցավ: Հայերը պարզապես տեղյակ չէին, որ Արեւմուտքը, ներֆաշված լինելով հարյուրամյա պատերազմի հորձանուտը, այլեւ ո՛չ կարողություն, ո՛չ էլ ցանկություն ուներ միջամտելու Արեւելքի գործերին:

³⁷ Արդեն նշեցինք, որ միջնադարի քրիստոնեական աղբյուրներում Բաբելոն էր կոչվում եգիպտոսի մայրաքաղաք Կահիրեն:

³⁸ Յովհաննէս Գարգել, Ժամանակագրութիւն, էջ 52:

³⁹ Անդ:

⁴⁰ Այդ ժողովի մասին մանրամասն տե՛ս Tournebize, Histoire, p. 347-366; Օրմանյան, Ազգապատում, § 1291-1308: Հիշեցնենք, որ վերջինս ժողովը թվագրում է 1343 թվականով:

Կիլիկիո թագավորության համար ծանր էր հատկապես պետական գանձարանի հիմնական հասույթներն ապահովող Այաս նավահանգստի կորուստը⁴¹: Հիշեցնենք, որ այդ իրադարձությունը տեղի էր ունեցել դեռևս Կոստանդնի գահակալությունից առաջ, հետեաբար, նա դրանում մեղքի բաժին չունեք: Ի պատիվ Կոստանդնի պետք է նշել, որ 1347 թվականին նա նույնիսկ ֆաղաբը վերագրավելու մի խելահեղ փորձ կատարեց, որը սակայն, կարճատե հաջողությունից հետո, ավարտվեց ապարդյուն⁴²: Հայոց պետության համար, թե՛ տնտեսական, թե՛ ռազմավարական առումով, ավելի ճակատագրական եղավ Դաշտային Կիլիկիայի եւ ծովափնյա մյուս ֆաղաբների կորուստը: 1360 թվականին մամլյուֆյան զորքերը, Հալեպի էմիր Բեգ-Թեմուրի հրամանատարությամբ ներխուժելով Կիլիկիա, գրավեցին Ադանան եւ Տարսուսը. «Ի թուին ՊԹ, ի յամսեան ի մայիսի, երեկ Հալպայ ամիրայն Պայտամուրն Մարայ գօրօֆն ի Հայք, նայ տուին զԱտանայ եւ զՏարսոսն»⁴³: Իսկ Կողիկոսի բնակիչներն, ահաբեկված այդ իրողությունից, նույն թվականին իրենց ֆաղաբը հոծարակամ հանձնեցին Կիպրոսի թագավոր Պետրոս I-ին⁴⁴: Հայոց թագավորությունն, այսպիսով, ամփոփվեց Կիլիկիո լեռնազանգվածում, հայտնվելով Թորոս Ա իշխանի ժամանակների վիճակի մեջ⁴⁵: Այդ դառն իրողությունը, սակայն, ոչ թե Կոստանդնի ապաշնորհության, այլ երկրի ռեսուրսների սպառման եւ ֆաղաբական մեկուսացման հետեւանք էր: Կոստանդին Դ (III) թագավորը մահացավ 1362 թ. դեկտեմբերի 21-ին⁴⁶:

⁴¹ Ինչպես գրում է Ս. Էփրիկյանը, «հայկական տէրութեան ցլետին շունչը՝ Այասու կորուստն անբժշկելի վէրք եղած էր իրեն»։ Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հտ. 1, էջ 141:

⁴² Տե՛ս Աբուլ-Ֆիդա, Ժամանակագրություն (Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 250); Dulaurier, Documents Arméniens, p. 706.

⁴³ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 451: Տե՛ս նաեւ՝ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 52; Kohler, Documents Arméniens, p. 32.

⁴⁴ Տե՛ս Махера, Повесть, с. 65–66; Amadi, Chronique, p. 410–411; Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 52:

⁴⁵ Հմմտ. Микаелян, История, с. 468.

⁴⁶ Տե՛ս Rüdiger-Collenberg, The Rupenides, III (H2).

ԿՈՍՏԱՆԴԻՆ Ե (IV) ԹԱԳԱՎՈՐ (1365–1373 թթ.)

Թեև Հովհաննես Գարդելը տեղեկացնում է, որ Կոստանդին Ե (IV) թագավորը Կոստանդին Գ (III)-ին հաջորդել է անմիջապես վերջինիս մահից հետո¹, սակայն նորահայտ մի աղբյուրից պարզվում է, որ 1363–1364 թվականներին Հայոց գահին մեկ տարի տիրել է Մարիոն թագուհին, որն, ի դեպ, մեկ տարի էլ գահակալել է 1373–1374 թվականներին. «Կոստընդին, որդի պարոն Պաղտնին՝ ամս Խ (20).– Մարիոն թագուհի՝ ամս Ա (1).– Կոստընդին, որդի պարոն Հեթմո՝ ամս Ժ (10).– Գարձեալ Մարիոն թագուհի՝ ամս Ա (1).– Լետն, որդի ճուան բրընձին՝ ամիս Ժ (10)»²: Այս թանկարժեք տեղեկությունը, որպես ներսես Պալիանենցի «Իշխանութիւնք եւ թագաւորք Հայոց» գավազանացանկին³ կցված լրացում, պահպանվել է Բրիտանական Գրադարանի Or.5458-Arm.116 ձեռագրում, ընդօրինակված 1404/5 թվականին: Հետեւաբար, խոսքը վերաբերում է իրադարձություններին ժամանակակից մի հեղինակի վկայության, որին չվստահելու ոչ մի հիմք չունենք: Մարիոնը Կոստանդին Գ (III) թագավորի կինն էր, Կոռիկոսի տեր Օշին պայլի դուստրը⁴: 1320 թվականին պայլն ամուսնացել էր Օշին թագավորի այրու՝ Յովհաննա (Ժաննա-Իրեն) Անժուացու՝ Տարանտոյի պրինց եւ Կոստանդնուպոլսի տիտ-

¹ Յովհաննէս Գարդել, Ժամանակագրութիւն, էջ 59:

² Անանուն, Ժամանակագրական գրառումներ, էջ 555–556:

³ Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 2, էջ 195–208:

⁴ Յովհաննէս Գարդել, Ժամանակագրութիւն, էջ 28:

դոսակիր կայսր Ֆիլիպի, Նեապոլի թագավոր Ռոբերտ Անժուացու եղբոր դստեր հետ⁵: Օգտագործելով Ֆիլիպ Անժուացու թուր լինելու հանգամանքի շնորհիվ Արեւմուտքում ունեցած իր կապերը, Մարիոն թագուհին, ինչպես դեռ կտեսնենք, հետագայում եւս Հայոց գահին տիրելու հավակնություններ պիտի դրսևորեր⁶:

Ծանոթ շլինելով Մարիոնի առաջին գահակալմանը վերաբերող մինչ այժմ անհայտ այս տեղեկությանը, հետազոտողներից ոմանք ենթադրել են, որ 1363–1365 թթ. միջեւ ընկած խառնակ ժամանակահատվածում Հայոց գահին տիրել է մի այլ թագավոր՝ Լեոն անունով⁷: Այդ մասին, իբրեւ թե թվական աննշտությամբ, տեղեկացնում է XVII-XVIII դդ. ժամանակագիր Ավետիք Ամդեցին կամ Տիգրանակերտցին⁸. «Ի Ը (8) ամին Կոստանդեա Հայոց թագաւորի եղև թագաւոր Լեոն մ'այլ, խոչընդակ Կոստանդեա, եւ խոռվութիւն ոչ սակաւ ընդ միմեանս»⁹: Քյուրիմացությունն առաջացել է նրանից, որ Ղ. Ալիշանն այս տեղեկությունը վերագրել է Կոստանդին Գ (III) թագավորի ութերորդ տարուն¹⁰: Այնինչ ակնհայտ է, որ խոսքը վերաբերում է Կոստանդին Ե (IV)-ի ժամանակին (1365–1373 թթ.), քանի որ սույն տեղեկությանը նախորդող դեպքը՝ Ալեքսանդրիայի առումը ֆրանկների կողմից, նույն աղբյուրում թվագրված է 1366 (իրականում 1365) թվականով¹¹: Հետեւաբար, Ավետիքի գավազանագրքի վրա հիմնվելով, անհնար է Կոստանդին Ե (IV)-ից առաջ գահակալած Լեոն անունով թագավոր ենթադրել:

Այս տեսակետը պաշտպանող գիտնականները վկայակոչում են

⁵ Անդ, էջ 28, 30:

⁶ Հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 544; Mutafian, Léon V Lusignan, p. 203–204.

⁷ Տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 544; Բամաջյան, Լեոն Ե, էջ 27–28; Bedoukian, Coinage, p. 20; Köhl, Leon V, S. 32, 57, 115.

⁸ Ավետիքի կյանքի ու մատենագրական ժառանգության մասին մանրամասն տե՛ս Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. 2, էջ 1014–1023:

⁹ Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 573:

¹⁰ Ալիշան, Սիսուան, էջ 544:

¹¹ Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 572–573:

նաեւ XV դ. առաջին քառորդի կիսրացի ժամանակագիր Լեոնտիոս Մախերասին¹², որը 1360 թվականին տեղի ունեցած իրադարձությունների կապակցությամբ հիշատակում է Լեոն անունով Հայոց մի թագավորի: Քանի որ Մախերասի ժամանակագրության համապատասխան հատվածն այսպիսի պատասխանատու պնդման տեղիք է տվել, հարկ ենք համարում այն մեջբերել ամբողջությամբ. «Երբ Կոոիկոսի ժողովուրդը տեսավ, որ թուրքերն ամեն օր հարձակվում են իրենց վրա, առաջանալով մի տեղից մյուսը, հափշտակելով արվարձաններում գտնվող տներն, այգիներն ու շատ այլ բաներ, ինչպես նաեւ գրավելով քաղաքը, քրիստոնյաներից ոմանք փախան Կիպրոս, իսկ մյուսները, մնալով բերդում ու կղզու սահմաններից դուրս, խիստ նեղության մեջ պահպանեցին այդ վայրը Քրիստոսի սիրույն: Հայոց թագավորությունը բաժին էր ընկել Լեոն թագավորին, որն ազգատ էր: Նա տիրում էր 200 քաղաքի եւ բերդի, բայց թուրքերն ավերեցին ու նվաճեցին դրանք, այսինքն՝ մի մասը քանդեցին, իսկ մյուս մասը պահպանեցին: Երբ Հայոց թագավորը տեսավ այդ ամենը, նա լքեց երկիրը եւ մեկնեց իր հարազատների մոտ, Ֆրանսիա»¹³: Եթե շիներին Կիլիկիո պետության կործանման եւ Հայոց թագավորի Ֆրանսիա մեկնելու մասին առկա մանրամասները, ապա կարելի էր կարծել, որ խոսքն, իսկապես, վերաբերում է 1360 թվականին գահակալած Լեոն անունով մի թագավորի: Մինչդեռ ակնհայտ է, որ տվյալ դեպքում հեղինակը նկատի ունի Լեոն Զ (V) թագավորին (1374–1375 թթ.), քանի որ Հայոց թագավորությունը կործանվել է նրա օրոք, եւ նա է, որ ապաստան է գտել Ֆրանսիայում: Իսկ թե ինչու է վերջինիս անունը հայտնվել 1360 թվականի իրադարձությունների առնչությամբ, բացատրվում է նրանով, որ Մախերասն, իր երկրը գրելով Կիլիկիո անկումից տասնյակ տարիներ հետո, հայերի մասին խոսելիս հարկ է համարել իր ժամանակակիցներին ծանոթագրու-

¹² *Քասմաջյան, Լեոն Ե, էջ 24, 28; Bedoukian, Coinage, p. 20; հմմտ. նաեւ՝ Mutaflan, Recherches, p. 117; Mutaflan, Léon V Lusignan, p. 202.*

¹³ *Махера, Повесть, с. 65. Այնուհետեւ հեղինակը մանրամասնորեն նկարագրում է, թե ինչպես կոոիկոսցիներն իրենց քաղաքը հոժարակամ հանձնեցին Կիպրոսի թագավոր Պետրոս I-ին (Անդ, էջ 65–67): Կիպրոսի թագավորությունն, ի դեպ, Կոոիկոսին տիրեց մինչեւ 1448 թվականը. հմմտ. Edbury, Cyprus, p. 163–164.*

թյան կարգով հիշեցնել կամ տեղեկացնել, որ նրանք անցյալում թագավորություն են ունեցել, որի վերջին գահակալը, պարտվելով թուրքերին, լքել է իր հայրենիքն ու մեկնել Ֆրանսիա:

1363–1365 թվականներին ոմն Լեոնի՝ Կիլիկիայում գահակալած լիներու տեսակետն ամրապնդելու առնչությամբ շատ ավելի ծանրակշիռ է նրա անունով հատված դրամների գոյության փաստարկը: Պ. Պտուկյանի՝ Կիլիկիո դրամագիտությանը նվիրված հայտնի գրքում նկարագրված է այդպիսի ֆառասունմեկ դրամ, որոնք հեղինակը վերագրում է, այսպես կոչված, Լեոն բռնագավթյին (Levon the Usurper)¹⁴: Հիմնվելով այդ փաստի վրա՝ նշանավոր դրամագետը եզրակացնում է. «Քեես պատմական տվյալները բավականին սուղ են հաստատելու համար 1363–1365 թվականներին գահակալած Լեոնի գոյությունը, սակայն հարուստ դրամագիտական նյութի առկայությունը ցույց է տալիս, որ այդպիսի թագավոր եղել է ու դրամ հատել»¹⁵: Ինչ վերաբերում է Լեոնի անձին, ապա Կ. Բասմաջյանն անվերապահորեն, իսկ Պ. Պտուկյանը՝ թեականորեն, կարծում են, որ նա եղել է Կոստանդին Դ (III) թագավորի որդին¹⁶: Այն, որ Կոստանդինն, իսկապես, ունեցել է Լեոն անունով մի որդի, հավաստված է մի ֆանի հայկական աղբյուրների տվյալներով, որոնցից մեկը գրված է թագավորի իսկ ձեռքով. «Ի թուականիս Հայոց ԶՂԴ (= 1345 թ.) ես՝ Կոստանդին Հայոց արքայ, ստացայ զսուրբ աւետարանս... միշտ յիշատակ լինել ինձ եւ ամենայն զարմից իմոց, եւ հօրն իմոյ տէր Պաղտին մարաջախտուն՝ հանգուցելոյն առ Քրիստոս, այլ եւ վասն երկար կենդանութեան մերոյ եւ աստուածապարգեւ որդւոցն իմոց Աւշնի եւ Լեոնի»¹⁷: Սակայն Բասմաջյանի եւ Պտուկյանի տե-

¹⁴ Bedoukian, Coinage, p. 20, 395–399. *Իմիջիայլոց, Լեոնի՝ բռնագավթիչ լիներու հանգամանքը Պ. Պտուկյանից առաջ շեշտել են նաեւ Ղ. Ալիշանը եւ Կ. Բասմաջյանը, առաջինն այդ առթիվ գրելով՝ «Լեոն ոմն կորզէ զթագն» կամ «Լեոն ոմն բռնաբարէ զթագն» (Ալիշան, Սիսուան, էջ 544, 560), իսկ երկրորդը՝ «Լեոն անմիջապես գրաւեց գահը» (Բասմաջյան, Լեոն Ե, էջ 27):*

¹⁵ Bedoukian, Coinage, p 20.

¹⁶ Բասմաջյան, Լեոն Ե, էջ 27; Bedoukian, Coinage, p 20.

¹⁷ *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 343; Տե՛ս նաեւ՝ Պողարյան, Յուդակ, հտ. 6, էջ 556; Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 241:*

սակետը խոցելի է մի լուրջ անհարմարության պատճառով, այն է՝ Կոստանդնի որդիներն այդ ժամանակ արդեն մահացած էին, ինչի մասին հստակորեն տեղեկացնում է Հովհաննես Դարդելը. «Եւ Աստուծոյ ոչ եղեն կամփ զի որդիք Կոստանդին արքայի թագաւորեսցեն զկնի նորա, զի չէր նա յարժունի զարմէ անտի Հայոց. զի թէպէտ եւ էին նորա որդիք բազումք, այլ մեռան նոքա ի մէջ աւուրց ֆանից»¹⁸: Բասմաջյանը փորձում է նշված արգելիչ հաղթահարել այն տրամաբանությամբ, որ քանի որ Դարդելը Կոստանդնի մահացած որդիների անունները չի հիշատակում, ապա Լեւոնը կարող էր զերծ մնացած լինել նրանց բաժին ընկած վախճանից¹⁹: Քեւ սա, իսկապես, տրամաբանական, սակայն միանգամայն անապացուցելի, հետեւաբար, գիտական առումով անընդունելի դատողություն է Իսկ Կոստանդին Գ (III)-ի մահից հետո նրա այրու՝ Մարիոն թագուհու գահակալման փաստը, կարծում ենք, վերջնականապես ապացուցում է, որ նրանց որդիներն այդ ժամանակ իսկապես արդեն մահացած էին:

Ռուդ-Կոլենբերգը եւ, նրան հետեւելով, Հ. Քյուլն ամենեւին բացառ-

¹⁸ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 58: Հստ Ռուդ-Կոլենբերգի՝ Օշինն ու Լեւոնը մահացել են 1356/7 թվականին. Rüdtt-Collenberg, The Rupenides, III (H2). Այս պնդումն, ըստ երեւույթին, հիմնված է Ղ. Ալիշանի հետեւյալ տեղեկությունների վրա. «1357 թ. Սրածուծիւն ի Սիս. բազում պարոնայք եւ քահանայք եւ արքայորդիքն մեռանին» (Ալիշան, Սիսուան, էջ 560) եւ «(Կոստանդին) կու մեռնէր 1363 թուականին՝ յթողլով ժառանգ արու. վասն զի իր երկու որդեակքն, Օշին եւ Լեւոն, ապագայ մատաղ յոյսք Հայոց, հորերնուն աչքին առչեւ մեռած էին» (Ալիշան, Հայ-Վենետ, էջ 130-131): Ալիշանի աղբյուրն, ակնհայտորեն, «Կիլիկիոյ պատմութիւնն» է, որը 1356 թվականի տակ նշում է. «Պե. Յայսմ ամին եղեւ մահտարածամ ի Սիս, եւ մեռաւ Կոստանդին թագաւորն յետ ժք ամի տիրելոյն եւ թաղեցաւ ի Սիս, եւ իւր որդիքն եւ շատ պատուական քահանայք եւ տանուտէրք, եւ յարեւելս եղեւ մահտարածամ». տե՛ս Յակոբ Սեպեթի, Պատմութիւն, էջ 240-241: Հեղինակն, իհարկեւ, սխալվում է, նշելով, որ այդ ժամանակ մահացել էր նաեւ Կոստանդին թագավորը: Ինչ վերաբերում է նշված մահտարածամին, ապա խոսքն, անկասկած, 1347 թվականին Ղրիմից տարածված ժանտախտի համաճարակի մասին է, որը հայտնի է «Սեւ մահ» անունով, եւ որին զոհ գնացին ներոպայի ու միջերկրածովյան ավազանի երկրների միլիոնավոր բնակիչներ:

¹⁹ Բասմաջյան, Լեւոն Ե, էջ 28:

ված շեն համարում, որ այդ «բռնագավթիչը» կարող էր լինել ապագա թագավոր Լեոն Զ (V) Լուսինյանը, թեև խոստովանելով անհրաժեշտ ապացույցների բացակայությունը²⁰: Համենայն դեպս, բիշ թե շատ հիմնավոր թվացող ապացույցների շարքում, բացի Ավետիֆ Ամդեցու եւ Լեոնտիոս Մախերասի վերոհիշյալ թյուրմբոնված տվյալներից, նշվում է նաև Ֆ. Կոնիբերի «Քրիտանական թանգարանի հայերեն ձեռագրերի ցուցակից» ֆաղված մի տեղեկություն, ըստ որի՝ Լեոն Զ (V) Լուսինյանը, Հովհաննես-Ջեհանի որդին, իբրև թե թագավորել է տաս տարի. «Leon, son of Djuan brnds, 10 years»²¹: Սակայն պարզվում է, որ սա ցավալի թյուրիմացություն է, քանի որ Կոնիբերի աղբյուրի հայերեն բնագրում հստակ նշված է՝ տաս ամիս. «Լեոն, որդի Ճուան բրընձին, ամիս Ժ»²²: Հասկանալի է, որ ցուցակագիրը անուշադրության պատճառով շփոթել է «ամիս» եւ «ամս» բառերը, ու սխալմամբ թարգմանել «տաս տարի»:

Այդուհանդերձ, մեզ թվում է, Լեոն Զ (V)-ի առնչությամբ Ռուդ-Կոլենբերգի եւ Հ. Քյոպի կատարած վերագրումը տեղին է, բայց ոչ այն իմաստով, որ նա 1363–1365 թվականներին իրոք թագավորել է Կիլիկիայում, այլ բոլորովին ուրիշ նկատառումներով: Մեր կարծիքով՝ տեղի է ունեցել հետեւյալը: Քանի որ Կոստանդին Դ (III)-ի որդիները մահացած էին, եւ այդ պատճառով Հայոց գահը ժամանակավորապես անցել էր Մարիոն թագուհուն, 1363 թվականին Կիլիկիո Աբուունի ասյանը որոշում է կայացրել զահակալելու հրավիրել երկրի միակ օրինական թագաժառանգ Լեոն Լուսինյանին՝ միակ, որովհետեւ վերջինիս ավագ եղբայր Բոհեմունդը նույնպես մահացել էր այդ թվականին²³: Սակայն Լեոնն ինչ-ինչ պատճառներով հրաժարվել է դրանից, եւ Հայոց իշխաններն ստիպված են եղել որոշ ժամանակ համոզել ու սիրաշահել նրան՝ այդ նպատակով նույնիսկ նրա անունով դրամ հատելով: Չկարողանա-

²⁰ Rüd̄t-Collenberg, The Rupenides, p. 76; Rüd̄t-Collenberg, Les Bullae, p. 700; Kūhl, Leon V, S. 32, 115–116. Հմմտ. նաև՝ Atamian-Bournoutian, Cilician Armenia, p. 289, 291. Կ. Մութաֆյանի կասկածներն այս առթիվ տե՛ս Mutafian, Léon V Lusignan, p. 202–203.

²¹ Conybeare, Catalogue, p. 292.

²² Անդ: Նույնը՝ Անանուն, Ժամանակագրական գրառումներ, էջ 556:

²³ Յովհաննէս Դարդեկ, Ժամանակագրութիւն, էջ 58:

լով հաղթահարել վերջինիս անհողողությունը՝ Արևունի ատյանը, ճահատյալ, 1365 թվականին թագավոր է ընտրել Կոստանդին Ե (IV)-ին, թեև, ինչպես կտեսնենք, դրանից հետո էլ շարունակելով Լեոնին համոզելու փորձերը²⁴: Այսպիսով, Լեոն բռնազավթչին վերագրված դրամները, մեր կարծիքով, իրականում պատկանում են 1363–1365 թվականներին de jure, բայց ոչ de facto գահակալած Լեոն Զ (V) Լուսինյանին²⁵:

Կոստանդին Ե (IV) թագավորի ընտրության առթիվ Հովհաննես Գարդելը գրում է, որ նա այդ պատվին արժանացել էր ոչ թե արհայական ծագման, այլ իր հարստության շնորհիվ. «Ջկնի մահուան Կոստանդին բռնակալ արհայի եղին Հայք գայլ ոմն թագաւոր, զորդին պարոն Հեթմոյ, որ կոչեցաւ Կոստանդին թագաւոր: Այլ ոչ եթէ ընտրեցին զնա առ ազնուականութեանն, այլ առ փարթամութեան, զի էր ծագումն նորա ի ճորտից անտի Կիպրոսի»²⁶: Ֆրանսիացի ժամանակագիրը, սակայն, այս անգամ եւս, ինչպես Կոստանդին Գ (III) թագավորի պարագայում, սխալվում կամ դիտավորյալ կերպով աղավաղում է փաստերը, քանզի հաստատապես հայտնի է, որ Կոստանդին Ե (IV)-ն, իր նախորդի պես սերում էր նշանավոր Կոստանդին Գունդստապլի տոհմից: Նա Կոստանդին Գ(III)-ի հորեղբոր՝ Նղիրի տեր Հեթում սենեկապետի (ջամբուլա) որդին էր²⁷: Հիշատակագիրներից մեկը նրան կոչում է. «Կոստանդին, որդի ի Քրիստոս հանգուցելոյն ամենագովութեանց արժանատրին, մեծ եւ հզաւորն եւ ամենամեծ ջամբլին Հայոց պարոն Հեթմոյ»²⁸: Եթե հիշենք, որ Հեթում Նղիրցին նաև Լեոն Ե (IV) թագավորի

²⁴ Անդ, էջ 67: Այդ փորձերին մենք դեռ հանգամանորեն կանդրադառնանք ստորև:

²⁵ Ըստ Ֆ. Հիլդի՝ Լեոն Զ (V) թագավորը գահակալել է երկու անգամ՝ 1363–1364 եւ 1374–1375 թվականներին. տե՛ս Hild-Hellenkemper, Kilikien, S. 84.

²⁶ Յովհաննէս Գարդել, Ժամանակագրութիւն, էջ 59:

²⁷ Այն, որ Կոստանդին Գ (III)-ի եւ Կոստանդին Ե (IV)-ի հայրերը՝ Պաղտին մարաջախտը եւ Հեթում ջամբուլան, հարազատ եղբայրներ էին, հաստատում է Վատիկանի Գրադարանի հայկական ձեռագրերից մեկի հիշատակարանը. տե՛ս Tisserant, Codices Armeni, p. 183.

²⁸ Խաչիկյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 477: Տե՛ս նաև՝ Անդ, էջ 478; Tisserant, Codices Armeni, p. 182–183; Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 241; Պողարյան, Ժամանակագրութիւն, էջ 265:

չորս խնամակալներից մեկն էր, ապա պարզ կդառնա, որ նա դասվում էր Կիլիկիայի ամենահեղինակավոր իշխանների շարքը²⁹: Այսպիսով, Կոստանդին Ե (IV)-ն, ինչպես իր նախորդը, լինելով Կոստանդին Գունդատապլի ծոռը կամ թոռան թոռը, ազգակցական, բայց ոչ ուղղակի արյունակցական կապի մեջ էր Ռուբինյան-Հեթումյան արհայատոհմի հետ, ինչը որոշ առումով ապահովում էր նրա ընտրության «լեգիտիմությունը»: Այս տեսակետից նա նույնիսկ առավելություն ուներ Կոստանդին Դ (III)-ի նկատմամբ, քանի որ նախ՝ Կիլիկիայում արդեն գրանցվել էր թագավորի ընտրության նախադեպը, եւ երկրորդ՝ նա Հայոց նախորդ թագավորի հորեղբորորդին ու ժառանգորդն էր: Այնուամենայնիվ, նրա «լեգիտիմությունը» նույնքան խոցելի էր, որքան Կոստանդին Դ (III)-ի պարագայում, քանի որ դեռ ողջ էր Հայոց օրինական թագաժառանգը՝ Լեոն Լուսինյանը:

Լինելով վերջինիս ներքողագիրը՝ Հովհաննես Դարդելն ընդգծված արհամարհանք է ցուցաբերում Կոստանդին Ե (IV)-ի նկատմամբ, նրան ներկայացնելով որպես ապաշնորհ եւ ընչաքանի մի անձնավորություն, որն իր ժողովրդին կեղեքելուց ու երկիրն անհավատների ձեռքը մատնելուց բացի, այլ բանի մասին չէր մտածում. «Յինքն շորթեալ զգանձ աշխարհին, կապտէր զժողովուրդն եւ արկեալ յանհնարին աղէտս, կամէր մատնել զնոսա ի ձեռս անհաւատից»³⁰: Կոստանդինի ընչաքանիության մասին տեղեկությունը ո՛չ կարող ենք հաստատել, ո՛չ էլ հերքել, սակայն ինչ վերաբերում է Կիլիկիան մահմեդականներին հանձնելու նրա մտադրությանը, ապա դա պետք է համարել հեղինակի երեւակայության արդյունք, քանի որ այն հակասում է այլ աղբյուրներից հայտնի իրողություններին: Կոստանդինը փոփոխակի հաջողություններով մշտապես մահառել է մամլյուրների դեմ, մասնավորապես, 1367–1370 թվականների միջեւ երեք անգամ վանելով Տարսուսի էմիր Մանչակի հարձակումները, որոնց ընթացքում աչքի է ընկել հերոս գորավար Կպարիտը՝

²⁹ Հեթում Նդիրցու անձի եւ գործունեության մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Հավելվածի» 2-րդ ենթադրյալում:

³⁰ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 67–68: Կոստանդինի ընչաքանիության մասին հեղինակը խոսում է նաեւ իր աշխատության 60-րդ էջում:

նահատակված Սսի կամրջի մոտ տեղի ունեցած երկրորդ հակատամարտում³¹: Այսֆանով Կոստանդին Ե (IV) թագավորի մասին հայկական աղբյուրների ընձեռած տվյալներն, ըստ էության, սպառվում են, եթե չհաշվենք նրա կողմից հատված դրամները³² և նրա անունով թվագրված ձեռագրական հիշատակարանները³³: Այսուհետև մեր միակ ուղեկիցն, ըստ այդմ, մնում է Հովհաննես Դարդելը: Որքան էլ միակողմանի լինի նրա վարկածը, հարկ ենք համարում այն ներկայացնել ամբողջությամբ, նկատի ունենալով, որ արդի պատմագիտությունն, ըստ էության, շրջանցել է այդ թագավորին, բավարարվելով միայն նրան հատկացված թուուցիկ ակնարկներով:

Եւ այսպես, ըստ Հովհաննես Դարդելի՝ Կոստանդինը, նեղվելով մահմեդականներից, դիմում է Կիպրոսի թագավոր Պետրոս I-ին, նրան առաջարկելով Հայոց գահը. «Եւ քանզի տազնապէր թագաւորութիւն Հայոց յերեսաց անհաւատիցն, առաքեաց առ արքայն Կիպրոսի, ուստի էր ծագումն նորա, զի հանեսցի ընդունել զնա եւ զթագաւորութիւն նորա եւ զինչս նորա զամենայն, արձակ համարձակ, եւ արասցէ զթագաւորութենէն Հայոց՝ որպէս եւ հանոյ երեսեսցի նմա»³⁴: Այլուստ հայտնի է, որ այդ առաջարկը կատարվել է 1368 թվականին³⁵, այսինքն՝ Տարսուհի էմիր Մանչակի հարձակումների սկզբնավորման շրջանում: Իսկ թե ինչու էր Հայոց թագավորը դիմել հատկապես Պետրոսին, բացատրվում է նրանով, որ վերջինս այդ ժամանակ քրիստոնյա աշխարհի թերես ամենահեղինակավոր գահակալն էր՝ փառավորված մամլյուֆների դեմ

³¹ *Տե՛ս Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 477 (հիշատակագիրը Կիպրիտին կոչում է «ավաք մարաջախտ Հայոց»); Յակոբ Սեցի, Պատմութիւն, էջ 241–245: Կիպրիտի մասին տե՛ս նաեւ՝ Խաչիկյան, Անդ, էջ 451; Անանուհ, Ժամանակագրական գրառումներ, էջ 556–557; Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, էջ 197–204:*

³² Պ. Պտուկյանի գրքում նկարագրված է Կոստանդին Ե (IV) թագավորին պատկանող 70 դրամ. Bedoukian, Coinage, p. 399–408.

³³ *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 468, 477, 478, 490, 496, 503, 511; Պարթևյան, Յուզակ, հտ. 1, էջ 356:*

³⁴ *Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 59:*

³⁵ Guillaume de Machaut, p. 222–223 (ըստ՝ Mutafian, Recherches, p. 108). *Տե՛ս նաեւ՝ Hill, Cyprus, p. 358–359.*

տարած մի ապշեցուցիչ հաղթանակի շնորհիվ: 1365 թվականին նա, Արեւմուտքից ժամանած ֆրանկ ասպետների աջակցությամբ, անակնկալ կերպով գրավել էր եգիպտոսի Ալեքսանդրիա նավահանգիստը, ու թեև կարճ ժամանակ անց ստիպված էր եղել նահանջել, սակայն դա ամենեւին չէր խաթարել նրա հերոսական կերպարը³⁶:

Բացի Կիլիկիան մահմեդականներից պաշտպանելու ակնկալիքից, Հայոց թագավորն, ըստ Դարդելի, ուներ նաև Պետրոս I-ին դիմելու մի այլ շահագրգռություն, այն է՝ փրկել սեփական անձն ու ժողովրդից հափշտակած գանձերը եւ դրանք փոխադրել Կիպրոս. «Այլ որպէս առակն ասէ՝ Մարդ յառաջադէ, այլ Աստուած գործադրէ, կամեցաւ Տէր զի ի դերեւ ելցէ նա յակնկալութենէ անտի իւրմէ եւ ոչ կամեցաւ զի անցուցէ նա ի Կիպրոս զգանձս արժունի, զոր կուտեալ էր նորա կեղեքելով զերկիրն եւ յափշտակելով զինչս ժողովրդեան»³⁷: Մեր կարծիքով, սակայն, Հայոց թագավորի առաջարկի էությունը Կիլիկիո եւ Կիպրոսի թագավորությունների միավորումն էր³⁸, որն անպայման նրանց միաձուլում չէր նշանակում: Կոստանդինն, ըստ երեւոյթին, իր մտքում ուներ երկու պետությունների համադաշնության (կոնֆեդերացիայի) գաղափարը, որի նախադեպը Կիպրոսի եւ Երուսաղեմի թագավորությունների XIII դարում իրականացած միավորումն էր³⁹: Դարդելը տեղեկացնում է նաև, որ Պետրոս I-ն ընդունել էր Հայոց թագավորի առաջարկը. «Եւ եղև իբրև լուաւ թագաւորն Պետրոս զխնդիր արժային

³⁶ Ալեքսանդրիայի գրավումը եւ մանավանդ դրան հաջորդած մահմեդական հաշվհարդարը քրիստոնյաների նկատմամբ արձագանք է գտել նաև հայկական աղբյուրներում, ինչպես, օրինակ. «Ի ՊժԵ. Ֆրանկն զԱ(ս)քանդարիայ էառ, եւ շատ դազայ արար եւ ժԲԲ (12000) կոյս աղջիկ գերի տարաւ, թող զայլ կին եւ զտղայս: Եւ յայն բանէն խստացան տաճիկքն, եւ արարին հալածումն քրիստոնէից, եւ զամենայն ուխտաւորս Երուսաղեմի ի կապանս պահեցին Գ ամ, եւ զՍուրբ Յարութեան դուռն փակեցին»։ Մամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 169–170: Տե՛ս նաև՝ Պողարյան, Յուցակ, հտ. 1, էջ 356; Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 248; Աւետիք Տիգրանակեբոսցի, Գաւազանագիրք, էջ 572–573:

³⁷ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 59–60:

³⁸ Հմմտ. Mutafian, Le royaume, p. 88; Mutafian, Recherches, p. 108.

³⁹ Հմմտ. Տե՛ր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 1, էջ 91, 115:

Հայոց Կոստանդնի, ցանկացաւ տիրել աշխարհին այնմիկ»⁴⁰: Սակայն 1369 թվականին տեղի ունեցած նրա սպանությունը խափանում է երկու պետությունների միավորումը, եւ Կոստանդինն, իր կամֆին հակառակ, մնում է Կիլիկիայում. «Եւ արքայն Կիպրոսի Պետրոս սպանաւ ի ձեռաց աւագորերոյն իւրոյ: Եւ այսպէս թագաւորն Կոստանդին եկաց մնաց ակամայ կամօք ի Հայաստան»⁴¹:

Մինչ Կոստանդինը բանակցություններ էր վարում Պետրոս I-ի հետ, Կիլիկիո իշխանները երկրի փրկության մի այլ ծրագիր էին հետապնդում: Նրանցից ոմանք գաղտնաբար պատգամավորներ են ուղարկում Լեւոն Լուսինյանի մոտ եւ խնդրում նրան՝ որպէս օրինական թագաժառանգի, ստանձնել Հայոց գահը. «Տեսեալ ազգին Հայոց զի արքայն Կոստանդին ոչ եւս կամէր յանձանձել զերկիրն, ... ընդդէմ ելին նորա եւ առաքեցին ի ձեռն պատգամաւորաց գաղտնապէս թուղթս առ իշխանն Լեւոն, որ էր յայնժամ ի Կիպրոս, աղաչելով զնա զի՝ որովհետեւ նա ինքն էր բնիկ իրաւամբ տէրն իւրեանց, հաճեցի գալ իշխել եւ առնուլ ի ձեռս զժառանգական իրաւունս եւ զթագն Հայոց, որ նմա իսկ էր անկ, եւ զի ներեսցէ վնասուն եւ ապիրատութեան, որով մատնեալ էր նոցա ի մահ զնախնիս նորա»⁴², եւ խոստանալին անկեղծաբար, զի իբրեւ հպատակ ֆ հաւատարիմք հնազանդեցին»⁴³: Թեւ Լեւոնը սիրով ընդունում է Կիլիկիո իշխանների առաջարկը, սակայն հրաժարվում է անմիջապէս ստանձնել Հայոց գահը. «Իսկ իշխանին Լեւոնի ընկալեալ զպատգամաւորսն պատուով եւ սիրով, ետ նոցա պատասխանի թէ ախորժ հաճութեամբ առնու նա յանձն զգահն արքայական յօգուտ քրիստոնէութեան. այլ ոչ էր նմա մարթ զնալ անդր միամտութեամբ ի ժամանակին»⁴⁴: Իր

⁴⁰ Յովհաննէս Դարգել, Ժամանակագրութիւն, էջ 59: Ըստ Ռուդ-Կոլենբերգի՝ Հայոց գահին տիրելու իրավունքը Պետրոս I-ին անցել էր այն պատճառով, որ Լեւոն Զ (V) Լուսինյանն ապօրինածին կամ հարճորդի էր, հետեւաբար զրկված այդ իրավունքից. Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 76.

⁴¹ Յովհաննէս Դարգել, Ժամանակագրութիւն, էջ 60:

⁴² Հեղինակը նկատի ունի Լուսինյան գերդաստանի անդամների՝ Զապել արքայադաստեր եւ նրա որդիների՝ Լուգոյի, Հենրիի, Գիի ու Բոհեմունդի սպանությունը:

⁴³ Յովհաննէս Դարգել, Ժամանակագրութիւն, էջ 66-67:

⁴⁴ Անդ, էջ 67:

մերժումը նա պատճառաբանում է երկու հանգամանքով՝ նախ, որ վստահ չէր հայերի հավատարմությանը, եւ երկրորդ, որ առանց մեծ զորաբանակի չէր կարող օգտակար լինել երկրին. «Զայս արար պատասխանի իշխանն Լեւոն զի գիտէր քաջ զսակաւ հաւատարմութիւն Հայոց առ տեարս իւրեանց, եւ ոչ կամէր նա գնալ ի Հայաստան սակաւածեոն գնդաւ վասն երկուց պատճառաց. առաջին՝ զի եթէ ոչ էր նորա ուղեկից բազմութիւն, արկանէին զնա Հայք ընդ ձեռամբ իւրեանց, վարելով ըստ կամս անձանց. եւ երկրորդ՝ զի եթէ ոչ էր նորա զունդ զօրաց ի ձեռին, չէր նմա մարթ առնել մեծ ինչ ի նպաստ քրիստոնէութեան»⁴⁵: Ջի կարելի չհամաձայնել, որ Լեւոնի պատճառաբանությունները միանգամայն հիմնավոր էին, ուստի հասկանալի է, թէ ինչու Կիլիկիա ժամանելուց առաջ նա ջանքեր է գործադրում արեւմտյան տերություններից զինական օժանդակություն ստանալու ուղղությամբ. «Այսորիկ աղագաւ եկաց մնաց Լեւոն իշխան զի խնդրեսցէ ի պապէն եւ ի թագաւորաց եւ յիշխանաց քրիստոնէութեան, զի ձեռն տացեն նմա ի պահպանութիւն թագաւորութեանն եւ աշխարհին ընդդէմ անհաւատից»⁴⁶:

Կոստանդին թագավորն, իր հերթին, հուսախաբ եղած Պետրոս I-ի սպանության հետեւանքով ձախողված փրկության ծրագրից, վճռում է դաշինք կնքել մամլյումների սուլթանի հետ եւ իր թագավորությունը հանձնել նրան. «Եւ իբրեւ ետես արքայն Կոստանդին զի չէր նմա հնար անցանել ի Կիպրոս, զի կալեալ ունէին այլազգիք զնաւահանգիստսն, դաշն կոեաց ընդ սուլթանին Բաբելոնի եւ խոստացաւ տալ ի ձեռն նորա զթագաւորութիւնն, զաշխարհն եւ զքրիստոնէայս համօրէն, միայն զի պարեցուցէ զանձն իւր եւ զամենայն ստացուածս»⁴⁷: Այնժամ Հայոց իշխանները, վրդովված այս դավաճանական մտահղացումից, սպանում են իրենց թագավորին 1373 թվականին. «Այլ Հայոց իրազեկ եղեալ դաւանացն, սպանին զնա յամսեանն Ապրիլի, յամի Տեառն 1373»⁴⁸: Այս ամենը, սակայն, ինչպես արդեն նշեցինք, կողմնակալ մի

⁴⁵ Անդ:

⁴⁶ Անդ, էջ 67-68:

⁴⁷ Անդ, էջ 68:

⁴⁸ Անդ:

հեղինակի վարկած է, եւ թե որքանով է այն համապատասխանում իրականությանը, հայտնի չէ: Հայկական աղբյուրները ոչ միայն տեղյակ չեն Կոստանդինի սպանությանը, այլեւ անգիտանում են անգամ նրա մահվան փաստը: Իսկ Սամուել Անեցու շարունակողներից մեկը եւ Հակոբ Սսեցին նույնիսկ տեղեկացնում են, որ նա կրկին թագավորել է Լեւոն Զ (V) Լուսինյանի կարճատեւ գահակալությունից հետո. «ՌՅՀԸ. ՊԻԵ. Դարձեալ Կոստանդին՝ ամս եւԸ»⁴⁹, «Եւ դարձեալ թագաւորէ ի Սիս Կոստանդին»⁵⁰: Փաստ է, սակայն, որ 1373 թվականից հետո ընդօրինակված հայկական ձեռագրերի թվագրման բանաձեւում Կոստանդինի անունն այլեւս չի հիշատակվում: Ինչ վերաբերում է Սսի անկումից հետո իբրեւ թե 48 տարի գահակալած թագավորի անձին, ապա Ղ. Ալիշանը, հիմնվելով Հակոբ Սսեցու «Պատմութեան» մեջ պահպանված որոշ ավանդությունների վրա⁵¹, ենթադրաբար նրան նույնացնում է կամ Կոստանդին Ե (IV)-ի թոռան՝ Կարապետի, կամ էլ՝ Կոստանդին անունով ոմն ինֆնակոչի հետ. «Երկբայելի յոյժ մնայ ինֆն Կոստանդին երկարամեայ թագաւորն այն թաֆուն. քան զոր հաւանագոյն դատի յառաջնոյն աւանդեալն՝ թոռն Կոստանդինի (Կարապետն): Թէպէտեւ չիցէ անհաւան՝ եթէ յետ գերութեան Ե Լեւոնի՝ Կոստանդին ոմն համարեալ իցէ յանձնէ կամ յայլոց եւս՝ ժառանգ կամ թեկնածու թագին Հայոց ի Կիլիկիա»⁵²:

⁴⁹ Սամուէլ Անեցի, *Հաւաքմունք*, էջ 170:

⁵⁰ *Յակոբ Սսեցի, Պատմութիւն*, էջ 249:

⁵¹ Ավանդութիւններից մեկի համաձայն՝ Կոստանդին Ե (IV) թագավորն ունեցել է Կարապետ անունով մի թոռ, որը 1404 թվականին, երեսուն հազար հայ ընտանիքների հետ, գաղթել է Կիպրոս (*Յակոբ Սսեցի, Պատմութիւն*, էջ 263): Իսկ ըստ երկրորդ ավանդության՝ 48 տարի գահակալած Կոստանդին թագավորը, 1424 թվականին, շղիմանալով մամլուքների ճնշմանը, նույնպէս ստիպված է եղել ապաստանել այդ կղզում (*Անդ*, էջ 277):

⁵² *Ալիշան, Սիսուան*, էջ 543:

ԼԵՒՈՆ Զ (V) ԼՈՒՍԻՆՅԱՆ (1374–1375 թթ.)

Լեւոն Զ (V) Լուսինյանը Հայոց պատմության հազվագյուտ թագավորներից է, որ արժանացել է կենսագիր ունենալու բախտին՝ հանձին իր ֆրանսիացի խոստովանահայր Հովհաննես Դարդելի: Նրանից առաջ այդպիսի պատիվ վայելել են միայն Տիգրան Մեծը եւ Լեւոն Բ-ը, որոնց նվիրված պատմությունները, դժբախտաբար, մեզ չեն հասել¹: Լուսինյանի պարագան եզակի է նաեւ այն առումով, որ արդի պատմագիտությունը նրան ընծայել է երկու հրաշալի մենագրություն², որոնցում գի-

¹ Ըստ անտիկ աղբյուրների՝ Տիգրան Մեծի պատմությունը գրել է հույն հռետոր Մետրոդորոս Սկեպսացին. տե՛ս Մանանդյան, Տիգրան Բ, էջ 8; Սարգսյան, Հելլենիստական Հայաստանը, էջ 234–235; Hornblower-Spawforth, Classical Dictionary, p. 977. Իսկ Լեւոն Բ-ի պատմության մասին տեղեկացնում է Հեթում Կոռիկոսցին. «Լեւոն ... որ Ը-երորդ իշխող էր յազգէն Ռովբինանց եւ եղեւ առաջին թագաւոր Հայոց ի Կիլիկիայ, որ եւ քաջութեամբ եւ իմաստութեամբ տիրեաց հայրենի աշխարհին եւ այլ բազում գաւառաց եւ աշխարհին Իսաւրիոյ, շինեաց եւ բազում զղեակս եւ ամրոցս ի պէտս պահպանութեան աշխարհին իւրոյ, արար եւ պատերազմունս մեծամեծս, որպէս գտանի ի լիապատում գիրս պատմութեան նորա». Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 103: Հմմտ. նաեւ՝ Ալիշան, Սիսուան, էջ 549:

² Բասմաջյան, Լեւոն Ե, Փարիզ, 1908; Kühn, Leon V, Frankfurt am Main, 2000. Համեմատության համար նշենք, որ Տիգրան Մեծին եւ Լեւոն Բ-ին նվիրված է մեկական մենագրություն. Մանանդյան, Տիգրան Բ, Երեւան, 1940; Ալիշան, Սիսուան եւ Լեւոն Մեծագործ, Վենետիկ, 1885: Բացի Կ. Բասմաջյանի եւ Լ. Քյունի՝ Լեւոն Զ (V)-ին նվիրված մենագրություններից, հիշատակման արժանի է նաեւ Կ. Մուլթաֆյանի վերջերս լույս ընծայված արժեքավոր հոդվածը. Mutafian, Léon V Lusignan, 1993.

տական բարձր մակարդակով լուսաբանված են նրա փոթորկալից կյանքի ու գործունեության բոլոր մանրամասները, ինչը, սակայն, հնարավոր է դարձել բացառապես Դարդելի ժամանակագրության առկայության շնորհիվ:

Հովհաննես Դարդելը ֆրանսիացի մի ուխտավոր ֆահանա էր, որը 1377 թվականին, Երուսաղեմ գնալու ճանապարհին, անցնելով Կահիրեով, ծանոթացել էր գերության մեջ գտնվող Հայոց թագավորի հետ, որի խնդրանքով, իր ուխտագնացությունն ավարտելուց հետո, դարձել էր վերջինիս խոստովանահայրն ու ֆարտուղարը³: Երկու տարի անց Լեւոնը նրան ուղարկել էր Արագոնի եւ Կաստիլիայի թագավորների մոտ՝ փնտրելու նրանց աջակցությունն իրեն գերությունից ազատելու գործում⁴: Հաջողությամբ կատարելով Հայոց թագավորի հանձնարարությունը՝ Դարդելը 1383 թվականին Հռոմի պապի կողմից արժանացել էր եպիսկոպոս ձեռնադրվելու պատվին⁵: Լեւոնի հետ սերտ եւ երկարատե համագործակցության մնայուն արգասիքն է, ահա, Դարդելի անգնահատելի ժամանակագրությունը, որին մենք պարտական ենք Հայոց վերջին չորս թագավորների վերաբերյալ բավարար պատկերացում կազմելու համար⁶: Հետազոտողների կարծիքով՝ Հովհաննես Դարդելի աշխատության գլխավոր աղբյուրը Լեւոն թագավորի հիշողություններն են. ենթադրվում է անգամ, որ հեղինակը պարզապես գրառել է վերջինիս թելադրած պատմությունը⁷: Այնուամենայնիվ, Դարդելն, ըստ երեւույթին, օգտագործել է նաեւ այլ աղբյուրներ, ինչպես, օրինակ, Հեթում (Հայթոն) Կոռիկոսցու «Արեւելի պատմության ծաղկափաղը», որից նա, մասնավորապես, փոխառել է Հեթում Ա թագավորի՝ Մանգու խա-

³ Յովհաննէս Դարդէլ, Ժամանակագրութիւն, էջ 158–159:

⁴ Անդ, էջ 167–168:

⁵ Անդ, էջ 192–193:

⁶ Դարդէլի անձի եւ նրա ժամանակագրության մասին մանրամասն տե՛ս Kohler, Documents Arméniens. p. V–XXII; Եղյանց, Յառաջարան (Յովհաննէս Դարդէլ, Ժամանակագրութիւն, էջ 22–23); Բասմաջյան, Լեւոն Ե, էջ 2–3; Kühn, Leon V, S. 78–100.

⁷ Kohler, Documents Arméniens. p. XI–XII; Եղյանց, Յառաջարան (Յովհաննէս Դարդէլ, Ժամանակագրութիւն, էջ 22); Kühn, Leon V, S. 94–95. Տե՛ս նաեւ՝ Mutafian, Léon V Lusignan, p. 201.

նին ներկայացրած յոթ խնդրանքները⁸: Ինչ վերաբերում է Լեոնի անձի գերազնահատմանն ու ակնհայտ չափազանցություններին, ապա հետազոտողները դա բացատրում են արեւմտյան հասարակության վրա տպավորություն գործելու հեղինակի հետապնդած նպատակով: Ինչպես այդ առթիվ գրում է Կ. Բասմաջյանը, «Այս գրութեան նպատակն եղած է նախ Լեոնի բռնի հերոսացուած կեանքը պատմել, եւ երկրորդ՝ Եւրոպայի ֆրիստոնեայ վեհապետներէն օգնութիւն ձեռք բերել ասորական թագաւորին համար: Այս պատճառով ալ շատ տեղ չափազանցութիւններ կան, նոյն իսկ առասպելական ըսուելու աստիճան, եւ տեղ տեղ ալ նպատակաւոր մոռացումներ»⁹:

Հովհաննես Դարդելի վկայությամբ՝ Լեոնը ծնվել է Կիլիկիայում¹⁰, 1342 թվականին, ինչը պարզվում է հեղինակի այն տեղեկությունից, որ իր հոր՝ Հովհաննես-Ջեհանի մահվան ժամանակ (1344 թ.) նա երկու տարեկան էր, իսկ նրա ավագ եղբայր Բոհեմունդը՝ հինգ¹¹: Ինչպես նշեցինք, 1345 թվականին Հովհաննես-Ջեհանի ընտանիքը, խույս տալով Հայոց Կոստանդին Գ (III) թագավորի հալածանքներից, ապաստան էր գտել Կիպրոսում¹², որտեղ, ի դեպ, նույնպես ջերմ ընդունելության չէր արժանացել՝ Նիկոսիայի արքունիքի հետ ունեցած վաղեմի դատական վեճի պատճառով, որի առարկան այդ ընտանիքի նախնու՝ Ամորի Լուսինյանի կալվածքների պատկանելության խնդիրն էր¹³: Այնուամենայնիվ, չափահաս դառնալուց հետո Լուսինյան եղբայրները որոշակի կշիռ էին ձեռք բերել Կիպրոսում շնորհիվ այն հանգամանքի, որ նրանք Հայոց գահի օրինական ժառանգներն էին՝ իրավունք, որ նրանց վերապահված էր Լեոն Գ

⁸ *Տե՛ս Հեթում, Պատմութիւն Քաթարաց, էջ 43; Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 17-18: Հմմտ. Kùhl, Leon V, S. 93-94.*

⁹ *Բասմաջյան, Լեոն Ե, էջ 5-Ը: Դարդելի չափազանցությունները նկատի ունենալով՝ Կ. Մովսէֆյանը նրա աշխատությունը նույնիսկ Լեոնի ջատագովություն (paganégitique) է կոչում. Mutafian, Léon V Lusignan, p. 201.*

¹⁰ *Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 82:*

¹¹ *Անդ, էջ 52:*

¹² *Անդ, էջ 53-55:*

¹³ *Անդ, էջ 55-56: Դատական այդ քաջջուկին, որին խառնվել են անգամ Հոռմի պապերը, Դարդելը բազմաթիվ էջեր է նվիրում. տե՛ս Անդ, էջ 34-40, 64-66:*

(II) թագավորի դստեր՝ Զապել տիկնոջ թոռները լինելու հիմունքով: Բնականաբար, այդ իրավունքը նախ եւ առաջ պատկանում էր եղբայրներից ավագագույնին՝ Բոհեմունդին, որին եւ Հայոց իշխանները, Կոստանդին Դ (III)-ի մահից հետո, խնդրում են ստանձնել Կիլիկիո գահը, միաժամանակ դիմելով Կիպրոսի թագավոր Պետրոս I-ին, որպեսզի նա թույլատրի թագաժառանգի մեկնումը. «Իշխանք գրեալ էին առ նա (Պետրոս), զի արձակեսցէ առ նոսա զիշխանն Բոէմունդ Լուսինեան, զանդրանիկ որդի Սուրբան տիկնոջ, եւ առ նա ինքն Բոէմունդ զիր աղաչանաց իբրեւ առ բնիկ իւրեանց իշխան, զի եկեալ իշխեսցէ նոցա, փոխանակ զի նմա անկանէր գահն արժունի իրաւամբք ժառանգութեան»¹⁴: Պետրոս I-ը, որն այդ ժամանակ, խաչակրաց արշավանք կազմակերպելու նպատակով, նանապարհ էր ելել Արեւմուտք մեկնելու համար, Բոհեմունդին վերցնում է իր հետ՝ նրան Հռոմի պապի ձեռնով Հայոց թագավոր պսակելու մտադրությամբ¹⁵: Սակայն տեղ չհասած, Բոհեմունդը 1363 թվականին վախճանվում եւ թաղվում է Վենետիկում¹⁶:

Այնժամ Պետրոսը որոշում է կանչել տալ Լեւոնին՝ Բոհեմունդի փոխարեն նրան արժանացնելու համար Ուրբանոս V պապի օրհնությանը, սակայն հանգամանքների թելադրանքով, չսպասելով նրա ժամանմանը, Կիպրոսի թագավորը միայնակ է ներկայանում Ավինյոնում գտնվող Քահանայապետին. «Յայնժամ կամեցաւ արեայն Պետրոս տալ կոչել զԼեւոն, զեղբայրն Բոէմունդի, զի առեալ տարցէ ընդ իւր եւ տացէ պսակել ի ձեռն պապին, զի նմա իսկ անկանէր թագատուութիւնն զկնի մահուան եղբօր իւրոյ: Այլ հարկ եղեւ նմա զնալ առ պապն շտապ տագնապաւ, վասն այնորիկ յետս եկաց ի խորհրդոյն»¹⁷: Ինչպես տեսնում ենք, այստեղ խոսք չկա այն մասին, որ Բոհեմունդի մահից հետո Հայոց իշխանները Կիլիկիո գահին բազմելու առաջարկ են արել նաեւ Լեւոնին: Բայց դա ենթադրելի է երեք պատճառով. առաջին՝ վերջինս այդ պահից Հայոց գահի միակ օրինական ժառանգորդն էր, երկրորդ՝ առանց նման առաջարկի Պետրոս I-ը դժվար

¹⁴ Անդ, էջ 57-58:

¹⁵ Անդ:

¹⁶ Անդ, էջ 50, 58: 50-րդ էջում տպագրական վրիպակի հետեւանքով եջված է 1343 թ.:

¹⁷ Անդ, էջ 58:

թե այդպիսի առաճելություն ստանձներ, եւ երրորդ՝ ինչպես արդեն նշել ենք, ամենայն հավանականությամբ, Լեոնին սպասելով, Կիլիկիայում անգամ նրա անունով դրամ են հատել: Ինչեւէ, ավարտելով իր գործերն Արեւմուտքում, Պետրոսը Կիպրոս է բերում Ուրբանոսից ստացած երկու նամակ՝ ուղղված Լեոնին եւ Հայոց իշխաններին, որոնցում Քահանայապետը հորդորում է վերջիններիս՝ թագավոր կարգել Լուսինյան պայազատին, միաժամանակ ամենայն աշակցություն խոստանալով Կիլիկիո թագավորությանը. «Եւ յորժամ ի գլուխ եհան արքայն Կիպրոսի զբանն, որոյ վասն գնացեալ էր առ պապն, ընկալաւ ի ձեռաց նորա թուղթս ուղղեալս առ արքայազարմն Լեոն եւ առ իշխանս Հայոց, պատուէր տալով զի ընկալցին զիշխանն Լեոն իբրեւ զբնիկ եւ օրինատր տէր: Եւ խոստանայր պապն ի թղթի անդ որ առ Լեոն զի ի գնալ հասանել նորա յերկիր թագաւորութեան իւրոյ, առաճեցէ նպաստս օգնութեան յիւրէ կողմանէ եւ գուն գործեսցէ զի եւ թագաւոր է իշխանք քրիստոնէից հասուցեն նմա օգնականութիւն առ ի կարող լինելոյ զղէմ ունել թշնամեացն հաւատոյ»¹⁸: Սակայն Պետրոս թագավորը նենգաբար թափցնում է պապի նամակները¹⁹, թերեւս, այն պատճառով, որ նա այդ ժամանակից արդեն մտադրվել էր անձամբ տիրել Հայոց գահին²⁰, ինչը համարյա թե իրականություն պիտի դառնար 1368 թվականին Կոստանդին Ե (IV)-ի հետ իր կնիւած գործարքի արդյունքում:

Ինչպես տեսանք նախորդ ենթադրւում, հաջորդ անգամ Հայոց իշխաններից ոմանք գաղտնաբար Լեոնին գահակալելու էին հրավիրել արդեն Կոստանդին Ե (IV) թագավորի օրոք, սակայն նա հիմնավոր պատճառաբանությամբ մերժել էր նրանց առաջարկը²¹: Կոստանդինի

¹⁸ Անդ: Ինքնըստինքյան հասկանալի է, որ հետագայում պապն այդպես էլ որեւէ օգնություն չցուցաբերեց Լեոնին:

¹⁹ Անդ:

²⁰ Հմմտ. Mutafian, Léon V Lusignan, p. 203.

²¹ Յովհաննէս Դարդելի, Ժամանակագրութիւն, էջ 66–68: Ըստ Կ. Բասմաջյանի եւ Հ. Քյուլի՝ դա տեղի է ունեցել 1372 թվականին (Բասմաջյան, Լեոն Ե, էջ 41; Kühn, Leon V, S. 119), սակայն Դարդելի ժամանակագրութեան մեջ մենք դրա հաստատումը չենք գտնում: Նրանց հաշվարկն, ըստ երեւույթին, հիմնված է այն փաստի վրա, որ Դարդելի մոտ հաջորդ դեպքը, այն է՝ Կոստանդին Ե (IV) թագավորի մահը, թվագրված է 1373 թվականով. տե՛ս Յովհաննէս Դարդելի, Ժամանակագրութիւն, էջ 68:

սպանությունից հետո (1373 թ.) Հայոց իշխանները, թագավորությունն անգլուխ շքողներու նպատակով, երկրի ժամանակավոր կառավարիչ են նշանակում նրա նախորդի՝ Կոստանդին Դ (III)-ի այրուն, Մարիոն թագուհուն, մինչև որ Լեւոնը հնարավորություն կունենար գալ բազմելու Կիլիկիո գահին. «եւ միաբան հանութեամբ ետուն զիշխանութիւնն ի ձեռս նախնոյ թագուհոյն Հայոց, որ էր լեալ կին առաջնոյ բռնաւոր թագաւորին, մինչև հասեալ գայցէ Լեւոն բնիկ տէրն իւրեանց»²²: Սա Կիլիկիո պատմության մեջ աննախադեպ երեւոյթ էր, երբ երկրի խնամակալությունը հանձնվում էր թեկուզ թագուհի մի կնոջ, ինչն, անշուշտ, պետք է բացատրել վերջինիս օծյալ լինելու հանգամանքով եւ նրա վայելած մեծ հեղինակությամբ: Ավելին, ինչպես արդեն նշվեց, նորահայտ մի աղբյուրի վկայությամբ՝ Կոստանդին Ե (IV)-ի մահվան եւ Լեւոն Զ (V)-ի գահակալման միջև ընկած ժամանակահատվածում Մարիոն թագուհին ոչ իսկ խնամակալ էր եղել, այլ ուղղակի տիրել էր Հայոց գահին²³: Ընդ որում, որոշ տվյալների համաձայն՝ նա, օգտագործելով իր ազգակցական կապերը, Արեւմուտքի աջակցությամբ Կիլիկիո գահին տիրելու հավակնություն էր սկսել դրսեւորել դեռեւս Կոստանդին Ե (IV)-ի կենդանության օրոք, 1369–1372 թվականներին²⁴:

Ինչեւէ, երկրի ժամանակավոր կառավարման հարցը լուծելուց հետո Հայոց Արհունի ատյանը պատգամավորներ է ուղարկում Կիպրոսի թագավոր Պետրոս II-ի եւ Լեւոնի մոտ՝ փութացնելու վերջինիս ժամանումը Կիլիկիա²⁵: Որ խոսքն, իսկապես, վերաբերում է Արհունի ատյանի որոշմանը, երեւում է նրանից, որ պատգամավորները Կիպրոսում ներկայանում են Հայոց թագուհու, կաթողիկոսի, երկրի պարոնների ու ասպետների անունից²⁶: Ուշագրավ է մանավանդ այն հանգամանքը, որ նրանք, բացի համապատասխան նամակներից, Լեւոնին են հանձնում նաեւ

²² Յովհաննէս Դարդեւ, *Ժամանակագրութիւն*, էջ 68:

²³ Անանուն, *Ժամանակագրական գրառումներ*, էջ 555:

²⁴ Այդ մասին մանրամասն տես Ալիշան, *Սրսուան*, էջ 544; Mutafian, Léon V Lusignan, p. 203–204.

²⁵ Յովհաննէս Դարդեւ, *Ժամանակագրութիւն*, էջ 68–69:

²⁶ Անգ, էջ 69:

Արժունի ատյանի անդամների կողմից ստորագրված ու պետական կնիքով վավերացված մի պայմանագիր. «Եւ առաջի արարին նմա զնամականին եւ թուղթ դաշանց անփակ, ձեռնագրեալ ի բոլորից առ հասարակ եւ կնիքեալ մեծաւ կնիքով պետութեանն»²⁷: Պայմանագրի անհրաժեշտությունը պատգամավորները բացատրում են հայերի հավատարմության նկատմամբ Լեւոնի անվստահությունն ու վերապահումները ցրելու նպատակադրությամբ²⁸:

Սակայն Հայոց պատգամավորներին Կիպրոսում մեծ հուսախաբություն էր սպասում: Պետրոս II թագավորը, որը դեռեւս 1369 թվականին Լեւոնին շնորհել էր «Երուսաղեմի սենեշալ» տիտղոսը²⁹, վերջինիս արգելում է մեկնել Կիլիկիա՝ ճենովացիների հետ ծագած պատերազմում նրա կարիքն ունենալու պատճառաբանությամբ³⁰: Այնժամ Լեւոնն, ստիպված, ճանապարհ է դնում պատգամավորներին, սակայն անելով իր առաջին արժայական կարգադրությունը, այն է՝ Կիլիկիո կառավարման ղեկը հանձնելով չորս խնամակալների՝ Մարիոն թագուհուն, իր հորեղբայր Բոհեմունդի այրի Ֆիմի կոմսուհուն³¹, նույն Բոհեմունդի ապօրինի զավակ Բարթողիմեոսին եւ Թորոսի որդի Վասիլին³²: Դրանից հետո նա, իսկապես, մասնակցում է ճենովացիների դեմ ընթացող պատերազմին, նույնիսկ գերի ընկնում նրանց ձեռքը, եւ ազատվում միայն մեծ փրկագին վճարելու դիմաց³³: Իսկ երբ այս ամենից հետո Լեւոնը, վերջապես, պատրաստվում է մեկնել Կիլիկիա, այս անգամ արդեն ճենովացիներն են արգելի հանդիսանում դրան, մտավախություն ունենալով, որ նա կարող է Կիպրոսի թագավորությունից պոկել Կոռիկոս քա-

²⁷ Անդ, էջ 70:

²⁸ Անդ, էջ 71:

²⁹ Անդ, էջ 64:

³⁰ Անդ, էջ 74:

³¹ Ֆիմին Պաղտին մարաշխտի դուստրն էր, Կոստանդին Գ (III) Թագավորի քույրը. տե՛ս Rüdtt-Collenberg, The Rupenides, III (H2).

³² Յովհաննէս Դարդեի, Ժամանակագրութիւն, էջ 78-79: Տե՛ս նաեւ՝ էջ 81, 105: Թորոս իշխանը Կապան բերդի տերն էր եւ Հայոց սպարապետը՝ նահատակ զորավար Լիպարիտի հայրը. տե՛ս Խաչիկյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 451:

³³ Յովհաննէս Դարդեի, Ժամանակագրութիւն, էջ 82-85:

ղափր. «Զի ամուրն Կոռիկոսի պատկանէր թագաւորութեան Հայոց եւ զի մեծագոյն մասն բնակչացն նորա են Հայք»³⁴:

Այնուամենայնիվ, Լեւոնին ի վերջո հաջողվում է ստանալ ճենովա-ցիների համաձայնությունը, եւ նա իր մոր, կնոջ ու որոշ մարդկանց հետ մեկնում է Կիլիկիա³⁵: 1374 թ. ապրիլին, ժամանելով Կոռիկոս³⁶, նա անմիջապէս մտադրվում է մամլյուրների ձեռքից խլել Տարսոն քաղաքը, լսած լինելով, որ այնտեղ «գտանէին երեք հարիւր եւ եւթ զօրական մարտիկներուս եւ թէ բնակիչն համօրէն էին հայ քրիստոնէայք»³⁷: Սակայն Կոռիկոսի բերդակալ Կոստանդին Պռականացու դավաճանության պատճառով այդ ծրագիրը խափանվում է³⁸, եւ Լեւոնը, նարահատյալ, փոքրաթիվ թիկնազորի ուղեկցությամբ ճանապարհվում է դեպի Սիս³⁹: Կարելի է պատկերացնել բոլոր կողմերից մահմեդականներով շրջապատված Հայոց մայրաքաղաքի բնակիչների ապրումները, որոնք, մեծ ցնծությամբ ընդառաջ էլնելով Լեւոնին, նրան դիմավորում են արքայազայել պատիվներով. «եւ մեծապէս աուլցան Հայք խնդութեամբ բազմաւ եւ արարին տօն ցնծութեան ընդ գալուստ իշխանին Լեւոնի, բնիկ տեառն իւրեանց, եւ գրոհ ետուն ի քաղաքն՝ էր, որ զինեալ, եւ էր, որ անգէն, կէտք ի ձի վերելակեալ եւ այլք հետիոտս ընթանալով, արք եւ կանայք, մեծամեծք եւ փոքունք, եւ ընդ նոսա կաթողիկոսն իւրեանց, զոր ունէին իբրեւ զպապն աշխարհին, եւ համօրէն եպիսկոպոսունք եւ վարդապետք, կազմեալ թափօր մեծահանդէս, ընդ որ եւ բազմութիւն երաժշտաց պէս պէս նուագարանօք»⁴⁰: Այդ իրադարձությունն, ըստ Հովհաննէս Դարդեւի, տեղի է ունեցել 1374 թ. հուլիսի 26-ին⁴¹, այսինքն՝ Լեւոնը Կոռիկոսում մնացել էր շուրջ չորս ամիս:

³⁴ Անդ, էջ 86:

³⁵ Անդ, էջ 88-89:

³⁶ Անդ, էջ 89:

³⁷ Անդ, էջ 90:

³⁸ Անդ, էջ 91-93:

³⁹ Անդ, էջ 97-99:

⁴⁰ Անդ, էջ 99:

⁴¹ Անդ, էջ 112:

Սիս ժամանելուց հետո Լեւոնը նախ եւ առաջ հայկական մի գորախմբի միջոցով Կոռիկոսից բերել է տալիս իր ընտանիքը⁴², եւ ապա հաշվետվություն պահանջում չորս խնամակալներից պետական գանձարանի վիճակի ու իր բացակայության ընթացքում նրանց կատարած ծախսերի մասին⁴³: Զբավարարվելով տրված բացատրություններով, Լեւոնը նրանց մեղադրում է չարաշահումների մեջ եւ հարցը ֆննարկելու համար Արփունի ատյանի ժողով գումարում. «Նտ յաւուր միում գումարել ի ժողով ի դահլիճն արփունական զեպիսկոպոսունս եւ զվարդապետս աշխարհին, զաւագանին եւ զասպետս եւ զտիկնայս եւ զժողովուրդն առհասարակ»⁴⁴: Ցուցադրական դատավարությունից հետո Լեւոնը Հայոց ավագանու խնդրանքով վերջիվերջո մեծահոգաբար ներում է խնամակալներին⁴⁵, ինչը ցույց է տալիս, որ նրանց դեմ ուղղված ամբաստանություններն, այնուամենայնիվ, անհիմն կամ չափազանցված էին, քանի որ այդ ժամանակ Կիլիկիո պետական գանձարանն առարկայորեն չէր կարող դատարկ չլինել: Լեւոնն, ի դեպ, ինքն էլ լիովին գիտակցում է այդ իրողությունը՝ Արփունի ատյանի ժողովում հայտարարելով հետեւյալը. «Ոչ գանխուլ ինչ է ի ձէնջ զի ամենայն սակֆ եւ հասֆ մտից արփունականֆ անկեալ կան ի ձեոս թջնամեաց, եւ ոչ գոյ եւ ոչ մի հասոյթ, յորմէ լիցի լցուցանել զծախս երկրին եւ պաշտպանել նմա, առ որ պէտֆ են բազում արծաթոյ»⁴⁶: Խոսքն, անշուշտ, առաջին հերթին վերաբերում է Այաս եւ Կոռիկոս նավահանգիստների բերած հասույթին, որից Կիլիկիո թագավորությունը զրկվել էր արդեն վաղուց ի վեր⁴⁷: Լեւոնի մեծահոգությունը Հայոց խնամակալների նկատմամբ, իհարկե, թելադրված էր նաեւ իր նոր հպատակների համակրանքը շահելու նկատա-

⁴² Անդ, էջ 101–103:

⁴³ Անդ, էջ 105–107:

⁴⁴ Անդ, էջ 107:

⁴⁵ Անդ, էջ 111:

⁴⁶ Անդ, էջ 108:

⁴⁷ Այասի նշանակության մասին մենք խոսել ենք բազմիցս, սակայն Կոռիկոսը նույնպես մեծ կարեւորություն ուներ Հայոց թագավորության համար, ժամանակին զգալի տարեկան հասույթ ապահովելով նրա պետական գանձարանին. հմմտ. Grousset, L'Empire, p. 416.

ոտմով: Սակայն նա, դժբախտաբար, նույնպիսի փափկանկատություն չդրսետորեց իր թագադրության հարցում, 1374 թ. սեպտեմբերի 14-ին⁴⁸ այն կատարելով նախ լատինական, ապա հայկական ծեսով⁴⁹, ինչը, բնականաբար, պիտի հարուցեր ավանդապաշտ հայերի դժգոհությունը. «Քրքմնջէին Հայք ընդ այն զի ոչ կամէր պսակիլ ըստ նոցայն օրինի»⁵⁰:

Իր հոգեվարքն ապրող Կիլիկիո Հայոց թագավորությունն այդ ժամանակ, բացի Սսից, ընդգրկում էր միայն Անավարզա ֆաղաֆը⁵¹ եւ մի քանի բերդեր⁵²: Հայերի համար ամենածանր մայրաֆաղաֆի պարենավորման խնդիրն էր, «զի Հայք կորուսեալ էին ֆաղաֆս եւ գաառս բազումս, եւ յուր ամաց հետէ ոչ կարէին սերմանել եւ մշակել զանոս իւրեանց»⁵³: Բացի այդ, նրանք հարկադրված էին մշտապես վանել թուրքերի հարձակումները, որոնք «զօր ամենայն ասպատակէին... մինչեւ ի դրունս ֆաղաֆին Սսոյ եւ

⁴⁸ Այսպիսով, եթե Լեւոն Զ (V)-ի զահակալութեան սկիզբը համարենք նրա Կիլիկիա ժամանելու թվականը (1374 թ. ապրիլ), ապա պետք է ընդունել, որ նա թագավորել է շուրջ մեկ տարի (մինչեւ Սսի անկումը. 1375 թ. ապրիլ): Իսկ եթե որպես մեկնակետ դիտենք նրա թագադրման ամսաթիվը (1374 թ. սեպտեմբերի 14), ապա ստացվում է շուրջ յոթ ամիս: Աղբյուրները սովորաբար նրան հատկացնում են 10–11 ամիսների զահակալություն. տե՛ս Անանուն, Ժամանակագրական գրառումներ, էջ 556 (10 ամիս. նույնը՝ Conybeare, Catalogue, p. 293); Մինաս Ամզեցի, Ազգաբանութիւն, էջ 51 (11 ամիս); Մարտիրոս Դրիմեցի, Կարգ եւ թիւ, էջ 207 (11 ամիս); Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 89 (տողատակ. 11 ամիս): Բացառություն է կազմում Ավետիք Տիգրանակերտցին, որի տվյալներով՝ Լեւոն Զ (V)-ը թագավորել է շուրջ չորսուկես տարի. «Թագատր Հայոց Լեւոն՝ որդի բրնձին, որ իշխեաց ամս Դ եւ է ամիս». Աւետիք Տիգրանակերտցի, Քաղաքագիրք, էջ 573: Դրա բացատրությունը տե՛ս սույն գրքի էջ 561:

⁴⁹ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 114:

⁵⁰ Անդ, էջ 113: Ըստ մի կարծիքի՝ Կիլիկիո հասարակության լատինամետ եւ ազգայնական հոսանքներին հաշտեցնելու միտումով է բացատրվում Լեւոնի որոշ դրամների վրա դրոշմված «թագատր ամենայն Հայոց» մակագրությունը. տե՛ս Մաթեոսյան, Լեւոն Ե, էջ 236: Պ. Պտուկյանի բազմիցս վկայակոչված գրքում նկարագրված է երեք այդպիսի դրամ. Bedoukian, Coinage, p. 409.

⁵¹ Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 103:

⁵² Անդ, էջ 115:

⁵³ Անդ:

յաւելուին զամ քան զգամ զաւեր եւ զապականութիւն»⁵⁴: Սակայն եթէ մինչեւ Լեւոնի գահակալումը հայերը դիմակայում էին միայն իրենց երկրում հաստատված մամլոյններին⁵⁵, ապա դրանից հետո, Եգիպտոսի սուլթան Շաբան II-ի հրամանով, Կիլիկիա արշավեց նաեւ Հալեպի մելիք Աշըգ-Թեմուրը⁵⁶, որը եւ վերջնականապէս կտորելով նրանց հերոսական դիմադրությունը, 1375 թ. ապրիլին գրավեց Սիսն ու գերեց Լեւոն թագավորին⁵⁷: Մամլոյնների քաղաքականության այս կտրուկ շրջադարձը, մեր կարծիքով, պետք է բացատրել Կիլիկիայում ֆրանկ թագավորի գահակալման փաստի առթիվ նրանց մոտ առաջացած այն բնական մտավախութեամբ, որ դրան կարող էր մի նոր խաչակրաց արշավանք հետեւել: Որ սա սոսկ ենթադրություն չէ, ապացուցվում է Դարդելի իսկ տվյալներով: Ըստ նրա՝ Լեւոնն ինքը, թագադրվելուց առաջ հիմնավորելով լատինական ծեսով օծվելու անհրաժեշտությունը, հայերին խոստացել էր ապահովել Արեւմուտքի օգնությունը. «Եւ յորժամ ս. պապն եւ թագաւորն եւ իշխանք քրիստոնէից լուիցեն զի պսակեցաք մեք զայս ձեւ օրինակի, վստահ իսկ եմք զի հաճեսցին բարեյօժար կամօք տալ մեզ թիկունս օգնականութեան որչափ ինչ եւ խնդրեսցում մեք ի նոցանէ»⁵⁸: Նմանատիպ շուկները չէին կարող տարածուի չգտնել ու շրնկնել մամլոյնների ականջը՝ ավելի եւս խորացնելով նրանց մտավախությունը: Ուստի բոլոր հիմքերը կան պնդելու համար, որ Լեւոնի գահակալումը ոչ միայն հայերին չբերեց հուսացված փրկությունը, այլեւ ինչ-որ առումով արագացրեց Կիլիկիո թագավորության կործանումը⁵⁹: Իրերի այլ դասավորության պարագայում, թերեւս, նրանց հաջողվեր համակեցության որեւէ եղանակ (modus vivendi) գտնել մահմեդական հարեւանների հետ եւ պահպանել եթէ ոչ

⁵⁴ Անդ:

⁵⁵ Անդ, էջ 115–120:

⁵⁶ Անդ, էջ 124: Նրա անունը՝ «Մելէք Աշէշամուր» ձեւով, հիշատակված է Դարդելի ժամանակագրության 141-րդ էջում:

⁵⁷ Անդ, էջ 142–143:

⁵⁸ Անդ, էջ 113:

⁵⁹ Ժ. Մորգանի ճշգրիտ դիտարկմամբ՝ Լուսինյանների գահակալումը որպէս մարտահրավեր ընկալելով, մահմեդականները կրկնապատկեցին իրենց ճնշումը Կիլիկիայի վրա. Morgan, Essai, p. 60.

իսկ իրենց պետականությունը, ապա գոնե ներքին ինքնավարությունը: Այսինքն, այն ինչ հետագայում հաջողվեց Զեյթունի եւ Հաճընի հայ իշխաններին, կարող էր տեղի ունենալ նաեւ Սսում⁶⁰:

Տարօրինակ կերպով Հայոց թագավորության կործանումը եւ Սսի անկումը թույլ արձագանք են գտել հայկական աղբյուրներում: Ժամանակակիցները սովորաբար բավարարվում են միայն այդ փաստի հակիրճ արձանագրությամբ, ինչպես՝ «Ի թվին ՊԻԳ զՍիս առին տանկունքն ի Հայոց»⁶¹ կամ «Ի թվականին ՊԻԳ էառ Յաշէխ Թամուրն զթագաւորական ֆաղաֆն զՍիս եւ եղեւ սուգ մեծ»⁶²: Միայն մի հիշատակագիր է, որ որոշ զգացմունքներ է արտահայտում այդ առթիվ. «Ի մեծ թուիս Հայոց, ի դառն եւ ի նեղ ժամանակիս, ՊԻԳ, յորում ամի առաւ ֆաղաֆն Սիս, եւ ես նուաստ եւ սուտանուն եպիսկոպոս Զաֆաբէ պատահեցայ անդ. բայց եւ զողորմագին բանս, զոր ետես ակն իմ, ո՞ կարէ պատմել զրով, զի տեսի զակունք պայծառ եւ զարեգակունք, զաստեղս եւ զլուսինս, զի կային անկեալ ափի»⁶³: Որքան էլ զարմանալի է, Սսի անկման եւ Հայոց պետականության վերացման նշանակությունն ավելի սուր է գիտակցվել ուշ շրջանի ժամանակագիրների կողմից, որոնցից մեկն այդ առթիվ գրում է. «Սուլթանն Մըսրայ եկն բազում զօրօֆ, եւ ըմբռնեալ զԷլոն՝ Մարուն թագուհեան»⁶⁴, եւ տարաւ ի Մսըր եւ կորոյս զԷլոն. զվանորայս, զեկեղեցիս, զհիրանոցս եւ զմեծամեծ շինուածս կործանեաց: Եւ ի պալատս թագաւորաց եղեալ զտապանակսն լի ոսկով եւ զայլ կահս ոսկեղէնս եւ արծաթեղէնս աւար առին: Զշիրիմս թագաւորաց բացին, եւ զոսկերսն այրեցին, եւ զՍիս ի հիմանցն տապալեցին. եւ բարձաւ թագաւորութիւնն ի տանէն Կիլիկեցոց»⁶⁵: Իսկ մի ուրիշ ժամանա-

⁶⁰ Զեյթունի եւ Հաճընի հայկական իշխանությունների մասին տե՛ս Աղասի, Զեյթուն, էջ 29–67; Պողոսյան, Հաճըն, էջ 116–127, 158–164:

⁶¹ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 170:

⁶² Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 516:

⁶³ Անդ:

⁶⁴ Հեղինակը շփոթում է թագուհու անունը: Լեւոնի կիրնը Մարգարիտ Սուսունն էր, իսկ Մարունը Հայոց Կոստանդին Դ (III) թագավորի այրին էր:

⁶⁵ Մինաս Ամզեցի, Ազգաբանութիւն, էջ 51:

կազիր, Սսի անկումը ներկայացնելով որպես համաշխարհային նշանակություն ունեցող մի իրադարձություն, այն թվագրում է իրեն հայտնի բոլոր տոմարներով. «Ի է ամիսն սորա (Լեւոնի), ի ՊԻԳ Հայոց, ի Քրիստոսի ՌՅՀէ, եւ յԱսորոցն ՌԶԳ, եւ Հոռոմայեցոց ՌՃԻԸ, եւ Տանկաց ՉԶԴ, ի ԼԴ կայս(ե)ր Յովաննէս բասիլիսկոսին, եւ ԻԳ Մուրատին, իսկ ի չորորդ ամին իս՝ Մելիք Չերեկց Պէրխուլան եկն ի վերայ թագաւորին Լեւոնի ի Սիս, եւ էառ զֆաղաֆն եւ այրեաց, եւ զերեաց զԼեւոն թագաւորն թագուհեան եւ որդովֆն իւրովֆ յեզիպտոս»⁶⁶: Ահա սա է այն ամենն, ինչ հայկական աղբյուրներին հայտնի է Հայոց թագավորության կործանման եւ ընդհանրապես Լեւոն Զ (V) Լուսինյանի գահակալության մասին, եթե հաշվի չառնենք ուշ միջնադարի առասպելախառն մի վարկած, որը որպես նշմարիտ պատմություն մանրամասնորեն ներկայացված է Մ. Զամչյանի կոթողային աշխատության մեջ⁶⁷:

Յոթ տարի անց, 1382 թ. հոկտեմբերին, Լեւոնը, Արագոնի եւ Կաստիլիայի թագավորների միջնորդությամբ ու նրանց կողմից վճարված փրկագնով, ազատվեց գերությունից եւ մեկնեց Եւրոպա⁶⁸: Արեւմուտքում ծավալած նրա գործունեության մասին հսկայական նյութ է պահպանված ֆրանսիական, իսպանական եւ անգլիական արխիվներում ու ժամանակագրություններում, որն ամենայն բարեխղճությամբ հավաքված եւ ուսումնասիրված է Կ. Բասմաջյանի եւ Հ. Քյուլի կողմից⁶⁹: Հայոց թագավորը հրաշալի ընդունելության է արժանանում Եւրոպական արժունիքներում: Կաստիլիայի թագավոր Հովհաննէս I-ը նրան շնորհում է Մադրիդ, Վիլլաբեալ եւ Անդուխար ֆաղաֆները՝ տանուտի-

⁶⁶ *Յակոբ Սեցի, Պատմութիւն, էջ 249:*

⁶⁷ *Զամչյան, Պատմութիւն, հտ. 3, էջ 354–361: Հմմտ. Mutafian, Léon V Lusignan, p. 201.*

⁶⁸ *Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 184: Այս փաստը հայտնի է նաեւ հայկական մի աղբյուրից. «Ի թվին ՊԼԱ (= 1382), ի հոքտեմբերի Ա, ազատեցաւ Լեվոն թագաւորն Հայոց ի Մսրայ ծառայութենէն, ու գնաց ի Գաղալանք». Անանուն, Ժամանակագրական գրառումներ, էջ 558; Conybeare, Catalogue, p. 291; Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 390:*

⁶⁹ *Բասմաջյան, Լեւոն Ե, էջ 73–135; Kühl, Leon V, S. 162–314. Տե՛ս նաեւ՝ Tournebize, Histoire, p. 742–753; Gulbenkian, Estudios Históricos, v. 1, p. 172–174; Mattiosian, Armenian-Spanish Relations, p. 320–330.*

րության եւ նրանց եկամուտներից օգտվելու իրավունքով: Լեւոնն ինքը մի հրովարտական իրեն կոչում է՝ «Պարոն Լեւոն, շնորհիվ Աստուծու թագավոր Հայոց եւ տեր Մադրիդի, Վիլլարեալի եւ Անդոլխարի» (Don Leon, por la gracia de Dios, rey de Armenia e señor de Madrid, de Villareal e Andujar)⁷⁰: Լեւոնին առանձնապես ջերմ է վերաբերվում Ֆրանսիայի թագավոր Շառլ (Վառլոս) VI-ը, նրան դարձնելով իր մշտական սեղանակիցն ու խորհրդատուն: 1385 թվականին վերջինիս խնդրանքով Հայոց թագավորը միջնորդական առաքելությամբ մեկնում է Լոնդոն՝ դադարեցնելու Անգլիայի եւ Ֆրանսիայի միջեւ ընթացող հարյուրամյա պատերազմը: Անգլիական արքունիքի առջեւ Լեւոնը հանդես է գալիս մի ընդարձակ եւ չափազանց ուշագրավ ատենաբանությամբ, որում մասնավորապես ասված է. «Ոչ եթէ շողո՞րթութիւնն՝ այլ մանաւանդ թէ եղբայրական եւ ճմարիտ սէրն է որ կը հարկադրէ զիս ըսելու ձեզ, թէ արեւելեան ժողովուրդք մինչեւ հիմա հիացած են ձեր զօրութեան եւ մեծութեան վրայ. եւ զիրենք ուրիշ բան չարգելուր՝ զձեզ դրուատե՞օք պանծացընելէ, բայց եթէ այն անհաշտ ատելութիւնն, զոր ունին երկու մեծագոյն թագաւորութիւնք աշխարհի: Աւա՛ղ, իմ թշուառութիւնս խիստ անսովոր է, եւ բախտն անդադար կը թշնամանէ զիս, եւ կը ստիպէ զիս յանդիմանել զձեզ՝ թէ այս անգութ պառակտումն է որ պատճառ եղեւ իմ կործանմանս՝ անհաւատից եւ Յիսուսի թշնամեաց անարգել յաղթական եղող զէնքերէն, եւ թէ նոյն ինքն կը ձգէ զիս այս ողբալի վիճակիս մէջ, ըսելու թէ թագաւորեցի ես ալ, եւ ահաւասիկ այն մեծ թագաւորս՝ խեղճ արքայական մը դարձած՝ կ'ապրիմ հեծելու համար բախտին անուոց ննջման տակ: ...Ո՛վ հօգօր իշխանք, եթէ հատուցած ըլլայիք Աստուծոյ այն ծառայութիւնը, զոր իրեն կը պարտին ձեր զէնքերը, եւ առ որ շատ անգամ յորդորուեցաք, արեւելքի տառապեալ փրստոնեայք... այնչափ չէին հառաչեր սրոյ եւ մուրդութեան ննջման տակ: ... Բայց դոք կ'արհամարհէք այս փառաւոր եւ փրկաւէտ առիթները՝ աշխարհակալութիւններ ընելու եւ պատերազմելու բարբարոսաց դէմ, որպէս զի միւլք ձեր զէնքերը փրստոնէութեան ծոցը: ... Եթէ դարձընէիք զէնքերնիդ՝

⁷⁰ Langlois, Cartulaire, p. 205. *Հրովարտակի հայերեն թարգմանութիւնը տե՛ս Բառամաշյան, Լեւոն Ե, էջ 96-98:*

երկու կողմանէ ալ՝ յահարկութիւն թշնամեաց Խաչին, դո՛ւ պիտի յաղթէիք անշուշտ այս մեր փրկութեան սուրբ նշանին տակ, եւ պիտի խորտակէիք յայնկոյս ծովուն մնացած թշուառ ֆրիստոնէից լուծը եւ շղթաները, որ ձեզի ձեռք կը կարկառեն եւ կը յուսան իրենց ազատութիւնը ձեր միաբան օգնութենէն, որուն կը սպասեն օրէ օր»⁷¹:

Հայոց թագավորի այս վերամբարձ ատենաբանությունն, ըստ էության, եւրոպական պատերազմը դադարեցնելու եւ դրա փոխարեն մի նոր խաչակրաց արշավանք ձեռնարկելու՝ Արեւմուտքի տիրակալներին ուղղված կոչ էր⁷², որն արեւելյան ֆրիստոնյաների փրկութեան ընդհանուր ձեւակերպումների տակ իրականում սեփական թագավորությունը վերականգնելու նպատակ էր հետապնդում: XVI դ. անգլիացի ժամանակագիր Ռ. Հոլինշեդն այդ առթիվ գրում է. «Հայաստանի թագավորը շատ կը ցանկար որ Ֆրանսիայի եւ Անգլիայի միջեւ խաղաղութիւն հաստատուէր, յուսալով որ պիտի կրնար շուտով թագաւորներէն օգնութիւն մը ձեռք բերել իր տէրութիւնը վերահաստատելու համար»⁷³: Բացի այս ընդհանուր կոչից, Լեւոնը նաեւ առանձին-առանձին հանդիպում էր Եւրոպայի ազդեցիկ միապետների ու իշխանների հետ, նրանցից խոստումներ կորզելով իրեն ցուցաբերվելիք զինական օժանդակության վերաբերյալ⁷⁴: Կորցրած հայրենիքը վերանվանելու⁷⁵ նրա մտադրության մասին է խոսում նաեւ այն ուշագրավ փաստը, որ Լեւոնը Փարիզում, ըստ էության, պետական բոլոր գործակալությունները ներկայացնող Հայոց վտարանդի մի կառավարություն էր ձեւավորել: Մասնավորապէս հայտնի է, որ նա Հայոց ատենադպրի (ջանցլեր) տիտղոսը շնորհել էր Հովհաննէս Դարդելին⁷⁶, սեղանապետինը (սենեշալ)՝ Ֆրանցիս-

⁷¹ *Բասմաջյան, Լեւոն Ե, էջ 113–114:*

⁷² *Հմմտ. Mutaftian, Léon V Lusignan, p. 206.*

⁷³ *Բասմաջյան, Լեւոն Ե, էջ 119:*

⁷⁴ *Անդ, էջ 99–100:*

⁷⁵ *Կ. Մութաֆյանի կարծիքով, Հայոց թագավորությունը վերականգնելու մտադրությունից ավելի, Լեւոնին առաջնորդում էր արեւմտաեւրոպական տիրակալներից դրամ եւ թանկարժեք ընծաներ շորթելու, ինչպէս նաեւ Կիպրոսում իր հայրենական կալվածքներին տիրելու մոլուցքը. Mutaftian, Léon V Lusignan, p. 206–207.*

⁷⁶ *Յովհաննէս Դարդել, Ժամանակագրութիւն, էջ 185:*

կոս Միրին, իսկ սենեկապետինը (ջամբուլա)՝ Հովհաննես Միրին⁷⁷ :

Հայոց պետականության վերականգնման այս իրական թե երազային ծրագիրը, սակայն, խափանվեց Լեւոնի անակնկալ մահով, որը վրա հասավ 1393 թվականին Փարիզում: Դրանից հետո հայկական հարցը հանվեց Արեւմուտքի ֆաղափական օրակարգից մինչև 1878 թվականը: 1394-ին Հայոց թագավորի տիտղոսն անցավ Կիպրոսի թագավոր Հակոբ I-ին, ինչն, օտար աղբյուրներից բացի, արձանագրված է նաև հայկական հիշատակարաններից մեկում. «Արդ գրեցաւ եղանակատւր տաղարանս հին եւ նոր, զոր առաջին սուրբ հայրքն են նշանակել, ի թվականին Պետ (1394 թ.), ի հայրապետութեան տետոն Կարապետի, եւ ի թագաւորութեան Կիպրոսի Ճագերի, որ եւ ի վերայ Հայոց այլ արհնւեցաւ եւ անուանեցաւ թագաւոր»⁷⁸ : Հայոց թագավոր հորջորջումն այնուհետեւ դարձավ Կիպրոսի թագավորների պաշտոնական տիտղոսի բաղկացուցիչ մասը, դրոշմվելով նաև նրանց հատած դրամների վրա՝ «թագաւոր Երուսաղեմի, Կիպրոսի եւ Հայաստանի» ձեւով (R. Ierus. Cipri et Armenia)⁷⁹ : Կիպրոսի թագավորության կործանումից հետո Հայոց թագավորի տիտղոսը ժառանգաբար փոխանցվեց նախ՝ Սավոյայի դոմսերին, ապա՝ Պիեմոնտի եւ Իտալիայի թագավորներին⁸⁰ : Հայոց վերջին թագավորից որպէս հուշ մնաց Փարիզի Սեն-Գենի տաճարում տեղադրված նրա մարմարե համեստ տապանաձևը: Իսկ Հայոց երբեմնի փառահեղ թագավորությունից պահպանվեցին միայն նրա հոյակերտ բերդերը, փայլուն մատենագրությունը, բարձրակարգ աստվածաբանությունը, շքեղ ձեռագրերն ու անգերազանցելի մանրանկարները, ինչպէս նաև նրա միակ գործող հաստատությունը՝ Մեծի տանն Կիլիկիո կաթողիկոսությունը:

⁷⁷ *Բասմաջյան, Լեւոն Ե, էջ 118:*

⁷⁸ *Խաչիկյան, ժԴ դ. հիշատակարաններ, էջ 607:*

⁷⁹ *Բասմաջյան, Լեւոն Ե, էջ 163:*

⁸⁰ *St' u Mutafian, La Cilicie, p. 475.*

ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Մասնավորից ընդհանուրը վերականգնելու հակադարձ խնդրի մեթոդաբանության կիրառումը, որի նպատակն էր Ռուբինյան իշխանների ու թագավորների գահակալման կոնկրետ հանգամանքների ֆննդության հիման վրա բացահայտել Կիլիկիո Հայոց պետության գահաժառանգության իրավունքի հայեցակարգն ու բովանդակությունը, հիմք է տալիս անելու հետեւյալ եզրակացությունները.

1. Կիլիկիո Հայոց պետության գահաժառանգության իրավունքի գլխավոր սկզբունքը իշխանության փոխանցումն էր անդրանիկ որդուն, ինչը հստակորեն արձանագրված է Սմբատ Սպարապետի դատաստանագրքում. «Նումոսով¹ է՝ զանդրանիկն կացուցանել յաթոռ ինֆնակալութեանն»²: Հարկ է միանգամից նշել, որ **անդրանիկ** բառը գրաբարում ունեցել է ոչ միայն **առաջնեկի** (πρωτότοκος, primogenitus), այլև որդիներից **ավագագույնի** իմաստ, նկատի ունենալով, որ առաջնեկը կարող էր մահացած լինել³: Պատահական չէ, որ Յ. Կարստը թեև Սմբատի օգ-

¹ Նոմոս – փոխառություն հունարենից (νόμος). նշանակում է՝ օրենք. տե՛ս Աճառյան, ՀԼՊ, հտ. 2, էջ 25:

² Смбат Спарает, Судебник, с. 7. Հմմտ. «զանդրանիկն ի դէպ է թագաւորեցուցանել». Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28: Արշակունյաց շրջանում գործած այդ իրավունքի մասին տե՛ս Մովսէս Խորենացի, Պատմութիւն, էջ 118:

³ Այս առումով հատկանշական է 1292 թվականին գրված մի հիշատակարանի հետեւյալ բնորոշումը. «Էեթում որդի Լեւոն արքայի, անդրանիկ ամենայն եղբարցն եւ ժառանգաւոր թագին». Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 701: Հատ-

տագործած **անդրանիկ** բառը թարգմանում է Erstgebome (առաջնեկ)⁴, սակայն մեկնաբանում է ältester Sohn (ավագագույն որդի) իմաստով⁵: Պետք է ավելացնել, որ ըստ Հայկազյան բառարանի՝ **անդրանիկ** բառը հին հայերենում ունեցել է նաև միակ գավակի իմաստ⁶: Առաջնեկի ինքնության բացահայտումը Կիլիկյան Հայաստանի պարագայում որևէ դժվարություն չի ներկայացնում, քանի որ նա, որպես կանոն, կրում էր հորական պապի անունը⁷: Հայտնի երկու բացառություններն են Ռայմոնդ-Ռուբենը եւ Լեոն Գ (II)-ը, որոնք կոչված են ոչ թե հորական, այլ մորական պապի անունով, ինչը, սակայն, բացատրվում է քաղաքական նկատառումներով, այն է՝ Ռուբինյան արքայատոհմից սերված լինելու նրանց հանգամանքը շեշտելու միտումով: Միջնադարյան ժամանակագիրներն ու հիշատակագիրները երբեմն սխալմամբ առաջնեկի իմաստով **անդրանիկ** են կոչում նաև գահը ժառանգած կրտսեր որդիներին, ինչը, սակայն, ոչ թե իրողություն, այլ նրանց իրավագիտակցության արտահայտություն պետք է համարել: Այսինքն՝ հասարակական գիտակցության մակարդակում եւս արմատավորված է եղել այն գաղափարը, որ գահի օրինական ժառանգորդն **անդրանիկ** որդին էր: Այսպիսով, **անդրանիկ** բառի բազմիմաստությունը նկատի ունենալով, նախապատվելի պետք է համարել կիլիկյան գահաժառանգության իրավունքի հիմնական հայեցակարգն արտահայտող «ավագության սկզբունք» անվանումը: Ընդ որում, այդ սկզբունքը գործել է ոչ միայն գահի՝ հորից-որդի, այլև եղբորից-եղբոր փոխանցման դեպքում: Ուշագրավ է, որ նույնիսկ եղբայրների կողմից գահի բռնազավթման հաջողված կամ ձախողված փորձերը կատարվել են հիմնվելով ավագության իրավունքի վրա: Ավագության կամ միակ որդին լինելու հանգամանքով Հայոց

կանչական է այն իմաստով, որ Հեթում Բ-ը ոչ թե Լեոն Գ (II)-ի առանջնեկն էր, այլ նրա ողջ մնացած որդիներից ավագագույնը:

⁴ Karst, Armenisches Rechtsbuch, Bd. 1, S. 15.

⁵ Անդ, Bd. 2, S. 3.

⁶ «Նոր Բառգիրք», հտ. 1, էջ 136:

⁷ Ըստ այդմ, բոլոր այն դեպքերում, երբ հաստատված է, որ թոռն **անդրանիկն է**, նա անպայման կրում է հորական պապի անունը, իսկ հակադարձ հաշվով՝ եթե թոռը կոչված չէ մեծ հոր անունով, ուրեմն նա **անդրանիկը չէ**:

գահը ժառանգել են՝ Կոստանդին Ա, Քորոս Ա, Ռուբեն Բ, Ռուբեն Գ իշխաններն ու Լեոն Գ (II), Հեթում Բ, Սմբատ, Կոստանդին Բ (I), Լեոն Գ (III), Օշին, Լեոն Ե (IV), Գի եւ Լեոն Զ (V) թագավորները, այսինքն՝ Կիլիկիո գահակալներից⁸ տասներեքը: Այդ սկզբունքը խախտվել է միայն մեկ անգամ Քորոս Բ իշխանի պարագայում, որը շլինելով իր հոր ողջ մնացած որդիներից ավագագույնը, գահակալել է նվաճողի իրավունքով⁹: Մնացյալ ութ իշխաններն ու թագավորները Հայոց գահին տիրել են իրավական այլ հիմունքներով, որոնց մասին կխոսվի համապատասխան տեղում:

2. Այդուհանդերձ, անդրանիկի կամ ավագագույնի ժառանգական իրավունքն, ըստ Սմբատի, անօտարելի կամ հրամայական (իմպերատիվ) չէր. նրա հայրը, հաշվի նստելով հասարակական կարծիքի հետ եւ ելնելով երկրի շահերից, կարող էր գահը փոխանցել իր որդիներից մեկ ուրիշին. «Բայց վասն ազտութեան աշխարհաց իրաւունք է, որ աղէկ տեսնու հայրն, իր ամէն գաւառամբ եւ գաւառապետացն տեսովն եւ սուրբ եկեղեցովն, որ յոր հանին յորդոց թագաւորին եւ գիտնան, որ բարի բարում լինի, եւ աստուածասէր ու երկիրդիւ եւ ըռատակն¹⁰, նա գայն կացուցանեն յաթոռ ինքնակալութեան հաւրն, որ հովվէ գեղբարքն եւ գերկիրն»¹¹: Այս դրույթը Ռուդ-Կոլենբերգը մեկնաբանում է հետեւյալ կերպ. «Ընտրություն կատարելիս, գահաժառանգության իրավունքն ըստ էության հանգում էր նախապատվության սկզբունքին, որի շուրջ պետք է համաձայնության գային թագավորը եւ բարոնները»¹²: Գահակալի այս իրավասությունը, սակայն, ի գորու էր միայն նրա կամքի ար-

⁸ Կիլիկիո գահակալների ցանկում հաշվի առնված չեն Ռուբեն Ա իշխանը եւ Քորոս Գ (I) Հայոց պարոնը:

⁹ Այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Քորոս Բ» ենթադրուում:

¹⁰ Ըռատակ = առատածեղն, մեծահողի, վեհանձն. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 236-237:

¹¹ Смбат Спарамет, Судебник, с. 7. Հմմտ. «Զի թէպէտ եւ գանդրանիկն ի դէպ է թագաւորեցուցանել, այլ գլառաջադէմն յաթոռ նստուսցէ արքայութեանն». Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28:

¹² Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 27.

տահայտության դեպքում (աղէկ տեսնու հայրն), իսկ եթէ այդպիսի կամք արտահայտված չէր, ապա նրա մահից հետո իշխանների խորհուրդը կամ Արփունի ատյանը չէր կարող շրջանցել ավագագույն որդու ժառանգական իրավունքը եւ նախապատվությունը տալ մեկ ուրիշի: Այսինքն գահակալի կամքի արտահայտության բացակայության պարագայում նրա մահից հետո իրավական այդ նորմն արդեն դառնում էր հրամայական: Այս առումով միանգամայն տարօրինակ է Ռուդ-Կոլենբերգի եզրակացությունը, որը թեւէ բխում է Սմբատի՝ խնդրո առարկա դրույթից, բայց իրականում ոչ մի կապ չունի նրա հետ. «Քազավորը կարող էր որպէս իրեն հաջորդ ընտրել իր որդիներից մեկին, բայց բարոններն ազատ էին թագը շնորհելու նրա մի այլ որդու»¹³: Միեւնույն պատճառով հավասարապէս հիմնադուրկ է Կ. Մուրաֆյանի հետեւյալ պնդումը. «Քազավորական հաջորդականությունը սկզբունքորեն ժառանգական էր, բայց հարկադրական վիճակներում անդրանիկ որդին կարող էր, եկեղեցու համաձայնությամբ, անտեսվել հօգուտ ավելի հարմար նկատվող մեկ ուրիշի»¹⁴: Զավակների միջեւ ընտրություն կատարելու գահակալին վերապահված իրավասությունը Կիլիկիո պատմության մեջ գործադրվել է միայն մեկ անգամ: 1216 թվականին, գահաժառանգ ընտրելիս, Լեոն Բ (I) թագավորը նախապատվությունը տվել է իր կրտսեր դստերը՝ Զապելին, անտեսելով ավագ դստեր՝ Ստեֆանի-Ռիտայի իրավունքը:

3. Սմբատ Սպարապետի դատաստանագրքի մի այլ դրույթի համաձայն՝ գահակալն իրավունք ուներ թագավորությունը բաժանել իր որդիների միջեւ. «Եթէ կենայ թագաւորին կտրներ եւ աղչկներ, նա իրատունք է որ կտրներն հասար ժառանգեն զթագաւորութիւնն, վասն այնոր՝ զի չէ պատեն որ յորդոց թագաւորի ի ցածութիւն ընկնին»¹⁵: Այս իրավունքը ձեւակերպելիս Սմբատն ակնհայտորեն օգտվել է Մխիթար Գոշի դատաստանագրքի հետեւյալ սահմանումից. «Եւ եթէ պատահիցի ոստերս

¹³ Անդ, էջ 27–28:

¹⁴ Mutafian, Recherches, p. 126.

¹⁵ Смбат Спарпет, Судебник, с. 7.

լինել նմա եւ դստերս, զոյգ եւ արդար զվիճակ թագաւորութեանն բաժանիցէ»¹⁶: Սա լիովին հակասում է Արշակունյաց Հայաստանում գործող ավանդույթին, որի համաձայն՝ թագավորի բոլոր զավակները, բացի անդրանիկից, ոչ միայն զրկվում էին զահաժառանգության իրավունքից, այլեւ արտաքսվելով արժունիքից, հաստատվում էին իրենց հատկացված հատուկ զավառում, ինչը պարզվում է Խորենացու պատմության հետեւյալ հատվածի շնորհիվ. «Եւ քանզի բազում ունէր (Վաղարշակ) ուստերս՝ պատշան վարկաւ ոչ ամենեցուն առ իւր կալ ի Մծքին. վասն որոյ առաքէ զնոսա բնակել ի գաւառն Հաշտենից, եւ ի ձորն նորին սահմանակալ, որ է արտաքոյ Տարօնոյ. ի նոսա թողլով զշէնս ամենայն, հանդերձ յաւելուածով մտից առանձինն եւ ռոնկաց կարգելոց յարժունուստ: Եւ միայն զառաջին որդին իւր, որ կոչէր Արշակ, պահէ առ իւր ի համար թագաւորութեան, եւ զնորին ուստր, զոր անուանեաց Արտաշէս եւ յոյժ սիրեաց... Եւ եղև այս յայնմ հետէ եւ առ յապայ օրէնք ի մէջ Արշակունեաց – միոյ որդոյ բնակել ընդ արքայի՝ փոխանորդ լինել թագաւորութեանն, եւ այլոց ուստերաց եւ դստերաց գնալ ի կողմանս Հաշտենից՝ յազգին ժառանգութիւն»¹⁷: Թագավորությունը որդիների միջեւ բաժանելու այս տարօրինակ դրույթը, մեր կարծիքով, Մխիթար Գոշի եւ Սմբատ Սպարապետի դատաստանագրերում հայտնվել է մահմեդական, մասնավորապես՝ սելջուկյան ավանդույթի ազդեցությամբ, որի էությունն իշխող հարստության անդամների միջեւ պետության տարածքի բաժանման նահապետական (պատրիմոնիալ) պատկերացումն էր¹⁸: Դեռեւս սելջուկյան Մեծ սուլթաններ Ալի-Արսլանի (1063–1072 թթ.) եւ Մելիքշահի (1072–1092 թթ.) օրոք դրսևորված այդ երևույթի ամենաձայրահեղ արտահայտությունը եղավ 1180-ական թթ. վերջերին Ռումի սուլթանությունում տեղի ունեցած արտառոց իրադարձությունը, երբ

¹⁶ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28:

¹⁷ Մովսէս Խորենացի, Պատմութիւն, էջ 118: Ի դեպ, Գոշը ծանոթ է Խորենացու այս վկայութեանը. «Եւ յորդոց թէ իցեն, զմի առ ինքն կալցի, ի բացեայ միշտ եւ զայլան, մինչեւ զմին ժառանգեցուցանէ զանկաւորն, հեռի բնակեցուցէ, որպէս եւ զայս սովորութիւն կալան առաջինքն թագաւորք»: Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 29:

¹⁸ Հմմտ. Босворт, Династия, с. 164.

Իզգեղդին Քիլիջ-Արսլան II սուլթանը երկիրը բաժանեց տասներկու մասի՝ դրանք հատկացնելով իր տաս որդիներին, ինչպես նաև եղբորն ու զարմիկներից մեկին¹⁹։ Քվում է, լուրջ հիմքեր կան պնդելու համար, որ զահակալի այդ իրավունքը մեկ անգամ կիրառվել է նաև Կիլիկիո իրականության մեջ։ 1100 թվականին Կոստանդին Ա իշխանը երկիրը բաժանել է իր երկու որդիների՝ Քորոսի եւ Լեւոնի միջև, թեև, ամենայն հավանականությամբ, ո՛չ հավասարության հիմունքով²⁰։

4. Լինելով երկրի բացարձակ տերն ու տիրականը, թագավորն, ըստ Սմբատի, կարող էր այն կտակել ցանկացած մեկի, եւ ոչ ոք, այդ թվում նրա որդիներն, իրավունք չունեին հակառակելու նրա կամքին. «Ու կարաւ է թագաւորն յիր առողջութեան եւ ի մահուն կտակ գրել, ու սահմանել եւ տալ զլեոն եւ զղաշոն եւ զիր ամէն երկիրն՝ զինչ ցեղ որ իր կամէն լինի, որ չկարէ իր որդի եւ ոչ այլ մարդ դիմադարձ կանգնել»²¹։ Այս հոդվածը նույնպես փոխառված է Մխիթար Գոշի դատաստանագրքից, որում, սակայն, այն ունի ավելի ընդարձակ հետեւյալ տեսքը. «Եւ եթէ կտակ արասցէ արքայ, որքան կենդանի է, իշխան լիցի փոփոխել ըստ արժանւոյն, զի կտակ յետ մահու հաստատուն է ըստ առաքելոյ, որպէս արքայ Կոստանդիանոս կտակաւ թագաւորեցուցանէր զորդիս իւր։ Եւ զսահմանս լերամբք եւ զետովք հաստատեսցէ եւ արձանամք, ըստ առաջին թագաւորացն։ Եթէ չիցէ բնաւին ժառանգ ի ցեղէ հարց, իշխան լիցի տալ զքազ իւր ատարի՝ ոչ ըստ կրանից»²²։ Ինչպես

¹⁹ Ըստ Կ. Կանեհի՝ Քիլիջ-Արսլանի քայլի դրդապատճառներից մեկը կարող էր լինել հինավուրց տոհմային այն դրվածքը, որ իր մահից հետո որդիներից ոչ մեկը չպետք է զրկվեր իր հասանելիքից. Cahem, Pre-Ottoman Turkey, p. 111. Տե՛ս նաև՝ Лэн-Пуль, Династии, с. 128; Гордлевский, Государство, с. 30.

²⁰ Այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Քորոս Ա» եւ «Լեւոն Ա» ենթագլուխներում։

²¹ Смбат Спарамет, Судебник, с. 8.

²² Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28–29։ Ի դեպ «Եւ սահմանս լերամբք եւ զետովք հաստատեսցէ եւ արձանամք, ըստ առաջին թագաւորաց» բառերի տակ Գոշն, ակնհայտորեն, նկատի ունի Արտաշես Ա-ի՝ Խորենացու հիշատակած արամերեն սահմանաքարերը. հմմտ. Մովսէս Խորենացի, Պատմութիւն, էջ 186։

պարզվում է Մխիթարի տարբերակից, խոսքը վերաբերում է ոչ միայն երկրի տարածքները, այլև թագավորական գահին օտարներին կտակելու կամ զիջելու իրավունքին: Ուշագրավ է, սակայն, որ Սմբատը բաց է թողել գահակալի տվյալ իրավունքը՝ սահմանափակող «եթէ չիցէ բնափն ծառանգ ի ցեղէ հարց» պայմանը՝ դրանով, փաստորեն, բացարձակացնելով այն: Իսկ խնդրի էությունն առումով ակնհայտ է, որ նշված դրույթն արտացոլում է X-XI դդ. ընթացքում Մեծ Հայքի թագավորություններին բաժին ընկած վիճակը, երբ համապատասխան կտակների կամ պայմանագրերի հիման վրա մեկը մյուսի ետեւից իրենց տիրույթներն ու գահերը Քյուզանդիային զիջեցին Տայքի կուրուպալատ Դավիթը (989 թ.), Վասպուրականի թագավոր Սենեֆերիմը (1021 թ.), Անիի թագավոր Հովհաննես-Սմբատը (1022 թ.) և Կարսի թագավոր Գագիկ Աբասյանը (1065 թ.): Իսկ Կիլիկիո պատմության մեջ այդ իրավունքի գործադրման միակ դեպքն արձանագրվել է 1368 թվականին: Կոստանդին Ե (IV) թագավորը, շղիմանալով մահմեդականների շարունակական ննջմանը, դիմել էր Կիպրոսի թագավոր Պետրոս I-ին, նրան առաջարկելով Հայոց գահը, ու թեև վերջինս համաձայնել էր ստանձնել այն, սակայն գործարքն այդպես էլ զույխ չէր եկել նրա հանկարծահաս մահվան պատճառով²³:

5. Հիմնվելով այն փաստի վրա, որ Հայոց գահակալներին երբեմն հաջորդել են ոչ թե նրանց որդիներն, այլ եղբայրները, Ռուդ-Կոլենբերգը ենթադրում է, որ Կիլիկիայում, արաբական սովորույթի հետեւողությամբ, կիրառվել է նաև եղբայրներին որդիների նկատմամբ նախապատվություն տալու իրավունքը²⁴, որն ի դեպ, հստակորեն սահմանված է Մխիթար Գոշի դատաստանագրքում. «Եւ որքան եղբարք իցեն նորա, որդոց նորա ոչ է իրաւացի առնուլ թագատուրութին, եւ ի հատա-

²³ Այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Կոստանդին Ե (IV)» ենթագլխում, էջ 445–447:

²⁴ Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 27. *Ճշմարտության դեմ չմեղանչելու համար հարկ է նշել, որ հեղինակն այդ իրավունքը դիտում է միայն որպես գահի հավակնորդների նկրտումները հիմնավորելու միջոց:*

նել եղբարցն ապա նստին որդիքն»²⁵: Տվյալ սահմանմամբ՝ եղբայրների հաջորդականությունը, փաստորեն, դիտվում էր որպես գահաժառանգության իրավունքի գլխավոր սկզբունք, քանի որ որդիներին այդ իրավունքը փոխանցվում էր միայն առաջինների բացակայության պարագայում: Որ նշված դրույթն, իսկապես, Մխիթարի դատաստանագիրք է թափանցել մահմեդական աշխարհից, հաստատում է նաև Յ. Կարստը: Սակայն առավել հետաքրքրական է վերջինիս նկատած այն իրողությունը, որ կիլիկյան դատաստանագրում եղբայրներին որդիների նկատմամբ նախապատվություն տալու իրավունքը բացակայում է, ինչը գերմանացի հայագետը հակված է բացատրելու Սմբատի աշխատության ավելի ընդգծված ազգային բնույթով²⁶: Ինչ վերաբերում է Կիլիկիո պատմության մեջ եղբայրների հաջորդականության իրոք արձանագրված փաստերին (Լեոն Ա, Մլեհ, Լեոն Բ, Սմբատ, Կոստանդին Բ (I), ապա դրանք բացատրվում են ոչ թե խնդրո առարկա իրավունքի գործողությամբ, այլ նախորդ գահակալի անզավակ լինելու հանգամանքով կամ էլ իշխանությունը բռնազավթելու իրողությամբ: Ստորեւ կտեսնենք, որ կիլիկյան իրականության մեջ գահաժառանգության հարցում արհաեղբայրներն ստորադասված էին ոչ միայն արհայորդիներին, այլև նույնիսկ արհայադուատներին:

6. Թեև ըստ Ռուդ-Կոլենբերգի՝ «հայկական սովորույթը որպես գլխավոր օրենք նանաշում էր արական գծով պատկանելությունն արհայական ընտանիքին»²⁷, սակայն հայտնի է, որ Կիլիկիայում, պատմական որոշակի պահից սկսած, կիրառություն է գտել նաև իգական գծով գահաժառանգության իրավունքը²⁸: Այդուհանդերձ, Սմբատի սահմանմամբ,

²⁵ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28:

²⁶ Karst, Armenisches Rechtsbuch, Bd. 2, S. 3-4.

²⁷ Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 28.

²⁸ Ինչպես նկատել է Կ. Յուզբաշյանը, հայ իրականության մեջ դրանից առաջ իգական գծով գահաժառանգության երկու դեպք է գրանցվել Սյունյաց թագավորությունում. անզավակ Վասակ թագավորին (998-1040 թթ.) հաջորդել է նրա քրոջ որդին՝ Սմբատ Բ-ը (1040-1044 թթ.), իսկ այնուհետև՝ վերջինիս եղբայր Գրիգոր Ա-ը (1044-1084 թթ.), որոնք, սակայն, Սյունյաց արքայատոհմին էին

որի աղբյուրն այս անգամ եւս Մխիթար Գոշի դատաստանագիրքն է, այդ իրավունքը գործադրելի էր միայն արհայատոհմի արական գծի սպառման պարագայում. «Եւ թե որդիքն մեռել լինին թագաւորին, նա որդոցն որդիքն ժառանգեն զթագաւորութիւնն եւ ոչ դստերացն. զի քանի որ՞ դասուն ժառանգքն բաւեն, նա իզացն խափանած է յաւրինաց, զի զէդ ատար է համարած իզաց ժառանգքն յԱստուծոյ Մովսէսի բերանով»²⁹: Հաջորդ հողվածում Սմբատը հստակեցնում է, որ դուստրը կարող էր գահը ժառանգել միայն թագավորի՝ որդի չունենալու դեպքում. «Քայց թէ աննարկութենէ լինի, որ բնաւ որդի չլենայ թագաւորին, այլ դուստր, նա կարէ հայրն թագել զինք»³⁰: Իզական գծով գահաժառանգութեան իրավունքի կիրառումը, թերեւս, կիլիկյան իրականութեան մեջ դրսեւորված ամենանշանակալի իրավագիտական նորամուտությունն էր, քանի որ այն հնարավորություն էր տալիս երկիրը զերծ պահել գահակալական ցնցումներից ու ապահովել արհայատոհմի օրինական շարունակականությունը: Այդ իրավունքի բացակայության պարագայում, օրինակ, Ռուբինյան հարստությունը Լետոն Բ (I) թագավորի մահից հետո սպառված պետք է լինէր: Մինչդեռ դրա առկայության շնորհիվ Ռուբինյան արյունը հոսեց ընդհուպ մինչեւ Կիլիկիո վերջին թագավորի երակներում: Ինչպէս իրավացիորեն նշում է Ռուդ-Կոլենբերգը, իզական գծով գահաժառանգութեան իրավունքի կիրառումը Կիլիկիայում տեղի է ունեցել լատինական ազդեցությամբ³¹, այսինքն՝ խաչակրաց Արեւելի փորձառության հիման վրա³²: Այդ իրավունքով են Հայոց

պատկանում նաեւ իրենց հոր՝ Աշոտի կողմից. տե՛ս Юзбашиян, Армянские государства, с. 73-74.

²⁹ *Смбат Спарпет, Судебник, с. 8. Գոշի մոտ այդ դրույթը ձեւակերպված է հետեւյալ կերպ. «Եւ եթէ մահուամբ բարձցին թագաւորք, եւ որդւոյ իցէ որդի եւ դստեր, որդւոյ որդին առցէ զաթոռն եւ ոչ դստերն, եւ որքան յորդւոյն իցէ ի ծննդոց, դստերն մի՛ առցէ, ապա եթէ առցէ՝ յաւտարս համարեսցի».* Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28:

³⁰ *Смбат Спарпет, Судебник, с. 8. Հմմտ. «Իսկ եթէ ուստր ոչ իցէ, եւ դուստր իցէ, առցէ զթագ իւր դստերն».* Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28:

³¹ *Rüdt-Collenberg, The Rupenides, p. 27.*

³² *Այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Ռուբին Գ» ենթագլխում:*

գահը ժառանգել Ռուբեն Գ իշխանի դուստր Ալիսը, վերջինիս որդի Ռայմոնդ-Ռուբենը, Լեոն Բ (I) թագավորի դուստր Զապելը, ինչպես նաև Գի եւ Լեոն Զ (V) Լուսինյանները³³: Ավելին, երկու անգամ (1363–1364 եւ 1373–1374 թվականներին) Կիլիկիո գահին տիրել է նույնիսկ այրիացած մի թագուհի՝ Մարիոնը, Կոստանդին Գ (IV)-ի կինը³⁴:

7. Իգական գծով գահաժառանգության իրավունքից են ածանցվում նաև թագադրված արքայադստեր ամուսնու կարգավիճակին ու նրանց զավակների ժառանգական իրավունքին վերաբերող հարցերը: Լատինական Արեւելիի օրենսգրքերում ամենայն մանրամասնությամբ մշակված դրույթների համաձայն՝ թագաժառանգ արքայադստեր ամուսինը գահին տիրում էր ոչ թե լիիրավ թագավորի, այլ թագակիր-գործակցի (prince-consort) կարգավիճակով³⁵: Կիլիկիո իրականության մեջ, մասնավորապես, այդ հանգամանքով են Հայոց գահն զբաղեցրել Փիլիպոս Անտիոքացի եւ Հեթում Ա թագավորները: Ինչ վերաբերում է երկրորդ հարցին, ապա առաջին հայացքից տարօրինակ կարող է թվալ Սմբատի դատաստանագրքի այն դրույթը, որ թագակիր արքայադստեր մահից հետո նրա որդիներն իրավունք չունեին ժառանգելու գահը. «Հետ իր մահուն շինի ժառանգ աթոռոյն այն թագած դստերն որդիքն»³⁶, որը բխում է Մխիթար Գոշի դատաստանագրքի հետեւյալ սահմանումից. «Ռայց զկնի մահուան նորա իբր յաւտարս համարեսցին ծնունդն նորա»³⁷: Սակայն Սմբատի նույն հոդվածի շարունակությունից պարզվում է, որ արքայադստեր որդիները գահը ժառանգելու իրավունքից զրկվում էին միայն այն դեպքերում, երբ իրենց մայրը հորեղբորորդիներ ուներ. «Զեղբար որդիսն դնեն երկրին հաւատարիմն յիրենց պարունին

³³ Մանրամասն տե՛ս սույն աշխատության «Լեոն Բ՝ խնամակալ-իշխան», «Ռայմոնդ-Ռուբեն», «Զապել թագուհի», «Գի Լուսինյան» եւ «Լեոն Զ (V) Լուսինյան» ենթագլուխներում:

³⁴ Տե՛ս Անանուն, Ժամանակագրական գրառումներ, էջ 555:

³⁵ Մանրամասն տե՛ս սույն աշխատության «Լեոն Բ՝ խնամակալ-իշխան», «Զապել թագուհի» եւ «Հեթում Ա թագավոր» ենթագլուխներում:

³⁶ Смбат Спарпет, Судебник, с. 8.

³⁷ Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 28:

աթոռն, որ յիրենց պարոնին սերմէն է եւ ոչ ատար սերմի ծնունդ»³⁸: Քեւ օրենսգետը, թերանալով, չի նշտում, որ միեւնոյն իրավունքից օգտվում էին նաեւ արհաեղբայրները, բայց դա ինքնըստինքյան հասկանալի պետք է համարել: Այսինքն, եթե արհայադատեր մահից հետո զահր ժառանգելու իրավունքը փոխանցվում էր նրա հորեղբորորդիներին, ապա նոյն իրավունքը պետք է փոխանցվեր նաեւ նրա հորեղբայրներին: Մրանով էր բացատրվում վերը նշված մեր այն նկատառումը, որ զահաժառանգության հարցում արհաեղբայրներն ստորագասված էին ոչ միայն արհայորդիներին, այլեւ նոյնիսկ արհայադուստրերին:

8. Ռուդ-Կոլենբերգի կարծիքով՝ Կիլիկիայում ապօրինի զավակներն, այլ կերպ ասած՝ հարճորդիները, զրկված էին զահր ժառանգելու իրավունքից³⁹: Քեւ այս սահմանափակումը տեղ չի գտել Սմբատ Սպարապետի եւ Մխիթար Գոշի դատաստանագրերում, սակայն նրանցում առկա մի դրոյթ կողմնակիորեն հաստատում է դրա իրողութունը: Խոսքը վերաբերում է նրանց օրենսգրքերի այն հոդվածներին, որոնցով թագավորին արգելվում է հարճ պահել. «Չէ իրաւունք որ թագաւոր անպսակ սիրողով»⁴⁰ կենայ. զի Աստուծոյ եւ հայրապետին արինադրակից է. թող արինատր ամուսնանայ»⁴¹, «Մի՛ լիցի հաւատացեալ ի Տէր թագաւորի զարէն հեթանոս թագաւորի հարճամ վարիլ, այլ արինատր լիցի ի կարգ ամուսնութեան, զի իշխանութիւն է նմա ընդ հայրապետի ի բեմի

³⁸ Смбат Спарамет, Судебник, с. 8. *Հարցի մանրամասն քննությունը տե՛ս սույն աշխատության «Լեւոն Գ (II)» ենթագլխում, էջ 318–320:*

³⁹ Rüdts-Collenberg, The Rupenides, p. 28. *Հետաքրքրության համար նշենք, որ մոնղոլների մոտ օրինական զավակներն ու հարճորդիներն ունեին հավասար իրավունքներ. տե՛ս Плато Карпини, История, с. 36, 56.*

⁴⁰ Ա. Գալստյանի հրատարակության մեջ՝ *«սիրողով»* (Смбат Спарамет, Судебник, с. 9), *ինչն, անշուշտ, տպագրական վրիպակ է: Վերականգնել ենք Յ. Կարստի (Karst, Armenisches Rechtsbuch, Bd. 1, S. 17) եւ Ա. Ղտեյանի (Սմբատ, Դատաստանագիրք, էջ 17) հրատարակությունների հիման վրա: Գալստյանի թույլ տված վրիպակը թյուրիմացաբար, որպես բառահոգված, տեղ է գտել «Միջին հայերենի բառարանում», տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 329:*

⁴¹ Смбат Спарамет, Судебник, с. 9.

կայ»⁴²: Հակառակ այդ արգելիքին, ըստ երեւոյթին, Կիլիկիո գահակալներից ոմանֆ (Լետոն Ա, Մլեհ, Լետոն Գ (II), Հովհաննես-Ջեհան, Լետոն Զ (V) Լուսինյան), հին Հայոց կամ մահմեդական սովորոյթի հետետողությամբ, հարեւր պահել են⁴³: Սակայն եթե դա հակասօրինական էր համարվում, ուրեմն հարճորդներն, իսկապես, պետք է գրկված լինէին գահը ժառանգելու իրավունքից: Այդուհանդերձ, եթե ճիշտ է Լետոն Զ (V) Լուսինյանի ապօրինածին լինելու մասին Ռուդ-Կոլենբերգի հայտնած տեսակետը⁴⁴, պետք է ընդունել, որ մի հարճորդու, այնուամենայնիվ, հաջողվել է բազմել Հայոց գահին: Օրենքի այս կոպիտ խախտումը կարող է բացատրվել նրանով, որ վերջինիս ընտրելիս, Հայոց Արժունի ատյանն անտեղյակ է եղել նշված փաստին, կամ տեղյակ լինելով հանդերձ, այդ ֆայլին դիմել է երկրի օրհասական վիճակի պատճառով, կամ էլ գայթակղվել է Լետոնի հարճ-մոր հայ լինելու հանգամանքով⁴⁵: Այդպիսի մի դեպք արձանագրված է նաեւ Կիպրոսի պատմության մեջ. 1460 թվականին, հարճորդի լինելով հանդերձ, Հակոբ II-ը մամլյոմների օգնությամբ տիրել էր այդ երկրի գահին:

9. Քեպետ նույնպես արտացոլված չլինելով Սմբատ Սպարապետի եւ Մխիթար Գոշի դատաստանագրերում, Կիլիկիայում կիրառություն է գտել նաեւ թագավորի կողմից գահակից նշանակելու սովորոյթը, ինչը Ռուդ-Կոլենբերգը բացատրում է բյուզանդական ազդեցությամբ⁴⁶: Դրա անհրաժեշտությունը սովորաբար թելադրված էր լինում մանկահասակ

⁴² Մխիթար Գոշ, Գիրք դատաստանի, էջ 29:

⁴³ Rüdts-Collenberg, The Rupenides, I (Rup.), III (H2). Հմմտ. նաեւ՝ Բակուրան, Մի տեսութիւն, էջ 127:

⁴⁴ Անդ, էջ 76: Կ. Մութաֆյանի առարկություններն այդ առթիվ տես՝ Mutaflan, Léon V Lusignan, p. 202.

⁴⁵ Լետոնի մոր հայ լինելու վարկածը նույնպես առաջ է քաշել Ռուդ-Կոլենբերգը. Rüdts-Collenberg, The Rupenides, p. 76.

⁴⁶ Անդ, էջ 27: Ի դեպ, գահակցության երեւոյթը նորություն չէր հայ իրականության համար. այն որոշ չափով տեղ է գտել նաեւ Բագրատունյաց Հայաստանում. այդ մասին մանրամասն տես՝ Մաթեոսյան, Բագրատունյաց Հայաստան, էջ 146-149:

թագաժառանգի իրավունքների նկատմամբ հնարավոր ոտնձգությունները կանխելու և իշխանության բնականոն հաջորդականությունն ապահովելու մտահոգությամբ: Այդ իսկ պատճառով գահակցի նշանակումը հռչակվում էր ի լուր աշխարհի և վավերացվում նրա թագադրության հանդիսավոր արարողությամբ⁴⁷: Գահակցի կարգավիճակի «լեգիտիմացման» կարեւորագույն տարրերից մեկն է Արֆունի ատյանի անդամների կողմից նրան տրված հավատարմության երդումն էր: Այդ ամենով հանդերձ, գահակիցն, ըստ էության, օժտվում էր միայն խորհրդանշական իշխանությամբ և բացարձակապես չէր մասնակցում երկրի կառավարման գործին: Այսինքն՝ թագավորի և գահակցի փոխհարաբերությունն ամենեւին համատիրության բնույթ չէր կրում. թագավորը մինչև մահ լիակատար իրավագործությամբ տնօրինում էր թագավորությունը, որից հետո գահը սահուն կերպով անցնում էր գահակցին, ընդ որում վավերացվելով թագադրության երկրորդ արարողությամբ: Կիլիկիո պատմությանը հայտնի են երեք գահակից-թագավորներ՝ Ռայմոնդ-Ռուբենը, Լեոն Գ (III)-ը և Լեոն Ե (IV)-ը՝ նշանակված համապատասխանաբար Լեոն Բ (I)-ի (1211 թ.)⁴⁸, Հեթում Բ-ի (1301 թ.) և Օշինի (1315/6 թ.) կողմից: Քեե և մամատիպ, բայց բովանդակությամբ էապես տարբեր էին Կիլիկիո թագավորների կողմից իրենց կենդանության օրոք երկրի խնամակալ-կառավարիչ (Պարոն Հայոց) կարգելու դեպքերը, որոնք թելադրված էին բոլորովին այլ նկատառումներով⁴⁹:

10. Գահահաջորդության ժառանգական իրավունքի կողմին Կիլիկյան Հայաստանում գործադրվել է նաև թագավորի ընտրության իրավունքը, որը վերապահված էր երկրի իշխանների ժողովին կամ Արֆունի ատյանին: Որոշ հետազոտողներ, չափազանցության մեջ ընկնելով, թագավորի ընտրությունը նույնիսկ համարում են գահի հաջորդականու-

⁴⁷ Գահակից-թագաժառանգի բյուզանդական ինստիտուտի մասին տե՛ս Bréhier, Les Institutions, p. 17-18.

⁴⁸ Քեե և հետագայում Լեոնը հանգամանքների թելադրանքով հարկադրված էր չեղյալ հայտարարել Ռայմոնդ-Ռուբենի գահաժառանգության իրավունքը:

⁴⁹ Նկատի ունենք Հեթում Ա-ի կողմից իր որդի Լեոն Գ (II)-ի և Հեթում Բ-ի կողմից՝ իր եղբայրներ Քորոսի ու Սմբատի այդօրինակ նշանակումները:

թյան իրականացման գլխավոր սկզբունքը: Ռուդ-Կոլենբերգն, օրինակ, այդ առթիվ անում է հետեյալ կտրուկ պնդումը. «Քազավորը գահ է բարձրանում բարոնների որոշմամբ եւ օծվում կաթողիկոսի կողմից, որն այդ եղանակով տալիս է իր համաձայնությունը կատարված ընտրությանը⁵⁰: Իսկ Կ. Մուքաֆյանի կարծիքով, թեեւ Կիլիկիայում «քազավորական հաջորդականությունն սկզբունքորեն ժառանգական էր», բայց «իրականում գահաժառանգության իրավունքը խստորեն կանոնակարգված չէր. խոշոր բարոնների խորհուրդն (այդ հարցում) վճռական ձայնի իրավունք ուներ»⁵¹: Կա նաեւ տրամագծորեն հակառակն արտահայտող մի տեսակետ, ըստ որի՝ թեպետ Սմբատի դատաստանագրքում սահմանված է քազավորի ընտրության իրավունքը, սակայն այն չի կիրառվել Կիլիկիո պետության պրակտիկայում⁵²: Սմբատ Սպարապետի դատաստանագրքում քազավորի ընտրության իրավունքն արժարծված է երեք հողվածներում: Դրանցից մեկում (§ 76)⁵³ քազավորները դասված են երկու կարգի՝ Աստծու կողմից կարգվածներ, եւ մարդկանց ձեռնով դրվածներ, որոնց տակ պետք է հասկանալ համապատասխանաբար՝ ժառանգական իրավունքով եւ ընտրության եղանակով գահակալած քազավորներին. «Քազաւորն յԱստուծոյ են կարգած, որպէս Իսրայելի Աստուած ցուցնէր ի ձեռն մարգարէից ամուրեան. նա հրամայէ արէնքս, որ այնպիսիքն, որ յԱստուծոյ լինին՝ նա Աստուած մէն կարէ զինք ամսորել, թէ լաւ է ու թէ վատ: Ապա զայն ոք, որ մարդիկ դնեն՝ նա թէ հայնց պիղծ լինին, որ չկարէ հանդուրժել աշխարհն, նա այլվայ իրենք եկեղեցովն եւ ամէն բնակչամ երկրին կարեն ամսորել»⁵⁴: Խնդրին առնչվող մյուս երկու հողվածները, որոնք ընդգրկված են Սմբատի դատաստանագրքի §1-ում, վերաբերում են ինքնակալի

⁵⁰ Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 27.

⁵¹ Mutafian, Recherches, p. 126.

⁵² Сукиасян, История, с. 207.

⁵³ Ա. Ղառնջանի *հրատարակութեան մեջ՝ § 74 (Սմբատ, Դատաստանագրքը, էջ 46), իսկ Յ. Կարստի մոտ՝ § 70 (Karst, Armenisches Rechtsbuch, Bd. 1, S. 103):*

⁵⁴ Смбаг Спарапет, Судебник, с. 81. *Քազավորին արսորելու, այսինքն՝ գահընկեց անելու խնդրին մենք դեռ հանգամանորեն կանդարդառնանք ստորեւ:*

անգավակության հետեւանձով գահի թափուր մնալու հարկադրական (ֆորսմաժորային) վիճակներին, երբ Արֆունի ատյանին իրավունք էր տրվում թագավոր ընտրել նրա եղբորորդիներից (նույնն է թե՛ եղբայրներից) մեկին. «Քայց թէ անճարկութենէ լինի, որ բնաւ որդի չկենայ թագաւորին, այլ դուստր, նա կարէ հայրն թագել զինք ի պուման»⁵⁵, որ հետ իր մահուն շլինի ժառանգ աթոռոյն այն թագած դստերն որդիքն. քան ⁵⁶ զեղբար որդիսն դնեն երկրին հաւատարիմն յիրենց պարունին աթոռն»⁵⁷: Այս առումով ավելի հստակ եւ միանշանակ է հաջորդ հողվածը. «Ապա թէ չկենայ որդի եւ ոչ դուստր, եւ եղբար որդիք լինին, նա հայրապետին եւ այլ եկեղեցոյն եւ իշխանաց ու երկրին տեսովն առնուն մէկ մի՝ յոր հաճին ի լան, եւ կրթեսցեն յարֆունիքն. եւ յոր հաճին յայնոց՝ նա հետ թագաւորին մահուն զայն դնեն յաթոռն հայրապետով»⁵⁸: Մաքստի դատաստանագիրը թագավորի ընտրության հարցում Արֆունի ատյանին որեւէ այլ լիազօրություն չի վերապահում: Հետեւաբար, այդ իրավունքը բացարձակ չէր եւ սահմանափակվում էր միայն նախորդ գահակալի եղբայրների կամ եղբորորդիների միջեւ ընտրություն կատարելու իրավասությամբ: Կիլիկիո պատմության մեջ արձանագրված է այդ կարգի կիրառման միայն մեկ դեպք. 1175 թվականին, Մլենի սպանությունից հետո, Արֆունի ատյանը Հայոց իշխան էր ընտրել նրա եղբորորդի Ռուբեն Գ-ին: Հարկ է նկատի ունենալ, սակայն, որ նույնիսկ ընտրության իր իրավասության գործադրման պարագայում, Արֆունի ատյանը հարկադրված էր հաշվի նստել ժառանգական իրավունքի հետ, որով օժտված էին հանգուցյալ գահակալի եղբայրները կամ եղբորորդիները: Մաքստի դատաստանագրում զարմանալիորեն բաց է թողնված այն դեպքը, երբ արքայատոհմն ընդհանրապես սպառված էր, այսինքն, երբ թագավորը ոչ միայն զավակներ, այլեւ եղբայրներ, փոքրեր ու զարմիկներ չունէր: Դա հատկապես զարմանալի է այն պատճառով, որ այս դեպքում էր, ահա, որ Արֆունի ատյանը թագավո-

⁵⁵ Պուման = պայման. տե՛ս Դազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 283:

⁵⁶ Ըստ Կարստի՝ ապա փխ քան. տե՛ս Karst, Armenisches Rechtsbuch, Bd. 1, S. 16.

⁵⁷ Смбат Спарпет, Судебник, с. 8.

⁵⁸ Անդ:

րի ընտրության հարցում լիակատար անկախություն եւ վճռական դերակատարություն պիտի ունենար⁵⁹: Այդպիսի ընտրություն կատարելու անհրաժեշտության առջեւ Կիլիկիո Արքունի ատյանը կանգնել է երկու անգամ Կոստանդին Դ (III) եւ Կոստանդին Ե (IV) թագավորների գահակալման պարագայում: Սակայն երկու դեպքում էլ ընտրությունները, կայացած հարկադրական (ֆորսմաժորային) վիճակներում, ուղեկցվել են օրենքի խախտումով, քանի որ Հայոց թագավորական հարստությունը լիովին սպառված չէր: Կոստանդին Դ (III)-ի ընտրության ժամանակ դեռ ողջ էր Հայոց գահի օրինական ժառանգորդ Բոհեմունդ Լուսինյանը, իսկ Կոստանդին Ե (IV)-ի պարագայում Բոհեմունդի կրտսեր եղբայր Լեոնը: Կիլիկիո գահին բազմելու առաջինի ժառանգական իրավունքը ոտնահարվել էր, սակայն, քաղաքական նկատառումներով, իսկ երկրորդն ինքն էր հրաժարվել դրանից: Հետեւաբար, Կոստանդին Ե (IV)-ն, իրավական առումով, ավելի «վեգիտիմ» թագավոր էր, քան Կոստանդին Դ (III)-ը⁶⁰: Ինչ վերաբերում է ժառանգական իրավունքով գահին տիրած թագավորների գահակալման դեպքերին, ապա դրանցում Արքունի ատյանի դերն, ըստ էության, սահմանափակվում էր կատարված փաստի (fait accompli) ձեւական վավերացմամբ⁶¹:

11. Օրինազանցությունը դիտելով որպես օրենքի անկայության փաստ, գահաժառանգության իրավունքի բնության համատեքստում անհրաժեշտ է անդրադառնալ նաեւ իշխանության բռնազավթման փորձերին: Կիլիկիո պատմության մեջ արձանագրված է հաջողությամբ պսակված երեք այդպիսի փորձ, որոնք են՝ Մլեհի, Սմբատի եւ Կոստանդին Բ (I)-ի գահակալությունները: Մի փոքր մեկուսի են Ռայմոնդ-Ռուբենի եւ Լեոն Բ (I)-ի գահակալման պարագաները, որովհետեւ առաջինին հաջողվել էր զենքի ուժով ժամանակավորապես տիրել միայն թագավորության կեսին, իսկ երկրորդն, օրենքի տառի տեսակետից

⁵⁹ Հմմտ. Prawer, The Crusaders' Kingdom, p. 95.

⁶⁰ Ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության «Կոստանդին Դ (III)» եւ «Կոստանդին Ե (IV)» ենթագլուխներում:

⁶¹ Հմմտ. Prawer, The Crusaders' Kingdom, p. 95.

նույնպես բռնազավթիչ լինելով, իր նպատակին հասել էր գահաժառանգության իրավունքի նրբություններն օգտագործելու «սահմանադրական հանապարհով»⁶²: Իսկ իշխանության բռնազավթման ձախողված փորձերն են՝ Լեւոն Ա-ի անդրանիկ որդի Կոստանդինի, Ստեփաննի, Մլեհի⁶³, Սիր Ատանի, Վահրամ մարաջախտի, Քորոս Գ-ի եւ Օշին պայլի ապստամբություններն ու դավադրությունները: Հատկանշական է, սակայն, որ իշխանության բռնազավթման հաջողված թե՛ ձախողված ոչ մի փորձ, բացառությամբ Լեւոն Բ (I)-ի պարագայի, չի հանդուրժվել Կիլիկիո պետության իշխող դասի եւ հասարակության կողմից, եւ բոլոր բռնազավթիչներն ի վերջո արժանացել են խստագույն պատիժների: Մլեհը, Ռայմոնդ-Ռուբենը, Սիր Ատանը, Վահրամ մարաջախտը եւ Օշին պայլը սպանվել են, իսկ Սմբատն ու Կոստանդին Բ (I)-ն՝ ախորժվել⁶⁴: Իշխանության բռնազավթման երեւոյթի նկատմամբ դրսեւորված այս անհանդուրժողականությունը⁶⁵, թերեւս, Կիլիկիո գահաժառանգության իրավունքի կենսունակության եւ հասարակական իրավագիտակցության ամենավառ ապացույցն է⁶⁶: Թագավորն, ըստ օրենքի եւ իրավագիտակցության, անձեռնմխելի էր, հետեւաբար նրա իրավունքների նկատմամբ կատարված ոտնձգություններն օրինազանցություն էին: Թագավորի անձեռնմխելիության եւ իշխանության բռնազավթման ան-

⁶² Ավելի մանրամասն տե՛ս սույն աշխատության «Լեւոն Բ խնամակալ-իշխան» ենթագլխում:

⁶³ Նկատի ունենք 1160-ական թթ. կեսին Մլեհի կազմակերպած դավադրությունն իր եղբոր՝ Քորոս Բ իշխանի դեմ:

⁶⁴ Միայն Ստեփանն էւ Քորոս Գ-ն են, որ ներվել են իրենց մեծահոգի եղբայրների կողմից: Թեեւ ասորական աղբյուրների տվյալներով՝ Ստեփաննն նույնպես աքսորվել եւ ապաստան էր գտել ֆրանկների մոտ. Michel le Syrien, Chronique, III, p. 315; Barhebraeus, Chronicon, p. 325; Bar Hebraeus, Chronography, p. 284.

⁶⁵ Դրա մի այլ արտահայտությունն էլ միջնադարյան աղբյուրներում բռնազավթիչներին հասցեագրված խարազանիչ բնութագրումներն են:

⁶⁶ Ա. Սուքիասյանն իշխանության բռնազավթման դեպքերի սակավությունը հայ իրականության մեջ իրավացիորեն բացատրում է գահաժառանգության պրակտիկայում անդրանիկ (ավագ) որդու իրավունքի գերակայության հանգամանքով. Сукиасян, История, с. 208; Սուքիասյան, Կիլիկիա, էջ 253:

թույլատրելիության դրույթները հստակորեն ձեակերպված են մասնավորապես Ներսես Լամբրոնացու «Զինուորական օրէնք»-ում⁶⁷, որը վերջինս հունարենից թարգմանել է 1198 թվականին, մասնագետների կարծիքով, սակայն, իր կողմից կատարելով որոշ փոփոխություններ ու հավելումներ⁶⁸: Այսպես, օրենքի 21-րդ հոդվածի սահմանմամբ՝ թագավորի դեմ մեղանշողը ենթակա է մահապատժի եւ անարգական հիշատակի. «Որ ոք մեղից է առ թագաւորն՝ մեռանիցի նշաւակեալ եւ յիշատակ նորա անարգանօք մնասցէ մինչեւ իսպառ»⁶⁹: Իսկ 24-րդ հոդվածում իշխանության բռնազավթման փորձ անողների համար, զարմանալի զուգադիպությամբ, նախատեսված են հենց այն երկու պատիժները, որոնց մասին խոսվեց վերեսում, այն է՝ սպանությունը եւ արտախումբը. «Որ անպատշաճոյ սկիզբն լինի եւ գժողովուրդն ամբոխէ վասն իր իշխանութիւն յափշտակելոյ՝ կա՛մ զգլուխն հատանեն, եւ կա՛մ ի գաւառէն տարագրեն»⁷⁰: Ըստ Սմբատ Սպարապետի՝ անգամ Արփունի ատյանն իրավունք չունեւ պատժելու թագավորին. դա կարող էին անել միայն հաջորդ թագավորն ու կաթողիկոսը, այն էլ համապատասխան հասարակական կարծիքի առկայության դեպքում. «Եւ թէ վասն փրկութեան աշխարհի կամենան զթագաւորն խրատել կամ մեռցնել՝ նա չկարեն իշխանին. այլ հրամայէ արէնքս, որ առանց այլ թագաւորի եւ հայրապետի չկարեն այնել, քանի թէ այլ թագաւոր ու հայրապետ կենայ ու երկիրն առ հասարակ հաւնին»⁷¹: Ինչպես տեսանք, սահմանափակ էր նաեւ թագավորին զահրնկեց անելու Արփունի ատյանի իրավասությունը:

⁶⁷ Այդ աշխատությունը հրատարակել է Կ. Բասմաջյանը 1902 թ. Տե՛ս Ներսէս Լամբրոնացի, *Զինուորական օրէնք*, էջ 321–328:

⁶⁸ Պատահական չէ, որ Լամբրոնացին իր թարգմանությանը կցված հիշատակագրության մեջ իրեն կոչում է «Ներսէս տառապեալ թարգմանիչ եւ արիւնադրիչ Զինուորական սահմանադրութեանն» (*Ներսէս Լամբրոնացի, Զինուորական օրէնք*, էջ 328): Լամբրոնացու սույն աշխատության մասին մանրամասն տե՛ս Ակիւնյան, *Ներսէս Լամբրոնացի*, էջ 262–263, 266; *Քովմայան, Քրեական իրավունք*, էջ 103–104; *Bozoyan, Les documents*, p. 56; *Մեհրաբյան, Կիլիկիա*, էջ 53–55:

⁶⁹ *Ներսէս Լամբրոնացի, Զինուորական օրէնք*, էջ 324:

⁷⁰ *Անդ*, էջ 325:

⁷¹ *Смбат Спарпет, Судебник*, с. 81–82.

նը. թագազրկվել կարող էր միայն ընտրված, եւ ոչ թե ժառանգական իրավունքով գահակալած կամ, ինչպես Սմբատն է գրում, «Աստու կողմից կարգված» թագավորը⁷²: Կիլիկեցի օրենսգետը սրան ավելացնում է եւս մի կարեւոր մանրամասն. գահընկեց արված ինքնակալի որդիները չեն զրկվում թագաժառանգության իրավունքից, եւ Արփունի ատյանն իրավասու է թագավոր ընտրել նրանցից մեկին. «Բայց թէ որդիք կենայ թագատրին, որ ի յայն թագատրութիւն լինին ծնած՝ նա այն ոք չեն մեղկան. ի յայնոց ընտրեն զաղէկն եւ դնեն թագատր, վասն զի սեփհական է թագատրութիւնն ի հաւրէ յորդիքն»⁷³: Այսպիսով, թագավորի անձեռնմխելիությունը, որը, պետք է ենթադրել, տարածվում էր նաեւ օրինական թագաժառանգների վրա, եղել է իշխանության բռնազավթումների բացառման ամենաարդյունավետ իրավական գործոնը:

12. Ինչպես դժվար չէր համոզվել վերը շարադրվածից, Արփունի ատյանը Կիլիկիո Հայոց թագավորության գահահաջորդության գործընթացը կարգավորող եւ նրա օրինականությունն ապահովող կարեւորագույն մարմինն էր՝ որոշ առումով օժտված ներկայիս սահմանադրական դատարանի իրավասություններով: Լատինական Արեւելից ներմուծված⁷⁴ պետական այդ հաստատության դերը մեծանում էր հատկապես հարկադրական (ֆորսմաժորային) վիճակներում, այն է՝ գահակալի անզավակության եւ մանավանդ արփայտոհմի լիակատար սպառման դեպքերում: Նրա բացարձակ իրավասությանն, ըստ այդմ ենթակա էին՝ անզավակ թագավորի եղբայրներից կամ եղբորորդիներից մեկի թագադրումը, արփայտոհմի սպառումից հետո նոր թագավոր ընտրելու, ընտրյալ թագավորին գահընկեց անելու, գահընկեց արված թագավորի որդուն գահ բարձրացնելու, ինչպես նաեւ թագաժառանգ արփայտոհմի ամուսնացնելու⁷⁵ գործառույթները: Թագաժառանգ կամ գա-

⁷² Անդ, էջ 81:

⁷³ Անդ: Ինչպես տեսնում ենք, նույնիսկ այս պարագայում Արքունի ատյանը լիովին ազատ չէր, այլ կաշկանդված՝ ժառանգական իրավունքով:

⁷⁴ Այդ մասին տես սույն աշխատության «Ռուբեն Գ» ենթագլխում, էջ 153–157:

⁷⁵ Կիլիկիո իրականության մեջ Արքունի ատյանի որոշմամբ էր Զապել թագուհին

հակից կարգելու հարցում Արփունի ատյանի դերն, ըստ երեւոյթին, սահմանափակված էր խորհրդակցական, իսկ ժառանգական իրավունքով գահակալած թագավորների պարագայում՝ ձեւական վավերացման գործառոյթով, քանի որ, ըստ Սմբատի, այդ իրավունքը «սեփհական», այսինքն՝ անօտարելի էր. «վասն զի սեփհական է թագաւորութիւնն ի հաւրէ յորդիքն»⁷⁶: Չպետք է մոռանալ, սակայն, որ Արփունի ատյանը նախ եւ առաջ դատական մարմին էր՝ կոչված քննելու պետական նշանակություն ունեցող բոլոր կարեւոր վեճերն ու փրեական գործերը: Ըստ Ս. Բոռնազյանի՝ նրա իրավասոյթյանը մասնավորապէս ենթակա էին. «արփունական տիրոյթների ժառանգոյթյան հարցի կարգավորումը, առանց թագավորի թույլտվոյթյան բերդ կամ ֆաղափ շինելու դեպքում իշխաններին դատելը, թագավորի, իշխանաց իշխանի եւ իշխանների միջեւ՝ պատերազմի ընթացքում ձեռք բերած ավարի բաժանման շուրջը ծագած վեճերի լուծումը, պետոյթյան դավաճաններին պատժելը, թագավորի փրստոնյա եւ իսլամ հպատակների միջեւ եղած փրեական գործերի քննումը, առանց թագավորի գիտոյթյան հպատակներից գանձվող հարկերը ավելացնողներին պատասխանատւոյթյան ենթարկելը, հողի ընդերքի հարստոյթյուններից օգտվելու համար սահմանված կարգը խախտողներին պատժելը, թագավորի եկամուտներին հսկող արփունի գործակալներին՝ թույլ տրված անօրինականոյթյունների համար պատժելը. բացի այդ, նրան էր վերապահված դատելու՝ թագավորի հպատակի եւ օտարականի միջեւ առաջացած վեճերը, եթէ այդ վեճը չէր հարթվում Սսի արքեպիսկոպոսական ատյանում»⁷⁷: Այս իրավասոյթյունները, մեծ մասամբ հստակորեն, իսկ երբեմն մանվածապատ կերպով սահմանված են Սմբատ Սպարապետի դատաստանագրքի տարբեր գլուխներում⁷⁸: Արփունի ատյանի դատարանական գործառոյթը վկայ-

ամուսնացել նախ՝ Փիլիպոս Անտիոքացու, ապա՝ Հեթում Ա-ի հետ: Թագաժառանգ արքայազուտերն ամուսնացնելու Արքունի ատյանի լիազորության մասին մանրամասն տես սույն աշխատության «Ռուբեն Գ» ենթագլխում, էջ 155:

⁷⁶ Смбат Спарамет, Судебник, с. 81.

⁷⁷ Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները, էջ 124: Հմմտ. նաեւ՝ Сукнасян, История, с. 306–307.

⁷⁸ Հմմտ. Смбат Спарамет, Судебник, с. 8–13, 82 եւ այլն:

ված է նրա ձեռագրման իսկ շրջանից, Կիլիկիո պատմության ամենակարկառուն եկեղեցական գործիչներից մեկի՝ Ներսես Լամբրոնացու հեղինակությամբ: 1195 թվականին վերջինս, Լեոն Բ Ռուբինյան իշխանին հասցեագրված հուշակավոր «Քղթում»⁷⁹, պատրաստակամություն է հայտնում ներկայանալ Արփունի ատյանին՝ ֆննելու համար Հյուսիսային Հայաստանի եպիսկոպոսների, մասնավորապես Գրիգոր Տուտեոդրու կողմից իր դեմ ուղղված ամբաստանությունները. «Եթէ իրաացուցանէ քո արփունական ատեանդ առանց ֆննելոյ եւ դատելոյ ձգել զիս յանպատուութիւն, ընդգրկեմ գնոյն որպէս գՔրիստոսի աթոռակցութիւն. իսկ ապա եթէ զֆննելն իրաացի համարիմ, եւ ոչ յայդմանէ հրաժարիմ»⁸⁰: Իսկ Կիլիկիո Արփունի ատյանի դատական իրավասության գործադրման վերջին դեպքը Լեոն Զ (V) Լուսինյանի նշանակած չորս խնամակալների շարաշահումների ֆննության նպատակով 1374 թվականին կայացած դատավարությունն էր⁸¹: Հարկ է ավելացնել նաեւ, որ Բանի որ Արփունի ատյանի նախագահը թագավորն էր⁸², ըստ էության, նրան էր պատկանում վճռական ձայնի իրավունքը, իսկ ատյանը նրա համար իր որոշումները վավերացնելու եւ «լեզիտիմացնելու» միջոց էր ծառայում:

13. Գահահաջորդության օրինականության ապահովման հաջորդ կարեւոր պետական հաստատությունը խնամակալի գործակալությունն էր՝ նույնպես փոխառված Արեւելիում հիմնված խաչակրաց պետություններից, ինչի վկայությունն է թեկուզ միայն խնա-

⁷⁹ Լամբրոնացու այս «Քղթի» մասին, որը Ղ. Ալիշանը բնորոշում է որպէս ցիցերոնյան մակարդակի ջատագովություն, մանրամասն տե՛ս Ալիշան, Միսուան, էջ 91, 461–462; Tournebize, Histoire, p. 273–277; Օրմանյան, Ազգապատում, § 1042–1048; Մաստեթյան, Ներսէս Լամբրոնացի, էջ 161–175; Ակիւնյան, Ներսէս Լամբրոնացի, էջ 62–67, 213–215; Lüders, Die Kreuzzüge, S. 85–86; Торосян, Суд и процесс, с. 92–93.

⁸⁰ Ներսէս Լամբրոնացի, Ատենաբանութիւն, էջ 214–215: Տե՛ս նաեւ՝ էջ 221, 226, 233:

⁸¹ Մանրամասն տե՛ս սույն աշխատության «Լեւոն Զ (V) Լուսինյան» ենթա-գլխում, էջ 458:

⁸² Տե՛ս Langlois, Cartulaire, p. 34; Պալասանյան, Պատմութիւն, էջ 394–395; Բակուրան, Մի տեսութիւն, էջ 70:

մակալին հատկացված «պայլ» (bail/baill) տիտղոսը⁸³: Հիշեցնենք, որ լատին Արեւելի պրակտիկայում խնամակալ սովորաբար կարգվում էր երեք պարագայում ա. երբ գահի ժառանգորդն անչափահաս էր, բ. երբ նախորդ գահակալի մահվան պատճառով գահը թափուր էր մնացել եւ գ. երբ պետության գլուխը գերության մեջ էր: Խնամակալի նշանակումը կատարվում էր կա՛մ նախորդ գահակալի կամֆով, կա՛մ էլ, ավելի հաճախ, պետության Գերագույն ատյանի՝ բարոնների խորհրդի որոշմամբ: Որպես կանոն՝ խնամակալի պաշտոնն զբաղեցնում էր մահացած կամ գերության մեջ գտնվող գահակալի, կամ էլ անչափահաս գահաժառանգի մերձավորագույն ազգականը: Խնամակալը ոչ միայն պարտավոր էր ապահովել իր խնամֆին հանձնված գահաժառանգի դաստիարակությունն ու անվտանգությունը, այլեւ իրավասու էր լիարժեք կերպով տնօրինելու պետության գործերը⁸⁴: Այս երկու գործառույթները հստակորեն սահմանված են, մասնավորապես, խնամակալի նշանակման առթիվ հայկական աղբյուրներում գործածված տիպային բանաձեւում, ինչպես, օրինակ. «Եւ Թորոսի մնացեալ որդի մի Լեւոն, զոր վստահացեալ էր Թորոս յաներն իւր Թումաս, որ էր յԱնտիոֆա, նոյնպէս եւ յանձին արաբեալ էր նմա զպայլութիւն աշխարհին»⁸⁵, կամ «Եւ երկիր իշխանութեան իւրոյ եւ զմատաղ որդին իւր վստահացաւ յաներն իւր՝ Թումաս անուն, իշխան մեծ, զոր եւ պայլ իսկ եղ Հայոց՝ յետ իւր»⁸⁶: Խնամակալի ձեռնում, ըստ այդմ, կուտակված էր հսկայական իշխանություն, որը նա կարող էր թե՛ ի բարին, թե՛ ի չարս գործադրել:

⁸³ Խնամակալի ինստիտուտի մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Ռուբեն Բ եւ Մլեհ» ենթագլխում:

⁸⁴ Ժամանակի ընթացքում խնամակալությունը (պայլությունը) Կիլիկիայում վերածվել էր մշտական գործակալության՝ օժտված բոլորովին այլ, ըստ Ալիշանի՝ տերության հազարապետի, իսկ ըստ Բոռնազյանի՝ թագավորի առաջին խորհրդականի գործառույթներով. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 484; Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները, էջ 67:

⁸⁵ Հեթում Կոռիկոսցի, Պատմութիւն, էջ 102:

⁸⁶ Հեթում արքայորդի, Ճաշոց, էջ 585: Այլ օրինակներ՝ տե՛ս սույն աշխատության «Ռուբեն Բ եւ Մլեհ» ենթագլխում, էջ 134–135:

Նա, ըստ էության, թագավորի փոխանորդն էր կամ «երեսփոխանը»⁸⁷, որի իշխանության տարողությունն արտացոլված է նրա «Պայլ Հայոց», «Պարոն Հայոց» եւ «Աւագ պարոն» տիտղոսներում: Կիլիկիո իրակաւնության մեջ այս գործակալության կիրարկման առաջին դեպքը կապված է Թորոս Բ իշխանի անվան հետ, որը 1168 թվականին իր գահաժառանգ որդու՝ Ռուբեն Բ-ի խնամակալ էր կարգել Թումաս Անտիոքացուն: Փամանակագրական հերթագայությամբ անշափահաս գահաժառանգների վրա կարգված մյուս խնամակալներն են՝ Մլեհը (նույն Ռուբեն Բ-ի), Լեւոն Բ-ը (Ալիսի ու Ռայմոնդ-Ռուբենի), Սիր Ատանն ու Կոստանդին Գունդստապլը (Զապել թագուհու)⁸⁸, Հեթում Բ-ը (Լեւոն Գ (III)-ի), Օշին պայլը, Կոստանդին Կոռիկոսցին, Պաղտին մարաշախտը եւ Հեթում սենեշալը (Լեւոն Ե (IV)-ի): Երբեմն խնամակալին կարող էր շնորհվել վերը նշված երկու գործառույթներից միայն մեկը, այն է՝ երկրի կառավարման լիազորությունը, ինչպես, օրինակ, Հեթում Բ-ի եղբայրներ Թորոսի, Սմբատի, Կոստանդինի, Գի Լուսինյանի եղբայր Հովհաննես-Ջեհանի եւ Լեւոն Զ (V)-ի կողմից կարգված չորս տանուտերերի՝ Մարիոն թագուհու, Ֆիմի կոմսուհու, Բարթողիմեոսի ու Վասլի պարագայում: Խնամակալի անսահման լիազորությունները մի կողմից հնարավորություն էին ընձեռում արդյունավետ կերպով տնօրինելու երկրի գործերը, բայց մյուս կողմից՝ իշխանությունը բռնազավթելու գայթակղություն էին առաջացնում, որին նրանցից ֆշերն էին միայն, որ կարողանում էին տուրֆ չտալ: Պատահական չէ, որ այդպիսի նկրտումներ դրսևորելու հետեւանձնով Կիլիկիո խնամակալներից շատերն ի վերջո ենթարկվել են չարաչար պատիժների. Թումասը, Սմբատը եւ Կոստանդին Բ (I)-ն՝ ւստուրվել են, Սիր Ատանը, Օշին պայլը եւ Կոստանդին Կոռիկոսցին՝ սպանվել, իսկ Լեւոն Զ (V)-ի կարգած չորս խնամակալները՝ դատվել: Տպավորություն է ստեղծվում, որ գահահաջորդության

⁸⁷ «Գայ մէկն դատրստնի առ պարոնն կամ առ իր երեսփոխանն, որ է Պայլն». Assises d'Antioche, p. 39.

⁸⁸ Կոստանդին Գունդստապլն Արքունի ատյանի կողմից Զապելի խնամակալ էր կարգվել Սիր Ատանի սպանությունից հետո, եւ ոչ թէ նրա հետ միաժամանակ, ինչպես կարծում են հետազոտողներից ոմանք: Այդ մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Զապել թագուհի եւ Փիլիպոս թագաւոր» ենթագլխում, էջ 240–242:

սահունությունն ու օրինականությունն ապահովելու կոչված հաստատությունն ինքն էր գահակալական ցնցումների պատճառ դառնում: Այնուամենայնիվ, եղել են նաև խնամակալության հաջողված դեպքեր, ինչպես, օրինակ, Լեոն Բ-ի եւ Կոստանդին Գունդստապլի պարագայում, որոնք թեև նույնպես ավարտվել են իշխանության բռնազավթմամբ, սակայն օրենքի նրբություններն օգտագործելու նախապահով: Ձնայած նշված արատներին՝ խնամակալությունը եղել է պետության կենսագործունեության ապահովման անհրաժեշտ մեխանիզմներից մեկը, քանի որ անհնար է պատկերացնել, թե առանց դրա գոյության, մանկահասակ գահակալներն ինչպես պիտի կառավարեին երկիրը:

14. Այսպիսով, զուտ օրենսդրական ասպեկտը նկատի ունենալու պարագայում, դժվար է շհամաձայնել հետազոտողների այն տեսակետին, որ գահաժառանգության իրավունքը՝ «երբեւէ հստակորեն չի սահմանվել Կիլիկիայում»⁸⁹ կամ «խստորեն կանոնակարգված չի եղել»⁹⁰: Սմբատ Սպարապետի դատաստանագիրքն այս առումով, իսկապես, ակնհայտորեն թերի ու երբեմն նույնիսկ հակասական է: Բացի դրանից, հայտնի չէ անգամ, թե արդյոք իրավագիտական այդ թանկարժեք հուշարձանը գործնական կիրառություն ունեցե՞լ է, թե ոչ: Համենայն դեպս, միջնադարյան աղբյուրներում դա հաստատող փաստ գոյություն չունի: Հակառակ դրան, հետազոտողներից շատերը Սմբատի աշխատությունը համարում են գործնական կիրառություն ունեցած պետական օրենսգիրք⁹¹: Նույնիսկ պետական օրենսգիրք

⁸⁹ Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 27.

⁹⁰ Mutafian, Recherches, p. 126.

⁹¹ Հմմտ. Галстян (Смбат Спарпет, Судебник, с. XII); Քովմասյան, Քրեական իրավունք, էջ 155; Сукнасян, История, с. 197; Сукнасян, Смбат Спарпет, с. 24; Գրիգորյան, Իրավագիտությունը, էջ 418; Քորոսյան, Սմբատ Սպարապետ, էջ 454: Ավելի զգուշավոր է Խ. Սամուելյանը, որն այդ առթիվ գրում է. «Ձնայած որ Կիլիկյան հայ օրենսգիրքը կազմվել է անհատական ջանքերով, այնուամենայնիվ նա ստանում է տեղական ֆեոդալ հասարակության աչքում պետական-օրենսդրական նշանակություն, վայելում է պետական սանկցիայով անցած կողեքսի արժեք, որովհետեւ նրա կազմողը

եղած լինելու պարագայում, սակայն, պետք է նկատի ունենայ, որ այն կազմվել է 1265 թվականին, այսինքն, երբ Կիլիկիո գահաժառանգության իրավունքն արդեն ավելի քան հարյուրհիսունամյա ճանապարհ էր անցել: Հետևաբար, առնվազն այս ոլորտում Սմբատի դատաստանագիրքը չէր կարող օրենսդրական նշանակություն ունենայ, եւ նրա արժանիքը պետք է փնտրել բոլորովին այլ տեղ, այն է՝ Հայոց սովորության իրավունքի թեկուզեւ թերի արտացոլման իրողության մեջ⁹²: Ռուբինյան իշխանների ու թագավորների գահակալման կոնկրետ հանգամանքների պատմական ֆննությունն, ըստ այդմ, հիմք է տալիս պնդելու, որ գահաժառանգությունը Կիլիկիայում կարգավորվել է ոչ թե օրենսդրորեն, այլ լատինական, բյուզանդական եւ մահմեդական ավանդույթների ազդեցությամբ հարստացած Հայոց հին սովորության իրավունքով⁹³, որը նույնքան հղկված ու մանրամասնված էր, որքան կարող էր լինել պետական օրենքը: Այլկերպ անհնար է բացատրել, թե ինչպես է Ռուբինյան արյունը պահպանվել մինչեւ Կիլիկիո վերջին թագավորը⁹⁴: Այսպիսով, թեեւ ո՛չ օրենսդրորեն կանոնակարգված, բայց հստակորեն գիտակցված ու խստորեն կիրարկված գահաժառանգության սովորության իրավունքը պետք է դիտել որպես Կիլիկիո Հայոց պետության կենսունակության եւ երկարակեցության կարեւորագույն գործոններից մեկը:

15. Ինքնըստինքյան հասկանալի է, որ օրինական գահակալությունը նաեւ իշխանության «լեգիտիմության» գլխավոր պայմանն էր: Գլխավոր, սակայն ոչ միակ, քանի որ Կիլիկիայի պարագայում իշխանության «լեգիտիմությունը» բաղկացած էր նաեւ լրացուցիչ այլ տարրերից, որոնց

հանդիսանում է հայ կառավարության մեջ առաջնակարգ դեր խաղացող մի անձ, թագավորի եղբայրը, որը, թերեւս, թագավորի առաջադրանքով էր ձեռնամուխ եղել իր օրենսդրքի հորինմանը». Մամուկյան, *Իրավունքի պատմությունը*, էջ 92:

⁹² Հմմտ. Сукиасян, Смбаг Спарпет, с. 24.

⁹³ Հմմտ. *Բաստամյանց, Մխիթար Գօշ*, էջ 53; Сукиасян, *История*, с. 167; *Սուրբասյան, Կիլիկիա*, էջ 182; *Մեհրաբյան, Կիլիկիա*, էջ 21:

⁹⁴ *Կիլիկիո գահակալների շարքում Ռուբինյան արյուն չունեին միայն Փիլիպոս Անտիոքացի, Հեթում Ա, Կոստանդին Դ (III) եւ Կոստանդին Ե (IV) թագավորները:*

շարժում հիշատակելի են՝ Հայոց պետության միջազգային իրավական կարգավիճակը, Արևունի ատյանի հավանության առկայությունը, երկրում հաստատված մյուս հայ իշխանների կողմից Ռուբինյանների գերիշխանության ճանաչումը, Կիլիկիո թագավորների հեղինակության համահայկական ընդգրկումը, ինչպես նաև գահակալի նկատմամբ ձեռավորված հասարակական կարծիքը⁹⁵։ Մասնավորապես Ռուբինյանների «լեգիտիմության» ամրապնդմանն էին միտված Բագրատունիներից սերված լինելու վերաբերյալ նրանց շուրջ հյուսված առասպելը եւ նրանց կողմից շրջանառության մեջ դրված «թագաւոր ամենայն Հայոց» տիտղոսը։ Իսկ Հեթումյան գահակալների «լեգիտիմությունը» հիմնված էր Ռուբինյանների հետ իրենց նույնությունը հաստատող գաղափարախոսության վրա։ Բացի դրանից, Կիլիկիո իշխաններից եւ թագավորներից յուրաքանչյուրի գահակալման հանգամանքների կատարված ֆննությունն, ինչպես տեսանք, վերհանելով իշխանության «լեգիտիմության» հետ կապված մի շարք այլ նրբություններ, հնարավորություն է տալիս եթե ոչ սպառնիչ կերպով բացահայտել, ապա գոնե հարաբերականորեն ամբողջացնել այդ տարողունակ հասկացության բազմանշանակ բովանդակությունը։ Քանի որ իշխանության «լեգիտիմությանը» վերաբերող բոլոր հարցերը մանրամասնորեն արծարծված են սույն աշխատության համապատասխան ենթագլուխներում, հարկ չենք համարում ամփոփման կարգով մեկ առ մեկ անդրադառնալ դրանց, ինչն անհրաժեշտություն էր գահաժառանգության իրավունքի սկզբունքները ներկայացնելու, բայց ամենեւին ոչ տվյալ պարագայում։

⁹⁵ Ի դեպ, Սմբատ Սպարապետի դատաստանագրքում հասարակական կարծիքին նույնիսկ իրավագիտական արժեք է տրված, ինչի վկայությունն են նրա այն դրույթները, որ թագավորի ընտրությանը կամ գահընկեցությանը պետք է հավանություն տար ողջ երկիրը. «Իր ամէն գաւառաւքն եւ գաւառապետացն տեսովն եւ սուրբ եկեղեցովն» (Смбат Спарает, Судебник, с. 7); «եւ իշխանաց ու երկրին տեսովն առնուն մէկ մի» (Անդ, էջ 8); «Ապա զայն ոք, որ մարդիկք դնեն, նա թէ հայնց պիղծ լինին, որ չկարէ հանդուրժել աշխարհն, նա այլվայ իրենք եկեղեցովն եւ ամէն բնակչաւք երկրին կարեն աքսորել» (Անդ, էջ 81); «ու երկիրն առ հասարակ հանին» (Անդ, էջ 82):

ՀԱՎԵԼՎԱԾ

1. ԱՆԱՆՈՒՆԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ՀԱՐՅՆ ՄԵՐՈՑ» ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Անանուն այս գրվածքը պահպանվել է Մաշտոցի անվան Մատենադարանի № 7620 ձեռագրում կցված Գրիգոր Տաթևացու «Քարոզգրքին» եւ Գեորգ Սկեւոացու մի փարոզի¹: Բուն ձեռագիրը գրվել է 1409 թվականին, իսկ մեզ հետաքրքրող նյութը, որն զբաղեցնում է նրա 411բ-425բ էջերը, ամենայն հավանականությամբ, ընդօրինակվել է XVIII դարում: Հակառակ այդ հանգամանքին, մեզ թվում է, որ մենք գործ ունենք Կիլիկիայի պատմությանը վերաբերող մի հնաբույր սկզբնաղբյուրի հետ, որը մինչ այժմ, ըստ էության, դուրս է մնացել հետազոտողների ուշադրությունից: Որքան մեզ հայտնի է, այդ աղբյուրին անդրադարձած միակ հեղինակը Վ. Հակոբյանն է, որը նրանից մի փոքրիկ մեջբերում է կատարել Մլեհ իշխանի սպանության վերաբերյալ²:

«Պատմութիւնը» XI-XII դդ. կարեւոր իրադարձությունների մի համառոտ շարադրանք է, որն սկսվում է Հայոց Գագիկ Ա թագավորի (990-1020 թթ.) ժամանակներից եւ ավարտվում Կիլիկիո իշխան Լեւոն Բ-ի գահակալման տարով (1187 թ.): Ընդ որում, բնագրի թե՛ միջնամասից, թե՛ վերջից թերթեր են ընկել, հետեւաբար հայտնի չէ, թե հե-

¹ Ձեռագրի համառոտ նկարագրությունը տես՝ *Եղանյան-Չեյթունյան-Անթաղյան, Ցուցակ, հտ. 2, էջ 572*:

² Հակոբյան, *Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 112 (ծ. 21)*: Հակոբյանից բաղդելով, այդ մեջբերումն օգտագործել է նաեւ Ե. Քասունին. տես՝ *Քասունի, Ռուբէն Գ, էջ 16-17*:

ղինակն իրականում մինչեւ ուր է հասցրել իր պատմությունը: Պատմիչը բծախնդիր չէ իրադարձությունների ժամանակագրական կարգը պահպանելու հարցում. ավելի ուշ տեղի ունեցած դեպքերի նկարագրությունները երբեմն նախորդում են ժամանակով ավելի վաղ արձանագրված դեպքերին: Այնուամենայնիվ, նրա շարադրանքում նկատելի է ֆիչ թե շատ հստակ երկու համակարգ. Հայոց կաթողիկոսների շարք՝ Սարգիս Ա Սեանցուց (992-1019 թթ.) մինչեւ Գրիգոր Դ Տղա (1173-1193 թթ.), եւ Կիլիկիո իշխանների շարք՝ Քորոս Ա-ից (1100-1129 թթ.) մինչեւ Լեոն Բ (1187 թ.):

Բնագիրն առանձնանում է սարսափելի ուղղագրությամբ՝ այն աստիճան, որ հաճախ բառերը պարզապես անհանաչելի են դառնում: Հնարավոր է, որ ուղղագրական սխալների մի մասն առաջացել է հետագա ընդօրինակողների մեղքով: Սակայն նկատի ունենալով, որ նույնֆան անկանոն են նաեւ բնագրի ձեւաբանությունն ու շարահյուսությունը, պետք է ենթադրել, որ այդ սխալների մեջ իր բաժինն ունի նաեւ հեղինակը: Դատելով լեզվական առանձնահատկություններից, «Պատմութիւնն», ըստ երեւոյթին, գրված է մի կիսագրագետ հոգեւորականի կողմից: Այդպիսի ենթադրության հիմք է տալիս այն, որ շնայած գրագիտության պակասին, հեղինակը ծանոթ է Սուրբ Գրքին եւ նույնիսկ ճշգրիտ մեջբերումներ է կատարում նրանից: Ըստ երեւոյթին, լեզվական անկատարությունն է պատճառը, որ այս աղբյուրն անտեսվել է ինչպես միջնադարյան ժամանակագիրների, այնպես էլ նորագույն շրջանի հետազոտողների կողմից:

Այնինչ բնագրի ուշադիր ֆննությունը ցույց է տալիս, որ այն պարունակում է այլուստ անհայտ մի շարք եզակի տեղեկություններ, որոնք կարելու նշանակություն ունեն XII դ. իրադարձությունների ուսումնասիրման համար: Դրանց թվին են պատկանում, մասնավորապես, Գրիգոր Տղա կաթողիկոսի գահակալման հարցում Մլեհի եւ Հալեպի էմիր Նուրեդդինի խաղացած դերին, ինչպես նաեւ Սասունի իշխան Շահնշահի կողմից Հոռմկլային տիրելու փորձին վերաբերող տվյալները, որոնք մինչ այժմ գիտությանը հայտնի էին միայն ասորական աղ-

բյուրներից³: Նույնֆան ուշագրավ են Գող Վասիլի իշխանավարության, Մլեհի սպանության եւ Ռուբեն Գ-ի հրաժարականի հետ կապված մանրամասները, ինչպես նաեւ Անտիոքի պրինց Բոհեմունդ III-ի եւ Սալահեդդինի համատեղ ջանքերով վերջինիս դեմ նյութված դավադրության մասին տեղեկությունը:

Անանունի պատմությունը նաեւ միակ հայկական աղբյուրն է, որը տեղյակ է մահմեդականացած հայ էմիր Պողոսակի գոյության փաստին, որին նույնպես մասնագետները մինչ այժմ ծանոթ էին միայն ասորական ժամանակագրությունների ընձեռած տվյալների շնորհիվ: Այդ իշխանի եւ ողջ XII դարում Սեւերակ ֆաղափն ու շրջակա գավառին տիրած նրա սերունդների մասին երեք տարբեր աղբյուրով հիշատակում են Միխայել Ասորին, Անանուն եղեսացին եւ Բարհեբրեոսը: XI դ. վերջին ֆառորդում հիմնադրված եւ ավելի քան հարյուր տարի գոյատևած այդ էմիրությունը մաֆառել է իր հայ եւ մահմեդական հարեանների, մասնավորապես, Կարկառի հայկական իշխանության դեմ, Իմադեղդին Զանգիի կոալիցիայի կազմում մասնակցել եղեսիա ֆաղափ գրավմանը, եւ վերացել ու ապա նորից վերականգնվել 1191–1193 թթ. միջև: Քանի որ Սեւերակի Պողոսակյան էմիրության պատմությունը դուրս է մնացել հայագետների տեսադաշտից⁴, առիթն օգտագործելով, ավելորդ չենք համարում այստեղ համառոտակի անդրադառնալ նրան:

Պողոսակյանների մասին առաջին եւ ամենակարեւոր տեղեկությունը տալիս է Միխայել Ասորին, որը 1136 թ. իրադարձությունների նկարագրությունից անմիջապես հետո գրում է. «Սեւերակի բերդում, որ է Սամֆաթը, իշխում էին որոշ հայեր, որոնց նախնի⁵ Պողոսակը (Bogōsāg) թուրքերի առաջին արշավանքի սկզբում գնացել էր Բաղդադ, մինչեւ իսկ

³ *Sté Michel le Syrien, Chronique, III, p. 353, 395–396; IV, p. 705, 728, 730; Միխայել Ասորի, Ժամանակագրություն 1870, էջ 471–472; 1871, էջ 472:*

⁴ *Սեւերակի էմիրության պատմությանը նվիրված միակ ուսումնասիրությունը տես Dédéyan, Banou Bôgousag, p. 49–58; Dédéyan, Les Arméniens, p. 1287–1296.*

⁵ *Ասորական քննադրում նախնի բառի փոխարեն դրված է հայր ('abā), որը ժամանակագրության թարգմանիչ ժ.-Բ. Շաբոն վերարտադրել է ֆրանսերեն «père» բառով: Սակայն, ինչպես պարզվում է հետագա շարադրանքից, այստեղ պատշաճում է միայն նախնի բառը:*

Խորասան, եւ հագարացի դառնալով, հրովարտակներ էր ստացել թուրքերի մեծ սուլթանից ու խալիֆից, որպեսզի այդ վայրը դառնա իր որդիների ժառանգությունը: Ահա թե ինչու, նրանք բոլորն էլ սերնդե-սերունդ մահմեդական են: Այդ ժամանակ, արդ, այնտեղ իշխում էր Ամիր Իսա ('Isah) անունով մի էմիր, որը Պողոսակի սերունդներից էր: Դա մի շարամիտ մարդ էր եւ դառնությամբ էր լցված քրիստոնյաների նկատմամբ: Նա քննություն ուներ Կարկառի Միֆայել եւ Կոստանդին հայազգի (իշխանների) դեմ: Մի կողմից սրանք էին իրենց հրոսակներով ավերում նրա երկիրը, մյուս կողմից նա էր շարունակ կողոպտում եւ ավարի մատնում Կարկառի գավառը: Երբ նա տեսավ, որ ֆրանկները թուլացել են, թուրքեր հավաքագրեց եւ, ներխուժելով, ավարի մատնեց ողջ Կարկառի երկիրը: Սակայն ողջ գավառում չկարողանալով գտնել հավաքագրված թուրքերին վարձատրելու համար անհրաժեշտ գումարը, քանի որ երկիրը հիմնովին ավերված էր, նա իր հայացքն ուղղեց դեպի վանքերն ու մենաստանները, որպեսզի նրանց հաշվին կարողանա բավարարել իր կարիքը: Նախ եւ առաջ նա եկավ Մար Աբխայի վանքը: Չկարողանալով ներս թափանցել Եփրատի ափի կողմից, նա մագլցեց ապառաժը եւ այնտեղից պարաններով իջեցրեց մարդկանց, որոնք մեծամեծ ֆաբեր նետելով, խարխլեցին տաճարի անկյունը: Այնժամ վանականները, վախեցած, ելան նրան ընդառաջ եւ զլխովին հնազանդություն հայտնեցին: Իսկ նա կողոպտեց եւ ավարի մատնեց բոլոր պատահած գանձերը՝ գավաթները, արծաթյա անոթները, խաչերը եւ մնացած ամեն ինչ, որ պահվում էր այնտեղ Մար Յոխանան Բար-Աբդուն պատրիարքի ժամանակներից ի վեր: Նա գրավեց նաեւ Փեսկինի (վանքը), այնտեղի վանականներին՝ Ռաբբան Դավթին ու նրա ընկերակիցներին հարկադրելով ապաստանել Շիրայի (վանքում): Եւ այդ վանքում, արհայական սեղանի մոտ, ոչ ոք չմնաց Աբու-Ղալիբից բացի»⁶: Նույն դրվագը, ֆաղված Միֆայել Ասորուց, որոշ կրեատումներով առկա է նաեւ Բարհեբրեոսի ժամանակագրության մեջ, որտեղ, սակայն, նշված դեպքերը հաջորդում են 1137 թ. իրադարձությունների

⁶ Michel le Syrien, Chronique, IV, p. 620-621. Ֆրանսերեն թարգմանությունը՝ III, p. 247-248.

նկարագրությամբ⁷: Նկատի ունենալով, որ Բարհեբրեոսը Միֆայելի տվյալներին ոչինչ չի ավելացնում, հարկ չենք համարում մեջբերել նաև նրա վկայությունը:

Հաջորդ տեղեկությունը Պողոսակի սերունդների մասին հաղորդում է Անանուն եղեսացի ժամանակագիրը: Պողոսականներն այս անգամ հանդես են գալիս 1144 թվականին եղեսիան գրոհող Զանգի աթաբեկի զորաբանակների շարժում: Մանրամասնորեն նկարագրելով ֆաղափր պաշարած մահմեդական զորքերի տեղաբաշխումը, հեղինակը նշում է. «Հյուսիս-արևելքում հաստատվել էին Պողոսակի սերունդները (Benē Bogosag)՝ Սեւեռակի եւ Եփրատի ափերի տերերը»⁸:

Եւ, վերջապես, երրորդ եւ ժամանակագրականորեն վերջին վկայությունը Պողոսականների մասին նորից գտնում ենք Միֆայել Ասորու ժամանակագրության մեջ. «1502 (= 1191) թվականին⁹ մահացավ Արբելայի տիրակալը՝ Զեյնեդդինի որդին: Այնժամ նրա եղբայրը՝ Ուռհայի տերը, լքեց Ուռհան, Խառանն ու Սամոսատը, եւ գնաց տիրելու Արբելայում, որտեղ նա հաջողությունների հասավ¹⁰ եւ բազում տիրույթներ ձեռք բերեց Պարսկաստանում: Սալահեդդինն այդ ֆաղափները հանձնեց իր եղբորորդուն՝ Օմար Թաֆիեդդինին, որը նաև սուլթանի կոչում ստացավ: Դա մի խստասիրտ եւ շարագործ մարդ էր, որն ատում էր ֆրիստոնյաներին եւ հալածում նույնիսկ մահմեդականներին: Նա ծանրացրեց հարկերի ու տուրքերի դաժան լուծը ֆրիստոնյաների եւ մահմեդականների վրա: Հարձակվեց Սեւեռակի էմիրների՝ Պողոսակի սերունդների վրա (Benē Bogōsāg), եւ նրանց վտարեց իրենց բերդերից»¹¹: Նույն դեպքերի արձագանքը պետք է համարել նաև Անանուն եղեսացու հետևյալ տեղեկությունը. «Այդ տարի (1191 թ.) Ամիդի տերը զայրացավ

⁷ Barhebraeus, Chronicon, p. 301–302; Bar Hebraeus, Chronography, p. 265.

⁸ Anonymus, Chronicon, p. 119–120. Հայերեն թարգմանությունը՝ Անանուն եղեսացի, ժամանակագրություն, էջ 89:

⁹ Թվագրված է Սելեկյան տոմարով, որի սկիզբ է համարվում մ. թ. ա. 312 թ. հոկտեմբերի 1-ը:

¹⁰ Բառացի՝ «բարգավաճեց» (‘aşlax):

¹¹ Michel le Syrien, Chronique, IV, p. 735–736. Ֆրանսերեն թարգմանությունը՝ III, p. 408–409.

Սեւապերակի տիրոջ վրա եւ, բռնելով ու բանտարկելով նրան, գրավեց նրա բոլոր տիրույթները»¹²: XIV դ. առաջին կեսի արաբ պատմագիր եւ աշխարհագրագետ Աբուլֆիզան նույնպէս արձանագրում է Քաֆիեղդին Այուբյանի կողմից Սեւերակ ֆաղաֆի գրավման դեպքը. «Հիջրի 587 թվական (1191). Մալիֆ Մոզաֆֆար Քակիաղդին Օմար իբն Շահնշահ իբն Այուբը... գրավեց Սուայդան»¹³, Հանին եւ, արշավելով Խլաթի տիրոջ՝ Բեգ-Քեմուրի վրա, հաղթեց ու պաշարեց նրան Խլաթում»¹⁴: Քաֆիեղդինի մահից հետո,– շարունակում է Միֆայել Ասորին,– երբ նրա որդին ապստամբում է Սալահեղդինի դեմ, վերջինս նրան կարգի հրաժիրելու է ուղարկում իր եղբորը՝ Մելիֆ ալ-Ադիլին, որը վտարում է ապստամբին եւ Սեւերակը վերադարձնում իր նախկին տերերին. «Սեւերակի երկիրը վերադարձեց Պողոսակի որդիներին (Պողոսակյաններին), որոնք հայտնվեցին նույն վիճակում, որում գտնվում էին Ամիդի տեր Կուսբեղդինի տիրապետության ներքո»¹⁵: Քեւեւ այս դեպքը Միֆայելի կողմից թվագրված չէ, բայց այն պետք է տեղի ունեցած լինի մինչեւ 1193 թվականը, այն է՝ Սալահեղդինի մահվան տարին:

Պողոսակյան էմիրների վերաբերյալ ասորական աղբյուրների հաղորդած այս տեղեկություններին, ահա, մի նոր եւ չափազանց կարեւոր վկայություն է ավելացնում Անանունի «Պատմութեան» նորահայտ բնագիրը. «Ելին երկիրն Հոռմոց երկու ազգ այլ՝ Սալշուչիֆ, եւ միուսն Դանըշմանֆ են, հայրն Մսխուտ սուլթանին: Այսորիկ ավուրս, որ տիրէին եւ երկուցն՝ Պաւղոսակ եւ Նիկիֆառ եղբայր նորին, թողեալ զհավատն վասն տեղուն, եւ զնացեալ առ սուլթանն Պարսից եւ ի խալիֆայն, եւ առին զֆաղաֆըն եւ զայգին հավատոյն: Իսկ որդին Նիկիֆառայ Ըստեփաննոս զովելին ֆրիստոսայսէն, թողեալ զուրայցոյ ազգն եւ աղֆատայցեալ վասն սիրոյն Քրիստոսի, գայր բնակէր եղեսիայ: Որ եւ բազում բանս ըստեղծականըս յարմարէր խրատ մարդկան լի յի-

¹² Anonymus, Chronicon, p. 213. *Հայերեն թարգմանությունը՝ Անանուն Եղեսացի, Ժամանակագրություն, էջ 166:*

¹³ Սուայդա. Սեւերակ քաղաքի արաբական անվանումը:

¹⁴ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 224:

¹⁵ Michel le Syrien, Chronique, IV, p. 736. *Ֆրանսերեն թարգմանությունը՝ III, p. 409.*

մաստութեամբ, որ եւ նետիւ հարեալ այլազգաց, վաղճանի ի թիվս ՈԿԲ-ին (1213)»¹⁶: Պողոսակյանների մասին տեղեկացնող միակ հայկական աղբյուրը լինելու ինքնին նշանակալի փաստից բացի, Անանունի այս վկայությունն արժեքավոր է նաեւ մի շարք այլ առումներով: Նախ՝ որ Պողոսակը ոչ թե իշխանական մի գերդաստանի առասպելական նախնի է, ինչպիսի տպավորություն կարող էր ստեղծվել ասորական աղբյուրների տվյալներից, այլ կոնկրետ պատմական անձ, երկրորդ՝ որ նա Նիկիֆառ անունով եղբայր է ունեցել, երրորդ՝ որ վերջինս կիսել է իշխանությունը Պողոսակի հետ եւ նույնպես ուրացել իր կրօնը, եւ չորրորդ՝ որ Նիկիֆառի որդին՝ Ստեփանոսը, հետագայում հրաժարվել է մահմեդականությունից ու կրկին վերադարձել եկեղեցու գիրկը: Ի դեպ, Նիկիֆառ հունական անունը (Նիկեփորոս = Νικηφόρος) ամրապնդում է Ժ. Տետեյանի այն ենթադրությունը, որ Պողոսակյանները ֆաղկեղոնական հայեր կարող էին եղած լինել¹⁷:

Այսպիսով, առկա աղբյուրների տվյալներով՝ XI դ. վերջին ֆառորում ունեցող Պողոսակի եւ նրա եղբայր Նիկիֆառի ջանքերով Սեւերակի գավառում ստեղծվել է մի հայկական իշխանություն, որը գոյատևել է ընդհուպ մինչև XII դ. ավարտը¹⁸: Պողոսակն, ըստ երեսույթին, եղել է բազմաթիվ այն հայ իշխաններից կամ բյուզանդական զորահրամանատարներից մեկը, որը Մանազկերտի ճակատամարտից (1071 թ.) հետո ապաստան է գտել Հյուսիսային Միջագետքում եւ սեփական իշխանություն հաստատել այնտեղ: Պողոսակից առաջ Սեւերակին տիրել է մի ուրիշ հայ իշխան՝ Յեհնուկ կամ Յոհնուկ¹⁹ անունով, որի մասին տեղեկացնում են Մատթեոս Ուոհայեցին եւ Սմբատ Սպարապետը²⁰: Ժ. Տե-

¹⁶ Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 508: ՌԿԲ թվականը պետք է ուղղել՝ ՇԿԲ (1113 թ.):

¹⁷ Տե՛ս Dédéyan, Banoû Bôgousag, p. 50; Dédéyan, Les Arméniens, p. 1293.

¹⁸ 1193 թ. հետո Պողոսակյան էմիրության ճակատագիրն անհայտ է:

¹⁹ Ժ. Տետեյանի կարծիքով՝ Յոհնուկը հայերն Յոհաննէսուկ (ավելի ճիշտ՝ Յոհաննուկ. Լ.Տ.Պ.) անվան կրճատված ձեւն է. Dédéyan, Banoû Bôgousag, p. 50–51; Dédéyan, Les Arméniens, p. 1289.

²⁰ «Յայսմ ամի (ՇԺԱ = 1062 թ.) ժողով արարեալ ոմն Յեհնուկ անուն, հինգ հազար արամբք գնացեալ ի վերայ Քրդաստանաց ի գաւառն Ամթայ ի տեղին՝ ուր ձեպու-Նահար կոչի. եւ առեալ բազում եւ անթիւ աւար՝ ոչյաբս եւ պախրէս, ձիս եւ

տեյանը բացառված չի համարում անգամ, որ Պողոսակն այս Յոհնուկի որդին կարող էր եղած լինել²¹: Նույն հետազոտողի կարծիքով՝ Պողոսակը, հավանաբար, եղել է Փիլարտոսի ենթականերից մեկը, որն իր գերակայի օրինակով շուրջ 1086 թվականին կրոնափոխ է դարձել եւ Ալփ-Արսլան սուլթանից իրավունք ձեռք բերել տիրելու իր զբաղեցրած երկրին²²:

Հակառակ կրոնափոխ լինելու պարագային, պետք է ենթադրել, որ Պողոսակյանները մինչեւ վերջ չէին թուրքացել կամ արաբացել, եւ ազգությամբ ինչ-որ կերպ զանազանվում էին շրջակա մահմեդական ժողովուրդներից, ինչը հավաստվում է երկու փաստով: Նախ՝ ասորական աղբյուրները շեշտում են նրանց հայկական ծագումը, որի հիշատակը, թերեւս, վառ է պահպանվել Պողոսակյանների տոհմական ավանդույթում: Երկրորդ, ինչպես նշում է Միխայել Ասուրին, Իսա Պողոսակյան էմիրը, Կարկառի երկիրն ասպատակելիս, հավաքագրել է վարձու թուրքական զորքեր: Այս հանգամանքի ընդգծումն, անտարակույս, նշանակում է, որ Սեւերակի տերերը ժամանակակիցների կողմից թուրք չեն համարվել: Անկախ Պողոսակյան էմիրների ազգային պատկանելության խնդրից, հայտնի է, որ հայերը միջնադարում զգալի տեղ են զբաղեցրել Սեւերակ ֆաղափի եւ նրա շրջակա գավառի բնակչության մեջ: Այս առումով արժեքավոր է մանավանդ XIII դ. առաջին քառորդի արաբ աշխարհագրագետ Յակուտի մի տեղեկությունը, որի համաձայն՝ հայերը կազմել են այդ վայրերի բնակչության մեծամասնությունը. «Աս-Սուայդան (այսինքն՝ Սեւերակը),- գրում է նա,- հռչակավոր ֆաղափ է Դիար Մուղարում, Խառանի մուտ: Նրա եւ Ռումի երկրի միջեւ

ծառայս եւ այլ բազում աւարս՝ եւ գայր ի բերդն, որ կոչի Սեւերակս. եւ հասանէր ի հետ՝ որ աւագ էր Քրդացն՝ որում անունն Խալթ ասէին, ինքն եւ իւր երեք որդիքն. եւ տեսեալ Յեհնուկն եւ իւր զօրքն ի փախուստ դարձան». Մատթէոս Ռոտհայեցի, Ժամանակագրութիւն, էջ 144: «Իսկ ոմն ի Հայոց Յոհնուկ անուն, ժողովեաց ԵՌ (5000) հետեւակս եւ ի գաւառն Քլլիմոյ հասեալ, խաւար էած քրդաստանաց եւ Տաճկաց: Եւ դարձեալ գայր ի Սեւերակքն բազում աւարաւ եւ գերութեամբ: Իսկ գլխաւոր մի տաճիկ Շահաշղակ հասանէր Յոհնկուն. եւ նա թողեալ զզօրսն փախեաւ, եւ նոցա առեալ զկապուտն իւրեանց դարձան». Սմբատ, Տարեգիրք, Վենետիկ, էջ 58:

²¹ *Sté u Dédéyan*, Banoû Bôgousag, p. 50-51; *Dédéyan*, Les Arméniens, p. 1289, 1293.

²² *Sté u Dédéyan*, Banoû Bôgousag, p. 51; *Dédéyan*, Les Arméniens, p. 1293.

տարածվում է բարեբեր ու լիառատ մի շրջան, որի բնակիչները մեծ մասամբ փրիստոնյա հայեր են»²³:

Սեւերակում հայկական տարրի առկայությունը հաստատելու տեսակետից՝ անկարելուր չէ նաեւ ֆրանսիացի արեւելագետ Մարտենի հիշատակած այն փաստը, ըստ որի՝ 1124-1125 թվականներին, այսինքն՝ ճիշտ Պողոսակյաններին վերաբերող ժամանակաշրջանում, այդ ֆաղափում գոյություն է ունեցել Anābad անունը կրող մի Հակոբիկյան վանք²⁴: Դժվար չէ կոահել, որ այդ անունը հայերեն Անապատ (= վանք, մենաստան) բառի ասորական տառադարձությունն է՝ արեւմտահայ արտասանությամբ: Այս վերջին հանգամանքը չպետք է զարմանք պատճառի, քանի որ ապացուցված է, որ XII-XIII դդ. ասորական աղբյուրներում հիշատակվող հայկական անուններում արտացոլված է միջին հայերենի հնչյունաբանության արեւմտահայ տարբերակը²⁵: Բացառված չէ, որ Anābad անունը կրող վանքը կարող էր իրականում լինել հայկական եւ միայն թյուրիմացաբար համարվել Հակոբիկյան: Սակայն նույնիսկ ասորական լինելու պարագայում վանքը հայկական անունով կոչելու համար անհրաժեշտ էր, որ հայերը ֆաղափ բնակչության զգալի մասը կազմեին: Ավելորդ չէ նշել, որ պաշտոնական վիճակագրական տվյալներով՝ նույնիսկ XIX դ. վերջում հայերը կազմել են Սեւերակ ֆաղափ բնակչության 40 տոկոսը²⁶:

Պատահական չպետք է համարել նաեւ այն հանգամանքը, որ ասորական աղբյուրները Սեւերակ ֆաղափը հիշատակում են նրա հայերեն Սեւ-Աւերակ անվանաձեւի ասորական տառադարձությամբ: Միջայել Ասորու եւ Բարհեբրեոսի ժամանակագրություններում առկա է Syb'brk, իսկ Անանուն եղեսացու մոտ՝ Sybbrk ընթերցումը: Եւրոպացի հետազոտողներն այս տեղանունը սովորաբար ձայնավորում են Sēbaberak, Sībaberak, Sībāberak, Sibabérek, Sibaberek, Sababarek ձեւով²⁷: Սակայն

²³ Նալբանդյան, Արաբական աղբյուրները, էջ 224:

²⁴ Martin, Les premiers princes, p. 483.

²⁵ Տե՛ս Տե՛ր-Պետրոսյան, Միջին հայերենի հնչյունաբանությունը, էջ 139-154:

²⁶ Տե՛ս Cuinet, La Turquie, p. 467.

²⁷ Honigmann, Le couvent, p. 146, 161, 210; Kawerau, Die Jakobitische Kirche, S. 113,

պետք է նշել, որ առաջարկված ձևերից ոչ մեկն էլ ճշտորեն չի վերա-տադրում ասորական անվանման իրական հնչյունական արժեքը: Ինչ-պես ցույց ենք տվել մեր աշխատություններից մեկում, XII-XIII դդ. ասորական աղբյուրներում հայերենի վ (v) հնչյունը (որին հնչյունաբա-նորեն արդեն համընկել էր նաև յ (w) ձայնորդը), ձայնավորից հետո ընկած դիրքում սովորաբար տառադարձվում է **h** (v)-ով²⁸: Ուստի այդ աղբյուրների Syb'brk կամ Sybbrk ընթերցումը պետք է տառադարձել միայն ու միայն Sevaverak ձևով, որը բացարձակորեն համընկնում է հայերեն **Սե-Աւերակ** անվանմանը:

Ժամանակին Սեւերակի հայկական իշխանության պատմությանը նվիրված մի զեկուցման մեջ, որը պետք է ներկայացվեր 1988 թ. հուն-վարին Փարիզում կայացած բյուզանդագիտական գիտաժողովին²⁹, մենք, հիմնվելով Պաղոսակ եւ Պաղիկ անունների նույնության վրա, կարծիք էինք արտահայտել, որ ասորական աղբյուրների (Benē Bōgōsāg) (Պողոսակի որդիներ կամ Պողոսակյաններ) անվան տակ թափնված են պավլիկյան աղանդի մահմեդականացած հետնորդները³⁰: Սակայն այժմ, երբ Անանունի պատմության շնորհիվ պարզվում է, որ Պողոսակն իրոք գոյություն ունեցած պատմական անձ է, մենք, համաձայնելով Ժ. Տետե-յանի հետ³¹, մեր այդ եզրակացությունը անհիմն ենք համարում:

Վերադառնալով Անանունի պատմության նորահայտ բնագրին՝ անհրաժեշտաբար պետք է կանգ առնել նաև նրա հորինման ժամանա-կի խնդրի վրա: Մեր կարծիքով՝ Պողոսակի, ինչպես եւ Գող Վասիլի, Մլե-հի, Ռուբեն Գ-ի եւ Գրիգոր Տղայի վերաբերյալ այսպիսի հազվագյուտ եւ մնացյալ բոլոր հայկական աղբյուրներում բացակայող տեղեկու-թյունների առկայությունը հիմք է տալիս այդ հուշարձանը թվագրել

115; Abouna-Fiey, Anonymi auctoris Chronicon, p. 90; Michel le Syrien, Chronique, III, p. 247, 409; Martin, Les premiers princes, p. 483.

²⁸ *Տե՛ս Տե՛ր. Պետրոսյան, Միջին հայերենի հնչյունաբանությունը, էջ 141, 153:*

²⁹ *Այդ զեկուցման ֆրանսերեն ամփոփումը տե՛ս Dédéyan, Banoû Bôgousag, p. 57; Dédéyan, Les Arméniens, p. 1293n.*

³⁰ *Հետազայում այդ տեսակետը զարգացրել է Ս. Տատոյանը. տե՛ս Dadoyan, The Fatimid Armenians, p. 72.*

³¹ *Տե՛ս Dédéyan, Les Arméniens, p. 1287–1296.*

1248-1275 թթ. միջև ընկած ժամանակահատվածով, քանի որ նրա հեղինակը մի կողմից՝ օգտվել է Միխայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությունից³², մյուս կողմից՝ անտեղյակ է Վահրամ Բարունու ջանհերով XIII դ. վերջին ֆառորդում շրջանառության մեջ դրված պատմական տվյալներին: Միխայելի հայերեն թարգմանության եւ Անանունի պատմության բնագրական աղերսն ակնառու է, մասնավորապես հետեւյալ հատվածում.

Միխայել Ասորի³³

Ջայսու ժամանակօք մինչ տիրէին Քուրքըն Երուսաղէմի եւ ամենայն ծովեզերացն, իշխան մի Ջնճիլ անուն եկն յԵրուսաղէմ յաղօթս. եւ առին ի նմանէ դահեկան մի որպէս յամենայն ումեքէ աղօթաւորէ. եւ յետոյ այլ եւս պահանջէին: Եւ ի շտալն զաւելորդն՝ հարին զգլուխ նորա եւ խլեցաւ աջոյ ական, եւ նորա առեալ դնէր ի գրապանն եւ տանէր ի Հոռովմ շրջեցուցանէր եւ շարժէր զնոսա ի նախանձ:

Անանունի պատմություն³⁴

Եւ եկաց Երուսաղէմ երկու ամ առ Քուրքացն, եւ Անտիոք՝ տասն ամ, եւ այլ ծովեզերայքըն, մինչեւ ելանել Հոսմայեցոց զօրացըն ընդ աշխար Յունաց³⁵, առաջնորդութեամբ Աղէքսին: Որ եւ պատճառ ելիցն յայտնի է ի պատմութեանց: Որ մեծ կոմոսն եղ շխթայս վասն պահանճել զգահեկան հարկին, եւ հանաւ ական նորայ: Որ գնացեալ շարժեաց զամենայն Հոսմայեցիս՝ շրջեցուցանելով ի ցուցս ամենայն մարդկան զակըն հանեալ:

Ստորեւ հրատարակելով Անանունի պատմության բնագիրը, հարկ ենք համարում հիշեցնել, որ այն այնքան սխալաշատ է, որ հաճախ ան-

³² Կատարված ասորի քահանա Իշոխի եւ Վարդան Արեւելցու աշխատասիրությամբ 1248 թվականին:

³³ Միխայել Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 409. տե՛ս նաեւ նույնի 1871 թ. հրատարակությունը, էջ 402:

³⁴ Անանուն, Պատմութիւն սրբոց, էջ 509:

³⁵ Նկատի ունի առաջին խաչակրաց արշավանքը:

գամ վերժանության կարիք է զգացվում, ինչը փորձել ենք կատարել համապատասխան ծանոթագրություններում: Բնագրի հարազատությունն ապահովելու նպատակով պահպանել ենք ձեռագրի ուղղագրությունը, միջամտելով միայն այն դեպքերում, երբ բառաձեւն անհասկանալիության աստիճանի աղնատված է, բնականաբար, յուրաքանչյուր միջամտության դեպքում տողատակում նշելով ձեռագրական ընթերցվածը:

* * *

411բ

Պատմութիւն սրբոց հարցն մերոց որք առ Քրիստոս փոխեցան³⁶

Շահրնշահի Հեթում³⁷, զոր ունէր բազում մեծարանք, եւ զի կաթողիկոսըն տէր Գրիգորիոս³⁸ տիրացաւ Հոսմկլային, որպէս Աղամ փառայսիրեալ կամեցաւ աստուածանալ, զորս Տէր ետս ընկէց: Մինչի ինքն աստուածացուց ի դէպ ժամու այսպէս: Քվեր որդի տեառն Գրիգորիոսի³⁹ տեսեալ զկաթողիկոսարանն փարթամ, կամեցաւ թագայորել, զոր եւ մեծ կաթողիկոսըն ետս ընկէց զկամս նորայ: Այլ ի դէպ ժամու թագայորեցուց ի Սասունս: Եւ զՎասակ որդին Վենկայ⁴⁰, որ վասն իշխանութեան տկարացաւ ի հավատս, ետս կացուց զնա հօրեղբայր սորայ: Որ եւ զամենայն տունս նորայ լցուց զանձիւ եւ քաղաքն ամրայցուց պարըսպօք: Եւ այսպէս թագայորեաց եւ մեռաւ խաղաղութեամբ Շահրնշահի Հեթում:

³⁶ Ձեռագրում՝ փոխեցին:

³⁷ Հեղինակն, ըստ երեւույթին, շփոթությամբ միավորելով Սասունի իշխան Զորտուաննի Մամիկոնյանի (մահ. 1165 թ.) երկու որդիների՝ Շահնշահի եւ Հեթումի անունները, նրանց համարել է մեկ անձ:

³⁸ Գրիգոր Դ Տղա. Հայոց կաթողիկոս (1173–1193 թթ.):

³⁹ Շահնշահն ու Հեթումն, իրոք, Գրիգոր Դ Տղա կաթողիկոսի քրոջ՝ Վանինեի որդիներն էին:

⁴⁰ Վենկայ անվան տակ հեղինակն, ակնհայտորեն, նկատի ունի Սասունի իշխան Վիգենին (մահ. 1176 թ.), որն, իրոք, կյանքի վերջում մահմեդականություն էր ընդունել: Անվան աղավաղումն, ըստ երեւույթին, տեղի է ունեցել հետեւյալ ճանապարհով՝ Վեգէն – Վեկէն – Վեկնայ – Վենկայ:

Մեռաւ եւ նորտինն⁴¹ տէրն Ամթայ, որ է Դիքրանայկերտ Հանձթայ, որ է 412ա խարբերթ, ի թիվն Ոլն (1186): Որ եւ || ազգըն էլէմացոց, որ են Թուրքըն, ավար հարին զաշխարս մեր ավերմամբ:

Որ եւ երեւմանէն Մահմէտին⁴² ի⁴³ ՈլԳ (1184) ամ թիվս մեր՝ լցաւ Ռ (1000) ամ: Այնրմ օրէ մինչեւ ցըայժըմ մեծ նեղութիւն հասուցին Քրիստոնեայ ազգին: Եւ ազգըն Թուրքաց զօրացան այնքան, մինչի քակեցին⁴⁴ է (7) մեծայմեծ ազգ: Եւ տիրեցին զՊարսիկ, զՄարս, զԱրապիկ, զՀայք, զԱսորիկ, զՀռոմք, զԹագայորութեան եգիպտոսի: Ըսկսեալ ի ծօվէն Կազբիայկան եւ ի դրանէն Դարբանտոյ, մինչեւ ի սահմանս Հընդկաց տիրեցին ամենայն երկրի: Ուստի⁴⁵ կոծացան սիրտք թագայորաց միմիանց: Վասն որոյ այլ ազգ տիրեցին մերոյ աշխարիս, որ են ազգ Իսմայէլի: Ըսկսեալ առ Թէոդոսի⁴⁶ փոքու տիրեցին ի Միջայգետս Ասորոց: Եկեալ վան ավարտի⁴⁷ զի հարկս տայցեն, եւ իմացան⁴⁸ մուտ եւ զել աշխարիս: Ըսկսաւ իշխելն նոցայ ի բերդըն, որ կոչի⁴⁹ Հարսնքէհ⁵⁰, որ էր վանք ասորի հաբեղայի, զոր 412բ գողայցան առին: Եւ մեծայլ|ցան ազգըն, որ կոչի⁵¹ Արդուխիք⁵²: Ելին երկիրն Հռոմոց երկու ազգ այլ՝ Սալչուչիք⁵³, եւ միուսն Դանըշմանք⁵⁴

⁴¹ Նուրեդդին Մուհամմեդ. Հիսն-Քեֆայի եւ Ամիդի ճյուղի Արտուքյան էմիր (1167–1185 թթ.):

⁴² Մուհամմեդ մարգարե. իսլամի հիմնադիրը (շուրջ 570–632 թթ.):

⁴³ Ձեռագրում՝ չիք:

⁴⁴ Ձեռագրում՝ քաքեցին:

⁴⁵ Ձեռագրում՝ ոուստի:

⁴⁶ Թեոդոսիոս II Փոքր. Հռոմեական կայսր (408–450 թթ.):

⁴⁷ Վան ավարտի բառերն աղավաղված են. թերեւս կարելի է ուղղել՝ վասն աւարի կամ վասն արաւտի:

⁴⁸ Ձեռագրում՝ յիմացան:

⁴⁹ Ձեռագրում՝ գոչի:

⁵⁰ Հիսն-Քեֆա. քաղաք Հյուսիսային Միջագետքում, Արտուքյան էմիրների տիրույթներից մեկը:

⁵¹ Ձեռագրում՝ գոչի:

⁵² Արդուխիք = Արտուքյաններ:

⁵³ Սալչուչիք = Սելջուկյաններ:

⁵⁴ Դանըշմանք = Դանիշմենդյաններ:

են, հայրն Մսխուտ⁵⁵ սուլթանին:

Այտորիկ ավուրս, որ տիրէին եւ երկուցն՝ Պաւղոսակ⁵⁶ եւ Նիկիֆառ եղբայր նորին, թողեալ զհավատն վասն տեղուն, եւ գնացեալ առ սուլթանն Պարսից եւ ի խալիֆայն, եւ առին զքաղաքըն եւ զայգին հավատոյն: Իսկ որդին Նիկիֆառայ Ըստեփաննոս գովելին քրիստոսայտէրն, թողեալ զուրայցօղ ազգն եւ աղքատայցեալ վասն սիրոյն Քրիստոսի, գայր բնակէր Եղեսիայ: Որ եւ բազում բանս ըստեղծականըս յարմարէր⁵⁷ խրատ մարդկան լի յիմաստութեամբ, որ եւ նետիւ հարեալ այլազգաց, վաղճանի ի թիվս Ոկթ-ին (1213)⁵⁸:

Յառաջ քան զելանելն Հոսմայեցոցնըս տայ պատմութիւն սրբոյն Ներսէսի⁵⁹, ելանէ թագայորն Յունաց Տիւմալոյն⁶⁰ արեւելս ի պատերայզմ, եւ հասեալ Դիեարպէքիր, բազում այլազգաց կոտորէ: Ելանէ ընդ դէմ նորայ|
413ա Մելքիշահ⁶¹ թագայորն Պարսից: Եւ Տիւմալոյն ուխտեայլ էր, զի թէ ըմբռնեացէ գնայ, խոտ ընու ի մորթն⁶² իւր եւ կապեալ տանէ աշխարըն իւր: Եւ Մելքիշահըն ուխտեայլ էր, թէ որ ընկալցի գնայ, պարգեւօք դարձուցանէ աշխարն իւր: Իսկ Տէրն ամբարտաւանին հակառակ կա, եւ Տէր բարի ուխտին յաղթէ: Եւ կալեալ զՏիւմալոյն⁶³ մեծայմեծօք իւր, առաքէ աշխար իւր: Եւ ինքն առնու զամենայն աշխարն Հոսմոց մինչ ի Անտիոք: Եւ հասեալ ի ծովն, մտեալ երիվարան, հարկանէր զջուր ծովուն երիցս անգամ, ի յիշայտակ յաղթութեանն⁶⁴ իւր:

⁵⁵ Մասուղ Ռուբնեղդին. Ռումի Սելջուկյան սուլթան (1116–1156 թթ.):

⁵⁶ Պողոսակ. Սեւերակի մահմեդականացած հայ էմիր (XI դ. երկրորդ կես), նրա մասին մանրամասն տես Michel le Syrien, Chronique, III, p. 247; IV, p. 620.

⁵⁷ Ձեռագրում՝ արմարէր:

⁵⁸ Քերես ուղղելի՝ ՇԿԲ (1113 թ.):

⁵⁹ Ներսես Ա Պարթեւ. Հայոց կաթողիկոս (353–373 թթ.). հեղինակն ակնարկում է ներսեսի տեսիլը:

⁶⁰ Ուղղելի՝ Տիւմալոյն/Տիւմալոյն. Ռումանոս IV Դիոգենես. Բյուզանդական կայսր (1068–1071 թթ.):

⁶¹ Մելքիշահ. Սելջուկյան սուլթան (1072–1092 թթ.): Հեղինակը սխալվում է. Ռումանոս Դիոգենեսի դեմ պատերազմողը Ալփ-Արսլան սուլթանն էր (1063–1072 թթ.):

⁶² Ձեռագրում՝ մորդըն:

⁶³ Ձեռագրում՝ Տիւմալոյն:

⁶⁴ Ձեռագրում՝ աղթութեանն:

Եւ ետ այսորիկ տվեալ զօրս բազում ի ձեռն ամիրային մեծի Արդուխ⁶⁵ անուն, որ էառ զբազում գափառս: Առ եւ զերուսաղէմ, եւ աւուրս Զատկի մտեալ ի Սուրբ Գերեզմանն աստուածընկալ, դնէ կանդեղ ի վերայ Սուրբ Գերեզմանին, գործեալ⁶⁶ սան մեծ ի վերայ ՚ի փորձ իջման լուսոյն: Եւ զի լվեալ
413բ էր, թէ նախքան զիջանել լուսոյն, աղափնիք || երեւի ի վերայ Գերեզմանին եւ խաղան, որ եւ ի գալ աղափնեացն ձգեաց⁶⁷ նէտ մի, որ կայ մինչեւ ցայսօր ի գմբեթ Գերեզմանին՝ վկա անհավատութեան նորայ: Եւ լուսըն վառեալ բորբոզեցաւ ի ներգոյ պղընծին՝ ի պարծանս քրիստոնէից:

Եւ եկաց Երուսաղէմ երկու ամ առ Քուրքացն, եւ Անտիոք՝ տասն ամ, եւ այլ ծովեզերայքըն, մինչեւ ելանել Հոսմայեցոց զօրացըն ընդ աշխար Յունաց, առաջնորդութեամբ Աղէքսին⁶⁸: Որ եւ⁶⁹ պատճառ ելիցն յայտնի⁷⁰ է ի պատմութեանց⁷¹: Որ մեծ կոմսսն եղ շխթայս վասն պահանճել զդահեկան⁷² հարկին, եւ հանաւ ակն նորայ: Որ գնացեալ շարժեաց զամենայն Հոսմայեցիս՝ շրջեցուցանելով ի ցուցս ամենայն մարդկան զակըն հանեալ, որպէս Բենիամին զկին իսրաէլայցին, զոր արարեալ երկոտասան մասունս, եւ այրն, շրջեցուց ընդ ամենայն Իսրայէլ: Որ եւ եկեալ առին նախ զԱնտիոք զօրութեամբ
414ա գեղարդեանն Քրիստոսի, զոր եցուց Աստուած: Առին եւ զայլ ծովեզե|| եզերայք զբաղաքս: Առին եւ սուրբ քաղաքըն Երուսաղէմ եւ օծին թագայորն զԳաւրնդոֆրի⁷³, որ վասն առափել խոնարութեան ասէր. «Ոչ եմ արժանի այսըմ պա-

⁶⁵ Արտուք իբն-Աքսաբ. Քուրքմեն զորավար, Երուսաղէմի կառավարիչ (1086-ից մինչեւ 1090-ական թթ.), Արտուքյան հարստութեան հիմնադիրը:

⁶⁶ Զեռագրում կործեալ:

⁶⁷ Զեռագրում ձգեաց:

⁶⁸ Ալեքսիոս I Կոմնենոս. Բյուզանդական կայսր (1081–1118 թթ.):

⁶⁹ Զեռագրում ի:

⁷⁰ Զեռագրում այտնի:

⁷¹ Այս դրվագում հեղինակն, ըստ երեւոյթին, օգտվել է Միքայել Ասորու ժամանակագրութեան հայերեն թարգմանութիւնից. հմմտ. Միխայէլ Ասորի, ժամանակագրութիւն 1870, էջ 409:

⁷² Զեռագրում՝ զդաշնայական. ուղղել ենք ըստ՝ Միխայէլ Ասորի, ժամանակագրութիւն 1870, էջ 409:

⁷³ Գոդֆրուա Բուլոյնացի. Երուսաղէմի խաչակրաց պետութեան հիմնադիր (1099–1100 թթ.):

տուոյ⁷⁴, բայց թէ կապանօք տանիցեք ծառայ Սուրբ Գերեզմանին»⁷⁵: Որոյ եղեալ շվան ի պարանոցն, եւ կապեալ ձեռօք, տանէին հիւայցումն տեսողաց: Նմանեալ սայ Մօվսէսի, որ ասէր. «Ձայլ ոք զօրաւոր⁷⁶ ծառայ առաքեայ»⁷⁷, որպէս նրեմիայ ասէր. «Տէր, մանուկ եմ ես»⁷⁸:

Ի ժամանակս Գագիկ⁷⁹ թագայոր Հայոց ինդրեցին կաթողիկոս Հայոց, ոչ գտաւ ազգէ: Ասէ թագաւորն⁸⁰. «Ի տօնի Յատնոութեան օրհնել ջրոյն զխաչըն ի թիկանոյ կուսէ ետս ուղեմ, եւ որոյ առաջ եկեալ՝ առցէ, նայ է վիճայկանաւս այս»: Ա՛ռ կաթողիկոսութիւն եկեղեցպանն Կաթողիկէյին⁸¹, այն որ Սարգիս⁸² անուն, այր հեզ եւ առաջքինին: Եւ ապայ ճանձրացաւ ի ծփանաց⁸³ աշխարիս, ընտրեն զտէր Պետրոս⁸⁴ ազատ ազգէ, երեւելի շնորհօք եւ 414բ հասակաւ: Որ եւ ի գնալի թագայորն Գագկայ⁸⁵ առ թագայորն Յունաց ի հնայգանդութիւն, առաքէ զտէր Պետրոսն գիր զկնի վասն յԱնոյ: Որ ի յայտնել⁸⁶ գրոյն՝ զգենու զտէր Պետրոս, եւ ձեռնայդրի խաչիկ⁸⁷, որ է քվեր որդի նորայ: Թագայորն Գագիկ, բարեսէր եւ ողորմած, ինքըն եւ թագուհին իւր բազում գրեանս ոսկէզարդս թողին եկեղեցին յիշայտակ իւրեանց: Եւ դուստր

⁷⁴ Ձեռագրում՝ պատոյ:

⁷⁵ «Մառայ Սուրբ Գերեզմանին» բառերը Գողֆրուա Բուլոյնացու Advocatus Sancti Sepulchri (Սուրբ Գերեզմանի պաշտպան) պաշտոնական տիտղոսի համարժեքն են:

⁷⁶ Ձեռագրում՝ զօրայոր:

⁷⁷ Ելից, Գ, 13:

⁷⁸ Երեմիա, Ա, 6:

⁷⁹ Գագիկ Ա. Հայոց թագավոր (990–1020 թթ.):

⁸⁰ Ձեռագրում՝ թագն:

⁸¹ Անիի Կաթողիկէ եկեղեցին:

⁸² Սարգիս Ա Սեւանցի. Հայոց կաթողիկոս (992-1019 թթ.):

⁸³ Ձեռագրում՝ ծպանց:

⁸⁴ Պետրոս Ա Գետադարձ. Հայոց կաթողիկոս (1019-1058 թթ.):

⁸⁵ Ձեռագրում՝ գագայ: Խոսքը վերաբերում է Կարսի թագավոր Գագիկ Աբասյանին (1029-1065 թթ., մահ. 1169 թ. կամ 1181 թ.):

⁸⁶ Ձեռագրում՝ յատնել:

⁸⁷ խաչիկ Բ Անեցի. Հայոց աթոռակից կաթողիկոս (1049-1058 թթ.), Հայոց կաթողիկոս (1058-1065 թթ.):

նորայ Մարեմ թագուհի⁸⁸ կոյսըն՝ ի գարդուց իւրոց շինեալ երկու խաչս ձուլայծուս մարգարտազարդս, որ կայ մինն ի Սեվ լեառն: Եւ զԳագիկ դեղոյ մահ արարին ազգըն Յունաց: Որ եւ տէր Պետրոս առեալ զքօղ գլխուն տեր հաչկա, եզ ի գլուխ իւր՝ ասելով. «Որչափ հայրն կենդանի է, որդին մեռած է»:

Որ եւ ապայ երեւեցաւ ճրագն ճշմարտութեան տէր Վահրամ⁸⁹ եւ որդի Մագիստրոսի⁹⁰, որ կոչեցաւ⁹¹ տէր Գրիգորիոսի Վկայայսէր⁹², ազգէն սրբուն Գրիգորի⁹³, զարդարեալ հոգոյ եւ մարմնոյ բարեձեւութեամբ: Գիտէր եւ գիրս 415ա յունարէն, զի յուսումնայլ կից էր թագայորին Հոսոմոց Ալեքսին⁹⁴: Թողու զտէր Բարսեղ⁹⁵ ազգային իւր աթոռապահ, որ եւ գնացեալ ի Կոստանդինուպօլիս, արար բազում գրեանց թարգմանութիւնս եւ ճառից: Որ եւ ընթեռնուր եւ վարդապետէր եւ մեկնէր ի լեզուս նոցայ զՍուրբ Գիրս, ընդ որ հիանային ընդ պարծանք մերոյ ազգիս: Որ եւ բազում մեծայմեծ պարգեւօք դառնա աշխարհն իւր, որում ասէր թագայորն. «Աթոռս իմ բավայկան է ինձ եւ քեզ, մի՛ գնար ի մէնջ»⁹⁶: Զի ոչ եկաց, ետուն մասունս նշխարաց սրբոց եւ մասն ի խաչայփայտէն, խաչս ոսկիայկուռս եւ բազում պարգեւս ի թագայորէն: Եւ դիմեալ երթար յԵրուսաղէմ, եւ հողմուն հանեալ ի Եգիպտոս: Որ եւ հրաշք գործեցաւ ի նմայ, որպէս ի մտանելն Քրիստոսի ոչ էր սովորութիւն, եկն անձրեւ երկիրն այն, եւ զի նեղոս գետն ծօփանայ եւ լնու զպէտս անձրելի: Իսկ թագայորն եւ խալիֆան 415բ շինեն յնմայ եկեղեցի եւ կաթողիկոսարան, տվեալ զհիւզս եւ գաւառս, զի կարասցեն հաստատել զայն ի Եգիպտոս: Որ եւ ձեռնագրէ զտէր Գրիգորիոս⁹⁷

⁸⁸ Մարիամը Կարսի թագավոր Գագիկ Աբասյանի (1029-1065 թթ.) դուստրն էր:

⁸⁹ Հայոց Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի աշխարհական անունը:

⁹⁰ Գրիգոր Մագիստրոս. Բջնիի տեր, Մեսոպոտամիայի դուքս, մատենագիր, գիտնական (մահ. 1058 թ.):

⁹¹ Ձեռագրում՝ գոչեցավ:

⁹² Գրիգոր Բ Վկայասեր. Հայոց կաթողիկոս (1066-1105 թթ.):

⁹³ Գրիգոր Ա Լուսավորիչ. Հայոց կաթողիկոս (մահ. 325 թ.):

⁹⁴ Տե՛ս ծանոթ. 68:

⁹⁵ Բարսեղ Ա Անեցի. Հայոց աթոռակից կաթողիկոս (1081-1105 թթ.), Հայոց կաթողիկոս (1105-1113 թ.):

⁹⁶ Ձեռագրում՝ մէջ:

⁹⁷ Գրիգոր եպիսկոպոս. քեռորդի Գրիգոր Բ Վկայասեր կաթողիկոսի, առաջնորդ Եգիպտոսի հայոց, ձեռնագրված 1074 թ. Տե՛ս Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, էջ 555:

որդի քվերն իւրոյ եւ թողու եգիպտոս:

Առեալ անտի բազում նշխարս սրբոց եւ պարգեւս մեծայմեծս, կտաւս, իւզս եւ խունկս եգիպտոսէ, եւ գայ աթոռն իւր՝ առ մեծ ըսպարայպետրն Հայոց Գող Վասիլն⁹⁸, որ տիրեալ էր Քեսոնի, Պէսնոյ, ունէ զՄարաշ, զԻսպրն, զՓարման⁹⁹, զՀոսովկայն, եւ զքաղաքն Հասան Մանսուր, եւ զԿառկառ, եւ այլ բազում բերթս եւ ամրոցս, որ զառաջինն գողութեամբ եւ ետոյ պատերազմաւ. որ էր զարդարեալ ամենայն առայքինութեամբ: Եւ կաթուղիկոսարան շինեցին ի դուռն Քեսնոյ, զԿարմիր վանքն: Եւ ի ժամանակս սորայ անհոգութեան կային ազգըն Հայոց, եւ տունն յԱրեւելից՝ իշխանքն եւ զօրօք առ նայ ժողովեցան: Եւ միշտ բաշխէր ողորմութիւն աղքատաց, եւ զգենոյր ծիրանիս եւ դնէր զգլուխ իւր զթագայորայկան իրս՝ իբրեւ զոպայն կարմիր: Թագայորք 416ա քրիստոնէից երկու իրօք բերեն զօր||ինակ Քրիստոսի՝ զի պատերազմ անձամբ մտանեն, եւ ի տուն հարսին խոնարհութեամբ մտանեն երթան¹⁰⁰, զոր ոչ առնեն այլազգիք:

Իսկ տէր Վարհամ եւ զմանուկն Գրիգորիոս¹⁰¹, զորդի Ապիրատին եղբօրորդոյ¹⁰² իւր յանձնեալ¹⁰³ տէր Բարսեղի ուսումն դպրութեան, զի ետ մահուն իւրոյ նստուցէ աթոռն: Եւ վաղճանեալ տէր Վահրամ, թաղի ի Կարմիր վանքն: Ի թիվն Հայոց ՌԿԱ (1212)¹⁰⁴ վաղճանի եւ Գող Վասիլն, որում կատարեն ոչ¹⁰⁵ քառասունք: Եւ ետ վաղճանելոյն տէր Վահրամ միայպետեաց տէր Բարսեղ: Որ եւ ի շինելն ապարանս ի թեմս Պէսնու, անկեալ ի վերայ նորայ փայտ, մեռանի եւ թաղի ի Շուղրն: Որ եւ մեծահանդէս ժողով, որում էին վարդապետքն անվանի Սոսթենէս¹⁰⁶,

⁹⁸ Գող Վասիլ. Քեսունի եւ Ռապանի հայ իշխան (1082–1112 թթ.):

⁹⁹ Փարզման. բերդաքաղաք մերձեփրատյան երկրամասում:

¹⁰⁰ Ձեռագրում՝ երգան:

¹⁰¹ Ձեռագրում՝ Գրիգորիգիոս: Խոսքը վերաբերում է Գրիգոր Գ Պահլավունի Հայոց կաթողիկոսին (1113–1166 թթ.):

¹⁰² Մովսէ-Տլուքի իշխան Ապիրատը (մահ. շուրջ 1110 թ.) Գրիգոր Գ եւ Ներսես Դ կաթողիկոսների հայրը, ոչ թե Գրիգոր (Վահրամ) Վկայասերի եղբոր, այլ քրոջ որդին էր:

¹⁰³ Ձեռագրում՝ անձնել:

¹⁰⁴ Պետք է ուղղել՝ ՇԿԱ (1112):

¹⁰⁵ Թերեւս ուղղելի է՝ օր:

¹⁰⁶ Սոսթենես. անհայտ վարդապետ, որի անունը բացակայում է Հ. Աճառյանի «Հայոց անձնանունների բառարանում»:

Կիրակոս¹⁰⁷, Մեղրիկ¹⁰⁸, յառաջ կոչեն¹⁰⁹ զԳրիգորիոս, սնուցանէր եկեղեցին, եւ նստուցանեն կաթուղիկոս: Որով բարձրանայր աթոռ սուրբ Լուսայորչին, զի էր այր գեղեցկայտեսիլ, գիտութեամբ լի եւ առաքինի, եւ եղեւ միահեծան իշխանութիւն նորայ:

Եւ ի մեռանիլ թագայորին Երուսաղէմի Պաղտինն¹¹⁰ եւ միուս Պաղտինն¹¹¹, 416ր որ է տէր Ուրհայու, նստուցանեն || աթոռն: Եւ նա կոչէ¹¹² Ճաւսիլն¹¹³, զմեծ կոմսն՝ զիւր ազգայինն, տայ զՈւրհա եւ զաշխարն Տլքոյ մինչեւ¹¹⁴ Անտիոք ի ձեռս նորայ՝ զՍամուսաթ զքաղաքն Մասրոյ¹¹⁵, զԿառկառ: Եւ էր Ճաւսիլն մեծայհասակ, երկայնայմուրս, ահագնայտեսիլ, որ եւ յաղթահարեալ տիրեաց բազում այլազգեաց: Որ եւ մեծ բռնայորն ամիրայն Մահմուտ¹¹⁶ անհուն զօրօք եկն ի վերայ Ուրհայու, եւ թագայորն Երուսաղէմի եւ Ճաւսիլն մտին յօգնել քաղաքին: Իսկ Մամտուտն¹¹⁷ սաստկացուցեալ պատերազմքն, հանեն զնշայնակն ի բիւրքն¹¹⁸ պատին: Իսկ քաչ զօրայվարն Ճաւսիլն, զգեցեալ զգրահն եւ եղեալ սաղայվարդ ղնէ ի գլուխն, ելանէ ընդ պարիսպն: Որոյ վերայ մեծայմեծ քարինս արկանէին իբր¹¹⁹ ի վերայ դարբնաց սալի: Զոր ոչինչ համարեալ, ելանէ եւ հեղու զարսն ընդ պարիսպն ի վայր, եւ թաբէ զքաղաքն: Զոր լվեալ թագայորն այլազգեաց, առնէր ամենայն ժամ զբաժակ՝ ի

¹⁰⁷ Կիրակոս. Դրազարկի վանքի միաբան եւ կանոնագիր (մահ. 1127 թ.):

¹⁰⁸ Գեորգ Մեղրիկ. Դրազարկի վանքի հիմնադիրը կամ վերանորոգիչը (մահ. 1113 թ.):

¹⁰⁹ Ձեռագրում՝ գոչեն:

¹¹⁰ Բալդուին I Բուլոյնացի. Եդեսիայի կոմս (1098–1100 թթ.), Երուսաղեմի թագավոր (1100–1118 թթ.):

¹¹¹ Բալդուին II Բուրգացի. Եդեսիայի կոմս (1100–1118 թթ.), Երուսաղեմի թագավոր (1118–1131 թթ.):

¹¹² Ձեռագրում՝ գոչէ:

¹¹³ Ժոսիլն I Կուրտենեցի. Եդեսիայի կոմս (1119–1131 թթ.):

¹¹⁴ Ձեռագրում՝ մինչեւ մինչեւ:

¹¹⁵ Հստ երեւոյթին՝ աղավաղված է:

¹¹⁶ Տե՛ս ծանոթ. 117:

¹¹⁷ Մավղուդ. Մոսուլի աթաբեկ (1109–1113 թթ.):

¹¹⁸ «Բիւրքն» բառը թերեւս պետք է ուղղել՝ «բուրգն»:

¹¹⁹ Ձեռագրում՝ իբիր:

Թորոս¹³¹. զԿիլիկիայ, զՍելեւկիայ հանդէպ նորայ, զԿարմիր լեառն Անայ-բարգա, զՄիսիս, զՀամտուն զԹիւն, զքարն Սարվանդոյ, զբերթն Կապնոյ, զՎահկայն եւ այլս բազումս: Եւ լայնեցին զկալվածս իւրեանց ի մէջ ազգաց երից, այսինքն՝ Հոռմոց, Ֆռանկաց, Թուրքաց: Որ ետ մահուն Թորոսի, անհուն զօրքն Պերփեռայժէն¹³² Թագայորն Յունաց եւ զամենայն աշխարն յԱրեւմտից ինքն գրավեաց, եկն ի վերայ երկրին Լէոնի: Եւ զի սակաւ էին զօրքն նորայ, ըմբռնեցաւ Լէոն եւ երկու որդիքն՝ Թորոս¹³³ եւ Ռուբէն¹³⁴: Եւ երկու՝ Մլեհն¹³⁵, Ստեֆանէ¹³⁶, զերծեալ զնացին առ կոմոսն¹³⁷: Եւ տարաւ զնոսայ
418ա Թագայորն՝ զԼէոն եւ զերկու որդիսն, եւ զպատկեր¹³⁸ Տիրամարն¹³⁹, որ նոցայ էր հայրենիք:

Իսկ Լէոն որդովքն Աստուած ապաւինելով, ամենան ժամ աղօթս կալով: Որ եւ որդի նորայ Թորոս տեսիլս տեսանէր ըստ Եսայեայ՝ նստէալ զՏէր յաթոռ, եւ սեղան ամենալի¹⁴⁰ առաջի: Եւ առաքեցաւ մի ի հրեղէն զօրացն եւ ետ նմայ հաց մի մաքուր եւ ձուկն ի վերայ, եւ ասէ. «Ձգուշ լեր սեփայկան հաւայտդ, զոր ունիս ըստ դավանութեան խօստովանօղին Քրիստոսի սուրբ Լուսայորչին եւ զավայկաց նորին, եւ մի՛ լսեր աղանդաորացդ», զի նեղէր զթագայորն Հոռմոց, զի որ տեսերն Յիսուս Քրիստոսէ, որ խաչեցաւ¹⁴¹ եւ այլն: Եւ յարուցեալ պատմէ հօրն, եւ նայ մեկնէ. «Ձհացն ցամաքին բարիքն, ասէ, եւ ձուկն ի ձովն՝ տիեզեր աշխարն է մեր: Եւ բազում իշխանք ընդ հովանեաւքո հանգչին, եւ լե՛ր ինձ յիշայտակ բարի, զի ես մեռանիմ եւ ոչ հասանիմ

¹³¹ Թորոս Ա. Կիլիկիո իշխան (1100–1129 թթ.):

¹³² Հովհաննէս II Կոմնենոս Միրանաժին (Պերփեռայժէն). Բյուզանդական կայսր (1118–1143 թթ.):

¹³³ Թորոս Բ. Կիլիկիո իշխան (1145–1168 թթ.):

¹³⁴ Ռուբեն. Կիլիկիո իշխան Լեոն Ա-ի որդին (մահ. 1142 թ.):

¹³⁵ Մլեհ. Կիլիկիո իշխան (1169–1175 թթ.):

¹³⁶ Ստեփանէ. Կիլիկիո իշխան Լեոն Ա-ի որդին (մահ. 1162 թ.):

¹³⁷ Հեղինակը նկատի ունի Եդեսիայի կոմս Ժուլին II-ին (1131–1150 թթ.):

¹³⁸ Ձեռագրում՝ զպատկեր:

¹³⁹ Ձեռագրում՝ տիամուրն:

¹⁴⁰ Ձեռագրում՝ ամենայլի:

¹⁴¹ Ձեռագրում՝ խաչեցացաւ:

այն»։ Եւ կային անդ աղօթելով միշտ առ Աստուած։ Եւ դարձեալ թագայորն
 418բ Պերփեռայժէն գա Անտիոք, եւ ձգեալ նետս սրոյ, եւ եղե՝¹⁴² || սլաքէ նետին
 խոցեալ ձեռն, մեռանի։

Եւ Թորոս որդի Լէոնի գերծեալ գայ երկիրն իւր, եւ գտեալ մտերիմ ծա-
 ռայիցն իւր, յարեցաւ ի նոսայ, գողացաւ բերթ մի եւ այլս բազումս, եւ տի-
 րեաց ամենայն երկիրն իւր եւ այլոց բազմաց։ Որ լի էր ամենայն յիմաստու-
 թեամբ եւ գրոց ընթերցասէր, որ եւ երգէր երգս եղանակաորս։ Տեղակ էր եւ
 եկեղեցականաց զկրօնս, եւ պատմէր զաստուածային սրբոցն ամենայն տօնս,
 ժողովք ամենայն վանայկանաց, վարդապեաց, եպիսկոպոսաց, կրօնայորաց։

Այսրմ ժամանակի փայլէին երկու լուսայորիչքն՝ տէր Գրիգորիոս կա-
 թողիկոսն եւ զեղբայրն նորին զՆերսէս։ Պատմեալք Աստուծոյ՝ արար
 ածեալ համբան¹⁴³ մինչ ի Հոսմ, ի Կոստանդինուպօլիս։ Այնրմ ժամանա-
 կին պապըն Հոսմայ¹⁴⁴ առաքեալ լիկաթն¹⁴⁵ իւր գիտնայկան՝ գալ տեսա-
 նել զՅրուսաղէմ եւ զԱնտիոք, յիմանալ վասն ազգիս Հայոց, զի ոչ էր տե-
 ղակ։ Ընդ որ գնայր՝ բաժանէր զՀայ եւ զՖոսանգ խնամութեամբ կնքաոր-
 ութեամբ սիրելիս լեալս։ Եւ ապայ տեղեկայցեալ կաթողիկոսն եւ եղբայր
 419ա նորին, սրբութեան || ազգիս յուժ հազան լինէր, եւ գովէր զազգս¹⁴⁶ մեր եւ
 զքհանայնութիւն քան զիրեանց, եւ ցանկայր եւ տեսանել եւ լսել զխօս-
 տօվանութիւն դավանութեան Հայոց։ Իսկ կոմոսն¹⁴⁷, զի ունէր սէր ընդ
 Հայրս, ազդեաց հայրայպետին։ Եւ անարգէր¹⁴⁸ զդավանութիւն հավայ-
 տոյս մեր, խօստօվանութեամբ ամենայն Աստուածայշունչ գրոց եւ յի-
 մաստայսիրաց բանից, եւ առեալ գայր ի ժողովն¹⁴⁹ Հոսմայեցոց գիտնա-

¹⁴² Թերեւս ուղղելի է՝ ետ (հետո՝ իմաստով)։

¹⁴³ Ձեռագրում՝ համբան։

¹⁴⁴ Խոսքը վերաբերում է Հոսմի պապ Իննտկենտիոս II-ին (1130–1143 թթ.)։

¹⁴⁵ Պապական այդ նվիրակը Ալբերիկ Օստիացին էր, որի այցելությունն Արեւելք տե-
 ղի է ունեցել 1040–1041 թթ.։

¹⁴⁶ Ձեռագրում՝ զազս։

¹⁴⁷ Ամենայն հավանականությամբ, հեղինակը նկատի ունի Եղեսիայի կոմս Ժոսլին
 II-ին (1131–1150 թթ.), որն իրոք հայերի բարեկամն էր եւ ինքն էլ կիսահայ։

¹⁴⁸ Թերեւս ուղղելի է՝ նա կարգէր։

¹⁴⁹ Ձեռագրում՝ «ի ժողովն» բառերից առաջ «ի ժովորդ»՝ հանման նշանով։

կանացն¹⁵⁰, որում ելեալ ընդ առաջ՝ բերին պատվով: Իսկ լիկաթն ուրայխնար ընդ տեսն հրաշալի, ի լսել զբան հայվատոյ թղթին՝ փոխէր հոսմայեցի գիրս, եւ եղեւ յուժ հաւանայկան եւ միյայորութիւն մեծ սիրոյ:

Եւ ապայ հրայվիրեցին զհայրայպետն տանել Երուսաղէմ, որ եւ գնաց բազում եպիսկոպոսօք, վարդայպետօք, կրօնայորուք¹⁵¹: Եւ լիկաթն յառաջէր եւ հանէր զամենայն քաղաքն ի պատիւ նմայ: Եւ կոմոսն, իւր հայոց բազում զօրօք, ելանէր ընդ դէմ, բրինձ Անտիոքու¹⁵², զօրք անթվելի բոկ եւ 419բ հետիոտս, ընթանալով առաջի նորայ: || Եւ մտեալ ի քաղաքն, նստուցին աթոռ սրբոյն Պետրոսի առաքելոյն: Եւ ամենայն քաղաքացն պատվեալ, մինչի հասին Երուսաղէմ, որոց թագայորն¹⁵³ եւ կոմոսունքն ելին ընդ դէմ նորայ, թագուհիք եւ որդիք, ոստովք ծառոց որպէս Փրկչին: Եւ տարան ի տաճարն, նստուցին աթոռ բարձրագոյն, եւ լսէին զաստուածայիսօս վարդապետութիւն նորայ, եւ տեսանել աստուածայտիպ պատկեր նորայ: Եւ միում ավուր կամեցաւ գնալ ի Գերեզմանն, եւ ամենայն լերունս եկեղեցւոցն տարան մեծ փառօք, մոմիւք լուցելովք, խնկովք: Եւ բազում գանձս արար ողորմութեան: Որ եւ գայր թագայորն Երուսաղէմի ընդ աղքատսն՝ առնուլ ընդ նոսայ անգամ անգամ ողորմութիւն, եւ զայլս դնէ ի գանձունց իւրոց՝ աստուածային պարգեւ համայրելով զայն: Լսէին ազգն Ֆռանկանց վարդապետութեան նորայս լուսայոր բանիցն՝ զձայն լեզվին ոչ էին տեղակ, բայց զշարժել շրթանց եւ զքաղցր բառբառն ախորժէին տեսանել եւ լսել: Եւ ընթերցեալ զբանն հավատոյ՝ նայ առավել հաստատեցան ի սէր միայբանութեան: Եւ լիկաթն քարոզէր 420ա ազգին իւրոյ, եւ փառ||այորէր առաջի թագայորին եւ մեծայմեծաց: Եւ ի վառել լուսյն ի վերայ Գերեզմանինն, զվարճանայր հայրայպետն սուրբ: Եւ բռնա-

¹⁵⁰ Եկեղեցական այդ ժողովը գումարվել է Անտիոքում 1040 թվականին: Անտիոքի ժողովի մասին տես՝ Օրմանյան, Ազգապատում, § 939; Mayer, *Varia Antiochena*, S. 19–30.

¹⁵¹ Գրիգոր Գ կաթողիկոսը Երուսաղէմ էր այցելել՝ 1141 թվականին տեղի ունեցած մի այլ եկեղեցական ժողովի մասնակցելու նպատակով: Երուսաղէմի ժողովի մասին տես՝ Օրմանյան, Ազգապատում, § 940; Prawer, *The Armenians*, p. 227–228; Dédéyan, *Les Arméniens*, p. 801–802; Mutafian, *Recherches*, p. 53–54; Mutafian, *Prélats*, p. 127–129.

¹⁵² Այդ ժամանակ Անտիոքի պրինցը Ռայմոնդ Պուատիեցին էր (1136–1149 թթ.):

¹⁵³ Նկատի ունի Երուսաղէմի թագավոր Տուկ Անժուացուն (1131–1143 թթ.):

դատեալ արգելին զնայ մինչեւ ի Համբարձումն, եւ դարձուց զնայ կոմոսն՝ փառայորեալ ամենեցուն:

Իսկ Քորոսի¹⁵⁴ առեալ զՄիսիս, գայր ի վերայ նորայ Անդրոնիկէ¹⁵⁵ թագայորազն բազում զօրօք: Եւ Քորոս էր ի քաղաքն Ն (400) արամք, եւ ելեալ ի պարիսպն, խօսէր խոնարհութեամբ՝ տալ քաղաքն: Եւ նայ ոչ յանձն¹⁵⁶ սիրով առնուլ՝ այլ ըսպառմամբ: Իսկ նայ յաղօթս եւ Աստուած ապավինեալ՝ ծեր մի հրաշայտես երեւեալ, ասէ. «Քոն¹⁵⁷ է յաղթութիւն, բայց կարէ ի վերայ երայխայիս մեռանիս»: Ուստի եւ նայ լացեալ, ասէ. «Ձինչ ափսոս է յաղթեին, որժամ մեռանիմ»: Եւ ապայ նիրհեալ՝ նոյն ծերն երեւեալ, ասէ. «Երկայնեայ զօրշակ զրահի քո, զոր ծածկէ զոտս քո, եւ ոչ մեռանիս»: Եւ ի ծագել լուսոյ առաւօտին, ելեալ զօրքն իւր, վառեալ սուրբ նշանօք, ճակատէին զօրօքն: Եւ թագայորազն Անդրոնիկէ եւ Քորոս պատահեալ միմիանց, եհար Անդրոնիկէ զտեղին, ուր երկայն ելեր զզրահն, եւ ոչ վնասեցաւ: Եւ ոմն զօրացն Քորոսի հարեալ զնայ ընկէց, եւ յաղթեալ կոտորեցին ընդ զօրս նորայ: ||

420ր Եւ բազումք գետայտոյզ եղեն, եւ մեռան իբրեւ ԴՌՄԱ (4201): Ըմբռնեցին եւ զմեծ իշխան Հայոց զԱւշինն¹⁵⁸, զտէրըն Լամբրունի, որ էր ընդ Անդրոնիկէին, ի Ֆռանկաց զՀայոց զօրս ընդ իւր ունէր: Որոց առին բազում գանձս ոսկոյ եւ արծաթոյ, այլեւ զհանդեց Աստուածայծնի, եւ մասն ինչ ի խանձարոյն Քրիստոսի, եւ մասն մեծայգուն խաչէն Քրիստոսի, եւ այլ խաչս ոսկեղէնս եւ արծաթեղէնս, բազում հանդերցս, եւ զարդս թագայորայկանս եւ դաստառակս՝ փոխանակ պատկերի Աստուածածնի, որ առան նոքայ ի Հայոց:

Իսկ Ճուլսինն¹⁵⁹, կոմոսն Ուրհայու, Սրճո տէրն էր: Յաղթէր ամենայն կողմանց, եւ որ տայր զանձն հեշտութեանց, նեղեալ լինէր ամենայնէ, ոչ կարէին վաստակել կերայկուր, դարձուց Տէր զօգնութիւն իւրոյ նորայ: Որ եւ Հոսմայեցիք զՀայք ժողեալ՝ մուծանէին հացիքն ի քաղաք, որոյ վերոյ հասեալ

¹⁵⁴ Քորոս Բ. Կիլիկիո իշխան (1145–1168 թթ.):

¹⁵⁵ Անդրոնիկոս Կոմնենոս. Կիլիկիայի Բյուզանդական դուքս (1152/3, 1166/7 թթ.), Բյուզանդական կայսր (1183–1185 թթ.):

¹⁵⁶ Ձեռագրում՝ անձն:

¹⁵⁷ Ձեռագրում՝ քն:

¹⁵⁸ Օշին Բ. Լամբրունի իշխան (1143–1170 թթ.):

¹⁵⁹ Ժուլին II. Եղեսիայի կոմս (1131–1150 թթ.):

Տուրմրտաշն¹⁶⁰, գտէրն Մերտինայ, կոտորեաց եւ ոչ մուծին զհացիքն ի քաղաքն: Ընդ այն ժամանակս Զանգի¹⁶¹ ամիրայն ի Մազսայ¹⁶² գա, ուր բազում զօրօք պաշարէ: Իսկ բնայկիչք վստահացեալ էին ի բանս Տեառն, զոր գրեաց առ Աբգար¹⁶³, թէ՛ «Քաղաք քո օրհնեալ եղից, եւ ոչ մտցէ ի նայ թշնամի»: Եւ գործէին բազում չարիս, եւ ոչ զիտէին զիրսն նինվէին, զոր առաքեաց Աստուած զՅունայն¹⁶⁴, զի թէ ապաշխարեսցին՝ եւ ապրեսցին¹⁶⁵: ||

421ա ...Այլ կանայք նախարարացն¹⁶⁶ եւ հեծելայգօրուն: Կացեալ աւուրս ինչ, կերակրեալ լինէր աղօթիք, եւ փոխեցեալ եղեւ երանելիս անանց ի կեանս, եւ թաղեցաւ ի Դրայգարկն¹⁶⁷: Իսկ իշխանք ոչ ետուն ի տեղի Մելեհին, այլ նստուցին զորդի քեռն իւրոյ Թումաս¹⁶⁸ տղայ մանուկ, զի անվամբ նորայ ընկալցի ինքեան զիշխանութիւն¹⁶⁹: Կորուսին եւ իշխանաց, որ զհակառակ կարծէին: Եւ այլ երկու որդիք գլխուբէն¹⁷⁰ ավագ որդին Ստեֆանէի՝ յՌոբէն եւ Լէոն¹⁷¹, եւ այլ առաջի յՌոբէն¹⁷², որ կորուսին, ոչ էր ի մօրէ նոցայ: Զբազմաց աչս հանին զքաչ սպառայդինեացն. եւ այլք փախեան: Ի ընդ Մլեհն գնացեալ առ Նորըտին¹⁷³, մեծարէ յուժ, եւ առեալ զօր բազումս, եկեալ ավերէր զերկիրն: Գերէին զայլազգիգքն, եւ առնէր զայս բազում անգամ, մինչ առնոյր զերկրաւօգնել Նորտնին: Բայց սահման վանօրայսն հաստատուն պահեաց, եւ խղճիւ

¹⁶⁰ Տիմուրտաշ. Մարդինի ճյուղի Արտուքյան էմիր (1122–1152 թթ.):

¹⁶¹ Զանգի Իմադեղդին. Մոսուլի կառավարիչ եւ աթաբեկ (1127–1146 թթ.):

¹⁶² Ուզղելի՝ Մաւսլայ/Մօսլայ = Մոսուլ քաղաք:

¹⁶³ Աբգար V Ուքամա. Օսրոյենեի (Եդեսիայի) թագավոր (մ. թ. ա. 4 – մ. թ. 7, 15–50 թթ.):

¹⁶⁴ Յովնան. Աստվածաշնչական մարգարե. հմմտ. Յովնան Ա, 2:

¹⁶⁵ Այս բառից հետո, ըստ երեւույթին, ձեռագրից թերթ է ընկել:

¹⁶⁶ Զեռագրում նախարարացն:

¹⁶⁷ Խոսքը վերաբերում է Կիլիկիո իշխան Թորոս Բ-ի մահվանն ու հուղարկավորությանը:

¹⁶⁸ Թումաս. Կիլիկիո իշխան Ռուբեն Բ-ի (1168–1169 թթ.) խնամակալը:

¹⁶⁹ Զեռագրում՝ զիշխանու:

¹⁷⁰ Ռուբեն Գ. Կիլիկիո իշխան (1175–1187 թթ.):

¹⁷¹ Լեոն Բ (I). Կիլիկիո իշխան (1187–1198 թթ.), Հայոց թագավոր (1198–1219 թթ.):

¹⁷² Ռուբեն Բ. Կիլիկիո իշխան (1168–1169 թթ.), Թորոս Բ-ի որդին:

¹⁷³ Նուրեդդին իբն-Զանգի. Սիրիայի էմիր (1146–1174 թթ.):

դատէր վասն գերելոցն: Եւ եղեւ հիվանդանանայ, կոչել¹⁷⁴ զեպիսկոպոսունս եւ զկրօնայորսն, աղաչէր զի երաշխաւորել եւ խնդրել Աստուծոյ, զի ապաշխարեսցի: Որոց լվեալ Աստուած՝ ետ ժամանակ որպէս Եզեկիայի: Եւ առաքէ 421բ գանձս || Բազումս եւ գնէ զգերեալսն ի Բերիայ¹⁷⁵: Կազմէր եւ վրան խորեեայ¹⁷⁶, եւ սեղան մարմարեայ՝ կազմեալ ոսկով մարգարտով, եւ խաշս ձոյլ ոսկի. եւ Ավետարան ոսկէտուփ, եւ սպասաւոր¹⁷⁷ քհննայս՝ զի շրջել վրանականին, զի անխաբան լիցի սուրբ պատարագն:

Այլ տէր Ներսէս կաթուղիկոս իբրեւ զգետ առատայբուխ էր լուսայոր վարդապետութեամբն, որոով կերակրէր զհոգիս հավայտացելոցն: Երգէր երգս զեղանայկաորս, եւ յօրինէր¹⁷⁸ բանս յիմաստականս ի Յունաց, Հոռոմայեցոց եւ Ասորոց: Յօրինեալ¹⁷⁹ խառնէր քաղցրաձայնութիւն, որով վարժէին մտառու մանկունքն: Քրեաց եւ գիրս խօստովանութեան հաւատոյ, զոր լվեալ թագայորն Յունաց Մանիլ¹⁸⁰ եւ պատրիարգն¹⁸¹ եւ եպիսկոպոսքն, ցանկաին տեսանել զնայ: Ջի ոչ էր հնար՝ առաքեցին սոփեստեսն մի, տեղակ հին եւ նոր կտայկարանաց, աթինայցոց յիմաստութիւն՝ գալ խօսել վասն միայբանութեան ազգացս: Որ եկեալ տրայմաբանէին, եւ քաղցր բանիւ ի հավանածէր զիմաստասէրն ամենայն իրս: Որ եւ հաճեալ հավանի, առեալ գիր ի նմանէ, դառնայր առ թագայորն, եւ զարմացմամբ գօվէր առաջի թագայորն: Եւ ընթերցեալ զգրեալսն նորայ, զվարճանան: Եւ թագայորն || այնքան բորբոքի ի սէր նորայ՝ զինք¹⁸² խորհէ եւ գալ տեսանել զնայ: Եւ առաքէ կրկին զնոյն սոփեստն՝ խնդէլ զմիայբանութիւն: Որ եւ հաստատէր զկապ սիրոյն եւ դառնայր, այլ ոչ ինչ խնդրել, զի եցուց զուղուղութիւն ամենայն կարգաց¹⁸³

174 **Ձեռագրում**՝ գոչել:

175 **Բերիա**. Հալեպ քաղաքի հին անունը:

176 **Ըստ** Երեւույթին՝ աղավաղված է. ուզղելի՝ խորգեայ (°):

177 **Ձեռագրում**՝ սպաոր:

178 **Ձեռագրում**՝ օրինէր:

179 **Ձեռագրում**՝ օրինեալ:

180 **Մանուել I Կոմնենոս**. Բյուզանդական կայսր (1143–1180 թթ.):

181 **Ղուկաս**. Կոստանդնուպոլսի պատրիարք (1156–1169 թթ.):

182 **Թերեւս** ուզղելի է՝ զի ինք:

183 **Ձեռագրում**՝ կարկաց:

մերոց, այլ գտնելն միայն: Իսկ սուրբ հայրայապետն փոխի առ Քրիստոս, եւ պատեն մաքուր գանձն աստուածային, սաղմոսիւք եւ օրհնութեամբ դնեն ի սուրբ գերեզման, որոց բազում նշանք լինին ամենայն խիտածէս ի փառս Աստուծոյ մերոյ: Եւ ոչ ել ի գլուխ՝ զի լուսայորիչն հոգոց փոխեցաւ, եւ բերանն ոսկի լուեաց՝ կալեալ կաթուղիկոսութիւն ամս եօթն¹⁸⁴:

Եւ բարեսէրն թագայորն¹⁸⁵ այսպէս խորհէր զմիայբանութիւն. նախ զայլազգիս հալածել, եւ ապա զեկեկեղեցիին միայբանել, եւ բազմերամ խոսով եղբայրսն հաշտեցուցանել եւ բառնալ զհակառակութիւն, որ ոչ աջողեցաւ խորհուրդն: Այլ ինքն ի պարտութիւն մատնեցաւ առաջի թշնամեաց, որ եւ ասաց թէ՛ «Ձոր ես ընդ քրիստոնեաս գործեցի, հատուց ինձ Աստուած»: Ձի ելանել Հոսմայեցոց զօրացն¹⁸⁶, որժամ ել թագայորն Ալամանց¹⁸⁷, խառնել տայր կիր յալիւրն¹⁸⁸, եւ առաջնորդէր ճանապար անջրդի եւ դեղել զջրհորսն, զր ընդ որ անցանէին: Եւ առաքեաց առ Մասուղն¹⁸⁹, || թագայորն այլազգեաց՝ «Առաքեցի քեզ զգօրս բազումավարս»: Որ եկեալ կոտորեաց եւ գերեաց անթիվս: Զնոյն եւ հայրն նորա ընդ պետին գործեաց: Եւ մնացեալ զօրքն եւ երկու թագայորքն¹⁹⁰ գնացին Երուսաղէմ եւ իջին ի Դամասկոս, եւ մերձ էին առնուլ: Նոյնպէս եւ նոցայ գործեցին նենգութիւն Երուսաղէմացիք եւ անտիօքացիք, մինչեւ բարկացեալ Աստուած՝ մատնեաց ի ձեռս թշնամեացն:

Ի վաղճանելն տէր ներսէս կաթուղիկոսին ոչ էր մերձ տէր Գրիգոր¹⁹¹ եղբորորդի նորայ, որ ի լսել զմահ նորայ, գայ առ մեծ իշխանն Մլեհն: Եւ Մլեհն բէրէր զնայ առ նորտնին, ի սահմանս Կլային, որ եկեալ էր զօրօք Անտիօք: Իսկ նորըտինն յուժ մեծարեաց զնայ, ընդ առաջ ընթացեալ մեծայմեծօք իւր, եւ

184 Զնաագրում էն:

185 Նկատի ունի Բյուզանդական կայսր Մանուել I-ին:

186 Խոսքը վերաբերում է երկրորդ խաչակրաց արշավանքին (1147–1149 թթ.):

187 «Թագայորն Ալամանց» բառերի տակ հեղինակը նկատի ունի Գերմանական կայսր Կոնրադ III-ին (1138–1152 թթ.):

188 Զնաագրում՝ ալոյիւրն:

189 Մասուղ Թուրքեղդին. Թումի Սելջուկյան սուլթան (1116–1156 թթ.):

190 Թագավորներից առաջինն, ինչպես արդեն նշեցինք (ծանոթ. 187), Գերմանական կայսր Կոնրադ III-ն էր, իսկ երկրորդը՝ Տրանսիայի թագավոր Կուրդուղիկոս VII-ը (1137–1180 թթ.):

191 Գրիգոր Դ Տղա. Հայոց կաթողիկոս (1173–1193 թթ.):

423բ վաթիսար ծառայիցն¹⁹⁷ ... || կուրանին: Աստ ըսկիսպն թագայորութիւն Մարաց¹⁹⁸,
անուն նորայ Յուսուֆ, որ ետոյ Սալհատին¹⁹⁹ կոչեցաւ²⁰⁰: Սա տիրեաց եգիպտոսի,
ըստ Յօսեփայ²⁰¹, մինչեւ ի սահմանս Հնդկաց: Առ եւ գԴամասկոս եւ²⁰²
Բերիայ՝ օգնել որդոյ Նորըտին: Անց ընդ եփրատ եւ տիրեաց Մի. այգետ, մինչեւ
ի դուռն Մավալայ եւ Մերտնայ: Առ եւ զարբոց քաղաքն Նբերկետ²⁰³ եւ գԱմիթ՝
զաղամանդետ ամրոցօք շինեալն, առ ի եժ-ան (15) ար: Ջոր բազում թագայորք
տունք արկին, եւ ի պտղոյն կերան, եւ ի հող խոցօվ մտան եւ ոչ առին: Սա առ եւ
ետ սիրելոյն իւրոյ կրտսեր Նորըտին²⁰⁴, որդոյ Խար²⁰⁵ Աալանին²⁰⁶: Ամենայն ուրեք
դիմէր՝ յաղթօղ լինէր: Եւ ժողովեաց զոսկի եւ զարծաթ իբր յարդ: Եւ բազում աշ-
խար զօրօք գայր ի վերայ Երուսաղէմի: Եւ առաջ քան զառնուլն՝ բաժանեաց
զնայ մեծայմեծաց իւրոց: Եւ զԵրուսաղէմ խոստացավ առաջնորդին իւրեանց,
զորոյ եգիպտոսէ էհան: Եւ անհուն զօրօք գնայ ի վերայ Երուսաղէմի, ընդ ին-
քեան զառաջնորդ իւրեանց կանամբք եւ որդօվք, տիրել Երուսաղէմի: Իսկ Երու-
սաղէմացիք ոչ երկմտեցին, այլ պնտեցին արիաբար: Թագայորն Երուսաղէմի²⁰⁷ եւ

¹⁹⁷ Այնուհետեւ մի քանի բառ՝ պատոված:

¹⁹⁸ Մարք. քրդերի հայկական անվանումը: Հեղինակն ակնարկում է Սալահեդդինի քրդական ծագումը:

¹⁹⁹ Սալահեդդին Յուսուֆ իբն-Ալուբ. եգիպտոսի եւ Սիրիայի սուլթան, Այուբյան հարստության հիմնադիր (1169–1193 թթ.):

²⁰⁰ Ձեռագրում՝ գոչեցաւ:

²⁰¹ Հովսեփ. Աստվածաշնչական կերպար, Հակոբի տասնմեկերորդ որդին, եգիպտոսի կառավարիչ:

²⁰² Ձեռագրում՝ ի:

²⁰³ Նփրկերտը «սրբոց քաղաք» կամ Մարտիրոպոլիս (նահատակների քաղաք) է կոչվել այն պատճառով, որ Մարութա Ասորին (IV-V դդ.) այդ քաղաքում է կուտակել Պարսկաստանի քրիստոնյա նահատակների նշխարները. տե՛ս Տեր-Պետրոսյան, Աբրահամ Խոստովանող, էջ 16–18:

²⁰⁴ Նուրեդդին Մուհամմեդ. Հիսն-Քեֆայի եւ Ամիդի ճյուղի Արտուքյան էմիր (1167–1185 թթ.):

²⁰⁵ Ձեռագրում՝ խաթ:

²⁰⁶ Կարա-Արսլան Ֆախրեդդին. Հիսն-Քեֆայի եւ Ամիդի ճյուղի Արտուքյան էմիր (1144–1167 թթ.):

²⁰⁷ Այդ ժամանակ Երուսաղեմի թագավորը Գի Լուսինյանն էր (1186–1192 թթ.):

Ստորագրումը մերժելով

215

Ստորագրումը մերժելով

214

(1146-1174 թթ.)

Կատարված են հետևյալ փոփոխությունները և ձևերը

213

Համաձայնությամբ ներդրված է հարկային բարեփոխություն

212

Ստորագրումը մերժելով

211

Ստորագրումը մերժելով

210

Ստորագրումը մերժելով

209

Ստորագրումը մերժելով

208

Ստորագրումը մերժելով

Ստորագրումը մերժելով

Ստորագրումը մերժելով

Կատարված են հետևյալ փոփոխությունները և ձևերը

Կատարված են հետևյալ փոփոխությունները և ձևերը

Կատարված են հետևյալ փոփոխությունները և ձևերը

Մասուն²¹⁶ տայր նմայ աղերս, բերթս եւ ավանս: Նունպէս եւ Սալահատին խոստանար նմայ, եւ նայ ոչ առնոյր ի նմանէ: Եւ էր յաղթող²¹⁷ ի վերայ շուրջակա քրիստոնէից եւ այլայսէոից:

Եւ ունէր ատելութիւն առ տէրն Անտիոքայ²¹⁸, եւ նախանծելով ընդ ճոխութիւն փառանց, եւ զի յաղթահարեալ²¹⁹ էր զնայ երկիցս եւ երիցս: Եւ եղև զի Սալահատինն գայր ի վերայ Անտիոքայ, իսկ բրինձն Անտիոքայ ժողովեալ զօրան Երուսաղէմի եւ զքրիստոնէիցն ծովեզերաւ տալ պատերազմաւ: Կոչեցին²²⁰ եւ զՌոբէն, որ գայր անմեղ մտօք, եւ պատվէր տայր իշխանանց եւ զօրաց՝ երեւելի զարդիւք պատրաստել: Եւ ինքն ոսկիակազմ զինուք, ձիօք եւ խորանօք եւ վրանօք մեծագնօք՝ ըստ օրինի թագորական պատշաճէր: Եւ զարդ սեղանոյ նորայ էին ոսկեղէն եւ արծաթեղէն, նույն եւ իշխանաց նորին: Եւ հասեալ բնակեցան ի դուռն Անտիոքայ, ի թագայորայկան ի պալատն, խրախու-
425ա թիւն արարեալ Հոսայեցոց զօրացն: || Պատրաստէր ճաշ թագայորական, եւ պատվէր ըզզօրան ամենայն: Եւ տալ պարգեվս իշխանացն, բաշխէր եւ գանձս եկեղեցացն, ընդ որ շարէին: Եւ զի նայ էր փառայոր՝ նախանծեալ ընդ փառայորութիւնս, առաքէ մեծ պատգամս Սալահատինն ի նայ յղէին, եւ նայ մեծաբանեալ ըսպառնայր Սալահատին:

Իսկ տէրն Անտիոքայ գաղտ խաղաղութիւն խօսէր ընդ Սալահատին: Եւ Սալահատին խորըրդակցօք իւրօք բանսարկէր զնայ առ տէրն Անտիոքայ. «Ընդէ՞ր թուլ տաս զօրանալոյ այնչափ, զի արհամարէ ըզքեզ: Ըմբռնէ՛ զնայ եւ ա՛ռ զաշխարհ նորայ: Տաց եւ ես²²¹ զքեզ գանձս բազում»: Զի սօվօր էր այսպիսի խորամանկութեամբ պառակտել ի միմիանց զքրիստոնէից գլխաւորսն, զոր շիմացին նորայ զիւրեանց կորուստն: Ըստ որում լվեալ բրինձին շարախօսութեան, կոչէ²²²

²¹⁶ Հեղինակն այստեղ սխալվում է. Կիլիկիո իշխան Ռուբեն Գ-ի օրոք (1175–1187 թթ.) Ռումի սելջուկյան սուլթանը ոչ թե Մասուդն էր (1116–1156 թթ.), այլ Իզզեդդին Քիլիշ-Արսլան II-ը (1156–1192 թթ.):

²¹⁷ Ձեռագրում՝ աղթող:

²¹⁸ Խոսքը վերաբերում է Անտիոքի պրինց Բոհեմունդ III Կակագին (1163–1201 թթ.):

²¹⁹ Ձեռագրում՝ աղթահարեալ:

²²⁰ Ձեռագրում՝ գոչեցին:

²²¹ Ձեռագրում՝ ե:

²²² Ձեռագրում՝ գոչէ:

զՌուբէնն²²³ ի ճաշ: Եւ որժամ ընդ գինի մտին, յայտնէ²²⁴ զխորհուրդն, ըմբռնեալ եդ ի բանտի, ստաւ պատճառ կատարելով: Եւ կողպտեցին զօրս նորայ, եւ ավար հարին զբանակն նորայ: Եւ պահեալ ի բանտի սօվօվ եւ ծարաւօվ, մինչեւ ետ զՄիսիս, զՀամտուն Քիլն, եւ զՍարուանդիքարն, եւ զսահմանս 425բ ամենայն որ ընդ գետն անցանէ ընդ կողմն Անտիոքայ, || եւ գանձագին անձին իւրոյ՝ ԽՌ (40000) դահեկանս: Եւ ետ բանդ զմայրն իւր, զտղայք եւ որդիս մեծամեծաց: Եւ թողեալ զՌուբէն, եւ եկն ի տուն իւր: Եւ կացեալ ամ մի, կորացեալ անձամբ եւ բեկեալ սրտիւ, ոչ կարէր հանդուրժել նախատանաց, որ այնպէս²²⁵ անկաւ ի ձեռս նոցայ, թափուր եղեւ ամենայնէ, հիվանդացաւ: Գրեալ առ կաթուղիկոսն տէր Գրիգոր զամենայն իրս հոգոյ եւ մարնոյ իւրոյ, վասն կենցաղայվարութեան իւրոյ, զահ եւ զերկիւղ մահուն եւ ելիցն աշխարէ՝ երկար եւ ողբական բանիք, եւ յանձն²²⁶ առնէ զինքն աղօթից կաթուղիկոսին: Եւ ամենայն եղեկեղեցուն կոչեալ²²⁷ զառաջնորդան եւ զհայր վանօրեիցն, եւ նոցա աղերսիւ յանձնէր²²⁸ զհոգի իւր, եւ ողբական բանի լացուցանէր զամենեսեան: Եւ զգեցուցին նմայ զկրօնայորական հանդերց, տարան ի Դրազարկն: Եւ եղբայր նորայ Լէոն պատառեաց զհանդերձն, մերկանայր եւ կտրէր զհերան, սգոյ հանդերցիւ երգար զհետ: Եւ մերձ եղեալ ի Դրազարկ, ավանդէր զհոգին, որ եւ անդ թաղեցաւ: Եւ եղբայրն Լէոն նստի յաթոն, այր իմաստուն²²⁹ վասն Երուսաղէմի առմանն մինչեւ²³⁰ հասին համբաւ²³¹

223 Զեռագրում՝ զոռէնն:

224 Զեռագրում՝ այտնէ:

225 Զեռագրում՝ այնպէ:

226 Զեռագրում՝ անձն:

227 Զեռագրում՝ գոչեալ:

228 Զեռագրում՝ անձնէր:

229 Այնուհետեւ մեկ-երկու բառ՝ անընթեռնելի:

230 Այնուհետեւ մի քանի բառ պատուած:

231 Վերջավորութիւնը պակաս է. ըստ երեւույթին՝ թերթեր են ընկել:

2. ՀԵԹՈՒՄ ՆՂԻՐՅՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բրիտանական Գրադարանի Or.5458-Arm.116 ձեռագրում, ընդօրինակված 1404/5 թվականին¹, պահպանվել է «Համառոտ պատմութիւն ժամանակաց» խորագիրը կրող, թեև փոքրածավալ, բայց չափազանց արժեքավոր մի աշխատություն (էջ 117բ-128ա), որն առայժմ չի արժանացել հետազոտողների ուշադրությանը²: Ձեռագրի համապատասխան թերթերի լուսապատենը, հրատարակելու թույլտվությամբ, սիրահոծար կերպով մեզ է տրամադրել Բրիտանական Գրադարանի վարչությունը՝ հանձին Արեւելյան բաժանմունքի տնօրեն, դոկտոր Վրեժ Ներսիսյանի, որին հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը:

Խնդրո առարկա բնագիրն ընդգրկում է 1099-1344 թթ. իրադարձությունների համառոտ նկարագրությունը: Նրա առաջին կեսը (1099-1296 թթ.), վերնագրով հանդերձ, ֆաղված լինելով Հեթում Բ թագավորի պատմությունից³, առանձնակի հետաքրքրություն չի ներկայացնում, եթե, իհարկե, հաշվի չառնենք նրա պարունակած որոշ հավելումներն ու բնագրական ավելի ճիշտ ընթերցվածները: Մինչդեռ երկրորդ կեսը, որը

¹ *Ձեռագրի ընդարձակ նկարագրությունը տես՝ Conybeare, Catalogue, p. 290-292. Զնկատելով ձեռագրում հիշված վերջին՝ ՊՄԳ (1404) թվականը (էջ 133բ, 135ա), Կոնիբեարը, գրչագրական տվյալների հիման վրա, ենթադրել է, որ այն ընդօրինակված պետք է լինի շուրջ 1400 թվականին (Conybeare, Անդ, էջ 292):*

² *Յ. Կոնիբեարի նշած հատուկենտ սկզբնատողերն ի մի բերելով՝ Վ. Հակոբյանը դրանք հրատարակել է «Ժամանակագրական մանր հատվածներ» վերնագրի տակ. տես՝ Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 390:*

³ *Տես՝ Անդ, էջ 74-87:*

շարադրված է մեծ մասամբ առաջին դեմքով եւ այդու հուշագրական նոթագրություն է հիշեցնում, կարելի է դասել պատմական հուշարձանների առատությամբ աչֆի շընկնող XIV դարի ամենաարժեքավոր սկզբնադրյունների շարքը: Հեղինակն իրեն սովորաբար կոչում է «Հեթում Ախտուցն տէր» կամ «Հեթում Ախտուցն տէր ջամբոլա» անունով, ինչից անմիջապես պարզ է դառնում, որ խոսքը վերաբերում է XIV դարի Կիլիկիո իրականության ամենանշանավոր դեմքերից մեկին՝ Հեթում Նղիրցուն:

Նղիրը (Nigrinum, Negrinum) ամանոսյան ձկեր գավառի բերդերից մեկն էր⁴, որի անունը, բացակայելով Կիլիկիո բերդակալ իշխանների հայտնի ցանկում⁵, առաջին անգամ, որպես արժունի կալվածք (castrum regis Nigrum), հիշատակվում է 1211 թվականին, գերմանացի ճանապարհորդ Վիլբրանդ Օլդենբուրգցու կողմից⁶: 1214 թ. ապրիլի 23-ի թվակիր հրովարտակով Լեոն Բ (I) թագավորը ձկեր գավառն իր բերդերով (ներառյալ Նղիրը) ժամանակավորապես շնորհում է Հիվանդախնամ ասպետներին (Հոսպիտալիերներին)⁷: Նղիրի նշանակությունն, ըստ երեւոյթին, մեծանում է 1266 թ. Մառիի ճակատամարտից հետո, երբ անհրաժեշտություն է առաջանում ամրապնդել հայ-մամլյության սահմանի պաշտպանական համակարգը: Այդպիսի ենթադրության հիմք է տալիս այն, որ Նղիրն առաջին անգամ արաբական աղբյուրներում հիշատակվում է 1274 թվականին, Նուղեիր (Nugair) ձեւով⁸: Կինելով արժունի կալվածք, բերդը, Հիվանդախնամների ժամանակավոր տնօրինությունից հետո, մնացել էր թագավորական ընտանիքի ձեռքում

⁴ ձկեր գավառի եւ մասնավորապես Նղիր բերդի մասին տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 411–413; Հովհաննեսյան, Կիլիկիոյ բերդերը, էջ 315–319; Hellenkemper, Burgen, S. 104–108; Hild-Hellenkemper, Kilikien, S. 228–229, 365–366; Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 3, էջ 615; հտ. 4, էջ 7–8:

⁵ Մմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 111–112; Վենետիկ, էջ 209–210: Նղիրի անվան բացակայությունն այդ ցանկում Չ. Ալիշանը բացատրում է նրա արքունի սեփականություն լինելու հանգամանքով. Ալիշան, Սիսուան, էջ 411:

⁶ Ալիշան, Սիսուան, էջ 411; Hild-Hellenkemper, Kilikien, S. 365; Halfter, Wilbrand von Oldenburg, S. 416, n. 33.

⁷ Langlois, Cartulaire, p. 124–125.

⁸ Ալիշան, Սիսուան, էջ 411:

եւ այդ ճանապարհով փոխանցվել արքայահայր Կոստանդին Գունդստապլի թոռանը կամ փեսային՝ Կոստանդին Նղիրցուն⁹: Վերջինս որպես Նղիրի տեր է հիշվում Վատիկանի Գրադարանի հայերեն ձեռագրերից մեկի հիշատակարանում («Կոստանդեա փառաւոր իշխանին տիրոջն Նղրին») ¹⁰, ինչպես նաեւ կողմնակիորեն՝ Անգլիայի թագավոր էդուարդ II-ի 1308 թ. գրված մի նամակում, որում Կոստանդին որդի Պաղտինը (Հայոց ապագա մարաշախտը) կոչված է «որդի տիրոջն Նղրին» («Dominum Baudivinum filium domini de Negrino») ¹¹:

Մեզ հասած միջնադարյան աղբյուրները որեւէ տեղեկություն չեն հաղորդում ո՛չ Կոստանդին Նղիրցու գործերի, ո՛չ էլ նրա ծննդյան ու մահվան թվականների մասին ¹²: Հայտնի է միայն, որ նա ունեցել է երեք որդի, որոնցից անդրանիկը՝ Վասակը, տիրել է Ճանճի բերդին ¹³ եւ, իր մասին այլ հիշատակ չթողնելով, մահացել 1328 թվականին ¹⁴: Մյուս որդին՝ Պաղտինը, որն, ինչպես վերը տեսանք, հայտնի դեմք էր արդեն 1308 թվականին ¹⁵, հետագայում դարձել էր Կիլիկիո թագավորության

⁹ Կոստանդին Գունդստապլի եւ Կոստանդին Նղիրցու ազգակցական կապի մասին մանրամասն տե՛ս սույն գրքի «Կոստանդին Դ (III)» ենթագլխում:

¹⁰ Tisserant, Codices Armeni, p. 99.

¹¹ Ալիշան, Սիսուան, էջ 235:

¹² Հիմք ընդունելով, ըստ երեւույթին, էդուարդ II-ի վերոհիշյալ նամակը, Ղ. Ալիշանը Կոստանդինի մահը դնում է «յետ 1308 ամի» (Ալիշան, Սիսուան, էջ 411), իսկ Թուդ-Կոլենբերգն, այդ վարկածը փաստ դարձնելով, ուղղակի նշում է 1308 թվականը. Rüdtt-Collenberg, The Rupenides, III (H2). Նույնը նաեւ՝ Hellenkemper, Burgen, S. 107. Եթե 1308 թ. Պաղտինը կոչվել է «Նղիրի տիրոջ որդի», ապա դրանից ամենեւին չի բխում, որ Կոստանդինն այդ ժամանակ ողջ էր. նա կարող էր մեռած լինել դրանից տասնյակ տարիներ առաջ, կամ ընդհակառակը, շարունակել ապրել տասնյակ այլ տարիներ: Հայրանունը ազգանվանը փոխարինող հասկացություն էր՝ անկախ հոր ողջ կամ մեռած լինելու հանգամանքից:

¹³ Տե՛ս Tisserant, Codices Armeni, p. 183. Ճանճի բերդի մասին տե՛ս Հովհաննեսյան, Կիլիկիոյ բերդերը, էջ 167–169; Հակոբյան, Մելիք-Քախչյան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 3, էջ 602:

¹⁴ Տե՛ս Tisserant, Codices Armeni, p. 97; Ալիշան, Սիսուան, էջ 412:

¹⁵ Դրանից մեկ տարի առաջ նա, որպես Հայոց Լեւոն Դ (III) թագավորի ու նրա խնամակալ Հեթում Բ-ի դեսպան, այցելել էր Անգլիա, ինչի առթիվ էլ գրվել է

ամենաազդեցիկ պետական այրերից մեկը: Քեւե Պաղտինի անձին մենք արդեն հանգամանորեն անդրադարձել ենք¹⁶, սակայն ավելորդ չենք համարում այստեղ կրկնել նրա կենսագրությանն առնչվող կարեւոր փաստերը: 1319 թվականից առաջ նա հաստատվել է Տարսուն ֆաղաֆում եւ այնտեղ սուրբ Առաքյալներին նվիրված մի փառահեղ տաճար կառուցել. «Ի մեծ եւ ի նշանատր ֆաղաֆն Տարսուն, յորում էր կայանք բնակութեան իւրոյ, ետ շինել ի սմա տուն եւ տաճար Աստուծոյ՝ յանուն սուրբ եւ երանելի Առաքելոցն»¹⁷: 1316–1319 թթ. միջեւ Օշին թագավորը նրան շնորհել է Հայոց մարաջախտի պաշտոնը¹⁸, որը նա վարել է մինչեւ իր մահը (1336 թ.)¹⁹: 1320–1329 թվականներին նույն Օշինի կտակի համաձայն՝ նա եղել է վերջինիս մանկահասակ որդու՝ Լեւոն Ե (IV) թագավորի չորս խնամակալներից մեկը²⁰: Եւ վերջապէս, 1336 թվականին Պաղտինը դիվանագիտական առաքելությամբ ուղևորվել է Եգիպտոս, բայց տեղ չհասած, մահացել Հալեպի բանտում²¹: Մարաջախտի կենսագրության ամենափառավոր էջը, սակայն, պիտի գրվեր իր մահից հետո. 1344 թվականին, Արփունի աստյանի որոշմամբ, նրա որդին՝ Կոստանդին Դ (III)-ը, բազմում է Հայոց գահին:

Առկա աղբյուրներից կարելի էր ստանալ այն տպավորությունը, որ

էրուարդ II-ի վերոհիշյալ նամակը. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 234:

¹⁶ Տե՛ս սույն աշխատության «Կոստանդին Դ (III)» ենթագլուխը:

¹⁷ Tisserant, Codices Armeni, p. 99.

¹⁸ Առաջին անգամ նա մարաջախտ է կոչված 1319 թ. մի հիշատակարանում (Tisserant, Codices Armeni, p. 99), իսկ Հայոց նախորդ մարաջախտի՝ Սմբատ Ասկուռասցու մասին վերջին հիշատակությունը վերաբերում է 1316-ին. տե՛ս Կղեմէս Գալանոս, Միաբանութիւն, էջ 504: Քեւե Պաղտինը մարաջախտ տիրոջսով է օժտված նաեւ 1311-ով թվագրված մի հիշատակարանում, սակայն այդ թվականը կասկածելի է, քանի որ հիշատակարանի հրատարակչի վկայությամբ՝ «գրված է նորագույն նոտրգրով ներքին լուսանցքում». Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 75–76:

¹⁹ Այդ թվականին գրված մի հիշատակարանում նա դեռեւս մարաջախտ է կոչվում. տե՛ս Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 295:

²⁰ Տե՛ս Յովհաննէս Դարդեկ, Ժամանակագրութիւն, էջ 28:

²¹ Տե՛ս Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 295:

Կոստանդին Նղիրցու երրորդ որդին՝ Հեթումը, ավելի համեստ դիրք է զբաղեցրել Կիլիկիո թագավորության նվիրապետական համակարգում: Մինչ այժմ, բացի Կոստանդինի որդին ու Կոստանդին Ե (IV) թագավորի հայրը լինելու փաստերից, հայտնի էր միայն, որ նա տիրել է հայրենական Նղիր բերդին²², վարել Կիլիկիո սենեկապետության կամ հանդերձապետության (ջամբուլա = chambrelan) գործակալությունը²³, եղել Հայոց Լեոն Ե (IV) թագավորի շուրս խնամակալներից մեկը²⁴, եւ վերջապես՝ դիվանագիտական մի առաջնություն իրականացրել Եգիպտոսում²⁵:

Ստորեւ հրատարակվող նորագյուտ բնագիրը, սակայն, ի հայտ բերելով Հեթումի կենսագրության բազմաթիվ անծանոթ էջեր, հիմնավորապես ցրում է այդ տպավորությունը: Հաստատելով Հայոց թագավորության սենեկապետը եւ Լեոն Ե (IV)-ի խնամակալը լինելու Հեթումի պարագան²⁶, այդ աղբյուրը լրացուցիչ տեղեկություններ է հաղորդում նրա կյանքի հետեւյալ դրվագների մասին: 1305 թվականին Հեթումն ասպետ է կարգվում Հայոց թագավոր Լեոն Դ (III)-ի կողմից²⁷, ինչը

²² Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 157; Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 193, 203; Tisserant, Codices Armeni, p. 183.

²³ Langlois, Cartulaire, p. 185; Tisserant, Codices Armeni, p. 183; «Մայր ցուցակ Մատենադարանի», հտ. 2, էջ 130; Ալիշան, Սիսուան, էջ 413; Յովհաննէս Դարդեւ, Ժամանակագրութիւն, էջ 28; Թուղ-Կոլենբերգն, ըստ երեսույթին, հիմնվելով Լեոն Ե (IV) թագավորի 1321 թ. մարտի 16-ի հրովարտակի վրա, Հեթումին սխալմամբ օժտում է *seneshal* (սեղանապետ) տիտղոսով (Rüdt-Collenberg, The Rupenides, III (H2), չնկատելով, որ այդ վավերագրում հիշատակվում է Հեթում անունով երկու անձնավորություն՝ մեկը ջամպլայ, իսկ մյուսը՝ սինիջեալ տիտղոսով. «Մենք՝ Հեթում ջամպլայն ու Հեթում սինիջեալս, հասկըցուցաք զայսոր բանն թագվորին»): Langlois, Cartulaire, p. 185.

²⁴ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 157; Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 193; Յովհաննէս Դարդեւ, Ժամանակագրութիւն, էջ 28:

²⁵ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 203: Այդ մասին ավելի մանրամասն ստորեւ:

²⁶ Հեթում Նղիրցի, Պատմութիւն, էջ 547:

²⁷ Անդ, էջ 552: Եթե նկատի ունենանք, որ Կիլիկիայում սովորաբար ասպետ էին կարգվում 15-20 տարեկան հասակում (հմմտ. Հեթում թագաւոր, Պատմութիւն, էջ 82; Հեթում Կոռիկոսցի, Խրոնիկոն, էջ 69, 70; Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ

նշանակում է, որ նղիրյան գերդաստանն այդ ժամանակ արդեն հատուկ պատիվ էր վայելում Սսի արժունիքում: 1317-ին Օշին թագավորը նրան ուղարկում է Նեապոլ, Սիցիլիայի եւ Նեապոլի թագավոր Ռոբերտ Անժուացու եւ վերջինիս եղբոր՝ Տարանտոյի պրինց Ֆիլիպի մոտ, որն Օշինի աներն էր²⁸: 1319 թվականին, որպես նույն թագավորի դեսպան, Հեթումն ուղևորվում է Ավինյոն՝ տեսակցելու Հռոմի պապի հետ (Հովհաննես XXII)²⁹: Թեեւ այդ այցելության նպատակը նշտված չէ, սակայն այն լիովին տեղավորվում է Հռոմի պապի եւ Հայոց թագավորի միջեւ 1318–1320 թթ. առանձնապես աշխուժացած դիվանագիտության շրջանակներում³⁰: Հեթումը, թերեւս, իր եղբոր՝ Պաղտինի նման, լինելով Օշինի արեւմտամետ ֆաղափականության ջերմ պաշտպաններից մեկը³¹, ամենայն հավանականությամբ, այդ առաքելությունն իրականացնելու հարմարագույն անձն է նկատվել: 1327 թվականին Հեթում նղիրցին, այս անգամ արդեն Լեոն Ե (IV) թագավորի բանազնացի հանգամանօքով, այցելում է Եգիպտոս. «Ի թուականութեանս Հայոց ՋԶԶ ... բարեպաշտ ծերունին եւ աստուածասէր իշխանն՝ պարոն Հեթում նղրցի, նաւապարհորդեալ եղև յաշխարհն Եգիպտոսի վասն հանգստեան քրիս-

124; Վենետիկ, էջ 234; Մաթեոսյան, ԺԳ դ. հիշատակարաններ, էջ 538), ապա պետք է ենթադրել, որ Հեթում նղիրցին ծնվել է 1285-1290 թթ. միջեւ:

²⁸ Հեթում նղիրցի, Պատմութիւն, էջ 552: Հայտնի է, որ դրանից մեկ տարի առաջ, 1316 թվականին, Հայոց թագավորն ամուսնացել էր Ֆիլիպի դստեր՝ Յովհաննայի կամ Ժաննա-Իրենի հետ (Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 128) եւ, որ հարսնացուին Նեապոլից Կիլիկիա էր ուղեկցել Կոռիկոսի կոմս Օշինը (Յովհաննէս Դարդեւ, Ժամանակագրութիւն, էջ 28, 30): Քանի որ, ըստ այդմ, ամուսնության գործն արդեն գլուխ էր եկել, պետք է ենթադրել, որ Հեթում նղիրցու այս դեսպանագնացությունն, ամենայն հավանականությամբ, զուտ քաղաքավարական բնույթ է կրել:

²⁹ Հեթում նղիրցի, Պատմութիւն, էջ 552:

³⁰ Այդ մասին մանրամասն տես՝ Պալճյան, Պատմութիւն, էջ 69–70; Coureas, Papacy, p. 102.

³¹ Պաղտինի լատինասիրությունն աներկբայորեն հաստատում է Վատիկանի Գրադարանի 1319 թվականին ընդօրինակված հայերեն ձեռագրի գրիչը, նշելով, որ մարաջախտն իրեն կարգադրել էր՝ իր պատվիրած «Ճաշոցում» Հայոց Տերունական տոները հարմարեցնել Հռոմեական եկեղեցու Տոնացույցի օրերին. տես Tisserant, Codices Armeni, p. 99.

տոնէից»³²: Քեւե այս տեղեկությունը բացակայում է նորահայտ աղբյուրի մեզ հասած բնագրում, սակայն դա, հավանաբար, բացատրվում է նրանից թերթեր ընկած լինելու պատճառով: 1329 թվականին, Լեւոն Ե (IV)-ի հանձնարարությամբ, Հեթումն ուղեւորվում է Սիցիլիա՝ ամուրիացած Հայոց թագավորի համար այդ երկրի արքայադուստրերից մեկի ձեռքը խնդրելու առաջելությամբ³³: Հաջորդ տարի նա, մի պատկանելի պատվիրակության ուղեկցությամբ, կրկին մեկնում է Սիցիլիա, եւ ընտրելով Ֆրեդերիկ III թագավորի ավագ դստերը՝ Կոնստանսին³⁴, վեց նավով վերջինիս առաջնորդում է Կիլիկիա³⁵: Դա, անշուշտ, ֆաղափարկան ամուսնություն էր, հիմնված Արեւմուտքից օգնություն ստանալու հաշվարկի վրա, ինչի լրացուցիչ ապացույցը պետք է համարել Լեւոն Ե (IV)-ի 1331 թ. նոյեմբերի 24-ի հրովարտակով սիցիլիացիներին շնորհված արտոնությունները³⁶:

1336 թվականին Հեթում Նդիրցին եւս մեկ անգամ ուղեւորվում է Եգիպտոս³⁷, ըստ երեւոյթին, նախապատրաստելու համար Հայոց թագավորի ծրագրված պաշտոնական այցն այդ երկիր: Այլուստ հայտնի է, որ նույն տարում եւ, արդեն հաստատապէս, միեւնույն նպատակով Եգիպտոս էր մեկնել նաեւ նրա եղբայր Պաղտին մարաշխատը, որի առաջելությունը, սակայն, խափանվել էր ճանապարհին բանտարկվելու եւ Հալեպի գնդանում մահանալու պատճառով³⁸: Նդիրցու ղեսպանագնացության նպատակն, արդ, իր եղբոր անկատար առաջելությունն ավարտին հասցնելը պետք է լինէր: Ու թեւեւ նրան, ի տարբերություն Պաղտինի, հաջողվել էր հասնել Եգիպտոս ու կանգ առնել Սինայի թե-

³² Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 203:

³³ Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 548, 552:

³⁴ Կոնստանս Արագոնացին Կիպրոսի թագավոր Հենրի II-ի (1285–1324 թթ.) այրին էր:

³⁵ Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 548–549, 552–553:

³⁶ Langlois, Cartulaire, p. 186–190. Հմմտ. Matiossian, Armenian-Spanish Relations, p. 319.

³⁷ Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 553:

³⁸ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 295: Պաղտինի ղեսպանագնացութեան մասին մանրամասն տե՛ս սույն աշխատութեան «Լեւոն Ե (IV)» ենթագլխում:

րակղզու Ալ-Արիշ ֆաղաֆում, բայց այդպես էլ ընդունելության չարժանանալով Մամյուֆյան սուլթանի կողմից, ձեռնունայն տուն էր դարձել: Կիլիկիո դեսպանների նկատմամբ եգիպտացիների ցուցաբերած այդ, մեղմ ասած, ոչ դիվանագիտական վերաբերմունքը բացատրվում է հաշտությունից առաջ հայերին ավելի ծանր պայմանների մեջ դնելու եւ կատարված փաստի առջև կանգնեցնելու մտադրությամբ, ինչն, ի դեպ, ակնհայտ պիտի դառնար դեպքերի հետագա զարգացմամբ: 1336–1337 թթ. ընթացքում, նախ եւ առաջ գրավելով ու հիմնահատակ ավերելով Նդիրի բերդը, մամյուֆները վերջնականապես նվաճեցին Ջահան գետի արեւելակողմյան գավառներն ու Այաս նավահանգիստը, իսկ այնուհետեւ այդ ձեռքբերումներն ամրագրեցին Կիլիկիային պարտադրված նվաստացուցիչ պայմանագրով³⁹: Հեթում Նդիրցու արտերկրյա վերջին ուղեւորությունը վերաբերում է 1344 թվականին, երբ նա, Հայոց հաջորդ թագավոր Գի Լուսինյանի հանձնարարությամբ, մեկնում է Կոստանդնուպոլիս՝ վերջինիս կնոջը՝ Թեոդորային Կիլիկիա բերելու համար: Սակայն Հայոց թագուհուց մերժում ստանալով, Հեթումը հիասթափված արձանագրում է. «Գնացի ի դեսպանութիւն, նայ ոչ կամեցաւ գալ ի յերկիրս: Կեցայ ի դուրս ի յերկրէս ամիս Զ (6), դարձայ ու եկի յերկիրս»⁴⁰: Այդ թվականից հետո Հեթումի կյանքի վերաբերյալ առկա աղբյուրներում որեւէ տեղեկություն չի պահպանվել: Անհայտ է անգամ նրա մահվան տարին. Ղ. Ալիշանի եւ Ռուդ-Կոլենբերգի նշած 1356 թվականը գուրկ է պատմագրական հիմքից⁴¹: Եթե հետագայում Հեթումը հիշատակվում է անգամ, ապա միայն Հայոց թագավոր Կոստանդին Ե (IV)-ի հայրը եղած լինելու հանգամանքով, ինչպես, օրինակ. «Ի թագաւորութեան երկրորդի Կոստանդեա, որդի ի

³⁹ 1336–1337 թթ. մամյուֆյան արշավանքների մասին տե՛ս Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 283–284, 295; Ներսէս Պալիանենց, Ժամանակագրական հատվածներ, էջ 189; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 159–160, 168:

⁴⁰ Հեթում Նդիրցի, Պատմութիւն, էջ 553:

⁴¹ Ալիշան, Սիսուան, էջ 560; Rüd̄t-Collenberg, The Rupenides, III (H2). Հստ երեւութիւն, Ալիշանի ենթադրութեամբ, Հեթումը զոհ է գնացել այդ թվականին Կիլիկիայում մոլեզնած մահտարածամին:

Քրիստոս հանգուցելոյն ամենագովութեանց արժանատրին, մեծ եւ հզարին եւ ամենամեծ ջամբլին Հայոց պարոն Հեթմոյ»⁴²:

Այսպիսով, ստորեւ ներկայացվող եզակի աղբյուրից պարզվում է, որ հանձին Հեթում Նղիրցոյ՝ մենք գործ ունենք Կիլիկիո Հայոց պետության երեհարյուրամյա պատմությանը հայտնի ամենաեռանդուն դիվանագետի հետ, որի ծավալած աշխատանքն ավելի շուտ արտաքին գործերի նախարարի, քան սովորական դեսպանի գործունեություն է հիշեցնում: Մառայելով հաջորդաբար Հայոց չորս թագավորների՝ Լեոն Գ (III)-ին, Օշինին, Լեոն Ե (IV)-ին ու Գի Լուսինյանին, Հեթումն իրականացրել է առնվազն դիվանագիտական յոթ առաքելություն⁴³, դեսպանագնացությամբ այցելել հինգ երկիր՝ Իտալիա, Ֆրանսիա, Սիցիլիա, Եգիպտոս, Քյուզանդիա՝ ընդհանուր առմամբ Կիլիկիայից բացակայելով ավելի քան հինգ տարի⁴⁴: Համեմատության կարգով նշենք, որ Կիլիկիո դեսպանների՝ Կ. Մուրաֆյանի կողմից բարեխղճորեն կազմված ցանկում⁴⁵ չկա որեւէ մեկը, որը երկու անգամից ավելի դիվանագիտական առաքելություն իրականացրած լինի, իսկ մեծագույն մասը հայտնի է միայն մեկ դեսպանագնացությամբ: Հարկ է ավելացնել, որ Հեթումի աշխատությունը, բացի նրա գործունեության դիվանագիտական կողմը բացահայտելուց, պարունակում է նաև նորություն հանդիսացող կամ զանազան աղբյուրների եզակի տվյալները հաստատող որոշ այլ տեղեկություններ, ինչպես, օրինակ, իր որդիներ Ճուֆրիի ու Կոստանդինի ծննդյան եւ

⁴² *Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 477:*

⁴³ «Առնվազն» վերապահումն արել ենք՝ նկատի ունենալով այն, որ Հեթումի աշխատությունից թերթեր են ընկել, որոնք կարող էին տեղեկություններ պարունակել նաեւ նրա այլ դեսպանագնացությունների մասին:

⁴⁴ Հեթումը, հիրավի դիվանագետի բժախնդրությամբ, չի զլանում ամեն անգամ արձանագրել իր դեսպանագնացությունների տեղողությունը, ինչպես, օրինակ. «Ու կեցայ ի դուրս ի յերկրէս տարի Ա (1) ու ամիս ԺԱ (11) ու ար ԻԴ (24), ու դարձայ եկի յերկիրս»։ Հեթում Նղիրցի, Պատմութիւն, էջ 552:

⁴⁵ *Mutaflan, Recherches, p. 151-152. Մուրաֆյանն, ի դեպ, դեսպանների այդ ցանկում ընդգրկել է նաեւ արտասահման ուղեւորված Կիլիկիո թագավորներին, ինչն անտեղի է:*

Ալինախի մահվան թվականների⁴⁶, կամ Կոստանդին Դ Լամբրոնացի կաթողիկոսի եզրպտոս կատարած այցելության մասին⁴⁷:

Առանձնահատուկ ուշադրության է արժանի նաեւ այն փաստը, որ Հեթումն իր գրվածքում երբեւէ չի հիշատակում Նդիրի տերը լինելու իր հանգամանքը, ինչը, թերեւս, պետք է բացատրել նրանով, որ նա իր աշխատությունն սկսել է գրի առնել մամլյումների կողմից այդ բերդի գրավումից հետո (1336 թ.): Ինչպես արդեն նշել ենք, հեղինակն իրեն սովորաբար կոչում է «Հեթում Ախտուցն տէր» կամ «Հեթում Ախտուցն տէր ջամբուլա» անունով: Արդ, հարց է առաջանում, թե ի՞նչ կարող է նշանակել «Ախտուցն տէր» մականունը: Առաջին հայացքից կարող է թվալ, թե մենք գործ ունենք Ախտք կամ Աղտք անունը կրող մի բնակավայրի հետ: Բայց ֆանի որ Կիլիկիայում այդպիսի տեղանուն հայտնի չէ⁴⁸, ապա մեզ մնում է փնտրել բոլորովին այլ բացատրություն: Որքան էլ տարօրինակ թվա, մենք չենք բացառում, որ «Ախտուց տէր»-ը պարզապես Հեթում Նդիրցու գրական անունն է, որն ունի մեղեքի տեւ կամ մեղապարտ իմաստը՝ ըստ այդմ հանդիսանալով միջնադարյան հեղինակների կամ գրիչների ինքնանվաստացուցիչ մականուններով հորջորջվելու ավանդույթի արտացոլումը: Նդիրցուն վերաբերող «Ախտուց տէր» անվան գործածության միակ այլ աղբյուրում վկայված հետեւյալ դեպքը, կարծես թե, սպառիչ կերպով հաստատում է տվյալ մեկնաբանության ճշմարտացիությունը. «Ի թագաւորութեանն Հայոց Կոստընդեա՝ որդայ պարոն Հեթմոյ Ախտուց տէր կոչեցելոյ»⁴⁹: Ուշադրություն պետք է դարձ-

⁴⁶ Ալինախի մահվան վերաբերյալ Հեթումի նշած թվականը (1309) համընկնում է Սմբատ Ապարապետի շարունակողի հաղորդած տեղեկությանը. տես Սմբատ, Տարեգիրք, Փարիզ, էջ 128:

⁴⁷ Կոստանդին կաթողիկոսի այդ դեսպանագնացությունը (1323 թ.) հայտնի է նաև այլ աղբյուրներից. տես Պողարյան, Յուցակ, հտ. 2, էջ 178; Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 193; Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 158, 167:

⁴⁸ Ի տարբերություն Կիլիկիայի, նման տեղանուններ վկայված են բուն Հայաստանում եւ հարակից շրջաններում. տես Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հտ. 1, էջ 75-76; Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 1, էջ 113, 123-124, 198:

⁴⁹ Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 478:

նել այն հանգամանքին, որ հիշատակագիրը Հեթումին ոչ թե «Ախտուց տէր» է համարում, ինչը բնական կլիներ, եթե Ախառացը տեղանուն դիտվեր, այլ շեշտում է, որ նա այդպես էր կոչվում:

Հեթում Նղիրցու աշխատության երկրորդ, ինքնուրույն մասում, որն, ինչպես տեսանք, դիվանագետի օրագիր է հիշեցնում, իրադարձություններն, ի տարբերություն Հեթում թագավորի պատմությունից ֆաղված առաջին մասի, շարադրված են ոչ թե հստակ ժամանակագրական կարգով, այլ խառնիխառն: Դա կարող է ունենալ երկու բացատրություն, այն է՝ կա՛մ բնագրի նախնական ժամանակագրական կարգը խախտվել է թերթեր ընկած լինելու պատճառով, կա՛մ էլ հեղինակն իր հիշողությունները գրի է առել տարբեր ժամանակներում, առանձնապես չհոգալով դրանք խստորեն դասավորելու մասին: Աշխատությունը գրված է բավականին գրագետ միջին հայերենով եւ համեմատաբար կանոնավոր ուղղագրությամբ, որը ձգտել ենք հարազատորեն վերարտադրել ներկա հրատարակության մեջ՝ անհրաժեշտ նկատված հազվադեպ ուղղումները ծանոթագրելով տողատակում:

* * *

Համառոտ պատմութիւն ժամանակաց

117բ

Եղեւ թափումն Երուսաղէմի, եւ տիրեաց Գունդուֆրէ տը⁵⁰ Պոլլունն⁵¹:

Ի թվին ՇՄԱ (1102) վաղջանեցաւ պարոնն Հայոց Կոստնդին⁵², եւ էառ զիշխանութիւնն անդրանիկ որդին Թորոսն:

Ի թվին ՇՀԸ (1129) վաղջանեցաւ պարոնն Հայոց Թորոս, եւ էառ զիշխանութիւնն Լեւոն եղբայր նորա:

Ի թվին ՇՂԳ (1144) Թորոս որդի Լեւոնի եկն ի Կոստանդնուպօլսէ⁵³, եւ էառ զՎահկայն:

⁵⁰ Տը կամ տ = ֆրանսերենի՝ պատկանելություն ցույց տվող de նախդիրը:

⁵¹ Գողֆրուա Բուլոյնացի, Երուսաղեմի խաչակրաց պետության հիմնադիրը (1099–1100 թթ.):

⁵² Կիլիկիո գահակալների անունները շենք ծանոթագրում, քանի որ յուրաքանչյուր դեպքում կոնտեքստից հայտնի է, թե ում մասին է խոսքը:

⁵³ Ձեռագրում՝ Կոտդպօլսէ:

Ի թվին ՈԶ (1157) պարոնն Հայոց Թորոս կրօնաւորեալ վաղջանեցաւ, եւ էառ զիշխանութիւնն Մլիհ եղբայր նորա:

Ի թվին ՈԺԳ (1164) Մլիհ եղբայր Թորոսի սպանաւ ի Սիս, եւ իշխանք Հա-
118այոց բերեալ զՌոբէն որդի ի Ստեֆանէի, եւ եդին պարոն Հայոց:

Ի թվին ՈԻԲ (1173) տէր ներսէս կաթողիկոսն Հայոց փոխեցաւ առ Քրիս-
տոս, յօգօստոս ԺԳ (13), ի հինկշափթի:

Ի թվին ՈԻԵ (1176) Թաթարն էառ զՄեծ Հայք:⁵⁴

Ի թվին ՈԼԵ (1186) վաղջանեցաւ պարոնն Հայոց Ըոռբէն, եւ էառ զիշ-
խանութիւնն Լեւոն եղբայր նորա:

Ի թվին ՈԼԶ (1187) եղեւ կոտորումն քրիստոնէից ի Սալահատնէն⁵⁵ մերձ
յերուսաղէմ, եւ կալաւ զթագաւորն Կի⁵⁶, եւ անյայտ եղեւ սուրբ խաչն Քրիս-
տոսի: Եւ ետուն ի Սալահատինն զԱքա⁵⁷ եւ զԱզխալան⁵⁸: Եւ ի նոյն ամս էառ
Սալահատինն զերուսաղէմ եւ զամէն Սէհլն⁵⁹, բաց ի Սրո⁶⁰ եւ ի Տրապօլսո⁶¹:

Ի թվին ՈԼԹ (1190) կայսրն Ալամնաց⁶² Ֆրրտրիկն⁶³ խեղդեցաւ ի գետն
118բՍելեֆկիո, եւ թաղեցաւ յԱնտէոք: Սելեֆկիո⁶⁴ ըռէ տ-Ֆրանցն⁶⁵ եւ Ըոհ-

⁵⁴ Թե՛ թվականի, թե՛ Թաթարների առումով՝ պատմականորեն ժամանակավրեպ տեղեկութիւն:

⁵⁵ Սալահեղդին Յուսուֆ Իբն-Այուբ. եգիպտոսի եւ Սիրիայի սուլթան, Այուբյան հարստութիւն հիմնադիր (1169–1193 թթ.):

⁵⁶ Գի Լուսինյան. երուսաղէմի թագավոր (1186–1192 թթ.), Կիպրոսի թագաւոր (1192–1194 թթ.):

⁵⁷ Աքքա (Աքրա). քաղաք Պաղեստինում:

⁵⁸ Ասկալոն (Աշկելոն). քաղաք Պաղեստինում:

⁵⁹ Սէհլ (արաբերէն sähil = եզր, սահմանային գոտի). Ասորիքի (Սիրիայի) ծովափնյա երկրամասը:

⁶⁰ Սուր (Տյուրոս). քաղաք Լիբանանում:

⁶¹ Տրապօլիս (Տրիպոլի). քաղաք Լիբանանում:

⁶² Ալամանք = Գերմանիա:

⁶³ Ֆրիդրիխ I Շիկամորուս (Բարբարոսսա). Գերմանական կայսր (1152–1190 թթ.), III խաչակրաց արշավանքի առաջնորդներից մեկը:

⁶⁴ Ֆիլիպ II Օգլուստ (Օգոստոս). Ֆրանսիայի թագավոր (1180–1223 թթ.), III խա-
չակրաց արշավանքի առաջնորդներից մեկը:

⁶⁵ Ըռէ տ-Ֆրանց = թագավոր Ֆրանսիայի. փոխառութիւն հին ֆրանսերենից (roi de France):

ջարդ⁶⁶ թագաւորն Շնկլէզաց⁶⁷ անցին յայս կոյս ծովու, եւ պաշարեցին զԱբա: Որ եւ ի գալն թագաւորն Շնկլէզաց էառ զԿեպրոսս կղզին ի Յունաց եւ ի Կեոսակ⁶⁸ տուկէն⁶⁹:

Եւ սկիզբն եղեւ կարգաւորութեան Ալաման Ֆրէրացն⁷⁰:

Ի թվին ՈսԶ (1197/8) պարոնն Հայոց Լեւոն պսակեցաւ թագիւ եւ եկաց առաջին թագաւոր ի Կիլիկիա:

Ի թվին ՈսԷ (1198) փոխեցաւ ի Քրիստոս տէր Ներսէս Սկեւռայցին⁷¹:

Ի թվին ՈՄԳ (1204) գունդ⁷² լ-Ֆլանդրն⁷³ եւ տուկն Վէնետկաց⁷⁴ առին զԿոստանդնուպօլիս⁷⁵ ի Յունաց, եւ եղեւ կայսր Կոստանդնուպօլիսի⁷⁶ Պաղատինն⁷⁷:

Ի թվին ՈկԷ (1218) Հայոց թագաւորն Լեւոն ետ ի Հօռմաց սուլտանն⁷⁸

⁶⁶ Ռիչարդ I Առյուծասիրտ. Անգլիայի թագավոր (1189–1199 թթ.), III խաչակրաց արշավանքի առաջնորդներից մեկը:

⁶⁷ Շնկլէզք = Անգլիա:

⁶⁸ Կեոսակ (հունարեն Κύριος Ἰσαάκ). Իսահակ Կոմնենոս, Կիլիկիայի բյուզանդական դուքս (1179/80 թ.), հետագայում Կիպրոսի ինքնահռչակ կայսր (մահ. 1194 թ.). նրա մասին մանրամասն տե՛ս Dédéyan, Les Arméniens à Chypre, p. 126–129; Mutafian, La genèse, p. 164–166.

⁶⁹ Տուկ = դուքս. փոխառութիւն հին ֆրանսերենից (duc):

⁷⁰ Ֆրէր = եղբայր. փոխառութիւն հին ֆրանսերենից (frère). «Ալաման Ֆրէրք» անվան տակ հեղինակը նկատի ունի Տեւտոնական ասպետներին:

⁷¹ Ներսէս Լամբրոնացի. Հայ մատենագիր եւ եկեղեցական գործիչ (1153–1198 թթ.). «Ի թվին ՈսԷ... Սկեւռայցին» հատվածը բացակայում է Հեթում Բ թագավորի պատմության մեջ:

⁷² Գունդ = կոմս. փոխառութիւն հին ֆրանսերենից (comte):

⁷³ Գունդ լ-Ֆլանդրն = Ֆլանդրիայի կոմս. խոսքը վերաբերում է Ֆլանդրիայի կոմս եւ Կոստանդնուպօլիսի առաջին լատին կայսր Բալդուին I-ին (1204–1206 թթ.):

⁷⁴ Տուկն Վէնետկաց. խոսքը վերաբերում է Վենետիկի դուքս (դոժ) Էնրիկո Դանդոլոյին (1192–1205 թթ.):

⁷⁵ Ձեռագրում՝ Կոտդպօլս:

⁷⁶ Ձեռագրում՝ Կոտդպօսի:

⁷⁷ Տե՛ս ծանոթագրութիւն 73:

⁷⁸ Իզզեդդին Քեյ-Քավուս I. Ռումի Սելջուկյան սուլթան (1210–1219 թթ.):

զԼուլուա⁷⁹ բերդն եւ ...||

119ա Ի թվին ՈՂԴ (1245) թագաւորն Հայոց Հեթում էառ զՊոականա⁸¹ Ի Հուռմաց սուլտանէն⁸², Քարմուտ⁸³ արամբբ: Եւ Խիաթատին⁸⁴ սուլտանին զօրքն պաշարեցին զՏարսուս, որոց էին զօրագլուխք Շամաստին⁸⁵ Ասպահանի սահիպն⁸⁶ եւ Կոստընդին⁸⁷ տէրն Լամբրունին: Եւ դարձեալ ետուն զՊոականա Ի սուլտանն սիրով⁸⁸:

Ի թվին ՈՂԵ (1246) թագաւորն Հայոց Հեթում առաքեաց զեղբայրն իւր զպարոն Ամբատ գունդուստապլն Ի Կիուկ դանն⁸⁹:

Ի թվին ՈՂԷ (1248) Լօիզ ըռէ տ-Ֆրանցն⁹⁰ եկն յայս կոյս ծովու, եւ միուս ամն էառ զՏիմիաթ⁹¹: Եւ Ի նոյն ամն խանկրուեցաւ Ի Մարա զօրացն եւ կալանաւոր եղեւ, եւ նոյն ժամայն ազատեցաւ զնով ճՆ (100000) մարկ արծաթ 119բ եւ ճՆ (100000) տուկատ⁹², եւ յետ Գ (3) ամի|| դարձաւ յաշխարհ իւր:

⁷⁹ Լուլու կամ Լուլուայ. բերդ Կիլիկիայում. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 114–115; Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 2, էջ 605:

⁸⁰ Այս բառից հետո ձեռագրից թերթ է ընկել:

⁸¹ Պոականա. բերդ Կիլիկիայում. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 70–74; Հովհաննեսյան, Կիլիկիոյ բերդերը, էջ 401–402; Hild-Hellenkemper, Kilikien, S. 385; Հակոբյան, Մելիք-Բախշյան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 4, էջ 361:

⁸² Գիյասեդդին Քեյ-խոսրով II. Ռումի Սելջուկյան սուլթան (1237–1246 թթ.):

⁸³ Անհայտ տեղանուն: Եթե Պոականայի եւ Քարմուտի աշխարհագրական հեռավորությունը նկատի շառնվեր, ապա կարելի էր վերջինս նույնացնել Բելլանի կիրճում գտնվող Քարամուտ բնակավայրի հետ, որի մասին տեղեկացնում է Ղ. Ալիշանը (Սիսուան, էջ 422–423):

⁸⁴ Տե՛ս ծանոթագրություն 82:

⁸⁵ Այս անձնավորության ինքնությունը մեզ չհաջողվեց պարզել:

⁸⁶ Սահիպ = գլխավոր, տիրակալ. փոխառություն արաբերենից (šāhib):

⁸⁷ Կոստանդին Լամբրունացի. Լամբրոնի իշխան եւ թագադիր Հայոց (մահ. 1250 թ.):

⁸⁸ «Եւ դարձեալ... սիրով» հատվածը բացակայում է Հեթում Բ թագավորի պատմության մեջ:

⁸⁹ Գուլուկ. Մոնղոլական Մեծ խան (1246–1249 թթ.):

⁹⁰ Կուրդուխուս IX. Ֆրանսիայի թագավոր (1226–1270 թթ.), սրբացված 1297 թ.:

⁹¹ Դամիատ. քաղաք Եգիպտոսում:

⁹² «Եւ ճՆ տուկատ» բառերը բացակայում են Հեթում Բ թագավորի պատմության մեջ:

93 «Ի թիվին ջ... նսրբորդ» հարկածը քանակաբանում է թագախոսի աստ-
 94 տրվածը մեջ :
 95 Մտերու. Մտերուական Մեծ խան (1251-1260 թթ.) :
 96 Արանաթիք. ցեղանունը, հարկանքարը հարմարեցնելով հայտնի
 97 շուրտիւր. Մտերուական Իրանի Ի-խան (1256-1265 թթ.) :
 98 Արանաթիք. ցեղանունը, Կարանաթիքի Իրանում, Կարանաթիքից հյուսիս-արեւմուտք, Իրանական
 99 Իրանյան թագաւորներին հետընդհանրելով (այնպիսի օտարներին հետընդհանրելով արեւմուտք-
 100 ներքինը արժանացնելով) :
 101 «Համայն Կեզնէն» = Պարսիկի Մեջլիսի սուրճաբանական Կեզնէն (նար) :
 102 Արանք = Կարանաթիքի արեւմուտքում :
 103 Շամբ/Շամ = Ասորիք, Արիւրիք, արեւելյան իրանական թագաւոր :
 104 Միքայել VIII Պապի սուրճաբանական իրան (1258-1282 թթ.) :
 105 Հոստանդինի Կարանաթիքի Կարանաթիքի թագաւորական (մա. 1263 թ.) :
 106 Արագ արքուն = Կարանաթիքի Կարանաթիքի թագաւորական :
 107 Մանին. բերդ Կարանաթիքում. տեղի համայնական, հիմնականում բերդերը, էջ 238-
 240; Hild-Heilenkemper, Kilkien, S. 341; Հարկանք, Մեքիթ-Բախշան, Բարսեղ-
 Խան, Տերաններին բարսեղ, տ. 3, էջ 688:

1201 աստք || Կարանք : Կ. Հեթումը թագաւորը Կարանքից ի Մանիկոնը 107
 Ի թիվին ջ Մ (1262) Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :
 105 Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :
 104 Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :
 103 Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :
 102 Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :
 101 Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :
 98 Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :
 96 Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :
 95 Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :
 94 Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :
 93 Կարանքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից Կարանաթիքից :

գթուրքմանն հարամնա¹⁰⁸: Եւ թագաժառանկն Հայոց Լեւոն ամուսնացաւ ընդ Կեռան¹⁰⁹ դուստրն պարոն Հեթում¹¹⁰ Լամբրունին տիրոջն, եւ ծնաւ դուստր զՋապլունն:

Ի թվին ԶԺԴ (1265) ծնաւ Հեթում թագաւորորդին, եւ վաղջանեցաւ պարոն Օշին թագաւորազբայրն, տէրն Կօռիկօսոս:

Ի թվին ԶԺԵ (1266) ծնաւ դուստրն պարոնին Հայոց Ֆրմի¹¹¹: Եւ Սմլմօթն¹¹² Մսրա զօրօքն մտաւ յերկիրս Հայոց, եւ ի Մառի¹¹³ բռնեցին զպարոն Լեւոն թագաւորորդին Հայոց Հեթմո, եւ սպանին զմիւս որդին՝ զպարոն Քորոս:

Ի թվին ԶԺԶ (1268) ձեռնայդրեցին կաթողիկոս Հայոց զտէր Յակոբ¹¹⁴: Եւ Լեւոն թագաւորորդին ազատեցաւ ի Մսրա: Մսրցին զԱնտաք էառ:

Ի թվին ԶԺԸ (1269) փլան ի շարժէ Սարվանտիքարն ու Համուսն¹¹⁵: Եւ

120բ ծնաւ դուստր պարոնին Հայոց Սպիլն:

Ի թվին ԶԺԹ (1270) ըռէ տ-Ֆրանցն¹¹⁶ պաշարեաց զԴօնիզն¹¹⁷ եւ անդ

108 Կարաման Իբն-Նուրա Սուֆի. Անատոլիայի Կարամանիդների թուրքմենական հարստության հիմնադիրը (1256–1261/2 թթ.):

109 Կեռան. Հայոց թագուհի (1269–1285 թթ.), անունը ծագում է հունարեն Կիր Աննա (տիկին Աննա)-ից:

110 Հեթում. Լամբրոնի իշխան Կոստանդին թագադրի որդին (մահ. 1250 թ.):

111 «Ի թվին ԶԺԵ... Ֆրմի» հատվածը բացակայում է Հեթում Բ թագավորի պատմության մեջ:

112 Իզզեդդին Իզան Սամմ-ալ-Մաութ (արաբերեն՝ «մահաթույն»). Մամլուքյան զորավար. տե՛ս Dédéyan, La chronique, p. 115n, 117n.

113 Մառի. Ամանոսյան լեռնանցք. տե՛ս Hild-Hellenkemper, Kilikien, S. 343; Հակոբյան, Մելիք-Բախչյան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 3, էջ 700:

114 Հակոբ Ա Կլայեցի, Հայոց կաթողիկոս (1267–1286 թթ.):

115 Սարվանտիքար եւ Համուս. բերդեր Կիլիկիայում. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 206, 209–210; Edwards, The Fortifications, p. 216–221; Հովհաննեսյան, Կիլիկիոյ բերդերը, էջ 276–279; Hellenkemper, Burgen, S. 108–110, 111–115; Hild-Hellenkemper, Kilikien, S. 269, 396; Հակոբյան, Մելիք-Բախչյան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 4, էջ 545:

116 Ըռէ տ-Ֆրանց (roi de France) = Ֆրանսիայի թագավոր. Այստեղ՝ Կուղովիկոս IX (1226–1270 թթ.):

117 Դօնիզ = Քունիս. Կուղովիկոս IX-ը իսկապես մահացել է Քունիսում, 1270 թ. իր ձեռնարկած ութերորդ խաչակրաց արշավանքի ժամանակ:

մեռաւ, եւ թագաւորեաց որդի նորա Ֆրիլպն¹¹⁸: Եւ վաղջանեցաւ թագաւորն Հայոց Հեթում, եւ տէրեաց որդի նորա Լեւոն:

Ի թվին ՁԻ (1271) ԺԴ (14) տաճիկ դալէ¹¹⁹ կոտորեցան ի Կեպրոս: Եւ սիր¹²⁰ Ուտուարտն¹²¹ եկն յԱքա: Եւ ընդրեցին պապ զԳրիգորիոսն¹²², որ արար զմեծ ժողովն ի Լիւոնն¹²³: Եւ թագուեցաւ Հայոց թագաւորն Լեւոնն¹²⁴, եւ ծնաւ թագաւորին որդի ի Մսիս պարոն Թորոս:

Ի թվին ՁԻԱ (1272) ծնաւ Ըոթէնն:

Ի թվին ՁԻԲ (1273) ծնաւ դուստրն Զապլունն:

Ի թվին ՁԻԳ (1274) Պնդուխտար¹²⁵ սուլտանն եմուտ զօրօք, եւ խլեց զկանդարայն¹²⁶ Մսսա, եւ աւերեաց զերկիրս ի Մարշա մինչեւ ի Կոիկոս:

Ի թվին ՁԻԵ (1276) ծնաւ Սմբատն ու Սպիլն խեղեփք¹²⁷:|

121ա Ի թվին ՁԻԶ (1277) ծնաւ Կոստանդինն:

Ի թվին ՁԻԷ (1278) ծնաւ Թեֆանօն ու Ըոիթայն խեղեփք:

Ի թվին ՁԻԸ (1279) ծնաւ Ներսէսն: Եւ Ալֆին¹²⁸ մտաւ ի Հայք¹²⁹:

¹¹⁸ Ֆրիլպ III. Ֆրանսիայի թագավոր (1270–1285 թթ.):

¹¹⁹ Դալէ/խալէ = նազ. փոխառութիւն արաբերենից. տե՛ս Աճառյան, ՀԼՊ, հտ. 2, էջ 193:

¹²⁰ Սիր = տիար. փոխառութիւն հին ֆրանսերենից (sire):

¹²¹ Էդուարդ I. Անգլիայի թագածառանգ, հետագայում Անգլիայի թագավոր (1272–1307 թթ.):

¹²² Գրիգոր X. Հռոմի պապ (1271–1276 թթ.):

¹²³ Լիոն. քաղաք Ֆրանսիայում:

¹²⁴ «Եւ թագուեցաւ ... Լեւոնն» հատվածը բացակայում է Հեթում Բ թագավորի պատմության մեջ:

¹²⁵ Պնդուխտար. Բայբարս ալ-Բունդուկղարի. Մամլուքյան Նզիպտոսի սուլթան (1260–1277 թթ.):

¹²⁶ Կանդարա = կամուրջ. փոխառութիւն արաբերենից (qanṭara). Աճառյան, ՀԼՊ, հտ. 2, էջ 194:

¹²⁷ խեղեփ = երկվորյակ:

¹²⁸ Ալֆի. խոսքը վերաբերում է Մամլուքյան Նզիպտոսի սուլթան Ալ-Մանսուր Սեյֆեդդին Կալավուն ալ-Ալֆին (1280–1290 թթ.):

¹²⁹ «Եւ Ալֆին մտաւ ի Հայք» բառերը բացակայում են Հեթում Բ թագավորի պատմության մեջ:

Ի թվին ՉԼԱ (1282) Մանկու Տամուր¹³⁰ եղբայր Ապաղա դանին¹³¹, մտաւ ի Շամբն:

Ի թվին ՉԼԲ (1283) Քուրքմանքն տիրեցին Մանիօնին, յետ Ե (5) ամի պաշարման նորա: Վաղջանեցաւ Ապաղա դանն եւ Մանկու Տամուրն՝ իւր եղբայրն: Եւ նստաւ միւս եղբայրն նորա Ահմատն¹³²:

Ի սոյն ամի ծնաւ Աւշինն ու Ալինախն խեղեփք:

Ի թվին ՉԼԳ (1284) եղև թափումն Անամուռին¹³³ ի Քուրքաց:

Ի թվին ՉԼԴ (1285) սպանաւ Ահմատ դանն, եւ Արղուն¹³⁴, որդին ի յԱպաղա դանէն, եղև դան:

Ի թվին ՉԼԵ (1286) վաղջանեցաւ Տիլիպ ըռէ տ-Տրանցն, եւ թագաւորեաց 121բ որդի նորա Տիլիպ¹³⁵: Եւ վաղջանեցաւ թագաւորն՝ Արակունաց¹³⁶ Փեռն¹³⁷, եւ թագաւորեաց որդի նորա Արֆուն¹³⁸:

Ի թվին ՉԼԶ (1288) մեռաւ Արղու դանն, եւ նստաւ դան եղբայր նորա Քեղաթուն¹³⁹:

Ի թվին ՉԼԸ (1289) վաղջանեցաւ ամենաբարի եւ ամէնիմաստ թագաւորն Հայոց Կեռն, եւ եկաց պարոն Հայոց անդրանիկ որդի նորա Կեռն¹⁴⁰: Եւ Ալֆի սուլտանն Մսրա էառ զՏրապօլիս ի քրիստոնէից:

¹³⁰ Մանգու-Քիմուր. Մոնղոլական Իրանի Իլ-խան Աբաղայի (1265–1282 թթ.) եղբայրը եւ զորավարը:

¹³¹ Աբաղա. Մոնղոլական Իրանի Իլ-խան (1265–1282 թթ.):

¹³² Ահմադ Քաբուդար. Մոնղոլական Իրանի Իլ-խան (1282–1284 թթ.):

¹³³ Անամուր. բերդաքաղաք Իսավրիալում. տես Ալիշան, Սիսուան, էջ 320–323; Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հտ. 1, էջ 165–167; Հովհաննեսյան, Կիլիկիոյ բերդերը, էջ 371–384; Hild-Hellenkemper, Kilikien, S. 187–191; Հակոբյան, Մեւր-Քախչյան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 1, էջ 246–247:

¹³⁴ Արղուն. Մոնղոլական Իրանի Իլ-խան (1284–1291 թթ.):

¹³⁵ Տիլիպ IV. Տրանսիայի թագավոր (1285–1314 թթ.):

¹³⁶ Արակուն. Իսպանիայի Արագոն նահանգը:

¹³⁷ Փեռ (= Պիեր). Պետրոս III, Արագոնի թագավոր (1276–1285 թթ.), Սիցիլիայի թագավոր (1282–1285 թթ.):

¹³⁸ Արֆուն = Ալֆոնս III, Արագոնի թագավոր (1285–1291 թթ.):

¹³⁹ Քելխաթու. Մոնղոլական Իրանի Իլ-խան (1291–1295 թթ.):

¹⁴⁰ Քրիլը սխալմամբ Հեթումի փոխարեն դրել է Կեռն անունը:

150 արտադրողի անունը = արտադրողի անունը
 149 արտադրողի անունը = արտադրողի անունը
 148 «Քրիստոսի անունով» արտադրողի անունը = արտադրողի անունը
 147 արտադրողի անունը = արտադրողի անունը
 146 արտադրողի անունը = արտադրողի անունը
 145 արտադրողի անունը = արտադրողի անունը
 144 արտադրողի անունը = արտադրողի անունը
 143 արտադրողի անունը = արտադրողի անունը
 142 Արտադրողի անունը = արտադրողի անունը
 141 Արտադրողի անունը = արտադրողի անունը

Կ Վ Ե Զ Ը Թ Կ Վ Ե Զ Ը Թ

150 արտադրողի անունը = արտադրողի անունը
 149 արտադրողի անունը = արտադրողի անունը
 148 արտադրողի անունը = արտադրողի անունը
 147 արտադրողի անունը = արտադրողի անունը
 146 արտադրողի անունը = արտադրողի անունը
 145 արտադրողի անունը = արտադրողի անունը
 144 արտադրողի անունը = արտադրողի անունը
 143 արտադրողի անունը = արտադրողի անունը
 142 արտադրողի անունը = արտադրողի անունը
 141 արտադրողի անունը = արտադրողի անունը

Ի թվին ԶԾԲ (1303) Մարցին տարաւ զՄլունն¹⁵¹ :

Ի թվին ԶԽԷ (1298) Մարցին սղարեց զՀամուան: Ու Կապնուն¹⁵² տէրն¹⁵³

փախոյց զՍմբատն, որ սպանեց զպարոն Քորոս, եւ եհան զՀեթումն ի բանդէն:

Ի թվին ԶԽԶ (1297) սպանեց Սմբատն զիր եղբայրն զպարոն Քորոսն:

Ի թվին ԶԿԳ (1285) Կեռան թագուհի վաղջանեցաւ յօգոստոս Թ (9):

Ի թվին ԶԾ (1301) ներսէս վաղջանեցաւ, մախս ԻԶ (26):

Ի թվին ԶԾԶ (1307) Պիլարդուն¹⁵⁴ սպանեց զՀեթում աւաք պարոնն ու

տղա թագաւորն Լեւոն, ի նոյեմբեր ժե (15), ի դաշտն Անարզարո:

Ի թվին ԶԾԸ (1309) մեռաւ պարոն Ալինախն, յօգոստոս ԻԷ (27):

Ի թվին ԶԾԹ (1310) ծնաւ Զապէլ¹⁵⁵ թագաւորին զԼեւոնն¹⁵⁶, Թ (9) յապ-

րիլն, եւ ինք վաղջանեցաւ մայիս Գ (3):||

123ա Ի թվին ԶԿԸ (1319) մտաւ Մարա հեծելն յերկիրս՝ Խարաթայն¹⁵⁷ ու Հալպայ ամիրայն, ու եկին ի Սիս ԻԷ (27) ի մայիսն, երեքշափթի: Լ (30) ի մայիսն, ի շաբաթ, աւերեց զէջմիածինն¹⁵⁸ :

¹⁵¹ Մլուն. թեեւ այս անունը համընկնում է Լամբրոնի եւ Բարադրբերդի միջեւ գտնվող Մոլեւոն բերդի անվանը, սակայն անհավատալի է, որ 1303 թվականին եգիպտական մամլուփնեբը զրաված լինեին այն: Մոլեւոնի մասին տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 141–143; Edwards, The Fortifications, p. 195–198; Հովհաննեսյան, Կիլիկիոյ բերդերը, էջ 120–122; Hild-Hellenkemper, Kilikien, S. 347; Հակոբյան, Մեւլիք-Քախչյան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 3, էջ 852–853:

¹⁵² Կապան. բերդ Լեւոնային Կիլիկիայում. տե՛ս Տեր-Ղազարյան, Հայկական Կիլիկիա, էջ 36–37; Edwards, The Fortifications, p. 124–131; Հովհաննեսյան, Կիլիկիոյ բերդերը, էջ 159–166; Hild-Hellenkemper, Kilikien, S. 286–287; Հակոբյան, Մեւլիք-Քախչյան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 2, էջ 946:

¹⁵³ «Կապնու տէր» բառերի տակ հեղինակը նկատի ունի Հեթում Բ-ի եղբորը, Հայոց ապագա թագավոր Կոստանդին Բ (I)-ին (1298–1299 թթ.):

¹⁵⁴ Քիլարդու. մոնղոլ զորահրամանատար (հիշատակված 1306–1308 թթ.):

¹⁵⁵ Զապել. Հայոց թագուհի (1308–1310 թթ.), Հեթում Կոռիկոսցի պատմիչի դուստրը, Օշին թագավորի առաջին կինը:

¹⁵⁶ Հայոց ապագա Լեւոն Գ (III) թագավորը (1301–1307 թթ.):

¹⁵⁷ Այս անձնավորութեան ինքնութիւնը մեզ չհաջողվեց պարզել:

¹⁵⁸ Սաի սուրբ էջմիածին եկեղեցին, ըստ պատմական տվյալների՝ կառուցված Հայոց Լեւոն Բ (I) թագավորի կողմից. «Այս Լեւոն շինեաց ի Սիս, եւ կառուց եւ հիմնարկեաց զհաստահիմն եւ զհոյակապ, զհուշակելի, զբարձրաշտարակ,

Ի թվին ԶԿԹ (1320) հանկաւ ի Քրիստոս աստուածասէր թագաւորն Օշին, յունիս ԺԹ (19), հինգշաբթի: Ու եղիր յիր տեղն զիր որդին զԼեւոնն, ու սահմանեց պայլ՝ զպարոն Օշին¹⁵⁹ Կոռիկոստ տէրն, ու զպարոն Հեթում Ախտուցն տէրն, որ հոգային զերկիրն Ժ (10) տարի: Աւրհնեցին թագաւոր զԼեւոն որդի Օշինն, Ա-ն (1) ի փետրուարն, եւ ի նոյն օրս պսակեցին զթագաւորս ի հետ տամուժէլ¹⁶⁰ Ալիծին¹⁶¹, դստերն պարոն Օշին Կոռիկոսոյ տիրոջն:

Ի թվին ԶԼ (1321) բռնեցին զպարոն Զապլունն¹⁶², Օշին թագաւորի քոյրն, ի յԱյաս, Գ-ն (3) ի մարտն:

Ի թվին ԶԼ (1321) մտաւ Տամուրտաշն¹⁶³ յերկիրս, ու գնաց ի Սիս, ի շա-
123բ բաթ, ի|| նոյեմբեր ԺԴ-ն (14):

Ի թվին ԶԼԱ (1322) երեկ Մարա հեծելն ի յԱյաս: Ի յապրիլ ԻԱ (21), շո-
րեքշաբթի, առին զԱյաս:

Ի թվին ԶԼԲ (1323) հանկաւ ի Քրիստոս ձուան¹⁶⁴ թագուհի: Եւ տէր Կոստանդին Լամրունցի¹⁶⁵ կաթողիկոսն գնաց առ Մարա սուլտանն:

Ի թվին ԶԼԳ (1324) ծնաւ պարոն Հեթում Ախտուցն տիրոջն որդի ճուֆ-
րին¹⁶⁶, ի ԺԹ (19) հոքտեմբոն:

Ի թվին ԶԼԵ (1326) ծնաւ նոյն պարոն Հեթում Ախտուցն տիրոջն որ-

զգմբեթաշէն սուրբ կաթողիկէ տաճարն, ի յանուն էջմիածնայ». Յակոբ Սսեցի,
Պատմութիւն, էջ 157:

¹⁵⁹ Օշին. Կոռիկոսի կոմս, Կիլիկիո պայլ (1320–1329 թթ.):

¹⁶⁰ Տամուժէլ = օրիորդ. փոխառութիւն իտալերենից (damigella). տե՛ս Աճառյան,
ՀԼՊ, հտ. 2, էջ 301:

¹⁶¹ Ալիս. Հայոց թագուհի (1321–1329 թթ.):

¹⁶² Զապէլ = Իզաբել Տյուրացի. Կիպրոսի գահի բռնագավթիչ Ամորի Տյուրացու
(1306–1310 թթ.) կինը, Հայոց թագավոր Լեւոն Գ (II)-ի դուստրը (մահ.
1323 թ.):

¹⁶³ Տիմուրտաշ. Թումի երկրի մոնղոլ կուսակալ (1317–1327 թթ.):

¹⁶⁴ ձուան = Յովհաննա կամ Ժաննա-Իրեն Անժուացի. Հայոց թագուհի (1316–1320 թթ.,
մահ. 1323 թ.):

¹⁶⁵ Կոստանդին Գ Լամբրոնացի. Հայոց կաթողիկոս (1323–1326 թթ.):

¹⁶⁶ ճուֆրին մահացել է 1358 թ., ինչի մասին տեղեկացնում է նրա եղբոր՝ Կոս-
տանդինի շափածո հիշատակարանը. տե՛ս «Մայր ցուցակ Մատենադարանի», հտ.
2, էջ 130; Ալիշան, Սիսուան, էջ 413:

դի Կոստընդինն¹⁶⁷, ի հոքտեմբո, ի ժԲ (12):

Ի թվին ՉՀԸ (1329), Ա (1) ի սեխտեմբոն, Լեւոն թագաւորն յըրկեց զպարոն Հեթում Ախտուցն տէրն, սարած¹⁶⁸ զալէով մի, ի Ֆոանք՝ վասն իւր թագուհի գտնելոյ: Եւ հասաւ ի Սիծիլիո կղզին ի Զ-ն (6) ի հոքտեմբոն: Եւ գտեալ 124աոր ունէր Սիծիլիո թագաւորն դստերս երիս, եւ իմ տեսեալ յոյժ գեղեցիկ մինն քան զմիւսն: Եւ անդ արարեալ խնամութիւն, եւ ըռէ Ֆտրիկ¹⁶⁹ կամեցաւ տալ յիւր դստերացն՝ զոր եւ կամենայր թագաւորն առնուլ:

Եւ անտի դարձեալ՝ եկի ի Հայք, ի թվին ՉՀԹ (1330), ի Զ-ն (6) յունուարն, ի Կոսիկոս, եւ ի ժԳ-ն (13) յունուարն գնացի ցամքով առ թագաւորն ի Սիս: Եւ թագաւորն լուեալ զխնամութիւնն, եւ հաւնեցաւ առնուլ իւր թագուհի ի դստերացն ըռէ Ֆտրկայ:

Եւ առաքեաց կրկին զիս՝ զՀեթումս, եւ եպիսկոպոս զտէր Քադէոս¹⁷⁰, եւ զտիկին Մլքի¹⁷¹ սինիջալէսն¹⁷² եւ այլք՝ գնալ կրկին տեսանել զգոստերսն ըռէ Ֆտրկայ: Նաւեցաք ի յԱյաս ժԷ (17) ի մարտն, եւ Աստուծով հասաք ի Սիծիլիոյ 124բ կղզին, Զ-ն (6) ի միայիսն:

Եւ կրկին տեսաք զգոստերս ըռէ Ֆտրկայ, եւ ոչ կամէաք հաւանիլ ամենե-

¹⁶⁷ Հայոց ապագա Կոստանդին Ե (IV) թագավորը (1365–1373 թթ.):

¹⁶⁸ Սարել = պատրաստել, սարքել, կարգի բերել (տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 316), հետեւաբար «սարած զալէ» նշանակում է «կահավորված նավ»:

¹⁶⁹ Ֆրեդերիկ III Արագոնացի. Սիցիլիայի թագավոր (1296–1337 թթ.):

¹⁷⁰ Հավանաբար, խոսքը վերաբերում է Քադէոս Կաֆայեցի արքեպիսկոպոսին, որը մեկ անգամ էլ (1327 թ.) Լեւոն Ե (IV)-ի կողմից, որպէս դեսպան, ուղարկվել էր Հռոմի պապի մոտ. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 558; Աճառյան, ՀԱԲ, հտ. 2, էջ 248: Քերեւս նույնն է նաեւ Սանուտոյի հիշատակած Քադէոս եղբայրը, որը նույնպէս Լեւոնի դեսպանի հանգամանքով այցելել էր Հռոմի պապին (1324 թ.). տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 391, 558; Աճառյան, ՀԱԲ, հտ. 5, էջ 319:

¹⁷¹ Մլքի. հավանաբար Կիլիկիո սենեշալ (սեղանապետ) Հեթումի (1321–1331 թթ.) կինը: Հեթում սենեշալի մասին տե՛ս Langlois, Cartulaire, p. 185; Ալիշան, Սիսուան, էջ 412, 485; Աճառյան, ՀԱԲ, հտ. 3, էջ 76; Բոռնազյան, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները, էջ 74:

¹⁷² Սինիջալէս = սեղանապետի տիկին. փոխառություն հին ֆրանսերենից (senescal/sénéchal). տե՛ս Աճառյան, ՀԼՊ, հտ. 2, էջ 301; Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 321, 327:

181 ք/գ/բ = ք/գ/բ Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 1, էջ 187, 204:
 180 Պոլս = պոլսիական Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 283:
 179 Սա = սառաձագնի Դազարյան, Կոմ. 101:
 178 Սա = սառաձագնի Դազարյան, Կոմ. 2, էջ 141:
 177 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:
 176 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:
 175 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:
 174 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:
 173 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:

181 ք/գ/բ = ք/գ/բ Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 1, էջ 187, 204:
 180 Պոլս = պոլսիական Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 283:
 179 Սա = սառաձագնի Դազարյան, Կոմ. 101:
 178 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:
 177 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:
 176 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:
 175 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:
 174 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:
 173 Սա = սառաձագնի Դազարյան-Արթուրյան, Բաղարյան, Կոմ. 2, էջ 141:

125բ դու շմորիս¹⁸² || ու ես¹⁸³, նայ մուտեց¹⁸⁴ գէտ Շամցին եւ երեկ ի վրա Կուկլա¹⁸⁵: Ու գտաւ Թիթեւ¹⁸⁶ ի մարդուէ, ու կովեցաւ ու էառ¹⁸⁷ ժՁ (16) յունիսն: Եւ էառ գճոխին¹⁸⁸, գպուրճն¹⁸⁹ ու գծակքն¹⁹⁰ Ձ (6) յուլիսն:

Ի Թվին 222 (1337) երեստ Թագաւորն ի Հայոց երկրէն ի Մարա սուլտանն ի Միլէք Նասրն, գՁահնայ¹⁹¹ այնդիհն¹⁹², իր բերդերովն ու երկրովն:

Եւ ի նոյն տարիս երեւեցաւ յերկինս ասթիղն գիսաւոր: Եւ տվին ի Խարամանն¹⁹³ գ Դեղնքարն¹⁹⁴, եւ այլ բերդեր այլ խլեցին:

182 Շմորել = շփոթել, խախտել. Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 219:

183 «Եփ դու շմորիս՝ ու ես» նախադասութիւնը պետք է հասկանալ հետեւյալ կերպ. «Երբ դու պայմանը խախտես՝ ես էլ կխախտեմ»: Ի դեպ, սա միջազգային իրավունքի կարելոր դրույթ է բացահայտում՝ այն է, երբ կողմերից մեկը խախտում է պայմանագիրը, ապա մյուս կողմը նույնպէս իրավունք է ստանում խախտելու այն:

184 Մտտել = ապստամբել, ըմբոստանալ. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 155: Ըստ երեւույթին, փոխառված է ասորերենից (mrād):

185 Կուկլայ կամ Կուկլակ. բերդ լեռնային Կիլիկիայում. տե՛ս Edwards, The Fortifications, p. 139-142; Հովհաննեսյան, Կիլիկիոյ բերդերը, էջ 97-102; Hellenkemper, Burgen, S. 225-228; Hild-Hellenkemper, Kilikien, S. 323-324.

186 Թիթեւ = Թեթեւ. ըստ այդմ, «Թիթեւ ի մարդուէ» նշանակում է «սակավամարդ»:

187 Ջեռագրում՝ իսռ:

188 Ծոխի. անծանոթ տեղանուն, որը, թերեւս կարելի է նույնացնել Մսիսի գավառի Ծուագեթ (Joacheth) բնակավայրի հետ. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 255; Hild-Hellenkemper, Kilikien, S. 280.

189 Պուրճ = բուրգ, ամրոց. փոխառութիւն արաբերենից (burj). տե՛ս Աճառյան, ՀԼՊ, հտ. 2, էջ 202; Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 286:

190 Ծակ բառն այստեղ, հավանաբար, նշանակում է քարանձավ: Բառի այդ նշանակութիւնը մասին տե՛ս «Նոր Բառգիրք», հտ. 1, էջ 1001:

191 Ձահան (Ձեյհուն, Ջիհուն). Կիլիկիայի Պիրամոս գետը:

192 Դիհ = կողմ. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 177: Ըստ այդմ, «այնդիհն» նշանակում է «այնկողմ»:

193 Խարաման. Կարամանների թուրքմենական ցեղ. տե՛ս նաեւ՝ ծանոթագրութիւն 108:

194 Դեղնքար. բերդ լեռնային Կիլիկիայում. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 273; Էփրիկյան, Բնաշխարհիկ բառարան, հտ. 1, էջ 602-603; Հովհաննեսյան, Կիլիկիոյ բերդերը, էջ 94-95; Hild-Hellenkemper, Kilikien, S. 236; Հակոբյան, Մելիք-Բախչ

Ի թվին ՉՂ (1341) սատակեցաւ Տաճկաց սուլտանն Միլէք Նասրն: Եւ ի նոյն ամիս, Իէ յաղվեստօսն, մեռաւ Լեւոն թագաւորն՝ որդի Օշին թագաւորի առաջնոյ: Եւ եղիր պալլ Հայոց զպարոն ճուան¹⁹⁵ բրինձն¹⁹⁶, Սրո տիրոջն¹⁹⁷ ...||

126^ա Ի թվին ՉՀԲ (1323) գնաց տէր Կոստընդին կաթողիկոսն առ սուլտանն Մսրա, եւ արար սէր ու խաղաղութիւն, եւ դարձաւ մեծ պատվով: Եւ երեստ կաթողիկոսի Գ (3) ձիաւոր այլ, որ ծառա կային, եւ այլ ծառայք այլ ի փոքրագունից, եւ դարձաւ ի Միս:

Ի թվին ՉՀԴ (1325), ի մայիս ԻԲ (22), հինգշափթի, ընդ լոյսն, երիտասարդ մի կոյր է (7) ամ էր որ բնաւ լոյս չէր տեսել Բ (2) աչքն: Գնաց առջեւ սոյնին¹⁹⁸ սուրբ Աստուածածնին, եւ լալով խնդրէր զբժըշկութիւն: Նա յառաւօտուն յայտնի տեսաւ զսուրբ Աստուածածինն, որ ձենէր¹⁹⁹ եւ ասէր. «Գրիգոր, Գրիգոր, է՞ր կու լաս, յորժամ կուրցար է՞ր չեկեր առ իս, որ բժշկէի²⁰⁰ զքեզ»: Եւ նա ասէ. «Ոչ գիտէի զյարկ քո»: Եւ եղիր սուրբ կոյսն զձեռն, եւ 126^բ ճեղքեց զթարթիչ||քն, եւ նոր պտուղ շինեց, եւ կալեալ փոքր շիշ եւ դեղդիր, եւ անցոյց զդեղդիրն յաչքն: Եւ առ ժամայն բժշկեցաւ, եւ տեսաւ յայտնի զսուրբ Աստուածածինն՝ ձերանասգեստ, եւ Բ (2) հրեշտակ առջին: Եւ ոմանք որ տեսել ին²⁰¹ զնա՝ յառաջն թուխակն էր, եւ այժմ խայժակն եղեւ: Եւ ամենայն բնակիչք քաղաքին եւ գաւառին տեսան եւ գոհութիւն տվին Աստուծոյ արհնելոյն, յաւիտեանս յաւիտենից, այժմ եւ անբաւ յաւիտեանս, ամէն²⁰²:||

յան, Բարսեղյան, Տեղանունների բառարան, հտ. 2, էջ 76:

195 ճուան = Հովհաննես (Ջիւան, Ջեհան) Լուսինյան, Կիլիկիո պալլ (1341–1342 թթ.):

196 Բրինձ = պրինց, իշխան. փոխառություն հին ֆրանսերենից (prince):

197 Այս բառից հետո թերթ է ընկել: Պետք է ենթադրել, որ «տիրոջն» բառին հաջորդել է «որդին» բառը, նկատի ունենալով, որ Հովհաննես-Ջեհանը Տյուրոսի (Սուր) տիրոջ՝ Կիպրոսի գահի բռնազավթիչ Ամորիի (1306-1310 թթ.) որդին էր:

198 Սոյն. ըստ երեսույթին, այս բառը պետք է հասկանալ «սյուն», ինչը նշանակում է, որ այն սուրբ Աստվածածնին նվիրված ինչ-որ հուշարձան-աշտարակ է եղել:

199 Ձեռագրում՝ ձինէր: Ձենէլ-ը նշանակում է ձայնել, ձայն տալ:

200 Ձեռագրում՝ բժշկելի:

201 Ին = էին օժանդակ բայի բարբառային ձևը:

202 Այս բառից հետո այլ գրչով երեք տող. «Ի թվին ՊԼէ (1388), ի մայիս ԺԸ (18), հանկաւ ի Քրիստոս Թորոսն որդի պարոն Օշին տուայտրուն ու պարոն Աստուածյակորանց», որից հետո թերթ է ընկել:

127ա Ի թվին Հայոց ՉԾԴ (1305) Լեւոն թագաւոր՝ որդի պարոն Քորոսի, ի Քրիստոսի սուրբ Մերնդանն արնն, արար ձիաւոր²⁰³ զիս՝ զՀեթում Ախտուցն տէր ջամբուլա²⁰⁴ Հայոց:

Ի թվին ՉԿԶ (1317) Աւշին թագաւոր յղրկեց զիս՝ զՀեթումս, յառ ըռէ Ըռուպէրտն²⁰⁵ ու առ իր աներն²⁰⁶ բրինձն, ի յԱնափլն²⁰⁷: Գնացի առ իրենք, ու կեցա ի դուրս յերկրէս ամիս Թ (9), ու դարձայ եկի ի յերկիրս:

Ի թվին ՉԿԸ (1319) Աւշին թագաւոր յղրկեց զիս՝ զՀեթում Ախտուցն տէր ջամբուլայս, ի յառ պապն²⁰⁸, ի յԱիւնիունն²⁰⁹: Ու կեցայ ի դուրս ի յերկրէս տարի Ա (1) ու ամիս ԺԱ (11) ու ար ԻԴ (24), ու դարձայ եկի յերկիրս:

127բ Ի թվին ՉՀԸ (1329) Լեւոն թագաւոր՝ որդի Աւշին թագաւորին, յղրկեց զիս՝ զՀեթում Ախտուցն տէրս, յառ ըռէ Ֆտրիկն՝ վասն իր կարգման: Գնացի առ ինք ի Մսինն²¹⁰, ու կեցա ի դուրս յերկրէս ամիս Ե (5), ու դարձայ ու եկի յերկիրս:

Ի թվին ՉՀԹ (1330) Նոյն թագաւոր Լեւոն կրկին յղրկեց զիս՝ զՀեթում Ախտուցն տէր ջամբուլայս, առ ըռէ Ֆտրիկն՝ վասն իր թագունէ բերելուն: Գնացի առ ինք ի Մսինն, ու կեցայ ի դուրս ի յերկրէս տարի Ա (1) ու ամիս

²⁰³ «Արար ձիաւոր» = «ասպետ կարգեց»:

²⁰⁴ «Ախտուցն տէր ջամբուլա (= chambrelan, սենեկապետ)» բառերը Ֆ. Կոնիբերը կարդացել է «եւ տուցն տէր ջամբուլա» (Conybeare, Catalogue, p. 291), ինչը Վ. Հակոբջանին թյուրիմացաբար հիմք է տվել ենթադրելու, որ Հեթում Նղիրցին Լեւոն Դ (III)-ի կողմից Հայոց սենեկապետ է կարգվել 1305 թվականին. տե՛ս Հակոբջան, Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 397, ծանոթ. 3:

²⁰⁵ Ռոբերտ Անժուացի. Նեապոլի թագավոր (1309–1343 թթ.):

²⁰⁶ «Ու առ իր աներն» բառերը Ֆ. Կոնիբերը կարդացել է «տառիրաներն» (Conybeare, Catalogue, p. 291): Օգտվելով Կոնիբերից, Նույնը կրկնել է Վ. Հակոբջանը. տե՛ս Հակոբջան, Մանր ժամանակագրություններ, հտ. 1, էջ 390, 397, ծանոթ. 4: Օշիւնի աները, այսինքն նրա կնոջ՝ Յովհաննայի կամ Ժաննա-Իրենի հայրը, Տարանտոյի պրինցն էր՝ Ֆիլիպ Անժուացին. տե՛ս Rüdtt-Collenberg, The Rupenides, III (H2).

²⁰⁷ Անափլն = Նեապոլ. քաղաք Իտալիայում:

²⁰⁸ Այդ ժամանակ Հռոմի պապը Հովհաննես XXII-ն էր (1316–1334 թթ.):

²⁰⁹ Աիւնիուն = Ավինյոն. քաղաք Ֆրանսիայում, Հռոմի պապերի նստավայրը 1309–1377 թթ.: Ավինյոնի Աթոռի եւ Կրիկիայի հարաբերությունների մասին մանրամասն տե՛ս Richard, La papauté, p. 184–187.

²¹⁰ Մեսինա. քաղաք Սիցիլիայում:

Ձ (6): Դարձայ ու եկի յերկիրս, ու բերի զթագունհին զԿուստանցիա՝ զաւաք դուստրն ըռէ Տտրկա:

Եւ ի թվին 226 (1336) նոյն թագաւորն լեւոն յղրկեց զիս՝ զՀեթում Ախ-128ատուցն տէր ջամբուլայս Հայոց, առ Մսրա սուլտանն դեսպան: Գնացի ինչվի՛յա-վազն²¹¹ ի յԱրիշն²¹², եւ անտի դարձուց զիս սուլտանն Միլէք Նասրն, որ եկի յերկիրս. կեցայ ի դուրս ամիս²¹³:

Ի թվին 229 (1344) Կի թագաւորն Հայոց յղրկեց զիս՝ զՀեթում Ախատուցն տէր ջամբուլայս Հայոց, ի Կոստանդնուպօլիս²¹⁴ վասն իր թագունհէ՛²¹⁵, որ բե-րի յերկիրս: Գնացի ի դեսպանութիւն, նայ ոչ կամեցաւ զալ ի յերկիրս: Կե-ցայ ի դուրս ի յերկրէս ամիս Ձ (6)²¹⁶, դարձայ ու եկի յերկիրս:

²¹¹ Ավազ. այս բառն այստեղ գործածված է ավագուտ կամ անապատ իմաստով:

²¹² Ալ-Արիշ. քաղաք Պաղեստինի եւ Եգիպտոսի սահմանագլխին, Սինայի թերակղզում:

²¹³ «Ամիս» բառից հետո գրիչը մոռացել է նշել թիվը, կամ այն ընթվել է:

²¹⁴ Ջեռագրում՝ Կոստպօլս:

²¹⁵ Խոսքը վերաբերում է Գիի երկրորդ կնոջը՝ Թեոդորա Սիրգիանեսին, որից Ես ունեցել էր մի դուստր՝ Իզաբել կամ Մարգարիտ անուկով (Rüdt-Collenberg, The Rupenides, III (H2), p. 74, 75–76): Երբ թագունհին հրաժարվում է զալ Կիլիկիա, Գին դիմում է Հռոմի պապ Կղեմես VI-ին (1342–1352 թթ.), նրանից ապահար-զանի եւ նոր ամուսնության թույլտվություն խնդրելով, եւ վերջինս սիրահոժար կերպով բավարարում է նրա խնդրանքը. տե՛ս Coureas, Papacy, p. 106.

²¹⁶ Ջեռագրում՝ Ձ0:

3. ԱՆԱՆՈՒՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ (XIV դ.)

Քրիտանական Գրադարանի Or.5458-Arm.116 ձեռագրի տարբեր էջերում պահպանվել են նաև Կիլիկիայի պատմությանն առնչվող մի քանի ժամանակագրական տեղեկություններ, որոնց հրատարակությունը, կարծում ենք, նույնպես օգտակար կարող է լինել մասնագետների համար, նկատի ունենալով, մանավանդ, XIV դ. հայկական աղբյուրների սակավությունը: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում Մարիոն Թագուհու կրկնակի գահակալումներին (1363-1364, 1373-1374 թթ.) վերաբերող II գրառումը, որը, որպես լրացում, կցված է ներսես Պալիանենցի «Իշխանութիւնք եւ թագաւորք Հայոց» գավազանացանկին¹: III-ը որոշ նոր մանրամասներ է ավելացնում կիպարիտ գորավարի սպանության հանգամանքներին: Իսկ IV համարի տակ հրատարակվող տեղեկությունները վկայում են այն մասին, որ հայերն անտարբեր չեն եղել իրենց գերյալ թագավորի՝ Լեւոն Զ (V) Լուսինյանի նակատագրի հանդեպ:

Հիշատակագրությունների բնույթ կրող այդ գրառումները, կատարված տարբեր գրիչների ձեռով, տեղ են գտել ձեռագրի առանձին էջերում, կամ էլ կցված են պատմական բովանդակություն ունեցող այլ բնագրերի: Հարմարության նկատառումով խախտելով էջերի հաջորդականությունը, ստորեւ այդ տեղեկությունները ներկայացնում ենք ժամանակագրական կարգով.

¹ Վերջինիս հրատարակությունը տես՝ Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 195-208:

* * *

L

145բ Թվին Պժե (1366)² ըռէ Փենն³ ելաւ Ճ (100) ղալէով ի Սկանտրի⁴, ու էառ⁵ ու այրէց ու թաղթնեց⁶, ու կեցաւ Գ (3) օր ու դարձաւ: Ու ի մի կայլ⁷ տարին, յայն օրն, երեկ ելաւ ի Տրապօլիս⁸:

II.⁹

145ա Կոստընդին¹⁰, որդի պարոն Պաղտնին՝ ամս Ի (20):
Մարիոն¹¹ թագուհի՝ ամս Ա (1):
Կոստնդին¹², որդի պարոն Հեթմո՝ ամս Ժ (10):
Դարձեալ Մարիոն թագուհի՝ ամս Ա (1)¹³:

² Թվականը սխալ է. Ալեքսանդրիայի գրավումը Ֆրանկների կողմից տեղի է ունեցել 1365 թվականին:

³ Փեն (= Պիեր). Պետրոս I, Կիպրոսի թագավոր (1359-1369 թթ.):

⁴ Սկանտրի = Ալեքսանդրիա, քաղաք եգիպտոսում:

⁵ Ձեռագրում՝ իառ:

⁶ Թաղթնել/Թախթանել = ավարի մատնել, թալանել. տե՛ս Ղաղարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 244-245:

⁷ Կայլ = գալ, եկող (մյուս):

⁸ Տրապօլիս = Տրիպոլի. քաղաք Լիբանանում:

⁹ Այս հատվածը, որպես լրացում, կցված է ներսես Պալիանենցի «Իշխանութիւնք եւ թագաւորք Հայոց» աշխատությանը: Պալիանենցի այդ երկի հրատարակությունը տե՛ս Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 195-208:

¹⁰ Խոսքը վերաբերում է Կիլիկիո թագավոր Կոստանդին Գ (III)-ին, որը, սակայն, իրականում գահակալել է ոչ թե 20, այլ 19 տարի (1344-1362 թթ.):

¹¹ Մարիոն. Հայոց թագուհի (1344-1362 թթ., մահ. 1377 թ.). ըստ այս եզակի տեղեկության՝ իր ամուսնու՝ Կոստանդին Գ (III)-ի մահից հետո, Մարիոնը մեկ տարի միանձնյա գահակալել է Կիլիկիայում: Նրա մահվան ճշգրիտ թվականը (ՊԻՁ (1377), յուլիսի ԺԸ (18), տե՛ս Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 250:

¹² Կոստանդին Ե (IV). Հայոց թագավոր (1365-1373 թթ.):

¹³ Ըստ այսմ, Մարիոն թագուհին 1373 թվականին վերստին մեկ տարով ստանձնել է Հայոց գահը, մինչդեռ Հովհաննես Դարդեղի վկայությամբ՝ նա ընդամենը երկրի խնամակալ է կարգված եղել. տե՛ս Յովհաննէս Դարդեղ, Ժամանակագրութիւն, էջ 68: Խնդրի առնչությամբ հմմտ. Mutafian, Léon V Lusignan, p. 203-204.

լեւոն¹⁴, որդի ճուան¹⁵ բրբնձին¹⁶, ամիս Ժ (10)¹⁷:

III.

143բ Ի Թվին ՊԺԸ-ն (1369), Ի մայիս¹⁸ ամսուս Ի-ն (20), երեկ Տարսոյ¹⁹ նա-
յիպն²⁰ Շուհորէորդին²¹, Ի վրայ Սրսու: Ի շարաթ օր կովեցան յուսին²² դիհն²³,
ու իրք մի վզեն²⁴ չկարցին այնել²⁵: Բու կերակի Ի վաղուենէ եկին յԱնցմնցկին²⁶

14 Լեւոն Զ (V) Լուսինյան. Հայոց Թագավոր (1374-1375 թթ.):

15 ճուան = Հովհաննես (Ջիւան, Ջեհան) Լուսինյան, Կիլիկիո պայլ (1341-1342 թթ.),
Հայոց Լեւոն Զ (V) Թագավորի հայրը:

16 Բրբնձ = պրինց, իշխան. փոխառութիւն հին Ֆրանսերենից (prince):

17 «Ամիս Ժ» բառերը Ֆ. Կոնիբերը, անուշադրությամբ, Թարգմանել է «տաս տարի»
(Conybeare, Catalogue, p. 292), ինչը տեղիք է տվել յուրջ թյուրիմացութիւնների. այդ
մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Կոստանդին Ե (IV) ենթադրում»:

18 Ջեռագրում՝ մայի:

19 Տարսոն. քաղաք Կիլիկիայում:

20 Նայիպ = կուսակալ, փոխանորդ. փոխառութիւն արաբերենից (نایب). տե՛ս Ղա-
զարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 184:

21 Շուհորէորդի. Ամենայն հավանականությամբ Տարսոնի էմիր կամ նայիպ Մանչակի Շա-
հարօղլի մականվան հայկականացված (որդի=օղլի) եւ մի փոքր աղավաղված ձեւն
է: Մանչակը երեք անգամ Շահարօղլի է կոչված Հակոբ Սեփու պատմության մեջ.
տե՛ս Յակոբ Սեփի, Պատմութիւն, էջ 241, 244, 245: Ֆ. Կոնիբերը եւ, նրան հետեւելով,
Վ. Հակոբյանը «Շուհորէորդին» բառը կարդացել են «շուհ որ է որդին». տե՛ս Cony-
beare, Catalogue, p. 292: Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ, հտ. 1, էջ 390:

22 Եթե բառն աղավաղված չէ, եւ հեղինակն իսկապես նկատի ունի «ուսս»-ը, ապա
այստեղ այն կարող է նշանակել «թիկունքի կողմը»:

23 Դիհ = կողմ. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 177:

24 Վզեն (վզեան) = վնաս. փոխառութիւն պարսկերենից (vazyana). տե՛ս Ղազար-
յան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 367:

25 Այնել = անել, առաջացնել, պատճառել. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառա-
րան, հտ. 1, էջ 43:

26 Անցմնցուկ. Հակոբ Սեփին այս տեղանունը երկու անգամ հիշատակում է
«Անցմնցուկին կարմունճն» բառակապակցության մեջ. տե՛ս Յակոբ Սեփի,
Պատմութիւն, էջ 241, 244: Հստ Ղ. Ալիշանի՝ դա մի գլուղ է եղել Սսի մոտա-
կայքում, համանուն գետակի ափին. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 211, 538:
Թերեւս ծագում է անցմնցել բայից, որը նշանակում է «ձի քայլեցնել». տե՛ս

կանդարայն²⁷, հեծմնով²⁸ ու հետեկով դրին կուր: Ու խանկրեցին զքրիստոն-
նէքն, ու սպանին ճՄԴ (204)²⁹: Ու սպանին զպարոն Կիպարիտ³⁰, պարոն թո-
րոս³¹ ավաք մարաջախտուն որդին: Ու այրեցին զքաղաքն ու զԴարպասն³²,
ու կեցաւ Գ (3) ար ու դարձաւ ի յիր տեղն, ի Տարսուս³³: Կու ասեն, թէ Կոս-
տընդին³⁴ թագաւոր պարոն Հեթմու³⁵ որդին, երբ զհիծելն³⁶, ու տուր տունց
զպարոն Կիպարիտն ու զքաղաքն Տաճկին³⁷:

IV.

145բ Ի թվին ՊԻԴ (1375) էառ Մարա սուլտանն զՍիս³⁸:

Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 68:

²⁷ Կանդարա = կամուրջ. փոխառութիւն արաբերենից (qanṭara). տե՛ս Աճառյան,
ՀԼՊ, հտ. 2, էջ 194:

²⁸ Հեծման = հեծյալ, հեծելազոր. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 33:

²⁹ Գրիչը, հավանաբար, սկզբում գրել է «Ճ», ապա ճշտել «Մ», սակայն մոռանալով
ընջել «Ճ»-ն:

³⁰ Կիպարիտ. Կիլիկիո մարաջախտ, զոհված Սսի կամրջի մոտ տեղի ունեցած նշանա-
վոր ճակատամարտում (1369 թ., ըստ այլոց՝ 1371 թ.): Հայտնի է, մասնավորա-
պես, XIV-XV դդ. հայ բանաստեղծ Հովհաննես Թլկուրանցու «Տաղ քաջի Կիպարտին»
ստեղծագործութիւն շնորհիվ. տե՛ս Հովհաննես Թլկուրանցի, Տաղեր, էջ 197-204:

³¹ Թորոս. Կապան բերդի տեր, Կիլիկիո սպարապետ կամ ավագ մարաջախտ, վերո-
հիշյալ Կիպարիտի հայրը. տե՛ս Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 451, 477:

³² Դարպաս էր կոչվում Սսի արքայական պալատը. տե՛ս Ալիշան, Սիսուան, էջ 538-539:

³³ Տարսուս. նույնն է՝ Տարսոն. քաղաք Կիլիկիայում:

³⁴ Կոստանդին Ե (IV). տե՛ս Ժանոթագրութիւն 12:

³⁵ Հեթմուճ Նդիրցի. Կիլիկիո սենեկապետ (ջամբուլա), Լեւոն Ե (IV) թագավորի խնա-
մակալ (1320-1329 թթ.), Կոստանդին Ե (IV) թագավորի հայրը:

³⁶ Հիծել/հեծել = հեծյալ, հեծելազոր. տե՛ս Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ.
2, էջ 32:

³⁷ Ըստ Հովհաննես Դարդելի՝ Կոստանդին Ե (IV) թագավորն, իբրև թե, մտադրու-
թիւն է ունեցել իր երկիրը հանձնել մահմեդականներին (Յովհաննէս Դար-
դել, Ժամանակագրութիւն, էջ 67-68): Մեր աղբյուրի «Կու ասեն, թէ» բառերով
սկսվող նախադասութիւնը ցույց է տալիս, որ համենայն դեպս, Կիլիկիայում
այդպիսի խոսակցութիւններ տարածվել են: Հմմտ. նաև՝ Հովհաննես Թլկու-
րանցի, Տաղեր, էջ 202; Յակոբ Սսեցի, Պատմութիւն, էջ 244, 245:

³⁸ Սիսը 1375 թվականին գրավել է ոչ թե Ժամանակի Մամլուքյան եգիպտոսի սուլ-

V.

- 131^ա Ի Բվին ՊլԱ (1382), Ի հոքտեմբերի Ա (1), ազատեցաւ Լեւոն Թագաւորն
Հայոց Ի Մարայ ծառայութենէն³⁹, ու գնաց Ի Գաղալանք⁴⁰ :
- 145^բ Ի Բվին ՊլԱ-ն (1382), Ի Ա-ն (1) Ի հոքտեմբերի, խալըսեցաւ⁴¹ Լեւոն Թա-
գաւոր՝ որդի պարոն Ճուան բրրնձին, Ի Մարա, ու գնաց Ի Գաղալանաց եր-
կիրն, հրամանաւ Պարխուխին⁴², որ մեծ պարոն⁴³ է Ի Մար:

VI.

- 126^բ Ի Բվին Պլէ (1388), Ի մայիս ԺԸ (18), հանկաւ Ի Քրիստոս Քորոսն՝ որդի
պարոն Օշին տուայտրուն⁴⁴, ու պարոն Աստուածյակոբանց⁴⁵ :

Թանն անձամբ (Շաբան II. 1363-1376 թթ.), այլ նրա հանձնարարությամբ՝ Հալե-
պի մամլուքյան մելիք Աշըգ-Քեմուրը:

³⁹ Լեւոն Զ (V) Լուսինյան Թագավորը յոթ տարի (1375-1382 թթ.) գերի պահվեց
եգիպտոսում:

⁴⁰ Գաղալանք = Կատալոնիա. նահանգ Իսպանիայում:

⁴¹ Խալըսիլ = ազատվել, փրկվել. փոխառություն արաբերենից (halas). Աաղաթ-
յան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 318:

⁴² Պարխուխ = Բարկուկ ալ-Չահիր Սեյֆեդդին. Մամլուքյան եգիպտոսի վեզիր,
հետագայում սուլթան (1382-1399 թթ.):

⁴³ Մեծ պարոն. Արաբական վեզիր (wazīr) տիտղոսի հայերեն համարժեքը: Հմմտ.
հայկական ռաբբուլներում երկրի խնամակալի կամ կառավարչի համար գոր-
ծածվող առաջ պարոն տիտղոսի հետ:

⁴⁴ Տուայտար = Տուատար. փոխառություն պարսկերենից կամ արաբերենից (dawādār),
որը բառացի նշանակում է «թանաքամանի պահապան», այսինքն՝ քարտուղար:
Այդ բառը, «տուատար» ձևով երկու անգամ գործածված է նաեւ Բրիտանական
Գրադարանի Or.5458-Arm.116 ձեռագրում պահպանված հայկական մի այլ աղբյու-
րում (էջ 132բ, 135ա): Dawādār-ը կարելուր պետական պաշտոն էր մանավանդ
Սելջուկյան եւ Մամլուքյան տիրապետության շրջանում: Եզրույթի մասին ման-
րամասն տե՛ս Encyclopaedia of Islam, vol. 2, p. 172.

⁴⁵ «Պարոն» տիտղոսը ցույց է տալիս, որ Քորոսը, Օշինը եւ Աստուածյակոբանցը,
հավանաբար, Հայոց Թագավորության անկումից հետո Լեւոնյան Կիլիկիայում
ապաստանած իշխաններ են եղել:

4. ԱՎԵՏԻՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՑՈՒ ԳԱՎԱԶԱՆԱԳԻՐՔԸ

Ավետիք Տիգրանակերտցին, կոչված նաև Ամդեցի, XVII-XVIII դդ. բազմաբեղուն մի հեղինակ է, որի գրչին են պատկանում ճանապարհորդական, աստղագիտական, տոմարագիտական, երաժշտագիտական, պատմական և աշխարհագրական բնույթի հետևյալ ինֆնուրոյն և թարգմանական երկերը. 1. «Գիրք պատմութեանց, որ կոչի Գաւազանագիրք», 2. «Վասն որ կամի ի Հէպէչին երկիրն գնար», 3. «Թէսվիէի պիութ արապի, որ Ֆարսին Խութանիա ասէ», 4. «Լուսնացոյց մշտնջենական, թարմանեալ ի Ֆռանկաց», 5. «Տէֆտեր գիրք», 6. «Ըստուպայի արուեստ», 7. «Թուրքին Զինն գիրքն», 8. «Երաժշտականութիւն, որ Թուրքն Իլմ-ըլմըսուգի ասէ»¹: Մեզ հետաքրքրողը տվյալ պարագայում առաջին աշխատությունն է, որի ընդարձակ վերնագիրն է «Գիրք պատմութեանց որ կոչի Գաւազանագիրք, համահաւաքեցեալ ի հին գաւազանագրաց և ի վիպարանութեանց ի մի, բազմօք երկամբք, յումեմնէ Աւետիսէ աշխատասիրէ Եղոկացոյ»², ի հայրապետութեան ամենայն Հայոց և սրբոյ Էջմիածնի լուսանկար արտոյ տեառն Աստուածատրոյ, յամի Տեառն 1714, և ի Հայոց ՌՃՀ և Գ թուին»³:

¹ Ավետիք Տիգրանակերտցու անձի և մատենագրական ժառանգության մասին մանրամասն տե՛ս Ալիշան, Աւետիք Պաղտասարեան (1897 թ.): Աճառյան, ՀԱԲ, հտ. 1, էջ 342; Խաչիկյան, Գիտություն, էջ 483, 490; Չորանյան, Ավետիք Տիգրանակերտցի, էջ 96-104; Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. 2, էջ 1014-1023:

² Ավետիքն այստեղ Եղոկացի է կոչված այն պատճառով, որ իր աշխատության մեծ մասը գրել է Թորքատ (Եղոկիա) քաղաքում. տե՛ս Չորանյան, Ավետիք Տիգրանակերտցի, էջ 103:

³ Մաշտոցի անվ. Մատենագրարան, ձեռ. Թ. 7424, էջ 1ա. Հմմտ. Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. 2, էջ 1015:

Խնդրո առարկա պատմական երկասիրությունը Եսեբիոս Կեսարացու «Քրոնիկոնի» եւ Սամուել Անեցու «Հաւամունմի» օրինակով գրված աղյուսակաձեւ ժամանակագրություն է, սկսած Ադամից մինչեւ Աստվածատուր Համադանցի կաթողիկոսի գահակալումը (1715 թ.)⁴: Հիմնական մասով այն մի անկատար, բայց բարեխիղճ ֆաղագրություն է հայկական եւ օտար աղբյուրներից՝ ընդմիջված հազվադեպ հեղինակային գրառումներով: Լինելով պրպտող եւ ստուգախնդիր անձնավորություն, Ավետիֆն ինքն էլ գիտակցում է իր ձեռնարկի անկատարությունը եւ դժգոհում անհրաժեշտ աղբյուրների պակասից. «Քանզի հարուստ գրատուն ոչ կայր մօտս եւ պատմագիրքք, որ զամենեսեան յաճախ պատմութեամբք լնանէի զգիրքս, այլ գոր ինչ այսր եւ անդր գտեալ պատմութիւնք, հազիւ թէ կարացի ձեռք բերել, եւ այնիւ գրեցաւ այսմանս մինչեւ յայս վայր»⁵:

Ավետիֆի Գավազանագիրքը մեզ է հասել հինգ ընդօրինակությամբ⁶, որոնցից մեկը պահվում է Վենետիկի Մխիթարյանց Մատենադարանում (Թ. 1509, 1712 թ., էջ 3ա-210բ, անխորագիր)⁷, իսկ մնացյալ չորսը՝ Մաշտոցի անվան Մատենադարանում. Թ. 1492 (1715 թ.), էջ 5ա-216բ, անխորագիր; Թ. 7424 (1743 թ.), էջ 1ա-207բ; Թ. 6243 (1847 թ.), էջ 2ա-206բ; Թ. 8072 (ԺԸ դ.), թերի, ընդամենը 20 թերթ⁸: Ս. Ճեմնեմյանի եւ Պ. Չորանյանի հավաստմամբ՝ համապա-

⁴ Հակոբ Շամախեցին Գավազանագիրքը լրացրել է մինչեւ Ղազար Զահեցի կաթողիկոսի մահը (1751 թ.), իսկ Ղունկիանոս գրիչը՝ մինչեւ Սիմեոն Երեւանցի կաթողիկոսի գահակալումը (1763 թ.). տե՛ս Անասյան, Հայկական մատենագիտություն, հտ. 2, էջ 1017:

⁵ Անդ, էջ 1015:

⁶ Մինչ այժմ Ավետիֆի Գավազանագրքից հրատարակված է միայն մի փոքրիկ հատված. տե՛ս Հակոբյան, Մանր ժամանակագրություններ, հտ. 2, էջ 516-518: Ինչպես ապացուցել է Պ. Չորանյանը, այս հատվածն, իր հերթին, քաղված է Առաքել Դավրիժեցու «Պատմությունից». տե՛ս Չորանյան, Ավետիֆ Տիգրանակերտցի, էջ 100-104:

⁷ Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Ճեմնեմյան, Յուզակ, հտ. 6, էջ 227-232:

⁸ Ձեռագրերի նկարագրությունը տե՛ս Եզանյան-Զեյթունյան-Անթապյան, Յուզակ, հտ. 1, էջ 565; հտ. 2, էջ 278, 529, 666: Ձեռագրացուցակում Թ. 8072 ձեռագիրը

տասխանաբար Վենետիկի Թ. 1509 եւ Մաշտոցյան Մատենադարանի Թ. 1492 ձեռագրերը հեղինակի ինքնագրերն են⁹: Վերջինս պարզել է նաեւ, որ Թ. 7424 ձեռագիրն արտագրված է Թ. 1492-ից, իսկ Թ. 6243-ը՝ Թ. 7424-ից¹⁰:

Ավետիֆ Տիգրանակերտցու Գավազանագրում, ի շարս այլոց, տեղ է գտել նաեւ Կիլիկյան Հայաստանի համառոտ պատմությունը (ձեռ. Թ. 1492, էջ 201ա-209բ), որը, սակայն, որեւէ նորություն չի պարունակում հիմնականում համարյա բառացի փառված լինելով մեզ հայտնի աղբյուրներից: Դրանում կարելի է համոզվել թեկուզ հետեւյալ երկու քննադրական զուգադրություններից.

Միխայէլ Ասորի¹¹

Եւ թափեցին ի նոցանէ բերդ մի, եւ ամրացան անդ: Եւ զի կարճ ասացից, առին զբովանդակ երկիրն զղեկօք եւ քաղաքօք, լերամբք եւ դաշտօք: Եւ մեծացաւ յոյժ Փիլարտոսն, եւ եղեւ անուանի, եւ ել ի դուրս եւ առ զՄարաշ, եւ զԱպլսթայն, եւ զՄելտենի, եւ զՔեսոն, եւ զԿարկառն, եւ առ զՈւռհա:

Աւետիֆ Տիգրանակերտցի¹²

Եւ թափեցին բերդ մի եւ ամրացան: Յետո մեծացաւ Ֆիլառտոսն, ել ի դուրս, եւ էառ զՄարաշ, զԱպլաստայն, զՄելտենի, զՔեսոն, զԿարկառ, զՈւրհա՝ լերամբ եւ զղեկօք, քաղաքօք եւ դաշտօք:

Թվագրված է 1714 թվականով: Աւետիք Տիգրանակերտցու «Գաւազանագրքի», ինչպես նաեւ Հակոբ Սսեցու «Պատմութեան» հետ որոշ ընդհանրություններ ունի նաեւ Երուսաղեմի Սրբոց Յակոբեանց Մատենադարանի Թ. 3701 ձեռագրում պահպանված XVIII դ. մի ժամանակագրություն (ձեռագրի նկարագրությունը՝ Պողարյան, Ցուցակ, հտ. 11, էջ 139–140), որից ընտրովի մի քաղվածաշար հրատարակել է Ն. Պողարյանը. տե՛ս Պողարյան, Ժամանակագրութիւն, էջ 257–281:

⁹ Տե՛ս Ճեմճեմյան, Ցուցակ, հտ. 6, էջ 227; Պորանյան, Ավետիք Տիգրանակերտցի, էջ 99, 103:

¹⁰ Պորանյան, Ավետիք Տիգրանակերտցի, էջ 99:

¹¹ Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 406–407:

¹² Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 564:

Սամուել Անեցու շարունակող¹³

Ի ԶԿԶ թվին փոխի մահուամբ առ Քրիստոս Պարոն Ալինախն, եղբայր Հեթմին եւ Օշին թագաւորին, եւ կայ հանգուցեալ ի Դրագարկն: Եւ պատճառ մահու նորա այս է. լողացեալ եղեւ ի գետն Տարսոնի, էր ընդ նմա ի լողկանալն տաճիկ ձի մի, եւ եհար զնա ոտամբն ի գլուխն, եւ այս եղեւ պատճառ մահու նորա:

Աւետիք Տիգրանակերտցի¹⁴

Ի թվին Հայոց ԶԿԴ փոխի մահուամբ առ Քրիստոս պարոն Ալինախն, եղբայր Հեթմին եւ Օշին թագաւորի, եւ կա հանգուցեալ ի Դրագարկն: Եւ պատճառ մահու նորա այս էր. զի լողացեալ եղեւ ի գետն Տարսոնի, եւ էր ընդ նմա ի լողկանալն տաճիկ ձի մի, որ եհար զնա ոտամբ ի գլուխն, եւ մեռաւ:

Զնայած ֆաղագրություն լինելու եւ նորություն չպարունակելու պարագային, մենք, այդուհանդերձ, նպատակահարմար գտանք հրատարակել Ավետիքի Գավազանագրքի Կիլիկիայի պատմությանը նվիրված հատվածը, առաջնորդվելով գլխավորապես այն նկատառումով, որ հեղինակի սխալ հասկացված վկայություններից մեկը վաղուց դրվել է շրջանառության մեջ՝ տեղիք տալով մի լուրջ թյուրիմացության: Խոսքը վերաբերում է Գավազանագրքի հետեւյալ հակիրճ տեղեկությանը. «Ի Ը (8) ամին Կոստանդեա Հայոց թագաւորի եղեւ Լետոն մ'այլ, խոչընդակ Կոստանդեա, եւ խոռվութիւն ոչ սակաւ ընդ միմեանս»¹⁵: Ղ. Ալիշանի եւ նրան հետետող ուսումնասիրողների կողմից թյուրիմացաբար վերագրվելով Հայոց Կոստանդին Դ(III) թագավորի ժամանակին, այս տեղեկությունը դիտվել է որպես լրացուցիչ փաստարկ՝ ապացուցելու համար 1363–1365 թթ. միջեւ գահակալած Լետոն անունով ոմն բռնազավթչի գոյությունը¹⁶: Այնինչ ակնհայտ է, որ Ավետիքի Գավազանագրքում խոսքը վերաբերում է Կոստանդին Ե (IV) թագավորի ութերորդ տարվան, քանի որ նշված տեղեկությանը նախորդող դեպքը՝

¹³ Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 156–157:

¹⁴ Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 571:

¹⁵ Անդ, էջ 573:

¹⁶ Տե՛ս Ալիշան, Միսուան, էջ 544; Բասմաջյան, Լետոն Ե, էջ 27–28; Bedoukian, Coinage, p. 20; Rüdtt-Collenberg, The Rupenides, p. 76; Kühn, Leon V, S. 32, 57, 115.

Ալեքսանդրիայի առումը ֆրանկների կողմից, նույն աղբյուրում թվագրված է 1366 (իրականում 1365) թվականով¹⁷:

Կոստանդին Ե (IV)-ի ութերորդ տարին համապատասխանում է 1372 թվականին, հետեւաբար Լեոն անունով նրա հակառակորդը (խոչընդակ) հայտնվել է այդ տարում: Իսկ դա կարող է նշանակել միայն մեկ բան, այն է՝ Հայոց գահի «Լեոն մ'այլ» անունով հավակնորդը նույն ինքը Լեոն Զ (V) Լուսինյանն է, որն, ինչպես հայտնի է, դեռեւս Կոստանդին Ե (IV) թագավորի գահակալության վերջին տարիներին այդ նպատակով բանակցություններ էր վարել Կիլիկիայի որոշ հայ իշխանների հետ¹⁸: Ուշագրավ է, որ Կ. Բասմաջյանի եւ Հ. Քյուլի հաշվարկներով՝ այդ բանակցությունները տեղի են ունեցել հենց 1372 թվականին¹⁹: Ղ. Ալիշանն ուշադրություն չի դարձրել նաեւ այն փաստին, որ Գավազանագրքի տվյալներով՝ Լեոն Զ (V) Լուսինյանը թագավորել է ոչ թե մեկ, այլ շուրջ չորսուկես տարի. «Թագաւոր Հայոց Լեոն՝ որդի բրնձին, որ իշխեաց ամս Դ եւ է ամիս»²⁰, ինչը նշանակում է, որ Ավետիքը վերջինիս գահակալության սկիզբ է համարել Կոստանդին Ե (IV)-ի ութերորդ տարին (1372 թ.), թույլ տալով մեկ տարվա շեղում կամ գրչագրական սխալի հետեւանմով շփոթելով Գ (3) եւ Դ (4) թվերը:

Պետք է նկատի ունենալ, որ Ավետիք Տիգրանակերտցու Գավազանագրքի Կիլիկիայի պատմությանը նվիրված հատվածը, որն ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում Մաշտոցի անվան Մատենադարանի Ք. 1492 ձեռագրի հիման վրա, իրադարձությունների միահար շարադրանքն է, այլ ընդմիջված Կիլիկիայի պատմությանը չվերաբերող գանազան տեղեկություններով, որոնք մենք, բնականաբար, զանց ենք առնում: Ձեռագրի ինքնագիր լինելու հանգամանքը մեզ ազատում է նաեւ մյուս ընդօրինակությունների տարընթերցվածները նշելու պարտավորությունից: Ինչ վերաբերում է հրատարակվող բնագրի ուղղագրության-

¹⁷ Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 572:

¹⁸ Տե՛ս Յովհաննէս Դարդեւ, Ժամանակագրութիւն, էջ 66-68:

¹⁹ Բասմաջյան, Լեոն Ե, էջ 41; Kùhl, Leon V, S. 119. Տե՛ս նաեւ սույն աշխատության «Լեոն Զ (V) Լուսինյան» ենթագլխի ծանոթագրություն 21:

²⁰ Աւետիք Տիգրանակերտցի, Գաւազանագիրք, էջ 573:

ըր, ապա նախընտրել ենք հարազատորեն վերաւտարել Ք. 1492 ձեռագիրը՝ մեր հազվադեպ միջամտությունները ծանոթագրելով տողատակում:

* * *

[Աւետիք Տիգրանակերտցի. Գիրք պատմութեանց որ կոչի Գաւազանագիրք]

201^a ԹԿԸ. ՇԺԷ (1068)²¹. Քազաւոր Յունաց Կոստանդ Դիոժէն, որ կոչի Ռոմանոս²²: Յաւուրս սորա Տիլաոտոս²³ անուն ոմն, ազգաւ հայ, Մ (50) հոգով էառ զԿիլիկէ ի Քուրքաց: Եւ թափեցին բերդ մի եւ ամրացան: Յետո մեծացաւ Տիլաոտոսն, ել ի դուրս, եւ առ զՄարաշ, զԱլալաստայն, զՄելիտենի, զՔեսոն, զԿարկառ, զՄուրհա լերամբ եւ դղեկօք, քաղաքօք եւ դաշտօք²⁴:

ԹՀԶ. ՇԻԵ (1076). Իշխան Հայոց ի Կիլիկէ՝ Ռուբէն²⁵ անուն, ի զարմէն Գագկա²⁶: Եւ այս է սկիզբն ի Կիլիկէ Հայոց թագաւորացն:|

201^բ ԹՂԶ. ՇԻԵ (1096). Ի Կիլիկէ Հայոց թագաւոր՝ Կոստանդին որդի Ռուբենի: Սա էառ զՎահկա դղեակն: էր քաջ եւ արդարագործ, եւ վասն արիութեան գործոյն մարգիթ²⁷ կոչեցաւ ի Ֆռանկաց:

ԹՃԱ. ՇԾ (1101). Ի Կիլիկիա թագաւոր Հայոց՝ Քորոս որդի Կոստանդեա: Սա, բարեպաշտ եւ ողորմած, օրինապահ եւ իմաստասէր, տաճարս եւ վանս եւ հիւ-

²¹ Հեղինակն իրադարձությունները թվագրում է Փրկչական եւ Հայոց թվականություններով:

²² Ռոմանոս IV Դիոգենես. Բյուզանդական կայսր (1068–1071 թթ.):

²³ Փիլարտոս Վարաժնունի. Հյուսիսային Ասորիքում եւ Կիլիկիայում ստեղծված հայկական առաջին պետության հիմնադիր (1170-ական թթ.–1186 թ.):

²⁴ Այս պարբերությունն ամբողջությամբ քաղված է Միքայել Ասորու ժամանակագրության հայերեն թարգմանությունից. հմտ. Միխայել Ասորի, ժամանակագրութիւն 1870, էջ 406–407:

²⁵ Կիլիկիո գահակալների անունները չենք ծանոթագրում, քանի որ յուրաքանչյուր դեպքում ինքնըստինքյան հասկանալի է, թե նրանցից որին է վերաբերում խոսքը:

²⁶ Գագիկ Բ. Հայոց թագավոր (1042–1045 թթ.):

²⁷ Կոստանդին վերագրված այդ տիտղոսի մասին մանրամասն տե՛ս սույն աշխատության «Կոստանդին Ա» ենթագլխում:

րանոցս շինեաց, եւ բրոզօսեւաստիոս²⁸ կոչեցաւ ի Յունաց, եւ էառ զամրոցս: ||
 202ա Ի թվին Հայոց ՇեՒ (1093) ի հորասանա եկն Մելիքշահն²⁹ կամ Մելիք
 Ամիրզազի որդի Ալփասլանին³⁰ եւ էառ զԱնտաք: Եւ վանեաց զՖիլառտոսն,
 եւ ի նեղ արկեալ տաճկացոյց զնա³¹, եւ առ զերկիրն ի նմանէ, բայց միայն
 ետ նմա զՄարաշ, զի նստցի եւ տիրեսցէ բոլոր նահանգին, եւ կացցէ ի կրօնս
 Մահմետի: Եւ յառաջեալ սուլթանն, կոխեաց երիվարան մինչ ի ծովն եւ ետ
 շուքր³² Աստուծոյ, որ տիրեաց խաղաղութեամբ ի ծովէն Պարսից մինչեւ ի
 ծովն Արեւմտից: Եւ յետ սակաւ ժամանակաց Սունի³³ Թուրքք ասպատակեալ
 հարին զՖիլառտոսն եւ փախուցին, եւ զսուլթանի տվեալ երկիրն առին ի նմա-
 նէ: Եւ նա հալածական շրջէր, թափառի այսր եւ անգր, ոչինչ օգտելով: Յետո
 խղճիւ հարեալ զսիրտն՝ վասն ուրացութեան, գերծեաց զհերսն եւ շքաւ
 ապաշխարութիւն ի զանխուլ կրօնաստանս³⁴: ||

202բ Ի ՇՀԱ (1122) ամին Հայոց պարոն Թորոսն տէրն Կիւլիկոյ, գերծեալ ի
 գերութենէ զկնի մահուան հօրն իւրոյ Լեւոնի, զոր գերեալ էր թագաւորն
 յըՍտամպօլա, զի խափանեսցեն զառաջանալն³⁵: Եւ նա գերծեալ եկն հե-
 տեւակ առ Աթանաս պատրիարզն Յակոբկաց³⁶, եւ նա ետ նմա զձին իւր
 եւ Եժ-ան (15) այր, եւ էած զնա ի գիշերի ի բերդն, զոր Ամուղայն կո-

²⁸ Խոսքը վերաբերում է Թորոս Ա-ի կրած պրոտոսեւաստիոս տիտղոսին:

²⁹ Մելիքշահ. Սելջուկյան սուլթան (1072–1092 թթ.): Հեղինակի նշած ՇեՒ (1093) թվա-
 կանը սխալ է, քանի որ Մելիքշահը մահացել է 1092-ին: Իրականում Անտիոքը
 գրավվել է 1084 թվականին Ռումի Սելջուկյան սուլթան Սուլեյման իբն-Կութուլ-
 միշի (1077–1086 թթ.) կողմից:

³⁰ Ալփ-Արսլան. Սելջուկյան սուլթան (1063–1072 թթ.):

³¹ Փիլարտոսը, որը հունադավան հայ էր, իր երկրի ինքնուրույնությունն ապահո-
 վելու նպատակով իսկապես մահմեդականություն էր ընդունել:

³² Շուքր = զոհություն. փոխառություն արաբերենից (شكر). տե՛ս Ղազարյան-Ավե-
 տիսյան, Բառարան, հտ. 2, էջ 225:

³³ Սունի, ավելի ճիշտ՝ Սուննի. մահմեդական դավանանքի գլխավոր ճյուղը:

³⁴ Հմմտ. Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 407:

³⁵ Հեղինակը թյուրիմացաբար Թորոս Ա-ին (1100–1129 թթ.) է վերագրել Թորոս
 Բ-ի (1145–1168 թթ.) գործերը:

³⁶ Աթանասը ոչ թե Հակոբիկ ասորիների պատրիարքն էր, այլ Անավարզայի ասորի
 մետրապոլիտը:

չեն³⁷: Եւ այնպէս դարձեալ տիրեաց բոլոր երկրին:

ՌՃԻԵ. ՇՀԴ (1125). Ի Կիլիկէ՝ Հայոց թագաւոր Լեւոն: Սա էառ զՏարսոն եւ զՄամեստիա, կոչեցաւ քաջ: Եւ կայսրն յունաց Բէրբէոսէն³⁸ ընդ Ահմատ³⁹ ամիրային եկին ի Կիլիկիա, կալեալ զԼեւոն որդովքն՝ տարաւ ի Կոստանդինուպօլիս: ||

203բ ՌՃԻ. ՇՁԹ (1140). Ի Կիլիկէ թագաւոր Հայոց՝ որդի Լեւոնի Թորոս: Սա եկն ի Կոստանդինուպօլիս, եւ յաւելաւ իշխանութիւն Տարսոնի, եւ Միսիսոյ, Սաւոնոյ⁴⁰, եւ Փռուզիոյ: Քանզի Ղիճ Ասլան⁴¹ սուլթանն Ղօնեայ⁴², որ էր ի ցեղէն չարին Ալփասլանա, եկն ի վերա սորա, եւ ամօթով յետ դարձաւ: Իսկ Թորոս զայրացեալ, գնաց ասպատակ աւար էառ զերկիրն Ղօնիու, եւ քաջութեամբ տիրեաց, որ կոչէր ոմանց՝ Պառաւախեղդ Թորոսիկ:

ՌՃԾԴ. ՈԳ (1154). Եղեւ իշխան Հայոց⁴³ Մլեհ եղբայրն Թորոսի, եւ վասն չարասիրտ գոլոյն սպանաւ ի զօրացն:

ՌՃԿԱ. ՈԺ (1161). Թագաւոր Հայոց՝ Ռուբէն որդի Ստեփանէլի, եղբայր⁴⁴ քաջին Թորոսի, բարեգործ եւ առատամիտ, զոր պատուեալ Հոսմայեցիք, կին ետուն սմա յազգէ թագաւորութեան⁴⁵:

ՌՃՁԳ. ՈԼԲ (1183). Թագաւոր Հայոց Լեւոն: Սա տիրեաց ՀԲ (72) բերդից, եւ Ռուստամ⁴⁶ ազգին Իսմայէլի, եւ Սաւրիոյ, Ղայսերու, էրէկլու, Անտիոքու՝

³⁷ Հմմտ. Միխայէլ Ասորի, Ժամանակագրութիւն 1870, էջ 427–428:

³⁸ Հովհաննէս II Կոմնենոս Միրանաձին (Բէրբէոսէն). Բյուզանդական կայսր (1118–1143 թթ.):

³⁹ Ահմատ անվան տակ հեղինակը նկատի ունի Դանիշմենդյան էմիր Մուհամմեդ II-ին (1134–1142 թթ.), որը 1138 թվականին, Հովհաննէս Կոմնենոսի արշավանքից հետո, գրավեց հյուսիս-արեւելյան Կիլիկիայի որոշ բերդեր. տե՛ս Ալիշան, Միսուան, էջ 52:

⁴⁰ Սաւոնիա = Իսաւրիա:

⁴¹ Քիլիք-Արսլան II. Ռումի Սելջուկյան սուլթան (1156–1192 թթ.):

⁴² Ղօնիա = Իկոնիա քաղաք. Ռումի Սելջուկյան սուլթանության մայրաքաղաքը:

⁴³ Ուշագրաւ է, որ մինչ Կիլիկիո մյուս բոլոր իշխաններին հեղինակը կոչում է թագաւոր, Մլեհին նա հատկացնում է իշխան տիտղոսը:

⁴⁴ Պետք է լիներ՝ եղբարւ:

⁴⁵ Ռուբեն Գ Կիլիկիո իշխանն ամուսնացած էր Պաղեստինի Տորոն բերդաքաղաքի տեր Մնֆրուա III-ի դստեր՝ Իզաբելի հետ:

⁴⁶ Ռուստամը, հեղինակի կողմից համարված ցեղանուն կամ տեղանուն, մի թուրքմեն

մինչ յԱտալիա: Էառ զամրոցս, շինեաց վանորայս, աղքատանոցս եւ գողանոցս⁴⁷: Եւ արքայն Կիպրոսի⁴⁸ զքոյրն ի կնութեան ետ սմա: Շինեաց զԷջմիածին Կաթողիկէն ի Սիս: Եւ ել անուն սորա ընդ ամենայն երկիր: Եւ փութացան պսակել զնա տունն Յունաց եւ տունն Ֆռանկաց, այս ինքն կայսրն Յունաց⁴⁹ եւ իմբէռադորն⁵⁰ Ֆռանկաց⁵¹ թագ առաքեցին սմա՝ օծին արքա: Ելից զաշխարհս խաղաղութեամբ, եւ եղեւ ահարկու ի վերայ օտար ազգաց, որ շուրջ էին զնովաւ եւ դողային ի նմանէ: Եւ առ սա ապաւինեցան Ղօնիու Ղլիճ Ասլան սուլթանա որդիքն:|

204բ Եւ իլիճ Ասլանա որդիքն տկարացան ի բաժանելն իշխանութեան իւրեանց ի բազում մասունս⁵²: Քանզի ոմն թագաւորեաց Իկօնն, որ կրսերն էր, եւ ոմն՝ Աբլասթայն, եւ ոմն՝ ի Նէոկեսարն, եւ այլք զայլ մասունս աշխարհին առին: Եւ էր հակառակութիւն ի մէջ նոցա: Եւ Աբլասթայն նստող մելիքն յուսացաւ ի Լեւոն Հայոց թագաւորն, օծեալ Բ (2) ազգաց՝ Յունաց եւ Ֆռանկաց, զի Լեւոնն ահարկու էր ի Կիլիկէ: Եւ սա ել ի դուրս, եւ յաւել ի բաժին նորա բերդս եւ գաւառս:

Ի թվին Հայոց ՈՂԸ (1189) եղեւ ժողովն Տարսոնի Կիլիկեցոց, եւ միաբանեալ ընդ Յունաց, դաւանեցին զԲ (2) բնութիւնս եւ զԲ (2) կամս եւ զերկու ներգործութիւնս ի մի անձն Քրիստոսի⁵³:

ՌՄԺԸ. ՈԿԷ (1218). Մեռանի Լեւոն թագաւորն, եւ հանեալ զփորոտին դնեն ի վանքն Ակներ, զոր ինքն շինեալ էր եւ սիրէր զտեղին: Եւ տարեալ զմարմինն ի Սիս, եղին պատուով յիւր շինեալ եկեղեցին: Եւ զի Լեւոն որդի ոչ ունէր,

գորահրամանատար էր, որին Լեւոնը պարտութեան էր մատնել 1187 թվականին:

⁴⁷ Գողանոց = բորոտանոց, ուրկանոց:

⁴⁸ Հուգո I. Կիպրոսի թագաւոր (1205–1218 թթ.):

⁴⁹ Ալեքսիոս III Անգելոս. Բյուզանդական կայսր (1195–1203 թթ.):

⁵⁰ Լատիններէն imperator (կայսր) բառի հայերէն վերարտադրությունը:

⁵¹ Հենրի VI. Գերմանական կայսր (1190–1197 թթ.):

⁵² Քիլիք-Ասլան II-ն իր մահից (1192 թ.) առաջ Ռումի Սելջուկյան սուլթանությունը բաժանել էր 12 մասի:

⁵³ Այդպիսի ժողով հայտնի չէ. թերեւս հեղինակն այն շփոթել է 1179 թ. Հռոմկլայի կամ 1196/7 թ. Տարսոնի ժողովի հետ: Այդ ժողովների մասին տես Tournebize, Histoire, p. 256–257, 261–265; Օրմանյան, Ազգապատում, § 1008–1010, 1057–1058:

այլ դուստր մի՝ Զապէլ անուն, որ է եղիսաբեթ, զոր ետուն Փիլիպպեա ումեմն Ֆռանկի, որ նստաւ ի տեղի աներոջն թագաւոր: ||

205ա **ՌՄԺԹ. ՈԿԸ (1219).** Զփեսայն Լեւոնի Ֆիլիպն եղին թագաւոր՝ գրաւեալ զնա երդամբք զի պահեսցէ զդաւանութիւն եւ զօրէնս Հայոց: Որ եւ կացեալ զամս ինչ, խաբեալ լինէր ի հօրէն իւրմէ, եւ ընդ ակամբ հայէր աւագ իշխանսն Հայոց եւ խորհէր բառնալ զնոսա: Զոր եւ իմացեալ իշխանքն զնենգութիւն նորա, կամեցան սպանանել զնա: Եւ նա փախեաւ, ունէր եւ ընդ իւր զթագուհին Զապէլ, որ զնայր ի յԱնտաք առ հայրն իւր, զի հայր Ֆիլիպիս եւս Ֆռանկ էր ազգաւ, որ տիրէր յԱնտաքոյ⁵⁴: Առ որ զհետ պնդեալ իշխանացն Հայոց, կալան զՖիլիպն յայնկոյս Զիհան գետոյն, եւ կապեալ եղին ի զնտան՝ ի բերդ ինչ, որ անդ մեռաւ: Իսկ խորհրդով կաթողիկոսին եւ ամենայն իշխանացն զԶապէլ դուստրն Լեւոնի արքայի ամուսնացուցին ընդ Հեթմոյ որդոյ Կոստանդեա աւագ պարոնին, եւ օծին զՀեթումն թագաւոր Հայոց:

ՌՄԻԵ. ՈԼԴ (1225). Թագաւոր Հայոց Հեթում. Սա որդի էր Կոստանդեա փառաւոր իշխանին Կիլիկեցոց, որ էր յազգականութենէ անտի Լեւոնի արքայի, որ զկին Ֆիլիպի Զապէլն ամուսնացուցին ընդ Հեթմոյս: ||

205բ **ՌՄԿԹ. ՉԺԸ (1269).** Հեթում թագաւորն Հայոց շինեաց ի Սիս զտաճար սրբոյն Սօֆիա, զնաց առ Թաթարն, ուխտ սիրոյ եղեալ առ ի խաղաղութեան, էառ զԳերմանիկէ եւ զՊեհեսնի: Եկն Մարցին ի Սիս, եւ ի մարտին ձգեցին զորդին Հեթմո զԹորոս, եւ զԼեւոն գերի տարան: Եւ Հեթում հրաժարեալ կրօնաւորեցաւ:

ՌՄԶ. ՉԺԹ (1270). Թագաւոր Հայոց Լեւոն. Սա ազատեալ ի Մարցոց, եւ Հեթում նստոյց զորդին ի գահն, օծին արքա: էր գրասէր, եւ յաղթեաց Արապին⁵⁵, Քրթին, Թուրքմանին եւ Մարցուն: Հանճարով եւ իմաստութեամբ իշխեաց:

ՌՄԶԹ. ՉԼԸ (1289). Թագաւոր Հայոց Հեթում. Սա հետ Թաթարին զնաց, եւ առին զՇամ⁵⁶: Ի փախչիլն սուլթանին Մարա անհոգացան Թաթարք: Եւ սա զհետ անկեալ մինչ ի Մըսրա մօտն, եւ ապա յետ գա յերուսաղէմ, մեծ տօնախըմբութեամբ մխիթարութիւն արար քրիստոնէից, եւ յետոյ կրօնաւորեցաւ: ||

⁵⁴ Ֆիլիպ թագավորի հայրը Անտիոքի պրինց Բոհեմունդ IV Միակնանին էր (1201–1216, 1219–1233 թթ.):

⁵⁵ Ձեռագրում՝ արապին:

⁵⁶ Շամ. Դամասկոս քաղաքի արաբական անվանումը, տարածված ողջ Սիրիայի վրա:

206բ ՌՄՂԳ. ՉեԳ (1294). Թագաւոր Հայոց Լեւոն⁵⁷. Սա, որդի Թորոսի, ամս Գ (3) իշխեաց եւ նահատակեցաւ ի Թաթարաց, եւ շուտով պատժեցաւ նահատակող Թաթարն:

Յետ Լեւոնի կացին թագաւորք վերի մեծ Լեւոնի⁵⁸ որդիքն. նախ Թորոս՝ ՌՄՂԷ. ՉեԶ (1297), Սըմբատ՝ ՌՅ. ՉեԹ (1300), Կոստանդին՝ ՌՅԳ. ՉՄԲ (1303)⁵⁹: Սոքա երեքինս եղբայրք են վերնոյն Հեթմոյ: Եւ Թորոս էառ զքոյր թագաւորին Կիպրոսի: Վստահանա Հեթում յաթոռ թագաւորութեան իւրոյ եղբայր իւր ի Սմբատ, եւ ինքն առեալ զմիւս եղբայրն իւր զԹորոս, եւ գնաց առ կայսրն Յունաց ըՍտամպուլ: Իսկ Սմբատ խորհրդով կաթողիկոսին եւ իշխանացն օծանի թագաւոր Հայոց ի Սիւս: Եւ յորժամ դարձան Հեթումն եւ Թորոսն զկնի տարոյ միոյ յաթոռն իւրեանց, երես շրջեալ Սմբատա ոչ եթող զնոսա ի տունն իւրեանց հայրենի: Եւ նոքա դարձան առ կայսրն, եւ առեալ ոսկի բազում, գնացին առ խան Ղազանն⁶⁰ յԱրեւելս: Իսկ Սմբատն յառաջագոյն էր գնացեալ ի Թաթարն բազում գանձիւք, եւ առեալ ի խանէն իւր կին, ի խանի ազգէն, եւ դարձեալ երթայր յաշխարհն իւր: Եւ ի սահմանս Կեսարիոյ հանդիպեցան նմա Բ (2) եղբայրքն իւր: Եւ նա կալեալ զնոսա եւ տարեալ եղ ի բանդի, ի Բարձրբերդն: Եւ յետ սակաւ աւուրց խորհրդով իշխանացն եսպան զեղբայրն իւր զԹորոս եւ եհան զաշխն Հեթմին: Զոր իմացեալ միւս եղբօրն Կոստանդնի, որ էր տէր Կապան բերդին, եւ ժողովեալ զօրս բազումս, եւ եկն ի մարտ ընդ դէմ Սմբատին: Եւ նա փախուցեալ էլ ի Հոռմք: Եւ գտեալ զՀեթում կենդանի, յոյժ ուրախացաւ, թէպէտ եւ ընդ սպանումն Թորոսին տրտմեցաւ: Եւ յետո կալեալ զՍմբատ եղ ի բանտ, եւ ինքն կեցեալ պարոն Կիլիկոյ տարի մի, եւ Սմբատն Գ (3) ամ: Բայց յետո կալեալ Հեթումն զԿոստանդին եւ զՍմբատն, եւ առաքէ յաքսորս առ կայսրն ի Կոստանդնուպօլիս: Եւ ինքն առնու զԼեւոն՝ զորդին Թորոսի եղբօրն իւրոյ, որ սպանեալ եղեւ ի Սմբատա, եւ էօծ թագաւոր ՉՄԵ (1306) թվին Հայոց, եւ ինքն ունէր զաւագ պարոնութիւնն⁶¹:

⁵⁷ Հեղինակը սխալվել է Լեւոն Դ (III) թագավորի գահակալման թվագրման հարցում:

⁵⁸ Խոսքը վերաբերում է Հայոց թագավոր Լեւոն Գ (II)-ին:

⁵⁹ Հեղինակը սխալվում է նաեւ Թորոսի, Սմբատի եւ Կոստանդնի գահակալությունների թվագրման հարցում:

⁶⁰ Ղազան. Մոնղոլական Իրանի Իլ-խան (1295–1304 թթ.):

⁶¹ Այս պարբերությունն ամբողջությամբ եւ համարյա բառացի քաղված է Սամուել-

ՌՅԶ. ԶԾԵ (1306). Հայոց թագաւոր Լեւոն:

Ի թվին Հայոց ԶԾԶ (1307) եկեալ նենգութեամբ յաշխարհն Կիլիկեցոց, ի պատճառս ինչ, անօրէն նուինն⁶² Բուլղար Ղարունն⁶³, եւ կոչեցեալ առ ինքն 207^ա իբրեւ|| խորհուրդ զաւագ պարոնն Հեթում, եւ նա միամտութեամբ գնաց առ նա, ունելով ընդ իւր զտղա թագաւորն Լեւոն՝ զեղբօր որդին իւր, եւ այլ բազում իշխանս: Զոր իբրեւ եկին առ նա, յարեաւ ի վերայ նոցա, եւ սպան զամենեսեան առ ոտս Անարգաբա, եւ կամէր զԿիլիկէ յինքն յափշտակել: Բայց ի խնամոցն Աստուծոյ ոչ տարաւ ընդ իւր զեղբարն իւր զՕշին: Զոր իբրեւ լուաւ զեղեալսն, իսկոյն եկն ի բերդն Սսա, եւ ժողովեաց զմնացեալ իշխանս եւ զօրս բազումս, եւ մարտուցեալ ընդ պղծոյն, եհան յերկրէն: Եւ մնաց մինչեւ եկն եղբայրն իւր Ալինախն ի խանէն⁶⁴, զի անդ էր գնացեալ: Եւ օծաւ Օշին ի⁶⁵ ՌՅԷ. ԶԾԶ (1307) թագաւոր ի Տարսուս⁶⁶:

ՌՅԻԱ. ԶԸ (1321). Թագաւոր Հայոց Լեւոն որդի Օշինի: Յաւուրս սորա Տէմուրտաշ⁶⁷ Թաթարն նենգեաց երկրիս, եւ էառ զԱյաս⁶⁸:

ՌՅԻԱ. ԶՂ (1341). Թագաւոր Հայոց Կոստանդին Կիտն, որդի պարոն Բաղտնին մարախճատի, հօր քեւեր որդի Լեւոնին: Յետ մահուանն Լեւոնի, վասն ոչ գոլո նմա որդի, առնու զթագաւորութիւն Կոստանդին Ճուան, որ եւ սա վասն անպարկեշտ վարուց սպանեալ եղեւ ի զօրացն⁶⁹:

լի շարունակողից. տե՛ս Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 154–155:

⁶² Նուին/նոյին = իշխան. փոխառութիւն մոնղոլերենից (noyan) տե՛ս Blake-Frye, History, p. 387, n. 27; Cleaves, The Mongolian Names, p. 405–406.

⁶³ «Բուլղար Ղարուն»-ը մոնղոլ զորահրամանատար Բիլարղուի (Պիլարղու, Պուլարղու) աղաՎաղված անունն է:

⁶⁴ Խոսքը վերաբերում է Մոնղոլական Իրանի Իլ-խան Օլջէյթուին (1304–1317 թթ.):

⁶⁵ Զեռագրում չիք:

⁶⁶ Այս պարբերությունը նույնպէս համարյա բառացի քաղված է Սամուելի շարունակողից. հմմտ. Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 155–156:

⁶⁷ Տիմուրտաշ. Ռումի երկրի մոնղոլ կուսակալ (1317–1327 թթ.), որի ասպատակությունը Կիլիկիա տեղի է ունեցել 1321 թվականին:

⁶⁸ Այսպէս գրավողը ոչ թէ Տիմուրտաշն էր, այլ մամլուքները (1322 թ.):

⁶⁹ Այս հատվածում հեղինակն իրար է խառնել Լեւոն Ե (IV) թագավորի հորաքրոջ որդի Գի Լուսինյանին (Կոստանդին Կիտ), նրա եղբայր Հովհաննէս-Ջեհանին (Կոստանդին Ճուան) եւ Կոստանդին Դ (III) Նղիրցուն (որդի պարոն Բաղտնին մարախճատի):

Ի թվին Հայոց ՉԿԴ (1315) փոխի մահուամբ առ Քրիստոս պարոն⁷⁰ Ալի-նախն, եղբայր Հեթմին եւ Օշին թագաւորի, եւ կա հանգուցեալ ի Դրազարկն: Եւ պատճառ մահու նորա այս էր. զի լողացեալ եղեւ ի գետն Տարսունի, եւ էր ընդ նմա ի լողկանալն տաճիկ ձի մի, որ եհար զնա ոտամբ ի գլուխն, եւ մեռաւ⁷¹:

Ի թվին Հայոց ՉՄԵ (1306) էր բռնակալ յազգէն նետողաց⁷² Ղարպանտա⁷³ 207^բ խանն, որ էր եղբայր Խազանին: Որ ի մեռանել Խազանին || Ղարպանտաս էառ զաթոռ եղբօրն, այր շար եւ ատեցող քրիստոնէից: Եւ պատրեալ ի դիւթականաց եւ յաղանդաւորաց շէխացն⁷⁴, եւ խորհուրդ շար ի մէջ բերելով, գործակցան իւրեանց սատանայիւ, սկսան մարտնչիլ ընդ անյաղթելի վիմին Քրիստոսի: Եւ հանեալ⁷⁵ զհրովարտակ ընդ ամենայն տիեզերս, որ ընդ իւրով իշխանութեամբ էին, ի վերայ քրիստոնէից՝ այնու կամ դառնալ ի մուլար դաւանութիւն Մահմետի, կամ տալ զխարաճ⁷⁶, ամէն մարդ իւր զլիսոյն Ը (8) ոսկի, եւ թուք եւ ապտակ ի յերեսն, եւ զմորուան ճողել, եւ սեւ կարկատան մի ի վերա աջո ուսին կարել՝ նախատինք վասն Քրիստոսի: Եւ շար դեսպանքն իբրեւ զարեանարբու գազան արծակեցան ի վերայ ամենայն քրիստոնէից, ընդ ամենայն քաղաքս եւ ի գաւառս, ի վանորայս եւ ամենեսեան տեղիս քննայոյզ լինէին, ահացուցանելով զամենեսեան: Քանզի այսպէս զրեալ էր ի մահաբեր հրովարտակն՝ Ո՛չ զժամ օրհնել, եւ ո՛չ յեկեղեցի մտանել, եւ ո՛չ զմանկունս մկրտել, կամելով միահաղոյն բառնալ զամենեսեան կրօնս քրիստոնէից: Իսկ բանաւոր հօտքն Քրիստոսի անխախտելի մնացին ի հաւատս քրիստոնէութեան, քաջալերելով Տերունական հրամանան որ ասէ. «Նրանի է ձեզ յոր-

⁷⁰ Ձեռագրում պարին:

⁷¹ Հմմտ. Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 156-157; Պողարյան, Ժամանակագրութիւն, էջ 264:

⁷² Հայկական միջնադարյան աղբյուրներում մոնղոլները սովորաբար կոչվում են «ազգ նետողաց», այսինքն՝ աղեղնավոր կամ նետածիգ անունով:

⁷³ Օլջեյթու Մուհամմեդ Խուդաբանդա. Մոնղոլական Իրանի Իլ-խան (1304-1317 թթ.):

⁷⁴ Շէխ = ծերունի, մահմեդական կրօնավոր. փոխառութիւն արաբերենից (ṣayḫ). տես Աճառյան, ՀԼՊ, հտ. 2, էջ 201; Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 213-214:

⁷⁵ Ձեռագրում՝ հանել:

⁷⁶ Խարաճ = գլխահարկ. փոխառութիւն արաբերենից (charaj). տես Աճառյան, ՀԼՊ, հտ. 2, էջ 194; Ղազարյան-Ավետիսյան, Բառարան, հտ. 1, էջ 330-331:

ժամ նախատիցեն զձեզ եւ որոշեսցեն»⁷⁷: Ետուն զամենեսեան հարկան զոր խնդրէին, եւ յանձն առին յօժարութեամբ զնախատինս եւ զտանջանս վասն երկնաւորի յուսոյն, եւ զթեթեւ լուծն Քրիստոսի ի վերայ աջոյ ուսոյն: Իսկ անօրէն եւ ամբարիշտ խանն Ղարբանտա իբրեւ ետես թէ այնու ոչ կարաց յաղթել բանաւորի հօտին Քրիստոսի, յաւել այլ եւս հարուածս ի վերա քրիստոնէից՝ կա՛մ զամենեսեան ներքինիս առնել, կա՛մ զմի ակն հանել, կա՛մ դառնալ ի պիղծ դաւանութիւն Մահմետի: Լսեմք թէ բազումք մեռան յայսմանէ հարուածոյ վասն անուանն Քրիստոսի, այլ առ մեզ դեռ եւս ոչ է հասեալ մահաբեր հրաման պիղծ հարբանտա խանին, եւ զապագայն Աստուած գիտէ⁷⁸:

ԹՅՄԲ. ՊԱ (1352). Թագաւոր Հայոց Կոստանդին:

ԹՅՄԲ. ՊԱ (1352). Միւս Կոստանդին զոր սպանին Հայք:

ԹՅԼԵ. ՊԻԴ (1375). Թագաւոր Հայոց Կոստանդին⁷⁹:||

208ա Ի թվին Հայոց ՋՂԴ (1345)⁸⁰ շարագուխ ամիրայն Հալպա, հրամանաւ Մելիք Նասր⁸¹ սուլթանին Մարա, գաղտագողի յերկիրն Սըսա եմուտ: Եւ բազում աւերս արար՝ զորս եսպան, եւ զորս հրով այրեաց, եւ արար անապատ զբազմամարդ աշխարհն Հայոց, եւ էառ զԱյաս:

Ի թվին ՊԺԵ (1366) Ֆռանկն զՍքանտարիա⁸² էառ, եւ շատ դազա⁸³ արար,

⁷⁷ Մատթէոս, Ե, 11:

⁷⁸ Հմմտ. Պողարյան, ժամանակագրութիւն, էջ 263: Խուդաբանդա խանին նվիրված եւ Կիլիկիայի պատմութեանն ուղղակիորեն չառնչվող այս պարբերութիւնը մեր հրատարակութեան մեջ տեղ է գտել բացառապէս իր պարունակած չափազանց հետաքրքրական տեղեկութիւնների շնորհիվ: Պարբերութեան վերջին նախադասութիւնը ցույց է տալիս, որ հեղինակն օգտագործել է իրադարձութիւններին ժամանակակից մի աղբյուր, որը, դժբախտաբար, մեզ չհաջողվեց պարզել: Հեռավոր նմանութիւն, բայց ոչ ուղղակի աղբյուր տե՛ս Խաչիկյան, ԺԴ դ. հիշատակարաններ, էջ 46:

⁷⁹ Հեղինակը մեծ շփոթի մեջ է թե՛ այս երեք Կոստանդինների ինքնութեան ճշտման, թե՛ նրանց գահակալման թվականների պարզաբանման հարցում:

⁸⁰ Թվականը սխալ է. խոսքը վերաբերում է 1347 թ. մամլուքյան արշավանքին: Թերեւս պետք է ուղղել՝ ՋՂԶ:

⁸¹ Նասիր Նասիրեդդին ալ-Հասան. Մամլուքյան եգիպտոսի սուլթան (1347–1351, 1354–1361 թթ.):

⁸² Սքանտարիա = Ալեքսանդրիա. քաղաք եգիպտոսում, որը ֆրանկները, Կիպրոսի թագավոր Պետրոս I-ի գլխավորութեամբ, գրավեցին ոչ թե 1366, այլ 1365 թվականին:

⁸³ Դազա = արշավանք, կռիվ, աղետ. փոխառութիւն արաբերենից (gazwā). տե՛ս

եւ ժԲՌ (12000) կոյս աղջիկ գերի տարաւ, թող զայլ կին եւ զտղայս: Եւ յայն բանէն խստացան Տաճիկք եւ արարին հալածումն քրիստոնէից, եւ զամենայն ուխտաւորս Երուսաղէմի ի կապանս պահեցին Գ (3) ամ, եւ զսուրբ Յարութենի դուռն փակեցին⁸⁴: ||

208բ Ի Ը (8) ամին Կոստանդեա Հայոց թագաւորի եղեւ Լեւոն մ'այլ, խոշընդակ Կոստանդեա, եւ խոռվութիւն ոչ սակաւ ընդ միմեանս:

Թագաւոր Հայոց Լեւոն՝ որդի բրնձին, որ իշխեաց ամս Դ (4) եւ Է (7) ամիս: Որ ի ՊՂԲ (1423)⁸⁵ թվին Հայոց եկեալ սուլթանն Մսրա⁸⁶, գերեաց զթագաւորն՝ Մարուն թագուհին⁸⁷, եւ տարաւ յեգիպտոս: Եւ խնդրեալ թագուհին ի սուլթանէն, գնաց յերուսաղէմ, եւ անդ թաղեցաւ սուրբ Յակոբա դրան առջեւն:

Եւ բարձաւ թագաւորութիւն ի տանէն Կիլիկեցոց, որ տեւեաց իշխանութիւնն սոցա ի Գագկա զարմէն Ռուբենի առաջի ամէն մինչ աստ՝ ամք Յեկէ (347)⁸⁸: ||

209բ Յետ բառնալոյ թագաւորութեան Հայոց ի Սըսա ժողովեցան թագաւորագուրք եւ իշխանք ի ժողովրդեանէն, մտեալ ի նաւ գնացին ի Ֆռանկիստան՝ ԼԻ (30000) տուն քրիստոնեայք, հայ ազգաւ⁸⁹:

Աճառչան, ՀԼՊ, հտ. 2, էջ 197; Ղազարչան-Ավետիսյան, Բառարան, հտ. 2, էջ 64:

⁸⁴ Հմմտ. Սամուէլ Անեցի, Հաւաքմունք, էջ 169–170; Պողարչան, Ժամանակագրութիւն, էջ 266:

⁸⁵ Ուղղելի՝ ՊԻԴ (1375):

⁸⁶ Մամլուքչան եգիպտոսի սուլթանն այդ ժամանակ Շաբան II-ն էր (1363–1376 թթ.), սակայն նա ոչ թե անձամբ էր ասպատակել Կիլիկիան, այլ այդ գործը հանձնարարել էր Հալեպի մամլուքչան մելիք Աշըգ-Թեմուրին:

⁸⁷ Հեղինակը շփոթում է թագուհու անունը: Լեւոնի կինը Մարգարիտ Սուսոսնն էր, իսկ Մարունը Հայոց Կոստանդին Դ (III) թագավորի այրին էր:

⁸⁸ Հեղինակն այս թիվն ստացել է, Սսի անկումը սխալմամբ թվագրելով ՊՂԲ (1423) թվականով՝ փոխանակ ՊԻԲ (1373), ավելի ճիշտ ՊԻԴ (1375):

⁸⁹ 1403/4 թ. տեղի ունեցած այս գաղթի մասին ավելի մանրամասն տե՛ս Յակոբ Ստեցի, Պատմութիւն, էջ 263. հմմտ. Ալիշան, Սիսուան, էջ 542–543:

ՑԱՆԿԵՐ

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՒ ՌԻՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ*

ա. Աղբյուրներ

ԱԼԻՇԱՆ, Հայապատում — Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, յօրինեալ եւ հաւաքեալ ի Ն. Ղեւոնդեայ Վ. Մ. Ալիշան, Վենետիկ, 1901:

ԱԿԻՆՅԱՆ-ՈՍԿՅԱՆ, Յուցակ — Ն. Ն. Ակինեան եւ Ն. Ն. Ոսկեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Զմմառի վանքի մատենադարանին, հտ. Բ. «Անտոնեան հաւաքածոյ», Վիեննա, 1971:

ԱՆԱՆՈՒՆ, Ժամանակագրական գրառումներ — Անանուն ժամանակագրական գրառումներ. Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 2, Երեւան, 2007, էջ 554–558:

ԱՆԱՆՈՒՆ, Կարգ թագաւորաց — «Անանուն ժամանակագրութիւն (XVII դ.). Կարգ թագաւորաց ազգիս Հայոց եւ Պարսից թէ ուստի սերեալ թագաւորեցին». Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրութիւններ (XIII–XVIII դդ.), հտ. 1, Երեւան, 1951, էջ 252–261:

ԱՆԱՆՈՒՆ, Յիշատակք հանգուցելոց — «Յիշատակք հանգուցելոց մուրիսեան պայազատաց եւ պաշտօնէից նոցին». Ղ. Ալիշան, Հայապատում. Պատմիչք եւ պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 543–545:

ԱՆԱՆՈՒՆ, Պատմութիւն սրբոց — «Պատմութիւն սրբոց հարցն մերոց որք առ Քրիստոս փոխեցան». Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 2, Երեւան, 2007, էջ 495–526:

ԱՆԱՆՈՒՆ ԵՂԵՍԱՅԻ, Ժամանակագրութիւն — Անանուն եղեսացի, ժամանակագրութիւն. Թարգմանութիւն բնագրից, առաջարան եւ ծանոթագրութիւններ

* Աստղանիշ են կրում այն աշխատութիւնները, որոնք թեեւ վկայակոչված չեն սույն զրբում, սակայն հիմք են ծառայել անվանացանկային ծանոթագրութիւնների համար:

- Լ. Հ. Տեր-Պետրոսյանի, «Օտար աղբյուրները Հայաստանի եւ հայերի մասին, հտ. 12. Ասորական աղբյուրներ, գիրք Բ», Երեւան, 1982:
- ԱՆԱՆՈՒՆ ՍԵՐԱՍԱՏՅԻ, Տարեգրություն — «Անանուն Սերաստացու Տարեգրությունը». Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ (XIII–XVIII դդ.), հտ. 2, Երեւան, 1956, էջ 115–172:
- ԱՍՈՂԻԿ, Պատմութիւն — Ստեփանոսի Տարօնեցոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանց, Բ տպագրութիւն, Ա. Պետերբուրգ, 1885:
- ԱՐԻՍՏԱԿԷՍ ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ, Պատմութիւն — Պատմութիւն Արիստակիսի Լաստիվերտցոյ, աշխատասիրութեամբ Կ. Ն. Յուզբաշյանի, Երեւան, 1963:
- ԱԽԵՏԻՔ ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏՅԻ, Գաւազանագիրք — «Գիրք պատմութեանց որ կոչի Գաւազանագիրք, համահաւաքեցեալ ի հին գաւազանագրաց եւ ի վիպաբանութեանց ի մի, բազմօք երկամբք. յումեմնէ Աւետիսէ աշխատասիրէ Եղոկացոյ». Լ. Տեր-Պետրոսյան, Խաչակիրները եւ հայերը, հտ. 2, Երեւան, 2007, էջ 559–573:
- ԲԱՂԿԱՍԱՐՅԱՆ, Գեորգ Ակելաացու վարքը — Էդվարդ Բաղդասարյան, Գեորգ Ակելաացու «Վարքը», «Բանբեր Մատենադարանի», 7, Երեւան, 1964, էջ 399–435:
- ԲԱՏԱՄՅԱՆՅ, Մխիթար Գօշ — Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք Հայոց. Իրաւաբանական հետազոտութիւնք հանդերձ ծանօթագրութեամբք Վահան Ծ. վարդապետի Բաստամեանց, Վաղարշապատ, 1880:
- «ԳԻՂՔ ԹՂԹՈՅ» — Գիրք Թղթոց, աշխատասիրութեամբ Ն. արք. Պողարեան, երկրորդ հրատարակութիւն, Երուսաղեմ, 1994:
- ԳՐԻԳՈՐ ԱԿՆԵՐՏԻ, Պատմութիւն — Գրիգոր վրդ. Ակներցի, Պատմութիւն Թաթարաց, աշխ. Ն. Պողարեանի, Բ. տպ., Երուսաղեմ, 1974 (վերջերս հրատարակված մի հոդվածում հիմնավորապես ապացուցված է, որ Գրիգորը ոչ թե «Պատմութեան» հեղինակն է, այլ այն պարունակող ձեռագրի գրիչը. տե՛ս COWE, *A Chronicle*, p. 15–34):
- ԳՐԻԳՈՐԻՍ, Վարք Ներսեսի — Պատմութիւն վարուց սրբոյն Ներսեսի կաթողիկոսի Հայոց եւ տիեզերալոյս իմաստասիրի սկսեալ ի նախնեաց անտի նորին, «Սոփիքը հայկականք», հտ. 14, Վենետիկ, 1854, էջ 9–83 (Հեղինակի հարցի պարզաբանումը տե՛ս ՀՈՎՍԵՓՅԱՆ, Յիշատակարանք, էջ 944–946; ТЕР-ДАВТЯН, *Памятники*, с. 72–73):
- ԴԱՆԻՆԼՅԱՆ, Յուցակ — Անուշուան Դանիէլեան, Մայր Յուցակ հայերէն ձեռագրաց Մեծի տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան, Անթիլիաս, 1984:
- ԴԱԻԹ ԲԱՂԻՇԵՅԻ, Մաղկաբաղ — «Դաւթի բանասիրի Բաղիշեցոյ Մաղկաբաղ արարեալ ի բազում պատմագրաց...». Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ (XIII–XVIII դդ.), հտ. 2, Երեւան, 1956, էջ 300–378:

- ՀՈՎՍԵՓՅԱՆ, Յիշատակարանք — Գարեգին Ա. Կաթողիկոս, Յիշատակարանք ձեռագրաց, հտ. 1, Անթիլիաս, 1951:
- ՂԵՒՈՆԴ, Պատմութիւն — Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց, աշխատասիրութեամբ Ստ. Մալխասեանց եւ Կ. Եղեանց, Բ. տպ., Ս. Պետերբուրգ, 1887:
- ՃԵՄՃԵՄՅԱՆ, Յուցակ — Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, Վենետիկ, հտ. Ե, 1995; հտ. Զ, 1996:
- ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, Ե-ԺԲ դդ. հիշատակարաններ — Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (Ե-ԺԲ դդ.), աշխատասիրութեամբ Ա. Ս. Մաթեւոսյանի, Երեւան, 1988:
- ՄԱԹԵՒՈՍՅԱՆ, ԺԳ դ. հիշատակարաններ — Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (ԺԳ դար), կազմեց Ա. Ս. Մաթեւոսյան, Երեւան, 1984:
- ՄԱԹԵՒՈՍՅԱՆ-ՂԱԶԱՐՈՍՅԱՆ, ԺԴ դ. հիշատակարաններ — Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ (ԺԴ դ.), կազմեցին Ա. Ս. Մաթեւոսյան եւ Ա. Ղազարոսյան (անտիպ):
- «ՄԱՅՐ ՅՈՒՅԱԿ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ» — Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. 2, Երեւան, 2004:
- ՄԱՇՏՈՅԻ ԱՆՎ. ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ — Զեռ. Բ. 418 (1818 թ.), 502 (1619 թ.), 1492 (1715 թ.), 2037 (1421 թ.), 2173 (ԺԴ դ.), 3074 (ԺԵ դ.), 4188 (1820/4 թթ.), 5619 (1176 թ.), 5787 (1617 թ.), 6243 (1847 թ.), 7424 (1743/63 թթ.), 7620 (1409 թ., ԺԸ դ.), 8072 (1714 թ.), 9484 (1313/31 թթ.), 9749 (1344 թ.):
- ՄԱՏԹԷՈՍ ՈՒԻԻՀԱՅԵՅԻ, Ժամանակագրութիւն — Մատթէոս Ուոհայեցի, Ժամանակագրութիւն, աշխատասիրութեամբ Մամբրէ վարդապետ Մէլիք-Աղամեանի եւ Ներսէս սարկաւազ Տէր-Միքայէլեանի, Վաղարշապատ, 1898:
- ՄԱՐՏԻՐՈՍ ՂՐԻՄԵՅԻ, Կարգ եւ թիւ — Կարգ եւ թիւ թագաւորացն Հայոց ի Մարտիրոս վարդապետէ Ղրիմեցւոյ ոտանաւոր շափով. Համազասպ Ոսկեան, Զորս հայ տաղասացներ եւ անոնց տաղերը, Վիեննա, 1966, էջ 177-210:
- ՄԻԽԱՅԷԼ ԱՍՈՐԻ, Ժամանակագրութիւն 1870 — Տեառն Միխայէլի պատրիարքի ասորւոց ժամանակագրութիւն, Երուսաղեմ, 1870:
- ՄԻԽԱՅԷԼ ԱՍՈՐԻ, Ժամանակագրութիւն 1871 — Ժամանակագրութիւն տեառն Միխայէլի ասորւոց պատրիարքի, Երուսաղեմ, 1871:
- ՄԻՆԱՍ ԱՄԴԵՅԻ, Ազգաբանութիւն — Մինաս Վարդապետի Համդեցւոյ Ազգաբանութիւն Հայոց, Վաղարշապատ, 1870:
- ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՅԻ, Պատմութիւն — Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, ի լոյս ընծայեաց Մկրտիչ էմին, Մոսկվա, 1860:
- ՄԽԻԹԱՐ ՔՈՇ, Գիրք Դատաստանի — Մխիթար Քոշ, Գիրք Դատաստանի, աշխատասիրութեամբ Խոսրով Թորոսյանի, Երեւան, 1975:

- ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, Պատմութիւն — Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի, լրացումները Ա. Բ. Սարգսեանի, Երեւան, 1991:
- ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿԱՏՈՒԱՅԻ, Պատմութիւն — Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը եւ ներածությունը Վարազ Առաքելյանի, Երեւան, 1983:
- ՄՈՒՐԱՏՅԱՆ-ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ, Յուցակ — Սահակ Ա. Մուրատեան, Նազարէթ Պ. Մարտիրոսեան, Յուցակ ձեռագրաց Մշոյ Ս. Առաքելոց-Քարգմանչաց վանքի եւ շրջակայից, Երուսաղեմ, 1967:
- ՅԱԿՈՒ ՍՍԵՅԻ, Պատմութիւն — [Պատմութիւն Կիլիկիոյ]. Վենետիկի Մխիթարեանց Մատենադարանի ձեռ. Ք. 1318 (Ձեռագրի լուսապատճենը մեզ են տրամադրել Մխիթարյան միաբանության ընդհանուր աբբահայր եղիա Քիլաղպյանը եւ Մխիթարյան միաբան Հարություն Պատիկյանը: Իսկ հեղինակի ինքնությունը պարզել է Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրատան գլխավոր ավանդապահ Գեորգ Տեր-Վարդանյանը. տե՛ս ՏԵՐ-ՎԱՐԴԱՆՅԱՆ, Յակոբ Սսեցի):
- ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՐԴԵԼ, Ժամանակագրութիւն — Յովհաննու Դարդելի Ժամանակագրութիւն Հայոց, թարգմ. Խորէն արքեպիսկոպոս Նար-Պէյ, խմբ. Նորայր Բիւզանտացի, առաջաբան Կ. Եգեանցի, Ս. Պետերբուրգ, 1891:
- ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴՐԱՍԽԱՆԱԿԵՐՏՅԻ, Պատմութիւն — Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցոյ Պատմութիւն Հայոց, աշխատասիրութեամբ Մկրտիչ Էմինի, Թ տպ., Քիֆլիս, 1912:
- ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐՋՆԿԱՅԻ, Ի բանն Առաքելոյ — Նորին Յովհաննու վարդապետի ասացեալ՝ Ի բանն Առաքելոյ, որ ասէ՛ Ամենայն անձն որ ընդ իշխանութեամբ է, ի հնազանդութիւն կացցէ. յաւուրն յորում արհնեցան ձիաւորք արքայորդիքն մեր Հեթում եւ Քորոս, եւ այլ մանգունք իշխանաց, եւ որք յարքունական սպասաւորացն, Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. Ք. 2173 (ԺԴ դ.), էջ 86ա-101ա:
- ՆԱԿԱՆԴՅԱՆ, Արաբական աղբյուրները — Արաբական աղբյուրները Հայաստանի եւ հարեան երկրների մասին, կազմեց Հ. Ք. Նալբանդյան, Երեւան, 1965:
- ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Ատենաբանութիւն — Ներսէս Լամբրոնացի, Ատենաբանութիւն եւ թուղթ եւ ճառք, Վենետիկ, 1865:
- ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՅԻ, Զինուորական օրէնք — Զինուորական օրէնք Ներսիսի Լամբրոնացոյ, հրատ. Կ. Յ. Բասմաջեան, «Բանասէր», 1902, էջ 321-328:
- ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԿԻ, Ընդհանրական թուղթք — Ընդհանրական թուղթք Սրբոյն Ներսիսի Շնորհալոյ, Երուսաղեմ, 1871:
- ՆԵՐՍԷՍ ՊԱԼԻԱՆԵՆՅ, Ժամանակագրական հատվածներ — «Ներսես Պալիենցի Ժամանակագրական հատվածները». Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ (XIII-XVIII դդ.), հտ. 2, Երեւան, 1956, էջ 173-194:

տուածաշունչ բանից թարգման յարինեալ ի խորհուրդ թագաւորաց որ յերկրի, արագ ցուցմամբ եւ իմաստասիրական սահմանաւ շարադրեալ Վահրամ վարդապետի, յորում աւուր ւածեալ ձեռնադրեցաւ թագաւորն Հայոց Մեծն Լեւոն, «Արարատ» ամսագիր, Վաղարշապատ, 1868, էջ 137-141, 165-169; 1869, էջ 8-9, 36-39, 49-52, 73-78, 97-101:

ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆԻ, Բան ի Յայտնութիւն Տեառն 1875 — Վահրամայ վարդապետի, ատենադպրի Լեւոնի արքայի՝ Բան ի Յայտնութիւն Տեառն եւ յօծումն Լեւոնի Գ. արքայի, Երուսաղեմ, 1875:

ՎԱՀՐԱՄ ԲԱՐՈՒՆԻ, Ոտանաւոր պատմութիւն — Վահրամ Բաբունի, Ոտանաւոր պատմութիւն Ռուբենեանց, աշխատասիրութեամբ Կարապետ Վարդապետ Շահնազարեանցի, Փարիզ, 1859 (կցված է Սմբատ Սպարապետի Տարեգրքի տպագրութեանը):

ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ, Հաւաքումն — Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ, աշխատասիրութեամբ Հ. Ղեւոնդ Ալիշանի, Վենետիկ, 1862: ՏԱՇՅԱՆ, Յուցակ — Յակովբոս Տաշեան, Յուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895:

ՋԱՐԱՃ ԱՍՈՐԻ, Բժշկարան ձիոյ — Բժշկարան ձիոյ եւ առհասարակ գրաստնոյ (ժՊ դար), աշխատասիրութեամբ Բ. Լ. Զուգասզյանի, Երեւան, 1980:

ABOUNA-FIEY, *Anonymi auctoris Chronicon — Anonymi auctoris Chronicon ad A. C. 1234 pertinens. II. Traduit par Albert Abouna. Introduction, notes et index de J.-M.-Fiey, "Corpus Scriptorum Christianorum Orientalium"*, 354, Syr. 154, Louvain, 1974.

AMADI, *Chronique — Chroniques d'Amadi et de Strambaldi, publiées par M. René de Mas Latrie, première partie: Chronique d'Amadi, Paris, 1891.*

ANNE COMNÈNE, *Alexiade — Anne Comnène, Alexiade: Règne de l'empereur Alexis I Comnène, texte établi et traduit par Bernard Leib, t. I-III, Paris, 1937, 1943, 1945.*

ANONYMUS, *Chronicon — Anonymi auctoris chronicon ad annum Christi 1234 pertinens, ed. J.-B. Chabot, "Corpus Scriptorum Christianorum Orientalium"*, 82, Syr. 37, Louvain, 1916.

ASSISES D'ANTIOCHE — *Assises d'Antioche, reproduit en Français par L. Alichan, Venise, 1876.*

BARHEBRAEUS, *Chronicon — Gregorii Barhebraei Chronicon Syriacum, ed. P. Bedjan, Paris, 1890.*

BARHEBRAEUS, *Chronicon Ecclesiasticum — Gregorii Barhebraei Chronicon Ecclesiasticum, ed. J.-B. Abbeloos et Th. J. Lamy, t. I-III, Lovanii, 1872-1877.*

BAR HEBRAEUS, *Chronography — Ernest A. Wallis Budge, The Chronography of Gregory Abu'l-Faraj (1225-1286), the son of Aaron, the hebrew physician, commonly known as Bar Hebraeus, v. I: English translation; v. II: Syriac texts; first published London 1932, reprinted Amsterdam 1976.*

- BLAKE-FRYE, History** — Robert P. Blake and Richard N. Frye, *History of the Nation of the Archers (the Mongols) by Grigor of Akanc*, "Harvard Journal of Asiatic Studies", 1949, vol. 12, p. 269–399.
- CONYBEARE, Catalogue** — Frederick Cornwallis Conybeare, *A Catalogue of the Armenian Manuscripts in the British Museum, London, 1913.*
- DULAURIER, Documents Arméniens** — *Recueil des historiens des Croisades: Documents arméniens, t. I, éd. E. Dulaurier, Paris, 1869.*
- ERNOUL, Chronique** — *Chronique d'Ernoul et de Bernard le Trésorier, publiée ... par M. L. de Mas Latrie, Paris, 1871.*
- GESTES DES CHIPROIS** — *Les Gestes des Chiprois, "Recueil des historiens des Croisades: Documents arméniens, t. II", éd. Ch. Kohler, Paris, 1906, p. 651–872.*
- GUILLAUME DE TYR** — *Guillaume de Tyr et ses continuateurs, texte français du XIIIe siècle, revu et annoté par M. Paulin Paris, t. 1–2, Paris, 1879–1880.*
- GUILLAUME DE TYR, Continuation** — *La Continuation de Guillaume de Tyr (1184–1197), publiée par Margaret Ruth Morgan, Paris, 1982.*
- HAYTON, Flor** — Hayton, *La Flor des Estoires de la Terre d'Orient, "Recueil des historiens des Croisades: Documents arméniens, t. II", éd. Ch. Kohler, Paris, 1906, p. 113–253, լատ. ֆարսի., p. 255–363.*
- HAYTON, La Fleur** — Hayton, *La Fleur des histoires de la terre d'Orient, "Croisades et Pèlerinages, récits, chroniques et voyages en Terre Sainte (XIIe–XVIe siècle), édition établie sous la direction de Danielle Régner-Bohler", Paris, 2002, p. 805–878.*
- JEAN DARDEL, Chronique** — Jean Dardel, *Chronique d'Arménie, Éd. Charles Schefer et Louis de Mas Latrie, "Recueil des historiens des Croisades: Documents arméniens, t. II", éd. Ch. Kohler, Paris, 1906, p. 1–109.*
- JOINVILLE, The Life of Saint Louis** — Joinville and Villehardouin. *Chronicles of the Crusades, translated with an Introduction by M. R. B. Shaw, London, 1963, p. 161–353.*
- KARST, Armenisches Rechtsbuch** — *Armenisches Rechtsbuch. Sempadscher Kodex aus dem 13. Jahrhundert oder Mittelarmenisches Rechtsbuch, herausgegeben und übersetzt von Josef Karst, Bd. I–II, Strassburg, 1905.*
- KINNAMOS, Deeds** — John Kinnamos, *Deeds of John and Manuel Comnenus, translated by Charles M. Brand, New York, 1976.*
- KOHLER, Documents Arméniens** — *Recueil des historiens des Croisades: Documents arméniens, t. II, éd. Ch. Kohler, Paris, 1906.*
- MARCO POLO, The Travels** — *The Travels of Marco Polo, Translated and an Introduction by Ronald Latham, London, 1958.*
- LANGLOIS, Cartulaire** — Victor Langlois, *Le trésor des chartes d'Arménie ou Cartulaire de la chancellerie royale des Roupéniens, Venise, 1863.*

- LIGNAGES D'OUTREMER** — *Lignages d'Outremer. Introduction, notes et édition critique par Marie-Adélaïde Nielen, Paris, 2003* (Գրախոսութունը՝ ԲՈՂՈՅԱՆ, Անդրժոպյան ազգատոհմեր, «Պատմա-բանասիրական հանդես», 2004, № 3, էջ 289–293):
